


ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ



**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМЕНИ М.АБЕГЯНА**

ОТЕЦ ГЕВОНД АЛИШАН – 200
Сборник материалов юбилейной конференции
(6-8 июля 2020г.)

ЕРЕВАН
Издательство “Гитутюн” НАН РА
2021

**THE RA NATIONAL ACADEMY OF SCIENCES
THE INSTITUTE OF LITERATURE AFTER M. ABEGYAN**

FATHER GHEVOND ALISHAN – 200
The collection of materials of the jubilee conference
(6-8 of July 2020)

YEREVAN
“Gitutyun” PUBLISHING HOUSE OF THE RA NAS
2021

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ – 200

Հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածու

(6-8 հուլիսի 2020 թ.)

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2021

ՀՏԴ 001(082)

ԳՄԴ 72g43

Ա 315

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ասատրյան Աննա – արվեստագիտության դոկտ., պրոֆ.,

Բեջանյան Քրիստինե – բ.գ.թ., դոցենտ, **Դուլուխանյան Աելիտա** –

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, **Դևրիկյան Վարդան** – բ.գ.դ., **Իսահակյան Ավիկ**

– բ.գ.դ., պրոֆ., **Հովհաննիսյան Սուսաննա** – բ.գ.դ., **Մարգարյան Սիրանուշ**

– բ.գ.թ., դոցենտ, **Մելքոնյան Աշոտ** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Մուրադյան Սամվել – բ.գ.դ., պրոֆ., **Որսկանյան Հերիքնազ** – բ.գ.թ.,

Չամուրյան Մերոբ վրդ., **Սուվարյան Յուրի** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ա 315 Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ – 200: Հոբելյանական գիտաժողովի
նյութերի ժողովածու.-Եր.: «Գիտություն» հրատ. 2021.- 653 էջ:

ՀՏԴ 001(082)

ԳՄԴ 72g43

ISBN 978-5-8080-1474-9

© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2021

Հ.Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ.Ղ. Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված այս գիտաժողովը եկավ մի կողմից հանրագումարի բերելու Ալիշանի գրական ստեղծագործություններին նվիրված վերլուծությունները և այն դերը, որ Մխիթարյան գիտնականը խաղացել է հայագիտության և բնական գիտությունների բնագավառում և նախանշեց նույն այդ բնագավառում կատարվելիք հետագա աշխատանքները:

Գրականագիտության բնագավառում կատարվեց Ալիշանի գրական ժառանգության առավել խորքային վերլուծությունը: Ցույց տրվեց Հայոց Նահապետի տեղը կլասիցիզմի և ռոմանտիզմի սահմանագծին, Հայոց պատմության և միջնադարյան գրականության բնագրերի գեղարվեստական մշակումները, անգամ էպիկական շնչով ներկայացնելը:

Գրականագիտության պատմության տեսանկյունից կարևորվում են Ալիշանի՝ հայ գրականության պատմության տարբեր փուլերին և առանձին հեղինակներին տրված բնորոշումների քննությունը, տարբեր հեղինակների, ինչպես, օրինակ, Ֆրիկի մասին հայ ձեռագրային աշխարհից կատարված վկայակոչումների աղբյուրների գտնելը:

Բանագիտության և բնագրագիտության տեսանկյունից հարկավոր է Ալիշանի հրատարակած բնագրերը համեմատել Ս. Ղազարում պահվող դրանց սկզբնաղբյուր ձեռագրերի հետ: Կարևոր է այն հարցի քննությունը, թե Ս. Ղազարի ձեռագրերի ծովածավալ նյութերի միջից ինչ սկզբունքով է ընտրել այն գործերը, որոնք տպագրել է՝ համապատասխան ծանոթագրություններով օժտելով: Այս հարցը կարևորվում է Ալիշանի գիտական մոտեցումները, գեղագիտական ըմբռնումները և ընդհանուր աշխարհայացքը ավելի ճիշտ և խորը ըմբռնելու առումով:

Գիտաժողովի զեկուցումներում ըստ արժանվույն ներկայացվեց Ալիշանի ունեցած դերը գրաբարից արևմտահայ աշխարհաբարին անցնելու, բարբառների արժևորման, ինչպես նաև հայ առասպելաբանության և հին հավատալիքների ուսումնասիրության գործում:

Հայագիտության և բնական մի շարք գիտությունների տեսանկյունից Ալիշանի գիտական ժառանգությունը կարևորվում է թե՛ պատմական մոտեցմամբ՝ որքանով են այդ ուսումնասիրությունները բռնել ժամանակի քննությունը և թե՛ որքանով են շարունակում գիտական շրջանառության մեջ մնալ իրենց պարունակած սկզբնաղբյուրային նյութով և տեսական հարցադրումներով:

19-րդ դարի երկրորդ կեսի եվրոպական ակադեմիական դպրոցների և ուղղությունների տեսանկյունից հետաքրքիր է Ալիշանի գիտական մեթոդաբանության համեմատումը այդ ուղղությունների, և հատկապես կուլտուր-պատմական դպրոցի տեսական ըմբռնումների հետ, որը վե-

րաբերում է թե՛ հայ ժողովրդի պատմությանը՝ սկսած ծագումնաբանական հարցերից մինչև Հայաստանի պատմական աշխարհագրությունը:

Առանցքային կարևոր երկու հարցեր են Ալիշանը և նախորդները, ապա՝ Ալիշանը և հաջորդները: Պատահական չէ, որ գիտաժողովի ընթացքում մեծ թիվ կազմեցին Ալիշանի՝ անցյալի մատենագրության և Մխիթարյան ավանդույթի հետ ունեցած կապին, ինչպես նաև նրա կերպարի գրական մարմնավորմանը, հուշագրության մեջ և արվեստում արտահայտվելուն նվիրված զեկուցումները:

Անգնահատելի է Ալիշանի դերը հայ բուսաշխարհի և կենդանական աշխարհի եվրոպական կարգաբանական դասակարգմամբ ներկայացնելու գործում:

Ալիշանը բույսերի և կենդանիների ավանդական հայերեն ու արևելյան անվանումները հանդիպադրեց վերջիններիս եվրոպական կարգաբանական դասակարգումների մեջ տրված անվանումներին, որով հայ մատենագրության մեջ տարբեր անուններով և հաճախ անձանաչելիորեն աղճատված տառադարձումները ի մի բերելով ցույց տվեց, թե եվրոպական անվանմամբ բույսերից յուրաքանչյուրի անվան համարժեքը կամ համարժեքները որոնք են հայ մատենագրության մեջ: Նաև ինչ հիշատակություններ կան այդ բույսերի բժշկական հատկությունների, բուսաբանական հատկանիշների և անգամ որպես գրական պատկերներ կիրառելու մասին:

Ալիշանի ծննդյան 200-ամյակը կարևոր խթան հանդիսացավ Հայոց Նահապետի տակավին անտիպ մնացած գործերի հրատարակության համար:

Հորեղանակա՛ն հանդիսությունների շրջանակում կատարվեց առաջին քայլը: Մխիթարյան վարդապետներից Հ. Վահան Օհանյանը իրականացրեց Ալիշանի Նամականիի եռահատոր՝ իրապես կոթողային աշխատության հրատարակությունը:

Առաջիկայում սպասվում է Ալիշանի նշանավոր Հայկարաններում ամբարված հիշատակարանների, որոնք իր ողջ կյանքում հավաքել էր տարբեր ձեռագրերից, հրատարակությունը: Այն իրականացնում են Մաշտոցի անվան Մատենադարանի Ձեռագրագիտության բաժնի վարիչ և գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանը և միաբանության անդամներից «Բազմավեպի» խմբագիր Հ. Սերոբե վրդ. Չամուրյանը:

Նման աշխատանքը վերջապես կտա այն հարցի պատասխանը, թե բազմաթիվ դեպքերում որոնք են եղել Ալիշանի օգտագործած ձեռագրային աղբյուրները:

Հաջորդը դարձյալ Մխիթարյան հայրերից Հ. Համազասպ Քեշիշյանի աշխատանքն է՝ նվիրված Ալիշանի գիտական գործերի և դրանց օտար սկզբնաղբյուրների հարաբերակցությանը:

Մեծ խորհուրդ ունի այն իրողությունը, որ Ալիշանի անտիպների Մխիթարյանների այսօրվա հրատարակություններով շարունակվում են Մխիթարյան ավանդները:

Այսօրվա մեր դժվարին իրականության մեջ Հ. Ղ. Ալիշանի գիտական ժառանգության յուրաքանչյուր նոր էջի բացահայտում և մեկնաբանություն մեզ օգնելու է մեր ժողովրդի համար փոթորկուն այս շրջանում ավելի ճիշտ կողմնորոշվել հայոց անցյալի, ներկայի և ապագայի Ալիշանյան անխաբ փորձառությամբ:

Հուսով ենք, որ այս նպատակին կծառայի Հ.Ղ. Ալիշանի ծննդյան 200-ամյակի առիթով կազմակերպված միջազգային գիտաժողովի զեկուցումների սույն ժողովածուն:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի տնօրեն*

**ՈՂՋՈՑՆԻ ԽՕՍՔ ՊԱՊԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՄԽԻԹԱՐԵԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Տ. ԼԵՒՈՆ ԱՐՔ. ԶԷՔԻԵԱՆԻ՝
Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ԵՐԿՀԱՐԻՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ
(6 յուլիսի 2020 թ.)**

Հայրենի մեծ լեզուաբան, բարեյիշատակ Պրոֆեսոր Գեորգ Զահուկեան, որու նաեւ անձնական բարեկամութիւնը վայելելու պատիւն ունեցած եմ, ունի աւելի քան նշանակալից խօսք մը՝ Մխիթարեան Միաբանութեան Հիմնադիր Մխիթար Աբբայի մասին, որու հսկայագոյն եւ արժանաւորագոյն զաւակներէն, հոգեւոր ու մտաւոր հարազատագոյն ժառանգներէն մէկն է Հ. Ղեւոնդ Վրդ. Ալիշան, որու ծննդեան երկհարիւրամեայ յոբելեանը կը տօնենք ազգովին: Գ. Զահուկեան կ'ըսէ՝ «Ինչքան հեռանում ենք Մխիթարի ժամանակներից եւ ինչքան խորանում ենք այդ ժամանակների մէջ, անցեալի պատմութեան արդարախօս քննութեան եւ գնահատութեան դիրքերից, այնքան դիւցազնական է դառնում Մխիթար Սեբաստացու կերպարը»:

Երբ կը խօսիմ Մխիթարի եւ Մխիթարեան գործի մասին, մանաւանդ օտար հանրութիւններու առջեւ, սա մէկ փաստը կը յիշատակեմ, մէկ անգամէն հասկնալի դարձնելու համար միտքս, մտածումներս: Երբ Նապոլէոն կը գրաւէ Հիւսիսային Իտալիան, այդ ընդարձակ տարածաշրջանի բովանդակ տարածքին մէկ հատ իսկ վանք կամ եկեղեցական հաստատութիւն իր սեպհականատիրոջ կամ համայնքին կամ միաբանութեան պատկան չի մնար. չի՛ մնար մանաւանդ իր եկեղեցական, կրօնական, կրօնաւորական հանգամանքին մէջ: Բոլոր վանքերը կը փակուին, կը գրաւուին, աւելի ճիշտ կը բռնագրաւուին: Ասոնց կարգին՝ Արեւմուտքի կրօնաւորական ամենամեծ Կարգերուն պատկանող գոյքերն ու կալուածները՝ թէ լինին Բենեդիկտեաններ, Դոմինիկեաններ թէ Փրնակիսկեաններ, Թէատինեաններ թէ Յիսուսեաններ, կամ այլք: Մէկ հատ իսկ վանք կամ հաստատութիւն կանգուն չի մնար իր կարգավիճակին մէջ, բացի այն մէկ հատէն՝ որ կը կոչուի Ս. Ղազար, Վենետիկի Լճակին մէջ բարձրացող Մխիթարեան Միանձն Հայրերու կղզին, Ս. Ղազարու պատմական մենաստանը, որ նաեւ Մայրավանքն է նոյն Մխիթարեան Ուխտին, եւ որ ծանօթ է տեղացի ժողովուրդին՝ պարզապէս իբրեւ «Հայոց Կղզի»:

Այո՛, մէկ վանք միայն կը մնայ, մնացած էր, Նապոլէոնի օրերուն, ամբողջ Հիւսիսային Իտալիոյ տարածքին՝ Թորինոյէն մինչեւ Վենետիկ. այդ՝ Ս. Ղազարու Մայրավանքն է: Եւ ինչո՞ւ: Ս. Ղազարու Հայրերը բացառապէս ըսած են՝ տիրակալ, համայնատէր Կայսեր Նապոլէոնին իրենց իմաստուն, դիւանագէտ, մեծ Աբբաօր՝ Ստեփանոս Ագոնց Գիւվերի առաջնորդութեամբ. «Այո՛, մենք կրօնաւորներ ենք, միանձններ ենք, բայց

միաժամանակ մենք գիտութեան մարդիկ ենք, ակադեմականներ ենք, սոսկ կրօնաւորներ չենք»: Եւ սփռած են Կայսեր աչքերուն առջեւ իրենց գիտական, գրական, մշակութային բովանդակ վաստակը, արդէն վիթխարի, արդէն հրաշապատում: Միխիթարեանց պատճառաբանութիւնը համոզիչ կը դառնայ Կայսեր, ի հեճուկս իր նախապաշարումներուն, մանաւանդ կրօնական հաստատութիւններու նկատմամբ, եւ բռնատիրութեան: Կը համոզուի և կը վճռէ՝ որ Ս. Ղազարը մնայ այն կարգավիճակին մէջ, որուն պատկանած էր մինչ այդ: Եւ այսպէս փրկուած է Ս. Ղազար կղզին իբրեւ մենաստան, իբրեւ միանձնական կեանքի հնոց եւ դարբնոց, բայց ճանաչուելով միանգամայն՝ ինչպէս որ իրաւամբ էր արդէն՝ որպէս գիտութիւններու հայկական ակադեմիա, որպէս՝ Հայկական Ճեմարան Սրբոյն Ղազարու, Academia Armena Sancti Lazari:

Այս բոլորը կը թելադրեն ինծի դիպուկ եւ շատ հաճելի բնորոշում մը՝ զոր կը բանաձեւեմ որպէս «Միխիթարեան տեսիլ», «Միխիթարեան կերպար»: Զայն առանձնացնող յատկանիշը այն է՝ որ այդ տեսիլը, այդ կերպարը *հայկական դասականութեան* մարմնաւորումը կը ներկայացնեն, գիտութեան, արուեստի, մշակոյթի, մէկ խօսքով՝ հոգեկան կենցաղի ամէն մարզին մէջ: Եթէ հարկ է, կրկնենք որ «դասական» մշակոյթը կը մնայ միշտ: Յաճախ կը յիշեմ Ապոլիների սա հոյակապ խօսքը. «Երեկոյեան այս պահուս աշխարհի ամենահին գրութիւնը այս առաւօտեան լրագիրն է, իսկ ամենանորը, ամենաթարմը Հոմերոսի Իլիականն է»:

Այո՛, Հոմերոսը դասական է, որովհետեւ կը մնայ յաւերժ, իսկ այս առաւօտեան լրագիրը արդէն երեկոյեան հնացած է: Այնպէս որ գալով հիմա մեր Ալիշանին՝ ես կ'ուզեմ մաղթել, որ յոբելինական այս տօնախմբութիւնները, որոնց մեծ եռանդով ձեռնամուխ եղած ենք, միայն դրուատիքի, գովերգութեան տուրք մը չըլլան Ալիշանի հանդէպ, ինչպէս ռեւէ մեծի նկատմամբ, այլ միանգամայն հանդիսանան առիթ մը՝ մեծածաւալ ու մեծաձայն այս ոգեկոչումներու ընթացքին, նաեւ նոր հանգրուաններ ուրուագրելու, նոր հորիզոններ բանալու ալիշանեան հետազօտութիւններու ներկայ ծիրին մէջ:

Ազգովին կը տօնենք արդի Հայ մշակոյթի մեծ, պիտի համարձակէի կոչել «եռամեծ» անուններէն – նուիրականացած, գրեթէ սրբագործուած այս յորջորջումով – Հ. Ղեւոնդ Ալիշանի ծննդեան երկհարիւրամեակը: Յատկապէս Մայր Հայրենիքի մէջ գիտական եւ ուսումնակրթական արժանի շուքով կը տօնուի այս մեծ դարադարձը: ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Գրականութեան Ինստիտուտի նախաձեռնութեամբ կազմակերպուած այս գիտաժողովն ալ կու գայ օղակաւորուիլ տօնախմբութիւններու մեծ շղթային, ո'չ միայն ներդնելու իր լուծման՝ համագլխին այս ուսումնամշակութային մեծ խանդավառութեան եւ սխրանքի հոսանքին մէջ, այլ նաեւ՝ եւ յատկապէս՝ տալու համար լաւ-ն, տալու հա-

մար մայր ձայնանիշը՝ վերլուծումներու, ներբողներու, խորասուզուող խոհերու այն թաւալուն տարափին, որ կը ծաւալի այս օրերուս Ադրիականի ափերէն մինչեւ Արագածի կատարները, մինչեւ Ատլանտեանի եւ Խաղաղականի ալքերը:

Կ'ուզէի խօսքս սկսիլ նորին մեծն Ալիշանի ծանօթ մէկ կենսադրուագով, որով եւս մեզի ուսուցիչ կը հանդիսանայ, ինչպէս իր կեանքի բազում արարքներով եւ դրուագներով: Երբ կը տօնուէր Ալիշանի քահանայական ձեռնադրութեան եւ գրական գործունէութեան 50-ամեակը Ս. Ղազարու Մայրավանքին մէջ, նա իր շնորհակալութիւնը կը յայտնէր վանքի ամէնէն համեստ աշխատատեղի Հայրերուն, մանաւանդ Եղբայրներուն, հետեւեալ խօսքերով՝ «Եթէ ես կարողացայ այսքան հատորներ գրել, արտադրել, մեծ մասամբ կը պարտիմ այդ եղբայրներու աշխատանքին, որոնք, ստանձնելով վանքի տնային ծառայութիւնները, թոյլ տուին ինծի գրել, արտադրել այս հատորները»:

Այս խօսքերովը Ալիշան մեզի կը ներկայանայ նաեւ իբրեւ համեստութեան, խոնարհութեան մեծ օրինակ, որ կը կարծեմ՝ առաջին յատկանիշն է իսկական գիտնականին, աննախընթաց պայմանը իսկական, իրաւ գիտութեան, քանի որ իսկական գիտունը, բառին բովանդակալից առումով, համեստ կ'ըլլայ, խոնարհ կ'ըլլայ, մէկ խօսքով՝ իր սահմաններուն գիտակից կ'ըլլայ, բան մը՝ որ կը վրիպի անշուշտ կէս գիտունին ուշադրութենէն եւ գիտակցութենէն: Իրաւ գիտունը գիտէ, որ իր գիտցածը ընդհանուր գիտելիքի պզտիկ մէկ մասնիկն է միայն, մէկ փոքր տարրն է: Իսկ կէս կամ կեղծ գիտունը, բնականաբար, ամբարտաւան կը դառնայ, հպարտ կը դառնայ, որովհետեւ չունի գիտութեան համապատասխան, իրաւ եւ արժանի ըմբռնումը: Այս տեսակէտով Ալիշան մեծ, շատ մեծ օրինակ մը մեր առջեւ կը դնէ:

Մինչ կը փակեմ յոբելինական այս նիստին առթիւ սրտի եւ մտքի խօսքս, ուղղուած՝ զայն կազմակերպողներուն եւ բոլոր մասնակցողներուն, զեկոյցով կամ լոկ ունկնդրութեամբ, կը մաղթեմ ի սրտէ, որ միշտ աւելի գիտակցինք Ալիշանի մեծութեան գաղտնիքին, որ ոչ այլ ինչ է քան գաղտնիքը՝ Մխիթարեան գործին եւ գործունէութեան, ու որ այդ գործին ենթախորքային պատգամը՝ միասնութեան, եղբայրութեան, ուսումնասիրութեան եւ ուսումնատենչութեան, հաւասարակշռութեան, խոհեմութեան եւ նրբամտութեան մինչեւ դիւանագիտութիւն, դառնան մեզի համար, առ հասարակ հայութեան համար, ամէնօրեայ հաց ու սնունդ, մեր առօրեայ հանգանակը, մեր հոգեբուխ մաղթանքը. մեր ի խորոց սրտի աղօթքը առ Տէր:

**ՀՀ ԳԱՍ ՆԱԽԱԳԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՌԱԴԻՎ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
(6 հուլիսի 2020 թ.)**

Այսօր՝ Ղևոնդ Ալիշանի ծննդյան օրը, ոգեկոչելով նրա 200-ամյակը, մենք մտովի դեռևս գտնվում ենք Հովհաննես Թումանյանի և Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյակների համահայկական ընդգրկմամբ նշման շրջանակում:

Վստահաբար, նույն ձևով պետք է նշվեին ու թերևս դեռ կհասցնենք նշել նաև Խրիմյան Հայրիկի և Ղևոնդ Ալիշանի՝ որպես Հայոց Հայրիկի ու Հայոց Նահապետի, ծննդյան 200-ամյակի հոբելյանները:

Համավարակով պայմանավորված, մարդկային հաղորդակցման ու հարաբերությունների համար դժվարին այս օրերին Ղևոնդ Ալիշանին նվիրված հոբելյանական այս գիտաժողովը կապող օղակ դարձավ շատերիս համար:

Արժևորել Ղևոնդ Ալիշանի հիշատակը նշանակում է հետադարձ հայացք նետել մեր ժողովրդի անցած պատմական ուղուն, ստեղծած մշակութային անանց արժեքներին և գրականությանը, ինչպես նաև այդ ամենի ուսումնասիրման գործում արժևորել Մխիթարյան միաբանության դերը, որովհետև, ինչպես իրավացիորեն նշվել է տարբեր հետազոտողների կողմից, Ալիշանը դարձավ Մխիթարյան հայագիտության և Մխիթարյանների ստեղծած ողջ գրականության հանրագումարը:

Ուրախությամբ պետք է նշել, որ գիտաժողովը այնպես է կառուցված, որ յուրաքանչյուր նիստ ներկայացնում է Ալիշանի գիտական ժառանգության մի բնագավառը՝ պատմագիտություն, պատմական աշխարհագրություն, գրականագիտություն, գրականություն և արվեստ:

Բաժանմունքներից յուրաքանչյուրն իր հերթին ներառում է տվյալ բնագավառին վերաբերող այն հարցերը, որոնց անդրադարձել է Ալիշանը:

Գիտաժողովն առավել ցայտուն վեր կհանի հայ գրականության և հայագիտության զարգացման գործում Ալիշանի ունեցած դերը, կընդգծվի այն ներդաշնակ միասնությունը, որ կար Ալիշան գրողի, գիտնականի և հայրենասերի միջև, որը պայմանավորեց նրա անանց հմայքը:

Այս գիտաժողովը իր առաջադրած խնդիրներով և զեկուցումներով միայն անցյալի արժևորմանը չի ծառայի, այլև կունենա արդիական և գործնական նշանակություն, որովհետև ժամանակի քննադատությանը դիմացել և հայ բանաստեղծության լավագույն էջերին մաս են կազմում Հայոց Նահապետի մի շարք ստեղծագործությունները, և իրենց գիտական նշանակությունը չեն կորցրել պատմաաշխարհագրական կոթողային աշխատանքները հայ բնաշխարհի մանրակրկիտ քննությամբ:

Այսօր, երբ առանձնակիորեն են կարևորվում միջգիտակարգային ուսումնասիրությունները, Ալիշանը, ըստ էության, գիտական նման մոտեցմամբ ու մեթոդաբանությամբ է գրել 19-րդ դարի երկրորդ կեսին՝ սերտորեն իրար միահյուսելով պատմությունը, մշակույթը, գրականությունը, աշխարհագրությունը, բուսաբանությունը և կենդանաբանությունը:

Պատահական չէ, որ Ալիշանը այսօր ևս ամենաշատ հղվող գիտնականներից է հայագիտության մի շարք գիտակարգերում:

Ալիշանը, լինելով եվրոպական և ռուսական մի քանի Ակադեմիաների անդամ, ըստ էության, գտնվում է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի ակունքներում, և այսօր մեր ակադեմիական մի քանի ինստիտուտներում շարունակվում են գիտական այն թեմաների ուսումնասիրությունները, որոնք մատնանշել է Ալիշանը իր տարբեր աշխատություններում:

Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված հոբելյանական այս գիտաժողովը վստահ ենք, որ նոր սկիզբ կդառնա Հայոց Նահապետի գիտագրական ժառանգության ուսումնասիրության գործում:

**ՀՀ ԳԱՍ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
(6 հուլիսի 2020 թ.)**

Հարգելի գործընկերներ, մենք մեր բաժանմունքով շատ գիտա-
ժողովներ ենք կազմակերպել: Ինչպես Հ. Թումանյանի ծննդյան 150-
ամյակին նվիրված գիտաժողովի ժամանակ, այնպես և հիմա տիրում է
նույն ոգևորությունը, որը պատահական չէ:

Երկու հարյուր տարի առաջ ճիշտ այս օրը ծնվեց մի անձնավորու-
թյուն, ում ժողովուրդը անվանեց Հայոց Նահապետ: Նա վիթխարի ներ-
դրում ունեցավ հայ գրականության և հայագիտության մեջ՝ իր մոտ 45
հատոր կազմող գրական և գիտական ժառանգությամբ, որն արժեքավոր է
նաև միջազգային տարողությամբ:

Այլշանն՝ ունենալով հանրագիտակ գիտելիքներ, ոչ միայն լուրջ
նվաճումների է հասել գրականության ասպարեզում, այլև գրականագի-
տության, պատմագիտության, պատմական աշխարհագրության: Բոլոր
այս բնագավառներում աչքի է զարնում նրա խոր հայրենասիրությունը:
Իր ողջ գիտական ժառանգությունը տողորված է հայրենասիրությամբ,
գիտականությամբ և գեղարվեստականությամբ, շնորհիվ որի նրա գոր-
ծերը ձեռք են բերել մնայուն արժեք և անանց հմայք:

Բոլորիս քաջ հայտնի է, որ Այլշանն իր 1840-50-ական թվական-
ների բանաստեղծական գործունեությամբ դարձավ հայ նոր գրականու-
թյան և հայկական ռոմանտիզմի հիմնադիրներից մեկը:

1850-ական թվականներից սկսած նա իրեն առավելապես նվիրեց
հայագիտությանը: Նախ հրատարակեց հայ մի քանի պատմագիրների
բնագրերը ժամանակի ընդունված գիտական չափանիշներով:

Պատմաաշխարհագրական տեսանկյունից ներկայացրեց Հայաս-
տանի նահանգները: Այս աշխատություններն այսօր ևս չեն կորցրել
իրենց գիտական արդիականությունը: Տեղագրական հատորներից յուրա-
քանչյուրում սկզբից ներկայացվում է տվյալ նահանգի ֆիզիկական աշ-
խարհագրությունը, բուսական և կենդանական աշխարհը, ապա աղբյու-
րագիտական առումով թվարկվում է, թե հայկական և եվրոպական ինչ
աղբյուրներում հիշատակություններ կան այդ նահանգի և նրա մեջ մտնող
գավառների առանձին բնակավայրերի մասին:

Այլշանը հրատարակել է նաև ուշագրավ մի աշխատանք «Հայ
Բուսակ» անվանմամբ, որում ներկայացրել է Պատմական Հայաստանի
տարածքում աճող 3400 բույսի նկարագրությունը: Այն մեկ անգամ ևս
գալիս է հավաստելու հեղինակի հանրագիտակ գիտելիքների մասին:

Ոչ միայն իր գործերի թեմատիկ բազմազանությամբ, այլև աշխարհագրական հատորներից յուրաքանչյուրում տարբեր գիտակարգերի վերաբերող նյութերին անդրադառնալը պահանջում է Ալիշանի գործերը ենթարկել միջգիտակարգային համալիր վերլուծության, որն այսօր այնքան կարևորվում է մեր բաժանմունքի գիտական գործունեությունում:

Նման ծանրակշիռ աշխատություններով Ալիշանը գիտական մեծ ճանաչում ձեռք բերեց՝ դառնալով եվրոպական մի շարք գիտական ակադեմիաների պատվավոր անդամ:

Զնայած գիտական իր փառքին, նա ապրում էր Հայաստանի հանդեպ կարոտով, հայրենիքը տեսած չլինելու հայրենաբաղձ սիրով, որի մարմնավորումն է «Հայոց աշխարհիկ» պոեմը, որի հետևյալ երկու տողը կցանկանայի վերհիշեցնել Ձեզ.

*Հայրենեաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ քաղցր է հայրենեաց փուշ:*

Այս տողերը հայրենիքի հանդեպ կարոտի իսկապես ջերմ արտահայտություն են: Այսօր էլ մենք՝ մեր սերունդը, հատկապես այսօրվա նոր սերունդը, պետք է լավ կարդա այս տողերը, խորամուխ լինի դրանց մեջ: Ասվածը վերաբերում է «Նահապետի երգերի» ողջ շարքին, որպեսզի լցվեն հայրենասիրության նույն ոգով:

Ալիշանն իր գիտագեղարվեստական գործերով մնայուն խոր հետք թողեց մեր պատմության մեջ և այսօր էլ շարունակում է արդիական մնալ իր արտահայտած գաղափարներով:

Ալիշանի ընդգրկուն գիտագրական ժառանգությանը նվիրված այս գիտաժողովի աշխատանքներին հաջողություն եմ մաղթում:

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ, ՊԱՏՄԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆՅԱՆԻ
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
(6 հուլիսի 2020 թ.)**

Այս տարի 200-ամյա հոբելյանն է մեր ազգային երկու մեծությունների՝ Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի՝ Խրիմյան Հայրիկի և Մխիթարյան միաբան Հայր Դևոնդ Ալիշանի: Գործելով տարբեր միջավայրերում՝ նրանց գիտական, գրական, հրապարակախոսական երկերն ու մանավանդ ազգային-հայրենասիրական գործունեությունն ու ոգին շատ ընդհանուր աղերսներ ունեն և ծառայում են մեկ ընդհանուր նպատակի՝ Հայաստանի և հայության վերածննդին: Երկուսի հոբելյանն էլ արժեր նշել պետական ու համազգային ամենաբարձր մակարդակով՝ հակառակ այն բանի, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն զլացավ դրանք ընդգրկել 2020-ի նշանավոր մարդկանց հոբելյանների ցանկում: Հատկապես Ալիշանի պարագայում մենք՝ հայագետներս, պարտավոր ենք ըստ արժանվույն գնահատելու Սուրբ Դավարի Մեծ Նահապետի թողած ժառանգությունը, որն այսօր էլ՝ գրեթե մեկուկես դար անց, այժմեական է:

Եթե փորձենք շատ կարճ բնորոշել Ալիշանի գործը՝ կարող ենք ասել, որ նա գտավ նոր աշխարհում, քաղաքակիրթ ազգերի կողքին հայ ժողովրդի գոյատևման ու զարգացման իրավունքի վավերաթուղթը, կամ, այլ կերպ ասած՝ տվեց մեր իսկ ինքնության բանաձևը: Եթե Հայր Միքայել Չամչյանը դեռևս 18-րդ դարի վերջին առաջին անգամ ոչ թե որպես միջնադարյան պատմիչ, այլ որպես արդի հետազոտող շարադրեց Հայոց ամբողջական պատմությունը, ապա դրանից շուրջ 100 տարի անց Դևոնդ Ալիշանը ևս մի մեծ առաջընթաց քայլ կատարեց՝ հայագիտության մի քանի գիտակարգերի հիմնադիրը դառնալով:

Տեղագրություն և համագրություն, այս հասկացությունները կարելի է այսօրվա եզրույթով բնորոշել որպես պատմական աշխարհագրություն, բայց այն շատ նեղ է, երբ խորանում ենք Շիրակ, Այրարատ, Սիսուան և Սիսական երկերի բովանդակության մեջ. դրանք ավելի շուտ հանրագիտարաններ են, որոնք ստեղծվել են շատ ավելի վաղ, քան Հանրագիտարան կոչված հրատարակությունները մեր իրականության մեջ:

Այնպես, ինչպես Կոմիտաս վարդապետը հայ ազգային երգ-երաժշտությունը մաքրեց դարավոր փոշուց, գտեց օտարամուտ ազդեցություններից, և այն շողաց իր ողջ մաքրությամբ ու հինավուրց մշակույթի տեղ ժողովրդի բարձր ճաշակով, այնպես էլ Ալիշանը ցույց տվեց, որ Հայաստանը միայն անցյալին չէ, որ պատկանում է, որ սա ապրող ու շնչող մի երկիր է, որ վաղ թե ուշ, իր ինքնությունն ու հպարտությունը

վերագտնելով, հաստատելու է իր տեղն աշխարհի ազգերի մեջ: Ալիշանը այդ նպատակին էր ծառայեցնում նաև այն լեզուն, որ գործածում էր իր ստեղծագործություններում: Նա գրում էր գրաբարով, կամ գրաբարախառն աշխարհաբարով, բայց միշտ էլ իր լեզուն հարուստ էր ու ճոխ և ամենակարևորը՝ նա մի կողմից աշխարհաբարով գրած իր գործերով նպաստեց գրականության ժողովրդականացմանը, բայց մյուս կողմից էլ ապացուցեց, որ դեռևս 5-րդ դարում ձևավորված գրաբարը այնքան կատարյալ մի լեզու է, որ նրանով կարելի է նույնիսկ 19-րդ դարի վերջում արտահայտել տվյալ դարաշրջանին վերաբերող ցանկացած միտք ու հասկացություն:

Մի բան, որ միշտ զարմացրել է Ալիշանի ընթերցողներին և ուսումնասիրողներին այն է, որ նա, երբևէ չլինելով Հայաստանում, կարողացել է, շնորհիվ օգտագործած ծովածավալ նյութերի ու նաև հարյուրավոր վստահելի անձանց, որոնց հետ նամակակցել է՝ շարադրել ապշեցուցիչ մանրամասն ու ճշգրիտ նկարագրություն հայոց նահանգների ու գավառների, իր մեջ ներառելով պատմություն, աշխարհագրություն, միջնադարյան հուշարձաններ, խաչքարեր, վիմագիր արձանագրություններ, տարազ, բուսական ու կենդանական աշխարհ և այլն: Ոչ պակաս տպավորիչ է այն, որ Ալիշանը իր ընթերցողներին փոխանցում է ոչ թե եթերային, այլ իրական, հողեղեն, շոշափելի հայրենասիրություն: Ահա թե ինչու ես կարծում եմ՝ Ալիշանի երկերը շատ ավելի մեծ չափով պետք է ընդգրկել դպրոցական ծրագրերի մեջ:

Օրինակ՝ Հայաստանի աշխարհագրություն ուսումնասիրելիս, ենթադրենք Շիրակի, Արագածոտնի կամ Սյունիքի թեմայով կազմակերպվում է համատեղ դաս Հայոց լեզվի ուսուցչի մասնակցությամբ: Վերջինս աշակերտներին մատչելի ու հասկանալի է դարձնում գրաբարով շարադրված ալիշանյան տեքստը, և ապա այդ ամենը ցուցադրվում է քարտեզների օգնությամբ: Կարծում եմ, որ այդ ձևով դասը կրկնակի օգտավետ կարող է լինել և խոր հետք թողնել պատանիների հոգում:

Ալիշանը թողել է մի այնպիսի վիթխարի ժառանգություն, որի բարիքներից մենք դեռ երկար պիտի օգտվենք, ու որի դաստիարակչական նշանակությունը չափազանց մեծ է նոր սերունդների համար:

Ողջունում եմ համավարակի պայմաններում Ղևոնդ Ալիշանի 200-ամյակին նվիրված այս ձեռնարկի կազմակերպման առթիվ և հաջողություն մաղթում գիտաժողովի աշխատանքներին:

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ ԿՐՕՆԱԻՈՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Հայր Ղեւոնդ Ալիշանի ծննդեան երկրորդ դարադարձին նուիրուած գիտաժողովին, երբ գիտնականներու փաղանգ մը մասնագիտական բազմազան ոլորտներու ուսումնասիրութեամբ հանդէս կու գան դրուատելու Նահապետի, պատմահօր, աշխարհագրագետի, ուսումնասէրի, բանասէրի, հայրենասէր բանաստեղծի բարձրաթոյիչ կերպարը, անհրաժեշտ կը գտնեմ այստեղ անդրադառնալ այս տիտանատիպ Մարդու հոգեկան կառոյցին, խոր համոզումներուն եւ ազատ ընտրութեան արդիւնք՝ Մխիթարեան կրօնաւորի հանգամանքին:

Ս. Ղազարի մէջ դպրոցական կրթութիւնը աւարտելով, տասնըվեցամեայ երիտասարդը երկու տարի կ'ուսումնասիրէ կրօնաւորական կեանքի իսկութիւնը, կը փորձէ նկարագրային եւ մարդկային հակումները եւ ունակութիւնները եւ ի վերջոյ 1838ի 28 Յունուարին Ս. Աւետարանին վրայ ուխտելով՝ վերջնականօրէն կ'անդամակցի Մխիթարեան միաբանութեան:

Իր այս ուխտին հաւատարիմ պիտի մնայ մինչեւ վերջին շունչը, ի հեճուկս տարատեսակ դժուարութիւններու, փորձութիւններու, տառապանքներու: Իր աննկուն կամքը, անսահման վստահութիւնը Աստուածածին Մարիամի՝ երկնաւոր քաղցր մայրիկին հանդէպ՝ որու որդեգիրը կը դաւանէր ինքզինք անվեհեր, միշտ հօգօր եւ վճռական հաստատուն պիտի պահէին զինք, փարատելով երդմնազանցի կամ ուխտադրուծի խաւարն ու վտանգը, լուսաշող դէմք ու կեցուածք պարգեւելով՝ որով պիտի հմայէր մատղաշ սերունդ մը, բիրաւոր աշակերտներ, հայրենակիցներ, այցելուներ եւ գործընկերներ, եւ պիտի առաջնորդէր ի սէր Աստուծոյ, հայրենիքի եւ եկեղեցւոյ:

Հ. Ղեւոնդ Ալիշան իր ներոյժը կը լիցքաւորէր ամենօրեայ աղօթքներու հաւատարմութեամբ եւ անդով գործունէութեամբ: Ժամերգութիւն, Ս. Պատարագ, խոկումն Սուրբ Գրոց, Պսակ Կուսին եւ անխոնջ աշխատանքը՝ ինկաբոյր վանքերու եւ սրբարաններու, լուսաշող վկայարաններու, սրբափայլ արձանագրութիւններու, օծեալ թագաւորներու եւ ոսկեգօծ ձեռագիրներու մէջ անընդհատ պրպտելու, պեղելու եւ լոյս աշխարհ բերելու Հայոց պատմութեան ամենափոքր իսկ նշխարը:

Խոնարհ, հեզ, համեստ, եղբայրասէր, համբերութեան հրահանգուած, ուղղամիտ ու ճշմարտասէր, աշխատասէր, աղօթասէր եւ հայրենասէր:

Ժրաջան՝ աշխատանքի արդիւնքով ան հասաւ ոչ միայն գիտութեան,

այլ եւ սրբութեան բարձունքները: Իսկական գաւակ Մըխիթարի, յաջողեցաւ թափառնել, սլանալ ու սաւառնիլ թէ՛ սրբութեամբ եւ թէ՛ գիտութեամբ:

Մարդկային կեանքի ընթացքին, երբ չարը մեզ կը թիրախաւորէ, հեղձ ու ցոփ կեանքով շատ շատերը հեշտութեամբ կը կործանէ: Իսկ երբ դիմադրութիւն գտնէ, դրամասիրութեամբ, ազահութեամբ, ընչաքաղցութեամբ կը գերեզմարէ: Հուսկ ուրեմն, որպէս վերջին փուլ եւ մարտահրաւեր, չարը կը հրահրէ իսրայէլացիներու «Եսկէ հորթ»ի պաշտամունքը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ փառամոլութեամբ կուրացումը եւ սեփական ԵՍ-ի պանծացումը, աստուածացումը, պաշտամունքը: Փառք, պատիւ եւ երկրպագութիւն սեփական անձին ու եսին՝ կ'առաջնորդեն իսկականորէն փքուածութեան, ինքնասիրահարման, եւ անխուսափելի կործանումի:

Խելայեղ, ինքնամոռաց ամբարտաւանութեան զգլխիչ գինովութեամբ չարը կը փորձէ նաեւ մեր սրբակենցաղ վարդապետը՝ երիտասարդ իսկ տարիքէն:

Արդարեւ, ինչպէս կը հաւաստէ Ալիշանի կենսագիրը՝ Ն. Սիմոն Երեմեան, ան քսանեօթ տարեկանին արդէն՝

1. «1847ին [Վենետիկի] թագաւորական ուսումնական գիտնոց ժողովոյն կաճառորդ» կը դառնայ,

2. 1876ին կ'անդամակցի ֆրանսական Ակադեմիային եւ

3. «1886ին Գաղղիոյ պատուոյ լեգէոնին կ'արժանանայ:

4. 1887ին Պատուոյ անդամ կ'ըլլայ Իտալիոյ Ասիական ընկերութեան»¹:

5. 1892ին Եգիպտոսի փոխարքայէն կը ստանայ Կայսերական կարգի «Մեծիտիէլի» երրորդ կարգի շքանշանը:

6. «1894ին Մոսկուայի Հնաբանական ընկերութիւնը, զայն իրեն կաճառորդ կ'ընէ,

7. երկու տարի յետոյ 1896ին տեղւոյս հին ու պատկառելի վենետկեան կաճառը զինքը իր պատուոյ անդամներու մէջ մըտցնելու հաճոյքն կ'ունենայ:

8. Նոյն 1896 տարին Պետերպուրկի հնաբանական ընկերութեան անդամ կ'ընտրուի, իսկ

9. 1897ին Ենայի Փիլիսոփայական ակադեմիոյ»²:

10. 1900ին Լայպցիկի «Հայ ճեմարանական ընկերութիւն»ը զինք պատուոյ անդամ կ'անուանէ:

Փարիզէն Մոսկուա, Ս. Պետերպուրկէն Ֆլորէնցիա, Վենետիկէն Լայպցիկ, մէկ խօսքով գիտական ամբողջ ժամանակակից աշխարհը Ալի-

¹ ԵՐԵՄԵԱՆ, Ն. Ս., *Կենսագրութիւն Ն. Ալիշանի*, Ս. Ղազար, Վենետիկ 1902, էջ 160:

² Նոյն:

շանի փառքը կը հիւսէր ու համբաւը կը հռչակէր: Սակայն ինք բացարձակապէս չէր հետաքրքրուած այդ ամէնով: Հ. Սիմոն Երեմեան կը գրէ. «...այս ամէն պատիւ իրեն համար ունայնութիւն էին, նա խոյս կու տար ծանօթանալէ, փառաւորուելէ, սակայն փառքը իր ետեւէն կը վազէր եւ իր գրքերուն մէջ կը պսակէր անոր անխոնջ աշխատանքը»¹:

Համեստութեան եւ աշխարհի չափանիշներու հակոտնեայ արժէհամակարգի հաւատացող, կրող եւ կեանքի կոչող հերոս մը միայն կրնայ այսպիսի անջատման հոգիով վերաբերիլ աշխարհիկ փառքի եւ պատիւներու հետ, որոնց ցանկութենէն Հ. Ղեւոնդ Ալիշան աներեւակայելիօրէն հեռու անձ էր: Երբ արդէն կը բազմանան մեծարանքի ցոյցերը իր անձին հանդէպ՝ այսպէս կ'արտայայտուի իր միաբանակից եղբօր գրած նամակի մը մէջ.

«Հ[այր] Ղեւոնդ անդամակից է Ակադեմիայի Ս. Ղազարու վանաց Սխիթարեանց, եւ միայն սմին, եւ ոչ այլում ումէք, ոչ է, եւ ոչ կամի լինել, եւ ոչ թղթակից է, ըստ իմաստին, զոր իմանայ հարցանողդ (Correspondant). եւ թէ կամիցին եւս այլք ընկերագրել զինքն՝ մերժէ, այսինքն չառնու յանձն, որպէս արար սակաւությառաջ իտալական ընկերութեան միոյ: Իսկ եթէ յանգէտս եւ յանկամս իւր գրիցեն զնա, տհաճի եւ անընդունող համարի: Պատուանշանքն են կապայն, գդակն, գօտին, փիլոն, եւն:....

Ողջ լեր»²:

Զուր տեղ չէ, որ Հ. Սիմոն Երեմեան կը գրէ. «Հ. Ալիշանի ամբողջ կեանքը եղած է ճգնութեան խնկարան եւ դպրութեան թանգարան: Նա իր աչաց առջեւ ունէր հին միաբաններու ժամանակակից՝ հոգեւոր հոգեկից՝ մտօք փառակից, Հ. Աւգերեան մատենագիր աստուածաբանն, Ինճիճեան մեծ հայրենագէտ եւ Պինդարական դասուն մրցակից հոյակապ հայկաբանն Բագրատունի: Նա կարդացած էր իր միաբանութեան հիմնադրին եւ հաստատուն սեանց վարքն ու բարքն. Կարդացած էր Հայաստանի մենաստաններու մէջ ճգնող եւ ազգին հոգին ու միտքը վերականգնող Սահակայ, Մեսրոպայ, Խորենացւոյն, երեք Ներսէսներու եւ աղաւնի Նարեկացւոյն եւ այլ բազմաթիւ հարազատ սուրբերու հետեւելի վարքն. Անոնց ամէնուն միտքն ու հոգին իրեն սրտին ու գրչին առաջնորդ առած, նա կ'անցնի պատկառելի ժամանակին վըրայէն՝ թողլով իր ետեւը հրեշտակաց նախանձելի խնկաբոյր հոգւոյ մշտնջենաւոր ողջակիզում եւ հայ հանճարներու զարմանք ու զմայլանք առթող մտքի եւ գրչի վաստակ, բարդ ի բարդ գրքեր: Իր համեստ, ազնիւ, քաղցր եւ երկիւղած բնավորութիւնը՝ միանալով բնատուր տաղանդին, հան-

¹ Նոյն, էջ 160-161:

² ՕՀԱՆԵԱՆ, Հ. Վ., *Հայր Ղեւոնդ Ալիշան, Նամականի*, հտ. Գ., Սխիթարեան Հրատարակչատուն, Երեւան, 2021, էջ 344, թիւ 2165:

ճարին եւ յիշողութեան, ձուլուեցաւ աննման ճգնաւորն եւ մատենագիրն Հ. Ալիշան»¹:

Այս տողերը կը փաստեն, որ կը գտնուինք տարբեր արժեհամակարգի մը դիմաց քան այսօրուան քարոզչական շեփորահարուող աշխարհիկ ցանկութիւնները:

Ալիշան իր սիրելի կղզեակի խուցին մէջ, «սեւեռած աչքը միշտ դէպի բարձրութիւնները երկնքին, ուր կը տեսնէ իր յաւերժական հայրենիքը, օտար եւ նժդեհ կը զգայ ինքզինքը երկրիս վրայ»², կը գրէ ականատեսներէն Հ. Յովհաննէս Թորոսեան:

Աղօթք, հոգեւոր կեանք, ճգնութիւն եւ խոկում՝ քրիստոսակերտման միջոցներն եղան օրինակելի կրօնաւորի կեանքին ընթացքին, որու սրբակենցաղ համբաւը կը շրջէր ամէնուր, որու պատճառով իսկ երիտասարդ միաբաններ գաղտագողի, հոգելոյս Վարդապետի մօրութեն ու մազերէն փունջ մը պահած էին իրենց մօտ, զերդ մասունք:

¹ ԵՐԵՄԵԱՆ, Հ. Ս., նշ. աշխ., էջ 179:

² ԹՈՐՈՍԵԱՆ, Հ. Յ., Ալիշան (իր խցիկին մէջ), «Բազմավէպ», ՀԸ(1920), թիւ 12, էջ 355:

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՀ ԳԱՄ ակադեմիկոս,

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ashamelk@yahoo.com

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՌԱՀՎԻՐԱ

Բանալի բառեր՝ Մխիթարյան հայագիտություն, Հ. Միքայել Չամչյան, Հ. Ղուկաս Ինճիճյան, պատմական աշխարհագրություն, Արցախ, ժողովրդագրություն, Մովսես Խորենացի, նոր շրջանի հայ պատմագիտություն:

Ինչպես 19-րդ դարի, այնպես էլ ամբողջ հայագիտության անդաստանում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ հայր Ղևոնդ Ալիշանն ունի առանձնահատուկ տեղ ու դեր: Պատահական չէ, որ հաճախ նկատի ունենալով այդ հանգամանքը, շատ հետազոտողներ նրան են վերագրում հայագիտության բազմաթիվ ճյուղերի աննախադեպ վերելքի ապահովման պատիվը՝ սակայն երբեմն մոռանալով այն նպաստավոր միջավայրը, որի մեջ իր գործունեությունն է սկսել Ալիշանը, եւ որին պարտական է ոչ միայն ինքը, այլև հայագետների մի ամբողջ ոսկեբույլ: Անշուշտ, խոսքը Մխիթար աբբահոր հիմնադրած Մխիթարյան միաբանության մասին է, որն արդեն ձևավորել էր բազմաճյուղ հայագիտական մի այնպիսի հզոր դպրոց, որի ներկայացուցիչներն էին ականավոր դեմքեր Մխիթար Մեբաստացին, Միքայել Չամչյանը, Ղուկաս Ինճիճյանը և ուրիշներ: Ուստի անհրաժեշտ է ընդգծել, որ հայր Ալիշանը որպես գերհզոր հայագետ, առնվազն՝ հայ բանասիրության, պատմագիտության և պատմական աշխարհագրության երկնակամարում փայլատակած ամենավառ անհատականություններից մեկը, ինչու չէ՝ հայագիտության բնագավառում իր հավասարը չունեցող հզոր ռահվիրա, առաջին հերթին իր փառահեղ միջավայրի ծնունդն էր: Այսինքն՝ մինչև հայր Ալիշանը, Մխիթարյանների հայագիտական դպրոցն իր գրեթե բոլոր ճյուղերով ոչ միայն կայացել էր, այլև հասել էր նոր դարաշրջանի դասականության մակարդակի: Մեր կարծիքով՝ հենց դրանում է Ալիշան-հայագետի ֆենոմենի գաղտնիքը:

Այդ իմաստով արդար կլինի հիշատակել, որ նույնիսկ առանձին դեպքերում հայր Ալիշանը, հիմնվելով իր նշանավոր նախորդների ստեղծած հարուստ գիտական ժառանգության վրա, կարողացավ միայն

հարստացնել Մխիթարյանների գիտելիքներն այդ ոլորտում՝ դրանք հասցնելով նոր բարձրության: Այդ պարագայում, սակայն, նախորդ հետազոտողների ներդրումը ինչ-որ ձևով մնաց ստվերի տակ՝ նույնպես վերագրվելով հայր Ալիշանին: Բայց այդ հանգամանքի մատնանշումը, անտարակույս, ամեննին չի նսեմացնում նրա վիթխարի ծառայությունների դերը, այլ ընդհակառակը՝ կարևորում է միևնույն գիտական դպրոցի դերակատարությունը հայագիտության զարգացման գործում:

Փորձենք ներկայացնել Ալիշանի անցած կրթագիտական ուղին ու այն միջավայրը, որի շնորհիվ վեր հառնեց ալիշանական միտքը և վերածվեց հայագիտական հզոր դպրոցի: Հայագիտության նկատմամբ պատանի Ղևոնդ (Քերովբե) Ալիշանյանի նախասիրության ձևավորումը պատահական չէր: Նա ծնվել է հնագետ-դրամագետ Պետրոս Ալիշանյանի ընտանիքում: Նախնական կրթությունը Կ.Պոլսի Չալըկյան վարժարանում ստանալուց հետո նա 12 տարեկան հասակում ոտք է դնում Ս.Ղազար, ավարտում վանքի դպրոցը և 1841 թ. անցնում հոգևոր ծառայության, իսկ մի քանի տարի անց՝ նաև ուսուցչության ու լրագրության՝ նոր հիմնադրված համբավավոր «Բազմավեպում»:

Հայր Ալիշանն իր գրական ու գիտական գործունեությունն սկսել է բանաստեղծություններով՝ գրված դասական գրաբարով, Մխիթարյանական բանասիրական դպրոցի կանոններով: Զուգահեռաբառ տարբեր դպրոցներում աշխատանքի ընթացքում դրսևորվում է նաև երիտասարդ վարդապետի մանկավարժական տաղանդը. նա շուտով դառնում է իր սաների սիրելի ուսուցիչներից մեկը:

19-րդ դարի կեսերին հայր Ալիշանի կյանքում սկսվում է գործունեության նոր փուլ. նրան վիճակվում է Եվրոպայում իրականացնել երկար ու խիստ օգտավետ շրջագայությունների մի շարք, լինել Հռոմի, Լոնդոնի զանազան գրադարաններում, Քեմբրիջի և Օքսֆորդի համալսարաններում, ուսումնասիրել հայկական ձեռագրերը, դրանք ցուցակագրել: Այս նա մեկնում է Գերմանիա, Ավստրիա, Ֆրանսիա, Բելգիա, հարստացնում իր գիտելիքները, խորացնում եվրոպական լեզուների իր իմացությունը: Վերադառնալով Ս. Ղազար՝ հայր Ալիշանն այդուհետ շուրջ կես դար ծավալում է հայագիտական բուռն գործունեություն՝ ստեղծելով վիթխարի գրական ու գիտական ժառանգություն:

Ղևոնդ Ալիշանը հայագիտություն մուտք գործեց գրական-գեղարվեստական ստեղծագործություններով, որոնց թեման ձևավորվել է 19-րդ դարի 40-50-ական թվականներին Եվրոպայում, մասնավորապես Իտալիայում ծավալված ազգային-ազատագրական շարժումների ազդեցությամբ: Հիշատակության արժանի են հատկապես «Բազմավեպում» «Նահապետ» գրական կեղծանունով տպագրված բանաստեղծությունները: Հե-

դինակը, ոգեշնչված եվրոպական հեղափոխությունների գաղափարներով, իր «Պլպուլը Ավարայրի», «Բամբ որոտան», «Հրագդան», «Մասիսու սարերն», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանայ» ստեղծագործությունների նյութ է ընտրում «հայ յեղափոխական իրադարձությունները»՝ սկսած 5-րդ դարի ազատագրական պատերազմներից մինչև նոր ժամանակներ: Այս ստեղծագործությունները հետագայում լույս են տեսնում առանձին գրքույկներով՝ շատ ինքնատիպ՝ «Մանկունի», «Հայրունի», «Տխրունի» վերնագրերով: Այս ստեղծագործությունների շարքը սերունդներին հիշեցնում է հայ ժողովրդի փառահեղ անցյալը, ազատ ապրելու անկոտրում կամքը, ապագայի նկատմամբ անսահման հավատը: Հայր Ալիշանը նույն թեման արծարծեց նաև արձակում «Խորհրդածութիւնք՝ ընդ եղեւնեաւ» խորագրով: Նրա արձակ գլուխգործոցը դարձան «Յուշիկք հայրենեաց հայոց», «Կարմիր Վարդան», «Արգար դպիր» գործերը:

Հայր Ալիշանի գրական ժառանգության կարևոր մաս են կազմում նաև տարբեր լեզուներից կատարած մեծաքանակ թարգմանական գործերը: Հավելենք նաև, որ Ղևոնդ վարդապետը միաժամանակ հանդիսանում է հայ գիտական բանագիտության առաջին հետազոտողներից մեկը:

Անհնարին է շրջանցել նաև հայր Ալիշանի ծառայությունները արևմտահայ աշխարհաբարին անցնելու գործում: Պատահական չէ, որ նրա մի շարք աշխատություններ գրված են աշխարհաբարով՝ համեմված գրաբարի անգուգական բառապաշարով ու կանոնական ձևերով:

Բավարարվելով հայր Ալիշանի գրական գործունեության սույն թռուցիկ ակնարկով՝ փորձենք անդրադարձ կատարել նրա գիտական ժառանգության ամենածանրակշիռ բնագավառին՝ պատմաաշխարհագրական աշխատություններին:

Ինչպես 18-րդ դ. վերջին և 19-րդ դարի սկզբին հայր Ղուկաս Ինճիճյանը, այնպես էլ 19-րդ դ. երկրորդ կեսին հայր Ղևոնդ Ալիշանը տասնամյակներ շարունակ զբաղվեցին պատմական Հայաստանի աշխարհագրությամբ և ժողովրդագրությամբ՝ հեղինակելով մի շարք կոթողային աշխատություններ¹: Սակայն ի տարբերություն Ինճիճյանի, որն այդօրինակ հետազոտությունների ընթացքում խնդրին առավելապես անդրադառնում էր պատմաաշխարհագրական տեսանկյունից, հայր Ալիշանը գուգահեռաբար ներկայացնում էր նաև տվյալ աշխարհագրական միջա-

¹ Հայր Ղուկաս Ինճիճյանի պատմաաշխարհագրական ու ժողովրդագրական բնույթի աշխատությունների մասին տե՛ս Մելքոնեան Աշոտ, Հայր Ղուկաս Ինճիճեանի աւանդը Հայաստանի պատմական աշխարհագրութեան և ժողովրդագրութեան ուսումնասիրութեան բնագաւառում, Բազմավէպ, 2017, թիւ 3-4, էջ 104-113:

վայրում տեղի ունեցած պատմական կարևորագույն իրադարձությունների վերլուծությունը:

Հայագիտության երախտավոր վարդապետն իր առջև բարդ ու դժվարին խնդիր դրեց՝ խորացնել նախորդ ուսումնասիրողների պատմա-աշխարհագրական բնույթի հետազոտությունները և Հայաստանի բոլոր նահանգների վերաբերյալ ստեղծել հիմնարար ու մեծադիր 20 հատորներ: Այդպիսի աշխատություններից առաջինը լույս տեսավ 1855 թ. «Տեղագիր Հայոց Մեծաց» վերնագրով: Հեղինակը հանգամանորեն ներկայացրեց Մեծ Հայքի գավառների ֆիզիկաաշխարհագրական, կենսաբանական ու պատմական ընդհանուր բնութագիրը: Հետևելով հայր Ինճիճյանի օրինակին՝ նա Հայաստանի պատմաաշխարհագրական ակնարկը կատարում է ըստ օտար տիրապետությունների տարածաշրջանների՝ Օսմանյան Հայաստան, Պարսից Հայաստան և Ռուսաց Հայաստան: Նախ՝ հանգամանորեն անդրադառնում է գավառների բնակչության պայմաններին, ապա ներկայացնում Հայաստանի մեծագույն մասը կազմող Արևմտյան Հայաստանը, որից հետո անցնում է Պարսկահայաստանին ու Ռուսահայաստանին:

Հայրենասեր վարդապետը Հայաստան աշխարհի անվան բացառության հարցում առաջնորդվում է խորենացիական տեսությամբ. «Աշխարհն որ յանուն Հայկայ հեղինակի ազգիս եւ լեզուի՝ յորում գրի բանս, կոչի ՀԱՅՔ և ՀԱՅԱՍՏԱՆ՝ ի բնիկ ժողովրդենէն, իսկ յօտարաց Արմենիա կամ Արմէնք՝ յանուն հայկածին նահապետացն Արմենակայ եւ Արամայ, և կամ ըստ պանծանաց բնակչացն առաջնոյ՝ իբրև Արի-արանց երկիր. իսկ ըստ Սրբազան գրոց Երկիր ԱՐԱՐԱՏԱՅ»:¹ Սույն աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է օսմանյան տիրապետության շրջանում Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական տեղաշարժերին, կրոնական ու էթնիկ այլացումներին, մեր հայրենիքն օրեցօր օտար ցեղերով բնակեցնելու, հայությանն իսլամ պարտադրելու թուրքական իշխանությունների քաղաքականությանը:

Ինչպես այս, այնպես էլ այլ աշխատություններ շարադրված են ալիշանական ճոխ լեզվով: Մեջբերենք մի հատված Արևելյան Հայաստանի աշխարհագրական նկարագրությունից. «Պար կամ աղխադակոյտ լերանց տարածեալ ընդ լայն և ընդ երկայն՝ ընդ մեջ գետոցն Աղստետոյ եւ Հրազդանայ, ի կողմանց երրորդի պարուն ցգետն Երասխ ընդ հարաւ արևելից ի կողմանս Գարապատու, և յելից կուսէ ի կողմանց Գանձակայ ցնոյն Երասխ ի սահմանս դաշտին Շարուրայ և Նախիջևանայ. զայս պար

¹ Ալիշան Ղեւոնդ, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 7:

յանուն ԳԱՐԱՊԱՂՈՒ՝ ի դէպ է կոչել, զի անդ է կենդրոն եւ բազմակոհակ կոյտքն լերանց, կամ թէ Կովկաս Հայոց...»¹:

Ուշագրավ է հայր Ալիշանի խոսքը Արցախի մասին: Նա չի մոռանում հիշել Արցախի ազնվացեղ նժույզներին, որոնց համբավը տարածված էր ամենուր: Պատահական չէ, որ Պարսից արքունիքը Արևելյան Հայաստանից գանձվող հարկերի մեջ կարևորում էր արցախյան նժույզների ստացումը. «Ի գրաստուց ազգի պատուականագոյն են երիվարք եւ ձիգ նժոյգ Գարապաղու..., զոր փոխան գանձուց հարկէին երբեմն վարիչք աշխարհիս՝ դրանն Պարսից»²: Անդրադանալով Սեւանա լճի հարուստ ձկնատեսակներին՝ հայր Ալիշանը հպարտորեն նշում է, որ «ի լիճս՝ յորս տառեխ միայն ի Վանայն, իսկ ի Սեւան իբրև 15 ազգք ձկանց ճանաչին, յորս 12 կոչին հայեցի անուամբք եւ այլազգեօք, որպէս Կոդակ, Բադդակ, Աղինճան, Իշխանաձուկն, Գեղարքունի, Կռակտուց, Պէօճէկ, Ամառն, Բէխլու, Կարմրախէտ, Չալաձուկն, Չուար»³:

Սույն աշխատությունից հետո պատմաաշխարհագրական աշխատությունների տպագրման հարցում հայր Ալիշանը որոշ իմաստով դադար տվեց և մի քանի տասնամյակ շարունակ առավելապես զբաղվեց նյութերի հավաքմամբ: Բանն այն է, որ նա որոշել էր բավարարվել ոչ թե ընդհանուր ամբողջական Հայաստանի պատմական աշխարհագրության ներկայացմամբ, այլև հանգամանորեն ուսումնասիրել ու հրատարակել գործեր Մեծ Հայքի բոլոր նահանգների ու նշանավոր գավառների մասին առանձին-առանձին⁴:

Այդպիսի աշխատություններից «Միսուանը», որն իր անունը ստացել է հայկական մայրաքաղաքներից Միսի անունից, նվիրված է Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափին ընկած մի ամբողջ երկրի՝ Կիլիկիայի աշխարհագրությանն ու պատմությանը: «Այրարատը» և «Միսականը» վերաբերում են Մեծ Հայքի համանուն երկու նահանգներին: Մինչդեռ «Շիրակ» հատորը Այրարատ աշխարհի մի գավառի՝ Շիրակի մասին է, որում այդ երկրամասի աշխարհագրությունը շարադրված է կարևորագույն պատմական իրադարձություններին՝ մասնավորապես Անիի Բագրատունիների թագավորության մանրամասն պատմությանը, զուգընթաց: Հասկանալի է, որ Շիրակ գավառին առանձին հատոր նվիրելը պայմանավորված էր ինչպես Այրարատ աշխարհի, այնպես էլ ամբողջ Հայաստանի

¹ Նույն տեղում, էջ 9:

² Նույն տեղում, էջ 19:

³ Նույն տեղում, էջ 20:

⁴ Տե՛ս **Ալիշան Ղևոնդ**, Շիրակ, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, նույնի՝ Միսուան, Վենետիկ, 1885, նույնի՝ Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, նույնի՝ Միսական, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1893:

պատմության մեջ նրա ունեցած դերով: Պատահական չէ, որ հայր Ալիշանը Շիրակի, հատկապես նրա զարգացած միջնադարի պատմությունը հավասարագոր է համարում եվրոպական երկրների, մասնավորապես Ֆրանսիայի պատմությանը: Հեղինակը հպարտորեն խոսում է Անիի, Շիրակավանի, Մարմաշենի ճարտարապետական հզոր կոթողների, Կումայրի-Ալեքսանդրապոլի, Շիրակի տարածքում հայտնաբերված հարուստ վիմագիր արձանագրությունների և բազմաթիվ այլ հարցերի մասին:

Ինչպես նախորդ աշխատությունները, այնպես էլ «Միսականը» շարադրված է ըստ ենթաշրջանների՝ Գեղարքունիք և Սոդք, Վայոց Ձոր կամ Եղեգեայ ձոր, Ծղուկ, Հաբանդ, Աղահեճք, Բաղք, Կովսական, Ձորք և այլն¹:

Անտարակույս, հայր Ալիշանի պատմաաշխարհագրական աշխատությունների շարքում իր նշանակությամբ հավասարը չունի «Այրարատ» ծանրակշիռ ու մեծադիր հատորը, որը միաժամանակ ողջ Հայոց Միջնաշխարհի պատմությունն ու աշխարհագրությունն է, բուսաբանությունը, գյուղագրությունը, ժողովրդագրությունը և այլն: Հեղինակի կարծիքով՝ Այրարատի տեղը մեր ժողովրդի կյանքում առանձնահատուկ է, քանի որ այն հիշատակվում է Աստվածաշնչում և նրա անունից է ծագում մեր երկրի անվանումը: «ԱՅՐԱՐԱՏ անդրանիկ է աշխարհագրական անուանց երկրի վերածնելոյ մահառիթ և կենսաշիթ մկրտութեամբ ջրհեղեղին, - պատկերավոր գրում է հայր Ալիշանը, - եթե իցե օրէն այսպէս ասել, զոր առաջինն, ի Գրոց Սրբոց մատնացոյց արարեալ ամենայն հաւատացելոց՝ ի յառաջաբանի պատմութեան համօրէն: ...Եթէ Ս. Գիրք՝ միայն զմի ի հնգետասան աշխարհացն Հայոց Մեծաց, որ յատկաբար ի մեզ կոչի Այրարատ, համարիցին նշանակել այնու անուամբ, այլ Արարատեան երկիր, Լերինք և Ազգ և Գունդ»²:

Աշխարհների շարքում հայր Ալիշանն անդրադարձ ունի նաև Արցախին, որն անավարտ մնաց և բնականաբար, ամբողջական հատորով նրա կենդանության օրոք չհրատարակվեց³:

Անշուշտ, մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ անգամ թռուցիկ անդրադառնալ հայր Ալիշանի հարուստ գիտական ժառանգության բոլոր կողմերին: Բավարարվելով վերոհիշյալով՝ միայն արձանա-

¹ Տե՛ս Տեղագրութիւն Միւնեաց աշխարհի, ի Հ. Ղեւոնդայ Մ. Ալիշան, Մ.Մխիթարեան, Վենետիկ, 1883:

² **Ալիշան Ղեւոնդ**, Այրարատ, էջ 1:

³ 1980-ականների վերջին՝ Արցախյան շարժման օրերին, Մխիթարյաններն Արցախին նվիրված հոդվածները տպագրեցին «Բազմավեպում», իսկ Երևանի պետական համալսարանը Արցախին վերաբերող նյութերն առանձին գրքով հրատարակեց աշխարհաբարով: Անտիպ է մնում «Ուտիք» հատորը (տե՛ս **Գ.Ա. Կառապետյան**, Ղևոնդ Ալիշան, «Արցախ, Երևանի համալսարանի հրատ. , Ե., 1993):

գրենք, որ հայագիտության տիտանը հեղինակ է նաև այնպիսի նշանավոր երկերի ու ժողովածուների, ինչպիսիք են «Հայրուսակ», «Հայապատում», «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց», «Աբուսահլ հայ», «Ռամկական երգ» և այլն:

Ամփոփելով կարող ենք պնդել, որ հայագիտությունը, որի հիմքերը դրվեցին 5-րդ դարում հայ գրերի գյուտով, իր մատենագրական շրջափուլն ապրեց 5-8-րդ դարերում, ապա 18-րդ դարի վերջին և 19-րդ դարում միիթարյան հայրեր Միքայել Չամչյանի, Ղուկաս Ինճիճյանի և հատկապես Ղևոնդ Ալիշանի շնորհիվ հասավ իր դասականության գագաթնակետին՝ հաջորդ ժամանակների հայագետների ուսումնասիրությունների համար նախապատրաստելով հզոր հենք ու պարարտ հող:

АШОТ МЕЛКОНЯН
Академик НАН РА

РЕЗЮМЕ

ОТЕЦ ГЕВОНД АЛИШАН - ПРОКЛАДЫВАЮЩИЙ ДОРОГУ АРМЕНОВЕДЕНИЯ

Ключевые слова: мхитаристское арменоведение, отец Микаел Чамчян, отец Гукас Инчичян, историческая география, Арцах, демография, Мовсес Хоренаци, армянская историческая наука нового периода.

Отец Г. Алишан поднял историческую науку Венецианской Конгрегации Мхитаристов на новый научный уровень.

Вклад Алишана велик, особенно, при изучении исторической географии и демографии Армении.

Ученые-мхитаристы предыдущего периода, особенно отец Г. Инчичян, представляли историко-географический раздел Армении, а Алишан также писал, какие события происходили на данной географической территории. Алишан продолжил традиции армянской историографии, используя новую научную методологию. Армянская классическая историческая наука благодаря Мхитаристам, особенно отцам Микаелу Чамчяну, Г. Инчичяну и Г. Алишану, стал тем фундаментом, на котором строится арменоведение нового периода.

ASHOT MELKONYAN
Academician

FATHER GHEVOND ALISHAN AS A PATHMAKER OF ARMENIAN STUDIES

ABSTRACT

Key words: Mekhitarist Armenology, Father Mikael Chamchyan, Father Ghukas Inchichyan, historical geography, Artsakh, demography, Movses Khorenatsi, Armenian historiography of the new period.

Father Ghevond Alishan enhanced the School of History of the Mekhitarist Congregation in Venice to a new scientific level. Alishan's contribution is enormous especially in the study of the historical geography and demography of Armenia.

If the Mekhitarist scholars of the previous period, especially Father Gh. Inchichyan represented in his works merely the historical-geographical division of Armenia, Father Ghevond Alishan illustrated the events that took place in the given geographical environment.

Gh. Alishan carried out an innovative scientific methodology which led him to embark into laborious contributions within the framework of the Armenian historiography traditions.

Thanks to the Mekhitarist Fathers, especially F. Mikael Chamchyan, F. Gh. Inchichyan and F. Gh. Alishan, the Armenian classical historical science became a solid background for the further evolvement of the new period of Armenian Studies.

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ,
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
aelita.dolukhanyan@gmail.com

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՂԵՎՈՆԴ
ԱԼԻՇԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

*Բանալի բառեր*¹ Ղևոնդ Ալիշան, Աստվածաշունչ, հայ պատմագրություն, հերոս, փառք, ապագա, պետականություն, գորավար, Եղիշե, Մովսես Խորենացի:

Ղևոնդ Ալիշանը Մխիթարյան միաբանության լուսավոր դեմքերից է, որի անունը կենդանության օրոք լայնորեն հայտնի էր XIX դարի Եվրոպայի հայագիտական շրջաններին՝ որպես բազմազգիտակ հետազոտողի: Նա պատմաբան էր, հայագետ, բնագետ, աշխարհագրագետ, հնագետ, բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ:

Մեծագույն աշխատասիրությունը, հայրենի գիտությանն ու գրականությանը նպաստ բերելու անձանձիր մղումը Ալիշանի գրական, գիտական ժառանգությունը հարստացրին մեկ մարդու համար ստեղծածի անհավատալի չափերի:

Նշանավոր գիտնականի մահվանից հետո Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերը հրատարակեցին նրա կենսագրությունը, որը խիստ փաստահարուստ է, լի նրան անձամբ ճանաչողների վկայություններով: Ալիշանի նպատակն է եղել պետականությունը կորցրած, սակայն քաղաքակիրթ մարդկության պատմության մեջ իր կարևոր դերն ունեցած Հայաստանը ներկայացնել օտարներին, նաև իր աշխատություններով հայ նոր բարձրացող սերնդին պատմել Հայաստանի լուսավոր գործերով լի անցյալի մասին՝ վերջինիս ապագան նախապատրաստելու ազգանվեր միտումով:

Ալիշանի կենսագրության մեջ կարդում ենք. «Գաղիացի ուսյալ դեմքեր, վարժարան հաճախելով, մեր ազգի մասին շատ գոհացուցիչ տեղեկություններ կառնուն: Հ.Ալիշան իր բնատուր ձիրքով օտարին զՀայաստան հրաշակերտ մը կնկարագրե և հայությանը հանճարեղ ազգ մը: ... Հեռավոր և խոր տեսությամբ, վարժարանի հանդիսավոր տոնախմբության օրերուն, հայրենիքի մասին միշտ կկարդար գրավիչ գաղիերեն ճառեր»:¹

¹ «Կենսագրություն հ. Ալիշանի», Վենետիկ, 1902, էջ 74:

Ալիշանից մեզ հասել են բանաստեղծական մի քանի ժողովածուներ: Դրանց մի մասը գրաբարով է: Սակայն նրա «Նվագներ» ժողովածուն արևմտահայերեն գրական լեզվով է, և հեղինակն այս ժողովածուով դառնում է արևմտահայ գրական նոր լեզվի հիմնադիրը: Այս իրողությունը հայտնի է ոչ միայն հայ բանասիրությանը, այլև օտարազգի հայագետներին՝ հատկապես ռուսներին, որոնք XX դարասկզբին հայ առաջնակարգ բանաստեղծներին թարգմանեցին ռուսերեն՝ նրանց մասին հայտնելով գրականագիտական գնահատականներ: Որպես բանաստեղծ՝ Ալիշանը ներկայացվեց Վալերի Բրյուսովի (1873-1924) կազմած «Поэзия Армении» ժողովածուում, ուր թարգմանաբար բերվեց նրա «Հրազդան» հայրենաբաղձ բանաստեղծությունը:¹

Ալիշանի բանաստեղծական ժառանգությունն առավել հանգամանալի գնահատել է ռուս գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ, հայագետ Յուրի Վեսելովսկին (1872-1919): Նրա կարծիքով Մխիթարյանների մեջ ամենատաղանդավոր բանաստեղծն անվիճելիորեն Ղևոնդ Ալիշանն է, որը մեծ հաջողությամբ հայերեն է թարգմանել Շիլլերի և Բայրոնի գործերից: Նա գրել է մեծաքանակ հայրենասիրական տխուր բանաստեղծություններ, որոնց խորթ են ազգայնամոլությունն ու չարությունը: «Երբեմն Ալիշանը դիմում է իր ազգի անցյալին՝ իր նախնիների հերոսական գործերից սփոփանք քաղելով»:² Նա միաժամանակ նշում է, թե Ալիշանի բանաստեղծությունը մեծ ազդեցություն է թողել XIX դարի հայ քնարերգության լավագույն բանաստեղծներից մեկի՝ Մկրտիչ Պեշիկթաշյանի (մահ. 1868թ.) ստեղծագործության վրա:³

Ղևոնդ Ալիշանը ռոմանտիկ բանաստեղծ է. նրա բանաստեղծության հիմնական ակունքներն են՝ հայ ժողովրդի պատմությունը, Աստվածաշնչի Հին ու Նոր կտակարանները, հայ ժողովրդական բանահյուսությունը:

Որպես պատմաբան՝ նա խիստ արժևորել է միջնադարյան հայ պատմիչների երկերը՝ հատկապես Ոսկեդարի: Նրա պաշտամունքի առարկան Մովսես Խորենացին է, որի «Հայոց պատմությունը» խոր կնիք է թողել Ալիշան գիտնականի ու բանաստեղծի վրա: Բանաստեղծական արվեստի ուսուցիչներն էին Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին,

¹ «Поэзия Армении» с древнейших времен до наших дней в переводе русских поэтов, под редакцией со вступительным очерком и примечаниями В. Брюсова, Ереван, 1987, с. 427-428.

² Ю.А. Веселовский, Очерки армянской литературы, истории и культуры, Вступительная статья, составление, редакция и примечания Аллы Давтян, Ереван, 1972, с. 129.

³ Նույն տեղում:

Ֆրիկը և գրեթե ողջ միջնադարի տաղասացները՝ ընդհուպ XVIII դար: Նա նաև շատ բարձր է գնահատել հայ ժողովրդական բանահյուսության անանուն հյուսվածքները, որոնք սփռված են Ալիշանի ամենատարբեր գրվածքներում: Դա հատկապես երևում է հայերեն ու անգլերեն լեզուներով հրատարակված «Հայոց երգ ռամկականք» ժողովածուում, որը լույս է տեսել Վենետիկում 1852-ին:

Ալիշանը 1874-ին Վենետիկում հրատարակել է «Քնար Ամերիկյան», հատընտիր տաղք» ժողովածուն, որը լիովին հոգևոր բնույթի է և ըստ Ավետարանի քննում է կյանքի ու մահվան փոխհարաբերության խնդիրը, հոգու անմահության գաղափարը:

Այդ ժողովածուում տեղ է գտել նաև XIX դարի ամերիկյան նշանավոր բանաստեղծ Հենրի Լոնգֆելլոյի (1807-1882) «Հնձողն ու ծաղկունք» քերթվածը, որում հնձողը մահն է.

*Է ոմն Հնձող, որոյ կոշի Մահ անուն,
Եվ շուրջ արկեալ սուր մանգաղիկ՝
Միով շնչով հնձէ գգորեանքն հասուն,
Եվ զընդ նըմին բուսեալ ծաղիկ:¹*

Լոնգֆելլոյի թարգմանած Ալիզերի Դանթեի կատակերգությունը համարվում է համաշխարհային թարգմանական գրականության գլուխգործոց: Լոնգֆելլոն վերաթարգմանել է Ալիշանի «Հայոց երգ ռամկականք» ժողովածուի «Երգ արագիլի»² և «Մանուկն ու ջուրը» հյուսվածքները:³

Ուշագրավ է, որ Ալիշանը «Քնար Ամերիկյան» ժողովածուի տիտղոսաթերթին խորագիրն անգլերենով զետեղել է “American Sacred Songs”, translated into Armenian language ձևով, որի բառացի թարգմանությունը կլինի «Ամերիկյան սրբազան երգեր», թարգմանված հայերեն լեզվի: Սա նշում ենք, որովհետև ժողովածուի բոլոր հեղինակների քերթվածները խիստ հոգևոր բնույթի են ու կապվում են Աստծու, անդրաշխարհի կյանքի հետ: Դրանցից մեկի հեղինակն է XIX դարի նշանավոր կին բանաստեղծուհի Շառլոտ Էլիոթը իր «Ի թողուլն գտուն՝ ի խնդիր ամոքագոյն կլիմայի» քերթվածով, որում նշանավոր բազմաթիվ հոգևոր հիմների հեղինակ բանաստեղծուհին հայ միջնադարի տաղասացների նման իրական կյանքը համարում է պանդխտություն ու երազում երկրայինը՝ Աստծու կողքին:

¹ «Քնար Ամերիկյան», հատընտիր տաղք, Վենետիկ, 1874, էջ 96:

² «Հայոց երգք ռամկականք», Վենետիկ, 1852, էջ 61:

³ Նույն տեղում, էջ 63-65: Տե՛ս նաև «Հանրագիտական բառարան», հ.1, Երևան, 2016, էջ 353:

*Ի քեզ, ո'վ իմ աստուածային ապաւէն,
Հանապազօր պանդրխտութեան կեանքս անցեն,
Մինչև ըզքաղցր եւ սուրբ հանգիստ իմ յետին
Գըտից քեւ ի յերկին։¹*

Հոգւածի այս նախաբանը նպատակ ունի ներկայացնելու Ալիշանի բանաստեղծական աշխարհի ընդհանուր ուղղվածությունը, որի տեսադաշտում կքննվեն նրա «Նվագներ» ժողովածուի վրա վերոհիշյալ մտածումների խոր ազդեցությունը:

«Նվագներ» ժողովածուն կազմել ու առաջաբանը գրել է առաջնակարգ գրականագետ Արամ Ինճիկյանը, իսկ բառարանը կազմել՝ ողջ կյանքը Ալիշանի ստեղծագործությանը նվիրած Սուրեն Շտիկյանը: Ա.Ինճիկյանն իր առաջաբանի բնաբանն է ընտրել բանաստեղծի հետևյալ պատգամը.

*«...Ուր որ հայրենի երգեր կլսվին՝
Հոն հայրենիքը ողջ է»։²*

Մեզ հատկապես հետաքրքրողը «Նվագներ» ժողովածուի «Երգք նահապետի» բաժինն է, որը հայ ազգի համար միշտ լինելու է արդիական պատգամ: Ալիշանի հիշատակի առիթով Արշակ Չոպանյանը՝ նրա ստեղծագործության քաջ գիտակն ու երկրպագուն, գրում է. «Ալիշան սիրտ մըն էր, բայց շատ մեծ սիրտ մը: Այդ սիրտը ամբողջապես լեցված էր երկու պարզ ու մեծ զգացումներով՝ Աստծո սերն և ազգին սերը»:³ Այս բնորոշման ցայտուն առիավատյան «Նահապետի երգերն» են: Ոչ մի իսկական գրող հենց այնպես, առանց խոր մտածելու, չի խորագրում իր գիրքը: Ինչու 27, 28, 29 տարեկանում՝ երիտասարդ հասակում, գրված իր հոյակապ բանաստեղծական երգերը Ալիշանը ամփոփեց «Նահապետի երգեր» խորագրի ներքո: Այս հարցի պատասխանը շատ հստակ է: Բավական է բացենք Ստեփանոս Մալխասյանցի բացատրական բառարանը և նայենք նահապետ բառի բացատրությունը. «Նահապետ – 1) մի տոհմի՝ ցեղի նախահայրը, ցեղապետ, տոհմապետ... 4) Խիստ ծերացած, ծերունագարդ մարդ»:⁴ Բառի այս երկու բացատրություններն էլ լիովին համապատասխանում են ժողովածուի գաղափարական ուղղվածությանը: Բանաստեղծը խոսում է ազգի ապագայով մտահոգ առաջնորդի մտահոգությամբ, որը նաև տարիների հեռավորությունից եկող մարդկության փորձն էր իր մեջ

¹ «Քնար Ամերիկեան», էջ 34:

² Ղ.Ալիշան, Նվագներ, Երևան, 1957, էջ 3:

³ Ա.Չոպանյան, Երկեր, Երևան, 1988, էջ 412:

⁴ Ստ.Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ.ՅԱ, Հ-Ո, Երևան, 2010, էջ 439:

կուտակել: Նա նույն մտահոգությունն ունի իր ազգի համար, ինչը որ ուներ հայ ժողովրդի նախահայրը՝ Հայկը, որն իր սակավաթիվ գորքին գոտեպնդեց հետևյալ խոսքերով. «...կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն, և մէք եղիցուք յաղթութիւն ստացեալք»:¹

Հետագայում էլ Բելին հաղթելու պատգամը հայ բանաստեղծության մեջ տրվել է ամեն նոր եկող սերնդի, ինչպես Գրիգոր Մագիստրոսը՝ XI դարում, իսկ Նաիրի Զարյանը՝ XX-ում:

Դիմելով իր որդուն՝ Մագիստրոսն ասում է.

*Ահա քեզ Բելայն հաս հանդէս և Թորգոմեանն Հայկայ...*²

«Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգության մեջ էլ ծեր գուսանի երգում Հայկ նահապետը չի ենթարկվում Բելի բռնակալությանը և հերոսաբար պաշտպանում է իր երկիրը նվաճող Բելից՝ նետահարելով նրան,

Եվ նետը սայրասուր թրռավ հասավ բռնապետին,

Կրծքի գրահը յոթնածալ՝ ծակեց,

Եվ թիկունքից ելավ և մըխրճվեց գետին:

Եվ Բել ընկավ մեծաշառաչ

*Եվ Բել սատակեց:*³

Յուրի Վեսելովսկին հիացական տողեր նվիրելով Ալիշանի հայրենասիրական երգերին՝ միաժամանակ նշում է, թե նրանցում չկան թշնամուն ուղղված չարության և ատելության խոսքեր:⁴ Անշուշտ հայագետին անձանոթ է եղել գրաբարով գրված «Երգ ու գնացք զօրացն Հայոց ընդ Վահանայ Մամիկոնենոց ի Շաւարշական դաշտին վրէժք» քերթվածը: Բանաստեղծության հենց խորագրում շեշտվում է *վրէժք* բառը: Բանաստեղծը Հայկի սերունդներին մարտի է կոչում հայրենիքն ազատագրելու և հայի ազատությունն ու հավատը իսկել ցանկացող թշնամուն պատժելու համար: Այս մարտակոչ բանաստեղծությունը վերածվել է խրոխտ ու ազատատենչ երգի ու ցայսօր հայտնի է հատկապես իր սկզբնատողով.

Բա՛ւմ. փորոտան բարձուստ բոմբիւնք յԱրարատեան

*դաշտն ի վայր:*⁵

¹ **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և Ներածութիւնը Մ.Աբեղեանի եւ Ս.Յարութիւնեանի, Նմանահանութիւն, Լրացումները Ա.Բ.Սարգսեանի, Երևան, 1991, էջ 35:

² **Գրիգոր Մագիստրոս**, Տաղասացութիւնք, Վենետիկ, 1868, էջ 99:

³ «Հայ դրամատուրգիա», Ընտրանի, Կազմեց Ս.Սահակյան: Առաջաբանը՝ Լ.Հախվերդյան, Երևան, 1985, էջ 577-578:

⁴ **Ю.А.Веселовский**, Очерки армянской литературы, истории и культуры, с.129.

⁵ **Ղ.Ալիշան**, Նվագներ, էջ 97:

Ալիշանն այնքան է սիրում Հայաստանը, որ նրան դիմում է որպես իր որդուն՝ հղելով անհրաժեշտ պատգամներ, որով նա պետք է առաջնորդվի հետագա կյանքում՝ նրան փաղաքուշ ձևով անվանելով «Հայոց աշխարհիկ»։ Հիանալի իմանալով Հայաստանի պատմությունը, աշխարհագրությունը, բուսական, կենդանական աշխարհը, մշակութային հուշարձանները՝ այդ գիտելիքները երևան է հանում իր չափածո քերթվածներում։ Բլբուլը, սարյակը, արագիլը, արտուտիկը, տատրակը, կարմիր վարդերը զարդարում են պաշտելի Հայոց աշխարհիկը, որը եղեմական երկիր է, ուր հովիվն ու հոտաղը, մշակված դաշտերը վկայում են երկրի խաղաղ բնակիչների գեղեցիկ առօրյայի մասին, և այդ իրողությունն ամեն հայ պետք է գիտակցի։ Ահա թե ինչու ծեր նահապետը Հայաստանի զավակներին հղում է մշտապես հիշելու իր պատգամները.

*Հայրենյաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ՝ քաղցր է հայրենյաց փուշ...
Մուրանայք գերկիրդ ու զագգրդ սիրուն,
Ծառն՝ արմատով ծառ, տունն հիմամբն է տուն։¹*

Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» ծավալուն քերթվածը Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի գնահատման առաջին չափածո ծավալուն ու սկզբնատիպ դարձած քերթվածն է Ներսես Շնորհալու Վարդանանց նվիրված հրաշք շարականից հետո։

Անտարակույս վերջինիս ազդեցությամբ են գրված Ռափայել Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»² և դրան ի պատասխան՝ Միքայել Նալբանդյանի որպես պարոդիա գրված «Մամիկոնյան մեծ Վահանի պատասխանը» բանաստեղծությունը։ Այդ պատասխանը, որով ներկայացվում է Նվարսակ գյուղում 484 թվականին Հայաստանի ինքնավարությունը հաստատող պայմանագիրը կնքելը, մարգպան Վահան Մամիկոնյանի կողմից, Նալբանդյանն ուղեցույց է դարձնում ապագա Հայաստանի համար՝ գրելով.

*Էլ մեր երեսին մնա՞ց մի կաթիլ
Ամոթի սուրբ ջուր, որ բերան բանանք:
Ո՛չ, թե չենք ուզում հողից հող կորչիլ,
Թշնամու արյունով մեր թրին ջուր տանք,
Ազգ, եկեղեցի փրկենք, ազատենք,
Ապա թե՛ խոսենք։³*

¹ Նույն տեղում, էջ 19:

² Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1980, էջ 60-78:

³ Մ. Նալբանդյան, ԵԼԺ վեց հատորով, հ.1, Երևան, 1979, էջ 127:

Վարդան Մամիկոնյանի կերպարը և Ավարայրի ճակատամարտը ըստ Եղիշեի երկի բանաստեղծության նյութ դարձնելով՝ Ալիշանը բանաստեղծական ներշնչամբ համակում է ընթերցողին և բացատրում, թե ինչու հայրենիքը պաշտպանելու գործում Վարդանն ամեն մի հայի համար մշտական օրինակ է:

«Պլպուլն Ավարայրի» պոեմում պատկերված է նաև Եղիշե պատմիչի կենսագրական այն դրվագը, ըստ որի նա Մովսես Խորենացու և մյուս հայ ուսանողների հետ հինգերորդ դարում կրթության մեջ կատարելագործվել է հայտնի կրթական կենտրոններում՝ Ալեքսանդրիայում ու Աթենքում: Վերադարձել է հայրենիք ու ծառայության անցել սպարապետ Վարդան Մամիկոնյանի մոտ ու շարունակ շրջել քաջ զորավարի հետ ամենուր: Ինքը՝ Եղիշեն էլ, իր պատմության ընծայականում նշում է, թե ականատեսն ու մասնակիցն է Ավարայրի հերոսամարտին նախորդող, բուն հերոսամարտը ներկայացնող և դրան հաջորդող բոլոր պատմական իրադարձություններին. «Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիր ողբովք ճառագրենք զբազում հարուածս՝ յորում պատահեցաք և մեք իսկ ականատես լինելով»:¹

Ըստ Եղիշեի են ներկայացվում այն նախաբարները, որոնք Վարդան Մամիկոնյանի զինակիցներն էին ու նահատակվեցին նրա հետ՝ Գարեգին Սրվանձտյանցը, Արտակ Պալունին, Վահան Գնունին, Խորեն Խոռխոռունին, Արսեն Ընծայնոցն ու մյուսները: Եվ ինչպես Եղիշեն է վկայում, թե ընկած դիակներն այնպես խիտ էին, ինչպես անտառի կտրատված փայտերը,² նույնկերպ Ալիշանը գրում է.

Հոն մեծ բազմութիւն զինչ փայտ ի յանտառ

Կամ աշնանաթափ տերն հողմավար:³

«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» քերթվածն Ալիշանը գրել է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» եզրափակող «Ողբի» զորեղ ազդեցությամբ, որն իր հերթին գրված է Հին Կտակարանի Երեմիա մարգարեի ողբի օրինակով:

Ընդհանրապես Մովսես Խորենացուց սկսած՝ հայերի ճակատագիրը ողջ միջնադարում հաճախ է համեմատվում հրեաների պատմական անցյալի հետ: Այս նույնը կատարում է նաև Ալիշանը՝ հայ միջնադարյան մատենագրության փայլուն գիտակ:

XIII դարի բանաստեղծ Ֆրիկն իր «Գանգատ բանք վիճման ընդ ամենագորին Աստուծոյ» քերթվածում, որը հայտնի է նաև «Բան ի Ֆրիկ

¹ Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 10:

² Նույն տեղում, էջ 238:

³ Ղ.Ալիշան, Նվագներ, էջ 41:

գրքոյն» խորագրով, Աստծուն բացատրում է, թե նա հայերին պատժում է, ինչպես իսրայելցիներին.

*Որ բարկացար Հայոց ազգի,
Որպէս Հրէիցն Բարայելի.
Զինչ բարկութիւն ի քէն թափի,
Նա՛յ, ի վերայ մեր գայ՝ կուտի:¹*

Ալիշանն էլ նույն հարցադրումն ունի.

*Գիտեմ, գիտեմ այն մեր մեղաց պարտքն էր արդար,
Մակայն երկնուց արդարության չունի՞ վրձար:
Եվ հրեական ազգին նըման նըզովք յերես
Դարե ի դար հուսահատյալ տի գնա՞ն Հայերս:²*

Ըստ պատմահոր «Հայոց պատմության» բանաստեղծը վերհիշում է Հայաստանի թագավորական գերդաստանները՝ Հայկազյաններին ու Արշակունիներին: Հայերն ունեցել են քաջ թագավորներ՝ Արամ, Տիգրան, Տրդատ, այնպիսի հմուտ զորավար, ինչպիսին Վարդան Մամիկոնյանն էր, ունեցել են իմաստուն ուսուցիչներ Սահակ Պարթև ու Մեսրոպ Մաշտոց, որոնք հենց կրթել են Մովսէս Խորենացուն:

Ալիշանը սթափ հայացքով է նայում իր օրերի Հայաստանի պատմական անմխիթար վիճակին ու ողբալով ասում.

*Ողբա՛մ, ողբա՛մ, հազար ողբամ զքեզ, Հայաստան,
Երբեմըն բյուր փառաց տեղիք, հիմա դամբան,
Քո ծիրանիքըն մերկացան, քո թագդ առավ...³*

Բանաստեղծը շարունակ իրեն ողբակից է կանչում Խորենացուն. վերջինիս օրերում հայերն այդքան ցրված չէին օտար երկրներում.

Որ զՀայաստանն յօտարաստան բրավ ցան ցիր.⁴

«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» քերթվածն ավարտվում է հաստատուն լավատեսությամբ. ծեր նահապետը պատրաստ է մեռնել, միայն թե իր զավակը՝ Հայաստանը, վերածնվի.

*Ո՛հ, թող մեռնի ծեր նահապետ, մտնու տապան,
Այլ թո՛ղ ելնե՛ ի տապանեն նոր Հայաստան:⁵*

¹ Ֆրիկ, Տադևր, Առաջաբանը, բնագրի պատրաստումը, հավելվածը Ա.Ղանալանյանի, Երևան, 1982, էջ 103:

² Ղ.Ալիշան, Նվագներ, էջ 49:

³ Նույն տեղում, էջ 46:

⁴ Նույն տեղում, էջ 49:

⁵ Նույն տեղում:

Դիմառնական բնույթի է «Մասիսու սարերն» քերթվածը, որում Հայաստանի ճակատագրի շուրջ գրուցում են Ավագ և Փոքր Մասիսները: Բանաստեղծության եզրահանգումն է՝ հայ ազգի բոլոր զավակները պետք է լինեն միասնական, ու այդ դեպքում Հայաստանին սպառնացող թշնամիները կպարտվեն:

Այդ եզրահանգումը Ավագ ու Փոքր Մասիսներինն է ու միաժամանակ Նահապետինը, որը հիշելով հայ հին վեպի մեջ եղած քաջության աստված Վահագնի ծնունդը՝ պատգամում է ունենալ նույն հզորությունը.

*Շարժի՛ր, հա՛շարժի՛ր Ավագըդ Մասիս,
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս.
Շընչե՛, հա՛շընչե ծըխիկ ծիրանի,
Որ քո մանկըտյացըդ նըշան քինի...¹*

Ողջ էությանը քրիստոնյա հոգևոր Բանաստեղծը գողտրիկ քերթված է նվիրել Հայաստանի առաջին քրիստոնյա նահատակ արքայադուստր Սանդուխտ կույսին, որին անվանում է Շուշան Շավարշանա: Հայտնի է, որ շուշան ծաղիկը Մարիամ Աստվածածնի խորհրդանիշներից մեկն է՝ ամենատարածվածն ու սիրվածը:

Ինչպես Գրիգոր Նարեկացին «Մեղեդի ծննդեան» տաղում Աստվածամորը պատկերում է անթերի գեղեցկությամբ, այդպես էլ Ալիշանը չքնադագեղ է պատկերում արքայադուստր Սանդուխտին՝ հայոց Սանատրուկ արքայի դստերը.

*Կուսա՜նք Հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան:
Պայծառ պատկեր կուսանաց
Հայոց պըսակ պարծանաց,
Ճակատն ի քող խորոտիկ...
Փայլկըտան աչքըն սիրուն:²*

Այս գեղարվեստական բարձրարժեք քերթվածի նյութը Ալիշանը քաղել է Խորենացու «Հայոց պատմության» Երկրորդ գրքի ԼԴ հատվածից, որի վերնագիրն է «Յադագս վկայութեան առաքելոցն մերոց»: Դրանում պատմվում է Հայոց Սանատրուկ արքայի գահակալության ժամանակ Թադեոս առաքյալի Հայաստան գալը և արքայի հրամանով վերջինիս ու նրա հավատակիցների նահատակումը Շավարշան գավառում: Թադեոս առաքյալի աշակերտներից է եղել նաև Սանդուխտը՝ Սանատրուկ արքայի դուստրը, որի նահատակման մասին պատմահայրը գրում է. «...և

¹ Նույն տեղում, էջ 57:

² Նույն տեղում, էջ 59:

մարտիրոսանալ դստերն արքայի Սանդխտոյ հուպ ի ճանապարհն»:¹ Ալիշանն օգտվել է նաև հետագա դարերի պատմիչների գործերից:

Բագրատունիների հայ թագավորական ընտանիքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Աշոտ Երկրորդը՝ կոչված Երկաթ: Վերջինս, ինչպես վկայում է ժամանակի պատմիչ Հովհաննես Ե Դրասխանակերտցին (կթդ. 898-928 թթ.), արաբների ու հույների կողմից ճանաչվել էր որպես «Հայոց Շահնշահ». «...և ի դերես ելանէր նորայն խոկացեալ դաւաճանութիւն և թիկունս Աշոտոյ դարձուցանէր, որ Շահանշահ անուանէր»:²

Սևանի ճակատամարտը բեկումնային էր Աշոտ Երկաթի համար: Նա փայլուն հաղթանակ է տանում արաբ Բշըր զորապետի նկատմամբ և վերականգնում է Բագրատունյաց թագավորության սահմանները: Ահա այս վճռական ճակատամարտին է նվիրել Ալիշանը «Աշոտ Երկաթ ի ծովուն Սևանա» հայրենասիրական քերթվածը: Բանաստեղծը գեղարվեստորեն վերապատմում է ճակատամարտի հաղթական ընթացքը, որը նրան ոգևորում է ասելու.

*Երբ որ մըտար ի ծովս աստ՝
Էիր Աշոտ լուկ երկաթ,
Հիմ՝ որ ելնես՝ կուռ պողվատ».*³

Ինչպես Արամին, Տիգրանին, Տրդատին, այնպես էլ Աշոտ Երկաթին Ալիշանը համարում է անձնագոհ, հայրենասեր թագավոր, որի հիշատակով բանաստեղծը խանդավառվում է.

*Հայոց հողուս դու կյանք տուր,
Երկինք քեզ տա հրաթափ թուր,
Նահապետին՝ սիրտ քանց հուր».*⁴

Հայոց անցած փառքերին է նվիրված Ալիշանի «Լուսնկայն գերեզմանաց Հայոց» քերթվածը, որ սեղմ ներկայացնում է Հայաստանի պատմությունը՝ սկսած Տիգրանի ու մարերի արքա Ածղահակի ժամանակներից մինչև Բագրատունիների սքանչելի Անին ու թաթարական արշավանքները:

Բանաստեղծի համար անսահման սիրելի են հեթանոսական շրջանի բարգավաճ ու հաղթական այն տարիները, երբ կառուցվել են փառահեղ Գառնիի տաճարը, հոյակապ Արտաշատ մայրաքաղաքը, սակայն

¹ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, էջ 157:

² Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ.Բ.Թոսունյանի, Երևան, 1996, էջ 316:

³ Ղ.Ալիշան, Նվագներ, էջ 73:

⁴ Նույն տեղում:

նույնքան թանկ են նաև քրիստոնյա ժամանակներում Բագրատունիների կառուցած Անին, Երազգավորսը, Բագարանը:

Նրան ոգեշնչում է Գրիգոր Լուսավորչի ձեռքով քրիստոնեության մուտքը Հայաստան, որի սկիզբը հենց առաջին դարում դրել էին Քրիստոսի առաքյալները:

«Հայ հայրենիք» երգում մի քանի անգամ կրկնվում է «Յաստվածագարդ» կրկնակը, իսկ բանաստեղծությունը յուրօրինակ ցանկություն է՝ տեսնել հայի հայրենիքը որպես դրախտավայր.

*Հայ հայրենյացս ելանք ի տես,
Ահա տեսանք զաշխարհն Հայոց,
Որ ըզդրախտիկն առնել ի ծոց:¹*

Հայաստանի դրախտավայր դառնալը Աստվածահաճո է, և Նահապետի սիրտը լցնում է անհուն բերկրանքով:

«Հայ հանճար» բանաստեղծությամբ Ալիշանը ցանկանում է հայերի մեջ արթնացնել վաղեմի փառքի հիշատակները, նաև ուսումնաստենչությունը, հայի բացառիկ ընդունակություններն ու ստեղծարար ուժը: Նա հիշում է, թե հայերն ունեցել են հայրենյաց պաշտպան քաջ զորահրամանատարներ, հելլեն հանճարներին հաղթող հմուտ գիտնականներ: Սակայն ոչ մեկի մտքով թող չանցնի, թե իր օրերում Հայաստանը կործանված է, ո՛չ, նա ընդամենը քուն է մտել և Նահապետի կոչով արթնանալու է ու նորից աշխարհին երևալու է իր հանճարով.

*Կերդնու Նահապետ, կանչե՛՛ ձեզ, Հայե՛՛ր,
Հանճարն է՛ մեզ կյանք. ըզնա վառեցեք,
Մեծ, պզտիկ՝ այտոր սիրով վառվեցեք...
Ծագե՛՛, հայ հանճար, փայլե՛՛ բյուր բոցեր,
Բմանան ազգեր՝
Թե Հայք չեն անցեր:²*

«Վերջին երգ վիրավոր բամբուկաբլիթ» հյուսվածքն անպայմանորեն ազդել է Մկրտիչ Պեշիկթաշյանի 1862 թվականի Օսմանյան կայսրության դեմ մղված Զեյթունյան ապստամբությանը նվիրված երգերի վրա: Երիտասարդ բամբուկաբլիթ Փառենը, երբ երգում էր հայ կտրիճների հերոսական գործերի մասին, մեռնում է, սակայն գիտակցում է, թե իր հայրենասիրական երգերով մնալու է կենդանի.

*Բամբուկի՛՛կ, Փառեն կու մեռնի.
Ապրի՛՛ն սեր ու երգ հայրենի.*

¹ Նույն տեղում, էջ 81:

² Նույն տեղում, էջ 87:

Բամբռի չկ, մընա՛ւք կենդանի:¹

Ինչպես պարզորոշ երևում է, քրիստոնեական վարդապետությունն իր էությունը դարձրած Ալիշանը հայրենասիրության մեծագույն ջատագով է, ուսուցիչ, պատգամաբեր:

Հայ պատմիչների հաղորդած փաստերով, ազգային կյանքն ու պետականությունը ամրապնդած լավագույն առաջնորդների օրինակներով ու իր երգերով նա մեծ հավատով ապահովում է հայ ժողովրդի հավերժությունը աշխարհի ազգերի կազմում:

ԱՋԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Член-корреспондент

НАН Республики Армения

Доктор филологических наук, профессор

РЕЗЮМЕ

БИБЛИЯ И ИСТОРИЯ АРМЯНСКОГО НАРОДА В ПОЭТИЧЕСКОМ МИРЕ ГЕВОНДА АЛИШАНА

Ключевые слова: Гевонд Алишан, Библия, армянская историография, герой, слава, будущее, государственность, военачальник, Егише, Мовсес Хоренаци.

Гевонд Алишан - поэт романтик. Основными источниками его поэзии являются история армянского народа, Ветхий и Новый Заветы Библии и армянский фольклор.

Как историк он высоко оценил труды средневековых армянских историков, особенно авторов Золотого века. Предметом его поклонения являлся Мовсес Хоренаци, чья «История Армении» оставила глубокий след в творчестве Алишана, ученого и поэта. Его учителями поэтического искусства были Григор Нарекаци, Нерсес Шнорали, Фрик и поэты почти всего средневековья, вплоть до XVIII века.

Особый интерес для нас представляет раздел «Песня патриарха» из коллекции «Напевы», который всегда будет современным наказом для армянского народа.

Как ясно видно, сделавший христианское учение своей сущностью, Алишан – великий сторонник патриотизма, учитель, вестник.

По фактам, сообщаемым армянскими историками, по примеру лучших лидеров, укреплявших национальную жизнь и государственность, своими песнями он с большой верой обеспечивает вечность армянского народа в составе народов мира.

¹ Նույն տեղում, էջ 89:

AELITA DOLUKHANYAN
*Corresponding member of the National
Academy of Sciences of the RA
Doctor of Philology, professor*

ABSTRACT

THE BIBLE AND THE HISTORY OF THE ARMENIAN PEOPLE IN THE POETIC WORLD OF GHEVOND ALISHAN

Key words: Ghevond Alishan, the Bible, Armenian historiography, hero, glory, future, statehood, military leader, Yeghishe, Movses Khorenatsi.

Ghevond Alishan is a romantic poet. The main sources of his poetry are the history of the Armenian people, the Old and New Testaments of the Bible and Armenian folklore.

As a historian, he praised the works of medieval Armenian historians, especially the authors of the Golden Age. The subject of his worship was Movses Khorenatsi, whose *History of Armenia* left a deep mark in the work of Alishan, a scientist and poet. His teachers of poetic art were Grigor Narekatsi, Nerses Shnorhali, Frick and poets of almost the whole Middle Ages, right up to the 18th century.

Of particular interest to us is the *Song of the Patriarch* section of the *Chants* collection, which will always be a modern recommendation for the Armenian people.

As it is clearly seen, Alishan, who made Christian teaching his essence, is a great supporter of patriotism, a teacher, a messenger.

According to the facts reported by Armenian historians, following the example of the best leaders who strengthened national life and statehood, with his songs he ensures with great faith the eternity of the Armenian people as part of the peoples of the world.

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Հայագիտական ժառանգություն, պատմական աշխարհագրություն, պատմալեզվաբանական, պատմագրություն, հայրենիք, Ղ. Ալիշան, Մովսես Խորենացի, Վենետիկ, «Նահապետի երգեր», Մխիթարյաններ, «Հայրունի», ձեռագիր:

Բոլոր ժամանակների ու սերունդների ամենականավոր հայագետը թե՛ Մխիթարյանների մեջ և թե՛ նրանցից դուրս հայագիտության փառքը իր մեջ ամփոփած Ղևոնդ Ալիշանն է: Լինելով 19-րդ դարի հայագիտության ամենամեծ դեմքը՝ Ղ. Ալիշանը իր կատարած մեծարժեք գործերով և թողած 60 հատոր կազմող վիթխարի գրական ժառանգությամբ, այդ թվում հայագիտական ուսումնասիրություններով, դարձավ հայ մտքի ոսկե անդաստանի պսակը:

Գրական գործունեության ավելի քանի 60 տարի տևող ժամանակաշրջանում նա դրսևորեց իրեն որպես տաղանդավոր բանաստեղծ ու արձակագիր, իբրև Հայաստան աշխարհի պատմաբան, տեղագիր ու աշխարհագետ, որպես փայլուն թարգմանիչ:

Ղ. Ալիշանի հայագիտական ժառանգությունը բաժանվում է մի քանի բնագավառների՝ պատմաաշխարհագրական, պատմաբանասիրական և տեքստաբանական: Հենց այս ոլորտներում էլ ձևավորվել են նրա պատմագիտական հայացքները:

Ղ. Ալիշանը հայագիտության ճյուղերից ամենից շատ կարևորում էր պատմությունը, քանզի այն կարծիքին էր, որ մարդկությանը ճանաչելու համար անհրաժեշտ է ճանաչել այն ամենը, ինչ կատարվել է հնագույն, հին ու մերձավոր անցյալում: Յուրաքանչյուր ժողովուրդ ոչ միայն ներկան, այլև ապագան կառուցում է իր անցյալի վրա: Հայ նորդարյան հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ Ալիշանն առաջիններից է, որ անդրադարձավ հայրենիքի գաղափարին: «Հայրենի՛ք... Այն քիչ անուններն են մեկն է այս՝ զոր գրեթե ամոթ է բացատրել բարեկիրթ և զգօն անձի մը...», քանզի «գրեթե մտքն առաջ սիրտն կու հասնի, կըմբռնե, կիմանայ զայս, կիմանա՛յ զայն նաեւ երբ չկրնար քիչ բառով կամ խոսքով բացատրել, մանաւանդ ուր քաղաքական և բարոյական տեսութիւնք՝ ասոր իմաստն այլ այլայլած կամ զանազանած ըլլան»¹: Ալիշանը համոզ-

¹ **Հ. Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Ա., Վենետիկ, Ս. Ղազար, 1869, էջ 1:

ված էր, որ հայրենիքի խնդիրը քննելիս և սահմանելիս չի կարելի սահմանափակվել այն չափանիշներով, ինչը բավարար է ուրիշ ազգերի համար՝ հայրենիքը բնութագրելիս: Եթե ասում ենք, որ ազգի հայրենիքն այնտեղ է, որտեղ նրա անդամները «աւելի բազմաթիւն և իրարու մոտ կու բնակին», ապա նման բնութագրումը, որը կարող է բնորոշ լինել ուրիշներին, հայ ազգի համար մասնակի ճշմարտություն է միայն, քանզի հայ ժողովրդի ճակատագիրը միանգամայն տարբեր է մյուս ազգերի ճակատագրից:

Դարեր շարունակ գտնվելով օտար բռնատիրությունների իշխանության տակ, զրկված սեփական պետականությունից և ենթարկվելով օտարների հալածանքներին՝ Հայաստանի զավակները հուսահատված լքել են իրենց հայրենի հողը, իրենց նախնիների երկիրը և ցրվել աշխարհով մեկ՝ ապահովություն և խաղաղություն որոնելով ուրիշ ազգերի հայրենիքներում:

Այդ է պատճառը, որ տակավին դարեր առաջ հայ *ազգը* «շատ ընդարձակ և անհուն երկրի երես սփռած կու տեսնեմք»¹, - գրում է Ղ.Ալիշանը: Ալիշանը հայրենիքը բնորոշում է ոչ թե հայրենակիցների «սփռվածությամբ», այլ ուրիշ գործոնով: Այն է՝ մեր հայրենիքն այնտեղ է, որտեղ մեր նախնիների «ծնարանքն ու քնարանքն են», որոնք «Հայրենեաց կէտք և կենդրոնք կերնին»²:

Ալիշանի կարծիքով աշխարհագրական տարածքները հայրենիք են դառնում ոչ թե այն պատճառով, որ դրանց վրա արդ ապրում է այս կամ այն ժողովուրդը, այլ այն պատճառով, որ դրանք ժամանակի ընթացքում մշակել, վերափոխել են այդ երկրները իրենց անունով կոչող ժողովուրդների նախնիները, այդ երկրների իսկական տերերը՝ իրենց ազգային առանձնահատկություններին համապատասխան: Նման հարցադրման դրական եզրակացությունը Ալիշանը թողնում է ընթերցողին. Արևմտյան Հայաստանը օսմանյան թուրքերինը չէ, այն հայության հազարամյակների հայրենիքն է, - եզրակացնում է Ղ. Ալիշանը³:

Ձանազան տպագիր աղբյուրներից, արխիվներից, աշխարհի նշանավոր գրադարաններից, Մխիթարյան մատենադարանի ձեռագրերից հավաքած նյութերի հենքի վրա գրված Ալիշանի պատմագիտական, բանասիրական և աշխարհագրական աշխատությունները՝ առաջ քաշած հարցադրումների, պարունակած նորությունների, անցյալի այս կամ այն երևույթին տված գնահատականի տեսակետից շարունակում են պահ-

1 Նույն տեղում, էջ 14:

2 Նույն տեղում, էջ 6:

3 Նույն տեղում:

պանել իրենց այժմեականությունը: Բազում օրինակներից հիշատակելի է Ղ. Ալիշանի «Հովհաննես Մարկավագ վարդապետ» խորագիրը կրող հոդվածը և մեծ հայագետի դերը Մովսես Խորենացու «առեղծվածի» կապակցությամբ:

Ալիշանին էր վիճակված Հովհաննես Իմաստասերի գրչին պատկանող («Բան իմաստութեան... առ ձագն... որ կոչի սարիկ») չափածո երկասիրության հայտնաբերման, հրապարակման, համապատասխան ծանոթագրություններով ու մեկնաբանություններով ընթերցողին ներկայացնելու պատիվը¹: Ալիշանը ճշտում է այդ ստեղծագործության հետ կապված բազում հարցեր՝ սկսած վերնագրից մինչև բնագրային առանձնահատկությունները: Հովհաննես Մարկավագ վարդապետի պոեմի արժեքն ու նշանակությունը պատկերացնելու համար ուշագրավ է Մանուկ Աբեղյանի կարծիքը. «Մյս մեծ քերթվածքն իր ձևով ու բովանդակությամբ մի նշանակալից նորություն է մեր հին գրականության մեջ: Եթե դա փրկված չլիներ կորստից, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար...»²:

Մի ամբողջ տասնչորս դար անվիճելի ու բացարձակ հեղինակություն համարված Պատմահայր Մովսես Խորենացին 18-րդ դարի վերջերից ենթարկվեց եվրոպացի զանազան հայագետների այսպես կոչված «քննափետությանը» (Մ. Աբեղյան)³. ջանքեր չխնայեցին «ապացուցելու», որ Խորենացին դիտավորյալ կեղծել է իր աղբյուրները, այսինքն՝ հորինել է գոյություն չունեցող հնամենի աղբյուրներ իր «Պատմություն հայոցը» ավելի հավաստի ներկայացնելու համար, որ նա յուրացրել է իրենից առաջ եղած հայ պատմիչների աշխատությունների ամբողջ գլուխներ և, ներմուծելով իր «պատմության» մեջ, ներկայացրել է որպես իր սեփականը, որ Խորենացին դիտավորյալ լռության է մատնել կամ շուտ տված է ներկայացրել պատմական մի շարք անձանց գործը և հասարակական-քաղաքական նշանավոր իրադարձությունները, հետևաբար նրա ստեղծագործությունը գիտական հավաստիության տեսակետից լուրջ կասկած է ներշնչում, որ Խորենացին նկարագրել է դեպքեր և իրադարձություններ, որոնք չեն հավաստվում օտար պատմիչների կողմից և այլն: Հայ գիտնականներից Ալիշանն առաջիններից էր, եթե ոչ առաջինը, որ ձայն բարձրացրեց հանուն այդ խաչակրաց արշավանքի դադարեցման: Նա եկավ իր ծանրակշիռ խոսքն ասելու այդ հարցի վերաբերյալ և լավա-

¹ Սարուխանյան Ն., Հայ պատմագիտությունը XIX դարում և XX դարասկզբին, Եր., 2003, էջ 392:

² Աբեղյան Մ., Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 70:

³ Նույն տեղում:

գիտակ ու խոհեմ գիտնականին հատուկ հմտությամբ ցույց տվեց Խորենացու մեծ ու պատկառազորու դերը հայ ժողովրդի ամբողջ մտավոր կյանքում: Հետևողականորեն պրպտումներ կատարելով Վենետիկի Մխիթարյան միաբանության հարուստ մատենադարանում, հնօրյա ձեռագրերից խնամքով հավաքելով փաստեր ու տեղեկություններ, պատմիչների վկայություններ Պատմահոր մասին և այդ բոլորն անցկացնելով իր գիտական եզրահանգումների միջով, հավաքած ամբողջ նյութը քննելով ժամանակաշրջանի եվրոպական հայագիտության առաջավոր մակարդակի դիրքերից, իր «Մովսես Խորենացին և հայոց պատմությունը», «Մովսես Քերթոզահայր հայոց» և այլ հոդվածներով Ալիշանը վճռական խոսք ասաց Պատմահոր գործի անադարտության վերաբերյալ: Խորենացու գիտական սխրանքի, նրա մեծարժեք աշխատության մասին Ալիշանը սերունդներին կտակեց իր հեղինակավոր տողերը: «Աս պատմությունը, - գրել է նա - ինչպես հիմա ճանչցված թե՛ Մովսիսի և թե՛ Հայաստանի ամենեն պատվական գրավոր գործքը ըլլալով՝ թե՛ մեր և թե՛ օտար ազգաց առջև, չենք կրնար հոս լռությամբ անցնիլ, վասնզի անով է, որ Հայաստան իր հին ու կորսված գրականության մեկ ճաշակը կառնե: Անով հազար չորս հարյուր տարվնե ի վեր Հայք իրենց ազգը և փառքը կճանչնան, ան է բոլոր աշխարհիս դիմաց մեր հին ազնվականության վկայագիրը, որ ուրիշ ազգ մը չկրնար հափշտակել կամ ուրանալ, անով կրնա Հայաստան պատմագրության մուսային իմացնել, թե կրնա առանց առասպելաբանության հին պատմություն մը գրվիլ, անով հունաց և հռոմայեցվոց պատմիչները քանի մը տեղ սրբագրել և տեղ-տեղ հնության կամ ընդհանուր պատմության վրա նոր լույս ծագել, որ ուրիշ տեղեն անկարելի է առնելը»¹:

Դեռևս 1840-ական թվականներին Վենետիկում, ականատես լինելով իտալական ազգային-ազատագրական շարժմանը ու հեղափոխական իրադարձություններին, վերջիններիս ներշնչմամբ նա գրում է «Նահապետի երգերը»՝ մի պահ մոռանալով բանաստեղծական քանքարը կաշկանդող «աբեղայական սևաթույր վերարկուն»: «Նահապետի երգերը» դուրս էին Մխիթարյանների պոեզիայի զարգացման ընդհանուր օրինաչափությունից: Կարելի է նշել, որ Ալիշանից ո՛չ առաջ և ո՛չ էլ հետո Մխիթարյան բանաստեղծները նման արժեք չեն ստեղծել:

1850 - 1853 թթ. Ղ. Ալիշանը զանազան առիթներով լինում է Վիեննայում, Հռոմում, Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, որտեղ ուսումնասիրում է հայկական ձեռագիր մատյանները, հոգևոր մշակույթի հուշարձանները, նյութեր է հավաքում հայագիտական, հատկապես պատմագի-

¹ **Հ.Ղ. Ալիշան**, Երկեր, Երևան, 1981, էջ 141:

տական բնույթի իր հետագա ուսումնասիրությունների համար: 1858 - 1861 թթ. Ալիշանը վարում է Փարիզի Մուրադյան վարժարանի տեսչի պաշտոնը¹: Այստեղ էլ՝ Փարիզում, Ալիշանը ծանոթանում է Մ. Նալբանդյանի հետ: Իր «Հիշատակարանների» մեջ վեր հանելով «Նվագների» և հատկապես «Հայրունի» շարքի բանաստեղծական արժանիքները՝ Նալբանդյանն այդ երգերի մասին հիացմունքով է խոսել:

Անձամբ գտնվելով ավստրիական բռնապետության դեմ հերոսաբար մարտնչող Վենետիկում՝ Ալիշանը տեսավ, թե ինչպիսի սխրանքների է ընդունակ այն ժողովուրդը, որն իրոք կամենում է լինել ազատ: Ալիշանը հասնում է այն գիտակցության, որ հայ ժողովրդին ազատագրական պայքարի կոչելու համար պետք է նախ և առաջ գրել ժողովրդի լայն զանգվածներին հասկանալի հայերեն աշխարհաբարով:

Դ. Ալիշանը ճիշտ ընտրեց պատմական պահը՝ եզրակացնելով, որ ժողովրդի հետ խոսելու, որոշակի պահանջներ առաջադրելու համար հարկավոր էր նրան հասկանալի թեմաներ ընտրել: Այդ նշանակում էր հայ ժողովրդի պատմական անցյալից վերցնել Արամին, Հայկին, Տիգրանին վերաբերող նյութերը, փառաբանել նրանց հերոսական գործերը, ժողովրդին ի ցույց դնել հայրենիքի ազատության համար մղած հերոսամարտերը: Ալիշանը կարողացավ այդ անել: Դրա համար անհրաժեշտ էր հակադրվել Մխիթարյան միաբանության շուրջ 120 տարվա պատմություն ունեցող պոեզիային, որի առաջնային մոտիվը կրոնն էր, անհրաժեշտ էր հակադրվել ինքն իրեն, որն ամեննին էլ դյուրին չէր²: Ալիշանն իր մեջ ուժ ու կարողություն գտավ անելու այդ նորարարական խիզախությունը: Եվ ահա «Բազմավեպ» հանդեսի 1847 թ. հունիսյան համարում որպես այդ խիզախության արտահայտություն տպագրվում է նրա «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունը, որը հետագայում բազմաթիվ վերահրատարակումների արժանացավ:

Ինչպես «Հայոց աշխարհիկ», այնպես էլ 1848 թ. տպագրված «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» բանաստեղծությունը հայրենի երկրի լավագույն ապագայից ձեռք քաշած և ամեն ինչ միանգամայն հոռետեսորեն դիտող բանաստեղծի անմխիթար սուգ ու շիվանը չէր, ինչպես երբեմն մեկնաբանվել է³:

Ողբի միջոցով բողոք արտահայտելու եղանակը, որի բնորոշ օրինակներից մեկը Մ. Խորենացու «Պատմություն հայոցի» հուզիչ վերջաբանն է, մեծ չափով առկա է պատմագրության մեջ: Այդ էլ Ալիշանը ստեղ-

¹ Սարուխանյան Ն., նշվ. աշխ., էջ 385:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 387:

ծագործաբար յուրացրել և ներդրել է իր բանաստեղծությունների մեջ: Ալիշանն ինքն էլ ամենայն որոշակիությամբ զարգացնում է այն միտքը, որ չնայած Հայաստանն այժմ մասնատված է, բայց կգա ժամանակ, նա ոտքի կկանգնի, կմիավորվի, կդառնա երբեմնի հզոր ու միացյալ երկիրը, գրչի ու գիտության իր գավակներով լույս կսփռի ամենուր: Եվ փույթ չէ, որ այդ կլինի երկարատև կռվի վերջին օրը: Հայ հայրենասերները պատրաստ են ժամանակից շուտ «հող մտնել», միայն թե վերածնվի նոր Հայաստանը¹:

Ղ. Ալիշանի «Հրագդան» բանաստեղծությունն իր գեղեցիկ պատկերներով, դիպուկ ու հաջող համեմատություններով և լեզվական բարձր մակարդակով նրա աշխարհաբար պոեզիայի լավագույն գործն է: Այն գետեղվել է Վ. Բրյուսովի խմբագրած «Поэзия Армении» անթոլոգիայում: Այդ մասին մեծ սիրով են արտահայտվել Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Արշակ Զոպանյանը և հայ մշակույթի շատ ուրիշ ներկայացուցիչներ:

Ալիշանի «Հրագդան» բանաստեղծությունից սկսած՝ հայ պոեզիայի մեջ հաստատուն տեղ գրավեց գետի, լճի անձնավորման, նրանց միջոցով վշտագին տրամադրություններն արտահայտելու եղանակը, որը հետագայում զանազան երանգներով մշակեցին հայ բանաստեղծները: Այսպես հանդես եկան Ռաֆայել Պատկանյանի «Արաքսի արտասուքը», որը գրված է «Հրագդանի» որոշակի ազդեցության ներքո, Միքայել Նալբանդյանի «Վազող ջրիկը», Րաֆֆու «Ձա՛յն տուր, ո՛վ ծովակը» և այլն²:

Ալիշանի հետագա բանաստեղծությունների վրա զգալի կերպով նկատելի է Վենետիկի մարտական շունչը: Հարկավոր էր պահանջել, որոտալ, մրրկացայտ խոսքերով դիմել փրկության ակնկալիքներ ունեցող հայ ժողովրդին և կռվի ելնելու կոչ անել նրան: Իրար են հաջորդում մի ամբողջ շարք շոնդալից բանաստեղծություններ, որոնց մեջ ուրույն տեղ ունի հայտնի «Բա՛մ, Փորոտան» բանաստեղծությունը, որը մինչև օրս շուրջ 50 վերահրատարակություն է ունեցել: Բանաստեղծությունը գրված է մրրկաշունչ ոգով: Հեղինակը ուղղակի, համարձակ ու աներկյուղ դիմում է ժողովրդին՝ զենքը ձեռքին ոտքի ելնելու, տիրող բռնապետությունը թոթափելու անսքող կոչով³:

Ղ. Ալիշանի պատմագիտական բնույթի գործերից կարելի է համարել «Բազմավեպի» 1849 թ. մարտյան համարներից մեկում լույս տեսած «Նահապետ» ստորագրությունը կրող լավագույն գործերից մեկը՝ «Մասի-

¹ Ալիշան Ղ., Երկեր, Երևան, 1981, էջ 184:

² Մարուխանյան Ն., նշվ. աշխ., էջ 388:

³ Նույն տեղում:

սու սարերն» վերնագրով, որում հեղինակը կիրառել է բնության երևույթները շնչավորելու դիմառնության մեթոդը: Ալիշանն այս բանաստեղծության մեջ հույս է հայտնում, որ իր սիրելի հայրենիքը ի վերջո կկարողանա դառնալ այն, ինչ որ էր պատմական ժամանակներում: Իսկ որպեսզի կարողանա դառնալ, հայերը պետք է լինեն միասնական ու միաձույլ, ինչպես ազատագրական պայքարի ելած ժողովուրդները: Զեյթունի՝ 1862 թ. ապստամբության մարտական տրամադրությունը որոշակիորեն նկատելի է Ալիշանի 1863 թ. գրած և առաջին անգամ «Նուագք» ժողովածուի երրորդ հատորի 1867 թ. երկրորդ հրատարակության մեջ տպագրված «Հայ հանճար» բանաստեղծության մեջ: Այստեղ հեղինակն այն միտքն է առաջ քաշում, որ հայ ժողովուրդը չի հրաժարվել ազատություն ձեռք բերելու իր մտադրություններից, և որ նա կրկին փորձ է անում արթնանալ, ոտքի ելնել՝ բռնապետական լուծը թոթափելու համար: «Հայ հանճարը» Ալիշանի հայրենասիրական քնարի վերջին պոեթկումն էր, նրա բանաստեղծությունների բարձրակետը:

Ղ. Ալիշանն ապրում էր հայության ընթացիկ կյանքով, նրա ներկայով և ապագայով: Նա պահանջում էր վերլուծաբար քննել, բացահայտել ոչ միայն անցյալը, այլև ներկա ազգային կյանքի դրական և բացասական կողմերը՝ վերջիններիս նկատմամբ համապատասխան ճշգրիտ վերաբերմունք մշակելու համար: Առաջադրելով օտար բռնատիրությունից հայրենիքն ազատագրելու, ազգային մշակույթի զարթոնքն ըստ ամենայնի խրախուսելու և զարգացնելու հետ առնչված հարցերը, խստորեն նշավակելով ինչպես մոլի ազգային սնապարծներին, այնպես էլ նիհիլիստներին, հիմնականում բանականորեն և իրատեսորեն ուրվագծելով հայ ժողովրդի անվտանգ կյանքով ապրելու ուղիները՝ Ալիշանն ամենևին էլ սին պատրանքներ չէր տածում առանց իր բնօրրանի զարգացման, «աշխարհաքաղաքացիորեն գոյատևելու» կամ «հայրենիքեն դուրս հայ ըլլալու» մասին ժամանակին բավականին տարածված մտածելակերպի նկատմամբ¹: Ալիշանը մերժում էր «որտեղ հաց, այնտեղ կաց» հայրենադավ կարգախոսը: Բանավիճելով նման կարգի բարոյագուրկ կարգախոսի ջատագովների հետ՝ Ալիշանը գրել է այսօր էլ արդիական հնչող հետևյալ տողերը. «Մեր ազգին սկիզբը ո՛չ ի Պոլիս եղեր է, ո՛չ Գաղատիա, ո՛չ Կաֆա, ո՛չ Կալկաթա, ամենքս ալ մեկմեկե առաջ հետև Հայաստանեն եկած ենք և հիմա ուր ալ որ ենք, պանդուխտ ենք»²:

Ազգային-քաղաքական ընթացիկ հարցերում ճիշտ կողմնորոշվելու համար հարկավոր է հետևել անցյալի դրական փորձին, ազգանվեր

¹ Մարտիանյան Ն., նշվ. աշխ., էջ 389:

² Ալիշան Հ.Ղ., Երկեր, Երևան, 1981, էջ 186:

գործիչների օրինակին: «Նախնիք այն ատեն պարծանք են մեզի, երբ մենք ալ իրենց նման ըլլանք, ինչպէս որ մենք անոնցմէ լավ ըլլանք: Մեր ինչ ըլլալը մեզմէ կախված է. անոնց պարծանքն ու փառքը մեկ լույս մըն է մեր ճամբուն վրա, բայց մենք պետք է աչվնիս բանանք և ոտվնիս շարժենք...»¹: Պակաս կարևոր չէ ազգային գոյապայքարում աշխարհաքաղաքական իրավիճակներում անշեղ կողմնորոշվելը:

Այս առումով չափազանց ուշագրավ է 1901 թ. ապրիլին Ղ. Ալիշանի հետ հանդիպման մասին Ավ. Իսահակյանի 1948 թ. դեկտեմբերյան հուշագրության հետևյալ հատվածը. «Ինչ վերաբերում է Հայկական հարցին, Ալիշանն ասաց հետևյալը, որ ես շարադրում եմ արևելահայ բարբառով².

- Իհարկէ, հայ ժողովուրդը լավ գիտեր, որ իր սեփական ուժերով չպիտի կարողանար թոթափել թուրքական լուծը, ինչպէս առանց Եվրոպայի օգնության չպիտի կարողանային ազատվել ո՛չ Հունաստանը, ո՛չ Բուլղարիան: Հայ ժողովուրդն էլ, նրանց հետևելով, հույսը դրել էր քրիստոնյա Եվրոպայի օգնության վրա, մեծ, քաղաքակիրթ պետությունների մարդասիրության վրա: Այստեղից էլ հայ ժողովրդի մեծագույն ու բազմադէտ սխալը:

Կոտորածների ժամանակ Թերզյան հայ կարդինալը դիմում է Հռոմ, ընկնում է սրբազան պապի ոտքերը, աղերսում է, որ պապը դիմում անե քրիստոնյա մեծ պետություններին՝ Անգլիային, Ռուսաստանին, Ֆրանսիային, Գերմանիային, որ ջարդարար թուրքի ձեռքը բռնեն: Սրբազան պապն ասում է. «Այդ քրիստոնյա մեծ պետություններն են հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ»:

Եվրոպական պետությունները ո՛չ միայն չօգնեցին և չպաշտպանեցին իրենց հուսացող հայ ժողովրդին, այլ պատեհ առիթ գտան շահագործելու հայկական արյունը: Հայ ժողովրդին վաճառեցին թուրք դահիճին՝ փոխարեն ստացան տնտեսական- առևտրական մենաշնորհներ: Եվրոպացու «բարոյականը ավերված է», բարոյապէս սնանկացած է նա, նախնական մարդու բնական մարդասիրությունն էլ չունի անգամ: Նա ստախոս է, շահամոլ է և եսական:

Պետք է վերջ տալ հայերի մեջ եղած հեղափոխական ընկերությունների գործունեությանը, պետք չէ գրգռել թուրքերի մոնղոլական արյունը: Պետք է ընդմիջտ երես շրջել այդ փչացած Եվրոպայից և գարշանքով երես շրջել:

Թուրքահայերի պատրիարք Օրմանյանը քաղաքագետ մարդ է, բարեկամական հարաբերություններ է մշակում նա սուլթանի հետ: Պետք

¹ Նույն տեղում:

² **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու, հտ. 11-րդ, Եր., 2020, էջ 112:

է աջակցել նրան: Մի բառով պետք է համակերպել, ուրիշ ելք չեմ տեսնում հայերի համար: Հետո ավելացրեց. - Ռուսահայերի վիճակը, համեմատաբար, գեշ չէ. կոտորած, հափշտակություն չկա, բայց այն պատճառով, որ ազգային դպրոցներ չունենք, հայկական դաստիարակություն չկա, լեզու ու մշակույթ ճնշման տակ են, այս դրությունը ցանկալի արդյունք չի տալու. Ռուս պետությունը իր բերանով է ասում այս: Մի երկու տարի առաջ վանքն է այցելում ռուսական եկեղեցու սինոդի մեծը (երևի Պոբեդանոսցև, սինոդի օբեր-պրոկուրորը) իր քարտուղարի հետ: Գրեթե բոլոր միաբանները նրա պատվի համար ոտի վրա են և քայլում են նրա հետ: Նա տեսնում է գեղեցիկ տաճարը, ճոխ գրադարան-մատենադարանը, տպարանը, թանգարանը...

Երբ նստում են հյուրասենյակում մի բաժակ սուրճ խմելու, այդ ռուս մեծ պաշտոնյան, շնորհակալություններ հայտնելով միաբաններին, ասում է. «Ես հիացած եմ Ձեր աշխատանքի, համբերության և սիրո նկատմամբ՝ հանդեպ ձեր ազգի, բայց ցավում եմ, որ դրանք իզուր ջանքեր են, անօգուտ, աննպատակ: Որի՞ համար են այդ անձնագոհումները, մի փոքր ժողովրդի համար՝ ցրված երկրի երեսին և մատնված կորուստի: Թուրքիայում կոտորում են հայերիդ շարունակ, Ռուսիայում էլ հայերը ոչ-ռուս ժողովուրդների հետ դատապարտված են շուտ կամ ուշ ձուլվելու»¹:

Ուղղակի նշենք, որ մահից մի քանի ամիս առաջ Ալիշանի՝ Իսահակյանի հետ հանդիպման ժամանակ արած մտորումները կենսափորձով հարուստ մեծ գիտնականի մտորումներ էին, որոնց հետ լիովին համերաշխ էր 26-ամյա իմաստասեր Բանաստեղծը: Ալիշանի պատմահասարակագիտական հրապարակախոսությունը հանուն ազգային միասնության խոհեմ կողմնորոշման կոչող ինքնատիպ մի երևույթ է:

Ղ. Ալիշանն առաջինն էր, որ գործունեություն ծավալեց հայ մշակութային կյանքի այնպիսի մի բնագավառում, որը, մեղմ ասած, աչքաթող էր արված: Դա հայկական ժողովրդական բանահյուսությունն էր: Իրողություն է, որ մինչալիշանյան ժամանակաշրջանի Մխիթարյան (և ոչ միայն) գործիչների, ստեղծագործողների կարծիքն այս ասպարեզում ավելի քան հստակ էր ու որոշակի, և դա էլ բխում էր կլասիցիզմի առաջադիր սկզբունքներից:

Ալիշան հայագետը հակադրվեց իշխող մտայնությանը, հորդորեց և պահանջեց հիմնավորապես զբաղվել հայկական ժողովրդական բառ ու բանի, ազգային երգերի, ժողովրդական ավանդությունների հավաքմամբ և ուսումնասիրությամբ:

¹ Նույն տեղում, էջ 113-114:

Նա բացահայտում է ժողովրդական գրույցների պատմական տեղն ու դերը հայ ժողովրդի բազմադարյան կյանքում¹:

Չունենալով այս հարցում ոչ մի նախորդ և հենց ինքը լինելով իր իսկ բացած գիտական ճանապարհի առաջնեկը՝ Ալիշանը գրել է գիտականորեն անառարկելի հետևյալ տողերը. «Ինչպես քաշվածքը կամ պատկերը կենդանություն կուտա պատմության, այնպես ալ երգը, վասն զի երկուքն ալ բանաստեղծություն են: Եվ ազգային պատմության աս կերպով կենդանություն տվող պատկերներն ու երգերը որչափ որ հին ըլլան, այնչափ ալ ավելի ախորժելի կըլլան ազգասիրաց: Ահա աս գիտնալով մենք ալ, օրագրիս մեջ փափագ ցցուցեր էինք ազգային ռամկական երգեր ունենալու, որ հրատարակենք ու մասնավորաց քով գրեթե անծանոթ մնացած թաղված գանձերը՝ կերպով մը հասարակաց վայելելու հարստություն դարձնենք»²:

Նա հեղինակել է պատմաբանասիրական բնույթի տասնյակ աշխատություններ, որոնցից շատերը դարձել են հայագիտության գրադարանի անանց արժեքներից: Իր հայագիտական գործունեության արշալույսին նա ընթերցողի սեղանին դրեց «Հայոց երգք ռամկականք» հիանալի ժողովածուն (1852): Ապա մեկը մյուսի հետևից հրատարակեց «Նշմարք և նշխարք հայկականք» (պրակ Ա-Գ, 1870, Բ տպագրություն՝ 1902, նույնը ֆրանսերեն՝ 1872, անգլերեն՝ 1875, գերմաներեն՝ 1893), «Բնագիտութիւն Հայաստանի» (1870), «Շնորհալի եւ պարագայ իր-ը» (1873), «Գիրք վաստակոց» (1877), «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» (1885), «Հայ բուսակ կամ հայկական բուսաբանութիւն» (1895), «Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ» (1896), «Հայ Վենետ կամ յարընչութիւնք Հայոց եւ Վենետաց» (1896), «Արշալոյս քրիստոնէութեան Հայոց» (1901), «Հայաստան նախքան զլինելն Հայաստան» (հետմահու՝ 1905) և այլն: Նմանաբնույթ երկասիրություններից առանձնանում է նրա վերջին՝ երկմասանոց «Հայապատում» մեծադիր աշխատությունը (1901-1902): Առաջին մասում անդրադարձել է իր օրերում հայտնի բոլոր հայ պատմիչների կենսագրությանն ու ժառանգությանը, իսկ երկրորդում՝ նույն այդ պատմիչներից քաղված նյութերով հյուսել է հայոց ամբողջական պատմությունը մինչև XVI դարը: Հատկապես նշանակալից է «Սոփերք Հայկականք» փոքրադիր հատորների հրատարակումը (հատ. 1-22, 1853-1861), որը մի յուրահատուկ հանրագիտարան է անցյալի հայ կյանքի:

Ղևոնդ Ալիշանի ժառանգության մեջ ուրույն տեղ են զբաղեցնում

¹ Սարուխանյան Ն., նշվ. աշխ., էջ 389:

² Ղ. Ալիշան, Երկեր, Երևան, 1981, էջ 106:

նրա տեղագրական ու պատմաաշխարհագրական բնույթի երկասիրությունները: Որպես պատմաբան՝ նա հարում էր իր ժամանակներում պատմագիտության մեջ լայն տարածում ստացած «Աշխարհագրական» ուղղությանը և գտնում, որ ժողովուրդների զարգացման ամենահիմնական ազդակը աշխարհագրական միջավայրն է: Հետևելով Պատմահորը և խմբագրելով նրա հանրահայտ ասույթը՝ սիրում էր կրկնել՝ «Չկա՝ պատմություն առանց աշխարհագրության»: Այդ ոգով են շարադրված նրա «Աշխարհագրութիւն քաղաքական» (1851, նույնը՝ 1852, 1853, 1854), «Աշխարհագրութիւն Հայաստանի» (1853), «Տեղագիր Հայոց Մեծաց» (1855), «Երկրագիտութիւն Հայկական» (1881), «Հայկական աշխարհագրութիւն» (1881), «Սկեռա վանք. վանավանք և Սրբարանն» (1884), «Մասիս, ստորագրութիւն Մասիս լեռան» (1890) և այլն: Նշված երկասիրություններում նա տեղագրել է պատմական Հայաստանի բոլոր նահանգները, գավառները, քաղաքներն ու գյուղերը, տվել դրանց պատմաաշխարհագրական բնութագրումները, անդրադարձել պատմական իրադարձություններին, նկարագրել նյութական մշակույթի հուշարձանները¹: Ալիշանը հայտնի է նաև իր բնագրագիտական աշխատանքներով: Հմուտ ծանոթագրություններով ու կարճառոտ առաջաբաններով հրատարակության է պատրաստել մի շարք հայ պատմագիրների՝ Վարդան Վարդապետի (1862), Կիրակոս Գանձակեցու (1864), Ղեբուբնա Եղեսացու (1868, նույն թվականին նաև ֆրանսերեն), Խոսրով Անձնացու (1869), Սմբատ Գունդստաբլի (1876), Աբուսահլ Հայի (1901) պատմագրական երկասիրությունները²:

Ղ. Ալիշանը վիթխարի ծրագիր ուներ՝ 20 գրքով լույս ընծայել Հայաստանի բոլոր նահանգների պատմական աշխարհագրությունը: 1870-ական թվականներին նա ձեռնամուխ է լինում այդ ֆանտաստիկ ծրագրի իրականացմանը՝ առանց ընդհատելու իր մյուս պարապմունքներն ու վանական պարտավորությունները: Միայնակ, առանց օգնականների, առանց Հայաստանում լինելու նա մեկը-մյուսի հետևից ընթերցողի սեղանին է դնում «Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց» (1881, նույն թվականին նաև համառոտագրված տարբերակը, նաև ֆրանսերեն՝ 1899), «Միսուան. Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ» (1885, նաև ֆրանսերեն՝ 1899: Նույն՝ 1885 թվականին լույս է տեսել նաև համառոտ տարբերակը՝ «Համառոտութիւն Միսուանայ. պատկերագարդ և աշխարհաբար լեզուով»), «Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց» (1890) և «Միսական. Տեղագրութիւն Միսեաց աշխարհի» (1893) հատորները:

¹ **Հովհաննիսյան Պ.**, Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, Ս. Էջմիածին «Հայագիտակ». 2017թ., էջ 300:

² Նույն տեղում:

Անավարտ են մնացել և հետմահու միայն հատվածաբար են լույս տեսել «Ադունք» (1970) և «Արցախ» (1990) նահանգներին նվիրված գրքերը, որոնք հսկայական փաստական նյութ են պարունակում Հայաստանի պատմական անցյալի գրեթե բոլոր շրջանների վերաբերյալ: Պատմական Հայաստանի նահանգների պատմությանը նվիրված այս հատորները ցայսօր մնացել են անգերազանցելի: Թեև անցել է մեկ դարից ավելի, սակայն դրանք կարողացել են պահել իրենց գիտական արժեքն ու նշանակությունը և շարունակում են ուղեցույց հանդիսանալ մերօրյա հետազոտողներին: Իզուր չէ, որ դեռևս իր ժամանակներում տարածված ասույթ էր դարձել, թե «Հայր Ալիշան մեծ ու հեռատես աչք մըն է, որ Վենետիկ կեցած՝ կրցեր է համրել Հայաստանի ամեն քարերը»¹: Ականավոր պատմաբանի այս և բազմաթիվ մյուս աշխատությունները, ինչպես օրինակ «Հայ Վենետ» (1896), «Հայապատում» (1901), չնայած՝ կրոնական-իդեալիստական աշխարհայացքով պայմանավորված սխալներին, այսօր էլ մեծ արժեք են ներկայացնում հայոց պատմության մի շարք հիմնահարցերի ուսումնասիրության համար:

Այսպիսով, իր պատմագիտական վիթխարի ժառանգությամբ և պատմագիտական հայացքներով Ալիշանը նպաստել է հայ պատմահասարակագիտական մտքի ու մշակույթի զարգացմանը:

ЭДИК МИНАСЯН
Доктор исторических наук

РЕЗЮМЕ

ИСТОРИОГРАФИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ ГЕВОНДА АЛИШАНА

Ключевые слова: наследие арменоведения, историко-географический, историко-лингвистический, историография, родина, Г. Алишан, М Хоренацци, Венеция, «Песни Патриарха», Мхитаристы, «Хайруни», рукопись.

В статье показано и проанализировано богатое арменоведческое наследие известного арменоведа XIX века Гевонда Алишана на основе изучения его богатого арменоведческого наследия.

Известно, что его взгляды сформировались в историко-географических, историко-лингвистических и текстологических трудах.

Среди разделов арменоведения Алишан больше всего делал акцент на историю, потому что считал, что для познания человечества необходимо знать все, что происходило в древности, старине и недавнем времени. По его словам, каждый народ строит не только настоящее, но и будущее, основываясь на своем прошлом.

¹ Նույն տեղում, էջ 301:

Исторические труды Алишана, основанные на материалах, собранных из различных печатных источников, архивов, всемирно известных библиотек, и рукописей Матенадарана Мхитаристов, продолжают оставаться актуальными с точки зрения поднятых вопросов, содержащейся в них новизны и оценки, данной тому или иному явлению. С этой точки зрения заслуживает упоминания его статья «Диакон Ованес Вардапет», а также его роль в связи с исследованиями в области «тайны» Мовсеса Хоренаци.

Рассматривая весь собранный материал с позиций передового уровня европейского арменоведения того периода, в своих статьях «Мовсес Хоренаци и история Армении», «Мовсес-армянский историк» и других статьях, Алишан решительно говорил о правоте научного наследия Хоренаци.

В своих стихотворениях «Армянский мирской» и «Скорблю по тебе, армянский мир» Алишан развивает мысль о том, что хотя Армения сейчас разделена, но наступит время, когда она станет некогда могущественной и единой страной, с ее научной мыслью.

Одним из исторических произведений Алишана можно считать «Масисские горы», опубликованное в 1849 году в журнале «Базмавеп», где Алишан надеется, что его любимая родина наконец сможет стать такой, какой она была в исторические времена. И для того, чтобы им стать, армяне должны объединиться, как другие народы, прошедшие путь освободительной борьбы.

В следующей работе «Армянский гений» автор выдвигает идею о том, что армянский народ не отказался от своих намерений обрести свободу, что он снова пытается сломать иго захватчиков.

Что касается армянского вопроса, Алишан разработал концепцию, согласно которой армянский народ, как Греция и Болгария, прекрасно знал, что он не сможет выйти из под турецкого ига самостоятельно без помощи Европы, поэтому он полагался на поддержку христианской Европы и могущественных цивилизованных народов. «Это самая большая и самая катастрофическая ошибка армянского народа», - сказал Алишан.

Как историк он принадлежал к «географическому» направлению, которое было широко распространено в историографии его времени, и считал, что основным толчком для развития народов является географическая среда. Он обозначил все государства, области, города и села исторической Армении, дал их историко-географические описания, сослался на исторические события, описал памятники материальной культуры.

Таким образом, своим огромным историческим наследием Алишан внес свой вклад в развитие армянской историко-социальной мысли и культуры через историографические взгляды.

EDIK MINASYAN
Doctor of History

ABSTRACT

THE HISTORIOGRAPHICAL VIEWS OF GHEVOND ALISHAN

Keywords: heritage of Armenology, historical-geographical, historical-linguistic, historiography, homeland, Gh. Alishan, M. Khorenatsi, Venice, "Songs of the Patriarch", Mkhitaryans, "Hayruni", manuscript.

The article shows and analyzes the rich Armenological heritage of the famous 19th-century Armenologist Ghevond Alishan based on the study of his rich Armenological heritage.

It is known that Alishan's historical-geographical, historical-linguistic and textological views were formed in his works.

Alishan used history the most among the branches of Armenology, because he believed that in order to know humanity, it is necessary to know everything that happened in the ancient, old and recent times. According to him, every nation builds not only the present, but also the future on its past.

Alishan's historical works based on the materials collected from various printed sources, archives, world-famous libraries, and manuscripts of the Mekhitarist Matenadaran continue to be relevant from the point of view of the questions raised, the novelty contained, and the assessment given to this or that phenomenon. From this point of view, his article "Deacon Hovhannes Vardapet" is worth mentioning, as well as his role in connection with the "mystery" of Movses Khorenatsi.

Examining all the collected material from the position of the advanced level of European Armenology of the period, in his articles "Movses Khorenatsi and Armenian History", "Movses the Armenian Historian" and other articles, Alishan spoke decisively about the purity of Khorenatsi's scientific legacy.

In his works "Armenian Worldly" and "I mourn for you, Armenian World", Alishan vividly develops the idea that although Armenia is now divided, but the time will come when it will become the once powerful and united country, will spread light everywhere with its scientific thought.

One of Alishan's historical works can be considered "The Masis Mountains", published in 1849 in the journal "Bazmavep", where Alishan hopes that his beloved homeland will finally be able to become what it was in historical times. And in order to be able to become, the Armenians must be united, like the peoples who came out of the liberation struggle.

In the next poem, "The Armenian Genius", the author puts forward the idea that the Armenian people did not give up their intentions to gain freedom, that they were again trying to awaken and break the yoke of dictatorship.

As for the Armenian Question Alishan developed the concept that the Armenian people, like Greece and Bulgaria, knew full well that they could not break the Turkish yoke on their own without the help of Europe, so he relied on the support of Christian Europe and the humanism of powerful civilized nations. "This is the biggest and most catastrophic mistake of the Armenian people," – Alishan has said.

As a historian, he belonged to the "Geographical" direction, which was widespread in historiography in his time, and considered that the most basic impetus for the development of peoples was the geographical environment. He placed all the states, provinces, cities and villages of historical Armenia, gave their historical-geographical descriptions, referred to historical events, described the monuments of tangible culture.

Thus, with his huge historical heritage, Alishan contributed to the development of Armenian historical-social thought and culture through historiographical views.

ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԻՇԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ¹

Բանալի բառեր՝ Հայերեն ձեռագրերի յիշատակարաններ, յիշատակարանների հին ժողովածուներ, միջնադարեան գրացուցակներ, Ղեւոնդ վ. Ալիշան, Յովհաննէս վ. Զօհրապեան, Ներսէս վ. Ակինեան, Գաբրիէլ կթղ. Յովսէփեան, Լեւոն Խաչիկեան:

Ցանկալի է, որ գիտութեան եւ մշակոյթի երեւոյթների ու գործիչների յոբելեանների անհրաժեշտ արդիւնքները լինեն ո՛չ այսօրեկան, այլ մնալուն՝ գրքային կամ այլ տեսակի արժէքներ: Ծննդեան 200ամեակի առիթով այժմ ոգեկոչում ենք ԺԹ. դարի մեր մտաւոր մշակոյթի հսկայի՝ Ղեւոնդ վարդապետ Ալիշանի յիշատակն ու նրա բազմաճիւղ-տարատեսակ վաստակը: Առաւել քան վստահ ենք, որ այս ոգեկոչման բուն կամ հիմնական նպատակը պէտք է համարենք նրա աշխատած-վաստակած գիտամշակութային ասպարէզներում արուածի հաշուեկշիռ-ամփոփոյքն անելը եւ նոր անելիքների ծրագրում-ուրուագծումը, որին յաջորդելու են Ալիշանի արծարծած խնդիրների նորանոր զարգացումներ:

Գալով մեր բուն խնդրին. նոր ժամանակների պատմագիտական-աղբիւրագիտական աշխատութիւնների մէջ բաւական յաճախադէպ են տրտունջները, թէ Ղեւոնդ վարդապետ Ալիշանն իր օգտագործած աղբիւրները հիմնականում չի յղել, ըստ այդմ էլ շատերը յայտարարել են, թէ նրա վկայակոչումները թէական են կամ պակաս վստահելի: Սկզբից եւեթ ասենք, որ օժանդակ միջոցներով կամ բուն ձեռագիր մատեաններ քննելով բաւական շատ առիթներ ենք ունեցել ստուգելու Ալիշանի տարբեր վկայակոչումներ կամ քաղուածքներ, եւ գրեթէ միշտ հաստատել ենք դրանց ճշգրտութիւնը: Այսինքն՝ համոզուել ենք, որ Ղեւոնդ վարդապետ Ալիշանի ցանկացած խօսք հիմանուած է գոյութիւն ունեցող որեւէ աղ-

¹ Տարբեր շեշտադրումներով յօդուածիս միտք բանին երկիցս զեկուցել ենք հեռավար գիտաժողովներում՝ ա. 2020 թ. յուլիսի 6ին, Երեւանում՝ «Հայր Ղեւոնդ Ալիշան - 200» եւ բ. 2021 թ. ապրիլի 27ին, Սանկտ Պետերբուրգում՝ «Великие армянские просветители Мкртич Хримян и Гевонд Алишан — к 200-летию со дня рождения», 27-28 апреля 2021 г., Санкт-Петербург, Россия» («Հայ մեծ լուսաւորիչներ Մկրտիչ Խրիմեան եւ Ղեւոնդ Ալիշան՝ ծննդեան 200-ամեակի առիթով. 27-28 ապրիլի 2021 թ., Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստան»):

բիւրի վրայ, ուրեմն՝ եթէ վաւերականութեան վերաբերեալ կասկած կայ, ապա պէտք է գտնել նրա օգտագործած աղբիւրը եւ կասկածի փառատումը փնտրել այդ նոյն աղբիւրի մէջ:

Այժմ հպանցիկ մի ակնարկով անենք մեր միջնադարեան ձեռագրերի յիշատակարանային նիւթի ընդհանուր գնահատութիւնը. Պատմամշակութային սկզբնաղբիւրների շարքում հայերէն ձեռագրերի յիշատակարանների ինքնայատուկ լինելը վաղուց արձանագրուած իրողութիւն է: Յայտնի է, որ ուշ միջնադարի մեր լուսագոյն պատմիչներից մէկի՝ Առաքել Դարիժեցու Պատմութեան սկզբնաղբիւրների հիմնական մի տեսակը եղել են ձեռագրական յիշատակարանները: Յիշատակարանների հետ աղերսներ ենք արձանագրել նաեւ ժամանակագրական փոքր բնագրերի մէջ, աւելին՝ կայ ԺԷ. դարի մի անտիպ ժամանակագրութիւն, որ կարճ բնորոշումով կարելի է անուանել Գրիգոր Լուսաւորչից մինչեւ ԺԷ. դարի կէսերի ընթացքի «Պատմութիւն Կիլիկիոյ Հայոց», մանրագինին պրպտումներով պարզել ենք ինքնութիւնն այս երկի հեղինակի, որ մինչ այս միայն հպանցիկ անդրադարձներով եւ ցրիւ մասնական տպագրութիւններով յայտնի էր որպէս ԺԷ. դարի տաղերգու Յակոբ երէց Սսեցի: Նկատենք, որ այս Պատմութեան հեղինակային ինքնագիր օրինակը¹, իր Սերովբէ եղբօր աջակցութեամբ, յայտնաբերել է մեր Ալիշան վարդապետը, բայց կարելոր է նաեւ այն, որ այս գործի հիմնական ատաղձներից մէկը կրկին ձեռագրական յիշատակարաններն են, որոնց հիմք ձեռագրերը երբեմն պահպանուել եւ մեզ են հասել, ասենք, օրինակ՝ Յակոբ երէց Սսեցին օգտագործել է Հեթում Բ. թագաւորի նշանաւոր Ճաշոցի (1286 թ.) ընդարձակ յիշատակարանը². Բայց այս հեղինակի գործածած յիշատակարանների մայր ձեռագրերն աւելի յաճախ չեն պահպանուել: Աւելորդ չէ արձանագրելը նաեւ, որ մեր գիտական պատմագրութեան ռահվիրա Միքայէլ Չամչեանի Պատմութիւնը նոյնպէս յենուած է մեծապէս ձեռագրական յիշատակարանների վրայ:

Միւս կողմից՝ միջնադարի գրեթէ ամբողջ ընթացքում, մեր գրչութեան եւ դպրութեան կենտրոններում գործնական նպատակներով կազմուել են գրացուցակներ, ներկայիս ձեռագրացուցակների հին՝ պարզունակ դրսեւորումները: Այսպիսիների հսկայական քանակից առայժմ հրատարակուած եւ արծարծուած են միայն Սաղմոսավանքի³ եւ Բաղէշի

¹ Մխիթարեանց Վենետիկի մատենադարանի ձեռ. Հմ 1318:

² Սաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմ 979 (1286 թ.), 470ա-476ա:

³ [Դադեան] Խաչիկ վարդապետ, Նորագիտ մագաղաթեայ նոտրագիր ցուցակ Սաղմոսավանքից մատենադարանի.- Շողակաթ. Ս. Էջմիածնի հայագիտական

Ամլորդոյ վանքի¹ գրացուցակները: Մինչդեռ այսպիսի ցուցակների հետեւողական ուսումնասիրութեան հիման վրայ հիւսուելու են միջնադարեան մեր անհատական, եկեղեցական եւ վանական գրադարանների պատմութիւնները, նաեւ՝ յստակուելու են նրանց ունեցած գրքերի անուանացանկերը, այսինքն՝ որոշակի ի՛նչ գրքեր կային եկեղեցական, վանական եւ անհատական՝ հոգեւորական եւ աշխարհական անձանց գրադարաններում: Համեմատաբար աւելի նոր ժամանակներում ստեղծուել են յիշատակարանների խմբերի օրինակումներ, որպիսիք կան անգամ ԺԷ-ԺԸ. դարերում գրուած ձեռագրերի մէջ, այսինքն՝ յիշատակարանների ժողովածուների կազմութեան սկզբնաւորումն աւելի հին է, քան գիտական հիմունքներով կազմուած ժամանակակից ձեռագրացուցակներին: Հին գրացուցակների ուսումնասիրումն արդէն ծառայելու է ուշ միջնադարի հայկական աղբիւրագիտութեան, բնագրագիտութեան եւ գրադարանագիտութիւն-մատենագիտութեան խնդիրների քննութեանը:

Որպէս օրինակ յիշենք եւ վկայակոչենք Մխիթարեան հանրայայտ միաբան Յովհաննէս վարդապետ Զօհրապեանի (1756-1829) կազմած մի ձեռագրացուցակ եւ յիշատակարանների մի ժողովածու: Ձեռագրացուցակում թուարկել է 1791 թուականին Լվովում տեսած եւ մասամբ Սուրբ Ղազար տարած ձեռագրերը. այսպէս. «Յանկ գրքոց՝ ի նախնեաց հակազնեայ ազգին սրբոց հարց եւ վարդապետաց շարադրելոց, եւ պէսպէս նոյնոյ ազգին յոքնաջան գրչաց աշխատութեամբ ի լոյս ածելոց, եւ նախ քան զմտահաս լինիլն, ի Դատաստանատան ազնուանուն ծերակուտաց Լէօպօլսեցոց մինչեւ ցայժմ ի պահեստի մնացելոց»²: Կասկած չկայ, որ սա մեր ձեռագրագիտութեան համար կարեւոր աղբիւր է, ուստի եւ պատրաստում ենք սրա ծանօթագրուած հրատարակութիւնը: Եւ նկատի ունենանք, որ հայկական ձեռագրական տարբեր հաւաքածուներում կան այս-

ժողովածու, Գիրք առաջին, Նուիրուած հայ գրի եւ տպագրութեան մեծ յոբելեանին. 412-1512-1912, Վաղարշապատ, 1913, էջ 167-169:

¹ Վարդանայ վարդապետի Բաղիշեցոյ ցուցակ գրոց Ամրդօլու վանուց, Հրատ. Սենեքերիմ Տէր-Յակոբեան.- «Արարատ», 1903, Հ^տ Բ-Գ., էջ 176-189. վերահրատ.՝ «Արարատի»ի ժառանգութիւնը, Ժ. «Արարատ»ի բնագիրներ, հտ. Բ... Հրատ. պատրաստեց՝ Սուսաննա Նահապետեան, Դասակարգումը, խմբագրումը եւ առաջաբանը՝ Գեորգ Տէր-Վարդանեանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2017, էջ 665-672:

² Ֆրանսիայի ազգային գրադարանի հայերէն ձեռ. Հ^տ 294, 1ա-2բ. հմմտ. Raymond H. Kévorkian, Armén Ter-Stepanian, Avec le concours de Bernard Outtier et de Guévorg Ter-Vardanian, Manuscrits arméniens de la Bibliothèque nationale du France. Catalogue. Bibliothèque nationale du France / Fondation Calouste Gulbenkian, Paris, 1998, p. 871 (այսուհետեւ՝ «Փարիզի ցուցակ» եւ էջահամար):

պիսի հարիւրաւոր գրացանկեր, որոնց համադիր հետազօտում-հրապարակման աշխատանքները Մաշտոցեան Մատենադարանում արդէն սկսուել են: Ուստի յիշենք այսպիսի մի երկրորդ ցուցակ եւս. Գրիգոր դպիր Յովբեան Տէր-Գրիգորեանը 1840 թ. մարտին Սմբատ Սպարապետի Տարեգրքի ընդօրինակութեան հետ միասին եւ միակազմ կազմել է նաեւ «Յանկ եւ յիշատակարանք հնագիր մատենիցն Սեւանայ»¹, ուր «քաղուածաբար կուտայ ծանօթութիւն անոնց մասին, օրինակելով յատկապէս յիշատակարանները»². այդ ցանկում թուարկել է յիսունմէկ մատեան՝ «Ա. Ն. Լամբրոնացի, Ատենաբանութիւն. ՌԴԵ. (1646), գրիչ՝ Մելքիսեդ, տեղի՝ Ստաթեւ, ստացող՝ Ռստակէս դիտապետ... ԾԱ. Յայսմաւորք. ՈՀԶ. (1227), բոլորգիր, տեղի՝ Դարանաղեաց գաւառ, Գր. Լուսաւորչի մենաստան, ստացող՝ Տուրք»³: Բնականաբար, այս ցուցակը եւս պետք է հրատարակել Սեւանի ձեռագրերի այլ ցանկերի⁴ հետ համադիր քննութեամբ հանդերձ:

Յիշատակարանների ժողովածու միւսը. «Յամին 1814, ի պարապորդութեանս ի Վենետիկ, խորհեցայ կազմել զհաւաքումն յիշատակարանաց բովանդակ գրչագիր մատենից, որք գտանէին ի դպրատան անդ Սրբոյն Ղազարու՝ թուով իբր 860, զոր սկսեալ յԱւետարան գրոցն եւ աւարտել մնացելոցն ոչ ժամանեցի, այլ զբաղումն պարապորդութեան բարդեալ ի վերայ իմ: Յովհ. վ. Զօհրապեան»⁵: Հասկանալի է, որ Զօհրապեանի ընդօրինակած այս յիշատակարանները 1914 թ. տպագրուել են⁶. սակայն դրա-

¹ Մխիթարեանց Վենետիկի մատենադարանի ձեռ. Հ^մ 1261/974, էջ 97-162 (թեքին յաջորդող 974 համարը ձեռագրացուցակինն է, որ տե՛ս յաջորդ ծանօթութեամբ):

² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Զ. Պատմագիրք Հայոց - Կանոնագիրք, Գրիգոր Նարեկացի - Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի - Աղօթագիրք. Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ - Ս. Ղազար, 1996, էջ 293:

³ Նոյն տեղում, էջ 293-296. վերջինը երեւի Մաշտոցեան Մատենադարանի (այսուհետեւ՝ ՄՄ) Հ^մ 3779 Ճառքնտիրն է (հմմտ. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դ., Կազմեց Ա. Ս. Մաթեոսեան, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 149-154, Հ^մ 109. այսուհետեւ՝ ԺԳ. դ-ի յիշ-ք.), ԻԴ. Համարը ՄՄ Հ^մ 4018 ձեռագիրն է, ԻԷ.՝ 1323 թ. Աւետարանը երեւի չկայ չի եկել ի ՄՄ: Գրիգոր դպիր Յովբեան Տէր-Գրիգորեանի գրած ձեռագրերն են՝ ՄՄ Հ^մ 4337, 6345 եւ 6455:

⁴ Հմմտ. ՄՄ ձեռ. Հ^մ 6554:

⁵ Ֆրանսիայի ազգային գրադարանի հայերէն ձեռ. Հ^մ 295, 23ա. 24 թերթ. հմմտ. Փարիզի ցուցակ, էջ 872:

⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ա., Յօրինեց Հ. Բ. վ. Սարգիսեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ-Սուրբ Ղազար, ՌՅԿԳ.=1914, էջ 373-794՝ առկայ է Ա-ՃԶ.՝ 106 Աւետարանի նկարագրութիւն, յիշատակարաններով հանդերձ:

նից ճիշտ մի դար առաջ՝ դեռևս 1814ին այսպիսի ժողովածուի կազմումն ինքնին քննութեան արժանի գիտական կարելոր փաստ է, ասենք՝ կարելոր է, թէ բնագրագիտական ի՛նչ սկզբունքներով է յիշատակարանների իր ժողովածուն կազմել Զօհրապեան վարդապետը, որի պատրաստած հայերէն Աստուածաշնչի հրատարակութիւնը երկու դարից աւելի ընթացքում չի հնացել, ապա՝ նրա ընդօրինակութիւնների մէջ կարող են լինել բանասիրական կարելոր խնդիրների կամ տարակուսելի ընթերցումների լուծումներ:

Աւելի նոր ժամանակներում «ի պէտս պատմութեան Հայոց»՝ յիշատակարանների ժողովածուներ են կազմել հանրայայտ Գարեգին վ. Սրուանձտեանցը¹, Ղեւոնդ վ. Փիրղալէմեանը², սակաւ յայտնի՝ Արսէն Թոխմախեան, Պօղոս Նաթանեան եւ Վահրամ Կանաչեան վասպուրականցի վարդապետները, իսկ Գեղամ Տէր-Կարապետեանը Մշոյ առաջնորդարանի քարտուղար եղած ժամանակ՝ նախորդ դարի սկզբներին, կազմել է Մշոյ եւ Տարօնի ձեռագրերի 1000ից աւելի յիշատակարանների մի ստուար ժողովածու: Ցաւօք, այս վերջինները կորսուած են, եւ որեւէ բան գտնելու մեր բոլոր փորձերն ապարդիւն եղան: Չմոռանանք նաեւ, որ վանեցի ուսուցիչ Օնիկ Բարաղամեանը կազմել է Վասպուրականում իր տեսած ձեռագրերի մի ցուցակ, որի մէջ բաւական ընդարձակ քաղումներով բերել է նաեւ յիշատակարաններ. սակայն այս ժողովածուն³ էլ ցաւօք պահպանուել է միայն մասամբ⁴:

Ըստ էութեան ԺԹ. դարի այս աւանդոյթի շարունակութիւնն էր նաեւ ժամանակագրական դասաւորութեամբ մշակուած՝ տասներկու հոտորով ներկայումս առկայ շարքի առաջնեկը՝ Գարեգին կաթողիկոս Յովսէփեանի «Յիշատակարանք ձեռագրաց»ը, որ սկզբնապէս ժողովուել էր որպէս

¹ Գարեգին վ. Սրուանձտեանց, Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ, Մասն Առաջին, Կ. Պոլիս, 1879, 341 էջ, [Մասն երկրորդ], Կ. Պոլիս, 1884, 488 էջ:

² Նօտարք հայոց. Հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան Տոսբեցոյ, Վարագայ վանուց վանականի, Կ. Պոլիս, Տպագր. Նշան Կ. Պէրպէրեան, [1888], Է., 1 չհ., 232 էջ. նաեւ՝ «Նշխարք պատմութեան Հայոց» խորագրով նրա ձեռագիր ժողովածուները:

³ Տե՛ս ՄՄ ձեռ. Հ^տ 6333. այս ցուցակը պատրաստուում է հրատարակութեան:

⁴ Յիշատակարանների ժողովածուների աւելի մանրամասն մի տեսութիւն էլ տե՛ս Գեղորգ Տէր-Վարդանեան, Յիշատակարանների ժողովածուներ կազմելու Լեւոն Խաչիկեանի մշակած սկզբունքները եւ ներկայիս անելիքները.- Լեւոն Խաչիկեան 90, Նիւթեր Մատենադարանի հիմնադիր տնօրէնի ծննդեան իննսունամեակին նուիրուած միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի 2008 թ.), «Նայիրի», Երեւան 2010, էջ 11-13:

հեղինակի աշխատությունների մէջ օգտագործուելու ատաղձ¹: Շատ պատկերաւոր է յիշատակարանների արժէքի՝ Գ. Յովսէփեանի գնահատումը. «փոքրիկ յիշատակարանները իրենց բազմատեսակ մանր տեղեկութիւններով մոզայիկ գոյնզգոյն քարեր են, որոնցից արուեստագէտը ի մի բերելով եւ օգտագործելով հարկաւորը իր նպատակի համար, կազմում է կենդանի, գունագարդ եւ գեղարուեստական պատկեր»²:

Միջանկեալ նկատենք, որ պատմական սկզբնաղբիւրների պակասը կամ բացը լրացնելու նպատակ ունէր Լեւոն Խաչիկեանի ձեռնարկումը, որի արդիւնքը եղան ԺԴ. եւ ԺԵ. դարերի յիշատակարանների չորս ստուար հատորները³. յիշենք՝ մենք ԺԴ. դարի պատմիչ ու պատմութիւն չունենք, իսկ ԺԵ. դարում ունենք միայն Թովմա Մեծոփեցու փոքրածաւալ գործը, որը պատկերում է հիմնականում կաղ աշխարհակալ Թեմուրի նուաճումների պատմութիւնը:

Աւանդական տեսակի, այսինքն՝ կրկին իր գործերի մէջ օգտագործելու (եւ իրապէս՝ զգալի չափով օգտագործուած) նպատակով ի մի բերած՝ «Հաւաքումն յիշատակարանաց» ստուար ժողովածու ունի նաեւ Ներսէս վ. Ակինեանը. «Մեծադիր տուփեր. Յիշատակարաններ 900-1800 տարիներու շրջանէն, դասաւորուած տարիներու կարգով»⁴: Ի դէպ, կորսուելուց առաջ Ակինեանն ընդօրինակել եւ իր հաւաքածուի մէջ է մտնել նաեւ Գեղամ Տէր-Կարապետեանի վերոյիշեալ ժողովածուի ամբողջ նիւթը: Ձեռագրացուցակներից քաղածներից բացի, նաեւ՝ իր գիտական ուղեւորութիւնների ժամանակ նա անձամբ թերթել է առնուազն 8000 ձեռագիր, ընդօրինակել նրանց յիշատակարանները եւ իրեն անհրաժեշտ մատենագրական այլ նիւթեր. օրինակ՝ 1924 թ. յունուարի 27ին գրել է. «իմ «Յիշատակարաններու հաւաքածոյքս»՝ իբր 20.000 կտոր», իսկ 1931 թ. մարտի 14ին՝ «Անցեալ Նոյեմբ.-Փետր. ամիսները անցուցի եւ Գերմանիա եւ Գաղղիա, ուսումնասիրելու Մատենադարաններու մէջ եւ գրավաճառ-

¹ Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.). 48 նմանահանութիւններով, Անթիլիաս, 1951, էջ ԺԴ.:

² Նոյն տեղում:

³ ԺԴ.. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երևան, 1950, XXXIII, 757 էջ: ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երևան, 1955, LXVI, 818 էջ: ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երևան, 1958, CXLIII, 598 էջ: ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 713 էջ:

⁴ **Հ. Վ. Ինգլիզեան**, Հ. Ներսէս վրդ. Ակինեան - Հայ բանասէրը.- «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 380:

ներու քով գտնուած հայերէն ձեռագիրները: Տեսայ աւելի քան 500 ձեռագիր»¹: Այս վկայութիւններն Ակիմեանի ժողովածուի՝ մեծ ծաւալ, ուստի եւ նոյնպիսի արժէք ունենալու յայտարարներ են:

Իսկ Ղեւոնդ վ. Ալիշանն ունի իր գործերի սկզբնաղբիւրների՝ ձեռագիր եւ տպագիր գրքերից արուած քաղուածքների՝ «Հայկարան» ընդհանուր խորագրով մեծադիր (մօտ 25x40 սմ չափսի) մատեաններ, որոնցից Տրդում (Ը.) ժամանակագրական կարգով մանրագիր ընդօրինակուած են յիշատակարաններ: Վստահ ենք, որ նա յիշատակարանների ժողովածու հրատարակելու մտադրութիւն չի ունեցել. «Հայկարան»ի այս հատորում ընդօրինակել է Սուրբ Ղազարի մատենադարանի եւ Եւրոպայի տարբեր երկրների՝ Ֆրանսիայի Ազգային եւ Իտալիայի տարբեր քաղաքների գրադարաններում իր տեսած ձեռագրերի, նաեւ՝ տարբեր տեղերից իր թղթակիցներից ստացած յիշատակարաններ, որոնք միայն փոքր չափով է օգտագործել իր տպագիր գործերի մէջ: Եւ, ի տարբերութիւն տպագիր երկերի, այստեղ ճշգրիտ նշուած են յիշատակարանները պարունակող ձեռագրերի հասցէները եւ նրանց վերաբերող այլ մանրամասներ:

Այսուհանդերձ, առաւել քան համոզուած ենք, որ թուարկուած բոլոր ժողովածուները, նաեւ՝ Ալիշանի «Հայկարան»ի Ը. հատորը պէտք է համեմատել հայերէն ձեռագրերի յիշատակարանների ներկայումս առկայ տասներկու հատորների հետ, ապա այդ ժողովածուների ունեցած՝ գիտական արժէք ունեցող բոլոր նորութիւնները տպագրել ծանօթագրութիւնների ձեւով, իսկ հատորաշարում բացակայող կամ ժողովածուների աւելի ունեցած յիշատակարանները, ըստ Ղեւոնդ վ. Փիղալեմեանի պատկերաւոր բնորոշման՝ անպայման պէտք է հրատարակել «ի պէտս պատմութեան Հայոց»: Եւ իրաւացին կամ արդարն այն է, որ բոլոր այս աշխատանքները տպագրուեն նախ առանձին-առանձին՝ ամէն հեղինակի արածն իր անունով, ասենք՝ Ակիմեանի «Հաւաքումն յիշատակարանաց», Ալիշանի «Հայկարան, հատոր Ը.» եւ այլն, որից յետոյ միայն սրանց արդիւնքները պէտք է մուծել յիշատակարանների ժամանակագրական հատորաշարի մէջ:

Այդպիսի մի փոքր աշխատանք արդէն արել ենք եւ տպագրել՝ «Բարգէն աթոռակից կաթողիկոս Կիւլէսերեան, Յիշատակարանք [եւ նկարագրութիւնք] հայերէն ձեռագրաց [ի զանազան տեղիս]» վերնագրով². Ըստ

¹ Գէորգ Տէր-Վարդանեան (հրատ.), Հ. Ներսէս Ակիմեանի եւ Հ. Համազասպ Ոսկեանի նամակները Յարութիւն Քիւրտեանին.- Հանդէս ամսօրեայ, 2005, Հ^ր 1-12, էջ 464 եւ 467 (ամբողջը՝ էջ 457-480):

² Տե՛ս Սուրէն Գօլանճեան, Յովհաննէս վարդապետ Հիւսեան, Բարգէն աթոռակից

այս փորձի վստահ ենք, որ մեր յիշատակած ժողովածուները պետք է հրատարակութեան պատրաստել յիշատակարանների հատորաշարի համար ընդունելի ընդհանուր սկզբունքներով, բայց նաեւ նկատի ունենալով նոյն ժողովածուների իւրայատկութիւնները¹:

Ի դէպ, յիշենք նաեւ, որ 1908 թուականին Մեսրոպ արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեանը Վենետիկում ընդօրինակել է յիշատակարանների Ալիշանի ժողովածուն եւ տարրալուծել իր «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց» հսկայածաւալ գործի մէջ², որից էլ՝ արդէն աղաւաղումների ենթարկուած որոշ միաւորներ անցել են յիշատակարանների ժամանակագրական հատորների մէջ: Սրանով հանդերձ, երբ երջանկայիշատակ Վազգէն Յակոբեանի մահից (1982 թ.) երկու տարի անց (1984 թ.) տպագրուեց ԺԷ. դարի յիշատակարանների Գ. հատորը, մեր լուսահոգի բարեկամ Հ. Սահակ վ. Ճեմճեմեանը համառօտ գրախօսութեամբ գնահատեց այն, օգտակար առաջարկներ արեց եւ Հ. Ղ. Ալիշանի «Հայկարան»ից քաղելով տպագրեց հատորի ժամանակագրական շրջանին՝ 1641-1660 թթ. վերաբերող 4 յիշատակարան³: Իսկ սա նշանակում է, որ Մեսրոպ Տէր-Մովսիսեանը, ըստ ամենայնի՝ իր ունեցած ժամանակի սղութեան պատճառով, Ալիշանի ժողովածուն շատ հետեւողաբար եւ նոյնաբար չի ընդօրինակել:

Ժողովածուն բաղկացած է խաւաքարտէ միջուկով թղթապատ կազմի մէջ ամփոփուած, 36x23 սմ չափսի 673 բարակ թղթէ թերթից (էջակալուած՝ 1-1360, ունի նաեւ չէջակալուած ներդիր թերթեր. ընդհանուր հաստութիւնը՝ 5 սմ), գրութիւնը երկսիւն է (սիւների լայնքը՝ փոխնիփոխ 10,8 եւ 8 սմ), գիրը՝ շղագիր, էջում միջինը 42 տող. վիճակը՝ լաւ: Արտաքին այս մանրամասները գրանցել է Հ. Սերոբ Չամուրլեանը. նրա հետ էլ գործակցութեամբ Ալիշանի այս ժողովածուն պատրաստում ենք հրատարակութեան: Թէկուզ թռուցիկ նախնական քննութեան հիման վրայ՝ ամե-

կաթողիկոս Կիլիկեւեան, Գեորգ Տէր-Վարդանեան, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, Հրատարակութեան պատրաստեց՝ Գեորգ Տէր-Վարդանեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, էջ 191-250:

¹ Նոյն տեղում, էջ 193-194՝ Բաբգէն աթոռակից կաթողիկոսի ժողովածուն պատրաստելու սկզբունքները:

² Տե՛ս **Գեորգ Տէր-Վարդանեան**, Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան. Կենսագործունէութիւնը, «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց», Մատենագիտութիւն, «Մագաղաթ» հրատ., Երեւան, 1999, էջ 74:

³ **Հ. Սահակ**, Ճեմճեմեան [Գրախօս.], Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1641-1660 թթ.) հտ. Գ, Կազմեց Վազգէն Յակոբեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1984, 1016 էջ.- Բազմավէպ, 1985, Գ-Դ., էջ 345-347 (յաւելած յիշատակարանները՝ էջ 346-347):

նայն պատասխանատվությամբ յայտարարում ենք, որ այստեղ կան յիշատակարանների տպագիր բոլոր հատորների մեջ բացակայող, այսինքն՝ անտիպ եւ գիտութեանն անյայտ մնացած շատ միաւորներ: Յիշատակենք այսպիսի սոսկ մի քանիսը, որոնցով տեսնելու ենք, որ, ի տարբերութիւն իր տպագիր գործերի, նոյն տպագիրների ատաղձ հանդիսացած՝ նիւթերի իր ժողովածուների մէջ Ալիշանը բարեխիղճ ճշգրտութեամբ նշել է իր աղբիւրները:

Քաղենք՝ «Աւետարան մագաղաթեայ ի Նոր Նախիջեւան, 1884 յուն[ուար]», յաջորդ՝ 114րդ էջից՝ «Եպիփան Պապոյեան», որից ստացել է յիշատակարանը, ապա խորագիր՝ «Արշաւանք եգիպտացոց եւ աւեր Կիլիկիոյ», ապա 1274 թ. բաւական ընդարձակ մի յիշատակարան (էջ 113-117), որ չկայ ժամանակագրական շարքի ԺԳ. դարի հատորում²: Այսինքն՝ թէկուզ գիտենք, որ 1924-1936 թթ. ընթացքում Նոր Նախիջեւանի հայերէն ձեռագրերը եկել են Երեւան եւ ի վերջոյ հանգրուանել Մաշտոցեան Մատենադարանում³, բայց 1274 թուականի այս յիշատակարանի Աւետարանը վստահաբար չի եկել, ուստի եւ նրա ո՛ւր լինելը հիմա յայտնի չէ, բայց մխիթարութիւն է, որ գոնէ յիշատակարանը կայ Ալիշանի ժողովածուի մէջ:

Յաջորդը՝ «Յայսմաւորք Ծերենցի, Երկնիստ գեղջ» Կարնոյ, ապա խորագիրը՝ «Գլակայ վանք, աբեղայք, Պաշ գորավար Եգիպտոսի սուլթան, Եաղուպ թագաւորն, 1480», ապա բերում է Յայսմաւորքի 1480-1481 թթ. բաւական ընդարձակ յիշատակարանը (էջ 837-838): Էջեր անց՝ «Ի Յայսմաւ[ուրք] Երկնիստ գեղջ (տ. 837), գրեալն ի ԶԼ. (1481). 1651. Կարնոյ աւագերէցք Տէր Գէորգ եւ որդի նորա Տէր Յակոբ». եւ բերում է այս Յայսմաւորքի 1651 թ. Կարինում նորոգուելուն վերաբերող յիշատակարանը, որից յետոյ գրում է՝ «Յետ այսր գրեալ է պատմութիւն նահատակութեան չորից նոր վկայից՝ Յովհաննու եպիսկոպոսի Մշոյ, Սիրունի, Յովհաննու վարդապետի եւ Սարգիս Աբեղայի: Անդ՝ յետ վկայաբանութեանցն». եւ բերում է 1664 թ. մի այլ յիշատակարան՝ «Ի թվականութեանս մերոյ ՌՃԺԳ. (1664) սրբազան կաթողիկոսն Յակոբ եկեալ յԱրգրում քաղաք...», սրան էլ յաջորդում է 1671 թ. մի այլ յիշատակարան (էջ 1336-1337):

¹ Այսպէս յիշատակում ենք ժողովածուի էջահամարները:

² ԺԳ. դ-ի յիշ-ք, էջ 439-452՝ 1274 թ. շարք:

³ Տե՛ս **Օնիկ Եգանեան**, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները.- Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա., Կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթրեան, Ներածութիւնը՝ Օ. Եգանեանի, Խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1965, էջ 160-161:

Այսպիսով՝ Ալիշանը մեզ տալիս է ժամանակին Կարնոյ Երկնիստ գիւղում գտնուած ծաւալուն Յայսմաւուրքի՝ 1480-1481, 1651, 1664, 1671 թթ. չորս տարբեր յիշատակարան, որոնցից առաջին երկուսը յիշատակարանների ժամանակագրական հատորների¹ մէջ չկան, իսկ վերջին երկուսը չեն լինի տպուելիք հատորի մէջ, եթէ Ալիշանի ժողովածուն նախապէս չտպագրուի:

Թէեւ Վենետիկի մատենադարանի ձեռագրերի յիշատակարանների զգալի մասը հրատարակուած է ձեռագրացուցակի առկայ ութհատորեակում, սակայն անարժէք չեն նաեւ սրանց՝ Ալիշանի օրինակութիւնները, որոնք անպայման պէտք է համեմատուեն բնագրերի եւ ձեռագրացուցակի հատորների հետ, ապա առնուազն ծանօթագրութիւնների տեսքով տպագրուեն Ալիշանի օգտակար դիտարկումները:

Այսպէս. «Ի ԺԲ. Տաղարանի» յղումով՝ «Ի թվին հայոց ի ՊԶԶ. (1437) եւ ի հոկտեմբերի ամսոյ ի ԻԱ. (21) մեռաւ վարպետն Սըմբատ երեց. Աստուած ողորմի իր հոգուն եւ ջնջէ զիր ձեռագիր յանցանացն եւ փր... ամեն» (էջ 838): Այս յիշատակագրութեան աղբիւրն ըստ ամենայնի պէտք է լինի Մխիթարեանց Վենետիկի մատենադարանի «ԺԲ. Տաղարան»ը, որը, սակայն, գրուել է ոչ թէ 1437, այլ՝ 1641 թ.²: Աւելին՝ ոչ միայն այս, այլեւ մնացեալ բոլոր 42՝ Ա-ԽԲ. թուարկումով Տաղարաններից որեւէ մէկում³ Ալիշանի բերած այս յիշատակագրութիւնը չկայ: Ուրեմն՝ պարզելի է, թէ Ալիշանն ի՞նչ ձեռագիր է նկատի ունեցել «ԺԲ. Տաղարան» գրելով. գուցէ՝ Մարումունք կամ Գանձարան, այլեւ՝ այս փոքր եւ անպայման որոշակի արժէք ունեցող յիշատակարանը մի այլ տեղում տպագրուած է: Այս օրինակը ցոյց է տալիս, որ պէտք է մէկ առ մէկ եւ մեծ ուշադրութեամբ ստուգել նաեւ վենետիկեան ձեռագրերից Ալիշանի քաղած բոլոր միաւորները:

Գեթէ նոյնպիսի երկրորդ օրինակ. Վենետիկ Հ^մր 202/1322 ձեռագիրը

¹ ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1958, էջ 441-450՝ 1480 թ. շարք. ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 9-20՝ 1481 թ. շարք. Հայերէն ձեռագրերի ԺԵ. դարի յիշատակարաններ (1641-1660 թթ.), հտ. Գ., Կազմեց Վազգէն Յակոբեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 1-48՝ 1651 թ. շարք:

² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր Ե. - Յայսմաւուրք-Գանձարան-Տաղարան-Տօնացոյց, Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ - Ս. Ղազար, 1995, էջ 735-746 (այսուհետեւ՝ Վենետիկի ցուցակ, Ե.):

³ Նոյն տեղում, էջ 635-956:

ըստ ցուցակի «1735 թ., Անանիա Շիրակացի» է¹. Եւ սրա 259ա էջի անթուական յիշատակարանը նոյն ցուցակի անուանացանկում թուագրուած է «ԺԹ. դար»². Իսկ Ալիշանն այն թուագրել է՝ ԺԸ. դ., խորագրելով՝ «Աղամ վ. առաջնորդ Ակնայ Ս. Երեւման» (էջ 27):

Կամ՝ «1607. Տաղարան, ի Կաֆա, գաղափարէ Հ. Քերովրէ Քուշներ, 1872» (էջ 1337). սակայն բերած յիշատակարանում թուականը «ՌԾԵ.» 1606 է: Քերովրէ Քուշներեան վարդապետի 1872ին օրինակած յիշատակարանը իր յայտնի գրքում³ չգտանք, գտանք ԺԷ. դարի յիշատակարանների Ա. հատորում⁴, որ վերցրել է՝ «Անտիպ էջեր», «Բազմավէպ», 1907 թ.⁵, տե՛ս նաեւ Ն. Ակիներեան, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 129»⁶: Ըստ «Բազմավէպ», 1907ի, աւելի ճիշտ՝ Հ. Մկրտիչ Պոտուրեանի, Տաղարանը «Մեր միաբանակից Վեր. Հ. Համազասպ Սափարեան նուիրեց Ս. Ղազարու մատենադարանին»: Ի վերջոյ՝ սա Մխիթարեանց Վենետիկի Հ^ր 1683/795 ձեռագիրն է, որ 1907ին հրապարակուածից բացի ունի գրչութեան ժամանակի եւս երեք յիշատակագրութիւն⁷, նաեւ հետագայի՝ 1862 թ. մի այլ յիատակարան, այլեւ այստեղից աւելի յստակ յայտնի է, որ «Ձեռագիրս պատկանած է Հ. Գաբրիէլ Այվազովսկիի, որու մահէն ետք, Հ. Համազասպ Սափարեան բերած է Ս. Ղազար, 1907ին»⁸: Ահա՛ այս ամ-

¹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Է. Տօնապատճառ - Ժողովածոյ, Մատենագիրք Հայոց. Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ - Ս. Ղազար, 1996, էջ 547-552:

² Նոյն տեղում, էջ 550-552 եւ 1093:

³ **Հ. Ք. վ. Քուշներեան**, Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց, Վենետիկ, 1895, 236 էջ:

⁴ Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1601-1620 թթ.), հտ. Ա., Կազմեցին Վազգէն Յակոբեան, Աշոտ Յովհաննիսեան, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 235, Հ^ր 301:

⁵ Ճշգրիտն այս է. Հ. Մկրտիչ Պոտուրեան, Անտիպ էջեր.- Բազմավէպ, 1907, Հ^ր ԹԺ., էջ 401-403: Ըստ այսմ՝ ԺԷ. դարի յիշատակարանների հատորի օգտագործած աղբիւրների ցանկում «Մամուլ» ենթախորագրի ներքոյ այսպիսի թուարկումն ընդունելի ձեւ չէ՝ «Բազմավէպ» 1886 թ., 1907 թ., 1923 թ., 1924 թ., 1938 թ., 1939 թ., 1947 թ., 1969 թ.» (էջ ԼԱ.):

⁶ Այսինքն՝ Հ. Ներսէս Վ. Ակիներեան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, Մխիթարեան տպ., 1921 (Ազգային մատենադարան, ՂԲ.), որի 129րդ էջում որպէս «Վենետ. Թ. 1330 Տաղարան»ի յիշատակարան քաղուած է՝ «Բազմավէպ», 1907, էջ 401ից:

⁷ Որոնք ապագայում պէտք է մուծուեն ԺԷ. դարի յիշատակարանների հատորի վերահրատարակութեան մէջ:

⁸ Վենետիկի ցուցակ, Ե., էջ 715-728:

բողջը, որ ձեռագրի անցած ուղու պատմությունն է, հնարաւոր համառօտ ծանօթութեան ձեւով պէտք է արտայայտել Ալիշանի ժողովածուի հրատարակութեան մէջ:

Ալիշանը օրինակել է նաեւ հնատիպ գրքերի մէջ իր տեսած շատ կարելոր ձեռագիր յիշատակարաններ: Ահա մի օրինակ. նկատի ունենալով 1705 թ. Ամստերդամում Վանանդեցիների տպագրած Ժամագիրքը¹, յղելով՝ «Ի կողմ Ժամագրոց տպագր. յԱմստերդամ. տ'ես յէջ 41» եւ խորագրելով՝ «1732. Խաչատուր վրդպ. - Տէր Եղիազար, ի Վենետիկ», քաղել է նոյն տպագիր գրքի մի օրինակի մէջ առկայ՝ այս ձեռագիր յիշատակագրութիւնը. «Թվին 1632, մարտի ամսոյ ԺԶ.ին (16) ես՝ տիրացու Եղիեայս միջնորդութեամս սուրբ կուսին Մարիամու եղէ կիսասարկաւագ, սոյն մարտի ամսոյ Լ.ին (30) եղէ աւաք սարկաւաք, դարձեալ եւ ի սոյն թվին, աբրիլի ամսոյ 20ին շնորհիւ Տեառն ձեռնադրեցայ քահանայ, որ եւ գոչեցայ տէր Եղիեայզար, եւ ի թիւ ամաց իմոց ԾԲ. (52) ամ. եւ ի սոյն ապրիլի ամսոյ ԻԷ.ին (27) ըսկսայ անարժանս պատարագել» (էջ 28): Այսպիսով, նա մէկուկէս դարով կանխել է մեզ, որովհետեւ մենք նոր ենք սկսել հնատիպ գրքերի մէջ առկայ ձեռագիր յիշատակարանների եւ գրադարանային նշումների դիւանի կազմութեան աշխատանքը:

Օրինակներ կարող ենք էլի բերել, բայց այսքանով առայժմ բաւականանաք, որովհետեւ կարծում ենք՝ հաստատեցինք, որ անպայման արժէ խորաքննի մշակումով եւ պատշաճ ծանօթագրութիւններով հրատարակել Ալիշանի այս մեծարժէք ժողովածուն:

Եզրափակենք, ժողովածուն հրատարակութեան պատրաստելու ընթացքում մեծ օգտակարութիւն է ունենալու Հայր Վահան Օհանեանի տարիների տքնաջան աշխատանքով պատրաստուած եւ վերջերս տպագրուած՝ «Հայր Ղեւոնդ Ալիշան, Նամականի» եռահատորեակը², որ ունի 2130 մեծադիր էջ եւ պարունակում է 1840-1901 թթ. ընթացքում Ղեւոնդ վարդապետ Ալիշանի գրած 2275 նամակ, որոնց մէջ նա իր թղթակիցների հետ շարունակաբար քննարկել է նաեւ յիշատակարանների իր ստացած ընդօրինակութիւններին վերաբերող տարատեսակ հարցեր:

¹ Ժամակարգութիւն հասարակաց աղօթից Եկեղեցեաց Հայաստանեայց. Երրորդիցս ի լոյս ածեալ հայցմամբ խնդրոյ Զուղայեցի Գօրօսէնց Աղազարի որդւոյ Պարոն Թասալոյն... յԱմստէրօդամ, յամին Քրիստոսի 1705, հսկ ըստ հայոց 1154, 632 էջ:

² **Հայր Ղեւոնդ Ալիշան**, Նամականի. երեք հատորով. հատոր առաջին (1840-1870), հատոր երկրորդ (1871-1889), հատոր երրորդ (1890-1901), աշխատասիրութեամբ՝ Հ. Վահան Օ. Վարդապետ Օհանեանի, խմբագիր՝ Վարդան Դերիկեան, Մխիթարեան հրատարակչատուն, հտ. Ա., Երեւան, 2020, ԺԶ., 782 էջ, հտ. Բ., Երեւան, 2021, 800 էջ, հտ. Գ., Երեւան, 2021, 532 էջ:

Առ այս միայն մի օրինակ. Ալիշանը 1885 թ. ապրիլի 9ին Գարեգին վ. Սրուանձտեանցին «Թոռս Աղբար»ի Բ. հատորում տպուած յիշատակարանների մասին գրել է. «Եւ մանաւանդ եթէ տեղ տեղ կրճատեալ չըլլային, այն պատճառօք զոր կը յիշէք յերես 249¹: Այն պատճառներն ինձ համար չըլլալով, ես պիտի խնդրեմ Ձեզմէ, որ առ այժմ մէկ քանի Յիշատակարանաց պակաս կտորները հաճիք լեցընել, եթէ՝ որպէս յուսամ, ունիք ամբողջ օրինակած եւ կը նշանեմ առանձին թղթի վրայ այն խնդրելիքս, եւ կը պարտաւորիմ յիշել Ձեր կրկին արդիւնքը՝ այն գործոյս մէջ, որոյ արդէն ճաշակ մի խաւրեցի Ձեզ, եւ որոյ տպագրութիւնն մօտ է յաւարտել»²: Այս տողերը յուսադրում են, որ գուցէ Սրուանձտեանցը յիշատակարանների իր յապաւած հատուածներն Ալիշանին ուղարկած լինի, ուստի եւ այդ զեղչումները գտնուեն Յիշատակարանների ալիշանեան հատորի մէջ:

Յատկապէս այս նկատառումով ողջունում ենք Նամականիի եռահատորեակի յոյսընծայման փաստը եւ ցանկանում, որ Ալիշանի եւ Ամենայն հայոց Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսի այս «զոյգ յոբելեանների» առիթով ստեղծուեն աւելի շատ գիտական-գրական մնայուն արժէքներ, միաժամանակ հաւաստիացնում ենք, որ այդ մնայուն արժէքներից մէկը լինելու է մեր յօդուածի նիւթ-յիշատակարանների ժողովածուն:

ГЕВОРГ ТЕР-ВАРДАНЯН

Доктор исторических наук

РЕЗЮМЕ

СОСТАВЛЕННЫЙ АРХИМАНДРИТОМ ГЕВОНДОМ АЛИШАНОМ СБОРНИК ПАМЯТНЫХ ЗАПИСЕЙ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ

Ключевые слова: Памятные записи армянских рукописей, древние сборники памятных записей, средневековые каталоги рукописей, архимандриты Гевонд Алишан, Ованес Зограбян, Нерсес Акинян, католикос Гарегин Овсепян, Левон Хачикян

¹ **Գարեգին վ. Սրուանձտեանց**, Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ, [Մասն երկրորդ], Կ. Պոլիս, 1884, էջ 249. «Դառնալով մեր յիշատակարանաց վրայ՝ ընթերցողն կը տեսնէ, թէ ուրեք-ուրեք յապաւած ենք կրկնութիւնները, տեղ-տեղ ալ արդի տպագրական օրինաց անպատշաճները»: Վերջին ակնարկը վերաբերում է թուրքական գրաքննութեանը:

² **Հայր Ղեւոնդ Ալիշան**, Նամականի. երեք հատորով. հատոր երկրորդ (1871-1889), Աշխատասիրութեամբ՝ Հ. Վահան Ծ. Վարդապետ Օհանեանի, Մխիթարեան Հրատարակչատուն, Երեւան, 2021, էջ 505. «տպագրութիւնն մօտ է յաւարտել»՝ Միսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, հաւաքեալ ի Հ. Ղեւոնդեայ վ. Մ. Ալիշան՝ յուխտէն Մխիթարայ, Վենետիկ - Ս. Ղազար, ՌՅԼԵ. - 1885, ԺԵ., 592 էջ:

В статье общим обзором представлены средневековые каталоги армянских рукописей и составленные в древние времена сборники памятных записей этих же рукописей, затем представлены также тома памятных записей, составленные в новое время в хронологическом порядке и в соответствии с определенными научными принципами. Считается необходимым использование содержаний старых каталогов рукописей и сборников памятных записей, чтобы улучшить новые хронологические тома тех же памятных записей. Особенно важными считаются объемные неопубликованные сборники памятных записей архимандритов Гевонда Алишана и Нерсеса Акиняна, первый из которых называется «Айкаран, том 8», а второй - «Сборник памятных записей».

Из сборника Алишана в статье сделаны различные образцы-извлечения, данные которых сочетаются с существующими научными фактами и реалиями. На основе приведенного автором была разработана и подтверждена точка зрения о том, что несомненно необходимо с нужными примечаниями опубликовать составленный Гевондом Алишаном сборник памятных записей, который полностью имеет большую научную и историко-культурную ценность.

GEVORG TER-VARDANYAN
Doctor of Science (History)

ABSTRACT

COLLECTION OF COLOPHONS OF ARMENIAN MANUSCRIPTS COMPILED BY ARCHIMANDRITE GHEVOND ALISHAN

Key words: Colophons of armenian manuscripts, old collections of colophons, medieval catalogues of manuscripts, archimandrites Ghevond Alishan, Hovhannes Zohrabyan, Nerses Akinyan, catolocos Garegin Hovsepyan, Levon Khachikyan

The article presents and evaluates medieval catalogues of Armenian manuscripts and the volumes of these manuscripts' colophons compiled in ancient times, as well as colophons compiled in Modern times in chronological order and according to certain scientific principles. In order to improve the new chronological volumes it is necessary to use the materials of ancient manuscripts' catalogues and collections of colophons. The most important are the collections compiled by archimandrite Ghevond Alishan and archimandrite Nerses Akinyan, the remaining detailed unpublished collections, the first of which is called "Haykaran. volume VIII", the second "Collection of colophons".

Various samples are made-extracts from Alishan's collection; the data in them are compared with various scientific facts and realities. On the basis of all above mentioned, was developed and approved the point of view, that it is absolutely necessary to give needed information with notes, to publish a collection of Ghevond Alishan, scientific value of which is higher than any doubt.

ՄԱՆԵԱ (ԷՌՆԱ) ՇԻՐԻՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
Erna.shirine@gmail.com

ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՍԵՒ ԼԵՌԱՆ ՎԱՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր՝ Ղևոնդ Ալիշան, Կիլիկիա, Սև Լեռան վանքեր, դպրության միջազգային կենտրոն, հունական, լատինական, հայկական, արաբական աղբյուրներ, ձեռագրեր:

*«Ի Սեաւ մըթին լեառն անուանեալ՝
Ուր են հոգիք լուսաւորեալ,
Զյոզնավորով կեանքս թողեալ,
Զոր եւ երազ էր ծանուցեալ,
Եւ զանմարմնոց կեանս ընկալեալ,
Զբանի սիրողսն հաւաքեալ
Եւ առ ինքեան բնակեցուցեալ,
Զգիրքս Հոգւոյն միշտ ընթերցեալ,
Եւ ընդ նոսին յար խօսակցեալ»:*

(Ներսէս Շնորհալի)

Հայր Ղևոնդ Ալիշանի կամ Քերովբե Ալիշանյան Պետրոս-Մարգարի վաստակը հայագիտության համար անգնահատելի է: Նրա հետազոտությունները մինչև ցայժմ շարունակում են զարմացնել գիտնականներին և հաճախ գրեթե միջնադարյան աղբյուրի կարգավիճակ ստանում այլուր չվկայված տեղեկությունների շնորհիվ: Նա, ի թիվս կարևոր, հետաքրքրական և բազմաբնույթ նյութերի՝ անդրադարձել է նաև հայկական վանքերին վերաբերող հարցերին, ջանալով պարզել դրանց տեղադրությունը, այդտեղ կատարված անցքերը՝ օտար լեզուներից թարգմանելով դրանց մասին եղած կարևոր տվյալները:

Հայր Ալիշանի ուսումնասիրության ծիրից չեն վրիպել նաև Սև Լեռան վանքերը, որոնց մեծ գիտնականն անդրադարձել է տարբեր երկերում:

Ընդմիջարկելով թեման՝ կուզեի ասել, որ փաստորեն Ալիշանի վանորեից տեսությանը նվիրված աշխատությունները քարտեզագրության և աշխարհագրության ոլորտին են պատկանում: Չափազանց կարևոր քարտեզագրության դեպքում բավական զգալի առաջընթաց կա, և պատմական քարտեզները մեծ հետաքրքրություն են վայելում՝ արժանանալով խորամուտ քննությունների և հրատարակությունների: Նույնը չի կարելի ասել աշխարհագրության վերաբերյալ. այսօր այն շատ քիչ մարդկանց է

հետաքրքրում և, ցավոք, կարծես թե մահացող գիտություն կարող է համարվել: Սակայն հայր Ալիշանի երկերում աշխարհագրությունն այն-քան խորը և գրավիչ է ներկայացված, որ նման մատուցման դեպքում աշխարհագրական այդ տեղեկությունները՝ քարտեզների և տեղանունների ներգրավմամբ, կարող են հիմք հանդիսանալ ժամանակակից տեսությունները կազմավորելու համար և մեծապես նպաստել խնդրին առնչվող հետազոտությանը: Այսինքն՝ այդ ոլորտը հայր Ալիշանը հասցրել է մի այլ ավելի բարձր և լուրջ կարգավիճակի: Նման մոտեցման կիրառման դեպքում, կարծում եմ, կփոխվի որոշ չափով աշխարհագրության (մասնավորապես պատմական աշխարհագրության) վերաբերյալ եղած իրավիճակը. այն կարող է շարժել նաև երիտասարդության հետաքրքրությունը:

Սև Լեռան բազում վանքերը հանդիսացել են դպրության յուրովի մի միջազգային կենտրոն, որտեղ ապրում և աշխույժ աշխատանք էին ծավալել ժամանակի ասորի, հայ, հույն, լատին, վրացի և այլ¹ առաջադեմ գիտնական վարդապետներ, վանականներ, որոնք կարող էին գտնել այստեղ ոչ միայն հոգևոր ուղեցույցներ, այլև գիտական նորություններ: Նրանց սրբակենցաղ կյանքի մասին են վկայում Ներսես Շնորհալու վերորդերյալ բառերը՝ դատելով որոնցից կարելի է նկարագրել այդ կյանքը հետևյալ կերպ. գիր և գրականություն սիրող (գրանի սիրողսըն հաւաքեալ) այդ միայնակյացները՝ լուսավորված հոգիները («հոգիք լուսաւորեալ»), ապրում էին մեկուսացված (եւ առ ինքեան բնակեցուցեալ)՝ հրեշտակների կյանքով (զանմարմնոց կեանս), մշտապես ընթերցելով Աստվածաշունչը (զԳիրս Հոգւոյն միշտ ընթերցեալ):²

Անհասկանալի պատճառներով հոյժ ուշագրավ այս թեման շատ քիչ է ուսումնասիրված,³ մասնավորապես խորհրդային շրջանում, մինչդեռ

¹ Տե՛ս Ալիշանի մեջբերված տեղեկությունն այդ մասին. «Montagna Nigra dicitur in quo multi sunt heremitæ ex omni genere et natione, et plura monasteria monachorum, tam Græcorum quam Latinorum...» (Marino Sanuto, *Liber Secretorum Fidelium Crucis, Hanoviae 1611*, III, V. 4, p. 174.) = «Ասվում է, որ Սև Լեռներում շատ անապատականներ կային՝ բազում ցեղերից և ազգերից. շատ էին նաև միայնակյացների վանքերը՝ թե՛ հույների և թե՛ լատինների...»: Մարինո Սանուտո Ավագը (1260 - 1338) վենետիկցի պետական գործիչ և աշխարհագրագետ էր, որն առավել հայտնի է խաչակրաց ոգին և շարժումը վերակենդանացնելու իր փորձերով, ինչը և ջանացել արտահայտել իր միակ, բայց ծավալուն և հետաքրքրական, քարտեզներով հագեցած այս աշխատանքում: Նա այցելել էր Սև Լեռան վանքերը և այս տեղեկությունը միակը չէ նրա երկում, տե՛ս օրինակ էջ 244:

² **Ներսես Շնորհալի**, Վիպասանութիւն, դիտք, ոճգ և ն,

<http://digilib.aua.am/book/300/305/>

³ J.J.S. Weitenberg, “The Armenian Monasteries in the Black Mountain, East and West in the Medieval Eastern Mediterranean I. Antioch from the Byzantine Reconquest until the

այն միջնադարյան Հայոց Եկեղեցու, հայ մշակույթի, դավանաբանության, քաղաքականության, գիտության և կրթության վերաբերյալ հարուստ նյութ է պարունակում: Հենց դրա մասին է Ղևոնդ Ալիշանի հետևյալ նկատառումը.

«Պիտանի հետազոտությունն մը պիտի ըլլայ այս բազմաթիւ վանորէից մնացորդքը եւ հետքը քննել, որչափ որ տեղին եւ տեղը բռնող Թիւրք-մէնից կամ նմանեաց յոժարութիւնն թողու: Մեր պատմչաց քով հազիւ 10 կամ 12 անուն կը գտնեմք Ասորոց եւ Հայոց վանաց: Մերայոց մէջ ամենէն անուանին էր Կարմիր վանքն մօտ ի Քեսուն, իշխանանիստն Գող Վասլին, եւ անոր մօտ Արեգի վանքն...»¹:

Թերևս կարելի է ասել, որ վերջերս աշխուժություն է նկատվում այս թեմայի վերաբերյալ, մասնավորապես երիտասարդների կողմից²: Բհարկե, Ալիշանի ասած «հազիւ 10 կամ 12 անուն»-ը այսօր հասել է մի քանի տասնյակի՝ շնորհիվ ձեռագրերի հիշատակարանների նյութի ներգրավման, ինչպես նաև թեմային վերաբերող օտար աղբյուրների ուսումնասիրության: Այս առումով վերջերս հայտնաբերված արաբական աղբյուրները՝ ի թիվս այլոց, արժեքավոր տեղեկություններ են պարունակում նաև Սև Լեռան հայկական վանքերի մասին: Դրանք լիովին փոխում են մեր պատկերացումը խնդրո առարկա վանքերի մասին, այնտեղ ապրող վանականների և դրանց թվի (ինչպես վանքերի, այնպես էլ վանականների) մասին. պարզվում է, որ դրանք ոչ թե մի քանի տասնյակ են, այլ մի քանի հարյուրն են.

End of the Crusader Principality (Orientalia Lovaniensia Analecta, 147), Leuven-Paris-Dudley, MA, ed. by K. Ciggaar and M. Metcalf, 2006, pp. 79-93; Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, Երևան 2005, հտ. Ա, էջ 421; Է. Մ. Շիրինյան, Դպրությունը Կիլիկյան Հայաստանի Սև Լեռան հայկական վանքերում [Teaching and learning at the Armenian Monasteries on the Black Mountain of Cilician Armenia], Բանբեր Մատենադարանի 21, Երևան 2014, էջ 351-362; Казарян О., Церковные контакты армян-халкидонитов и латинян в период крестовых походов на Восток (XI-XIII в.), <http://deusvult.ru/102-tserkovnye-kontakty-armyan-khalkidonitov-i-latinyan.html>.

¹ Ղևոնդ Ալիշան, Շնորհալի եւ Պարագայ իւր, Վենետիկ 1873. էջ 49:

² Այսպես Մաշտոցի անվան Մատենադարանի ասպիրանտ Դավիթ Գևորգյանը ստանձնել է ատենախոսություն գրել հենց այս թեմայով, իսկ Գ.Դանիելյանը հրապարակել է շատ հետաքրքրական մի հոդված, որում արժեքավոր տեղեկություններ է հաղորդվում Սև Լեռան բազում վանքերի վերաբերյալ՝ Գ. Դանիելյան, Հայկական վանքերի եվ եկեղեցիների մասին հիշատակություններ Աբու ալ-Սաքարիմի երկի անհայտ էջերում, Բանբեր Մատենադարանի N26, Երևան, 2018, էջ 22-57:

«Անտիոքին մերձ գտնվում են Սեւ լեռները, որոնց շրջակայքում 700 հայկական վանք կա, որոնցից յուրաքանչյուրը շրջապարիսպ, աշտարակ ունի, որոնց շուրջը՝ վանականների համար նախատեսված մենախցեր: Այնտեղ եպիսկոպոս կա¹ եւ 700 եւ ավելի ճգնակյաց վանական»²:

Քիչ ստորև, Սեւ լեռների անապատներ վերնագրի ներքո այս տեղեկությունը կարծես թե կրկնվում է որոշ հավելումով.

«**Սեւ լեռների անապատներ:** [Արդեն] հիշվել են Սեւ լեռներում գտնվող մի շարք վանքերը: Հայերն այնտեղ 700 մենաստան ունեն՝ բնակեցված եպիսկոպոսներով, քահանաներով, վանականներով, ճգնավորներով եւ մենակյացներով՝ [դեռ] չհաշված այն վանքերը, որոնք չեն հիշատակվել՝ նրանցում վանականների քիչ լինելու պատճառով: Նրանցից յուրաքանչյուրում մոտ 10 վանական կա՝ ի լրումն այն անհաշվելի թվով վանականների, որոնք Անտիոքի շրջակայքում կան, Կեսարիայում, Մարաշում, Տարսոնում, Կիլիկիայում եւ հարակից այլ վայրերում»³:

Հետաքրքրական են նաև այս հոդվածի տեղեկություններն առ այն, որ 14-րդ – 15-րդ դդ. արաբագիր հեղինակները Սեւ լեռները երբեմն նաեւ Հայկական լեռներ են անվանել⁴:

Սև Լեռների հայկական վանքերը մաս էին կազմում Ամանոսի և, թերևս, Տավրոսի լեռների վրա տեղակայված բազմաթիվ վանքերի: Դրանց գործունեությունը գրանցված է դեռևս 5-րդ 6-րդ դարերից, սակայն այդ շրջանի վերաբերյալ տեղեկությունները սակավաթիվ են: Ի տարբերություն դրան, սկսած 11-րդ դարից, կարելի է խոսել այդ վանքերի գործունեության ծաղկման, և անգամ «միջազգային» շրջանի մասին: Ի դեպ, այդ ժամանակ, Կիլիկիայի սահմաններն արևելքում անցնում էին հենց Ամանոսի լեռների վրայով⁵: Սակայն Սև Լեռների վանքերի այս շրջանին վերաբերող տվյալները ևս շատ չեն: Հունական, լատինական և հայկական աղբյուրներում առկա են վկայություններ, որոնք փաստում են այս վանքերում բնակվող տարբեր ազգերի վանականների միջև եղած որոշ դա-

¹ Այսպես յօրինակին:

² Գ. Դանիելյան, նշվ. աշխ., էջ 40-41:

³ Գ. Դանիելյան, նշվ. աշխ., էջ 41-42:

⁴ Նույն տեղում, էջ 40-41, տես համար 70 ծանոթագրությունը. «Արաբագիր հեղինակները Սեւ լեռները երբեմն նաեւ «Հայկական լեռներ» են կոչել, ինչպես օրինակ Աբու ալ-Ֆիդան (մահ. 1331 թ.) եւ նրանից օգտված ալ-Կալկաշանդին (մահ. 1418 թ.). «Ալ-Լուքքամի լեռները ձգվում են նաեւ դեպի հյուսիս, մինչև որ հասնում են Սահյունին, ալ-Շուդրին, ալ-Բաքքասին եւ ալ-Կուսեյրին: Հիշյալ լեռներն ավարտվում են Անտիոքի մոտ եւ կտրվում, եւ նրանց առջև երևան են գալիս Հայոց լեռները»:

⁵ J. J.S. Weitenberg, նշվ. աշխ., p. 79-83.

վանաբանական տարաձայնությունների և անգամ լարվածության մասին, սակայն միևնույն ժամանակ, հենվելով այդ իսկ աղբյուրների տեղեկությունների վրա, կարելի է խոսել թվարկված ազգերին պատկանող վարդապետների մրցակցության և գիտական նյութի ու մոտեցումների բաղդատման մասին: Պարզ է, որ այս ամենը ևս նպաստեց, մասնավորապես, հայկական, վրացական և ասորական գրականության հարստացմանը:

Դատելով աղբյուրներից՝ սկսած 11-րդ դարից, Սև Լեռների հայկական վանքերը բազմաթիվ էին, ընդ որում հայերը ներկայացված էին այստեղ ոչ միայն առաքելական դավանանքով. օրինակ կային նաև քաղկեդոնական հայերի վանքեր: Շնորհիվ զանազան աղբյուրների, մասնավորապես հիշատակարանների, մեզ են հասել Սև Լեռան հայկական վանքերի անվանումները, օրինակ՝ Կարմիր Վանք, Շափիրին, Քարաշիտու, Պառլառ («դրախտ Աստուծոյ»), Պաղակձիակ, Արքայաքաղին, Արեգ կամ Արեգնի (Արեգին) վանք կամ անապատ, Վարդկան, Բարսեղյանց, Շուրր վանք կամ անապատ, Մաշկևոր, Կաստաղոն, Խորին անապատ, Մատին, Առաքելոց վանք, Սուրբ Պողոս, Յեսուվանք, Զորվի Կոզեռն, Ռոդիու, Սուրբ Գևորգ և այլն: Ինչպես նշեցինք, այստեղ ապրում էին նաև քաղկեդոնական հայեր¹, և թվարկված այս վանքերի թվից նրանց էին պատկանում օրինակ՝ Պաղակձիակը, ս. Աստվածածին, Արեգ և Ռոդիոն վանքերը: Ի դեպ, վերջինիս մասին ուշագրավ տեղեկություններ է հայտնում Նիկոն Սկլեոնցին², որն իր հետ կատարված բազում իրադարձություններից հետո հանգրվանում է Ռոդիոն վանքում, որտեղ, ինչպես հենց նա է ասում, շատ քաղկեդոնիկ հայեր էին բնակվում: Այսինքն՝ սա էլ հետաքրքրական մի փաստ է, որ փաստորեն հայերին պատկանող վանքերում, նրանց հետ կարող էին ապրել նաև օտարները:

Հարկ է նաև նշել, որ հնարավոր է ենթադրել, որ այստեղ նշված որոշ վանքերը կարող էին ներկայացված լինել մի քանի կառույցներով մի անվան տակ, այսինքն՝ վանական համալիրը կարող էր պարունակել մի քանի մենաստան: Օրինակ՝ հայտնի Կարմիր Վանքը, որն անգամ կաթողիկոսանիստ է եղել, հաճախ շփոթվում է ոչ պակաս հռչակ վայելող Շուրր անապատի հետ: Շատերի մոտ անգամ գայթակղություն է առաջանում նույնացնել դրանք, մինչդեռ հնարավոր է ենթադրել, որ այդ վանքերը եղել են միևնույն վանական համալիրի կազմում: Եթե ընդունենք նման մոտեցումը, այդ դեպքում զարմանալի չի թվա վերը նշված արաբական աղբյուրների տվյալները 700 հայկական մենաստանների վերաբերյալ: Այդ թիվը շատ տպավորիչ է Սև Լեռների բավական ընդարձակ

¹ Ավելի մանրամասն այս մասին տե՛ս **Է.Մ. Շիրինյան**, Դպրությունը, էջ 353:

² Նույն տեղում, էջ 355-358:

տարածքի համար, որոնք թերևս գրավում էին թե՛ Ամանոս և թե՛ Տավրոս լեռների մակերեսը:

Ինչևէ, նշենք նաև, որ այս վանքերում գործել և սովորել են այնպիսի համբավավոր վարդապետներ, ինչպիսիք էին Ստեփանոս Մանուկը և նրա աշակերտներ Իգնատիոս Սևեռնցին, Գրիգոր Պահլավունին, Ներսես Շնորհալին, Սարգիս Շնորհալին և այլք: Կան նաև անուններ, որոնք շատ մեծ ներդրում են ունեցել Սև Լեռան կենտրոններում ուսանողներին կրթելու և գիտությունը զարգացնելու համար, սակայն նրանց վերաբերյալ, բացի անունից գրեթե ոչինչ չգիտենք: Օրինակ, հենց վերը հիշատակված Ստեփանոս Մանուկի մասին բացի այն, որ նա Շնորհալի վարդապետների մի ամբողջ երամ է կրթել (ինչն արդեն չափազանց մեծ ներդրում է), ոչինչ չգիտենք: Այս մասին է գրում հայր Ալիշանը՝ անդրադառնալով «Ստեփանոս Կարմիրվանեցի կամ Գիտնականի» գործունեությանը.

«...Ասաց ումն յիմաստնոցն, եթէ ծածկեալ գիտութեան վարդապետի՝ բերան են աշակերտքն: Եւ ահա շատ աշակերտներէն զատ (որոց անուանքն ալ ծածկուած են) կան չորս աշակերտք ծանօթք, չորս արծաթի բերանք, որք մեր ԺԲ մեծանշան դարուն դպրութեան եւ գիտնոց պարագլուխք են, եւ ամենէն ընտիր եւ յստակ հայկաբանութեամբ եւ վայելչաբանութեամբ գրողք. Իգնատիոս եպիսկոպոս՝ Ղուկասու աւետարանի մեկնիչն, Սարգիս վարդապետ, Կաթուղիկեայց թղթոց մեկնիչն, եւ երկոքին Պահլաւունի հարազատքս՝ Գրիգորիս եւ Ներսէս. Որոց նման մաքուր եւ շնորհագարդ գրողք կամ չեն եղած կամ շատ քիչ իրենցմէ առաջ եւ ետեւ, եւ յետ Ե դարու Թարգմանչաց՝ անոնց հաւասար օրինակագիրք են հայերէն դպրութեանց»:¹

Բազում էին նաև Հայաստանից Սև Լեռ մեկնած վարդապետները, նրանց թվում էին Գեորգ Մեղրիկը, Գրիգոր Լոռեցին, Կիրակոս Բանասերը, Մխիթար Գոշը և այլք: Ուսումնասիրելով այս հեղինակների գործունեությունը՝ հնարավոր է ասել, որ Սև Լեռան հայկական վանքերում տեղի ունեցավ հին, երբեմն անգամ մոռացված, ավանդույթների հաշտեցումը նոր գիտական մոտեցումների հետ, ինչը մեծ զարկ տվեց հայկական միջնադարյան սքոլաստիզմի զարգացմանը և մասնավորապես Աստվածաշնչի մեկնությունների հայկական դպրոցի հետագա գործունեությանը և ուժեղացմանը: Թերևս կարելի է ենթադրել, որ Սև Լեռների թե՛ վանքերի և թե՛ վանականների բազմությունը պայմանավորված էր նաև անհանգիստ ժամանակներով, բազում հարձակումներով, որոնցից որոշ չափով կարելի էր պատասպարվել Սև Լեռների երբեմն անանցանելի

¹ Ալիշան, Շնորհալի եւ Պարագայ իւր, էջ 51:

բարձունքների վրա, թեպետև, ինչպես վկայում են պատմական փաստերը, հաճախ անգամ դա չէր օգնում:

Այս հարցերն Ալիշանը քննարկում է նաև «Միսուան»¹ հանգամանալից աշխատության մեջ, որտեղ երկու մասով՝ «151. Ճկեր գաւառ. — Սեաւ Լերինք. Բռնաւորք կողմանցս» և «152. Վանորայք Սեաւ Լերին» վերնագրերի ներքո լուսաբանում է խնդրո առարկա լեռներին վերաբերող հարցերը:² Առաջինում տեղակայված են տվյալներ կապված վանքերի անվան, այդտեղ աճող բուսականության, աշխարհագրական դիրքի և այլն, իսկ երկրորդում՝ վանքերի գործունեության և այնտեղ կենցաղավորող անձերի վերաբերյալ:

«Վանորայք Սեաւ Լերին» հատվածում հայր Ալիշանը տասներեք կետերով կամ անուններով (որոնցից յուրաքանչյուրը մի վանքի է վերաբերում)՝ անդրադառնում է հայ պատմիչների կողմից վանքերի վերաբերյալ վկայված տեղեկություններին և հավելում դրանք նորանոր նյութերով: Նախ Ալիշանը հայտնում է որոշ տեղեկություններ այդ վանքերի պատմության (մասնավորապես կանգ առնելով խաչակրաց ժամանակաշրջանի վրա և մեջբերելով հայ պատմիչների գրվածքներից³) և այդտեղ գործող ազգերի վերաբերյալ: Ալիշանը նշում է, որ դրանք պայծառացել էին դեռևս «զհռմեհական դարուցն» և այնպես էին փայլում, որ անգամ արժանացել էին «Սուրբ» անվանվելու.

«...եւ այնքան պայծառ փայլեալ ’ ի Լերինքս ’ մինչեւ **Սուրբ** անուանիլ սոցա իբր յատուկ անուամբք, որով հռչակին ստեպ առ պատմիչս մեր ’ ի ԺԱ - ԺԳ դարս. իբրեւ գերծ եւ անքոյթ դադարք հոգեսիրաց, կրօնաւորաց եւ անապատականաց այլ եւ այլ ազգաց, որոց երեք գլխաւորք, Հայք, Ասորիք եւ Յոյնք, երեցուն եւս աշխարհացն միջասահման գոլով տեղւոյն, յորս յարեցան եւ Վրացիք, ապա եւ Լատինք յաւուրս Խաչակրաց:»⁴

Պատմելով **Իգնատիոս** վարդապետ Սկեռնցու *Ղուկասի Աւետարանի* մեկնության գրելու պարագաների մասին, նա անդրադառնում է նաև այն վանքին, որտեղ ստեղծագործել էր **Իգնատիոսը**, և բնութագրում

¹ **Ալիշան Ղ.**, Միսուան. Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885; Alishan G., Sissouan ou l'Arméno-Cilicie description géographique et historique. Venise-St. Lazare, 1899.

² Նույն տեղում, էջ 402-411:

³ Օրինակ, Արիստակէս Լաստիվերտցի Զ, Մատթէոս Ուռհայեցի, ՂԶ. տե՛ս, Ալիշան, Միսուան, էջ 403:

⁴ Նույն տեղում, էջ 404:

ոչ միայն այդ վանքը, այլև Սև Լեռների վանքերի համաստեղությունը՝ անվանելով այն «համալսարան».

«Բայց մեր յիշատակելիս զսա՝ ոչ վասն ընկերակցութեանն եւ դպրութեանցն է, այլ զի՝ ի նոյն լեռնափակ համալսարանս վարժեցաւ, եւ յայլում մենաստանի գրեաց զոսկեղինիկ եւ զմիակ ծանօթ մեզ մատեանն այն Մեկնութեան. եւ կոչէր մենաստանն. (Ը) Շափիրին:»¹

Սև Լեռան վանքերի վերաբերյալ Ղևոնդ Ալիշանի հետազոտություններն ունեն նաև մի շատ հետաքրքրական ու կարևոր զարգացում. դրանցում մեծ գիտնականը անդրադառնում է նաև այդտեղ եղած հայկական վանքերի հետագա ճակատագրին, մասնավորապես, երբ դրանք կապված են Իտալիայի հետ: Մեջբերված բազում տեղեկություններից ակնհայտ է դառնում, որ շատ վանքեր պահպանվել են հայերի անվան տակ և հետագայում ավանդաբար կրել այդ անվանումը, անգամ այն դեպքերում, երբ արդեն եղբայրության մեջ չկար այլևս և ոչ մի հայ:

Այս առումով ամենահետաքրքրականն են Ժ և ԺԳ համարների տակ վկայակոչված Լատին վանքերը: Այսպես, Ժ. կետից կամ գլխից տեղեկանում ենք, որ այս վանքերի շարքում առկա էր Բենեդիկտյան միաբանությանը պատկանող Ս. Գեորգ վանքը, որի Անգեր (Angerius) անունով արքեպիսկոպոսը հիշատակված է 1140 թ. տակ²:

Լատինաց հաջորդ (ԺԱ) մենաստանի մասին հայր Ալիշանը հայտնում է. «...էր Կիստերսեան միանձանց՝ ի լերինքս, Ս. Սարգիս, de Jubino մականունեալ, եւ յիշեալ յ՝ ԺԲ դարու»:3 Սա հենց այն դեպքն է, երբ Ալիշանը, առանց որևէ երկ հղելու, առաջ է բերում տվյալներ, և փաստորեն իր այս գործն է դառնում միակ աղբյուրը, քանի որ այս տեղեկությունը չկա այլուր:

ԺԲ համարի ներքո Ալիշանը տեղադրում է բավական հետաքրքրական տեղեկություն՝ քաղված արքունական մի նամակից, որում խոսվում է Փոքր Ասիայում գտնվող հայերի Ս. Գեորգ վանքի մասին, որը նա համարում է.

«...ի լատինական վանիցս էր աներկբայապէս», և որը «թէպէտ չասի յայտնապէս՝ ի Սեաւ լերինս լինել, այլ հաւանելի է. զի միւսն որ՝ ի Գահս Կիլիկիոյ՝ վաղ ուրեմն խափանեալ էր, եւ տեղին ընդ այլազգեաց ձեռամբ անկեալ»:4

¹ Նույն տեղում, էջ 409:

² Նույն տեղում, էջ 410:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

Նամակում նշված է, որ այս վանքի առաջնորդն էր Ներսես, որն իր ընկերոջ՝ Հակոբ անունով մի վանականի հետ¹ ճանապարհորդում էր արևմտյան երկրներով «ի հաւաքել անդ նուէրս ի պէտս շինութեան եւ նորոգութեան եկեղեցեաց եւ վանորէից` աւերելոց յասպատակաց. եւ ի սկիզբն 1364 ամի` գոլով ի Լոնտոն, ընկալաւ յԵղուարդայ Գ թագաւորէ զիր ընծայութեան (յ '7 փեպրուարի) առ հպատակս իւր, շրջել յովստս աշխարհին Անգղիոյ` մինչեւ ցամ մի»:² Այսինքն` այստեղ մենք գործ ունենք հայերին պատկանող այսպէս կոչված Ս. Գևորգ մի վանքի հետ, որը ենթադրաբար (ըստ Ալիշանի) գտնվում էր Սև Լեռան վանքերի տարածքում:

ԺԳ համարի տակ Ալիշանը հավելում է մեկ այլ լատինական անանուն վանք, որի մասին ասվում է.

«...մեզ **անյայտ` մենաստան մի Սեաւ լերին**, յորմէ 'ի սկիզբն ԺԴ դարու, նեղեալ 'ի ստեպ արշաւանաց Եգիպտացոց, յաւուրս Հերմոյ Բ, խոյս տուեալ վանահայրն Մարտիրոս` միով ընկերաւ, զոր Գուլիելմոս կոչեն Լատինք (զի առ նոսա գտանի վաւերական պատմութիւնս), եկին 'ի Գենուա, նաւուք նոցին Գենուացոց, եւ շնորհս գտեալ 'ի քաղաքացեացն, ինդրեցին 'ի Քահանայապետէն (Կղեմայ Ե) հաստատել անդ վանս. որում հաւանեցաւ սա կոնդակաւն 'ի 20 փեպր. 1307. բայց ոչ կարելով նոցա գտանել տեղի պատշաճ 'ի քաղաքին` ձեռն արկին արտաքոյ` այլ ոչ հեռի` կառուցանել վանս եւ եկեղեցի մի փոքր յանուն Ս. Առաքելոյն Բարդողոմէոսի, յագարակի բարեպաշտի ուրումն` որ ետ նոցա գտեղին. եւ վերստին ինդրեալ` ընկալան 'ի Քահանայապետէն զհաստատութիւնն, հանդերձ շնորհիւ` յարելոյ 'ի նոյն եւ գերեզմանատուն: Զայս ամենայն ծանուցանէ միւս եւս կոնդակ Կղեմայ (յ '2 ապրիլի, 1309), ուղղեալ առ Մարտիրոս առաջնորդ եւ առ ընկերութիւն **տանն Հայոց Սեաւ լեռնեայց** 'ի կարգէ Ս. Բարսղի: Այս եղեւ մայրավանք այլոց յովովից յայլ եւ այլ քաղաքս Բտալիոյ, որք կոչէին վանորայք **Բարսեղեանց** կամ **Հայ Եղբարց** (Fratr Armeni), թէ եւ յետ սակաւուց Բտալացիք միայն կրօնաւորէին' ի նոսին. այլ անուն Հայ եղբարց եւ կարգի` տեւեաց ցբարձումն ուխտին` յամի 1650: Իբրեւ ազգի նախագոյն ծանօթացելոյ

¹ “Venientes ad nos religiosi viri, Fratres *Nersis* abbas Monasterij *S. Georgij* in Armenia Minori, et *Jacobus* ejus commonacus...” (=«Մեզ մոտ եկան այրք կրօնավորք՝ եղբայրներ Ներսեսը՝ Փոքր Ասիայի Ս. Գեորգ վանքի առաջնորդը և Հակոբը՝ նրա ընկերակիցը...»), Ալիշան, Միսուան, էջ 410:

² Նույն տեղում, էջ 410:

Քրիստոսի՝ ոմն յագնուաց Գենուայ զհրաշալի Պատկեր Դաստառակին, որ բերեալ էր յարեւելից, կտակեաց վանականացն այնոցիկ Հայոց, ուր եւ ցարդ պատուի մեծապէս, եւ յանուն Հայոց կոչի տակաւին եկեղեցին, յորում կայ եւ տապան հայագիր, այլ նոր թուականաւ 1687 ամի»¹:

Այս տեղեկատվությունը հայտնում է մեզ մի շարք կարևոր փաստեր. նախ և առաջ որ 14-րդ դարում տարաբնույթ արշավանքների պատճառով վատթար վիճակում գտնվող Սև Լեռների վանքերը լքվում էին վանականների կողմից: Երկրորդ. որ կաթողիկոսականության ընդունած վանահայր Մարտիրոսը իր ընկերոջ՝ Գուլիելմոսի հետ գալիս է Գենուա և խնդրում քահանայապետին, որպեսզի նա թույլատրի այնտեղ վանք հաստատել: Քաղաքում պատշաճ տեղ չգտնելու պատճառով քահանայապետը նրանց համար հողամաս է հատկացնում ոչ հեռու քաղաքից, որտեղ կառուցվում է վանք և Մբ. Բարդուղիմեոսի առաքյալի անունը կրող մի փոքր եկեղեցի: Արդյոք սա չի՞ հիշեցնում հենց Մխիթարյան միաբանության հիմնադրման պատմությունը: Երրորդ. «ընկերութիւն տանն Հայոց Սեաւ լեռնայց ՚ի կարգէ Ս. Բարսղի» արտահայտությունը կարող է ընկալվել, որ նրանք այստեղ միաբանություն հիմնեցին, ինչը ևս մի կովան կարող է ծառայել վերն առաջարկված Մխիթարյանների ուխտի նմանության վարկածի օգտին: Չորրորդ. այս վանքը դառնում է մայրավանք՝ «այլոց յոլովից յայլ եւ այլ քաղաքս Բտալիոյ», այսինքն՝ արդյոք մեջբերված բառերի տակ կարելի է հասկանալ Բտալիայում բնակվող հայերին, քանզի դժվար է ենթադրել, որ փոքր եկեղեցի ունեցող նորաստեղծ այս վանքը հարուստ վանական ավանդություն ունեցող այդ երկրում պետք է դառնար «մայրավանք» իտալացիների համար: Հինգերորդ. արդյոք, այստեղ հիշատակված «վանորայք Բարսեղեանց կամ Հայ Եղբարց (Frati Armeni)» կարելի է նույնացնել Սև Լեռան Բարսեղեանց անունը կրող վանքի հետ, այսինքն՝ որ Մարտիրոս վանահայրը ոչ թե անհայտ վանքից էր, այլ հենց Բարսեղյանց մենաստանից, որի անունը և վերականգնել էր նորաստեղծ վանքում: Վեցերորդ. փաստորեն այս հատվածը նկարագրում է Սև Լեռան վանքերի հետագա ճակատագիրը, այսինքն՝ այս տեղեկությունը կարող է վերաբերել ոչ միայն տվյալ վանքին, այլև բազում այլ վանքերի, որոնք, սկսած նկարագրված ժամանակաշրջանից, վաղուց ի վեր անկում էին ապրում տարբեր պատճառներով:

Ամփոփելով Սև Լեռների վանքերի վերաբերյալ իր այս երկում հավաքած տեղեկությունները՝ Ալիշանը նաև կարծես թե ուրվագծում և բնութագրում է Սև Լեռների տարածքը.

¹ Նույն տեղում, էջ 410-411:

«...իցի՛ւ թէ եւ՝ ի յաջողութիւն՝ հետախուզութեան սրբոց տեղեացն. յորոց հրաժէշտ կալեալ արդ՝ իջցուք յառ ստորոտով նոցին՝ ի ծովեզրն, ի դաշտայինն ճկեր, եթէ օրէն իցէ այսպէս անուանել զանձուկ միջոցն ծովափնեայ՝ մինչեւ՝ ի լերինսն»¹:

Այսպիսով, հայր Ալիշանը հաղորդում է կարևոր, բազմաբնույթ և բովանդակելի տեղեկություններ քննարկվող խնդրի վերաբերյալ: Մակայն, երբեմն, ինչպէս հատուկ է նրան այլ դեպքերում ևս, նա հայտնում է տվյալներ, առանց դրանց աղբյուրը նշելու. Այն դեպքում, երբ դրանք օտարալեզու հետազոտություններից են վերցրած, կարելի է դրանք վերականգնել, սակայն թվում է, որ կան դեպքեր, երբ գիտնականն օգտվել է ձեռագրերից, և այս պարագայում միակ աղբյուրը մնում է հայր Ղևոնդ Ալիշանը:

МАНЕА (ЭРНА) ШИРИНЯН

Доктор исторических наук, профессор

ГЕВОНД АЛИШАН О МОНАСТЫРЯХ ЧЕРНОЙ ГОРЫ

Ключевые слова: Гевонд Алишан, Киликия, монастыри Черной Горы, международный центр просвещения, средневековый университет, греческие, латинские, армянские, арабские источники, рукописи.

Вклад о. Гевонда Алишана в арменоведение огромен; его исследования до сих пор остаются ценными и продолжают удивлять ученых масштабом его интересов. Будучи полиглотом, он использовал разнообразные источники, предпочитая в основном рукописи; часто его исследование может получить почти статус средневекового источника из-за информации, отсутствующей в каком-либо другом месте. Среди прочего важного и разнообразного материала он затронул тему армянских монастырей Черной горы, пытаясь выяснить их местонахождения и дав важную, разнообразную информацию о них. В этом контексте он обращается к уникальному феномену многих монастырей на Черной горе, которые с 6-го по 13-е вв. были своеобразным центром преподавания, обучения и развития науки для разных народов. Самым процветающим и «интернациональным» периодом деятельности монастырей Черной горы был 11-ый век. Комплекс этих монастырей можно назвать своего рода международным «университетом» для греческих, сирийских, армянских, латинских и грузинских монахов, аскетов и просто авторов. Монастыри, принадлежавшие армянам (по крайней мере, в 11-ом в.) суть следующие: Кармир, Шапирин, Арег или Арегни, Вардкан, Карашиту, Барсегянц, Машкевор, Пагакдзяк, Парлахо и т. д. Здесь подвизались монахи и ученые как из самой Армении (как Георг Мегрик, Григор Лореци, Киракос Филолог, Мхитар Гош и многие другие), так и из Киликийского Армянского царства (Степанос Манук, Игнатий Черногорец, Нерсес Шнорали, Григор Вкайасер («Мартирофил»), Саргис Шнорали и др. В своих работах Гевонд Алишан сообщает незаменяемые свидетельства, предоставляя разнообразную исчерпывающую информацию по обсуждаемому вопросу, особенно когда это касается

¹ Նույն տեղում:

взаимоотношений этих монастырей с Италией. В этом отношении особенно важно его произведение «Сисуан», две главы которой посвящены именно монастырям Черной горы. Он называет имена армянских католических монастырей, находящихся на этой горе, сведения о которых почерпнуты из известных только ему источников и рукописей. Особый интерес представляют и отрывки, повествующие о дальнейшей судьбе подвизающихся там монахов и монастырях, которые в результате многочисленных нашествий, начиная уже с 13-го века приходят в упадок.

MANEA (ERNA) SHIRINIAN

Doctor of history, Professor

GHEVOND ALISHAN ON MONASTERIES OF THE BLACK MOUNTAIN

Key words: Ghevond Alishan, Cilicia, Black Mountain monasteries, international center of teaching and learning, Medieval university, Greek, Latin, Armenian, Arabic sources, manuscripts.

Ghevond Alishan largely contributed to Armenian Studies. His researches still remain valuable and continue to amaze scholars by the wide scale of his interests. Being a polyglot he used very diverse and various sources, preferring more study of manuscripts; often his study can gain almost a status of medieval source due to information not found elsewhere. Among other important and manifold material, he touched upon the topic of Armenian monasteries of the Black Mountain, trying to find out their location and giving an important information about them. In this context he dealt with the unique phenomenon of many monasteries at the Black Mountain from 6th to 13th centuries as a centres of teaching and learning and scholarship for different nations. The 11th century was the most flourishing and 'international' period for the activities at the Black Mountain's monasteries; it was sort of international 'university' for Greek, Syrian, Latin, Armenian and Georgian monks, ascetics and simply authors, who came in search of a spiritual guide. The monasteries, which belonged to Armenians (at least in the 11th century): Karmir, Shapirin, Areg or Aregni, Vardkan, K'arashit'u, Barsegheanc', Mashkevor, Paghakdziak, Parlahoy etc. There is information on Armenian personae who came to settle in these monasteries as from Armenian itself (like Georg Megrik, Grigor Lorec'i, Kirakos the Philolog, Mxitar Gosh and many others), as well from Cilician Armenia (Stepanos Manuk, Ignatius Sevlernc'i (of the Black Mountain), Nerses Shnorhali, Grigor the Second, Sargis Shnorhali. Ghevond Alishan gives indispensable testimonies by providing a variety of comprehensive and exhaustive information on the issue under discussion, especially when it concerns relationship of these monasteries with Italy. In this regard, the writing called "Sisuan" is especially important; two chapters of this work are dedicated to the monasteries of the Black Mountain. There he gives the names of the Armenian Catholic monasteries, situated on the Black Mountain; some testimonies concerning these monasteries are taken manuscripts or sources known only to him. Of particular interest are the passages, reporting on the further fate of the monks, who lived there and monasteries, which declined starting from the 13th century, in the result of many invasions and attacks.

ԱԼԻՇԱՆԻ ՊԱՏՄԱՀԱՅԵՑՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՅՐՈՒՆԻ» ՀԱՏՈՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Ղևոնդ Ալիշան, ազգային գաղափարաբանություն և ինքնագիտակցություն, հայ մտքի պատմություն, արիստոտելականություն, «Հայրունի», կլասիցիզմի պոետիկան, բանաստեղծական նոր ձև:

15-17 դարերի հայոց հասարակական- քաղաքական կյանքի բարդագույն շրջափուլի մասին մեզանում շատ է խոսվել: Պայմանավորված ստեղծված պատմաքաղաքական հանգամանքներով, աշխարհագրական դիրքով ու ոչ քրիստոնյա հարևանների չդադարող ոտնձգություններով, դարեր շարունակ պետականության ու պետական հաստատությունների բացակայությամբ, մի կատարյալ անկյալ վիճակի հասած ժողովրդի համար պատմական ժամանակը քննության էր դրել ֆիզիկական գոյատևման, աշխարհագրական հայրենիքը չկորցնելու, հոգևոր ինքնաստեղծումի ու մշակութային ինքնության խնդիրը: Երկար մի շրջան տևող անկումից հետո Հայաստանի հոգևոր- մշակութային կյանքը զարթոնքի նշաններ է ցուցադրում: «Շահ- Աբասի գերեվարությունից հետո,- գրում է Լևոն իր «Հայոց պատմության» մեջ,- մենք կանգնեցինք «մեր պատմության ամենագարմանալի ու հրահանգիչ երևույթներից մեկի առջև», որ «ազգային-կուլտուրական վերածնության մի դարագլխի սկիզբն է հայության համար», «լուսավոր շարժում... մարդկային կյանքի ստեղծած մի հրաշք»¹: Ապա մանրամասն քննության ենթարկելով ստեղծված պատմաքաղաքական հանգամանքները՝ Լևոն կանգ է առնում հոգևոր-մշակութային տեղաշարժերի վրա՝ ուրվագծելով գրականության զարգացման միտումները. «17-րդ դարի հայոց գրականությունը,- գրում է գրականության պատմաբանը,- հանդես է բերում մեծ զարգացման անտարակուսելի նշաններ: Մեր առջև բացվում են երկու խոշոր երևույթներ, որոնք տրոհում են գրականությունը երկու մասի: Մեկը մեր հին իրականության շարունակությունն է, այսինքն՝ այն, որ հայ գրողները, գլխավորապես մայր հայրենիքում, աշխատում են կենդանի պահել մեր ազգային գրականության վաղեմի և հարագատ ճյուղերը՝ պատմագիտություն, բանաստեղծություն,

¹ Լևոն, Հայոց պատմություն, հատոր երրորդ, գիրք առաջին, Երևան, 1969, էջ 266: «Նորոգության շրջանի հայ գրականության պատմությունը 17-18-րդ դարերում» առավել մանրամասն՝ տե՛ս Սերգեյ Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, հատոր 6, Ստեփանակերտ, 2015 թվական, էջ 5-34:

մասամբ և աստվածաբանություն: Մյուս երևույթն արդեն արդյունք է նոր զարգացող հասարակական և քաղաքական պայմանների ու կատարյալ նորություն է ներկայացնում հայ կյանքի համար: Այս մասն ամենասերտ կերպով կապված է հայկական տպագրության հետ, որ մարմնացնում է հայոց կուլտուրական աշխատանքի ամենաուժեղ հոսանքը 17-րդ դարում»¹: Իր «Ուրվագծեր 19-րդ դարի հայոց գրականության պատմությունից» աշխատության մեջ Մանուկ Աբեղյանը, ներկայացնելով պատմական այս ծանրագույն ժամանակը, գրում է. «Պետք էր հայությանը փրկել վերջնական անկումից և վայրենացումից: Եվ ահա 17-րդ դարում սակավաթիվ լավագույն մարդկանց բոլոր ձգտումը կենտրոնանում է այն բանի մեջ, որ կենդանացնեն մեռնող հայ կյանքը: Դրա համար երկու ճանապարհ է ներկայանում նրանց- վերածնել հին հայ կյանքը, գիրն ու գրականությունը և ապա օգտվել եվրոպական լուսավորությունից, որ մեր նոր գրականության համար նույն դերը պիտի խաղար, ինչ որ բյուզանդականը մեր հին գրականության համար»²:

Ազգային կյանքի հենց այս շրջադարձային կետի վրա են հայ գրագետները տեսնում Մխիթարյան հայրերի հայագիտական, լայն իմաստով՝ պատմա-մշակութաբանական գործունեությունը: Մխիթարյան հայագիտության մեջ իր բացառիկ մեծությամբ ու գիտա-գեղարվեստական ժառանգությամբ հառնում է Հայր Ղևոնդ Ալիշանի կերպարը. «Ալիշանին ոգիին մեջ ամբողջ Մխիթարյան առաքելությունը կը տեսնեմ: Նույնիսկ ինչ որ Մխիթարի՝ իրենց հանճարային հիմնադրին մեջ դեռ տարտամ ու անկատար, դեռ ներշնչումի և ձկտումի վիճակին մեջ էր, եկած խտացած ու ի գործ փոխված է Ալիշանի մեջ. Ու ան եղած է հնոցը, ուր երկդարյան միաբանության մը բոլոր ներշնչումներն ու բաղձանքները, բոլոր իտեալներն ու ներգործությունը՝ լեցված, լեցված ... ու եռեփված է՝ ի հայտ բերելով ոսկեդեն կենսունակություն մը, Մխիթարյան Առաքելության թանկագին հուշարձանը»³, - Վարուժանի խոսքերն են, որ արտասանել է 1913-ի հոկտեմբերի 27-ին, Բերայի Թոքատյան ճաշասրահում գումարված Մուրատ-Ռաֆայելյան միության կանոնադրական հանդեսում:

Բազմաթիվ են Հայր Ալիշանի հայագիտական գործունեության բնութագրման ու արժևորման փորձերը, բայց մինչ համազգային գնահատումի և սիրո շրջափուլը, նախորդել է տիտանական մաքառման ու ինքնա-

¹ Նույն տեղում, էջ 349:

² **Աբեղյան Մ.**, Երկեր, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1970, էջ 546:

³ **Վարուժան Դ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3, Երևան, 1987, էջ 182:

նվիրումի մի բացառիկ պատմություն, որը, թերևս արժե հիշել մի քանի դրվագով:

1843 թվականին, «Բազմավեպ» հանդեսում տպագրվում է երիտասարդ վանականի՝ Ղևոնդ Ալիշանի «Եղծ անմիաբանության հայոց» հոդվածը՝ սկիզբ դնելով հայագիտական ու հայրենագիտության մի ահռելի ժառանգության (շուրջ 60 հատոր), որ մինչև օրս կարոտ է ամբողջական հրատարակության ու քննության:

1847-ի հուլիսին, դարձյալ «Բազմավեպում» տպագրվում է Ալիշանի «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունը՝ ստորագրված «Նահապետ» անունով: Նույն տարին գրական հասարակությունը մեծագույն խանդավառությամբ է ընդունում Նահապետի «Պլպուլն Ավարայրի» պոեմը, ապա իրար են հաջորդում «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ», «Հրագդան» (1848), «Մասիսու սարերն» (1849), ավելի ուշ՝ «Լուսնկայն գերեզմանաց հայոց» (1858), «Հայ հայրենիք» (1858) և այլ բանաստեղծություններ, որոնք այնպիսի լայն արձագանք գտան ու ճանաչում բերեցին հեղինակին, որ շուտով՝ 1858-ին, հրապարակվեցին «Նվագների» երրորդ՝ «Հայրունի» հատորում՝ կազմելով մի առանձին շարք կամ բաժին, որ պարզապես խորագրված էր «Նահապետ»: Այս հրատարակությունը ներառում էր նաև «Շուշանն Շավարշանա» և « Աշոտ Երկաթ ի ծովուն Սևանա» գործերը: 1867-ին վերահրատարակված շարքին Հայր Ալիշանն ավելացրեց «Վերջին երգ վիրավոր բամբուխարին», «Հայ հանճար» բանաստեղծությունները՝ լրումի հասցնելով ստեղծագործական մտահղացումն ու այն տպագրության հանձնելով «Նահապետի երգեր» խորագրով: Նպատակը, որ գրավել էր Ալիշանի ողջ էությունը, իմաստավորել նրա իդեերն ու երգները, գտնվել էր՝ Ազգն ու Հայրենիքը, ու նրա ստեղծագործական տարերքը դուրս բերել Իմաստի ճանաչման նոր ու լուսավոր հորիզոններ: Եթե հետևելու լինենք փիլիսոփայական էսթետիկային՝ գրականությունը, իբրև ժողովրդի ինքնագիտակցման ձև, նշանային իմաստով նույնական է նրա պատմությանը, և, մեր հոգվածի՝ գիտական խնդրի ձևակերպման պարագայում, յուրօրինակ փիլիսոփայական հայեցակարգ է ձևավորում՝ ուղիղ շաղկապելով Ալիշանի պատմահայեցությունը «Հայրունի» հատորի առավելապես գրաբար բանաստեղծություններին, ապա ըստ հայ եկեղեցու տոնացույցի շարակարգված, «Հուշիկ հայրենյայց հայոցի» 33 չքնադ դրվագ-պատումներին:

Հայոց պատմությունը, հայագիտությունն ու Մխիթարյան հայրերը: Այս հարցերը մեզանում շատ են արծարծվել, քննարկվել են հայոց մատենագրության ուսումնասիրության ու Մխիթարյան պատմագիտության դոկտրինները, փաստական հիմնավորումներով մեկնաբանվել, թե Մխիթարյան տունը ինչ խորագիտությամբ ու բացառիկ գիտական- ակադե-

միական պատվախնդրությամբ է քննության առել, համակարգել ու ընդհանրացրել հայագիտությանն առնչվող ցանկացած խնդիր. «Ապա այս մարդիկը, - գրում է Աբեղյանը, - մեծամեծ, իսկապես հիացմունք պատճառող ջանքերով աշխատում են կարդալ և հասկանալ մեր անհասկանալի դարձած ու մոռացված գրականությունն ամբողջ, թե եկեղեցական, և թե աշխարհիկ բնավորություն ունեցող ձեռագիրները՝ ինքնուրույն թե թարգմանական երկերը՝ որքանով որ կային կամ ճարում էին: Նրանք արտագրում են բազմաթիվ նոր ձեռագիրներ, աշխատում են գտել ունիթոռների ձեռով լատինացած գրաբար լեզուն, հորինում են քերականության, տրամաբանության և այլ նոր դասագրքեր՝ օգտվելով գլխավորապես հին գրքերից, և նույնիսկ թարգմանություններ էլ են անում»¹: Միայն այն հանգամանքը, որ Միաբանությունը իբրև առաջնային նպատակ ձեռնարկեց հայ դասական մատենագրության ու ընդհանուր պատմության կոթողային հուշարձանների հրատարակությունը, հստակ խոսում է Մխիթարյանների՝ հայագիտությունն իրենց գործունեության ելակետ ու սկզբունք դիտարկելու հանձնառության մասին:

Նրանք իրենց նպատակադիր ու համակարգված աշխատասիրությամբ մի քանի բնագավառներում՝ աստվածաբանական-հայրախոսական, ծիսային-մեկնողաբանական, բանասիրական ու պատմագիտական, խնդիր ունեին ճանաչել տալ հայ ժողովրդին իր պատմությունն ու մատենագրությունը, այդ նպատակով հստակ համակարգի ենթարկել ու վերակենդանացնել գրաբարը, հայոց իմացականությունը հաղորդակից դարձնել անցյալից մեզ ժառանգված պատմագրական ու իմաստասիրական երկերի բարձր մշակույթին:

Մխիթարյանները գիտնականներն էին նախ և առաջ, որոնք հայ իմացականությունը բարձրացրին պատմականության ու պատմության փիլիսոփայության գիտակցմանը:

Ի սկզբանե բնական ձգտում ցուցաբերելով արևմտյան աշխարհակեցության ու լուսավորչական գաղափարների նկատմամբ՝ Մխիթարյան Ակադեմիան իր գործունեության առաջին օրվանից հայ մտածողությունն առբերեց կարգ, մեթոդ, գիտականացում հասկացությունները՝ փորձելով դարեր տևած արևելյան մտածողության դանդաղամիտ թմբիրից, միջական աշխարհընկալումի գետնամած հոգնածությունից դուրս քաշել ազգային մարմնի գոյությունն իմաստավորող գիտակցված, կանոնաբերված Միտքը, Կարգը, այս հիմունքով ձևակերպվող ազգային գաղափարաբանությունը: «Մեթոտի, յստակութեան, կարգաւորութեան պակասը ամենէն

¹ **Աբեղյան Մ.**, Երկեր, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1970, էջ 546:

զգալի և ամենէն ծանր թերութիւնն է, որ ի յայտ կուգայ քաղաքակա-
նութեանն ինչպէս եւ գրականութեանը մէջ մեր ժողովրդին, որ ինչքան ալ
միշտ մղուած ըլլայ դէպ ի Արեւմուտք, Ասիացիի տարտամութենէն ու
թանձրութիւնէն շատ բան պահած է միշտ»¹, - Մխիթարյանների գործու-
նեւորթան ելակետն այսպէս է տեսնում Արշակ Չոպանյանը, ապա ձևա-
կերպում պատմական այն հեղաշրջիչ առաքելութիւնը, որ հանձն առան
միաբանութեան հմուտ հայագետները. «Մերտ շփումը զոր Մխիթար եւ իր
յաջորդներն ունեցան եւրոպական աշխարհին հետ, իրենց փոխանցեց այն
մեծ յատկութիւնը որով Արեւմուտքը յաղթեց Արեւելքին, - մեթոտիկ գոր-
ծունեւորթան յատկութիւնը: Բառարանները, կրօնական ու պատմական
գրքերը... եւրոպական հրաշակերտներու խնամոտ թարգմանութիւնները,
...Հայոց հին մատենագիրներու գործերուն կոկիկ տպագրութիւնը, մեր
մէջ կը մտնէին՝ կարելի է ըսել առաջին անգամն ըլլալով՝ այդ մեծ ու
բեղուն նորութիւնը կանոնաւոր, գիտակից, ներհուն աշխատութեան, զոր
Արեւմուտքը սորվեցուց Մխիթարյաններուն եւ զոր անոնքն իրենց հայ-
րենիքի եղբայրներուն սորվեցուցին»²: Հայոց ազգային գոյութեան առաջ-
նահերթութիւնը միաբան հայրերը կապում էին լուսավորութեան ու քա-
ղաքակրթման գաղափարի հետ. «Քանզի են ի մէջ այլ ազգեաց եւ ի մէջ
գերութեան, վասն այսորիկ առաւել հարկաւորեն հայոց ազգի ուսմունք»³:
Զարմանալի մի իրողութիւն է տեղի ունենում հայոց իրականութեան մէջ.
Մխիթարյանները միանգամից Հայաստանը պոկում են միջնադարյան
խավարչտին անցյալից ու կանգնեցնում եվրոպական քաղաքակրթութեան
ճանապարհին, հայ գեղագիտական միտքը բարձրացնում դարաշրջանի
եվրոպական մտածողութեան աստիճանին: Նկատի պիտի ունենալ, որ
Արեւմուտքն էլ անձանոթ էր հայկական իրականութեանը, և առաջին ան-
գամ էր թերևս այդքան խորութեամբ ու բազմակողմանիորեն առնչվում
հայկական մշակութիւն:

Մխիթարյան տունն ըստ էութեան գիտականացրեց հայ միտքը, հիմք
դրեց մեր հոգևոր ստեղծումների գիտական պատմութեանը՝ փաստա-
աղբյուրագիտական հսկայական նյութի համակարգումից հետո միան-
գամայն սկզբունքային իմաստ տալով առանձին առարկաների և գիտա-
ճյուղերի ստույգ սահմանմանը: Հայր Լևոն Զեքիյանը վկայում է, որ 1810
թվականի օգոստոսի 17-ին (սեպտեմբերի 8), երբ, ի պատասխան Ստե-
փանոս Ագոնցի աղերսագրի, կայսերական հրովարտակով երաշխավոր-

¹ Չոպանեան Ա. Դէմքեր, Փարիզ, 1924, էջ 71:

² Նույն տեղում:

³ Խաչատուր Էզրումեցի, Գիրք քերականութեան, Լիվոռնո, 1696, էջ 2:

վեց¹ Մխիթարյան միաբանության Մայրավանք Սուրբ Ղազարի գոյատևումը իր «իր ներկայ վիճակին մեջ», «Մխիթարի Հայկազեան Բառարանի կողքին՝ Միաբանութիւնը մեջտեղ դրած էր արդէն շուրջ 280 հատորներու հրատարակչական պատկառելի աւանդ մը, որոնց միջեւ չէին պակսեր ակադեմիական ուրիշ կոթողային գործեր... ինչպէս՝ նոյնինքն Մխիթարի Մատթէի Մեկնութիւնը, Չամչեանի Հայոց Պատմութիւնը, Աւետիքեանի «Նարեկյուն»ը..., (ուրեմն) կը խորհինք, թէ յիշեալ պաշտօնական ճանաչումը կը հասներ, պարագաներու բերումով անշուշտ, պատմական այնպիսի պահու մը՝ երբ Ս. Ղազարի Ակադեմիան կը թելակոխէր իր բազմադարեան գոյութեան ամենէն բեղուն եւ փայլուն մէկ շրջանը»²։ Մխիթարյանների կատարած գործը նույնացվում է համալսարանական կամ ակադեմիական գործունեության, որ նույն կետի վրա է միավորում ազգասիրական նրանց առաքելությունն ու բացառիկ, կրոնական ասկետիզմով կարգաբերվող ռացիոնալիզմը, որ էր ըստ էության նրանց աշխարհայացքի հիմունքը։

Բացառիկ տեղ հատկացնելով պատմագրությանը՝ շուրջ մեկդարյա երկարատև ու տքնաջան նախապատրաստությունից հետո միայն, բնագրային միավորների, ընդօրինակությունների համեմատություն, Մայրավանքի Մատենադարանի ստեղծում ու ձեռագրերի նկարագրություն ու ծանոթագրություններ, կցվող բանասիրական աշխատություններ ու դիդակտիկ-մեկնաբանողական նախաբաններ, Մխիթարյան հայրերն անցան հայ դասական մատենագրության բնագրերի քննական հրատարակությանը՝ արդեն ԺԸ դարում։ 1828-ին Մխիթարյանները տպագրության են պատրաստում Եզնիկի «Եղծ աղանդոցը», 1827-ին Խորենացու «Պատմությունը», ապա Եղիշե, Ագաթանագեղոս և ուրիշներ։ Ազգային գոյության հիմունքը կազմող կենսական նշանները՝ գիրը, գրականությունը, լեզուն, պատմությունը, բարոյական ու ընկերային առաքիլությունները վերահաստատող մեր հին հայրենները, շարականները, մագաղաթյա մատյանները վերադառնում են նոր ընթերցումով՝ վերականգնելու, վեր-

¹ Տես՝ **Հայր Բարսեղ Սարգիսյան**, Երկուհարյուրամյա գրականական գործունեություն Վենետիկո Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1905, էջ 356 «Կայսերական այս անակնկալ վճիռն, որով ոչ միայն ազատ կը թողվեր Մխիթարյան միաբանությունն՝ այլև նպաստամատուց կ' ըլլար անոր, կ' ապշեցներ բոլոր աշխարհը։ Իրավ է, որ Ակադեմիայի խոսք չկա այստեղ, այլ «Monaci Armeni » պարզապէս, բայց լռելայն կը հասկցվի այն Նապոլեոնին նախընթացաբար հաղորդված տեղեկագրերէն։ Դարձյալ դիտելու է, որ կրոնավորությունը չէր, որ այդ որոշման կը մղեր զՆապոլեոն, այլ **հայ կրոնավորներու կատարած գործը**»։

² **Զեքիեան Հ. Լեւոն**, Հայապատում Ներսիսյանի, Լոս Անջելես, 2001, էջ 69։

ստեղծելու, ավերակներից դեպի կյանք վերակոչելու 19-րդ դար հասած հայ ժողովրդի տառապյալ բեկորները:

Ահա այս կետում է տեղի ունենում հայր Ղևոնդ Ալիշանի ու «հայոց պատմության» հանդիպումը: Հայոց պատմությունն ասվածն այս բնագրում հաստատապես նշանակիր է և ներկայացնում է Բանը՝ մշակութաբանական լայն իմաստով: «Ինչ զարմանալի հոգեբանական բերումն է մարդոյ, որ ի ծագեալ մտաբացութեանն՝ ախորժի լսել Պատմութիւն կոչուածը, -գրում է «Հայապատումի» էջերում, ապա հավելում, թե,- ...Զարմանք չէ ուրեմն որ Հայոյ զաւակն այս սիրէ զՊատմութիւնս Հայուն. շատ խորթ և անկիրթ պիտի ըլլայ մէկն՝ որ չզգայ այդ ազգային հաճութիւնը, թէ և կրնայ ճանչնալով օտարայ որպիսութիւնն այլ՝ հաւնիլ կամ չհաւնիլ ասոց կամ անոնց եղածին կամ ըրածին»¹: Պատմության նկատմամբ Հայր Ալիշանի հարցադրումները, պատմահայեցության փիլիսոփայական հայեցակետը հանգամանորեն կապված է նրա թե՛ գիտական, թե՛ ստեղծագործական ժառանգության հետ և, սկզբնավորվելով համաշխարհային պատմությունից ու բազմաթիվ դրվագներում նույնանալով «Օննդոց գրքի» դիպաշարին՝ նախասկզբից մինչև աշտարակաշինություն ու ջրհեղեղ, Հայկ Նահապետից սկիզբ առած հայկականության «ինքնաստեղծման» պատմություն, ներսում ահռելի շերտեր է հայտնաբերում՝ հայոց բանահյուսության, պատմության մեծագույն արժեքների, եկեղեցու ու պետականության, ազգային հիշողության ու ինքնագիտակցության բանաստեղծական ու իմաստասիրական արծարծումներով:

Ճանաչել ազգային ինքնությունը, էթնիկական գենը, ըստ Ալիշանի, ենթադրում է ճանաչել ազգային հիշողությունը՝ նյութական ու հոգևոր արարումների ամբողջությունը, որը գոյության իրավունքն է մի ամբողջ ժողովրդի: «Ազգային պատմությունը ամեն ազգի հատուկ սրբազան գիրքն է», - ասում է, ապա բոլոր գիտությունների մեջ առանձնացնում ոչ թե «չոր ու ցամաք դիպվածներու պատմությունը», այլ, «ժողովրդուց վարքը պատմող իբրև մեկ մարդու վարք կամ մեկ ընտանյաց մը»՝ ազգային կենսագրության ասքը՝ «ամենքն ալ (գիտությունները), հարկավոր կը սեպեմ քիչ շատ, պատմությունը ամենահարկավոր սեպելես ետն»²: Հայոց պատմության իմացաբանությունն Ալիշանի համար երկու ելակետ ունի՝ Աստվածաշունչ և Խորենացի, և իր պատկերացրած պատմության բնագրի մեջ այդ երկու հիմունքները ձևավորում են փոխադարձ ազդեցությունների մի հետաքրքիր ու նպատակամետ շրջանակ: «Այն սակավավոր

¹ Ալիշան Ղ., Հայապատում, հտ. Ա, Պատմիչք եւ պատմութիւնք հայոց, Վենետիկ, 1901, էջ 12:

² Ալիշան Ղ., Երկեր, Երևան, 1981, էջ 124:

անձանց մեկն է աս վարդապետը, որ թե իրենց անարատ վարքովը, թե ազգին բարերար ըլլալով և թե օտարաց օգտակար, արժանապես մեծ կըսվին երկրիս վրա ալ, երկինքն ալ: Հայաստանի երկու հազար տարվան հյուսած ուսումնական պսակին ամենեն պայծառ ծաղիկն է: Մեր ազգին բարերարաց մեջ այնչափ իրավունք ունի առաջին ըսվելու, որչափ որ անոնց շատին բարիքն հիշեցնողն ինքն է մինչև այսօր»¹, - 1847 թվականին «Բազմավեպում» լույս տեսած «Մովսես Խորենացին և իր Հայոց Պատմությունը» հոդվածում Պատմահորը տրված այս գնահատականը բնավ-երբեք կասկածի ու երկվության չտրվեց, ճիշտ հակառակը՝ մեր Ծննդոց մատյանը հետագա բոլոր տարիներին դարձավ նրա գիտա-գեղարվեստական բազմաթիվ գործերի սկզբնաղբյուրն ու քննության առարկան: «Աս Պատմությունը,- Ալիշանի վերադիրներն ամեննին չափազանցված չեն և ոչ էլ անհող իրականություն են բնութագրում,- ինչվան հիմա ճանչցված թե՛ Մովսիսի և թե՛ Հայաստանի ամենեն պատվական գրավոր գործքը ըլլալով՝ թե մեր և թե՛ օտար ազգաց առջև, չենք կրնար հոս լռությամբ անցնիլ, վասնզի անով է, որ Հայաստան իր հին ու կորսված մեկ ճաշակը կառնե»²: Խորենացու «Պատմությունը» առհասարակ հայոց մեջ, իմա՝ Մխիթարյանների պարագայում արժևորվում է իբրև հայկական ինքնու-թյան կազմավորման ու ազգության իմացության մի վկայարան, ազգա-կազմիչ նշաններով ձևակերպված թուղթ ծննդյան ու շարունակության, որ իբրև «աշխատանքային գործիք» խիստ անհրաժեշտ էր միաբան հայ-րերին: «Խորենացու «Պատմութեան» առաջին իսկ էջերից,- գրում է հայր Լևոն Զեքիյանը,- երեսն են գալիս երկու հիմնական յղացքներ, որոնք անմիջականորեն առնչում են յունական աշխարհին. դրանցից առաջինն է **բանը**, երկրորդը՝ **քաղաքական կարգը**: Բանի, քաղաքական կարգի, չափի իմացումների վրայ հիմնված՝ Խորենացին առաջինն է յայտնաբերում հայ գրականութեան մեջ հայրենիքի կամ ազգութեան մի իմացում, սոսկ տոհմային կամ սերնդային արիւնակցութիւնից անդին, իբրև միութիւնը համասեր, այլ եւ համալեզու եւ, մանաւանդ, մի հասարակաց պատմական ժառանգութեան, հաւաքական մի հասարակաց գիտակցութեան տէր մարդկանց»³: Թերևս այս կարևորագույն նշանների՝ «Բանի» և «Քաղաքական կարգի» ճանաչման տիրույթում է ձևավորվում պատմու-թյան նկատմամբ Մխիթարյանների հայացքը: Հետաքրքիր է առանձնաց-նել գրեթե նույն սահմանումը Խորենացու մասին Ալիշանի վերոհիշյալ հոդվածում. «Բոլոր ան դարը,- գրում է վարդապետը,- Մովսես երկու բա-

¹ Ալիշան Ղ., Երկեր, Երևան, 1981, էջ 136:

² Նույն տեղում, էջ 137:

³ Զեքիեան Հ. Լևոն, Հայապատում Ներսիսյանի, Լոս Անջելես, 2001, էջ 170:

նի ետևե եղավ՝ **աստվածապաշտության** և **խմաստության** և երկուքին մեջ ալ, կրնանքն ըսել, թե հասակին հետ աճեցավ և ան վսեմական զգացմունքներով գրեթե երկիրս ու իր երկրավոր նյութը մոռցած էր...»¹:

Ալիշանը խստորեն հետևում է Մխիթարյան հայրերի, ի մասնավորի Չամչանի, Ավգերյանի և մյուսների պատմահայեցությանը, իր հերթին վկայելով, թե Հայաստան «երկիր դրախտավայրը» բիրվիական Արարատի ու Նոյան տապանի առասպելաբանությամբ մեր ազգային գոյաբանության աստվածաշնորհ տրվածքն է, աստվածատունկ դրախտը՝ առաքելահաստատ եկեղեցով զորացյալ, ու նույն շնորհով հենց մեզնով Աստված գորավիզ կլինի մեղքերով ծանրացած մարդկության նախացեղի փրկության: «Հայաստան ինքնին նախախնամեալ երկիր մ' էր, եւ սիրելի Բարձրելոյն, ուր շատ կանուխ յայտնեցաւ. եւ պէտք է որ ամենայն ազգ որ իր ծագումը փնտռէ՝ դառնայ այդ երկրին նայի: Եղեմայ հետքը գտնելու ապահովագոյն ճամբայն է Հայաստան: Ինքն ընծայեց Աստուծոյ իր օրհնեալ կաւը, եւ ընդունեցաւ անոր ձեռքէն զհայրն եւ զմայր մարդկութեան...ինքն եղաւ խանձարարութք առաջին ծնածին եւ զերեզման առաջին մեռնողին, ինքն Բարձրացուց Արարատայ զազաթը միւս անգամ ընդունելու ջրհեղեղէն ազատուած մարդկութեան մէկ հատիկ տունը...»²:

Հայր Ալիշանի համար սա սրբազան սահմանն էր, իսկ շարունակության մեջ ինքը պարզապէս մի նոր քերթողահայր էր, մոզ՝ Բագրատունու բնորոշմամբ, որ փնտրում էր հայոց աստղը երկնքում: Եվ ահա բանաստեղծական անպարագիծ ներշնչանքով, պատմական դրվագների ճշմարիտ մեկնությամբ նա պարզապէս հայտնագործում է Հայաստան–հայոց աշխարհը՝ ճանաչելով ֆիզիկական տարածությունը Հայրենիք՝ դարձնող երեք հիմնարար սուբստանցները՝ բնաշխարհը, պատմությունը՝ Բանը, ապա թե մարդիկ: Հայրենիքը առանցքն է Ալիշանի պատմական վերհիշումների, տեղագրական ու աշխարհագրական արձանագրումների, բանաստեղծական ազնվագոյն էջերի. նրա տավիղը փորձում է հայոց աշխարհիկի հեռավոր ափերում որոնել-գտնել հայոց հոգին, ապրելու ջիղը, կրակը, որ բռնկվում էր հողի ու Աստծո անունով, որ ջնջում է հագարամյակների անջրպետն ու պատմության տրոհումը՝ որոնելով ազգային գոյության՝ արժանապատիվ ու անկորուստ սահմանը: Նրա բանաստեղծական ներշնչանքը պատմության հողից է սնվում. նախ սթափ հայացքով, ահռելի փաստական նյութի գործածությամբ իր պատմաաշխարհագրական հատորներում հայոց կենսագրության ասքն է հյուսում, ապա այն փոխադրում բանաստեղծության ոլորտ: Զարմանալի մի փո-

¹ **Ալիշան Ղ.**, Երկեր, Երևան, 1981, էջ 137:

² Յուշիկք հայրենեաց հայոց, հտ. Ա Բ տպ. Վենետիկ, 1921, էջ 70:

խատեղություն կա Ալիշան գիտնականի ու Ալիշան բանաստեղծի միջև: Նրա ներսում ստեղծումի լույսն այնքան շոայլորեն է ճառագում ու մտածողությունն այնքան պատկերավոր է, որ կլասիցիզմի տաղաչափական ձևային հայրենասիրական էկզալտացիայի ու ներքին բոցավառման կրակը, բազում գույներն ու հույզերը հազիվ է թաքցնում, իսկ գիտականությամբ ստույգ ու կանոնիկ հատորների բնագրերը երբեմն-երբեմն ճեղքվում են՝ տեղ բացելով գեղարվեստական չքնաղ ձևի մեջ ստեղծված բանաստեղծական կատարյալ կտորների համար:

Այստեղ է Ալիշանի և՛ գիտությունը, և՛ բանաստեղծությունը:

«Այլ ես սիրեմ և առաւել սիրեմ զՀայաստան հայրենիս իմ, և՛ զնոյն սէր անխիղճ քարոզեմ ամենեցուն և ասեմ, պարտք են Ձեր որդիք հայկաց ճանաչել զինչ են հայրենիք... ճանաչել և պահել անվթար զսեփական շնորհ ազգիս, զլեզու նորա, զպատմութիւն նորա և զփառս զանուան նորա: Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն»¹, -ասում է, ու Աստծո և Հայրենիքի ամենագոր սիրո տիեզերական գոյության վկայումներում փիլիսոփայական յուրօրինակ հանրագումարի բերում հայոց լինելիության ողջ ժամանակը՝ իր հայրենապանծ հերոսներով, նշանավոր ճակատամարտերով, հանուն հայոց տան ու Քրիստոսի հավատքի պատմական հաղթանակներով ու մտքի ու լույսի հանճարների փառապանծ վարքագրությամբ:

Վարդապետը գիտնական է բնությամբ և ով գիտի, թե որպիսի խոր ազդեցություն են թողել հրատարակած հայագիտական ստվարածավալ հատորները նրա ընդհանուր մտածողության վրա: Բանաստեղծությունը, սակայն, նրա գոյութենական սկիզբն էր, «արևն հոգվոյն մեջ բանտած արծվի»՝ աշխարհը տեսնելու ձևը, որ և բացառիկ գրավչություն էր տալիս նրա ցանկացած ձեռնարկում: Զոպանյանն ասում էր, թե «Ալիշանը սիրտ մըն էր նաև, բայց շատ մեծ սիրտ մը: Այդ սիրտը ամբողջապես լեցուած էր երկու պարզ ու մեծ զգացումներով, Աստուծոյ սէրն եւ ազգին սէրը,- սէր, որ խորհրդածութեան արդիւնք չէր, քննադատութեան չէր ենթարկած ինքզինքը, կը հիմնուէր միմիայն աւանդութեան վրայ»²:

Եվ ահա, պատմությունն առաջին հերթին ըստ վավերականության ու վկայված, ավանդված փաստերի ճանաչող Ալիշանը անգամ պատմագիտական ու բանասիրական չոր նյութն է ներկայացնում գեղարվեստականացված, իր հայրենանվեր սրտի ու թրթռուն հույզերի միջով անցկացրած: Նա, իբրև հրաշալի գեղագետ ու էսթետ, որի գրիչը բնորոշվում է չափի բացառիկ գիտակցությամբ ու զգայունությամբ, ամեն անգամ ինքն է

¹ Բազմավեպ, 1845, հ. 22, էջ 343:

² Զոպանյան Ա., Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 96:

իր համար հնարավորություն ստեղծում՝ սառը գիտական շարադրանքը բացառիկ ջերմությամբ պատելու, փայփայանքի ու հպարտության նուրբ ներշնչանքով հայոց կենսապատումի ճակատագրական դրվագները բանաստեղծելու ու իբրև անանց հուշիկներ Հայկակ պարմանիներին հանձնելու:

Ալիշանը վիթխարի բանաստեղծական ժառանգություն է թողել՝ ավելի քան 1300 էջ: Այդ էջերից 90-ը «Նահապետի երգերն» են, որոնց բացառիկ մանրամասն ու համապարփակ քննությունը տվել է երախտառատ Էդվարդ Ջրբաշյանը: Նահապետի հրաշալի, 19-րդ դարակեսի հայ գրականության հունը փոխած տաք երգերի քննությունն այս հոդվածում կշրջանցենք, մանավանդ որ ինքը՝ Ջրբաշյանն է ասում, թե. « Ալիշան-բանաստեղծի մասին հայտնված կարծիքներն էլ, լինեն ծավալուն թե կարճառոտ, գրեթե, բացառապես վերաբերել են Նահապետի երգերին: Բհարկե, այսպիսի մոտեցման մեջ ինչ-որ անարդարացի բան կա, քանի որ փաստորեն շրջանցում է Ալիշանի գրաբար պոեզիայի շատ հետաքրքիր կողմեր»¹: Իսկապես, անչափ հետաքրքիր բնությամբ են ներկայանում վարդապետ հոր գրաբար երգերը՝ մանավանդ պատմության հետ ուղիղ կապի համաբնագրում:

Հայտնի փաստ է, որ Մխիթարյան հայրերի աստվածաբանական փիլիսոփայությունը առավելապես հակված է հայրաբանական-ջատագովական, հատկապես Թովմա Աքվինացու մեկնաբանությանը և, ի տարբերություն եվրոպական կլասիցիստների, նրանք «ռացիոնալիզմի սկզբունքները երբեք չհասկացան մարդկային բանականության իրավունքները հաստատելու, այն կրոնական կապանքներից ազատելու իմաստով»²: Բանն այն է, որ մեր պատմական իրականության մեջ, պետականության իսպառ բացակայության ու երբեք չդադարած ֆիզիկական ու հոգևոր ասպատակությունների պարագայում, հայ եկեղեցին, ապա կրոնը բացառիկ ազգապահպան առաքելություն և դերակատարություն են ունեցել հայոց կյանքում: Ահա թե ինչու հայկական կլասիցիզմը գրեթե բացառում է ընդգծված այն հակակրոնական ուղղվածությունը, որ հատուկ էր եվրոպական կլասիցիստական շկոլային:

Հենց այս փիլիսոփայության արձագանքների մեջ է ձևավորվում Ղևոնդ Ալիշանի՝ հատկապես գրաբար բանաստեղծությունը: Հայոց կենսապատումի բանաստեղծական նվագներում արիստոտելականության

¹ **Ջրբաշյան Է.**, Գրողը և ժողովուրդը, Ղևոնդ Ալիշանի Երգք Նահապետի բանաստեղծական շարքը., 1989, էջ 52:

² **Ջրբաշյան Է.**, Գրողը և ժողովուրդը, « Դիդակտիկ պոեմները հայ գրականության մեջ», 1989, էջ 42:

մի նուրբ գունավորում կա, որ ջնջում է հերոսից սրբին անցնելու սահմանը, մի տեսակ միֆական շղարշով պատում պատմության դրվագները, որ բանաստեղծում է վարդապետը: Հայր Ալիշանը մեր կենսագրությունը վիպում է ըստ ազգային գաղափարի՝ մի հրաշակերտ հյուսվածքի մեջ ներառելով հայոց բնաաշխարհագրական, մշակութաբանական, կրոնի ու հավատքի երևումներն ու էթնիկական մեր կենսակերպի՝ ավանդույթների, ծեսերի, կենցաղավարության նշանակիչ դրվագները, որոնք հայ հայրենիքի շուրջ ձևավորում են հայկականության մի նոոսֆերա, բանականության ու հոգևոր ստեղծումների մի զարմանահրաշ բնագիր, որի իմացական գնահատությանն ու նորոգումին էր ուղղված 19-րդ դարի հայոց մտքի, բանականության ողջ տառապանքը: Նրա հերոսը ունի ազգային-հայկական իր նկարագիրը, նրա հերոսը սովորական անձ չէ, ավելին՝ նա անպայմանորեն կրողն է պատմական այն առաքելության, որ դետերմինացված, պատճառաբանված է ազգի, հայրենիքի ճակատագրով և ներբողված քրիստոնեության, ազգային-ազատագրական պայքարի, էթնիկական ինքնության կենսահաստատ լույսով: Պատմական իմաստով Ալիշանի համար ճշմարիտ են այն իրադարձությունները, որոնք եղել են կամ Աստծո ուսմունքի համար կամ նրա անունով. նա հայոց պատմությունը քննում է քրիստոնեության լույսի տակ՝ հավատքն ու ազգային լինելիությունն իրարից անանջատ իրողություններ համարելով: Նրա աշխարհայացքը երբեք չի հանգում հոգեբանական երկվության, նրա համար իրական աշխարհն ու ոգու աշխարհը նույնական են, և մի գեղեցիկ կատարելության մեջ հանգում են համատիեզերական ներդաշնակության ու ամբողջության: Աստվածորդին աշխարհ եկավ՝ Լուսը տարածելու, ապա եղավ Աստծո ընտրությունը Նոյի անունով, տապանի իջման տեղը, Հայաստանն իբրև աստվածատուն՝ դրախտ վկայվելը, հետո Հայկը՝ հայկականության սկզբնավորողն ու Նահապետը, հայոց եկեղեցու առաքելահաստատ լինելը, ապա Գրիգոր Լուսավորիչ, Տրդատ արքա, կույսերի վկայաբանությունը, Կարմիր Վարդան, Վասակ, հանուն Քրիստոս-աստվածորդու հայոց մաքառման բանաստեղծական պատումը... Ահա հենց այստեղ էլ «Հայրունի» հատորի գրաբար երգերում նա գտնում է ձևի ու բովանդակության գրեթե անթերի կատարելությունը, որովհետև չկա կամ գրեթե անհնարին է պատկերացնել ներբողյանից ավելի կատարյալ բանաստեղծական ձևույթ, երբ վարդապետը ներկայացնում է Լուսավորչի վարքաբանությունը, կամ մահերգի առավել դրամատիկ կատարում, քան է Գրիգոր Վարդապետի կամ Հռիփսիմե կույսի մահվան պատմությունը: Հայկի մասին, որ այր էր «ցանկալի և գեղապատշաճն, հաստաբազուկն և լայնաճակատ», մի հրաշալի գեղարվեստական պա-

թոսով գունավորված խոսք է դնում՝ հայրենասիրության ու հաստատուն կամքի թրթիռներ փոխանցելով իր ընթերցողին.

*Աստղունք գուարթունքն լուսածրդիք, / Աստեղք, արփույն հովտաց
ծաղիկք,*

*Ճակատ պայծառ ըզվեհագինդ՝ / Ըզթիկն եւ լանջ պրճնեցէք պինդ.
Քաջութեանց հայր եւ հեղինակ / Յապետոսեան դիւցայադթն Հայկ՝
Ջարիականսըն ձրգեալ ձեռս / Թաւալգըլե զվերին բեւեռս... (48)¹*

Մաքուր կլասիցիստական դոկտրինով Ալիշանը ոչ միայն գրականություն է բերում ճշմարտությունը, թե մարդու և ժողովուրդների ազատությունը բանականության հավիտենականության օրենքներին համապատասխանող վիճակ է, դրա բռնադատումը՝ բանական ներդաշնակության խախտում, այլև՝ անհատական պատասխանատվության ու պատմական առաքելության խնդիրն է արծարծում՝ հերոսի իր նախօրինակը վերցնելով Խորենացու «Պատմությունից», թե՛ «Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, խիստ գանգուր մագերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու: Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփռվում- տարածվում էր բոլոր երկրի լայնության վրա...»²: Պանծանքի ու պատասխանատվության այս զգացողությունն է Ալիշանը առնում դարերի հեռուներից ու փոխանցում ազգային գոյության ճակատագրական սահմանաբաժանին կանգնած իր ժամանակների մարդուն: Խորենացու «Պատմության» այս գողտրիկ դրվագի հիշատակումը բնավ ինքնանպատակ չէ և ոչ էլ պատահական. Ալիշանի գիտական և արձակ բնագրերի գուգադիր քննությունը հստակ իմաստ է ձեռք բերում՝ հնարավորություն տալով պարզելու ոչ միայն նրա պատմական «նախասիրությունները», այլև դրանով պայմանավորված, նրա գեղարվեստական մտածողության առաջադրությունները՝ թեմատիկ ընտրությունը, որ փոխանցվում է գործից գործ, պատմական այս կամ այն անցքի կարևորության դիտարկումը, ապա այն գեղարվեստական մշակման ենթարկելու, նվագի, երգի մտահղացումը:

Հետաքրքիր է դիտարկել մեկ- երկու դրվագ 1858-ին, Վենետիկում տպագրված, ապա 1867-ին լրացումներով վերահրատարակված

¹ Նուագք, հտ. 3 , Հայրունի, Վենետիկ, 1867, այսուհետև՝ հղումները այս հատորից, կնշվի համապատասխան էջը:

² **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, թրգմ. արևելահայերեն և ծնթ.՝ Ստեփանոս Մալխասյանցի, Երևան, 1997, էջ 83:

«Նուագք»- ների «Հայրունի» հատորից: «Այս սրբազան Ծերը»՝ Հայր Ալի-
շանը, պաշտամունք ուներ Գրիգոր Լուսավորչի նկատմամբ, և, նրա ան-
վան հետ կապելով հայոց դարձի ու առհասարակ մշակութային ողջ
պատմությունը, բացառիկ սրբադասումով վկայած նրա վարքաբանու-
թյան, ավետարանական գործունեության մեջ համադրում ու ներկայաց-
նում է բոլոր այն գծերը, որոնք, իր պատկերացմամբ, հատուկ են աստ-
վածամարդուն: Հինգերորդ դարից ինչ առնված է Գրիգորի, Լուսա-
վորիչների տոհմի՝ Սահակի ու Ներսես Մեծի անունով, նա ընդունում է
իբրև բացարձակ սրբախոսություն, իբրև անքննելի Բան ու աստվա-
ծամարդու կենսագրություն: Առանց դույզն- ինչ երկմտության, պատ-
մական փաստերը գեղարվեստական այնպիսի ներշնչանքով է ներկա-
յացնում ու աստվածաբանական շղարշով պարուրում, որ արդյունքում
երևակվում է հայոց կենսագրության թերևս ամենաճակատագրական
դրվագներից մեկը, խոնարհումի ու խոնարհումի խոսքով օծվում են մար-
գարեններ ու սրբեր, որոնք անձնուրացությամբ հավատավոր էին Քրիս-
տոսի խոսքին ու նրա լույսով հայոց ճանապարհն էին ուղեգծում: Լու-
սավորիչների տան պատումը Ալիշանը վկայել է «Սոփերք Հայկա-
կանքում», «Քնար Հայկականքում», «Արշալոյս քրիստոնեության Հայո-
ցում», և « Հայապատումի» էջերում՝ փորձելով մեռնող ազգի մեջ հավի-
տենական Աստծո Լույսը ցուցնել, սակայն բանաստեղծական շքեղ
լրումի է հասցրել «Նվագներում»: Գրելով Գրիգորի վարքը՝ մի հրաշալի
բանաստեղծաշարի մեջ («Գոչումն ի սուրբ Վիրապն, Ի փոխումն Լու-
սաւորչին»), Ալիշանը բարձրաթոյշ բառերով ներկայացնում է նրա առա-
քինի ու խոնարհ էությունը, տիեզերական այն իմաստությունը, որով նա
դարձի բերեց մոլորյալ ու անհովիվ մի ողջ ժողովուրդ.

*-Ի վիհ վիրապիդ գլխիվայրեալ՝ սու յբ Գրիգոր,
Ի խորոց սրտից պաղատախառն հառաչանս
Քեզ վերընծայեմ աղէկիզեալ իղձ հրաւոր.
Հա՛յր Հայաստանեայց անդ առաւել քան յայս կեանս,
Հաստջին քո նմանեալ սիրել մըրմունջ մահացուաց... (73)*

Հաջորդ բանաստեղծության մեջ՝ «Ի փոխումն Գրիգոր Լուսաւոր-
չին»՝ երկնքի ու երկրի միջև կանգնած մի սրբազան, աստվածային պատ-
կեր է Գրիգորը հիշեցնում.

*-Խոր հառաչանք վերցուցին ըզըրրթունս,
Ծաւալեցաւ ծընունդ սըրտին յընդհանուր.
Լուսաճաճանչ տարաւ յերկինս սուրբ աչունս,
Ի հընոցէ սիրոյն հատաւ շունչ ի հուր...
«Աստուած, կեցո՛ղ Հայաստան»,
Եւ աստ եկաց սըրտին բան: (76)*

Որդիական խոնարհումի մեջ հավիտենական լույսի ու փրկության պատմություն է պատմում.

Հռիփսիմէ, 'նդ պատկեր քոյին/ Առհասարակ հիացաւ մարդ.

Ազնուացար քան զԵդէմին/ Դու շրնչաւոր շուշան ու վարդ... (80)

Աստվածաբանական բացառիկ գիտելիքը բնավ չի խաթարել Ալիշանի հոգու հրճվանքը՝ վկայաբանություններից առնված պատառները բանաստեղծական ներշնչանքի չքնաղ իրացումներում օժելու լույսի, գույների ու խորհրդավորության զարմանահրաշ խաղերով: Աստվածամեծար ջերմության ու ինկարկումի բացառիկ ծես է, որդիական ծնրադիր աղոթք Քրիստոսի դստերը՝ նագուկ ու լուսաչ կույսին, շուշանի ու վարդի նմանությամբ եթերային Հռիփսիմէին, որ հարսնացավ աստվածորդուն.

-Մայր կուսան, յիշեա գորդիս./ Եսպերիա՝ ձերմակ բեհեզ,

Քօղ կարմրորակ իւ պրճնիս՝/ Չայս Հայաստան բամշանդ էտ քեզ:

Էնն ըզքեզ խօսեցաւ անդ./ Աստ հարսնացար յԱստուածորդի.

Բուռն հարեալ ի սուրբ տապանդ՝/ Կայթ մանկտիդ

առագաստի: (81)

Փառաբանական բովանդակությամբ ու ճշմարիտ աստվածապաշտական հղումներով այս ձոներգը Երկիրը անսահման Երկնքին է մոտեցնում՝ առ Աստված անանձնական սիրո մեջ ճշմարիտ նկատելով ամեն զոհաբերություն: Առհասարակ, պատկերներով և համեմատություններով գրելը Ալիշանի մտածական համակարգի կարևորագույն նշաններից է, որ շքեղորեն արտահայտվում է մանավանդ «Նվագների» գրաբար քերթվածքներում: Բառընտրությունից մինչև կլասիցիստական բանաստեղծության ոճ ու չափաբերություն, մի հավերժորեն ներդաշնակ ու կատարյալ նույնության մեջ վերստեղծում են այն էլեգիկ միջավայրը, ուր մի ժամանակ ապրում էին առաքյալներն ու Աստված: Ավելին, ստանձնելով հայոց հոգևոր և աշխարհիկ քաղաքակրթության նորոգության առաքելությունը, վարդապետը յուրովսանն հետամուտ էր քրիստոնեության և հայ եկեղեցու ավանդների կենդանացմանը՝ իբրև նույնական սուբստանց, խորհրդանիշ հայկականության, իբրև էական բաղադրիչ հայոց ազգային գաղափարաբանության: Հենց այս բնագրում, եթե Կարմիր Վարդանի մասին է գրում՝ Ավարայրի սոխակի հանգույն հավատքի ու կրոնի սիրուն ու պաշտամունքին է խոսքը ներբողում, իսկ Վասակը անեծքի ու անեծքի բառերով է հիշվում: Ուրեմն այլևս զարմանալի չէ Հայր Ալիշանի բառընտրությունը, շարային կառույցի հղացումը, այլև բանաստեղծական ձևույթը՝ (ներբողյան, ակրոստիքոս), որով լուծում է իր այնքան սիրելի Վարդանի, ապա արդեն ռոմանտիզմի հնարքով նրա հակոտնյայի՝ Վասակի կերպարները.

-Նահատակ վարդասփիւռ, արփիք ցրնծան

յոտիցդ առնուլ ճեմ.

Եւ բազուկ Բարձրելոյն եյեռ յանմահից կաճառ վըսեմ

Ջանուն քո ՎԱՐԴԱՆ՝ Հայոց շնորհաւոր:

Ի ձայն Հրաշալի յարութիւնն ԳԶ շարականի:(109)

Հետաքրքիր գույների մեջ է կերտում Վասակ Սեպուհի կերպարը՝ հերոսականության գծերով ու վսեմաշուք, քաջին արժանի բնութագրումով.

Վահանայ եղբայր ես Վարդանայ եղբորորդեակ՝

Սեպուհն եմ Վասակ, զինուորեալ Տեառն

գորութեանց.

Հայոց զուարթունք, ըզքաջաց գահն արկէք՝

Եւ Հայրենեացքս դէմ զիս նըստուցէք:(114)

Բացառիկ սիրով ու երկյուղածությամբ իր հայրենիքի կենսագրական ասքը ժանյակի նման, թել-թել հյուսող բանաստեղծը, բնական է, թե հորդահոս հեղեղի նման նգովքի ու անեծքի որպիսի բառերով պիտի բնութագրի ամենայն արարք, որ ցավ է հայրենիքին ու ակունքն է սրբապիղծ դավաճանության: «Դատաստանք Վասակայ մատնիչի» քերթվածքում Ալիշանը կերտում է նգովյալ ուրացողի կերպարը՝ քայլ առ քայլ ներկայացնելով մի դժիւսեմ ու ծանր պատմություն, մի արարք, որի համար մարդը անիծյալ է սերնդեսերունդ, ժառանգից ժառանգ.

-Վրէժք քեզ յերկնէ, վրէժք քեզ յուխտէն զոր թողեր

Վրէժք յանմեղաց, վրէժք հայրենեաց անողոր.

Վրէժք քեզ կարդան ամայացեալ գերդաստանք,

Պարկեշտ կուսանք, հարսունք, փեսայք, որքք, այրիք,

Վրէժք քեզ անհաշտ ազատանին լեռնականք,

Վրէժ տըխրամած անարօր դաշտք հայրենիք (135)

Հայր Ալիշանի պատմությունն ընդհատում չունի, ամբողջական է, առանց միջանկյալ օղակների, ազգափրկության կոչված իր հերոսներով, երբեմն՝ կերպարային ու բնավորությունների բնեռացումներով: Ոչինչ պատահական չէ բանաստեղծական այս չքնաղ հատորում: Վերահառնում է «Ոգին Հայաստանեայց», ապա Մխիթարի տեսիլքով է փնտրում կորուսյալ Ոգին Հայաստանայց.

-Մըխիթար, զինչ խնդրես յինէն սրտագին:

-«Մայր իմ, ոչ ինչ, բայց զայն զոր դուն իսկ կամիս»:

«Եղիցի».-Մայրն ասաց, եւ ել ի յերկինս...(194)

Ստեղծագործական առումով, և ոչ էլ ժամանակային, նա չի ավարտում այնտեղ, որտեղ ավարտվում է Խորենացու նահապետական, տխրաթախձոտ հայրենապատումը, նրա սրտին հարազատ են Ագա-

թանգեղոսի միֆական, աստվածաճանաչությամբ մոգական աշխարհընկալումը, Բուզանդի՝ դեպքերի իրազեկությամբ, գեղեցկախոս պաճուճավորումով վիպասանությունը, Կորյունի ճարտասանական վշտախոսությունն ու խղճի ու հավատքի հրեշտակապետները՝ Շնորհալին ու Մխիթարը: Սրանից հետո արդեն գալիս է «Նահապետի երգերի» ժամանակը: Մարգարեի խորքային արթնությամբ նա կապակցում է դարերը ու ինչին հայացքը հառում է՝ թե՛ «Հայրունիում», թե՛ «Հուշիկներում», ամենակարևորն է թվում:

Ալիշանի գեղարվեստական գործը շնչում է հայրենիքի ու նրա պաշտամունքի սրբազան սարսուռներով:

Իսկ այս բոլոր գործերի համար թերևս իբրև բնաբան կամ հանգանակ կարող է ծառայել «Նահապետի երգերի» երկրորդ հրատարակությանը ավելացված «Հայ հանճար» բանաստեղծությունը, որ անցյալի փառքն ու հայրենյաց տեսիլքն է վկայում ու փոխանցում սերունդներին.

-Հա՛յ ազգ, հա՛յ հանճար, քունն է գրեզ բռներ,

Քու՛ն թանձր եւ երկայն, բայց ոչ մահ անյոյս.

Ո՛վ արթընցընէ զազգն իմ ի նոր լոյս.-

Ես հազարներ տամ այնոր, տամ բիւրեր,

Որ զաչքըն բացներ,

Ու չըլլար անցեր...(134)

Իսկ ժառանգորդական այդ կապը ամենևին էլ ինքնանպատակ չէ. «Ով Հայկակ, ով հայ պատանիք, աղեկ քաղաքացի ըլլալու համար պետք է քննել և սովորել զՀայրենիս: Քննեցեք և սովորեցեք ուրեմն ազնիվ և բարեբեր Հայաստանը, իբրև հայրենիք ձեր և դայակ ամենայն աշխարհի: Այդ քննությունքդ, այդ ուսմունքդ հորդոր ըլլան քեզի ավելի քան զավելի հարգելու զՀայրենիս և մշակելու զայն՝ ըստ ամենայն նշանակության բանիս»¹, - ինքն է պատգամում:

Ահա այստեղից է սկսվում և այստեղ է ավարտվում Հայր Ղևոնդ Ալիշանի պատմահայեցության փիլիսոփայական հայեցակարգը:

¹ Յուշիկք հայրենեաց հայոց, հտ. Ա, Վենետիկ, 1869, էջ 8:

РЕЗЮМЕ

**ИСТОРИОГРАФИЧЕСКОЕ ВОСПРИЯТИЕ АЛИШАНА В
ПОСВЯЩЕННОМ ОТЕЧЕСТВУ ТОМЕ «АЙРУНИ»**

Ключевые слова: Гевонд Алишан, национальная идеология и самопознание, история армянской мысли, аристотелианство, «Айруни», поэтика классицизма, новая поэтическая форма

Исключительна роль отца Гевонда Алишана во всех сферах истории армянского духовного творчества. В статье исследуются исторические концепции великого арменоведа, богослова, философа и поэта Алишана, его взгляды на историю Армении и ее художественные воплощения, в частности, песни на древнеармянском из тома «Айруни». Историческая концепция Алишана признает в качестве мировоззренческого принципа два имени: Библия и Хоренаци; через прочтение их основополагающих знаков Алишан формулирует свое видение Родины. По его мнению, природно-географическое пространство становится Родиной, когда наполняется содержанием, включающим язык, духовные и материальные творения, церковь и человеческие подвиги. В данных рамках он и создает свою патриотическую песню на тему, выбранную в соответствии с идеей, – в неповторимой поэтической форме. Нами представлена история внутренних борений национальной идеологии в научно-художественном наследии Алишана, страстные поиски армянской мысли, направленные на собирание осколков воспоминаний и памяти из далеких исторических времен, с помощью которых можно будет возродить, вдохнуть новую жизнь в умирающую армянскую действительность. Нами сделаны теоретические, неповторимой поэтической форме. Нами представлена история внутренних борений национальной идеологии в научно-художественном наследии Алишана, страстные поиски армянской мысли, направленные на собирание осколков воспоминаний и памяти из далеких исторических времен, с помощью которых можно будет возродить, вдохнуть новую жизнь в умирающую армянскую действительность. Нами сделаны теоретические обобщения, касающиеся арменоведческой деятельности Мхитарянов, признания в качестве приоритетной доктрины сохранения нации и просвещения, европеизации и научности армянской мысли, при этом в центре нашего внимания оставалась личность и страстные творческие поиски отца Алишана. При рассмотрении его поэзии мы проанализировали несколько произведений на древнеармянском, попытавшись представить на примере художественного оригинала некоторые ключевые наблюдения Алишана, касающиеся его мировоззрения, в частности истории Армении, а также своеобразный стиль и отсылки, через которые Алишан передает свое видение армянскости будущим поколениям. В конце нами представлены выводы, вытекающие из научной постановки вопроса.

SIRANUSH MARGARYAN
Candidate of Philology

ABSTRACT

Gh. ALISHAN'S HISTORICAL PERCEPTIONS OF OTHERLAND IN THE "HAYRUNI" VOLUME

Keywords: Ghevond Alishan, national ideology and self-knowledge, the history of Armenian thought, Aristotelianism, "Hayruni", the poetics of classicism, a new poetic form

Father Ghevond Alishan played an exceptional role in all the spheres of the history of Armenian spiritual creativity. The article examines the historical concepts of the great Armenologist, theologian, philosopher and poet Alishan, his views on the history of Armenia and its artistic incarnations, in particular, songs in the ancient Armenian from the volume "Ayruni". The historical concept of Alishan recognizes two names as a world outlook principle: the Bible and Khorenatsi; Alishan formulates his vision of the Motherland through the reading of their fundamental signs. In his opinion, the natural-geographical space becomes the Motherland, when it is filled with content, including language, spiritual and material creations, the church and human exploits. Within this framework he creates his patriotic song on a theme chosen in accordance with the idea, in a unique poetic form. We have presented the history of the internal struggles of the national ideology in the scientific and artistic heritage of Alishan, the passionate searches of the Armenian thought aimed at the collection of fragments of recollections and memories from the distant historical times, with the help of which it will be possible to revive, breathe a new life into the dying Armenian reality. We have made theoretical generalizations concerning the Armenian studies of the activities of the Mkhitaryans, the recognition of the preservation of the nation and enlightenment, Europeanization and scientific character of the Armenian thought as a priority doctrine, while the personality and passionate creative searches of Father Alishan remained in the center of our attention. When examining his poetry, we have analyzed several works in the ancient Armenian, trying to present, using an example of an artistic original, some of Alishan's key observations concerning his worldview, in particular, the history of Armenia, as well as a peculiar style and references through which Alishan passes on his vision of Armenianness to the future generations. At the end, we have presented the conclusions proceeding from the scientific formulation of the question.

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԸՍՏ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ

Բանալի բառեր՝ քաղաքական իդեալ, պատմություն, պետականություն, ինքնություն, հպարտություն, ազգային հիշատակարան, սկզբնաբյուր, հին ձեռագրեր, մարգարե, եվրոպացի հայագետներ, քննադատություն:

Քաղաքական կյանքի խոտոր ընթացքով պայմանավորված՝ Հ. Ղ. Ալիշանը՝ ներհուն գիտնականը, բանաստեղծը, դիմելով անցյալին, նպատակ ուներ հայ մարդու մեջ վերականգնել անցյալի ճշմարիտ պատկերը, սերունդների առաջ դնել արժանավոր գործերի օրինակ, նրանց հոգում բորբոքել ժողովրդի քաղաքական իդեալներ, հպարտության զգացումներ: Այդ պատճառով նա դիմում է թե՛ Աստվածաշնչին¹, թե՛ հայրենի ու օտար աղբյուրներին և թե՛ համաշխարհային գրականության, պատմագրության բոլոր տվյալներին՝ կատարելով հսկայածավալ աշխատանք²: Նա մի նոր սկիզբ էր դնում ազգային-քաղաքական դաստիարակության բարերար ավանդին և հայկական գիտությանը: Աստված հայ ազգին կրկին ընծայել էր մի նոր Խորենացի, որ յուրովի էր իմաստավորելու հայ ժողովրդի պատմական ուղին. «Մոգական էր նա ... նա մո՛գ մ՛ էր, Հայաստանի բաղդի աստղը փնտռող մոգ մը...»³:

Հ. Ղ. Ալիշանի «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» (1848) քերթվածը հայ ժողովրդի ցավի համապարփակ արտահայտությունն է, յուրօրինակ խտացումը: Սրանում բանաստեղծ Ալիշանի երգի զգայության բարձրակետը, Մ. Խորենացու «Ողբ»-ի համեմատությամբ, ավելի բարձր է: Նրա «Ողբը» որոշ իմաստով հակադրվում է Խորենացու «Ողբ»-ին: Եթե Քերթոդահայրը հայ ազգի ողբերգության ակունքը որոնում է նրա հոգեկերտ-

¹ «Գերագոյն գրքերը իրեն համար **Աստուածաշունչն ու Խորենացին** էին ... քիչ մը նման այն երկու բնութիւններուն որ՝ ըստ աստուածաբաններուն՝ Քրիստոսի մէջ անշփոթօրէն միանալով միակ անձ մը կը կազմեն»: Տե՛ս **Զօպանեան Ա.**, Դեմքեր, (Հ. Ղեւոնդ Ալիշան), Փարիզ, 1924, էջ 85-86:

² «Իր հատորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց և իրական»: Տե՛ս **Իսահակյան Ավ.**, Ղեւոնդ Ալիշան, Երկեր, Եր., 1987, էջ 710:

³ **Երեմեան Ա.**, Կենսագրութիւն Հ. Ալիշանի, Վենետիկ-Ս. Ղազար, 1902, էջ 184:

վածքի շեղումների մեջ, ապա Ալիշանը՝ նաև դրանից դուրս: Պատճառը օտարների՝ պարսիկի ու բարբարոս ցեղերի մուտքն էր հայոց աշխարհ, որ բերել էին ոգու ուժացում. «Չարն ուզե գրեզ, ո՛վ իմ բարի աշխարհ Հայոց...»: Ալիշանը ոգեկոչում է նոր Հայաստանի գաղափարը («Ո՛հ, թող մեռնի ծեր Նահապետ, մտնու տապան, // Այլ թող ելնե՛ ի տապանեն **նոր Հայաստան**»¹), որ տեսնում էր միայն կովի, պայքարի, ոգեղեն ընդվզման մեջ, ասելով՝ հայք **«թող գրնա՛ն կռիվք, // Երթա նախանձ, թող գա սեր, թող միանան սիրտք»**² (այս և հետագա ընդգծումներն իմն են՝ **Ն. Ս.**): Բանաստեղծը ծանրանում է հերոսական հոգեբանության վրա, որ շրջադարձային էր հայ գրականության համար: Գրականագետ Ա. Տերտերյանը նկատում է, որ **«Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի հետևողությամբ՝ Ալիշանը իր պատմական հերոսներին դարձրել է հայրենիքի անկախության, միության և ամուր պետականության ներկայացուցիչներ»**³:

Կարծում եմ՝ պատահական չէ Ա. Չոպանյանի այն համոզումը, համաձայն որի՝ Ղ. Ալիշանը անուղղակի կերպով նպաստել է հայ ազատագրական պայքարի շարժմանը. «Ալիշանի գործը... որ ծայրե՛ծայր ուրիշ բան չէ բայց եթե ապացուցանելու որ հայ ազգը մեծ, հզոր, ազնիւ, ազատ, քաջ է եղած անցեալին մէջ, **անուղղակի կերպով, բայց շատ հզորապէս նպաստած է հայ ազատագրական պայքարի շարժման ծննդեանն ու աճմանը արդի հայ մտքին մէջ**»⁴:

Հ. Ղ. Ալիշանը առաջին անգամ Մ. Խորենացուն դիտարկում է ոչ միայն իբրև պատմիչ, այլև գեղարվեստական կերպար, որն ապրում է իր ժողովրդի քաղաքական, բարոյական անկման ծանրագույն կորստի կսկիծը, դրաման. «Ար՛ ե՛կ, ար՛ ե՛կ հայր իմ ողբոցըս դու Մովսես, // Բմ սիրտ այլ չի՛ երթալ, ասա՛ դու քաջ գիտես. // **Քո Երեմիկդ ու քո Զաքարդ հե՛տ առ ողբա՛ // Հայոց ազգիս տարակուսյալ գրլխուն վըրա**»⁵:

¹ **Ալիշան Ղ.**, Երկեր, Եր., 1981, էջ 28:

² «Հայրենիքի դժբախտության հանդեպ ունեցած այդ «ողբ»-ն իր մեջ պարունակում է բողոքի, ընդվզման, ակտիվ հայրենասիրության տարրեր, որն ամենևին չի կարելի անտեսել»: Տե՛ս **Շտիկյան Ա.**, Ղևոնդ Ալիշանի հայրենասիրական պոեզիան, Եր., 1959, էջ 22-23;

³ **Տերտերյան Ա.**, Հայ կլասիկներ, (Ալիշանը և հայրենասիրությունը), Եր., 1944, էջ 65: Գրականագետ Ա. Տերտերյանը նկատում է նաև՝ «Հին հայ գրողներին և հերոսներին Ալիշանը գնահատում է իբրև իր Հայկակների, այսինքն երիտասարդության դաստիարակներ, որոնք սովորեցնում են հայրենասիրություն, արհամարհանք մահվան հանդեպ և ունեցածը, ձեռք բերածը պաշտպանելու ամուր կամք և վճռականություն»: **Նույն տեղում**, էջ 65:

⁴ **Զոպանեան Ա.**, Դեմքեր, (Հ. Ղևոնդ Ալիշան), Փարիզ, 1924, էջ 100:

⁵ **Ալիշան Ղ.**, Երկեր, էջ 28:

Հարկ է նշել, որ առանց Հ. Ղ. Ալիշանի՝ չէր կայանալու նորագույն բանաստեղծության մտածողությունը: Մակայն պետք է նկատել, որ նրա գրականությունը ունեցավ նաև «բացասական» հետևանքներ: Հ. Ղ. Ալիշանի բանաստեղծական ժառանգությունը ծանրանում էր մի սահմանափակ՝ քաղաքական թեմայի շուրջ՝ ստեղծելով բանաստեղծության նեղ օղակ¹. հավերժական բանաստեղծության թեմատիկան խորթ մնաց նրա բանաստեղծական մտածողությանը:

Խոր կսկիծը, տագնապը Հայաստանի գալիքի, պատմական բախտի նկատմամբ, ինչպես վերը նշվեց, ներհուն գիտնական, բանաստեղծ Հ. Ղ. Ալիշանին ստիպում են դիմել անցյալին². «Մեր վանքի մատենադարանի ամբողջ ձեռագիրներն (1600) նա կարդացեր և քններ է խղճամիտ հետաքրքրությամբ, այդ **անծանօթ մագաղաթներէն քաղեր է հայ պատմութիւն, գիտութիւն, արձանագրութիւն, նա իրեն համար մեր գրչագրաց մէջ աւանդուած նիւթերուն յատուկ ցանկն կազմած էր, որ իր հնախօսական գրուածքներուն առաջնորդ կ'ըլլար**»³:

Անուրանալի է Ղ. Ալիշանի դերը խորենացիագիտության սկզբնավորման և կայացման գործում: Նա առաջիններից էր, որ վերաբժնորեց, վերաիմաստավորեց Մ. Խորենացու անձի, նրա «Պատմության» դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ինքնության, պետականության, արժանապատվության պահպանման հարցերում՝ հանդես գալով Պատմահորը նվիրված թե՛ առանձին հոդվածներով և թե՛ սովորաբար աշխատություններում («Հայապատում», «Յուշիկք հայրենեաց հայոց» և այլն) նրա «Հայոց պատմության» վկայակոչումներով, հիշատակումներով: Տեղին է հիշատակել Դ. Վարուժանի դիպուկ բնութագրումը. «Ան (իմա՝ Հ. Ղ. Ալիշանը - Ն. Ս.) բանաստեղծ էր, որ գիտություն կրներ, ոչ թե միայն ճշմարտություն մը քողագերծելու միակ մտահոգությամբ, այլ նաև **ա՛գգ մը երևան բերելու համար լույս աշխարհիքին**»⁴:

Փոքր-ինչ առաջ անցնելով՝ նշենք, որ 18-րդ դարի վերջերից սկսած, Մ. Խորենացին ենթարկվեց եվրոպացի հայագետների քննադատությանը:

¹ Այս առումով հարկ է նշել, որ Ռ. Պատկանյանի ստեղծագործությունը, Պ. Դուրյանի առաջին բանաստեղծությունները ևս հայրենասիրական երգեր էին:

² «Անցյալի վերհուշը, պատմական դրվագների, դեմքերի ու դեպքերի վկայակոչումը Ալիշանի համար **ինքնանպատակ չէր**: Նահապետը սրբազան սաքսոտով ու ներհուն հպարտությամբ է վերապրում հայոց կենսագրության փառապանծ հիշատակությունը»: Տե՛ս **Մարգարյան Ս.**, Ղևոնդ Ալիշան, Հայ գրականության պատմություն, հ. 3, Եր., 2015, էջ 184:

³ **Երեմեան Ս.**, նշվ. աշխ., էջ 153:

⁴ **Վարուժան Դ.**, Ալիշան և Պեշիկթաշյան, ԵԼԺ, երեք հատորով, հ. 3, Եր., 1987, էջ 183:

Նրանք այն համոզման էին, որ Խորենացու «Պատմությունը» գիտական կասկածներ է ներկայացնում: Հ. Ղ. Ալիշանը առաջիններից մեկն էր, եթե ոչ առաջինը, որ իր ծանրակշիռ խոսքն ասաց այս հարցի վերաբերյալ՝ կատարելով մեծ հետազոտություններ, մատենադարանից, հնօրյա ձեռագրերից հավաքելով փաստեր, այս կամ այն պատմիչի՝ Խորենացու մասին ասված վկայություններ, աննշան թվացող տեղեկություններ:

Այսպես, **«Մովսէս Խորենացի և իր Հայոց պատմութիւնը»** հոդվածում Ալիշանը նկատում է, որ Խորենացին այն քիչ վարդապետներից է, որ թե՛ իրենց անարատ վարքով, թե՛ ազգին և թե՛ օտարներին օգտակար լինելով, հիրավի մեծ են կոչվում երկրում ու երկնքում. **«Հայաստանի երկու հազար տարուան հիւսած ուսումնական պսակին ամենէն պայծառ ծաղիկն է...: Հայոց ազգին անհրաժեշտ մէկ պարտքը պէտք է ըլլայ նաև այնպիսի անձի մը վարքը գիտնալը՝ որ արժանապէս ըսուեցաւ հայր եկեղեցւոյ և հայր դպրութեանց, սուրբ և մարգարէ, պատմաբան, մարգարէ հնախոյոյ, գլուխ բանասիրաց, պերճախօս, քերդողահայր, աշխարհագիր, թարգման, դպրապետ և այլն»**¹: Նա չորրորդ դարի վերջերին Հայաստանին ընծայվեց: Աստված ինքը իր ազգին կրկին պարգև անելու համար Խորենացու կյանքը 110 կամ 117 տարի երկարացրեց: Աստված ինքը Մաշտոցի ջանքը վարձատրեց: Ըստ Հ. Ղ. Ալիշանի՝ Խորենացին երկու բանի հետևեց՝ աստվածասիրության և իմաստնության՝ «խելացի մեղուի պէս քաղցր ծաղկըներու վրայ իջնալով, և ճարտար նկարչի պէս զանազան գոյներով միտքը զարդարելով» (150): Իսկ ավելի ուշ Ալիշանը Խորենացու «Պատմությունը» պիտի բնորոշեր իբրև **«գունագույն նարտանկար բանավոր հյուսված մը»**: Նա համոզված է՝ «Թէ որ բաղդ ըսածդ կոյր չըլլար, մանաւանդ՝ թէ որ Աստուծոյ կամքը մեր փափագին հետ միանալու ըլլար, Մովսէսի իրեն ուզած Արամայ ու Տիգրանայ օրերը պէտք էին, որ թագաւորական ուժին վրայ կոթընած՝ **Աթենքի դարերը Հայաստան փոխադրէ և Հունաստանի նախանձելի նախանձորդ ազգ մը հանէ: Բայց գուրկ մնացինք աս երջանկութենէն»** (151): Ալիշանը խոր կսկիծով է գրում, որ Արշակունյաց թագավորության անկումից հետո Խորենացին հասարակ մարդու պէս մոռացվեց: Մինչդեռ Մխիթար Հայրը պատգամել է հավերժորեն՝ **«Բարձցուք ըստ Մովսիսի Խորենացւոյ ինքնին զպարկս մեր ի ճանապարհի»** (151): Սույն հոդվածում Ալիշանը խոսում է նաև Խորենացու «Պատմության» հավանական չորրորդ գլխի մասին, որ հիշատակել է Թ. Արծրունին²: Բացի սրանից՝ նա հիշատակում է նաև «Պիտոյից գիր-

¹ **«Բազմավէպ»**, Վենետիկ, 1847, թիւ 10, էջ 150: (Այսուհետ այս և մյուս՝ հոդվածին առնչվող մեջբերումները կարվեն սույն հանդեսից՝ էջը նշելով կից):

² Այս վարկածը Հ. Ղ. Ալիշանը կրկին քննում և առանձին ուսումնասիրությամբ

քը», որ Խորենացին իր Թեոդորոս աշակերտի համար է գրել, ապա՝ քերականական գրվածքներ, Հռիփսիմյանց ճամփորդության պատմությունը, Վարդավառի ճառը, Սուրբ Աստուածացնաց ազգատոհմի պատմությունը, շարականներ, աղոթքներ և այլն:

Ալիշանը, ինչպես վերը նշվեց, վերաիմաստավորում, գերադիակաճանցում էր «Հայոց պատմության» դերը և նշանակությունը, որով «Հայաստան իր հին ու կորսուած գրականութեան մէկ ճաշակը կ'առնէ. անով 1400 տարուանէ ի վեր Հայք իրենց ազգը և փառքը կը ճանչնան. ան է բոլոր աշխարհիս դիմաց մեր հին **ագնուականութեան վկայագիրը**, որ ուրիշ ազգ մը չկրնար յափըշտակել կամ ուրանալ... անով Յունաց և Հռոմայեցոց պատմիչները քանի մը տեղ սրբագրել, և տեղ տեղ հնութեան և ընդհանուր պատմութեան վրայ նոր լոյս ծագել, որ ուրիշ տեղէն անկարելի է առնելը» (153): Հ. Ղ. Ալիշանը առաջիններից է նշում Խորենացու «Պատմության» գլխավոր աղբյուրները, որոնք են՝ **Մար Աբաս Կատինա, Ղեբուբնա, Ողյուպ, Խոռոհբուտ, Բարդաճան** և այլն: Հետագայում՝ 1901 թ. իր «Հայապատում. Պատմիչք և պատմությունք հայոց» գիտական աշխատության մեջ նա կրկին անդրադառնում է Խորենացու «Պատմության» սկզբնաղբյուրների հարցին և խոր ուսումնասիրություններից հետո ապացուցում, որ իսկապես նա օգտվել է **Մար Աբաս Կատինայի, Ալեքսանդր Բագմավէպի, Ափրիկիանոսի, Բերոսոսի** և այլնի գրքերից¹: Մանավանդ վերջինը գտնում է, որ հայ պատմիչները տալիս էին իրենց ժամանակի, կրոնի և քաղաքական կյանքի կենդանի պատկերը: Հ. Ղ. Ալիշանը եզրահանգում է՝ այդքան աղբյուրներից դուրս բերված պատմությունը ցույց է տալիս, որ Խորենացին աշխատել է ճշմարիտ պատմություն գրել, որովհետև բուն պատմության հոգին ճշմարտությունն է, և «թէ որ մէջը առասպելներ ալ կան՝ հոն ինքն ալ կը վկայէ թէ ասոնք առասպելներ են» (154): Իսկ ամենից առանցքայինն այն է, որ նա ճշմարտությունը երբեք ստվերի տակ չի թողնում, ինչպես հույն և հռոմեացի պատմիչները: Դրանով է պայմա-

անդրադառնում է իր «**Յաղագս Մովսիսի Խորենացույ Ղ. անուանեալ գրոյն պատմութեան**» հոդվածում. «Իսկ վերակոչութիւն կորուսեալ պատմութեանդ ըստ Թովմայի յիշատակութեանց ոչ ուրեք **Գիրք անուանի, այլ Դրուագ** և Վերադարձութիւն ի վերայ երիցն կամ երրորդի հատուածեալ դրուագին. Հատած կոչին և Գ գիրքն ի սկզբանն և ի գլխակարգութեան, թէպէտ և ի կատարածին ասիցե Ավարտեցան Գ գիրք: **Սակայն ի դէպ է և չորրորդիդ գիրս կոչումն և այն ի մատենագրէն իսկ որպէս զկնի ուրեմն յիշեցից. իսկ զԴրուագիդ յորջորջումն ի Թումայէ կարծեմ սեփականեալ, որպէս և զառաջինսն կոչէ. նոյնպէս և զԴայրութեանդ կոչումն**»: Տե՛ս **Բագմավէպ**, Վենետիկ, 1851, թիւ 5, էջ 70:

¹ Մինչալիշանական հետազոտողներից ոչ ոք, նաև նրանից հետո քչերը նման ուշադրության արժանացրին Մ. Խորենացու գրքի սկզբնաղբյուրների խնդրին:

նավորված ֆրանսիացի մատենագրի բնորոշումը՝ **«Խորենացուն մեջ չհաւատալի բանին ալ հակառակիլը դժար է»** (154): Նա ցավով է նշում, որ արևմտյան գաղափարներով նախապաշարված մի քանի հեղինակներ պատմագիր Խորենացու ճշմարտությանը կասկածեցին, ինչպես Ֆրերեն, Վոլնեյը, Վիսկոնտը և այլք. «Վոլնեյի հոգով գրողին՝ որ իր իմաստութեանը վրայ չափէն աւելի վստահացած՝ չէ թէ միայն Մովսէս Խորենացիին պատմութիւնը՝ հապա Մովսէս մարգարէին գրածն ալ կ'ուրանայ, աւելորդ էր պատասխան տալ» (154): Ալիշանը հերքում է նաև մեկ այլ քննադատություն. նա ապացուցում է, որ պատմագիրը, թեպետ արևելցի, սակայն հույն մատենագիրներին է հետևել: Ինքը՝ Ֆրերեն է փաստում, որ Խորենացու «Պատմության» մեջ մի քանի բան կա, որ պետք է իրենից վերցնել կամ հույների հետ բաղդատել: Ղ. Ալիշանը ազնիվ զայրույթով այդ կասկածամտությունը կապում է եվրոպական նախապաշարմունքի հետ, որ «Յունաց և Հռոմայեցոց պատմիչները չափէն աւելի յարգի սեպած է, կամ թէ ըսեմ չափէն պակաս»: Ավելի իրատեսական լինելու համար նա ասում է՝ հանկարծ թյուրիմացաբար չկարծվի, թե ինքը ազգասիրական նախապաշարմամբ Խորենացուն անսխալ հեղինակ է համարում: Ըստ նրա՝ միայն այսպիսի կասկած աստվածաշնչյան գրերի վրա չունի, իսկ Խորենացու հմտությանը, սրբությանը նայելով՝ կարող է վկայել, որ նա երբեք իր կամքով չի սխալվել, կամ էլ առանց քննության դրել այն բաները «որոնցմով կը տարածայնի ուրիշներէն. թերևս տեղ-տեղ իր ընտրութեանը մէջ սխալած է, զարմանք չէ, և ոչ այնչափ ամօթ՝ **որչափ զինքը սրբագրել ուզողներուն սխալմունքը**» (154): Ալիշանը Պատմահոր թերություններից է համարում ժամանակագրություն չանելը, որ խիստ անհրաժեշտ էր, և, առանց դրա, շփոթություններ են ծագում. **«ինքն որ այնպէս մտադրութեամբ քններ էր Կոտեսիասը, Դիոդորոսը, Ափրիկանոսը, Յովսէպոսը, Եւսեբիոսը, Աստուածաշունչը և Աստուածաշնչին վրայ գրած մեկնութիւնները, և իր պատմութեան սկիզբը զանազան համեմատութիւններ կ'ընէ, ինչո՞ւ պատմութեան մէջ ալ չխառնեց՝ չգիտցուիք»** (155): Չնայած տարակուսանքին՝ նա մի ներքին համոզում ունի. **«թերևս միտք ուներ գրելու, կամ թէ գրած ալ ըլլայ ժամանակագրական ցանկ մը բոլոր պատմութեան ետևէն»** (155):

Հատկանշական է, որ հետագայում Ալիշանը **«Հայապատում. Պատմիչք և պատմությունք հայոց»** աշխատության մեջ կրկին անդրադառնում է այս հարցերին, քննադատում Մ. Խորենացուն, որ պատմության մեջ կան անստույգ մասեր ոչ թե հին Հայկազյանց պատմության նկատմամբ, այլ **«նոր ժամանակի Արշակունեաց և Քրիստոսի առաջին հինգ դարուց դիպուածոց մէջ եւս»**: Եվ, կարծես թե, սրա պատասխանը ունի. գուցե սկիզբնագիրը խեղաթյուրվել է օտար ձեռքերի կողմից կամ «շատ բան

ծերութեանն աստեն գրելով շփոթած ըլլայ»: Ի վերջո, նա այս հարցը թողնում է ապագա ուսումնասիրողներին:

Ալիշանը բարձր է գնահատում Խորենացու՝ բացառիկ, ինքնատիպ պատմիչ լինելը, նրա անաչառությունը. **«Թերևս իրեն նման պատմագիր մը չկայ, որ ազգային հոգին արդարութեան հետ այնպէս լավ միաբանած ըլլայ»** (155): Նա դրվատանքով է խոսում պատմագրի հավասարակշռվածության մասին, որ թէն սիրում է իր ազգին, բայց պախարակելի գործերը առանց հանդիմանության չի թողնում, առաքինի գործերն էլ՝ առանց գովաբանության: Եվ ինչպէս Հոմերոսը «ամէն ազգաց գաղափարներուն աղբիւր է, այսպէս ալ Խորենացին մեր ազգին պատմչաց և հնախօսաց աղբիւրն է եղած» (155): Անդրադարձ է կատարվում նաև պատմահոր առինքնող, յուրահատուկ ոճին: Նա երբեմն պերճախոս է, երբեմն իմաստասեր. **«և իրեն լայն ճակտին վրայ ճառագայթած՝ Երողոտոսի, Հոմերոսի, Պղատոնի հանճարը, և Երեմիայի ու Քրիստոսի լոյսը»** (155):

Հոդվածը եզրափակելիս Ալիշանը ցանկանում է, որ Հայաստանը նոր երախտագիտությամբ նայի իր պատմահոր վրա, որ **«ճշմարտապէս իրեն հայր եղաւ, և ազատեց իրեն անունը և փառքը ժամանակին զրկանքէն, ծուռ կարծիքներու զէնքերէն, և արեւելեան աննշան ազգաց ազգաց կարգէն: Խորենացոյն հետ փառաւորութի իր Մեկենասն ալ Սահակ Բագրատունին»** (155):

«Մովսէս Քերթոզահայր հայոց» հոդվածում Հ. Ղ. Ալիշանը շեշտը դնում է հիմնականում Խորենացու անձի, նրա բացառիկ տեսակի, անմնացորդ նվիրումի, հայրենասիրության, աստվածային շնորհների վրա: Համոզված է՝ իր գրիչը չի կարող նրա կատարելությունը տալ: Նա պատմահորը համեմատում է Հոմերոսի, Մովսէս մարգարեի հետ, նրան աներկբայորեն համարում է «բանաստեղծության վառիչ», ճարտասանության օրինակատու, «աշխարհագրաց նախաշավիղ», «թարգմանչաց գահագլուխ», վարդապետների վարդապետ, հնագետ ու մարգարե: Սակայն «այս ամէն անուններէ վեր յատուկ կոչմամբ ինքն **Քերթոզահայր Հայոց**»¹:

Հոդվածում կրկին արծարծվում է այն ցավոտ հարցը, որ Մ. Խորենացին, վերադառնալով Հայաստան և ցանկանալով իր «գիտությամբ զարդարել» երկիրը, արժանվույն չի գնահատվել և անտարբերության, մոռացության է մատնվել: Այս առումով Ալիշանը մեծ հուզականությամբ է ներկայացնում Գյուտ կաթողիկոսի և Քերթոզահոր հանդիպումը՝ հիմնվելով իրեն հասած գրավոր և բանավոր ավանդությունների վրա:

¹ Բագմավէյ, Վենետիկ, 1849, թիւ 4, էջ 51:

Գիտնական Ալիշանը իր աշխատություններում բազմիցս է նշում և կարևորում այն հանգամանքը, թե բախտավոր է այն ազգը, որ ի սկզբանե իր նախնիների երկրի մեջ է ապրում. **«Որչափ բարեբաղդ է, կ'ըսեմ, յայն ազգն՝ որ ի սկզբանե ի վեր համալեզու նախնեաց երկրին մեջն է կեցեր ... ունենալ յատուկ և բնիկ լեզու մը, սահման մը, քաղաքավարություն մը, ծես մը, և յիշատակարաններ, որոնց համար բարեկամ բարեկամի հետ խօսելով կարենան ըսել մերը. այս կատարեալ հայրենիք է, երկրիս ո՛ր կողմն այլ որ ըլլայ, ինչ դիրք այլ որ ունենայ»**¹: Նա իրավացիորեն գերաթնորոշում է ազգային հիշատակարանների դերը ազգապահպանության, ինքնության պահմանման, քաջերի գործերի և առաքինությունների փոխանցման մեջ: **«Հուշիկք հայրենյաց հայոց»** սովորածավալ աշխատության առաջին հատորում գրում է. «Ազգային յիշատակարանք. ասոնք են **բնիկ նշանք հայրենեաց**. ասոնք են յուրաքանչիւր ազգի հայրենեաց ամենէն յայտնի, ամենէն ազդու և զօրաւոր արձանագրութիւնք»²: Այս առումով կրկին վկայակոչում է պատմահոր խոսքը՝ թեպէտ հիմա փոքր ազգ ենք, տկար և օտարի իշխանության տակ ընկած, սակայն բազում քաջության գործեր կան մեր աշխարհում:

Հ. Ղ. Ալիշանը **«Հայապատում. Պատմիչք և պատմությունք հայոց»** գիտական, արժեքավոր աշխատության մեջ, առաջնորդվելով «ամեն ազգի սեփականագոյն յիշատակն իր Պատմութիւնն է» գաղափարով, խորությամբ ուսումնասիրում է մեր հնագոյն պատմիչներին, նրանց աշխատությունները: Եվ, բնականաբար, ծանրակշիռ դեր ու նշանակություն է տալիս Մ. Խորենացուն: Նա շատ է կարևորում այն հանգամանքը, որ հին պատմիչներից մի քանիսը իրենցից առաջ եղած պատմիչներին հիշատակել են. «Այսպես ընողներուն այլ **առաջինն է առաջադէմն Խորենացի, որ մեր ազգը յիշող հին պատմիչները նշանակէ, որ և է ազգ ըլլան. ինչպէս զԲերոսոս կամ Պիտոս քաղդէացի, Աբիւղենոս, Աղեքսանդր Բազմավէպ, Խոռոհբուտ, Ողիւպ կամ Ողիւմբ, Բարդաճան, Ափրիկանոս, Ագաթանգեղոս, Մար Աբաս, Եւսեբի, Բանան, Գոլգի, Դաւիթ, թո՛ղ որք պատահաբար բան յիշեր են զՀայոց»**³: Պակաս կարևոր չէ նաև հայ պատմիչների՝ տարբեր լեզուներով (լատիներեն, իտալերեն, ռուսերեն, անգլերեն, հունգարերեն, թուրքերեն) թարգմանված լինելը, որոնցից «Ամենէն հռչակելոյն Մ. Խորենացոյ՝ այլեւայլ լեզուաւ և կրկին նոյն լեզուաւ տասն թարգմանու-

¹ Ալիշան Հ. Ղ., Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Ա., Վենետիկ, 1869, էջ 7-9:

² Նույն տեղում, էջ 16:

³ Ալիշան Հ. Ղ., Հայապատում. Պատմիչք և պատմությունք հայոց, հ. Ա., Վենետիկ, 1901, էջ 11: (Այսուհետ հոդվածին առնչվող մյուս մեջբերումները կարվեն սույն գրքից՝ էջը նշելով կից):

թիւնք եղած են, իսկ քննադատութիւնք թիւր և ուղիղ՝ այնչափ մինչեւ ի ձանձրութիւն» (14): Օտարները, շնորհիվ թարգմանության, լրացնում են իրենց պատմությունը և ուղղում սխալները: Թարգմանություններից ավելի, ինչպէս վերը նշվեց, եվրոպացի հայագետները քննադատել են նրան (Կարիեր, Գուտշմիտ և այլն)¹: Ուստի պատահական չէ, որ այս գրքում Հ. Ղ. Ալիշանը կրկին անդրադառնում է Մ. Խորենացուն ուղղված քննադատություններին՝ հանդես գալով հիմնավոր ապացույցներով:

Ա. Սեն-Մարտենը՝ խիստ քննադատը, խոստովանել է, որ հայերը խնամքով աշխատել են «ընտրութեան և զգուշանալու յաւելորդ բանից, իսկ գրաւորական ոճով **գերազանցեն** քան զԱրաբայիս և Պարսիկս, նա և քան զբազումս ի Բիւզանդացոց, և առանց հեռանալու յարեւելեան ճաշակէ՝ հեռի են յայլանդակ ցնորքներէ և ի փքալից շատախօսութենէ. **առանց մեծաբանութեան շատերն (որպէս Եղիշէ, Ղազար, Խորենացի) իրենց ճարտար և պերճախօս գրութեամբ՝ կրնան կարդացուիլ՝ յետ Յունաց և Հռովմայեցոց մեզի ընծայած օրինակագիր հեղինակաց**» (15): Ա. Սեն-Մարտենը այն համոզման է, որ հայ պատմիչների տված տեղեկությունները «Ասիոյ պատմութեան թողած մէկ մեծ դատարկը լեցընեն» (16): Իսկ Մ. Ֆ. Բրոսեն մեր պատմիչներին ոչ միայն հավատարիմ և ճշմարտախոս է համարում, այլև գտնում, որ շատերն **«կրօնական անձինք էին, այլ զի և ամենքն այլ կ'ընծայեն զկենդանի պատկեր իրենց ժամանակին, կրօնից և քաղաքական կենաց»** (15):

Հ. Ղ. Ալիշանը սույն աշխատության **«Մովսէս Խորենացի»** բաժնում, ուսումնասիրելով փաստերը, ապացուցում է, որ մեծահամբավ Մովսէսը, Քերթոդահայրը և Մովսէս Խորենացին, Պատմագիրը, Փիլիսոփան, Սրբազանն, Երանելին, «հռչակյալն ընդ տիեզերս» և այլն, նույն մարդն են. **«Այս անտարակոյս է որ ամենայն հեղինակք մեր՝ պատմիչք և ոչ պատմիչք, թէ՛ Խորենացի անուանելով թէ՛ ոչ՝ մեծահամբաւ Մովսէս մի յիշեն, և իբր գերագոյն քան զամենեսին իրանցմէ առաջ եղած հեղինակ մի»** (117): Նա բանավիճում, բազմաթիվ փաստերով պաշտպանում է այն թեզը, որ Խորենացին ոչ թե վեց կամ յոթ, կամ ավելի ուշ դարի պատմիչ է, այլ հինգերորդ դարի՝ վկայակոչելով Սեբեոսին, Հովսիպին, Հովհ. Կաթողիկոսին: Նա ասում է. «Ի՞նչպէս է դարձու նաեւ առջի կիսուն մէջ գրողն՝ ոչ միայն

¹ Հարկ չենք համարում անդրադառնալ եվրոպացի հայագետների քննադատական հարցերին, քանի որ գրականագիտությունը բազմիցս է անդրադարձել դրանց՝ տալով գիտականորեն հիմնավոր ու սպառիչ պատասխաններ: Այս մասին մանրամասն տե՛ս **Մալխասյան Ստ.**, Խորենացու առեղծվածի շուրջը, Եր., 1940; **Աբեղյան Ս.**, Մովսէս Խորենացի, Երկեր, Գ., Եր., 1968, էջ 282-286; **Թամրազյան Հր.**, Մովսէս Խորենացի, Երկեր, Ա., Եր., 2006, էջ 98-101; **«Հանդես ամսօրեայ»**, Վիեննա, 1898, թիւ 8, էջ 258-267:

արաբացւոց աշխարհակալութեան յիշատակ մի չերեւցներ, այլ և այն տիեզերադորդ յեղափոխութեան ատեն, մանաւանդ իր աշխարհին և ազգին հանդիպածներուն մէջ գտնուելով և տեսնելով՝ նստի և այդպէս անզգայաբար իր ազգին հին առասպելներն հիւսէ... իր ոճն, հոգին և հառաչանքն հնութեան բնադրոշմն ունին» (122): Բարձր է գնահատվում այն, որ Խորենացին ունի մանկական պարզությունից մինչև մարգարեական ոճով և ոգով պատգամներ՝ **«հրեղեն, սրտառուչ և հափշտակից հառաչանքներ»:**

Ղ. Ալիշանը այստեղ կրկին անդրադառնում և քննում է «Հայոց Պատմության» չորրորդ գլխի խնդիրը, սակայն այդպես էլ սպառնիչ պատասխան չի գտնում. «Յիշած եմ եւս՝ որ Ռոշքեան Ստեփանոսի հայ-լատին բառագրոց մէջ չեն գտնուիր. բայց կրնայ եւս ըլլալ որ այդ Հայոց Պատմութենէն դուրս **առանձին պատմական գրութիւններ էլլան.** ինչպէս են Ոսկեանց և Սուքիասանց պատմութիւնք, Ամասիոյ շինութեան պատմութիւնն ի Վկայաբանութեան Ս. Թեոդորոսի. և Յովսիայ ըսածն՝ թէ «Երանելին Մովսէս Քերթոզահայրն՝ ի Պատմութեան ուրեմն ասէ. Չայսու ժամանակաւ երանելին Թաթուլ, երկրորդ Անտոն, ընդ գազանս և ընդ վիշապս բնակեալ՝ ընտանենայր, և իբրեւ գանմարմին մարմնով հանդիսանայր: Եւ այլ որ ինչ քան զայսոսիկ գեղեցկագոյն հիւսէ Պատմութիւնս»: Նշանաւոր վկայութիւն և՛ Պատմութեան և՛ ժամանակին. զի լաւ գիտեմք թէ Թաթուլ և եղբայրն Վարոս աշակերտք էին Սահակայ և Մեսրոպայ» (122-123):

Պատմահորը նվիրված բաժինն ավարտվում է նրանով, որ պետք է մի շարք հարցեր լրջորեն պարզել, ուսումնասիրել՝ ժամանակագրության, դէպքերի անճշտության հետ կապված:

Ինչպես վերը նշվեց, բացի առանձին հոդվածներից, Մ. Խորենացուն Հ. Ղ. Ալիշանը հիշատակում և արժևորում է իր մյուս աշխատություններում, ինչն առանձին ուսումնասիրության նյութ է:

Այսպիսով՝ Հ. Ղ. Ալիշանը առաջ է քաշում կենսականորեն անհրաժեշտ և շատ կողմերով գերադրյալ մի քանի խնդիրներ¹: Դրանով պայմանավորված՝ վերաբժնորում է Մ. Խորենացուն, նրա «Հայոց պատմության» հերոսականությունը, հին քաղաքական կյանքը հակադրում ներկա վիճակին. «Հայ պատմության փառավոր էջերը լուսավորելով՝ **նա ձգտում ուներ ժողովրդին քաղաքականորեն ինքն իրեն ճանաչել տալ**»²: Զե՞

¹ «Հայ քաղաքական մտքի պատմության մէջ առաջիններից մեկը Ալիշանն էր, որ անդրադարձավ հայրենիքի գաղափարին»: Տե՛ս **Հովականյան Յու.**, Ղևոնդ Ալիշանի կենսագրությունը, Եր., 2002, էջ 43:

² **Տերտերյան Ա.,** Հայ կլասիկներ, Եր., 1944, էջ 6:

որ Պատմահայրը հյուսում է նախնյաց քաղաքական գործերի պատմությունը, բարձր գնահատում պետականությունը, ինքնագիտակցությունը, հոգևոր հարստությունը, ներքին դիմադրության հարցը, մարդկային արժանապատվությունը. **«Մովսես Խորենացին ամենուր դրել է նոր սկիզբ՝ ճանապարհի բացելով հայկական գաղափարախոսության, գրական մտքի ու քննադատության առաջ»**¹: Խորենացին համոզված է՝ պատմությունը արդյունք է. չկա պետականություն, չկա նաև պատմություն:

Ժողովրդական կյանքի բուն իմաստը և գոյության իսկական ձևը ինչպես Խորենացին, այնպես էլ Ալիշանը համարում է ինքնուրույն պետականությունը: Սա գերարդիական նշանակություն ունի: Մենք բնիկ տերն ենք մեր երկրի: Այստեղից էլ՝ հարազատ երկրի հավերժական պաշտպանության, անկախության և ազատության հարցը՝ իբրև դարերից եկած սրբազան պատգամ: Եվ վերջապես՝ «Ալիշանը հոյակապօրէն կատարած է այն գործը զոր ուզած է կատարել, և որ, շարունակելով **Խորենացուն և Չամչեանին գործը**, իրեն գլխաւոր նպատակ ունէր հայ ժողովրդին ներշնչել կազդուրիչ ու ազնուացուցիչ հպարտութիւնը մեծ ու փառաւոր անցեալ մը ունեցած ըլլալու»²:

НАРА САРГСЯН

Кандидат филологических наук

РЕЗЮМЕ

МОВСЕС ХОРЕНАЦИ ПО ГЕВОНДУ АЛИШАНУ

Ключевые слова: Политический идеал, история, государственность, идентичность, гордость, национальный памятник, источник, древние рукописи, пророк, европейские арменоведы, критика.

В статье исследуются статьи Г. Алишана, посвященные М. Хоренаци. В центре внимания то обстоятельство, что ученый и поэт Г. Алишан был одним из первых, кто переосмыслил и переоценил исключительную роль и значение уникальной личности М. Хоренаци и его «Истории Армении» в деле сохранения идентичности, государственности и достоинства армянского народа. Обращаясь к прошлому, Г. Алишан ставил целью представить поколениям пример достойных дел и привить им политические идеалы, чувство гордости, самосознание. Это по-прежнему остается актуальным.

¹ Թամրազյան Հր., Մովսես Խորենացի, Երկեր, Ա., Եր., 2006, էջ 159:

² Չոպանեան Ա., Դէմքեր, էջ 88:

ABSTRACT

MOVSES KHORENATSI BY GHEVOND ALISHAN

Key words: Political ideal, history, statehood, identity, pride, national memory, source, ancient manuscripts, prophet, European Armenologists, criticism.

The article examines the articles of Gh. Alishan dedicated to M. Khorenatsi. The focus is on the circumstance that the scientist and poet Gh. Alishan was one of the first who rethought and overestimated the exceptional role and significance of the unique personality of M. Khorenatsi and his "History of Armenia" in the matter of preserving the identity, statehood and dignity of the Armenian people. Turning to the past, Gh. Alishan aimed to present generations an example of worthy deeds and instill in them political ideals, a sense of pride and self-awareness. Now this remains topical as before.

REFERENCES

1. Abeghyan M., Movses Khorenatsi, Erker, G., Erevan 1968:
2. Alishan H. Gh., Hushikq hayrenyac hayoc, H. A., Venetic, 1869:
3. Alishan H. Gh., Hayapatum. Patmichq ev patmutyun hayoc, H. A, Venetic, 1901:
4. "Bazmavep", Venetic, 1847, tiv 10:
5. "Bazmavep", Venetic, 1849, tiv 4:
6. "Bazmavep", Venetic, 1851, tiv 5:
7. Eremyan S., Kensagrutyun H. Alishani, Venetic- Surb Ghazar, 1902:
8. Tamrazyan Hr., Movses Khorenatsi, Erker, A., Erevan, 2006:
9. Isahakyan Av., Ghevond Alishan, Erker, Erevan, 1987
10. "Handes amsorya", Vienna, 1898, tiv 8:
11. Hovakanyan Yu., Ghevond Alishani kensapisopayutyune, Erevan, 2002:
12. Alishan Gh., Erker, Erevan, 1981:
13. Margaryan S., Ghevond Alishan, Hay grakanutyan patmutyun, h . 3, Erevan, 2015:
14. Shtikyan S ., Ghevond Alishani hayrenasirakan poezian, Erevan, 1959:
15. Chopanyan A., Demqer, Paris, 1924:
16. Varujan D., Alishan ev Peshiktashlyan, ELJ, ereq hatorov, h.3, Erevan, 1987:
17. Terteryan A., Hay klasikner, Erevan, 1944:

**ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ**

Բանալի բառեր՝ միջնադար, պատմագրություն, պատմիչ, ժանր, գեղարվեստականություն, արժևորում, ժամանակագրություն

Ուշ միջնադարի հայ պատմագրությունը իր գոյությամբ անգամ վկայագրում էր ժանրային եթե չասենք՝ ոչնչացում-քայքայում, ապա գոնե՝ անկում: Ժանրային նկարագրի տեսանկյունից այս շրջանը հայ պատմագրության ամենաթույլ ժամանակահատվածն է: Իհարկե, ստեղծվող աշխատություններից շատերը հատկանշվում են պատմագիտական մեծ արժեքով, որպես սկզբնաղբյուր հետագայում մեծ դեր են խաղացել պատմական տարբեր իրադարձություններ ներկայացնելու, գնահատելու և արժևորելու տեսանկյունից: Սակայն պատմագրության, իբրև ժանրաձևի, այն տարտղնումները, որ նկատելի էին դեռևս XII դարից, XVIII դարում վերջնականապես գալիս են հաստատելու ժանրի, ըստ էության, անախրոնիկ կարգավիճակը: Պատմական նյութի և գեղարվեստական ընդհանրացման այն փայլուն ներդաշնակությունն ու համադրությունը, որով հատկանշվում էր հատկապես Ոսկեդարի հայ պատմագրությունը, հետզհետե իր տեղը զիջեց փաստի, տեղեկության սոսկական փոխանցման կարևորությանը՝ ժանրը հաճախ վերածելով պարզ ժամանակագրության:

Հայր Ղևոնդ Ալիշանը, ահա, աչքի առաջ այս պատկերն ունենալով է շարադրել «Հայապատումի» առաջին՝ «Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց» հատորը, որտեղ էլ և տալիս է իր գնահատումները հայ պատմագրությանն ու պատմիչներին:

Այն հանգամանքը, որ Հայր Ալիշանն առանձնահատուկ տեղ է հատկացնում պատմագրությանը և ըստ էության համարում մեր դպրության բարձրակետերից մեկը՝ «Մեր ազգային Դպրութեան աւանդից մէջ հաճոյագոյնն և իսկագոյնն՝ իր Պատմագիրքն են, որք եթէ և հասած չըլլան ի ճարտարութիւն և ի բարձրութիւն քանի մը ճառագրաց և երգողաց (Շարականաց), սակայն և ոչ շատ վար կամ հեռու մնան»¹, բնականաբար, նախնառաջ թելադրված է Ոսկեդարի պատմագրքերի առթած տպավորությունից և հատկականություններից: «Հայապատումում» ամենատար-

¹ **Ալիշան Ղևոնդ**, Հայապատում: Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ Ը-Թ:

բեր առիթներով Հայր Ալիշանը խոստովանում և արձանագրում է դա: Ուստի, հաշվի առնելով, որ ուշ միջնադարի հայ պատմագրությունը հազվադեպ այսպես ասած՝ համընկնումներ ունի Ոսկեդարի պատմագրության հետ, բնական է, որ Հայր Ալիշանի գնահատողական-մեկնաբանական-ընտրողական խոսքն էլ նրա շուրջ սակավ է, կամ ըստ համընկնումների է:

Մյուս կողմից՝ ինչպես ինքը՝ Հայր Ալիշանն է նշում, «Հայապատումը» իր բնույթով միտված է նախևառաջ **ճաշակ** ի ցույց դնելու՝ «հեղինակաց գրածներէն ընտրանօք հատուածներ քաղել՝ յօրինակ և ի ճաշակ աշակերտաց և բանասիրաց»¹: Ուստի, պատմությունների և պատմիչների ընտրությունն էլ, հետևաբար՝ անուղղակի գնահատում-արժևորումը թելադրված է այս հանգամանքով. «Ոչ ամեն տեսակ գրուածներէ ընտրեցի այս ճաշակներս, այլ ի Պատմչաց... զասոնք հաճոյագոյն համարելով յընթերցումն քան զայլս»²: Այս դիտանկյունն էլ պայմանավորում է «Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց» գրքի բովանդակային և ժամանակագրական ընդգրկումը: Ընդ որում՝ Հայր Ալիշանի մոտեցումներն այստեղ էլ խիստ են և յորովի պատճառաբանված. «...ընտրեցի ժամանակագրական կարգի մի պատմութեան քան Պատմչաց, թէ և շատ տեղ զուգընթանան ժամանակք Պատմչաց և Պատմութեան. և ո՛ր և է կերպով **չի խափանուիր հեղինակաց լեզուի և ոճոյ զանազանութիւնն**»³: Պատմիչների և պատմագրական երկերից նյութերի ընտրություն-առանձնացումի հատույթում Հայր Ալիշանը կարևորում է ճաշակավոր լեզվի ու բովանդակության առկայությունը պատմագրքերում, «զերագոյն հայկաբանութիւնը», և այդ առումով է, որ իր խոսքով՝ «օրինավոր պատմչաց» ժամանակագրությունը նա հասցնում է ԺԷ դար: «Ասկե վար,- գրում-պատճառաբանում է նա,- միայն մի քանի Յօդուածք կան, զի կա՛մ Առաքել Դարիժացոյ գրածէն էն՝ որ մեր վերջին օրինաւոր Պատմիչն կրնայ համարուիլ, կա՛մ կարելոր դիպուածք են և հնագոյն պատմչաց ըսածը պարզեն կամ լրացնեն: Վերջին երեք դարուց (ԺԷ. ԺԸ. ԺԹ) **գրողները թողի, զի ընդհանրապէս անոճ են, և լեզունին շատ խանգարված**»⁴:

Եթե այս բոլոր մեջբերումներն ընդհանրացնենք, ապա կարող ենք ասել, որ Հայր Ալիշանի մոտ ուշ միջնադարյան պատմագրության գնահատությունը, որպես այդպիսին, բացակայում է, կամ հանգում է որոշակի ժխտողականության կամ մերժման՝ ճաշակի ու լեզվի գերակա

¹ Նույն տեղում, էջ Ժ:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, ընդգծումը մերն է.- Ա.Ն.:

⁴ Նույն տեղում, էջ Ժ-ԺԱ, ընդգծումը մերն է.- Ա.Ն.:

ըմբռնմամբ: Մյուս կողմից՝ եթե խնդրին նայենք ոչ առարկայական կամ հստակ արժևորման տեսանկյունից, ապա պետք է նշել, որ ուշ միջնադարյան հայ պատմագրության ըստ էության գնահատման բացակայությունը և «Հայապատումի» երեք հատորներում սփռված մեկնաբանական-գնահատողական հայացքը նախորդ դարերի հայ պատմիչների ու պատմագրական երկերի մասին, յուրովի գնահատական են ուշ միջնադարյան հայ պատմիչներին ու պատմագրական երկերին: Այլ խոսքով՝ բառացի չգրելով՝ Հայր Ալիշանը լռությամբ ու անտեսումով, նախորդ դարերի պատմագրական երկերի գնահատումով է արժևորում ուշ միջնադարյան հայ պատմագրությունը:

Ընդհանրապես, «Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց» հատորի պարագծում Հայր Ալիշանի գնահատողական համակարգը ըստ էության կարելի է բաժանել երկու հատույթի. ա) ուղղակի և անմիջական գնահատում-արժևորումներ և բ) տեքստընտրություն և վկայակոչում:

Ուղղակի և անմիջական գնահատում-արժևորումների հատույթում ըստ էության միակ շատ բարձր գնահատականի արժանացած ուշ միջնադարյան հայ պատմիչը Առաքել Դավրիժեցին է: «Յետ կանոնաւոր Պատմչաց ԺԳ. դարու և ԺԴ-ին սկզբան, արժանաւոր պատմիչ մի չէ հասած մեզ յետագայ դարերուն՝ մինչեւ ի սա, որ թէ՛ իրմէ առջի երկու երեք դարուց պատմիչներէն և թէ՛ իրմէ վերջնոց ամենէն լաւագոյնն է և կ'արժէ օրինաւոր Պատմչաց դասակցել»¹: Հայր Ալիշանը Դավրիժեցու հանդեպ էլ, անշուշտ, որոշակի վերապահություն ունի. «Հայաբանութեամբ ստորին է», - գրում է նա, բայց և միաժամանակ հավելում՝ «բայց կարգաբանութեամբ գովելի»²: Ահա այս վերջին հանգամանքն էլ Հայր Ալիշանի գնահատողական խոսքի մեկնակետն է:

Եվ եթե Ջաքարիա Քանաքեղոցու (Հայր Ալիշանի մոտ հիշատակված է որպես Ջաքարիա կամ Ջակքեոս սարկավագ) դեպքում առանձնահատուկ արժանիքներ չեն ընդգծվում, ապա Մաղաքիա Դպիրն էլ, ըստ էության, կարևորվում է այն փաստով, որ ըստ Հայր Ալիշանի «կրնայ կոչուիլ վերջին ի Պատմագիրս մեր, ոչ ընդարձակ գրութեամբ երկար կամ կարճ ժամանակի դիպուածոց, այլ համառօտ ազգային յիշատակօք բովանդակ ժամանակի, այսինքն **Ժամանակագրութեամբ**»³:

Ուշ միջնադարի մյուս պատմիչներին Հայր Ալիշանը ներառել է «Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց»-ի «Յաւելուած»-ում: Հավելված տանելու պատճառաբանությունը, ըստ ամենայնի, ուշ միջնադարյան հայ

¹ Նույն տեղում, էջ 331:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 338:

պատմագրության ալիշանյան բնութագիրն է ինքնին և նրա գնահատողական ըմբռնումների հանրագումարը՝ անշուշտ, որոշ բացառություններով. «Յետին երկուց դարուց, այսինքն՝ Ութեստասներորդին և Իննեստասներորդի, ազգային պատմագիրք՝ *մեր նպատակին չեն ծառայեր*, մանաւանդ որ շատքն յստակ հայերեն այլ չեն գրեր»¹: Ոճը, լեզուն, ճաշակը մինչև վերջ շարունակում են մնալ թելադրող Հայր Ալիշանի ըմբռնումներում՝ առանց չնչին իսկ զիջումների:

Տեքստընտրության և վկայակոչման հատույթում, ահա, այդ տրամաբանությամբ ուշ միջնադարյան պատմագրությունը գրեթե տեղ չունի: Տեքստերի մեջբերման առումով՝ գրեթե միակ գնահատականի արժանացած պատմիչը կրկին Առաքել Դավրիժեցին է, որի «Գիրք պատմութեանց» աշխատությունից «Հայապատումում» ներառվել են «Դարձ աջոյ Լուսաւորչին յԱղթամարայ», «Հնարք յունաց առ ի գողանալ զոսկերս Վարդ Պատրկի», «Տարագրութիւն ջուղայեցոց ի Սպահան», «Նորոգութիւն անապատական կենաց ի Հայս», «Մասանութիւն մեծի անապատին» վերնագրով գլուխները²:

Ամփոփելով, նշենք, որ ուշ միջնադարյան հայ պատմագրությունը, վստահաբար, Հայր Ղևոնդ Ալիշանի քմահաճ ու խիստ ճաշակին և հիմնավոր գիտելիքին չէր բավարարում: Ուստի, ընդհանրության մեջ Հայր Ալիշանը զուսպ արժևորումներով և հպանցիկ գնահատումներով, ավելի շատ անտեսելով է անցնում ժանրի զարգացման այս ժամանակահատվածի կողքով:

АРКМЕНИК НИКОГОСЯН

Кандидат филологических наук

АРМЯНСКАЯ ИСТОРИОГРАФИЯ ПОЗДНЕГО СРЕДНЕВЕКОВЬЯ ПО ОЦЕНКАМ ГЕВОНДА АЛИШАНА

Ключевые слова: средневековье, историография, историк, жанр, художественность, ценность, летописание.

В статье рассматриваются анализы и оценки Отца Гевонда Алишана, данные представителям армянской историографии позднего средневековья.

¹ Նույն տեղում, էջ 339, ընդգծումը մերն է. - Ա.Ն.:

² Տե՛ս **Ալիշան Ղևոնդ**, Հայապատում: Պատմութիւն Հայոց, հատոր Գ, Վենետիկ, 1901, էջ 238-241, 282-284, 324-330, 335-341, 355-359:

ARKMENIK NIKOGHOSYAN
Candidate of Philology

**ARMENIAN HISTORIOGRAPHY OF THE LATE MEDIEVAL BY THE
ASSESSMENT OF GHEVOND ALISHAN**

Key words: Middle Ages, historiography, historian, genre, artistry, value, chronicle.

The article examines the analyzes and assessments of Father Ghevond Alishan, given to the representatives of the Armenian historiography of the late Middle Ages.

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՈՐՊԵՍ «ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԽՄԲԱԳԻՐ

Բանալի քառեր՝ Ղևոնդ Ալիշան, «Բազմավեպ» հանդես, Մխիթարյան միաբանություն, գրական-մշակութային արժեքներ, նոր լեզվական և մշակութային մոտեցում, գիտական և տեսական հիմքեր ու մեթոդաբանություն

Հայաշխարհը 2020 թ. ոգեկոչեց երկու կարևոր հոբելյան: Հայագիտության և հայապահպանության երկու հսկաների՝ Ղևոնդ Ալիշանի և Մկրտիչ Ա. Խրիմյանի ծննդյան երկու հարյուրամյակները:

Հայոց արգանդից ծնված սույն երկու մեծագույն անհատականությունների համակ կյանքը, անձնվիրումի և անձնագոհության վիթխարի ջանքերը, մեծ ու մշտական պայքարի ողիսականը վկայում են, որ նրանք ասպարեզ էին ելել մեր ժողովրդի համար խիստ ճակատագրական պահին: Իրավ, միանգամայն ճշմարտացի է այն դիտարկումը, որ «Եթե համայն հայության մեջ անխտիր բոլոր խավերում անկետայի ենթարկվեր, թե ո՞վ է ԺԹ դարու ամենախոշոր, ամենահեղինակավոր, ամենասիրելի, պաշտելի մարդը, որի խոսքը, կամքը, տենչանքը ու մտորումը համայն հայության բաղձանքի ամփոփումը իր սրտում-հոգում ամբարած լիներ, անշուշտ, միաձայն երկու մարդի վրա կանգ կառնեին՝ Խրիմյան Հայրիկ և Հայր Ղևոնդ Ալիշան:

Խրիմյան Հայրիկ և Հայր Ղևոնդ Ալիշան՝ մի-մի պայծառ, կենսաբար, բուժիչ ու սննդաբար ճառագայթներ եղած են, համայն հայության սիրտ-հոգի-միտք-զգացում դաստիարակող, կռող կոփողներ: Գրագետը կարդացել է սրանց հրաբորբոք երկերը, անգրագետը լսել է աշուղի տաղերը, Խրիմյան Հայրիկին և Հայր Ղևոնդ Ալիշանին ձոնված, և հավատում-պաշտում է նրանց իբրև իր հայրենիքի նախախնամություն»¹:

Այսօր և այս պահին խոսենք միայն Ղևոնդ Ալիշանի ունեցած դերակատարության մասին: Արտասովոր շռայլ ընդունակությունների և զարմանալի ճակատագրի տեր սույն անհատին վիճակված էր բացառիկորեն առանձնահատուկ ու վճռական դեր ստանձնելու հայոց պատմության մի բախտորոշ դարաշրջանում, որպիսին 19-րդ հարյուրամյակն էր, երբ արդեն գծագրվում էր հայ ժողովրդի լինել թե՛ չլինելու ահեղ հարցականը:

¹ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1974թ., էջ 163:

Ուրեմն այդ տագնապալից և օրհասական ժամանակաշրջանը պիտի ծներ հենց Ալիշանի նման անհատականություններ, որոնք մեր ժողովրդի գոյապայքարին մասնակից պիտի լինեին գրով և գրչով, ուսումնականությամբ և գիտությամբ և իրենց ժողովրդի լինելիության դատը պիտի պաշտպանած լինեին վերոնշյալ գործիքներով ու մեթոդներով:

Այո, Ղևոնդ Ալիշանը ևս, ինչպես մեր ժողովրդի ծոցից դուրս եկած մյուս մեծ մտավորականները, քաջ գիտակցում և պատկերացնում էր, որ ժողովուրդները մրցակցում ու մարտնչում են ոչ միայն սրով ու ֆիզիկապես, այլև գրով ու գրչով, և երբեմն առավել շատ գրով, գրչով ու գիտությամբ, քան զուտ ֆիզիկական չափումներով:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ գրի, գրականության և գիտության դերի հստակ կարևորումով և իմաստավորումով է Ղևոնդ Ալիշան գործիչն ու գիտնականը մոտենում իր գործին և հայոց լինելիության խորհրդին:

Նրա խորին համոզումով ևս, բազմաչարչար հայ ժողովուրդը իր ճանապարհին եղած բոլոր ծանրագույն խոչընդոտներն ու մարտահրավերները կարողացել է հաղթահարել և առաջ շարժվել շնորհիվ իր հինավուրց գրի և գրականության, դպրության և գիտության:

Ահա թե ինչու առաջադեմ և ուսյալ հայ գործիչները ամենուրեք առանձնահատուկ հոգատարության ներքո են պահել հայ գիտական և կրթական օջախները և մամուլի օրգանները:

Նոր ժամանակներում ակնհայտորեն ու միանգամից կարևորվեց հատկապես մամուլի դերը որպես ազգային ինքնության պահպանման, տարբեր ազգերի ու միջազգային հանրության հետ հարաբերվելու հզոր միջոցի: Հայ ժողովրդի պատմական դժնի ճակատագրի ելևէջները դրոշմված են նաև հայ պարբերական մամուլի սկզբնավորման ու ընթացքի, բնույթի և բովանդակության վրա: Հայ ժողովրդի քաղաքական դժնի ճակատագիրը, երկրի բռնի բաժանումը տարբեր հատվածների, գաղթօջախների առաջացումը տարաբնույթ պայմաններ են ստեղծել հայության գրական, մշակութային և հոգևոր-բարոյական արժեքների ստեղծման համար: Այդ առումով և այդ կտրվածքով քննելիս բոլորովին էլ զարմանալի չէ, որ հայ անդրանիկ պարբերականը՝ «Ազդարարը» և առաջին շարքում նաև «Բազմավեպը» հիմնադրվել են Հայաստանի և հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս:

Հայ մամուլի պատմության անդաստանում հատկապես կարևորվում և արժևորվում են Մխիթարյան միաբանության ջանքերն ու ներդրումը:

Հարատև ժամանակ է, որ Մխիթարյանները բարձր են պահում հայ մամուլի անունն ու պատիվը: Նրանք մեկը մյուսի հետևից, առանց ընդհատումների, հրապարակեցին աշխատություններ և պարբերականներ, որոնք կոչված էին նոր մթնոլորտ և նոր իրավիճակ ստեղծելու հայ գիտական մտքի և պարբերական մամուլի անդաստանում:

Մխիթարյան միաբանության կողմից հրատարակված առաջին պարբերականներն էին «Տարեգրությունը», «Եղանակ Բյուզանդյանը», որոնք խմբագրում էր Ղուկաս Ինճիճյանը: Միաբանության երրորդ պարբերականը «Դիտակ Բյուզանդյան» երկշաբաթաթերթն էր:

Հաջորդ պարբերականը 1843 թվականին լույս տեսած «Բազմավեպն» է, որն ինքնին նշանավոր է հենց նրանով, որ շարունակվում է հրատարակվել մինչև օրս:

Այն հանդես եկավ որպես «Օրագիր բնական, տնտեսական և բանասիրական գիտելեաց»: Իսկ «Բազմավեպ» անունը հուշում էր, որ այն բազում բաներ վիպող է ու բազմապիսի բաներ պատմող: Նրա առաջին խմբագիրը եղավ բազմափորձ և բանիմաց Գաբրիել Այվազովսկին: Իսկ խմբագրական խորհրդի անդամներն էին Ղևոնդ Ալիշանը և Հովհաննես Սորկուճյանը:

«Բազմավեպ» հանդեսում հաճախակի էին փոխվում խմբագիրները: Բավական է նշել, որ 1843-ից մինչև 1880 թվականը այն ունեցել է տասներկու խմբագիր: «Բազմավեպը» ասպարեզ ելավ նախ և առաջ իր ժամանակի թելադրանքով: Այն լեզվական առումով դյուրին և հաճելի հարթակ էր բացում հայ իրականության և աշխարհի իրականության զանազան և բազմաբնույթ խնդիրները, հարցերն ու հարցականները քննելու և այդ ամենը հայախոս հանրությանը ներկայացնելու համար:

Իսկ 19-րդ դարի կեսերը մի ցնցող ու արժեքային առումով հարափոփոխ ժամանակաշրջան էր հին աշխարհամասի ժողովուրդների կյանքում: Հայ իրականությունը, այդ իրականության և միջավայրի մեջ ապրող հայ մարդն ու քաղաքացին չէին կարող երկար ժամանակով կտրված մնալ աշխարհում ընթացող քաղաքական, հոգևոր-բարոյական, տնտեսական, մշակութային գործընթացներից:

Այդ գործում հայ հասարակությանը օգնում և գորավիզ էին «Բազմավեպը» և Մխիթարյան միաբանության հայրերի հրատարակած մյուս արժեքավոր գործերը:

«Բազմավեպի» խմբագիրներն ու գլխավոր աշխատակիցները եղել են ժամանակի ամենաուսյալ, կիրթ ու առաջադեմ անհատները ոչ միայն հայկական իրականության, այլև եվրոպական և համաշխարհային չափանիշներով: Նրանք քաջ գիտակցում և պատկերացնում էին խնդիրների և

հիմնահարցերի այն ամբողջ հրամայականը, որ ծառացած էր հայ ժողովրդի և հայ սերունդների առջև:

Ղևոնդ Ալիշանը մեկը և առավել նվիրվածը եղավ Մխիթարյան միաբանության գործիչներից, ովքեր կանգնած էին «Բազմավեպի» հիմնադրության ակունքներում և գիտակցական ողջ կյանքի ընթացքում հավատարիմ մնացին նրան: Որպես խմբագիր Ալիշանը «Բազմավեպում» պաշտոնավարել է կարճ՝ 1849-1851 թվականներին, սակայն նա իր ստեղծագործական գործունեության ողջ ընթացքում կապված էր հանդեսի հետ, և նրա երկերը շատ հաճախ էին տպագրվում այնտեղ: Ղ. Ալիշանը միշտ եղել է միաբանության այն այրերի շարքում, ովքեր, անընդմեջ լինելով պարբերականի կողքին, մշակել և իրականացրել են «Բազմավեպի» լեզվական, գիտական ու մշակութային ուղղվածությունը:

Ժամանակի հրատապ պահանջն էր դարձել պարբերական մամուլի միջոցով կրթել, դաստիարակել, լուսավորել հայրենակիցներին: «Բազմավեպը» եղավ վերոնշյալ գործառույթն իրականացնողը, և նրա էջերում Ալիշանը «...սկսեց տպագրել մանկավարժական բնույթի խոր, ինչպես նաև դաստիարակչական հարցերի վերաբերյալ բովանդակալից հոդվածներ, տեղեկություններ բնության և նրա առանձին տարրերի, աստղաբաշխության, հայ ժողովրդի պատմության, մատենագրության, հայ իրավագիտության մասին»¹:

Չուշանալ, հետ չմնալ աշխարհում ընթացող գիտական, մշակութային, բարոյաքաղաքական գործընթացներից, չմեկուսանալ սեփական միջավայրի պատերի ներսում, - ահա այն կարգախոսն ու սկզբունքային մոտեցումը, որն առաջին իսկ տարիներից որդեգրեցին «Բազմավեպի» խմբագիրներ Գաբրիել Այվազովսկին, Ղևոնդ Ալիշանն ու Մխիթարյան միաբանության մյուս նշանավոր դեմքերը:

Այդ խնդիրները լուծելու համար հանդեսին անհրաժեշտ էր նախևառաջ առաջնորդվել լեզվական նոր քաղաքականությամբ: Ահա այդ պատճառով և նպատակով է, որ «Բազմավեպը», ի տարբերություն ավելի վաղ հրատարակված միաբանության պարբերականների, որդեգրեց ոչ թե «ռամկախառն աշխարհաբարը», այլ 19-րդ դարի առաջին տասնամյակների արևմտահայ մտավորականության գործածած լեզուն, որը միայն ու միայն նոր էր սկսվել ձևավորվել որպես գրական լեզու և դեռ ճանապարհուններ անցնելու:

Թե՛ Այվազովսկու և Ալիշանի պաշտոնավարման օրոք և թե՛ առհասարակ, հանդեսը վարում էր լեզվական ճկուն քաղաքականություն,

¹ Մակվեցյան Է.Ս., Ղևոնդ Ալիշան, «Երիտասարդ գիտաշխատող», ԵՊՀ հրատ., 1970, թիվ 1, էջ 59:

գտնելով, որ որոշ նյութեր նախընտրելի է հրապարակել գրաքարով (հատկապես բանաստեղծական քերթվածքները): Լեզվական այսպիսի «երկկենցաղությունը» ընկալելի և հասկանալի էր ժամանակակիցների կողմից: Այդ ժամանակ՝ հանդեսի հենց առաջին համարներից սկսած թարգմանական գրականության ընտիր էջեր էին ներկայացվում, հատկապես 19-րդ դարի ֆրանսիական գրականության հանճար Լամարթինի գործերը, որոնք այնքան էական ազդեցություն են գործել ժամանակի և հետագայի հայ բանաստեղծական մտքի փայլատակման վրա:

Ահա այսպես, քայլ առ քայլ, Այվազովսկու և Ղևոնդ Ալիշանի «Բազմավեպը» դաստիարակում և կրթում էր հայ ընթերցողների միտքն ու հոգին, գեղագիտական ընտիր ճաշակ զարգացնում: Հիրավի, այդ ամենի խտացումն է 1844 թ. հանդեսի առաջաբանում շեշտադրված հետևյալ միտքը. «Մարդու մը՝ իր ազգին լուսաւորութեանն ու յառաջադիմութեանը համար աշխատելէ աւելի գեղեցիկ ու վսեմ ինչ դիտաւորութիւն կրնայ ըլլալ¹»: Թե՛ 19-րդ կեսերին, երբ հանդեսի խմբագրի պարտականությունը ստանձնել էր Ղ. Ալիշանը, թե՛ հետագա տասնամյակների «Բազմավեպը» հնարավորինս ամեն ինչով նպաստեց համայն հայության ազգային ինքնության ամրապնդմանն ու նրա հոգևոր էության հարստացմանը:

Լինելով լայնախոհ և բազմակողմանիորեն զարգացած մտավորական՝ Ալիշանը հիմնորեն արծարծում էր նաև եվրոպական թեման իր խմբագրած հանդեսի էջերում՝ սկսած հասարակական-քաղաքական իրադարձություններից մինչև գրական ու մշակութային ժառանգության հարցերը: Իսկ եվրոպական քաղաքականությունը, եվրոպական իրականությունը իր մշակույթով, գիտությամբ, հասարակական և քաղաքական զարգացումներով (մասնավորապես իտալական ազգային-ազատագրական շարժումը Գարիբալդու առաջնորդությամբ) շատ բան էր հաղորդում և ուսուցանում Ալիշանին և հանդեսի մյուս խմբագիրներին:

Այո, Ղևոնդ Ալիշանը նախաձեռնող ու նախանձախնդիր եղավ հայ մամուլ և գրական իրականություն փոխադրել եվրոպական գրական ու մշակութային լավագույն արժեքներն ու փորձառությունը:

Ալիշանը որպես «Բազմավեպի» խմբագիր, իր նախորդը և հաջորդողները դրեցին հայ պարբերական լրագրության կանոնավորած հիմքերը: Նրանք ցույց տվեցին և հիմնավորեցին, թե ինչպես կարելի է ստեղծել հանդես իր գիտական հիմքերով ու հիմունքներով, սկզբունքային մոտեցումներով ու մեթոդաբանությամբ:

Մինչ այդ լույս տեսած հայկական հանդեսներից և ոչ մեկը չի ունեցել կուռ մշակած տեսական ու գիտական հիմքեր ու մեթոդաբանություն:

¹ «Բազմավեպ», 1844թ., թիվ 2, էջ 3:

Առաջինը «Բազմավեպն» էր, որը որոշակի սիստեմահամակարգություն էր ձևավորում այդ ամենում: Ահա այսպես, բազում խնդիրների, հարցերի ու հարցականների համակարգմանը, պարզաբանմանն ու իմաստավորմանն է ձեռնամուխ եղել «Բազմավեպի» խմբագիր և խմբագրական խորհրդի անդամ Ալիշանը, աշխատակից և հրապարակագիր Ալիշանը, բազմափորձ գիտնական և հասարակական գործիչ Ալիշանը:

Ալիշանի փոխմեջակիր և խմբագիր եղած տարիների մասին անչափ պատկառելի բնութագրություն է թողել նրա կենսագիրներից՝ Ս. Երեմյանը. «Նա այս պաշտոնական թերթը համարած էր միաբանութեան երիտասարդ մտքերու մարզաբանը, որով ամենէն ընդունակ նորընծա արեւդաներու կը պատուիրեր, որ իւրաքանչյուր թերթի մէջ անպատճառ մի-մի յօդուած հրատարակին: Երիտասարդաց պաշտմանք մէջ «Բազմավեպ»-ի յօդուածագրութիւնը ամենէն առաջին պարտաւոր ծառայութիւն նկատած էր և այս պատճառով ինքն նախօրինակ կուտար, կջանար իր յօդուածները «Բազմավեպ» էն անպակաս ընելու»¹:

Հայր Ղևոնդ Ալիշանը բազմագիտակ ու գիտությունների բազում ճյուղերի մէջ խորիմաց ու խորագիտակ լինելուց զատ նախևառաջ իր բազմատանջ ու բազմաչարչար հայրենիքի հանդէպ չտեսնված սիրո և կարոտի պաշարներ ամբարած անհատականություն էր:

Դա ցայտունորեն տեսանելի է ոչ միայն գրական քերթվածքներից, այլև խմբագրած «Բազմավեպ» հանդեսի խմբագրականներից և այլևայլ նյութերից: Իր գործերից ընտիր հատվածներ նա օգտագործում էր առաջաբանների համար: Յուրաքանչյուր համար բացվում էր «Բարոյական» կարգախոսի առանցքի ներքո ընդարձակ բարոյախոսությամբ, որի նպատակակետը հայրենիքն էր, հայրենյաց առաքիլությունների, նրա հոգևոր-բարոյական սյուների մշտական ու բարվոքիչ նորոգումը:

Ալիշանի խորին համոզումով ևս «Ճշմարիտ հայրենասէր՝ առաքինի մարդն է միայն, այն մարդն որ իր ամէն պարտքերն ալ կը ճանչնայ ու կը սիրէ և անոնք լաւ կատարելու կաշխատի»²:

Ալիշանական քննադատության սլաքն ուղղված է բոլոր այն բացասական հատկությունները կրողներին, հատկապես նրան, ով որ «աստուածապաշտութիւնը, վայելչութիւնը, արդարութիւնը ոտքի տակ, ու հայրենիք, հայրենիք կը կանչէ, մի հաւատար անոր: Այնպիսին կեղծաւոր հայրենասէր է, այնպիսին ամենավնասակար քաղաքացի է»³: Ալիշանը զուտ որպէս խմբագիր անուրանալի ծառայություններ է մատուցել հայ

¹ Երեմյան Ս., Կենսագրութիւն Հ. Ալիշանի, Վենետիկ, 1902թ., էջ 61:

² «Բազմավեպ», 1850, թիվ 4, էջ 51:

³ Նույն տեղում:

գիտական ու գեղարվեստական մտքի զարգացմանը, հայ լրագրական գործում նոր որակների ձևավորմանը:

Իր ավելի քան 60-ամյա գիտական-ստեղծագործական կյանքի ընթացքում Ալիշան-այրը հանդես է եկել և իր էական ներգործությունն է թողել հայ մշակույթի ու գիտության տարբեր բնագավառներում: Նա թողել է գիտական ու գրական վիթխարի ժառանգություն, և իր անունը հայության սերունդների շուրթերին հոլովվում է որպես բարձրարվեստ և բազմաշերտ հայրենասեր բանաստեղծ, աննկուն ու խորագիտակ պատմաբան ու աշխարհագետ, լայն տեսահորիզոնով հայագետ, գիտական ու գեղարվեստական գործերի հմուտ թարգմանիչ, հրաշալի արձակագիր, հնագետ, կենսաբան ու բուսաբան, լրագրող ու խմբագիր: Հիրավի, ճշմարտացի է այն դիտարկումը, որ Ղևոնդ Ալիշանը իր ստեղծած հսկայական ժառանգությամբ, գիտական ու գրական գործերով ճանաչված հեղինակություն էր ոչ միայն համահայկական, այլև համաեվրոպական ընդգրկմամբ: Նրա գիտական ու ստեղծագործական աշխատանքները թարգմանվել են ռուսերեն, անգլերեն, իտալերեն, գերմաներեն, իսկ «Ֆրանսիական ակադեմիայի կողմից ստացել է Պատվո լեգեոնի շքանշան, եղել է պատվավոր անդամը Իտալիայի Ասիական, Պետերբուրգի, Մոսկվայի հնագիտական, Ենայի փիլիսոփայական ընկերությունների»¹:

Որպես ամփոփում ասվածի, շեշտադրենք, որ Ալիշանը գիտակցական ողջ կյանքում տքնեց ու տառապեց ոչ միայն իր սաների, այլև հոգևոր ժառանգի՝ «Բազմավեպի» առավել տարածման համար:

Եվ «Բազմավեպը» այսօր ևս դարավոր կաղնու նման կանգնած է հայրենի գիտության, մշակույթի և լրագրության անդաստանում, ինչը ևս խորապես հավերժացնում է Ղևոնդ Ալիշան մեծ հայի հիշատակը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1974թ., էջ 163:
2. Ս. Երեմյան, Կենսագրություն Հ. Ալիշանի, Վենետիկ, 1902թ., էջ 61:
3. Է. Մակվեցյան, Ղևոնդ Ալիշան, «Երիտասարդ գիտաշխատող», ԵՊՀ հրատ., 1970թ., թիվ 1, էջ 59:
4. «Բազմավեպ», Վենետիկ, 1844թ., թիվ 2, էջ 3:
5. «Բազմավեպ», Վենետիկ, 1850 թ., թիվ 4, էջ 51:

¹ Մակվեցյան Է., նշվ. աշխ., էջ 55:

АРМЕН КАРАПЕТЯН
Кандидат исторических наук

РЕЗЮМЕ

ГЕВОНД АЛИШАН – РЕДАКТОР ЖУРНАЛА «БАЗМАВЕП»

Ключевые слова: Гевонд Алишан, журнал «Базмавеп», конгрегация Мхитаристов, литературно-культурные ценности, новый лингвистический подход, научно-теоретические основы и методология.

Известный арменовед, поэт, прозаик, географ Гевонд Алишан занимался также редакционно-издательской деятельностью. Являясь одним из основателей журнала «Базмавеп», с 1849-1851 гг. Г. Алишан был также его редактором. Журнал всегда был в эпицентре его внимания. На страницах «Базмавепа» было издано свыше тысячи разножанровых статей Алишана.

Будучи редактором, Алишан обращался ко всем злободневным вопросам современной ему действительности. Совместно с редакционным советом он определял многогранный вектор лингвистических и научно-культурных исследований, публикуемых в журнале.

ARMEN KARAPETYAN
PhD in History

ABSTRACT

GHEVOND ALISHAN AS AN EDITOR OF “BAZMAVEP”

Keywords: Ghevond Alishan, “Bazmavep” magazine, Mkhitarist Congregation, literary and cultural values, a new linguistic approach, scientific and the oretical bases and methodology.

The great Armenologist, poet, prose writer, historian and geographer Ghevond Alishan was also famous as an editor. He was one of the founders of “Bazmavep” and from 1849 to 1851 he edited that magazine. Throughout his conscious life, Alishan has always been by the side of the magazine publishing thousands of different materials. As an editor and an employee Alishan had a clear idea of the problems and issues, that Armenian generation has. Together with the members of the editorial board, he developed and implemented the linguistic, scientific and cultural direction and activity of “Bazmavep”.

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՍՎԵԼ ՍՈՒՐԱԴՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր

muradyan.samvel45@gmail.com

5-ԴՆ Դ. ԵՐԿՈՒ ՆՇԱՆԱՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆԱՑՈՒՄԸ Դ. ԱԼԻՇԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր՝ Խաչատուր Աբովյան, Բաֆֆի, Մխիթարյան բանաստեղծություն, Հ. Արսեն Բագրատունի, «Ավարայրի սոխակը», «Վերջին երգ վիրավոր բամբուխարի», Եղիշե

Դ. Ալիշանը արբովյանական գրականության հետ թեև անմիջական առնչություն չունի՝ հայրենիքում չապրած ու եվրոպական երկրներում ստեղծագործած լինելու պատճառով, սակայն նա հայագիտությանն ու հայ գրականությանը առավելագույն արդյունավետությամբ ծառայած մի գերհզոր անհատականություն էր, ում մասին Դ. Վարուժանը գրել է. «Ալիշան բանաստեղծ էր, որ գիտություն կ'ըներ: Այս կը նշանակե, թե գիտությունը կը ժողովրդականացներ: Իր թանգարանի, իր մագաղաթներու մատենադարանի և, առհասարակ հայրենի բոլոր ավերակներուն մենությանը վերև ան կախած է իր հսկայական տավիղը, և ահա Խորենացիի խոսքը երգի կ'փոխեր, Եղիշեի աղաղակը՝ դյուցազներգության, Եզնիկին մտածումը՝ երևակայության, Շնորհալիի աղոթքը՝ օրհներգության, ավերակներու տրտմությունը՝ արցունքի, անցյալի նշույլը՝ հրդեհի»¹:

Կրկնենք՝ «բանաստեղծ էր, որ գիտություն կըներ» արտահայտությունը: Այսինքն՝ ծնվել էր որպես բանաստեղծ, բայց զբաղվել էր գիտությամբ: Իսկապես էլ, բանաստեղծ էր նա ու թարգմանիչ, բանասեր – գրականագետ էր ու մանկավարժ, պատմագետ էր ու աշխարհագետ – ազգագրագետ, բառարանագիր էր ու խմբագիր, բնագրագետ (տեքստաբան) էր ու հրատարակիչ: Առանց թերագնահատելու թվարկած մյուս ոլորտներում նրա մեծ ձեռքբերումները՝ Դ. Վարուժանն էլ գերապատվություն է տվել բանաստեղծին ու հայագետին:

Նրա հզոր գրչի արգասիքն են ոչ միայն հանրահայտ «Նահապետի երգերը», այլև բազմաթիվ կոթողային աշխատություններ, որոնք հայագի-

¹ Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 3, Եր., 1987, էջ 183:

տական մտքի կարևորագույն ձեռքբերումներից են ու մեր ազգային հպարտությունը: Այս գիտակցությամբ էին նրան արժևորում Մ. Նալբանդյանը, Ա. Չոպանյանը, Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Դ. Վարուժանը, Ե. Չարենցը և նրա գրական ու գիտական ժառանգությանն առնչված թե՛ հայ, թե՛ օտար բոլոր մտավորականներն ու ընթերցողները: Այդ գիտակցությունն է համախմբել այսօր հայ մտավորականությանը՝ տոնելու մեծ հայի ու մտածողի 200-ամյա հոբելյանը, արժանավորապես գնահատելու նրա իրոք վիթխարի գեղարվեստական ու գիտական վաստակը և խոնարհվելու նրա անմահ հիշատակի առջև:

Ղ. Ալիշանն իր հայագիտական ու բանաստեղծական գործերով ոչ միայն գիտությանն է ծառայել, այլև նպաստել է հայ գեղարվեստական մտքի ու հատկապես չափածո գրականության զարգացմանը: Իգուր չեն նրան Աբովյանին գրեթե համահավասար դիտում որպես հայ նոր գրականության հիմնադիրներից մեկը թե՛ լեզվական, ալիշանյան աշխարհաբարի, թե՛ կլասիցիստական ոտանավորներից էականորեն տարբերվող պատկերավոր հզոր մտածողությամբ արարված, գաղափարական ու գեղագիտական նոր հարցադրումներով հագեցած քերթվածների նկատառումով: Իր քերթվածներում Աբովյանից անկախ նա բանաստեղծականացրեց Հայաստանը, հայ սերունդների առջև պարզեց հայրենիքի ոգին, հազարամյակների հայոց պատմությունն ու մշակույթը, հին ու նոր հավատքների ազգապահ էությունը՝ յուրատեսակ կամուրջ դառնալով անցյալի ու ներկայի, աշխարհացիր հայության տարբեր հատվածների և հայրենիքի միջև:

Գրական ազգակցության ու ժառանգորդության իմաստով նա Բաֆֆու անմիջական նախորդն է նաև Ա. Չոպանյանի համոզմամբ: Ղ. Ալիշանի ստեղծագործությունը, ըստ նրա, «սթափեցնող, ազնվացնող ձայնն եղած է, որ նախապատրաստած և դյուրացուցած է Բաֆֆիի գործը»: Իսկ սա նշանակում է՝ ծրագրային քաղաքական վեպերում, մանավանդ «Կայծերում» ու պատմավեպերում Բաֆֆու հայրենագիտության ուսուցիչը հենց Ալիշանն է: Մեծ վիպասանի կերպավորած ճամփորդող հերոսները պատմական Հայաստանով մեկ շրջում և հայրենիքը, նրա դաշտավայրերն ու լեռները, գետերն ու լճերը, բերդերն ու ամրոցները, վանքերն ու պատմամշակութային հուշարձանները, նշանավոր ճակատամարտի վայրերը սերունդներին ճանաչելի են դարձնում նաև ալիշանյան ներշնչումներով: Եվ այս իրողությունը հրաշալի է ընկալել ու անկարելի ժամանակներում բարձրաձայնել Ե. Չարենցը:

Դիպուկ է «Գիրք ճանապարհի» ժողովածուի 1933 թ. «Մահվան տեսիլ» պոեմում Ղ. Ալիշանի գործունեության և նրա բանաստեղծության չարենցյան բնութագիրը, որում XIII դարի իտալական Վերածննդի սկզբնա-

վորող մեծ բանաստեղծ Դանտեի և սերունդների առջև Ալիշանը ներկայացվում է որպես հանուն ներկայի և ապագայի «առնական ձայնով» հայոց պանծալի անցյալի փառքերը երգած, իր հզոր տավիղը շեփոր դարձրած «ռազմի երգերի գուսան», որի այսօր էլ արդիական երգը չի հնչել ապարդյուն:

Այդ կենսահաստատ հզոր երգը՝ որպես գաղափարի, վրեժի ու ցասման եզակի բարձրարվեստ մարմնացում, հեռավոր Ադրիատիկի ափերից «արծվի թևերով» հասնելով մայր երկիր՝ Հայաստան՝ դարձել է «հայրենյաց համար կովող» անմահ քաջերի սերունդներ ոտքի հանող ու խրախուսող անպարտելի ոգի: Այս է հաստատում «Մահվան տեսիլ» պոեմում Ե. Չարենցի կերպավորած Ղ. Ալիշանը՝ դիմելով Դանտեին.

*Երգեցի ես ձայնով առնական ամրոցներն ու բերդերը հայոց,
Ոստանները հայոց արքայից, պալատները նոցա փառահեղ,
Երգեցի Կարմիր Ավարայրը, Մասիսը՝ աստղերին հայոդ,
Քնարով մարտի կոչեցի ես նոցա՝ հանուն անցյալի,*

*Կոչեցի էլնել վերստին, թոթափել փոշին բարբարոս.—
Կոչեցի արժանի լինել մեր նախնյաց փառքին պանծալի
Վառելով ջահերն անցյալի, իբրև նո՛ր փրկության փարոս:—
Ձգտելով հին փառքը հայոց սրտերում միշտ անմար պահել,*

*Եվ երգս իզուր չհնչեց: —Հայրենի եզերքից քո լուրթ
Թռչելով, իբրև հրավեր, դեպի հայրենիքն իմ հեռու —
Նա ոտքի հանեց քաջարի այրերի անմահ մի սերունդ,
Որ ելավ գերության փոշուց հայրենյաց համար կովելու: —*

*Եվ թեև քենով բարբարոս փորձեցին նոքա, դարավոր
Ոսոխներն Հայոց աշխարհի, մեզ արյա՛մբ ողողել կրկին,—
Բայց վսեմ՝ մեր երթը եղավ անցյալի փայլո՛ւ՝ փառավոր,
Եվ իսաղա՛յ սրտով ես մեռա՝ մինչև մահ քնարը ձեռքիս:՝*

Իրոք բացառիկ է Ալիշան բանաստեղծի ու գիտնականի ստեղծագործության համազգային նշանակության այս բարձր, խոր ու համապարփակ գնահատականը: Դժվար է գերապատվություն տալ գիտնական կամ բանաստեղծ Ղ. Ալիշանին, որովհետև նա երկուսն էլ է միաժամանակ: Հայագիտության այդ գերհզոր հսկան, բանաստեղծ ու գիտնական լինելով, հիմնարար աշխատություններով ու սքանչելի «Նահապետի երգերով» առաջ է մղել հայ գեղարվեստական, բանասիրական ու պատմա-

¹ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, ՀՄԽՍ ԳԱ հրատ., հ. 4, Եր. 1968, էձ 228-229:

գիտական միտքը: Նրանով է սկզբնավորվել արևմտահայ բանաստեղծական լեզվի մի մակարդակը՝ ալիշանյան աշխարհաբարը¹:

Իսկ նրա բազմահարուստ գիտական ու գեղարվեստական աշխարհը եղել և մնում է մեր ժողովրդի հոգեմտավոր զարթոնքն ու նրա զարգացումն ապահովող կարևոր կենսական հիմքերից ու ամենագորեղ խթաններից մեկը:

XIX դ. հայ գրականությունը՝ արձակ և չափածո վիպասանությունը արժևորելիս քննադատ Մ. Նալբանդյանը «Կրիտիկա. «Մոս և Վարդիթեր»» աշխատության էջերում և «Մեռելահարցուկ» անավարտ վեպի տողատակի ծանոթագրություններում Խ. Աբովյանի և Պ. Պռոշյանի հետ միասին բարձր է գնահատել նաև Նահապետ-Ալիշանին: Քննադատի համոզմամբ՝ Աբովյանն ու Պռոշյանը հիմք էին դրել «արդյան ազգային վիպասանության», իսկ Ղ. Ալիշանի մասին մասնավորաբար գրել է. «Չենք մոռացած «Նահապետ» ստորագրությամբ Հ. Ղևոնդ Ալիշանյանց արժանավոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթվածները — «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ» և մյուս բոլոր հոյակապ ոտանավորքը. բայց այստեղ չհիշեցինք, որովհետև արձակ բանաստեղծության վրա էր մեր խոսքը. ապա թե ոչ, չափաբերական քերթվածոց մեջ արժանավոր վարդապետը խիտյան (մրցակից) չունի. եթե մենք լռենք, Ավարայրի բլբուլը կխոսի. ...«Կանչե՛ պլպուլիկ, կանչե՛ հոգեձայն. արդյոք զուխտ մահվան սուրբ հիշե՛ Վարդան»²:

Իսկապես էլ, հեռավոր Վենետիկում գրված տաղերը հասան մայր երկիր, մտան հայկական տուն ու դպրոց, թափանցեցին հայ մարդկանց սրտերը, գորացրին ու ջերմացրին նրանց հայրենիքի սիրով:

XIX դ. այն ժամանակահատվածը (1847–1858 թթ.), երբ Ղ. Ալիշանը գրում էր իր աշխարհաբար բանաստեղծությունները, դեռևս հրատարակված չէր Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», և անկում ապրող հայկական

¹ Ալիշանյան աշխարհաբար ասելով՝ պետք է հասկանալ Ղ. Ալիշանի գործածած աշխարհաբարը, որի մեջ զգալի է գրաբարի շունչը՝ բարբառային բառերի ու ժողովրդախոսակցական ոճերի բարեխառնությամբ: Հիմնականում գրաբարագիր այս հեղինակը կատարելապես էր տիրապետում ոչ միայն գրաբարին ու միջին հայերենին, այլև հայերենի տասնյակ բարբառներին ու խոսվածքներին: Նրա գործածած աշխարհաբարը ոչ միայն հայերենի դրսևորման այս երկու որակների՝ գրաբարի և միջին հայերենի, այլև բարբառային բառերի, դարձվածների ու ոճական ձևերի մի յուրօրինակ խառնուրդ է, որ Ալիշանից հետո որևէ հայ գրող չի գործածել նույն համադրությամբ: Այդ պատճառով էլ աշխարհաբարի անկրկնելի այդ տեսակը ի պատիվ մեծ բանաստեղծի ու հայագետի կոչվել է **ալիշանյան աշխարհաբար**՝ Ս. Ս.:

² **Նալբանդյան Մ.**, Երկեր, Հայ դասականների գրադարան, Եր., 1985, էջ 524:

կլասիցիզմը վերջին ճիգերն էր անում: Ղ. Ալիշանը նույնպես մի որոշ շրջան ստեղծագործում էր կլասիցիզմի գեղագիտության շրջանակներում: Սակայն նա քաջություն ունեցավ հակադրվելու իր ուսուցիչ Ա. Բագրատունուն և Մխիթարյան մյուս երևելի բանաստեղծներին: Նա բոլորից անկախ հանդես եկավ ստեղծագործական նոր ծրագրով ու հաստատեց ռոմանտիզմի իրավունքները հայ գրականության մեջ:

«Երգք Նահապետի» շարքի 11 բանաստեղծությունների ու պոեմների հեղինակը թեև կրոնավոր է ու կաթոլիկ վարդապետ, սակայն չի դարձել անցյալի անկյանք ավերակների ու փլեկված հուշարձանների անմխիթար ողբասաց, թեև Խորենացու, Նարեկացու, Շնորհալու և միջնադարյան այլ ողբերի օրինակով նա ևս Հայոց աշխարհի ներկա վիճակը համարում է ողբալի և նախնիների հերոսական ոգին ու իրագործած սխրանքները՝ նոր սերունդների համար օրինակելի:

Ղ. Ալիշանի բանաստեղծություններում չկա ներկայի ամխիթար վիճակին համակերպվելու, չարին չհակառակվելու քարոզչություն, ընդհակառակը, կա ազգ ու երկիր չուրանալու, կորուստները վրիժառությամբ հետ բերելու, բոլոր հնարները գործադրելու և զինված պայքարով հաղթանակներ նվաճելով նախնիների փառքին արժանանալու հստակ պատգամախոսություն, որն իրականացվում է անցյալը և ներկան միմյանց շաղկապող քնարական հերոսի՝ ծեր Նահապետի՝ պատմական հիշողությամբ ու կենսափորձով հարուստ հայի պայմանական կերպարով: Ընդ որում, «Բագմավեպում» առաջին անգամ հրատարակելուց հետո Ղ. Ալիշանը «Նվազք» ժողովածուի «Հայրունի» հատորի երկու՝ 1858 և 1867 թթ. հրատարակություններում այս բանաստեղծությունների զգալի մասը ենթարկել է լեզվառական նկատելի մշակման, որով բարելավվել է նրանց գեղարվեստական որակը, և հայոց Օսիանը՝ իբր Շահ-Աբասի ժամանակներում՝ 17-րդ դարում ապրած Նահապետը, բարձր արվեստի շնորհիվ արդարացիորեն նվաճել է անկեղծ հիացմունք ու չխամրող համբավ:

Այդ 11 քերթվածներից սույն զեկուցման մեջ կանդրադառնանք 5-րդ դ. երկու նշանավոր իրադարձությունները բանաստեղծականացնող երկերին՝ փորձելով ցույց տալ, թե ինչպես էր Ալիշանը ջնջում պատմական անցյալի և ներկայի սահմանները, հայության նոր սերունդների համար պանծացնում նախնիների հերոսական ոգին, արժևորում հայրենի հողն ու մյուս սրբությունները, որոնք ավելին են, քան մարդու երկրային կյանքը: Ինքնագոհաբերվող ու անձնուրաց մարտնչող պատմական մեծ ու փոքր հերոսների պանծացումն առաջնահերթ անհրաժեշտություն էր նոր ժամանակների հայության համար:

Հայրենիքը, ժողովուրդը և հավատը միավորված են Ղ. Ալիշանի հատկապես այն գործերում, որոնց մեջ նա դիմել է V դարի՝ ազգապահպան ու հավատապաշտպան խիզախումներով հարուստ իրադարձություններին: Այս երգաշարում շատ գործեր են հազեցած հարուստ բովանդակությամբ ու գնահատելի արժանիքներով, սակայն լավագույնը, անշուշտ, «**Բլբուլն¹ Ավարայրի**» հանրահայտ պոեմն է, որի դրվագներում Ալիշանը գեղարվեստականացրել է հայոց պատմության ամենից հիշարժան ու նվիրական էջերից մեկը:

Երկի ժանրատեսակի մասին թեև տարակարծություններ եղել են, սակայն նրա կառուցվածքը պարզ է ու հստակ: Հեղինակը հատուկ նշումով չի առանձնացրել սկզբի 48 տողանոց քնարական հատվածը, որին հաջորդում են բուն պոեմի Ա, Բ, Գ, Դ չորս ընդարձակ մասերը: Սկզբնամասը, ո՛չ առանց հիմքի, ալիշանագետները նախերգանք են անվանել: Իսկապես էլ, այն գիշերով Ավարայրի դաշտում՝ Տղմուտ գետի ափերով շրջող Նահապետի «մաշված շնչի» քնարական դիմումն է հերոսամարտին ականատես Լուսինին, Տղմուտ գետին, գիշերային սոխակ - բլբուլին և առաքինի «Թորգոմյան որդիներին»՝ հայության նոր սերունդներին:

Պոեմի առաջին գլուխը, անշուշտ, քնարական է, սակայն բուն ճակատամարտը պատկերող երկրորդ գլուխն ունի ընդգծված էպիկական բնույթ: Առաջին մասերում հեղինակը դիմում է ճակատամարտի մասնակից Եղիշե պատմագրին՝ Ավարայրի բլբուլիկին՝ անձնավորված սոխակին («Ով դու բարեկամ այրած սրտերու» կամ «Երգե՛ պլպուլիկ, ձայնիկդ ի հոգիս»), որը, ներգործվելով Եղիշեի երկից, դարեր շարունակ այցելում է Արտազ գավառ՝ Ավարայրի դաշտ, և երգում սուրբ Վարդանանց հիշատակի երգը: Առաջին մասի հատվածներում հեղինակը ներկայացնում է բուն ճակատամարտին նախորդած գիշերը: Հայոց պատմության լեգենդացած հերոսը կերպավորված է որպես միս ու արյուն, զգացմունքների հարուստ ներաշխարհ ունեցող, ազգի և հայրենիքի ճակատագրով մտահոգ բնավորություն: Ներքին տագնապով Վարդանը շրջում է դիրքերը, ստուգում քնած զինվորներին և արտահայտում իր տագնապալի խոհերն ու մտորումները:

Երկրորդ գլխում էպիկական հզոր շնչով պատկերված է բուն ճակատամարտն իր ամբողջ ահավորությամբ, հայ քաջամարտիկների անհավատալի սխրանքներով:

Երրորդ հատվածում հանդես է բերված Եղիշեն, որ հերոսամարտից հետո զոհերի մեջ փնտրում է գիտակցված մահով անմահացած Վարդանին:

¹ Ալիշանի գրած **պլպուլ**-ը պետք է կարդալ **բլբուլ**՝ «Բլբուլն Ավարայրի»:

Արթնանում է վաղ մանկության վերհուշը, երբ ինքն ու Վարդանը համշիրակ էին՝ միևնույն ստնտուից սնվող սննդակից եղբայրներ, միասին էլ կրթվել ու դաստիարակվել էին: Հետո Վարդանը մնաց հայրենիքում և հմտացավ ռազմարվեստի մեջ, իսկ ինքը կրթություն ստանալու նպատակով մեկնեց օտար երկրներ:

Իրոք հուզիչ է պոեմի այն դրվագը, երբ Եղիշեն գտնում է իր փնտրած Կարմիր Վարդանի անշնչացած մարմինը: Նրա հերոսացումը ինքն ընկալում է իր հոգու երգով, որ փոխանցվում է Ավարայրի սոխակին, որը կարծես դառնում է Եղիշեի հոգյակը: Հենց նա էլ, սերնդե-սերունդ փոխանցելով, անմահ է պահում Ավարայրի քաջերի՝ Վարդանի և մյուս 1036 վկաների՝ մարտիրոս - նահատակների հերոսության երգը: Պարսից գերակշիռ ուժերի դեմ խրոխտանալով՝ նրանք իրենց սխրանքով ու նահատակությամբ նվաճեցին հայերիս խղճի ազատությունը և ապրելու ու հարատևելու իրավունքը՝ հերքելով հետագայում հորինված «թեև պարտվեցինք, բայց տարանք բարոյական հաղթանակ» տխուր առասպելը:

Դ. Դեմիրճյանի համոզմամբ՝ Ավարայրի ճակատամարտում հայերը տարել են ռազմական խոշոր հաղթանակ՝ 1036 նահատակ - մարտիրոսների դիմաց թշնամուն պատճառելով 3454 զոհ և Հազկերտ արքայից ստանալով քրիստոնեությունը պաշտելու իրավունք և թեթևացնելով պարսից գերտերությանը վճարվող հարկերը: Այդպես չէր լինի պարտված լինելու դեպքում:

Ավարայրի թեման մարմնավորող գործերի մեջ առհասարակ լավագույններից է «**Վերջին երգ վիրավոր բամբռահարին**» երկը, որում կերպավորված է կովող քաջերին ոգի և արիություն ներշնչող, նահատակված բամբռահար Փառենը: Արվեստն անբաժան է ժողովրդի ճակատագրից: Կովի թեժ պահին Փառենն իր բամբիռ նվագարանը կախել է անտառում կաղամախի ծառից և ինքն էլ միացել է պարսից զորության դեմ կովող Ավարայրի քաջերին: Իր երգերով գուսանը քաջալերում է հայորդիներին, բայց կիսատ են մնում մահացու խոցված գուսանի երգն ու խոսքը, հնչում է միայն վերջին ցանկությունը.

*Արե՛ք հիմա կարմրիկ բամբռիկ իմ սիրուն,
Առջին, վերջին խաղն իմ խամրած մատներուն,
Դեռ երգ մ'ունիս, դեռ շունչ մ'ունիս, ունիս սեր...*

Ինչպես տեսնում ենք, Ղ. Ալիշանին բուռն ոգևորություն են պատճառել հայոց պատմական անցյալի հերոսական դրվագները, որոնց փառաբանությամբ նա հաղորդում է իր ասելիքը: Դա արիության ու հերոսության դրվատումն է, որոնցով պիտի տոգորվեն նոր սերունդները և միշտ կանգնեն հայրենիքի պաշտպանության դիրքերում:

Ոգևորիչ էր նաև 481 – 484 թթ. ազատագրական երկրորդ հաղթական պատերազմը Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ: Պարսից զորական ուժը ջախջախելու և կատարյալ հաղթանակ տանելու իրադարձությունը Ղ. Ալիշանին ոգեշնչել էր գրաբարով գրելու մի կատարյալ ռազմերգ՝ **«Երգ ու գնացք ի զորացն Հայոց ընդ Վահանայ Մամիկոնենայ ի Շաարշանայ դաշտին վրէժք»** խորագրով:

Գրական աշխարհաբարը դեռ նոր էր ձևավորվում, բանաստեղծության լեզուն դեռևս անմշակ էր և չունեի պատկերավորման միջոցների անհրաժեշտ մակարդակը, ուստի պատմական դարաշրջանի ճակատագրական իրադարձությունը հարկավոր գունավորմամբ պատկերելու, հարազատորեն վերարտադրելու, ռազմի տեսարանն ու մթնոլորտը, հակառակորդ զինվորների բախումը, զենքերի շայյունը, հայ քաջերի ինքնամոռաց ոգևորությունը առավել տպավորիչ դարձնելու համար Ղ. Ալիշանը դիմել է դարերով հղկված գրաբարի ճոխ պատկերավորման - արտահայտչական միջոցներին, որոնց ինքը տիրապետում էր կատարելապես: Ճիշտ ընտրված տաղաչափական ձևով, պատերազմին բնորոշ խրախուսական ձայնարկությունների տեղին կիրառմամբ նա ստեղծել է ռազմական քայլերգի մի բացառիկ հաջող օրինակ.

Բա՛մ. փորոտան բարձուստ բոմբյունք յԱյրարատյան դաշտն ի վայր:

Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրազայր:

Հրաւէր հայրենեաց հոշակի՝ նդ հանուր

Հոգիզ հայկազանց բորբոքին ի հուր:

Որք երկնաւորի պսակին էք անձկոտ,

Ու որք երկրաւորիս փառաց երկնահորդ,

Հապ՝ օ՛ն, արի արանց մանկունք՝

Հայրենավրէժքըդ Հայկազունք:

Հապ՝ օն ի զէն գունդագունդ,

Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝

Բ՛ զէ՛ն, ի վրէ՛ժ, օ՛ն անդր, յառա՛ջ,

Բ՛ զէ՛ն, ի վրէ՛ժ, մի՛ ձախ, մի՛ յաջ,

Օ՛ն անդր առաջ...

Մարտնչող երկու կողմերի համար էլ կռիվը տագնապալի է. հայերն իրենց փանդիոներով են մարտի հրավիրում, պարսիկներն՝ իրենց «դառնակոռոչ անդրաձայնե կերկերոդ» շեփորով.

Հայկեան փանդոաց որոտընդոստ դորնչին բարբառ մարտագոռ,

Դառնակոռոչ անդրաձայնէ պարսից կերկեր ի շեփոր.

Առատորեն կիրառված բաղաձայնույթը, բախվող զենքերի շառայունը, խրախուսական ու կոչական ձայնարկությունները, հաճախակի հոլովվող տեղանուններին միանալով՝ վերստեղծում են ռազմադաշտի

կենդանի, տեսանելի ու շոշափելի պատկերներ, որոնցում ցոլանում են հայրենավրեժ հայ զինվորներին բարձր տրամադրություն ու բուռն ոգևորություն ներշնչող, նրանց հաղթանակի կոչող հայրենի լեռների ու գետերի մոնյունն ու շառաչը.

Ի գուպարել մարտայարդար գարշապարաց Արամայ՝

Գոռան Կորդրիք, մոնչին Մասիք, հորնչեն սահանք Երասխայ...

Այս բանաստեղծությունը մեղեդիավորել է Վենետիկի Ռաֆայելյան վարժարանի երաժշտության ուսուցիչ Պիեդրո Բիանկինին: Կոմիտասի մշակմամբ՝ հերոսական այդ ռազմերգը հնչում է մինչև այսօր: Հնչում է և հնչելու է Ալիշանի խոսքը հայոց աշխարհի նորոգ զարնան, հայ ոգու վեր-ընձյուղման, հայ հայրենիքի և հայության հավերժության մասին:

САМБЕЛ МУРАДЯН

Доктор филологических наук, профессор

РЕЗЮМЕ

ПОЭТИЗАЦИЯ ДВУХ ЗНАЧИМЫХ СОБЫТИЙ ПЯТОГО ВЕКА В ПОЭЗИИ ОТЦА Г.АЛИШАНА

Ключевые слова: Хачатур Абовян, Раффи, Поэзия Мхитаристов, отец Арсен Багратуни, «Аварайрский соловей», «Последняя песня раненого арфиста», Егише.

В своих литературных произведениях Алишан представил поэтический образ Армении и многовековой путь армянской истории. Он изображал славное прошлое Армении, а не оплакивал руины. Лучшим доказательством сказанному являются помещенные в цикле «Песни Патриарха» поэма «Аварайрский соловей» и стихотворение «Последняя песня раненого арфиста», посвященные Аварайрской битве 451 года.

Поэма «Аварайрский соловей» - по выражению чувственных переживаний автора, лирическая, но это подчеркнуто эпическая поэма, по ходу развития действий. Герой стихотворения «Последняя песня раненого арфиста» поэт Парен вешает свою лиру на лесном дереве и примыкает к Армянской армии. Смертельно раненый армянский гусан поет свою последнюю песню.

Это второе стихотворение написано в более древнеармянском стиле, потому что новый литературный армянский язык все еще находился в процессе развития, и только при помощи грабара Алишану удалось приблизить и представить сцены войны в соответствии с историческим романом Егише «О Вардане и об армянской войне».

SAMVEL MURADYAN
Doctor of Philology, professor

ABSTRACT

THE POETICIZATION OF TWO SIGNIFICANT EVENTS OF THE FIFTH CENTURY IN ALISHAN'S POETRY

Key words: Khachatur Abovyan, Raffi, Mekhitarist poem, Father Arsen Bagratuni, "The Avarayr Nightingale", "The Last Song of a Wounded Bambir (Harpist)", Yeghishe.

In his literary works, Alishan presented the poetic image of Armenia and the old-century history of the Armenians.

In his works, he portrayed the historical glory of Armenia instead of mourning the ruins of the time. One of the best poetic examples of the heroic deeds of the Armenians illustrated in Gh. Alishan's poems are the "Songs of Nahapet (the Patriarch)", "The Avarayr Nightingale" dedicated to the Battle of Avarayr in 451 and "The Last Song of a Wounded Bambir (Harpist)".

The poem "The Avarayr Nightingale" seems to express the lyrical feelings of the author, but it has highly emphasized epic features in the flow of development of actions.

The hero of "The Last Song of a Wounded Bambir (Harpist)" – gusan Paren hangs his lyre to a forest tree and joins the Armenian Army. The mortally wounded Armenian gusan sings his last song.

The last poem is written in a grabar (classical Armenian) style, as the modern literary Armenian was still in the process of development. Alishan illustrated the war scenery in Classical Armenian (grabar) consistent with Yeghishe's historical work "On Vardan's and the Armenian War".

**ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բանալի բառեր՝ Հայ նոր բանաստեղծություն, Նվազք Նահապետի, հայրենասիրական բանաստեղծություն, հոգևոր հայրենասիրություն, գրաբար, աշխարհաբար, Տերյան, Չարենց:

Ղևոնդ Ալիշանի հսկայածավալ գիտագրական ժառանգության մեջ պոեզիան /աշխարհաբար պոեզիան/ շատ փոքր տեղ է գրավում: Բայց դրանից նրա գրական հռչակը չի պակասում: Ի վերջո Ալիշանը հայ մշակույթի պատմության մեջ մնում է առաջին հերթին իբրև բանաստեղծ, ինչը որևէ չափով չի նվազեցնում նրա հայագիտական գործերի արժեքը: Հայր Լևոն Զեքիյանը շատ լավ գեկուցում կարդաց Ալիշանի մասին և ասաց, որ նրա գրաբար բանաստեղծությունները շատ ավելի տաղանդավոր են, քան աշխարհաբարները: Բայց իրողությունն այն է, որ հայ ընթերցողները նրան ճանաչում են աշխարհաբար գործերով: Աբովյանը *Վերքը* գրելիս շատ լավ հասկանում էր, որ աշխարհաբարը դեռևս մշակված չէ, իսկ գրաբարը նա շատ էր սիրում: Բայց գերադասեց գրել վեպը աշխարհաբար, որպեսզի այն կարդան *հարիր հազարները...* Այնպես որ առաջին հերթին աշխարհաբար Նահապետի երգերն են միշտ մնալու իբրև հայ հայրենասիրական պոեզիայի նվաճումներ: Գրաբար երգերը կուսումնասիրվեն մասնագետների կողմից, կհաստատեն Ալիշանի մեծ տաղանդը, բայց երբեք չեն դառնա այնպիսի սիրված գործեր, որպիսիք են աշխարհաբար երգերը: Ի միջի այլոց, Ալիշանի բանաստեղծությունը պետք է գնահատել նաև այս տեսանկյունից, իբրև Աբովյանի գրքին զուգահեռ քայլ նոր լեզվի համար մղվող պայքարում:

Իմ այս հրապարակմամբ ես պետք է փորձեմ որոշել Ալիշանի տեղը հայ նոր բանաստեղծության մեջ: Բայց նախ ասեմ, որ Ալիշանի ստեղծագործությունը դուրս չի մնացել հայ գրականագիտության, մասնավորապես արևելահայ գրականագիտության ուշադրությունից: Դեռ ժամանակին Միքայել Նալբանդյանն է անդրադարձել Ալիշանի պոեզիային իր նշանավոր «Կրիտիկայի» մեջ: Այն բազում անգամներ հիշվել է Ալիշանին նվիրված աշխատություններում, և նորից մեջբերումների հարկ չկա: Բայց մի անգամ ևս հիշենք Նալբանդյանի հիացումը «արժանավոր վարդապետի» բանաստեղծություններով: 20-րդ դ. Ալիշանի մասին գրել են Ա. Տեր-

տերյանը, Ս. Սարիյանը և ուրիշներ: Հատուկ ուզում եմ շեշտել Գրականության ինստիտուտի երեք վաստակաշատ աշխատակիցների՝ Արամ Ինճիկյանի, Սուրեն Շտիկյանի, Էդվարդ Ջրբաշյանի ուսումնասիրությունները: Անունները ես հիշեցի նրանց աշխատությունների երևան գալու ժամանակագրության հերթականությամբ: Ինճիկյանը կազմել է Ալիշանի բանաստեղծությունների առաջին հայաստանյան ժողովածուն և գրել առաջաբանը¹: Նրան է պատկանում նաև Հայ նոր գրականության պատմության հինգհատորյակում Ալիշանին նվիրված հոդվածը: Սուրեն Շտիկյանը գիրք է գրել Ալիշանի պոեզիայի մասին² և բազմաթիվ հոդվածներ: Էդվարդ Ջրբաշյանի ծավալուն հոդվածը ամենահանգամանալիցն է եղած ուսումնասիրությունների մեջ, որում Ջրբաշյանը Ալիշանին դիտում է ժամանակի եվրոպական բանաստեղծության համապատկերում³: Այս բոլոր գործերը, նրանց հեղինակների վաստակը այսօր պետք է հիշել վասն արդարության. առանց դրանց Ալիշանի մասին մեր պատկերացումները խիստ պակասավոր պետք է լինեին:

Եվ այսպես, ի՞նչ տեղ է գրավում Ալիշանի աշխարհաբար բանաստեղծությունը հայ պոեզիայի զարգացման շղթայում:

Երևի իրավունք ունենք ասելու, որ Ալիշանը սկիզբ դրեց հայոց նոր գրականության մեջ հայրենասիրական պոեզիային (չմոռանալով «Տե՛ր, կեցո դու զհայս...»-ը, Վանանդեցու «Հայաստան, երկիր դրախտավայր...»-ը և այլ բանաստեղծություններ):

Հայրենասիրական պոեզիան երևույթ դարձավ հայ իրականության մեջ իրապես Ալիշանի «Երգք Նահապետի» շնորհիվ: Սա չափազանց կարևոր հանգամանք է արժանավոր վարդապետի գրական վաստակը գնահատելու համար: Հայ նոր բանաստեղծության զարգացման ընթացքում հայրենասիրական պոեզիային շատ կարևոր տեղ էր վիճակված: Թեև նախընթաց միջնադարյան ողջ բանաստեղծությունը կարծես թե հոդ էր նախապատրաստել այսպես կոչված անհատական քնարերգության համար՝ սեր, բնություն, կյանք ու մահ և այլն, բայց 19-րդ դ. առաջին մի քանի տասնամյակներում, արևելահայ բանաստեղծության մեջ՝ մինչև դարի վերջին երկու-երեք տասնամյակները, գլխավորը հայ բանաստեղծության մեջ եղավ հայրենիքի ճակատագիրը: Նախանցյալ դարի քառասնական թվականներին, երբ սկսեցին գրվել և տպագրվել Նահապետի

¹ Ղևոնդ Ալիշան, Նվագներ, կազմեց և առաջաբանը գրեց՝ Ա. Ինճիկյան, Երևան, 1957:

² Շտիկյան Ս., Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1957:

³ Ջրբաշյան Էդ., Ղևոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծական շարքը և նրա գեղարվեստական միասնությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 1982, 2/47/:

երգերը, հայ պոեզիայում հայրենասիրական այլ բանաստեղծություններ, որոնք լուրջ ազդեցություն ունենային հայ մտքի և հոգու վրա, դժվար է հիշել:

Այն, որ Ալիշանը չէր եղել Հայաստանում, բայց գրեց իր անկեղծ բանաստեղծությունները Հայաստանի մասին, շատ հետաքրքրական փաստ է: Նա Հայաստանը գիտեր միայն գրքերով. նրա հայրենասիրությունը այս իմաստով գրքային հայրենասիրություն է, որն ընդհանրապես բնորոշ էր հայ բանաստեղծության այդ շրջանին: Որի՞չ կերպ այդ հայրենասիրությունը մենք կարող ենք անվանել նաև հոգևոր հայրենասիրություն, որովհետև այդ զգացմունքը ծնունդ էր առել ոչ թե հայկական հողից ու կյանքից, այլ մի բոլորովին այլ, գրքային կամ հոգևոր միջավայրում: Սա հայկական հայրենասիրական բանաստեղծության հետաքրքրական առանձնահատկություններից է: Ի վերջո, և՛ Նալբանդյանը, և՛ Պատկանյանը, թեև եղել էին Հայաստանում, բայց իրական Հայաստանը նրանք գիտեին միայն մակերեսորեն, նրանց զգացմունքները ևս սնվում էին գրքերից, գրքերում եղած պատմությունից: Պատահական չէ, որ Ալիշանի բանաստեղծություններում ներկա են և՛ Մովսես Խորենացին, և՛ Եղիշեն իրենց գրքերով և հերոսներով: Պատահական չէ նրա բանաստեղծություններում Մովսես Խորենացու տողով սկսվող բանաստեղծությունը՝ «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ»: Իր ոգևորությունը նա առնում է այս գրքերից, նրանց նկարագրած իրականությունից և բուն ռճից ու խոսքից: Իր երիտասարդական տարիների հոգվածում, ինչպես հայտնի է, Թումանյանը խոսում է այս մասին:

Բայց Ալիշանի առիթով ավելի կարևոր է նկատի առնել, որ Նահապետի ստեղծագործությունը խոր ազդեցություն թողեց հետագա հայ հայրենասիրական բանաստեղծության վրա: «Պլպուլն Ավարայրին» ծնեց «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»: Ալիշանը զգացել էր ժամանակի պահանջը, ինչպես դա զգաց Ռաֆայել Պատկանյանը: Այսինքն, հայ հայրենասիրական բանաստեղծության առաջին շրջանը պետք է լիներ հենց այդ «գրքային» հայրենասիրությունը: Բուն Հայաստանը այն վիճակում էր, որ չէր կարող դառնալ բանաստեղծական ոգևորության աղբյուր (և գրական զարգացման միջավայր): Ի վերջո, Մխիթար Սեբաստացին սկզբում ցանկանում էր հիմնադրել իր միաբանությունը Սևանա կղզում, բայց ստիպված եղավ այդ անել Սևանից շատ հեռու և հայ մշակույթի հետ կապ չունեցող մի այլ կղզում: Սա ժողովրդի ճակատագիրն էր, բայց այդ նույն իրողությունը որոշակի հոգեբանություն էր ծնում գրականության մեջ՝ նույն այդ գրքային կամ հոգևոր հայրենասիրությունը, որն, իհարկե, ամենաանկեղծ և ամենախոր զգացմունքների արտահայտություն էր: Առանց այդ զգացմունքների չէր ծնվի Ալիշանի լավագույն բանաստեղ-

ծություններից մեկը՝ «Հրագդան, ջրիկդ իմ հայրենի»։ Եվ ոչ միայն այս գործը. բոլոր գործերում կա անկեղծ զգացմունք չտեսած հայրենիքի հանդեպ։ Նորից ու նորից զարմանում ես հայ բանաստեղծության այդ առանձնահատկության վրա՝ սիրել հայրենիքը առանց այն տեսած լինելու։ Եվ զարմանալին այն է, որ Ալիշանը այնպես էլ չեղավ հայրենքում։ Ի միջի այլոց, այս իրողության մեջ պետք է փնտրել նրա հայագիտական և գեղարվեստական ժառանգության ներքին կապը։ Երբեք իր աչքերով հայկական հողը չտեսած Ալիշանը տալիս է Հայաստանի տարբեր մարզերի պատմաաշխարհագրական նախանձեղիորեն հանգամանալից նկարագրությունը։ Իսկապես, զարմանալի է մեր այս երախտավորի հայրենասիրությունը։ Գրքերով այնպես է ուսումնասիրում ու ճանաչում իր հայրենի երկիրը, որ ուրիշները չէին կարող անել իրենց սեփական ոտքերով շրջելով այդ երկրում... Անշուշտ, այս փաստի բացատրությունը կարելի է գտնել նրա կենսագրության մեջ։ Բայց ինչ բացատրություն էլ լինի, իրողությունն այն է, որ Ալիշանը ապրում էր իր գրքային հայրենիքում, երևի չցանկանալով իրական տպավորություններով ավերել հայրենիքի իր ստեղծած պատկերի ռոմանտիկական գեղեցկությունը։ Ի վերջո, նա ամբողջ կյանքում Վենետիկում փակված չէր, եղել է եվրոպական շատ երկրներում, կարող էր և Հայաստան գալ։ Բայց չեկավ։ Ռոմանտիկական պոեզիայի սկզբունքները այս դեպքում միանգամայն հարազատ էին Ալիշանի զգացմունքներին։

Ի վերջո, հնարավոր չէ օրինաչափություն չտեսնել այն բանում, որ Ալիշանը բանաստեղծական խոսքով նկարագրում էր այն հայրենիքը, որն անսահմանորեն սիրում էր, բայց որը չէր տեսել, և պատմական այն իրադարձությունները, որոնք տեղի էին ունեցել իր աշխարհ գալուց շատ առաջ։ Հեռավոր պատմության մասին, մանավանդ հայ բանաստեղծության մեջ, շատերն են գրել։ Բայց Ալիշանի դեպքում դա մի քիչ այլ իմաստ էր ստանում։ Հենց այդ հեռավորությունն էր ապահովում ռոմանտիկական այն լուսապսակը, որ կար Ալիշանի հերոսների և նկարագրած դեպքերի շուրջ։ Այս մասին հանգամանորեն գրել է Էդ. Ջրբաշյանը իր ուսումնասիրության մեջ¹։ Այդ լուսապսակը Ալիշանի հայրենասիրության անբաժանելի գիծն էր, որը իր ճաճանչները փոխում էր մինչև նրա պատմա-աշխարհագրական և բանասիրական ուսումնասիրությունները։ Չկար Ալիշանի հայրենասիրությունը առանց այդ լուսապսակի, իր հայրենիքի պատմությունն ու աշխարհագրությունը նա այլ կերպ պատկերացնել չէր կարող։

Ահա այս գիծն է հարազատացնում Ալիշանին և Պատկանյանին։

¹ Տե՛ս **Ջրբաշյան Էդ.**, հիշված հոդվածը, էջեր 25-26։

Բանը միայն այն չէ, որ այս բանաստեղծները ոգևորվում էին անցյալի հերոսների կերպարներով, նրանց ոգևորությունը ավելի սնունդ էր առնում վառ երևակայությունից, քան իրականությունից: Բայց, մյուս կողմից, նրանց գործերում հստակ զգացվում էր դաստիարակչական գիծը, որն հետագայում իր հաստատումը և խորացումը գտավ հայոց պատմական վիպագրության՝ Դաֆֆու, Մուրացանի, ապա նաև Դեմիրճյանի և մյուսների գործերում: Անցյալի հերոսական դրվագները և դեպքերը վերակենդանացվում էին այս վիպասանների երկերում՝ ժամանակակից երիտասարդությանը հայրենասիրական ոգով դաստիարակելու համար: Բայց այս համեմատությունն անելիս հիշում ենք Պեշիկթաշյանի գեթունյան երգերը և զարմանքով արձանագրում, որ Ալիշանը չարձագանքեց Զեյթունի ապստամբությանը: Նախ, որ շատ զբաղված էր իր հետազոտություններով, բայց, թերևս, ավելի կարևոր է այն, որ նրա բանաստեղծական-ռոմանտիկական հայացքը կենտրոնացած էր, Պատկանյանի բառերով ասած, «հին-հին դարուց հիշատակ» դեպքերի վրա: Իհարկե, այստեղ պետք է հիշենք Էդվարդ Ջրբաշյանի միտքն այն մասին, որ Նահապետի կերպարը Ալիշանը կապել էր 17-րդ դ. հետ¹, հետևաբար, Նահապետը չէր կարող երգել 19-րդ դ. դեպքերը: Բայց բանաստեղծական ոգևորությունը Ալիշանին կարող էր դուրս բերել այդ շրջանակից: Դա չեղավ՝ մի անգամ ևս մեզ մտածել տալու համար Ալիշանի հայրենասիրության տիպի մասին:

Իր այս առանձնահատկություններով հանդերձ, Ալիշանի ստեղծագործությունը բուռն արձագանքներ ունեցավ քսաներորդ դարասկզբի տասնամյակների հայ պոեզիայում: Թումանյանը քննադատում է Ալիշանի և օտարության մեջ գրած մյուս հայ բանաստեղծների բանաստեղծությունները, որոնք կտրված էին ժողովրդի ռեալ կյանքից, բայց միշտ շեշտում է նրանց մեծ տաղանդը²: Եվ առհասարակ չի կարելի չտեսնել Թումանյանի խորին հարգանքը Ալիշանի ստեղծագործության հանդեպ. Ալիշանի անունը շատ հաճախ է հանդիպում նրա գրություններում: Արդեն խոսվել է Իսահակյանի և Ալիշանի հարաբերությունների մասին: Բայց հետաքրքրական է հատկապես Չարենցի վերաբերմունքը Ալիշանի հանդեպ:

Նրա նախորդը՝ Տերյանը, դիմում է Հայաստանին՝ «*Չլացա խնդուն փառքիդ Անցյալ ու հին փայլով երբեք*»: Ո՞ւմ էր հակադրվում Տերյանը: Իհարկե, առաջին հերթին՝ Ալիշանին ու Պատկանյանին: Այսպես էր

¹ Նույն տեղում:

² Տե՛ս **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր վեցերորդ, Երևան, 1994, էջեր 391, 532 և այլն:

սկսվում հայկական բանաստեղծության մեջ ազգային պատմության վերագնահատման ընթացքը: Տերյանին զարգացրեց ու խորացրեց Չարենցը: Նա ոչ միայն անտարբեր մնաց անցյալի “խնդուն փառքին”, այլև ամեն ինչ արեց հայոց անցյալը պսակազերծելու համար: Ինչու՞ : Այդ մասին շատ է գրվել: Իսկ ահա Ալիշանի նկատմամբ նրա շատ հետաքրքրական վերաբերմունքի ապացույց ունենք «Մահվան տեսիլ» պոեմում (Չարենցի պոեմի այս հատվածը, երևի առաջին անգամ, հիշատակել է Էդ. Ջրբաշյանը իր հիշված ուսումնասիրության մեջ): Ինչպես գիտենք, հայոց մոտակա պատմության դեմքերին Չարենցը ներկայացնում է բացասական գույներով: Բայց հիմա նայենք Ալիշանի բնութագրին: Նրան վերագրված խոսքերում անկեղծ և հուզիչ հայրենասիրություն կա.

*Աշխարհում շաշող հողմերից այն կղզում ապաստան գտած,
Ձգեցած սևասև սքեմ՝ ես տավիղը սակայն սիրեցի.
Եվ տավիղը շեփոր դարձրած՝ քերթության պարտեզը մտա,
Որ կորած հայրենիքս երգեմ և անցյալը նրա հրածին:*

Հետագա խոսքերում Չարենցը շարադրում է Ալիշանի և նրա հետնորդների ազգային-հայրենասիրական պոեզիայի գլխավոր կետերը՝ հայոց բերդերի, պատմական հուշարձանների նկարագրությունը, ինչպես ինքն է ասում՝ «Ձգտելով հին փառքը հայոց սրտերում անմար միշտ պահել»: Սա հենց այն խնդուն փառքն էր, որ հիշում էր Տերյանը, որը հեգնում էր Չարենցը “Պատմության քառուղիներում”: Բերված և հետագա խոսքերում դեռ հեգնանք չկա. Ալիշանի խոսքերում անկեղծ հավատ կա հայոց հերոսական պատմության հանդեպ: Բայց հաջորդ քառյակում արդեն հստակ զգացվում են «Պատմության քառուղիներով» տրամադրությունները՝

*Ասաց - և խփեց քնարին նա մոմե մատներով դեղին,
Աչքերում ամեհի մի հուր, մորուքով մերկությունը ծածկած,-
Եվ ձայնը նրա քնարի, որ նման էր ձայնին թիթեղի,
Հնչում էր ինչպես մի հիվանդ, մահամերձ ընկած մանկան լաց:*

Ե՛վ թիթեղի համեմատությունը, և՛ հիվանդ մանկան լացը, և՛ հերոսի մորուքով ծածկված մերկությունը հուշում են Չարենցի բացասական վերաբերմունքը Ալիշանի վաստակի հանդեպ: Այո, մի կողմից՝ սեր և ակնածանք, մյուս կողմից՝ բացասական վերաբերմունք: Տարօրինակ չպետք է թվա այս հակասականությունը. այդպես էր Չարենցը վերաբերվում ողջ հայոց պատմությանը, այդպես էր վերաբերվում և Ալիշանի ստեղծագործությանը: Մի բան կարող ենք հստակորեն արձանագրել՝ Չարենցը չէր բաժանում անցյալի հանդեպ Ալիշանի վերաբերմունքը:

Այսպիսով, Ալիշանը եղավ հայկական հայրենասիրական բանաստեղծության սկզբնավորողը, իր ազդեցությունը թողեց այդ բանաստեղ-

ծության ամբողջ զարգացման վրա: Բայց հայոց պատմության նրա ընկալումը այդ նույն բանաստեղծության զարգացման ընթացքում արմատականորեն վերանայվեց հաջորդների կողմից, զուգահեռ հայոց հասարակական տրամադրություններում կատարվող փոփոխություններին:

AZAT YEGHIAZARYAN

Доктор филологических наук, профессор

РЕЗЮМЕ

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ СТИХОВ ГЕВОНДА АЛИШАНА

Ключевые слова: Новая армянская поэзия, Песни Патриарха, патриотическая поэзия, духовный патриотизм, древнеармянский язык /грабар/, новый армянский язык /ашхарабар/, Терян, Чаренц

В статье рассматриваются патриотические стихотворения Гевонда Алишана, написанные на современном западноармянском языке /ашхарабаре/. Эти стихи фактически заложили начало армянской патриотической поэзии. Автор статьи относит эти песни к книжной поэзии, имея ввиду, что Алишана вдохновляли впечатления полученные от армянской литературы. Он не был в Армении, но его любовь к родине была сильным и искренним чувством. Рассматриваются также оценки, данные Егисше Чаренцем поэзии Алишана.

AZAT YEGHIAZARYAN

Doctor of Philology, professor

ABSTRACT

ON SOME PECULARITIES OF GHEVOND ALISHAN'S POEMS

Key words: New Armenian poetry, The Songs of the Patriarch, patriotic poetry, spiritual patriotism, old Armenian language, new Armenian language, Teryan, Charents

In this article are concerned /considered/ the patriotic poems of Gevond Alishan, which are wrote in new Armenian language. These poems in fact laid the foundation to the Armenian patriotic poetry. The author of the article considers these songs as the expression of the book patriotism, because Alishan had never been to Armenia. His feelings raised from the books. But in no case this circumstance weakened the sincerity and depth of his patriotism. The article also considers the assessments given by Eghishe Charents to the poetry of Alishan.

**Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՌՈՄԱՆՏԻԶՄԻ
ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ «Հրագդան», արևմտահայ բանաստեղծություն, կենդանի ժողովրդական լեզու, «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ», Շահ Արքա, գրական հնարանք, իտալական ազատագրական պայքար, Նահապետի կերպարը, լուսին, Ավագ և Փոքր Մասիսների երկխոսությունը:

Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունը սկիզբնավորեց արևմտահայ գրականության նոր փուլ՝ աշխարհաբարով: Ոչ միայն լեզուն էր առանձնահատկությունը, նաև նոր բանաստեղծական միջոցները և ռոմանտիզմի ոգին:

Որպես արվեստագետ, գիտնական, բանաստեղծ՝ Ալիշանը ունեցել է ոչ միայն առանձնահատուկ ազդեցություն հայ մշակույթի զարգացման վրա, այլև նրա կյանքը մարդկային և բարոյական սխրագործության վեհ օրինակ էր:

Ալիշանը օժտված էր վերածննդի տիտաններին հատուկ բազմակողմանի ստեղծագործ հանճարով՝ գիտնական, բանաստեղծ, մանկավարժ, խմբագիր, հասարակական գործիչ: Ալիշանը դաստիարակվեց Մխիթարյան միաբանությունում և շարունակեց նրանց աննախադեպ գործը՝ ստեղծեց մեծաթիվ բարձրորակ գիտական, գեղարվեստական, ուսումնական գործեր, հայ մտավորականների մի քանի սերունդ դաստիարակվեց նրանց անձնուրաց աշխատանքի շնորհիվ:

Ալիշանը ստեղծագործում էր հայրենիքից հեռու, Հայրենիքը՝ հոգում: Նա ստեղծեց Հայաստանի հոգևոր պատկերը՝ գիտական և բանաստեղծական:

Ալիշանը ընդունեց Ավարայրի հերոսի անունը՝ Ղևոնդ: Այդ անվամբ հայտնի դարձավ նաև որպես բանաստեղծ: Ասում են՝ Ալիշանը երկու պաշտամունք ուներ՝ դեպի Աստված և դեպի Հայրենիք: Կարելի է շարունակել՝ դեպի գիտելիք, մայրենի խոսք, մարդ: Նրա գործունեությունը տևեց 50 տարուց ավելի:

Որքան էլ մեծաթեք են Ալիշանի գիտական աշխատությունները, համաժողովրդական փառքի նա հասավ շնորհիվ իր բանաստեղծական շարքերի: Նրա բանաստեղծական ուղին ձգվեց մոտ տասը տարուց ավել, XIX դարի 40-50-ական թվականները: Հետագա ժամանակահատվածը նա

նվիրեց գիտական և մանկավարժական աշխատանքին: Ալիշանը գրական փորձեր կատարեց և արձակում, որի լավագույն օրինակն է երկհատոր «Յուշիկք Հայրենեաց հայոցը» (1869–1870):

Միխիթարյանների գործունեությունը միաբանության կազմավորման առաջին օրից իսկ ուղղված էր հայոց պատմության և մշակույթի հարուստ ժառանգության ի մի հավաքմանը, ուսումնասիրմանը և պահպանմանը: Երեք դար ի վեր հավաքվեց հայ ձեռագրերի եւ աշխատությունների հսկայական գրադարան (շուրջ չորս հազար միավոր), կատարվեցին բազմաթիվ թարգմանություններ:

XIX դարից ի վեր Եվրոպայում նպատակաուղղված բնույթ է ստանում ժողովրդական բանահյուսության, ազգագրական ժառանգության ուսումնասիրության գործը: Ռոմանտիզմի ներկայացուցիչները նորովի մշակեցին ազգային տեսությունը, սկզբնավորեցին ազգագրական ժառանգության ուսումնասիրությունը: Ալիշանը հաճախ էր ճանապարհորդում Եվրոպա և քաջ ծանոթ էր արդի մշակույթային և գիտական նորություններին: Նա շարունակեց իր նախորդների աշխատանքը: Եռանդագին հավաքում էր հայ միջնադարյան ժողովրդական երգերը: Ալիշանի թարգմանչական գործունեությունը լուսավորչական նպատակներ էր հետապնդում՝ ծանոթացնել եվրոպական հասարակությանը հայ ժողովրդական բանահյուսության գանձերին: 1852 թ. այդ ժառանգության լավագույն նմուշները նա հրատարակեց առանձին գրքով – հայերեն բնագրերը և անգլերեն թարգմանությունները: Միաժամանակ Ալիշանը հայ ընթերցողին եվրոպական և ամերիկյան քնարերգության նմուշներն է ներկայացնում: Անգլիական և ամերիկյան բանաստեղծության նմուշների «Քնար ամերիկյան» անթոլոգիայում զետեղում իր թարգմանությունները:

1857-1858 թթ. լույս տեսավ Ալիշանի բանաստեղծությունների հինգ հատորյակը. նրանց մեծամասնությունը գրված էր գրաբարով: Հիմնական թեմաները՝ բանաստեղծի խոսքը դեպի Աստված, կյանքի և հոգու մասին մտորումներ, բնության նկարագրումներ, հայրենասիրական քնարը ի հայտ են բերում յուրահատուկ տաղանդ:

Սակայն առանձնակի դեր վիճակվեց հայ գեղարվեստական խոսքի պատմության մեջ Ալիշանի «Նահապետի երգեր» երգաշարին: Այն նշանավորեց ռոմանտիզմի մուտքը հայ գրականություն: Լավագույն բանաստեղծությունները՝ «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ», «Հրագդան», «Մասիսու սարերն», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանայ», իրենց արժանի տեղը գտան հայոց քնարի գանձարանում և մի քանի սերնդի համար հոգևոր աղբյուր հանդիսացան:

1847 թ. երբ լույս տեսավ «Նահապետի երգեր»-ը, եվրոպական ռոմանտիզմը ամփոփեց իր զարգացման հիմնական փուլերը՝ իրականու-

թյունից առեղծվածային փախուստից մինչ ըմբոստացում, հեղափոխական ընդվզում:

Ալիշանին քաջաձանոթ էր ռոմանտիկների քնարերգությունը, ինչպես նաև նրանց տեսաբանական աշխատությունների հիմունքները՝ հոգևորի գերակայությունը մարմնականի և կենցաղի հանդեպ, հավասարության և ազատության գաղափարները, իդեալիստական պոռթկումները դեպի անսահմանը: Ռոմանտիկների այս դրույթները համահունչ էին Ալիշանի հայացքներին և նրա հոգևոր կերպարին: Ալիշանը գրում է՝ «Անմահությիւն <...> ո՛վ սքանչելի և ամենապայծառ կնիք մարդկութեան. այն ձայնէն կիմանամ, որ մարդուս ամեն կատարելութիւնների պատճառ ու նպատակը սա է եղել...»¹.

Բայց ինչո՞ւմն էր այն յուրահատկությունը, որը ապահովեց այս շարքի լայն ժողովրդականությունը: Նախ և առաջ դա հայ քնարերգության կտրուկ շրջադարձն էր, քանզի «Նահապետի երգեր» շարքը գրված էր աշխարհաբարով, որը հասկանալի էր և մոտ ժողովրդին, իսկ գրաբարը արդեն հեռացել էր խոսակցականից: «Նահապետի երգերի» հրատարակման տարեթիվը համարվում է արևմտահայ քնարերգության սկիզբը:

Սակայն աշխարհաբարի կիրառումը որպես լեզվական նորաձևություն էական նշանակություն չէր ունենա, եթե Ալիշանը իր բանաստեղծություններում նոր գեղագիտական սկզբունքներ չներմուծեր: Հենց այդ անհրաժեշտությունը, ըստ երևոյթին, դրդեց հեղինակին դիմել կենդանի ժողովրդական լեզվին: «Հայոց աշխարհիկ», «Հայ հայրենիք», «Ողբամ զքեզ, հայոց աշխարհ», «Պլպուլն Ավարայրի» և այլ քերթվածների բազմաթիվ արտատպումները փաստում էին, որ այդ և հեղինակի այլ բանաստեղծություններ լայն ճանաչում էին ստացել:

Ալիշանը ներկայանում է որպես 17-րդ դարի սկզբին ապրած Նահապետ անունով բանաստեղծ: Ալիշանը, դիմելով այդ հնարանքին, խնամքով թաքցնում է իր իսկ հեղինակությունը, ներկայացնելով հրատարակվող ստեղծագործությունների հեղինակին ինչպես անհայտ մի բանաստեղծ, ում գործերը ինքը՝ Ալիշանը, հայտնաբերել է միջնադարյան ձեռագրի Տաղարաններում: «Բազմավեպի» էջերում նա փորձ է կատարում ստեղծել Նահապետի՝ Շահ Աբբասի ժամանակների բանաստեղծի կենսագրությունը: Ինչու է Ալիշանը դիմում այդ քայլին: Դա ոչ միայն զուտ ծածկանուն է, այլ նաև գրական հնարանք: Գրականության պատմության մեջ հայտնի գեղարվեստամիջոց է, երբ հեղինակի անունից հանդես է գա-

¹ **Զայյան Մ.** Մխիթարյան մենաստանում // Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974, էջ 85:

լիս մեկ այլ դեմք, ինչպես Ալ. Պուշկինի հայտնի «Հանգուցյալ Իվան Պետրովիչ Բելկինի վիպակները», կամ Ռուդիյ Պանկոն Ն. Գոգոլի «Երեկոներ Դիկանկայի մերձակա խոտորում»։ Ռափայել Պատկանյանը ևս իր ստեղծագործություններից մեկը ներկայացրեց որպես պատահականորեն հայտնաբերված ձեռագիր։

Ալիշանի դեպքում, այնուամենայնիվ, չնայած այդ հնարանքին, հեղինակի անունը ստույգ հայտնի էր, գեղարվեստական խաղը գրական հնարանքի սահմաններից դուրս չշարունակվեց։ Կարելի է մի քանի ենթադրություն անել իր անունը չհրապարակելու կապակցությամբ։

Այդ ժամանակաշրջանում հայ մամուլում բուռն քննարկումներ էին ծավալվել՝ գրաբարն է, թե աշխարհաբարն է լինելու գրական լեզու։ Մխիթարյան միաբանության անդամները ստեղծագործում էին գրաբարով, անվերապահորեն նախապատվությունը տալիս էին հին հայերենին։

Ալիշանի ստեղծագործության հետազոտող Ս. Շտիկյանը հետևյալ կերպով է մեկնաբանում բանաստեղծի՝ այլ անունով ստորագրելը։ Քսանյութամյա Ալիշանը նոր էր բանաստեղծական ասպարեզ մուտք գործում և չէր կարող ընդդիմանալ իր իսկ միջավայրին։ Այնպիսի խոշոր գիտնականների, ինչպիսին էին Ավգերյանը և Բագրատունին, հեղինակությունը խոչընդոտում էր բացահայտ հայտարարել իր դիրքորոշումը։ Գրականագետը մեկնաբանում է՝ «Իր գրական գործունեության առաջին շրջանում Ալիշանը շարունակեց նախորդների գեղարվեստական-կլասիցիստական ավանդները և բազմաթիվ գործեր գրեց միանգամայն խրթին գրաբարով։ Սակայն իր երկրորդ շրջանում, հակադրվելով ավագ սերնդի ներկայացուցիչներին և գրելով իր գործերն աշխարհաբարով, Ալիշանն, այսպիսով ուժեղ հարված հասցրեց գրական այդ ուղղությանը»¹։

Սակայն դա հարցի միայն արտաքին կողմն է, որը այնուամենայնիվ չի բացահայտում ստեղծագործական գործընթացի ներքին միտումը։ Մեր կարծիքով՝ բացահայտ է ներքին պատճառաբանությունը՝ զուտ *գեղարվեստական*՝ պայմանավորվածություն ունեցող, նոր ռոմանտիկական մտահղացում։ Գեղարվեստական մոտիվացիան կարևորագույնն է արվեստագետի գեղագիտության մեջ, և սխալ է արտաքին գործոններով նրա միտումների բացատրությունը, ամենայն դեպքում, դրանք չեն որոշիչը։

Թեպետ բանաստեղծ-վանական Ալիշանը իր կյանքի ընթացքում այդպես էլ մնալով գրաբարի, իր կարծիքով՝ «արքայական և վսեմ» լեզվի հետևորդ, համարելով, որ աշխարհաբարով չի կարելի արտահայտել հայ

¹ Շտիկյան Ս. Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1967, էջ 103։

գրականության գանձերի գեղեցկությունը, այնուամենայնիվ, խոր զգալով ժամանակի միտումները, կանխագգաց և արտահայտեց պարզ, ժողովրդին հարագատ լեզվով հոգեկից և սրտալի զգացմունքներ:

Պատմական ընթացքն էլ էր նպաստում ժողովրդի ինքնագիտակցման զարթոնքին: XIX դարի կեսերը նշանավորվեցին Իտալիայում ծավալված հեղափոխական շարժամբ, ազատության և հավասարության գաղափարները կապված քաղաքացիական վերակառուցման հետ գերակշռեցին հասարակական տրամադրություններում:

Ալիշանը հափշտակված էր իտալական առաջավոր ուժերի պայքարի պաթոսով և հումանիստական գաղափարներով, իր մտքերը ամբողջովին ուղղված էին դեպի հայ ժողովրդի ազատագրման եւ երջանիկ ապագայի գաղափարները: Այդ էր դրդապատճառը, որ բանաստեղծի նոր խոսքը, հագեցած նորագույն յուրահատուկ զգացմունքներով, ձգտումներով և տենչերով, պատված ռոմանտիկական լուսապսակով՝ արտահայտվեց գտավ ժողովրդական լեզվով: «Բազմավեպի» էջերում ներկայացնելով Նահապետին որպես իրական հեղինակ՝ Ալիշանը իր հերոսին օժտում էր հատուկ խորհրդավորությամբ, իսկ տենչը դեպի միջնադարյանը համահունչ էր ռոմանտիզմի ձգտումներին: Նահապետի կերպարի բնույթը պայմանավորված է Ալիշանի ստեղծագործությունների կառուցվածքային առանձնահատկություններով, համեմատ կլասիցիստական պոեզիայի կարծրացած պատկերների՝ այն անհատական է, բազմակողմանի՝ գաղափարապես, և զգացմունքներով՝ հագեցված: Հեղինակի կերպարը հորինված է, բայց օժտված ռեալիստական հատկանիշներով, ինչը վերստին համապատասխանում է ռոմանտիկական ըմբռնումներին: Մենք չգիտենք՝ որտեղից է նա եկել, իր կյանքի դրվագները և այլն: Կարևորը նրա սխրանքների, պայքարի, ինքնահրաժարման հոգևոր պատրաստակամությունն է:

Հարկ է հատուկ նշել, որ Ալիշանի ստեղծագործությունը, հանձին նրա «Նուագներ» ժողովածուի, հետաքրքրություն է ներկայացնում նաև աշխարհասփյուռ ժողովրդի գիտակցության պատկերումով: Չէ՞ որ Նահապետի կերպարում մարմնավորվել է հայ պոեզիայի հավերժ, հատուկ դիրք ունեցող *պանդուխտի* կերպարը: Այն ի հայտ է բերում բանաստեղծի հոգևոր դրսևորումները, նրա՝ հայրենի հողից կտրված վտարանդի զգացմունքները: Բանաստեղծի կերպարում համախմբվել և հատվել են ժամանակի և տարածության շերտերը, նրա ցավագին սիրտը հորդում է հայի տանջահար հոգու թախծի և բաժանման դարավոր երգերը:

Հեղինակային խոսքը առաջին դեմքով արտահայտելը, որը նախկին կլասիցիստական ստեղծագործությունների օբյեկտիվ երրորդ դեմքի համեմատ՝ ազատ արտահայտում է ներքին զգացմունքներ, հայրենիքի մա-

սին մտորումներ՝ բանաստեղծական կարևոր նորարարություններից էր, նշանավորում էր ռոմանտիկական պոեզիայի ոգին: Բանաստեղծական տեքստի նման կառուցվածքը, հիմնված անակնկալի, հեղինակի տեսակետի դինամիկ շարժմանը, այլաշխարհի ներթափանցմանը, կարելի է համադրել Վիեննայի ռոմանտիկների կողմից մշակված ֆրագմենտի սկզբունքի հետ: Երգաշարքի բանաստեղծություններում Ալիշանը ներբերում է երկխոսական կառուցվածք, որը գրեթե չէր օգտագործվում կլասիցիստների ստեղծագործություններում: Դա այն նորարարություններից էր հայ քնարերգությունում, որը առանձնացրեց Ալիշանին նրանցից և հարազատացրեց մի կողմից ժողովրդական քնարերգությանը, մյուս կողմից ռոմանտիկներին: Նահապետի կերպարը համաձուլում է գեղարվեստական հյուսվածքը, ցայտուն և կենսական վավերականություն հաղորդում բանաստեղծություններին, գեղարվեստական հնարավորություն է տալիս հանդես գալ հայրենի հողի տառապանքներն արտահայտող պանդուխտի անունից: Ալիշանը կիրառում է, ժամանակակից լեզվով ասած, կինեմատոգրաֆիական հնարք՝ ընթերցողը ակնհայտորեն ներկա է պատմվածքի հյուսվածքում, Նահապետի հետ դիտարկում է պատմական դարաշրջանները, իր աչքի առջևով անցնում են հայրենի բնության պատկերները:

Բանաստեղծը դուրս է գալիս կլասիցիզմի ժանրային և կոմպոզիցիոն կադապրներից, ողբերգական և հերոսական տեսարանները լի են լիրիկական անկեղծ զգացմունքներով և ժողովրդի ճակատագրի ապրումներով: Էպիկական և քնարական տարրերը ազատորեն միահյուսվում են, լայն տարածք տալով անկաշկանդ զգացմունքներին: Բանաստեղծը ձգտում է ստեղծել դարերի խորքերից հայտնվող երգչի կերպարը՝ Նահապետը կապում է անցյալը և ներկան: Ալիշանը ստեղծում է յուրահատուկ ժամանակից վեր գեղարվեստական տարածություն, որում հեթանոսական արժեքները պետք է մոտ և գրավիչ լինեին ժամանակակից ընթերցողին: Բանաստեղծը վերակենդանացրեց ժողովրդի պատմական հիշողությունը: Վերածնվում են առասպելաբանական շերտերը, ուստի նրա քերթվածները հագեցված են պատմական ռեմինիսցենցներով: Նման ստեղծագործական մոտեցումը նոր չէ. դեռ եվրոպական և հայ կլասիցիստները, որոնք ոգեշնչված էին անտիկ իդեալներով, դիմում էին հունական և հռոմեական ժառանգությանը: Հայկական կլասիցիզմը բարու և ճշմարտության աղբյուրն էր որոնում Հայոց պատմության իրադարձություններով հարուստ անցյալում: Մակայն, դիմելով բացառապես անցյալի պատմության հերոսական էջերին, նրանց ստեղծագործությունում Հին Հայաստանի կերպարը դառնում է կարծրացած գեղագիտական իդեալ:

Ռոմանտիկների ստեղծագործությունում պատմական անցյալը կենդանանում է ապստամբ ռոմանտիկ հոգու մաքառումներով: Ռոմանտիկ-

ների գեղարվեստա-փիլիսոփայական կոնցեպցիաները հարստացան տիեզերական ունիվերսալիզմի նոր կռահումներով, հաստատում էին անհատի ինքնարժեքը, որը ընդունակ է վերափոխել աշխարհը: Ռոմանտիկները առաջինը մշակեցին ազգային մշակույթի գիտական տեսությունը: Սակայն եթե եվրոպական ռոմանտիզմի հիմնական տիպաբանական գիծը ըմբոստ անհատի պայքարն էր լճացած հասարակության դեմ, ապա հայ գրական իրականությունում դա հայ ժողովրդի պայքարն էր ստրկության դեմ:

Մերգեյ Սարինյանը, հայկական ռոմանտիզմի տիպաբանական գծերը վերլուծելով, գրում է. «Իհարկե, պատմական հայրենասիրությունը հայ իրականության մեջ ռոմանտիզմի հայտնությունը չէր, քանի որ, ի տարբերություն եվրոպական կլասիցիզմի, որն իր հայացքը ուղղել էր դեպի հին Հունաստանն ու Հռոմը, հայկական կլասիցիզմը դիմում էր հայոց պատմության հնագույն դրվագներին: Սակայն հայկական ռոմանտիզմը նոր որակ հաղորդեց պատմական հայրենասիրությանը: <...> Եթե կլասիցիզմը երբեմնի էթնիկական հզոր Հայաստանի անկումը բացատրում էր Աստվածային նախախնամությամբ և նրա վերածնունդը նորից վերագրում Աստծու կամքին, ապա ռոմանտիզմը հայոց պատմության մեջ հայտնաբերում է մաքառման ներուժը և դարերի փորձն իմաստավորում ազատագրական պայքարի գաղափարով»:¹ Հայկական ռոմանտիզմի նորարարությունների շարքին է դասում նաև քննադատական հայացքը դեպի անցյալը, քաղաքացիական ոչ կարծրացած հավերժական բարոյական սկզբունքը, այլ կոնկրետ պատմական նշանակությամբ օժտելով մարդկային զգացմունքների աշխարհը:

Հայ հայրենասիրական պոեզիայի բնորոշ գիծն է իր գեղարվեստական հավասարագործությունը քնարերգությանը, հայրենիքի թեման այստեղ մշակվում է նույն մտերմականությամբ, սրտակցությամբ, հուզմունքով և վերապրումով, ինչպես և սիրո և բնության քնարերգական օնթոլոգիական թեմաները: Հայրենիքի պատկերը անձնավորվում է, օժտվում սիրեցյալի, վեհացած իդեալի դիմագծերով, որին ուղղված են բանաստեղծի մտորումները և ակնկալիքները:

Ալիշանի հայրենասիրական քնարերգության բազում մոտիվներ հայ բանաստեղծների համար հետագա շարունակություն ունեցան: Ի շնորհիվ կոմպոզիցիոն նորարարությանը՝ բանաստեղծության երկխոսական կառուցվածքին, Ալիշանի որոշ հանրաձանոթ ստեղծագործություններ հնչեցին հատկապես սրտալից: Քնարերգական հերոսը դիմում է գետին, լուս-

¹ Սարինյան Ս. Հայոց գրականության երկու դարը, Գիրք առաջին, Երևան, 1988, էջ 207–208:

նին, բլբուլին, Մասիսին. այդպիսին են նրա ճանաչում գտած «Հրագդան», «Մասիսի սարերն», «Լուսնկայն գերեզմանաց հայոց» բանաստեղծությունները, «Պլպուլն Ավարայրի» պոեմը: Հետագայում այս կառուցվածքը հիմք հանդիսացավ մի շարք այլ բանաստեղծությունների համար, որոնք դարձան հայ քնարերգության դասական նմուշներ՝ Պատկանյանի «Արաքսի արտասուքը», Բաբայանի «Ձայն տուր, ով՛ ծովակ» և այլք: Բանաստեղծական բնագիրը վերստեղծում է ոչ թե կլասիցիզմին բնորոշ վերացական իդեալացված իրականություն, այլ կոնկրետ աշխարհի պատկերներ, հագեցված վառ նկարագրումներով և գունագարդ դյուրահույզ էպիտետներով և բացականչություններով: Դիմելով լուսնին իր «Լուսնկայն գերեզմանաց հայոց» ստեղծագործության մեջ, բանաստեղծը հիանում է նրա գեղեցկությամբ: Բանաստեղծական խոսքը՝ հարուստ և գունագեղ է հրաշք բնապատկերը՝ լուսնի ճամփան նկարագրելիս՝ «աստվածավառ դու լապտեր», և «քելն՝ արծաթեն հյուսած», «կաթ մի ամանիդ յիս թափած», «Աստուծո ճախարակեն»: Հեղինակի խոսքը ոգևորվում է քնարական վերապրումներով, միաժամանակ այստեղ զգացվում է իրականության շունչը, բնության գեղեցկությունը հակադրվում է դառն իրականությանը:

Հաջորդ մոտիվը (բանաստեղծական հնարքը) արտահայտվում է «Հրագդան» բանաստեղծությունում, ուր նկարագրվում է հերոսի վերադարձը դեպի հարազատ մոխրացած օջախ: Հետագայում այդ մոտիվը բազմիցս մշակվում է XIX, XX դարի հայ բանաստեղծների ստեղծագործություններում, իսկ Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքում իրագործվում որպես հիմնականառույց սկզբունք: Ալիշանի «Հրագդանը», լինելով բանաստեղծի ամենահայտնի ստեղծագործություններից մեկը, իր տրամադրությամբ հատկապես դրամատիկ է և հնչում է ինչպես կամերային լիրիկական խոստովանություն:

Ալիշանի ստեղծագործության լեյտմոտիվն է տխուր ներկայի և հերոսական անցյալի հակադրությունը, անցյալի, որը հույս և հավատք էր ներշնչում ապագա վերածնման, անսահման սիրո արտահայտումներ դեպի հայրենիքը, լինի նա հերոսական թե թշվառ, գեղեցիկ թե փլատակված վիճակներում:

«Մասիսու սարերն» բանաստեղծությունում ծավալվում է ոչ թե հռետորական հարց և սպասելիք պատասխանի երկխոսություն, այլ երկու գազաթների — Ավագ և Փոքր Մասիսի զրույց: Նրանք վեճի են բռնվում, որտեղ Փոքր Մասիսը հանդես է գալիս ընդդիմադիր Ավագին: Հարց է բարձրացվում, որը մտատանջել է հայերի մի քանի սերունդների՝ ինչպես է հիմնավորց և փառապանծ ռազմական և մշակութային անցյալ ունեցած երկիրը հասել ոչնչացման եզրին: Այդ հարցը նոր սրությամբ ի հայտ եկավ XX դարի սկզբին Սիամանթոյի և Վարուժանի, Վահան Թեքեյանի և Ռու-

բեն Սևակի ստեղծագործություններում, երբ փորձ էր կատարվում ժողովրդի պատմական ճակատագիրը, քրիստոնեության դերը նորովի իմաստավորել:

«Մասիսու սարերն», ինչպես և ամբողջ երգաշարքը, լի են լավատեսությամբ, հավատքով և պայքարի ոգով: Փոքր Մասիսի հոռետեսությամբ, թե «Շատ փառք ունեինք, հիմիկ ի՞նչ ունինք» և «Էլ գոյություն չունի Հայոց աշխարհը», Ավագը հակադրում է՝ «Ես իրք կու տեսնեմ քանց քեզ առավել, / Երեսեն Հայոց փառքն չէ կըտրել»: Նման չարափախության, թշվառության պատճառն է՝ ըստ Ավագ Մասիսի, բռնությունը և անմիաբանությունը հայերի միջև: Եվ «Մասիսու սարերն»-ի հեղինակը հորդորում է.

*Երբ յիշեն զԱստուած, զիրար այլ յիշեն,
Միաբանութիւն ու սէր մէջ քաշել,
Թողուն խարդաւանքն ու զանձնասէր շահ,
Ընին իրարու օգնող ու վըստահ,
Չանեն չար մեկում՝ ուղեն ըզբարին,
Միրով համբերեն, հուսով աշխատին.
Այնժամ աս՝ ա, փոքր եղբայր, ո՞նց թըվի,
Ընի՞ թէ Հայոց ճրագիկն այլ վառի:*

Այիշանի համար բարձրագույն արժեքը Հայրենիքն է: Բանաստեղծը հրաժարվում է գոյության այլ ձևերից, բացի հայրենիքին ծառայելուց: Նա չի կարողանում սիրել միայն երգը, իր մուսան ծառայում է միայն իր հայրենիքին:

Այիշանի բանաստեղծական ոճը արտահայտվում էր ամենուր. նա սիրում էր Բայրոնի բլրան ձիթենու տակ շատ երկար դիտահայել Ադրիատիկի ալիքներին, կարդալ, մտորել. ոչ ոք այդ պահին չէր անհանգստացնում Հայոց Նահապետին:

Իր «Շիրակի» նոր ավարտված ձեռագիրը տալիս է Հայաստան մեկնող միաբանության քահանաներից մեկին՝ խնդրելով Ախուրյան գետի ալիքներին հանձնել ձեռագիրը իբրև ընծա հեռավոր հայրենիքին: Նա երկարատև զրույց էր վարում հայրենակիցների հետ, մտորելով հարագատ երկրի ճակատագրի մասին: Մի զրույցի ժամանակ նա սարսափած դեմքը ձեռքերով ծածկեց և բացականչեց կրկնելով՝ «ամեն բան կործանվելու վրա է. ժողովուրդ, վանքեր, հնություններ»:¹ Բանաստեղծի նախազգացումները շատ դեպքում մարգարեական դարձան:

Մանուկ հասակից Ղևոնդ Այիշանը ապրեց Իտալիայում, եղավ տարբեր եվրոպական երկրներում, բայց այդպես էլ Հայաստան չհասավ:

¹ **Զայյան Մ.** Մխիթարյան մենաստանում // Այիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974, էջ 85:

Ժամանակակիցներից մեկը հիշատակում է՝ «Ուխտիս ներկա աբբահայրը արևելք ուղևորվելու օրը՝ ամբողջ միաբանությանս ի միասին կերթա մինչև շոգենավ: Ամենքն շոգենավ կբարձրանան, սակայն հ. Ալիշանը վարը նավակի մեջ կմնա. չուզեր վեր բարձրանալ, ըսելով, որ մի անգամ պատրաստվել էր հայրենիք երթալու ու պատճառավ մը այդ ուղևորութենեն ետ կեցած ըլլալով, շատ կցավի և նույն օրեն կորոշե երբեք շոգենավ չմտնել»¹: Առաջին հայացքից, այս զարմանալի տարօրինակությունը բացատրվում է նրանով, որ Ալիշանի ցավը հայրենիքի նկատմամբ այնքան մեծ էր, որ բանաստեղծը չէր հաշտվում իրողության հետ: «Նա իբրև ճշմարիտ ՆԱՀԱՊԵՏ մը, — գրում էր Ժամանակակիցը, — ամենքես ավելի կզգար ու կուլար այն բոլոր սարսափելի աղետները, որոնք արյամբ ու մոխիրով ծածկեցին ամբողջ երկիր մը, և երկար դարերու հարվածներուն տոկացող ազգ մը օրհասի ճգնաժամերուն հասուցին»²:

Մի այլ ականատեսի խոսքերով՝ «Նա իսելագար կլիներ, եթե իր աչքով տեսներ այժմյան Հայաստանը՝ աղքատացած, հարստահարված, մոխրացած. իր աչքի առջև միշտ ներկա էր հինավուրց Հայաստանը՝ աշխույժ, գեղեցիկ, ազատ, և նա չէր ծածկում, որ բիրտ իրականությունը այդ տեսիլքը ավերեր»³:

БУРАСТАН ЗУЛУМЯН

Кандидат филологических наук

РЕЗЮМЕ

ОТЕЦ ГЕВОНД АЛИШАН У ИСТОКОВ АРМЯНСКОГО РОМАНТИЗМА

Ключевые слова: «Раздан», западно-армянская поэзия, живой народный язык, «Я оплакиваю тебя, армянский мир», Шах Аббас, литературный вымысел, итальянская освободительная борьба, образ патриарха, луна, диалог Старшего и Малого Масисов.

Гевонд Алишан вошел в историю армянской литературы как поэт, чье творчество положило начало новой западноармянской поэзии на светском разговорном армянском языке. Его «Песни Наапета» (1848 г.). Не только язык стал особенностью этого цикла, но и новая поэтика и дух романтической поэзии.

¹ **Երեմյան Ս.** Ղևոնդ Ալիշան // Ալիշանը Ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974, էջ 131:

² **Թորոսյան. Հ.** Ղևոնդ Ալիշան // Ալիշանը Ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974, էջ 106:

³ Մեջբերում ըստ **Ջրբախյան Զ.** Поэзия скорби и борьбы // Армянские поэты Нового времени, Л.: Сов. Писатель, 1983, с. 14 (Сер. Библиотека поэта). Թարգման. իմն է:

BURASTAN ZULUMYAN
Candidate of Philology

ABSTRACT

**FATHER GEVOND ALISHAN AS THE PATHMAKER OF ARMENIAN
ROMANTICISM**

Key words: "Hrazdan" poem, Western Armenian poem, a living folk language, "I mourn for you the Armenian world", Shah Abbas, literary device, Italian liberation struggle, the image of Nahapet (Ancestor), the moon, the dialogue of Sis (small Masis) and Masis (Big Masis).

Alishan The "Songs of the Ancestor" published in 1847 marked the beginning of a new West-Armenian literature, at the same time the introduction of Romanticism into Armenian literature. The first novelty of that series was the world language, which was used for the first time as a poetic language. The aesthetic features of European romanticism are typical of this series: dialogue, the author's speech from one face, cryptography as an artistic invention, coincidence of the reader and the author's views, lyrical imagery, rebellious rebellion of the individual against the gloomy reality of the people's liberation struggle.

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ.
ՄԱՐԴԸ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Բանալի բառեր՝ Ղևոնդ Ալիշան, Վենետիկի Մխիթարյաններ, ռոմանտիզմ, քնարերգություն, աշխարհաբար, ազգային երգ, «Երգք Նահապետի», պոեմ, ժամանակակիցներ, հուշեր:

19-րդ դարասկզբին բարձրացող հայ ազգի հոգևոր պահանջների և հայկական գաղափարաբանության ստեղծման ճանապարհին անգնահատելի էր Մխիթարյանների կատարած գրական-պատմական դերը: «Ամենից առաջ նրանք՝ այդ բանասեր, լեզվագետ, աշխարհագետ, պատմաբան գիտնականները, օժտված նաև գրական ձիրքով, հարկ համարեցին իրենց գործն սկսել անցյալի վերակենդանացումից: Նրանք դարերի փոշիների միջից հանեցին, խմբագրեցին, ծանոթագրեցին և ընթերցողի առջև դրեցին հայ ողջ դպրությունը, պատմագրությունը, մասամբ էլ՝ պոեզիան: Դա վիթխարի լիցք տվեց ժամանակակիցներին, ստացավ ժամանակակից շեշտ, ջերմացրեց հայ մարդկանց, բորբոքեց անդեկ ու անգլուխ սերնդին»¹, - այսպես անաչառ է գնահատում Մխիթարյանների դերը ակադ. Հր. Թամրազյանը: «Բազմաթիվ էին թե՛ հայերը և թե՛ վենետիկցիները, որոնք օգնեցին Մխիթարին ձևափոխելու փոքրիկ կղզին աշխարհում հավասարը չունեցող մի մենաստանի, որն ի պատիվ Վենետիկի՝ պետք է դառնար տարագիր ազգի հիշողությունների և հույսերի սուրբ նստավայրը: Սակայն այն ոչ թե հուշերի թանգարան էր գիտնականների և պատմաբանների համար կամ պայծառ ապագայի սպասող անգործության մատնված մի վայր, այլ գիտության կենդանի և կենսուրախ մի կենտրոն, որն ի վիճակի է ապրեցնել լեզուն, գրականությունը, ավանդույթներն ու սովորույթները՝ որպես ցրված ազգի միացման բաղադրիչներ»², - իրենց հերթին նկատում են իտալացի գիտնականներ Ալերամո Հերմետոն ու Պաոլա Կոնի Ռատտի դի Դեզիոն:

19-րդ դարի առաջին երեսնամյակն առանձնահատուկ էր հայ գեղարվեստական գրականության համար. մի կողմից բուռն զարգացում էր

¹ Թամրազյան Հր., Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 727-728:

² Հերմետո Ալերամո, Ռատտի դի Դեզիո Պաոլա Կոնի, Հայերի Վենետիկը. Տասնվեց դար պատմության և առասպելի միջով, Երևան, 2000, էջ 235:

ապրում կլասիցիզմը՝ զուտ հայկական ինքնօրինակությամբ (սեփական ազգային անցյալի խոր ընկալում, հայկական գաղափարաբանության հատուկ շեշտադրում, մեթոդին բնորոշ որոշ կաշկանդումների անտեսում...), մյուս կողմից՝ գրականություն էին թափանցում իրական կյանքի ու հոգեբանության, աշխարհիկ տրամադրությունների անհրաժեշտ անդրադարձները: Այսինքն՝ կրոնահայրենասիրական ու բարոյախրատական մոտիվներին նոր ժամանակների հրամայականով միախառնվում էին քնարական ու մարդկային կենդանի տրամադրությունները: Դանդաղ, բայց հաստատուն ռիթմերով հայոց բանաստեղծություն էին թափանցում սենտիմենտալ ու ռոմանտիկական ոճերը. անտիկ՝ հունա-հռոմեական գրողներին ու եվրոպական կլասիցիստ հեղինակներին զուգահեռ՝ հայ ընթերցողին արդեն թարգմանաբար ներկայացվում էին Շեքսպիրն ու Բայրոնը, Կարամզինն ու Ժուկովսկին, Բեռնարդեն դը Սեն Պիեռը... Եվ բնավ պատահական չէր, որ երբ 1858-ին լույս տեսավ հայկական կլասիցիզմի բարձրագույն արտահայտությունը՝ Արսեն Կոմիտաս Բագրատունու «Հայկ Դիւցազն» պոեմը, նույն թվականին հրատարակվեց նաև Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի»՝ սենտիմենտալիզմի, ռոմանտիզմի ու ռեալիզմի յուրօրինակ շաղախով ստեղծված վեպը: Ինչպես իրավացիորեն նկատել է Լևոն Մանվելյանը, «հայկական միտքը երկնային բարձունքից իջնում է երկիր, վերացականը իր տեղը զիջում է իրականության, կոնկրետ փաստերին, և մարդկային հոգին ազատվում է կապանքից: Գրական նոր ուղղությունը իր հարցասիրության գլխավոր առարկան դարձնում է մարդը, մարդու զգացումը, միտքը և կենցաղը»¹:

Դեռևս Խաչատուր Աբովյանից առաջ գրական հորիզոնի վրա արդեն բարձրացել էին երկու տաղանդավոր բանաստեղծներ՝ Հարություն Ալամդարյանը և Մեսրոպ Թադիաղյանը, որոնք նոր արահետներ բացող առաջամարտիկներ էին: Նրանց ստեղծագործության մեջ ակնհայտորեն երևում են կյանքի ու արվեստի առնչակցության, ձևի ու բովանդակության ներդաշնակության ստեղծման ճանապարհի դժվարությունները և նախաաբովյանական շրջանի գրական ծանր երկունքը: Եվ դա բնական էր. նոր կյանքն իր ուրույն խնդիրներն էր դնում գրականության առջև, ստիպում գնալ անկոխ ճամփաներով: Ալամդարյանն ու Թադիաղյանը նոր արահետներ էին փնտրում դեպի ճշմարիտ արվեստը և որոնում մայրուղին: Նրանք թեև չդարձան հայ նոր գրականության դասական ներկայացուցիչներ և չկարողացան նախապատրաստողի պատվավոր դերից բարձ-

¹ Մանվելյան Լ., Ռուսահայ գրականության պատմություն, Ա., Ալեքսանդրապոլ, 1909, էջ 22-23:

րանալ հիմնադրի հավերժական աստիճանին, բայց և անժխտելի է այս երկու ստեղծագործողների կատարած խոշոր դերը հայ մշակույթի ու հանրային-քաղաքական կյանքի զարգացման ճանապարհին:

Իսկ հետո 1850-60-ականների հանրային-քաղաքական հեղափոխականների ու ազգային զարթոնքի մթնոլորտում ծնվում է ազգային երգը. պոեզիայի մեջ սկսում են մորմոքել հայրենիքի կարոտը, բոցավառվել հայկական ոգու հուրը, ծայր են առնում հուսավառ երազները... Նոր գրականության մեջ ձևավորվում է ռոմանտիկական տարերքը, և բարձրանում է խորհող, երագող ու մաքառող հերոսը: Հայ պոեզիան նորից միանում է մարդկության համանվագին. եվրոպական որոշ ժողովուրդների պես հայերը ևս սկսում են որոնել քաղաքական տխուր հանգամանքների բերումով ընդհատված ազատության ճանապարհները:

Ղևոնդ Ալիշանը (1820-1901): Նա վիթխարի հետք է թողել հայ սերունդների հոգևոր մաքառման ճանապարհին, հերոսական շնչով կամրջել է հայոց անցյալն ու ներկան: Հայաստանը երբեք չտեսած, բայց նրա յուրաքանչյուր ծառ ու թուփ հրաշալի ճանաչող Նահապետի պոեզիայից է լիցք ստացել Մկրտիչ Պեշիկթաշյանը՝ 1860-ականներին հյուսելով իր «Զեյթունյան» երգերը, այդ պոեզիան վերստին բորբոքվել է հաջորդ դարի սկզբին՝ նոր թափ ստանալով Սիամանթոյի ու Դանիել Վարուժանի երգերում: «Ալիշան, Պեշիկթաշյան,- հետագայում պիտի գրեր Վարուժանը,- երկու մեծ համադրություններ... Մեկուն Ոգին, արծվի թևերով Ս. Ղազարին, մյուսին Ոգին աղավնիի թռիչներով Միջագյուղեն ճամփա ելան դեպի մայրենի Երկիրը, հոն մարտիրոսված ժողովրդի մը ալեկոծ օվկիանին վրա զիրար գտան, ճանչցան ու համբուրվեցան: Մերթ թառած հայրենի կտուրի մը վրա, ավերակներու լուռ հպարտությունը սորվեցուցին մեզի, կամ թևամփով Մասիսի կատարին, հսկայական լեռան միարմատ, համաձույլ, սլացիկ և միավոր Ամբողջականությունը երգեցին մեզի: Իրենց այդ ե՛րգն էր հայուն փրկությունը»¹:

«Հայաստանի բախտի աստղը փնտրող մոգը»² առասպելական աշխատասիրությամբ փայլող գրական այդ մշակը, որն ամենօրյա մեղավաջան տքնանքով ստեղծել է շուրջ հիսուն հատորի հասնող գիտական ու գեղարվեստական վիթխարի ժառանգություն (բանաստեղծություն, արձակ, պատմաաշխարհագրական ուսումնասիրություններ, պատմիչների քննական բնագրերի հրատարակություն, գիտական բուսաբանություն,

¹ **Վարուժան Դանիել**, Երկերի լիակատար ժող., Երևան, հ. 3, 1987, էջ 186:

² Արսեն Բագրատունու բնորոշումն է: Տե՛ս **Երենյան Միմոն**, Ղևոնդ Ալիշան, «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», Աշխատասիրությամբ՝ **Ս. Շտիկյանի**, Երևան, 1974, էջ 129:

հայկական հեթանոսության և նրա հավատալիքների վերլուծություն...), աչքի է ընկել հազվագյուտ համեստությամբ և վայելել համընդհանուր հարգանք ու սեր: Ականատեսներից մեկը՝ Նիկողայոս Քարամյանը, օրինակ, պատմում է, որ Իտալիայի թագուհի Մարգարիտա Սավոյացին¹ Վենետիկի Մխիթարյաններին յուրաքանչյուր այցելության ժամանակ անչափ զարմանում էր, երբ Ղ. Ալիշանից նվեր էր ստանում հերթական ստվարածավալ հատորը: Մի անգամ՝ 1887-ի ամռանը, երբ թագուհին պատարագից հետո Ս. Ղազարի վանքի ներքին գավթի պարտեզում վայելում էր վանքում պատրաստված վարդի մուրաբան, նրան են ընծայում փառակազմ «Միսունը». «Թագուհին հարցրեց, թե ո՞ր է հեղինակը. շուրջը նայեցին և տեսան, որ համեստ աբեղան արդեն յուր մենարանն է առանձնացել, որտեղից կանչեցին նրան: Թագուհու՝ յուր աշխատանքին տված գովասանքներին պատասխանել է հայր Ղևոնդը, թե յուր աշխատանքը մի փոքրիկ գործ է, այնքան փոքրիկ, որ մրջյուններն էլ կարող էին անել, որովհետև ինքը մրջյանց նման միայն հավաքել է և կուտակել»²: Կամ՝ մեկ ուրիշ անգամ նույն թագուհու զարմացական հարցմանը պատասխանել է. «Վեհափառ տիկին, իմ աշխատությունս խաղալիք մ' է, նման անոթ, որով կատունները զվարճանան»³: Ահա նույն հիշատակությունը՝ ուրիշ ակննատեսի վկայաբերությամբ. «Վեհափառ դշխո, կպատասխանե՞ս ինչպես կատուններ, երբ շարժուն բան մը կտեսնեն՝ անոթ հետ կխաղան իրենց բնագողովը, մենք ալ վարժած ենք տեսակ մը սովորությամբ գրիչ շարժելու հանդիպած թուղթերու վրա»: Այս կըսես և մեկերկու վայրկյան շառագունած ոտքի վրա կենալէ ետքը խոնարհաբար հրաժեշտ կառնես և իսկույն կհեռանա»⁴: Ինչպես տեսնում ենք, մի կողմից դարձյալ խոր համեստություն, մյուս կողմից՝ հայրենանվեր աշխատանքի բավականության ու հաճույքի զգացում:

Նրան սիրել ու ակնածանքով են վերաբերվել նաև հայոց գրեթե բոլոր մեծերը՝ Միք. Նալբանդյանից մինչև Ղ. Աղայան, Ալ. Շիրվանզադե ու Ա. Արփիարյան, Հովհ. Թումանյան և Ավ. Բասիակյան: «90-ական թվականների մեր սերունդի համար նա ամենահմայիչ անունն էր. նրա՝

¹ Խոսքը Իտալիայի թագավոր Հուսեֆերտո Առաջինի (1844-1900) կնոջ՝ Մարգարիտա մայր թագուհու՝ Մարգարիտա Սավոյացու (1851-1926) մասին է, որը բարեկամական ջերմ կապերի մեջ էր Մխիթարյանների հետ և հաղորդվում էր Ղևոնդ Ալիշանի մոտ:

² Քարամյան Նիկողայոս, Ղևոնդ Ալիշան (Մի քանի թերթ իմ հիշատակարանից), «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 40-41:

³ Հացունի Վարդան, Հայր Ալիշանի հետ, նույն տեղում, էջ 178:

⁴ Թումանյան Թադևոս, Հուշեր և նիշեր Հ. Ղևոնդ Ալիշանի ներքին կյանքեն, նույն տեղում, էջ 203:

Նահապետի սքանչելի բանաստեղծությունները՝ «Հրագդան», «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ, գարունդ է եկել», մենք անգիր գիտեինք, մեր դասագրքերի գարդն էին նրանք, ոգևորված արտասանում էինք հանդեսներում: Ալիշանը և ուրիշները վանքում, հին մատենագիրների, մագաղաթների ներշնչումով ստեղծել են մի հոգեկան, գաղափարական Հայաստան և ապրում են ու երգում այդ անգո հայրենիքում, որպես իրականության մեջ, իրական Հայաստանում: Հայր Ալիշանը. նրա ոտները իրական երկրի վրա էին, իսկ գլուխը՝ հինգերորդ դարում, երագների մեջ:

...Իր հատորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց և իրական:

Հայաստանը ոչ ոք այնպես չգիտե, ինչպես նա, ոչ ոք այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասերը: Իրականությունը նրա գրչի տակ երագ էր դարձել, և երագը՝ իրականություն¹, - Ալիշանին այսպես պատկերավոր է գնահատել 1901-ին Վենետիկ այցելած Ավ. Իսահակյանը:

Ալիշանը դեռևս կենդանության ժամանակ արժանացել է համաեվրոպական ճանաչման. 1886-ին Ֆրանսիայի ակադեմիան նրան շնորհել է «Պատվո լեգեոն» շքանշան, 1887-ին ընտրվել է Իտալիայի Ասիական ընկերության պատվավոր անդամ, 1894-ին՝ Մոսկվայի հնէաբանության ընկերության անդամ: Ալիշանը 1896թ. դարձել է Պետերբուրգի Հնախոսական ընկերության պատվավոր, իսկ 1897-ին՝ Ենայի փիլիսոփայական ակադեմիայի անդամներ... Նրան չափազանց բարձր են գնահատել հայագիտության գրեթե բոլոր խոշորագույն ներկայացուցիչները՝ Վինդիշմանը, Դյուլյորիեն, Հյուբշմանը, Զախատուն, Տեզան, Կարրիերը, Վեսելովսկին, Բրյուսովը և շատ ուրիշները:

Ղևոնդ Ալիշանի մասին ստեղծվել է գրական-բանասիրական պատկառելի ժառանգություն. գրել են և՛ նրա ժամանակակիցները, և՛ նշանավոր գրողներ ու մտածողներ, և՛ սկսնակ գրիչներ: Նրա առաջին գնահատողներից են եղել Հայր Ս. Երեմյանն ու Միք. Նալբանդյանը, Հովհ. Թումանյանն ու Ավ. Իսահակյանը, Ղ. Աղայանն ու Դ. Վարուժանը... Նրան այս կամ այն առիթով հիշել կամ առանձին ուսումնասիրություններ են նվիրել Արշակ Զոպանյանն ու Տիգրան Նազարյանը, Արամ Ինճիկյանն ու Սուրեն Շտիկյանը, Հրանտ Թամրազյանը...

Նրան անսահման սիրել են նաև հասարակ մարդիկ. բնաշխարհի բազմաթիվ հայորդիներ՝ պարզ ու սովորական մշակներ, որոնք, կտրելով երկար ճամփաներ, մշտապես այցելել են Ս. Ղազար՝ գոնե մի անգամ

¹ Իսահակյան Ավետիք, Ղևոնդ Ալիշան, նույն տեղում, էջ 218, 220:

տեսնելու այդ սուրբ մարդուն և նրա աջը համբուրելու: «Ես ո՞վ եմ, որ զիս կուզեն տեսնել»¹, - նման դեպքերում անկեղծ վրդովմունքով միշտ զարմացել է Ղ. Ալիշանը: Համաժողովրդական սիրո բնորոշ մի արտահայտություն է վավերական հետևյալ ազդեցիկ հուշը՝ դարձյալ պատմվածականատեսի կողմից. «Մուշեղ անունով Սասունցի մի քաջակորով երիտասարդ, տասը տարի առաջ վանք գալով, ուզեց տեսնել զհ. Ալիշան. սա նույն ատեն ի սեղանատան սուրճ կխմեր, Մուշեղ հեռուեն զինքը տեսնելով, սկսավ ծնկվներուն վրա քալելով մոտենալ հ. Ալիշանին: Հուզիչ տեսարան մ'էր. հ. Ալիշան զայն տեսնելուն՝ կմոտենա, վեր կհանե զՍասունցին: Նահապետին աջին վրա Մուշեղի տաք-տաք համբույրները կշարունակվին. մեր ծերունին շվարած կհարցնե երիտասարդին «Ո՞վ ես, ի՞նչ կուզես». կպատասխանե. «Սասունցի երիտասարդ մ'եմ, այս ձեռքը համբուրելու համար եկած եմ». Նահապետ իր ձեռքով կհրամցնե բաժակ մը սուրճ. Մուշեղ զայն տեսնելուն շվարած կըսե. «Ի՞նչ կընես, հայր սուրբ, ես քու ծառայության արժանի չեմ»²:

Ուրիշ խոսքով՝ դեռևս կենդանության օրոք նա ականա արդեն բռնել էր հավերժի ճանապարհը:

Ո՞րն է այդ սիրո գաղտնիքը: Ամենից առաջ՝ Ալիշան մարդու բարոյական բարձր կեցվածքը, անանձնականությունը, հազվագյուտ ձիրքն ու նախաշավիղ հանդիսացող բանաստեղծական անուրանալի շնորհքը: Հայրենի տնից ու ծննդավայրից, հարազատներից հեռացած այդ պանդուխտ հայորդին, զրկված լինելով ընտանեկան բերկրանքից, հակված գրչագիր մատյանների վրա, հեռավոր Վենետիկից անդադրում բորբոքում էր հայկական ոգու հուրը՝ սերմանելով խորունկ սեր գեղեցիկի ու բարունկատմամբ...

Նա անչափելի հայրենասեր էր: «Ճանաչել և պահել անվթար զսեփական շնորհս ազգիս,- հորդորել է Ալիշանը հայ սերունդներին,- զլեզու նորա, զպատմութիւն նորա, զտոյրութիւն և զախորժակս նորա անվնաս, զհարազատ դպրութիւն նորա և զփառս անուան նորա: Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն»³: Ի դեպ, Նահապետի այս հորդոր-պատգամը՝ ուղղված իր փոքրաթիվ ազգին, խիստ արդիական է նաև հենց այսօր՝ «գլոբալիզացիա» հորջորջված այս աղմուկ-աղաղակի խառնաշփոթ իրողության մեջ:

¹ Երեմյան Միսն, Ղևոնդ Ալիշան, «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 133:

² Նույն տեղում:

³ «Բազմավէպ», Վենետիկ, 1848, թիվ 12, էջ 181:

Ալիշանը երբեք չի եղել մայր հայրենիքում և մշտապես ապրել է սրտմաշուկ կարոտախտ: «Միաբանությանս անդամներեն մին,- պատմում է ժամանակակիցը,- Հայաստանեն վանք վերադարձած ատեն, հ. Ալիշան կ'ողջագուրե զայն և առաջին խոսքն կըլլա «Կոշիկնե՛րդ, կոշիկնե՛րդ տուր ինձի»: Նահապետ կփափագի նույն ուղևորին կոշիկները գգվելու, վասնզի անոնք արժանացեր էին Հայաստանի նվիրական հողերը համբուրելու»¹:

Իսկ ինչո՞ւ երբևէ չի այցելել Հայաստան: Այդ հարցն իրեն տրվել է բազմիցս, և միշտ էլ հնչել է երկիմաստ, գրեթե խուսափողական պատասխանը: Գևորգ Բաշինջադյանի հարցին, օրինակ, թե «ինչու Հայաստան չի գնում ճամփորդելու», ժպտալով բառախաղով պատասխանել է. «Երուսաղեմ կերթամ»²: Կամ՝ «Ուխտիս ներկա աբբահայրը արևելք ուղևորվելու օրը՝ ամբողջ միաբանությունս ի միասին կերթա մինչև շոգենավ: Ամենքը շոգենավ կբարձրանան, սակայն հ. Ալիշան վարը նավակին մեջ կմնա. չուզեր վեր բարձրանալ, ըսելով, որ մի անգամ պատրաստվեր էր հայրենիք երթալու և պատճառով մը այդ ուղևորությունեն ետ կեցած ըլլալով, շատ կցավի. և նույն օրեն կորոշե երբեք շոգենավ չմտնել»³: Արդյո՞ք սոսկ ուշանալու պատճառով՝ հազիվ թե. գաղտնիքն այլ հարթության վրա է: Կարծում ենք՝ պատճառը կուրքի տապալման սարսափին չդիմանալու մտորումն էր. չէ՞ որ նրա պատկերացրած Երկիր դրախտավայրը վաղուց կորցրել էր իր վաղեմի փառքը, իսկ հայրենի եզերքից էլ շարունակաբար գալիս էին անմխիթար լուրեր...

Ալիշանը թեև իր պոեզիան ամփոփել է «Նուագք» ընդհանուր խորագրով 1857-58 թթ. հրատարակված հինգ հատորներում («Մանկունի», «Մաղթունի» և «Բնունի», «Հայրունի», «Տերունի», «Տխրունի»), բայց և հարկ է խոստովանել, որ միայն «Հայրունի»-ում գետեղված հատկապես «Երգք Նահապետի» բանաստեղծական շարքի տասնմեկ աշխարհաբար երգերը («Հայոց աշխարհիկ», «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ», «Հրագդան», «Հայ հայրենիք», «Վերջին երգ վիրավոր բամբուկահարին», «Մասիսու սարերն», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սևանա», «Հայ հանճար», «Պլպուլն Ավարայրի», «Շուշանն Շավարշանա», «Լուսնկայն գերեզմանաց հայոց»), որոնք հեղինակն ստեղծել է 27-30 տարեկանում՝ 1847-1852 թթ., ստեղծեցին գրական դպրոց և դարձան գրական-գեղագիտական մի ամբողջ

¹ Երեմյան Միսն, Ղևոնդ Ալիշան, «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 130:

² Բաշինջադյան Գևորգ, Ս. Ղազար կղզին 1884 թվականին, «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 95:

³ Նույն տեղում, էջ 131:

շարժման անկյունաքար: Ի հակադրություն կլասիցիզմի քարացած կանոնների և Մխիթարյան տեսաբանների ու հեղինակների (Եղիա Թովմաճյան, Մանվել Զախջախյան, Արսեն Բագրատունի և այլք) պարտադրած թեմաների՝ աստվածաշնչյան զանազան պատմություններ կամ հայոց հեթանոսական շրջանի առասպելներ, առաջին անգամ հայ նոր քնարերգության մեջ գրույց է բացվում իրական, կենդանի Հայաստանի շուրջ, պատկերվում է հայոց ավեր տունը, լսվում է հայ պանդուխտի սրտառուչ երգը, աշխույժ երկխոսության են բռնվում Մեծ ու Փոքր Մասիսները, խոսում է Ավարայրի սոխակը, ծայր է առնում Շավարշանի դաշտի շուշանի՝ Սանատրուկ թագավորի Սանդուխտ դստեր քնքուշ սերը... «Տեսական հայրենասիրության և հարատև աշխատության այս քարոզիչը, հանդարտիկ ջերմություն պատգամող այս վարպետը,- գրում է ակադ. Հր. Թամրազյանը,- հազար թելերով կապված Հայաստանի հետ, ունեցել է նաև իր հրդեհված, կայծակնող օրերը: Նա աչքը միշտ պահել է մեծ աշխարհին, ջերմություն է առել նաև եվրոպական ազատագրական հրդեհներից: Հենց հայրենականի և համամարդկայինի այդ շփումից էլ ծնվել է գեղարվեստական գյուտը, բորբոքվել բանաստեղծական հրդեհը, «Հայրունի» գրքի «Երգք Նահապետի» շարքը և մի շարք ուրիշ կրակված բանաստեղծություններ»¹:

Ղ. Ալիշանի մասին գրույցը շարունակվում է նաև այսօր՝ 21-րդ դարում, և հոբելյանական այս խոսքը հերթական մի փորձ է՝ արժևորելու հայոց «մեծ պանդուխտի» քնարերգությունը, մի անգամ ևս մատնանշելու կենարար այն երակը, որը հսկայական ազդեցություն ունեցավ հայ նոր քնարերգության մայրուղու ստեղծման ճանապարհին:

Մեծ կյանքի բովում՝ 1850-60-ականների կենսական շարժման մեջ, հայ առաջադեմ մտավորականներն աստիճանաբար անցում են կատարում դեպի սոցիալ-քաղաքական խնդիրները, իրենց ասելիքը մարմնավորելու համար որոնում գրական նորանոր ձևեր. ծնվում են ֆելիետոններ ու պամֆլետներ, կատակերգություններ ու երգիծական բանաստեղծություններ՝ հազեցած քաղաքացիական և գաղափարական ցայտուն շեշտավորումներով: Իսկ ամենաբնորոշն այն է, որ հեղափոխումների ու զարթոնքի մթնոլորտում ծնվում է ազգային երգը. պոեզիայի մեջ սկսում է մորմոքել հայ հայրենիքի կարոտը, բոցավառվում է հայկական ոգու հուրը... Նոր գրականության մեջ ձևավորվում է ռոմանտիզմը, և բարձրանում է նոր հերոսը՝ խոհուն, ըմբոստ ու անանձնական: Հայ պոեզիան վերստին միանում է համայն մարդկության երգին, հայ մարդիկ ևս սկսում են որոնել ազատության սեփական ուղիները: Այդ ամենին մեծապես

¹ Թամրազյան Հր., Երկեր, հ. Ա, էջ 780:

նպաստում էին իտալական ազգային-ազատագրական գաղափարախոսությունը, հեղափոխական շարժումները: 1848 թ. ֆրանսիական հեղափոխությունը բացառիկ հետք թողեց բոլոր ազգերի վրա. մեկ տարի հետո Իտալիան տենդագին պայքար էր մղում ավստրիական բռնակալության և ֆրանսիական քաղաքական ռեակցիայի դեմ: Իսկ դա ոգևորում էր նաև թուրքական լծի տակ հեծող ժողովուրդներին և ամենից առաջ՝ պատմական հիշողությունը վառ պահած հայերին: Լեոն նկատում է, որ 19-րդ դարի 40-ականների վերջերին եվրոպական հեղափոխական շարժումներն ազդել են նաև հայ ուսանողների վրա, որոնք «տեսնում են մեր կյանքի արշալույսը, հասկանում են, որ մի ազգի զավակներ են, որ այդ ազգը ոչինչ չունի, ո՛չ զգացմունք, ո՛չ գաղափար, ո՛չ ներկա, ո՛չ ապագա, բայց զգում է երիտասարդության սիրտը, որ արշալույսի ժամն է, որ մոտ է տաք ու պայծառ օրը...»¹: Բարիկադներում էին շատերը, իսկ նրանցից երիտասարդ հրապարակագիր Ստեփան Ոսկանյանը (Ոսկան) և տաղանդաշատ Հովսեփ Շիշմանյանը (Շերենց) Փարիզում ցույցի էին դուրս եկել ուսանողության հետ՝ հանուն Իտալիայի ազատագրության:

Այդ ամենին անտարբեր չէր նաև Վենետիկի Ռափայելյան վարժարանի տեսուչ Ղևոնդ Ալիշանը, որը քաղաքի հրապարակներում տեսնում էր նոր կյանքի համար պայքարի ելած բոցավառված մարդկանց: Ալիշանի կենսագիր Հայր Սիմոն Երեմյանն այդ օրերի և նոր բանաստեղծի մասին գրում է. «*Հայրունի*ին ամենեն վառ, հուզող ու մոնչող քնարը հնչեցուցեր է Վենետիկ քաղաքական եռ ու զեռ խուժանի մեջ շառաչող, սթափեցնող, հրացայտ երգերու արձագանքներեն էլեկտրացած: Վենետիկ բռնված հեղափոխության ատեն, կարելի չէր որ Հ. Ալիշանի դյուրավառ ոգին չհուզվեր և չերգեր իր ավերակները և իր դյուցազները... Նա միևնույն ատեն կը գտնվեր քաղքին կենտրոնը, այն պալատին մեջ, որուն առջևն՝ հազարավոր կոնդուկտորներ հեղափոխական խուժանի հետ, կը հրնչեցնեն ազատության երգեր:

... Հայր Ալիշանի ընկճված, կալանավորված կուրծքը կը բաբախե, նա կը գոռա իր կրակոտ *Բաւ, փորոտան...*»²:

* * *

19-րդ դարի 50-60-ականների հայ պոեզիան ընդհանրապես աչքի է ընկնում հայրենասիրական շեշտերով, քաղաքացիական կրքով ու պաթոսով, հրապարակախոսական շնչով: Ազգային երգի ստեղծման կարևոր

¹ Լեո, Ռուսահայոց գրականության պատմություն, Վենետիկ, 1904, էջ 17:

² Հ. Ս. Երեմյան, Կենսագրություն Հ. Ալիշանի, Վենետիկ, 1902, էջ 112:

գործին իրենց աննախադեպ նպաստներն էին բերում Ղևոնդ Ալիշանը, Միքայել Նալբանդյանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Ռափայել Պատկանյանը, Սմբատ Շահագիզը: Նոր գրականության ստեղծման արշավույսին, եթե բացառություն անենք «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի» վեպը, հատկապես ընդգծվում է քնարերգությունը՝ անշուշտ իր ներգործության անմիջական ուժի շնորհիվ, որը դառնում է հոգևոր պայքարի հզոր զենք: Շուտով Զարթոնքի սերնդի մաքառման ազդեցիկ հիմներ պիտի դառնային «հավերժ պանդուխտ» Ղ. Ալիշանի «Բա՛մ. փորոտանը», Միք. Նալբանդյանի «Ազատությունը», Հ. Սըվաճյանի «Արիք Հայկազունքը»: Գուցե և առաջին հայացքից տարօրինակ թվա, բայց ազգային երգի ստեղծմանը կարևոր լիցքեր էին հաղորդում աբովյանական տարերքը և առաջին հերթին «Վերք Հայաստանի...» վեպը, որը ձեռագիր վիճակում տարածվել էր ուսանողության շրջաններում՝ առաջացնելով անօրինակ ոգևորություն: 1841-ին գրված հենց այդ վեպում էր, որ Մ. Խորենացուց հետո նոր շրջանում առաջին անգամ բացառիկ արվեստով հայտնաբերված էին Հայաստանի կերպարը, հայոց կյանքը, «էն ժամանակվա մեր հալը», ոգին, բարքերը, բորբոքված էր ազգային հպարտության թեման, և մատնանշված էր հայրենիքի պահպանության գլխավոր մայրուղին՝ սրբազան սեր ու անձնագոհություն Հայաստան աշխարհի նկատմամբ. «Շունչդ տու՛ր, հոգի՛դ, բա՛յց քո Հայրենիք մի՛ տար թշնամյաց...»:

«Բազմավեպ»-ի 1847-ի հունիսի համարում «Նահապետ» ստորագրությամբ տպագրվում է խիստ ուշագրավ մի աշխարհաբար բանաստեղծություն՝ «Հայոց աշխարհիկ» վերնագրով, որի փոքրիկ ծանոթագրության մեջ գրված էր. «Թեպետև աս հայոց դաշտերուն Վիրգիլիոսը կամ Հոմերոսն ալ իր բախտին պես անծանոթ թողեր է իր կյանքն ալ, բայց անոր պատվական հիշատակները՝ այսինքն երգերեն մեկ քանին բախտով մեզի հասան մոտերս հին տաղարաններու և ոսկեփորիկներու մեջ թաղված, ուրիշ խառն երգերու և ռամկական ոտանավորներու հետ... Կերևնա թե աս Նահապետը քանի մը դար առաջ Շահաբբասին ժամանակները Հայաստան մնացող ազգայիններեն եղած է»¹: Հարց է ծագում՝ ի՞նչն էր ստիպել Ալիշանին նման քայլի դիմելու, այսինքն՝ աշխարհաբարով գրված իր գրական երախայրիքը վերագրելու որպես 16-րդ դարի վերջի և հաջորդ դարի սկզբներին ստեղծագործած մեկ ուրիշի երկ:

Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերհիշել, որ 19-րդ դարի առաջին կեսին շարունակվում էր գրաբարի ու աշխարհաբարի շուրջ ծայր առած բանավեճը, իսկ այդ բանավեճում հատկապես աչքի էին ընկնում Մխիթարյանները, որոնք նախանձելի եռանդով ու համառու-

¹ «Բազմավեպ», 1847, թիվ 12, էջ 187:

թյամբ պաշտպանում էին գրաբարի դատը. գրում, թարգմանում և գործում էին գրաբարով, իրենց տպագիր օրգանում զարգացնում էին այն տեսակետը, թե հայ ժողովրդի միակ լեզուն պետք է լինի «վսեմական գրաբարը»: Միաբանության ավագ սերնդի ներկայացուցիչները՝ Ավգերյանը, Թովմաճյանը, Ջախջախյանը, Բագրատունին, որոնք կրթվել, դաստիարակվել ու ստեղծագործում էին գրաբարով, դրա ամենաջերմ պաշտպանողներն էին, և հասկանալի է, որ «Բազմավէպ»-ի էջերում նոր տպագրվել սկսող 27-ամյա Ալիշանին վերոհիշյալ պայմաններում գրեթե անհնար կլիներ միանգամից ու կտրուկ հակադրվել միաբանության ներսում տիրապետող ոգուն, անառարկելի հեղինակություն վայելող հայրերի տեսակետին և հանդես գալ աշխարհաբարով: Ահա դա էր պատճառը, որ Ալիշանը դիմել է հիշյալ հնարանքին¹: Եթե իր ստեղծագործության վաղ շրջանում նա դեռ գրում էր այնպիսի դժվարամարս գրաբարով, որ առանց լուրջ ճիգերի ու բառարանի անկարելի էր ամբողջապես հասկանալ, ապա իր ստեղծագործության երկրորդ շրջանից սկսած՝ սկսում է գրել աշխարհաբարով, որը թեև զերծ չէր գրաբարյան բառերից ու ոճերից, սակայն անհամեմատ ավելի մատչելի էր: Բանաստեղծը կարողացավ հասկանալ, որ ժողովրդի հետ խոսելու համար անհրաժեշտ էր գրել «ռամկորենով», թեև այդ լեզվի նկատմամբ նա մինչև իր կյանքի վերջն էլ առանձնապես դրական վերաբերմունք չուներ: «Եվս առավել,- իր մի գործի կապակցությամբ գրում էր նա հետագայում,- որ մեր ռամկական լեզվով խոսած եմ, որ թեև քեզի ավելի դյուրահասկանալի ու ախորժելի է Հայկակ, Բայց... ինձի, իմ զգացմանս՝ արդարև այս աշխարհիկ լեզուով շատ պզտիկ, շատ ցած, շատ անբնական եկած է. այնպես կերևի ինձի, թե մեջը կրակ մը փտտած քուրջերով ծրարել կուգեմ, և այն իմ հին և սրբազան հայրենյացս հրեղեն հիշատակները այսպիսի խեղճուկ լեզվով կավանդեմ, թողելով իր վսեմական գրոց լեզուն»²: Աշխարհաբարի հանդեպ այսպիսի վերաբերմունք ունեցող Ալիշանը, այնուամենայնիվ, իր ընտիր գործերը գրեց այդ լեզվով, որով պարզորոշ ցույց տվեց ճիշտ կողմնորոշումը լեզվի հարցում: Հայրենիքի հանդեպ ունեցած սիրով ու քնքշությամբ լի ջերմ սրտի տրոփումն է զգացվում «Նահապետ» ստորագրությունը կրող բոլոր գործերում:

¹ Ի դեպ, հայ գրականությունից հայտնի են համանման դեպքեր. օրինակ՝ Ռ. Պատկանյանը, երբ 1862-ին գրում է «Օտար օրիորդ և հայ պատանի» բանաստեղծությունը, որը լույս է տեսնում նույն թվականին «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի 5-րդ թվում, դրան կցում է մի փոքրիկ ծանոթագրություն՝ նշելով, որ այդ անպաճույճ, ընդհանուր առմամբ թույլ ու բանաստեղծական արվեստից զուրկ գործն ինքը գտել է բոլորովին պատահաբար լվովցի մի լեհ երիտասարդից գնված հին, անթվական ու անհեղինակ մի ձեռագիր տաղարանի մեջ:

² «Հուշիկք հայրենյաց հայոց» Վենետիկ, 1869, էջ 19:

Մինչև այս բանաստեղծությունը և առհասարակ «Երգք Նահապետի» շարքը բազմաթիվ էին գրաբարալեզու բանաստեղծները՝ Աբրահամ Աստաբատցի վարդապետը, կեսարացի Գրիգոր Գապասախայանը, Վենետիկի Մխիթարյաններից՝ Ղուկաս Ինճիճյանը, Գաբրիել Ավետիքյանը, Մանուել Ջախջախյանը, Եղիա Թովմաճյանը, Արսեն Բագրատունին... Մանուկ Աբեղյանը «Ուրվագծեր XIX դարու հայոց գրականության պատմությունից (Առաջին երեսնամյակ)» ուսումնասիրության մեջ, բարձր գնահատելով հանդերձ այդ գրագետների վաստակը մեր մշակույթի պատմության մեջ, այնուամենայնիվ, նկատում է, որ նրանց պոեզիան անարյուն է, «զուրկ կենդանի երակից», և ավելացնում. «Մխիթարյանների այս մեծ սերնդի մեջ մի տարօրինակ գրական սովորություն է եղել. նրանք զվարճացել են ոտքերով ու հանգերով և ոտանավոր գրելով՝ իրար հետ հանաքներ են արել: Ջբաղված լինելով ուրիշ գրական ծանր աշխատանքներով՝ բառարան գրելով, թարգմանություններ անելով և այլն, մեկ մեկ էլ պետք են զգացել հանգստանալու և իրենց հանգստությունը գտել են քերթողության մեջ: Բայց քերթողության ի՞նչ տեսակի: Ինչպես հին աշուղները իրար հետ բաս մտնելիս՝ միմյանց առեղծվածներ էին առաջարկում հանգեր ու ոտքեր տալով, և մրցակիցը պետք է յուր ոտիս պատասխանը տար առաջարկված հանգերով ու ոտքերով, ճիշտ նույն ձևով իրար հետ մրցում են և Մխիթարյան ընկեր քերթողները: Իրենց բառով ասեմ, նրանք հորինում են «բոնահանգ» և «բոնակարգ» ոտանավորներ»¹: Իսկ նրանցից ակնհայտորեն տարբերվում էր երիտասարդ բանաստեղծը:

Հայրենի եզերքի նկատմամբ տաժած անսահման սիրով ու ջերմությամբ են թաթախված «Երգք Նահապետի» շարքի բանաստեղծությունները: Անհանգիստ ու սրտմաշուկ կարոտախտն է մորմոքում «Հայոց աշխարհիկ»-ում: Մտքի ու երևակայության արտասովոր թռիչքով է պատկերում բանաստեղծն իր հայրենիքի շքեղ գարունը, «ի փախ» դարձած սև-սև ամպերը, նորահարսի պես զարդարված լեռներն ու հովիտները, երփնազան ծաղիկներից պսակ կապած կապուտակ սարերը, գետեզերքին բացված շուշանները, «կարմրուկ վարդերը».

Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել,

Ահա գեղեցիկ գարուն քո եկել.

Ո՛վ դու ի վաղուց մոռցված հայրենիք,

Ո՛վ դու իմ սրբտիս անմոռաց տեղիք.

Ահա գարունիկդ հասել է, հասել,

Ավագ Մասյաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել...

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 557:

Բանաստեղծությունը գնալով իմաստավորվում է, թանձրանում են պատկերները, ծայր է առնում անհուն հայրենասիրությունը. Նահապետ «շայիրը»՝ երգիչ-բանաստեղծը, պատգամում է հայ սերունդներին ամուր կառչած մնալ հայրենի եզերքին, չդառնալ աստանդական ու տարաշխարհիկ. չէ՞ որ «Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն»: Ի դեպ, հայոց «միշտ պանդուխտ ալևոր Նահապետի» (Հովհ. Թումանյանի բնորոշումն է) այս հորդոր-պատգամը այսօր էլ՝ 21-րդ դարում, մեզ համար հնչում է խիստ արդիական:

Հայրենիքի շքեղ գարնան պես պանծալի է եղել նաև նրա պատմությունը. աղեղնավոր քաջ Հայկի օրերից ի վեր Հայոց աշխարհը շատ կտրիճներ է տվել, կործանվել են բազմաթիվ Բելեր, հայրենիքի սարերը, ձորերն ու դաշտերը «կարմիր են քրտնել», այնտեղ են հասակ առել դյուցազուններ Տիգրանն ու Տրդատը, Վարդանն ու Վահանը, Աշոտն ու Սմբատը: Բայց, ավա՛ղ, անմխիթարելի է հայ հայրենիքի ժամանակակից վիճակը.

*Բայց ավստ՛ս հիմա, որ չար թըշնամիք
Իսկի չեն խնայել Հայո՛ց աշխարհիկ,
Եկեղեցիք, վանք, զբրատուն, դարպաս
Ջարկել են թըրրով, հըրրով դաս ու դաս.
Ջազզն ընչոք տեղոք քանդել ու գերել,
Դեմ չորս հովերուն տըվել ու ցըրվել:*

Բանաստեղծ որդին, սակայն, հավատում է հայրենիքի վերածնությանը, նոր ծաղկումին. չէ՞ որ հասակ առնող սերնդի առջև է հայոց հավերժ գոյության խորհուրդը մարմնավորող սրբազան լեռը, և իր վերջին իդձն է թաղվել «Հայոց աշխարհիկի կակուղ հողիկում»:

«Երգք Նահապետի» շարքի հենց առաջին բանաստեղծությունից նկատելի է, որ այն հերոսական ռոմանտիզմի մեծ բռնկում էր արևմտահայ պոեզիայի մեջ, որն ունեցավ ազգային նշանակություն: Ալիշանն ապրել է ոգևորության ու վերելքի մի շրջան՝ կապված ժամանակի մեծ անցքերի հետ: Նա կարողացել է արտահայտել ազգային ռոմանտիկական պոեզիայի բուն գաղափարներն ու ոճական հատկանիշները, հայրենական սերը, վաղվա ծրագրերը, որոնց շնորհիվ իմաստավորվել են հայրենական սերունդների պատմական երթն ու մաքառումները, սկզբնավորվել է հայոց ըմբոստության երգը: Ալիշանի նոր երգերը տոգորված են նաև քնքշագին սիրով, նրանց մեջ վառվում է Հայոց աշխարհիկը՝ հազար գույներով, բորբոքվում է անքուն ու անհանգիստ կարոտը:

«Հայոց աշխարհիկ»-ին գրեթե հավասարագոր տրամադրություն է արտահայտում «Բազմավէպ»-ի 1848-ի օգոստոսյան թվում տպագրված «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ» բանաստեղծությունը: Այն ևս գրված է

աշխարհաբարով, որը վկայում է այն մասին, որ երիտասարդ վանականն անվարան շարունակում էր ընթանալ իր իսկ հայտնագործած ուղիով: Մխիթարյան գրականության համար անընդունելի, բայց ընթերցող լայն շրջաններին չափազանց սրտամոտ այդ հանգամանքը կարևոր ու բախտորոշ եղավ նոր քնարերգության ակունքները հայտնագործելու ճանապարհին: Ասել է թե՛ Ալիշանի բերած հաջորդ նորությունը, անշուշտ, աշխարհաբարն էր, գրեթե ստեղծագործական սխրանք: Երիտասարդ բանաստեղծն Աբովյանի պես իր հայացքն ուղղեց դեպի ժողովուրդը, գրեց նրան հասկանալի ու մատչելի լեզվով, ինչպես Հր. Աճառյանը կասեր՝ «ալիշանյան աշխարհաբարով»: Ճիշտ է, Միք. Նալբանդյանն իրավացիորեն կարծում է, որ «Երգք Նահապետի» շարքի լեզվի վրա դեռևս ճնշող է հին լեզուն, բայց և այնպես այդ թերությունը գալիս էր Ալիշանի կրոնական պաշտոնից. «Հ. Ղևոնդ Ալիշանյանց ունի բանաստեղծական քանքար, և այդ քանքարը կարող էր ավելի պարզ ու վառ երևել, եթե արեղայական սևաթույր վերարկուն չլիներ խափանառիթ»¹:

«Ողբամ զքեզ Հայոց աշխարհ» բանաստեղծությունը ձևի, արտահայտած իմաստի տեսակետից կարծես «Հայոց աշխարհիկ»-ի շարունակությունն է կազմում: Քերթողահոր «Ողբ»-ի պես դա ևս մի սրտառուչ ողբ է արյուն ու ավեր դարձած Հայաստանի, կործանված հնությունների ու եղծված գեղեցկությունների մասին.

Ողբամ, ողբամ, հազար անգամ ողբամ զքեզ, Հայաստան,

Երբեմն բյուր փառաց տեղիք, հիմա դամբան.

Քո ծիրանիքըն մերկացան, քո թագդ առավ

Արիությունըն հայկական ելավ թըռավ:

Ալիշանի այս «Ողբ»-ը, սակայն, ամեն ինչ տանուլ տված, հայրենի երկրի գեղեցիկ գալիքի նկատմամբ հավատը կորցրած բանաստեղծի լացուկոծ չէ. այն պարունակում է նաև բողոքի ու ցասման զգալի տարրեր, որոնք նոր կշիռ են հաղորդում երգին. հեղինակը բանաստեղծության վերջում հստակորեն այն միտքն է զարգացնում, որ թեև Հայաստանը գտնվում է կործանման եզրին, այնուամենայնիվ կգա ժամանակ, երբ մի ժամանակ «շատ աշխարհաց մայր» Հայաստանը նորից կդառնա լույսի ու գիտության օջախ, և փույթ չէ, որ այդ երջանիկ օրը կլինի Նահապետի կյանքում վերջինը. նա սիրով պատրաստ է «հող մտնել», միայն թե վերածնվի Հայոց երկիրը:

1848-ի հոկտեմբերյան թվում «Բազմավեպ»-ը հրատարակում է «Հրագդան»-ը՝ հայ գրականության ամենասիրված ու տարածված բա-

¹ Նալբանդյան Միք., Երկերի լիակատար ժող. վեց հատորով, հ. 3, Երևան, 1981, էջ 156:

նաստեղծություններից մեկը՝ պանդխտությանը նվիրված ջերմաշունչ մի երգ, որն իր հմայքը պահպանում է նաև այսօր: Օտար ավերից տուն է վերադարձել հայորդի Բաբկենը՝ բռնված անծայր կարոտի հոգեմաշ զգացումներով:

*Հրազդա՛ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՛ն, ջրբիկդ իմ անուշիկ,
Ահա թողել զոհողն օտարի,
Բաբկենս հասել եմ պանդխտիկ.
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,
Ա՛յ ավունք, է՛ր կու լայք լրբիկ:*

Հարագատ գետի ավերին նա փնտրում է իրենց կանաչ անտառիկը, սիրելի տաղավարիկն ու այգին, սիրած աղջկան՝ «Աչիցըս լույս Խանտուկին», հարագատ մարդկանց... Լուռ է, սակայն, հայրենի գետակը, լռիկ արտասվում են նրա երբեմնի զվարթ ավերը՝ թողնելով հայ պանդխտին իր անամոք վշտի հետ միայնակ:

*Ա՛հ, անցուցնաց ելել ամեն.
Ա՛հ, անցուցնաց է Հայաստան.
Զիս անմեկիկ թողած աստեն՝
Հետ անցնիս գնաս դու՛ն այլ
Հրազդան...
Անցի գրնա ջրկիդ հայրենի,
Արտսունք հերիք են Բաբկենի:*

«Հրազդան»-ը ուղենշային եղավ հայ նոր քնարերգության համար. այդ բանաստեղծության ազդեցությունը, հատկապես ձևը՝ դիմառնության եղանակը, ակներև են թե՛ Պատկանյանի «Արաքսի արտասուքը»-ի և թե՛ Րաֆֆու «Ձա՛յն տուր, ով ծովակ»-ի վրա:

Հայրենի եզերքի մի նրբին գովք է նաև «Հայ հայրենիք» բանաստեղծությունը, ուր հեղինակը մի առանձին սիրով ու քնքշությամբ է պատկերում Հայկական լեռնաշխարհի արևագալը, աստվածագարդը, դրախտային ջրերը, դրանց ամեն կաթիլից ծնվող աստղիկները, ծլարձակող ծաղիկները...

*Ա՛յ դրախտի ջրեր, իջե՛ք, իջե՛ք
Զերկիրն հայոց արբեցուցեք.
Ահա վտակունք կրրկրջային,
Ձորն ու հովիտ արբենային,
Ամեն կաթեն աստղիկ ծրներ,
Ամեն ծրենն ծաղիկ ծագեր:*

Ինչպես նկատելի է, բանաստեղծը միջնադարյան տաղերգուներին բնորոշ քնքշությամբ ու գունագեղությամբ է երգում բնաշխարհի գեղեցկությունները:

Հայրենիքի անհուն սերը, կարոտն ու ջերմությունն աստիճանաբար ստեղծում են մի նոր մթնոլորտ նաև գալիքի պայծառ երազների ու մաքառումների համար: Դիպուկ է Ավ. Իսահակյանի նկատումը, թե Ալիշանի «գլուխը հինգերորդ դարում է»: Բայց անցյալի այդ հայացքը կամրջող էր. դա հայացք էր դեպի գալիք, ինչպես Եղ. Չարենցը կասեր՝ «Աչքերս հառել եմ անցյալին՝ ապագայի նժույգը նստած»: Եվ հենց «Մասիսու սարերն» բանաստեղծության մեջ և «Պլպուլն Ավարայրի» պոեմում Ալիշանը, կարծես մի կողմ թողած Միք. Նալբանդյանի մատնանշած «աբեղայական սևաթույր վերարկուն», այդ անցյալից համարձակ լույս է նետում գալիքի վրա:

«Վերջին երգ վիրավոր բամբռահարին» բանաստեղծության մեջ վերարտադրված են հայրենիքի ազատության համար մղված պայքարում կարելի էր ընկած զինվոր բամբռահարի կյանքի վերջին վայրկյանները: Անվեհեր հայրենասերների հետ միասին ռազմի սուրբ դաշտն է իջել նաև բամբռահար Փառենը՝ հաղթանակի անսասան վճռականությամբ, մարտնչել է քաջաբար, սակայն մահացու վերք է ստացել: Հայրենիքի գալիքի համար նահատակությունը, սակայն, հերոսություն է. մահը ծաղրելու համար պետք է գոհվել երգը շուրթերին:

Վերոհիշյալ բանաստեղծությունը մի անհրաժեշտ աստիճան էր, որին պիտի հաջորդեր մի ուրիշը՝ նշանավոր «Մասիսու սարերն»-ը:

«Մասիսու սարերն» բանաստեղծության մեջ վիճում են Մեծ և Փոքր Մասիսները, ըստ որում նրանցից յուրաքանչյուրին հեղինակը կերպավորել է յուրովի: Մեծ Մասիսը հանդուգն է, համարձակ. նրա խոսքերում առկա են հպարտության ու ինքնավստահության ուժեղ շեշտեր: Փոքր Մասիսը, ընդհակառակը, հեզնոդ է, կասկածոտ, կշտամբանքով է վերաբերվում տեղի ունեցող դեպքերին, քննադատում է անգամ «ավագ եղբոր» ասածները: Վիճելով Մեծ Մասիսի հետ՝ նա հոռետեսորեն ասում է.

*Ձի հիմիկ փոխվել է հայոց երկիր,
Թե փառք, թե պարծանք անցել են, գնացել,
Քո բարձր գլխեղ ի վայր են սահել:*

Մեծ Մասիսն արժանապատվորեն ու աներկյուղ պատասխանում է Փոքրին, պատասխան, որը խիստ հատկանշական է Ալիշանին բնորոշելու համար, այն է՝ թեև հայոց գլխին եկած բազում դժբախտությունները երկիրը ծայրահեղ ծանր վիճակի մեջ են դրել, բայց այդ ամենը հավերժական չէ ու կանցնի, քանի որ հարատև է հայությունը: Ինքը բիրիական

լեռն է և ժամանակակիցը Նոյին, Ադամին ու Հայկին, լեռ, որն իր ընդերքում հասունացնում է զարհուրելի մի հրաբուխ. այն շուտով պիտի ժայթքի և հուր ու կրակ տարածի ամենուրեք, այրի ու մոխրացնի հայության թշնամիներին: Մոլեգնած է Մեծ Մասիսը, և Նահապետի վերաբերմունքը որոշակիորեն «զինչ գազան» լափող սարի կողմն է, որը և հեղինակի տրամադրությունների արտահայտիչն է: Այս տեսանկյունից նայելով՝ ամբողջ բանաստեղծության մեջ իսպառ բացակայում է թախծոտության այն ուժեղ շեշտը, որն այնպես որոշակիորեն առկա էր Նահապետի նախորդ գործերում: Բանաստեղծությունն ավարտվում է բնորոշ մի վերջաբանով. երկու սարերի խոսակցությունից հետո հանդես է գալիս ինքը՝ Նահապետը, որը ոչ միայն չի փորձում որևէ կերպ մեղմացնել Մեծ Մասիսի մարտաշունչ տրամադրությունը, ոչ միայն չի զսպում նրան, այլև ուղղակի կոչ է անում է՛լ ավելի մոլեգնել, մրրկել, «ծրխիկ ծիրանի» արտավիժել: Այլ կերպ ասած՝ Մեծ Մասիսի մեջ սիմվոլացնելով հայ ժողովրդին՝ Ալիշանը կոչ է անում չհանդուրժել տիրող լուծը, չհուսահատվել անհաջողություններից, այլ ոտքի ելնել բաղձալի ազատությունը նվաճելու, հայրենի երկիրը փրկելու համար.

*Շարժի՛ր, հա՛ջարժի՛ր Ավագրդ Մասիս,
Արձան պարծանաց հայոց աշխարհիս,
Շընչե, հա՛ջընչե ծրխիկ ծիրանի
Որ քո մանկըտեաց հուստ նշան լինի...
Ահա շարժեցավ Ավագըն Մասիս
Արձան պարծանաց հայոց աշխարհիս.
Ահա շարժեցան դաշտք Արարատա,
Դու՛ք այլ շարժեցեք, մանկըտիք Հայկա:*

Առանձնապես ուժգին է բանաստեղծության վերջին քառատողը, ուր հեղինակը «Հայ մանկտի»-ներին կովի հորդոր կարդալուց հետո, հայրենիքի ազատության սիրով բորբոքված և թշնամուն ջախջախելու անխախտ վճռականությամբ լի, ինքն է համարձակորեն նետվում պայքարի՝ կոչ անելով հետևել իրեն Մասիս գնալու համար, այսինքն՝ մեծ շարժմանը միանալու է գնում նաև «ծեր Նահապետը»:

Ինչպես տեսնում ենք, Ալիշանի երգերը ռոմանտիզմի մեծ բռնկում էին արևմտահայ քնարերգության մեջ և ունեցան ազգային նշանակություն:

Ալիշանի հաջորդ՝ «Աշոտ Երկաթ ի ծովուն Սևանա» բանաստեղծությունը ևս արտահայտում է հայրենասիրական ջերմին տրամադրություններ: Հայտնի է, որ հայ գրականությունը հյուսել է բազմաթիվ էջեր, որոնք վերաբերում են 10-րդ դարի Բագրատունյաց քաջարի արքային՝ Աշոտ Երկաթին: «Ով ասես որ չի գրել Աշոտ Երկաթի մասին,- այս

առիթով նկատել է ակադ. Ա. Տերտերյանը,- բայց այդ պատմական անձի երկաթ լինելը, այսինքն՝ հերոս լինելը, միայն կարողացել է ցույց տալ Ալիշանը: Նույնիսկ Մուրացանի պես մի արտակարգ տաղանդ մասամբ աչքաթող է արել Աշոտի երկաթությունը և նրան դարձրել դարավերջիկ սենտիմենտալիստ»¹: Հիրավի, ակամա հիշում ես Մուրացանի գլուխգործոց երկի՝ «Գևորգ Մարգպետունի» վեպի կենտրոնական հերոսներից մեկին՝ Աշոտ Երկաթին՝ ընկճված, երկրի քաղաքական գործերից հետ քաշված, ավելին՝ սիրուց բզկտված խեղճուկրակ մի էակ, որը պատրաստ է «երկնքի աստղերը կողոպտելու՝ վարձահատույց լինելու համար այն մարդուն», որը մոռանալ կտա իրեն իր անցյալը... Եվ ցավալիորեն պիտի արձանագրել, որ Մուրացանի «շնորհիվ», ավելի ճիշտ՝ պատճառով, հայ սերունդների գիտակցության մեջ ու մտապատկերում խրոխտ արքան արդեն հարյուր տարուց ավելի այդպես էլ քանդակված է՝ խեղճ, նույնիսկ ողորմելի... Մեզ բնավ իրավունք չվերապահելով դույզն-ինչ նսեմացնելու Մուրացանի նշանավոր պատմավեպը (այն արվեստի գլուխգործոց է, որը հատկապես փայլում է հերոսների խոր հոգեբանության ու հակոտնյա զգացմունքների բացառիկ ուժի վերահանումներով), այնուամենայնիվ, չենք կարող չնկատել, որ Մուրացանն այդտեղ նկատելիորեն հեռացել է պատմականությունից ու, մեղմ ասած, դրսևորել անարդար վերաբերմունք:

Բայց ահա Ալիշանը. իր բանաստեղծության մեջ նկարագրելով Աշոտ Երկաթի հերոսական ու հայրենասիրական գործունեությունը (հանկարծակի հարձակում թշնամու վրա, վերջինիս տրված ջարդը Սևանի ափին, թշնամու խուճապահար փախուստը)՝ նա կարողացել է բացահայտել քաջասիրտ Երկաթ-արքայի ճշմարտացի կերպարը: Այն ավելի շոշափելի է դառնում, երբ բանաստեղծը նրան պատկերում է զինվորների միջավայրում խրախույս կարդալիս:

1858-ի «Բազմավեպ»-ի ապրիլյան թվում հրատարակված «Լուսնկայն գերեզմանաց հայոց» բանաստեղծության մեջ, սակայն, նախկինում մարտ ու մրրիկ երգող Ալիշանը հակվում է դեպի հոռետեսությունը. նա սկսում է մի սրտակեղեք ողբ ավերված եզերքի ու նրա առաքուր հուշարձանների շուրջ: Բանաստեղծը հայոց անցյալի փառքից իր ապրած ներկա շրջան է կանչում Հայկին, Արամին, Տիգրանին՝ այս անգամ արդեն ոչ թե հայրենասիրություն սերմանելու, այլ ողբակցելու իրեն:

Ալիշանը 1863-ին գրում է «Հայ հանճար» բանաստեղծությունը: Նկատենք, որ այն գրելուց մեկ տարի առաջ՝ 1862-ին, տեղի էր ունեցել Զեյթունի նշանավոր հերոսամարտը, որն անսահման ոգևորությամբ էր համակել ամբողջ հայությանը: Եվ բանաստեղծության մեջ որոշակիորեն

¹ Տերտերյան Ա., Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 55:

նկատելի են հենց այդ տրամադրությունները: Օտար ավերից շնորհաշատ բանաստեղծն ի լուր ամենքի տարփողում է, որ թեև Հայաստան աշխարհն այժմ զրկվել է իր նախկին հզորությունից, այնուամենայնիվ այն մոխրակույտ չէ և ոչ էլ անապատ:

Հայաստան անկեր,

Բայց ո՛չ է անցեր:

Բանաստեղծության վերջում Ալիշանը դառնում է հայ հայրենիքի այն նույն կրակված ու հայրենասեր զավակը, որպիսին էր 1849-ին:

1847 թվականի «Բազմավեպ»-ի հոկտեմբերյան թվում հրատարակվում է Ալիշանի՝ «Նահապետ» ստորագրությունը կրող գլուխգործոցներից մեկը՝ «Պլպուլն Ավարայրի» պոեմը: Նշանավոր պոեմում ևս բանաստեղծը, վերակենդանացնելով հայ ժողովրդի 5-րդ դարի պատմական անցյալի հերոսական դրվագները, ամբողջ հյուսվածքում հայրենասիրության ազնիվ հրդեհներ է բորբոքում հայ սերունդների սրտերում:

«Երգք Նահապետի» շարքին պատկանող մյուս գործերի նման «Պլպուլն Ավարայրի»-ն ևս սկսվում ու ավարտվում է խոսակցությամբ՝ այն տարբերությամբ միայն, որ հեղինակն սկզբում դիմում է լուսնյակին, իսկ վերջում՝ կովից հետո՝ սոխակին: Պոեմի սկզբում դիմառնության եղանակով դիմելով լուսնին՝ բանաստեղծը քնարական տրամադրությամբ գրում է.

Ո՞նց գաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ

Համաստիյուտ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,

Եվ Նահապետս, որ մըտոք մոլար

Գիշերաժամիկ ժուռ գամ յԱվարայր,

Ուր քաջ ու աննման հարք մեր հայկազունք

Ընկան զետ հսկա, կանգնեցան զվարթուն:

Հեղինակն այնուհետև նույն եղանակով դիմում է Տղմուտ գետին («Դու այլ, ո՛վ Տղմուտ, տրտում ու արյունոտ...»), հետո՝ սոխակին («Ո՛հ, դու բարեկամ այրած սրտերու...»): Հետո ծայր է առնում խոհրդ 451-ին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտի և նրա հերոսի մասին: Սոխակը, որին նա դիմում է, Եղիշե պատմիչն է՝ Վարդանանց հերոսամարտի երգիչը:

Պոեմն սկսվում է Ավարայրի դաշտի նկարագրությամբ: Ճակատամարտի նախընթաց գիշերը խաղաղ է, բայց այդ անդորրությունը խաբուսիկ է. երկու բանակներն էլ տենդագին պատրաստվում են ահեղ օրվա բախտորոշ ճակատամարտին: Ալիշանը հայոց և պարսից բանակները

պատկերել է լույսի ու ստվերի հակադրությամբ. եթե առաջինը ողողված է լուսնի լույսով, ապա երկրորդը՝ սև ամպի ծածկույթով: Իսկ դա խորհրդանշական է. բանաստեղծը սիմվոլացրել է երկու հակոտնյա ուժերի՝ ազատության ու բռնության բախումը՝ ընդգծելով Ավարայրի դաշտում հայոց մղած ոգորումի ազատագրական բնույթը:

Գիշերային համատարած անդորրության մեջ արթուն է միայն Վարդան Մամիկոնյանը, որը, «ծայրախաչ նիզակը թևի տակն առած», շրջում է վրանից վրան ու հսկում իր զինվորների գիշերային հանգիստը: Ահեղ ճակատամարտի նախօրյակին նա մտքում մի անգամ ևս կշռադատում է իրադրությունը, կռահում նենգ ոսոխի հնարավոր բոլոր խորամանկությունները՝ նրան արժանի հակահարված տալու համար: Այդպես է արել քաջ սպարապետը՝ հիսուն ճակատամարտեր շահելու իր հարուստ փորձից ելնելով, և այդպես է անում այժմ՝ մտազբաղ ճեմելով համակ քուն մտած հայոց ռազմաճակատով: Բանաստեղծը պոեմի այդ հատվածում կարողացել է հասնել այն բանին, որ առերևույթ հանդարտության մեջ ստեղծվի հոգեբանական զգալի լարում, հուզումնալից վիճակ: Այստեղ արդեն բացակայում է պոեմի սկզբնամասի ջերմ քնարականությունը:

Բացվում է հաջորդ՝ արյունալի օրը: Ավարայրի դաշտավայրում արյունը հոսում է Տղմուտ գետի պես. ընկնում են պարսիկները, ընկնում են հայերը՝ քաջագուններ Գարեգինն ու Ռոստոմը, Վռամիկն ու Արշավիրը, Արտակը, Խորենը, շատերը... Արյունոտ այդ պայքարում ընկածներին ու ընկնողներին նկարագրելով՝ Նահապետը մրմնջում է.

*Վասըն քո ընկան, աշխա՛րհ իմ Հայոց,
Կըտրիճք անըմանք, վեհք հյուսիսայնոց:*

Ընկնում է նաև հայոց սպարապետը, բայց հայ ժողովրդի մաքառումները շարունակվում են տարիներ, դարեր... Եվ հավերժանում է հայոց սպարապետը.

*Գանչե՛ պըլպուլիկ, կանչե՛ հոգեձայն,
Որ երկնուց ի վայր հայի և Վարդան,
Հիշե՛ գՀայաստան տուն յուր սիրական,
Հայաստան հիշե՛ գյուր Կարմիր Վարդան:*

Աշխարհաբար պոեմների ասպարեզում «Պլպուլն Ավարայրի»-ից գրեթե տասը տարվա ընդմիջումից հետո՝ 1857-ին, Ալիշանը գրում է իր վերջին՝ «Շուշանն Շավարշանա» պոեմը, որը, ինչպես հավաստում է Հայր Ս. Երեմյանը, բանաստեղծի ամենասիրած գործն էր: Վանական միջավայրը բնականաբար չէր կարող իր կնիքը չդնել Ալիշանի աշխարհայացքի վրա, և վերոհիշյալ պոեմը հեղինակի կրոնամիստիկ զգացում-

ների գրական արտահայտությունն է, եթե կարելի է այսպես ասել՝ մի ձոն քրիստոնեական հավատի համար նահատակված ու սրբացված կույսին:

Գաղափարական տեսակետից որոշ խոցելի կողմեր ունենալով հանդերձ՝ պոեմի գրական-գեղարվեստական արժանիքները, սակայն, անժխտելի են: Թերևս ուրիշ ոչ մի գործում գեղեցիկ պատկերների, բնորոշ ու հաջող համեմատությունների, ճոխ ու ճկուն նկարագրությունների այնպիսի առատության չես հանդիպի, ինչպես հիշյալ պոեմում: Եվ այդ ամենը՝ գեղարվեստական բարձր ճաշակի տեղին ու համաչափ պահպանմամբ: Այս տեսակետից առանձնապես հաջող է տրված «նազելի արքայադստրիկ» Սանդուխտի նկարագիրը.

*Քանց զարյուսակ պսպղուն
Ի մեջ մանտրիկ ամպերուն,
Քանց վարդալույս արևակ
Ի խնձորի տերևակ,
Քանց Երասխա նունուֆար
Գլխիկն ի ցօղ շարուշար,
Քանց զամենն ալ գեղեցիկ
Նազի Սանդուխտըն բամբռչիկ:*

Սանդուխտի կողքին ոչ պակաս հաջողությամբ պատկերված է նրա հայրը՝ Սանատրուկ արքան, որը, իմանալով աղջկա վճիռը և սարսափելով դրանից, սկզբում փորձում է համոզել դստերը: Նա աղջկան խոստանում է ամեն ինչ՝ հարստություն, փառք, իշխանություն, խոստանում է անկարելին, սակայն Սանդուխտն անդրդվելի է: Դա կատաղեցնում է հորը: Ալիշանը կարողացել է գեղարվեստական ուժեղ շեշտերով նկարագրել մոլեգնած արքային, որը լսելով աղջկա մերժումը՝

*Փերթ մի փըրթավ ի սըրտեն
Եվ հեռացավ Սանդրխտեն.
Կանչեց նրման առյուծու
Երդվավ լուսնի ու արևու
Ջետ ըզկայծակ սև ամպուն
Բերնեն փըչեց բոթ մահուն:*

Արքայի հրամանից հետո Սանդուխտին պետք է սպանեն: Բոլոր ներկաները՝ մեծ թե փոքր, կին թե տղամարդ, լալիս են լուռ ու անսփոփ: Գեղեցկուհու մահն էլ պատկերված է գեղարվեստական մեծ վարպետությամբ:

*Կարմիր կաթեր ի կըրծքեն
Վարդեր բուսան չորք դիեն...*

Ամփոփելով Ալիշանի անցած ամբողջ գրական ուղին՝ այն կարելի է ներկայացնել այսպիսի մի նախադասությամբ՝ նա սկսեց որպես *Միս-*

թարյան, զարգացավ որպես Նահապետ և ավարտեց որպես Հայր Ղևոնդ: «Նոճիի նման ուղղաբերձ ու նուրբ հասակը, հերապանձ գլուխն ու ապողոնյան ճակատը, խոշորագեղ ու անուշահայաց աչքերը՝ Մելպոմենեական անուշ տխրությամբ մեկ կողմեն և մյուս կողմեն ալ անմեղության ժպիտովն,- իբրև լուսաստվերներով,- օժտված դեմքը, ինչպես նաև խոկումնալից և զգացումներու մեջ ընկղմած լռությունը, այլովք հանդերձ, կհորինեին բուն բանաստեղծի դիմագծությունը, ներքին ու արտաքին տրամադրությունները» (Բարսեղ Սարգիսյան)¹, - այսպիսին մնաց Ալիշանը ժամանակակիցների ու հաջորդների հիշողության մեջ: Նրա մասին այսպիսի և է՛լ ավելի ջերմ տողեր են գրել Արփիար Արփիարյանը, Գրիգոր Արծրունին, Դանիել Վարուժանը, Արշակ Զոպանյանը և այլք:

Հետագայում էլ, ուրիշ առիթով անդրադառնալով Ալիշանին, Նալբանդյանը ոչ միայն կրկնեց իր գնահատականն առանց որևէ վերապահության, այլև ընդգծված դրվատանքով արտահայտվեց նրա աշխարհիկ պոեզիայի մասին: «Այս արժանապատիվ անձը,- գրում էր նա,- ծանոթ է հայոց ազգին մանավանդ Նահապետի անունով: Նորա «Ավագ և Փոքր Մասիս», «Հայոց աշխարհիկ», «Պլպուլն Ավարայրի» տաղեգությունները ջերմացուցեր են շատ սրտեր Նահապետի անունի վերա»²: Ալիշանի քնարերգության նկատմամբ Նալբանդյանի սերը վառ է արտահայտվել նաև «Կրիտիկայում...». «Չենք մոռացած «Նահապետ» ստորագրությամբ Հ. Ղևոնդ Ալիշանյանց արժանավոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթվածքը - «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ» և մյուս բոլոր աշխարհաբար ոտանավորքը, բայց այստեղ չհիշեցինք, որովհետև արձակ բանաստեղծության վերա էր մեր խոսքը, ապա թե ոչ, չափաբերական քերթվածոց մեջ արժանավոր վարդապետը ախոյան չունի, եթե մենք լռենք, Ավարայրի բլբուլը կխոսի»³:

«Մի ջրվեժ է Ալիշան,- նրա մասին գրում է Ա. Արփիարյանը,- որ ոռնալով ժայռեն ի վար կնետվի, փրփուր և կոհակ կժայթքե դեպի երկին և քարերը ծեծելով, խութերու վրայե ցայթքելով կվազե ահեղամոռուչ, կարծես մի հավիտենական խոչընդոտի դեմ կովելով, մոլեգնելով, աղմկելով Բարձր են ի վար կոստնու, ավելի վեր թռչելու համար»⁴: Նույն արևմտահայ երևելի գրագետն այնուհետև հիշում է, որ Ալիշանը «մեր պատանեկության օրերու ամենեն մեծ հրճվանքն է, մեր տեսուչն է, որ ոչ

¹ «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 160:

² Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1979, էջ 430:

³ Նույն տեղում, հ. 4, 1983, էջ 170:

⁴ «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 9:

միայն մեծ հայրենասեր մը է, մեծ միտք մը, այլ նաև մեծ սուրբ մը»¹: Կամ՝ «Հ. Ալիշան Ս. Ղազարու ոգին է»²:

Լսենք Ալիշանի ժամանակակիցներին՝

Նիկողայոս Քարամյան - «Հայր Ղևոնդը կենդանի և լուսաջահ է ամբողջ միաբանության համար: Նրա աշխատասիրությունը, հանճարը, համեստությունը, բարեբարո վարքն, գիտությունն ու հռչակը խթան է ամեն մի երիտասարդ վարդապետի համար... Նա օրինակ է թե՛ մեծերին, թե՛ փոքրերին»³:

Թադևոս Թումաճան - «Հայր Ալիշանի գրական հսկա գործունեությունը արդյունք է հիանալի կարողության և բնատուր ձիրքերու, որոնցմով օժտված էր մանկութենէն ի վեր: Ան ուներ ամենասուր միտք և անվրեպ հիշողություն... Ան բանաստեղծ ծնած էր, բառին ամենալիակատար իմաստովը, բարձր և լուսաշող, նման հսկայագոր Մեծ Գիսավորներու՝ որոնք դարերու ընթացքին հազիվ երբեք կտեսնվին: Այսպիսի մեծ միտք մը սահմանափակ երկրի մը համար չէ անշուշտ: Իսկ եթե Հայաստանը նախընտրեց ավելի ու գոռացուց Բամբին փառագոչ, պատճառը անօրինակ հայրենասիրությունն էր... Մահու չափ կատեր ինքնահավանությունը ու կփախչեր անկէ, ինչպէս օձն մը»⁴:

Տիգրան Նազարյան - «Խրիմյան Հայրիկ և Հայր Ղևոնդ Ալիշան՝ միմի պայծառ, կենսաբար, բուժիչ ու սննդաբար ճառագայթներ եղած են, համայն հայության սիրտ-հոգի-միտք-զգացում դաստիարակող, կռող կոփողներ... Հավերժ պայծառ դարեր Ս. Ղազարի գիտնական Կաճառին»⁵:

Հովհաննէս Թորոսյան - «Անմեղ, սիրուն, երջանիկ կյանք մանցունելով՝ մեր Նահապետը մինչև վերջին օրը թռավ երկինք, կտակելով մեզ իրեն առաքինության օրինակները, իրեն հոգին, և ազգին՝ իրեն ստվար հատորները»⁶:

Հայր Միմոն Երեմյան - «Մենասեր հոգին մենավոր մնաց, հուղարկավորները գացին հեռացան. տխուր է՛ր օդը, տխուր և օրը. վերահաս գիշերը հասավ ցուրտ ու մոնչող հողմով. հիշեց լուսնակը Նահապետին այն պատվերը, զոր տված էր իրեն հայոց գերեզմաններին: Պատռեց ամպերը, վանեց խավարը, բայց քամին սև ամպերը կմղէր, կուգային անոնք զինքը թաղելու. որոտաց ձայն մը մեր գերեզմանէն. կա՛ց, մեկ

¹ **Գաբամաճյան Մ.**, Հատընտիր հատվածք, Պոլիս, 1903, էջ 28:

² «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 77:

³ Նույն տեղում, էջ 39-40:

⁴ Նույն տեղում, էջ 185, 193:

⁵ Նույն տեղում, էջ 163:

⁶ Նույն տեղում, էջ 138:

վայրկյան մ'ալ կա՛ց իմ լուսնակ, հոս ար մը կա ծանոթ Նահապետիս, եկուր հոս կաթե լույսիդ արտասուք, Նահապետին է այս գերեզման...»¹:

Այսպես, ահա, առանձնացած Վենետիկի Ս. Ղազար կղզում՝ հայոց տաղանդաշատ Նահապետը անդուլ տքնանքով կազմակերպում էր հայրենի ժողովրդի հոգևոր լիցքերը, նոր հորիզոններ բացում ազգային երգի գալիքի համար: Նրա քնարերգության լավագույն մասը հյուսվեց ջահել օրերին, մտքի ամենաերևակայելի սլացքների ու պայծառ տեսիլքների բովում և դարձավ հայ սերունդների հոգու ազնիվ բաղադրիչներից մեկը:

Альберт Макарян

Доктор филологических наук, профессор

РЕЗЮМЕ

ГЕВОНД АЛИШАН: ЧЕЛОВЕК И ПОЭТ

Ключевые слова: Гевонд Алишан, Мхитаряны Венеции, романтизм, лирика, ашхарабар, национальная поэзия, поэма «Песнь Нахапета», современники, мемуары.

Доклад посвящен 200-летию юбилею со дня рождения великого армянского поэта и ученого Гевонда Алишана. Перед автором поставлены в основном две цели: прежде всего представить величественный нравственный облик «Армянского Нахапета», его горячий патриотизм, безмерное трудолюбие и крайнюю скромность, а затем – отметить идейно-художественные достоинства и особенности сборника «Песнь Нахапета», сыгравшего исключительную роль на пути создания армянской национальной поэзии 50-60-х годов 19-го века. Не упущены из поля зрения и иные вопросы, касающиеся темы исследования, а также оценки известных людей.

ALBERT MAKARYAN

Doctor of Philology, professor

ABSTRACT

GHEVOND ALISHAN: THE MAN AND THE POET

Key words: Ghevond Alishan; Mkhitaryans of Venice; romanticism; lyric poetry; ashkharabar (Modern Armenian language); national song, “Songs of Nahapet”; poem; contemporaries; memoirs.

The speech is dedicated to the 200th anniversary of the Armenian outstanding poet and scientist Ghevond Alishan. The author has mainly set forth two aims: first, he introduces the high moral posture, warm patriotism, boundless diligence and extreme modesty of “Armenian Nahapet” and then points out the ideological and artistic merits of his collection “Songs of Nahapet”, that has played an exceptional role in the creation of

¹ Նույն տեղում, էջ 112:

Armenian national song of 50-60s of 19th century. Other issues related to the theme and the assessments of the famous people are also taken into consideration.

REFERENCES

1. Abeghyan M., Yerker, h. D, Yerevan, 1970.
2. Alishan Gh., Yerker, Yerevan, 1981.
3. Alishan Gh., Yushikq hayrenyats hayoc, h. 2, Venetik, 1869.
4. “Alishane zhamanakakitsneri husherum”, ashkhata sirutyamb S. Shtikyani, Yerevan, 1974.
5. “Bazmavep”, Venetik, 1847-1867.
6. Gabamajyan M., Hatentir hatvatsq, Polis, 1903.
7. Hay nor grakanutyan patmutyun, h. 1, h. 2, Yerevan, 1962.
8. Hay qnnadatutyan patmutyun, h. 1, Yerevan, 1985.
9. Hermet Aleramo, Ratti di Dezio Paola Koni, Hayeri Venetike. Tasnvets dar patmutyan yev araspeli mijov, Yerevan, 2000.
10. Leo, Rusahay grakanutyan patmutyun, Venetik, 1904.
11. Manvelyan L., Rusahay grakanutyan patmutyun, h. A., Aleqsandrapol, 1909.
12. Nalbandyan Mik., Yerkeri liakatar zhogh. vets hatorov, h. 1-4, Yerevan, 1979-1983.
13. Shtikyan S., Alishani gegharvestakan steghdzagordzutyune, Yerevan, 1967.
14. Shtikyan S., Ghevond Alishani hayrenasirakan poezian, Yerevan, 1959.
15. Tamrazyan Hr., Yerker, h. A., Yerevan, 2006.
16. Terteryan A., Hay klasikner, Yerevan, 1944.
17. Varujan D., Yerkeri liakatar zhogh., Yerevan, h. 3, 1987.
18. Yeremyan H. S., Kensagrutyun H. Alishani, Venetik, 1902.

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու
vorskanyan.heriknaz@mail.ru

**Հ.Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԵՎ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ՝ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՒՑՄԻՆ ԵՎ
ԽՈՐԵՆԱՅՈՒ ՈՂԲԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՉԱՓԱԾՈ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Բանալի բառեր՝ Ղևոնդ Ալիշան, Խրիմյան Հայրիկ, Սանդուխտ կույս, Թադեոս առաքյալ, Արտազ գավառ, Մովսես Խորենացի, Շուշան, ողբ, վկայաբանություն, կույսի շղթաներ:

Ղևոնդ Ալիշան և Խրիմյան Հայրիկ. ճակատագրական դիպվածով նույն ժամանակաշրջանում ապրած, ավելին՝ նույն թվականին (1820) ծնված երկու հզոր անհատ, Հայ ոգու, հայոց բնաշխարհի իմացությանը հետամուտ երկու բացառիկ երևույթ, որ իրենց կյանքով ու գործունեությամբ տարեգրել են ժամանակը. Ալիշանը՝ Վենետիկի Ս. Ղազար կղզում՝ հազարամյա ձեռագրերի ու իր իսկ հրատարակած մատյանների էջերում, Խրիմյանը՝ հասարակական-քաղաքական կյանքի անմիջական հորձանուտում:

Մեկը՝ Ալիշանը, Վարուժանի ձևակերպմամբ, «մտածման հսկա», որ մութի, մոռացումի, լռության քողից հանեց մեր «դափնիներու թերթերն հին» և «դնելով զանոնք երգի մը վրան»՝ պարզեց մեզ՝ իբրև «վիրածոր շողն Անցյալին», «արևն հոգվույն մեջ բանտած արծիվ», որ բարձրացրեց մեր հոգին, չափեց մեր Ապագան¹, մյուսը՝ Խրիմյանը, Սիամանթոյի բնութագրմամբ, «մեր ամենուն մտածումին վարդապետը», «տառապանքե ու մաքառումե աստվածացած սրբազան Ծերունի», որ փոթորկելով, հրաբորբ նայվածքներով ու ազատաշունչ խոսքերով բորբոքեց արյունը իր զավակների երակներում²:

Աստծու և հայրենիքի ամենագոր սիրով տոգորված երկու բանաստեղծ, որոնց աշխարհընկալման, ներգրգացողությունների ու գեղարվեստական մտածողության ուրույն առանձնահատկությունները կփորձենք իցույց դնել թեմատիկ նույն ընդգրկումն ունեցող չափածո ստեղծագործությունների հանդիպադրումով:

¹ Տե՛ս **Սիամանթո, Վարուժան**, Երկեր, Ե., «Սովետական գրող» հրատ., 1979, էջ 281-284:

² Տե՛ս նույն տեղը, էջ 51-54:

1857 թ. Ալիշանը գրում է. «Շուշանն Շաւարշանայ» պոեմը, որը տպագրում է 1858 թ. իր «Նուագք»-ի առաջին հրատարակության «Հայրունի» հատորում:

Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի նահատակության պատմությունն Ալիշանի ստեղծագործական ներշնչանքով վերածվել է շքեղ մի քերթվածի՝ ջերմությամբ, լույսով, գույնով ու բույրով պարուրված նագուկ, բայց հերոսական կույսի՝ հայոց առաջին վկայուհու կերպարակերտմամբ:

Մտահղացումը, կարելի է ասել, ունի իր ստեղծագործական նախապատմությունը:

Թադեոս առաքյալի վկայաբանությունը հայերի մկրտությանը նվիրված հին հուշարձաններից մեկն է, ըստ Ռ. Վարդանյանի՝ 420-423 թթ. գրված հայերեն առաջին ինքնուրույն երկը, որի աղբյուրը ասորի հեղինակ Լաբուրնայի «Թուղթ Աբգարու թագաւորի» գրվածքն է: Ուսումնասիրողը գրում է. «Սահակ կաթողիկոսի և Մաշտոց վարդապետի հանձնարարությամբ Հովսեփ Պաղնացին կամ Եզնիկ Կողբացին թարգմանեցին «Թուղթ Աբգարու թագաւորի և վարդապետութիւն Ադէի առաքելոյ»-ն, իսկ Սամուել եպիսկոպոսը գրեց Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը, դրանով իսկ ստեղծեց Հայաստանի քրիստոնեության պատմության նախնական հատվածը մինչև Գրիգոր Լուսավորիչ, այսինքն՝ «Բիւզանդարան պատմութիւնք»-ի հեղինակի վկայակոչած առաջին դպրությունը»¹:

1853 թ. Ալիշանը հրատարակում է Թադեոս առաքյալի վկայաբանության՝ 12-րդ դարի գրչագրից մեզ հասած պատումները՝ ամփոփելով «Սովիերք Հայկականք» -ի ութերորդ հատորում՝ «Վկայաբանութիւն եւ գիւտ նշխարաց Ս. Թադէի առաքելոյ եւ Սանդխտոյ կուսի» ընդհանուր խորագրով²: Ակնհայտ է Ալիշանի նպատակը. սերունդների քաղաքական մտքի մեջ ձևավորել պարծանքի ու հպարտության զգացում Հայաստանյայց եկեղեցու հանդեպ՝ իբրև ազգային գաղափարաբանության անփոխարինելի բաղկացուցիչ մասի:

¹ Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Ե., «Հայաստան» հրատ., 2001, էջ 67, 68:

Աբգարի թղթի և վկայաբանության մասին տե՛ս նաև Տեր-Դավթյան Բ., Հայկական սրբախոսություն, Վարքեր և վկայաբանություններ (V-XVIII դդ.), Ե., «Նաիրի» հրատ., 2011, էջ 40-41: Վկայաբանության մասին տեղեկություններ են պահպանվել մեր մատենագրության էջերում: Վկայաբանության բնագրի և Խորենացու Պատմության համապատասխան հատվածների զուգահեռները տե՛ս Հ. Ն. Անդրիկյանի ուսումնասիրության մեջ. «Բազմավեպ», թիվ 12, 1905, էջ 552-555:

² Սովիերք Հայկականք, հտ. Ը, Վենետիկ, 1853:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ մատենիկը բացվում է նրբափյուս շարականով՝ նվիրված Սանդուխտ կույսին.

Քեւ պարծի այսօր սուրբ եկեղեցի, ո՛վ վկայուհի սուրբ Սանդուխտ, որ զհայրականն քո թողեր զպաշտօն. վասն Քրիստոսի հեղեր զարիւն քո սուրբ:

Աշակերտեցար առաքելոյն Թադէոսի, և՛ ի հաւատս ճշմարիտս հաստատեցար, ոչ խառնակելով ընդ հեթանոսական պաշտօնսն. արժանի եղեր վերանալ առ Հայր:

Որ գտիկնութեանն քո թողեր զփառս, և աստուածային փառօրն զարդարեցար. այսօր դասակցեալ ընդ զուարթունս երկնից. վասն մեր առ Տէր բարեխօսեա՛:

Շարակնոցի գողտրիկ շարականի² հիշատակումը կարող ենք ընկալել իբրև Ալիշանի կողմից տրված զգայական գնահատական ու արժևորում Հայոց եկեղեցու պարծանքը դարձած դեռատի կույսի արարքի և ենթադրել, որ «Շուշանն Շաւարշանայ» վիպերգը գրելու շարժառիթը եղել է այս հատուկ վերաբերմունքը, որը նկատելի է նաև «Սովերքի» «Ազդ» կոչվող նախաբանի տողերում. «Գեղեցկահիւս և փափկախօս վկայաբանութիւնս կանուխ արուսեկի որ ի Քրիստոս Լուսոյն Հայոց, Ս. Թադէի առաքելոյ, և արփիաւորելոյն ի նմանէ չքնադափայլ աստղկանն, արքածին օրիորդին ասեմ Սանդիստոյ կուսին, զոր գոյ մեզ կարծել և պարծել իբրև նախընծայ պատարագ ի դստերաց մօրս հոգեւորի եկեղեցւոյ սրբոյ...»³:

Վկայաբանությունը ծավալուն է և բովանդակում է Թադէոս առաքյալի՝ Եդեսիայի Աբգար թագավորին բժշկելուց հետո Հայաստան գալու, Արտագ գավառի Շավարշավան թագավորանիստ քաղաքում քարոզելու պատմությունը: Առաքյալի քաղցրաբարբառ խոսքը և մարդկանց զանազան ախտերից բուժելը շատերին է մղում հավատալու Քրիստոսին, այդ թվում՝ Սանատրուկ թագավորի դստերը՝ Սանդուխտին, ով աշակերտում է ս. Թադէոսին, մկրտվում նրա կողմից: Ապա հաջորդում են կույսի և մյուս հավատացյալների բանտարկվելու, առաքյալի այցելության, աղոթքի գործությամբ կապանքներից ազատվելու, քրիստոնյա դարձած վկաների նշխարներին երկնքից լույս իջնելու, նրանց մարմին-

¹ Նույն տեղում, էջ 4:

² Տե՛ս Շարակնոց, Կ. Պոլիս, 1794, էջ 358:

³ Սովերք Հայկականք, հտ. Ը, էջ 5:

ներն ամփոփելու, Սանդուխտի և հոր երկխոսության, կույսի նահատակ-վելու պատումները:

Պոեմի և վկայաբանության համեմատությունը ցույց է տալիս, որ «գեղեցկահիւս և փափկախօս» վկայաբանությունից վերցրած դրվագների ընտրությունը, սյուժետային ընթացքն ու թեմայի լուծումը Ալիշանը կառուցել է Սանդուխտի՝ Արտազ գավառի Շավարշավան ավանի քնքուշ կույսի շուրջ, որի կերպարը, պոեմի վերնագրից սկսած, կապվում է շուշան ծաղկի հետ: Պարզ զուգահեռը՝ կույս-շուշան ծաղիկ, անմիջապես խորացնում է համեմատությունների մետաֆորային ներուժը և ընթերցողին ստիպում մշտապես մնալ փոխաբերության հենքի վրա ստեղծված հոգևոր տիրույթում:

Չյունագույն կամ կաթնագույն հինգթերթյա դեղին թելերով անուշահոտ ծաղկի՝ շուշանի՝ «Հայրուսակում» Ալիշանի տված բնորոշումը՝ «տեսողին և լսողին միտքը կու յափշտակէ», կարծես հենց Սանդուխտի մասին է: Շարունակության մեջ կարդում ենք. «Որչափ այլ նիւթական բոյս մ'ըլլայ՝ ուրիշներու նման, բարոյական կամ աննիւթական գաղափար մ'այլ կ'ազդէ», ապա հետևում է համեմատությունը հնուց ի վեր ծաղիկների գլխավորությունը ժառանգած Վարդի հետ և Շուշանին նախապատվություն տալն այն բացատրությամբ, որ «սակայն երբ յիշուի որ հինք՝ Աստղկան կ'ընծայէին զայն՝ տոփանաց դիցուհւոյն, իր յարգն ու վարկը կորսընցունէ քրիստոնէայ մտաց առջեւ, որ անոր հակառակ՝ զՇուշանն համարին օրինակ ողջախոհութեան և կուսութեան, ազնուագոյն ձրից և զգացմանց մարդկան, մանաւանդ իգական սեռի»¹:

Իսկ ձյունաթույր ծաղկին լուսավոր աստղի նմանեցնելու առնչությամբ Ալիշանը վկայակոչում է Փիլոն Եբրայեցու բացատրությունը. «... թերևս վասն սպիտակութեանն և զի լուսատեսիլ իսկ է»²:

Վկայաբանության նախաբանում Սանդուխտին տված «պարծանքի արժանի չքնադափայլ աստղիկ» բնորոշումը պայմանավորված է աստղ-լույս եզրերի առարկայական և հոգևոր իմաստների ներթափանցումով: Հենց այս սկզբունքով էլ պոեմում նույն ծաղիկ-աստղիկ զուգահեռով Ալիշանը հյուսել է կույսի զարմանալի կենդանի կերպարը: Եվ այնքան գեղեցիկ, որ անգամ միջնադարյան բանաստեղծության ծանոթ բառերն ու արտահայտությունները, որ օգտագործել է Ալիշանը՝ սիրասնունդ, շնորհաշուք, «մեղրը կաթ է շրթներուն», չեն զրկում նկարագրությունը ինքնատիպությունից:

¹ Ալիշան, Հայրուսակ կամ հայկական բուսաբանութիւն, Վենետիկ, 1895, էջ 492-494:

² Նույն տեղում, էջ 494:

Վկայաբանության ընդամենը մեկ նախադասությունը Սանդուխտի արտաքինի մասին՝ «որ էր 'ի տիոց տղայ, գեղեցիկ տեսեամբ և վայելուչ երեսօք, որ ոչ գտանէր համեմատ նմա 'ի վերայ երկրի»¹, հիմք է հանդիսացել բանաստեղծի համար երևակայությամբ կերտելու կանացի իսկապես շքեղ կերպար:

Թվում է, թե պոեմի տողերում հյուսվում է լույսի թրթռուն, խաղացկուն երգը՝ խորոտիկ քողով, փայլկտան աչքերով նազելի արքայադստեր կերպարանքով, որ, խոպոպները հովին տված, տատրակի պես «մանտրուքայլ» թռչկոտում է Շավարշավանի դաշտերում:

*Ճակատն ի քոյ խորոտիկ,
Ցանած ի հով խոպոպիք,
Տատրակ տոտամբ մանտրուքայլ
Ման գայ ի դաշտ ցողափայլ.
Մեղըր կաթէ շըրթներուն,
Փայլկըտան աչքըն սիրուն²:*

Գրականագետ Վ. Դերիկյանը իր «Ալիշանը և հայ հին գրականությունը» թեմայով ատենախոսության մեջ, զուգահեռներ տանելով վկայաբանության և պոեմի միջև, նշում է, որ Ալիշանը, խուսափելով լրացուցիչ մանրամասներով պոեմը խճողելուց, ինչպես նաև պոեմին առավել հուզականություն հաղորդելու համար, մի կողմ է թողել շատ դրվագներ և վկայաբանության առանձին տողերի ստեղծագործական զարգացմամբ կարողացել է միջնադարյան տաղարանների և ժողովրդական երգերի արտահայտչամիջոցների օգտագործմամբ շունչ ու պատկերավորություն հաղորդել սյուժետային ընթացքին: Նա նկատում է, որ բանաստեղծը Սանդուխտի՝ Թադեոս առաքյալին հետևելը հոգևոր հարսանիք է համարում, որի «երկրային մասը նկարագրելիս հետևում է ժողովրդական ստեղծագործություններին՝ «կարմիր կանաչ առագաստ», իսկ երկնային հատվածում՝ միջնադարյան հոգևոր բանաստեղծությանը»: Գրականագետի կողմից կատարված հետաքրքիր դիտարկումներից մեկն էլ հայոց դաշտերում մանտրուքայլ թևող տատրակի զուգահեռն է, որն անչափելի գեղեցիկ է թե՛ կերպարը բնութագրող հատկանիշների ընդգծումով, թե՛ իրենում ամփոփվող խորհրդաբանական իմաստների առումով³:

¹ Սոփերք Հայկականք, հտ. Ը, էջ 14:

² Նուագք, հտ.Գ., Հայրունի, Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան վարդապետի, Վենետիկ, 1858, էջ 248 (Այս հատորից հետագա բոլոր մեջբերումների էջերը այսուհետև կներկայացնենք մեջբերման վերջում):

³ Տե՛ս Դերիկյան Վ., Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուական ատենախոսություն, 1996, էջ 149-152:

Ալիշանն առհասարակ կույսի գեղեցկությունն ի ցույց դնելիս հավատարիմ է մնացել վկայաբանության մեջ տրված նրա նկարագրի հոգևոր խորհրդին.

*Պայծառ պատկեր կուսանաց
Հայոց պսակ պարծանաց...
...Հիւսիսային մեր աստղիկ
Հայաստանեայց գեղեցիկ,
Արենըման հայելի,
Արքայդրստրիկ նազելի (էջ 248) :*

Լույս ու գեղեցկություն է սփռվում Ալիշանի՝ նաև միջնադարյան ժողովրդական երգերի հետևողությամբ հյուսած համեմատություններից.

*Քանց զարուսեակ պսպրդուն
Ի մէջ մանտրիկ ամպերուն,
Քանց վարդենի արեւակ
Ի խնծորի տերեւակ,
Քանց Երասխայ նունուֆար
Գլխիկն ի ցոյ շարուշար,
Քանց զամէնն ա՛յլ գեղեցիկ
Նազի Սանդուխտըն բամբշիկ (էջ 249):*

Բնությունն անգամ ի զորու չէ թաքցնելու իր վերաբերմունքը. սպիտակ սարերը կարմրեբեւ են դառնում նրա տեսքից, ծառ ու ծաղկունք բողբոջում են, սար ու ձոր նրա շնչից ծաղկով են ծածկվում, նարգիզն իր բյուր աչերն է հանում, խոսում են թռչունները, թագվորորդի կտրիճները երանի են տալիս այն փեսային, ով իր ծոցը կառնի կույսին, երկինքն ուզում է, որ բամբիշը լինի իր գահի թագուհին, ծովը երագում է, որ ալիքները ծփան նրա հրամանով:¹

Օգտագործված հնարանքը միտված է թե՛ ընդգծելու կույսի գեղեցկությունը, թե՛ ուժգնացնելու Սանդուխտի «գոհաբերության», ապա նվիրաբերումի խորհուրդը, որ բացվում է նախ ծիր չունեցող ծփան ծովից լայն, երկնքից էլ բարձր ու անհուն երկրի, արևի լույսից պայծառ ահեղ

¹ Ալիշանն առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել միջնադարյան հայ ժողովրդական քնարերգության հանդեպ: 1852 թվականին Վենետիկում տպագրում է «Հայոց երգք ռամկականք» գիրքը: Տարբեր աղբյուրներից քաղած 19 բանաստեղծությունների մեջ կան հարսանեկան գեղեցիկ երգեր, իսկ «Երգ կաքաու» բանաստեղծության հետևյալ տողերը՝ «Աշխարհս ըմէն զըւարթ կ' անի, / Արուն ծովէն սիրտ կըհանի», ի ցույց են դնում արևածագին ծաղիկներով լցված ու շաղերով ցողված բնից ելնող խորոտիկ կաքավիկի թողած ազդեցությունը շրջապատի վրա, ճիշտ այնպես, ինչպես տեսնում ենք Ալիշանի պոեմի վերոնշյալ հատվածում: Տե՛ս **Ալիշան**, «Հայոց երգք ռամկականք», Վենետիկ, 1852, էջ 59:

թագավորի հիշատակությամբ, հետո «երկնախոսիկ փեսավեր» Թադեի՝ Սանդուխտին ուղղված հրավերով. «Ե՛կ հարսնացիր ի Քրիստոս»:

Երկնային տունն էլ արդեն պատրաստ է հոգևոր հարսանիքին, պատրաստ է ընդունելու Քրիստոսի անարատ կույսին:

Սանդուխտը նվիրվում է Քրիստոսին, և Քրիստոսի Շուշանը, որ իր շնչով, լույսով լցնում էր սար ու ձոր, հիշեցնում է դաշտերում աճող ծաղկի վայրի տեսակին, որի մասին Ալիշանն իր «Հայրուսակի» «Շուշան վայրենի» հատվածում գրում է, որ Տիրոջ կողմից հիշատակված այդ ծաղիկը՝ անմշակ, անդարման անապատում ինքնիրեն աճած ու ծաղկած, իր կարճ օրերի մեջ հասցնում է այնպե՛ս «գեղեցիկ փափուկ, պայծառ գունագույն փայլփայլել»¹:

Անդրադառնալով վկայաբանությունների կառուցվածքին՝ Ք. Տեր-Դավթյանը նշում է, որ նրանց բնորոշ ամենակայուն ու անփոփոխ բաղկացուցիչ մասերը երեքն են. «Վկայաբանության հիմքում ընկած է հավատափոխության հարցը: Մի փոքր նախադրությունից հետո անմիջապես ծագում է կոնֆլիկտը, հակադրությունը հերոսի և արտաքին ուժերի՝ քրիստոնյաների և հեթանոսների, իսկ ավելի ուշ շրջանի վկայաբանություններում՝ քրիստոնյայի և իշխող այլադավանների միջև: Հեթանոս թագավորը կամ բռնակալը պահանջում է, որ քրիստոնյան դավանափոխ լինի: Վկան կայուն է: Տիրակալը, տեսնելով, որ ոչ մի բանով հնարավոր չէ գայթակղել նրան, դիմում է ահաբեկման: Վկայաբանության հերոսը ենթարկվում է անասելի տանջանքների, ցուցաբերելով աննկուն կամք և անհողորդող ոգի, նահատակվում հանուն Քրիստոսի»²:

Պոեմը կառուցելիս Ալիշանն ըստ էության պահպանել է մատնանշված մասերը:

Նախադրությունն աղջկա գեղեցկության նկարագրությունից հետո առաքյալի հայտնվելու և սրբիկ կույսին Հիսուսին հարսնանալու առաջարկ անելու դրվագն է:

Կոնֆլիկտն սկսվում է հոր և աղջկա սրտառու խոսակցությունից, որը բացում է նրանց ներաշխարհը, մարդկային նկարագիրը դարձնում էլ ավելի մոտ ու հասանելի: Անբեկանելի է կույսի որոշումը.

Հայր, քանց գրեզ սիրելի

Չըկայր ոքիկ մ' ինձ յերկրի.

Բայց երբ զԱստուածն իմ զիտցայ,

Մէր՝ քան զամէն մեծ ճանչցայ (էջ 253):

¹ Ալիշան, Հայրուսակ, էջ 497:

² Տեր-Դավթյան Ք., Հայկական սրբախոսություն, Վարքեր և վկայաբանություններ (V-XVIII դդ.), էջ 27:

Չնայած հոգեկան տառապանքներին՝ անդրդվելի է նաև հայրը. կույսը բանտ է նետվում, կարծր կոճղը գահ է դառնում, շղթաները դառնում են ապարանջան:

Հերոսականության դրսևորումը պոեմում կույսի աներեր կամքի, տանջանքների, նահատակության, սրբացումի բանաստեղծական պատկերներն են:

Ալիշանը պահպանել է վկայաբանության ժանրի էական հատկանիշներից մեկը՝ կերպարի իդեալականացումը: «Սոփերքի» Ը հատորի թիվ 12 ծանոթագրության մեջ նշվում է, որ բնագրի երկրորդ ձեռագիր օրինակում Թադեն համբուրում է կույսի պատկերը¹: Մինչդեռ թե՛ վկայաբանության օրինակում, թե՛ պոեմում Ալիշանը նախապատվությունը տալիս է առաքյալի կողմից Սանդուխտի շղթաները համբուրելու տարբերակին՝ չցանկանալով անգամ փոքր-ինչ ստվերել առաքյալի վկայուհու կերպարները: Բնագրում՝ «Եւ եկեալ առ սուրբն Սանդուխտ՝ համբուրեաց զկապանս նորա»²:

Պոեմում՝

Սուրբ առաքեալն Հայոց լայր

Կապից կուսին պագիկ տայր (էջ 254):

Ազնվագարմ բամբիշը սրբացվում է. ոմն պատանու սրով սպանված կույսի սրտից լույս է շողում, որը մնում է երեք օր ու գիշեր:

Պոեմում սրի մեկ փայլի փոխարեն արդարության նաև երեք ուրիշ լույս է շողում.

Սուրբն շողաց մէկ մի փայլ

Սանդուխտ ծաթեց իրեք այլ (էջ 256):

Ապա արյան կաթիլներից չորս դին վարդեր են բուսնում.

Կարմիր կաթեր ի կըրծքէն,

Վարդեր բուսան չորք դիէն (էջ 256):

Կայծակնաթափ սրի հարվածը «գեղագրում է» գեղեցկության ու մահվան հանդիպումը մարող կույսի նկարագրության մեջ.

Աչքըն կոկոն մանուշակ,

Ամ՝ ի՛նչ նայուածք անուշակ.

Ափկիցք շուշանք կիսափակ.

Մէջ շրթներուն ի՛նչ կըրակ (էջ 256):

Ու թեն «ի՛նչ կըրակ» բառերի մեջ ծրարված է ամենաթանկը՝ կյանքը՝ տենչերով ու իղձերով, վայելքով ու հրճվանքով, բայց զարմանալիորեն ճնշող չէ նրանից ինքնակամ հրաժարումի այս զոհողությունը,

¹ Սոփերք Հայկականք, հտ. Ը, էջ 99-100:

² Նույն տեղում, էջ 17:

որովհետև հաջորդում է հոգեկան վերապացումի տեսարանը. երկնավոր թագավորն իր կարմիր հարսին տանում է իր մոտ՝ երկինք:

Ալիշանը վարպետորեն ստեղծում է տոնի տրամադրություն և ընթերցողին ուղղված «միամիտ» հարցով՝ «Հրեղեն կառքեր տեսնե՞ք դուք», նրան էլ մասնակից դարձնում կատարվածին, նրա մեջ էլ ամրակայում սեր ու հպարտություն հայոց քնքուշ կույսի հանդեպ:

Պոեմն ավարտվում է Սանդուխտի մարմինը վարդ ու շուշանով զուգելու, Թադեի հետ շիրիմ դնելու պատկերով և Նահապետի բարձրագույն ավետիսով.

*Ո՛հ, թե քանի՛ երջանիկ
է Հայաստան հայրենիք՝
Որ հանց բերաւ բոյս կուսան
Ուսկից հազար կոյս բուսան:
Երկինք կապուին երկրի հետ.
Քեզ ի նչ երգէ Նահապետ,
Սանդու խտ, անմահ թագուհի
Իմ Հայաստան աշխարհի:
Կուսանք հայոց, նոր շուշան
Բերէք ի դաշտ Շաւարշան (էջ 257):*

1901 թ. տպագրվում է Խրիմյան Հայրիկի «Վերջալոյսի ձայներ» ժողովածուն, որում ներառված է նաև նրա «Իմ ուխտ Թադեի վանուց» ստեղծագործությունը: Ծեր ու տկար բանաստեղծը, ով Արամյան համայն ազգի կաթողիկոսն է, դիմում է Հայոց հրեշտակին, որ թների վրա իրեն տանի Արտազ, ուր վեհագույն տաճարի մեջ հանգչում են Թադե առաքյալի ոսկորները, վանքի մոտ՝ փոքրիկ մատուռում, Սանդուխտ կույսի տապանն է:

Կատարվում է Վեհափառի անձկալից փափագը. հոգին ու միտքը ազատ թռիչքով հասնում են Արտազ, սակայն անլույս տաճարում հնչում է Թադեի տրտունջը, որ ինքը Հայաստան աշխարհում ցանել է բանի սերմը, ոռոգել իր արյամբ, բայց հայոց ազգն այսօր մոռացել է իրեն, և ավեր է դարձել Թադեի վանքը. տաճարը ճրագ չունի, չկա լուսարար, որ կանթեղը վառի:

Հավանաբար Խրիմյանն իր ստեղծագործությունը գրել է Մ. Նալբանդյանի՝ 1860 թվականին «Մեղու»-ում տպված «Օշական» բանաստեղծության պատկերների ու տրամադրությունների ազդեցության տակ, որովհետև կիրառված են նմանատիպ հնարանքներ: Ավերակ, խարխլված տաճարի մեջ, անթափանց խավարում Մեսրոպի անշուք շիրիմն է տեսել Նալբանդյանը և վրդովվել. ազգին գիր պարգևած, հայոց լեզվին կյանք տված Մեսրոպի շիրիմն ազգը զլացել է գիր ընծայել: Եթե Նալբանդյանը

դիմում է Օշականին, որ բողոքի ձայնը բարձրացնի մինչև երկինք և Քասախ գետի ալիքների միջոցով գանգատը հասցնի Էջմիածնյան վեհապետին¹, ապա Խրիմյանի բանաստեղծության մեջ Թադեն է ապսպրում Հայոց Հայրիկին տանել, հասցնել իր ձայնը հայոց ազգին ու պատմել, ինչ որ իր աչքով է տեսել:

Համբուրում է սուրբ գերեզմանը Հայոց Հայրիկը, լալով ելնում տաճարից, մտնում փոքրիկ մատուռը, որն ամփոփում է մեր առաջին վկայուն՝ սուրբ նահատակ Սանդուխտ կույսի մասունքները, ում Սանատրուկը նախ շղթայակապ նետել էր բանտ, ապա սպանելու հրաման տվել:

Ալիշանի՝ լույսով ու փայլով ողողված պատկերների, ճերմակ ու կարմիր վարդ ու շուշանի փոխարեն՝ կորդացած հայոց հողին լույս բերած առաքյալի անլույս ու ավեր մի տաճար Խրիմյանի բանաստեղծության մեջ, Թադեի շուրթերից հնչած իրավացի ու սրտառույզ գանգատ՝ հիշատակի կորստի տագնապով համակված, ոգևորությամբ ու անհուն հպարտությամբ տոգորված Նահապետ երգչի կերպարին հակընդդեմ՝ Հայոց Հայրիկի կորացած պատկերը, որ փոքրիկ մատուռում, արցունքն աչքերին, սուրբ շիրիմը գրկած, վերհիշում է բանտում Թադեի այցը Սանդուխտին, սուրբ շրթունքով կույսի շղթաները համբուրելը և հոգուն ազատ վերաթևումի բերկրանքն ու վայելքը պարզնելը:

Բուն վկայությո՞ւնն է նկատի ունեցել Խրիմյանը, թե՞ Ալիշանի պոեմը՝ իր բանաստեղծության մեջ Թադեի ու Սանդուխտի փոքրիկ պատումը խարսխելով հիշողության մեջ թևող «ասեն» բառով².

*Ասեն թէ մի պատեհ ժամու
Գնացել Թադեն Սանիկին այց,
Համբուրե՛լ է համբուրել
Կուսին շղթայն սուրբ շրթունքով,
Խրրախուսել իւր Սանդուխտ կոյս
Աւետել է հարսնութեան օր:
Ես հարսնուոր եմ փեսային
Քո փեսայն է խաչեալ Փրկիչ,
Առագաստն է լուսոյ երկինք,
Զօրացի՛ր դու հաւատով,
Թող քո մարմին շղթայն պնդէ,*

¹ Տե՛ս «Մեղու», թիվ 117, 1860, էջ 259-260:

² Ավ. Բսահակյանի հուշերից հայտնի է, որ Խրիմյանը բարձր է գնահատել Ալիշանին և ընդունել է նրա ազդեցությունն իր գրչի վրա: Նա խոստովանել է. «Մենք հասակակիցներ ենք. ես շատ կսիրեմ անոր. անուշ գրիչ ունի: Նա շատ է ազդեր իմ գրչի վրա, նա ինձ շատ բան է ներշնչեր»: Ավետիք Բսահակյան, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հտ. Տասնմեկերորդ, Երևան, 2020, էջ 6:

*Հոգիդ ազատ վերաթելե,
Երթայ խառնի լոյս երամին¹:*

Ինչպես երևում է, Խրիմյանն Ալիշանի նման հավատարիմ է մնացել բնագրին, բայց ի տարբերություն Ալիշանի, ով հայոց եկեղեցու և հայոց պատմության փառավոր էջն է նկարագրում՝ պատմական փաստի վերստին իմաստավորումը դիտարկելով իբրև ազգային դաստիարակության կարևոր դասերից մեկը, ապա Խրիմյանը, հայացք նետելով դեպի փառավոր անցյալ, այդ նույն պատմական փաստն է արձանագրում՝ ներկայի և անհեռանկար գալիքի ծանրության տակ կքա՞ծ:

Երկու ստեղծագործությունները սերտորեն աղերսվում են հոգեբանական զգացողությունների տիրույթում, զգացողություններ, որ պայմանավորել են նույն նյութի գեղարվեստական մեկնաբանության ելակետերը:

Ալիշանի՝ զգացմունքի ու մտքի ներդաշնակությունից ծնված պոեմին ուղղված խոսք է կարծես Խրիմյանի պարզ, հասարակ հյուսվածքը, որ լի է ցավով ու դառնությամբ՝ առաջացած շեն ու պայծառ, վառ ջահերով լուսավորված Էջմիածնի և Արտագում անճրագ, անտեր մնացած տաճարի պատկերների համադրումից:

Ալիշանի շարադրանքի ոճը համահունչ է արծարծված գաղափարին. հայ ազնվագույն օրիորդի՝ վկայուհի դառնալը, հայոց անուշ հողում նրա մասունքների հանգչելը նորի սկիզբ է, որի ծիրում երջանիկ Հայաստանի տեսիլն է:

Խրիմյանն անցել է այդ նորի ճանապարհով, նստել շեն ու պայծառ Էջմիածնի աթոռին, բայց նրան հանգիստ չի տալիս Թադեի տրտունջը՝ պայմանավորված հայոց ազգի կողմից առհավետ մոռացվելու տագնապով:

Ալիշանի հանդիսավոր ոճը, որ ձևավորվում է պոեմի հենց առաջին տողերից՝ «Կուսա՛նք հայոց, նոր շուշան// Տեսէք ի դաշտ Շաւարշան», չի օտարում իրենից ընթերցողին, հուզական հմայք ունի և աստիճանաբար շաղախվում է ժողովրդական բառ ու բանով, ժողովրդական լեզվամտածական տարրերով, ինչպես՝ աստղիկ, բամբջիկ, արևակ, տերևակ, խոռտիկ, ծոց, պզտիկ, կոճղիկ:

Խրիմյանի ստեղծագործությունը հոգեբանորեն ներգործում է անմիջապես՝ Հայոց հրեշտակին ուղղված խնդիրք-աղերսով, ուխտը իրականացնել չկարողացող ծերունու կերպարով: Հուզական լարվածությունը պահպանվում է մինչև վերջ. այնքա՞ն մարդկային ու ընկալելի են Թադեի

¹ Վերջալոյսի ձայներ, ողբագրեց եւ հոգեգրեց Խրիմեան Հայրիկ, Գահիրէ, Տպ. Ե., Թորոսեան, 1901, էջ 821-822:

ցավը, տաճարից դուրս եկող Հայրիկի արցունքները և անձկությամբ լի համբույրները՝ կույսի շիրմաքարին:

«Իմ ուխտ Թաղէի վանուց» բանաստեղծության մեջ բեկվել է ժամանակը, որի մի պահի, ինչ-որ մի կետում, իրար շատ մոտ լսվում են Նահապետի մաղթանքը՝

*Ո՛հ, թէ քանի՛ երջանիկ,
է Հայաստան հայրենիք...,*

և Հայոց Հայրիկի լուռ մրմունջը՝ առերեսված անդառնալի իրողությանը¹.

*Ուխտեմ չմոռնալ մինչեւ ի մահ
Սուրբ Թաղէին այս հիշատակ²:*

Հայ ժողովրդի անցած ճանապարհի և ապագայի շուրջ բանաստեղծների մտահայեցության հետաքրքիր շերտեր է բացում նաև Ալիշանի «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» (1848) և Խրիմյանի «Ողբացող Խորենացին» (1902) ստեղծագործությունների համադրությունը:

Երկերի առանցքում ժամանակն է, և ներկան ու անցյալը շաղկապող Խորենացին, որի կերպարի միջոցով բացվում են ստեղծագործությունների գաղափարական շերտերը, երկու հեղինակների ներքնատեսությունից բխող տրամադրությունները:

Ժամանակաշրջանի ողբերգական իրադարձությունները փոթորկվում են Ալիշանի հոգում և մղում նրան վիպելու մի նոր հոգեկեղեք ողբ՝ իր ուսերին առած դարերի զարհուր պատկերները՝ ի դեմս երբեմնի հզոր երկրի փառքի:

Ավար, ավեր, սուր, գերություն, սուգ ու չարիք, «սառնապաղուկ գետոց ջրերն՝ յարին յորդոր», «երբեմնն բիր փառաց տեղիք, հիմայ դամբան», տնակորույս, անհայր, անտեր մի ժողովուրդ:

¹ Խրիմյանը կաթողիկոս է դառնում մի ժամանակաշրջանում, երբ արևմտահայությունը ծանր ողբերգության միջով էր անցնում, երբ հայաթափվում էր Արևմտյան Հայաստանը:

Է. Կոստանդյանը, արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից ելնելով, փաստում է, որ կաթողիկոսը մշտապես գումարներ է ուղարկել Պարսկաստանի սահմանագլխին՝ գտնվող համեմատաբար աղքատ վանքերը՝ հոգալու գաղթականների կարիքները: Նրա ուշադրության կենտրոնում է եղել մասնավորապես Ս. Թաղէի վանքի վանահայրը, ով վտարել էր գաղթականներին: Կաթողիկոսը, պարսավելով հանդերձ վանահորը, խոստացել է հանգանակել նոր գումարներ և ուղարկել վանքի վերաշինության և գաղթականների հոգսերը հոգալու համար:

Տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, Հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2008, էջ 389:

² Խրիմյան Հայրիկ, Վերջալոյսի ձայներ, էջ 822:

Տպավորությունն ազդեցիկ է. ողբը հնչում է ծեր Նահապետի շուրթերից, ում «շնչիկը ի հագագին է ոտնառած, մազթափ ճակատը գետնուց ակննկորած», ով այլևս չի կարողանալու կանգնել և նայել Մասիսին, ում համար շուտով լռելու են բնության ձայները, բայց ում սրտառուչ սրտում բույն դրած ցավն օր օրի ահագնանում է և դառնում արյուն-արցունք.

Ձաշխարհն Հայոց ես լամ զիմ քաղցրն հայրենիք,

Արին արցունքնս հետ թափեմ քաղցր ու ցրտիկ (էջ 230):

Իր մտապատկերում ունենալով Հայոց աշխարհի երբեմնի արքայական փառահեղ վիճակը՝ Նահապետը վերհիշում է Երեմիային, ինչպես Խորենացին:

Խորենացի՝

*«Ձարթի՛ր, Երեմիաս, զարթի՛ր և ողբա՛ հանդերձ մարգարեանալով
որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս եմք...»¹:*

Ալիշան՝

Ձարթի՛ր, զարթի՛ր Երեմիա մարգարե՛ զգօն... (էջ 230):

Ալիշանը հատվածը կառուցում է Խորենացու Ողբի հետևողությամբ. հիշատակում է իսրայելացիների պատմությունից դեպքեր, ապա զուգահեռ տանում Հայոց աշխարհի վիճակի հետ, հուսակտուր խնդրում ճար գտնել իր ցավերին:

Բայց գերեզմանների մեջ թաղված երկրի տեսքին չի դիմանում անգամ Երեմիան.

Լերդդ վատի, սըրտիկդ ըլլի ներքեւ վերեւ (էջ 231):

Եվ ծավալվում է բողոք զրույցը ողբերի հոր՝ Մովսեսի հետ.

Դու այլ զարթի՛ր ու ար՛ եկ քերդողդդ մեր Մովսէս,

Որ ողբակից հրաւիրէիր ըզմարգարէս.

Տե՛ս, ա՛յս երկիրն է Հայկազանց ւ Արշակունեաց

Որոց փառօք լըցեր ըզգիրքս պատմութեանց,

Այս ա՛յն երկիրն է Տիգրանին և Արամայ,

Որ բրոնէին ըզբրոնաւորքն զինչ տըղայ.

Այս ա՛յն երկիր մեծ Տրդատայ՝ քաջ Վարդանին,

Ում նախանձէր Պարսիկ, Հռոմն եւ Ասորին.

Եվ ա՛յս երկիր Լուսաւորչին ու Ներսիսի.

Ա՛յս Սահակայ, Մեսրոպայ, քո իսկ Մովսիսի.

Ո՛հ, ի՛նչպէս փառքն ամէն մըթնած եւ այլափոխք,

Միայն անփոխ գուշակութիւնք քո կան ցաւօք (էջ 231-232):

¹ **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը եւ Ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Ե., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1991, էջ 363:

Այդ ներքին գրույցը Խորենացու հետ Խրիմյանի ստեղծագործության մեջ ավելի որոշ է, որովհետև հեղինակն ինքն իրեն՝ Հայոց Հայրիկին, հռչակում է Խորենացու կտակն ի կատար ածող:

Չափազանց բարձր գնահատելով Խորենացուն՝ Ալիշանը հայոց ազգի պարտքն է համարում նրա կենսագրությունն իմանալը: Խորենացուն նվիրված նրա երկու հոդվածները՝ «Մովսէս Խորենացի եւ իր Հայոց պատմութիւնը», «Մովսէս Քերթողահայր Հայոց», նպատակ ունեն ներկայացնելու մեծ պատմահոր վարքը: Ալիշանը նախ ամբողջ պարբերություններ կազմող տողերով, դիպուկ ընտրված մակդիրներով բնութագրում է Խորենացուն՝ ի ցույց դնելով նրա գործունեության զանազան բնագավառները, ապա պատկերում է քերթողահոր անցած ճանապարհը: Խորենացու շուրջ հյուսված հետաքրքիր ավանդագրույցները, որ հիշատակում է Ալիշանը, բարոյահոգեբանական լիցքեր են հաղորդում կերպարին: Ահա, օրինակ, աննշան վարդապետի պես մոռացված, Հոմերոսի պես բեռը կոնակը շալակած, գյուղեգյուղ, դռնեդուռ պտտող, ծանր հառաչանքով ճակատի քրտինքը սրբող Մովսէսը: Այդ առիթով Ալիշանը հիշում է հայր Մխիթարի խոսքը աշակերտներին. «Բարձցուք ըստ Մովսիսի Խորենացույ ինքնին զպարկս մեր՝ ի ճանապարհի»¹:

Հուզիչ է Գյուտ հայրապետի՝ Վաղարշապատի գյուղերից մեկում Խորենացուն գտնելու դրվագը աղքատ ծերի տեսքով, ով կերպարանափոխվում է, երբ սկսում է երգել, իսկ նրան լսողները զմայլանքից անշարժանում են: Պարզվում է՝ այն ծերը «անգին, անբավ, անմահ»² Խորենացին է:

Խրիմյանը վստահաբար ծանոթ էր այդ ավանդագրույցներին և ոչ միայն: Նա բարձրաստիճան եկեղեցական էր, որ մշտապես գնահատել էր կրթության դերն ու նշանակությունը, աչքի ընկել Սուրբ Գրքի և հայ մատենագրության քաջիմացությամբ, Չոպանյանի վկայությամբ՝ մասնավոր խնամքով կարդացել և ուսումնասիրել էր մանավանդ Մխիթարյանների հրատարակած պատմական, բանաստեղծական, բանասիրական արտադրությունները³:

Հիշողության ծալքերում փայփայելով թափառող Խորենացու պատկերը՝ Խրիմյանն ստեղծում է հոգևոր գանձերը կորցրած, հոգեպահիկ հացի կարոտ մնացած, ապա ջաղացպան դարձած վարդապետի կերպարը:

¹ «Բազմավեպ», թիւ 10, 1847, էջ 151:

² «Բազմավեպ», թիւ 4, 1849, էջ 54:

³ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Երկեր, Ե., «Սովետական գրող» հրատ., 1988, էջ 438:

Խրիմյանը տարբեր առիթներով անդրադարձել է Խորենացու՝ ջաղացպան լինելու պատմությանը: «Պապիկ և թոռնիկ»-ում այն պատմում է աշուղ Մուշոն և նույն սկիզբով՝ «Ես տեղ մի կարդացեր եմ»: Նա պատմում է, որ Աթենքից վերադարձած Խորենացին վերջը ջաղացպան է դարձել, որովհետև իր վաստակած իմաստասիրությունը մախադի մեջ դրած՝ իբրև անծանոթ շրջել է մեր աշխարհի մեջ, և ոչ ոք չի գնել նրա վաճառածը, ոչ ոքի անհրաժեշտ չի եղել¹:

«Մշակ»-ի համարներից մեկում կարդում ենք Խրիմյանի հիշողությունը, որ Մշո վանահայր եղած ժամանակ Հորոնք գյուղում տեսել է Խորենացու ջաղացը և լսել զրույց այն մասին, թե ինչպես է Խորենացին չախչախը փնտրող ջրաղացպանին պատասխանել, թե՝ ջուրն եկեր ջաղացքը տարեր է, դուրս չախչախը կը փնտրես...: Խրիմյանը գրում է. «Այս մտածումներով վանք եկայ և իրիկունը Խորենացին կը կարդայի. «Ողբամ զքեզ...», երբ մէջ մ'ալ ձեռքս հեռագիր մը տուին որ կը ծանուցանէր, թե «Հայոց Պատրիարք ընտրուեր ես»: Եւ սկսայ մտածել ջաղացքի պատմութեան և իմ պատրիարքութեանս վրայ»²:

Եթե նույնիսկ հպանցիկ համադրենք Խորենացու, աշուղ Մուշոյի և Խրիմյանի կերպարները, ապա հենց միայն կենսագրական տարրերի զուգահեռումներով հասկանալի կդառնա, որ Խրիմյանը իրեն էր գտել հոգեհարազատ դարձած այդ կերպարներում, տարրալուծվել նրանց մեջ, նրանցով էլ ամբողջացել իր ստեղծագործություններում:

Ալիշանի կերտած Խորենացին «Հայոց աշխարհ» անունը շրջանառության մեջ դրած Քերթողահայրն է, Հայոց պատմահայրը, ով անգամ ողբի մեջ աննկուն է, ում եղերական ձայնը անհուն ցավի մեջ անգամ սթափեցնող է: Նահապետը կանչում է նրան, որովհետև ինքը՝ ծերացյալ ու անուժ, այլևս անկարող է համայն երկրի ցավը տանել, անկարող է ստանձնել եղերերգուի դերը.

Ար' ե 'կ, ար' ե 'կ հայր իմ ողբոցըս դու Մովսէս,

Իմ սիրտ այլ չի ' երթալ, ասա ' դու քաջ գիտես (էջ 235):

Եվ Նահապետի գրած բանաստեղծական տողերի մեջ հնչում է Խորենացու ձայնը.

Ողբամ ըզքեզ, Հայոց աշխարհ, ողբամ ողբ բիր,

Քան ըզգետերն յորդորցընեմ աշացս աղբիր.

Գէմ ժողովուրդըն շրւարած մընաց մոլար,

Ոչ ձեռընտու, ոչ առաջնորդ ունի, ոչ ճար.

Առան վերջւան մեր թագաւորքն ու քահանայք

¹ Տե՛ս Խրիմեան Հայրիկ, Պապիկ և թոռնիկ, Պէյրութ, 2011, էջ 182:

² Տե՛ս «Մշակ», N: 107, 1888, էջ 3:

*Խորհրդրդականքն եւ վարժապետքն քաջիմացք,
Աթոռանին ու սուրբ բեմերն ի լաց յողոք
Ի բրնձնութեան ներքեւ ընկած կանչեն բողոք...
Միշտ ոտնակոխ, միշտ բարեգուրկ, ի լաց ի կոծ
Չարքն կամի զքեզ, ո՛վ իմ բարի աշխարհ Հայոց (էջ 235-236):*

Խրիմյանի Խորենացին երբեմնի փառքն ու հռչակը կորցրած, վաստակաբեկ ու հալածյալ, լիության մեջ քաղցած ու անոթի մնացած, սևազգեստ ու ցնցոտիավոր Մովսեսն է, ով օրեր է անցկացնում ուսուցիչների՝ Մաշտոցի ու Սահակի շիրիմների մոտ՝ երազելով հանգչել նրանց հայրական ծոցում, ով հոգեկան նեցուկ է գտնում իրեն հյուրընկալած մամիկի հետ պարզ զրույցում՝ միամիտ կնոջը «Հայոց աշխարհի բաները» բացատրելով ճիշտ այնպես, ինչպես իր «Հայոց պատմության» էջերում է շարադրված: Երբեմն էլ դիմում է փոխաբերական գեղեցիկ պատկերների.

*Հինաւորց Արարատի,
Բարձր կաղնի ծառի վերէն,
Բոյն էր դրել մեծ Արագիլ,
Պարթեւական Արշակունիք:
Հայ ժողովուրդ գերթ ճնճղուկ,
Ապաւինէր բունին ի շուրջ:
Բոյն քանդեցիք մեծ արագլին,
Եւ նետահար արարիք զայն.
Թռաւ, գնաց վիրաւոր,
Ո՛հ, արագի՛լ, արագի՛լ.
Էլ չը դարձաւ նա ի յետս:
Առիք տապար, հարիք ուժգին,
Ծառն արմատէն տապալեցիք,
Շուք հովանին բարձիք երկրէն'...*

Ալիշանն իր ստեղծագործությունն ամբողջովին կառուցել է Խորենացու Ողբի գաղափարական հենքի վրա, ավելին՝ այն տպավորությունն է ստեղծվում, որ բանաստեղծը Խորենացու Ողբը հյուսել է իր պոեմին՝ վերածելով այն բանաստեղծական չափի:

Ալիշանի հոգևոր հենասյունը Աստվածաշունչն է, հինգերորդ դարից մեզ հասած մատյաններում ամրագրված իր համար բացարձակ ստույգ, անքննելի հայոց պատմությունը:

¹ Ողբացող Խորենացին ի յԱշտիշատ եւ յՕշական, գրեց Խրիմեան Հայրիկ, Վաղարշապատ, Տպ. Մ, Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1902, էջ 13 (Այս ստեղծագործությունից կատարված մեջբերումների էջերը այսուհետև կնշենք մեջբերման վերջում):

Եվ այս փիլիսոփայությունից բխող նրա բացատրությունը՝ Հայոց ողբերգական ճակատագրի շուրջ, միանգամայն ընկալելի է.

Գիտեմ, գիտեմ այն մեր մեղաց պարտքն էր արդար (էջ 236).

Եվ ընկալելի է նաև Ալիշանի համոզմունքը.

Չէ՛. ողորմածն Աստուած թողել չէ զՀայաստան.

Նա ինքըն զինքըն է գրլորել յայս խոր զընդան.

Երբ որ կամի՝ կանգնի (էջ 236).

Եվ նաև՝ լուսավոր հավատն ու ցանկությունը.

Երթա՛յ նախանձ, թող զայ սէր, թող միանան սիրտք.

Յայնժամ չողբայ զքեզ Նահապետս՝ Հայո՛ց աշխարհ,

Այլ երանիս կարդայ բերանս հողու հաւսար:

Ի յեզր հողուս երդումն ուզեմ ձեզնից, ո՛վ Հայք,

Այս հառաչանքս ըլլան ձեր ձայն, ձեր այս փափաք.

Որ հանդարտիկ ելնէ հոգեակս երթայ խաղաղ,

Գերեզմանիս ծագէ արեւն Հայոց ծիծաղ (էջ 237) ...

Խրիմյանի աշխարհընկալման ելակետն ու չափանիշը նույնպես Աստծու և ազգի հանդեպ իր անընդգրկելի սերն է: Նա էլ, հենվելով Խոբենացու Ողբի վրա, փորձում է հասկանալ հայոց դարավոր ողբերգության պատճառները և արձանագրում է.

Ո՛վ, անլսող տուն Հայոց,

Կորուստ քո միշտ ի քէն է (էջ 14) ...

Բայց ի տարբերություն Ալիշանի, ով դրանք փնտրում էր մեղքի ու այդ պատճառով Աստծու կողմից անտեսված լինելու մեջ, Խրիմյանի պատասխանը դարավոր ինչու-ի՞նչ բանի ու հացի հարաբերակցության մեջ հացին նախապատվություն տալն է ու հոգևոր կորուստների հետ հաշտվելը.

Հաց պատրաստէք Հայոց ազգին,

Դեռ նա միայն հացով կապրի,

Չէ պէտ ասէ բան և ուսումն (էջ 18):

Եվ բոլոր դժբախտությունների սկիզբը խորհրդանշական դրվագում է՝ Աթենքից բեռնավորված շահաբեր նավի բյուրավոր գանձերի՝ այլևս ոչ ոքի հարկավոր չլինելը, որովհետև՝

Գիր չի սիրեր Հայոց ազգ,

Անսիրտ է իմաստութեան,

Հոգին հպարտ և բարձրայօն (էջ 7):

Խրիմյանի անցած ճանապարհը տառապանքով ու արյունով էր լեցուն: Նա ամեն օր ապրում էր այն դառը, ողբերգական իրականությունը, ինչի մասին Ալիշանը լսում էր հեռվից, տեսնում հոգու աչքերով:

Չոպանյանն իր հոդվածում մեջբերում է Ալիշանի աշակերտի հուշը. «Ալիշան, -կըսեր օր մը ինձի՝ ծանոթ բանաստեղծ մը, որ իր աշակերտն է եղած, հիվանդ պիտի ըլլար, եթէ այսօրվան ողբալի, քայքայված, մոխրապատ Հայաստանը աչքովը տեսներ. ան իր մտքին մեջ միշտ կենդանի և կանգուն կնշմարէ հին, շքեղ, ազատ Հայաստանը, և այդ տեսիլը չէ ուզած երբեք քանդել իրականության բիրտ բախումովը»¹:

Հայացքը դեպի Հայաստանի փառավոր անցյալը փրկում էր Ալիշանին:

Հոգեբանական այդ իրողության վկայությունն է Ալիշանի ցավագին կանչը.

Այլ դու լըռէ, ծածկէ զչարիք երկրիդ, Մովսէս,

Մ'ա՛սեր զամէն, որ Բ Հայոց մէջ կու տեսնես (էջ 236):

Նույն ցավից, ահագարհուր պատկերներից էլ ծնվում է Խրիմյանի մարդկային անկեղծ տրտունջը՝ ուղղված Խորենացուն, ով ողբով էր կնքել իր գերեզմանը և սերունդներին ողբեր էր կտակ թողել.

Հէ՛ր չտարար քեզ հետ ողբերդ,

Եւ յետ մահուդ չմոռացար,

Կտակ թողեր մնացորդաց.

Շարունակէ՛լ, շարունակէ՛լ (էջ 29):

Հենց այս ճարտասանական կոչ ու հարցադրումների մեջ էլ պիտի փնտրենք Ալիշանի և Խրիմյանի՝ թե՛ Սանդուխտ կույսին, թե՛ Խորենացու Ողբին նվիրված ստեղծագործությունների հանգուցային լուծումների մեկնաբանության բանալին:

1876 թ. «Հրաւիրակ Արարատեան»-ում Խրիմյանը թեև արձանագրում է, որ՝

«Զի որպէս ի հնումն և արդ, Հայոց աշխարհ միշտ ունի ողբ»², սակայն նորահաս սերնդին ուղղված իր խոսքը տոգորում է ապագայի հանդեպ լավատեսության անսքող հավատով. «Ուստի հաց մեր, զանձ մեր, հարստութիւն մեր, ազատութիւն մեր և կեանք մեր՝ Հայրենիքն է, որ թէպէտ այսօր ճնշեալ, հարստահարեալ և լքեալ է, գայ ժամ և արդեն իսկ մօտալուտ է, յորում անցցին անհետ աւուրք տառապանաց և դառնութեան, և յաջորդեսցէ օր բարենշան և ժամանակ այցելութեան: Ընդէ՛ր թերահաւատ լինիք. միթէ յետ դառնաշունչ ձմերան ո՛չ փոխանակէ գարուն քաղցրաշունչ»³:

¹ Չոպանյան Ա., Երկեր, էջ 416:

² Հրաւիրակ Արարատեան, Երկասիրող եւ յօրինող Խրիմեան Հայրիկ, Կոստանդնուպօլիս, Տպ. Ե.Մ. Տնտեսեան, 1876, էջ 100:

³ Նույն տեղում, էջ Ե:

Մեկ տարի անց՝ 1877 թ., «Վանգոյժ»-ում Խրիմյանը մորմոքող սրտի ցավն ու հառաչանքն է հղում դժոխային հրով վառվող Վանին, աչքի աղեջուր կաթիլներով ցողում է փոշիացյալ ավերակները, վառված ու մրկած սև սրտերը, դառնում ինքնակամ եղերերգու. «Գիտե՛մ, գիտե՛մ, այս իմ հեռաւոր նժդեհութեան վայրէս զքեզ լալ միայն հերիք չէ, ո՛վ իմ բնականունդ Հայրենիք, ո՛վ իմ խանձեալ խանձարուր. Գա՛մ գա՛մ և քեզ հետ կական բառնամ, մոխրակուտիդ վերայ ողբանուեր նստելով զքեզ ողջագուրելով լամ»¹: Ողբալով հանդերձ՝ Խրիմյանը, սակայն, վիատված մարդկանց հորդորում է մաքրել արցունքները, ապավինել Աստծուն, քաջալերանքի խոսք է հղում մի ժողովրդի, որը երկու հազար տարի է, ինչ կոտորվում է, բայց չի մեռնում, որովհետև «անյուսահատ տոկացող ոգի մի ունի»:

Նույն թվականին էլ գրում է «Հայգոյժը»: Իբրև բնաբան վերցնելով Երեմիայի ողբից հատվածներ՝ Խրիմյանը Խորենացու «Ողբամ ըզքեզ, Հայոց աշխարհ» բառերով է սկսում իր խոսքը՝ արձանագրելով, որ Հայոց աշխարհը ամեն անգամ, նորանոր աղետների հետ մի ողբերգու է ծնում:

Հայրենյաց համատարած աղետներն ստիպում են Խրիմյանին կրկին ու կրկին ողբալ՝ չկորցնելով հավատը, որ եթե աշխարհը խուլ լինի ու չլսի, Երկինքն անշուշտ կլսի, և «Աստված Իւր բարերար ձեռքով կը սրբէ Հայոց աշխարհի լացն. արագ կը բերէ մեր փրկութեան և ազատութեան օր...»²:

Ժամանակը ցույց է տալիս, որ խաղաղ երկնքի տակ անխռով ապրելու, արարելու պարզ ցանկությունը հայ ժողովրդի համար մնում է չիրականացած երազանք: Եվ ծնվում է Խրիմյանի «Ողբացող Խորենացին» ստեղծագործությունը:

Եթե Նահապետն իր պոեմում լռեցնում է ողբի ձայնը և անսասան հավատում, որ Հայոց ծիծաղն է թնածելու իր գերեզմանին ծագող արևի հետ.

Ա՛հ, Նահապետ, ծածկէ կնկդով ըզգլուխդ ու զքնար,

Թուլցուր թելերդ եւ այլ սրգով յառաջ մ'ե՛րթար...

...Ո՛հ, թող մեռնի ծեր Նահապետ, մտնու տապան,

Այլ թող ելնէ՛ր ի տապանէն նոր Հայաստան (էջ 236, 237),

ապա Խրիմյանն իրեն հոչակում է Խորենացու կտակի ժառանգորդը.

¹ **Վանգոյժ**, Կուց մի ջուր իւր այրած հայրենեաց վերայ կը սրսկէ Խրիմեան Հայրիկ, Կ. Պօլիս, Տպ. Արամեան, 1877, էջ 16:

² **Հայգոյժ**, Աշխարանք Հայոց աշխարհին, գրեց և աշխարհագութեց Խրիմեան Հայրիկ, Կ. Պօլիս, Տպ. Ե.Մ. Տնտեսեան, 1877, էջ Է:

*Դու մի՛ հոգար, հանգիստ եղիր,
 Ողբացեալ Մայր Հայաստան
 Ծնանի նա միշտ իւր ողբերգակ:
 Շատ են եւ շատ ձայնարկութ.
 Եւ, եւ եւ ես մի ձայնարկու
 Շարունակող ողբերգութեանդ,
 Յորչափ շնչէ շունչն ի հոգիս,
 Մովսիսի ողբացողիդ
 Կտակակատար Հայոց Հայրիկ (էջ 29):*

Հայոց աշխարհի հարատւ շարունակվող ողբերգությունը, չնայած Ալիշանի լուսավոր հավատին, ծնում է այն զգացողությունը, որ Խրիմյանի ստեղծագործության այս վերջին հատվածում նորից «հանդիպում են» երկու մեծերը՝ իբրև եղբերգուներ իրենց ձայները միացնելու թե՛ Խորենացու և թե՛ հազարամյակներում վերստին ու վերստին նորոգվող բյուր ողբերին:

Եվ ոչ միայն նրանք. նրանցից առաջ և նրանցից հետո էլ ազգային կյանքի ճանապարհին մշտապես լսելի է եղել ազնիվ ու տառապող անհատների մորմոքը, որ, ցավի մեջ ակնթիվելով, հասել է Խորենացու ողբին:

Մի՞թե նրանց չի ձայնակցում Թումանյանը, երբ գրում է.

*Մենք փառքեր ունենք թաղված հողի տակ,
 Մենք հույսեր ունենք պահված մեր երկրում.
 Մի՞թե հավիտյան կողքանք ավերակ,
 Մի՞թե հավիտյան կըմնանք տրտում¹:*

Արդյո՞ք Խորենացու «կտակի» ժառանգորդներից մեկը չի համարում Տերյանին Չարենցը.

*Եվ ոգին, նաիրյան ոգին,
 Տատրակի նման թևաթափ,
 Ընտանի իր հին մորմոքին,
 Հեծում էր իր վիշտը տնական,-
 Հեծում էր Տերյանի ձայնով,
 Նաիրյան այդ վերջին պոետի,
 Թե չկա՛ փրկության օր
 Աշխարհում մռայլ ու մթին²:*

Ավա՛ղ, պատմական հիշողությունն ու ներկան ժամանակի շարժվող սլաքի հետ տառ առ տառ փորագրում են Խրիմյանի բառերը Խո-

¹ **Թումանյան Հ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (Վերախմբագրված հրատարակություն), հ. 1, Ե., 2018, էջ 229:

² **Չարենց Ե.**, Երկեր, Ե., «Մովեստական գրող» հրատ., 1983, էջ 489-490:

րենացու ողբի մասին. «Ինձի կթվա, թե այդ ողբը Հայ Ազգի ճակատագիրն է ու ամեն դարու ողբը, ինձի այնպես կերևա, թե Քերթոզահայրն Մովսես այս օրերին համար է գրել...»¹:

Այսպիսով՝ չնայած աշխարհայացքի և գեղարվեստական մտածողության որոշակի տարբերություններին՝ Ղ. Ալիշանը և Մ. Խրիմյանը՝ իբրև բանաստեղծներ, հաղորդակից են վերոնշյալ ստեղծագործություններում առկա տրամադրությունների, հոգեվիճակների, զգացողությունների տիրույթներում:

Հայոց աշխարհի ապագայի նրանց տեսլականը «քայլում է» նրանց հետ ժամանակների միջով, խառնվում յուրաքանչյուրի անցած ճանապարհի կենսափորձի վրա և ձևավորում յուրաքանչյուրի գեղագիտական մտածողության ուրույն կերպը:

Ալիշանն իբրև բանաստեղծ կապվում է մեր մշակույթի ակունքների հետ, և բնագրագետի, հայագետի, գիտնականի իմացությունն է, որ բանաստեղծական շունչ ու պատկերավորություն է ստանում՝ հանդիսավոր ձևի մեջ արտահայտելով հեղինակի հավատամքը, ըմբռնումները:

Խրիմյանը, քաջածանոթ հայ գրականության անդաստաններին, կարդացած ավանդություններից և դեգերումների, ուխտագնացությունների ժամանակ լսած պատումներից երևակայության ծիրում հյուսում է պարզ, հասարակ ոճով շարադրված իր գրույցը, գրույց աշխարհի, Ալիշանի ու ինքն իր հետ:

ЭРИКНАЗ ВОРСКАНЯН
Кандидат филологических наук.

РЕЗЮМЕ

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СТИХОТВОРНЫХ ПРОИЗВЕДЕНИЙ, ПОСВЯЩЕННЫХ ДЕВЕ САНДУХТ И ПЛАЧУ ХОРЕНАЦИ Г.АЛИШАНА И ХРИМЯНА АЙРИКА.

Ключевые слова: Гевонд Алишан, Хримян Айрик, Дева Сандухт, Апостол Фаддей, провинция Артаз, Мовсес Хоренаци, Шушан, плач, свидетельство, цепи девы.

В статье сравниваются четыре тематически схожих произведения Алишана и Хримяна Айрика.

Сделана попытка показать общность настроений, психического состояния, чувств, обусловленных контрастом славного прошлого Армянского мира и его

¹ «Էջմիածին», ԺԱ, 1957, էջ 43:

катастрофического настоящего, озабоченностью перед неопределенным будущим, а также особенности мировоззрения, художественного мышления двух поэтов, переполненных любовью к Богу и к Родине,

В творчестве Алишана именно знания арменоведа, ученого, этнолога приобретают поэтическое дыхание и образность.

В случае с Хримяном поэтическое воображение смешано с неизгладимыми впечатлениями юного паломника, ставшего свидетелем определенных событий. Если Алишан воспекает память первых веков христианства в Армении, то Хримян связывает героические эпизоды прошлого с годами своей жизни.

Имеются в виду два плача, написанных по мотивам Хоренаци. Как и Хоренаци, Алишан оплакивает утраченную славу прошлого, почти не обращаясь к реалиям своего времени, в то время как Хримян, параллельно с Хоренаци, представляет порочные явления армянской жизни своего времени и оплакивает их.

HERIKNAZ VORSKANYAN

Candidate of Philology

ABSTRACT

THE COMPARATIVE EXAMINATION OF VERSES DEVOTED TO VIRGIN SANDUKHT LAMENT OF KHORENATSI BY G. ALISHAN AND KHRIMYAN HAYRIK.

Keywords: Gevorg Alishan, Khrimyan Hayrik, Virgin Sandukht, Apostle Thaddeus, Artaz province, Movses Khorenatsi, Shushan, Lament, testimony, chains of virgin.

The article compares four poetic works of Alishan and Khrimyan Hayrik, which are thematically similar to "The Lament" of Khorenatsi.

An attempt is made to show the peculiarities of the worldview, artistic thinking of the two poets imbued with the love of God and homeland, the commonalities of moods, inner state, feelings, conditioned by the contrast between the glorious past and the catastrophic present of the Armenian world.

In Alishan's work his knowledge as Armenologist, scientist, and ethnologist acquires a poetic breath and imagery.

As for Khrimyan, the poetic imagination is mixed with the indelible impressions of his young years of his pilgrimage. If Alishan glorifies the memory of the first centuries of Christianity in Armenia, Khrimyan relates to the heroic episodes of the past parallelizing them to the time he lived.

The above-mentioned refers to the two laments based on Khorenatsi's one. Like Khorenatsi, Alishan grieved upon the lost glories of the past, hardly reflecting on the reality of his time, while Khrimyan, in parallel with Khorenatsi, presented the vicious phenomena of the Armenian life of his time and grieved for them.

References

1. "Bazmavep", № 12, 1905.
2. Devrikyan V., Alishan ev hay hin grakanutyun, teknatsuakan atenakhosutyun, Yerevan, 1996.
3. "Ejmiatsin", JA, 1957.

4. Tumanyan H., Erkeri liakatir joghovatsu tas hatorov (Verakhmbavorvats hratarakutyun), № 1, Yerevan, 2018.
5. Khramean Hayrik, Haygoyj, K. Polis, 1877.
6. Khramean Hayrik, Hravirak Araratean, Kostandnupolis, 1876.
7. Khramean Hayrik, Voghbagogh Khorenacin, Vagharshapet, 1902.
8. Khramean Hayrik, Papik ev tornik, Peyrut, 2011.
9. Khramean Hayrik, Vangoyj, K. Polis, 1877.
10. Khramean Hayrik, Verjaloyisi dzayner, Gahire, 1901.
11. Kostandyan E., Mkrtich Khrimyan, Hasarakakan-qaghaqakan gortsuneutyun, Yerevan, 2008.
12. Hayoc srber ev srbavayrer, akunqner, tiper, pashtamunq, Yerevan, 2001.
13. Ghevond Alishan, Nuagq, №3, Venetik, 1858.
14. Ghevond Alishan, Haybusak kam haykakan busabanutiun, Venetik, 1990.
15. “Mshak”, № 107, 1988.
16. Movses Khorenaci, Hayoc patmutyun, Yerevan, 1990.
17. Charenc E., Erker, Yerevan, 1983.
18. Chopanyan A., Erker, Yerevan, 1988.
19. Siamanto, Varujan, Erker, Yerevan, 1979.
20. Soperq Haykakanq, Venetik, 1853.
21. Ter-Davtyan Q., Haykakan srbakhosutyun, Varqer ev vkayabanutyunner (V-XVIII dd.), Yerevan, 2011.

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու
l.yu.vardanyan@gmail.com

**ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ԲԱԺԻՆՔ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ» ՊՈՆՍԸ ԵՎ «ՏԵՂԱԳԻՐ
ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր՝ Ղևոնդ Ալիշան, Հայկական լեոնաշխարհ, վարդապետական քերթողություն, դիդակտիկ պոեմ, համամարդկային նախասկիզբ, Այրարատ, Շուշի, ընթերցող, տեղագիր, նահանգ:

Դեռ ուսանելու տարիներին հ. Ղևոնդ Ալիշանը գրում է մի աշխարհագրական երկասիրություն, որը կոչում է «Քաղաքական աշխարհագրությունն նկարագրող պատկերօր»։ Այն հրատարակվում է տարիներ անց (1853 թ.)՝ գրեթե լիովին վերամշակված¹:

Այս հսկայածավալ աշխատության մեջ Հայաստանին անդրադարձը մի փոքրիկ հոդված է. ներկայացված են լույս փաստեր²: Երկու տարի անց՝ 1855 թ., լույս է տեսնում աշխարհագրական մեկ այլ ուսումնասիրություն, որ կոչվում էր «Տեղագիր Հայոց Մեծաց» և ամենայն մանրամասնությամբ նկարագրում էր հայրենի երկրի՝ Հայկական լեոնաշխարհի յուրաքանչյուր վայրը։ Հ. Ալիշանի կենսագիր Սիմոն Երեմյանի բնորոշմամբ՝ այն «Հայաստանի տեղագրութեանց լուսաշող երկանց առաջին ճառագայթն է»։ Պետք է հաջորդեին աշխարհագրական և պատմական առավել խորունկ ուսումնասիրություններ՝ «Հայկական նշմարքներ» (1870), «Միսական» (1880) «Շիրակ» (1881), «Արարատ» (1890), «Միսուան» (1893)³:

«Տեղագիր Հայոց Մեծաց»-ի «Ցառաջաբան»-ում հ. Ղևոնդ Ալիշանն իր երկի գրության շարժառիթը բխեցնում է իր նախորդ երկից՝ «Քաղաքական աշխարհագրություն»-ից։ Նա բացատրում է, որ ճանապարհորդական նույնիսկ մտավոր դեգերումներն ավելի են ընդգծում հայրենի տան՝ Ալիշանի բառերով «հայկյան տոհմի բնավայրի» կարոտը։ Հայրենի երկրի աշխարհագրական նկարագրություններում հանգիստ առնելու նրա ցանկությանը գումարվում է նաև սեփական երկիրը ճանաչելու՝ ազգակիցների մղումն ու պահանջն այդպիսի աշխատության։ Ալիշանը նկատում է, որ օտարների ուսումնասիրություններում՝ նույնիսկ ամենա-

¹ Երեմյան Ս., Կենսագրությունն Հ. Ալիշանի, Վենետիկ, Ս. Ղազար, 1902, էջ 124:

² Տե՛ս Հ. Ղևոնդ վրդ. Ալիշանեան, Աշխարհագրությունն նկարագրող պատկերօր, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1853, էջ 518-519:

³ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 125:

ընդարձակներում, Հայաստանին չափազանց քիչ տեղ է հատկացված: Բացի այդ՝ մատենագրական հին երկերում Հայաստանի մասին շատ քան կա՛մ սրբագանության, կա՛մ տիրության քողով է պատված: Սակայն հայ ազգը մյուս հին ազգերի պես՝ քաղղեացիներ, մարեր, փյունիկիացիներ, չի վերացել: Այս ամենով հանդերձ՝ լինելով ամենից ավագը՝ թեև հին է, բայց ոչ մի ազգ նրա չափ նորն ընդունող և նորի նկատմամբ նրա չափ ընկալունակ չէ¹: Ալիշանի իմաստասիրական որոնումներում Հայկական լեռնաշխարհը համաշխարհային պատմության սկիզբն է, և իր ուսումնասիրությունը նա ձեռնարկում է նաև համընդհանուր, համամարդկային նախասկիզբը բացահայտելու գիտակցմամբ: Նյութի պատկառելի ծավալը բացատրում է ամեն ինչի մասին հավասար չափով խոսելու սկզբունքով: Եվ ի վերջո, մատնանշում է այն կարևոր առաքելությունը, որ ունի այս երկը, և որը հետո պետք է իրականացնի նաև բովանդակային առումով այս երկին չափազանց հարագատ, սակայն այլ ժանրային ձևավորում ունեցող «Բաժինք Հայոց Մեծաց»-ը:

Ա. Ժանրային տարբերակում

«Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատության հրատարակումից գրեթե տասը տարի անց՝ 1867 թ., լույս է տեսնում «Բաժինք Հայոց Մեծաց» չափածո երկը: Ըստ հանրագիտարանային բնորոշման՝ այն 742 տողանոց մի պոեմ է, որը նկարագրում է հին Հայաստանի տասնհինգ նահանգները (աշխարհները), նշում նաև բոլոր գավառներն ու գյուղերի մի մասը՝ իրենց հին ու նոր անվանումներով, դրանց ստուգաբանությամբ, նշանավոր իրադարձություններով: Տեղին է նաև բնորոշումը, որ այն կարծես Հայաստանի տեղանունների չափածո բառարան լինի՝ գրված բանաստեղծական շքեղ լեզվով²:

Այսպիսով՝ այն իր բոլոր բնորոշիչներով տեղավորվում է ուսուցողական (դիդակտիկ) պոեմի սահմանման մեջ: Հայտնի է, որ ուսուցողական (դիդակտիկ) չափածո ստեղծագործությունները բնորոշ էին դասականապաշտ գրականությանը. հույների նկատմամբ բանականության գերազանցությունը նախընտրող այս ուղղությունը չափածոն ընտրում էր որպես ասելիքի, ուսուցանելու նպատակի առավել արդյունավետ իրագործման միջոց: Դասականապաշտության (կլասիցիզմի) սկզբունքներին լավագույնս տիրապետող Մխիթարյան հայրերի երկերում հաճախ

¹ Տե՛ս երկի Յառաջաբանը. **Ղևոնդ Ալիշան**, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1855, էջ 3:

² Տե՛ս «Ամենաբեղմնավոր գրիչ ունեցող հայը», Հանրագիտակ օրացույց, Երևան, 1989, Հայկական խորհրդային հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, կազմեց Հ. Խաչատրյանը, էջ 9:

էր կիրառվում չափածոյի այս տեսակը (դիդակտիկ բանաստեղծություն, դիդակտիկ պոեմ)՝ վարդապետական քերթողություն բնորոշմամբ: Նախօրինակը Խաչատուր Էրզրումեցու «Համառոտական իմաստասիրություն» երկն էր (1711 թ.): «Բաժինք Հայոց Մեծաց»-ն այս ժանրային դասակարգման մեջ է դիտել նաև Էդ. Ջրբաշյանը՝ միաժամանակ նկատելով, որ այն ցույց է տալիս «թե կլասիցիզմի «վարդապետական քերթողության» ավանդների ազդեցությունը ինչքան ուժեղ էր նույնիսկ ռոմանտիզմի բովով անցած բանաստեղծի ըմբռնումների վրա»¹:

Մեր կարծիքով ևս հ. Ղևոնդ Ալիշանի «Բաժինք Հայոց մեծաց»-ը ձևով դասականապաշտության, հույզով, ընթերցողին փոխանցվող ապրումով վիպապաշտության (ռոմանտիզմի) հետաքրքիր համադրում է: «Նուագք»-ի Գ. հատորում անձնական հույզերով լեցուն մի բանաստեղծություն՝ «Ի ծովակէ Բենակայ² առ ծովակն Գեղամայ» քերթվածը, որը ժամանակագրորեն ավելի վաղ է գրվել, քան պոեմը, հուշում է այն զգացմունքը, որով գրվել է «Բաժինք Հայոց Մեծացը»:

Կիրառելով գետակին, լճակին, ծովակին, այսինքն՝ ջրային բնությանը դիմելու վիպապաշտական հնարանքը՝ բանաստեղծը՝ որպես հայրենիքի տանջող կարոտն զգացող մի պանդուխտ (չմոռանանք, որ հ. Ալիշանը երբևէ չէր եղել հայրենիքում), իր բառով ասած՝ *նժդէհաբար* դեգերելով, խնդրում է, որ իր մրրկեալ միտքը այս լճի ալիքներով և մրրիկի ուժով սահի ու հասնի իր հայրենի Գեղամայ ծովի ալիքներին.

*Վարեալ առ քեզ յիշատակօք հայրենի,
Ի սմա սահել՝ ի քեզ լիւղալ իդձ լինի:
Ո՛վ կապուտակ ծիծաղ ծաւալ խիտ առ խիտ,
Ե՛րբ վայրացած հանգիցէ գլուխ որդեկիդ
Ի պաղպաջուն ճերմականաչ քոյին բարձ.
...Այլ քո տես, քո տարփ, քո յուշ, քո լոկ անուն՝
Չոգիս քաղէ, ա՛յ Գեղամէ հայկազուն,
Եւ յիսկութեանս այս սիրեմ գրեզ երազել,
Քեւ անունակ՝ զոր ունիմս արդ վայելել (194)³:*

Ահա այս հույզով, այս նույն ուժգին ապրումով, նաև նույն ըղձալի նպատակով է գրվել նաև «Բաժինք Հայոց մեծացը», որի գիտական բովանդակությունն ու ուսուցողական նպատակադրումն արդեն լավագույնս

¹ Էդ. Ջրբաշյան, «Դիդակտիկ պոեմները» հայ գրականության մեջ, Պատմաբանասիրական հանդես, 1968, №1, էջ 65:

² Բենակը Կարտա լիճն է Լոմբարդիայի և Վենետիկի միջև: Տե՛ս հեղինակի ծանոթությունը, «Բաժինք Հայոց Մեծաց», էջ 194:

³ Ղևոնդ Ալիշան, Նուագք, հտ. Գ. Վենետիկ, Ս. Ղազար, 1867: Սույն հրատարակության բոլոր մեջբերումների էջը նշված է բնագրում:

նախապատրաստվել էին «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխարհագրական ուսումնասիրության մեջ: Այդ ստեղծագործության թե՛ «Յառաջաբանում», թե՛ երկու բնաբաններում երևում է նաև «Բաժինք Հայոց Մեծաց»-ի գաղափարական ուղղվածությունը: Բնաբաններից մեկը Խաչատուր Սկևռացու հետևյալ միտքն է. «Հայրենի եւ պարծելի բնիկ Հայկազանց աշխարհն, տունն արեւելից, որն առաջին է մասն եւ գլուխ օրինակ իմն բոլոր աշխարհի... եւ կամ թէ կոչել զնոյն աշխարհ է իրաւ հայր եւ հաւ մարդկութեանս. Յորում դադարել տապանն Նոյի, եւ բացեալ անտի դարձեալ սերեցաւ մարդկային զարմ», իսկ մյուսը Ղազար Փարպեցուց է. «Որ երթայ յաշխարհն Հայոց՝ աշխարհն մեծ է. յամս երկուս եւ յերիս հագիւ կարէ ճանաչել, նախ զիրս աշխարհին՝ զդիրին եւ զղրժուարն, ապա զմարդիկ աշխարհին»: Ինչպես տեսնում ենք՝ հատկապես երկրորդ միտքը, որն է՝ «աշխարհի դյուրին և դժվար իրերն ու մարդկանց ճանաչելը», կարող էր իրականացնել առավելապես գեղարվեստական երկը, ինչի դրսևորումը տեսնում ենք «Բաժինք Հայոց Մեծաց»-ում:

Բ. Վերնագրերը

«Տեղագիր Հայոց Մեծաց»-ում «տեղագիր» (topographia) աշխարհագրական եզրույթն ընդգծում է աշխատության ուղղվածությունը՝ պատկանելությունն աշխարհագրական գիտաճյուղին, նրա փաստական լինելը, փաստերի ստույգությունը: Տեղի գիրը, տեղագրումը, արձանագրվողը գեղարվեստական երկում փոխարկվել է «Բաժինք Հայոց Մեծաց»-ի: Նախորդ երկում արձանագրվածը ստացել է «բաժինք» հաստատուն բնորոշումը, որը ՆՀԲ-ում ունի հետևյալ բացատրությունը՝ «Մասն բոլորի բաշխելոյ վիճակեալ յուրաքանչիւր առողաց. վիճակ...»: Բաժինք Հայոց Մեծաց՝ այսինքն՝ հայոց բնիկ տեղերինը, ժառանգվածը, ի վերուստ տրվածը, իրավամբ իրեն պատկանելիքը¹: Դրանք մասերն են ամբողջական Հայաստանի, ինչը հենց սկզբից արտացոլված է պոեմի վերնագրում:

Գ. Երկու երկերի կառուցաբանական տարբերություններ

«Տեղագիր Հայոց Մեծաց»-ը հետևյալ մեծ մասերից է բաղկացած՝ «Յառաջաբան», «Բնական նկարագիր», «Քաղաքական նկարագիր», «Օսմանեան Հայաստան», «Պարսիկ Հայաստան», «Ռուսաց Հայաստան»: Սրանք, իրենց հերթին, նույնպես բաժանումներ ունեն: «Բնական նկարագիր»-ը բաղկացած է հետևյալ ենթակետերից՝ «Բարձրավանդակք», «Դաշտք. խոպանք», «Լեռինք», «Գետք», «Յեղանակք օղոց», «Բուսաբերություն», «Կենդանիք»: «Քաղաքական նկարագիր»-ն ունի «Բնակիչք.

¹ *Բաժին* բառի այդ մասին վկայող բազում իմաստային ամրագրումները տե՛ս ՆՀԲ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1836, էջ 423:

հայք», «Օտար բնակիչք», «Արուեստք, վաճառք», «Կրօնք», «Կրթութիւն, ուսմունք», «Քաղաքական վարչութիւն և բաժինք» ենթակետերը, «Օսմանեան Հայաստան»-ը ներկայացված է ըստ հետևյալ գավառների և նահանգների՝ «Ղարս գավառ», «Էրզրում նահանգ», «Խարբերդ նահանգ», «Տիարպէքիր նահանգ», «Գաւառ Մուշ եւ Բաղէշ», «Պայէզիտ գավառ», «Վան նահանգ», «Քիւրտիստան եւ Հէքեարի», «Պարսիկ Հայաստան»-ն ունի «Հայկական նահանգ պարսից» և «Ատրպատական նահանգ» ենթաբաժինները: «Ռուսաց Հայաստան»-ը բաղկացած է «Սոմխէթ կամ Վրահայք», «Հայկական նահանգ», «Գանձակ նահանգ», «Գարապաղ կամ Շուշի», «Շէքի նահանգ», «Շիրուան նահանգ», «Թալիշ նահանգ», «Պաքու» (ըստ Ալիշանի՝ սա հայոց Բագավան քաղաքն է, տե՛ս էջ 93)¹, «Քուլա նահանգ», «Դարբանտ»:

Այս բոլոր նահանգներն ու գավառները ներկայացվում են իրենց կարևոր կենտրոններով՝ Անի, Կաղզվան, Կարին, Բաբերդ, Համշեն, Արդվին, Երզնկա, Կամախ և այլն:

«Բաժինք Հայոց Մեծաց»-ի բնագիրը կառուցված է Մեծ Հայքի նահանգների (աշխարհների) հաջորդական թվարկման սկզբունքով: Նպատակը ամբողջական պատմական Հայաստանի ներկայացումն է՝ առանց քաղաքական մասնատվածության: Հայկի ստեղծած երկիրը բաժանվում է Մեծ և Փոքր Հայքերի: Մեծ Հայքի նահանգներից հեղինակն առաջինը նշում է Տայքը: Երկրորդը Գուգարաց աշխարհն է՝ իր 50 և ավելի գավառներով: Այն ունի փորակներ, ձորակներ, լճակներ, լեռներ և մայրի անտառներ, պղնձի հանքեր ու գեղեցիկ վայրի բնություն (տե՛ս էջ 204-205): Երրորդ աշխարհը կոչվում է Ուտի, որը, Ալիշանի բնորոշմամբ, «օտարախոս է եւ թաքուն ծագմամբ»: Նախկին անունն է Միափոր. Սահմանակից է Գուգարաց փորակներին (էջ 205): Չորրորդը «Սյունյաց գուգանուն եւ գուգատիպ՝ մութն Արցախն» է: Երկում թվարկվում են Արցախի մյուս բնակավայրերը՝ Բերձորից մինչև Շուշի, հիշատակված է Շուշիի հին անունը՝ Պարծկանք:

Այսպէս՝ հերթականությամբ երևում են Բարձր Հայքը, Կարնոյ աշխարհը, Սիսականը, Վասպուրականը, Տուրուբերանը և այլն, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է նաև իր քաղաքներով, գյուղերով, այլ վայրերով: Հայոց յուրաքանչյուր բնակավայրի հիշատակումը՝ իր ճշգրիտ տեղորոշմամբ, պոեմը, իսկապէս, նմանեցնում է հանրագիտարանային աշխատության՝ հուզարտահայտչական ազդեցիկ շեշտադրմամբ:

¹ Քաղաքն ՊԱՔՈՒ, որ կրէ տակաւին զանուն Բագաւան գաւառի, ի հարաւային ծովեզեր թերակղզոյն կայ, յերի գրոցն նաւթի, լուսնաձև տարածեալ ի բարձր քարափին...

Դ. Երկու երկերի բովանդակային զուգահեռներ

«Տեղագիր Հայոց Մեծաց»-ում՝ «Քաղաքական նկարագիր» բաժնում, Հայաստանը բնութագրված է որպես մարդկության խանձարուր, որից երկու անգամ սկիզբ է առել մարդկությունը՝ մեկ արարչագործության պահին, մեկ ջրհեղեղից հետո: Այս նույն սկիզբն ունի նաև «Բաժինք Հայոց Մեծաց»-ը: Դեռ «Տեղագիր...»-ում փաստվում է Հայոց աշխարհի հնագույն, վաղնջական լինելը: Նույն գաղափարն է զարգանում նաև «Բաժինք...»-ում: Ազատ Մասսի լանջերին է հանգրվանել Նոյը, և այստեղ է սկիզբ առել նոր մարդկությունը: Պոեմի բովանդակությունը՝ գիտականության հետ մեկտեղ, աշխարհագրական չափումների ճշգրիտ փաստերով հանդերձ՝ պահպանում է միջնադարյան պատմագրական ավանդույթը. դեպքերի նկարագրությունն ընթանում է Սուրբ Գրքի փաստերին զուգահեռ, բխեցվում նրանից:

Պոեմի և գիտական աշխատության տարբերությունը երևում է կերպարային կիրարկումներով և այն գեղարվեստական արտահայտչամիջոցներով, որոնցով ներկայացվում է պատմական անհատը կամ բանահյուսական պատումի հերոսը:

Երկու երկերում էլ հեղինակը նկարագրում է Հայոց աշխարհի երբեմնի փառքը, ռազմական հզորությունն ու ներդաշնակ կեցությունը և այդ ամենի կորուստը: Սակայն «Տեղագիր Հայոց Մեծաց»-ում ավելի գերիշխում է պատմագրի հայացքը, իր՝ Ալիշանի բնորոշմամբ՝ ստրաբոնյան գրիչը, իսկ «Բաժինք Հայոց Մեծաց»-ում փաստերի շարադրումին, Հայոց հին իշխանական կարգի ներկայացմանը հաջորդում է այն իրականությունը, երբ այդ ամենն այլևս չկա: Այս դեպքում փաստերը նկարագրող Ալիշանին փոխարինում է «հայոց բախտի անողոք կոդոպուտը» ողբացող Ալիշանը:

«Բաժինք...»-ում Ալիշանին հաջողվում է համառոտ, երբեմն մեկ բառի դիպուկությամբ ներկայացնել հայկական բնակավայրերը՝ Տայքը, Գուգարքը, Ուտյաց աշխարհը, Արցախը, Այրարատը, Միսականն ու Վասպուրականը եւ այլն¹: Ահա Արցախին տրված բնութագիրը. «Ցախուտ, մայրուտ եւ ժայռուտ աշխարհ ամուր եւ խիզախ» (էջ 205), Բերձորը կոչված է «յամուրս վիմաց», Անին՝ «սրտառուչ»՝ «մեր արքաների վերջին գահը» լինելու պատճառով, իսկ Արշակավանը բնութագրված է որպես «պժգալին դաստակերտ», որը հիմնադրողի նկատմամբ վրեժը (բնականաբար, նկատի ունի երկնային պատիժը) եղավ «արտասվելին բերդ Անյուշ» (էջ 210): Հետաքրքիր է բնութագրված Այրարատը, որը մի տեղ

¹ Այս երևույթը նկատել է նաեւ Ալիշանի առաջին կենսագիրը: Տե՛ս Ս. Երեմեան, Կենսագրությունն Հ. Ալիշանի, Ս. Ղազար, 1902, էջ 119:

ունի «պանծալի» մակդիրը, մեկ այլ տեղ անվանված է «Հընոցք սիրոյ հայրենեաց եւ հաւատոյ լուսոյ գանձ»: Այս վայրի բնորոշումներում արտացոլված է բանաստեղծի մեծարանքը պետականության հանդեպ, շեշտված է այդ բնակավայրի աշխարհիկ և հոգեւոր կենտրոն լինելու հանգամանքը. այն «Հայոց պսակապերճ քաջագն հսկաների ոստանն» է, այնտեղ «Վարդգեսի հին աւան Վաղարշակերտ–Արտիմէդն է՝ Տրդատի եւ Գրիգոր Լուսաւորչի տունը», «Քրիստոսի իջման կետը» (էջ 211):

Կարծում ենք՝ այս բոլոր բնորոշումներին հատուկ սեղմ «խոսունությունը», հաջողվում է տեղեկույթ + հույզ միասնության շնորհիվ: Նշենք, որ հայրենի երկրի տեղագրման ալիշանյան այս ձեռնարկումը՝ մարմնավորված գիտական եւ գեղարվեստական երկերում, վերջինում կրկնակի ուժով է իրականացնում հայրենաճանաչության գործառնությունը, երբ փաստերին գումարվում են զգացմունքներ, բանահյուսական և վիպական պատումներ: Իր գրության ողջ ընթացքում պոեմը պահպանում է ուսուցողական չափածո երկի բնույթը և յուրաքանչյուր տողով որևէ տեղեկություն է հայտնում: Ամեն մի տեղանուն իր հետ բերում է հայոց պատմության մի դրվագ, պահպանում հայ մատենագրությունից ավանդված ձևակերպումները կամ պատկերային համակարգը: Այսպես՝ «հայերգու վիպասանների» Գողթն գավառը *գինեվետ* մակդիրով է բնութագրված, Վահագնը *հրագիսակ* է, Մասիսն *Ազատ* և այլն:

Փաստորեն տեղանունների միջոցով Ալիշանն ընթերցողին ներկայացնում է ողջ հայոց պատմությունը, բառերով քարտեզագրում Հայոց աշխարհը, պոեմի միջոցով հարազատորեն վերարտադրում է հայ միջնադարյան մատենագրության հոգեմտավոր ընկալումները: Սակայն երբեմն այդ ամենը հասկանալու համար ընթերցողից համապատասխան պատրաստվածություն է պահանջվում: Այս առումով պոեմը հայ մատենագրության երկրորդային ընթերցում է, որը հետաքրքիր վերլուծությունների աղբյուր կարող է դառնալ: Օրինակ՝ Մոկաց աշխարհի մասին խոսելիս հ. Ալիշանը վերհիշում է Ատոմ Մոկացու՝ պարսից Շապուհ արքային հանդիմանելը. հետևաբար ընթերցողը պետք է ծանոթ լինի Մովսես Խորենացու՝ «Հայոց պատմությունից»¹ հայտնի այդ դրվագին: Միայն այդպես հասկանալի կլինեն Ատոմին տրված *բոցաճեմիկ* եւ *քարակաքաւ* բնորոշումները, որոնք, իհարկե, բխում են Քերթոզահոր պատմածից:

Ե. Եվ վերջապես մի հանգամանք ևս՝ «Բաժինք Հայոց Մեծաց»-ը «Տեղագիր Հայոց Մեծաց»-ից տարբերվում է հատուկ ընթերցողի թելադ-

¹ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 294-295:

րանքով: Այս երկում ասելիքն առավելապես ուղղված է հայ ընթերցողին կամ գոնե հայոց պատմության համաբնագրում եղող ընթերցողին: Մա է նաև վերոնշյալ սեղմության, մեկ բառի «խոսունության» պատճառը, ապրումը միանգամից փոխանցելու, ընթերցողի մեջ միանգամից համախոհ գտնելու բանաստեղծի վստահությունը: Անունների այսքան մանրակրկիտ հիշատակմամբ, ինչպես նաև այդ անունների վերաբերյալ տարաբնույթ պատումներով՝ բանահյուսական, պատմական, աշխարհագրական և այլն, Ալիշանը պայքարում է մոռացության այն դառն իրողության դեմ, որ «Անուանք մարզից եւ ցեղիցն անգամ սուգեալ մոռացան»: Հիշեցնելով այդ մոռացվածը՝ ազգային ինքնագիտակցության արթնացման միջոցով մղում է ինքնաճանաչման ու կորսված ինքնության վերադարձի:

ЛУСИНЕ ВАРДАНЯН
Кандидат филологических наук

РЕЗЮМЕ

ПОЭМА «ЧАСТИ ВЕЛИКОЙ АРМЕНИИ» И ТРУД «ТОПОГРАФИЯ ВЕЛИКОЙ АРМЕНИИ» ГЕВОНДА АЛИШАНА

Ключевые слова: Гевонд Алишан, Армянское нагорье, поэма в стихах, дидактическая поэма, общечеловеческое происхождение, топография, Шуши, Айрарат, читатель.

В статье поэма отца Гевонда Алишана «Части Великой Армении» («Բաժինը Հայոց մեծաց») проанализирована в сравнении с другим сочинением «Топография Великой Армении» («Տեղագիրը Հայոց մեծաց») . Этот труд, который вышел в свет в 1955 г., подробно описывает каждую часть Армянского нагорья, таким образом пытаясь обнаружить и описать также общечеловеческое происхождение. Опубликованная почти десять лет спустя, в 1867 г., поэма в стихах «Части Великой Армении», проанализирована с точки зрения жанрового, заголовочного, структурного различия и содержательной общности двух сочинений, в пятом пункте анализа говорится о различных читателях, которым адресованы эти сочинения. Замечено, что «Части Великой Армении» по своей эмоциональности, сжатая, говорящая, то есть по известным из армянской истории характеристикам в наибольшей степени адресована армянскому читателю.

LUSINE VARDANYAN
Candidate of Philology

SUMMARY

"THE PARTS OF GREAT ARMENIA " POEM AND "TOPOGRAPHY OF GREAT ARMENIA" WORK BY GEVOND ALISHAN

Key words: Ghevond Alishan, Armenian Highlands, didactic poem, topography, common human origin, Ayrarat, Shushy, reader.

In the article, the poem of Father Ghevond Alishan "The Parts of the Great Armenia" is analyzed in comparison with another essay "Topography of the Great Armenia". This work, which was published in 1955, describes in detail each part of the Armenian Highlands, thus trying to discover and describe the common human origin. Published almost ten years later, in 1867, the poem in verse "The Parts of the Great Armenia" is analyzed from the point of view of genre, title, structural distinction and content commonality of the two works, the fifth point of the analysis talks about the different readers to whom these works are addressed. It is noted that the "The Parts of the great Armenia" in terms of its emotionality is concise, speaking, that is, according to the characteristics known from Armenian history, is to the greatest extent addressed to the Armenian reader.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏԵՄԻԼՔԸ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ
«ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՅՈՑ» ԳՈՐԾՈՒՄ

Բանալի բառեր՝ ճշմարիտ հայրենասիրություն, ժողովրդական ապրումներ, հայ և քահանա տիտղոսներ, Աստծո սիրով ու ազգի սիրով, հուշիկներ:

Մեծ է Ղևոնդ Ալիշանի դերը հայ մտքի և հայ դասական գրականության անդաստանում: Իր ստեղծագործական կյանքի ընթացքում նա հանդես է եկել որպես բանաստեղծ, արձակագիր, հայագետ, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ՝ հայ ազգին ավանդ թողնելով բարձրարժեք գործեր: Թվում է՝ տարիների հոլովույթի հետ ամեն ինչ ասվել է Ղ. Ալիշանի մասին՝ սպառելով հիացմունք, զարմանք, հետաքրքրություն: Ալիշանի գործերի կարևոր սկզբունքը հայրենասիրությունն ու անկեղծությունն է. բարոյական այս չափանիշն է գրողի ժողովրդասեր ու բնութենապաշտ էության էպիկենտրոնը: Գրողի համար հայրենասիրությունը պատահական զգացմունք չէ, այլ մի «անշեջ հուր», որով նա ներքուստ այրվում է և այրում դիմացիներին էլ. «Ճշմարիտ հայրենասիրությունը չէ ասույ կամ փայլակ մը հանկարծ երևացող. ո՛չ հուր մոլի և թափառիկ, և ո՛չ կայծակն անկուշտ այրող, լափող, այլ հանդարտ ջերմություն մը, հստակ լույսով, անըստգուտ խղճով»¹:

Ալիշանի վաստակը հայագիտության հսկաների փառանգում հատկապես առանձնանում է իր անգնահատելի ժառանգությամբ՝ հերոսական բանաստեղծություններով և հայրենաշունչ պատմական երկերով: Նա առաջիններից մեկն էր, որ հայ գրականության պատմության մեջ վեր հանեց մեր ժողովրդի փայլուն սխրագործություններն անցյալում ու վառ հույսեր տաճեց գալիք ապագայի նկատմամբ: Ինչպես նշում է Արսեն Տերտեքյանը. «Այդ երկու կողմերից էլ նրա ստեղծագործությունը հնչակից է դառնում մեր օրերի անմոռաց դեպքերին, մեծ ժողովրդական ապրումներին»²:

Ներհուն ստեղծագործողը, անբասիր եկեղեցականն ու հանճարեղ գիտնականը ամբողջապես լցված էր «Աստծո սիրով» ու «ազգի սիրով». նա հայ ժողովրդի ու Հայաստանի պաշտամունքը վերածեց համազգային

¹ **Ալիշան Ղ.**, Հուշիկք հայրենեաց հայոց, հատոր Բ, էջ 571:

² **Տերտեքյան Ա.**, Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 5:

ապրումի, ժողովրդական մտածողության, երգի: Ըստ Ալիշանի՝ Աստվածաշունչն ու Խորենացին այն երկու սրբազան գրքերն էին, որոնց ամեն մի էջը, ամեն մի բառը մեկնողն, լուսաբանողն, պատկերազարդողն, շարունակողն, երգաբանողն էր. «Կը տառապէր..., երբ կը տեսներ եւրոպացի կամ հայ քննադատները, որ Խորենացւոյն կառուցած շէնքը կը քայէին»¹:

Ալիշանը իր երկարամյա գրական վաստակի շնորհիվ ապացուցել է, որ տաղանդն ու ծանր, քրտնաջան աշխատանքը քայլում են կողք կողքի՝ զարմանալին ու հեքիաթայինը դարձնելով իրական ճշմարտություն. «Ալիշանը ժամանակակիցներին հրապուրել է նաև իր աննախընթաց համեստությամբ»²:

Ղևոնդ Ալիշանի գրիչը եղավ չափազանց բեղուն, իսկ թողած ժառանգությունը՝ անսահման հարուստ. «...Ակնհայտ է մի բան, որ նրա ապրած կյանքը նույնքան գեղեցիկ ու ազնիվ է, որքան գործը: Գործ, որը ներդաշնակ է նրա մտածելակերպին ու խոսքին, ապրած համեստ կյանքին»³:

Դա հատկապես երևում է Հ.Ալիշանի դիտարկումից, թե տիտղոսներն են հայ և քահանա, շքանշաններն՝ կապան և գոտին: Վաթսունական թվականներին Ալիշանի գիտական աշխատություններում երևում են ոչ միայն քննադատական անսասան ոգին, այլև գրողի ներաշխարհում ամփոփված տաք շունչը: Ալիշանի սառն ուսումնասիրության հետ զուգընթաց նկատվում է նրա հոգեկան նուրբ ներաշխարհը՝ բացահայտելով հեղինակի խառնվածքը, նրա վերաբերմունքը նկարագրված երևույթների հանդեպ: «Ալիշանի գիտնական տեսակետը, բազմակողմանի հմտությունը և ուսումնական աշխատության վայել զգուշությունը՝ բոլորը միասին բարձրացնում են նորա գործերի վարկը»⁴:

Այդ շրջանում Ալիշանի բանաստեղծական հունձքը լի էր հայրենասիրական, քնարական ու խոհական երգերով, սակայն իր ստեղծագործական ընթացքի մեջ առանձնանում էր նրա ամենամեծ շնորհը՝ պատմագեղագիտական արձակը: Գրողի պատմագիտության ակունքը մի վարար աղբյուր է, որը շատերի ծարավն է հագեցրել՝ վերստին վերադառնալու և այն ճաշակելու կանխավայելքով. այս սկզբունքով է Ալիշանը

¹ **Չոպանյան Ա.**, «Անահիտ», 1902, թիւ 4, էջ 69:

² **Տերտերյան Ա.**, Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 8:

³ **Թանայան Գ.**, Ղևոնդ Ալիշանի փիլիսոփայական և մանկավարժական հայացքները, «Լրաբեր հասարակական գիտությունների», հ. 3, 2011, էջ 144:

⁴ **Երիցյան Ալ.**, Վենետիկի Մխիթարեանք, 1883, էջ 107:

կերտել իր գլուխգործոցներից մեկը՝ «Հուշիկք Հայրենյաց Հայոց» երկհատոր պատմա-գեղարվեստական ստեղծագործությունը, որը հրատարակվեց 1869-1870 թվականներին Վենետիկում, «ուր հեղինակը հայ ժողովրդի պատմության զանազան հերոսական դրվագների գեղարվեստական վերարտադրության միջոցով ջերմ, կրքոտ հայրենասիրություն էր քարոզում հայությանը: Այս էր պատճառը, որ հիշյալ ստեղծագործությունը վերահրատարակվեց 1921 թ. երկու հատորները միասին և 1944 թ. (ամբողջ «Հուշիկք»-ը մաս-մաս հրատարակվեց «Բազմավեպ»-ում՝ 1862 թվականի հունվարից սկսած) ու «դարձավ ընթերցողների սեղանի զիրքը և մինչև այսօր էլ իր տեղն ունի հայ դասական ստեղծագործությունների շարքում»¹:

«Հուշիկք Հայրենյաց Հայոց» գրքի նախաբանում, որ «Առ Հայկակ» վերնագիրն է կրում, Ալիշանը մի շատ բնորոշ միտք է արտահայտում. ինքը կարող էր գործը գրել Նարեկացու լեզվով, բայց այդպես չարեց, որովհետև քչերին հասկանալի և շատերի համար անօգուտ կլինեք: Ալիշանի սրբազան նպատակն էր հայոց պատմության մեջ եղած «արիության գործերը» (Խորենացի) նոր սերնդին ներկայացնել՝ չխուսափելով որոշ «ավելագանցություններից»: Ալիշանը ցավով նշում է. «Ո՛րքան ծանրացեալ և խլացեալ են մեր ականջքն այլ մեր հարց ու նախնեաց գովունի գործոց հոչակներէն, չունենալով՝ ո՛չ Լյույոս մը երկարօրէն պերճաբար ազգին պատմութիւնը ճառող, ոչ Պլուտարք մը նշանաւոր մարդկանց վարքը դատողութեամբ գրող...»:² Նա նշում է, որ պետք է շնորհակալ լինենք մի քանի հայ պատմիչներից, որոնք հայի բազմաթիվ արիության գործերից գեթ մի քանիսը հաղորդել են մեզ, որոնք «կրնանք դեռ հաճութեամբ պատմել և լսել, գուցե երբեմն աւելագանցութեամբ այլ»³:

Ալիշանը մինչև «Հուշիկք Հայրենյաց Հայոց»-ը գրել էր գեղարվեստական արձակ գործեր, սկզբնական շրջանում գրաբար, որոնք հիմնականում տպագրվում էին միաբանության ամսագրում: Ի տարբերություն նախորդների, «Հուշիկները» գրված են գեղեցիկ աշխարհաբարով, և դրանից հետո գեղարվեստական արձակի ասպարեզում Ալիշանն այլևս չանդրադարձավ գրաբարին. «Ալիշանի աշխարհաբար բանաստեղծությունները, – գրում է ակադ. Հր. Աճառյանը, – անհամեմատ ավելի բարձր են գրաբար գրվածքներից. մի պարզուկ, միամիտ, քնքույշ քնարերգություն ու հովվերգական անուշ դայլայիկներ լցնում են ընթերցողի հոգին

¹ **Շտիկյան Ս.**, Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1967, էջ 2:

² **Ալիշան Ղ.**, Հուշիկք հայրենեաց հայոց, հատոր Բ, էջ 433-434:

³ Նույն տեղում:

փափուկ զգացումներով. Ճիգ, արվեստականություն, գեղեցիկ երևալու ջանքեր չկան նրանց մեջ, ամեն ինչ սահուն է, կոկիկ ու բնական»¹:

Ալիշանը, հայ ժողովրդի կյանքի ողբերգական դեպքերի ականատեսը լինելով, չէր կարող բավարարվել վերացական հայրենասիրության քարոզով: Նա, ըստ Հայ եկեղեցու Տոնացույցի, ներկայացրել է Հայոց պատմության ու մշակույթի երեսուներեք նշանակալից դրվագներ, որոնցում դիմել է Հայկ Նահապետի նորօրյա շառավիղին՝ Հայկակին՝ պատգամելով հավատարիմ մնալ հայրենատուր ավանդներին: Դիմելով գեղարվեստական արձակի ժանրին, դեպքերը զարգացնելով երկխոսության ձևով՝ Ալիշանն իր պատանի բարեկամին՝ Հայկակին, պատմում է տարբեր, բայց հերոսականությամբ միմյանց չզիջող նշանավոր դրվագներ հայ ժողովրդի պատմությունից: Իրար հաջորդող հասարակական-քաղաքական դեպքերի ու իրողությունների վերարտադրումը՝ Հայաստան աշխարհի ներշնչված նկարագրությունը («Բնախոսություն Հայաստան աշխարհի»), Մուշեղ Մամիկոնյանի կռիվը արաբական հրոսակների դեմ Բագրևանդում («Բագրևանդա կռիվն»), Վարդան Մամիկոնյանի՝ Ավարայրի դաշտում զոհվելով անմահանալը («Կարմիրն Վարդան»), «Հայոց Գուտտեմբերգի»՝ Աբգար դպիրի իրականացրած հրատարակությունների բնութագրությունը («Աբգար դպիր. հայ տպագրություն») և այլն, նոր շյուղեր և հայրենասիրական նորանոր երանգներ են ավելացնում գործին: Փոքր ծավալի մեջ ամփոփված անխոնջ մտքի գողտրիկ գոհարներն իրար հետ կապողը Հայկակն է, որին ամենուրեք դիմում է և իր ազգային հերոսապատումներն է մատնանշում հեղինակը: «Կարելի չէ հնչել Յուշիկներու յուշիկ ու անուշիկ հեքիաթներու հայրենաթունդ քնարի մեղոյշ բամբուռնք, որոնք ալեկոծ հոգիները կը խաղաղեն, բեկեալ սրտերը կը մխիթարեն, գաղջ հոգիները կը հրկիզեն»²:

Ալիշանն իր «Հուշիկք Հայրենյաց Հայոց» գործում կիրառել է ստեղծագործությունը կառուցելու յուրօրինակ ձև, որը, վերապահությամբ միայն, կարելի է երկխոսություն անվանել: Դեպքերի ամբողջ շարադրանքի ընթացքում երկրորդ գործող անձը ոչ մի անգամ խոսակցությանը չի մասնակցում, որևէ վերաբերմունք ցույց չի տալիս, որևէ հարց չի առաջադրում: Ըստ էության՝ հեղինակը բացատրելու, համոզելու եղանակով խոսում է մյուս հերոսի՝ պատանի զրուցընկերոջ՝ Հայկակի հետ: Վերջինս սոսկ լսում է իրեն ուղղված բազմաթիվ հարցերն ու բացատրությունները, և այս տեսակետից «Հուշիկք Հայրենյաց Հայոց»-ը տարբերվում է երկխոսություն կառուցելու ընդունված եղանակից: Ազգային հերոսների սխրա-

¹ **Աճառյան Հր.**, Պատմություն հայ նոր գրականության, 1906, էջ 87:

² **Երեմյան Ս.**, Կենսագրություն Հ. Ալիշանի, Վենետիկ-Ս.Ղազար, 1902թ., էջ 122:

գործությունների մասին իր գրույցները նա պատմում է Հայկակին գյուղական խրճիթում՝ ավանդական թոնրի շուրջը նստած. «Տարվույն վերջին օրերն է, եղանակն տխուր, ժամանակն խավարին, թոռույալ, թմրյալ բնության վրա տարածված համասփյուռ ճերմակեն լույս չի ծագեր, մխիթարություն չեղներ, ձմեռն միշտ ցուրտ, միշտ սառն, սոսկումն կազդե: ...Քաղցր ըլլա քեզի այլ, Հայկակ, հառաջ քան մրափի մոռացության մեջ ընկնելդ, քանի մը ժամ ճաթուղող խարուկին լուսով՝ մեր հայրենյաց հին դիպվածները հետաքննել»¹:

Մեծն Թումանյանի միտքը (Մարդու գործն է միշտ անմահ) նրանից շատ առաջ հնչեցրել է Ալիշանը. «...ո՛չ անվամբ, այլ գործովն է մարդ. լավն և քաջն միշտ հռչակեալ են իրենց լուռ գործովն իսկ»²:

«Հուշիկք Հայրենեաց Հայոց» նշանավոր երկի նախաբանում Ալիշանն այն միտքն է հայտնում, թե՛ հայրենիք բառը այն նվիրական անուններից է, որ «գրեթե մտքեն առաջ սիրտն կու հասնի, կըմբռնե, կիմանա զայս»³: Զգացմունքի այդ առաջնությունը չի նշանակում, թե Ալիշանը կույր, անքննադատ, հայրենասիրության կողմնակից է: «Ո՛վ Հայկակ, ո՛վ հայ պատանիք,- կանչում է Ալիշանը,- աղեկ քաղաքացի ըլլալու համար՝ պետք է քննել և սովորել զհայրենիս... Այդ քննությունդ, այդ ուսմունքդ հորդոր ըլլան ձեզի ավելի քան զավելի հարգելու զհայրենիս և մշակելու զայն՝ ըստ ամենայն նշանակություն բանիս...»: ⁴

Նրա հայրենիքի նկատմամբ մեծ սերը նվաճողական որևէ նպատակադրում չունի: «Մեր ազգին զենքը պաշտպանական է և ոչ թշնամական,- ասում է Ալիշանը իրավացիորեն ու ավելացնում:- Միշտ փառք ու պարծանք է իր երկիրն ու իր ազգը սեպհական լեզվով եւ օրինոք պահելը. ունենալ հատուկ և բնիկ լեզու մը, սահման մը, քաղաքավարություն մը (պետականություն), ծես մը և հիշատակարաններ, որոնց համար բարեկամ բարեկամի հետ խոսելով՝ կարենան ըսել մերը. այս կատարյալ հայրենիք է, երկրիս որ կողմն ալ որ ըլլա, ինչ դիրք ալ որ ունենա»⁵:

Ալիշանը, հուշիկների նյութը վերցնելով հայոց պատմությունից, նպատակ ուներ հայության նոր սերնդի՝ «Հայկակ»-ների մեջ վառ պահել հայրենասիրության կրակը: Խոսելով այս մասին՝ Ալիշանը գրում է. «Իմ սրտիս զվարճութենեն ավելի քու և քու նմանյացդ օգուտը դիտեր եմ,

¹ Ալիշան Ղ., Հուշիկք հայրենյաց հայոց, հատոր Բ, էջ 373-374:

² Ալիշան Ղ., Հուշիկք հայրենեաց հայոց, հատոր Բ, էջ 454:

³ Ալիշան Ղ., Հուշիկք հայրենեաց հայոց, հատոր Ա, էջ 1:

⁴ Ալիշան Ղ., Հուշիկք հայրենեաց հայոց, հատոր Ա, էջ 75:

⁵ Նույն տեղում, էջ 9:

Հայկակ... այս քանի մը պարապո ժամերուս զրույցքը հրատարակելով: Որով երբեմն ուզեր էի այն հայրենյաց սրբազան զգացման մեծ փառաբանեն մեկ երկու կայծեր թափել ի սիրտ քո, Հայկակ, և քեզի նման հայազգի համբակաց»¹:

Նմանատիպ հատվածներ շատ կարելի է բերել. հեղինակն ամենուրեք հանդես է գալիս որպես հայրենասիրության ջերմ քարոզիչ: Այս իմաստով էլ ամբողջ «Հուշիկք Հայրենյաց Հայոց»-ը հայրենիքի հանդեպ եղած բոցավառ սիրտ մի փայլուն ապացույց է. «...Կան, որ չեն իմացեր, չեն զգացեր ինչ է ծնողի մը ծոց, համբույր և զգվանք, չեն սնած անոր կաթով, որո արյամբն ծնած են, չեն ճաշակած մոր մը քաղցրություն... սակայն և այնպիսիք ճանչած են զսեր և զքաղցրություն հայրենյաց, որ համատարած և անհիշաչար ծնողքի պես կընդունի, կու զգվե ամեն համազգի ու համալեզու»²:

Ստեղծագործական այս ձևը հաջողությամբ արդարացնում է իրեն. մինչև վերջ էլ «Հուշիկք Հայրենյաց Հայոց»-ը մնում է որպես մի տեսակ կենդանի զրույց, որը հափշտակում է ընթերցողին: Ալիշանը, հայկական պատմության ամենից փառավոր դրվագները, վեհապանծներից մինչև անշուքներն ու մոռացվածները պատմելով, ներկայացնում է նշանավոր մարդկանց՝ յուրաքանչյուրին իր ուրույն հրապույրով. ««Կարմիր» Վարդանը, Սահակ Պարթևը, Զապել թագուհին եւ Թեոդորոս Սալիունի նահատակը, Աշոտ Ա եւ Ստեփանոս Սինեցին, ...Արգար դպիրը հայկական տպագրութեան առաջին հիմնադիրներէն մին... Եւ այս բոլոր դէմքերը, դէպքերը, յիշատակները կոգելորեն, կը հառնեն անցեալին փոշիէն, կը վերապրին՝ տարօրինապէս ներուժ կեանքով մը, շնորհիւ այն թրթռուն շունչին, զոր պատմողը անոնց վրայ կը փչէ...»³:

Հայ ժողովրդի պատմությունից վերցրած բազմաթիվ հերոսական դեպքերից է «Կարմիրն Վարդան» հուշիկը, որտեղ հեղինակը պատմում է Հայկակին Վարդանանց պատերազմի հերոսական դրվագներից: Այն առանձին գրքով 1878 թ. հրատարակվել է իտալերեն, ապա՝ քանիցս տպագրվել զանազան պարբերականներում: Ալիշանը Վարդանանց պատերազմին անդրադարձել էր դեռևս 1847 թվականին, գրելով իր անմահ «Պլպուլն Ավարայրի» պոեմը: Ալիշանը 20 տարի անց, պատմագեղարվեստական արձակով, կրկին անդրադառնում է նույն թեմային՝ գեղարվեստական մեծ վարպետությամբ նկարագրելով Ավարայրի հերոսին՝ Վարդան Մամիկոնյանին. «Եվ ահա, երևան եկավ քաջն այն, կարմիր այն

¹ Նույն տեղում, էջ 20:

² Նույն տեղում, էջ 3:

³ **Զույանյան Ա.**, Հ.Ղևոնդ Ալիշան, «Անահիտ», 1902, թիվ 4, էջ 73:

Վարդան, ճառագայթներուն ետևեն դուրս վազող արևուն պես, իր նախապապուն՝ Մուշեղի նման՝ ճերմակ, ճարտուկ, ճախրապաց, բարձրապինչ, բարձրափոփնչ ձիուն վրա հարմարած կամ հեծած, կամ նստած, վասն զի ձին գրեթե սանձին անկարոտ և տիրոջը տակ ավելի թեթևացած քան թե առաջ, չես գիտեր կու խաղա՞ թե կու թոչի: Իսկ տերը թեթևությամբ ամեն դի կու դառնա, կու թոչի կու հասնի»:¹

Ալիշանը շարադրում է կովի արյունոտ օրը, նկարագրում ճակատամարտի եղերական վախճանը, Վարդանի՝ թշնամու զորաբանակների մեջ մխրճվելն ու դրա հետևանքով հայոց բանակից կտրվելը: Ոչ պակաս ուժով է պատկերում նաև Վարդանի ու Վասակի հանդիպումը. «Եվ ահա վարած, կորած, Վասակա չար գլուխը տեսնվեցավ իր հետ քշված գնդին մեջ: Վարդան արդար վրեժխնդրությամբ դարձավ այն անիծապարտին վրա, որ իր թելադիր սատանային սիրած օձուն պես՝ սողոսկելով սպրդեցավ, փշերուն մեջ փախավ, պահվեցավ»:²

Ալիշանն ավարտում է «Կարմիրն Վարդան» գլուխը պատերազմի նկարագրությամբ, Վարդանի մահով և Ավարայրի ճակատամարտի իր դիտարկմամբ: Եվ թեպետ զգացվում է գրողի աստվածապաշտական մտածելակերպը, ու այդ հարցում Ալիշանը մնում է նույն Մխիթարյան կրոնավորը, գործն ամփոփելով՝ նա Հայկակին հորդորում է սիրել հայրենիքն այնպես, ինչպես սիրում էին Վարդանն ու նրա համախոհները, որոնք, չինայելով իրենց կյանքն անգամ, զոհվեցին հանուն հայրենիքի և խոսքը եզրափակում է «Գանձարանի» Վարդանանց նվիրված կանոնի հետևյալ տողերով. «Սուրբք սիրեցեալք և ճշմարիտ զօրականք ընտրեալք, ըստ հաճոյից Տեառն պատրաստեալք, զբարիօք մարտն մարտուցեալք ի յաղթական ձեր պատերազմի, զբարբիոնն ձեր մրցանակի արժանապէս յանձին ընկալեալք. որպէս զքաջ յաւէտ նահատակք արիական ձեր պատերազմաւ թևակոխեալք ի վերնասիովն՝ ի կենդանւոյն քաղաք Աստուածոյ, ի պողոսեան մայրն առաքելոյ... Բարեխօս լերուք առ Տէր վասն տօնողացս զյիշատակս ձեր, զօրականք ընտրեալք: Ընկալ, և այլն»:³

Հ. Ալիշանի «Հուշիկք հայրենեաց հայոց» նշանավոր երկում աչքի է ընկնում «Բագրևանդա կռիվը» վերնագրով յուրօրինակ մի գրվածք, որտեղ պատկերավոր ներկայացված են հայերի կռիվը արաբների դեմ և հայրենասիրական բարձր ոգևորության օրինակը այդ ազատագրական, արդարացի պայքարում: «Հուշիկը» սկսվում է Բագրևանդի հրաշալի նկարագրությամբ, ինչը շատ բնորոշ է Ղ. Ալիշանի ոճին. «Յակունս Եփրատայ,

¹ Ալիշան Ղ., «Հուշիկք հայրենյաց հայոց», հ. Ա, էջ 257:

² Նույն տեղում, էջ 261:

³ Նույն տեղում, էջ 269:

ի ծաղկագարդ վայելչությունն, ըստ սրբազան երգչին, ի ծմակս Ծաղկոտան և ի բարձրավանդակն Բագրևանդայ, հրախրեն զմեզ այսօր հայադիր յիշատակք: Ի՞նչ գեղեցիկ հովիտ, մանաւանդ թէ ի՞նչ ընդարձակ դաշտ՝ լցեալ զարդուք բուսաբերութեան. զոր կու սնուցեն հարիւրաւոր ականակիտ վտակք, իջնելով ի կողից այրարատեան լեռնաշարից և Աղթամարայ պարատափին...»:¹

Այնուհետև դիպուկ բառերով նկարագրում է արաբ խալիֆա Ջափրիի վայրագությունները. «որ իր բռնությունը տարածեց ինչուան ի Կիլիկիա, որով Մեծ և Փոքր Հայք այլ ընկան իր ընչաքաղցութեան և անգլորթեանց տակ»:²

Երբ արաբները շրջապատում են մի բուռ հայ քաջերին, վերջիններս վճռում են. «քանի որ թներնուս վրայ դեռ քիչ մը ուժ կայ, կը'սէին, պետք է թափենք մեր հայրենեաց եկեղեցեաց վրայ. ողջ ողջ երես դարձնել և յետ դառնալ՝ անկարելի ըլլայ մեզի, մեռնինք զենք ի ձեռին, քան փախստեամբ ապրինք»:³

Ալիշանը ապա մանրամասն ներկայացնում է, որ Բագրատունիների ստեղծած ինքնուրույն հայ պետականությունը և ազատասեր հայերը ինչպիսի ծանր իրավիճակում են պայքարում ու նահատակվում արաբական վայրագ շահագործման և քաղաքական ստրկության դեմ. «Հայք իրենց նիզակաց վրայ երես ի գետին Արածանոյ ծաղկանց մէջ փռուելով՝ արիւնով ներկեցին ապրիլի երանգ երանգ փռոցը»:⁴

Սա մի երկ է, որտեղ գովերգվում է հաղթության թմբուկը և ողբերգվում «ետ չքաշվելու սրտակոտոր փողը»: Ալիշանյանական մի գործ ևս, որտեղ արտահայտվում է հայրենիքի գոյատևման համար մահվան անհրաժեշտության տխուր, բայց և անհրաժեշտ միտքը, որին հետևում է թշնամիների հետ քաշվելու և հայի դեմ կռվել չհամարձակվելու նրանց միտքը. «Ասկէ ետև ոստիկանք սկսան զգուշութեամբ վարուիլ Հայոց հետ...»:⁵

Ըստ Ալիշանի՝ այն մահն է անմահ, որից կյանք է ծագում. «Այս է Բագրևանդայ ըսուած կոնիւն. զոր կարմիր արձանագրութեամբ նշանակէ Հայադիրն յ' 18 ահեկանի(25 ապրիլի) 775 թուին Քրիստոսի»:⁶

Ալիշանը մեծ ուշադրություն է դարձրել հայ ազգային վիպասանությանը: Նա «Հուշիկք հայրենեաց հայոց» երկի երկրորդ գրքում ջերմ,

¹ Ալիշան Ղ., «Հուշիկք հայրենյաց հայոց», հ. Ա, էջ 197:

² Նույն տեղում, էջ 201:

³ Նույն տեղում, էջ 213:

⁴ Նույն տեղում, էջ 214:

⁵ Նույն տեղում, էջ 215:

⁶ Նույն տեղում:

ոգևորված տողերով մի ամբողջ գլուխ նվիրեց այդ թեմային: Գրողը «Ազգային վիպասանություն» գլխում ներկայացնում է, որ քաղաքակրթությանը հասնելու համար անհրաժեշտ է պայքարել զազանների ու սողունների և այլ դժվարությունների դեմ. «Պետք էր որ մարդ յաղթե անոնց, խլէ, հալածէ, ջնջէ անհարկաւոր և վտանգաւոր երևացածները: Բայց այս բանս ընելու համար որչափ կտրճութիւն պէտք էր»:¹ Պարգաբանում է Ալիշանը՝ մարդկանցից շատերը այդ դժվարությունները տեսնելով «թուլութեամբ և վատութեամբ ետ քաշուեցան... և անանկ անքաղաքավար ապրեցան շատ դարեր»:²

Հայրենասիրական դաստիարակության համար Ալիշանը շատ մեծ նշանակություն է տալիս ազգային վիպասանությանը, օրինակելի է համարում հայ հին վիպասաններին քաղաքական պոեզիայի զարգացման գործում, քանի որ վերջիններս ժամանակի քաղաքական երգիչներն են եղել և իրենց ժամանակաշրջանում քաջալերել են «ազնիվ մտածմունքները և գործերը». «Ամեն ազգ ալ որ հին քաջ մը կամ Դիւցազն ունեցեր է, իր Վիպասանն ալ պիտի ունեցած ըլլայ. ետնի եկող քաջերուն ալ և անոնց ազգակցացն ալ սիրտ տուողը Վիպասանից երգերն էին և են միշտ»:³

«Ազգային վիպասանություն» գլխում կան տողեր, որոնց մեջ հեղինակը մեղադրում է հոգևորականությանը՝ ազգային վիպասանների գործերը լրիվ չհավաքելու և հետագա դարերին չհասցնելու համար: Ցավով նշում է, որ կարդալ գրելը եկեղեցականների համար էր, նրանցից շատերն էլ ճանաչում էին Սաղմոս և Ավետարան, Մաշտոց ու շարակնոց միայն. «...որոց մեծ մասն եկեղեցւոյ նահատակաց վրայ են, և կ'ըստին Շարականք, և Գանձք և Տաղք. ամենն ալ գրոց ծանր լեզուով և ոճով...»:⁴

Թյուր է այն կարծիքը, թե Հ.Ալիշանի հայրենասիրական քնարը զենքից և կռվից բացի ոչինչ չի գովերգել: Ալիշանի հայրենասիրությունը բավականաչափ ընդարձակ մի կտավ է, որի վրա նա պատկերում է կրթական, հասարակական ու քաղաքական արժեքները, որոնց բարձունքներին հայ ժողովուրդը հասել է դարերի ընթացքում, և որոնք հայի պարծանքն են, ապա պահանջում է, որ հայկակները այդ արժեքները զենքով պաշտպանեն: Այդ արժեքների բույլը հայ արվեստն ու գրականությունն է, որոնց մասին միշտ մեծ հափշտակությամբ է խոսել Ալիշանը: Առանձնապես նա դրվատել է Մեսրոպ Մաշտոցին և Աբգար Դպիրին՝ տառերի գյուտը և տպագրությունը իրավացիորեն համարելով հայ ժո-

¹ **Ալիշան Ղ.**, «Հուշիկք հայրենյաց հայոց», հ. Բ, էջ 103:

² Նույն տեղում:

³ **Ալիշան Ղ.**, «Հուշիկք հայրենյաց հայոց», հ. Բ, էջ 104-105:

⁴ Նույն տեղում, էջ 122:

դովրդի ձեռքբերումներից կարևորագույնները, հայի գոյատևման առհավատյան: «Աբգար դպիր. հայ տպագրութիւն» գործում, մեծարելով Մեսրոպ Մաշտոցին, գրում է. «...իսկ քրիստոնէութեան ատեն մեր նոր գրոց հեղինակն՝ Ս. Մեսրոպ ամենուն յայտնի է թէ ինչպէս երախտագիտութեամբ և փառօք ճանչցուած և պաշտուած է յազգէս՝ յեկեղեցիս և յուսումնարանս»:¹

Շարունակելով միտքը՝ Ալիշանը գտնում է, որ Մաշտոցից հետո պատվելի, «մեծարդին գրագիւտ» մարդկանցից անշուշտ «այն մեկն է՝ գրութիւնը շուտ և շատ ծաւալել հնարողն, որ է Տպագիրն»:²

Ալիշանը Հայկակին բացատրում է Հայոց երկրի հանդարտ, «ի վրդովմանց կոռոյ և հակառակութեան» խաղաղ վիճակը, շեշտում է, սակայն, «ազգին ինքնակացութիւնն գրեթէ իսպառ ջնջած կամ ճնշուած, դանդաղամած անշարժութեան մեջ էր»:³

Այս «աղքատագոյն» կենսապայմաններում էլ հայերը մտածում էին տպագրության մասին ու եթե գտնվեին ընտրյալ անձերը, ապա «անուններն արժան է, որ Հայկական երախտեաց տաճարին մէջ առաջին տողին վրայ գրուին»:⁴

Եվ ահա ժամանակի թանձր մթնոլորտում լուրջ մեջ հայոց երկնակամարում երևաց «ասոր համար եռանդուն, հնարագէտ, անձնանուէր բարերար մը, ԱԲԳԱՐ ԴՊԻՐ»:⁵

Հեղինակը, Աբգար դպիրին ներկայացնելով ազգային բարերար, մեծագործ, մեծ շնորհակալության արժանի մարդ, պատգամում է Հայկակին ճանաչել Աբգարին ոչ միայն որպէս հայերեն տպագրության հեղինակ, այլև «նոյնպէս այլ սկզբնաւոր հրատարակման թէ հոգևոր թէ մտաւոր գրոց մերոց»:⁶ Ալիշանը երբ գրում էր այս տողերը, դեռևս հայտնի չէին Հակոբ Մեղապարտի հրատարակությունների թվակիր օրինակները, ուստի առաջին հայ տպագրիչի դասնիշխանները վերագրում է Աբգար դպիրին:

Գրողի պատկերացմամբ տպագրության պատմությունը հայրենասիրական ազդակ է երկրի զարգացման համար. «Արդ մեզի ծանօթ և հասարակօրէն հռչակեալ առաջին հայերեն լուսաշնորհ և լուսաճնունդ տպագրութիւնն՝ եղած է յամի 1565»:⁷

Իր «Ըսկիզբն տարւոյ և մարդկութեան ի Հայս» և «Աշոտ Ա և Հա-

¹ Ալիշան Ղ., «Հուշիկք հայրենյաց հայոց», հ. Ա, էջ 519:

² Նույն տեղում:

³ Ալիշան Ղ., «Հուշիկք հայրենյաց հայոց», հ. Ա, էջ 523:

⁴ Նույն տեղում, էջ 524:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 536:

⁷ Նույն տեղում, էջ 521:

յաստան հազար տարի առաջ» հուշիկներում, կոչ անելով հայությանը «զենքն ի ձեռին» ազատագրել հայրենիքը, պայքարով ձեռք բերել սեփական ազատությունն ու անկախությունը, Ալիշանը տեսնում է ապագա Հայաստանը որպես լուսավորյալ միապետություն, ներկայացնում է հայրենիքը որպես հասարակական-քաղաքական զարգացած օրրան. «Այս ազգս՝ որ յայսմ մասին աւելի քան զՀռոմս և զՀելլենս՝ իմաստասէր, մանաւանդ թէ ճշմարտասէր գտնուէր է, և այս գիտը պահէր է... Հայ ազգն է...»:¹

Հ. Ալիշանի «Հուշիկք հայրենյաց հայոց»-ը ժամանակի առաջադիմական գործերից էր, որը հայրենաճանաչության, հայրենասիրության, մարդասիրության հրաշալի օրինակ էր հայ գրականության պատմության մեջ: Նահապետը, հանդիսանալով պատմագեղարվեստական արձակի հիմնադիրներից մեկը, արևմտահայ իրականության մեջ առաջին ներկայացուցիչը, առաջ քաշեց ազգային հերոսապատումների վրա հայ ժողովրդին դաստիարակելու խնդիրը: «Հայ համբակաց» հայրենասիրական ոգով դաստիարակելու գործը ձեռնարկելով, առողջ հայրենասիրություն զարգացնելով՝ միաժամանակ կոչ է անում է՛լ ավելի սիրել, է՛լ ավելի ուսումնասիրել հայրենի երկիրը, նրա անցյալն ու ներկան, նրա գրականությունն ու արվեստը:

Ղևոնդ Ալիշանի գրական փառքի անբաժանելի մասն են կազմում պատմագեղարվեստական գործերը, հատկապես խիստ արժեքավոր «Հուշիկք հայրենյաց հայոց»-ի երկու հատորները, որոնք տարիներ շարունակ հայ ժողովրդի բազմաթիվ սերունդներ են դաստիարակել: Եվ անգամ տարիներ հետո Հ. Հովհ. Վ. Թորոսյանը իր «Ընտիր Հայկագունք» գրքում, կրկին դիմելով Հայկակին, պատգամում է «նմանիլ՝ որչափ կը ներէ հասակդ եւ վիճակդ՝ այն նշանաւոր անձանց, որոնք թէ հոգեւոր առաքինութեամբք եւ թէ մարմնաւոր արութեամբ եւ գիտութեամբ՝ փառք եւ պարծանք եղած են ազգերնուս, եւ չքնադագիտ օրինակներով, արիութեամբք եւ առաքինութեամբք մեր պատմութեան էջերը զարդարած, եւ մատենագրութիւննիս պայծառացուցած են»: Այս ստեղծագործությունը իր ոճով ու ոգով գրող հետևորդներ ունեցավ:²

Ղևոնդ Ալիշանի առաջին կենսագիրներից Ս. Երեմյանը «Կենսագրություն Հ. Ալիշանի» 208 էջանոց մենագրության մեջ ներկայացնում է հայրենապաշտի կյանքը և գիտամանկավարժական ողջ գործունեությունը, հրատարակած և անտիպ գործերի մասին տեղեկությունները: Մեզ հասկապես հետաքրքրեցին Ղ. Ալիշանի մահվան առիթով ստացված ցա-

¹ Նույն տեղում, էջ 187:

² Թորոսյան Հովհ., Ընտիր Հայկագունք, Վենետիկ, 1873, էջ 6:

վակցությունների հրապարակումները. «Անփոխարինելի ազնուութեամբ՝ Ազգը մեր խոր վիշտին վշտակից եղավ հեռագիրներով, նամակներով: Ընդունեցանք 76 հեռագիրներ, 100էն աւելի նամակ, 70 քարտեր... ցոյց տուին անսահման յուզում և զգացում. իրենց անկեղծ ցաւակցութեանց հաւաստիքներն էին առ մեզ ուղեւ բազմաթիւ մխիթարական հեռագիրներն և հանգուցեալի հոգւոյն զանազան տեղեր կատարած հոգեհանգստեան պաշտոննին»:¹

Հ. Ալիշանը անվերապահորեն հավատում էր իր ազգի պայծառ ու լուսավոր ապագային: Այսօրվա հայկականներին էլ իր իմաստուն ու բարի խորհուրդներով փորձում է հեռու պահել հայրենիքը կորցնելու վերահաս վտանգներից: Նահապետի պատգամները եկող սերունդներին արդիական են ցայսօր. «Շրջահայաց եղէք, սիրեցէ՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և սիրեցէ՛ք միմյանց»: «Հուշիկք Հայրենյաց Հայոց»-ը ուսումնասիրելով՝ ալիշանասեր ու ալիշանաճանաչ ընթերցողը հնարավորություն ունեցավ վերստին ու նորովի բացահայտելու գրողի հայրենապատկության ավազանի ակունքները, իմանալու և ճշտելու ազգանվեր հուշիկների էատարրերը:

Ալիշանի գործը պիտի կենդանի մնա, և նրա հոգին պիտի հավիտենապես շողա՝ միշտ ներկա, միշտ վառ, միշտ սիրուն, միշտ տաք՝ իրար հետևից եկող բոլոր հայ սերունդների սրտերում, ինչպես իր երգածն է՝ «լուսնակը գեղեցիկ, լապտեր աստուածավառ»:

НУНЕ МКРТЧЯН

Кандидат филологических наук, доцент

РЕЗЮМЕ

ВИДЕНИЕ РОДИНЫ В РАБОТЕ ГЕВОНДА АЛИШАНА «МЕМУАРЫ АРМЯНСКОГО ОТЕЧЕСТВА»

Ключевые слова: истинный патриотизм, народные переживания, армянские священные титулы, с любовью к Богу и народу, мемуары.

Велика роль Гевонда Алишана в сокровищнице армянской мысли и армянской классической литературы. За свою творческую жизнь он выступил как поэт, прозаик, арменовед, историк, географ, переводчик, завещая армянскому народу ценные творения. Кажется, с годами все было сказано об Алишане, исчерпывая восхищение, удивление, интерес. Важнейший принцип творчества Алишана - патриотизм и искренность. Именно этот моральный критерий является средоточием народолюбивой и обожествляющей природу сущности писателя.

¹ Երեմյան Ս., Կենսագրություն Հ. Ալիշանի, Վնտ., 1902, էջ 201:

NUNE MKRTCHYAN
Candidate of Philology, Associate Professor

ABSTRACT

THE VISION OF MOTHERLAND IN GHEVOND ALISHAN'S "THE MEMOIRS OF THE ARMENIAN MOTHERLAND" WORK

Key words: true patriotism, folk feelings, **Armenian and priest titles**, with the love of God and nation, memoirs.

The role of Ghevond Alishan is great in the fields of Armenian thought and Armenian classical literature. During his creative life he acted as a poet, prose writer, armenologist, historian, geographer and translator leaving valuable works to Armenian nation. It seems that everything has been said about Alishan, consuming admiration, surprise and interest. The important principle of Alishan's works is patriotism and sincerity. This moral criterion is the epicenter of the writer's naturalistic essence.

REFERENCES

1. Alishan GH., «Hushikk' hayreneats' hayots'», hator A.
2. Alishan GH., «Hushikk' hayreneats' hayots'», hator B.
3. Acharyan Hr., Patmut'yun hay nor grakanut'yan, 1906.
4. Yeremyan S., Kensagrut'yun H. Alishani, Vnt., 1902.
5. Yeremyan S., Kensagrut'yun H. Alishani, Venetik-S.Ghazar, 1902t'..
6. Yerits'yan Al., «Venetiki Mkhitar'areank'», 1883.
7. T'ananyan G., P'ilisop'ayut'yun yev iravunk', GHevond Alishani p'ilisop'ayakan yev mankavarzhakan hayats'k'nery.
8. T'vorosyan Hovh., Yntir Haykazunk', Venetik, 1873.
9. Shtikyan S., Alishani gegharvestakan steghsagortsut'yuny, Yerevan, 1967.
10. Ch'vopanyan A., Anahit, 1902, t'iw 4.
11. Terteryan A., Hay klasikner, Yerevan, 1944t'.

**Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ԸՆԴ ԵՂԵՆԵԱՒ ՅԱՄԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՎԱՅՐԻ.
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ՆԵՐՏԵՔՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
ՆՇԱՆ-ԽՈՐՀՐԴԱՆԻՇ-ԱԼՅՈՒԶԻԱ-ՏԵՔՍ**

Բանալի բառեր՝ նշան, սիմվոլ, ալյուզիա, բնագիր, բնագրի միջուկային էներգիա, նշանագիտություն, արտատեքստային և հաղորդակցային գործառույթներ:

Գեղարվեստական տեքստի գործառույթները և վերջնական կազմավորումը նպաստում են իրականության պատկերային մոդելների ստեղծմանը, որոնցից յուրաքանչյուրը նյութական առանձին օբյեկտ է, որն ապահովում և վերահսկում է հեղինակ-տեքստ-իմաստ ալյազությունը որոշարկող օրինաչափությունները (և ոչ միայն), կապերն ու հարաբերությունները, այլապես հնարավոր է կորցնի սեփական նշանակությունն ու գործառույթը:

Ալիշանի՝ որպես հեղինակի, «Ընդ եղենեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն»¹ տեքստի (խորհրդածության) մտահղացումն ամփոփում է ողջ նշանային և հաղորդակցական տեղեկատվությունը, որը հեռարձակվում է գեղարվեստական տեքստի տիրույթում և բնութագրվում նշանային այլ համակարգ փոխադրվելու անհնարինությամբ, իսկ որպես գեղարվեստական լեզու, ընթերցողին է փոխանցվում տեքստի պատկերային և նշանային համակարգերում գործող մշակութաբանական ենթատեքստը, որը որակվում է որպես վերլեզվաբանական հատկանիշ: Այս համատեքստում՝ գաղտնագրվող տեղեկատվությունը ոչ թե փոխանցվում է մի համակարգից մյուսը, այլ երևութանում է նշանային տարբեր համակարգերով և ազատորեն վերագաղտնագրվում, քանի որ՝ գեղարվեստական տեղեկատվությունը տարանջատելի չէ իր պատկերանշաններից՝ «Մխալ կլինի ենթադրել, թե նշանի սահմանների համընկնումը տեքստի սահմաններին կարող է տրոհվել նշանների և համապատասխանաբար համակարգվել: Սա կդառնա ոչ թե համակարգային շղթա, այլ հիերարխիայի համակարգ - նշանները փոխկապակցված կլինեն, ինչ-

¹ Ալիշան Հ. Ղեւոնդ, Ընդ եղենեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, Մխիթարեան տպագրութիւն, 1874, 71 էջ:

պէս «մատրոյոշկա» տիկնիկներ, որոնք թաքնված են մեկը մյուսի մեջ: Այդօրինակ համակարգը լիովին իրական է գեղարվեստական տեքստի ստեղծման տիրույթում, և եթե այն անսովոր է լեզվաբանի համար, ուրեմն՝ մշակույթի պատմաբանը անմիջապէս կգտնի նրա զուգահեռները, օրինակ, աշխարհի կառուցվածքում, դիտարկելով դրանք միջնադարյան հայացքով»¹: Սույնը ընկալելի է տեքստի՝ որպէս նշանային համակարգի, որպէս կառույցի և նշանակութային հատկանիշով, որին, որպէս գաղափարի, Ալիշանը հասնում է իր կողմից հաղորդվող տեքստով, քանի որ՝ հեղինակը բառապաշարի հարստացում է իրականացնում և գաղտնագրումներ է ստեղծում հիմնականում վերացարկվող իմաստների փոխանցման տիրույթում:

«Ընդ եղենեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն» տեքստի հիմնական նյութական (ամենակարող) միջոցը և նշանը բառն է, որով պայմանավորվում են հեղինակի մտքի ((վեր)իրական) աշխատանքները՝ նրա խոսքը հստակեցնելով որպէս տեքստի պարունակություն՝ «ահա գրաւեն զուշ աչացս և մտաց՝ պարզունակ նշանքն քառաթեք, ամենայն ուրեք տնկեալք, որպէս հովանիք և պահապանք ամենայնի՝ զոր տեսանես և նշմարես»²:

Երբ տեքստի պատկերային ու զգայական համակարգերը երևութաւորում են գեղարվեստական արտահայտչականության և լեզվի պարզության տիրույթներում, տեղեկատվությամբ հագեցած նույն տեքստը ընդգծվում է երկակիության տիրույթում՝ որպէս համակարգ և որպէս կառույց, միաժամանակ ապահովելով պատկերների, նշանների և խորհրդանշանների համակարգը, հեղինակի լեզվամտածողությունը և տեքստի գեղարվեստական արժեհամակարգը: Այս առիթով Ռուան Բարտը գրում է՝ «Գրականության առանձնահատկության մասին հնարավոր է խոսել միայն այն դեպքում, երբ վերջինս կընդգրկվի նշանային որևէ համակարգում, և որպէսզի ունենանք ստեղծագործության նույնական ընթերցման իրավունք, անհրաժեշտ է նախապէս իմանալ՝ ի՞նչ է տրամաբանությունը, պատմությունը, հոգեվերլուծությունը, կարճ՝ որպէսզի վերադարձնենք ստեղծագործությունը գրականության տիրույթ, անհրաժեշտ է նախ դուրս բերել նրա սահմաններից և անդրադառնալ մշակութաբանական մարդաբանությանը»³:

¹ Лотман Ю.М. Об искусстве. Структура художественного текста // Понятие языка словесного искусства, СПб.: «Искусство - СПб», 1998, ст. 14:

² Ալիշան Զ. Ղեւոնդ, Ընդ եղենեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, Մխիթարեան տպագրութիւն, 1874, էջ 40:

³ Барт Р., Избранные работы: Семиотика. Поэтика, М., Прогресс, 1994, ст. 341.

Այիշանը իրացնում է իր կողմից վերախմաստավորված մշակութաբանական գաղտնագրերը, քանի որ նրա տեքստը գեղագիտական տեղեկատվության հիմքում ենթադրում է տեղեկատվական նոր իրադարձություն՝ հեղինակային մտահղացման ու դիրքորոշման տիրույթներում: Սրանց զուգահեռ՝ հեղինակը ստեղծում է նաև իմաստաբանական հենակետեր, հանգույցներ, գործիքներ, որոնք ընդլայնում են տեքստի մեկնության տարածությունը, հեռարձակումն ու հասանելիությունը: Իսկ որպեսզի ստեղծված հենակետերն ու հանգույցները պահպանվեն, անհրաժեշտ է հասնել համընդգրկուն, սակայն ընթերցողի կողմից ճանաչելի իրողությունների, որոնք կփշրեն նախորդ օրենքները՝ «Հնարավոր է՝ գոյություն ունի նշանի իրական երևակայությունը, նշանը ոչ միայն առանձնահատուկ իմացության առարկա է, այլև՝ Սցիպիոնի երագում որոշակի երկնային միջոլորտներ հիշեցնող տեսիլքի օբյեկտ կամ գաղափար մոլեկուլի մասին, որին հանձնվում են քիմիկոսները, նշանագետը տեսնում է՝ ինչպես է նշանը շարժվում իմաստի տիրույթով, հաշվարկում է նրա վալենտականությունը, գծագրում է նրա շարժումները, նշանը նրա համար գիտակցվող գաղափար է»¹:

Հ. Ղևոնդ Այիշանի «Ընդ եղեւնեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն» երկը տեքստ-աշխարհ է, ուստի՝ «աշխարհը տեքստ է» բարտյան բնորոշումը հանգեցնում է նաև՝ «աշխարհը վաղուց գրված տեքստ է» (Ն. Հ.) գաղափարին, որն այս դեպքում՝ ընթերցվում է Այիշանի առաջադրած հստակ նշանների՝ Հիսուս Քրիստոսի, Բանի, Սուրբ Հոգու և Խաչի միջոցով՝ «Եւ սակայն տակաւին չտեսանեմ ուրեք ակն յանդիման հաստատեալ զուխտ ձեր և զմիաբանութիւն. ոչ ուրեք յիշատակարանս մեծամեծս գործոց անհաւատութեան. ոչ մի նշան երևելի՝ զյաղթութեան և զյաջողութեան սկզբանց իմաստից ձերոց, զի եղից ախոյեան ընդդէմ նշանին Քրիստոսի. այնմ՝ որ ամենայն ուրեք կանգնեալ կայ և երևի համարձակապէս, և զամենայն կանգնէ և կնքէ. նշանն Քրիստոսի, Խաչն ամենափրկիչ»², կամ՝ «Զի յանմահութիւն հրաւիրելոց՝ անմահական վայելէր կերակուր, զիս ինքն՝ հրաշալի փոխարկութեամբ՝ ետու ձեզ ճաշակ անճառելի: «Առէ՛ք, կերայք, այս է մարմին իմ... Արբէ՛ք՝ ի դմանէ ամենքին, զի այդ է արին իմ»: Ճաշակեցէք և տեսէք զիս, զի քաղցր եմ: - «Ես եմ հացն կենաց. Որ գայ առ իս ոչ քաղցիցէ, և որ հաւատայ յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի»: «Ես եմ հացն կենդանի՝ որ յերկնից իջեալ <...> զի ես միայն եմ լրումն սրտի և հանգիստ հոգւոյ. ես Ա և Օ. սկիզբն և կատարած, առաջին

¹ Նույն տեղում, 250-251.

² **Այիշան, Հ. Ղևոնդ**, Ընդ եղեւնեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, Մխիթարեան տպագրութիւն, 1874, էջ 37:

և վերջին: Ամենայն ինչ ինն եղև, և առանց իմ եղև և ոչ ինչ: «Ես եմ ճանապարհ և ճշմարտություն և կեանք». Ես «Յիսուս Քրիստոս, երեկ և այսօր, նոյն և յաւիտեանս»¹ մեկնությամբ:

Ընթերցողը նշանի տիրություն դիտարկում է նաև տեքստում գործառվող իրերն ու երևույթները՝ յուրաքանչյուր միավոր՝ առանձին նշանով: Այս համատեքստում՝ անհրաժեշտ է նշել՝ Ալիշանի աշխարհաքաղաքական ընկալումները գիտակցության տիրություն երբեմն խախտում են նշանի պատկերավորման օրինաչափությունները, ապակառուցում են այն, ստեղծում նոր տեքստ և նոր աշխարհ, որը վերածվում է հեղինակի ճակատագրի՝ «Տեքստը ամբողջական նշան է, և լեզվական ընդհանուր հատկանիշներով տեքստի բոլոր առանձին նշանները վկայում են նրանում նշանի տարրերի մասին: Յուրաքանչյուր գեղարվեստական տեքստ ստեղծվում է որպես առանձնահատուկ պարունակությամբ ad hoc համակարգված նշան: Սա առաջին հայացքից հակադրվում է հայտնի իրավիճակին, թե կրկնվող տարրերը, որոնք ձևավորում են որոշակի փակ բազմակիություն, կարող են ծառայել տեղեկատվության փոխանցմանը: Միայն թե հակադրությունն այստեղ թվացյալ է»²: Իմաստի ապակառուցումն, այս դեպքում, ոչ միայն պատմության ապակառուցումն է, այլև՝ աշխարհի, որը մարդու ինքնագիտակցական գոյության անդունդն է և երևութանում է «էքզիստենցիալ գոյաբանությամբ»³:

20-րդ դարասկզբին Մալևիչը ներկայացավ «Սև քառակուսու»⁴ գոյաբանական ամբողջատիրությամբ: Սույն կտավով Մալևիչը գոյաբանու-

¹ Նույն տեղում, էջ 55, 57:

² **Лотман Ю.М.** Об искусстве. Структура художественного текста // Понятие языка словесного искусства, СПб.: «Искусство - СПб», 1998, ст. 14.

³ Мартин Хайдеггер, Бытие и время, (пер. В.В. Бибихина), М., Академический Проект, 2011. ст 372-377.

⁴ Մալևիչն այս կտավն ավարտել է 1915 թվականի հունիսի 8-ին, (տե՛ս Шатских А. С. Сколько было «Чёрных квадратов? // Проблема копирования в европейском искусстве. Материалы научной конференции 8-10 декабря 1997 года / Российская академия художеств. - М., 1998), որի միջոցով նա ներկայացրեց սուպրեմատիզմը հիմնավորող նոր համակարգ: Սուպրեմատիկ երեք հիմնական ձևերը՝ քառակուսին, շրջանը և խաչը, խթանեցին սուպրեմատիկ համակարգի հետագա զարգացումը՝ ստեղծելով սուպրեմատիկ նոր ձևեր: «Սև շրջանը» և «Սև խաչը» ստեղծվել են «Սև քառակուսու» հետ միաժամանակ և ցուցադրվել նույն ցուցահանդեսում՝ կազմելով սուպրեմատիկ համակարգի երեք հիմնական տարրերը:

Մալևիչի մտահղացմամբ ցուցահանդեսի անվան մեջ առկա 10 թիվը ենթադրում է մասնակից նկարիչների քանակը, իսկ «0 ձևը»՝ ցուցադրելով «Սև քառակուսին»՝ նկարիչը «ամեն ինչ հանգեցնում էր զրոյի»: 1916 թվականի մարտին «Մագազին» ցուցահանդեսի կազմակերպիչ Վլադիմիր Տատլինը, ով Մալևիչի մշտական հակառակորդն էր, չընդունեց նրա սուպրեմատիկ աշխա-

թյան էքզիստենցիալ տիրույթը վերախմաստավորեց Ոչնչով (nihil, 0 ձև): Կտավի դատարկությամբ ընդգծեց ունայնությունը, մարդկանց անդիմությունը, անջատեց ու ժխտեց երևակայական լարծուն ու փտած իրականությունը առողջ համակարգից՝ հայտարարելով՝ թե՛ «Աստված ստեղծեց կատարյալը»¹: Նա փորձեց պատասխանել մարդկությանը հետաքրքրող հարցերին՝ ի՞նչ նպատակով և ինչի՞ց Աստված ստեղծեց կատարյալը: Ու քանի որ՝ իմացաբանական-տեսական ամեն ներկայացում իրականությունը չէ դեռևս, ուրեմն՝ բոլոր տարբերակումները Ոչինչ են, իսկ Ոչինչը ուսումնասիրելի կամ բացահայտելի չէ, քանզի՝ Ոչինչ է, որում հայտնվել է մարդը, ով ոչինչ չի ճանաչում՝ դրանով՝ ինչը նույնպես դարձնելով Ոչինչ:

Սա 20-րդ դարասկզբին ճշմարտության որոնումների ընթացքում արվեստին բնորոշ իրողություններից մեկն է, որով բնութագրվում է ոչ միայն Մալևիչի «Սև քառակուսին», այլև՝ Ջ. Ջոյսի «Ուլիսեսը», որի առիթով Կ. Յունգը նշում է՝ «Հոսքը ոչ միայն սկսվում և ավարտվում է Ոչնչի մեջ, այլև ինքն ամբողջովին բաղադրված է Ոչնչից»²:

Նկատենք երկու իրողություն՝ ա. Ալիշանը հրաժեշտ տվեց այս աշխարհին 20-րդ դարամուտին՝ 1901 թ. նոյեմբերին, բ. Ալիշանի իմաստասիրական և գեղարվեստական աշխարհը այս պայմանականության

տանքները, և Մալևիչը ցուցահանդեսին ներկայացավ ճակատին նկարված գրոյով, որպեսզի այդ նշանը, այդուհանդերձ, լինի ցուցահանդեսում: Մալևիչը կողմ էր առարկայականությունից լիովին հեռացմանը, որը հաստատվեց սև քառակուսու՝ «որպես մաքուր արվեստի առաջին քայլ» հայտարարությամբ (տե՛ս Կ. Գորյաչևա Կ. Почти всё о «Чёрном квадрате». / Приключения «Чёрного квадрата». - СПб.: Государственный Русский музей, 2007. ст. 9): Դրանով նա տարանջատում էր «արվեստի երեկվա օրը» և իր բացահայտման սկզբունքային նորությունը, որը հռչակում էր քառակուսին որպես «գրո ձև»:

«Զրո ձև» (nihil) ըմբռնումը այդ ժամանակահատվածում արդեն ներառված էր ռուսական ֆուտուրիզմի տիրույթ և ծառայում էր որպես «բացարձակի» ժխտման հոմանիշ, քանի որ ֆուտուրիստական տեսությունը հայտարարում էր նախկին մշակույթի գրոյացումը: Մալևիչի սուպրեմատիկ հայտարարության բնօրինակում գրոյի նշանակությունը «ոչնչից» հասցվել է «ամեն ինչի»։ «Սև քառակուսու» «գրոյական» նշանակությունը նաև նրա հիմնավոր ձևի մեջ էր՝ որպես սուպրեմատիկ «բջիջ», ինչպես անվանում էր ինքը՝ Մալևիչը (Նույն տեղում, էջ 9): Սուպրեմատիկ տեսության մեջ «գրոն» անառարկայականության սկիզբն էր, և խորհրդանշում էր նկարչի ավանդական առարկայական մտածողության ավարտը: Այն «գրոյական» էր նաև գույնի արտահայտությամբ, քանի որ՝ սևը «գույն» չէ սպիտակի վրա:

¹ Шатских А. С., Философский архитектон Малевича // De Visu. № 11. 1993, ст. 41.

² Юнг К.Г., Дух в человеке, искусстве и литературе, Минск, ООО Харвест, 2003, с.116.

մեջ ոչ թե 20-րդ դարի արվեստի տազնապների արտահայտությունն է, այլ քրիստոնեական գաղափարաբանության և անհատական գեղագիտական տազնապների, և այդ տեսակետից «ի՞նչ նպատակով և ինչի՞ց Աստված ստեղծեց կատարյալը» հարցի պատասխանը Ալիշանն ուներ Ս. Գրքից՝ «Տեր Աստուած մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, եւ մարդն եղաւ կենդանի էակ» (Ծննդոց, 2, 7):

Արվեստը նույնպէս սկզբնավորվում է մարդուց, սակայն Հ. Ղևոնդ Ալիշանի ստեղծագործական ոգին այս դեպքում ենթակա է ոչ թե քրիստոնեական վարդապետությանը, այլ՝ արվեստի արարման օրինաչափություններին: Այս համատեքստում՝ Ալիշանի երկի ներտեքստաբանական և հաղորդակցական գործառույթները քննելիս, օգնության են գալիս նշանը, խորհրդանիշը, այյուզիան, տեքստի ընկալումը:

Ալիշանի «Ընդ եղեւնեաւ յամայութեան բացավայրի. Խորհրդածութիւն» երկն ամփոփում է իմաստների անսահմանությունը՝ հեղինակի, ընթերցողի, աշխարհի ու տեքստի միջոցով, քանի որ՝ մարդը՝ ծնվում ու ապրում է սովորությունների, կրթության, դաստիարակության, մշակութային ավանդույթների իմաստաբանական, հասարակական և միջանձնային հարաբերությունների փորձառության տիրույթներում, որոնց ապակառուցումը՝ աշխարհի ապակառուցումն է, ինչին հակված է և ինչի շնորհիվ գոյատևում է «ունայնամիտ իմաստասեր» մարդը: Ոչնչի և Ոչնչի միջև իմաստ որոնելու գաղափարները, Մալևիչից շատ առաջ, 1874 թվականին դեռևս, իր «Ընդ եղեւնեաւ յամայութեան բացավայրի. Խորհրդածութիւն» երկում ամփոփել է Ղևոնդ Ալիշանը՝ «Զուր և սնոտի է ամենայն խորհուրդ և գործ, արուեստք և հնարք, գիտութիւնք և օրէնք, զբօսանք և զբաղանք, ցանկութիւնք և ցանկալիք, ամենայն առհասարակ՝ որ ոչ իցէ համաշունչ հոգւոյ Յիսուսի, որ ոչ իցէ կշռեալ նորին լծակաւ, և ոչ նորին մատամբ նշանակեալ: <...> Լուարուք ինձ և դուք, մեծամեծք երկրի և սիրողք աշխարհի, որք և ըստ թաքուն վկայութեան գիտակցութեանդ՝ ոչ ունիք և ոչ էք կարող ունել ինչ մի իսկական առաւել քան զստրուկ ոք յետին. ամենայն մեծութիւն ձեր և շուք՝ պաճուճանք իմն են և պատանք կաշկանդիչք, յորոց գերծ ևս են աղքատքն. կամ՝ որպէս հովանի տարածեալ զձեօք՝ որ և ոչ հատաչափ մի կշռէ, կամ ՚ի բուռն անկանի»¹:

20-21-րդ դարերում աշխարհը թոթափում է ընդարմությունն ու ունայնությունը և ազատվում է Ոչնչի և ունայնության գաղափարներից, հնացած բոլոր նշաններից ու խորհրդանշաններից, հիշողության ու թղթի մաքրությունից: Անձնականի և Ուրիշի միախառնումը, վերիրական իրա-

¹ Ալիշան, Հ. Ղևոնդ, Ընդ եղեւնեաւ յամայութեան բացավայրի. Խորհրդածութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, Մխիթարեան տպագրութիւն, 1874, էջ 51, 64:

կանությունը, որ իրական աշխարհը փոխարինում է երևակայությամբ ու պատրանքներով, մղում են Ալիշանին ստեղծելու իր աշխարհ-տեքստը՝ տեքստաբանական ներքին փոխանցումների շնորհիվ հնարավոր դարձնելով մշակութաբանական այլասացությունը՝ «Թող արդ ճգնիցին քերթողք և արարողք՝ յԵլիական և յԵնիական հանգներգութիւնս դրուատել զդիւցագունս սիրայինս. խուռն ընթասցին իմաստունք և անիմաստք՝ ի թատերս, նկատել զհանդէս և զկերպարանս վիրաւորաց սիրոյ, զորս բանաստեղծիցն վերարկուէ հանճար բազմագան, և ներդաշնակութիւն նուագարանաց շողմեալ շպարէ, և փայփայելով յանկուցանեն զսիրտ ի պատրանս իւրեանց: Սակայն ամենայն արուեստ Սոփոկլէայց և Կոռնելէայց ոչ բաւիցեն թաքուցանել զանկողիտանս և զաղկաղկութիւն սրտի մարդոյս»¹:

Բացարձակի որոնումը, սակայն, իմաստավորում ու միավորում է աշխարհը՝ ձգտելով ազատագրել դանտեական գաղտնագրումներից ու հասցնելով Ալիշանի՝ որպէս գրողի, շնորհին, ըստ որի՝ որպէս դեմիուրգ տեսանելի է նա, ով իմաստավորում է նշանների ու պատկերների իր աշխարհը, և ընթերցողին ուղղորդում է դեպի գաղտնագրերի իր համակարգը՝ հիմնավորելով սեփական անհատականությունը՝ որպէս մշակութաբանական փաստ և գոյության իմաստ:

Ալիշանի անհատականության հաստատումը միաժամանակ աշխարհի ամբողջականության հաստատման փորձ է, քանզի այն գոյություն ունի ոչ թե որպէս տեղեկատվության հայտանիշ, այլ՝ էքզիստենցիալ աշխարհի իրողություն: Ալիշանի տեքստը հաղորդակից է բարձրագոյն (վեր)գիտակցությանը և ճանաչելի է անսահմանությամբ, որ ծնվում է միմիայն արարման՝ քառսից կարգ անցման և տեքստի՝ որպէս տիեզերական կառույցի, ստեղծման պահին՝ «<...> զի առհասարակ բնութիւն մարդոյ ընդ պէսպէս ախտիւք և կրիւք է գրաւեալ, տմարդութեան թուի չգործվել ընդ վերս սրտի. և գէթ առաւել ներելիք սխալանք սիրոյ՝ քան ռխութեան, զի առ այն՝ ինքնին դրդի սիրտ, իսկ առ այս՝ միտք մղեն սիրտ: <...> Ա՛հ, սրբագան են արդարն հայրենիք, և խորագոյն կիրք որ առ ՚ի նմանէն <...> եթէ արդարն զգօն հայրենասիրութեան իցեն գործքն գովեալք. զի ոչ է կատարեալ գործ որ ոչ ունիցի կնիք անմահութեան»²:

Այդ դեպքում՝ տեքստի միջուկային էներգիան, բարձրագոյն գիտակցության ամենակարողությունը, անեզրությունն ու պարադոքսալությունը ամրագրվում և ամբողջանում են «Ընդ եղենեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն» երկի տասը (Ա↔Ժ) հատվածներում: Եվ

¹ Նույն տեղում, էջ 17-18:

² Նույն տեղում, էջ 18-19:

երբ տարանջատվում է քառսը, տեքստը ընդգծվում է սեփական իմաստաբանական և ձևաստեղծաբանական համակարգով, որը հեշտորեն չի տրվում, քանի որ չի ընդգծվում վերջինիս պարունակությունը, թեպետ այն անմիջապես ճանաչում է իրական ընթերցողը, ով նույնպես ներգրավվում է տեքստի միջուկային էներգիայի տիրույթ:

Ալիշանի «Ընդ եղենեալ յամայութեան բացավայրի. Խորհրդածութիւն» երկը կազմավորվում է նաև խորհրդանիշերի և այլուզիաների լիիրավության և ամբողջականության տիրույթում: Դրանք հասանելի են և ընթերցվում են տեքստի նշանային համակարգում, երբ ընթերցողը համագործակցում է հեղինակի հետ, ապա՝ հեղինակի հետագծով մասնակցում տեքստի արարմանը: Տեքստը տեսանելի առնչությունների համակարգ է, որում գաղտնագրված իմաստների հակառակ կողմում ի հայտ են գալիս իմաստաբանական նորանոր նշանակություններ: Պատկերավորման այսօրինակ իրողությունը մասամբ հենվում է այլուզիայի և վերապրումի ֆենոմեններին, որոնց միջոցով ապահովվում է ալիշանական տեքստի ճանաչելիությունը՝ դարձնելով այն հաղորդակցության ակտուալ միջոց:

Վերոնշյալ իրողություններով տարբերակվում են տեքստի արդիականությունն ընդգծող և մեկնությունն ապահովող օբյեկտները (գործիքները), որոնք երկի մեկնության տիրույթում ընթերցողին ուղղորդում են դեպի ասացման այլուզիային և վերապրումային մոդելները, որոնց ներքին տիրույթում կազմավորվում է «Ընդ եղենեալ յամայութեան բացավայրի. Խորհրդածութիւն» երկը՝ «Ո՛վ ձայն ազատասուն, որ արհամարհեալ զշէն և զպատուար՝ ընթանայիր յարձակավայրն, որպէս հրէշ իմն անծանօթ յանծանօթից արտավազեալ անդնդոց, որոտալով ՚ի վերայ ջուրց գետոց և աղբերաց, մոնչելով յանձայրածաւալ կռակաշարժութիւնս ծովուց, կոշկոճելով գկողերս կաղնեաց, փշրելով զմատաղատունկս մայրից Լիբանանու, շարժելով զանապատս կարծրակունն լերամբք հանդերձ»¹:

Դիտարկելով տեքստի գործառնության ինարավորությունները և հենվելով զարգացման ընթացքին, քանի որ՝ վերապրումն առկա է տեքստի ըմբռնման որոշակի սահմաններում, ընթերցողի գիտակցության տիրույթում ստեղծվում է նաև այլուզիայի գաղափարը, որը զարգացնելու ընթացքում Ալիշանը ներգրավում է ընթերցողին և հենվում ճանաչելի իմաստային հանգույցներին: Այսպես՝ Լիբանանի մայրի անտառների հիշողությունը առկա է նաև Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի հայտնի հատվածում՝ [Բան Թ, Ա]՝ «Նա զի թէ զմայրս

¹ Ալիշան, Հ. Ղեւոնդ, Ընդ եղենեալ յամայութեան բացավայրի. Խորհրդածութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, Մխիթարեան տպագրութիւն, 1874, էջ 9:

Լիբանանու ի մի լուծ կշռոց զաղեցից»¹: Կարծում ենք՝ այստեղից է պատկերը փոխանցվել Ալիշանի երկ:

Ալյուզիայի գործածության սույն գործընթացը թույլատրում է Ալիշանին՝ գործառելու և ուղղորդելու նաև ընթերցողի ջանքերը՝ տեքստի վերապրման միջոցով ապահովելով հասկացման ու ճանաչողության տարբեր մակարդակներ, քանի դեռ՝ հեղինակը աստվածային խոսքը փոխանցողն է, ընթերցողը՝ ընդունողը: Ու թեպետ՝ Պլատոնը՝ «Իոն»-ում (սոկրատեսյան շրջան) հավաստում է, թե՝ «<...> դրա համար աստված զրկում է նրանց բանականությունից և դարձնում իր ծառաները, աստվածային էությունը կրողները, մարգարեները, որպեսզի մենք, լսելով նրանց, հասկանանք, որ նրանք, կորցնելով բանականությունը, ասում են այնքան թանկ բառեր, ինչպես աստված ինքը, որ նրանց միջոցով հաղորդում է իր ձայնը»²: Ալյուզիաների ճանաչման սույն գործընթացը հեղինակն առնչում է դրանց ստեղծման տարբեր սկզբունքների և ապահովում անվանման տարաբնույթ եղանակները, որոնք կազմավորում են ոչ թե տեքստը, այլ նրա ներկայությունը, որ միաժամանակ հեղինակի տեսանկյունն է, և հնարավոր է, ձեռք է բերում նշանի գործառույթ: Ներտեքստային գործառույթների այսօրինակ համադրություններն առնչվում են դրանք ուսումնասիրելու մեթոդներին, և հնարավորություն ընձեռում նաև՝ ալյուզիաների, վերապրումների, այլև՝ խորհրդանիշերի տիրույթներում դիտարկելու բուն տեքստը, որի կառուցվածքաբանական համակարգը և ընթերցողի ճանաչողական հնարավորությունները համընկնում են միևնույն տարածաժամանակում (ունեն նույն գոտիականությունը և բևեռները):

Ալիշանի «Ընդ եղենեսալ յամայութեան բացավայրի. Խորհրդածութիւն» երկում առանցքային խորհրդանիշ է եղնին, և նշյալ տեքստը մենախոսություն-խորհրդածություն է եղննու հետ, որը ստեղծվում է Ալիշանի՝ տեքստ-ասացում-գիտակցություն-ընթերցող հարաբերությունների ներքին տիրույթում՝ որպես տեքստային ամբողջականություն:

Սույն երկում եղնին կենսական էներգիաները կրող աղբյուր է, որը միավորում է մարդու ներաշխարհը, բնությունն ու տարածաժամանակը՝ «Եւ որպէս հովանոց գեղեցիկ գահաւորակիս 'ի կատար բլերս, 'ի բացեայ 'ի նմանեացն և յամենայն ծառոց, ամբառնայ մենաւոր ծառս այս եղննեայ, մեծ և աճիւնաճիւղ, և կայ 'ի հաստոջ դալարութեան և կորովոյ, որպէս արդեօք յառաջ քան զերկերիւր ամս և աւելի: <...> Մերթ խլացեալ

¹ **Քրիզոր Նարեկացի**, Մատենանոց տպագրության, Բան Թ, Ա, աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Ե., Հայկ. ՄՄՀ ԳԱ հրատ., 1985, էջ 275:

² **Платон**, Собрание сочинений в 4 томах, Т.1, Под общей редакцией А. Ф. Лосьева и В. Ф. Асмуса, Пер. с древнегреч. – СПб., Изд. Олега Абышко, Санкт-Петербург, 2006, ст. 144.

զանխլանամ, և մերթ զամենայն կարծեամ ճանաչել յստակ, և վրիպիմ. և որպէս պատառք ամպոցս սահեալք ընդ արեգակամբս, մերթ նսեմանամ և մերթ լուսանամ: Մերձ ընդ մերձ յոգոց ելանէ, խռովի և խաղաղի, սարսէ և սիրէ սիրտս այս 'ի ծոցի իւրում»¹:

Տեքստի ստեղծման սույն սկզբունքը գենետիկորեն առնչվում է արքետիպայինին² և, որպէս կանոնավոր-իմաստակիր վիճակ, ժառանգում է նրա գոյաբանությունը, գաղափարախոսությունը և առանձնահատկությունները: Սույն խորհրդանիշի շուրջ առավել սովորական դիտարկումն առնչվում է տեքստի պարունակությանը, որը իր հերթին ուրիշի և, որպէս կանոն, մշակութաբանական ավելի արժեքավոր միջուկի արտահայտությունն է: Այս դեպքում՝ անհրաժեշտ է տաքերակել խորհրդանիշը և վերապրումը՝ հիշողությունից և ցիտատից, քանի որ՝ նրանց՝ «արտաքին» պարունակությունն ինքնուրույն չէ, այլ՝ «ինքնատիպ նշան է՝ թիրախային սեփական հասցեով, և նշում է մետոնիմիական հարաբերությունների մեջ գոյավորվող համընդհանուր տեքստը: Իր արտահայտության և պարունակության տիրույթներում խորհրդանիշը նշում է որոշակի միասնական փակ նշանակությամբ և ընդգծված սահմանով տեքստ, որը առանձնանում է իրեն շրջապատող նշանագիտական համատեքստից»³:

«Ընդ եղենեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն» երկում եղնին ամփոփում է նոր աշխարհակարգը կրող համաշխարհային ծառի գաղափարը և անձնավորվում է, ինչը դրսևորվում էր նաև համաշխարհային դիցաբանության տիրույթում՝ «<...> բլուրքս թուին խոնարհեալ և դաշտքս վերացեալ. և ծառս այս եղնեայ՝ սա մեծաձայնագոյնս ևս հնչէ և շաչէ, շշնջէ և շառաչէ, տատանի և տագնապի. նշաւակ իմն և նպատակ կանգնեալ բոնութեան հողմոյն, յինքն ձգելով զորդութիւն օդեղեն հոսանացն, որպէս հողմաղաց մի հանգրուանաց,

¹ Ալիշան, Հ. Ղեւոնդ, Ընդ եղենեաւ յամայութեան բացավայրի. Խորհրդածութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, Մխիթարեան տպագրութիւն, 1874, էջ 6-7:

² Եղնին դրախտի ծառի արքետիպն է, որից ժամանակին մարդիկ զրկվեցին, բայց որը ամեն տարի վերադարձվում է վերածնվող փրկչի կողմից: Խորհրդանշորեն մեկնելի են ոչ միայն ծառը, այլև՝ սաղարթը, մշտադալարությունը, այն զարդարող Բեթղեհեմի աստղի խորհրդանիշը, վառվող մոմերը: Նույնիսկ՝ խաչը, որ ամրացվում է ծառին, խորհրդանշում է Քրիստոսի չարչարանքները՝ վկայելով եղնու ուժեղ հատկությունները: Հետևաբար՝ եղնու մասին խորհրդանշական պատկերացումներ ու իմաստներ ստեղծելիս կարևորվում է նաև արտաքին տեսքը: Այսօրինակ՝ համախմբումը մշտապես հանգեցնում է եղնու՝ որպէս օբյեկտի խորհրդանշանացմանը և լեզբներին հետ նրա առնչվելուն:

³ Лотман Ю. М., Семиосфера // Символ в системе культуры, изд. Санкт-Петербург: Искусство-СПБ, 2010, ст. 241.

կամ անիւ մեծի մեքենայի, անդադար հոլովելով ուստովք և կողերով, մերթ խոնարհելով և զգլուխս իմ կոծելով, և մերթ ընդ երկինս ամբարձեալ՝ իբրև գթութեան ծափս հարկանելով, և որ երբեք լռելով՝ ի հողմաձայն հնչմանցն և յահեղ աղաղակէն, որպէս թէ պահանջք ինչ իցեն իւր ի բնութենէ, կամ քարոզ կարդայցէ՝ բերան եղեալ լռութե վայրացս»¹:

Ուշագրավ է նաև Ալիշանի՝ եղևնու գեղագիտական և հուզական գնահատությունը, որը հետագայում ավելի ժողովրդականացել է և դարձել նոր պաշտամունքի հիմք՝ «Այնքան զօրանայ յիս ազդումն վայից և վանկից հողմակոծեալ եղևնոյս, զի միտք իմ դրդեալ վարին յանուր յանվայր վայրս, և ի կիրս ոչ անհաճոյս տխրութեան. յոր և տակաւ խորասուզեալ՝ ափշիմ, և ոչ բաւեմ համօրէն պարզել զոր զգամս»²: Մշակութաբանության տիրույթում անխուսափելի է եղևնու՝ որպէս պաշտամունքի օբյեկտի, հիմնարար փոփոխությունները, որոնք ներագդել են հեղինակի գեղագիտական, հուզական, էթիկական, խորհրդանշական, դիցաբանական ընկալումներին և գտել իրենց դրսևորումները տեքստում: Սույնը նույնպէս հենվում է արքեպիսկոպիսն պոմեներին, և մասնակիորեն, նրանց ապա-մեկնողական հիմքին, ուստի՝ տեքստում գրավում են ոչ միայն արքեպիսկոպիսն դրսևորումները, այլև նրանց առնչվող հարաբերությունների ամբողջությունը, որ բնութագրվում է մեջբերվող իրադարձական տեքստի հատկանիշով՝ «Զի՞ դու, զի՞ քեզ, ծառ ծփակոծ, տունկ մի ի տնկոց, և հինաւորց և մշտամանուկ: Առ ի՞մ կաս կռուեալ լոկ անջատ ի մենաւոր գահաւանդիս, մատնեալ կամ անձնատուր՝ ի գբօսանս վայրենի հողմոյս. որ ընդմտեալ ընդ ուստերդ և ընդ կողերդ՝ որպէս ընդ փողս եղեգանց երգիոնի մեծի՝ հնչեցուցանէ զընդարձակութիւն ամայութեանս. յեղանա կ անարուեստ և ամենարուեստ. ներդաշնակութիւն անյօդ անթարգման. զմայլումն սրտառուչ»³:

Հին ժամանակներում հավատում էին, թէ ծառերը կենդանի էակներ են, և նրանցում ապրում են մահացածների հոգիները: Ոգեշնչումը հատկապէս մշտադալար ծառերի հանդեպ էր, քանի որ, ըստ հավատալիքների, նրանք ապրում էին հավերժական գորությամբ, իսկ ձմռան շնչին թափվող տերևներով ծառերը չունեին այդ գորությունը: Մշտադալար ծառից մարդիկ ծիսական տարբեր արարողություններով օգնություն էին հայցում՝ դրանով դրսևորելով պաշտամունքը ծառի հանդեպ: Եղևնու պաշտամունքին՝ որպէս կենդանի բնության խորհրդանիշի, օգնում էր

¹ **Ալիշան, Հ. Ղեւոնդ**, Ընդ եղևնեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, Մխիթարեան տպագրութիւն, 1874, էջ 7-8:

² Նույն տեղում, էջ 8:

³ Նույն տեղում:

նրա մշտադալարությունը, ինչը մշտապես նպաստում էր եղևնու վերածննդին՝ դարձնելով նաև Աստծո անսահման բարության խորհրդանիշ, որն ընկալվում էր որպես հավերժական կյանքի խորհրդանիշ և Քրիստոսից ավետվող բարոյական վերածնունդ¹:

Բրգաձև սաղարթով, ճյուղերի շրջանաձև հանգույցով, խիտ, երկարաձիգ, մշտադալար ու արժանապատիվ եղևնի, նուրբ փշատերև, որի խեժահոտը զուգակցվում ու նպաստում է նրա կերպափոխմանը՝ գեղագիտորեն ստեղծելով նրա՝ կատարելության ձգտող անձնավորումը: Վերնաձիգ սույն կերպը նման է մի տաճարի, որը կատարում է իր գործառույթը՝ շուրջը զրավելով ու պահելով ոչ միայն Ալիշան-հեղինակին, այլև՝ մարդկանց, ովքեր վստահում են եղևնուն իրենց ամենասակրալ գաղտնիքները՝ «Եւ որքանի՞ք և որպիսի՞ք ոմանք յառաջ քան զիս նստեալք ընդ սորին հովանեաւ՝ հանդէս արարին խորհրդոց և կրից իւրեանց, որպէս վկայ կամ ապաստան գաղտնեաց սրտիցն ունելով»²:

Ու չնայած գաղափարաբանական բոլոր կերպարանափոխություններին՝ եղևնին ներկայանում է որպես մութ ուժերի դեմ կյանքի և հաղթանակի ծիսական օբյեկտ, որպես Սուրբ Ծննդյան տոնի ճշմարիտ խորհրդանիշ՝ «Խորհրդանիշը մշտապես արքայիկ է: <...> խորհրդանիշը, ենթադրելով ավարտուն տեքստ, կարող է չներառվել որևէ համակարգված շարքում, իսկ եթե ներառվում է, պահպանում է իմաստային և կառուցվածքային ինքնուրույնությունը: Այն արագորեն ընդգծվում է նշանագիտական տիրույթում և նույնքան արագ էլ ներգրավվում է նոր տեքստի տիրույթ: Դրանով է պայմանավորված նրա առանձնահատկու-

¹ Եղևնին զարդարվում է **Սուրբ Ծննդյան տոնը**, որպեսզի մարդիկ չմոռանան **սիրո և բարության, ողորմության և կարեկցանքի** մասին: Արդյունքում, գեղագիտական և հուզական այս կերպարը իմաստավորվում է և իրականացնում նաև որոշակի կրթական գործառույթ: **Եղևնու խորհրդանշական կերպի հարաբերումը Քրիստոսին** ստեղծում է նրա **քրիստոնեական կամ աստվածային ընկալումը**, որն էլ վառվում է երկնքում **սուրբ ծննդյան գիշերը**, որպես հավերժական կյանքի խորհրդանիշ, որը հիշեցնում է աստվածային լույսի մասին, որը հայտնվում է հովիվներին, Տիրոջ հրեշտակի միջոցով և ավետում Հիսուսի ծննդյան մեծ ուրախությունը: Համաձայն սուրբ ծննդյան մի լեգենդի՝ Հորդանանի ափին աճող մի եղևնուց են պատրաստել խաչը, որին խաչում են Քրիստոսին, այստեղից էլ նրա՝ «Խաչի ծառ» կամ «Քրիստոսի ծառ» անվանումը: Մարդիկ ճյուղերը ցանում են գերեզման տանող արահետին: Սակայն Տերը, ըստ նույն լեգենդի, հեռացնում է անեծքը՝ դարձնելով նրանց Քրիստոսի պայծառ ծննդի խորհրդանիշեր: Այդ պատճառով՝ լսվում են միայն ձայներն ու ծիծաղները երեխաների, որոնք ուրախանում են ու գովաբանում Փրկչի ծնունդը:

² **Ալիշան, Հ. Ղեւոնդ**, Ընդ եղևնեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, Մխիթարեան տպագրութիւն, 1874, էջ 7:

թյունը. խորհրդանիշը երբեք մշակութաբանական որևէ ներհակ ժամանակահատվածի չի պատկանում, մշտապես թափանցում է տվյալ շրջանը ուղղահայացորեն՝ գալով անցյալից և անցնելով ապագա: Խորհրդանիշի հիշողությունը հնամենի է, ինչպես նրա թեստային շրջապատի ոչ խորհրդանշական հիշողությունը»¹:

Գեղագիտական հաղորդագրություն պարունակող ալիշանական սույն տեքստը՝ «Ընդ եղենեալ յամայութեան բացավայրի. Խորհրդածութիւն» երկը, սեփական գաղտնագրերը թաքցնում է սեփական ենթատեքստերում, հետո միայն՝ բացահայտում նրանց գործառական հնարավորությունները, ապակառուցում ու վերակարգավորում: Այս դեպքում՝ տեքստը ընկալվում է որպես հաղորդակցական իրադարձություն, որը հեղինակ-ընթերցող, մշակույթ-տեքստ հարաբերությունների տիրույթում կարգավորում է հասցեատիրոջ՝ ընթերցողի մեկնողական ձեռքբերումները՝ «Մի կողմից՝ ներթափանցվելով մշակույթների խորքը՝ խորհրդանիշը իրացվում է իր տարբերակվող էությամբ <...>: Իրեն շրջապատող տեքստային տարածության մեջ խորհրդանիշն անմիասեռ է՝ որպես եկվոր մշակութային այլ դարաշրջաններից (մշակույթներից) և հիմնական մշակույթների հավերժական հիշողություն: Մյուս կողմից՝ խորհրդանիշն ակտիվորեն սրբագրում է մշակութաբանական ենթատեքստը, նրա ազդեցությամբ կերպափոխվում և ինքն էլ նրան կերպափոխում»²:

Հ. Գ.

Գրականությունը մշտապես ամրագրում է փիլիսոփայական, հասարակական-քաղաքական, սոցիալ-հոգեբանական երկխոսությունների նոր որակներ: Եվ սույնը տեղի է ունենում այն պատճառով, որ վերաբերմունքը գրավոր տեքստին՝ որպես ճշմարտության վերջին հանգրվանի, ձևավորվում ու հիմնավորվում է տեքստի՝ որպես սակրալ փաստի, հարաբերությամբ, որը կրում է հեղինակի կամքի և նրա միակ նպատակի՝ ճշմարիտ տեքստի, ազատությունն ու ազդեցությունը: Ուստի՝ աշխարհի փոխակերպումը տեքստի և նրանում առկա բոլոր պատասխանները դիտարկվում են որպես իմաստաբանական հսկա ցանց, գրողը՝ Դեմիուրգ, ընթերցողը՝ աշխարհ:

¹ Лотман Ю. М., Семиосфера // Символ в системе культуры, изд. Санкт-Петербург: Искусство-СПБ, 2010, ст. 242.

² Նույն տեղում, ст. 241-242.

Գրականություն

- Ալիշան Հ. Ղ., Ընդ եղենեալ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, 1874, 71 էջ:
- Նարեկացի Գ., Մատյան ողբերգության, աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Ե., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 1123 էջ:
- Барт Р., Избранные работы: Семиотика. Поэтика, М., Прогресс, 1994, 616 с.
- Горячева Т. Почти всё о «Чёрном квадрате». / Приключения «Чёрного квадрата». - СПб.: Государственный Русский музей, 2007, 156 с.
- Шатских А. С., Философский архитектон Малевича, De Visu, Ежемесячный историколитературный и библиографический журнал, Агентство «Алфавит», № 11. 1993, с 39-45.
- Шатских А. С. Сколько было «Чёрных квадратов»? // Проблема копирования в европейском искусстве. Материалы научной конференции 8-10 декабря 1997 года / Российская академия художеств. - М., 1998, с 210-215.
- Лотман Ю. М. Об искусстве. Структура художественного текста, СПб.: «Искусство - СПб», 1998, 285 с.
- Лотман Ю. М., Семиосфера // Символ в системе культуры, изд. Санкт-Петербург: Искусство-СПб», 2010, 704 с.
- Платон, Собрание сочинений в 4 томах. Т.1, Под общей редакцией А. Ф. Лосьева и В. Ф. Асмуса, Пер. с древнегреч. – СПб., Изд. Олега Абышко, Санкт-Петербург, 2006, 632 с.
- Хайдеггер М., Бытие и время, (пер. В.В. Бибихина), М., Академический Проект., 2011, 447 с.
- Юнг К.Г., Дух в человеке, искусстве и литературе, Минск, ООО Харвест, 2003, с.116.

НАИРА АМБАРЦУМЯН

Кандидат филологических наук, доцент

РЕЗЮМЕ

ИНТРАТЕКСТУАЛЬНЫЕ И КОММУНИКАЦИОННЫЕ ФУНКЦИИ В СОЧИНЕНИИ ГЕВОНДА АЛИШАНА «ПОД ЕЛЮ. РАЗМЫШЛЕНИЯ НА ЛОНЕ БЕЗЛЮДНОЙ ПРИРОДЫ» ЗНАК-СИМВОЛ-АЛЛЮЗИЯ-ТЕКСТ

Ключевые слова: знак, символ, аллюзия, текст, Демиург, ядерная энергия текста, семантика, интратекстуальные и коммуникационные функции.

Замысел сочинения Гевонда Алишана «Под елью. Размышления на лоне безлюдной природы» резюмирует знаковую и коммуникативную информацию, которая в качестве коммуникативного события транслируется во внутреннем пространстве текста. Текст, заключающий в себе послы эстетического содержания, имеет коды, скрытые автором в подтекстах самого текста. Далее Алишан раскрывает функциональные возможности этих подтекстов, деконструируя и упорядочивая их. Вместе с тем текст-размышление создается в едином пространстве символов и аллюзий, которые вполне понятны и прочитываются в знаковой системе текста. В данном случае читатель «сотрудничает» с автором и участвует в создании текста.

Текст воспринимается как коммуникативное событие, регулирующее интерпретационные «достижения» адресата-читателя в соотношении автор-читатель и культура-текст.

В сочинении Гевонда Алишана «Под елью. Размышления на лоне безлюдной природы» ель является ключевым символом. Данное сочинение является собой монолог-размышление, который в качестве единого целого рождается во внутреннем пространстве соотношений текст-логос-сознание-читатель.

NAIRA HAMBARDZUMYAN
Candidate of Philology, Associate Professor

ABSTRACT

INTRATEXTUAL AND COMMUNICATION FUNCTIONS IN THE COMPOSITION GHEVONDA ALISHAN "UNDER THE SPRUCE. REFLECTIONS IN THE BOSOM OF DESERTED NATURE" SIGN-SYMBOL-ALLUSION-TEXT

Key words: sign, symbol, allusion, text, Demiurge, nuclear energy of text, semantica, intertextual and communication functions.

The idea of Ghevond Alishan's composition "Under the fir tree. Reflections in the bosom of a deserted nature" summarizes the sign and communicative information, which is transmitted as a communicative event in the inner space of the text. The text, which contains the message of aesthetic content, has codes hidden by the author in the subtexts of the text itself. Alishan further reveals the functionality of these implications by deconstructing and ordering them. At the same time, the text-reflection is created in a single space of symbols and allusions, which are quite understandable and read in the sign system of the text. In this case, the reader "cooperates" with the author and participates in the creation of the text. The text is perceived as a communicative event that regulates the interpretative "achievements" of the addressee-reader in the author-reader and culture-text relationship.

In the work of Ghevond Alishan "Under the fir tree. Reflections in the bosom of a deserted nature" spruce is a key symbol. This essay is a monologue-reflection, which as a whole is born in the inner space of the relationships text-logos-consciousness-reader.

ԱՐՈՒԵՍՏ ԳՐԱԲԱՐ ՔԵՐԹՈՒԹԵԱՆ ԱԼԻՇԱՆԻ¹

Բանալի բառեր: Քերթողական արուեստ, գրաբար բանաստեղծություն, բանաստեղծ ամենայն Հայոց, յատկությունք ստեղծաբանության Ալիշանի, երկությունք եւ հակադրապատկերք, տպաւորադաւանություն, զգայուն ունկն քերթողի:

ՄՈՒՏՔ

Ալիշան էր իսկատիպ հանրագիտակ, երանելի տիպ մշակի, յորում սակաւագիւտ երջանկութեամբ ի դէպ եկին եւ ի միում կիտի ներանձնացան արուեստագէտ նրբահայեաց եւ խրոխտաշունչ, գիտնական նախանձախնդիր եւ բազմագիտակ, եւ կրանաւոր՝ խորագոյնս հաւատացեալ: Եւ ոչ էին զուտ եւ անխառն ի նմին երբեակ հայեացք ընդ աշխարհ, այդ² համադրեալք այնպէս, զի իբրեւ բանաստեղծն խաւսէր, կրանաւոր եւ գիտնական ձայնակիցք լինէին նմա, թե գիտնական զդիտումն եւ զքնությունն իւր ընդ գրով արկանէր, ոգեշնչումն բանաստեղծական եւ հայեցումն կրանագգեաց միաբան ուղեկիցք լինէին նմա: Ո՞չ ապաքէն, Ալիշան ինքնին էր ինքնաբաւ միաբանությունն ի միաբանութեան: Համեստագոյն տիպար կաճառականի, որ անձամբ էր կաճառ լուսակերտ: Հայելի անշրջանակ, յոր հայեցեալ՝ ազգ մի համաւրէն զինքն ճանաչէ եւ զգենու զհպարտությունն վասն փառացի անցելոյ իւրոյ: Է «հայրենեաց սրբազան զգացման մեծ վառարան»³, որ ջեռուցանէ եւ զոգիսն վառէ զինու առ ինքն մատուցելոց ամենեցուն, եւ որոյ կայծից թռուցելոց կար է հասանել ի սիրտս Հայկակաց⁴, թե նոքին բաց իցեն ընդունել զնոսին:

¹ Յաւորուածս այս եւս հոգայ համաւրէն պահպանել զկերպ գրառութեան նախնեաց մերոց՝ որչափ կար է կանգնել զձեւս հնագոյնս: Ուղեցոյց սկզբունք եւ հիմնաւորմունք գտանին ի մատենի ինքնագրիս «Երբ յայտածուում է մաշտոցեան ուղղագրութիւնը», Երեւան, 2018:

² Հնագոյն ձեռագիր վկայութիւնք հաւաստեն, զի դատագիր էր նախնի հաւատարմագոյն ձեւ բառիցս «այլ, գայլ, փայլ, սայլ, զմայլ, նշոյլ, բոյլ, թոյլ, ձոյլ» եւ առ հասարակ որոց յանգ ելեալ է հնչակցութեամբն «-յլ»: Այսաւր զոն բառագոյգք, յորս մի պահպանէ զհնագոյն կերպ գրութեան իւրոյ՝ մատախոտլ-մատախլապատ, աղ-անալի, խոտլ-խլանալ, ջիդ-ջիլ, փաղփիւն-փայլ եւ այդն:

³ Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Վենետիկ, 1869, էջ 20:

⁴ Հայկակ՝ անուն պատանւոյն, որ է նշանակ նորոյ սերնդեան Հայոց, ընդ որ զրուցէ եւ առ որ նուիրեալ են յուշիկք հայրենեաց Ալիշանի:

Ի գրականության Հայոց Ալիշան ոչ եւեթ հարթեաց գուղի վիպա-
դաւանութեան¹, որ ի լեզու այդոց կոչի *romantism*, այդ եւ **ինքեամբ եղեւ
գաղափարական եւ նախանձելի անձն անարինակ վիպին այնորիկ, զոր
գրեաց սեպհական կենաւք եւ գործովք** եւ ետ զճշմարիտ արինակ
ուսուցչի, պատմաբանի, հայկաբանի, հետախուզի, ի ձեռն որոց մարթեր
ընդարձակել զինքնաճանաչման եզերտիս² ժողովրդեան: Եւ նախ քան
գամենայն արդարեւ եղեւ իսկատիպ բանաստեղծ, սանդուղք ոգեկոտ, ընդ
որս մարթի ելանել ազգ մի առ ի պայքարել վասն հայրենեաց, կառու-
ցանել զհայրենիս եւ բարձրանալ յոլորտս ոգեղինութեան: Ոչ եւեթ եղեւ
ռահվիրայ նորոյ շարժման, այդ եւ **ձեռն էարկ փորձել զքանքար իւր
յամենայն սեռս, յոճս, ի կերպաւորմունս գեղարուեստական յղացմանց:**
Զկարի ճշմարիտ բնութագիր քնարերգութեան Ալիշանի գտանեմք յէջս
Արշակայ Չոպանեանց, որ հաւաստէ, զի երգ նորին է վեհագոյն,
ճոխագոյն, հզաւրագոյն, քան գամենայն երգս արձակեալս ի քնարէ Հայոց,
այդ եւ է յոյժ բազմազան: Զի Շնորհալի, Նարեկացի, Խորենացի, Թլկու-
րանցի, Եղիշէ եւ Պլուզ ի նմա միաբանեալ են զձայնս իւրեանց՝ եղբայ-
րակցելով ընդ հնչիւնս տաւոց Պետրարկայի, Լամարթինի, Միլթոնի,
Հիւգոյի, Բայրոնի: Եւ ձայն Ալիշանի, որ է միանգամայն բորբոք, միամիտ,
դիւցազնական, քնքոյշ եւ վսեմական, բխէ ի խորուստ հոգւոյն նորին եւ
ամենեւին է ինքնուրոյն³:

Ակնյայտաւրէն փայլէ⁴ նա զանազանութեամբ քանքարի իւրոյ, ի
քնարի նորին բարեյարմարեալ⁵ են ամենայն աղիքն⁶ քնարերգութեան
Հայոց, բանաստեղծական աշխարհայեցումն նորա կերպաւորի ի տաղա-
չափական բազմակերպութեան եւ թուի ի նմա համաւրէն խտացեալք են
եղանակք, կերպք, դարձուածք ստեղծաբանութեան⁷ Հայոց, որք թե եւ ոչ
իսկ մշակեալք են ցբիւրեղացումն, այնու ամենայնիւ կարի լայնածիր
առնեն զթեւահարումն քերթողի, եւ զերգ նորին կարի բազմաձայն հնչե-
ցուցանեն: Թուի՝ ոչ եւ եթ ձայնք բանաստեղծաց անցելոց լուան ի նուա-
գարանէ Ալիշանի, այդ եւ հնչիւնք ամենայն, զորս հանդերձելոց էին երգել
քերթողք ըստ ինքենէ՝ ժառանգեալ զաղի ինչ ի լայնալիճ քնարէն:

¹ **Վիպադաւանութիւն**, որ եւ վիպապաշտութիւն անուանեն:

² **Եզերտի**՝ այդաւրէն կոչի հորիզոն:

³ **Չոպանեան Ա.**, Դէմքեր. Հ. Ղեւոնդ Ալիշան, Անահիտ, հանդէս ամսաւրեան,
Փարիզ, 1902, թիւ 4, էջ 74:

⁴ Վասն այսորիկ տե՛ս ի ծանալթագրութեան որ ընդ թուով 2:

⁵ **Բարեյարմարեալ**՝ վայելչաւրէն միաբանեալ:

⁶ **Աղիք**՝ լար կամ թել նուագարանի:

⁷ **Ստեղծաբանութիւն**՝ բանաստեղծութիւն, ստեղծագործութիւն:

Մինչ «Երգովք հանգրուանաց»¹ զգեղատեսիլ հովուերգութիւն իւր սրնգէր Ալիշան վասն պարզ կենաց գեղջ, վասն բնութեան, տուարածի, գառանց, վասն գետոյն, որ զքար ալիւրահոս պտտէ, արձագանգ հնչիւնից նորին ցոլացին ի «Նոր տաղս»² Մեծարենցի, «Երգոյն Հացի»³ Վարուժանի՝ բարձրացուցանելով զհովուերգութիւն⁴ եւ զերգ խորհրդանշային ի կատարելութիւն: Թուի գեղագիտութիւնք մեծարենցեան հովուերգութեան, վարուժանեան հացերգութեան աստի առնուն սկիզբն իւրեանց, վտականան յառուիցն՝ որոց ծաւալացեալ է ի գագաթանց ալիշանեան բարձանց: Այդ ոչ խաւսիմք զերգոյն հայրենասիրութեան, զորոյ հորձանս ի նոր գրականութեան Հայոց ետ Ալիշան իւրով բխմամբ:

Ոչ է յանկարծադէպ զհիւտ ծանաւթ ելելիջի իրիմն⁵ կամ հիւսուածոյ իրիք ի բանատողս Ալիշանի, զորս յետագայ բանաստեղծի ուրումն արարեալ է: Տիպ ասացելոյն է քերթուածն խորագրեալ «Առ ժամանակ», որ է պայծառ ցոլացումն իմաստասիրական քնարերգութեան, թուի սահմանմամբ եւ յղացմամբն իւրով պարզորոշ կերպիւ յիշեցուցանէ զբանաստեղծութիւն⁶ Համոյի Սահեանց, որ յորդոր կարդայր առ ժամանակ՝ առնուլ զինքն ի թելս եւ տանել ընդ իւր, այդ եւ ի խորս միանգամայն բացայայտէ զհարազատութիւն ժամանակագրական եւ իմաստասիրական ընդ Ալիշան եւ ընդ Յովհաննէս Թումանեանց՝ որոյ ըմբռնեալ է զհոգի մարդկային որպէս զգոյ անմահ եւ յարակայ ընդ մեծի հոգւոյն տիեզերաց ի հոսանս հազարամաց⁷: Արդ բերեմ զչորս տողս եւեթ.

...Տա՛ր ժամանակ, ի յաւիտեանն տա՛ր զիս.

Երթամ խաղամ ընդ անսպառս ընդ աղիս.

Եւ մինչ մաշողդ հանուրց մաշիս եւ դու անդ՝

Սիրտս այս կեցցե՛ անմաշ, անմահ, անվկանդ⁸:-

«Առ ժամանակ» (1853)

¹ «Երգք հանգրուանաց»՝ կանխագոյն շար քերթուածոց Ալիշանի, յարիւնեալ ի թուին 1840:

² «Նոր տաղեր», Մ. Մեծարենց, 1907:

³ «Հացին երգը», Դ. Վարուժան, 1921:

⁴ **Հովուերգութիւն**՝ յուն. εἰδύλλιον, լատ. idyllium:

⁵ **Իրիմն**՝ է վերստին կանգնեալ ձեւ սեռական հոլովի դերանուանն «իմն», ի զործ ածեալ ընդ ձեւոյն «իրիք»: Տե՛ս Հրաչեայ Աճառեան, «Լիակատար քերականութիւն Հայոց լեզուի», հատոր 2, Երեւան, 1954, էջ 410:

⁶ Ակնարկեմ զքերթուածոյ «Տար ինձ ժամանակ»:

⁷ Վասն քառեկի Յովհաննէս Թումանեանց «Հազար տարով, հազար դարով»:

⁸ **Անվկանդ**՝ անվնաս, անխորտակ:

Եւ իբրեւ Վարուժան ի սափորի իւրում¹ յինքնաբուն աղբերէ Ալի-
շանի բերելոց է զշիթս «հրաժորան երակաց» արեւու², Թումանեանց բերցէ
ընդ իւր զոգեղէն եւ զըմբռնելի երակս բխմանն այնորիկ³: Զերկոսին բա-
նաստեղծս մարթեմք ի տողս Ալիշանի ճանաչել.

*Յիշեա՛ զի մի սիրտ է քեզ,
եւ ստեղծողիդ զայն պարտիս,
Սափոր սիրոյ հրաժորան,
կարկա՛ն հաստչին զոր ունիս՝*

Եւ կշռոյթ վեհագունից գործոց Յովհաննու Թումանեանց, յորպի-
սեաց է բանաստեղծութիւն «Հայրենիքիս հետ», եւ մեղեդի եւ նշանակ
նոցին անդէն իսկ ոչ սոսկ երելոյթք են արծարծման կայծից թափելոց ի
սրտէ Ալիշանի, այդ եւ են կատարեալ երեւակումն յետագայ բիրեղաց-
ման կերպից բանահիւսման նորին: Զասացեալս զայս հաստատեցեն
տողք ընտրեալք ի քերթուածոյն «Պատասխանի առ քերթող» (յորում տա-
րերաց ստորին հայերէնի սպրդեալ է), որոյ կառուցեալ է նովին կշռութիւ
եւ ոտիւք եւ զգեցեալ է զնոյն հանդիսաւոր եղանակ նիւթոյ, որովք Թու-
մանեանց զկնի վաթսունից ամաց ստեղծցէ զտեսիլ ապայից հայրենեաց՝
յուսացեալ, զի նա լինելոց է երկիրն՝ յոր տենչացին հոգիքն «լուսա-
պայծառ», եւ փառք որոյ երգեսցի միայն անեղծ շրթամբք եւեր:

*Եւ ո՛ր ուսար անէծք⁵ կարդալ եւ աւրհնութիւն պահանջել,
...Ձկայծն ի մոխրի հեղձուցանել եւ ջերմութեան ակն ունել...
Ապողոնեան կապարճ ի յուս՝ մանկունք քերթողք աղեղանց,
Երգեցէ՛ք երգ դիւցազնեայ, երգ հայրենի, երգ գորով:
Եւ թե ներկուտ երաժշտաց խոնջին ստեղունք հնգածղի...
Տատանեսցին հայկեան բամբուռնք ի սոյդ⁶ հողմոյ հայրենոյ.*

¹ Դանիէլ Վարուժան, Գողգոթայի ծաղիկներ, «Լոյսը»:

*Միրտըս սափորն է դատարկ,
Ու ես կերթամ դէպի աղբէ իրը լոյսին...*

² Դանիէլ Վարուժան, Հացին երգը, «Հերկեր»:

...Արեւն արդէն կը հոսէ իր երակներն հրաժորան
Ակաւսներուն նորաբաց արգանդին մէջ հոտեւան:

³ Յովհաննէս Թումանեան, Երկերի ժողովածու, հատոր Ա, Երեւան, 1988, էջ 104:

*Եւ այդ սիրտը քեզ չի տուած
Որ դու մաշես ամէն աւր,
Այնտեղ պիտի ապրի աստուած,
Ոչ թե ցաւեր նորանոր:*

⁴ Ղեւոնդ Ալիշան, Նուագք, հատոր Բ, Վենետիկ, 1857, էջ 131: «Միրտ սուրբ եւ հոգի
խոնարհ» (1850):

⁵ Պարտէր անէլ ի գործ զհայցականն բառի «անէծք», այդ ոչ սրբագրեցի:

⁶ Ի բնաւորականի՝ «սոյլ»:

*Յագրման ձայնին զերդ վարդամատն յարշալուստյն շղարշից՝
 Աստեղաչկունք եւ հրագիսակք հոսեցին հոյդք՝ Հայկազնեայց..
 ...Անդ հուսի վայրն անմեղութեան՝ անմեղ դիմակք տարփալիք
 Յեղեմածին ծաղկանց պսակ ձեզ եւ ինքեանց հիւսեցեն.
 Ո՛հ, զղրախտին եւ զերթերին առջի՛ք ճաշակ անդ ի Հայս.
 Անդ յայն երկիր նախնի մարդկան, յերկիր վեհից եւ սրբոց...*

Եւ թե Թումանեանց կենաւ իւրովք, բազմադի քնարերգութեամբ իւրով եւ բերմամբն պատմական առարկայական պարագայից արդարեւ վաստակեալ է գեղջումն բանաստեղծի ամենայն Հայոց, ապա **ստեղծաբանական լայնածիր պարագրութեամբ իւրով եւ նա՛ եւ դասական լեզուա հանուրց Հայոց Ալիշան իսկ է իրաւ բանաստեղծ ամենայն Հայոց**: Ալիշան էր խտացուցիչ ամենայն գրական սեռից, ոճոց եւ արդէն իսկ սկզբնաւորեր գնոր գրականութիւն Հայոց, որ ի ձեռն լեզուի դասականի մնայր կուռ եւ միասնական՝ զերծ յարեւմտից եւ յարեւելից տեղորոշացն յաշխարհագրական բաժանարարաց:

ԼԵԶՈՒ Է ՀԱՄԱԼԻՐ ԳՈՐԾԵԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Նշուակ իմոյս գեղուցմանս այսորիկ է արուեստ քերթութեան Ալիշանի ի գրաբար քերթուածս, ուստի՝ նիւթք տեսութեան իմոյ իցեն իւրակերտ դարձուածք, արուեստ բառաստեղծութեան, ճաշակ բառընտրութեան, ճարտարութիւն ոճոյ, հնարք պատկերակերտութեան, զորս յատկապէս դասական լեզուի ընձեռեալ է Ալիշանի, եւ **թե եւ ոճ բխէ ի մարդոյ, այնու հանդերձ կախեալ է ի լրակազմէ՝ գործեացն այնոցիկ, զորս ի կիրարկանէ քերթող՝ առ ի կերպարանել զմիտս եւ զգաղափարս իւր**: Ի միջի այդոց Ալիշան նոյն իսկ է բացառիկ քերթողն, որոյ քնարերգութիւն իցէ ինդրեալ առարկայն իսկ միջգիտակարգային հետազաւտութեան՝ լեզուաբանական եւ գրականագիտական միանգամայն, զի զհնարաւորութիւն ընդձեռէ՝³ գառարկայական բաղդատութեան զուգաց ստեղծաբանութեանց եւ լեզուամտածողութեանց միոյ եւ նորին անձին, ուստի եւ զառիթ տայ բացայայտել զառաւելութիւնսն եւ զթերիսն լրակազմաց երկոցունց լեզուաց՝ դասականի եւ առժամայն գրականացելոյն. սա իցէ մի ի նիւթոց քննութեան իմոյ, զոր արարից ի տեսանելի ապայի: Հիմն քնարերգութեան է կատարելութիւն առանձնական յատկութեանց լեզուի, որք շնորհեն զբարեհնչութիւն, զկշռոյթ, զպատկերալից հնչիմաստ բանատողի: Վասն

¹ Ի բնարիւնակի՝ «**հոյդք**»:

² **Լրակազմ**՝ լատ. compecti:

³ **Ընդձեռել**՝ նախնի ձեւ բառիս «ընձեռել»:

որոյ դասական լեզու է անկապտելի պարագայ եւ էական յատկանիշ առարկայի քննութեանս այսորիկ:

Զի չէ հնար միով գեկուցմամբ ամփոփել զարուեստ քերթութեան, կամ ցուցանել զսահմանս գեղարուեստի եւ զկշռութիւն բանարուեստի քերթողի, եւ զի չէ հարկ քննել զծով համայն՝ ի ճանաչել զբնութիւն եւ զտարերաբանութիւն նորին, վերաբերեմ այսր զոչ լիացուցիչ շար էական եւ բնորոշ յատկութեանց ալիշանեան քնարի, զոր իմ նկատեալ է ի սուղ միջոցի քննութեան, ջանայցեմ սակաւութեամբ քերթուածովք զատուցեալ ընտրութեամբ բացայայտել զփունջ սոսկ արժանեաց քնարերգութեան Ալիշանի: Թե եւ ի գրականագիտութեան Հայոց խանդի վառմամբ եւ նախանձայնութեամբ խորագոյնս քննութեան առեալ է զշար երգոց Նահապետի, եւ ապաքէն պարագայք սորին պարզ եւ իմանալի են, այնու հանդերձ Ալիշանի աւանդեալ է զժառանգութիւն ազգային քերթողութեան առաւել ուշագրաւ, քան զերզս Նահապետի, զորոյ զխորագոյն ուսումնասիրութիւն իւր ի դէպ է եւ անկ է ծաւալել: Յարդարութիւն պարտիմք ասել, զի գրականագիտաց ոչ է ամենեւին անտես արարեալ զգրաբար բանաստեղծութիւն Ալիշանի: Սակայն չեն այնոքիկ պատշաճ տեսութիւնք արուեստի Ալիշանի, այդ առաւելապէս փութանցիկ պատմողական նկարագրութիւնք են բանաստեղծութեանց ըստ բովանդակութեան, որպէս են աշխատութիւնք Արսենայ Տերտէրեանց, Սուրենի Շտիկեանց, Եղուարդայ Զրբաշեանց եւ այլոց:

Արշակ Զոպանեանց արուեստագիտական եւ արուեստաբանական հայեցիք դիտել զարուեստ Ալիշանի եւ իրաւ զճշմարիտ բնութագիր տայ քնարերգութեան նորին, զի զկուտումն պաշտել հարուստ եւ մեծաշնորհ բառից, զելեւելսն շառաչաձայն տողից զմիմեամբք թաւալող աղեաց հանգունակ, կարի սիրել զպատկերաց շեղջշեղջումն՝ թող թե խառնափնթոր դիզացող¹: Յաճախ ի կիր արկանէ զնմանաձայնութիւն, զտառից կրկնութիւն, զբառախաղս ստեպ գործածել: Եւ են քերթուածք Ալիշանի, որոց լծորդք² չիք ի գրականութեան հայոց, անդ գերագոյն բանաստեղծութիւն ամբառնայ, յորում մտածումն եւ ձեւ զուգաչափ ազնիւք են, բարձունք եւ հզաւրք, որք լսելի առնեն զշեշտ երբայեցի մարգարէիցն³: Այդ եւ Ինտրաստեղմ, սակայն տիպական արժեւորմամբ հաւաստել, զի զգայնութիւն եւ աւիւն Ալիշանի առաւել մեծատարած են, քան զայլոյ քերթողի, եւ զի լեզուի նորին է անաւրինակ ճոխութիւն լեզուին Բագրատունւոյ, եւ է ինք-

¹ **Ղիզացող**՝ որ ի դէպ փոխի, անորոշ՝ ղիզանամ:

² **Լծորդ**՝ համազար, համարժանք:

³ **Զոպանեան Արշ.**, Դէմքեր. Ղ. Ալիշան, Անահիտ, Փարիզ, 1902, թիւ 4, էջ 69-80:
<https://arar.sci.am/dlibra/publication/12761/edition/11328/content>

նին բիրիմաստ, բիրաշունչ, բիրապատկեր, եւ զի լեզու ճոխագոյն՝ է միջոց անբաւ բազմակերպութեանց առ ի յայտ բերել զխանդադատանս նորին: Բառք նորա պատկերալիցք են եւ մեծավայելուչք: Այդ չափք, զորս նորա ի կիր արկեալ են, նոր են ի մատենագրութեան Հայոց, սակաւք ի նոցանէ անձնականք եւ գեղեցիկք (5-7, 4-4-9): Ինտրա ստէպ առաւել ճաշակաւոր բանաստեղծ վարկանի զԱլիշան, քան զՆարեկացի¹:

Պարտիմք հակառակ կալ կարծեացն այնոցիկ², որք միաբան պնդեն, զի զլիաւորագոյն խոչընդոտք յառաջադիմութեան եւ զարգացման գրականութեան Հայոց էին լեզու դասական, զոր կոչեմք «գրաբար», եւ դասականութիւն, որ յայդոց կոչի classicism, եւ թե գրականութիւն ազատագրեցաւ ոչ եւ եթ եղծանելով զկարծրացեալ կապանսն դասականութեան եւ ընտրելով զնոր անձինս եւ զնիւթս արդեան, այդ եւ արարեալ զնոյն յատկապէս եւ բացառապէս աշխարհաբարաւ: Համոզումն իմ է, զի ոչ եւ եթ հնար էր, այդ եւ պարտ իսկ էր նովին դասական լեզուաւ ստեղծանել զգրականութիւն ամենեւին նոր, որ արդեան նիւթով իւրով, դիպաց ուշագրաւ շարով, յասպարէզ ածեալ զանձինս նոր՝ մարթէր գրաւել զսիրտս եւ զուշս նորոյ սերնդեան: Շատ էր գրականութեան նիւթոյ փոփոխումն սոսկ, զի լեզու ազգային հանապազ յինքեան ունի զկար առ ի ցուցանել զինքն յամենայն ձեւս, յարտայայտութիւնս եւ ի կայս իրաց: Ալիշան ինքն եղծանէ զկարծրատիպն զայն գրաբարագիր քերթուածովք իւրովք, որք ոչ եւ եթ բերին զնոր շնչառութիւն ի գրական անդաստան Հայոց, այդ եւ եղեն աղբեր ոգեշնչութեան գալեաց սերնդոց բանաստեղծաց: **Քերթուածք Ալիշանի իսկ ցուցին, զի գրաբար՝ է զաւրաւոր գրական լեզու կենդանի առ ի ցուցուցանել զշունչ ժամանակի, բացայայտել զվիպադաւան մտածողութիւն քերթողի եւ զռազմաշունչ ոգի նորին:** Եւ գրաբար բանաստեղծութիւնք միահաղոյն հաստատեն, զի ինքեանք ոչ եւ եթ զիջանեն աշխարհաբար քերթուածոց ըստ ծաւալի ըմբռնման, այդ եւ գեր ի վերոյ աշխարհաբար բանաստեղծութեանց շողան ինքեանք ներունակ ազատութեամբ իւրեանց:

«Բամ փորոտան» բառիւքն առաջնովք յայտնի քերթուածն («Երգ ու գնացք զաւրացն Հայոց ընդ Վահանայ Մամիկոնենոյ»), որոյ նա՛ եւ փոխեալ է յերգ սիրելի ժողովրդեան, խորհրդով եւ ձեւով իւրով է քաջ ցուցիչ

¹ **Ինտրա**, Գրական դէմքեր, Ղեւոնդ Ալիշան, Հովին ձայնը, հատոր Բ, Երեւան, 2014, էջ 144-147:

² **Թանանեան Գ.**, Ղեւոնդ Ալիշանի փիլիսոփայական եւ մանկավարժական հալեացքները, Լրաբեր հասարակական գիտութիւնների, 2011, թիւ 3, էջ 145-146: Ջրբաշեան Եդ., Ղեւոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծական շարքը եւ նրա գեղարուեստական միասնութիւնը, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1982, թիւ Բ (ԽԷ), էջ 24 եւ այդք:

այնր ճշմարտութեան: Քերթուածն արինակաւ բարձրագոյն ռազմա-
բուեստի Հայոց՝ պարտէր ռզեշնչել սերնդոց Հայոց եւ կոչել ի զէն վասն
ազատագրութեան հայրենեաց, եւ մտաց յղացք Ալիշանի յընթացս շա-
րագրութեան ռազմաշունչ երգոյն գծանկարչարէն կերպարանէն զյա-
ռաջամուխ երթ զաւրացն Վահանայ, զի Ալիշան ոչ եւ եթ բառիւք, տողիւք,
կոչմամբք զընթերցողս հաղորդ առնէ երթի եւ գնացից քաջաց, այդ եւ
կենդանագրէ զշար եւ զկարգաւորութիւն զաւրաց եւ զկերպ ընթացից
նոցին, գոգցես Ալիշան արտաքնայարդար ձեւաւորմամբն քերթուածոյ եւս
երեւակայութեան ընթերցողաց միահաղոյն տայ զկենդանի պատկեր
ռազմերթի, զմտառելի մարտավարական քարտէզ: Զի վանգից¹ եւ ոտից
կրճատումն յիւրաքանչիւր յաջորդի տողի՝ կառուցանէ զեռանկիւնաձեւ
դասաւորութիւն զաւրաց ի թեւոց ընդ հուպ ի կիզակէտն յառաջամուխ:
Շնորհիւ հետ զհետէ կրճատման բանատողից լսելի է որպէս գնացեալ
երագանան քայլք՝ սկսեալ ի վեշտասանաց քայլից ցքառատրոփիւն: Այդ
որպիսի՝ հմտութեամբ ընդ տողս ընտիր բառիւք հնչեցուցանէ զհամա-
գարկ դոփիւնս գնացից, եւ որպէ՛ս տաղաչափական բազմակերպութեամբ
եւ շեշտիւք գոյանայ ուրոյն կշռոյթ բանաստեղծութեան, որ վերածէ զքեր-
թուած ի ռազմերգ ինքնարինակ համայն քնարերգութեան Հայոց, այդ եւ ի
խորոց հազարամեկաց վերստին կանգնէ զռազմապար ինչ ի տարա-
ծութեան բանի: Եւ իմանալի է, զի լեզու դասական իսկ զամենայն հնարս
շնորհէ: Եւ յստակ է, զի **Ալիշան զշեշտ դնէ նաեւ ի վերայ ձեւոյն բա-
նաստեղծութեան, որոյ ոչ երբեք պարտ է դառնալ նպատակ ինքեան, եւ
ցայն վայր ընդունելի է՝ մինչ տակաւին ծառայէ բովանդակութեան:**

Այո՛, զջանս եւ զճգունս պահանջէր ուսուցումն դասական լեզուի,
երբ նովին պարտ էր ստեղծանել զնոր գրականութիւն՝ ազատ ի շղթայից
մտածողութեան նախնեաց դարուց: Եւ, ապաքէն, լեզու գրական, գիտա-
կան, կրթական, քաղաքակրթական հանապազ պահանջէ զջանս: Աղե-
տալի եղեւ պնդումն, թե գրաբար անիմանալի էր ժողովրդեան, այսու
պնդմամբ իսկ կառուցինն զպատնէշ ամրակուր ընդ ժողովուրդ եւ ընդ
լեզու իւր ազգային: Այսաւր արցախցի, կումայրեցի աշակերտք, իբրեւ
գուսումն լեզուի Հայոց սկսանին, ստիպին մեծամեծ խոչընդոտս յաղթա-
հարել, քան զոր առնելոց էին աշակերտք առ յուսանել զգրաբար յԺԹ
դարուն: Ի սկզբանէ ուսուցումն աշխարհաբարի եւս պահանջէր յաշակեր-
տաց զյաղթահարումն կրկնոց պատնիշից, նախ՝ հարկ էր ուսանել գրել
որպէս խաւսէինն, ապա՝ պարտէին խաւսել որպէս գրէինն, քան զի
կանոնարկեալ եւ գրականացեալ լեզու չէր ամենեւին բարբառն այն, որով
զմիտս եւ զգաղափարս իւրեանց յայտնէին միմեանց:

¹ Վանգ՝ նախնի ստոյգ ձեւ բառի «վանկ»:

Արդարեւ այժմ գաշխարհաբար քերթուածս Ալիշանի աշակերտք ընթերնուն նոյնչափ դժուարութեամբ, որչափ զգրաբար քնարերգութիւն նորին, այդ եւ ստեպ գրականագէտք իսկ ոչ դիրաւ տարորոշեն զգրաբար բանաստեղծութիւն Ալիշանի յաշխարհաբարենէ¹: Արդե՞ւ սոսկ ի պատմութեան գրականութեան է հանգրուան քնարերգութեան Ալիշանի, թե՞ պարտիմք առարկայաբար ծանուցանել աշակերտաց գստեղծաբանութիւն նորա եւ ոչ թռուցիկ կերպիւ եւ եթ անծանս² խաւսել վասն մեծութեան Ալիշանի: Չէ տարակոյս ինչ, զի մեծագաւրք եւ անպարագելիք են գործք Ալիշանի, այդ հարցումն յառաջանայ վասն ո՞յց իցեն մեծարժանք: Արդեւք վասն գրականագիտա՞ց եւ եթ: Ստիպիմք ընդունել, զի ստեղծագործութիւն Ալիշանի յայսմ աւուր եւ այսմ պատանութեան չտայ ինչ, եւ որչափ այդ սիրտ հայրենանուէր անդ բաբախէ, եւ որչափ այդ գաղափարք նորին անհրաժեշտք իցեն եւ աստանաւր, նոքա անհաղորդ են աշակերտաց եւ երիտասարդաց, վասն զի մեծաւ մասամբ եւ մեծաւ գեղարուեստական կշռով իւրեանց են ծնունդ դասական լեզուին:

Եւ է եւս ճշմարտութիւն, զի չիցէ հնար անաղաւաղ փոխադրել զգրաբար քերթուածս Ալիշանի յաշխարհաբար: Անդ ոչ այնչափ քերականութիւն դասական լեզուի է խրթին, որչափ բառք եւ դարձուածք Հայոց առթեն զերեւոյթ խրթնութեան՝ յորոց գեղչեաց յինքենէ աշխարհաբար՝ գոհացեալ աղքատ նշանիւք ստորնովք: Մինչ դեռ բառք Ալիշանի միանգամայն են եւ պարտին լինել նշանք ամենայն կայից լեզուի Հայոց, եւ ի դէպ է զընտրեալ փունջ գրաբար քերթուածոց Ալիշանի ամփոփել ի դասագիրս գրականութեան՝ ի սեպհականութիւն նորոյ սերնդեան եւ ի ճոխացումն արդեան լեզուի Հայոց: Եւ թեպէտ ինձէն եւս իմ փորձս ինչ արկեալ է սակաւ ինչ ի քերթուածոց նորա յաշխարհաբար փոխադրել, այդ հաւաստեմ, զի չէ հնար անկորուստ թարգմանել զմեծ մասն քերթուածոց

¹ Ի յաւդուածոյ միում Եդ. Ջրբաշեանց խաւսի զանստորագիր բանաստեղծութենէ տպագրեալ ի «Բազմավիպի» ի թուին 1849 «Նահապետն ի Մասեաց շուքն է քնել» խորագրով, եւ թիւրապէս վարկանի, զի գրաբարագիր քերթուած է այն, եւ թե նոյն հնչէ որպէս արձագանգ յառաջագոյն քան զսա տպագրեալ քերթուածոյ ի նմին հանդիսի՝ «Մասիսու սարեր», ընդ որով արդէն իցէ ձեռն նորահնար Նահապետի: Այդ լեզու քերթուածոյն այնորիկ էր միջինհայերենագգեաց աշխարհաբար՝ ի խորագրէ իսկ սկսեալ ցձեւս քերականականս՝ «աչերոյս», «սարեր», «որուն», ցշաղկապս միջինհայերենի՝ «զետ», «քանց», ցռամկաւրէն բառն «ջուխտակ»:

<https://arar.sci.am/dlibra/publication/3421/edition/2911/content>

Ջրբաշեան Եդ., Ղեւոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծական շարքը եւ նրա գեղարուեստական միասնութիւնը, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1982, թիւ Բ (ԽԷ), էջ 33-34: - http://ysu.am/files/03Ed_Jrbashyan.pdf

² Անծանս՝ մակբայ՝ անծանաւթաբար, յաճականէն «անծան» (հեղինակային):

նորա, եւ չէ իսկ պարտ, զի **թարգմանեալ մարթեմք ըմբռնել զիմաստս լոկ, մինչ հնչումն բառից ազդ առնէ զառաւելն, քան զիմաստսն, որք եւ եթ են նոցին**, եւ թարգմանաբար յակամայս փուլոցի դաշնահունչ, ձեռակերտ յարինուածն այն՝ ինքնատիպ կշռութեամբն շարամանեալ: Վասն որոյ համարեմ, զի առ այս ժամ շատ է սոսկ ընդ տողիւք քերթուածոց պատշաճաւրէն ծանուցանել զնշանակութենէ բառից եւեթ՝ առ ի դարձուցանել զնոսա ի միտս եւ ոչ յաւիտեանս համրացուցանել զնոսա ընդ բառիւք եւ ընդ նախադասութեամբք արդեան լեզուի: Զատուցեալ տողքս՝ ի վկայութիւն ասացելոյս.

Ձի՛նչ իցեն կեանք մարդոյ յովտիս՝ անձկութեան...

Առասպել լ յաւուրց նախնեաց առարկեալ,

Եղծանելով առեղծանէ եւ ոչ որ...

...Ցաւդ ցայգական անդիմակաց արեւու...

...Նետ, որ գերծումն աղեղանէն խնդրէ յար

Եւ գերծանի եւ չդառնայ յաւիտեան...²

Լեզու դասական ինքնին է հաստիչ, ապա եւ բացայայտիչ սեպհական ծածկագրութեանց: Եւ իբրեւ մոռանամք զհոյակերտ բառս եւ զմանուածս բանի եւ ստիպիմք հատուցանել նոցա պարզունակագոյն բառիւք իմանալեալք եւ շարագրեալ մեկնութեամբք, աւգտապաշտաբար զրկեմք ի ճոխից զարդուց մտածականաց զբան մեր եւ զմիտ մեր մերկացուցանեմք ի ծաւալական զարդուց խորհրդոց: Եթե բառն «առասպել» ոչ եւս յայտաբերէ զիմաստս «հանելուկ» եւ «առեղծուած», կամ «եղծանել» այժմ բառ է անիմանալի եւ ոչ ամփոփէ զիմաստս «բանալ, քակել», թե «առեղծանել» ոչ այդ եւս ըմբռնի որպէս «լուծանել», կամ թե հոծեալ բառն «անդիմակաց» ոչ եւս ցուցանէ զզեղչումն որակի ունակութեան դիմադիր լինելոյ իմեմն³, որպէ՛ս մարթի թարգմանել զքերթուածն «Կեանք», որոյ պատկերք հիւսիսն բառիւքս այսոքիւք, նոքա են անզեղչելի խորհրդագարդք եւ լսելի հիւսուածք քերթողութեան Ալիշանի:

«ԱՌԵԱԼ ԶՈԳԵՆԿԱՐ ՓԵՏՈՒՐՆ»

Ապաքէն, առհաւատչեալ յարակայութեան գործոց Ալիշանի, որպէս եւ ամենայն քերթողի, են տարերք գեղագիտութեան նորա, որք բացայայտեն զինքնատիպ եւ զիսկատիպ երեւոյթս գրականութեան Հայոց:

¹ **Յովտ**՝ փոքրագոյն ի նշանագիրս եբրայերէնի, նշանախեց, գիր, տառ, կէտ, նիշ:

² Ղեւոնդ Ալիշան, Նուագք, հատոր Բ, Վենետիկ, 1857, էջ 98: «Կեանք», 1841:

³ **Իմեմն**՝ է վերստին կանգնեալ ձեւ տրական հոլովի դերանուանն «իմն», ի գործածեալ ընդ ձեւոյն «իմիք»: Տես «Լիակատար քերականութիւն Հայոց լեզուի», հատոր Բ, Երեւան, 1954, էջ 410:

Արուեստ քերթութեան՝ է ըմբռնումն լայնածիր եւ բազմաշերտ, եւ շատ է աստ քննութիւնն իւրայատկութեանց եւ ինքնատիպ տարերց սակաւուց քերթուածոց Ալիշանի: Եւ չէ անդէպ երկրորդել, զի առաջին իւրայատկութիւն եւ ինքնատկութիւն բանաստեղծութեան նորին՝ է լեզու դասական, որ հանդերձ իսկ խրթնութեամբ իւրք կենդանի եւ քաղցրահունչ շողայ ընդ փետրով բանաստեղծի եւ մարթի յայտաբերել զինքեամբ ծածկագրեալ զիմաստս: Լեզուս այս գեր ի վեր եւ գեր ի խոր է, քան զլեզու աշխարհաբար երկոց, նա սնանի հիւթով ոսկեդարու եւ դարուցն այնոցիկ, որք զկնի ոսկեդարու գային՝ շնորհեալ բանաստեղծութեան ազգայնոյ զթոխչս ի քերթութեան: Լեզուս այս ստէպ բերէ զերեւոյթ «հրաթափ»¹ լեզուի Նարեկացոյ, Ալիշան ի գործ ածէ զինքնագոյ բառս հայոց, որպէս եւ ստեղծանէ զբառս աննախագոյս, հայկազեան բառիւք արկանէ զփորձս, վերստին դարձուցանէ բառից զմթագնեալ կամ զանտես առեալ զիմաստս: Հիւսումն եւ շարագրումն կապակցութեանց եւ նախադասութեանց, ընտրութիւն դաշնահունչ բառից ստեղծանեն զպատկերս մտաց զանմոռանալիս, որք ստէպ փոխեն զերկն ի կտաւ, յերգ, յանդրի մարմարիոնեայ: Բառին ալիշանեան իսկ ասացեալ «ոգենկար» է փետուր նորա: «Ոգենկար» չէ բառն Նարեկացոյն «հոգենկար», որ ցուցանէ «զոր ինչ նկարեալ է հոգի սուրբ»: Ոգի ոչ իցէ նկարիչ յալիշանեան բառի, եւ ի տողի քերթուածոյ բացայայտի իսկատիպ բնութիւն եւ իմաստ նորին, զի անդ ոգի է առարկայ՝ զոր փետուրն կենդանագրէ կամ վերստին ստեղծանէ: Փետուր է նկարիչ ոգւոյն, որ յայտակերպէ զոգեղէնն, ի բառիս յայսմիկ ոգի կենդանագրի, նա է բնորդ փետրոյ:

Չոգենկար զիմ փետուրս

Առեալ միտեմ սիրտ ի խորս

Չարիւնս մեռեալ տալ ի դուրս

Չոր եղ որսիկն իմ անորս:²

Յայսմ քառատողիս ճանաչեմք զքերթող, որ վերստին իւրովի կերտէ զծանալթ թուացեալ բառն եւ ի նմին բառին հաստատէ ոչ եւ եթ զկէտ դիտման իւրոյ ընդ աշխարհ, այդ եւ զգեղադէտ ակն իւր, նա եւ բացորոշեմք զշարժառիթ եւ զնպատակ բանաստեղծութեան: Այսինքն՝ ի քառատողի տեսանեմք նա եւ զտեսաբանն արուեստի եւ զսահմանս զեղագիտութեան նորին:

¹ **Հրաթափ**, ածական բառ, որով Ալիշան բնորոշէ զլեզու Նարեկացոյն ի մատենի «Յուշիկք հայրենեաց Հայոց»:

² Դեռնոյ Ալիշան, Նուագք, հատոր Բ, Վենետիկ, 1857, էջ 158: «Ափ յափոյ յորսիկն իմ վրիպեալ», տպագրեալ ի «Բազմավիպի», ի թուին 1845, ընդ խորագրով «Ափ յափոյ յորսիկն իմ վերացեալ», «Բազմավիպ», 1845, թիւ 3, էջ 286-287:

Քերթուածն «Ափ յափոյ յորսիկն իմ վերացեալ» յառաջին նուագ տպագրեալ էր ի «Բազմավիպի», այդ չէր նմա ստորագրութիւն, եւ չէր մարթ պարզել զձեռն քերթողի, թե՛ զկնի երկոտասանից ամաց ոչն իցէր¹ տպագրեալ յերկրորդում հատորոյ «Նուագաց» Ալիշանի²: Ուստի իմանամք նա եւ, զի զսքանչելի քերթուածս այս քսանեւհինգամեան Ալիշան գրեաց (յամի ՌՊԽԵ - 1845): Քերթուած ի «Բազմավիպի» ունի զհամառատ տեղեկութիւն, զոր բանաստեղծ բարձեալ էր ի միջոյ յերկրորդ հատորոյ «Նուագաց»: Այդ լուսաբան մեկնութիւն ընդ տողիւք ի հանդիսի ոչ եւ էթ ճշգրտե՛լ զար, զամիս եւ զամ յղացման քերթուածոյ, այդ եւ յայտնի առնէ զճշմարիտ առիթ, զպատճառ յղացման նորին եւ է կենդանագրութիւն լուսաթախիծ աւուր անցելոյ. «Ի ԻԲ աւուր ամսեանն յուլիսի գայ յանկարծ ի պատուհան քերթողին դեղձանիկ թոշուն, ի վանդակէ ուստեք անշուշտ զերծեալ, եւ ի դերեւս հանեալ զխնդութիւն նորա եւ զոյս, ազդէ նմա անդէն զողբս զայս»³: Մարթի ասել՝ քերթուածս այս է գունագեղ լուսանկար՝ որսացեալ ի սրտաշարժ դիպուածոյ, որ էանց փութանակի, եւ մարթ էր նմա սուրալ ի գիրկն մոռացման, թե՛ չիցէին ակն, ունկն եւ ներըմբոնումն նրբագգեաց արուեստագիտի: Եւ ինքնատիպ ոճով Ալիշան որսացեալ էր զայն՝ առ ի հրաշակերտել ի հիացումն եւ ի փորձ սերնդոց: Ոգենկար փետրով իւրով Ալիշան ընդ անորս թոշնոյն վերացելոյն շնորհէ գրականութեան Հայոց զորսացեալ կենսաթրթիտ պահ ծփանաց եւ ընդ հարեր ամս տաճէ զդեղձանիկն այն գեղագրեալ, որ անդրէն գեղգեղէ ի բանահիւսեալ յաներեւոյթ վանդակի, յորում կեայ եւ կեցցէ յաւիտեան:

Քերթուածս այս է առաւել, քան զոր ինչ պատմէն: **Անդ թաքուցեալ է ծածկագրեալ բանաձեւ գեղարուեստից:** Ալիշան ընդ տողիւք ցուցանէ զերիս պայմանս կատարեալ արուեստի, եւ ոչ եւ էթ ցուցանէ, այդ եւ ի կիրարկանէ զնոսա նաեւ յերգոյս յայսմիկ: **Առաջին պայման է սքանչելի բնութիւնն,** որ է ազդիչ զգացմանց, տուիչ մղմանց առ ի ստեղծաբանել, ուստի շարժառիթ այսք քերթուածոյս է դեղձանիկն, որ է խորհրդանշան համապարփակ, փոխաբերեալ բնութիւնն: **Պայման երկրորդ է սիրտն,** որ է ընկալուչ ազդից, եւ ճշմարիտ արուեստ իցէ սրտագին բխումն այնր իսկ սքանչացմանն, որ մեռուցանէ զարիւն ի սրտի, զոգցես զայն ի թանաք փոխելով: Եւ **պայման երրորդ է անհրաժեշտ լեզու,** որ իցէ թարգման եւ

¹ Իցէր՝ ձեւ էական բայիս չէ վրիպումն կամ սխալումն, այդ՝ գիտակցարէն վերստին կանգնումն յունաբան բայաձեւին:

² Վասն անստորագիր քերթուածոց ի «Բազմավիպի» գրէ Սուրէն Շտիկեան: Պատմաբանասիրական հանդէս, 1978, թիւ 2: <http://kalantarian.org/shtikyan/work/Hod%201978-2.pdf>

³ Բազմավէպ, Վենետիկ, 1845, էջ 286: <https://arar.sci.am/dlibra/show-content/publication/1690/edition/1345/>

կերպաւորիչ սքանչացմանն, եւ որոյ անկ է բխեցուցանել ի սրտէ գրա-
րացեալն ի հրաշատեսութենէ զարիւնն: Եւ յայսմ քերթուածոյ թարգմանն
այն՝ է ոգենկար փետուրն, զոր նոյնպէս ետ դեղձանիկն՝ նշանակն բնու-
թեան, որ որպէս շարժառիթն եղեւ, նոյնպէս եւ նիւթն իցէ քերթուածոյն:
Արդ **յառաջ քան զգրելն ինչ՝ քերթողի անկ է թաթաւել զբնաստուր փետուր
իւր ի սիրտ իւր՝ յայն կաղամար, թանաք որոյ նոյն բնութիւնն արար, եւ
իմանալի է, զի ի սրտէ ծնանի ճշմարիտ բանաստեղծութիւն:** Ալիշան
քերթուածով իւրով հաւաստէ, զի արուեստ է հրաշալի հնարաւորութիւն,
յորում անորս որսիկն իցէ որսացեալ, եւ բանաստեղծ է որսորդ զգաց-
մանց, տպաւորութեանց, պատկերաց: Իսկ որսորդութիւն նորա իցէ ստեղ-
ծագործութիւն, ճշմարտագոյն եւ հաւատարմագոյն նկարումն ոգւոյ եւ
ոգեղինի:

Երկս այս է ճշմարիտ **գլուխ գործոց մանրանկարչութեան ի տա-
րածութեան գրաւոր բանի**, յորում գոն թե՛ հնչիւնք ծախինք, թե՛ շարժմունք
ազգի ազգի երփանց եւ գունոց, թե՛ ալեբախիւն տարասեռ զգացմանց: Եւ
ամենայն ի միասին յորդեն բխմամբն ինքնածին եւ ինքնակայ: Եւ ոչ ինչ
անդ ծնանի արուեստական բռնագրաւս կերպիւ: Լեզու բանաստեղծի է
կենդանի եւ ախորժալուր՝ որպէս երաժշտութիւն գուարթ եւ ստէպ թախ-
ծալից:

Ալիշան ցուցանէ զբարձր արուեստ քերթութեան, եւ ազդմունք յա-
րատեւեն ի մտաց, որոյ ընթերցեալ է զքերթուածն: Ակն մի պատուական է
գրականութեան Հայոց, որ ցոյացուցանէ զբացարձակ նոյնութիւն աշխար-
հաց ի ներքս եւ յարտաքս: Զոր ինչ առնիցես, անդրադարձցի առ քեզ, եւ ոչ
զկնի, այդ նոյնժամայն: Միտ իսկ վասն որսալոյ ինչ՝ ի վարմ արկանիցէ
ածողին զմտաւ: Բանաստեղծութիւնս այս, զոր պատշաճագոյն է կոչել
իմաստասիրական-քնարական առակ, կառուցանի հակադրութեամբք եւ
անդրադարձիք, անդ քերթող հմտաւրէն ի ցոյց դնէ զփոխակերպութիւնս
հոգեբանականս՝ որպէս դարձս իրաց ի հայելոյն: Հակադրին ընդ մի-
մեանս նախ պատկերք երկու, ի միում յորոց քերթող ի լիճ խորհրդոց
խորասոյգ ի խնդիր ելեալ է զիմացական ցաւդահոս մարգարիտ հանել
անտի, եւ ի միւսում քերթող յորսորդ փոխեալ դողով սրտի զհետ պնդէ
դահլիճամուտ դեղձանկին՝ «յարեալ ճապուկ յոտն ի մատն»: Յընթացս
պատմասացութեան¹ որսորդ դառնայ յորս որսին, թաշկինակ նորա, որոյ
հանդերձեալ էր ի վարմ ունել զհաւն, անդրէն դառնայ ի թակարդ հոգւոյն
սեպհականի, եւ ի մեկնել դեղձանկին, որ աւդահար բաղաձայնութիւն²

¹ Պատմասացութիւն՝ ի լեզու արդեան «պատում» անուանի:

² Բաղաձայնոյթ՝ alliteration (լատ.՝ ad (յայտ առնէ իմաստ յաւելման, լրման) +
littera (տառ) > alliteratio):

«տայ Թեւ Թեւ Թեւ ի Թոյն»՝ սիրտ որսորդի յաւիտեան ի բանդ անկանի: Կրկնէրէւոյթ կամ ինքնադարձումն միոյ պատկերի կամ գործողութեան ինքնին յինքեան, որպիսիք են անդրադարձք ընդ դիմակաց հայելիս, նկարչաւրէն ստեղծանէն ի բանաստեղծութեան զբանդ դիտելի եւս, յորմէ չիք ազատումն, եւ երեւեցուցանեն զանդրադարձային մտածողութիւն քերթողի, միանգամայն վերածեալ զքերթուած ի նախատիպ յարադարձութեան¹ յարուեստի, որ, կարծեմ, նոյնպէս աննախադէպ է ի գրականութեան Հայոց: Անդրադարձ ի լեզու լատինացոց կոչի **recursio**, որ բառացի նշանակէ «դարձ անդրէն, վերստին դարձ»:

Երկոտն եւթնավանգ տողից սահեալ առ աչաւք՝ ի մտի կենդանագրեն զբանս գրուցից, եւ ստէպ բաղաձայնոյթք ընդ հարեւր ամս զարթուցանեն եւ լսելի առնեն զձայնս այնր աւուր ի սրահի:

Յոլանք տպաւորադաւանութեան² ակնյայտաւրէն եւ ակնահաճոյ կերպիւ զարդարեն զքերթուած եւ զտպագարողութիւն³ ազդեն երեւակայութեան: Տպաւորութիւնք քերթողի էին այնչափ թարմ, ուժգնակի եւ հոգեցունց, զի եւ քերթուածն կրէ միանգամայն զթարմութիւն զգացմանց եւ զցնցումն ոգեղէն: Եւ ամենայն համաւրէն բխէ ի վարպետութենէ եւ յոճոյ քերթողին: Եւ ոչ վարանիմ համարձակաւրէն անուանել զԱլիշան նահապետ տպաւորադաւանութեան Հայոց, զի **էր յառաջ քան զլինելն տպաւորապաշտութեան**, որ սկիզբն առնու ի գաղղիական գեղանկարչութենէ եւ ի լեզու գաղղիացոց կոչի **impressionism**: Զաւոյ սրահի եւ զլոյս արեւու, զշարժումն եւ զփոփոխումն աւոյ եւ լուսոյ այնչափ շքեղաւրէն վրձնեալ է Ալիշանի, զի չիք կասկած եւ երկմտումն վասն այնորիկ: Պատկեր դեղձանկին, ծաւիւն եւ ծիծաղ նորա, փետրանիստ վրձնահարուածք լուսականք ի պարանոց նորին, տրոփ եւ թրթիռ ընդ աղուափետրովք սոսորդի⁴ իբրեւ «ծաւիւնս որոճայր», թեւահարումն աւոյն ի թռչելն յետեղէ յետոյ⁵, սրտի թափրտն ակամայ որսորդին, ելելիջումն զգացմանց, ամենայն պարագրի ամփոփի ի պատշաճաւոր շրջանակի, որ հանգուցանէ զխրատ վերջաբանի ընդ նախաբանի խորհրդոյն: Գեղագէտ բանաստեղծն իւրաքանչեւ թեթեւասահ գրուցատրութեամբ ակնարկելի եւ շաւառփելի առնէ նաեւ զմտածումնս, եւ ի պատկերի մտաց ընթերցողի զշրջանակս զայս

¹ **Յարադարձութիւն**՝ լատ. **recursio**, հեղինակային նորաբանութիւն, **ինքնադարձումն** ինքնին յինքեան (նոյնպէս նորաբանութիւն), կրկնէրէւոյթ, անդրադարձ:

² **Տպաւորադաւանութիւն**՝ տպաւորապաշտութիւն, գաղղ. **impressionism**:

³ **Տպագարողութիւն**՝ տիպ գարդարուն, շքեղ տպաւորութիւն:

⁴ **Սոսորդ** կոկորդ, շնչափող:

⁵ **Յետեղէ յետոյ**՝ ի վայրէ ի վայր: Ետոյ՝ է հնագոյն ձեւ բառիս «տեղի», սեռական նորին էր «ետեղ»: Վասն այսորիկ տե՛ս Հր. Աճառեան, Արմատական բառարան, հատոր Դ, էջ 393:

զարդարէ արդեամբ խորասուզմանց իւրոց՝ գիւտիւ մտաց, որ ի շարա-
դրման գեղագիտարէն փոխաբերի փոխակերպի յիւր ակնահաճոյ՝ ի մար-
գարիտ ազնուագոյն հանեալ ընդ Հորմոս¹:

*Ես նստէի ի դահլիճ՝
Ի խորհրդոց սահեալ լիճ,
Եւ Կամենայց՝ զինեւ շուրջ
Պար յաւելոյր իմաստ լուրջ,
Եւ ես հաճեալ խորասոյզ
Մինչ զմտաց քամել հոյզ,
Թուէի հանել ընդ Հորմոս
Զինչ մարգարիտ ցաւդահոս³:*

Քնար Ալիշանի ունի գաղիս տարահունչս եւ ազգի ազգի կերպս քերթուածահիւսման: Անդ շար քերթուածոց խորագրեալ «Երգք հան-
գրուանաց»՝ է գմայդելի հովուերգութիւն քաղցրանուագ, յորում համարէն
դաշն ներհիւսին տեսարանք բնութեան, լերինք, դաշտք, գառինք եւ
եզունք, մանուկ տուարած, հիւղ հովուական, երեւոյթ լուսականք եւ
պայծառք, երեւակեալք վետ վետ հարուածովք զուարթաշունչ վրձնի, որ
Ալիշանի եւ եթ առանձնաշնորհեալ է: Ի տեսարանի ելից արեւու՝ շողիւք
արեգական որպէս առիջիւք⁴ Ալիշան արկանէ զգորգ հայկական՝ նոնենի
եւ շիկակարմիր գունովք, արեւելեան կամարովք, անդ հրընկէց է շուրթն
լերին, ծաղկածինք՝ կողք լերին, որոց արբեալ է զլոյսն կենսատուր եւ
զխանձ առեալ ի բոցոյն: Այդ թե եւ քերթուածս այս «Ելք արեւու» զար-
դարուեստի իւրով զգունավառ եւ զգեղահիւսեալ տիպ գորգոյ բերէ մտա-
պատկերաց ընթերցողի, միանգամայն մատուցանէ եւ գտեսարան յա-
րաշարժ եւ յարափոխ, որոյ չէ արձանացեալ ի պահու անցելոյ, այդ է
«հրաթափ» բանահիւսումն ճեպասահ վայրկենից յարասլաց ներկայի: Զի
անդ ճաւճուն են կամարքն արեւելից, որք տատանին փողփողենէջ, առէջք
շուրջ առնեն պար, երերան շամանդաղք, հետ զհետ բոլորի ջահ շիկա-
կարմիր, «բաժակ ծաղկանց զցաւդ նրբին քամէ ի շունչ զովարար»: Եւ
բանաստեղծական իրաճման ինքնաւրինակ կերպիւ Ալիշան ի միում եւ ի

¹ **Հորմոս**՝ նեղուց ի ծոցոյն Պարսից, անուամբ նովին է կղզի: Զմարգարտէ Հորմոսի
խաւսի եւ Մեսրոպ Թաղիադեանց ի մատենի «Պատմութիւն հին Հնդկաստանի»
(1841), «... մարգարիտ ազնիւ յոյժ, թեպէտ ստորին քան Հորմոսին Պարսկային
ծոցոյ»: Դիւան Մեսրոպ Դ. Թաղիադեան, Երեւան, 1993, էջ 527:

² **Կամենայք**՝ մուսայք:

³ **Ղեւոնդ Ալիշան**, Նուագք Բ, Վենետիկ, 1857, էջ 158: http://greenstone.flib.sci.am/gsd/collect/haygirq/book/nuagqB_1857_index.html

⁴ **Առէջք**՝ երկայնական թելք յարմարեալք առ յանկանէլ զգորգ: Լայնական թել
գորգոյ կամ կտաւոյ կոչի թեզան: Առէջք եւ թեզանք ի միասին կազմեն զգորգ:

նմին պատկերի ոչ եթե միաձուլե համադրե, այդ նոյնական վարկանի
զսիրտ բնութեան եւ զսիրտ մարդոյ, զի որպէս ցաւաքամ սիրտ ծաղկան,
նոյնպէս եւ հրճուահեղց սիրտ մարդոյ

*Ի ծոցի լեալ յայդ յայդմէ
Զերանգս յինքեան նկարէ,
Եւ որքան յելս արփին յամէ,
Ինքն զհրճուանս յերկարէ։¹*

Այդու պատկերաւ իսկ գոգցես Ալիշան պարագրե գաշխարհ համայն
ի մէջ երկոցունց կիզակիտաց՝ մի որոց է արեւ՝ յորոյ բխին առէջք խայ-
տաճամուկ գորգոյ, եւ մեւսն է սիրտ՝ յորում վերստին միաբանին կիզա-
կիտին շառաւիղք։ Զգածութիւն զմայդմանց բերե ընդ իւր գերաժշտա-
կանութիւն քերթուածոց եւ բնոյթ երգոց տայ զթերեւ կշռոյթ Բանաստղից։
Ի նմին քերթողական աշխարհի՝ «Երբզս հանգրուանաց», հովուամանուկ
թափեալ զքուն անուշակ՝ առաջնորդէ խաշին ի լերինս ի վեր, յորոց ան-
կեալ ի ձորս՝ **Վտարակ**² առուք կազմեն **զվտակ** մանուածաւալ, որ գայ
շարժել զխորշխորշեայ անիւս՝ որք զալելւր հոսեն։ Ի պատկերի համարէն
միահիւսի ամենայն ընդ ամենայնի, եւ չիք ինչ խանգարիչ երջանկութեան
մարդկայնոյ։

Մակդիրք Ալիշանի ցյազեցումն պարարեն ամենայն զգայարանսն,
զի ոչ երբեք ի կիր արկանին առ ի յանգաւորել զբանատողս, առ ի յար-
մարել զվանգս, զոտս, զկշռոյթս։ **Ալիշան է իսկատիպ բանաստեղծ, քանզի
քերթուածք նորին չեն ոտանաւորք, այդ ճշմարիտ ցոյք բանաստեղծական
յղացման, որոյ ձեւ եւ բովանդակութիւն միանգամայն բխեն եւ պատշաճին
միմեանց։** Զարդք ալիշանեան քնարի են ոսկեճամուկ գորգ, փողփողենէջ
կամարք, հրընկէց շուրթն եւ ծաղկածին կողք լերանց, սէր հրածորան,
աստղակոհակ ծով եւ բազում այդ զմայդեցուցիչ տարերք։

Առատութիւն բաղաձայնութից վկայէ գերաժշտական նրբագոյն
զգայարանէ քերթողին եւ վասն առանձնայատուկ ուշադրութեան նորին
առ հնչումն բանաստեղծութեան։ Դարձեալ զամենայն բաղաձայնոյթ գո-
յացուցանէ ոսկերչի բծախնդրութեամբ, այնպէս, զի ոչ երբեք առաւել
հնչեղ եղիցի ձայնակցութիւն շարահիւսեալ բառից, քան զոր ինչ ասիցեն
նոքա ի միասին։

Եթե առանցք քնարերգութեան Ալիշանի են սէրք առ Աստուած, առ
հայրենիս, առ բնութիւն, որք ընդ միմեանս միահիւսեալ են եւ իսկու-
թեամբ իւրեանց միաբանեալ հակամիտին³ ի մի եւ նոյն կիզակէտ, ապա

¹ **Ղեւոնդ Ալիշան**, Նուագք, հատոր Բ, Վենետիկ, 1857, էջ 178։ «Ելք արեւու», 1840։

² **Վտարակ**՝ վտարանդի, տարագրեալ։

³ **Հակամիտել**՝ հակել եւ միտել միանգամայն։

քնարերգությունս այս ստեղծագործությանս ի հոգեկան եւ ի մտաւոր փոթորկի, զոր առթեն բազմաբնոյթ հակադրութիւնք, որք էին արտաքս եւ ի ներքս նորա: **Երկությունն անձին, երկությունն զգացմանց, երկությունն ընկալմանց...** Ամենայն ինչ երեւի ի հակադրութիւնս, եւ գրիչ Ալիշանի ընդ ամենայն ուրեք երեւակէ զհակադիր պատկերս, եւ զայդ առնէ բարձու արուեստի իւրով: Այսու իսկ **արուեստ Ալիշանի յաճախ ակադէմիսն է հակադրապատկերաւք, որ յայդոց contrast կոչի:**

Յստակագոյն նշան ներանձնեան երկութեան, որ երկատէ գտնողութիւնս իսկ Ալիշանի, է աստարումն յիւրմէն իսկ Էութենէն ալեւոր **Նահապետին** այնորիկ՝ որ յանդգնեցաւ դիմադարձել ընդ իւր՝ գերապատուելով «զանբաւական, զաւտարացեալ, ի բնիկ հայկական ոճոյ այդազգացեալ, զիդճուկ լեզու» ընդ «վսեմական գրոց լեզուին» եւ «կալաւ գրիչ ընդ գրչի»¹:

Ալիշան յաճախ հանդէս բերէ զհանդիպադրութիւնս², որք ոչ սոսկ պարզ հակադրութիւնք են եւ ոչ հականիշ բառիւք կառուցանին, այդ բազմաշափութեամբ իւրեանց զանհետեւութիւն եւ զբաղդատականութիւն³ մարդկային կենաց ցուցանեն ի զուգակշռութիւնս⁴: Շղթայ ներհակութեանց անցանէ ընդ բազում քերթուածս Ալիշանի, յորոց է «Ծաղր թե արտաւար»⁵, որ ի վերնագրոյ սկսեալ ցաւարտն զառեղծուած մարդկային Էութեան կշռէ նժարիւք պատկերաւոր հանդիպադրութեանց եւ թուի՝ **դիտէ զբազմաշափութիւն մարդկային գոյի ակամբն վերնայնով, ի դիտակիտէ արարչին:** Եւ բանաստեղծութիւն նմանի տեսողական պատրանաց ի գծանկարի «Յարաբերականութիւն»⁶ (1953) նիդեռլանդացի նկարչի՝ Մաւրից Եշերի (Maurits Escher), յորում **իւրաքանչիւր ոք բնակէ ի սեպհական աշխարհի եւ ոչ կարէ քայլել ընդ յատակ այդոյ բնակչի, քանզի ամենայն ոք ունի զսեպհական ըմբռնումն հորիզոնի եւ ուղղաձգութեան, սակայն ամենայն ոք գործածէ զմի եւ զնոյն սանդուղս:**

Մին յար ի սկիզբն, ոմն յաւարտ

Ներակրթին՝ հանապազ,

¹ «Բազմավեպ», 1847, թիւ 12, էջ 188: <http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Bazmavep/1847%2812%29.pdf>

² **Հանդիպադրութիւն**՝ հակադրութիւն, ներհակութիւն:

³ **Բաղդատականութիւն** – յարաբերականութիւն, անգլ.՝ relativity:

⁴ **Զուգակշռութիւն**՝ զուգադրութիւն, համեմատութիւն, հաւասարակշռութիւն, չափորոշումն:

⁵ Նուազք, հատոր Բ, Վենետիկ, 1857, էջ 109: http://greenstone.flib.sci.am/gsd/collect/haygirq/book/nuagqB_1857_index.html

⁶ <http://dianov-art.ru/2014/01/28/test-eshera/maurits-cornelis-escher/>

⁷ **Ներակրթել**՝ քաջ կրթել, ներվարժել, հմտացուցանել:

Եւ ոմն ի վէմ կոթողէ,
 Մեւսն յանյատակ ի յաւագ.
 Նա եւ որ հիմն է սորա
 Լինի միւսոյն ի ձեռուն,
 Եւ լուսանցոյցք՝ ի դարանս
 Փոխանակին երկոցուն...

Ի քերթուածոյ «Խաղաղութեան ձայն հնչեացի» պատկերք առատագոյնք են, հանդիպադրութիւնք վառ եւ յորդաբուխ՝ յախտոն ոճովն Նարեկացոյն, այդ երբեմն ողբոյ Խորենացոյն բերեն զերեւոյթ: Եւ ստեպ նիւթ միւսի ի յետին կարգ, զի յառաջ եւ գեր ի վերոյ քան զմասնաւոր նիւթ քերթուածոյ իցեն գաղափարք յաւեժականք առ որս յարնչի քնար Ալիշանի երկոքումք բեւեռաւք պատկերաց: Եւ **զլխաւոր առանձնայատկութիւն ալիշանեան հանդիպադրութեանց է զի թանձրացեալ գաղափարք կերպաւորին ի սահմանմունս ընդ հուպ փոխելն յասացուած¹, որ ի լեզու յունաց կոչի** ἀφορισμός:

Կէսք սանձակոծք եւ կէսք անսանձք,
 վարիչք վարեալք յապշոպ² ի նոյն,
 Ոչ գրկեալն հանդարտէ,
 ոչ գրկահար³ խնդայ ընդ հարուած.
 Ամաչէ յաղթական,
 փառաւորի յաղթեալն յամաւթ,
 Կապեալն ոստուցանէ,
 եւ որ կապէն՝ զինքն վարակէ⁴.
 Որ տապալէն ու որ տապալին
 դէմ ընդդէմ կան զգողանի.
 Անհասիցն ձեռնարձակք
 եւ առձեռնեայց ապախտաւորք:
 ...Հարաւ յանաւթս որոտահուրս
 աստուածաբարձ զէնն հաշտարար...
 Ի խուճապել հանճարեղին
 իմաստնանալ կարծեաց պանդոյր⁵.

¹ Ասացուած՝ աստ՝ թանձրացեալ գաղափարք ի սահմանմունս, *ափորիզով*:

² Ապշոպ՝ խռովութիւն, աղմուկ, շփոթ:

³ Զրկահար՝ զրկեալ:

⁴ Վարակել՝ կապել, կաշկանդել, պարանել, պատել, համակել:

⁵ Պանդոյր՝ անմիտ, յիմար:

*Լարեցան լեզուք, լցան
աղեղնաբանք¹ ի հրապարակս.
...Լռեսցեն ծերք, զ'ի համբակաց²
խելապատակ զեղաւ հանճար.
Ամաչեսցէ իմաստուն.
լուռ լիցի արդար, զի նոր է դարս...*

Գաղափարաց հոծումն եւ թանձրացումն ի բանի՝ է ընդաբոյս ուրոյն յատկութիւն Ալիշանի, եւ բազում ինչ ի նոցունց սփռեալ է ի քնարերգութեան նորին: Ժողովրդեան պարզոճ եւ խորիմաց ասացուածոց լծակիցք են նոքին, եւ **անկ է ժողովածոյ ալիշանեան ասացուածոցն եւս կազմել**, ի տիպ որպիսեաց են գատուցեալքս այս.

- Ուր երկուցն է կէտ ըղձից՝ եւ սիրտք անդ գումարին³:
- Բաղդ արագոտն յերթալ, ի գալ՝ գայթ ի գայթ⁴:
- Ո՞ր աւգուտ թելոց աստէն՝ թե թոչանաց չափին սահմանք⁵:
- Հայեա՛ց յանցեալսն եւ գալիս, եւ ծանիցես զքեզ քաջ⁶:

Եւ արդ, զի չէր հնար ի միում ակնարկութեան լրացուցանել գտեսութիւն ստեղծաբանութեան Ալիշանի, յաւելում եւ եթ, զի բազում են անծանք խորութիւնք քնարերգութեան նորին, եւ սուգումն անդր գտաւն զմայդանաց պարզեւեսցէ եւ առթեսցէ զգիւտ ազնուագունից մարգարտաց բանի, բազում ինչ անտի տակաւ տակաւ ի յայտ եկեսցէ, եւ առաւել ծաւալեսցի պարագրութիւն մեծութեան ծովուն:

Ի հեռաստանէ դարուց առաւել անհպելի լինի առասպելացեալ կերպար Ալիշանի, որ պատկառագրու տեսլեամբն իւրով բերէ զհանրական տիպ լուսադաւան նախնեաց մերոց եւ գաւրինակ խորհրդագգեաց մարգարէիցն: Ի կիտի բաժանմանց ճանապարհաց հնոյ եւ նորոյ, անցելոյ եւ գալեաց ընդ կաղնեաւ բազմեալ է նա որպէս անմահ ալեւորն զրուցից Հայոց՝ առ ի ցուցանել զուղի գանձուց աներեւութից: Եւ ոչ եւ եթ ուղեցոյցն է անվրէպ, այդ եւ է ոգեղէն ուղեկից զճանապարհայն, եւ միանգամայն է նոյն խորհրդալից ուղին իսկ: Բարի եղիցի երթ մեր ընդ ճանապարհին այն:

¹ **Աղեղնաբան**՝ դիմախաւս, ձգող զբանս թիւրեալ, մոլորեալ, խոտորեալ աղեղամբ,

² **Համբակ**՝ աշակերտ, դեռաբոյս տիւաք:

³ **Ղեւնդ Ալիշան**, Նուագք, հատոր Բ, Վենետիկ, 1857, էջ 117: Բան. «Անցանէ եւ այդ»:

⁴ Անդ եւս՝ «Անցանէ եւ այդ»:

⁵ Անդ, էջ 51: «Առ բանասերին»:

⁶ Անդ, էջ 140: «Առ բարձրամիտ»:

Лусине Аветисян
Кандидат филологических наук

РЕЗЮМЕ

ПОЭТИКА ПОЭЗИИ ГЕВОНДА АЛИШАНА, НАПИСАННОЙ НА ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Ключевые слова: Поэзия Алишана на древнеармянском, особенности его творчества, двойственность и контрасты, импрессионизм, чуткий слух поэта.

Алишан исключительный и феноменальный писатель, чья лирическая поэзия может и должен стать предметом междисциплинарных исследований, лингвистических и литературоведческих одновременно, потому что она позволяет сравнивать отображения двух языковых мышлений одного и того же человека, а также дает возможность видеть преимущества и недостатки двух литературных языков - классического и временно литературного, в отношении комплектов языковых инструментов.

Поскольку поэтика какого либо писателя - это совокупность оригинальных, экспрессивных, впечатляющихся элементов его творчества, то первой особенностью и оригинальностью поэзии Алишана является классический язык, который только сам по себе полностью раскрывает собственный закодированный смысл. Его стихи написанные на грабаре не возможно переводить на современный армянский язык без смысловых, звуко-голосовых, слуховых, образных потерь. Тщательно подобранные эпитеты, обильно используемые аллитерации, контрасты - изображенные не простыми антонимичными словами, раскрывают изысканный, пронизательный взгляд и тонкий слух Алишана и его глубокое восприятие живописности и музыкальности мира.

LUSINE AVETISYAN
Candidate of Philology

RESUME

THE VERBAL ART OF ALISHAN'S GRABAR POETRY

Key words: Ancient Armenian (grabar) poetry of Alishan, peculiarities of his work, duality and contrasts, impressionism, the poet's sensitive ear.

Alishan is an exceptional and phenomenal writer, whose lyric poetry can and should become the subject of interdisciplinary research, linguistic and literary studies at the same time, because it allows comparing the displays of two linguistic thoughts of the same person, and also makes it possible to see the advantages and disadvantages of classical and temporarily literary languages, in relation to language toolkits.

Since the poetic art of any writer is a collection of original, specific, expressive, impressive elements of his work, the first feature and originality of Alishan's poetry is the classical language, which only by itself fully reveals its own encoded meanings. His poems written in grabar cannot be translated into modern Armenian without semantic, sound and image losses. Carefully selected epithets, abundantly used alliterations, by not simple

antonymic words depicted contrasts reveal Alishan's refined, penetrating look and subtle ear and his deep perception of the picturesque and musicality of the world.

REFERENSIS

1. Acharyan Hrachya, Hayeren armatakan bararan, hator 4, Yerevan, 1931.
2. Acharyan Hrachya, Liakatar qerakanutyun Hayots lezvi, hator 2, Yerevan, 1954.
3. Bazmavep, Venetik, 1845, tiv 3, ej 286-287. <https://arar.sci.am/dlibra/show-content/publication/1690/edition/1345/>
4. Bazmavep, Venetik, 1847, tiv 12, ej 188: <http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Bazmavep/1847%2812%29.pdf>
5. Daniel Varuzhan, Yerkeri joghovatsu, hator 1, Yerevan, 1986.
6. Divan Mesrop D. Taghiadyan Yerevan, 1993.
7. Ghevond Alishan, Hushikq hayrenyats Hayots, hator A-B, Venetik, 1869.
8. Ghevond Alishan, Nuagq, hator A, Venetik, 1957. http://greenstone.flib.sci.am/gsd/collect/haygirq/book/nuagqA_1857_index.html
9. Ghevond Alishan, Nuagq, hator B, Venetik, 1957. http://greenstone.flib.sci.am/gsd/collect/haygirq/book/nuagqB_1857_index.html
10. Intra, Grakan demqer, Ghevond Alishan, Hovin dzayn@, hator 2, Yerevan, 2014.
11. Jrbashyan Edvard, Ghevond Alishani «Yergq Nahapeti» banasteghtsakan sharq@ev nra gegharvestakan miasnutyun@, Banber Yerevani Hamalsarani, Yerevan, 1982, tiv 2 (47). http://ysu.am/files/03Ed_Jrbashyan.pdf
12. Misak Metsarents, Nor tagher, Yerkeri liakatar joghovatsu, Yerevan, 1981.
13. Sahyan Hamo, @ntrani (banasteghtsutyunner), Yerevan, 2017.
14. Sarinyan Sergey, Haykakan Romantizm, Yerevan, 1966.
15. Shtikyan Suren, Alishani anstoragir gortser@ «Bazmavepi» ejerum, Patmabanasirakan handes, Yerevan, 1978, tiv 2, ej 81-92. [http://hpj.asj-oa.am/3018/1/1978-2\(81\).pdf](http://hpj.asj-oa.am/3018/1/1978-2(81).pdf)
16. Shtikyan Suren, Alishani poeziayi mi qani motivner@, Haykakan SSR Gitutyunneri akademiayi kegheskagir, Yerevan, 1960, tiv 2, ej 41-52:
17. Shtikyan Suren, Ghevond Alishani hayrenasirakan poezian, Yerevan, 1959.
18. Tananyan Grigor, Ghevond Alishani Pilisopayakan ev mankavarjakan hayatsqner@, Lraber hasarakakan gitutyunneri, Yerevan 2011, tiv 3.
19. Tchopanyan Arshak, Demqer, H. Ghevond Alishan, Anahit, Handes amsoryan, Pariz, 1902, tiv 4, ej 69-80. <https://arar.sci.am/dlibra/publication/12761/edition/11328/content>
20. Terteryan Arsen, Hay klasikner, Yerevan, 1944.
21. Tumanyan Hovhannes, Yerkeri liakatar joghovatsu, Hator 1, Yerevan, 2018.
22. Tumanyan Hovhannes, Yerkeri liakatar joghovatsu, Hator 1, Yerevan, 2018.

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱԶՈՐԴՈՂ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Սուրբ Ղազար կղզի, Հայկական ձեռագրեր, Մխիթարյան ակադեմիա, Խրիմյան Հայրիկ, Հ. Բառնաբաս Պիլեզիկճյան, հայկական հարց, «Հայդուկի երգեր», Հ. Եսայի Տայեցի, Նահապետի կերպարը:

«Ապրիլ ամսի սկզբներին՝ 1901 թվին, Վիեննայից մեկնում եմ Վենետիկ՝ թե Մխիթարյանների վանքի հայագիտությամբ հարուստ գրադարանից օգտվելու և թե՛ Իտալիան հնար եղածի չափ տեսնելու: Ուշ երեկոյին հասնում եմ Վենետիկ: Առավոտ վաղ ոտքի վրա եմ. ուզում եմ ժամ առաջ տեսնել Սուրբ Ղազար կղզին՝ Մխիթարյանների վանքը...

Նետում եմ ինձ առաջին պատահած գոնդոլի վրա: Մի արևավառ օր է. սև գոնդոլը սև կարապի պես ներդաշնակ սահում է Մեծ կանալի կանաչ ջրերի վրայով: Մա կախարդական քաղաքի ամենամեծ, լայն և երկայն ջրային պողոտան է, որ կիսում է Վենետիկը երկու մասի: Նրա աջ ու ձախ կողմերում շարքով կանգնած են հրաշագեղ պալատներն ու ապարանքները՝ երփներանգ մարմարիոնով, կառուցված վենետիկյան չքնաղ ոճով: Կարծես հեքիաթների միջով եմ գնում, այնքա՛ն անիրական, այնքան երևակայական են թվում այս բոլորը, սակայն ես հայացքս հառել եմ Լազունայի՝ հեռուները, որոնում եմ Ս. Ղազարի կղզին... Դանդաղ է քայլում գոնդոլը: Ես անհամբեր եմ, շտապեցնում եմ գոնդոլավարին: Մոտենում ենք կղզուն, անհագուրդ նայում եմ կանաչ նոճիների միջից երևացող կարմիր շենքերին. – «Սուրբ Ղազարն է սա», – ասում եմ ինձ և կրկնում... Գոնդոլը կանգ է առնում: Սրտատրոփ ոտք եմ դնում այս պատմական, թանկարժեք հողի վրա»¹:

Դարեր շարունակ Մխիթարյան միաբանության հայրերը համայն Եվրոպայում, Մերձավոր Արևելքի երկրներում հավաքել և աչքի լույսի

¹ **Ավետիք Իսահակյան**, Երկերի լիակատար ժողովածու 14 հ. -ով, հ. XI, Երևան, 2020 թ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 108, 109: Այնուհետև փակագծերի մեջ հատորը՝ լատինական, էջը՝ արաբական թվերով:

պէս պահպանել են հայոց հին ձեռագրերը, մագաղաթե մատյանները, հայ մանրանկարչական արվեստի եզակի կոթողները և հնագույն գրքերը: Ի՛նչ բարեբախտություն է եղել, որ արշավանքների ու պատերազմների, կրակների ու ավերածությունների տակ գտնվող մեր հայրենիքը ունեցել է աշխարհիս ամենագեղատեսիլ ու ապահով վայրերից մեկում մի հուսո ափ, որն իր գուրգուրանքի տակ է առել հայ ողբերգական պատմության վավերագիր մատյանները, մշակույթի մասունքները, հայ ձեռագիրն ու հայ գիրքը: Սակայն Սուրբ Ղազարը ոչ միայն մեծն Մխիթարի ուխտի պահպանման նվիրյալն է և մի եզակի թանգարան, այլև գիտական կենտրոն, որն իրավամբ արժանացել է միջազգային ճանաչման՝ Մխիթարյան ակադեմիա անվանմամբ:

Միաբան հայրերը, ճնշող մասով գիտնական հայագետներ, գիտության բազում ճյուղերի, բայց առաջին հերթին հայագիտության և աստվածաբանության անձնվեր հետազոտողներ են, որոնք կերտել են հարյուրավոր հատորներ իրոք որ «մի նշխարով, մի կում ջրով»: Տարիներ և տարիներ՝ սահմանափակված փոքրիկ կղզու անձուկի մեջ, նրանք ծառայել են իրենց ազգին, հավատին և ճշմարտությանը: Սուրբ Ղազարը գիշերային Արկտուս աստղի պէս դարերի խավարի ու թոհուրոհի մեջ լույս է պարգևել մեր ժողովրդին, եղել անդուլ մարտկոցը Վերածննդի ու Լուսավորության գաղափարների:

Օ, Իսահակյանը լավ գիտեր, թե ինչ հողի վրա էր ոտք դնում:

Հայր Սիմեոն Երեմյանը առաջնորդում է Իսահակյանին հայր Ալիշանի մոտ. «Մտնում ենք հայր Ալիշանի խուցը, մի ոչ մեծ սենյակ ծովահայաց լուսամուտով: Գրասեղանին հակած է մի ալնոր՝ փոքրամարմին, անարյուն, դալուկ մի սուրբ... և գրում է:

Մի վայրկյան դիտում եմ անշուք խուցը... Ամեն կողմ գիրք՝ աթոռների վրա, սեղանի վրա. մի պարզ անկողին՝ սնարին Աստվածամոր պատկերը, մի փոքր սեղանի վրա մի գրաֆինկա՝ ջրով լի, կողքին մի բաժակ: Եվ ուրիշ ոչինչ:

Ալիշանը բարձրացնում է գլուխը, խոշորացույց ակնոցների միջով նայում են ինձ երկու փայլուն, մեծ աչքեր:

Հուզմունքով համբուրում եմ ջլուտ ձեռքը, որ կերտել է այն պատկառելի հատորները:

–Ապրի՛ք, գորանա՛ք, ուրկե՞ կուգաք,– հարցնում է Ալիշանը տակավին առույգ ձայնով:

Հայր Սիմեոնը պատասխանում է իմ փոխարեն.

–Ուսանող է Վիեննայի, կովկասահայ է» (XI, 110):

Իսահակյանը կղզու տպարանում գնել էր Ալիշանի մեծ լուսանկարը և այժմ խնդրում է, որ բանաստեղծը իր ինքնագիրը թողնի նկարի վրա:

Ալիշանը կատարում է այս խնդրանքը. «Ալիշանը ամուր ձեռքով դանդաղ ստորագրում է իր ներշնչող անունը» (երկար տարիներ Իսահակյանի տուն-թանգարանի գրքերի պահարանում պահվում էր այդ մասունքը):

Իսահակյանը հիշում էր, թե Նահապետն ինչպես փորձեց իրեն սուրճ հյուրասիրել, այնքան պարզ, այնքան մարդկային. «Ալիշանը ժպտում է մեղմակի, ապա հարցնում է՝ ի՞նչ եմ ուսանում, ինչքա՞ն պիտի մնամ Վենետիկ:

- Ես կրնամ ձեզի սուրճ հրամցնել, վարդապե՛տ, գնա՛ մեզի համար սուրճ ապսպրե:

Ես, շնորհակալ լինելով, հրաժարվում եմ սուրճից:

-Սակայն դուն գնա՛, - ասում է Ալիշանը:- Կովկասի հայերը սուրճ չեն սիրեր, դուք թեյ կսիրեք: Ասկե շատ տարիներ առաջ պարոն Միան-սարովը, հայտնի ազգային մը, գիտե՞ք զինքը: Պետերբուրգեն այցի էր եկած վանքը ու ինձի սամովար մը նվեր բերած էր. ըսավ ինձի - «Վարդապետ, թեյ խմել սովորե, աշխատանքի ժամանակ աղել է»: Զգործածեցի, հոն կմնա վանքի մեկ անկյունին մեջ:

Լուսանկարը վերցնում եմ խորին շնորհակալությամբ. նորից համբուրում եմ բազմաշխատ ձեռքը և խուցից դուրս գալիս» (XI, 110-112):

Իսահակյանը մտորում է մեծ ճգնաժամի կյանքի ուղու մասին. «Ավելի քան կես դար այս խուցում կամ նման խուցում, ողջ երիտասարդությունը, կքել է նա սեղանին, որի վրայով անցել են անթիվ գրքեր հին ու նոր լեզուներով, հայացքը Ադրիականի ոսկի ալիքներին և ականջը՝ մշտամրմունջ ջրերին, և ժողովրդից հեռու, հայրենիքից հեռու, բայց հոգով մոտ, սրտով մոտ երգել է իր «Նվագ»-ները, (հինգ հատոր՝ I հ. «Մանկունի», II հ. «Մաղթունի», և «Բնունի», III հ. «Հայրունի», IV հ. «Տիրունի» և V հ. «Տխրունի»՝ երազելով հայրենիք, տիեզերք, անհունություն, հավերժություն...

Այս խուցում, ներշնչված Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու ներկայությամբ, անխոնջ համբերանքով և ավյունով պրպտել է ողջ հայ մատենագրությունը՝ պատմական և աշխարհագրական, և արդի հայ գրականությունն ու մամուլը, հավաքել է անթիվ [տեղեկանքներ] տեղեկություններ Հայաստանի ամեն մի վայրի մասին՝ հին և նոր:

Ալիշանը գիտնական աշխարհագետ էր, անդամ եվրոպական աշխարհագրական ընկերությունների, հմուտ ու շատ կարդացած էր, խորապես ծանոթ եվրոպական գիտնականների գործերին՝ Ա. Հումբոլդտի, Կ. Ռիխտերի, Էլ. Ռեկյուի, այլև հին ու նոր ուղեգրությունների: Սակայն նա գրքերից կոմպիլյացիա կազմող չէր՝ չոր ու ցամաք, այլ առանց նյութական աչքերով տեսնելու Հայաստանը՝ հոգով տեսավ նա դարերի մշուշների մեջ թաղված Հայաստանը, տեսավ տարածություններով՝ հեռու

վայրեր... այցելեց Հայաստանի ամեն մի կետը, սիրեց, ապրեց ամեն մի հողի կտորը, շնչավորեց ավերակները, գգվեց, հիացավ նրանցով:

Իր հատորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց և իրական:

Հայաստանը ոչ ոք այնպես չգիտե, ինչպես նա, ոչ ոք այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասերը: Իրականությունը նրա գրչի տակ երազ է դարձել և երազը՝ իրականություն» (XI, 111, 112):

Այս առաջին այցը Վենետիկ, Սուրբ Ղազար կղզի հավետ տպավորվեց Բսահակյանի հիշողության մեջ: Գրեթե կես դար անց, 1948 թվականին, նա Երևանում կգրի «Ղևոնդ Վարդապետ Ալիշան» հուշապատումը՝ կերտված այնպիսի ջերմությամբ ու սիրով դեպի մեծ Նահապետը, դեպի Սուրբ Ղազարը, որ ընկալվում է ոչ թե որպես հուշ, այլ՝ մի ասք, մի ձոն: Երիտասարդ Բսահակյանը անձամբ ճանաչած մեծ հայորդիներից երեք հոգու է առավել սիրել և պաշտել՝ Խրիմյան Հայրիկ, Ղևոնդ Ալիշան, Քրիստափոր Միքայելյան:

1901 թ. ապրիլի 8-ին բանաստեղծը Վենետիկից մի նամակ է գրում Վիեննա տեղի Մխիթարյան միաբանության Հայր Բառնաբաս Պիլեզիկ-ճյանին (Բսահակյանին մոտ ու հարազատ մի անձնավորության):

«Հարգելի Հայր Սուրբ.

1901 թ. 8 ապրիլի, Վենետիկ:

Շնորհավորում եմ Ձեր Զատիկը, երեկ սուրբ Ղազար էի. Պատարագին: Լա՛վ անցավ: Հ. Ալիշանը հիվանդ էր, հիմա լավ է. զարմանալի ուժեղ ոգու տեր մարդ է. զարմանալի մա՛րդ է. հիացած եմ իրենով... Ավետիք Բսահակյան:

Հարկ է ասել, որ թե՛ Վիեննայի և թե՛ Վենետիկի (Սուրբ Ղազարի) Մխիթարյան միաբանության հայրերը արտակարգ բարեկից և հոգատար վերաբերմունք են ցուցաբերել Բսահակյանին և իր առաջին այցին, երբ ինքը բոլորովին երիտասարդ բանաստեղծ ներկայացավ հայրերին և հայ բանաստեղծության Նահապետ Ղևոնդ Ալիշանին և թե՛ հետագա տարագրության տարիներին:

Հիրավի, շատ թանկ էին Բսահակյանի համար այն ժամերը, որոնք նա անց էր կացնում Մխիթարյան միաբանության հարուստ գրադարանում: Գրքերը, որ լեզենդ էին իր համար, բանաստեղծը կարող էր առնել ձեռքը, կարդալ ու անհագ կարդալ:

Սակայն ամենամեծ լեզենդը Ղևոնդ Ալիշանն էր: «Ղևոնդ Վարդապետ Ալիշան» մեր հիշատակած հուշապատումի մեջ Բսահակյանը պատմում է նույն թվին Նահապետի հետ ունեցած իր երկրորդ հանդիպման մասին: 1901 թ. զարնանը բանաստեղծը Պետերբուրգի հայ ուսանողների

մի խմբակից նամակ էր ստացել, խնդրանքով որոշ կենսագրական տեղեկություններ առնել Հայր Ալիշանից, ինչպես նաև իմանալ նրա կարծիքը «Հայկական հարցի» վերաբերյալ: Այս նյութերը տպագրվելու էին հիշյալ խմբակի ձեռնարկած «Անվանի հայերի կենսագրություններ» ժողովածուում:

«Այս նամակով զինված, գնացի Ալիշանի մոտ, - գրում է իր հուշերում Իսահակյանը: Ալիշանը հեզմանքով ասաց.

- Ատ ի՛նչ ծանր քար են դրած քո մեջքին: Վախեցա՞ր. գրելիք Բան մը չկա: Ես կենսագրություն չունիմ:

Ասաց, որ իրեն 8-9 տարեկան հասակում Կ. Պոլսից բերել են Ս. Ղազար, նվիրել են վանքին: Սկսել է աշակերտել միաբանության դպրանոցում, ավարտել է շատ մատաղ տարիքում, ուսանող է եղել և մի քանի տարի էլ Փարիզի Մուրադյան հայ վարժարանում դասատու և վարիչ է եղել: «Եվ քանի մը գրքեր եմ գրած: Ուրիշ ալ ըսելիք չունիմ: Գրքե-գիրք՝ աստ է եղած իմ ճամփան: Ուրիշ տեղեր չեմ գացած» (XI, 112):

Այսպիսին է հակիրճ պատմությունը այդ հսկա արարչի հսկակյանքի: Ի՛նչ աստիճան համեստություն, սեփական անձը ստվերում պահելու աննախադեպ օրինակ:

Պետերբուրգյան ուսանողների երկրորդ խնդրանքը կատարելն ավելի դժվար էր, քանի որ Ալիշանը պիտի հայտներ իր դիտարկումները դարասկզբում նոր հասակ առնող «Հայոց հարցի» վերաբերյալ: Իսահակյանը իր հուշագրության էջերում ջանասիրաբար բերում է Ալիշանի ասածները և, ինչպես ինքն է գրում. «որ ես շարադրում եմ արևելահայ բարբառով»:

Այստեղ ամբողջությամբ մեջ բերել կամ վերապատմել Հայր Ալիշանի մտքերը հարկ չկա, քանի որ Իսահակյանի երկերում դրանք բազմիցս տպագրվել են:

Ակնհայտ էր Ղևոնդ Ալիշանի ասածներից այն, որ հայ ժողովուրդը գիտակցելով, որ սեփական ուժերով չպիտի կարողանար թոթափել թուրքական լուծը, ստիպված եղավ հույսը դնել քրիստոնյա Եվրոպայի, քաղաքակիրթ պետությունների օգնության վրա, և դա եղավ մեր ժողովրդի «մեծագույն և բազմագետ սխալը», - ըստ Ալիշանի:

Ալիշանը հիշում է, որ 1890-ական թթ. կոտորածների ժամանակ կարդինալ Թերզյանը գնում է Հռոմի պապի մոտ և խնդրում, որ նա դիմում անե մեծ պետություններին՝ սաստելու ջարդարար թուրքին: Հռոմի պապը պատասխանում է. «Այդ քրիստոնյա մեծ պետություններն են հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ» (XI, 113):

Այդ շրջանում Ալիշանը համոզված էր, գրում է Իսահակյանը, մեջ բերելով Նահապետի մտորումները. պետք է երես շուր տալ եվրոպական

պետություններից, դադարեցնել հայ հեղափոխական ընկերությունների գործունեությունը, «պետք չէ գրգռել թուրքերի մոնղոլական արյունը: Պետք է ընդմիջտ երես շրջել այդ փչացած Եվրոպայից»: Ալիշանը ասում է Իսահակյանին, որ Պոլսո հայերի պատրիարք Օրմանյանը Սրբազանը, լինելով փորձված քաղաքագետ, բարեկամական հարաբերություններ է մշակում սուլթան Աբդուլ Համիդի հետ. «Պետք է աջակցել նրան: Մի բառով՝ պետք է համակերպվել, ուրիշ ելք չեմ տեսնում հայերի համար» (XI, 113):

Հիշենք, որ այս խոսքերը Ալիշանն ասում էր 1901 թ., մի ժամանակահատվածում, երբ զանգվածային ջարդերը դադարեցվել էին, և Նահապետին թվում էր, թե թուրքը կարող է կասեցնել հանցագործ ծրագրերը: Ինչ խոսք, որ նման տեսակետը, իսկ առավել ևս Օրմանյան պատրիարքի «հաշտվողական» քաղաքականությունը սկզբունքապես անընդունելի էին «Հայդուկի երգերի» հեղինակի համար:

Այլ էր նրանց գրույցի հաջորդ մասը, երբ Ղևոնդ Ալիշանը պատմում է ռուսական եկեղեցու սինոդի օբեր-պրոկուրոր, հայտնի սլավոնաֆիլ, իշխան Պրեդոնոսցևի Սուրբ Ղազար կատարած այցելության մասին. «Գրեթե բոլոր միաբանները նրա պատվի համար ոտի վրա են և քայլում են նրա հետ: Նա տեսնում է գեղեցիկ տաճարը, ճոխ գրադարան-մատենադարանը, տպարանը, թանգարանը... Երբ նստում են հյուրասենյակում մի բաժակ սուրճ խմելու, այդ ժամանակ պաշտոնյան, շնորհակալություններ հայտնելով միաբաններին, ասում է.

- Ես հիացած եմ ձեր աշխատանքի, համբերության և սիրո նկատմամբ՝ հանդեպ ձեր ազգի, բայց ցավում եմ, որ դրանք իզուր ջանքեր են, անօգուտ, աննպատակ: Որի՞ համար են այդ անձնագոհումները, մի փոքր ժողովրդի համար՝ ցրված երկրի երեսին և մատնված կորուստի: Թուրքիայում կոտորում են հայերի շարունակ, Ռուսիայում էլ հայերը ոչ ռուս ժողովուրդների հետ դատապարտված են շուտ կամ ուշ ձուլվելու ռուս մեծ ժողովրդի մեջ:

Բոլոր միաբանները սոսկացին, սակայն, արքահայրը (Իգնատիոս եպիսկոպոս Կյուրեղյան) հանդարտությամբ պատասխանում է.

- Հայ ժողովուրդը շա՛տ ավելի ահեղ ժամանակներ ու բռնություններ է տեսել, նվազել է թվով, բայց մնացել է ոգով կայուն և անվթար: Մեր հույսը Աստծու վրա է, մեր ժողովրդի տոկունության և պատմության անիմանալի ընթացքի վրա:

Բոլոր միաբանները անխոս հեռանում են դահլիճից, իսկ մեծանուն չինովնիկը, քարտուղարի հետ միայնակ, գնում է նավամատույց» (XI, 114):

Այսպես էլ ապրել է մեր ժողովուրդը, հիշելով իր հերոսական անցյալը, հիշելով, որ ավելի ծանր օրեր է ունեցել և անց է կացրել՝ հույսը դրած Աստծո և պատմության «անիմանալի երթի» վրա:

Իրոք որ անիմանալի ընթացք, եթե Ալիշանը իմանար, թե ի՞նչ է սպասում իր ժողովրդին մեկ տասնամյակ անց:

Այսպես էին անցնում օրերը Վենետիկում: Վենետիկն իր առինքնող գեղեցկությամբ գերել էր Իսահակյանին: Առաջին այցի շրջանից ուղևորական նոթեր կամ գրառումներ այս քաղաքի վերաբերյալ չեն պահպանվել, այդպիսիք շատ կլինեն «Հիշատակարանի» ուշ շրջանի գրառումներում, սակայն Վենետիկը աներկբայորեն մխրճվում էր բանաստեղծի գիտակցության մեջ, նրա ռոմանտիկ, գեղեցիկը պաշտող ու գնահատող էության մեջ: Վեպը այս քաղաքի հետ 1901 թվականին դեռ միայն ընձյուղներ էր արձակում, շարունակությունը լինելու էր տասնամյակներ անց...

Վենետիկն իր աներևակայելի գեղեցկությամբ գերել էր պոետին: Հիրավի, առաջին անգամ էր օտար ափը նրա համար այսքան սիրելի և դյուրիշ, բայց և այնպես նա փափագում էր օր առաջ տուն հասնել: Մոտենում էր հրաժեշտի պահը. «Երբ մեկնում էի Վենետիկից, գնացի Ալիշանի մոտ՝ վերջին անգամ տեսնելու և հրաժեշտ առնելու: Օրհնեց ինձ, բարիքներ մաղթեց և ողջուն ուղարկեց Խրիմյան Հայրիկին:

- Ինձմեն հարյուր օրով մեծ է ան,- ասաց Ալիշանը,- բայց կըսեն, որ շատ առույգ է, ձի կնստի, հարկավ այդպես է. ան Մասիսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմե, Հայաստանի հաց կուտե, անոր հողի ուժը կառնե...» (XI, , 114-1145):

Ի՞նչ պարզ ու հիանալի խոսքեր: Որոնք նույնությամբ, մի երկուրեք ամիս անց, բանաստեղծը պիտի հասցներ Խրիմյան Հայրիկին:

Իսահակյանը հիրավի գիտակցում էր, որ սա իր վերջին հանդիպումն էր Ալիշանի հետ, և նա ճակատագրից շնորհակալ էր, որ իրեն բախտ էր վիճակվել ծանոթանալ մեծ հայի հետ, լսել նրա իմաստուն զրույցները: Փոքր-ինչ առաջ անցնելով, ասենք, որ հայ բանաստեղծության Նահապետի մահվան բոթը Իսահակյանն առավ նոյեմբերի կեսերին հայրենի Ալեքսանդրապոլում (Ալիշանը մահացել է 1901 թ. նոյեմբերի 9 (22), Ս. Ղազար կղզում): Իսահակյանը ներկա է եղել Ալեքսանդրապոլում Հայր Ալիշանի հոգեհանգստի արարողությանը և այդ մասին գրել է իր «Հիշատակարանում». «Կատարեցին հայ կաթոլիկների եկեղեցում հ. Ալիշանի համար հոգեհանգիստ: Կաթոլիկների վարդապետ Պ. Նահապետյանը խոսեց՝ «Գիտեք, ժողովրդյանք, սա ի՞նչ նշանակություն է,-ցույց տալով հոգեհանգստի դագաղը,- սա հայր Ղևոնդի հոգեհանգստությունն է. ո՞վ էր հայր Ղևոնդ, Մխիթարյան ուխտի քահանա էր, որ 40 տարի աչք

կծոներ, գրիչ կշարժեր ազգի համար, անթիվ գիտական ու հոգևոր գրքեր գրեց, հիմի նա մեռավ, լռեց Ավարայրի բլրովը...»: Իսահակյանը մանրամասնորեն վերապատմում է այդ արարողությունը և նկատում. «Ներկա էր պ. քաղաքագլուխը, անդամներից քաղ. վարչության, երիտասարդներ ու տիկիներ, չկար ո՛չ մի հայ լուսավորչական հոգևորական» (Հ., 279, 280):

Հայրենիք վերադարձած Բանաստեղծը խորապես ազդվել էր՝ պաշտելի Նահապետի մահվան բոթն առնելով:

Իսկ տարեվերջին Իսահակյանը Ալեքսանդրապոլում ստանում է Վենետիկից հայր Եսայի վարդապետ Տայեցիի իրեն գրած նամակը, ուր մանրամասն պատմվում է հայր Ալիշանի մահվան մասին.

«29 դեկտ. 1901. Վենետիկ Ս. Ղազար

Կարդացի Ձեր գրած զգայուն տողերը Ալիշանի մահվան առթիվ, որոնք վերստին պատկերեցին մտացու և հոգվույս մեջ, դեռ թարմ և արտասուքս ողողյալ տխուր հուշեր, ո՛հ, ի՛նչ դառնակակիծ գիշեր էր այն գիշերը, տխուր և շատ տխուր, եթե միակ մխիթարություն մը ունեցա այն մեծ և վսեմ, սուրբ և պաշտելի Նահապետին մահվան օրն, այս էր որ գիշերն ի լույս անքուն անցնելով նորա սենեկին մեջ, բաղդ ունեցա յուր վերջին շունչը բազկացս մեջ ավանդելու. և որպիսի բաղդ» (ԱԻՀԱ):

Հայր Ղևոնդ Ալիշանը մշտապես տպավորվել էր Իսահակյանի գիտակցության մեջ, որպես մեծագույն հայագետ գիտնական, աշխարհագետ և բնագրագետ, լեզվաբան և աստվածաբան, հայ բազմադարյան պոեզիայի պատմության մեջ յուր առանձնահատուկ և բարձր տեղը ունեցող Բանաստեղծ:

Երբ Մոսկվայում լույս է տեսնում Վալերի Բրյուսովի կազմած «Поэзия Армении» անթոլոգիան և մեկ տարի անց այն հասնում է Ժնևում բնակվող Իսահակյանին, նա հետևյալ կարծիքն է գրում իր ընկերոջը՝ Գարեգին Լևոնյանին.

«1917, 28 մարտի, Ժնև

Ստացա վերջապես, «Поэзия Армении», այո՛, հոյակապ գիրքը: Մեծ ջանք, մեծ ճաշակ. միայն ափսոս, որ մեծ տեղ է տված Ծատուրյանին, և շա՛տ քիչ Դերենիկին, Սիամանթոյին, Վարուժանին, Ալիշանին (VI, 170):

Այս պարագայում, տալով Ղևոնդ Ալիշանի անունը, Իսահակյանը մեկ անգամ ևս հաստատում է, թե որքան բարձր է նա դասում Ալիշանին որպես Բանաստեղծ: Եվ կուգենար, որ «Поэзия Армении» նման հեղինակավոր գրքում առավել ամբողջական շարքով ներկայացված լիներ Ալիշանի նման մեծությունը:

Իսկ ընդհանրապես խոսել Ալիշանի հանդեպ ունեցած Իսահակյանի հայացքների, տեսակետների, գնահատականների մասին, կնշանակեր բացահայտել Բանաստեղծի մի բարդ ու միասնական կոնցեպցիան առ

Ալիշան, ինչը կնշանակեր առ Հայաստան աշխարհի, հայ ժողովրդի պատմություն, առ Հայոց եկեղեցի, «Հայկական հարց», Հայոց պոեզիա, և վերջապես, հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի ու Ալիշանի տեսլականը Հայաստանի ապագայի: Անշուշտ, այս ամենը լավ գիտակցելով և մանրադիտակի տակ բազմիցս ընթերցելով Իսահակյանի «Ղևոնդ Վարդապետ Ալիշան» հուշապատումը, ժամանակի հավատաքննիչները գերծմնացին 1948-ի տարեվերջին գրված Վարպետի գաղափարապես պայթյունավտանգ «Հուշ անմեղ» անունը կրող գրության տպագրումից և այն պահեցին արխիվային գորոցներում, մինչև Վարպետի կյանքի ավարտը: Եվ թույլ տվեցին տպագրել այն գրման օրից միայն տասնմեկ տարի անց՝ 1959 թվականին՝ Իսահակյանի երկերի քառահատորյակի չորրորդ հատորում:

Այնպես որ, նույնիսկ այդպիսի վիթխարի հեղինակության՝ Ավետիք Իսահակյանի անունը չնպաստեց, որ տպագրվի Հուշը Ղևոնդ Վարդապետ Ալիշանի մասին: Եվ այն «Ուստա Կարո» վեպի, «Մասսա Մանուկը» պոեմի կողքին մնաց Վարպետի անտիպ երկերի շարքում: Մինչև որ չեկավ նրա ժամանակը:

Սակայն Իսահակյանի Ալիշանականը սրանով չի վերջանում: Անսխալոթեն կարելի է ասել. Ալիշանը անջնջելի հետք է թողել Իսահակյանի մտածողության, Իսահակյանի հոգեկան աշխարհի վրա: Ահա իր «Հիշատակարանի» 1917 թ. ապրիլի 27-ի գրառումներից մեկում Իսահակյանը, մտորելով Հայաստանի հանդեպ ժամանակակից Եվրոպայի վարած քաղաքականության մասին, գալիս է շատ կարևոր մի եզրակացության՝ «Եվրոպան միանգամայն բարոյագուրկ է, հոգեպես փտած, և կամաց-կամաց ընկնում է տգիտության և անզգայության մեջ. շահը, պզտիկ նյութական շահը, տիրապետում է բոլոր հոգիների և մտքերի վրա, շահով է չափվում ամեն մի արժեք, ով նրանց սանտիմ է տալիս, նա ազնիվ է և սիրելի – ուղղակի պոռնիկի հոգեբանություն: Այդ է պատճառը, որ ահավոր, պատմության մեջ չտեսնված հայկական ջարդերը ո՛չ միայն զայրույթ չհարուցին նրանց մեջ դեպի թուրքերը, այլ ջանագին օգտագործեցին այդ արյունը՝ դառնալ փաստաբան և պաշտպան թուրքերի համար, ստանալով նրանցից վարձ ու հատույց, կոնցեսիաներ, նույնիսկ մեղադրեցին հայերին...

...Ինչպես հայր Ալիշանն ինձ 1901 թ. ասաց՝ «Ավերված է Եվրոպայի բարոյականը». խաչակիրների Եվրոպան չէ, այլ բուրժուա սոցիալիստ և թուրքի սանտիմը տիրող: Մենք կարծում էինք, թե հայկական ջարդերը պիտի խոցեն ազնիվ Եվրոպայի խիղճը, նա պիտի զայրանա, հուզվի և միահամուռ միանա և կռիվ հայտարարի թուրքերի դեմ... Որքան միամիտ էինք...» (Հ. 325):

Սա 1917 թվի ապրիլն էր, և եղեռնից անցել էր ընդամենը երկու տարի: Բնականաբար Վենետիկում ապրած տարիներին (1920-1926) Ալիշանին Իսահակյանը շա՛տ և շա՛տ առիթներ է ունեցել հիշելու: Այցի գնալու, կանգնելու լռիկ այն խուցի շեմին, ուր նա առաջին անգամ պատահեց հայության Նահապետին՝ ուղիղ քառորդ դար առաջ:

Եվ ինչպես ցույց են տալիս «Հիշատակարանի» այլ գրառումները, պոետի նամակները, Նահապետի կերպարը միշտ Իսահակյանի հետ է եղել:

Իսահակյանի մերձավոր շրջանին հայտնի էր այն իրողությունը, որ ֆրանսիական Ավալոն գյուղում, ուր Իսահակյանը հանգստի էր գնացել իր ընտանիքի հետ, մեկ անգամ գիշերով, շատ իրատեսական ձևով բանաստեղծին այցի է գալիս Ալիշանի ուրվականը, և նրանք ճանաչում են իրար, և նրանց մեջ՝ կարճ, բայց դրամատիկ զրույց է ծագում, որը պատկերում է Իսահակյանն իրենից անբաժան «Հիշատակարանի» էջերում:

«1934 թ. Սեպտեմբերի 26, Ավալոն

Գիշերս, երազիս մեջ տեսա Հայր Ղևոնդ Ալիշանին. պատմում էի նրան Հայաստանի մասին:

Նա ասաց.

–Մի՛ ասեր, մի՛ ասեր, մի՛ ասեր...

Չուզեցավ լսել Հայաստանի ավերների մասին» (Հ., 393):

Ու թեև «Հիշատակարանում» հանդիպումը ներկայացվում է որպես երազ, բայց իրականում, ինչպես և միշտ վկայում էր մտերիմների հետ զրույցներում Իսահակյանը, դա ոչ թե երազ է եղել, այլ շատ ռեալ հանդիպում Նահապետի ուրվականի հետ:

АВИК ИСААКЯН

Доктор филологических наук, профессор

ОБРАЗ ОТЦА ГЕВОНДА АЛИШАНА ПО ВОСПОМИНАНИЯМ АВЕТИКА ИСААКЯНА

Ключевые слова: остров Святого Лазаря, армянские рукописи, Мхитаристская академия, Хримян Айрик, отец Барнабас Пилезикджян, Армянский вопрос, «Гайдукские песни», отец Исая Тайецкий, Образ Наапета (Патриарха).

Аветик Исаакян пишет о Конгрегации Мхитаристов и об отце Г.Алишане, ссылаясь как на научное наследие Конгрегации и Алишана, так и как гость, лично посетивший остров св.Лазаря.

Исаакян описывает Алишана как человека удивительной скромности, как великого патриота, который посвятил свою жизнь, служа арменоведению и армян-

ской литературе. Как ученый и поэт, он в каждом случае роскошным языком, глубоко анализируя, давал исчерпывающие определения.

Исаакян в своих воспоминаниях подчеркивает, что как ученый Алишан исследовал, а как всеармянский Наапет (Патриарх) возродил впечатляющую славу прошлого Древней Армении.

Исаакян считает мысли, высказанные Алишаном в 1901 году, под тяжелым впечатлением от резни устроенной султаном Хамидом, пророческими, и ссылается на них по разным поводам.

AVIK ISAHAKYAN

Doctor of philological sciences, professor

THE IMAGE OF FATHER GHEVOND ALISHAN IN THE MEMORIES OF AVETIK ISAHAKYAN

Key words; St. Lazarus Island, Armenian Manuscripts, Mekhitarist Academy, Khrimyan Hayrik, Father Barnabas Pilezikjyan, The Armenian Question, "Hayduk Songs", Father Isaiah Tayets, the image of Nahapet.

While illustrating the image of Father Ghevond Alishan and the scientific heritage of the Mekhitarist Congregation, the Armenian writer Avetik Isahakyan represented as a scientist and writer on the one hand and as a visitor and eye-witness of St. Lazarus on the other.

Avetik Isahakyan characterized Gh. Alishan as a man of marvelous modesty and emphasized patriotism who embarked on the laborious survey of the Armenian Studies and Armenian literature. Having been a scholar and a poet, A. Isahakyan carried out comprehensive, exhaustive and in-depth analysis in the field of Armenian Studies, flavouring it with impeccable style of the Armenian language.

A. Isahakyan emphasized that in his memories Alishan, as a devoted scientist and an Armenian Nahapet, examined and revived the spirit and the glorious past of Ancient Armenia.

The Armenian massacres organized by Sultan Hamid in 1901 greatly affected A. Isahakyan and the author evaluated the prophetic words of Father Ghevond Alishan thus quoting them on different occasions.

**ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ
ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Բանալի բառեր՝ Հովհաննես Թումանյան, Ղևոնդ Ալիշան, Ղ.Ալիշանի գրապատմական դերը, «Հայ գրողներ Բ» («Թուրքահայ գրողներ»), «Հ.Ղ. Ալիշանի հիշատակին» բանաստեղծությունը, Ալիշանի գիտական և գրական ժառանգությունը:

Գրական առնչություններ

«Միքայել Նալբանդյանի հիշատակին» հոդվածում Հովհաննես Թումանյանը, կարևորելով գրական նախորդների վերագնահատության խնդիրը, գրում է. «Չէ՞ որ ամեն մի գրող ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ իրենից առաջ եղածների ազդեցությունների համագումար՝ մեկից շատ, մյուսից քիչ, որ ընդունում, հալում է իր ոգևորության հնոցի մեջ ու ձուլում, ձևակերպում իր ճաշակով»¹:

Անշուշտ, Թումանյանը բացառություն չէր: Եվ նրա ոգևորության հնոցում ներկա է եղել նաև Ղևոնդ Ալիշանը, որի շատ հեռավոր ու անուղղակի ազդեցությունը փոխակերպվել ու ձևակերպվել էր թումանյանական ճաշակով: Բնականաբար ազդեցությունները կարող են վերաբերել բանաստեղծի միայն առաջին շրջանի երկերին: Դրանք այնքան թույլ ու աննկատ են եղել, որ մինչ օրս թումանյանագիտության ուշադրությանը գրեթե չեն արժանացել: Սակայն երևույթը չի վրիպել բանաստեղծի ժամանակակիցների աչքերից: Թումանյանի դասընկերներից Տ. Վերանյանը² բանաստեղծի «Ալեք» պոեմի սկիզբը՝ «Ի՛նչ փարթամ է Արմենիան» սկզբածքով հատվածը, ընկալում է որպես Ղ. Ալիշանի «Հայ հայրենիքը» բանաստեղծության արձագանք: Նա, համեմատելով Ալիշանի և Թումանյանի արևածագի և այլ բնապատկերները, գրում է. «Որքա՛ն քաղցրություն, որքան սահունություն, որքան ներդաշնակություն քո և նրա նկարագրությանց մեջ»³:

¹ **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (այսուհետև՝ ԵԼԺ), հ.7, Եր., 1995, ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 227:

² **Վերանյան Տիգրան** (Հովհաննես Ավետիքի քահ. Վրեն Տաշրացի)- թարգմանիչ, մանկավարժ-1865 (Լոռու գվ., այժմ Ստեփանավանի Ազարակ գ.) - 1937:

³ «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908)», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ. 2010, էջ 107:

Տարբեր առիթներով երկու բանաստեղծների անունները հնչում էին ժամանակի քննադատների ու գրասերների միևնույն հոդվածներում ու ելույթներում: Հատկապես «Բազմավեպի» էջերում Թումանյանի 1903թ. «Բանաստեղծությունների» գրախոսները հիշատակում էին նաև Ալիշանի անունը: 1904թ. ապրիլին ամսագրի «Գրական հանդես» բաժնում հայր Մկրտիչ Պոտուրյանը¹ բանաստեղծի 1903թ. Թիֆլիսում հրատարակված ժողովածուի մասին իր քննադատականում գրում է. «Թումանեանը եթե բանաստեղծ համարինք, բայց ոչ ամեն գրածը բանաստեղծություն»²: Եվ որպեսզի հայր Պոտուրյանը «չնեղացնի» երիտասարդ պոետին, փորձում է «մխիթարել». «Լամարդին, Ալիշան, Գամառ-Քաթիպա և այլն բանաստեղծներ են, բայց անոնց գրուածոց մէջ ալ կան կտորներ, զորս պետք է միայն յանուն բանաստեղծին կարդալ»³:

Տարիներ անց որոշ քննադատներ Թումանյանի 50-ամյա հոբելյանը շնորհավորելիս նրան դիմում էին Ալիշանի խոսքերով: 1919 փետրվարի 20-ին տպագրվում է Սալլիմյան կեղծանունով Ջալալ Տեր-Գրիգորյանի⁴ հոդվածը՝ «Հովհաննես Թումանյանի գրական դեմքը Վալերի Բրյուսովի գնահատությամբ» խորագրով: Այստեղ հեղինակը, շնորհավորելով բանաստեղծին, մաղթում է, որ «Նա բարձրացնե ... Հայ Հոգին, որ նա փայլեցնե Հայ Հանճարը, որ իմանան ազգեր, որ Հայք չեն անցեր», ինչպես ասում է մեր բանաստեղծության Նահապետ Հ.Ալիշան»⁵:

Թումանյանը իր 5 պատմագիտական ու բանասիրական ուսումնասիրություններով համեստ ներդրում ունի հայագիտության պատմության մեջ: Նա ժամանակի հայ գիտական մտքի հմուտ հետազոտողներից էր: Բանաստեղծը զանազան պատմագիտական և այլ աղբյուրների դիմում էր թե՛ իր գիտական, թե՛ հրապարակագրական և թե՛ գեղարվեստական երկերը ստեղծելիս: Երիտասարդ տարիներից Թումանյանն ընթերցում էր Ալիշանի հայագիտական աշխատությունները: Անգիր հիշում էր աշխարհագրական անունների Ալիշանի ստուգաբանումներն ու մեկնությունները: Գիտեր, որ Փարվանա լիճը կոչվում է ոչ միայն Թափարվան, այլև Ղևոնդ Ալիշանի բնորոշմամբ՝ «Ծով Հյուսիսոյ». ծանոթ էր Ալիշանի գիտական երկերում օգտագործված նյութերին: Հովհ. Կոստանյանը Անի

¹ **Պոտուրյան Մկրտիչ** Եփրեմի - 07.04.1881, Պարտիզակ - 08.12. 1959, Վաղարշապատ), հայ հանրագիտակ, հայագետ, հրապարակագիր, գրող:

² «Բազմավեպ», Վենետիկ, 1904, ապրիլ, էջ 185:

³ Նույն տեղում:

⁴ **Ջալալ Տեր-Գրիգորյան Հովհաննեսի** - 21.04.1866 (Ղարաբաղի Զրաբերդի գվ., այժմ՝ Մարտակերտի շրջ. Մաղավուզ գ.)-31.08.1940 (Մաղավուզ գ.) - գրական գործիչ, մանկավարժ, թարգմանիչ:

⁵ «Հառաջ», 1919, թիվ 32: Տե՛ս նաև՝ Տարեգրություն, հ. 3, էջ 684:

ուղևորության ընթացքում պատմել էր բանաստեղծին՝ ինչպես է աջակցել Ղ.Ալիշանին՝ ««Այրարատի» համար բավականաչափ նյութեր ուղարկելով»¹:

Գրողի ստեղծագործական ծրագրերը հաճախ ենթադրում են պատմական աղբյուրների ուսումնասիրություն: Թումանյանը նույնպես պատմական երկեր գրելու ծրագրեր ուներ: Եվ նա Ալիշանի ու այլ հայագետների երկերից քաղում էր ուշագրավ փաստեր՝ ապահովելու իր գեղարվեստական երկերի պատմական հենքը: Բանաստեղծը մտահոգացել և սկսել էր գրել դրամա Անիի և Հովհաննես-Սմբատ թագավորի մասին: Գրողի արխիվում պահպանվում է մի տետր, որը կրում է «Տեղեկություններ (1021-1047) Բագրատունյաց թագավորության անկման» խորագիրը²: Այստեղ Թումանյանը Մատթեոս Ուռեայեցու, Արիստակես Լաստիվերտցու, Սմբատ պատմագրի (Գունդստաբլ), Սարգիս Ջալալյանի, Միքայել Չամչյանի աշխատությունների կողքին նշում է Ալիշանի «Շիրակ» ուսումնասիրությունը³: Բանաստեղծի անձնական գրադարանում պահվող Ալիշանի «Շիրակի» «Տեղագրութիւն Միւնեաց աշխարհի» (Վենետիկ, 1893թ.), «Շնորհալի և պարագա յուր» (Վենետիկ, 1873), «Միսականը», (Վենետիկ, 1873), «Միսիուան» (Համագրություն հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ») (Վենետիկ, 1885թ.) գրքերի էջերում պահպանվել են գրառումներ, որոնք վկայում են, թե ինչպիսի ուշադրությամբ է Թումանյանը ուսումնասիրել Ալիշանի հետազոտությունները, որքան քաջաձանթ էր Ալիշան հայագետին, որքան բարձր էր գնահատում նրան և որքան հաճախ էր օգտագործում նրա աշխատություններն՝ իբրև աղբյուր:

Իր «Հայկական էպոսի բառարանից» ուսումնասիրության մեջ Թումանյանը խոսում է Հայկյան տոտեմի, Հայկի անվան ծագման մասին, վկայակոչում է զանազան վրացական, ասորական, հրեական և այլ ազգերի ու ազգագրական հնարավոր բոլոր աղբյուրները (Հովսեփոս Փլավիոս (Հովսեփ Ֆլավի), Մառ, Արիստոտել), ներկայացնում է տարբեր տեսակետներ տոտեմների, մասնավորապես արջի պաշտամունքի մասին: Այս համատեքստում Թումանյանը մեջ է բերում Ալիշանի տոմարագրության ու տոտեմների մասին տեսակետը⁴: Հիմնվելով նաև Ալիշանի առաջադրած դրույթների վրա՝ Թումանյանը գրում է. «Հայկի համաստեղու-

¹ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Եր., 1969, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 461:

² Տե՛ս նաև ԳԱԹ, ԹՖ, թիվ 127:

³ **Ալիշան Ղ.**, Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, Ս.Ղազար, 1881:

⁴ Տե՛ս **Ալիշան Ղ.**, «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց», Վենետիկ, 1895, էջ 119:

թյունը... իր մեջ ամփոփում է երկու գաղափար, մինը ազգի տոտեմի, մյուսը ազգի նախահոր ու դուրսագնի... ժամանակի ընթացքում տոտեմը մոռացվել ձուլվել է դուրսագնի հետ, ինչպես երբեմն և ձուլվում է ժողովրդի կամ երկրի անվան հետ»¹ :

Այնուհետև Թումանյանը, խոսելով իրենց ծագումը արջի հետ կապող Արկադիայի և արկադացիների մասին, արջ բառը ստուգաբանելիս դարձյալ հիմնվում է Ալիշանի «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» աշխատության դրույթների վրա: Հղելով հայր Ալիշանին՝ Թումանյանն արձանագրում է. «Ժողովուրդները մինչև էսօր էլ հավատում են, որ արջի մորթու տակ բանական մարդ է ծածկված, և նրա կերպարանափոխության պատմություններով լիքն են ժողովրդական գրույցները (էջ 10. Բարոյախոս և Ալիշան)»²:

Թումանյանը Ալիշանի ուսումնասիրությունները օգտագործել է նաև գեղարվեստական երկերում: «Բզեզի դպրոցը», որը Կոնստանդին Լդովի³ «Պարոն ուսուցիչ բզեզը» ստեղծագործության վերստեղծումն է. իրականում այն բանաստեղծի ինքնուրույն գործերից է⁴: Լդովի բանաստեղծության մեջ 22 տառերից ու անուններից միայն երեք բուսանուն-հասկացություն էր ուսուցանվում, իսկ Թումանյանի «Բզեզի դպրոցում» հայոց այբուբենի հերթականությամբ ուսուցիչը սովորեցնում է 34-35 բույսերի, ծառերի ու մրգերի անվանումներ: Այստեղ իր դերն ունեն Ալիշանը: Բուսանուններն ընտրելիս բանաստեղծն օգտվել է այսօր էլ նրա աձնական գրադարանում պահվող Ալիշանի «Հայբուսակ կամ հայկական բուսաբառություն» գրքից (Վենետիկ, 1895):

«Պանդուխտ գրականության» հայոց Նահապետը

1899 թ. բանաստեղծի տան գրական հավաքույթներում՝ նշանավոր «Վերնատանը», քննության նյութ էին դառնում Ղ. Ալիշանի, Ռ. Պատկանյանի ու այդ սերնդի մյուս հայ գրողների գրապատմական դերի գնահատման հարցերը: Գրեթե նույն շրջանում՝ 1898-1902թթ., «Ծիածան» աշակերտական ընկերության գաղտնի դասընթացներում Թումանյանը վարում էր գրույց-դասախոսություններ հայ գրականության պատմությունից, որտեղ իր առանձնահատուկ տեղն ունեն նաև Ղ. Ալիշանի պոեզիան:

¹ Թումանյան, ԵԼԺ հ. 8, էջ 272:

² Նույն տեղում, էջ 306:

³ Կոնստանդին Լդով (Վիտով - Կոստանդին Նիկողանիչ Ռոզենբլյում) - 1862-1935-մանկագիր:

⁴ Այդ մասին տե՛ս **Զորբաշյան Էդ. Մ.**, «Փաստերի հետքերով», Եր., 2000, էջ 28- 34:

Հայր Ալիշանի ու նաև Ռ.Պատկանյանի ստեղծագործությանն անդրադառնալիս Թումանյանը նկատում էր նախաթումանյանական շրջանի հայ գրականության կարևոր առանձնահատկություններից մեկը, որը ձևակերպում է 1907թ. հունիսի 10-ին «Կյանք և գրականություն» թեմայով դասախոսության մեջ: Արվեստը մեկնելով իրականության, միջավայրի ու շրջապատի կյանքի հանգամանքների հետ սերտ առնչության մեջ՝ բանաստեղծը սահմանում է հայրենիքում և նրանից դուրս ստեղծվող գրականության տարբերությունները: Հենց այս համատեքստում են հնչում բանաստեղծի՝ Ալիշանին տված բնորոշումները, որոնք ներառված են մեր գրականության պատմության մեջ թևավոր խոսք ու բանաձև դարձած Թումանյանի՝ **«Պանդուխտ ժողովուրդ, պանդուխտ գրականություն»**¹ արտահայտության մեջ: Բանաստեղծն ընդգծում է օտարության մեջ ապրող գրողների՝ հայրենիքի իրական կյանքի ոչ խոր իմացությունը. **«Օտար երկրում բուսած մի ծաղիկ չի կարող իր երկրի շունչն ու փարթամությունը ունենալ, մի մարդ, որ իր երկիրը չի տեսել, նա չի կարող այդ երկրի իսկական պատկերը տալ»**²:

Այդ հոգեբանությամբ ստեղծագործած գրողների շարքը Թումանյանը սկսում է Ղ. Ալիշանով, այնուհետ տալիս է Մ. Պեշկևաշյանի, Ս. Շահագլզի, Գ. Պատկանյանի անունները. «Հայր Ալիշանը Վենետիկից մրմնջում է. «Ո՛հ լերունք ծաղկած»³ ...հիշում է անուշ երկրի հարուստ բնությունը և երանի տալիս նրան»⁴:

Թումանյանն Ալիշանի պոեզիային անդրադառնում է նաև «Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» ուսումնասիրության մեջ: Այստեղ բանաստեղծի ուշադրությունը գրավում են Ալիշանի «Հայոց աշխարհիկ»-ից այն տողերը, որտեղ օտար երկրից է հնչում հայի կարոտի ձայնը, որտեղ Նահապետը «Վենետիկից է մրմնջում»⁵:

*«Ո՛հ, լերունք ծաղկած, ո՛հ ջուրք ծիծաղկոտ,
Ջանուշիկ հովերտ ի յիս ածեք մոտ.
Հողմունք անուշիկք, եկեք, մօտ ի յիս,
Շունչ ու երգս առեք, տարեք ի Մասիս...»*⁶

Նույն խոսքերը Թումանյանը մեջբերում է նաև այդ ուսումնասիրության համար կատարած իր գրառումներում՝ ընդգծելով տողերի հեղինակի՝ հայրենիքից հեռու գտնվելու հանգամանքը: Նկատի ունենա-

¹ Թումանյան, ԵԼԺ, հ. 6, Եր., 1994, էջ 532: Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Ալիշան, «Հայոց աշխարհիկ», Նուագք, հ. Ե, Վենետիկ, 1858, էջ 220:

⁴ Թումանյան, ԵԼԺ 6, էջ 531:

⁵ Թումանյան, ԵԼԺ 8, էջ 88:

⁶ «Նուագք», հ. Ե, Վենետիկ, 1858, էջ 220: Տե՛ս նաև Թումանյան, ԵԼԺ 8, էջ 88:

լով «պանդուխտ գրողներին»՝ բանաստեղծն արտահայտում է նրանց ճակատագրի համար իր հոգու ցավը. «Ո՛չ ապրեցին հայի գյուղում, ո՛չ քնեցին հայի հյուղում, ո՛չ լեզուները խոսաց նրանց հետ, ո՛չ ականջները լսեց նրանց, ո՛չ նրանց ուրախությունը տեսան, ո՛չ տրտմությանը վրա հասան»¹: Թումանյանը միաժամանակ նոր եզրույթ է առաջադրում՝ **«հայ գրող»** և **«հայոց գրող»**, որոնց հումանիշ եզրույթներ են դառնում նաև **«տարաշխարհիկն»** ու **«բնաշխարհիկը»**:

«Առաջինն այն է,- ասում է բանաստեղծը,- որ ծնվում և սնվում է մայրենի հողի վրա, մայրենի միջավայրում: Երկրորդը, կտրված հայրենիքից, զարգանում է օտար երկնքի տակ՝ հայ գաղութներում»²: Հայր Ալիշանը, բնականաբար, տարաշխարհիկ գրողների շարքում է: Թումանյանը բարձր էր գնահատում «տարաշխարհիկ» գրողների պոեզիայի ոգին, ընդգծում, որ օտարության մեջ ապրող հեղինակները «հայրենասիրության միշտ մեծ կորով են երևան բերել...»³: Ալիշանի և այլ գրողների պատմական ծառայությունը բանաստեղծը տեսնում էր հայության մեջ ազատության ոգին արթնացնելու առաքելության մեջ. «Նախորդ շրջանի այդ գրողները հայ երիտասարդությանը դեպի Արաքսի այն կողմն էին հրավիրում, այնտեղ էր նրանց կոչվել: Ապարդյուն չի Արաքսի այն ափը, Ջեյթունն աղմկում է, և հայ ժողովուրդը էն գլխից ըմբոստացման ուղին է բռնում: Այս հանգամանքը մեր վերջին պատմության ամենալավ էջերից մեկն է կազմում»⁴:

Թումանյանի կարծիքով Ալիշանի պոեզիայի հիմնական արժանիքներն են ազատասիրական ոգին ու հայրենասիրությունը: Միաժամանակ, բանաստեղծը մատնացույց է անում տարաշխարհիկ գրողների, այդ թվում Ալիշանի քնարերգության գեղարվեստական առանձնահատկությունները, որոնցից մեկը իրականության քնարական, ռոմանտիկական ընկալումն է: Սակայն Հայաստանի պատմության ու բնության փայլուն իմացությամբ Թումանյանը առանձնացնում է Ալիշանին տարաշխարհիկ գրողների շարքում: Նա խոստովանում է հայրենի բնության հարազատության շունչը Ալիշանի պոեզիայում: 1904թ. մայիսի 4-ին Երևանի առաջնորդարանի պատշգամբից բացվող տեսարանը բանաստեղծն ընկալում է Ղ.Ալիշանի ու նաև Խ.Աբովյանի պոեզիայի բնապատկերների նմանությամբ: Երևանը Թումանյանին պատկերվում է մասնավորապես Ալիշանի «Հրազդան» քերթվածի առաջին տողերով: Իր նամակներից մե-

¹ Նույն տեղում, էջ 79:

² Թումանյան, ԵԼԺ 7, էջ 532:

³ Նույն տեղում, էջ 396:

⁴ Նույն տեղում, էջ 79:

կում 1904թ. բանաստեղծը Երևանից գրում է. «Ես չեմ մոռանալ այդ բուպեն: Ոտներին տակ, ներքև պոտոր, մոնչալով, ոլորապտույտ անցնում է պատմական Հրազդանըհիշում եմ Ալիշանի

Հրազդան, գետակդ իմ՝ հայրենի

Հրազդան, ջրբիկդդ իմ՝ անուշիկ...»¹:

Թումանյանի համար Ալիշանը գրական անառարկելի հեղինակություն էր, և իր գրական ընդդիմախոսներին հակադարձելիս երբեմն նրա անունն էր հիշատակում՝ իր խոսքի ճշմարտացիությունը աներկբա դարձնելու նպատակով: Այդպիսի մի առիթ էր «Նոր Դարի» «Կանոնավոր կրթությունն է պակաս» և «Այս ինչիցն է» առաջնորդողները²: Այս հոդվածներում վերջին 20 տարիների հայ գրողները բնորոշվում էին «անընդունակների, աղմուկ հանողների, և՛ միտքը, և՛ սիրտը պոտորողների, և՛ հայերեն լեզուն ապականողների ահագին լեզեռն»³: Հայ գրողները մեղադրվում էին հայ մարդուն միայն բացասական կողմերով ներկայացնելու և դրանով հայի արժանապատվությունը ոտնահարելու մեջ: Իբրև պատճառ հոդվածագիրը նշում էր հայ գրողների թերիմացությունը, կրթության բացակայությունը: Քննադատը գրում է. «Մեր մեծ համարված, բայց իսկապես շատ փոքրիկ տաղանդի տեր բանաստեղծները, դրամատուրգները, վիպասանները իրենց փառքը ոտնել են հայի մեջ միմիայն պակասություններ տեսնելով, նրա հոռի ու տգեղ կողմերը մեծացնելով ու աշխարհքի առաջ ծաղրի առարկա շինելով հային և հայի անունը... Եվ ինչո՞ւ... Որովհետև զուրկ են եղել կանոնավոր և հիմնավոր կրթությունից, որովհետև բոլորն էլ մեծ տիրացուներ են եղել»⁴:

Այս «նախատինքներն ու խրատները» Թումանյանը բնորոշում է «անմխիթար, հուսահատական, մեկը մյուսից ավելի անհեթեթ ու անճոռնի»: Իսկ այն, որ քննադատականի անանուն հեղինակները «աղաղակում» էին, թե գրականության մեջ ինչ լավ բան եղել է, եղել է միայն անցյալում, Թումանյանն անվանում է ընդդիմախոսների կիրառած «մի շատ խավար ու տմարդի ձև», իսկ նրանց ներկայացրած բոլոր մեղադրանքները՝ «անխիղճ զրպարտություն». «աբսուրդ» է բնորոշում հայ գրողներին տիրացու կոչելը: Գրականության հանդեպ սին քննադատության, «թշնամական վերաբերմունքի» դեմ պայքարելիս Թումանյանը «վերջին 20 տարիների» հայ գրականությունը ներկայացնող արժանավոր բանաստեղծ-

¹ Թումանյան, ԵԼԺ 9, էջ 430:

² Տե՛ս «Նոր Դար», Թիֆլիս, 1899, մարտի 4-ի թիվ 39, ապրիլի 1-ի թիվ 58:

³ Թումանյան, ԵԼԺ 6, էջ 589:

⁴ Տես «Նոր Դար», 1899, մարտի 4-ի թիվ 39, 1899 թ ապրիլի 1-ի թիվ 58-ում, Թումանյան, ԵԼԺ 6, էջ 589:

ների շարքում առաջինը հիշատակում է Ալիշանի անունը: Նա գրում է. «Ինչպե՞ս չեք պատկառում Ալիշանի Նվագներից», ինչպե՞ս չեք քաշվում Գամառ-Քաթիպայի ազատ երգերից, ինչպե՞ս չեք ամաչում Պեշկեթաշյանի աղու մրմունջներից, Շահազիզի ու Դուրյանի գործերից»¹:

Այսպես, Թումանյանը բարձր էր գնահատում իր մերձավոր նախորդի՝ Ղևոնդ Ալիշանի պոեզիան և վստահ էր, որ նրա կյանքն ու ստեղծագործությունը համահունչ են իր ժողովրդի ճակատագրին և առանձնահատուկ են նույնքան, որքան հայ ազգի պատմությունը:

Հովհ. Թումանյանը իր ժամանակի հայ գրական կյանքի գլխավոր դերակատարն էր և ամեն ինչ արեց Ալիշանի հիշատակի հավերժացման, հայ մշակույթի պատմության մեջ նրա անուրանալի դերը մեկընդմիջտ ամրագրելու նպատակով: 1901թ. նոյեմբերի 9-ին, երբ վախճանվեց Ղ. Ալիշանը՝ հայ գրականության Նահապետը, նրա հիշատակի առջև խոնարհումը, նրա անվան ու գործի մեծարումը ողջ աշխարհի հայության կյանքում դառնում է օրախնդիր: Արևելահայ մշակութային կենտրոնում՝ Թիֆլիսում, Ալիշանի մահվան առիթով ձեռնարկվող միջոցառումներում ակնկալվում էր առաջին հերթին գրական կյանքի ղեկավար, Գրողների ընկերության նախագահ Թումանյանի խոսքն ու գործը: Գրական աշխարհում ցանկացած կորուստ ոչ միայն վշտացնում էր բանաստեղծին, այլև ծանրաբեռնում նրա առօրյան: Նահապետի կորուստը բացառություն չէր:

Պահպանվել է 1901թ. «Աղբյուր» և «Տարագ» հանդեսների ժամանակավոր խմբագիր Արտաշես Շքյանի ստորագրությամբ նոյեմբերի 12-ի ծանուցագիրը՝ ուղղված Թումանյանին, որով 1901թ. նոյեմբերի 13-ին՝ երեկոյան ժամը 6-ին, խնդրում էին մասնակցել Ղևոնդ Ալիշանի մահվան կապակցությամբ հրավիրված հայ գրողների և մամուլի ներկայացուցիչների մասնակցությամբ խմբագրության նիստին: Հրավերի մեջ հատուկ նշվում էր. «Հարուցված կլինեն մի քանի հարցեր, որոնց վճռելու մեջ Ձեր մասնակցությունը պատշաճ կարևորություն կունենա»²: Թումանյանը մասնակցում է այդ խորհրդակցությանը, որտեղ նա որոշակի դեր է ստանձնում Ալիշանի պատվին հայ պոեզիայի բանաստեղծական ժողովածու հրատարակելու գործում: Այդ մասին է վկայում 1900թ. Թովմա վարդապետի նամակը Նոր Բայազետից՝ հասցեագրված բանաստեղծին, որտեղ նամակագիրը խնդրում է այդ գրքում զետեղել նաև իր որդեգրի՝ Արտաշես Ղարիբյանցի ոտանավորները: Նամակում ասվում էր. «Կար-

¹ Թումանյան, ԵԼԺ 6, էջ 114:

² ԳԱԹ, ԹՖ, ց.2, 413:

դալով «Տարագում» Ձեր ժողովի մասին և քո անդամությանդ մասին, առա նորանից մուսայի արտադրություններից 3 ոտանավոր և մեկ պատկեր քո հավանությամբ տեղավորելու այն ժողովածուի մեջ, որ պիտի Ձեր հավանությամբ լույս տեսնի Ղ.Ալիշանի հիշատակին»¹:

Միաժամանակ խորհրդակցության մասնակիցները դիմում են Թումանյանին՝ Ալիշանի հիշատակին նվիրված բանաստեղծություն գրելու խնդրանքով: Պոետը չի մերժում, թեև պատվերով գրելու սովոր չէր: Գրականության Նահապետի անունն ու հիշատակը կրտսեր գրչակցի համար պարտավորեցնող էր: Ալիշանին ձևավոր ոտանավորը ուներ «Կազմված է հ. Ալիշանի գրվածքներից» ենթախորագիրը, քանի որ նրանում մերթընդմերթ հնչում էին Ալիշանի բանաստեղծական տողերը: Այս յուրօրինակ մտահղացմամբ քերթվածն առանձնանում է Թումանյանի պոեզիայում: Նահապետին նվիրված ձևերգում օգտագործված Ալիշանի քնարական տողերը՝ համահունչ են Թումանյանի անձնական ապրումներին: Ասել, որ այնտեղ բացակայում է պոետական ներշնչանքը, չենք կարող: Ընդհակառակը, քերթվածում տեղ էին գտել Ալիշանի հենց այն տողերը, որոնք բանաստեղծի ճաշակով էին, սակայն դրանք հնչում են նոր ուժով՝ ձուլվելով թումանյանական գեղագիտական ընկալումներին, և երկու պոետների քնարական տողերը միախառնվելով դառնում են մեկ գեղարվեստական ամբողջություն: Ալիշանի մահից դեռ չէր անցել 10 օր, երբ նրան նվիրված Թումանյանի «Հ.Ղ. Ալիշանի հիշատակին» ձևերգը տպագրվում է «Տարագի» էջերում ²:

*Այլ ես շանթահար ապշիմ վրշտակոծ,
Թե ինչպե՛ս ընկավ Նահապետն հայոց,
Մահու սև թախիծն երկիրն հայրենյաց,
Հոգին ձգելով երկինս— առ Աստված:*

*...Շարժի՛ր, դե՛հ շարժիր, ավագրդ Մասիս,
Արձան պարծանաց հայոց աշխարհիս,
Ահա շունչ ետ քեզ Նահապետն հայոց,
...Դուք այլ շարժեցեք, մանկըտիք Հայկա,
...Մի՛ մոռանաք բրնձիկ աշխարհքն հայոց
Ու Նահապետին ասեք հոգոց՝*

¹ ԳԱԹ, ԹՖ 1215 (334 լր.): Տես նաև՝ «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908)» (Այսուհետև՝ Տարեգրություն), հտ. 1, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ. 2010թ., էջ 362:

² Տե՛ս «Տարագ», 1901, նոյեմբերի 18, թիվ 44: Տե՛ս նաև Թումանյան, ԵԼԺ հ.1, Եր., 1988, ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 193, 602:

³ Թումանյան, ԵԼԺ1, էջ 193:

Թումանյանը վերստին արձանագրում է այն իրողությունը, որ հայ գրականության Նահապետը մահացավ պանդխտության մեջ, և նրա աճյունը չարժանացավ իր երգած հայրենի բնության գրկում հավիտենական հանգիստը գտնելուն, և օտար լեռներն ու հովիտները դարձան նրան գերեզման՝ հագուրդ չտալով նրա՝ հայրենիքի նկատմամբ անհուն կարոտին:

1901թ. Թումանյանը գրում է ևս մի բանաստեղծություն՝ նվիրված Ղևոնդ Ալիշանին: Առիթը Թիֆլիսում Ալիշանի հոգեհանգիստը կազմակերպելու խոչընդոտներն էին: Վիրահայոց թեմը մերժում էր Նահապետի հոգեհանգիստը կազմակերպելու գրական շրջանակներից արված առաջարկը՝ իբրև արդարացում նշելով Ալիշանի կաթոլիկ լինելու հանգամանքը¹: Հոգեհանգստի թույլտվություն ստանալու համար գրողների շրջանից Թումանյանը, Շիրվանզադեն և իրավաբան Մելիք-Ղարազյոզյանը պատգամավոր են ընտրվում՝ թեմի առաջնորդի հետ բանակցություններ վարելու նպատակով: Նոյեմբերի 19-ին բանաստեղծը գրում է. «Հայր Գարեգին մենք երեքով» ոտանավորը, որը չափածո դիմում էր՝ ուղղված վիրահայոց թեմի առաջնորդի տեղակալ Գարեգին վարդապետ Հովսեփյանին (հետագայում կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո), որի հետ առավել մտերիմ ու բարեկամական հարաբերությունների մեջ էր բանաստեղծը, և որը նույնպես հոգեհանգիստը կազմակերպող հանձնաժողովում էր. Թումանյանը գրում է.

*Հայր Գարեգին, մենք երեքով
Պռտտ— գիտուն ազգին հայոց,
Ընտրվել ենք հանձնաժողով,
Որ մոմ առնենք, սարքենք հոգոց:*

*...Բայց մենք նրան երախտապարտ
Ցույց պիտի տանք մեր սերն անհուն,
Թեկուզ իրան կամքին ընդդեմ
Տանենք հայոց արքայություն:*

*Գնա այնտեղ խրնկենու տակ
Նըստի կողքին Լուսավորչի,
Ու ժամանակ առ ժամանակ
Երրորդության համար վիճի:*

¹ Նույն տեղում, էջ 663:

Բանաստեղծն արտահայտում էր գրականության Նահապետի նկատմամբ ողջ ազգի անհուն սերը և հայոց արքայությունում Գրիգոր Լուսավորչի կողքին նրան բազմեցնելու ցանկությունը: Նա եկեղեցու հայրերին կոչ է անում լինել ազատամիտ ու մեծահոգի և խտրություն չդնել հայերի մեջ՝ ըստ կաթոլիկ կամ լուսավորչական լինելու հանգամանքի: Թեև բանաստեղծությունը աչքի չի ընկնում գեղարվեստական արժանիքներով և պարզապես մի էքսպրոմտ է, չափածո դիմում՝ գրված կոնկրետ առիթով և կոնկրետ նպատակի համար, սակայն այն մեկ անգամ ևս վկայում է ազգային միասնության խորհրդանիշ բանաստեղծի մտածողության ու նրա պոեզիայի համազգային բնույթը:

1909թ. Թումանյանը նախաձեռնում է և ձեռնամուխ է լինում բարձր դասարանների աշակերտների ու ընթերցող լայն շրջանների համար «Հայ գրողներ» քրեստոմատիան կազմելու աշխատանքներին: Առաջին հատորը՝ «Հայ գրողներ Ա» կամ «Ռուսահայ գրողները», ներկայացնում էր արևելահայ գրականությունը (Թիֆլիս, 1909, 688 էջ), երկրորդ հատորը՝ «Հայ գրողներ Բ» կամ «Թուրքահայ գրողներ»՝ արևմտահայ գրականությունը (Թիֆլիս, 1910թ. հունիս, 812 էջ): Ընտրությունն արվել էր հայ նոր գրականության 100-ամյա շրջանից: 1911թ. հունվարի 4-ին Մար¹ ստորագրությամբ գրախոսականում ասվում էր. «Ռուսահայ գրականության մեջ առաջին անգամն է, որ մի այդպիսի ժողովածու է հրատարակվում ոչ միայն իբրև դասագիրք ... այլև իբրև ընթերցանության բազմակողմանի նյութեր պարունակող ժողովածու, այս վաղուց ցանկալի հրատարակություն էր: Ալիշանից ու Խրիմյանից սկսած մինչև մեր օրերի սկսնակ գրողները գետեղված են գրքի մեջ»²:

«Թուրքահայ գրողներ» քրեստոմատիայում Ալիշանի «Նուազներից» գետեղված էին «Հայոց աշխարհիկ», «Հայ հայրենիք», «Ողբամ զքեզ հայոց աշխարհ», «Մասիսու սարերն», «Հրազդան», «Շուշանն Շավարշանա», «Պլպուլն Աւարայրի», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանայ», «Լուսնկայն գերեզմանաց հայոց» ստեղծագործությունները, որոնք զբաղեցնում էին գրքի 30 էջերը³:

20-րդ դարի տասական թվականներին օտար լեզուներով լույս էին տեսնում հայ գրականության, մասնավորապես հայ պոեզիայի ժողովածուներ: Եվ Թումանյանն ու Ալիշանը օտարալեզու ընթերցողին ներկա-

¹ Տեր-Մարտիրոսյան Միքայել Գրիգորի -1868 Նոր-Բայազետ՝ այժմ Գավառ - 03.1931, Երևան- լրագրող, մանկավարժ:

² «Հորիզոն», 1911, թիվ 2:

³ «Հայ գրողներ Բ. կազմեցին Ղ. Աղայեան, Յովհ. Թումանեան, Վ. Փափագեան», Թիֆլիս, 1910, տպարան «Կուլտուրա» ընկ. Վելեամիևովսկ. 18, էջ 60-90:

յանում էին միննույն գրքի էջերում: 1917 հուլիսի 2-ին Բոստոնում լույս է տեսնում հայոց բանաստեղծության անգլերեն ժողովածու «Armenian poems» խորագրով՝ Ալիս Սթոուն Բլախուելլի (Alise Stone Blachwell) թարգմանությամբ: Ժողովածուում տեղ էին գտել, Ղ. Ալիշանի, Հովհ. Թումանյանի, Պ. Դուրյանի, Ս. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Խրիմյան Հայրիկի, Հովհ. Հովհաննիսյանի և ուրիշների բանաստեղծությունների¹:

1916թ. մայիսին Մոսկվայի Հայկական կոմիտեի նախաձեռնությամբ լույս է տեսնում Բրյուսովի հայտնի «Поэзия Армении» ժողովածուն, որը ներկայացնում էր հայ գրականության բոլոր շրջանների բանաստեղծության ընտրանին, որում արևմտահայ գրականությունը ավելի փոքր ծավալով էր ներկայացված: Ըստ ամենայնի պատճառը խորհրդատուների՝ Պ. Մակինցյանի, Վ. Տերյանի և այլոց գրական ճաշակից բխող ընտրությունն էր: Գրադատ ստորագրությամբ «Լինենք և քննադատող» հոդվածում ասվում էր, որ Թիֆլիսում Բրյուսովի կարդացած դասախոսության «դեֆեկտները, թերություններն և որոշ միակողմանիությունը» պետք է վերագրել այն «անձանց, որոնք շրջապատել են նրան դասախոսությունների ժամանակ»²: Փաստորեն ուղղակի թե անուղղակի թիրախավորվում էր նաև Թումանյանը, քանի որ ամենից շատ հենց նա էր ամենուր ուղեկցել Բրյուսովին՝ Թիֆլիսում: Քննադատը մեղադրում էր Բրյուսովին, ով «Միանգամայն անուշադրության է մատնել հայկական բանաստեղծության այնպիսի մի հսկայական դեմք, այնպիսի մի կորիֆեյ, ինչպես Ղևոնդ Ալիշանը, որի առաջ նրա հանդես բերած բանաստեղծները՝ Հ. Թումանյան, Դեմիրճյան, Վարուժան, Սիամանթո, թզուկներ են հսկայի առաջ... Բրյուսովը դրանցից բարձր է համարում Հ. Թումանյանին, որին հայկական քննադատները դեռ այդ պատվին չեն արժանացրել...»³ (Ընդգծումը մերն է՝ Ս.Հ.):

Այսպես ահա հայ մամուլի էջերում ծավալվում է մեծ բանավեճ, որտեղ հաճախակի շոշափվում էր նաև Ալիշանի անունը՝ որպես հայ բանաստեղծության «հսկայական դեմք, կորիֆեյ»: Իսկ բանավեճին Թումանյանը չէր կարող անմասնակից մնալ հասկանալի պատճառներով: Երբեմն նաև նրա անունն էր շրջանառվում տարբեր հոդվածներում: Բացի այդ Մոսկվայից նրան ևս փորձում էին մասնակից դարձնել հայ պոեզիայի ընտրանին կազմելու գործին. տարբեր գրողներից, այդ թվում և Ալիշանից ընտրություն կատարելիս ժողովածուի նախաձեռնողները

¹ «Հորիզոն» 1917, թիվ 137:

² «Մշակ», 1916, թիվ 10:

³ «Մշակ», 1916, թիվ 10:

ակնկալում էին բանաստեղծի խորհուրդն ու աջակցությունը: Այդ մասին վկայում է 1916 հունվարի 27-ի Ստեփան Մամիկոնյանի¹ և Սերգեյ Մխիթարովի նամակը՝ հասցեագրված Թումանյանին Մոսկվայից: Ստ.Մամիկոնյանը գրում է. «Հայ բանաստեղծության թարգմանական ժողովածուն ունի մի թերություն - նորա մեջ չեն ներկայացված բավարար ... Պատկանյանը, Շահագիրը, Ալիշանը և նրանց շրջանի բանաստեղծները, նմանապես և տաճկահայ բանաստեղծությունը:

Դիմելով Ձեզ, իբրև ձեռնհաս անձնավորության, խոնարհաբար խնդրում եմ նշանակել հիշած բանաստեղծներից ինչ կտոր է հարմար: Որովհետև մյուս թարգմանությունները մեծ մասամբ արդեն պատրաստ են, ուստի բարեհաճե՞ք շուտով պատասխանելու, որով մեծապես կպարտավորեք»²:

Թե որքանով է կարողացել Թումանյանն օգնել Մոսկվայի հանձնաժողովին, դժվար է ասել, քանի որ այդ շրջանում նա հիմնականում ծանրաբեռնված էր որբախնամ գործունեությամբ, սակայն չենք կասկածում, որ ինչ-որ աջակցություն ցույց տվել է, որովհետև ժամանակի գրական ոչ մի նշանակալից իրադարձության անմասն չի եղել: Խնդիրն անհանգստացրել է նաև Արշակ Չոպանյանին, ով, «Պակաս մը» հոդվածում բարձր գնահատելով «Поэзия Армении» և «Сборник армянской литературы» ժողովածուների մշակութային, բարոյական ու քաղաքական նշանակությունը հայ ժողովրդի համար ծայրագույն փորձությունների ժամին, հիշեցնում է բացթողումների մասին՝ հիշատակելով նաև Ալիշանի անունը. «Ասիկա մեծ ու լուսավոր դեպք մըն է՝ մեր ներկա մտայն ճգնաժամային օրերուն մեջ, և այդ գեղեցիկ հաջողության համար մենք ամենքս երախտապարտ ենք Մոսկվայի հայկական կոմիտեին... ավելի նպատակահարմար ու վայելուչ չըլլա՞ր միթե, թրքահայ գրողներու և բանաստեղծներու ավելի լայն տեղ մը տալ հոն, քան ինչ որ տրված է... Ինչպե՞ս կըլլա, որ Ալիշան, Խրիմյան, Սրվանձտյանց... հոն չեն երևար ...»³:

Այս հոդվածի առիթով բանավեճ է ծագում Մ. Վարանդյանի⁴ և Դ. Դեմիրճյանի միջև: Մ. Վարանդյանը Չոպանյանին արձագանքում է «Շտկելու է» հոդվածով⁵: Նա փաստում է, որ ռուս բանաստեղծը գրեթե ոչինչ չասաց «Պեշիկթաշյանի, Պատկանյանի ու Յարճանյանի մասին,

¹ Մամիկոնյան Ստեփան-1859-28.02.1923. Թիֆլիս- իրավաբան:

² ԳԱԹ, ԹՖ 1777 (384 լր): Տե՛ս նաև Տարեգրություն, հ. 3, էջ 166:

³ «Հորիզոն», 1916, թիվ 23:

⁴ Վարանդյան (Հովհաննիսյան) Միքայել Հարությունի - (1872 Ղարաբաղի Վարանդա գվ., այժմ Մարտունու շրջան,- 26.04.1934, Մարսել- խմբագիր, հրապարակախոս

⁵ «Հորիզոն», 1916, փետրվարի 2, թիվ 24:

իսկ հայր Ալիշանի անունն անգամ չհիշատակեց... Կարծեք թե նրանք բանաստեղծներ չեն, արժանի չեն բազմելու տերյանների, իսահակյանների, դեմիրճյանների ու կուրդիյանների շարքում»¹: Գրախոսին պատասխանում է Դ. Դեմիրճյանը «Շտկենք, բայց չվիրավորենք»² հոդվածով, որտեղ քննադատում է Վարանդյանի ձևակերպումներում նկատվող արհամարհանքը նորագույն շրջանի բանաստեղծների հասցեին: Թումանյանին դուր չի գալիս բանավեճի մասնակիցներից հնչող վիրավորանքները և կողմերին հաշտեցնելու ու խաղաղեցնելու նպատակով գրում է «Մենք ու մերոնք» հոդվածը³:

«Ես չեմ ուզում եղ վեճը շարունակվի», - հայտարարում է բանաստեղծը: Նա նույնպես կարծում էր, որ ժողովածուի կազմողները չպետք է դուրս թողնեին այնպիսի անուններ, ինչպիսիք են Ալիշանը, Պեշիկթաշյանը, Սիամանթոն և ուրիշներ: Սակայն միաժամանակ նկատում է, որ այդ բացթողումը կարելի էր բարձրաձայնել՝ «առանց նորերին վշտացնելու... դա չպետք է արվեր նորերի հասցեին անտեղի վիրավորանքներով»⁴:

Բրյուսովյան անթոլոգիայի շուրջ այս բանավեճում դրսևորվում է ժամանակի հայ գրական շրջաններում Ալիշանի դերի գիտակցումն ու բարձր գնահատականը:

Թումանյանը՝ իբրև Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ, որոշակի գործունեություն է ծավալել Ալիշանի պոեզիայի տարածման, ընթերցող հանրության ուշադրությունը նրա վրա սևեռված պահելու գործում: 1911թ. բանաստեղծը հայր Դ.Ալիշանի մահվան 10-ամյակի առիթով ծրագրել էր նրա հիշատակի հավերժացման միջոցառում: Այդ մասին է վկայում 1911թ. Գևորգ Մելիք-Ղարազյոզյանի նամակ-երկտողը՝ ուղղված Թումանյանին, որտեղ նամակագիրն առաջարկում է շուտով «հավաքվել Ալիշանի համար»⁵: 1912թ. դեկտեմբերի 2-ին և 16-ին Թումանյանի նախաձեռնությամբ Թիֆլիսի քաղաքային դումայի, Կովկասի հայոց բարեգործական ընկերության դահլիճներում տեղի են ունենում ժողովներ, որտեղ օրակարգի խնդիրը Ալիշանի հիշատակի հավերժա-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, փետրվարի 7, թիվ 29:

³ Թումանյան, ԵԼԺ 7, էջ 447-452:

⁴ Նույն տեղում, էջ 447:

⁵ ԳԱԹ ԹՖ 1693 (393լր):

ցումն էր¹: Իր եզրափակման խոսքում բանաստեղծը հայոց Նահապետին բնորոշում է **«պանծալի նախորդ»**, որը տվել է **«հոյակապ գործեր»**: Նա, Ալիշանին դասելով Մաշտոցից սկսած հայ ամենամեծերի՝ դասականների շարքին, մասնավորապես ասում է. «Էն մեծ ժառանգությունն արդեն, որ մեր ազգային կյանքում մեզ, հետնորդներին, թողել են մեր պանծալի նախորդները՝ Սահակն ու Մեսրոպը, Եղիշեն ու Շնորհալին, Փարպեցին ու Նարեկացին, Նահապետ Քուչակն ու Մայաթ-Նովան, Աբովյանն ու Նալբանդյանը, Արծրունին ու Բաֆֆին, Աղայանն ու Պռոշյանը, Սունդուկյանն ու Ալիշանը ... իրենց հոյակապ գործերով լցրին մեր երկիրը և իրենց հիշատակներով՝ մեր սրտերը ու ինչպես պայծառ արևներ՝ լուսավորում են մեր ճանապարհը դեպի ապագա լավ օրերը, և որոնց ապավինած մենք զգում ենք մեզ հզոր ու անսասան, ասում են՝ նրանց մեզ թողած ժառանգությունն արդեն նյութական հարստություն չի, այլ բարոյական, հոգեղեն, մտավոր, խոսքի ու բանի կարողություն»²:

Ալիշանի, ինչպես և այլ հայ գրողների ստեղծագործական ժառանգությունը, նրանց ձեռագիր արխիվները սերունդներին փոխանցելու գործը նույնպես երկար ժամանակ էղել է Թումանյանի մտահոգության և կոնկրետ ձեռնարկների առարկան: Բանաստեղծը սկսում, սակայն ավարտին չի հասցնում նաև «Հայ գրողների թանգարանի»³ նյութերի հավաքչական աշխատանքները. թանգարան, որում պետք է պահվեին հայ գրողների իրերը, ձեռագրերն ու նամակները⁴: Արսեն Բագրատունու, Արսեն Այտնյանի, Խրիմյան Հայրիկի, Մատթեոս Մամուրյանի տարբեր վավերագրերից բացի բանաստեղծի տրամադրության տակ էին նաև Ղևոնդ Ալիշանի նամակները⁵: 1916- 1917թ. ընկերության վարչության նիստերում ընթերցվում էին մատենաշարի տարբեր հատորների համար ներկայացվող նյութերը: 1916 թ. դեկտեմբերի 16-ին ընկերության վարչության նիստում ներկայացվում են մատենաշարի առաջին ժողովածուի համար նախատեսված ձեռագիր նյութերը: Որոշվում է նաև տպագրել հեղինակների պատկերը և ֆաքսիմիլեն⁶:

Ի թիվս այլ վավերագրերի այդ նյութերի մեջ էին նաև Ղևոնդ Ալիշանի նամակները, որոնք տրամադրել էր Գյուտ քահանա Աղանյանը: 1916թ. դեկտեմբերի 18-ին գրողների ընկերության վարչության նիստում

¹ ԳԱԹ, ԿԸՖ, թիվ 48, «Հորիզոն», 1912, դեկտեմբերի 4, 6, թիվ 265, 269, «Կովկասի լրագրեր» 1912, թիվ 31:

² Թումանյան, ԵԼԺ 6, էջ 391:

³ ԳԱԹ, ԿԸՖ, թիվ 39:

⁴ ԳԱԹ, ԿԸՖ, թիվ 38:

⁵ ԳԱԹ, ԿԸՖ, թիվ 45/15:

⁶ Նույն տեղում:

որոշվում է . «Նյութերի» առաջին գրքի մեջ տեղադրել Ա. Բագրատունու՝ 4, Ղ. Ալիշանի՝ 7, Ա. Այտնյանի 2, իսկ Խրիմյանի ու Մ. Մամուրյանի՝ բոլոր նամակները»¹ : Թումանյանի ձեռքի տակ եղել են Ալիշանի այլ ձեռագրեր ևս, որոնք նրա շնորհիվ հետագայում հանձնվեցին ՀՀ Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանին:

Արժևորելով Ղ. Ալիշանի հոբելյանը՝ իբրև հայ ազգային-մշակութային և հասարակական կյանքի կարևոր իրադարձություն՝ 1920թ. հուլիսին Թումանյանը ժամանակի գրական այլ գործիչների հետ մեկտեղ, ջանքեր է գործադրել կազմակերպելու Ալիշանի 100-ամյա հոբելյանը: 1920թ. փետրվարի 22-ին Հ. Օհանջանյանի նախաձեռնությամբ հոբելյանական հանձնաժողով կազմելու նպատակով հրավիրվում է նիստ՝ մշակութային-հասարակական տարբեր միությունների ու հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մեկ այլ հոբելյանական նախապատրաստական ժողով էլ տեղի է ունեցել 1920թ. մարտի 6-ին:

Ղ. Ալիշանի ծննդյան 100-ամյակին դեռևս 4 ամիս կար (1820 հուլիսի 6, (18)) և գուցե նրա 100-ամյակը դառնար համազգային հոբելյան, եթե ժամանակը թույլ տար: «Ազգովի հոբելյան, - ասում էր Թումանյանը, - ես հասկանում եմ, երբ տոնում են մեկի հոբելյանը, որին պսակելիս՝ ամբողջ ազգը կարող է ասել, թե քեզ պսակելով միննույն է՝ թե ինձ եմ պսակում»²: Եվ եթե բանաստեղծը զբաղվում էր որևէ հոբելյանի նախապատրաստությամբ ու կազմակերպմամբ, նշանակում է՝ հավատում էր, որ հոբելյարը, տվյալ դեպքում՝ Ալիշանը «դուրս է եկել ու վեր է բարձրացել իր ժողովրդի մակերևույթից՝ էնքան, որ գլուխը երևում է ամեն երկրից և հարգանք ու հիացում է ազդել ամեն տեղ»³: Մակայն ազգային կյանքի անակնկալ մեծ ցնցումները վերստին խաթարեցին մշակութային կյանքը, և Ղևոնդ Ալիշանի հոբելյանը Թումանյանի բազում և՛ ստեղծագործական, և՛ գրական-մշակութային ծրագրերի հետ անկատար մնաց:

Չնայած հայ ժողովրդի կյանքի ամենառդրերգական շրջանում պատմական դեպքերի հորձանուտում մշտապես իր ազգային գործունեությունն իրականացնող բանաստեղծը ամենաբազմազբաղն էր, այնուամենայնիվ, ժամանակ գտավ ուսումնասիրելու Ղևոնդ Ալիշանի ժառանգությունը, ուշագրավ բնորոշումներ տվեց նրա գրապատմական դերին, հնարավորինս լուսաբանեց նրա կյանքն ու ստեղծագործությունը: Այս հանգամանքը հայր Ղևոնդ Ալիշանի գրապատմական դերի, ազգային մշակութային վիթխարի նշանակության ևս մեկ վկայությունն է:

¹ Նույն տեղում:

² Թումանյան, ԵԼԺ 6, էջ 512:

³ Նույն տեղում:

СУСАННА ОВАНЕСЯН

Доктор филологических наук, доцент

РЕЗЮМЕ

ГЕВОНД АЛИШАН В КОНТЕКСТЕ КРИТИЧЕСКИХ ВЗГЛЯДОВ И ЛИТЕРАТУРНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ОВАНЕСА ТУМАНЯНА

Ключевые слова: Ованес Туманян, Гевонд Алишан, литературно-историческая роль Г. Алишана, хрестоматия «Турецкоподданные армянские писатели», стихотворение «Памяти о. Г. Алишана», литературное и научное наследие Алишана.

По свидетельствам современников, Ованес Туманян в ранний период своей творческой жизни находился под отдалённым и опосредованным воздействием Гевонда Алишана, которое носило непродолжительный характер.

Туманян по достоинству оценивал литературно-историческую роль Г. Алишана. Обращаясь к творчеству Алишана, он не только выразил своё отношение к его поэзии и дал её оценку, но и сформулировал одну из особенностей армянской литературы предшествующего периода.

Непосредственно после смерти Гевонда Алишана и в течение последующего десятилетия в деле увековечения его памяти важную роль сыграл Ованес Туманян. Он был одним из инициаторов издания сборника избранных стихотворений Алишана. 18 ноября 1901 г. было опубликовано стихотворение Туманяна «Памяти о. Г. Алишана». Днём позже поэт написал ещё одно стихотворное посвящение Алишану.

В июле 1920 г. Туманян предпринимает усилия для торжественного празднования 100-летнего юбилея Алишана.

При всей своей занятости Ов. Туманян сумел найти время для исследования творческого наследия Гевонда Алишана, по достоинству оценил его роль в истории армянской литературы, в меру сил и возможностей осветил жизнь и деятельность Алишана.

SUSANNA HOVHANNISYAN,

Doctor of Philology, Associate Professor

SUMMARY

GHEVOND ALISHAN IN THE CONTEXT OF HOVHANES TUMANYAN'S CRITICAL VIEWS AND LITERARY ACTIVITIES

Key words: Hovhannes Tumanyan, Ghevond Alishan, historical role of G. Alishan, reading book "Turkish-Submitted Armenian Writers", poem "In memory of Fr. G. Alishan", literary and scientific heritage of Alishan.

According to contemporaries, Hovhannes Tumanyan in the early period of his

creative life was under the distant and indirect influence of Ghevond Alishan, which lasted a short time.

Tumanyan appreciated the literary and historical role of G. Alishan. Turning to the work of Alishan, Tumanyan not only expressed his attitude to his poetry and gave his assessment, but also formulated one of the features of Armenian literature of the previous period, which played an important role in the development of Armenian literature and literary-critical thought.

Immediately after the death of Ghevond Alishan and over the next decade, Hovhannes Tumanyan played an important role in perpetuating his memory. The poet was one of the initiators of the publication of a collection of Alishan's selected poems. On November 18, 1901, Tumanyan published a poem "In memory of Fr. G. Alishan". A day later, the poet wrote another poetic dedication to Alishan.

In July 1920, Tumanyan made an effort to solemnly celebrate Alishan's 100th anniversary.

Despite his busyness, Tumanyan managed to find time to study the creative heritage of Ghevond Alishan, appreciated his role in the history of Armenian literature, and highlighted the life and work of Alishan to the best of his ability.

Գրականության ցանկ

1. Ալիշան Դ. «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց», Վենետիկ, 1895, 1910:
2. «Բազմավեպ», ամսագիր, Վենետիկ, 1904, ապրիլ:
3. ԳԱԹ, ԹՖ, թիվ 127, ց.2, 413, 1777, 1693 (393լր):
4. ԳԱԹ, ԿԸՖ, թիվ 38, 39, 45/15, 48:
5. «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Եր., 1969, ՀՀ ԳԱԱ հրատ.,
6. Թումանյան Հովհ., «Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով», հ.6, «Քննադատություն և հրապարակախոսություն, 1887-1912», Եր., 1994, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 673 էջ:
7. Թումանյան Հովհ., «Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով», հ.7, Եր., 1995, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 721 էջ:
8. «Կովկասի լրաբեր», Թիֆլիս, 1912, թիվ 31:
9. «Հայ գրողներ Բ. կազմեցին Դ. Աղայեան, Յովհ. Թումանեան, Վ. Փափազեան», Թիֆլիս, 1910, տպարան «Կուլտուրա» ընկ. Վելամինովսկ. 18, էջ 60-90:
10. «Հառաջ», թերթ, Թիֆլիս, 1919, թիվ 32:
11. «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908)» Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ. 2010թ.:
12. «Հորիզոն», Թիֆլիս, 1911թ., հունվար, 1912թ., դեմտետեմբերի 4, 6, թիվ 265, 269, 1916, թիվ 234, փետրվարի 2, 7, թիվ 24, 29, 1917, թիվ 137:
13. «Մշակ», Թիֆլիս, 1916, հունվար, թիվ 10:
14. «Նոր Դար», Թիֆլիս, 1899, մարտի 4, ապրիլի 1, թիվ 39, 58:
15. «Տեղագրություն պատկերացոյց. Հաւաքեաց հ.Ղեւոնդ Վ.Մ.Ալիշան Յուխտէն Մխիթարաց», Վենետիկ, ս.Ղազար, 1881:

REFERENCES

1. Alishan G, "Hin havatk kam hetanosakan kronk hayoc", Venetik, 1895, 1910.
2. "Bazmavep", Venetik, 1904, April.
3. "Haradj", Tiflis, 1919, N 32.
4. "Hay groghner B", Tiflis, 1910, p. 60-90.
5. "Horizon", Tiflis, 1911, 1912, 1916, 1917.
6. "Hovhannes Tumanyani kyanki ev steghcagorcutyan taregrutyun (1869-1908)", Yerevan, 2010.
7. "Kovkasi lraber", Tiflis, 1912, N 31.
8. "Mshak", Tiflis, 1916, N 10.
9. Museum of Literature and Art, fund of Caucasian Society of Armenian Writers, N 38, 39, 45/15, 48.
10. Museum of Literature and Art, H. Tumanyan's fund, N 127, list 2, 413, 1777, 1693 (393).
11. "Nor Dar", Tiflis, 1899, N 39, 58.
12. "Teghagrutyun patkeracoyc", Venetik, 1881.
13. Tumanyan Hovh., Yerkeri liakatar zhoghovacu tas hatorov, h. 6, Yerevan, 1994.
14. Tumanyan Hovh., Yerkeri liakatar zhoghovacu tas hatorov, h. 7, Yerevan, 1995.
15. "Tumanyann zhamanakacicneri husherum", Yerevan, 1969.

**«ԱՄԵՆՈՒՄ ԱԼ Է ՄԵԾ ՎԱՐՊԵՏՆ ՈՒ ՆԱՀԱՊԵՏՆ՝
ՀԱՅՐ ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ»
(Եղիա Տեմիրճիպաշյանը Ղևոնդ Ալիշանի մասին)**

Բանալի բառեր՝ Ղևոնդ Ալիշան, Եղիա Տեմիրճիպաշյան, Ատոմ Գրասեր, «Մշակ», Վենետիկ, Սբ. Ղազար, Վենետիկի Մխիթարյան միաբանություն, մենաստան, Նահապետ, հայրենասեր, մանկավարժ, բանասեր, տարեգիր:

Հայր Ղևոնդ Ալիշանի մասին շատ է գրվել ու խոսվել, հրապարակվել են բազմաթիվ հուշեր, գնահատական հոդվածներ, ծավալուն աշխատություններ, սակայն այդ ամենի մեջ, մի տեսակ, անտեսվել է մեր գրական-մշակութային-կրթական կյանքի մեկ այլ խոշոր երևույթ՝ Եղիա Տեմիրճիպաշյանի ներկայությունն ու ձայնը: Ըիշտ է, Ե. Տեմիրճիպաշյանը հանդես չի եկել Նահապետի կյանքին ու գործին նվիրված քիչ թե շատ ամբողջական գրությամբ, սակայն իր ժամանակի ամենամեծ ազգային երախտավորներից մեկի նկատմամբ նրա կարծիքները, տեսակետներն ու գնահատականները սփռված են իր գրական-հրապարակագրական բազմաթիվ ու բազմազան ելույթներում, ժամանակի մամուլի էջերում: Ընդ որում, հատկանշական է, որ Ղ. Ալիշանի նկատմամբ Ե. Տեմիրճիպաշյանի վերաբերմունքի արմատները խորանում են մինչև վերջինիս մանկության տարիները: Մեծացած լինելով Պեշիկթաշում՝ «քահանայ մեծ հոր տունը, ուր ստիպուած էր հաստատուիլ իր հայրը, արքունի շինութեանց մէջ ունեցած պաշտօնին բերմամբ»,¹ Եղիան դեռ մանկուց անմիջականորեն կապված էր կրոնի և եկեղեցու հետ: Հրանտ Ասատուրի վկայությամբ, Մեծ հայրը // յաճախ հետը եկեղեցի կը տանի եղեր զինքը»:² Բարեպաշտական այդ մթնոլորտն այնպիսի ուժեղ ազդեցություն է ունենում պատանու վրա, որ նա **որոշում է նույնիսկ վարդապետ ըլլալ**՝ /Այստեղ և հետագայում ընդգծումները մերն են: Բնագրային ընդգծումները կտրվեն շղա-ով – Պ.Դ./: Ներսէս Վարժապետեան, այն ատեն դեռ վարդապետ,- հիշում է Մինաս Չերազը,- Հասգիւղի Ս. Ստեփաննոս եկեղեցիին մէջ դպրութեան աստիճանները շնորհեց այդ ջերմեռանդ ուսանողին, մկրատով անոր

¹ **Ֆէնքեան Գ., Պետրոսեան Հր.,** Եղիա Տեմիրճիպաշեան /Իր կեանքը եւ իր գործը/, Կ.Պոլիս, 1921, էջ 11:

² **Ասատուր Հր.,** Դիմաստուերներ, Կ.Պոլիս, 1921, էջ 199:

մագերը կտրելով: Սակայն շատ չանցած, տիրացուն ազատախոհի փոխուեցաւ, երբ սկսաւ կարդալ Շօփէնհաուրի ու մանաւանդ Լիդթէի գիրքերը»¹:

Տարիներ անց Եղիան խոստովանել է, որ հաճախ է փորձել «նաև երեւակայութեան թելերով» հասնել ու տեսնել Վենետիկը՝ Ադրիականին այն «անմահ թագուհին», քանզի «ալեաց եւ աստեղաց մէջտեղ իր նախնի փառօք ու հրապուրանօք ինձ կ'երեւի գերազմայլ Վենետիկն իր գեղասէր եւ ազնուականներէն եւ իր գեղահանճար արուեստագէտներէն պատանեալ ու պաշտեալ: Եւ ինձ կ'երեւի սպիտակափայլ՝ Սուրբ Ղազարու կղզեակն ալ ի Վենետիկ, ուր յարութիւն առաւ Հայ լեզուն, Հայ գրականութիւնն»: Մանավանդ այն սարսափելի աղետից՝ 1883-ի հուլիսի 14-ի մեծ հրդեհից հետո, որն սպառնում էր «հրո ճարակ դարձնել հայության այն անմար օջախներից մեկը», որ «Եղիան մեր փրկատունն», «մեր բարոյական հարստութեանց գանձատունն» էր համարում, բայց «Հայոց Աստուածն, Հայ դպրութեանց Աստուածն, հրամայած է հրոյն՝ խնայել Սուրբ Ղազարու վանքի Մատենադարանն»: Եվ հատկանշական է, որ այդ փրկության գործում նա կարևոր դեր էր հատկացնում հենց Ղևոնդ Ալիշանին, որն, ըստ նրա, «յանուն Հայ գրագիտաց՝ գոհաբանութիւն մատոյց Հայոց Աստուծոյն, որ Հայ ազգին պահեց ինչ որ իր մեծագոյն փառաց տիտղոսն է»: Ավելին՝ հիշատակելով իտալական հայտնի ասացվածքը Վենետիկը տեսնելու և հետո մեռնելու մասին, Եղիան հայտարարում է, թե «Իմ Գրասէր սրտիս ու կրօնասէր հոգւոյս ալ տեսչն է – Տեսնել Վենետիկի վանքն, հոն ապրիլ ու հոն մեռնիլ»:² /Ի դեպ, թերևս քչերին է հայտնի, որ իր կյանքի վերջին շրջանում «Վենետիկ երթալ և միաբանության մեջ մտնել» փափագել է նաև Խաչատուր Աբովյանը/³

Ցավոք, նրան չվիճակվեց իրականացնել իր այդ տենչը, սակայն ամբողջ կյանքում նա սրտում և հոգում բորբոք պահեց սերն ու պատկանանքը ազգային հոգևոր այդ նշանավոր օջախի և, մասնավորապես, Հայր Ղևոնդ Ալիշանի նկատմամբ: 1880 թվականին, դեռևս երեսնամյա երիտասարդ, Ե. Տեմիրճիպաշյանը՝ Մշակ ստորագրությամբ Կ. Պոլսում հրատարակած «Հատընտիր ընթերցուածք ազգային եւ օտար մատենագիրներէ քաղուած /Ընտանեաց եւ դպրոցաց համար/» ժողովածուում գրում էր. «Ազգային ամենաբարձր հեղինակաց մին է Հ. Ղևոնդ Ալիշան, անդամ

¹ **Չերազ Մ.**, Կենսագրական միւսիոններ, Ամբողջական երկեր, թիւ Գ, Փարիզ, 1929, էջ 27:

² **Ե.**, «Վենետիկ», Գրական եւ Իմաստասիրական Շարժում» /ԳԻՇ/, 1883, տետր Է, էջ 160: /Այսուհետ սույն հանդեսի հղումները կնշվեն ԳԻՇ հապավված ձևով/:

³ Տես՝ **Չոպանյան Ա.**, Երկեր, Եր., «Սովետ. Գրող», 1988, էջ 383:

Վենետկոյ Միխիթարեան միաբանութեան: Իբրեւ բանաստեղծ մատենագիր, ապաքէն կը գերազանցէ Հ. Արսէն Բագրատունին. իսկ իբր հայրենասէր մատենագիր, ախոյեան չ'ունի բոլոր միաբանութեան մէջ: Կը գուշակեմ թէ կրնակն Հռոմայ եւ երեսն Արեւելք, Հայաստա՞ն դարձուցած կը նստի Վանքին մէջ **լուսատենչ եւ հայրենատենչ Ալիշան...**:¹ Մի քանի տարի անց, Նորայր Բյուզանդացուն ուղղված իր մի գրության մէջ, Եղիան հպարտությամբ վկայում է նաև Հայր Ալիշանի դրվատալից վերաբերմունքն ու գնահատականը իր ստեղծագործության նկատմամբ. «Գեղեցիկն. – իրա՛ւ է որ կրնամ գայն ցոլացնել մերթ իմ վաղանցիկ էջերուս մէջ,-գրում է նա,- դուք կը վկայէք այդմ հրապարակաւ, եւ **նա՛ որ Ձեր վարժապետն եղած է եւ ամենուս ալ է մեծ վարպետն ու Նահապետն՝ Հայր Ղեւոնդ Ալիշան՝ անցեալ օր այդ նկատմամբ ինձ մասնաւոր գրով մը կու տար բարի վկայութիւն:** Գո՛հ եմ. ո՛չ որ աւելի հաստոյր հարուածներ ուղղած է վանականութեան քան **Ազատախոհեան.** եւ ահա վանականք, Միխիթարեան Հարք, նախկին թէ՛ այժմեան, կու գան վկայել թէ՛ գործս գեղեցիկ է, եթէ ոչ բարի...»:² Ուրեմն և պատահական չէ, որ նա գրեթէ ամեն ինչում՝ նույնիսկ սովորական կենցաղային հարցերում, վարք ու բարքում, ջանում էր ընդօրինակել Ալիշանին. «Ինչ որ Ալիշան՝ Արփիարեանի յայտնութեանն համեմատ՝ իր միայնակեացի խցիկին համար կ'ընէ,- մի առիթով խոստովանել է նա,- նոյնն ես կ'ընեմ միայնակեացի բնակարանիս համար, որոյ պահանջած ուրիշ ծառայութիւններն ալ ի կարգին կը կատարեմ բոլորն ալ»:³ Եվ իրոք, նրանց աշխատասենյակների նկարագրությունը լիովին հաստատում է Եղիայի ասածը: «Ես բաց արի դուռը, և իմ աչքերիս ներկայացաւ հետևեալ տեսարանը,- հիշում է Գրիգոր Արծրունին:- Ահագին, լուսավոր սենեակ, լի գրքերի պահարաններով, մէջտեղ դրած մի մեծ գրասեղանով, որը բեռնաւորված էր բազմաթիւ գրքերով և թղթերով, մի քանի գեղեցիկ, թէև հասարակ բազկաթոռներ և մի դիվան, լայն և բարձր պատուհանների վրա՝ մոյգ գոյնի վարագոյրներ,- ահա Ալիշանի սենեակը»:⁴ Իսկ ահա թէ ինչպէս էր տեսել այն Ավետիք Իսահակյանը «Մի վայրկյան դիտում եմ անշուք խուցը... Ամեն կողմ գիրք՝ աթոռների վրա, սեղանի վրա. մի պարզ անկողին՝ սնարին Աստվածամոր պատկերը. մի փոքր սեղանի վրա մի ջրաման՝ ջրով լի, կողքին մի բաժակ:

¹ Տես՝ նշված ժողովածուն, էջ 19:

² **Գրասէր Ատում**, «Արդի հայերէն», Երկրագունտ, 1884, թիւ 2, էջ 124:

³ **Տէմիրճիպաշեան Ե.**, «Վերլուծում», Մասիս, 1893, թիւ 3981, էջ 136:

⁴ **Արծրունի Գր.**, «Վենեցիա 1870 թին /Յիշողութիւններ/», Մշակ, Թիֆլիս, 1890, թիւ 50:

Եվ ուրիշ ոչինչ»:¹ Եղիա Տեմիրճիպաշյանի Խասգյուղի տան սենյակը, հիրավի, գրեթե ոչնչով չէր տարբերվում վերը նկարագրվածից: «Գետնա-յարկի խուց մըն էր անոր սովորական սենեակը. անցեալ դարու մը ճար-տարապետութեան տրտում և ստուերոտ մէկ մնացորդը,- գրում է Եղիայի կենսագիրներից Գեղամ Ֆեներճյանը: - Պատին մէջ փորուած կիսակա-մար մը՝ ուր գրքեր կան շարուած: Դրան դէմի պատը ամբողջովին վե-րածուած է գրադարաններու՝ որոնց մէջ կազմուած գրքերու սեղմ շարքեր. Բաց մնացած ստորին կարգերէն գրքի հոսանք մը կը թափի դուրս, որոնցէ՝ ամէն կողմ դիզուած, սեղանին, աթոռներուն, բազմոցին վրայ: Աչքին դէմը՝ մեծ հօրը, Պէշկըթաշի քահանային պատկերը. Անոր քով, տարտամ իւղաներկ մը որ կը ներկայացնէ Ֆանարաքին, խաղաղ ու արեւով լեցուն ծովի մը եզերքը: Սեղանին վրայ՝ Պայրընի կենդանագիրը: Պատէն կախուած են երկու ժամացոյցներ, երկուքն ալ լուռ: Պատուհանի մը մօտ, ցած դարանի մը վրայ շարուած գրքերու ետեւէ կ'երեւայ փոքրիկ մետաղէ խաչ մը: Բազմոցին վրայ կը մնայ Աստուածաշունչ մը, Յոբի գլուխը բացուած»:²

Ղ. Ալիշանն ու Ե. Տեմիրճիպաշյանը միմյանց շատ նման էին նաև իրենց խառնվածքով ու բնավորությամբ՝ ժամանակակիցների վկայու-թյամբ երկուսն էլ չափազանց զգայուն, ջղային ու բռնկուն էին, բայց և հարկ եղած դեպքում կարողանում էին զսպել ներքին ալեկոծումները, չափազանց զգայուն էին ընտանի կենդանիների՝ հատկապես կատուների ու թռչունների նկատմամբ: Երկուսի կենսագրությունն էլ ժամանակ առ ժամանակ ենթարկվել էր ճակատագրական աղետների: Ծովում անձնա-սպան լինելու Եղիայի փորձերը հայտնի են բոլորին, սակայն Վենետիկի հանրահայտ միփթարյաններից Սիմոն Երեմյանը վկայակոչում է նաև Ղ.Ալիշանի հետ կատարված դեպքերը, որ լսել էր հենց նրանից: Հայր Ղևոնդը պատմել է, թե «Երիտասարդությանս ատեն դեռ հազիվ երկու տարի էր որ քահանա եղած, Ռափայելյան վարժարանը կգտնվեի. մի օր առանձինն հոս եկա. նույն ատեն հոս բոլորովին անմարդաբնակ անա-պատ էր, մտա ծով, լողալ չի գիտնալով, քիչ մնաց, որ պիտի խեղդվեի. և ահա զիս դիտող մարդ մը ծով նետվելով, եկավ զիս ազատեց»: Իր կենաց թելը կտրելու ուրիշ վտանգե մ'ալ ազատեր է մահվնեն չորս տարի առաջ,- շարունակում է Ս. Երեմյանը:- Մի օր, Վենետիկո դյուրասահ կամուրջ-

¹ **Իսահակյան Ավ.**, «Ղևոնդ Ալիշան», Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Եր., Հայաստան, 1974, էջ 217-218:

² **Ֆեներճեան Գ., Պետրոսեան Հր.**, Եղիա Տեմիրճիպաշեան, էջ 54-55:

ներեն անցնելու ատեն, վտանգավոր կերպով իյնալու վրա կ'ըլլա, ընթերակա անձինք շուտ մը կբռնեն զինքը»:¹

Արփ.Արփիարյանի վկայությամբ, Ալիշանը սովորություն ուներ բանաստեղծություն գրել հանպատրաստից, նույն միջոցին, թուղթի մը կտորի վրա»², ինչպես Եղիան: Գևորգ Բաշինջաղյանը հավաստում է, թե «մանկական անմեղություն է գրուած նրա դէմքի վրայ»³, իսկ ըստ Գր.Արծրունու՝ «Խօսելու և պատասխան ընդունելու ժամանակ նա անդադար կարմրում էր, ինչպէս մի օրիորդ կամ ինչպէս մի գերմանացի համեստ պրօֆեսօր...»⁴ հատկանիշներ, որոնք բազմիցս նշվել են նաև Եղիայի վերաբերյալ: Եվ դարձյալ՝ ինչպէս Ալիշանը, Եղիան նույնպէս՝ ի գնահատություն իր վաստակի, մի քանի ոսկե գրիչներ էր ստացել զանազան հեղինակավոր անձանցից ու կազմակերպություններից, նկարիչները՝ Գ. Բաշինջաղյանն ու Ֆեթվաճյանը, կերտել էին Ղ. Ալիշանի դիմանկարները, իսկ նկարիչ-քանդակագործ Հարություն Ճիվանյանը ոչ միայն Եղիա Տեմիրճիպաշյանի ծննդյան օրվա առթիվ նրա «ծննդյան ժամանակն ու վայրը» պատկերող մի նկար էր նվիրել, այլև «գողտրիկ նամակով» հաղորդել էր, որ «երագում է կերտել նրա մարմարիոնէ արձանը», ինչին Եղիան պատասխանել էր համեստորեն, թե նրա ուղարկած բնանկարն ավելի թանկ է, քան կլինէր իր «արձանը՝ վտիտ» մարմնով:⁵

Երկու նշանավոր դէմքերի միջև զուգահեռները մեզ տանում են մինչև իսկ դեպի առաջին հայացքից արտառոց թվացող հայացքների ու տեսակետների նմանությունները: Այսպէս. Հայր Բարսեղ Սարգիսյանն իր հուշերում պատմում է «թուրք և ռուս պատերազմէն երկու տարի վերջ»՝ Վենետիկ եկած մի դարաբաղցի զինվորականի մասին, որը, «հիշյալ պատերազմին մեջ երեք գնդակ ընդունած էր թշնամիէ ու երեքն ալ մարմնույն մեջը դէռ կպահէր, ըսելով, որ Տաճկի գնդակը հայի ոսկորին չի հասնիր»: Տեղ հասնելուն պէս, նա ուզում է տեսնել Հայր Ալիշանին: Հանդիպումը կայանում է, և «երբ ծերունի Նահապետը տեսավ, ծնրադրած անոր առջև՝ ստեպ-ստեպ ծունկերն ու ձեռքերը համբուրելէ չէր դադարէր: Կհուզվէր փոխադարձաբար նաև ալեգարդ Նահապետն, այդ քաջարի ու ջերմ գորականի անսովոր ցույցն և շուտով ձեռքէն բռնած՝ կբազմեցներ իր քովը»: «Հ. Ալիշան, այս ժամս, այս վայրկյանս ինձ համար անմոռանալի պիտի մնա, վասնզի չմեռած քեզ տեսա, և իմ ուխտը կատարվեցավ»,

¹ Երեմյան Ս., «Ղևոնդ Ալիշան», Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 132:

² Արփիարյան Ա., «Յոբէլեան Հ. Ղևոնդ Վարդապետ Ալիշանի», Արեւելք, 1890, թիւ 1903:

³ Բաշինջաղյան Գ., «Ս. Ղազար կղզին 1884 թվականին», Մշակ, 1902, թիւ 13, էջ 95:

⁴ Արծրունի Գր., «Վենեցիա», տե՛ս նշված հղումը:

⁵ «Հմայք», ԳԻՇ, 1883, Տետր Զ., էջ 118:

ոգևորված անընդհատ կրկնում է գորականը: Ու մինչ Նահապետն այդ նոր ժամանակաց Հայկակին ձեռքեն բռնած կհիշեցներ Սյունեցիներու դարևոր ու ժառանգական քաջասրտությունն և մատուցած ծառայությունը,- շարունակում է Բ. Սարգիսյանը,- նա կկոչեր իսկույն. Հ. Ալիշան, **Ձեր աղամանոցա գրիչը մեր պողպատյա թուրեն ավելի կարող և ազգօգուտ գործեր տեսել է:**¹ Եղիա Տեմիրճիպաշյանը ևս՝ գրական քննադատությանը նվիրված հոդվածներից մեկում կոչ անելով «գէթ նուա՞զ արհամարհել գրականութիւնն», իր այդ միտքը հաստատում է հին հունական պատմության մեջ հայտնի դրվագներից մեկի հիշատակումով. «Սպարտա՝ տագնապի մը ժամանակ՝ զօրավար մը խնդրեց Աթենքէն,- գրում է նա: - Աթինացիք՝ որք կը նախանձէին Սպարտացոց՝ զօրավարի տեղ բանաստեղծ մը յղեցին հեզնօրէն: Սակայն **բանաստեղծն ըրաւ՝ ինչ որ զօրավարն անկարօղ պիտ'ըլլար ընել գուցէ**»²:

Մխիթարյանների ազգաշահ գործունեության, մասնավորապես, Ղ. Ալիշանի անձի և գործի Ե. Տեմիրճիպաշյանի գնահատությանը հանդիպում ենք նրա խմբագրած հանդեսների շատ էջերում: Հ. Միմերը /Միմոն Երեմյան/ որպես ասվածի լավագույն օրինակներից մեկը վկայակոչում է Ե. Տեմիրճիպաշյանի գնահատականը Մխիթարյանների հրատարակած «Ծաղկաքաղ հատուածք»-ի 2-րդ հատորի առիթով. «Պիտանի գեղանի, հիանալի մատեան մ'է Ծաղկաքաղն, զոր կ'ընթեռնում առաւօտուն, զոր կ'ընթեռնում ամէն իրիկուն - և դեռ չեմ յագենար: Նոցա համար որք կը սիրեն Հայ լեզուն, նոցա համար որք կ'ապրին հոգեկան, իդէական կենօք, ի՞նչ ընտրագոյն, ի՞նչ գերագոյն մատեան քան Ծաղկաքաղի Քերթուածին»: Ահա թե ինչու, նաև կոչ էր անում «անպայման առնուլ զայն և ընթեռնուլ», քանզի այնտեղ հավաքված էր «բոլոր զգայուն, վեհագոյն հոգւոց մեղրն», Հոմերոսից մինչև Բայրոն. «Պաշտելի՞ մատեան, անթառամ ծաղիկ. գանձ իմ, լոյս իմ, զբօսանք իմ, սփոփա՞նք իմ – բացականչում է Եղիան,- սրտիս վրայ կը պահեմ ես յաւէտ Ծաղկաքաղն»³: Մեկ այլ տեղ՝ վերլուծելով բանաստեղծության անցած պատմական ճանապարհը, Եղիան այդ շարքում կարևոր հանգուցային դեր էր հատկացնում նաև Ղ. Ալիշանին: Ըստ նրա՝ «Հին խրոյին ձայնարկութիւններէն մինչեւ Գողթան երգերն եւ Ալիշան, Ափրիկեան հրոսախումբերու ճչերգերէն մինչեւ Բիկ-Վետայի ու Վեռլենի աղօթերգերն ու քերթուածները՝ բանաստեղծական խօսքը կը

¹ **Սարգիսյան Բ.**, «Ազգային առաջին բանաստեղծը», Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 161-162:

² «Գրադատութեան պակասութիւնն», ԳԻՇ, 1884, տետր երկուսասներորդ, էջ 229:

³ **Հ. Միմեր**, «Եղիա Տեմիրճիպաշեան», Ազգային դէմքեր /Գրագետ հայեր/, 1-10 շարքի 4-րդ շարք, Վենետիկ, Տպ. Ս.Ղազար, 1913, էջ 153-154:

զարգանայ»¹: Ինչ վերաբերում է ժամանակակից հայ բանաստեղծությանը, Ե. Տեմիրճիպաշյանը կարծում էր, որ «Ատեն ատեն Թերզեան կու գայ մէջտեղ մտնել Ալիշանին ու Դուրեանին, երբ սերն յաղթահարած է իր արուեստագետի հզօր կամքն եւ երբ ցնորքն իր շուրջ կը պտտցնէ մահուն գրեթէ թանձրացեալ ստուերներ»²: Բայց դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ **«Ի ծննդէնէ մեր ամենէն իսկապէս անձնական եւ անկախ բանաստեղծն՝ Ալիշան»** հազիւ անձնական խազը կը յաջողի թմրեցնել քրիստոնէական անանձնականութեան ներքեւ, զոր սքեմն իրեն վրայ պարտ կը դնէ եւ զոր իր հոգին ընդգրկած է յօժարակամ»³:

Ասիական ընկերության 1887թ. հանդեսներից մեկում Եղիա Տեմիրճիպաշյանը ելույթ է ունենում հիվանդության պատճառով բացակայող Կարապետ Գարագաշի փոխարեն: Նրա ելույթը, ինչպես միշտ, լավ է ընդունվում, բայց քանի որ շատերը պատրաստվել էին լսելու հայտարարված և սիրված բանախոսին, «կը հարցնէին ինքնին թէ ինչ պիտի խօսէր, ի՞նչպէս պիտի խօսէր արդեօք Գարագաշ էֆէնտին, եւ թէ ո՞վ էր այն Հայ բանաստեղծն ոյր վրայ պիտի բանախօսէր»: Ոմանք ենթադրում էին, թէ Թովմաս Թերզյանը պիտի լինէր, որ «Ռաֆայէլեան վարժարանի փառքն էր, որ բանաստեղծ էր դիմօք՝ որպէս բանաստեղծ էր սրտով ու հանճարով»: Բայց նաև **«հանդիսականաց աչքերն աւելի հեռուն կ'երթային, վկայում է Ե. Տեմիրճիպաշյանը, ի Վենետիկ, ի Վանս Ս. Ղազարու, ի խուցն առանձնակ՝ յորում Աստուծոյ եւ իր հանճարոյն հետ կ'ապրի վսեմափառն Ալիշան»**: Ավելի ուշ հայտնի է դառնում, որ, իրոք, Կ. Գարագաշի՝ նաև հետագայում առանձին գրքույկով հրատարակված բանախոսության նյութն է եղել **«Հումեր, Միլտոն, Ալիշան»**⁴:

Հատկանշական է նաև այն, որ «Կատուի մը յիշագիրք»-ում, դիմելով «պատուական Հայր Սրուանձտեանցին», Եղիան **«Արեւելից Ալիշա՛ն»** է անվանում նրան և ապա՝ իր խորին մտահոգությունն արտահայտելով ազգային արժեքների աստիճանական անտեսման, օտարամոլության ծավալման վերաբերյալ, կոչ անում **«լեզո՜ւ տալ»** քարերին ու «թներ» սարերին: **«Հերի՛ք լսեցինք ու կարդացինք օտարին վեպերն, բացականչում է նա, - Հայկական նամականի՞ք՝ մոռցանք. Մոռցան Հայք՝ Աբովեանն եւ իր Վերքերն. Օ՛ն, ըզմեզ բուժէ մեր օտարամոլութենէն՝ այն բոյսերով ու**

¹ **Տեմիրճիպաշյան Ե.**, «Անգեղն երգ», Եր., Սարգիս Խաչենց . Փրինթինգտոն, 2015, էջ 5:

² Նույն տեղում, էջ 13:

³ Նույն տեղում, էջ 12:

⁴ **Ե.**, «Լսարան Ասիական ընկերութեան», Երկրագունտ, 1887, թիւ 5-6, էջ 169-170:

⁵ Նկատի ունի Մ.Մամուրյանի «Հայկական նամականի» /1872/ հրապարակախոսական երկը:

բժշկութեան ջուրերով, զորս հայրենի դաշտք եւ աղբերակք մատուցին Քեզ, տանելու համար տարաբնակ ու տարասէր հայրենակցացդ»:¹ «Ապերջանիկ Երանիկ» նորավեպում վկայում է, որ Երանիկը, իր սիրելի մոր մահվանից հետո, հազվադեպ էր մոտենում դաշնակին, այն էլ «միայն եղերերգական եղանակներ ածելու համար գրեաց մէջէն ալ Աստուածաշունչն եւ Ալիշանն եւեթ ձեռք կ'առնէր...»:²

1884-ի սկզբին, «Գրական եւ իմաստասիրական շարժում»-ի հետ մեկտեղ, ստանձնելով նաև «Երկրագունտ»-ի խմբագրապետությունը, Ե. Տեմիրճիպաշյանը կարճ ժամկետում կարողացել էր այդ հանդեսի շուրջը համախմբել աշխարհի զանազան ծայրերում ստեղծագործող հայության ամենակարող ուժերին: Եվ շատ էր ավստսում, որ այդ ցանկում չկային հանդեսի «խմբագրական մարմինէն արտաքոյ գտնուող գրական երբեակ ամենամեծ անձնաւորութիւնք, Ալիշան, Այտընեան, Մամուրեան»: Պատճառն այն էր, որ նրանք «իրենց յատուկ Հանդէսներն ունին՝ որոնցմէ դուրս չեն երեւիր այլ միայն առանձին երկասիրութեանց մէջ»:³

Եղիա Տեմիրճիպաշյանն, իհարկէ, չէր կիսում Մխիթարյանների բոլոր հայացքներն ու տեսակետները: Մանավանդ լեզվի հարցերում: Հայտնի է, որ 19-րդ դարի 70-ական թվականների կեսերին սկիզբ առած լեզվապայքարում նա հաստատակամորեն կանգնել էր աշխարհաբարի պաշտպանության դիրքերում: Իհարկէ, դա նաև ժամանակի պահանջն էր: Կ.Պոլսում կային արդեն Եվրոպայում, մասնավորապես, Ֆրանսիայում ուսում առած, 1848 թվականի ֆրանսիական հեղափոխության շնչով ու գաղափարներով տոգորված մի շարք մտավորական գործիչներ /Գրիգոր Օտյան, Նահապետ Ռուսինյան, Գրիգոր Աղաթոն ևն/, որոնց ներկայությունն ու բանավոր և գրավոր ելույթները որոշակի մթնոլորտ էին ստեղծում և, շուրջ մեկ տասնամյակ անց, ինչպես արձանագրում է Ե. Տեմիրճիպաշյանի կենսագիրներից Գեղամ Ֆեներճյանը, «60ի թուականը նոր շրջան մը կը բանայ» արևմտահայ իրականության մեջ:⁴ Այդ նոր ոգին, ըստ Ե. Տեմիրճիպաշյանի, դրսևորվում էր գլխավորապես ազգային-կրոնական, կրթական, գիտական, գրական-մշակութային ոլորտներում: «Կոչեցեալ երիտասարդ եկեղեցական մը, բարձրաշնորհ Ներսէս Վարժապետյանը՝ Վարժապետութիւնն ու «սրբազան բեմբասացութիւնն» բարձրացնելուց հետո, ջանում էր «բարձրագոյն դրից վերածել» նաև Հայոց Պատրիարքարանը, «երիտասարդագոյն դաստիարակ մը»՝ Մինաս Զե-

¹ «Կատուի մը յիշագիրք», ԳԻՇ, 1884, տետր եօթներորդ, էջ 138:

² «Ապերջանիկ Երանիկ», ԳԻՇ, 1884, տետր վեցերորդ, էջ 109:

³ **Խմբ.**, «Փոփոխութիւնք մամլոյ մէջ», Երկրագունտ, 1887, թիւ 9-10, էջ 544:

⁴ **Ֆեներճեան Գ., Պետրոսեան Հր.**, Եղիա Տեմիրճիպաշեան..., էջ 84:

րագր, իր «Ազգային դաստիարակություն»՝ «նշանաւոր» ու «փառաւոր» մատյանով հավակնում էր նորոգել ազգային լեզուն, ազգային գրականությունն ու ազգային դաստիարակությունը, իր «պանծալի հայրենակից ու դասակից» Ռեթեոս Պերպերյանը՝ Հակոբ Գուրգենի հետ, ձեռնարկում էր «նոր եւ աշխարհիկ ուղղություն մը տալ ազգային կրթութեան», Մամուրյանի և Իփեքճյանի շնորհիվ, հայ երիտասարդությունը ծանոթանում էր «մանկավարժական կենսաւետ սկզբանց»:

Ինչ վերաբերում է Վենետիկի Մխիթարյան Միաբանությանը, ապա 1887 թվականին Աբբահայր Իգնատիոս Արքեպիսկոպոսի՝ Կ. Պոլիս այցելության կապակցությամբ, Ե. Տեմիրճիպաշյանն այն կարծիքն է արտահայտում, թե «Վենետիկյ վանքին վրայ կը տարբերին յաւէտ կարծիք. ըստ ոմանց, այդ հաստատութիւնն՝ իր առատ ու կրնայ ըստիլ առասպելական հասոյթներով՝ գրեթէ ոչինչ ըրած է Հայութեան համար. ըստ այլոց, եթէ Վենետիկ չըլլար, իսպառ կորսուած էր այսօր Հայ գրականութիւնն, Հայութիւնն իսկ»: Բնականաբար, որպէս գրող, խմբագիր և պարզապէս մտավորական, նա պետք է հայտնէր նաև ի՞ր տեսակետը այդ առթիվ, որը ձևակերպում է հետևյալ կերպ. **«Մենք Մխիթարեանց գործին վրայ խօսելով - և ստէպ խօսած ենք - ճանչցած ենք յաւէտ այդ գործոյն կարեւորութիւնն ու վեհութիւնն. Այլ ցաւ յայտնած ենք միանգամայն թէ Մխիթարեանք կը նսեմանան, թէ ժամանակին չեն հետեւիր բաւական»:** Իսկ ժամանակին չհետևելու դրսևորումներից մեկը գրաբար – աշխարհաբար բանավեճում ավանդական գրաբարին հետևելու կողմնորոշումն էր: **«Ես, որ գիտեմ ի՞նչ կ'արժեն Մխիթարեանք, ես որ կը սիրեմ զՄխիթարեանս»**, գրում է Եղիան, ճիշտ կլինէր, որ նրանք լուրջ նկատողության առնէին իր նման սրտացավ ընդդիմախոսների կարծիքները և հետևէին ժամանակի պահանջներին, որով Մխիթարյան Միաբանությունը՝ «չունենալով այլ եւս մեծ ինչ առնել գրաբարի շրջանակին մէջ, պիտի վերստանար իր նախկին դիրքն՝ ազգային կրթութեան և արդի գրականութեան զոհելով իր նիւթական ու բարոյական անսպառ գանձերն»:¹ Ընդ որում, ուշագրավ է, որ ժամանակին համահնչունության հարցում ևս Ե. Տեմիրճիպաշյանն առանձնացնում էր Ղ.Ալիշանին: Անդրադառնալով, օրինակ, Ն.Բյուզանդացու «Բառգիրք գաղղիերէն լեզուէ ի հայերէն» ընդարձակ բառարանի վերաբերյալ Մեսրոպ Նուպարյանի քննախոսությանը, նկատում է, թե «Անտարակոյս ըսել չենք ուզեր թէ մարդ՝ Նորայրեան բառարանի սխալներն ընթեռնելէ յետոյ՝ պիտի նկատէ Պ. Նորայրն իբրեւ տգէտ կրկին լեզուաց, եւ պիտի նկատէ իւր բառագիրքն իբրեւ անարժէք աշխատութիւն. Երբեք: Միայն թէ պիտի փափագի // որ Մխիթարեանք, եթէ ճշմարիտ գրագետներ

¹ Ե., «Վենետիկ», Երկրագունտ, 1887, թիւ 11-12, էջ 509 -510:

են՝ որպէս կը յաւակնին ըլլալ, ծանօթանան, հետեւին Վանքէն դուրս տեղի ունեցած գրական շարժման, մանաւանդ զի՝ **Եթէ բացառենք Ալիշանն՝** այսօր Վանքէն դուրս տեղի կ'ունենայ գրական շարժումն: Եւ այս ծանօթութիւնն իրենց յոյժ շահաւէտ պիտ'ըլլայ»:¹ Ի դեպ, արդի հայերենի հարցում Ղ. Ալիշանն իր տեսակետը հայտնել էր հենց Մինաս Չերազին՝ «Ազգային դաստիարակութիւն» աշխատության կապակցությամբ նրան ուղղած նամակում. «Արդէն *Գրական փորձեր*էդ փորձեր և հաճեր էի հանճարոյդ, զոր նոյնպէս հաստատէ և *Ազգային դաստիարակութիւն*էդ և յասեցուցանէ ապագայ իմաստալից և ճարտասան գրութիւններ ալ,- գրում է նա: - Զայս այսպէս կարծեմ անկեղծաբար և նովին անկեղծութեամբ ալ կ'ըսեմ, որ քերականական լեզուիդ չեմ հաւան յամենայնի: Գլխաւորաբար մեր լեզուին յատուկ յոգնաձայն բառերն եզակի ընելուդ, և զամեն սեռական հոլով փոխելուդ *ի* զոր օրինակ փոխանակ *մտաց՝ միտի* ըսելուդ, *Աստուածի*, և այլն: Չեմ ուզեր նաև այն յորձանապտոյտ գրաբարի և աշխարհաբարի խնդրոյն մէջ մտնել զի երկու կողմն ալ փաստեր ունին և թէ մէկն միայն զառաջինն ուզէ ընդունիլ՝ թուի թէ անբնական կ'ըլլայ, իսկ թէ միայն զերկրորդն՝ և այս ինձ թուի անբնական: **Հարկ է երկուքին ալ տեղ մը և չափ մը սահմանել և կարծեմ խնդիրն այս բանիս վրայ պիտի մնայ»:**²

Ընդդիմախոսները Եղիա Տեմիրճիպաշյանին հաճախակի էին քննադատում ինչպէս իր նկատմամբ գովեստներ սպասելու, այնպէս էլ գովեստներ շոայլելու մեջ: Եվ նա փորձում էր նման մեղադրանքներից «պաշտպանվել» երբեմն նաև իրական մեծերի՝ մասնավորապէս, Հայր Ալիշանի օգնությամբ: «Եւ միթէ յանցա՞նք է գովել՝ գովելին, - հակադարձում էր Եղիան,- եւ միթէ բանաստեղծք այնքա՞ն հասարակ էակներ են. Հոմերոս բանաստեղծ էր. **Ալիշան բանաստեղծ է.** Խրիմեան ու Նար-Պէյ բանաստեղծ են. Օտեան ու Պէշկըշաշլեան բանաստեղծ էին. եւ ունինք այսօր Պէշկըշաշլեաններ, որք կ'երգեն *Երկրագունտի* մէջ»:³ Այս տեսակետից հատկանշական է նաև Հ. Միմերի մի դիտարկումը, ըստ որի «*Առ Թովմաս էֆ. Թէրզեան*» քերթվածում Տեմիրճիպաշեանը «կ'ուրուագրէ վարժապետ քերթողին հոգեկան կարողութիւնը, նախանձի խնդիր չկայ. գովեստ առնողն ալ և տուողն ալ հաւասարապէս քնարասէր սիրուած գրական գործիչներ են: Տեմիրճիպաշեան գրագիտական աւելի գործունէութիւն է ունեցած, և սակայն Թէրզեանի վրայ կը հիանայ: Տգէտները միայն հիացում չունին, իրենց անպատուութիւն կը համարին ուրիշին

¹ Ե., «Նորայրեան բառարանի սխալները», Երկրագունտ, 1886, թիւ 8, էջ 365:

² Տես՝ Արեւելեան մամուլ, Զմյուռնիա, 1877, թիւ 5, էջ 178-179:

³ Ե., «Մեր պարբերական մամուլը», Երկրագունտ, 1888, թիւ 6, էջ 281:

գովեստ տալը և գովելին գովելը»: Սակայն այդ ամենից հետո կարևոր է նրա այն շեշտադրումը, թե «Քերթողը՝ զայն սիրելու համար, ունի ուրիշ պատճառ, զի **Թերզեան Ալիշանին աշակերտած էր**»:¹ Հ. Միմերի այդ հոդվածը արժեքավոր է նաև նրանով, որ հեղինակը որոշակի համեմատականներ է անցկացնում Եղիա Տեմիրճիպաշյանի ու Ղևոնդ Ալիշանի ստեղծագործության՝ մտածողության, լեզվառճական առանձնահատկությունների միջև: Ըստ նրա՝ «**Բառախաղերով քանաստեղծ է Տեմիրճիպաշեան և ինչպես Հ. Ալիշան** ու Սրբ. Սրուանձտեանց, այսպես և ինքը բառերու ճարտար կիսուածումով, **նկարէն արձակ մը կը ստեղծէ**»:²

Եղիա Տեմիրճիպաշյանի համար միանգամայն ընդունելի մոտեցում էր դա, քանի որ ինքը ևս քանաստեղծի իր խառնվածքն ու մտածողությունը արտացոլող որոշ քերթվածներ ձոնում էր Ղևոնդ Ալիշանին և կամ դրանց համար բնաբան ընտրում նրա տողերը: «Նորածինն /Առ Նառինա/» քանաստեղծությունն, օրինակ, իբրև բնաբան ունի Ալիշանի «Ընդ եղևնեա» աշխատության հետևյալ տողերը՝ «Ողջո՞յն եւ քեզ, ո՛վ հրեշտակ...: Մի՛ վրդովիր եթէ սիրտ մի աղմըկեալ եւ հոգի հոգած՝ սպրդեալ կայցէ յանքոյթ հանգրուանս քո...»: Ի դեպ, քանաստեղծ Տիգրան Մեթյանի վկայությամբ, Եղիան այդ քերթվածը գրել է՝ «**Ալիշանէն ներշնչեալ՝** երբ աղմկեալ սրտիւ և հոգած հոգւով,- գրում է նա,- կը մարգարեանայի՜ր առ Նառինա՝ իւր նորածին Հրանոյշին բախտն ու ապագայն և չէի՜ր մոռնար ողբալ հոն և մեր դժբա՛խտ Դուրեանն»:³ Իսկ բովանդակությունն այն է, որ արձագանքելով Նառինայի խնդրանքին՝ «Տա՛ղ, տա՛ղ, Եղի՛ս // Տա՛ղ ի վերայ նորափրթիթ Նառիկիս», Եղիան խոստովանում է, որ «նորեկին տեսն» արթնացրել է իր մեջ իր կյանքի հուշերը, լույսն ու նաև մութը, որ իր ուղեկիցն է եղել միշտ: Բայց ազգի ու հայրենիքի սերը, նվիրումը դրդել են իրեն ապրելու և մաքառելու: Եվ հավատացած է, որ երբ Նառինայի մանկիկը մեծանա՝

*Պիտի հայցէ յինէ ձայնիւ սըրտախօ՜ւ.
«Եղիա՛, պատմէ կեանքդ ինձ, եւ կեանքն իմ հայոցս,
Մի՛ զանց առնէր եղերական դիպաց շարն.
Զի՛ զհտեմ՝ յոյժ տառապած էք դուն եւ հա՛յն»:
Վիպացս յաւարտ պիտի գոչէ կոյսն. «Եղիա՜ս,
Միրեմ ե՛ւ իս զքեզ, նրւիրեմ գանձս ազգիս լ՛անձս.
Ո՛վ առաքեալ, կամիմ ընդ քեզ յածիլ ո՛ւր*

¹ Հ. Միմեր, «Եղիա Տեմիրճիպաշեան», Ազգային դէմքեր, էջ 121:

² Նույն տեղում, էջ 29-30:

³ Մեթեան Տ., «Ներշնչումնք /Առ Պ. Եղիա Տեմիրճիպաշեան/», Կ. Պոլիս, 1884, էջ 3:

Հայ կայ, սրփռել հոն լոյս առատ ու սուրբ հոփիւ»։¹

«ԺԸ դարն» և «Մէրք իմ» քերթվածները ձոնված են Հայր Ղեւոնդ Ալիշանին։ Տասնմեկ տներից բաղկացած «Մէրք իմ» բանաստեղծությունն ունի նաև Սաղմոսից քաղված բնաբան՝ «Եղից զարտասուս իմ առաջի քո, որպէս խոստացար դու ինձ»։ Եղիան խոստովանում է, որ իր ներաշխարհին առավել հոգեհարազատ են մարդու և բնության ոչ թե հախուռն, ներգործուն, այլ փափուկ, մեղմ, ստվերային տոներն ու գոյները.

*Ի լուսաւորս ես ոչ սիրեմ զբոց արեւ,
Որ անցանէ թափ ըստուերաց եւ գաղտնեաց.
Այլ լուսնակն հեզ որ՝ անճաճանչ եւ անթեւ՝
Ընթանայ յամր, նիհար, ըսքօղ, ամօթլեա՜ծ։*

Եվ ապա՝

*Ի կոհակունս անհուն ծովուն ո՛չ սիրեմ՝
Զայն՝ որ նաւուց վրայ խուժէ մոփի, ահագին.
Այլ գերագո՛ւն ալեակ մաքուր, մանր ու մեղմ,
Որ զկուսին լանջ թանայ, գոտս եւ տաճարին՝²*

Ավելորդ է ասել, որ նման տրամադրություններն ու մտորումները, մեղմ ասած, խորթ չէին նաև Հայր Ղեւոնդ Ալիշանի մարդկային ու ստեղծագործական էությանը։

Ընդհանրապէս, Հայր Ղեւոնդ Ալիշանին հայ գրական մեծերի կողմից տրված բնորոշումների ու գնահատականների մի զգալի մասը առանց վերապահության կարելի է վերագրել նաև Եղիա Տեմիրճիպաշյանին։ Բերենք դրանցից մի քանիսը։ «Ալիշանի աշխարհաբարը կարդալով մարդ կը զարմանայ թէ ինչպէս կարելի եղած է վանքի մը մէջ գրել գոյնով, ոգեւորութեամբ, կեանքով զեղուն այն աշխարհաբարը, որ թեպէտ քիչ մը տարբեր խօսուածէն՝ սակայն դարձեալ այնքան դիւրընդել է եւ ներդաշնակ...» /Գառնիկ Ֆնտքլեան/³ «Վախ կունենա՞յ մահէն մարդ մը, որ իր բոլոր կեանքը նուիրած է բարիք ընելու, կատարելապէս առաքինի եղած է, բարի, ազնիւ, անձնուէր։ Վախ կունենա՞յ մահէն մարդ մը, որ խորապէս համոզուած է, թէ հաւիտենականութիւն կայ»։ Եվ ապա՝ «Ինձ այնպէս կը թուի, որ հ. Ալիշան եթէ խորապէս հաւատացեալ մը չըլլար, գուցէ ամենամեծ թերահաւատ մը ըլլար. իր մտքին համար միջին

¹ Տե՛ս ԳԻՇ, 1884, տետր հինգերորդ, էջ 97-99:

² Տե՛ս ԳԻՇ, 1884, տետր ութերորդ, էջ 158:

³ **Ֆնտքլեան Գ.**, «Արեւմտեան աշխարհաբարին ընթացքը դարուս մէջ», Մասիս, 1892, թիւ 3967, էջ 196:

ճանապարհ չկա: Շատ կը կասկածիմ, որ մինչև հիմա ալ երբեմն փորձութիւններ կունենա չը հաւատալու և այդ փորձանքն անցնելու համար ամէն ուժովը կը փարի կրօնքին» /Արփիար Արփիարյան/¹ «Կարելի է Ալիշանի պէս ջերմ, նոյն իսկ մոլեռանդ կերպով սիրել իր կրօնը, բայց մի և նոյն ժամանակ պէտք է Ալիշանից օրինակ առնել, թէ դէպի ուրիշ դաւանութիւնները նրա ունեցած լայն համբերողական ոգուց և թէ հայրենասիրութեան նրա անսահման և անձնուէր զգացմունքից...» /Գրիգոր Արծրունի/² «Հայր Ալիշանը, նրա ոտները իրական երկրի վրա էին, իսկ գլուխը հինգերորդ դարում, երազների մեջ» /Ավետիք Իսահակյան/³

Հայտնի է, որ Ե. Տեմիրճիպաշյանը մեծ սեր ու համբավ է վայելել ժամանակակիցների շրջանում: «Ժամանակի ոչ մի գրող այնպիսի խանդավառ համակրանք չի վայելել, չի ծափահարվել այնքան խելահեղորեն, ինչպէս Եղիա Տեմիրճիպաշյանը: Մեծ համբավ ուներ և զավառներում, շատերը Եղիա էին դնում իրենց զավակների անունը», գրում է Ստեփան Թոփչյանը:⁴ Նույնն էր նաև Ղ. Ալիշանի պարագան: Իսկ ո՞րն էր «ամբողջ ազգի մը սիրտը դիւթելու» բուն պատճառը: Փորձելով պատասխանել կարևորագույն այդ հարցին, Վենետիկի Մխիթարյաններից Հովհաննես Թորոսյանը նշում է՝ «**առաքինություն և ուսումն. անոր բոլոր կյանքը այդ երկու բառերուն ներդաշնակ միությունն եղավ:** Չգիտեմ, ժամանակին հա՞րգն էր, որ ինքը մենավոր և լռասեր ըրավ, թե՞ յուր մենասիրությունն էր, որով գիտցավ ժամանակին հարգը և զայն շահեցնելու հնարքը: Գիրքը և գրիչը դյուրական ազդեցություն մ'ունեին վրան և կմոռանար ամեն բան...»:⁵

Ժամանակակիցներից շատերն են նշել Ղ. Ալիշանի բացառիկ համեստությունը՝ հատկապես իր կատարած աշխատանքի գնահատության հարցում: Նիկողայոս Քարամյանը հիշատակում է Իտալիայի թագուհու գովասանքներին հայր Ղևոնդի տված պատասխանը, թե «իւր աշխատանքը մի փոքրիկ գործ է, այնքան փոքրիկ, որ մրջիւններն էլ կարող էին անել, որովհետև ինքը մրջնանց նման միայն հավաքել է և կուտակել»:⁶ Այդ կապակցությամբ, սակայն, Սիմոն Երեմյանը նկատում է, թե «Հ. Ալիշանի համար հավաքիչ ըսելով չենք կարող նսեմացնել իր ոսկեդրվագ մատենագրական անհուն գործերուն հմտությունը. եղան խեցքեկ գրիչ-

¹ Արփիարյան Ա., «Հ. Ղևոնդ Վ. Ալիշան», Հայրենիք, 1892, թիւ 117:

² Արծրունի Գր., Վենետիկա ..., տես՝ նշված հղումը:

³ Իսահակյան Ավ., «Ղևոնդ Ալիշան», էջ 218:

⁴ Թոփչյան Ս., Կերպ և իսկություն, Եր., Սովետ. գրող, 1987, էջ 10:

⁵ Թորոսյան Հովհ., «Հ. Ղևոնդ Ալիշան», Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 104:

⁶ Քարամյան Ն., «Ղևոնդ Ալիշան», Արձագանք, Թիֆլիս, 1890, թիւ 11:

ներ, որ իր հսկա գործերուն վրայեն նախանձի արհամարհոտ թույն մը փչեցին. սակայն հոյակապ հեղինակը անվրդով մնաց, և պատասխանեց. Չհավանողը լավագույնը թող ցույց տա»:¹

Ավ. Իսահակյանը նա պատմում է, որ իր Վենետիկում եղած ժամանակ, Պետերբուրգի հայ ուսանողների մի խմբակից նամակ է ստացել՝ ժամանակակից հայ անվանի մարդկանց կենսագրությունները գրելու իրենց նախաձեռնության համար Ղ.Ալիշանից կենսագրական տեղեկություններ, փաստեր, դրվագներ գրի առնելու խնդրանքով: Բայց երբ նա այդ «նամակով զինված» գնում է Հայր Ալիշանի մոտ, վերջինս հեզմանքով ասում է. «Այդ ի՞նչ ծանր քար են դրած քո մեջքին: Վախեցա՞ր. գրելիք բան մը չկա: Ես կենսագրություն չունիմ: // քանի մը գրքեր եմ գրած: Ուրիշ ալ ըսելիք չունիմ: - Գրքե-գիրք՝ ատ է եղած իմ ճամփան»:² Կամ, ինչպես դարձյալ վկայում է Գր. Արծրունին՝ «Ալիշանին միաբանութիւնը մի քանի անգամ էր առաջարկել աբբահօր պաշտօնը,- սակայն նա երբէք չընդունեց այդ պատասխանատու պաշտօնը, նախապատուելով զբաղվել իր գրքերով ու դպրոցով, գրական աշխատութիւններով ու մանկավարժութեամբ»:³

Բնորոշ է նաև այն, որ ժամանակակից գրողներից ոմանք Եղիա Տեմիրճիպաշյանին ձոնած իրենց քերթվածների համար իբրև բնաբան էին ընտրում Ղ. Ալիշանի տողերից:⁴

Վերջապես, բերենք նաև Էդ. Սիմքեշյանի ամփոփ ու ճշգրիտ գնահատականը, ըստ որի «Իրողութիւն է որ **Ալիշան չի պարփակուիր ընթացիկ չափանիշերու մէջ**, եւ քննադատական մեղանչում մը պիտի ըլլար իր անհատականութիւնը շփոթել լոկ բանաստեղծի մը, մատենագիրի մը, բանահաւաքի մը հետ: **Ան կը փշրէ այդ կապանքները: // Ալիշան ոգի մըն է մեր դպրութեան մէջ...**»:⁵ Գնահատական, որ, թերևս, նույնությամբ կարելի է վերաբերել նաև Եղիա Տեմիրճիպաշյանին:

¹ Երեմյան Ս., «Ղևոնդ Ալիշան», էջ 121:

² Իսահակյան Ավ., «Ղևոնդ Ալիշան», էջ 221:

³ Արծրունի Գր., Վենեցիա..., տես՝ նշված հղումը:

⁴ Տես, Սեթեան Յ., «Նիրվանա /Առ Եղիա Տեմիրճիպաշեան/», Երկրագունտ, 1887, թիւ 5-6, էջ 222:

⁵ Սիմքեշեան Էդ., «Ղևոնդ Ալիշան», Ջահակիրները, Ա հատոր, Իսթանպուլ, 1973, էջ15:

ПЕТРОС ДЕМИРЧЯН
Доктор филологических наук

РЕЗЮМЕ

**“ДЛЯ ВСЕХ НАС ТОЖЕ ОН БОЛЬШОЙ МАСТЕР И НААРЕТ:
ОТЕЦ ГЕВОНД АЛИШАН...”**
(Егия Темирчипашян об Гевонд Алишане)

Ключевые слова: Гевонд Алишан, Егия Темирчипашян, Грасер Атом, Мшак, Венеция, Св. Лазарь, Конгрегация мхитаристов, монастырь, Наапет, патриот, педагог, поэт, филолог, летописец.

Очень много написано и сказано об отце Гевонд Алишане, опубликовано много мемуаров, статей, научных трудов, но при этом как-то игнорировалось присутствие и голос другого великого явления нашей литературно-культурной и просветительской жизни, Егия Темирчипашяна. Правда, Темирчипашян не написал более или менее полную статью, посвященную жизни и деятельности Наапета, но его мнения, взгляды и оценки об одном из величайших национальных деятелей своего времени разбросаны в его многочисленных и разнообразных литературных и публичных выступлениях, в печати того времени.

Егия Темирчипашян признался, что часто захотел увидеть Венецию, остров Святого Лазаря, где возродились армянский язык и литература». К сожалению, он не смог выполнить это желание, но всю свою жизнь сохранил в своем сердце любовь и почтение к этому знаменитому очагу, в частности, к отцу Гевонд Алишану. Высокую оценку Темирчипашяна национально полезной деятельности мхитаристов, личности и деятельности Г. Алишана мы находим на многих страницах изданных им и других журналов. Один из лучших примеров сказанного - его оценка второго тома Цах-каках», изданной мхитаристами : Цахкаках – полезная и прекрасная, замечательная книга, которую я читаю утром, которую читаю каждый вечер - я еще не удовлетворен».

PETROS DEMIRCHYAN
Doctor of Philology

ABSTRACT

**THE GREAT MASTER AND ANCESTOR OF ALL OF US: FATHER
GHEVOND ALISHAN (YEGHIA TEMIRTCHIPASHYAN ABOUT
GHEVOND ALISHAN)**

Keywords: H . Ghevond Alishan, Yeghia Temirtchipashyan, Grasser Atom, Mshak, Venice, St. Lazarus, Mekhitarist Congregation, monastery, ancestor, patriot, teacher, poet, philologist, philologist, bibliographer.

Much has been written and told about Hayr Ghevond Alishan, many memoirs, articles, extensive works have been published, however, in a way, the presence and voice of Yeghia Temirtchipashyan, another great figure of our literary-cultural-educational life, was

ignored. It is true, Temirtchipashyan did not write a more or less complete article dedicated to the life and work of the Ancesor. However, his opinions, views and assessments of one of the greatest national appreciators of his time are scattered in his numerous and varied literary and public speeches, in the press pages of the time.

Yeghia confessed that he had often tried to see Venice, St. Lazarus Island, where the Armenian language and literature were revived. Unfortunately, he could not fulfill this desire, but all his life he kept the love and respect of this famous hearth in his heart, in particular, to Hayr Ghevond Alishan.. We find Ye. Temirtchipashyan's assessment to Mekhitarist activities, Gh. Alishan's personality and works on many pages of other journals published by him. One of the best examples of what was said is his assessment of the second volume of "Tsaghkakagh section", published by the Mekhitarists "'Tsakhkakakh" is a wonderful book which I read in the morning, which I read every evening but I am not satisfied yet."

REFERENCE

1. Fenerc'yan G., Petrosyan Hr., Ye'gh'ia Temirc''ipash'yan /Ir kyanqə yev'gorc'ə/, K. Polis, 1921/**In Armenian**/
2. Asatur Hr., Dimastverner, K. Polis, 1921/**In Armenian**/
3. Ch'eraz M., Kensagrakan myusionner, Ambogh'akan ye'rker, tiv G, P'ariz, 1929/**In Armenian**/
4. Ch'opanyan A., Ye'rker, Ye'revan, 1988/**In Armenian**/
5. H. Simer, Azgayin demqer /Graget hayer/, Venetik, 1913/**In Armenian**/
6. Temirc''ipash'yan Ye'., Angegh'n erg, Ye'revan, 2015/**In Armenian**/
7. Setyan T., Nersh'nch'munq /Ar' P. Ye'gh'ia Temirc''ipash'yan/, K. Polis, 1884/**In Armenian**/
8. Top'c'yan St., Kerp ye'v iskutun, Ye'revan, 1987/**In Armenian**/
9. Simqesh'yan Ed., Jahakirnerə, A hator, Istanbul, 1973/**In Armenian**/
10. "Alish'anə zh'amanakakicneri hush'erum, Ye'revan, 1974/**In Armenian**/
11. Handesner:

Grakan ye'v imastasirakan sh'arzh'um /K. Polis/, Ye'rkragunt /K. Polis/, Hajreniq /K. Polis/, Arevelq /K. Polis/, Masis /K. Polis/, Arevelyan mamul /Zmur'nia/, Msh'ak /Tiflis/, Ardz'aganq /Tiflis/ **In Armenian**/

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ

Բանալի բառեր՝ Պոլսի մխիթարյան վարժարաններ, Վենետիկի Մխիթարյան միաբանություն, Մուրադ-Ռաֆայելյան վարժարան, գրական ավանդներ, մշակույթ, հայրենիքի ոգի, «Նահապետի երգեր», «Ալիշանի շիրմին առջև», սիրո և գնահատանքի վկայություններ:

Ինչպե՞ս վերնագրել Ղևոնդ Ալիշան և Դանիել Վարուժան առնչակցության իմ այս դիտարկումը. աղերսնե՞ր, հիացում ու պաշտամունք առ մեծահամբավ բանաստեղծն ու գիտնականը վենետիկյան Մխիթարյան միաբանության, սանի՝ բանաստեղծ ուսուցչի նկատմամբ սիրո դրսևորում, թե՞ գիտակից գնահատանք՝ ոչ թե պատեհ առիթով ասված, այլ մշտապես՝ դպրոցական տարիներից մինչև գրեթե կյանքի վերջ խոսքով ու գործով հաստատված իրողության վկայություն:

Եվ վկայության չորս դրվագ պիտի առանձնացնեմ՝ 1902-ից մինչև 1913 թվականների մեջ:

Հայտնի է, որ Դանիել Չպուգքյարյանն իր դպրոցական ամբողջ կրթությունը ստացել է մխիթարյան դպրոցներում: Սկզբնապես՝ 1896-98 թթ. սովորել է Պոլսի Սազըզ-աղաճի թաղի մխիթարյան երկամյա նախակրթարանում, 1898թ. տեղափոխվել է Գատըգյուղի մխիթարյան գիշերօթիկ վարժարան /3-րդ դասարան/, 1902-ին ավարտել է այդ դպրոցի քառամյա՝ քերականական կարգը (Գ-Ձ դասարաններ), ապա՝ վարժարանի տնօրեն Արիստակես Քասգանտիլյանի միջնորդությամբ կրթությունը շարունակել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, որի լրիվ դասընթացը ավարտել է 1905թ: Եվ ահա **առաջին դրվագ-վկայությունը**: 1902թ.: Ծնրադրություն Ալիշանի շիրմին և «Բանաստեղծի մահը» խորագրով բանաստեղծությունը: Հետագայում իր նամակներից մեկում Վարուժանը պիտի ընդգծի վենետիկյան տարիների վճռական դերը իր՝ որպես բանաստեղծի ձևավորման գործում՝ առանձնացնելով երեք գործոն. առաջինը՝ Ալիշանի շունչը, երկրորդ՝ իտալական գրականությունն ու արվեստը, երրորդ՝ Վենետիկ քաղաքը: **Ուրեմն՝ առաջինը՝ Ալիշանի շունչը**: Ալիշանի կերպարը, որ հայրենասիրության, հայ ժողովրդին, նրա մշակույթին, պատմությանը նվիրվածության խորհրդանիշ էր: Երբ Վարուժանը Վենետիկ հասավ, Ալիշանն արդեն (մեկ տարի առաջ) մահացել էր: Սակայն նրա **շունչը** զգացվում էր ամենուր: Նրա

շիրիմը Մխիթարյան միաբանության հայրերի ու վարժարանի սաների համար դարձել էր ուխտատեղի: Հասնելով Վենետիկ՝ Վարուժանը սկզբնապես այցելում է Ալիշանի շիրիմին: Իր վկայությունն է. «Ալիշանի աճյունները դեռ թարմ էին. կը համբուրեմ զանոնք և կը կարդամ իր գործը»¹: Անշուշտ, այդ պահին, հենց գերեզմանի առջև նա մտորել է Ալիշանի կենդանի կերպարի մասին, պատկերացրել գիտնական-բանաստեղծի անխոնջ նվիրումը իր ժողովրդին, մեր մշակույթին, խորհել է՝ արդյոք ինչ է զգացել ծանրաբեռն վաստակավորը կյանքի վերջին պահին, հավերժության սեմին: Ու թերևս հենց այդ օրը, բանաստեղծի շիրմի առաջ է հղացել «Բանաստեղծին մահը» ոտանավորը, որ ձեռագիր տետրում («Սրբկահույզ կայծոռիկներ», 1904) թվագրված է՝ 1902, օգոստոսի 4: Բանաստեղծությունը չի վերամշակվել, չի անցել ոչ ձեռագիր «Փուշի ակոսներ» ժողովածու, ոչ էլ տպագիր որևէ ժողովածու: «Բանաստեղծին մահը», որ անմիջաբար ունի «Հայր Ալիշանի հիշատակին» ընծայագիրը, փորձ է՝ տալու բանաստեղծի կյանքի վերջին պահի տեսլապատկերը: Բանաստեղծության մեջ Ալիշանի կյանքի վերջին պահերի զուգահեռ պատկերը արևամուտի նկարագիրն է՝ **«խոնջ արևին դեղնած շողերը»**, որ **«մեղմիկ կ'իյնան սենեկին մեջ»**. հար և նման՝ վաստակած բանաստեղծը հասել է իր մայրամուտին. մտովի՝ **«վեհ խոյանքներ կը շոյեն ու կ'անցնեն անոր ճակատն»**, բայց մարմինն այլևս անգոր է, ուստի **«մաշած ու խոնջ սրտեն հառաչ մը կ'ելլա և կը մարի...»** Փորձը՝ ելնել անկողնուց, ավա՛ղ, անօգուտ է.

Մարած աչքով նա կը նայի բրորնկած

Սրնմուտքին. և կը հալվի՛, կը սիրե՛.

Ոտքի վրա կ'ըղձա կանգնիլ և կ'իյնա:

Չոր կոկորդեն բառ մը կ'ելլա. «Ա՛հ, գրի՛չ» /2, 262/:

Վերջին բառը այս մեռնող մարդու՝ **«Ա՛հ, գրի՛չ»**: Դա էր նրա ողջ կյանքի անբաժան ընկերը, իմաստը: Հրաժեշտ է այդ ընկերոջը, բաժանման, ափսոսանքի, հրաժեշտի խո՞սք, թե խնդրանք՝ գրիչը տվեք, ինքը դեռ շատ գրելիք ունի: Ապա՝ **«Ո՛հ, Աստված իմ...»**, **կը կրկնե ան**: Հաշտության խո՞սք է առ Աստված, թե՞ խնդրանք՝ ուժ և ժամանակ տալու՝ կրկին գրիչ վերցնելու, կրկին արարելու համար: Եվ «հաշտության» այդ վերջին պահին (ասում են՝ բոլոր մարդկանց մոտ է այդպես) Ալիշանի տեսլապատկերում՝ **«մըտքին միջև հիշատակներ ցիր ու ցան/Կը թափառին, անուշ,**

¹ Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, երեք հատորով, հ.3, Եր., 1987, էջ 442: Այս եռահատորից մյուս մեջբերումների հղումները կտրվեն անմիջաբար, միայն հատորը և էջը:

տըխուր, կամ անգուր»:Վերջալույսն է օրվա, արևի ու իր կյանքի, արդեն «կը դողդղղան պաղած շրթունքն ու ձեռքեր», բայց միևնույնն է՝

Վերջին անգամ կուգե խոսիլ և գրե լ'...

Դեռ կը տենչա՛, բարձին տակեն կը հանե

Գիրք մը և այն կ'իյնա ձեռքեն: Ալևոր

Ձյուն գըլուխը ա՛լ ձյուն բարձին կը դնե:

Կը հավատա և կ'հուսա... կը մեռնի՛ ... /2, 262/:

Գրիչ, գիրք, տենչանք, ձյուն գլուխ (ճերմակավարս ու ճերմակամորուս Ալիշանի), **ձյուն բարձ, հավատ և հույս** բառերը խորհրդանիշներ են, որ ամբողջացնում են Ալիշանի կերպարը: Ակամա մտաբերում եմ Չարենցի՝ Թամանյանի հիշատակին ձուլված «Մահվան տեսիլը», Թամանյանի մահվան վերջին պահի պատկերը՝ «Որքա՛ն նման է եղել պահն այդ մարդու կանթեղի...// Պարզել է ձեռքը դողդոջ դեպի ցնորքն այդ կապույտ ...// Բայց ծանրացել է հանկարծ ձեռքն՝ հանճարեղ ու հմուտ,// Ընկել է վար - չոր կրծքին...լռություն՝ն: Մահ»:¹

Ալիշանի հանդեպ սիրո այս դրսևորումը, անշուշտ, պատահական չէր: Քաղկեդոնի վարժարանում Վարուժանի սովորելու տարիներին Վենետիկի միաբանության գիտնական, բանաստեղծ մխիթարյանների պանծացման մթնոլորտում աշակերտներն ակամա ներշնչվում էին նրանց ազգային հայրենասիրական գործունեությամբ: Պատահական չէ, որ դեռ 1901թ. Վենետիկի Մխիթարյան միաբանության 200-ամյակին նվիրված հոբելյանական «Հիշատակարան» տարեգրքում տպագրվում է նաև Քաղկեդոնի մխիթարյան վարժարանի աշակերտ, բրգնիկցի Դանիել Գ. Չպուգքեոյանի ողջույնի նամակը (ի դեպ, սա Վարուժանի առաջին տպագիր խոսքն էր): Ինչպես վկայում է Վահրամ Փափագյանը, այդ վարժարանի «ուսուցչական կազմը շատ ընտիր էր: Այդտեղ էին Պոլսի ամենաընտիր մասնագետները, իսկ հայ դպրությունն ու լեզուն ավանդում էին ամենալավագույն իմաստով՝ մխիթարյան հայկաբանները»:² Բացառվում է, որ այդ ուսուցիչները, հատկապես հայերենի ուսուցիչ Արիստակես Քասգանտիլյանը, որ խրախուսել է պատանի բանաստեղծի առաջին գրչափորձերը, խմբագրել նրա առաջին ձեռագիր ժողովածուն, պատրաստել տպագրության ու առաջաբան գրել, որ նաև միջնորդել է Վենետիկի միաբաններին՝ Վարուժանին ուղարկելով Վենետիկ՝ նամակ-հանձնարարականով, թե «Նոր Մկրտիչ Պեշկոթաշյան կը դրկեմ, լավ նայեցեք»³ (Պեշկոթաշյանն էլ էր ավարտել Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը),

¹ Ե. Չարենց, Պոեմներ, Բանաստեղծություններ, ԵՊՀ հրատ., Եր., 1984, էջ 688-689:

² Վահրամ Փափագյան, Հետադարձ հայացք, Երևան, 1956, էջ 66:

³ «Էջմիածին», 1958, հ. Ը, / Մ. Պոտուրյանի հուշերը/.

բացառվում է, որ նրանք իրենց սաների ու նաև Դանիելի ներկայությամբ բազմիցս պանծացրած չլինեին Ղևոնդ Ալիշանին: Հիշատակված է, որ պատանի Չպուգքյարյանը ներշնչված էր Ալիշանով, նրա «ծերունափայլ մեծ սովերի տակ էր երազել» ու պատահական չէր նաև, որ նրան ուղարկելով Վենետիկ՝ Քասգանտիլյանը պատվիրել էր՝ «բարևելու համար իր տեղը Ալիշանի նվիրական աճյունը» (3,393): Վարուժանը, հասնելով Վենետիկ, ահա առաջին հերթին կատարում է ուսուցչի պատվերը ու նաև ուսումնասիրում է Ալիշանի գործը («կը կարդամ իր գործը»): Հետագայում մխիթարյանների՝ իր վրա թողած ազդեցության մասին խոսելիս Վարուժանը առանձնացնում է և կարևորում՝ «կարդացած եմ Ալիշանը և տեսած եմ իր գերեզմանը» (3,463), որ նշանակում է և՛ իմացական, և՛ զգայական տպավորականություն: Ալիշանը երիտասարդ բանաստեղծի համար հայրենասերի տիպար էր և սիրելի բանաստեղծ: Ալիշանի այդպիսի կերպարը ոգևորիչ է դառնում հատկապես վենետիկյան տարիներին:

Ալիշանի բանաստեղծության մեջ խորացումները և նրա շիրիմին այցելությունները ծնունդ են տալիս մի նոր բանաստեղծության, որ թվագրել է՝ 1904, ապրիլ 18; Եվ սա Վարուժանի ալիշանասիրության **երկրորդ վկայություն-դրվագն է**: Բանաստեղծությունը նույն թվականին լույս է տեսնում «Բազմավեպի» հունիսյան համարում: Վերնագրված է՝ «Բանաստեղծ Նահապետի շիրմին առջև», ստորագրված է՝ Դանիել Չուպուգքյարյան, Աշ.(ակերտ) Մուր.(ատ) Ռափ.(այելյան) Վ.(արժարանի): Ի դեպ, կարևորենք, որ սա ընդհանրապես **Վարուժանի առաջին տպագրված բանաստեղծությունն է**: Վկայված է, թե այն արժանացել է ընթերցողի ուշադրությանը, գնահատվել է երիտասարդ բանաստեղծի տաղանդը: Մեզ է հասել բանասեր, մանկավարժ, մշակույթի գործիչ Սմբատ Դավթյանի՝ Պոլսից Վարուժանին ուղարկված նամակը, որի մեջ կարդում ենք. «Ընդունեցեք իմ շնորհավորություններս «Բանաստեղծ Նահապետի շիրմին» ուղղյալ Ձեր քերթվածին համար, որ «Բազմավեպի» հունիսի պրակին մեջ երևցավ: Շատ հաջողված և սրտագրավ տողեր անոր մեջ վեր կը հանեն զգայուն հոգի մը և բանաստեղծ Նահապետին արժանի խանդով լի սիրտ մը: Հայր Արիստակես Քասգանտիլյանն ալ, որ վաղը կողմդ կը մեկնի, Ձեզի պիտի բերե իմ շնորհավորություններս և համակրանքիս հավաստիքը: Գրեցեք միշտ այդ ոգիով, այդ ոճով»¹:

Այս նամակին Վարուժանը պատասխանել է, հայտնել է իր շնորհակալությունը. «Երջանիկ կը համարեմ զիս՝ որ գրեթե առաջին և աննշան մեկ քերթվածիս կարևորություն տվողներ կան եղեր, մեծ ծովի մը մեջ կաթիլս նկատի առնել, շնորհակալ եմ...», նաև ավելացրել, որ այդ

¹ Դ. Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 217:

խոսքերը ներշնչում են իրեն «ուրիշ գրությունների հրատարակության քիչ մը ավելի անվախ» լինել, «գիտնալով որ պիտի գտնվին համակրող սրտեր և ողջամիտ ճաշակներ...» (3, 236): Նկատենք, որ հիշատակված երկու բանաստեղծությունների մեջ էլ հենց վերնագրում Վարուժանը Ալիշանին անվանում է **բանաստեղծ**: Գրում է ոչ թե՝ Ալիշանի կամ հայր Ալիշանի, ինչպես ընդունված էր անվանել նրան մխիթարյանների (և ոչ միայն) միջավայրում, այլ՝ «բանաստեղծին մահը», ոչ թե Հայր Ալիշանի շիրմի առջև, այլ՝ «Բանաստեղծ Նահապետի շիրմին առջև»: Մենք գիտենք, թե ով էր Նահապետը (այդ կեղծանունով էր երիտասարդության տարիներին տպագրել իր հայտնի բանաստեղծությունները՝ «Նահապետի երգեր» շարքը): Վարուժանի մանկության, պատանեկության տարիներին Ալիշանն այլևս բանաստեղծություններ չէր գրում, նա համբավված գիտնական էր՝ պատմաբան, աշխարհագրագետ, ազգագրագետ, բանասեր, թարգմանիչ, հեղինակ աղբյուրագիտական մեծարժեք շատ ուսումնասիրությունների, բայց բանաստեղծ Վարուժանի համար նա հատկապես **բանաստեղծ** էր, սկսողը հայ նոր շրջանի պոեզիայի, ակունքը աշխարհաբար հայրենասիրական այն բանաստեղծության, որ ազդակ ու դպրոց եղավ Պատկանյանի, Բաֆֆու, Պեշկեթաշյանի ու հաջորդ սերունդների, ինչու՞ չէ՝ նաև Վարուժանի համար: Բանաստեղծ, որ Չարենցի բնութագրությամբ՝ «տավիղը շեփոք դարձրած»՝ «կորած հայրենիքը» երգեց և «անցյալը նրա հրածին», «ձգտելով հին փառքը հայոց սրտերում անմար միշտ պահել», որ իր «քնարով մարտի կոչեց» հայկազուններին՝ «հանուն անցյալի», նախապատրաստեց ազատագրական մեր պայքարը, «ոտքի հանեց քաջարի այրերի անմահ մի սերունդ», որ ելավ «հայրենյաց համար կռվելու»¹: Միքայել Նալբանդյանը, խոսելով Աբովյանի ու Պոռշյանի մասին, թե նրանք «հիմք դրեցին արդյան ազգային վիպասանության», ավելացնում է, թե չի մոռացել Ալիշանի «հոյակապ քերթվածքը» և որ «չափաբերական քերթվածոց մեջ արժանավոր վարդապետը ախոյան չունի»²: Վարուժանն էլ չի մոռանում, որ Ալիշանը գիտնական էր, բայց հոգով, էությամբ՝ բանաստեղծ («ան բանաստեղծ էր, որ գիտություն կրներ»): Հենց այս ընդարձակ բանաստեղծության մեջ, որ չորս մասի է բաժանված (Ա, Բ, Գ, Դ), դիմելով հենց նրա կենդանի գոյությանը, համակողմանիորեն բնութագրելով նրան որպես մեծ մտածողի («Ուրկե վիհեր չափեցիր դու մտածման»), պանծացնում է բանաստեղծին, որ հավաքելով մեր անցյալի «խլված փառք»-երը՝ նոր «կեղեքված Սերունդին» սպեղանի տվեց, խոսեց նրա սրտի հետ:

¹ **Եղիշե Չարենց**, Պոեմներ, Բանաստեղծություններ, էջ 487:

² **Մ. Նալբանդյան**, Երկերի լիակատար ժողովածու., հ. 3, Եր., 1940, էջ 120:

Քողեն մութի, մոռացումի, լրժության
 Հանեցիր մեր դափնիներու թերթերն հին.
 Եվ դնելով զանոնք երգի մը վրան՝
 Առե՛ք, ըսիր, վիրածոր շողն անցյալին:
 Ծրռած սրտին հայ՝ սերտեցիր ու դարձար
 Յուրաքանչյուր խորքն անկյունի ու ծալքի,
 Իջար անոր ամեն անդունդըն հըրավառ,
 Եվ քրքրեցիր ճընշըված խորշն արցունքի (1, 127):

Հայ սրտի ծալքերը, հայ մարդու արցունքի խորշերը թափանցողը բանաստեղծ է ուրեմն նախ և առաջ, որ երգերով «գրկեց Այրին՝ գոր կը կոչեն Հայաստան»՝ «Հենած մարդուն, ճառագայթին, խաչին վրա»։ Երեք հենման կետեր, որ է՝ ապրող ու արարող մարդը, ճառագայթը (լույսը գիտության), խաչը՝ քրիստոնեական հավատը, որ եռամաս էությունն էր **բանաստեղծ, գիտնական և վանական Ալիշանի**։ Հետագա տողերում ասես բացատրվում են այս բառիմաստները, նաև ընդգծվում է բանաստեղծի և ժողովրդի փոխադարձ կապը.

Ջինջ հայլի մ՛ես՝ ուրտեղ ամեն մարդ կըրնա
 Գըտնել դիտել պատկերն իր ճիշտ, հարազատ,
 Նըվագներուդ մեջ երբեմն ես քրիստոնյա ,
 Ջինվոր երբեմն, երբեմն մոգ, միշտ Սոկրատ:
 Եվ ահա այն, արդեն ասված ընդհանրացումը.
 Եվ քու կյանքիդ ու երգերուդ մեջ ամեն
 Դու բանաստեղծ Նահապետն ես հոգեհմա.
 Բորբ Արշալույսն մ՛ես որ կ՛ելլա ովկիանեն,
 Ամպեն, մութեն՝ կը սըփռի Մարդուն վրա (1, 128):

Բանաստեղծության վերջնամասում Վարուժանը խոսում է նաև Ալիշանի արդիականության ու հարատևության մասին.

Ամեն նոր դար նոր պիտ՝ բերե քու անուն,
 Եվ դու դարձյա՛լ պիտի ծնիս... սըրտի մեջ,
 Ո՛հ, ո՛չ. երբեք չըվախճանիս պիտի դուն,
 Ջի կապեցիր կյանքդ արևու՛ն հետ անշեջ:

Եվ որովհետև՝ «դեռ պետք ունի Հայը քեզ, // Հայը հյուդին, բանտին, վշտին, խավարին» (1, 129):

«Ով մտածման դու հսկա», - դիմում է Ալիշանին 18-ամյա Դանիել Զպուգքյարյանը, որ «իբր ուխտավոր մը հոգնած» այցի է եկել նրա շիրիմին՝ «ծնրադրելու սիրտը բաց, // Եվ խոկալու, համբուրելու լույս աճյուն» (1, 126), խնդրում է՝ խոսել իր հետ, ուզում է լսել «շողի, հույսի բառ մ՛ հետին», նաև «Բաֆֆիեն խոսք մը կազդուրող, լուսարձակ, // Կամ սիրո ցուլք

մ'Աբովյանի սրբտեն հեզ»: Նաև ուզում է հավատալ հրաշքների, երբ բանաստեղծի երազը իրականություն կդառնա, հայրենիքը ազատ կլինի, «օր մը, գուցե զարթնուս, նույնիսկ, քունեդ ալ, // Երբ հայ ճամփորդ մը եկած դրախտի Երկրեդ՝ ա՛լ // Ժըպիտ բերե քեզ՝ արցունքի տեղ անհույս...» (1, 129): Առ Ալիշան սիրո և գնահատանքի **Երրորդ դրվագը** 1909 թվականին է, երբ քաղաքական գիտությունների թեկնածուի դիպլոմով ավարտելով Գենտի համալսարանը՝ Վարուժանը վերադառնում է Վենետիկ, այնտեղից հայրենի գյուղ՝ ճամպուկում բանաստեղծությունների ձեռագիր ժողովածուն՝ «Ցեղին սիրտը» խորագրով: (Ժողովածուի տպագրությունն սկսվում է 1909-ի աշնանը, ավարտվում է 1910-ի գարնանը, ժողովածուի վրա գրված է՝ 1909թ.):

Վենետիկի Մխիթարյան միաբանության կրթաթոշակով համալսարանում ուսանած երիտասարդը Վենետիկում, անշուշտ, նրանց պիտի հրաժեշտ տար, հայտներ իր շնորհակալությունները, բայց այս մասին Վարուժանի նամակներում հիշատակություններ չկան: Միակ վկայությունը այդ օրերի մասին գտնում ենք Մերուժան Պարսամյանին 1911թ. հունիսի 6-ին ուղարկված նամակում, ուր պատասխանելով ներկայացված հարցարանին՝ իր կենսագրության այդ ժամանակի մասին Վարուժանը գրում է. «Օսմանյան սահմանադրության երկրորդ տարին լիսանսեի վկայականով կը վերադառնամ Վենետիկ, ուր Ալիշանի շիրմին վրա իբրև երախտագիտություն կը գետեղեմ պսակ մը՝ ջուրի և հողի ծաղիկներով հյուսված և լուսնի ու մատաղ քերթողին արտոսրներով օծված» (3, 443): Միայն այսքան: Իր «Երախտագիտությունը» մխիթարյաններին ահա այդպես է նա հայտնել և հրաժեշտի խոսք է մրմնջացել Ալիշանի շիրմի առաջ: Ու նրա գերեզմանին ոչ թե ծաղիկներ է դրել, այլ պսակ՝ հողի և ջրի ծաղիկներից հյուսված և ցողված իր արցունքներով: Այդպես է կարևորել Ալիշանի դերը և իր սերը: Այդպես է Վենետիկին հրաժեշտ տալիս: Այնպես, ինչպես երբ առաջին անգամ ոտք էր դրել Վենետիկ 1902թ. ամռանը, «իբրև ուխտավոր» նա այցելել էր Ալիշանի շիրմին, «սրտաբաց ծնրադրել» և «համբուրել լույս աճյունը»: Եվ որպես լրացում ևս մի վկայություն. 1914 թվակիր մի նամակում նա գրում է. «Մխիթարյանները սիստեմատիկ ազդեցություն չեն ներգործած հոգիիս վրա: Հոն ունեցած եմ ոչ կարող ու ոչ աշխատող ուսուցիչ: Կարդացած եմ Ալիշանը: Ու տեսած եմ իր գերեզմանը, և այսքան» /3, 463/:

1909 թվականը հիշատակելի է նաև մի ուրիշ իրողությամբ: «Ցեղին սիրտը» ժողովածուի մեջ Վարուժանը ներառեց նաև 1904-ին գրված և «Բազմավեպում» տպագրված «Բանաստեղծ Նահապետի շիրմին առջև» բանաստեղծությունը, այստեղ՝ «Ալիշանի շիրմի առջև» վերնագրով: «Ցեղին սիրտը», ինչպես հեղինակն էր ասում՝ «հայրենասիրականներու հա-

տորն» ամփոփում էր հիմնականում 1906-1909թթ. գրված գործեր, մասամբ՝ 1905-ի երկրորդ կեսի, բայց Ալիշանի նկատմամբ սերը և նրա՝ մեծ հայրենասերի, հայրենասեր բանաստեղծի կերպարը Վարուժանը ուզում էր, որ լինի հենց «հայրենասիրականներու» շարքում, հենց այս հատորում: Ի դեպ, 1903-ին Վարուժանը գրել էր նաև բանաստեղծություն՝ նվիրված միաբանության հիմնադիր և առաջին աբբահայր Մխիթար Մեֆափաճուհուն՝ սկզբում «Մեծ մարդը», ապա փոխված՝ «Մխիթար աբբա» վերնագրով (1,229): Բայց չի հավանել, չի տպագրել ոչ «Բազմավեպում», ոչ էլ ներկայացրել է «Սարսուռներ» գրքի համար առանձնացված շարքում («Փուշի ակոսներ» ձեռագիր տետրում այն ջնջել է): Բայց Ալիշանին նվիրված ներկայացրել է «Սարսուռների» տետրում, որ սակայն լույս չտեսավ, քանի որ հրատարակիչները գիրքը կազմել էին միայն մամուլում լույս տեսած 18 բանաստեղծությունների շարվածքներից:

Չորրորդ վկայություն-դրվագը Վարուժանի բանախոսությունն է Ալիշանի և Պեշկեթաշյանի մասին Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի շրջանավարտների մի մեծ հանդիսությունում՝ նվիրված վարժարանի բարերարների հիշատակին, որը տեղի է ունեցել 1913 թ. հոկտեմբերի 27-ին /նոր տոմարով՝ նոյեմբերի 9-ին/ Բերայում, Թոքատյան ճաշասրահում: Այս ոչ ընդարձակ խոսքը պատասխանն է նաև այն հարցի, թե ինչու Մխիթար Աբբահորը նվիրված քերթվածը այդպես էլ ննջեց ձեռագիր տետրերում, իսկ Ալիշանին նվիրվածը տեղ գտավ նախ «Բազմավեպում», ապա նաև «Ցեղին սրտում»: Այս բանախոսության մեջ Ալիշանը միայն «բանաստեղծ Նահապետը» չէ, այլ մեծ գիտնական, մշակույթի մեծագույն նվիրյալ, Մխիթարյան միաբանության ընդհանրացված ոգի ու գործիչ: Սկզբնապես Վարուժանն առաջադրում է այն միտքը, թե բոլոր միությունները, միաբանությունները, կուսակցությունները, նաև ազգերը «շոշափական ամբողջություններ» ու նաև «տևական» դառնալու համար «պետք ունին Հոգիի մը, Տաղանդի մը, որ իրենց պատկանած խմբակցության ամբողջ իդեալները իր անձին մեջ խտացնե և մարմնացումն ըլլա այդ բոլորին: Անգամ մը որ խմբակցություն մը կըրցավ ծնանիլ այդ Մարդը՝ այլևս փրկված կրնա համարիլ իր գոյությունը և տևականությունը: Տարիներ ու դարեր այդ մարդուն շուրջ կը հավաքվին բոլոր հետևորդ ուժերը, բոլոր հոգիները ու անոր հիշատակեն կը քաղեն իրենց առաքիլությունը» (3, 182): Վարուժանը այդպիսի **մարդ** էր համարում Ալիշանին՝ «Վենետիկի մխիթարյաններուն համար»: «Ալիշանի ոգիին մեջ ամբողջ Մխիթարյան Առաքելությունը կը տեսնեմ, -իմ միտքը հաստատում է Վարուժանը: -Նույնիսկ ինչ, որ Մխիթարի՝ իրենց հանճարային հիմնադրին մեջ դեռ տարտամ ու անկատար, դեռ ներշնչումի և ձկտումի վիճակին մեջ էր, եկած խտացած ու ի գործ փոխված է Ալիշանի մեջ. ու

ան եղած է հնոցը, ուր երկդարյան միաբանության մը բոլոր ներշնչումները ու բաղձանքները, բոլոր իդեալներն ու ներգործությունը՝ լեցված, լեցված ու աստվածային շունչի մը տակ եփված ու եռեփված է, ի հայտ բերելով ոսկեղեն կենսունակություն մը, Մխիթարյան Առաքելության թանկագին հուշարձանը: Ահա թե ով է Ալիշանը Մխիթարյան միաբանության համար՝ ըստ Վարուժանի: Այս համառոտ բնութագրության մեջ Ալիշանը նաև կերպավորվում է. «Մքենը գլխուն քաշած, աղոթքի մրմունջը շրթունքներուն», մշտապես հակված հին մատյաններին՝ անանձնական նվիրումով «ծողվեց, սրտի՛ն վրա հավաքեց մագաղաթներն, հիշատակարաններն ու արձանագրությունները: Աչքերուն բոլոր լույսն ու երիտասարդ կյանքին ծաղիկները թափթփեց անոնց վրա, մինչև որ մեկտեղ բերավ հին փառահեղ կյանքի, ազգի մը անցյալ փառքը»: Ամեն հիշատակարանի ու ավանդության որ հայտնաբերեց, «հավատաց ան սուրբի մը հավատքով», եթե դրանք գեղեցիկ էին ու կարող էին «բռնկեցնել հրդեհը հայրենասիրության»: Գիտնականի նրա յուրահաստկությունը Վարուժանը տեսնում էր հայրենասեր բանաստեղծի նրա էության ներկայությամբ: Նա «գիտություն կ'ըներ ոչ թե միայն ճշմարտություն մը քողագերծելու միակ մտահոգությամբ » (որ գիտնականի գործն է - Վ. Գ.), « ...այլ նաև ազգ մը երևան բերելու համար լույս աշխարհիքին»: Ասել է՝ պատմությամբ, վավերաթղթերով ցույց տալ, թե ով է հայը և որտեղից է գալիս: Ցույց տալ նրա տեղը այս արևի տակ: Այստեղ է, որ գիտնականի նրա այդ առանձնահատկության համար ասում է. «Ալիշան բանաստեղծ էր, որ գիտություն կ'ըներ»: Եվ բացատրում է. «Այս կը նշանակե, թե գիտությունը կը ժողովրդականացներ»: Անշուշտ, նաև իր պոեզիայով, պատմական անցյալի ու նշանավոր այրերի կերպավորումներով. «Իր թանգարանին, իր մագաղաթներու մատենադարանին և առհասարակ հայրենի բոլոր ավերակներուն մենությանը վերև կախված էր իր հսկայական տավիղը՝ և ահա Խորենացիին խոսքը երգի կը փոխվեր, Եղիշեի աղաղակը՝ դուրսագնացության, Եզնիկի մտածումը երևակայության, Շնորհալիի աղոթքը օրհներգության, ավերակներու տրտմությունը՝ արցունքի և անցյալ նշույլը՝ հրդեհի» (3,183):

Գրեթե նույն կերպարով է տեսնում Եղիշե Չարենցը Ալիշանին իր «Մահվան տեսիլ» պոեմում. «...Ճակատին պսակ է կրում և ձեռքին բռնած նա ունի մի հսկա արծաթյա տավիղ» և այդ «տավիղը շեփոր դարձրած»՝ «քերթության պարտեզն» է մտել, որ «իր կորած հայրենիքը» երգի ու «անցյալը նրա հրածին»: Ապա նաև՝

*Երգեցի էս ձայնով առնական ամրոցներն ու բերդերը հայոց,
Ոստանները հայոց արքայից, պալատները նոցա փառահեղ,*

*Երգեցի Կարմիր Ավարայրը, Մասիսը՝ աստղերին նայող,
Ձգտելով հին փառքը հայոց սրտերում անմար միշտ պահել¹:*

Այսպես Ալիշանի ամբողջ գործի մեջ Արշակ Չոպանյանը տեսնում էր «Բանաստեղծի ներկայությունը», «սրտի» ներկայությունը. «Ալիշան սիրտ մըն էր, բայց շատ մեծ սիրտ մը», որ «ամբողջապես լեցված էր երկու պարզ ու մեծ զգացումներով՝ Աստծո սերն և ազգին սերն...»... «Գործը գորկը թողու Ալիշան (քսան հոգիի գործ կատարած է, ամբողջ մատենադարան, ամբողջ աշխարհի մը թողած է մեզի)», հսկա հիշատակարան մըն է, անխոնջ աշխատասիրության, մշտավառ ու բեղմնավոր հետաքրքրության, կաթոզին ու խանդոտ զգայության, գոգոտր ու թևավոր երևակայության,- գործ հայրենասերի, կրոնավորի, հմուտի, ընդհանրացնողի, թարգմանչի, բայց ամեն բանե առաջ՝ «Բանաստեղծի»²:

Վարուժանի բանախոսությունը, ինչպես ասվեց, Մխիթարյան Առաքելության երկու մեծ դեմքերի՝ Ալիշանի և Պեշիկթաշյանի մասին էր. գնահատում և համադրություն: Եթե բանախոսը «Ալիշանի ոգիին մեջ ամբողջ Մխիթարյան առաքելությունն » էր տեսնում, ապա «մյուս Ոգին Մկրտիչ Պեշիկթաշյան՝ Մուրատ-Ռաֆայելյան սաներու ներշնչումին ու ձկտումներուն մյուս մարմնացումը, մյուս կատարելությունը», որ «երգիչն է Միության սիրո ու հայրենիքի»: «Ալիշան, Պեշիկթաշյան, երկու մեծ Համադրություններ Մխիթարյան Առաքելության, մին կղերական Միաբանության, մյուսը՝ աշխարհական Միության մեջ: Զույգ խորհրդանիշներ՝ համագույն ուղղություններու» (3,186): (Հիշենք, որ Ալիշանը երկար տարիներ դասավանդել է Մուրադ-Ռաֆայելյանում, նաև Պեշիկթաշյանի ուսանելու տարիներին, տարբեր տարիների եղել է նաև վարժարանի տեսուչը): Վարուժանի այս բանախոսությունը ոչ միայն վկայությունն է Ալիշանի ու Պեշիկթաշյանի գործի, նրանց ունեցած դերի ու նշանակության ճշմարիտ բնութագրության, այլև նրանց նկատմամբ ունեցած հավատավոր սիրո: Ներշնչյալ սիրո խոսք էր դա, ուստի արժանացել է լսարանի հիացմունքին: Նույն օրերին Մուրադ-Ռաֆայելյան նախկին աշակերտաց ամսօրյա տեղեկատուում տպագրվել է Վարուժանի բանախոսությունը, նաև մասնակցի լրատվությունը, որ հիացմունքի, շշմեցուցիչ տպավորության խոստովանություն-վկայություն է. «Դեռ երիտասարդ և սակայն արդեն իսկ մեծահռչակ բանաստեղծ Վարուժան թե ինչպես ներկայացուց մեզ Ալիշանի և Պեշիկթաշյանի՝ նյութապես մեռած, բայց իրոք անմահ բանաստեղծներուն ոգին ու գործերը՝ չենք կարող նկարագրել: Գաղափար մը ունենալու համար առթած խանդավառության վրա,

¹ **Եղիշե Չարենց**, Պոեմներ, բանաստեղծություններ, էջ 487:

² **Ա. Չոպանյան**, Երկեր, Եր., 1988, էջ 411-412:

բավական չէ միայն կարդալ յուր ատենախոսությունը, պետք է լսել մանավանդ զինքը: Յուր տաք ու հոգեշունչ շեշտերով վերացուց ունկնդիրները, իր հոգվույն կայծերով զամենքն ալ բաժնեկից ըրավ և լռած էր արդեն, երբ դեռ կուգեինք լսել զինքը» (3, 519): Այդպիսին էր Վարուժանի խոսքը, և դա նաև սիրո դրսևորում էր:

Վենետիկում ուսանելու տարիներին արդեն երիտասարդ բանաստեղծն ուներ իր սիրելի բանաստեղծները, գրողները, ովքեր հայրենիքի սիրո ու ազատության շեփորահարներ էին: Բագրատունին, Ալիշանը, Աբովյանը, Բաֆֆին Չպուգքյարյանի համար սիրելի անուններ էին: «Ասոնց համար ան ուներ հիացում մը և ինձի կըսեր, թե այդ հեղինակները ամենեն ավելի ուժգնորեն ազդած են իր վրա», - հիշում է Սիմոն Երեմյանը: Նման վկայություններ կան նաև Վարուժանի նամակներում: 1913-ի այս բանախոսությունը նույնպես մի վկայություն է: Մասնավորելով մեր խոսքը առ Ալիշան Վարուժանի ունեցած սիրո ու գնահատության առումով, ասենք, որ այն եղավ տևական՝ աշակերտական տարիներից մինչև կյանքի վերջին տարիները:

Իսկ այն, որ Ալիշանի ստեղծագործությունը նաև ազդակ է եղել Վարուժանի ստեղծագործության համար, հեք ու հուր է տվել նրա քնարին, դժվար չէ ցույց տալ և՛ «Մարտունեքում», և՛ «Ցեղին սրտում», և՛ անգամ «Հեթանոս երգերում»: Ավելին, կյանքի վերջին շրջանում փայփայած ծրագրերի մեջ՝ անցյալի փառքերը, հերոսական դրվագները պանծացնելու բանաստեղծությամբ, պոեմներով: Ծրագրել էր գրել «Հայ հոմերագիրքը»՝ ազգային ավանդությունների թեմաներով պոեմների շարք: «Մեծն Տիգրանի վրա ի՛նչ հոյակապ դուցազներգություն կը գրվի», - իր խոսքերն են: Ուզում էր մշակել մեր էպոսը՝ «Սասնա տուն» վերնագրով և որոշել էր՝ «Սասունցի Դավիթը երթալ գտնել Սասնո լեռներուն վրա: Քայլ առ քայլ հետևիլ անոր հեքիաթին ու զայն որոնել ապրողներու սրտին մեջ», - ժամանակակցի վկայությունն է: Ավանդությունների մեջ հայտնաբերել ու «մեջտեղ բերել հին փառահեղ կյանքի, ազգի մը անցյալ փառքը, այն ամենը, որ գեղեցիկ էին ու կարող էին «բռնկեցնել հրդեհը հայրենասիրության», ինչպես Վարուժանն էր ասում Ալիշանի մասին: Հիշենք միայն «Ցեղին սիրտը» գրքի սկզբում գետեղված հայտնի «Ձոնի» առաջին վեց տողը.

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.

- Քեզի ընծա՛, իմ հայրենիք -

Սոսյաց անտառեն էի զայն կըտրեր...

- Քեզի ընծա՛, հին հայրենիք -

Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.

Ընդ եղեգան փող լույս ելաներ (1, 69):

Եվ «Նավասարդյան» բանաստեղծության առաջին քառատողը.

- Հանճա՛րդ հայկյան, Նավասարդյան սա տոներուն

Արևափառ՝

Ա՛լ վերածնե փլատակներեն, և փառագոչ

Քընարդ առ:

Բայց չծավալվենք ու չխորանանք, որովհետև Ալիշան-Վարուժան պոետական աղերսները խոր են և դիտարկման մի առանձին թեմա են:

ВАЗГЕН ГАБРИЕЛЯН

Доктор филологических наук, профессор

РЕЗЮМЕ

ДАНИЕЛ ВАРУЖАНОВСКОЕ ВОСПРИЯТИЕ ГЕВОНДА АЛИШАНА

Ключевые слова: Лицеи Мехитаристов в Стамбуле, Орден Мехитаристов Венеции, Мурат-Рафаелевский лицей, литературные традиции, культура, дух отечества, “Песни Наапета”, “Перед могилой Алишана”, свидетельство о любви и признательности.

Статья рассматривает проявление исключительной любви и признательности Варужана по отношению к научным и особенно поэтическим заслугам Великого Армянина – Гевонда Алишана, а также свидетельство об истинной оценке его образа – посещении Варужана могилы Алишана, посвящённые ему стихотворения, публицистические работы, оценки в письмах. Отношение Варужана к Алишану рассматривается в длительном процессе, начиная со школьных лет и почти до конца жизни.

VAZGEN GABRIELIAN

Doctor of Philology, professor

ABSTRACT

DANIEL VAROUZHAN'S APPRECIATION OF GHEVOND ALISHAN

Key words: Mekhitarian (Mekhitarist) Schools of Istanbul, Mekhitarist Congregation of Venice, Moorat Raphael Armenian College, literary traditions, culture, spirit of homeland, “Songs of Nahapet”, “In front of Alishan’s tomb”, testimonials of love and appreciation.

The article discusses the expressions of Varouzhan’s exceptional love and admiration for the scholarly and particularly poetic achievements of the Great Armenian, Ghevond Alishan. It reveals testimonies of true appreciation of Alishan’s character through Varouzhan’s visits to Alishan’s grave, his poems and critical works devoted to Alishan, and expressions of his admiration in his letters. Varouzhan’s attitude towards Alishan is reviewed in its long course, starting from his school years to almost the end of his life.

REFERENCES

1. "Echmiatsin" journal, Echmiatsin, 1958, issue 8
2. Nalbandyan, M., Complete Compilation of Works, Vol. 3, Yerevan 1940
3. Charents, Yegh., Poems, Yerevan 1984
4. Chopanyan, A., Works, Yerevan 1988
5. Varouzhan, D., Letters, Yerevan 1965
6. Varouzhan D., Complete Compilation of Works in 3 volumes, Yerevan 1986-87
7. Papazyan, V., A Retrospective View, Yerevan 1956

ԱԼԻՇԱՆԸ՝ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Ղեւոնդ Ալիշան, Մխիթարեաններ, հայ նոր գրականություն, եւրոպական վաղ ժամանակագր, գրական եւ քննադատական արժեւորումներ, Շատոբրիան, Շիլլեր, Դանիել Վարուժան, Յակոբ Օշական:

Նուագներուդ մէջ երբեմն ես քրիստոնեայ,
Զինուոր՝ երբեմն, երբեմն՝ մոգ, մի՛շտ Սօկրատ:
ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Մեր առջեւ դրուած տեսաբանական խնդիրը հայ Նոր գրականության պատմութեան ձեւաւորման եւ զարգացման XIX դարի ողջ ընթացքում Ղեւոնդ Ալիշանի՝ բարձրաստիճան հոգեւորականի, աստուածաբանի, տիրական գիտնականի, հայագէտի, հայրենիքի տեսլականով ապրած բանաստեղծի եւ աւելին՝ ժամանակի ազգային մտածողութեան գնացքը ձեւաւորած եւ զարգացումն ուղղորդած խորհրդանշի թողած յետագծի ուրուագծումն է, որն ապահովում է խորքային ներկայութիւն նաեւ այսօր, XXI դարում:

Յայտնի է, որ մեր գրականութեան պատմութեան պարբերացման կնճռոտ, ամբողջապէս չլուծուած հարցադրումներից մէկը նոր գրականութեան մէջ Մխիթարեանների դերի յստակեցման խնդիրն է: Յատկապէս խորհրդային շրջանի գաղափարագիր գերիշխան ժամանակներում, անցեալ դարի կէսերին, փորձ արուեց վերատեսութեան ենթարկել Մխիթարեանների խաղացած դերը՝ նուագման յայտնի ցուցիչ գործադրելու ջանքով, ուր լուսագոյն փոխզիջումը գրական շարժման «միջին գծերում» նրանց շարունակողների դերակատարութեան ուղղափառ ըմբռնումն էր, ինչպէս նաեւ գրական երկու հաստուածների տարանջատման միտումների դէմ ընդվզման առարկայական քայլերը՝ ի շահ արեւելահայ մտքի բացարձակացման, որովհետեւ այն ձեռքագատ է իբր կրօնական հայեցողութիւնից:

Խորքի մէջ դրանք կարելի է խմբաւորել նոր գրականութեան սկզբնաւորման շուրջ վերջին շրջանի աշխոյժ բանավեճերի տիրոջներում, բայց այս անգամ Ղեւոնդ Ալիշանի տեղն ու դերը ճանաչողութեան ընդհանուր սահմաններում ո՞ր տանել՝ պատմագրութիւն, հոգեւոր արժեքների համակա՞րգ, թէ՞ հայ բանաստեղծական աշխարհիկ ակունք-

ներ: Պատմագրութեան եւ յատկապէս գեղարուեստական մտքի զարգացման մէջ Ղ. Ալիշանը իւրատեսակ սահման է գծել՝ բերելով առաջնորդողի իր կերպարը ժամանակների կիսաբաց վարագոյրների միջից, որի նկատմամբ իւրաքանչիւր կասկած գայթակղութեան քար է՝ զուտ արեւմտահայ բառաշերտի ընկալումով:

Դա, ըստ էութեան, այս սահմանագծի խաղարկումի առաջին քայլն էր հայ նոր գրականութեան մէջ. դրանով սահմանազատուում էին իրարից հանրագիտակ «կարգապահ» մտածողն ու բանաստեղծական կալուած մտնող ձերբագատ զգացմունքների նահապետ արուեստագետը՝ մի կողմից, եւ աստուածաբան մտածողի, պատմութեան խորքերը թափանցող գիտնականի նորատիպ տեսակը՝ միւս կողմից:

1899-ի Ապրիլին, այսինքն՝ դեռ Ղ. Ալիշանի կենդանութեան օրօք, Սպանդար Սպանդարեանի «Նոր-Դար» օրաթերթի առաջնորդողը փնտւում էր գրական «ազգային տիրացուների» (հեգնախառն կծու այս ակնարկը բացայայտ ուղղուած էր հենց Վենետիկի Միսիթարեան Միաբանութեանը – Ս.Դ.) վերջին քսան տարիների գործունէութիւնը՝ մեղադրելով այն բանի համար, որ «...մեր մտաւոր կեանքը չէ ծնել, չէ մշակել գէթ մի քանի նշանաւոր հրապարակախօս-գրողներ»¹: Նիւթն առաջ էր բերել Յովհաննէս Թումանեանի խոր զայրոյթը. նոյն Ապրիլին, ընդամենը տասն օր անց, արդէն «Տարագ»ում, նա գրում էր՝ «Խոստովանք լինի, որ այս վերջին տողերը ես լաւ չեմ հասկանում: Մենք գիտենք, որ «Նոր-Դար»ը «ազգային տիրացուներ» հակառակ կուսակցութեան (իմա՝ Դաշնակցութեան – Ս.Դ.) մարդկանց է անուանում»²: Այստեղ, ի հա՛րկէ, փոքր-ինչ «սխալւում է» երեսնամեայ բանաստեղծը. եզրոյթը ուրիշ մատնանիշ ունի, ոչ կուսակցական, այլ մշակութային շահարկման ենթահող, բայց բանաստեղծի ուղղակի հակայարձակման թիրախը սուր անկիւնագծով է տրուած՝ «Ինչպէ՞ս չէք պատկառում Ալիշանի նուագներից, ինչպէ՞ս չէք քաշում Գամառ Քաթիպայի ազատ երգերից, ինչպէ՞ս չէք ամաչում Պէշկիթաշլեանի աղու մրմունջներից, Շահազիզի ու Դուրեանի գործերից»³:

Վենետիկցի ռոմանտիկ բանաստեղծը Յովհ. Թումանեանի համար «պանծալի» այն նախորդներից է, «որ իրենց հոյակապ գործերով լցրին մեր երկիրը եւ ...յիշատակներով՝ մեր սրտերը, եւ ինչպէս պայծառ արեւ-

¹ «Նոր դար» / օրաթերթ, Թիֆլիս, 1899, տասնվեցերորդ տարի, Ապրիլ 1, Հինգշաբթի, թիւ 58 (Տե՛ս «Այս ինչի ցն է» առաջնորդողը):

² Թումանեան Յովհաննէս, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 6 / քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1887-1912, Եր., ԳԱԱ հրատ., 1994, էջ 114:- Ընդգծումը՝ բնագրում – Ս.Դ.:

³ Նոյն տեղում:

ներ լուսաւորում են մեր ճանապարհը»¹: Յովհ. Թումանեանը միեւնոյն ժամանակ տեսնում էր Ղ. Ալիշանի եւ Ռ. Պատկանեանի հայրենասիրական երգի անմիջականութիւնն ու կորովը, սակայն արձանագրում էր՝ «բայց հենց որ նրանք վերացական մտքերից դիմում են հայ կեանքի կոնկրետ ձեւերին, անմիջապէս ցոյց են տալիս իրենց անձանօրութիւնն այդ կեանքին»²: Ռ. Պատկանեանի առումով դա կապւում էր նաեւ լեզուական վրէպներին ու բարբառային կիրառութիւններին, իսկ Ղ. Ալիշանի ռոմանտիկական յաճումներին աւելացնում էր խոր կտրուածութիւնը մայր հողից, ուղղակի «անձանօրութիւնը» երկրին ու, բնականաբար, ժողովրդի հոգեբանութեանը, ինչն անտեսել չի կարելի:

Եթէ աւելի լայն դիտարկման չափանիշ վերցնելու լինենք, դա XIX դարի 40-ական թթ. երկրորդ կէսից երիտասարդ վարդապետ Ղեւոնդ Ալիշանի հոգեւոր աշխարհում տեղաշարժերի վկայութեան արձագանգ էր, գրական եւ գիտական մտածողութեան ժանրերը տարբաժանելու նախաձեռնող քայլ: Դա իր մէջ ծաւալուած դիւքի վկայութիւնն էր գեղարուեստական աշխարհի զգլխիչ մուտքի զգացողութեան առումով: Պահպանւում է ռոմանտիկական պատկերների գրապատմական նշանակութիւնը: Ղ. Ալիշանը, Դ. Վարուժանի բառամթերքի պատկերային ընկալմամբ, մնում է ե՛ւ մոգ, ե՛ւ Սօկրատ, ասել է թէ՛ պատկերների համակարգի հմուտ վարպետ եւ փիլիսոփայական խոհը համակարգող ուժ:

Ենթագիտակցական բաւիղներում կլասիցիզմի խրամատներից հոգեւորական երգիչը անցնում է բանաստեղծական վիպականութեան՝ ռոմանտիկական գերազանցութեան շեփորման: Այդպէս չե՞ն միթէ «Պշպուլն Աւարայրի», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանա», «Հայ հանճար», «Քաջակորովն Մուշեղ ի ճակատամարտի Չիրաւա» երկերը: Պատահակա՞ն են անհամեմատ ուշ, «Նուագք»ի երրորդ գրքում, նախընթաց դարի յիսունականների վերջին, սակայն փաստացի առաջին տպագրութիւնից տասը տարի առաջ գրուած «Ի նախագահն Մասիս» (1848) ծաւալուն քերթուածի եզրափակիչ տողերը, որտեղ խորագիրն անգամ պայքարի առաջնային «գահի» դերն ունի. միայն անդունդները յաղթահարած լեռը կարող է վրէժի ու սխրանքի կոչել Հայկազանց սիգապանձ փրկիչ քաջորդիներին՝ եւրոպական պայքարի ելած մարտիկների հանգոյն.

*Անդրնդայադթ լեառն իմ զահեղ վրէժ լուծեալ.
Յոր սխրացեալ եւ հայէի սիգապանձ*

¹ Նոյն տեղում, էջ 391:

² Նոյնը, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 7 / քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1913-1922, Եր., ԳԱԱ հրատ., 1995, էջ 532:

Զհանուրց փրկիչն՝ հովանի գոլ Հայկազեանց¹:

«Ողբաւ գրեզ, Հայոց աշխարհ» քերթուածում, նորէն 1848-ին, Ղ. Ալիշանը ներկայացնում է աղեկտուր պատկերներ՝ գերեզման դարձած Հայոց Եղեմից, բայց մաքառումի ոգին ռոմանտիկ երգիչը, իբրեւ քնարական հերոսական տիպար, ուզում է վստահաբար տեսնել իր մահից յետոյ հայոց յաղթական ու ծիծաղկուն արեւը, որ բացուելու է իր գերեզմանի վրայ, հոգ չէ, թէ յանուն դրա՝ հոգին հանդարտիկ լքէ մարմինը: Երբ «*Ժեր Նահապետը*» մտնի տապան, նոյն տապանէն թող ելնի այնքան սպասուած նո՛ր Հայաստանը: Իսկ եթէ պատգամը չարքագործուի, այնժամ հարկ կը լինի յիշել Մովսէս Խորենացու յայտնի ողբը՝ իբրեւ չիրացուած հնարաւորութիւն, իբրեւ մահերգ.

*...Որ հանդարտիկ ելնէ հոգեակս երթայ խաղաղ,
Գերեզմանիս ծագէ արեւն Հայոց ծիծաղ...*

.....
*Ի սեւ սարուկն համբուրեմ զհալն, որ ծածկէ զիս...
Ո՛հ, թող մեռնի ծեր Նահապետ, մտնու տապան,
Այլ թող ելնէ՛ ի տապանէն նո՛ր Հայաստան²:*

Ղ. Ալիշանը երկու ճանապարհ է մատնանշում նոր գրականութեան հօգօր մուտքի համար՝ կանգնած նրա դարպասների մօտ. առաջին՝ հերդերեան՝ դէպի ժողովրդական, ռամկական հարստացուցիչ երակը, եւ երկրորդ՝ «օտարը»՝ եւրոպական ռոմանտիկական կենսակերպը: Մինչ Ալիշանը Բուալոյի տեսական մտքին մեքենայական հետեւողութեամբ կլասիցիստական մեր մեկնաբանները ռամկական մօտիւնները դիտում էին գոեհիկ եւ «*ցած*» (Եդ. Հիւրմիւզ, Մ. Ջախջախեան, յատկապէս՝ Յ. Աւգերեան): Նահապետը առաջինը ուշադրութիւն դարձրեց «հանճարի» դրսեւորումների տարերքին. այն գրական շարժման եւ ուղղութեան բովանդակութիւն ստացաւ ժողովրդական լիցքերի պաշտպանութեան խորհրդով: Սա ընդգծում է իր տեսաբանական «*Ազգային երգերու եւ ուրիշ աւանդներու վրայ*» յօդուածում. «*Ռամկական երգը ազգային ոգւոյն մէկ ձայնն է, որ շատ հեղ ուրիշ կողմանէ մեռած կամ մարած ատենն ալ՝ դեռ այսպիսի երգոց մէջ կենդանի կը մնայ: Անոր համար ազգային երգ ալ կըսուի: Թէ որ աս երկու անուանս մէջ տարբերութիւն կայ, աս է, որ*

¹ «**Նուագք**» / Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի, Գ., Հայրունի, Վենետիկ, 1858, էջ 43:

² **Նոյն տեղում**, էջ 237:

ազգային երգը կրնայ վսեմ ոճով ու լեզուով ալ գրուիլ, իսկ ռամկականը գրեթե միշտ պարզ եւ ռամիկ լեզուով կը գրուի: Այսպիսի երգերը շատ անգամ աւելի լաւ կ'իմացընեն ազգին հանճարը, քան թէ ծանր գրուածքներ, եւ կը գտնուին անոնց մէջ անանկ սքանչելի գուրգուածք, որ միայն իրենց ռամկական անունին համար հասարակ բան մը կը կարծուին, բայց ճշմարիտը՝ գերագոյն գրուածոց կարգը անցնելու են: Այս գերազանցութեան մեծ ու յայտնի պատճառը աս է, որ ասանկ երգեր կամ գուրգուածներ ի սրտէ առաջ եկած են, եւ սիրտը միշտ վարպետ է»¹: Այսինքն՝ «ռամկականը», «ժողովրդականը» պարզութիւնից գնում է ռոմանտիկական հայեացքի հաստատման: Մնում է յուսալ, թէ ինչ չափով է ընթերցողը պատրաստ այն սրտով, զգայնութեամբ իւրացնելու: Ալիշանը հայ բանաստեղծութեան մէջ առաջին անգամ գծում է ռոմանտիզմի պարզ, բայց ոչ պարզունակ բանաձեւը: Մի՛րտն է որոշիչը²:

Մինչդեռ Յակոբ Օշականը, Ղեւոնդ Ալիշանին դասելով առաջին «ռոմանթիզմներին» գրապատմական կարգում, այնուհանդերձ, գտնում էր, որ նախընթաց դարում մեր ռոմանտիզմը գրական շարժում չդարձաւ, եւ բացատրում էր դա «առաջին քայլի» արժեքով. «Անհկա գրական պայքարի հանդէս մըն ալ չեղաւ: Քանի որ սկիզբ մըն էր եւ ոչ թէ զարգացում»³: Մի փոքր յետոյ, առանձնացնելով Ղ. Ալիշանի «թերին», հանում է գլխաւոր ստորոգելին. «Գրականութիւն միշտ ժողովուրդը մըն է: Ու գաղտնիք չէ, որ այդ ժողովուրդը պիտի պակսի Ալիշանի գործին, ինչպէս այդ ժողովուրդը գրեթէ պակսած է մեր հին մատենագրութեան»⁴: Անվրէպ աչքը կարող է նկատել թումանեանական գնահատականի դիպուկ յետագիծ Յ. Օշականի այս կարգի առաջադրոյթում: Ինքը դեռ վստահ չէ, բայց ռոմանտիզմի քայլերը այլեւս հաստատուն են մեզանում:

Այդ հաստատունութիւնը առաւել ընդգծելու համար բերենք ընկալման օրինակներ Ղ. Ալիշանի եւ Դ. Վարուժանի ռոմանտիզմի պատկերային մտածողութիւնից:

Առաջինը իր երգերում շատ է խաղարկում «ամպ-արեւ» ռոմանտիկական հակադիր խորհրդանիշները «Հայոց աշխարհիկ»ից.

¹ Ալիշան Ղեւոնդ, Երկեր, Եր., «Սովետական գրող», 1981, էջ 102:

² Պատահական չենք ընդգծում «սիրտի» գործօնը, որն անուղղակի կերպով շեշտում է նաեւ իր բանաստեղծական ընկալման մէջ.

Ես այն հողն ու ջուր սրբտով եմ սիրել («Նուագը...», Հայրունի, էջ 219):

³ Օշական Յակոբ, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 2 / Ռոմանթիզմներ՝ Հ. Ղեւոնդ Ալիշան, Մ. Պէշիկթաշլեան, Պ. Դուրեան, Բ. հրատ., Անթիլիաս, 2015, էջ 29: Ընդգծումները՝ բնագրում:

⁴ Նոյն տեղում:

*Ի թուխ ամպերէն ելնէ փոթորիկ
Ըզհող համբուրեն ծառերն ու մայրիք...*

.....
*Ամպն եւ փոթորիկ վաղիւ վերանայ,
Նոր արեւ, գարուն, ծառն ու այգին գայ՝*

«Ողբամ զքեզ Հայոց աշխարհ»ից՝ նոյնայանգ զուգադիր այլ պատկեր, ուր գլխաւոր ռոմանտիկական գործիքակազմը «չի փոխուում»՝

*Բիր տակ ամպէն ինչ ցեղ *ի դուրս ելնէ արեւ,
.....
Փախիր պահուի՛ր, թէ չէ՝ մաշիս, ո՛վ Հայաստան...²:*

Ղ. Ալիշանի պատկերային համակարգին սիրահար Դ. Վարուժանից իր հերթին բերենք երկու յար եւ նման դրուագ Նահապետին նուիրուած, «Բազմավէպ»ում 1904-ին տպագրուած քերթուածից, որը, ի դէպ, Դ. Վարուժանի տպագրած առաջին բանաստեղծութիւնն էր:

«Ալիշանի շիրմին առջեւ» հանրահռչակ երգն է սա: Մեր առջեւ ծաւի Ադրիականն է, «ուրկէ վիհեր լափեցիր մըտածման», եւ Վենետիկի Միաբանութեան շրջափակը, ուր յաւերժի մէջ ննջում է Նահապետը: Ու միանգամից՝ պատկերի ծնունդը.

Հոս կը նընջես...
*Ովկեան մէս, զոր կը ծածկէ այդ պատանք
Կարմիր հրդեհ մը, որ մոխրի տակ կ'առնէ քուն,
Հոս կը նընջես, ինչպէս հըրատն ամպին տակ՝*

.....
*...Բորբ Արշալոյս մէս որ կ'ելլայ ովկեանէն,
Ամպէն, մութէն՝ կը սըփոխ Մարդուն վրայ՝*

Ղ. Ալիշանը կլանուած է եւրոպական վաղ ռոմանտիզմի կոչնակներով, մինչդեռ թուում է՝ կլասիցիզմի գսպաշապիկը դիմակայելու է, թոյլ չի տալու զգեստներ փոխել, գայթակղութեանը ընդառաջ գնալ: Ապրած

¹ «Նուագը...», Հայրունի, էջ 223:

² Նոյն տեղում, էջ 232-233:

³ Վարուժան Դանիէլ, Երկերի լիակատար ժողովածու երեք հատորով, հ. 1, Եր. , ԳԱ հրատ., 1986, էջ 126: - Ընդգծումները մերն են – Ս.Դ.:

⁴ Նոյն տեղում, 128:

ներքին երկուութիւնը սա է. հասկանում է երոպական բանաստեղծական աշխարհին բացուելու, իրական դասականութիւնը վերաբնագնելու պահանջը, այսինքն՝ այն, որ համարժէք հայկական գիտակից ծնունդը պայմանաւորող քայլերը իրենով են արժեւորուում: Սա «*հին հայաստքի*» դիմաց նոր ժամանակի բերած համարձակ բանաձեւերն էին: Ինքը՝ գիտակ, հոգեւոր միջավայրը՝ կաշկանդող-աւանդական, դեռ անկարող աշխարհիկ այս փոփոխութիւնների յորձանքին ընդառաջ գնալու: Ղեւոնդ Ալիշանը, իբրեւ իր երգին անմիջական աջակից, բերում է «ռամկական» սիրոյ ալիքը:

Հայ նոր գրականութեան ակունքներում կամ միջանցքներում Ալիշանը Բայրոնի, Շիլլերի, Լամարթինի, Շատոբրիանի բանուկ երթելէր ապահովելու, ոչ միայն թարգմանելու, այլեւ նրանցից մէկը դառնալու լուսաւոր պատրանքով կարեւորեց նրանց մէջ առժամեայ ընդվզումներից յետոյ դէպի Աստուած, դէպի ներքին խաղաղութիւն բարոյական դարձի ճամբան:

Յիրաւի, դարձաւ նրանցից մէկը մեզանում, քանի որ հայ ռոմանտիկական բանաստեղծութիւնը խանձարուրի, օշականեան ռճով՝ «օրանի» մէջ է. սակաւ են երգիչները, Ղ. Ալիշանի ընդունելի եզրով՝ հայ «*հանճարները*», որտեղ «*հանճարի*» տակ պիտի ճանաչել եւ իրեն՝ որպէս առաջամարտիկ եւ վիպապաշտ բանաստեղծ:

Ընդունենք, որ թէեւ Յ. Օշականը առանձնակի զգուշաւորութիւն է ցուցաբերում «*հայկական ռոմանտիզմ*» եզրոյթի հարցում, քանի որ նրանով, իր ձեւակերպումով, բացում է «*արեւմտահայ գրականութեան արշալոյսը*»¹: Եւ ինքն էլ ողջունում է առաջին երեք «ռոմանտիզմներին»:

Ճիշդ է նկատուած ռոմանտիզմի եզրը ալիշանագէտ Սուրէն Շտիկեանի գրքում, թէ՛ «*Իր գրական-գեղարուեստական ամբողջ վաստակով Ալիշանը հիմնովին խարխլեց հայկական կլասիցիզմը եւ ուղի հարթեց գրական յաջորդ ուղղութեան՝ ռոմանտիզմի համար*»²:

Իսկ դրա համար, նախ, պիտի անցնել մարտնչումի ճամբով. ահա՛ ինչու են պետք պայքարի համաշխարհիկ «*հանճարները*», ի մասնաւորի՝ Շատոբրիանը եւ Շիլլերը:

Ղեւոնդ Ալիշանը հայ «*հանճարը*»՝ ռազմերգուն, ոտքի՛ հանելու յանձնառութեամբ է տոգորուած: Իսկ նրանք՝ արեւմտահայ բանաստեղծութեան ռազմերգուները, այդ թւում առաջին հերթին՝ Դանիէլ Վարուժանը, հեռունեքում չէին:

¹ Օշական Յակոբ, Համապատկեր ... , հ. 2, էջ 9:

² Շտիկեան Սուրէն, Ալիշանի գեղարուեստական ստեղծագործութիւնը, Եր., 1967, էջ 4:

СУРЕН ДАНИЕЛЯН

Доктор филологических наук, профессор

РЕЗЮМЕ

АЛИШАН В РАЗВИТИИ НОВОЙ ЛИТЕРАТУРЫ

Ключевые слова: Гевонд Алишан, Мхитаристы, новая армянская литература, ранний европейский романтизм, литературные и критические оценки, Шатобриан, Шиллер, Даниел Варужан, Акоп Ошакан.

В статье рассматривается роль Гевонда Алишана в формировании и развитии новой армянской литературы. В частности, акцентированы пути от классицизма к романтизму, влияние европейской литературы (Байрон, Шиллер, Ламартин, Шатобриан) и оценки автора в траектории развития и последующих процессов, происходящих в армянской новой литературе (Даниел Варужан, Акоп Ошакан и другие).

SUREN DANIELYAN

Doctor of philological sciences, Professor

SUMMARY

ALISHAN IN THE MOVEMENT OF NEW PERIOD ARMENIAN LEITERATURE

Key words: Fr. Ghevond Alishan, Mekhitarists, Armenian New Period Literature, European Early Romanticism, literary and critical estimations, Chateaubriand, Schiller, Daniel Varuzhan, Hakob Oshakan.

In the article through theoretical and textual combinations is examined Ghevond Alishan's role in the field of Armenian New Period Literature at his beginning and developing areas. Especially is emphasized the way from Classicism to Romanticism, European literature influences (Byron, Schiller, Lamartine, Chateaubriand), Alishan's connections to Armenian post-coming Literature and estimations of his works (Daniel Varuzhan, Hakob Oshakan and others).

REFERENCES

1. **Alishan Ghevond**, Erker, Yer., "Sovetakan grogh", 1981.
2. **Tumanyan Hovhannes**, Erkeri liakatark zhoghovatsu tasy hatorov, h. 6 / qnnadatutyun ev hrarakakhosutyun. 1887-1912, Yer., GAA hrat., 1994.
3. **Tumanyan Hovhannes**, Erkeri liakatark zhoghovatsu tasy hatorov, h. 7 / qnnadatutyun ev hrarakakhosutyun. 1913-1922, Yer., GAA hrat., 1995.
4. **"Nor-Dar"** / oratert, Tiflis, 1899, tasnvecerord tari, April 1, Hingshabti, N 58.
5. **"Nvagkh"** / H. Ghevonda M. Alishanian Mkhitarian Vardapeti, G., Hayrouni, Venetik, 1858.
6. **Shtikyan Suren**, Alishani Gegharvestakan steghsagortsutyuny, Yer., 1967.
7. **Varuzhan Daniel**, Erkeri liakatark zhoghovatsu ereq hatorov, h. 1, Yer., GA hrat., 1986.
8. **Oshakan Hakob**, Hamapatker arevmtahay grakanutyun, h. 2 / Romantikner` H. Ghevond Alishan, M. Peshiktashlian, P. Durian, B. hrat., Antelias, 2015.

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
mnacakanyaneva@mail.ru*

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ash.galstyan@mail.ru*

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ-ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ. ՀՈՒՇԱՅԻՆ ԶՈՒԳԱՀԵՈՒՆԵՐ

Բանալի բառեր՝ Ղևոնդ Ալիշան, Խրիմյան Հայրիկ, հոգևորական, գրող, հասակակիցներ, ազգի նվիրյալներ, հուշեր, բնորդ, դիմանկար, երկ-խոսություն, բնութագրող բառեր:

Հայ իրականության դարավոր պատմության անվիճարկելի ու բացարձակ մեծություններից են Ղևոնդ Ալիշանը և Խրիմյան Հայրիկը, որոնք նախախնամության կամոք ծնվել են միևնույն դարաշրջանում և իրենց «աստվածամերձ վարքով ու ծովածավալ գիտությամբ» դարձել հայ ժողովրդի պատմական ճակատագրի եզակի կրողներից ու կերտողներից: «Դարերը շատ քիչ բան փոխանցած կլինեին իրար, եթե չլինեին մեծ մարդիկ»¹, - մի առիթով նկատում է գրականագետ Վ. Մնացականյանը: Իրապես, մեծերը ծնվում են ժամանակի հրամայականով. այսօր անվիճելի փաստ է, որ դեռևս կենդանության օրոք ժողովրդի հավաքական գիտակցությունը լիովին ամրագրել էր երկու հայորդիների՝ ի վերուստ սահմանված առաքելության խորհուրդը: Եվ դա զարմանալի չէ: Հայոց բնաշխարհը և հայությունն ինքը՝ հայ մարդու հոգին ու շունչը, նիստուկացրել, ուրախությունն ու դառնությունը, անցյալի ապրումներն ու ապագայի հույսերն են երկու հայորդիների աշխարհատեսության հիմնարար ու շարժիչ ուժերը, նրանց «եսի» առանցքը: Դա հատկապես տեսանելի է ժամանակակիցների հիշողություններում:

Հայտնի է, որ հուշագրությունը (ֆրանս. memoires), ըստ հեղինակի հայեցողության, անցյալի՝ հետաքրքրություն ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողություն է, որ ունի ժանրային առանձնահատկություն, առաջին հերթին՝ գրվող խոսքի դրսևորման առումով:

Մշակութաբանական և աղբյուրագիտական նշանակություն ունեն Ղևոնդ Ալիշանին և Խրիմյան Հայրիկին նվիրված հուշերը, որոնք այնքան տպավորիչ են, բազմազան ու պարտավորեցնող, որ հուշագիրների մեծ

¹ Վ. Մնացականյան, Սերունդների մեծ ժամանակակիցը, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 10, Երևան, 1975, էջ 4:

մասը դժվարանում է ասելիքը ներկայացնել համապարփակ ու բնորոշիչ դատողություններով: Հուշերը ներկայացվում են կառուցվածքային ներքին բաժանումներով՝ երկու հայորդիներն իբրև մարդ-անհատականություն, հոգևորական, գրող, մանկավարժ...: Եվ բոլոր տիրույթներում մեծ իմաստով գերիշխում է բացառիկ հայրենասերի կերպարը: «Երկու եկեղեցականք կան,- գրում է Արփիար Արփիարյանը,- որոնց դեմքը նայելով երբեք հայ մը չկրնար հագենալ՝ Խրիմյան և Ալիշան»¹:

Հայ ազգի երկու զավակներն ապրել են աշխարհագրական տարբեր տարածություններում. Ղևոնդ Ալիշանը գիտակցական ողջ կյանքն անց է կացրել Վենետիկի Մխիթարյան միաբանությունում, սակայն նրա մասին հուշագրառումներ կատարել են ոչ միայն միաբանության հայրերը, այլև հայ մտավոր սերունդի բազմաթիվ ներկայացուցիչներ: Մեծ հանրագիտակի մասին հուշեր են գրել Սիմեոն Երեմյանը, Վարդան Հացունին, Արփիար Արփիարյանը, Գրիգոր Խալաթյանը, Գևորգ Բաշինջաղյանը, Գրիգոր Արծրունին, Ավետիք Իսահակյանը և այլք: Մխիթարյան միաբաններից միայն Ալիշանին են ժամանակակիցները ամբողջական հուշագրություններ նվիրել:

Խրիմյան Հայրիկի մասին նույնպես հուշագրական էջեր են հյուսել Ավետիք Իսահակյանն ու Ալեքսանդր Շիրվանզադեն, Հրաչյա Աճառյանն ու Փանոս Թերլեմեզյանը, Ավետիս Ահարոնյանը և այլք: Մկրտիչ Խրիմյանին մեծարել են Հայոց Հայրիկ պատվանունով, իսկ հուշագիրները կերպարագծել են նրա առինքնող դիմանկարը: Բնագրերից քաղաբերում ենք, որ Խրիմյան Հայրիկը թուրքական հալածանքի ժամանակ կորցրել է ընտանիքը, 1862թ. դարձել Տարոնի Սբ. Կարապետի առաջնորդ: 1869թ. ընտրվել է Պոլսի պատրիարք: Օսմանյան կառավարությունը չի ներում Խրիմյանին Գուլ Գափուլի ցույցից հետո Բարձր Դռանն ուղղված բողոքագիրն ստորագրելու համար: Ուխտագնացության անվան տակ Խրիմյանին ստիպում են մեկնել Երուսաղեմ: «Արծիվ» Խրիմյանը փակվում է² Երուսաղեմում՝ «Ճնճղուկի վանդակի» մեջ:

Իբրև հուշագրության բնորոշներ՝ Ալիշանը և Խրիմյանը ներկայացվում են իրենց բացառիկ ու անժխտելի արժանիքներով, որոնք բացահայտում են երկու հայորդիների թե՛ մարդկային, թե՛ հասարակական և թե՛ ազգային ու հոգևոր նկարագիրը, որոշակի լույս սփռում նրանց ստեղծագործական բնատուր քանքարի ճախրանքների վրա: Մեթոդաբանական տեսանկյունից հուշագիրները հաճախ են նախապատվություն տալիս

¹ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974, էջ 9:

² Կորիւն վարդապետ Բաղդասարեան, Երուսաղեմի հայկական թաղամասի գաղտնիքները. մաս Ա, 2019, էջ 87:

արտաքին և ներքին նկարագրություններին, որոնց միջոցով ուրվագծվում են բնորոշների էությունը, վարքագիծը, արարքների նախադրյալները: Հուշերում թե՛ Ալիշանը, թե՛ Խրիմյանը հիմնականում ամբողջանում են այս սկզբունքով. ցուցադրվում են նրանց գործողությունների և վարքագծի բնորոշ դրվագներ, որոնք մեծ մասամբ ուղեկցվում են հեղինակի նկարագրական ու գնահատողական միջամտություններով, ուղղակի և անուղղակի խոսքով, այլ անձանց հետ առնչություններով:

Անշուշտ, կարևոր է, թե ո՛վ է հուշագիրը, ի՛նչ պայմաններում և որտե՛ղ են նրանք հանդիպել: Օրինակ՝ Ավ. Բսահակյանը Սուրբ Ղազարի մեծ ճգնավորին՝ Ղևոնդ Ալիշանին, առաջին անգամ հանդիպում է 1901 թ. ապրիլի սկզբներին, երբ Վիեննայից մեկնում է Վենետիկ՝ Մխիթարյանների հարուստ գրադարանից օգտվելու, Բոսալիան հնարավորինս ամբողջական տեսնելու համար: Հայր Սիմեոն Երեմյանը առաջնորդում է նրան Ալիշանի մոտ: «Մտնում ենք Ալիշանի խուցը,- գրում է Բսահակյանը,- մի ոչ մեծ սենյակ ծովահայաց լուսամուտով: Գրասեղանին հակած է մի ալևոր՝ փոքրամարմին, անարյուն, դալուկ մի սուրբ... և գրում է»¹:

Հանդիպումը և գրույցը հայր Ալիշանի հետ խոր տպավորություն է թողնում Բսահակյանի հիշողության մեջ և գրեթե 50 տարի անց՝ 1948 թվականին, նա նույն ջերմությամբ ու սիրով թղթին է հանձնում «Ղևոնդ Ալիշան» հուշապատումը: «Երիտասարդ Բսահակյանը անձամբ ճանաչած մեծ վարպետներից երեք հոգու է առավել պաշտել՝ Խրիմյան Հայրիկ, Ղևոնդ Ալիշան, Քրիստափոր Միքայելյան»², - արձանագրում է Վարպետի թոռը՝ գրականագետ Ավ. Բսահակյանը:

Ոչ պակաս ուշագրավ է բանաստեղծի առաջին տեսակցությունը նաև Խրիմյան Հայրիկի հետ: Գուցեն նախախնամության կամոք հանդիպումը վերջինիս հետ տեղի է ունենում 1897 թ. դարձյալ հայրենիքից դուրս՝ Վիեննայում, որտեղ Հայրիկը ժամանում է գործնական այցով: Նրան դիմավորող հայ երիտասարդների խմբում լինում է նաև Բսահակյանը: «Հայերս խումբ-խումբ մտնում ենք դահլիճը, ուր բազմած է Հայրիկը ժպիտը դեմքին՝ պատկառելի և սիրալիր,- գրում է բանաստեղծը,- սակայն խորը և խելոք աչքերում պարզապես շողում է բարձր հոգու այն սրբազան վիշտը, որ բոլորիս վիշտն է, բայց նա միայն իր երկնային սրտով զգում է այնքան խորը և իր ողջ էությամբ: Ահա մենք, նրա որդիներս, խոնարհվում ենք նրա առաջ, համբուրում ենք կենդանարար աջը... Հայրիկը բոլորիս գուրգուրում է, սիրող հոր պես հարցնում է յուրաքանչյուրի դրությունը,

¹ Ավ. Բսահակյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1977, էջ 9:

² Ավ. Բսահակյան, Ավետիք Բսահակյանի երկրորդ ուղևորությունը Եվրոպա, էջ 154: (<http://littrans.asj-oa.am/134/1/135-164.pdf>) (20.08.2020):

պարապմունքը, հետաքրքրվում է նրա կյանքով, խրատում է, կատակում է...»¹: Հաջորդ հանդիպումն արդեն 1901 թ. էր, երբ Վենետիկից վերադարձած Բսահակյանը մեծ տպավորություններով այցելում է Էջմիածին՝ «քաղցր պարտքը» հատուցելու Խրիմյան Հայրիկին: Այդ հանդիպման մանրամասները Բսահակյանը առաջին անգամ հիշատակում է 1907 թ. «Նոր ալիք» թերթում տպագրված «Հուշեր Հայրիկի կյանքից» խորագրով հիշողություններում, որտեղ երկուստեք միահյուսվում են Ղևոնդ Ալիշանի և Խրիմյան Հայրիկի հուշ-դիմանկարները՝ շաղախված իսահակյանական սիրո և անօրինակ ակնածանքի ատաղձով: Հանրագիտակ երկու մեծերի մտերմությունը ցուցադրվում է հենց հուշագրության բնագրերում: «Երբ մեկնում էի Վենետիկից, գրում է Ավ. Բսահակյանը, գնացի Ալիշանի մոտ՝ վերջին անգամ տեսնելու և հրաժեշտ տալու:

Օրինեց ինձ, բարիքներ մաղթեց և ողջույն ուղարկեց Խրիմյան Հայրիկին:

-Ինձմեն հարյուր օրով մեծ է ան,- ասաց Ալիշանը,- բայց կըսեն, որ շատ առույգ է, ձի կնստի. հարկավ այդպես է. ան Մասիսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմե, Հայաստանի հացը կուտե, անոր հողի ուժը կառնե...»²:

Ալիշանի կարոտագին ողջույնին ի պատասխան՝ Խրիմյանը նույնպիսի սիրով ու գորովանքով է խոսում Նահապետի մասին: Բսահակյանը հիշում է Հայրիկի խոսքերը. «Մենք հասակակիցներ ենք. ես շատ կսիրեմ անոր. անուշ գրիչ ունի: Նա շատ է ազդեր իմ գրչի վրա. նա ինձ շատ բան է ներշնչեր: Ասա՛, ուրիշ ի՞նչ կըներ»³:

Բսահակյանի հուշագրական այս փոքրիկ պատառիկը, բացահայտելով երկու հայորդիների փոխադարձ սերն ու հարգանքը, բացառիկ արժեք է ներկայացնում: Հայրիկը՝ իբրև ստեղծագործող անհատ, իր խոնարհումն է բերում գրչի մեծ վարպետին: Առհասարակ, ինչպես իրավացիորեն նկատում են գրականագետներ Ա. Մաղոյանը, Հ. Պետրոսյանը, «Հայ մշակույթի ուսումնասիրության, Եվրոպայում հայագիտության զարգացման գործում Հայրիկը շատ բարձր էր գնահատում «Մխիթարյան գրավաստակ հայրերի» ծառայությունները: Նա առանձնակի սիրով էր կապված իր «ծննդակից և սննդակից» Ղևոնդ Ալիշանի հետ...»⁴:

Իրապես, հուշագիրներից շատերն են շեշտադրում Ալիշանի՝ իբրև պատմա-հայրենասիրական պոեզիայի քերթողի մեծագույն երախտիքն ու

¹ Ավ. Բսահակյան, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 59-60:

² Ավ. Բսահակյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 14:

³ Նույն տեղում, էջ 15:

⁴ Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 13-14:

ներդրումը հայ գրականության պատմության ոսկե շրջայում:

Իսահակյանը շարունակում է հուշապատումը. բարձր գնահատելով Ղևոնդ Ալիշանի սրտառուչ ու ջերմ ողջույնները՝ Խրիմյան Հայրիկը հրաման է արձակում. «Ես վաղը կկարգադրեմ, որ անոր Մասիսի հողեն, Երասիսի ջրեն ու Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը դրկեն Վենետիկ:

Ինչպես հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմաղաններով, բայց մինչ հասնելը, դժբախտաբար, սիրելի Նահապետը արդեն վախճանված էր եղել»¹:

Հուշերում նկարագրական խոսքը հեղինակները հյուսում են՝ կիրառելով այնպիսի հատուկ հնարներ, որոնք ձևավորում են հուշագրական տեքստի դիմապատկերային միջուկը: Այս տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում երկխոսությունները բնորդի և հուշագրողի միջև: Ուշարժան է հուշագիր Մ. Զալյանի և Հ. Ալիշանի զրույց-երկխոսությունը, որը ինքնօրինակ ապացույցն է այն բանի, որ երկու մեծերը, չնայած մշտակա հեռավորությանը, իրենց մտածումների ենթաշերտերում և զրույցներում հաճախ են հիշել, զուգահեռել միմյանց կյանքն ու ապրումները: Զալյանը հիշում է.

«Յոթանասունինն տարիս լրացավ, «Ձեր» Խրիմյան ինձնից հարյուր օրով մեծ է,- ասաց նա (Ղ. Ալիշանը) հնագետի ճշտությամբ:

-Ինչո՞ւ «մեր» և ոչ թե «ձեր», - նկատեցի ես:

-Ինչպե՞ս թե «մեր»:

-Չէ՞ որ նա էլ տաճկաստանցի է:

-Այո, ճիշտ է,- պատասխանեց նա ծիծաղելով»²:

Բնորդները հուշերում ներկայանում են անցյալի պատկերների, գործողությունների շրջայում, որտեղ անհրաժեշտ կարգով ներկա է հեղինակային եսը: Օրինակ՝ Ղևոնդ Ալիշանը հանդես է գալիս Իտալիայի թագուհու հետ երկխոսելիս, Նապոլեոն զորավարի հրովարտակը քննարկելիս, եվրոպական գիտնականների հետ մասնագիտական հարցերի շուրջ խորհելիս: Խրիմյան Հայրիկի հետ երկխոսում են մտավորականության տարբեր ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ, բազում տառապյալներ և այլք: Նա համայն տաճկահայերի Հայրիկն է:

Երկու հայորդիներին միաժամանակ հիշատակել է նաև հուշագիր Տիգրան Նազարյանը. «Եթե համայն հայության մեջ անխտիր բոլոր խավերում անկետայի ենթարկվեր, թե ո՞վ է ԺԹ դարու ամենախոշոր, ամենահեղինակավոր, ամենասիրելի, պաշտելի մարդը, որի խոսքը, կամքը,

¹ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 16:

² Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 83:

տենչանքը ու մտորումը համայն հայության բաղձանքի ամփոփումը իր սրտում-հոգում ամբարած լինել, անշուշտ, միաձայն երկու մարդի վրա կանգ կառնեին՝ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅԳԻԿ (մինչև կաթողիկոսանալը) և ՀԱՅԳ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ: Իսկ սրանցից որի՞ն կտար առավելությունը, միաձայն ձեռնպահ կմնար և չէր կարող ձեռքը խղճին ասել, Խրիմյան Հայրի՞կ, թե՞ Հայր Ղևոնդ Ալիշան: Խրիմյան Հայրիկ և Հայր Ղևոնդ Ալիշան՝ մի-մի պայծառ, կենսաբար, բուժիչ ու սննդաբար ճառագայթներ եղած են, համայն հայության սիրտ-հոգի-միտք-զգացում դաստիարակող, կոռոկ կոփողներ»¹: Հուշագրի այս ոգեշունչ խոստովանության ակունքները հասնում են վաղ մանկություն. դեռևս օրորոցից է լսել երկու մեծերի անունները և մեծացել ու դաստիարակվել նրանց «հրաբորբոք» գրքերով: «Ղարաբաղում մեր տունն է եղել առաջինը, ուր մտել են Ս. Ղազարի և Վարազա հրատարակությունները,- գրում է Տ. Նազարյանը:- Նախորդ դարու կիսից հայրս էր Կ. Պոլսից ջերմ բարեկամ Խրիմյան Հայրիկին և նրա Վարագն տպագրական մեքենա նվիրողը... Միաժամանակ Վենետիկին և Լայպցիգին էլ շատ մոտ և երկար տարիներ այդ տեղերի հոյակապ հրատարակություններով մեր տունը հեղեղողը»²:

Անշուշտ, երկու հայորդիների նկատմամբ ունեցած հիացմունքն ու ակնածանքը միայն մանկական օրերի վառ տպավորություններ չեն. խմբագիր, հրատարակիչ, հասարակական գործիչ Տ. Նազարյան հուշագիրը հետագայում առիթներ ունեցել է անձամբ առնչվելու նրանց հետ, և համոզմունք դարձած այս բնութագիրը սասանելի չէ: Նույնիսկ այն դիտարկումը, թե Խրիմյան Հայրիկի իսկական կոչումը կաթողիկոս լինելը չէր, որով կարծես «սավառնող Արծվին» շղթայեցին Վեհարանի չորս պատի մեջ, չի ստվերում Հայրիկի մասին ունեցած նրա հիացմունքը. «Հավերժ էլ պիտի մնա ՄԵԾ, պաղարյուն պատմագիրների մանրագնին նրա հույժ կենսալից սիրտ ու հոգին ուսումնասիրելուց հետո»³:

Ս. Ղազար այցելության, մասնավորապես Ալիշանի հետ հանդիպման մասին Նազարյանը գրում է. «Մինչև օրս էլ, կարծեք, ցոլում են մեր առաջ Հ. Ղևոնդ Ալիշանի հրաշագեղ արեգ-աչերի ճառագայթները: Այդ օրը հենց այնտեղ մտքումս ուխտեցի հետևյալ այցիս մեծ հայրենասերին բերել սուրբ Մասսի լանջերից անթառամ ու համասփյուռ ծաղիկներից մի փունջ, Մայր Արաքսուց մի սրվակ ջուր: Բայց ավա դ, հետևյալ այցիս ես նրա սուրբ շիրիմը ցողեցի արտասուքներովս»⁴: Ցավոք, հուշագիրը չի

¹ Նույն տեղում, էջ 163:

² Նույն տեղում, էջ 164:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 166:

արձանագրում իր գլխում ծագած այդ մտքի առիթն ու պատճառը, ավելի ճիշտ՝ այն երկխոսությունը, որ տեղի է ունեցել իր և Ալիշանի միջև: Քաղաքերված հատվածը նրբորեն հիշեցնում է Իսահակյանի հուշերում ևս մատնանշվող հայրենիքի խորհրդանիշները՝ Մասիս, հայրենի հող, ծաղիկներ, մայր գետի ջուր: Ուրեմն, ամենայն հավանականությամբ, հայրենի երկրի, նրա արժեքների նկատմամբ մշտավառ սերը, կարոտը, եղել են հայրենիքից նրան այցելող յուրաքանչյուր հայի հետ ունեցած զրույցի թեման: Ավելին. Ս. Ղազար այցելող ազգային հյուրերին հաճախ Հայր Ալիշանն էր ուղեկցում՝ ասելով. «Ես ինքս խնդրած եմ, կախորժիմ ազգային մը տեսնելով»¹: Զբոսանքի ավարտից հետո աննկարագրելի զարմանքն է պատում հյուրերին, երբ պարզվում է, որ «այն համեստ ծերունին է եղեր հ. Ալիշանը»²:

Հուշերում երկու հայորդիների դիմանկարն ամբողջանում է մի քանի սկզբունքներով, որոնցից էականը թերևս հուշագիրների առաջին կամ վերջին տեսակցությունը կամ հանդիպումն է, որն ուրվագծվում է բնորդի անմոռանալի հատկանիշներով. «Անպաճույճ խցի դուռը բացվեցավ: Քառակուսի, լուսավոր և անզարդ սենյակի մի կողմում դրված էր անկողին, իսկ ձախակողմյան պատի առաջ գրքերով և թղթերով ծածկված սեղանի հետևը նստած էր մի ալեգարդ, բարձրահոն վարդապետ, որ վեր կենալով ողջունեց ինձ սիրով և հրավիրեց նստելու: Այդ բարձրահասակ, քաղցրադեմ ծերունին էր հայր Ղևոնդ Ալիշանը»³ (Նիկողայոս Քարամյան): Կամ՝ «Վերջին անգամ Հայրիկին տեսա 1906 թվի աշնանը. ցավալիորեն թույլ էր և գունատ»⁴:

Տիգրան Փիրումյանը հիշողություններում տվել է Հայրիկի դիմանկարը՝ արտաքին բարեմասնությունների ընդգծումով՝ երբեմն առանձնացնելով նրա ժպիտը, աչքերը, դեմքը, ձայնը և այլն. «Հայրիկը ամեն բանի մեջ Հայրիկ է: Քարոզելիս նա չէ փոխում մագաչափ: Նոյն քաղցրմեղամաղձոտ ժպիտը, նոյն արդար ու հանգիստ սիրտը, նոյն մտախոհ ու վսեմ աչքերը, նոյն անուշ մարդասեր ու լսողի սիրտը ծակող ձայնը...»⁵: Այլ Շիրվանզադեի գրչի տակ ևս կերպարագծվել է Հայրիկի ներշնչող դիմանկարը. «Աննման էր Խրիմյան Հայրիկի արտաքինը: Ոտքից մինչև գլուխ մարմնացած գեղեցկություն: Ոչ մի լուսանկարով չի կարելի

¹ Նույն տեղում, էջ 82:

² Նույն տեղում, էջ 109:

³ Նույն տեղում, էջ 33-34:

⁴ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 22:

⁵ Տ. Փիրումեանց, Խրիմյան Հայրիկ (Իմ յիշողություններից), Թիֆլիս, 1887, էջ 36:

պատկերացնել Խրիմյանի դեմքը, մանավանդ խոշոր կապտագույն աչքերի արտահայտությունը»¹:

Երկու հայորդիների արտաքին բարեմասնություններին համադրվում են նրանց սրբակենցաղ վարքն ու գործունեությունը՝ կազմելով կատարյալ ներդաշնակություն: «Հ. Ալիշանի ամբողջ կյանքը եղած է ճգնության խնկարան և դպրության թանգարան»², - գրում է Ս. Երեմյանը: Շիրվանզադեն հիշում է. «Խրիմյանը իր ժամանակից դուրս էր, չեմ ասում վեր կամ վար, այլ դուրս: Նա ուրիշ աշխարհի և ուրիշ շրջանի մարդ էր: Քրիստոսի ժամանակ նա կլիներ մեկը նրա առաքյալներից, Սուրբատի շրջանում նա կլիներ փիլիսոփա: Նրա միակ զենքն էր իր հոգին, իր միտքը, իր հեղությունը և ներողամտությունը»³: Երկու հայորդիների համեստ, ազնիվ, աստվածավախ բնավորությունը, միանալով բնատուր տաղանդին, անխոնջ աշխատասիրությանը, անօրինակ հայրենասիրությանը, կերտում էր ստեղծագործող հոգևորականի մի բարձր կերպար, որի հենաշարժիչ ուժերն են՝ Աստված և հայրենիք:

Խրիմյան Հայրիկին կերպարագծել է նաև Ավ. Ահարոնյանը «Անդրանիկ և Խրիմեան Հայրիկ» երկում. «Խրիմեան... Էջմիածնի կաթողիկոս՝ նա ասես ծեր եւ հնապաշտ միաբաններին գայթակղեցնելու համար Վեհաբանից իջնում էր գլխաբաց, մի պարզ կապայ հագած եւ մի սովորական ձեռնափայտ ձեռքին, մեն-մինակ քայլում էր դեպի լիճ կամ անտառ: Վանք եւ միաբանութիւն ճնշում էին նրան, հակառակ որ ինքը մեծագոյն նախանձախնդիր էր եւ՝ մեկին, եւ՝ միւսին: Վասպուրականի արծիւը պարզապէս խեղդում էր Էջմիածնում «եղէ ես որպէս ճնճուկ ի տանիս Ս. Էջմիածնի», ասում էր նա յաճախ»⁴:

Շիրվանզադեն Հայրիկին բնութագրում է որպէս հումորի մեծ վարպետ, հանճարեղ հոետոր, թատրոնի սիրահար. «Թատրոնը, - ասում էր Հայրիկը, - երկրորդ եկեղեցի է: Անիկա տեսակ մը տաճար է մարդկային բարքերը կրթելու և հոգին բարձրացնելու համար»⁵:

Հուշագիրները այս երկու բնորդների դիմանկարները կառուցել են տարբեր բառամիավորների նրբագծերով, որոնք գործածության առումով հետաքրքրական իրողություններ են վեր հանում:

Հուշերում Ղևոնդ Ալիշանը բնութագրվում է *Ս. Ղազարու ոգի, խոհուն, մտածող, ամբողջ հայության սիրելի, ճգնության խնկարան, դպրու-*

¹ Ալ. Շիրվանզադե, Կյանքի բովից: Հուշեր, Երևան, 1982, էջ 485-486:

² Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 127:

³ Նույն տեղում, էջ 487:

⁴ Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հ.5, Թեհրան, 1983, էջ 415-416:

⁵ Նույն տեղում, էջ 485:

թյան թանգարան, իսկ Հայրիկը՝ գաղափարի և ազատության ջահակիր, քաջ Հայրապետ, Վասպուրականի արծիվ, կատարյալ մարմնացում Ավետարանի, Հայոց հրեշտակ և այլ արտահայտություններով:

Պատահական չեն այս բնութագրիչները. Ալիշան ջերմեռանդ հոգևորականի բացառիկ մարդասիրությունը, անմնացորդ նվիրումը դիմացինին հաճախ են ընդգծվում հուշագիրների մտային հոսքերում: «Հ. Ղևոնդ վ. Ալիշան, բանաստեղծ ըլլալէ առաջ քրիստոնյա է, քրիստոնյա մը, որ կատարելապէս խոնարհ է և կխորշի ամեն պատվէ, ամեն փառքէ...»¹, - գրում է Ա. Արփիարյանը: Մեկ այլ առիթով հիշում է. «Կհիշեմ զինքն, որ երբ հիվանդ էինք, անտոնաձայն, լռիկ-մնջիկ կուգա մեր անկողնին քովն ամեն օր, կհոգա մեր առողջության համար, կքաջալերէ ըզմեզ ու կխնամէ իր ձեռքերովը...»²: «Այդ մարդու համեստությունը, պարզությունը և խոնարհությունը միանգամայն առասպելական են»³, - խոստովանում է Մ. Զալյանը: «Ինքը, որ անհուն գորովանք մը ուներ մեր ամենուս վրա, կնեղվէր, երբ մենք փոխադարձաբար նույնը կցուցնէինք իրեն»⁴ (Հովհաննէս Թորոսյան): Հուշագիրները մեծագույն ակնածանքով հաստատում ու վերահաստատում են այն գաղափարը, որ Ալիշանը Ս. Ղազարի ոգին էր, սուրբ մարդ, որ «ամենուն գորավիզն է, ամենուն մխիթարանքն է, ամենուն սերն է»⁵:

Փ. Թերլեմեզյանը «Կյանքիս հուշերը» գրքում ներկայացնում է Խրիմյան Հայրիկի «շինարար և օգտակար գործունեությունը», տալիս նրա մարդասիրական նկարագիրը, անշահ օգնությունը կարոտյալներին: Անդրադառնալով Խրիմյանի գործունեությանը՝ մեծ նկարիչը գրում է. «Խրիմյան՝ Փոքր Ասիայի ճանապարհներից գուրկ խուլ անկյունում՝ Վասպուրականում, մամուլ է բերել ու թերթ հրատարակել: Իր բնական պերճախոսությամբ ու անձանձրույթ և նվիրված գործունեությամբ հասարակական աշխատանքի ընդունակ նոր մարդիկ է հասցրել:

Հետո Փորթուգալյանի հետ միասին երկարատև նիրհի ու սարսափի մատնված հայ ժողովրդի զարթոնքի համար դպրոցներ են բացել և գրական ու բանավոր պրոպագանդայով հաջողել են որոշ չափով հեղափոխական շարժում առաջ բերել»⁶:

Այսպիսով՝ հուշային ընդհանուր շղթայի շրջանակում հայոց երկու հանճարեղ հսկաների զուգահեռ քննությունը ունի որոշակի նպատակ.

¹ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 43:

² Նույն տեղում, էջ 76:

³ Նույն տեղում, էջ 86:

⁴ Նույն տեղում, էջ 108:

⁵ Նույն տեղում, էջ 78:

⁶ Փ. Թերլեմեզյան, Կյանքիս հուշերը, Երևան, 2017, էջ 85-86:

մեկ անգամ ևս ամրագրել, որ թե՛ Ալիշանը, թե՛ Խրիմյանը միավորվում են ոչ միայն իբրև հոգևոր և մտավոր հսկաներ, այլև հայ ժողովրդի անօրինակ նվիրյալներ¹: Ինչպես գրում է Մ. Վարանդյանը, «Խրիմյանը Հայր Ալիշանն էր հաստատուած հայրենի հողի վրա, հարազատ ցեղի ծոցում, նրա հսկայ ողբերգութեան անմիջապէս հաղորդակից, նրա վշտոտ գանգատներին անմիջապէս ձայնակից»²: Նրանց կյանքն ու գործունեությունը, իրենց առանձնահատկություններով հանդերձ, մեծ իմաստով պայմանավորված են եղել հայրենիքի պատմական ճակատագրով: Իսկ ավելի մասնավոր դիտարկումների շրջանակում կարող ենք մատնանշել մի քանի ընդհանուր հատկանիշներ:

Ա. Նրանք հասակակիցներ են. երկուսն էլ ծնվել են 1820թ.-ին արևմտահայ դաժան իրականության մեջ:

Բ. Երկուսն էլ հոգևոր այրեր են, Ամենաբարձրյալ Աստծուն աղոթող, բայցև խոսքից, քարոզից գործի անցնող. Ալիշանը ծառայել է հայրենիքից հեռու՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության մեջ, Խրիմյանը՝ հայրենիքում:

Գ. Երկուսն էլ աստվածաբան են, փիլիսոփա, գրող, մանկավարժ:

Դ. Պատահական օրինաչափությամբ երկուսին էլ համեմատել են քերթողահայր Խորենացու հետ: Այսպես. 1876-ին Վանի հրդեհի և կողոպուտի ժամանակ Հայրիկը հեղինակել է «Վանգոյժը», իսկ հետագայում՝ «Հայգոյժը»: Այդ հրդեհի առիթով հուշագիրը գրում է. «Խրիմյանը մի բրոշյուրով սարսռագդեցիկ մի բուռ ջուր է թափում այդ մոխրակույտի վրա իր Վան Գույժով: Այս երկու ստեղծագործությունները բավական եղան հեղինակին «ԺԹ դարի Խորենացի» հոչակելու համար»³:

Ե. Ալիշանը կյանքի հիսուն տարիները նվիրել է մեր պատմության ուսումնասիրությանը՝ վաստակելով *Նոր քերթողահայր* պատվանունը: «Եթե այդ բազմատեսակ գործերն էլ չլինեին,- գրում է պատմաբան, մանկավարժ Ն. Քարամյանը,- նա դարձյալ պիտի արժանանար *նոր քերթողահայր* կոչման»⁴:

¹ Մի առիթով Թումանյանը, խոսելով Իզմիրյանի ու Խրիմյանի մասին, գրել է. «Երկուսն էլ խոշոր հայ դեմքեր էին, գերազանցորեն հայ. երկուսն էլ շատ ապրած իրենց ժողովրդի տառապանքով: Երկուսն էլ հոգևորական էին բառի լայն իմաստով, երկուսն էլ սիրում էին Ս. Գիրքը ու նվիրված էին հայրենի եկեղեցուն» (Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. 6, էջ 268): Այս միտքը անվերապահորեն կարելի է վերագրել Դ. Ալիշան – Խրիմյան Հայրիկ հսկաներին:

² Մ. Վարանդյան, Հայկական շարժման նախապատմությունը, Ժնև, 1912, էջ 294:

³ Փ. Թերլեմեզյան, Կյանքիս հուշերը, էջ 62:

⁴ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 42:

Ե. Երկու հսկաները համեմատվում են թոշունների արքայի՝ արծվի հետ. Խրիմյան Հայրիկ - «Բերեցին ՎԵՀԱՓԱՌ տիտղոսը տվին, Վեհարանի չորս պատի մեջ շղթայեցին՝ պահանջելով ջինջ եթերում սավառնող ԱՐԾԻՎԸ թառ լինի Աթոռի վրա»¹(Տիգրան Նազարյան), «Մօրուքը թավամազ էր որպես անապատական առիծի բաշը: Բայց ինչ-որ աւելի նշանաւոր էր նորա հեզ և միևնոյն ժամանակ այրական դէմքի վրայ, դրանք էին արծուի խոշոր աչքերը և արծուի կտցաձև քիթը»² (Բաֆֆի): Ղևոնդ Ալիշան - «Խստակյաց կյանք կվարեր և թոշունի պէս կսնաներ, ավանդապահ էր սովորություններուն և պահպանող վանական կարգ ու կանոնին»³:

Հաշվի առնելով հայոց երկու մեծերի մշակութային, հոգեկան, անձնային ընդհանրական հատկանիշները՝ մենք առաջարկում են շրջանառել բնութագրական երկու արտահայտություններ՝ ա. Հասակակից նորօրյա Խորենացիները, բ. Հոգևոր աշխարհի երկու հանրագիտակ հասակակիցներ:

Հայ ժողովրդի պատմության հոլովությունում երկու հայորդիների ազգաշահ առաքելությունը ամրագրվել է բազում վավերագրերում: Հիշարժան է Վազգեն Ա վեհափառի դիտարկումներից մեկը: 1956 թ. մարտին Վենետիկում կաթողիկոսն այցելել է Մխիթարյաններին և ջերմորեն ողջունելով նրանց՝ ընդգծել վերջիններիս հսկայական երախտիքը հայ մշակույթի զարգացման գործում և իր էություն ավարտել՝ ասելով՝ «անցյալում Խրիմյան Հայրիկն ու Ղևոնդ Ալիշանը Էջմիածնի ու Սուրբ Ղազար կղզու վանքի միջև համագործակցության վիթխարի կամար են կառուցել և ինքը եկել է այդ կամարն ամրապնդելու»⁴:

Երկու մեծերի ներշնչող անունները դաջված կմնան հայ ժողովրդի հիշողության մատյանում այնքան ժամանակ, քանի կան հայն ու Հայաստանը:

Բոլոր ժամանակներում էլ հնչեղ են Ղևոնդ Ալիշանի խոսքերը՝ քաղված հուշագրության բնագրից. «Շրջահայա՛ց եղեք, սիրեցե՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և սիրեցե՛ք միմյանց»:

¹ Նույն տեղում, էջ 163:

² **Բաֆֆի**, Արծիվ Վասպուրական, Թիֆլիս, 1893, էջ 34-35:

³ Նույն տեղում, էջ 227:

⁴ Տե՛ս Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ, Երևան, 2008, էջ 274:

ЕВА МНАЦАКАНЯН

Кандидат филологических наук, доцент

АШОТ ГАЛСТЯН

Доктор филологических наук, доцент

РЕЗЮМЕ

ГЕВОНД АЛИШАН-ХРИМЯН АЙРИК, МЕМУАРНЫЕ ПАРАЛЛЕЛИ

Ключевые слова: Гевонд Алишан, Хримян Айрик, духовное лицо, писатель, сверстники, приверженцы нации, мемуары, субъект, портрет, диалог, характеризующие слова.

Мемуары, посвященные Гевонду Алишану и Хримяну Айрику, имеют культурологическое и источниковедческое значение, они представляют двух великих армян в впечатляющих и разнообразных оттенках.

Армянская природа, сами армяне, душа и дух армянского человека, его образ жизни, радости и горести, переживания прошлого и надежды на будущее являются основными и движущими силами мировоззрения двух армян, осью их «я». Все это видимыми красками раскрывается в воспоминаниях современников.

Оба армянских патриотота-гиганта рассматриваются в единой цепи, потому что в широком смысле они философы-богословы, писатели, а главное – ровесники.

Как субъекты мемуаров, Алишан и Хримян представлены своими уникальными и неоспоримыми достоинствами. Мемуаристы создали свои портреты с разными нюансами, раскрывающие интересные реалии с точки зрения их использования.

EVA MNATSAKANYAN

Candidate of Philology, Associate Professor

ASHOT GALSTYAN

Doctor of Philology, Associate Professor

ABSTRACT

GHEVOND ALISHAN- KHRIMYAN HAYRIK: MEMORY CORRELATIONS

Key Words: Ghevond Alishan, Khrimyan Hayrik, spiritual, author, same agers, patriots, memories, poser, portrait, dialogue, depiction words.

The memories about Ghevond Alishan and Khrimyan Hayrik have cultural and source- study importance and they depict the two great sons of Armenia in a very impressive and colorful way.

The pillars of the selves of these two Armenians, the driving forces of their worldview, their past emotions and future hopes are the Armenian homeland, Armenians

themselves, their souls and breath, customs, happiness and sorrow. All this is opened up in the memories of their contemporaries with bright and vivid colors.

The two giants of patriotism are discussed in one common chain, which shows them as philosophers and theologians, writers and the most importantly, two men of the same age.

As posers of memoranda, Alishan and Khrimyan are presented with all their undeniable and exceptional values. The memoranda writers depict them in different delicate lines, which highlight important realities.

REFERENCES

1. Alishany zhamanakakits'neri husherum, Yerevan, 1974:
2. Aharonean A., zhoghovatsu yerkeri, h.5, T'ehran, 1983:
3. Baghdasarean Koriwn vardapet, Yerusaghemi haykakan t'aghamasi gaghtnik'neri. mas A, 2019:
4. T'erlemezyan P'., Kyank'is hushery, Yerevan, 2017:
5. T'umanyan, Yerkeri liakatar zhoghovatsu, hator 6, Yerevan, 1994:
6. Isahakyan Av., Yerkeri zhoghovazhu, h. 5, Yerevan, 1977:
7. Isahakyan Av., Hishatakaran, Yerevan, 1977:
8. Khrimyan Hayrik, Yerker, Yerevan, 1992:
9. Mnats'akanyan V., Serundneri mets zhamanakakits'y, «Lraber hasarakakan gitut'yunneri», № 10, Yerevan, 1975:
10. Shirvanzade Al., Kyank'i bovits': Husher, Yerevan, 1982:
11. Varandean M., Haykakan sharzhman nakhapatmut'iwny, Zhnev, 1912:
12. Vawyerager hay yekeghets'u patmut'ean, girk' ZHZ, Yerevan, 2008:
13. Raffi, Artsiv Vaspurakan, T'iflis, 1893:
14. P'irumeants' T., Khrimyan Hayrik (Im yishoghut'iwnnerits'), T'iflis, 1887:
15. <http://littrans.asj-oa.am/134/1/135-164.pdf> (20.08.2020)

*ԱՌԴԱ ՄԱՐԱՆԶՅԱՆ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
aida.marandzhjan@mail.ru*

**ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՊԼՊՈՒԼՆ ԱՎԱՐԱՅՐԻ» ՊՈԵՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ՄԿԶԲՆԱԿՈՒՆՔԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

Բանալի բառեր՝ հայ գրականության Նահապետ, գաղափարապաշտություն, մաքառման ու վերհանումի ծրագիր, մտքի տեսողություն, Ազատության մանուկ, Հանճար, Փրկություն, Տառապանք, Դիմառնություն, Տեսանող, շարական:

Ավելի քան վաթսուն տարի տևեց Ղևոնդ Ալիշանի գիտական գործունեությունը: Հայ գրականության Նահապետը մշակութային կյանքի ամենատարբեր ասպարեզներում էր՝ որպես բանաստեղծ և գրական արձակի հեղինակ, որպես Հայաստան աշխարհի տեղագիր-պատմաբան ու աշխարհագրագետ, որպես թարգմանիչ:

Հայ ժողովրդի լուսավորության, հայկական միջավայրում եվրոպական քաղաքակրթության տարածման գործում մեծ է Մխիթարյան միաբանության դերը՝ իր երկու կենտրոններով: Անգնահատելի է Վենետիկի Մխիթարյանների կատարած՝ իր ժամանակի համար մեծ աշխատանքը հայ ժողովրդի պատմության, Հայաստանի աշխարհագրության, հայոց լեզվի բառարանների ստեղծման, հին ձեռագրերում գտնվող բնագրերի հրատարակության, մեծաթիվ թարգմանությունների, որոնցում մեծ տեղ են գրավում աշխարհիկ գրականության համաշխարհային գանձերը, և այլ ասպարեզներում: Այս գործերին զուգահեռ՝ Մխիթարյան միաբանությունը առանձնանում է հայ մշակույթը Եվրոպային ներկայացնելու առաքելությամբ: Մխիթար Սեբաստացին և նրա հետևորդները՝ Չամչյանը, Ավգերյանը, Բագրատունին, Հյուրմյուզը, Ալիշանը, իրականացրին աստվածահաճո աշխատանք՝ իրականացնելով հայապահպանության, հայագիտության զարգացման ծրագրեր: Եվ իրավացի է Արշակ Չոպանյանը, երբ անդրադառնում է Չամչյանի «Հայոց պատմությանը», թե Մխիթարյաններն են ներշնչել և հարուցել նոր ժամանակների ազգային վերագարթումը թե՛ արևմտահայության, թե՛ արևելահայության մեջ. «...Մեր բարձրացումը դարավոր լուծի ստրկացումեն, մեր ամբողջ այս դարուն մեջ ունեցած ձգտումը դեպի ազնվացում, դեպի ազատագրում, դեպի մեծություն, և թուրքին ու պարսիկին զարշապարին տակ տափակացած, սմբած ու սքլած հայը, որպեսզի ցնցվեր իր անկումեն ու ոտքի կարենար

ելլել ու դեպի լույսը ցցվել, այդ մեծ հպարտության, այդ խոշոր հավատքի շեշտը անհրաժեշտ էր...»¹:

Անտարակույս, առանց Եվրոպայում մտավորական կենտրոն ունենալու էլ հայ ժողովուրդը պետք է կարողանար արթնանալ իր բարոյական թմրությունից, վերականգնել իր լեզուն ու գրականությունը, բայց այդ զարթոնքը ավելի դանդաղ կընթանար: Մխիթարյանների դերը և գերագույն առաքելությունը այն էր, որ «ոյուրացուց և կանոնավորեց հայ ազգին ճիգը»²:

Ալիշանը հայ նոր գրականության պատմության մեջ է մտել որպես աշխարհաբար լեզվի հիմնադիրներից մեկը, և ինչպես ժամանակին նկատել է Միքայել Նալբանդյանը իր «Կրիտիկա» աշխատության մեջ՝ «Չենք մոռացած «Նահապետ» ստորագրությամբ հայր Ղևոնդ Ալիշանյանց արժանավոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթվածքը՝ «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ» և մյուս բոլոր աշխարհաբար ոտանավորքը. չափաբերական քերթվածոց մեջ արժանավոր վարդապետը ախոյան չունի...»³:

Բազմաթիվ առիթներով Արշակ Չոպանյանն էլ խոստովանել է, թե իր պատանեկան հասակում, ուրիշ գրողների և մտածողների թվում Ղևոնդ Ալիշանն է եղել, որ խոր ազդեցություն է թողել իր կազմավորման վրա: Արշակ Չոպանյանն է Ղևոնդ Ալիշանի առաջին գնահատողներից և կարողացել է իր՝ գրականագետի ու գրաքննադատի, բանաստեղծի և Մտածողի աշխարհընկալումից տեսնել իմաստասեր բանաստեղծի մեծությունը, դրվատել ու բարձրացնել նրան այսպիսի հատկանիշներով. անխոնջ աշխատասիրություն, մշտավառ ու բեղմնավոր հետաքրքրություն, կաթոզին ու խանդոտ զգայնություն, գոդտր ու թևավոր երևակայություն, և այս բոլորը հայրենասիրության հրայրքով անցած:

Ալիշանի գործը բազմաճյուղ է, բազմաբովանդակ, բայց ամենից առաջ դա աստվածաշնորհ բանաստեղծի գործ է, նույնիսկ նրա տեղագրական, պատմագրական երկասիրությունները որոշ առումով «գիտական հանգամանք չունին» (ընդգծումը՝ Ա. Չոպանյան), բայց «բանաստեղծություն են միշտ, այնչափ, որչափ իր «Նվագները»:

Ա, Չոպանյանը ընդգծում է Ալիշանի զգացմունքների մաքրությունը և մանկականորեն անկեղծ ազնվությունը թե՛ հավատի և թե՛ հայրենիքի սիրո մեջ: «Հայաստանը աշխարհիս կենտրոնն էր իրեն համար», հայ պատմական գործիչները՝ մի-մի ոյուցագուններ: Ալիշանի գլխավոր

¹ Չոպանյան Ա., «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 12, էջ 359-360:

² «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 8, էջ 178:

³ Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 120:

նպատակն էր՝ «հայ ժողովրդին ներշնչել կազդուրիչ ու ազնվացուցիչ հպարտությունը մեծ ու փառավոր անցյալ մը ունեցած ըլլալու համար»¹: Հայ պատանիների համար, որ նոր են սկսում կազմավորվել ու զարգանալ, և «որոնք պետք ունեին իրենց ազգին ու հայրենիքին վրա իրենց հետ խոսող տաք ու ազնիվ ձայնի մը, չկա ավելի կազդուրիչ, ավելի հրահանգիչ ու հրապուրիչ մատենադարան»², քան այն, որ Ալիշանն է թողել:

Իր «Նահապետի երգեր»-ով Ղևոնդ Ալիշանը հաստատեց պատմական իրավունքը գրական նոր ուղղության՝ գաղափարապաշտության (ռոմանտիզմ), որի սկիզբը դեռևս 19-րդ դարի 20-ական թվականներին դրել էր Հարություն Ալամդարյանն իր քնարերգությամբ: Հայտնի է, որ ռոմանտիկական արվեստի տիպաբանության էական գծերից մեկը քնարականությունն է, և գաղափարապաշտ բանաստեղծը իր գեղագիտական իդեալը որոնում էր տրոհված հասարակության ամբողջությունից դուրս սայթաքած անհատի տիեզերական ձգտումների մեջ: Նրանք թափանցում են անհատի ներքին աշխարհը, բացում նրա հոգու ամենանուրբ ծալքերը ու շոշափում ամենանուրբ բաբախումները: Ղևոնդ Ալիշանի հանճարեղ հետևորդը՝ Դանիել Վարուժանը, իր՝ «Գրական դպրոցների մասին» հոդվածում (1909) գրում է. «Առայժմ այսքանը ըսեմ, թե միշտ անտրամաբան գտած եմ գրական դպրոցների բաժանումը. ըստ իս, գեղեցիկը դպրոց չունի. գեղեցկությունը բազմանկյուն հատվածակողմ մըն է. մեծ արվեստագետին հոգին վերեն ուղղահայաց նայող արևու պես այդ բյուրեղե հատվածակողմին ամեն անկյուններեն շողեր կարձակե... Մենք փոխնիփոխ կըլլանք խորհրդապաշտ, ռոմանտիկ, դասական, իրապաշտ. Հետևաբար գեղեցկությունը անթերի արտադրելու համար ես պիտի սիրեի տալ այս բոլորը միանգամայն, բնությունը ինչ-որ է, և ինչպես որ է, մեկ քերթվածի, մեկ տունի, նույնիսկ մեկ տողի մեջ՝ մերթ ըլլալով, միևնույն անգամ, դասական և խորհրդապաշտ, ռոմանտիկ և իրապաշտ»³:

Եվ, իսկապես, Ղևոնդ Ալիշանի տաղանդը նորը նշմարելու կարողության մեջ էր, համահունչ 40-50-ական թվականների՝ ազգային զարթոնքի դարաշրջանի ոգուն և ազգային-ազատագրական ձգտումներին:

Հոգևորական կոչումը, դիրքը, կրոնին, միաբանությանը ծառայելը ստիպում են երիտասարդ հոգևորականին բանաստեղծական հայացքն ուղղել Աստծո ամենագոր միջամտությանը, ներբողել Քրիստոսին՝ Նրա

¹ Զոսյանյան Ա., «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 4, էջ 71:

² Նույն տեղում՝ էջ 73:

³ Վարուժան Դ., Նամականի, Երևան, 1965, էջ 177-178:

խաչելության մեջ տեսնելով խաչելությունը իր տարաբախտ ազգի: Այդպիսի կրոնական բովանդակություն ունեն Վարուժանի «Առ Հիսուս», «Դարձյալ ընդ Հիսուսի», «Առ խաչյալն Հիսուս», « Ու՞ր ես» և այլ քերթվածներ, որոնց մեջ բանաստեղծը լավագույնս գործածել է գրաբարի ոճական բազմերանգությունը, միջնադարյան հոգևոր երգերի՝ մշտահունչ շարականների շեշտադրությունը, լույսն ու գեղեցկությունը:

1843 թվականը կարևոր շրջան էր միաբանության պատմության մեջ: Մեծահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ավագ եղբայր Գաբրիել Այվազովսկին վերջիվերջո կարողանում է իրականացնել «Բազմավեպ» խորագիրը կրող հանրագիտարանային բնույթի ամսագրի հրատարակությունը: Գաբրիել Այվազովսկու երբեմնի աշակերտը՝ երիտասարդ ուսուցիչ-միաբան Ղևոնդ Ալիշանյանը ողջունում է ամսագրի ծնունդը. նման պարբերականի լույսընծայումը, ինչ խոսք, մեծապես կնպաստեր հայագիտության վերելքին:

Հենց այդպես էլ եղավ. «Բազմավեպը» հզոր ազդակ դարձավ հեռավոր Սուրբ Ղազար կղզում՝ հայ մշակութային կյանքը արագ զարգացնելու, հայ ժողովրդի բազմադարյա պատմությունը Եվրոպային հաղորդակից դարձնելու, հայ արվեստն ու գրականությունը համաշխարհային ասպարեզ դուրս բերելու համար: Դեռ առաջին համարներից է ամսագրին աշխատակցում Ալիշանը. այստեղ են տպագրվում նրա բազմաթիվ մեծիմաստ հոդվածները, դիտողությունները հայ պատմագիտության, արվեստի վերաբերյալ, նրա ջերմ, հայրենասիրական բանաստեղծությունները, արձակ էջերը, որոնք հետագայում լույս են տեսնում առանձին գրքերով՝ «Նվազք» ընդհանուր խորագիրը կրող բանաստեղծությունների հինգ հատորներով:

Հայրենասիրական պատկերների ծնունդը մաքառման ու վերհառնումի ծրագիր էր, ուր պատմության դասերի մեջ խտացնելով դարերի վրեժը և շիկացնելով այն փլատակված հայրենիքի սարսուռներով, Ալիշանը ազատագրական պայքարի է հանում ժողովրդին և նրա հերոսական մաքառումները հուսավառում փրկության հավատով:

1847 թվականի հունիսի կեսերին «Բազմավեպ» հանդեսում տպագրվում է «Հայոց աշխարհիկ» քերթվածը՝ «Նահապետ» ստորագրությամբ: Այս միանգամայն փայլուն գործի հեղինակը՝ Նահապետը, Ղևոնդ Ալիշանյանն էր: Եվ առաջին փորձը աշխարհաբար քերթվածի որքան էլ հայտնություն էր, նորարարություն՝ գեղարվեստական լեզվում, ժամանակի՝ գրաբարով ստեղծագործող արվեստագետներին (Ավգերյան, Բազրատունի, Թովմաճյան, Ջախջախյան), ինչ խոսք, դուր գալ չէր կարող: Սակայն առաջին փորձը հեղաշրջում էր ոչ միայն Ալիշանի քնարերգության, այլև իր ժամանակի հայ գեղարվեստական գրականության,

հայրենասիրական-իրապաշտական պոեզիայի համար: Օրերի, դարաշրջանի ոգին ըմբռնած բանաստեղծը ստեղծեց նոր քերթվածներ, որոնք վերնից հորդացող լույսերի տակ օրհնության ավետիս էին մաքառող հայ ժողովրդի համար: Ալիշանը փորձում էր իր քնարերգությամբ կամուրջ գցել գրականության ու ժողովրդի միջև:

1845 թվականին «Բազմավեպ»-ում տպագրված «Ռամկական երգեր» հոդվածում նա գրում է. «Ռամկական երգը ազգային ոգվոյն մեկ ձայնն է, որ շատ հեղ ուրիշ կողմանե մեռած կամ մարած ատեն ալ, դեռ այսպիսի երգոց մեջ կենդանի կմնա, անոր համար ազգային երգ ալ կըսվի... Այսպիսի երգերը շատ անգամ ավելի լավ կիմացնեն ազգի հանճարը, քան թե ծանր գրվածքները, և կգտնվին անոնց մեջ անանկ սքանչելի գուրգվածք, որ միայն իրենց ռամկական անունին համար հասարակ բան կկարծվին, բայց ճշմարտությամբ գերագույն գրվածոց կարգը անցնելու են...»¹:

Ալիշանի հայրենասիրական քերթվածներում Հայաստանը իրականության մեջ չտեսած, բայց հզոր երևակայությամբ օժտված բանաստեղծն է, որ ոգորում է հայրենագեղ բնաշխարհը, մտքի տեսողության երկնային շնորհով ներբողում իր ժողովրդի գալիքը: Եվ այդ երևակայությունը հաճախ հեռու-հեռու էր տանում Ալիշանին, և Նա հանճարի աստվածային կայծով փառաբանում էր իր պատմական հայրենիքը՝ Մուշի, Տարոնի կանաչ-կապույտ անդաստանները, Վանա, Սևանա լճերը, Միփանա, Գեղամա լեռները: Այնինչ, կյանքը ծովի մյուս ծայրին՝ Արևմտահայաստանում՝ Ջեյթունի երկնամբարձ լեռներում շարունակում էր փոթորկել. «Ազատության մանուկին» փրկելու համար արյունահորդ գոտեմարտեր էին տեղի ունենում:

Թուրքիայից ստացած խառնակ լուրերը, տաճիկ մարդակերների դեմ հերոս սասունցիների անձնագոհության փաստերը օրեր, ամիսներ անկրակ այրում էին Ալիշանին, կուտակվելով, լեռնանալով դառնում էին բանաստեղծական երդում նրա ստեղծարար ոգու. «Կ'երդնու Նահապետ, կանչե՜ ձեզ, հայեր, Հանճարն է մեզ կյանք, ըզնա վառեցեք, Մեծ, պզտիկ՝ այսօր, սիրով վառվեցեք... Իմանան ազգեր՝ թե Հայք չեն անցեր» («Հայ հանճար», 1853):

Քերթողի համար պատմությունը ինքնանպատակ չէր: Նրա բաղձանքն էր քաջ նախնիների արիության գործերով հուսավառել սրտերը: Փրկության ու տառապանքի նժարով հայրենիքի բախտը կշռող բանաստեղծը ստեղծում է հայրենասիրական գործեր, ուր հուսահատությունը չի հասնում ողբերգականի սահմանին, այլ բարձրանում է վեր՝ արյունով ու

¹ «Բազմավեպ», 1845, ապրիլի 1, թիվ 7, էջ 109-111:

պայքարով նվաճելու անընկճելի հույսի գաղափարը: Հզոր քերթվածներ են՝ «Ճակատամարտ Ձիրաւայ և քաջակորովն Մուշեղ», «Երգք ու գնացք զօրացն հայոց ընդ Վահանայ Մամիկոնենոյ ի Շավարշական դաշտն վրէժք», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սևանայ» և, մանավանդ, «Պլպուլն Աւարայրի» պոեմը:

Վարդանանց թեման հայ գեղարվեստական գրականության մեջ սկսվում է «Վասն Վարդանայ և հայոց պատերազմի» հայրենաշունչ մատյանից: Բոլոր ժամանակներում էլ Վարդանանց պատերազմը եղել է հայ մշակույթի գործիչների՝ գրողների, բանաստեղծների, գեղանկարիչների, քանդակագործների, երգահանների ուշադրության կենտրոնում: Սակայն Ղևոնդ Ալիշանի պոեմը բանաստեղծական մաքուր ու բարձր ներշնչանքի, հոգեթոփչ ոճի հրաշալիք է:

Արշակ Չոպանյանը այս առիթով գրել է. «Որքան ալ Աբովյան, Պեշիկթաշլյան, Դուրյան կը գերազանցեն Ալիշանը գրական այս կամ այն սեռին մեջ, ուր իրենք մասնավոր ուժ մը ցույց կու տան, Ալիշան զանոնք ամենքն ալ կը գերազանցե իր տաղանդին անհուն բազմազանությամբը, լեզվին հարստությամբն ու ճարպկությամբը, տաղաչափության անչափ պեսպեսությամբը»¹:

Խաչատուր Աբովյանը դեռ կենդանի էր, երբ Ալիշանը գրում է իր «Հայոց աշխարհիկն» ու «Պլպուլն Ավարայրի» պոեմը: Մեր նոր գրականության հիմնաքարը խորհրդանշող «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանից յոթ տարի հետո Աբովյանից անկախ, լավագույնս ըմբռնելով աշխարհաբար լեզվի պահանջը, երիտասարդ Ալիշանը «շայիր» (աշուղ) դարձած, Նահապետ ծածկանունով փորձում էր գրականությունը մոտեցնել ժողովրդին, կարևորելով այն բացառիկ, նուրբ հանգամանքը, որ ժողովուրդն է իրական արժեքներ գնահատողը: Ժամանակին Ֆրիկն էլ իր՝ միջին հայերենին անցնելը «արդարացնում էր» նույն իմաստասիրությամբ. «Ֆրիկ յանցեղ պարզ է խօսել, Որ յամենայն մարդ հասկանայ...»:

Ալիշանը իր «ուսումնասեր և ազգասեր ընթերցողներին» կոչ է անում գրի առնել, հավաքել Հայաստանի այլևայլ գավառների մեջ երգվող ժողովրդական երգերը. «Վասնզի անոնցմեն կրնան շատ մարգարիտներ ելլել, և թերևս ատենով հայոց գրականության տաճարին մեջը պատվավոր տեղ մը ունենալ»²: Ինքը՝ Ալիշանը, ի մի է հավաքում Վենետիկի, Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի մատենադարաններում պահվող հայկական գրչագիր մատյաններից տարբեր ժամանակներում գրի առնված ժողովրդական երգերը և 1852 թվականին հրատարակում է մի ժողովածու՝

¹ «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 4, էջ 75:

² «Բազմավեպ», 1845, ապրիլի 1, թիվ 7, էջ 109-111:

հայերեն և անգլերեն՝ «Հայոց երգք ռամկականք» խորագրով: Ժողովածուի մեջ ամփոփված են 19 զանազան երգեր, այդ թվում նաև «Կռունկ, ուստի կուգաս»-ը:

Ալիշանն առաջիններից էր, որ ոչ միայն ձգտեց հասկանալի լինել ժողովրդին, այլև ազատություն տվեց ժողովրդական լեզվին՝ լայնորեն գործածելով ժողովրդյան հարուստ բառապաշարը և գեղարվեստական պատկերավորման միջոցները:

Եվ պատահական չեն «Պլպուլն Ավարայրի» պոեմի ոգեղեն պատկերները, մտքերի ու խոռվքների շիկացումը, խոսքի հզոր պաթետիկան, մարգարեական ներքնատեսությամբ շնչող տողերը: «Գաղափարը, միացած երևակայության հետ, նկատել է Դանիել Վարուժանը, կը ծնե ճարտասանություն»: Եվ ոչ միայն գաղափարն ու երևակայությունը, այլև դարերի վրեժը և նահատակությամբ աստվածացումը, իմաստությունն ու ցասումը, այլաբանական խոհը, պայքարի, արդարության ու հաղթանակի տեսիլային մտապատկերները:

«Պլպուլն Ավարայրի» պոեմը առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1847 թվականի հոկտեմբերի մեկին թիվ 19 համարում՝ «Նահապետ» ստորագրությամբ: Արտատպվել է «Նվագք»-ի Գ հատորի «Հայրունի», ինչպես առաջին (Վենետիկ, 1858թ. էջ 258-280), այնպես էլ երկրորդ (1867թ., էջ 309-332) հրատարակություններում:

Ալիշանի սիրած ձևը դիմաոնությունն է: Պոմում նախ դիմում է լուսնին, «Ո՞նց գաս, իմ լուսնակ, հեզիկ ու հանդարտ...», ապա Տղմուտին. «Դու այլ, ո՛վ Տղմուտ, տրտում ու արյունոտ...», և սոխակին. «Ո՞հ, դու բարեկամ, այրած սրտերու...», ապա բանաստեղծը խորհրդածում է Ավարայրի հերոսի՝ Վարդանի և նրա երգչի՝ Եղիշեի մասին, որից հետո սկսում է պոեմը: Նախերգանքի հզոր, պաթետիկ շունչը, մտքով Ավարայրի դաշտ տեղափոխված Նահապետ բանաստեղծի անլուր թախիծն ու այրող խոռվքները, համադրված գիշերաժամի վեհ բնապատկերների հետ, է՛լ ավելի խորացնում են իրողությունը, ձգվում որպես Հայոց սրտից արձակված հառաչանք, որ լցնում է կեսգիշերային անդր-լռությունը՝ ոգեկոչելով Ավարայրի բլրուին՝ քաղցրագրուցիկ Եղիշեին: Ենթատեքստը իր բազմաձև փոփոխություններում նյութեղեն է: Մի զարմանալի հայտնատեսությամբ բանաստեղծը ոգեկոչում է ոչ միայն Եղիշեին, այլև անցյալի հիշատակները՝ Վարդանին, որդիներին Թորգոմյանց.

*Թե կիսահոգի պըլպուլիս նման
Ձենիկս հասնի ձեզ, որդի չք Թորգոմյան,
Որդի չք, որոնց հարք քաջք ու առաքինիք,
Լցուցին գդաշտեր, գըրքեր ու զերկինք.
Թե ի ծով սրտիդ կաթիլ մը արունիկ,*

*Կա թե Հայ աղբյուրն կամ թե Պահլավիկ,
Թե զփառքն հայրենյայց ձեզ այլ զըրեք փառս,
Հետ Նահապետիս ելեք ի յԱրտագ¹:*

Նախերգանքից հետո պոեմը բացվում է հանդարտ բնապատկերով, այնպիսի անլուր խաղաղություն է իջել. խաղում է լուսնյակն ամպերի տակ, հովն է անտառի թները շոյում, հանգստություն կարդում օդին, ծառերին, և Ավարայրի մութը ճեղքում է Տղմուտն հանդարտիկ.

*Մետաքսանման, անձայն խատուտիկ
Թավեցրնելով հազար բյուր ալիք:*

Քնած են բոլորը՝ Պարսից հազար ու հազար գնդերը, քնած է Հայոց բանակը՝ թվով «ցանցառ», և լուսնի պաղ լույսի տակ փայլում են զենքերը վառ-վառ.

*Օոցերն ուռուցիկ, թներն քաջույժ,
Զինչ հանգչած բազեք՝ կան թևք աշխույժ,
Զինչ ծով ահագին, որ այլոքն խուժ,
Յանկրսկած ծեծե զափունքն վատուժ:*

Եվ այս խաղաղիկ, համատարած անդորրի ու լուսնի լույսով թախիված դաշտում կա մեկը արթուն, որ թևի տակ առած նիզակ ծայրախաչ, հսկում է բանակի քունը անհանգիստ: Տեսանող է Վանանդա բոցափայլ երեցը, որ պատասխանում է Վարդանի հարցումին՝ «Զի՞նչ երկինք զըրեն բաղդը վաղվան», Տեսանող է նաև Վարդան զորավարը, երբ իմանում է Սուրբի տեսիլի խորհուրդը.

*Տեսա՜՛վ, հիացա՜՛վ Վարդանն ու կանչեց.
Հա՛յր, իսկի տեսիլդդ մեզ չստեց.
Վաղիվ տի կրովինք քաջությամբս մեծ,
Երիկունն հանգչիմք ի դարպասն աստեղց:*

Հզոր ռազմական տեսարան է ստեղծում Ալիշանը՝ ներբողելով այն որպես հաղթանակի և ազգի գոյատևման պատարագ, որպես ողջակեզ ճակատամարտի նկարագրությունը անկրկնելի է իր ձևի և կշռույթի մեջ. այն Ազատության հողի համազանգն է, որ հնչեցնում է նոր առավոտների երկունքը. Վարդանը գիտեր, որ հաղթելու է, գիտեր նաև, որ երեկոյան հանգչելու է աստղերի գրկում:

Մեծ Մտածող է Ալիշանը՝ զինված իր ժողովրդի անցյալի և ներկայի իմաստասիրությամբ. նա ստեղծել է պատմական, հերոսական պոեմ՝ դրամատիկ, խորունկ անցումներով՝ համահունչ իր մեծ նախորդի՝ Ներսես Շնորհալու ոգուն ու բանարվեստին:

¹ Ալիշան Ղ., Նվագներ, Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 25:

Ավարտվել է ճակատամարտը, անծայրածիր լռություն է, և անսպասելի, մթության մեջ երևում է մեկի սրբացած, աստվածային կերպարանքը, և նրա ողբաձայն երգը խզում է լռությունը անդրշիրիմյան դաշտավայրի.

*Կանչե՛, պլպուլիկ, կանչե՛ հոգեձայն,
Որ երկնուց ի վայր հայի և Վարդան,
Հայաստան հիշե յուր կարմիր Վարդան:*

Պոեմը գրված է մեծ արվեստով: Այն սկսվում է բնության հանդարտիկ նկարագրությամբ, մեղմ տոնայնությամբ, ապա բարձրանում է տող առ տող, ծավալվում, ահագնանում որպես երգեհոնային հզոր համանվագ, երբ մեկ ձայնից ծնվում է մյուսը, ապա հաջորդը՝ ավելի զորեղ ու առնական, սակայն բոլոր ձայները իրենց հզոր ելևէջներով միավորվում են մեկ ձայնի մեջ՝ հնչեցնելով ավարտը Պայքարի, Նահատակության ու Արևագալի:

Ղևոնդ Ալիշանի բանարվեստի ակունքները, ինչպես վերևում նշեցինք, մի նուրբ երակով առնչվում են նրա շնորհաձիր նախորդի՝ Ներսես Շնորհալու բանարվեստին: «Ողբ Եդեսիո» պատմական-հերոսական պոեմը նույնպես գրված է դիմառնությամբ: Ի դեմս Եդեսիայի՝ Շնորհալին երգել է հայ ժողովրդի ճակատագիրը, Հայաստանի իրականությունը: Դժբախտաբար, այդ ողբերգական անցումները հարատև են եղել, ուստի Շնորհալու ստեղծագործության արժեքն ավելի է ընդարձակվել, աղբյուր դարձել մյուս բանաստեղծների համար: Եվ բնավ էլ պատահական չէ Շնորհալու «Նորահրաշ պսակավոր» շարականի, որի գլխակապն է «Ներսեսի երգ», և «Պլպուլն Ավարայրի» պոեմի պատկերային և իմացական առնչությունները:

Հայտնի է, որ ուշ միջնադարում հայ հոգևոր երգը զարգանում էր այլ օրինաչափություններով: Բացի կրոնական բովանդակությունից հնչում են նաև արևերգության, լուսերգության, հայրենասիրական թեմաներով շարականներ: Շնորհալին առաջիններից մեկն էր, որ հարստացրեց հայոց եկեղեցու ժամերգությունը: Հարուստ պատկերային համակարգով, աստվածային կենարար լույսով շաղախված այդ գեղեցիկ շարականները սիրված ու ժողովրդականացած են եղել: «Հոգևոր երգն էլ,- գրում է Մանուկ Աբեղյանը,- վերջին հաշվով նույն մաքառման միջոցներից մեկն էր: Նա ժողովրդի մեջ զորացնում էր քրիստոնեությունը՝ ոչ հավատացող ազգերի համար»¹: Եվ մեկնում, որ մեր «հոգևոր երգերն էլ իրենց նյութն առնում են

¹ **Աբեղյան Մ.**, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, էջ 474:

Աստվածաշունչ մատյանից, և սաղմոսների ու մարգարեական օրհնությունների քնարական տարրը որոշում է նրանց ոգին»¹:

Վարդանանց շարականի ամեն մի տունը նվիրված է Ավարայրում ընկած այն հերոսների հիշատակին, որոնց հիշում է Եղիշեն.

*Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց,
Վառեցեր զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու,
Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր ըզթշնամին,
Վարդագոյն արեամբդ քով պըսակեցեր զեկեղեցի:*

Ալիշանի պոեմում ևս ռազմական տեսարանը նկարագրելիս քերթողը հիշատակում է սրբացած նահատակներին անուն առ անուն՝ Ղևոնդ, Խորեն, Արտակ, Վահան, քաջ Գարեգին, Ռոստոմ թուխաչվի ագռավգիսակ, Վռամիկ վարդահեր և մորթով ճերմակ, Արշավիր ու քաջ Հմայակ: Այս հերոսների համար կոիվը պարտք էր՝ հայրենիքով ու սրբազան հավատով պարտադրված: Եղիշեն՝ պլպուլն Ավարայրի, ականատեսն ու վկան դարձավ փառքերի փառքին: Սուրբ զոհ չգնաց, այլ մասնատվեց ընկած հերոսների ոգու մեջ, սուրբ պահապան դարձավ ինքնության, ազգի հարատևման ու սրբազան հողի.

*Սև գրեհոք հեծած ի սևն երիվար,
Գայր զինչ սաստկորոտ ամպ մըրըրկավար.
Սուսերն ահագին զինչ կայծակ շողայր,
Քան զայն ահեղ՝ մահ իսկ ոչ երևար,
Զինչ հրդեհ բրոնած յանտառի ծայրեն
Չի դադրի՝ մինչ փայտ չըլափե զամեն...
Յաջ ու ձախ զարներ, փրոներ ու անցներ,
Զանտառ գորքերուն յանապատ փոխեր:*

Վարդան զորավարի հերոսական կերպարը՝ որպես Հավատի, Փրկության, Նահատակության խորհրդանիշ, հիշատակվում են Ալիշանի այլ՝ «Հայոց աշխարհիկ», «Լուսնկայն գերեզմանաց հայոց», «Երգ ու գնացք զօրացն Հայոց ընդ Վահանայ Մամիկոնենոյ ի Շավարշական դաշտին վրէժք» քերթվածներում:

«Հայոց աշխարհիկ»-ը Ղևոնդ Ալիշանի քնարերգության ավիշն է, բովանդակ սերը հայրենաբաղձ կարոտների, ուր հիացումներն ու սքանչացումը, տենդագին հույզերն ու զգացմունքները հրդեհվում են Հայոց աշխարհի գարնանագեղ պատկերների մեջ: Անկեղծ, սրբազան սերը միայն կարող էր բանաստեղծին ներշնչել հասնելու ձևերի նման շքեղության: Քիչ է ասել հիացում. այն երկրպագություն ու խնկարկում է գարնան զարթոնքին, արթնացող բնությանը, բյուր վտակներին, Ճերմակ-

¹ Նույն տեղում, էջ 475:

Ճերմակ սարերին, Մասիսներին, լեռներին ու հովիտներին: Եվ այս բոլոր հրաշալիքները՝ արտուտիկի ու տատրակի, սարեկի ու արագիլի ձայները, կարմրուկ վարդերն ու գետեզերքին բացված շուշանները, ծագող առավոտը արարչագործվել է Կենաց օրհնությամբ.

*Հովիվն ու հոտաղ, գառինք, եզ ու կով
Գոհացան զԱստված՝ մարգեր շուրջ գալով:
Հանց քեզ Տերն է տվել գարուն գեղեցիկ,
Որ դրախտի նմանիս, Հայոց աշխարհիկ:*

Առաջին հայացքից թվում է՝ զարնաներգության սքանչելի պատկեր է քերթվածը, բայց ոչ. այն հայրենիքին, հողին ու ջրին, սրբազան հիշատակներին նվիրված հայրենաշունչ քերթված է, ուր տող առ տող կենդանանում է անցյալի պատմությունը, հայ քաջորդիների սխրանքը: Պատկերները մերթ նուրբ, աննյութեղեն, մերթ իրական, թանձր երանգներով խտացված ոգորում են կարոտը, փառքը, Ազատության խորհուրդը՝ ուղղված հայ մանուկներին.

*Մանկտիք, զիս հայոց հողն ու ջուր սնուցել,
Ես այն հողն ու ջուր սրտով եմ սիրել.
Հայրենյաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ՝ քաղցր է հայրենյաց փուշ.
Հայաստանի օդն է քաղցր ու բարակ,
Հովերն են անուշ, պայծառ են վտակք.
Ջուրն ու պտուղն համ տան անմահության,
Խոտն ոսկեզօծե զգառներուն բերան...;*

Հիշում է բանաստեղծը նաև ողբերգական դրվագներ հայոց պատմությունից. Հայկ Նահապետի օրերից Հայաստանի սարերն ու ձորերը ներկված են արյունով, թվարկում է Տրդատի ու Տիգրանի, Վարդանի ու Վահանի, Աշոտի ու Սմբատի և այլոց սխրանքները.

*Շատ Բելեր փլուցին քաջքն Հայկի նման.
Հոռոմն, ասորիք, մար, ըսկյութ, պարսիկ
Հայոց թրերուն եղան պատառիկ.
Այս սարեր, ձորեր ու դաշտեր ամեն
Կարմիր են քրտնել, կարմիր խմել են.
Ի հոն են խաղցել Տիգրան ու Տրդատ,
Վարդան ու Վահան, Աշոտ ու Սմբատ»:*

Մենախոս է Նահապետը, քայլում է մենակ ու հոգնատանջ, Նա ազգի ոգին է, որի թափանցող միտքը տեսնում է անցյալի սխրանքը, աստղերից վայր թափվող արյունը և հերոսների անմահացումը.

*Ընկել են, ընկել հոն Հայոց այլ քաջք,
Մեկ ձեռքն նիզակ ու մեկալըն խաչ.*

Թռել, ի դաշտեն ելեր են երկին,

Բազմել հետ Գրիգոր, Տրդատ, Վարդանին:

Վարդան գորավարի անունը դարձյալ հիշատակվում է «Լուսնկայն գերեզմանաց Հայոց» քերթվածում: Ալիշանի գրեթե բոլոր հայրենաշունչ բանաստեղծությունները սկսվում են բնության փառահեղ նկարագրությամբ, և հնարավոր է՝ բանաստեղծը ձգտել է հակադրել բնության անսահման հրաշալիքները իրական կյանքի սարսափներին, իր ժողովրդի անհույս, անհայտ ճակատագրին: Իր վսեմ հույզերը, իր կարոտները, իր ժողովրդին հասած փորձությունները Նա պատմում է աստվածային լույսով արարչագործված բնությանը:

Դարձյալ գիշերային պահ է, և ընկրկում է ամենակույ խավարը, ցրվում է «կույր մթությունը», երբ հայտնվում է «աստվածավառ լատերը»: Շնչավորվում է բնությունը, աստղերը, թուխ ամպերը, սարերն ու ձորերը, երբ լուսինն իր «ադամանդե կայծակներն» է սփռում աստղերին: Քերթվածը գրված է դարձյալ դիմառնությամբ, ինչպես «Պլպուլն Ավարայրի» պոեմը: Այս անգամ Նահապետ բանաստեղծը ոգեկոչում է հին աստվածներին՝ վեհատեսիլ Վահագնին, լեռնանման կտրիճներին, նաև Բարձրագլուխ քաջ Արամին, «ոսկեծամ ու խարտեաշ Տիգրանին», Հայկազանց ցեղին Հայոց աշխարհի, «Կարմիր Վարդանա վարդանման» ընկերներին:

Բանաստեղծի մեծության առաջին նախապայմանը ինքնատիպությունն է: Դևոնդ Ալիշանի բանարվեստը անհնար է շփոթել մեկ ուրիշի հետ: Հզոր, առնական քերթողական միտքը, զուգակցված աստվածաշնորհ Մտածողի խորունկ իմաստասիրությամբ, տվել է բանաստեղծական զարմանալի գյուտեր՝ մշտապես նորոգվող և երբեք չկրկնվող հայ քնարերգության մեջ: Քերթվածների տողերը՝ ձգվող, լայնահուն, երգեցիկ, անընդհատ բարձրացող, ահագնացող ծովի ալիքների նման, էպիկական հզոր շնչով, միահյուսված նուրբ քնարականության հետ, ազնվաշխարհիկ քերթության խորհուրդն են կրում:

Ալիշանի մոտ հանդիպող ռոմանտիզմի այս դասական օրինակները Միքայել Նալբանդյանը համարում է. «Արդի ազգային գրականության հիմնադիր երևույթ»¹:

Հայ գրականության Նահապետը անչափ կարևորում է ազգային բանաստեղծությունը: Անդրադառնալով անտիկ աշխարհի ռապսոդիաներին, միջնադարյան Եվրոպայի սկալդներին, բարդերին և նրանց հորինած դյուցազնական երգերին՝ նա հարց է տալիս. «Հապա հին Հայաստանն չունե՞ր իր Վիպասանները, իր Բարդերը: Թե որ աս աշխարհքն է

¹ Նալբանդյան Մ., հ. 4, Երևան, 1983, էջ 170:

ամենայն աշխարհի մայր և դայակ, թեպետ չեմք կրնար ըսել, թե ամեն բանի ալ ինքն է օրինակ տվողը, բայց չեմք սխալիր ըսելու՝ որ առաջին երգերը Հայոց լեռներուն արձագանքներովը ձևացան»¹: Այնուհետև հիշելով հին հայկական վիպական երգերի հայտնի բեկորները և բացատրելով նրանց ոչ ամբողջական լինելու պատճառները՝ Ալիշանը ազգային վիպասանության, բանաստեղծության ստեղծումը դիտում է իբրև ժողովրդի հոգևոր ինքնության հաստատման կարևորագույն գործոն: «Ազգերնուս հառաջադիմությունը ծաղկեցնելու մեծ հնարքներեն մեկն ալ ազգային վիպասանություն մը հանել և ազգին սիրտը կանգնել, քաջալերել ազնվական մտածմանց ու գործոց... ով որ ազգային վիպասանություն մ'ունի՝ անիկա ազգային պարծանք մ'ալ, ազգային մխիթարանք մ'ալ ունի. ով որ չունի, կրնամք ըսել՝ թե սրտի կողմանե պակասություն մ'ունի»²:

Հենց այդ «ազնվական մտածումներն ու գործերն են», որ հուսավառել, ոգևորել են հայ մշակույթի շատ գործիչների, և Վարդանանց պատերազմը՝ որպես ազատաբաղձ պայքարի խորհրդանիշ, դարձել է հայ գեղարվեստական գրականության հիմնական թեմաներից մեկը:

19-րդ դարի 60-ական թվականներին Ռաֆայել Պատկանյանը գրեց «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը, Միքայել Նալբանդյանը՝ իր հայտնի «Պարոդիան», Պետրոս Դուրյանը՝ «Երգ մարտին Վարդանանց» փոքրիկ քերթվածը, Լեոն (Առաքել Բաբախանյան) «Վարդանանք» պատմական դրաման՝ երեք գործողությամբ, նախերգանքով և վերջաբանով: 80-ական թվականներին թեմային անդրադարձել է Հովհաննես Հովհաննիսյանը իր նշանավոր «Սյունյաց իշխանը», «Տղմուտ», «Վարդանանց օրը» ստեղծագործություններով: Ի տարբերություն մյուս երկերի՝ Հովհաննիսյանը «Սյունյաց իշխանը» պոեմում խիստ յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում Վասակի կերպարին՝ նրան ներկայացնելով որպես գղջացող հանցագործի: Ուշագրավ են պոեմի այն հատվածները, ուր բանաստեղծը պատկերում է Վասակի տառապանքը պարսկական զնդանում: Իր գործած ոճի ծանր գիտակցությամբ՝ Վասակը հեծեծում է. «Իսկ այժմ անջատված արևի շողից, Հեծում եմ մենակ բանտումս խավար, Գործած հանցանքս սովեր թունալից, Մի օձ է խայթող իմ հոգու համար... Ո՞վ մատնիչ, Վասակ, շարժվեցե՛ք, պատե՛ր, Տե՛ղ կարկուտ, մրրիկ, զարկեցե՛ք գլխիս, Դու՝ հավատարիմ պողպատ իմ ընկեր, Կուրծքս պատռիր, արյունը սրտիս Թող սև հեղեղով վերքս լվանա, Ճակատիս դնե անեծքի

¹ Ալիշան Ղ., Հուշիկք հայրենյաց հայոց, հ. 2, 2-րդ տպագրություն, Վենետիկ, 1921, էջ 95:

² Նույն տեղում՝ էջ 107:

կնիք, Թող դարեր անցնեն, աշխարհն իմանա, Անարգ Վասակը մատնեց հայրենիք («Սյունյաց իշխանը», 1887):

Հովհաննես Հովհաննիսյանը պոեմը սկսում է բնաբանով, որ վերցված է Եղիշեի մատյանից, ուր պատմիչը ներկայացնում է Վասակին՝ իր ամբողջ արքունի փառքով, և որին պիտի հետևեր ուրացողի անփառունակ անկումը և անագորույն վախճանը: Եվ բոլորովին պատահական չէ բնաբանի ընտրությունը. Բանաստեղծը այս դրվագով ավելի քան խորացնում է Վասակի դրաման. «...և նա առաջին կարգի օրինացն արքունի արքան էր զպատուական հանդերձն զոր ուներ 'ի թագավորէն... և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ՝ երթայր յարքունիս շքեղ և երևելի, քան զամենեսեան երևեր բազմութեանն» (Եղիշե, Յեղանակ Է):

Հովհաննես Հովհաննիսյանի՝ Վարդանանց թեմային նվիրված հաջորդ ստեղծագործությունը «Տղմուտ»-ն է: Ինչ-ինչ գծերով բանաստեղծության դիպաշարը հիշեցնում է «Պլպուլն Ավարայրի» հերոսական պոեմը, բայց այս անգամ ազգի վշտերը և անցյալի փառքը սգացող ծերունին Եղիշեն չէ, այլ բոլոր ժամանակների հավաքական կերպարը խորհրդանշող նահապետ ծերունին, որ նայելով Տղմուտի՝ «արյուն դարձած կոհակներին»՝ հիշում է դյուցազնական դարերի փառքը, փառավոր նախորդներին՝ ի դեմս այսօրվա հայերի նահանջի և անփառունակ գործերի.

*Դո՛ւք, ի՞նչ արիք, դուք փառավոր նախորդաց,
Ստրուկ ծընած, անփառք սընած զավակներ,
Շայ սար, հայ գետ, հայ դաշտորայք շունչ առած,
Պիտի ամոթով այրեն ձեր սև երեսներ» («Տղմուտ» 1887):*

Մենախոս է ծերունի նահապետը, ինչպես Ավարայրի երգիչը, գերզգայնացած հուզմունքով խոսում է ներկա օրերի խելահեղ ողբերգությունից, բայց դարձյալ մարգարեացած ոգեկոչում Վարդանների առյուծական հոգին. «Ո՛հ, թե ելներ կորած, մոռցված դամբանից Վարդանների առյուծական այն հոգին»:

Մեծ հայրենականի տարիներին Վարդանանց թեմային անդրադառնում է Դերենիկ Դեմիրճյանը իր «Վարդանանք» պատմավեպով: Սակայն մինչ այդ՝ 1916 թվականին, նա արդեն գրել էր «Վասակ» դրաման:

Դերենիկ Դեմիրճյանը կենսափորձի արվեստագետ է. ամեն մի երևույթի մեջ որոնում է նրա պատմական ատաղձը, ժամանակի մեջ նրա շարժման գործոնները: Պատմության փորձի մեջ Դեմիրճյանը շարունակ փորձել է գտնել հայ ժողովրդի թույլ և ուժեղ կողմերը, փորձել է հասկանալ նրա բնավորության և ստեղծագործական ոգու այն դրսևորումները, որոնք պայմանավորեցին նրա գոյաբանությունը մարդկության պատմության բոլոր հարաշարժ աստիճաններում: Դեմիրճյանը հարազատ է մնացել պատմության ոգուն, անցյալի կյանքի զարկերակից կեն-

սատու ավիշ է վերցրել իր ժամանակակիցների համար, անցած դարաշրջանի ոգուց ստեղծել իր իմաստասիրության գեղարվեստական նյութը: Վեպում Դեմիրճյանը միացնում է արվեստագետի և քաղաքագետի նուրբ զգացողությունը: Պատմական հեռավոր անցյալի մարդկանց հոգեբանությունը, որ նա զգում ու հասկանում էր այնպես, ինչպես իր ժամանակի քաղաքական ու մարդկային հարաբերությունները: Նա խորապես հավատում էր, որ Հայրենական մեծ պատերազմում մեր երկրի ժողովուրդների միասնությունն ու համախմբվածությունը ֆաշիզմի դեմ հաղթանակ տանելու վճռական ազդակ են: Գրողի այս ներքին համոզվածությունը նրա ստեղծագործական մտահղացման մեջ հասնում է իմաստասիրական ընդհանրացման և դառնում է պատմական երևույթների գիտատմական բանալին: «Ազատության գլխավոր գործոնը,- գրում է Վահագն Մկրտչյանը իր՝ «Վարդանանք» վեպին նվիրված մենագրության գաղափարագեղագիտական վերլուծությունների մեջ,-միասնությունն է ընդդեմ բռնության-այս է վեպի պրոբլեմատիկան, որով արվեստագետ մտածողը բաց է անում պատմական անցյալի մարդկային հարաբերությունները և նրանց հաղորդում արդիական փիլիսոփայություն»¹:

Գրաքննադատության մեջ շատերն են հակված այն կարծիքին, որ վեպի գլխավոր հերոս համարում են ժողովրդին. դա էապես ճշմարիտ է, և իր մեջ պարունակում է խորագույն իմաստ: Այստեղ ոչ միայն երևում է ժողովրդի պատմական դերի իրապաշտական ըմբռնումը, այլև հավաքական ուժի հեղինակային իմաստասիրության և գեղարվեստական ճշմարտության միաձուլման վարպետությունը:

Գրականագիտության մեջ քիչ է ուսումնասիրված Լեոյի «Վարդանանք» երեք գործողությամբ պատմական դրաման:

5-րդ դարի հայտնի իրադարձություններին մի նոր հայացք է թելադրում Լեոն իր դրամայում: Վարդան Մամիկոնյան- Վասակ Սյունի հակամարտության մեջ գրողը տեսնում է ուրիշ մի առանցքային շարժառիթ ևս: Հայ գրի և դպրության ռահվիրաները՝ որպես ազգի փրկության միակ միջոց, Հայաստանում ստեղծել են դպրանոցներ, ուր սովորում են նաև շինականների զավակները: Վարդանանց կողմը ապավինում է երկրագործ հային, սուր տալիս նրա ձեռքը: Վասակը սարսափում է այդ բոլորից. նրա իշխանական բնագդը կռահում է վերահաս վտանգը: Դրամայում Վարդանանք վեր են կանգնում դասապաշտական անձուկ շահերից, քանի որ նժարի վրա դրված էր հայրենիքի բախտը, և նրանք հայտարարում են անողորմ ու փրկարար կռիվ դավաճանների ու դասավիճ-

¹ Մկրտչյան Վ., Դերենիկ Դեմիրճյան, Երևան, «Սովետական գրող», 1987, էջ 271:

ների դեմ. «Հայրը չինայե որդուն, որդին՝ հորը... Կինը կովե ամուսնու դեմ, ծառան՝ իր տիրոջ դեմ»:

20-րդ դարասկզբի համար միանգամայն արդիական է հնչում դրամայի հերոսի՝ Վարդանի փառաբանությունը արդարության սրին, որ «նվաճողական գործիք չէ, ուրիշներին ստրկացնելու համար չէ: Թող ամենքն ապրեն, ինչպես ուզում են, մենք մեզ համար մի անկյուն ապահովենք՝ ապրելու և աշխատելու համար»:

Վերջապես, այստեղ էլ ինքն իրեն հավատարիմ Լեոն է՝ ժողովրդի արարչագործ ուժը պաշտամունքի աստիճանի բարձրացրած ազգասեր գրողը:

Եվ այսպես՝ «Երգք Նահապետի» շարքը իսկական հայտնություն էր ոչ միայն Ալիշանի, այլև հայ գրականության համար: Բոլոր հիմքերը կան ասելու, որ այդ երգերը դարձան արևմտահայ աշխարհաբար գրականության հետագա զարգացման հիմքն ու պատվանդանը, որ նրանց դերը զուգահեռ էր արևելահայ իրականության մեջ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի գաղափարներին:

Բոլոր նվագների մեջ երկնառաք աղերսներով, ամենամոայլ տեսիլների մեջ անգամ Հույսի գաղափարը հրեղեն հոգում՝ բարձրանում է Նահապետ բանաստեղծի կերպարը: Իր գրչի ամենից գեղեցիկ ու ներշնչված էջերը 1847 թվականից, երբ ընդամենը 27 տարեկան էր, նա հրատարակեց «Նահապետ» կեղծանունով: «Նահապետը դեռ քառասուն տարին չէր բոլորել, երբ գրում էր իր քերթվածները, -նշում է Արսեն Տերտերյանը,- բայց նա իրեն արդեն «ծեր» էր համարում: Ծեր ո՛չ թե եռանդի, աշխույժի և գործունեության կրակի իմաստով, այլ իր փորձառությամբ, աշխարհաճանաչությամբ և գիտությամբ, որոնցով նա ուզում էր մենտոր հանդիսանալ նոր սերնդի երիտասարդության, Հայկականների համար»¹:

Այն, որ Նահապետ բանաստեղծի ոչ միայն քերթվածները, այլև հենց իր՝ ոգեղեն բանաստեղծի կերպարը ներշնչանք և ուժ են եղել հայ բանաստեղծների համար, վկայում են շատ ստեղծագործություններ:

1909 թվականին, երբ Վարուժանն ավարտեց Գենտի համալսարանն ու տուն էր վերադառնում, ճանապարհին՝ Վենետիկում, այցելում է Ալիշանի շիրիմին:

Վարուժանը հավատում է, թե մեռած բանաստեղծը գուցե և մի օր արթնանա իր խոր քնից և զարդարի երգերով «վիրածոր շողն անցյալի».

«Երբ հայ ճամփորդ մ'եկած դրախտի Երկրեդ ա՛լ, Ժըպիտ բերե քեզ՝ արցունքի տեղ անհույս»²:

¹ Տերտերյան Ա., Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 75:

² Դանիել Վարուժանի առաջին տպագիր բանաստեղծությունը վերնագրված էր 355

Հետագա բոլոր տարիներին Ալիշանը Վարուժանի համար եղել է Սրբազան մեծություն, Հայրենիքի ոգի, և տարիներ հետո՝ 1913 թվականին, երբ կարդում է գրախոսություն՝ նվիրված իր պաշտելի բանաստեղծին, դարձյալ փառաբանում է նրա հսկայածավալ աշխատանքը՝ հայ հին մատենագրության ուսումնասիրությունների և «հին, փառահեղ կյանքի մ'ը, ազգի մ'ը անցյալ փառքը» վերհանելու գործում:

1889 թվականին լույս է տեսնում Ղազարոս Աղայանի «Առ Ղևոնդ հայր Ալիշան» բանաստեղծությունը: Այս ստեղծագործության մեջ իմացական խորքը «հանճարեղ երգչի» կերպարի նորովի բացահայտումն է: Նա հայ բանաստեղծների մեծ և անփոխարինելի Նահապետն է: Այս անունը կարելի է ընդունել և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստով. «Ո՜վ դու, Նահապետ, հազար թռռների, Որ չունիս մի հատ ժառանգ քեզ նման, Որ քո հանճարից ունենար բաժին, Որին վայելեր քո գահն աննման:

1901 թվականին գրողի մահվան հիշատակին ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը գրում է «Հ.Ղ. Ալիշանի հիշատակին» բանաստեղծությունը, որն ուներ հետաքրքիր մտահղացում, և որն ակնհայտ է դառնում ենթավերնագրից. «Կազմված է հայր Ալիշանի գրվածքներից»: Իրեն հատուկ վարպետությամբ Թումանյանը ոչ միայն իմաստավորում է Ալիշանի կերպարը, նույնացնում «ծեր Նահապետի» հետ, այլև գրեթե յուրաքանչյուր տողում գործածում է «Նահապետի երգերից» պատկերներ: Ինչն այս բանաստեղծության գրելը Հովհաննես Թումանյանը 1886 թվականին գրել է նաև մեկ այլ ստեղծագործություն՝ «Նահապետի ողբը»: Դարձյալ հայրենիք և ճակատագիր, ու ողբացող Նահապետը, որ հարցում է անում ազատ եթերում ճախրող կռուկին ու ծիծեռնակին: Վշտակոծ է ծեր բանաստեղծի հոգին, հայրենիքից միայն ողբի լուրեր են գալիս, հուսահատ տազնապները խոցում են Նահապետի սիրտը, գիշերը տարի է դառնում, անհույս ներկան դառնում է ողբի հիմնական տարերքը, և հնչում է անտունիների մորմոքը.

Կռու՜նկ, ի տար, օ՜ն,

Դե՛հ, դեպ Տարոն թռի՛ր, սլացի՛ր, Գնա, հեռացիր՝:

Տարագիր Նահապետ բանաստեղծը գիշերների հուսահատ տազնապների մեջ զգացմունքի հորդահոս տազնապներով փարվում է անցյալի հիշատակներին, և դարձյալ մտապատկերներում վեր են հառնում արյունոտ ասպատակությունները՝ պարսիկ, արաբ, հույն ու լեռնական արշավում են նորից Հայաստան, ու՛ր են Մամիկոնյանները. նրանք հանգչում են Մշո շքեղ մշուշապատ դաշտի մեջ, և սուրբ շիրիմներն «ահե-

«Բանաստեղծ-նահապետին շիրմին առջև», «Բազմավեպ» 1904, էջ 244:

¹ Նույն տեղում՝ էջ 325-326:

դագոր դյուցազանց» անարգում են «քյուրդ, տաճիկը լիրբ, անսանձ»: Գրեթե չկա մեկ հայ բանաստեղծ, ում ներշնչած չլինի Նահապետի՝ հայր Ալիշանի կերպարը, և Վարդանանց հերոսների սխրանքը՝ Եղիշե Չարենց, Հովհաննես Շիրազ, Վահագն Դավթյան, Սիլվա Կապուտիկյան...

1933 թվականին՝ մի բարդ ժամանակաշրջանում, Եղիշե Չարենցը գրեց իր «Մահվան տեսիլ» պոեմը: Հայ ազգային-ազատագրական պայքարի ռահվիրա բանաստեղծների պատկերասրահը նա բացում է Ղևոնդ Ալիշանով: «Մահվան տեսիլ» տարերքը հայոց աշխարհն է, բարձրագույն ներշնչանքն ու զարկերակը՝ մեր ազատատենչ իդեերի վերելքի ու նահանջի պատմությունը: Իրար հետևից գալիս են հայոց մեծերը, ոգու առաջնորդները, մտածողները, քաղաքական գործիչները: Ահա Ալիշանը՝ վեհատեսիլ, տրտմաշուք. նրա հեծեծանքը երկինք է հասնում, Խորենացու նման նա էլ ողբում է անցյալի փառքը «Հայոց ազգի տարակուսեալ գրլխուն վրա»: Տարագիր է Նահապետը, անմխիթար է նրա ցավը, անափով է հոգին, քանի որ աչքերը չեն տեսնում Հայոց աշխարհի զարունները, թեպետև կյանքն անցել է ծիծաղկուն ծովի ափերին. «Բայց չքնաղ հայրենիքը քո – ինձ համար հայրենիք չդարձավ, Եվ ծովը ձեր այն ծիծաղկուն, չբուժեց իմ սիրտը ցավից»: Իմաստասիրական այս պոեմը շատ կողմերով հիշեցնում է Դանթեի «Աստվածային կատակերգությունը»: Չարենցը ստեղծում է մահվան աշխարհի պատրանքը, որի մեջ յուրովի անդրադառնում է մեր նորագույն պատմության արյունալի ընթացքին: Ինչպես Վիրգիլիոսը Դանթեին, այնպես էլ Դանթեն Չարենցին առաջնորդում է դեպի Այնաշխարհ: Չարենցը ընտրել էր դժվարին ուղի, նա վերամարմնավորում էր հայոց մահվան տեսիլների շարքը, ու այդ ծանր, իմացական թեմային մոտենում էր «մտածումի նավով»՝ խուսափելով ընդմիջտ դյուրածին երգերից:

Մռայլ գույներով, միստիկ երանգներով զծագրվում են բնապատկերներ՝ ամեհի ժայռեր, վիթխարի ծառեր, խավարով ու ահով լցված անտառ, բացվում է ստվերների թագավորության եզերքը, և այս անգամ Դանթեին փոխարինելու է գալիս Սիամանթոն՝ չարչարանքի տեսիլներով, հոգեվարքի իրիկուններով, վիրավոր երազներով: Եվ ահա լսվում է Ալիշանի ձայնը: Ալիշանից հետո գալիս է Բաֆֆին, Հետո ռազմի երգերի գուսանը՝ Ռափայել Պատկանյանը, հաջորդում են իրար դաշնակցության ու հնչակյան կուսակցության առաջնորդները, Բանկ Օտտոմանի հերոսները. թաղման մի տարօրինակ թափոր է դա, որին մասնակցում են գրեթե բոլոր հայ մտածողները, բանաստեղծներն ու գրողները՝ Գրիգոր Արծրունին, Ղևոնդ Ալիշանը, Բաֆֆին, Պատկանյանը, Դուրյանը, Պեշիկթաշյանը, Սիամանթոն, Վարուժանը, Խրիմյան Հայրիկը՝ թղթե շերեփով, որ անընդհատ կրկնում է մոգական մի թիվ՝ Բեռլինի վեհաժողովի

ճակատագրական 61 թիվը: «Չարենցի մեղանչումներն ակնհայտ են, գրում է Հրանտ Թամրազյանը իր «Եղիշե Չարենց» մենագրության մեջ. «Բայց դրանց հետ մենք տեսնում ենք նաև ինչ-որ հազվագյուտ, անգնահատելի բան բոլոր նման երկերի մեջ, որը դառնում է գեղարվեստական պատկերի և՛ շաղախը, և՛ տարերքը: Դա ներքին վիթխարի կսկիծն է, անսահման ցավը՝ մեր անվերադարձ կորուստների, տանուլ տված սրբությունների, կորսված եզերքի և սրածված սերունդների համար... Միստիկ տեսիլների այս շարքը, որ ամբողջովին գալիս էր կյանքից, անցնում է տառապած բանաստեղծի արնոտված սրտի և շիկացած ուղեղի միջով»¹:

Եվ այսպես՝ Ղևոնդ Ալիշանը ոչ միայն իր հերոսական քնարերգությամբ՝ «Երգք Նահապետի» նվագներով, այլև արձակով, հայագիտական-բանասիրական աշխատություններով և գիտական այլ ուսումնասիրություններով անգնահատելի դեր է խաղացել ազգային գրականության, հայագիտության, և ընդհանրապես մշակույթի պատմության մեջ: Հայ հանճարի ոգին Նահապետի ազնվաշխարհիկ հայեցության մեջ մարդուց ու բնությունից դուրս տեսնում է Գերագույն Բանը, իսկական Ճշմարտությունը «Բարձրագույնս կազմակերպված մտածողության»՝ Բնությունը: Նահապետ բանաստեղծի կերպարը բազմազան դրսևորումներ ունի՝ մերթ ուրպես գործող անձ, մերթ դեպքերի ականատես ու մասնակից, մերթ նրա անունը հիշատակվում է որևէ առիթով: Իսկ ամենից առաջ նա ստեղծագործության քնարական տարերքի կրողն է. «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ», «Հրագդան» և այլ քերթվածներ շնչում են ազնիվ քնարականությամբ: Ղևոնդ Ալիշանը հայ բազմադարյա քնարերգությունը նորոգեց բանաստեղծական հաստատ ճարտարապետությամբ: Նրա հզոր երևակայությունը ստեղծեց զորավոր պատկերներ, ուր ներշնչանքն ու ազնիվ խռովքները պայմանավորված էին Գերագույն Ճշմարտության օրինաչափություններով:

¹ Թամրազյան Հ., Եղիշե Չարենց, «Սովետական գրող» հր., Երևան, 1981, էջ 442-443:

АИДА МАРАНДЖЯН
Кандидат филологических наук

РЕЗЮМЕ

ИСТОРИЧЕСКИЕ ИСТОЧНИКИ И ДАЛЬНЕЙШИЕ ХУДОЖЕСТВЕННЫЕ ОБРАБОТКИ ПОЭМЫ ОТЦА Г.АЛИШАНА "АВАРАЙРСКИЙ СОЛОВЕЙ"

Ключевые слова: родоначальник армянской литературы, идеология, программа борьбы и возвращения, видение мысли, Дитя свободы, Гений, Спасение, Страдание, Соппротивление, Провидец, Гимн.

Тема «Вардананц» в армянской художественной литературе начинается с патриотической книги Егише «О Вардане и войне армянской». Война Варданца всегда была в центре внимания армянских деятелей культуры - писателей, поэтов, художников, скульпторов, композиторов. Но поэма Гевонда Алишана - чудо чистого и высокого вдохновения, душевного стиля.

В 60-х годах XIX века Рапаэль Паткян написал свою поэму «Смерть храброго Вардана Мамиконяна», Микаел Налбандян написал свою знаменитую «Пародию», Петрос Дурян написал короткую строчку «Песня битвы Вардананца».

В 80-х годах Ованнес Ованнисян обратился к этой теме со своими знаменитыми произведениями «Князь Сюника», «Тгмут», «День Вардананца».

AIDA MARANJYAN
Candidate of Philology

ABSTRACT

HISTORICAL SOURCES OF ALISHAN'S POEM "THE NIGHTINGLE OF AVARAYR" AND ITS FURTHER LITERARY DEVELOPMENTS

Keywords: ancestor of Armenian literature, ideology, struggle and return program, vision of thought, Child of Freedom, Genius, Salvation, Suffering, Resistance, Seer, Hymn.

The poem "Plpul of Avarayr" by the ancestor of Armenian literature, his further realizations in Armenian fiction is studied in the article of "The historical principle of the poem "Plpul of Avarayr" by Ghevond Alishan and further artistic realizations".

With his "Songs of the Ancestor" Ghevond Alishan established the historical right to a new literary direction, romanticism, which was started in the 20s of the 19th century by Harutyun Alamdaryan with his lyric poetry. The theme of Vardanants in Armenian fiction begins with Yeghishe's patriotic book "History of Vardan and the Armenian War". The Vardanats War has always been in the center of attention of Armenian cultural figures: writers, poets, painters, sculptors, composers. But Ghevond Alishan's poem is a marvel of pure and high inspiration, a soul-stirring style. In the 60s of the 19th century, Rapael Patkanyan wrote his poem "The Death of Brave Vardan Mamikonyan", Mikael Nalbandyan wrote his famous "Parody", and Petros Duryan wrote the short line "Battle Song of

Vardanants". In the 80s, Hovhannes Hovhannisyan addressed the topic with his famous works "Prince of Syunik", "Tghmut", "Vardanants Day".

REVERENSIS

1. «Anahit», G tari, 1901, tiv 8, ej 178:
2. Abexyan M., Hayoc grakanutyun patmutyun, hat. A, Hayk. SSH GA hrat., Erevan, ej 74:
3. Alischan Gh., Nvagner, Haypethrat, Erevan, 1957, ej 25:
4. Alischan Gh., Huschikq hayrenyac hayoc, hat. 2, 2-rd tpagutyun, Venetik, 1921, ej 95:
5. Amsorya texekatu, K. Polis, 1913, noyember, tiv 30, ej 98:
6. «Bazmavep», 1845, aprili 1, tiv 7, ej 109-111:
7. Tamrazyan H., Eghische Tscharenc, « Sovetakan grox», hrat., Erevan, 1981, ej 442-443:
8. Tumanyan H., Erkeri liakatar joxovacu, hat. 1, ej 193:
9. Mkrttschyan V., Derenik Demirtschyan, Erevan, « Sovetakan grox», 1971, ej 271:
10. Nalbandyan M., Erkeri liakatar joxovacu, hat. 3, Erevan, ej 120:,
11. Nalbandyan M., Erkeri liakatar joxovacu, hat. 4, Erevan, ej 170:
12. Tschopanyan A., « Anahit», A tari, tiv 12, ej 359-360:
13. Tschopanyan A., «Anahit», D tari, tiv 4, 1902, ej 71:
14. Jrbaschyan E., Groxy ev joxovurdy, Erevan, «Sovetakan grox», 1989, ej 59-60
15. Varujan D., Namakani, Erevan, 1965, ej 177-178:
16. Terteryan A., Hay klasikner, Erevan, 1944, ej 75:

Հ.Ղ. ԱԼԻՇԱՆԸ Ա. ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ

Բանալի բառեր՝ Արշակ Չոպանյան, Ղևոնդ Ալիշան, գրաքննադատություն, գրականագիտական մեթոդներ, գեղագիտական արժեք, կրոն և հայրենիք, հայկական ինքնություն, ազգի կրթություն, դաստիարակություն:

Արշակ Չոպանյանի գրաքննադատական հսկայական ժառանգության մեջ ուրույն տեղ ունեն Մխիթարյանների՝ հատկապես Մխիթար Մեֆաստացու և Հայր Ղևոնդ Ալիշանի մասին ուսումնասիրությունները, որոնք նա հրապարակել է «Անահիտ» հանդեսում. «Նոր ժամանակներում հայոց մտավոր-գրական կյանքի սկզբնավորումը «Անահիտը» կապում է Մխիթարյանների անվան հետ: Նրանց գործունեությանը հանդեսը հաճախ է անդրադարձել ինչպես առանձին ուսումնասիրություններով (Ա. Չոպանյան, «Վենետիկի Մխիթարյանները», 1899, թիվ 12, «Մխիթարի գործը», 1901, թիվ 8, «Վիեննայի Մխիթարյանները», 1902, թիվ 8, «Մխիթար», 1901, թիվ 10-11), այնպես էլ տարբեր առիթներով արտահայտված գնահատական խոսքով»[4, էջ 94]: «Ռվիվ Անսիքլոբետիք» պարբերականի մեջ հրապարակած «Արդի հայ գրականությունը» հոդվածի առթիվ Չոպանյանը 1899 թ. «Բազմավեպից» սուր և պախարակելի պատասխան է ստանում: Խնդիրն այն էր, որ Չոպանյանը, կարևորելով Մխիթարյանների մշակութային լայն գործունեությունը, իր ֆրանսերեն հոդվածում չէր անդրադարձել Ալիշանից հետո եկող մխիթարյան գրողներին՝ համարելով, որ էական ուշադրության արժանի ստեղծագործողներ չկան: Դա է պատճառը, որ նրան վիրավորում են՝ կոչելով «հայ գրականության սիրահար արբանյակ», և մեղադրում աչառու վերաբերմունքի համար: Նույն թվին «Անահիտ» հանդեսում հրատարակած «Վենետիկի Մխիթարյանները» պատասխան հոդվածում Չոպանյանը անխնա, բայց արժանապատվորեն քննադատում է Մխիթարյանների ներկայի գործունեությունը՝ համարելով, որ Բագրատունու ու Ալիշանի նման քանքարներից հետո վանքը ամեն առումով անկում է ապրում. «Բազմավեպի» գրական բաժինը ծիծաղելի է, իսկ Բանասիրականը՝ «հօռի ընդօրինակում» Վիեննայի «Հանդեսի»[1, էջ 365],- գտնում է Չոպանյանը: Այս, նաև ինչ-որ չափով կանխակալ վերաբերմունքը ուներ իր խորքային պատճառը: 1894-97 թթ.

Հայկական ջարդերի ժամանակ, երբ ամբողջ աշխարհում անգամ օտար-երկրացիները իրենց բողոքն էին արտահայտում մոռվող ժողովրդի ձայնը լսելի դարձնելու համար, Վենետիկի վանքում լռություն էր: Սասունի հայտնի դեպքերից հետո էլ, երբ Նուբար փաշան նվիրատվություն է անում վանքին՝ առաջարկելով հայ ներկան ու անցյալը համադրող, Եվրոպային ճանաչեցնող մի գործ տպագրել, կրկին լռություն է լինում: Միայն 4 տարի անց է այդ միջոցներով տպվում «Միսուանի» ֆրանսերեն տարբերակը, որը, ինչպես Չոպանյանն է հավաստում, չի արժանանում ո՛չ ֆրանսիացի հասարակության ուշադրությանը, ո՛չ էլ հայտնի որևէ պարբերականի գնահատականի: Այս առումով հետագայում նա քննադատելու էր նաև Ալիշանին՝ հայկական ջարդերի հանդեպ դատապարտող վերաբերմունք չցուցաբերելու համար: Ահա այս լռությունն է մասամբ ենթակայական այն տեսակետի աղբյուրը, որով Չոպանյանը համարում է, որ Ալիշանից հետո վանքում ոչ մեկը ոչ մի մշակութային մնայուն ու հիմնարար արժեք չի ստեղծում:

Չնայած սուր քննադատությանը՝ վերոնշյալ հոդվածում Չոպանյանը, մեծ պատկառանքով խոսելով Ալիշանի մասին, կարևորելով նրա մշակութային վաստակը, նրան համարում է Վենետիկի վանքի այն ներկայացուցիչը, որի մեջ համադրվում են Մխիթարյանների անցյալն ու ներկան, որի անձի մեջ ներդաշնակվում է այն ամենը, ինչ արել են նրա նախորդներն ու ժամանակակիցները [1, էջ 361]: Չոպանյանը շատերի անուններն ու նրանց գործերն է թվում՝ վերստին հաստատելու իր կարծիքը, որ 19-րդ դարավերջին Վենետիկի վանքում Ալիշանի կողքին չկա նրա մեծությանը հավասար որևէ մեկը: Ընդ որում, փաստում է Չոպանյանը, դա ցույց է տալիս և՛ Ալիշանի գործը: «Մքանչելի ծերությունը ապշեցուցիչ աշխատասիրությամբ հոգնեցնող» Ալիշանը կարող էր իր «հաւաքող» գործին լծել իր աշակերտներին, եթե «իրեն արժանի աշակերտներ ունենար»: Այս հոդվածում որոշակիորեն անդրադառնալով Ալիշանին և նրա գործունեությանը՝ գրաքննադատը միմիայն արժևորում ու մեծապես գնահատում է հայր Ղևոնդի անուրանալի հայագիտական վաստակը՝ գտնելով, որ նա պիտի դասվի եվրոպական հայտնի դեմքերի շարքում: «Հայկազեան բառարանը, Չամչեանի Հայոց պատմութիւնը, Ինճիճեանի հնախոսական, աշխարհագրական ուսումնասիրութիւնները, Բագրատունիի եւ Հիւրմիւզի թարգմանութիւնները, Ալիշանի բանաստեղծութիւնները ամենէն հօգ արտահայտութիւններէն են հայ ուղեղին... Մտաւորական ուժը գոր ցոյց տուած են Չամչեան մը, Բագրատունի մը կամ Ալիշան մը, զիրենք հաւասար կը կացուցանէ եւրոպական մտաւորականութեան ազնուագոյն դեմքերուն» [1, էջ 358]:

3 տարի անց՝ 1902 թ., «Անահիտ» հանդեսում Չոպանյանը հրապարակում է Ալիշանի մասին արդեն համապարփակ ուսումնասիրությունը, որը հետո՝ 1924 թ., առանց փոփոխության ներառվում է նրա «Դեմքեր» ժողովածուում: Այս ուսումնասիրության մեջ քննվում են Ալիշանի մի շարք գործեր ու բանաստեղծական ժողովածուները: Ուսումնասիրությունը քննադատը կատարել է համեմատական, հոգեբանական և կենսագրական մեթոդներով՝ առանձնացնելով Ալիշանի ստեղծագործությունների հիմնական յուրահատկությունները: Չոպանյանի գրաքննադատելու ձևը յուրօրինակ է՝ «սիրտը և միտքը միասին», այդ պատճառով էլ յուրաքանչյուր դիմանկարի մեջ երկուսն էլ նկատում ու ընդգծում է: Այսպես է վարվել Պ. Դուրյանի, Գր. Նարեկացու, Մ. Պեշիկթաշլյանի և այլոց մասին ուսումնասիրություններում: Ալիշանի մասին գրելիս Չոպանյանը առաջնահերթորեն ընդգծում է Հայաստանի, հայ ազգի և հայ ինքնության հանդեպ Ալիշանի ջերմ սերը, խանդաղատանքը, ընդգծված պատկառանքը: «Հայաստանը աշխարհիս կեդրոնն էր իրեն համար, օրհնեալ «բնագաւառը», ուր Աստուած բնակեցուց առաջին մարդը, Հայկի նախահայրը, Ադամը, որ արդէն Հայ էր, եւ կը խօսեր լեզու մը որ հայերէնի նախահայրն էր» [2, էջ 70], իսկ Երկրի հիմնաքարը Արարատն էր: Ուշագրավ դիտողականությամբ է գրականագետը հայտնաբերում Ալիշանի՝ Արարատի հանդեպ մեծ զգացմունքայնությունը. սա հետո հայ գրականության մեջ պիտի տարածվեր ու առանձին գրողների ստեղծագործություններում դառնար բանաստեղծական պոետիկայի ուրույն գիծ [3, էջ 86-87]: Չոպանյանը իրավացիորեն է մատնանշում այն հանգամանքը, որ Ալիշանի ակունքից են սնվում հայ գրողները, որոնք շատ ավելի հայտնի են, քան Ալիշանը:

Ալիշանի՝ ժողովրդի շրջանում հանրահռչակման պակասը Չոպանյանը բացատրում է նախ՝ նրա երկերի բարդ գրաբարով գրված լինելու հանգամանքով, երկրորդ՝ աշխարհից ու մարդկությունից հեռու՝ իր խցում, հանուն հայրենյաց ստեղծաբանելու յուրահատկությամբ: «...Մինչդեռ Ծերենց, Մամուրեան, Բաֆֆի Հայութեան ապագային կառուցումը կը պատրաստէին, Ալիշան իր վանականի կեանքին ու գործին մէջ փակուած, հեռու ամբոխէն, օրուան խնդիրներէն անջատ, ու իր աղւոր ու անհուն երազին, իր գրեթէ միստիքական ազգասիրութեան մէջ թաղուած, կը շատանար իր երգողի, հաւաքողի դերը կատարելով, եւ իր ամբողջ ճիգը կ'ուղղեր աւելի հայ ժողովրդին անցեալը վերակենդանացնելու քան ներկան քննելու կամ ապագան հանդերձելու...» [3, էջ 97]:

Ալիշանի ստեղծագործության ընդհանուր նկարագրին անդրադառնալիս հոդվածագիրը նախևառաջ ընդգծում է Աստվածաշնչի և Խորենացու հանդեպ Ալիշանի սրբազան վերաբերմունքը, ընդ որում, նկատի

ունի Խորենացուն և նրա «Հայոց պատմությունը», ոչ թե առանձին հեղինակին. «Եւ այդ երկու սէրերը Ալիշանի հոգովոյն մէջ սերտօրէն իրարու կապուած էին, կամ աւելի ճիշդ՝ իրարու խառնուած, իրարու հետ ներքնապէս ընդելուզուած ու գրեթէ միակ զգացում մը դարձած էին, առանց սակայն իրենց ուրոյն անհատականութիւնը բոլորովին կորսնցնելու...»[3, էջ 86]:

Չոպանյանը մասնակիորեն գտնում է, որ Ալիշանի հայտնի «Սիսուան», «Շիրակ», «Այրարատ», «Հայքուսակ» և այլ մենագրություններում պակաս է գիտականությունը, քանզի նա առաջնորդվել է զգացմունքով, իսկ հաճախ էլ կրոնապաշտությամբ համակված եզրահանգումները վերածվել են զգացական կարծիքների: Հատկապես կրոնական ատաղձ ունեցող տեսակետերը, Չոպանյանի կարծիքով, Ալիշանը ձևավորել է զուտ քրիստոնեական հայեցակարգով. դրանք երբեմն առիթ են տվել թյուրատեսական եզրահանգումների, և դրանից էլ տուժել է նրա երկերի գիտականությունը: Բայց հակառակը, կրոնասիրությունը դրական դեր է խաղում այլ գործերում, ինչպիսին «Հուշիկք հայրենեաց Հայոց»-ն է: Չոպանյանի քննադատության մէջ թերություններն ու առավելությունները միաժամանակ մատնանշելը առանցքային է, քանի որ նա համարում է, որ գրախոսությունը «ապուշ ու անգիտակից ներբողով ներկել» պետք չէ: Այս պարագայում քննադատը ճիշտ է: «Հին հաւատք հայոց»-ին մէջ, ուր քրիստոնէութենէն առաջ հայոց կրօնքը ուզած է ուսումնասիրել, իր ճիգը կը ձգտի, ոչ թէ դարերու մթութեան մէջէն ճշմարտութիւնը զանազանելու, այլ ապացուցելու թէ հայկազնեան թագաւորներու օրով հայերը միաստուածեան էին(!), թէ կոապաշտութիւնը օտարներու ձեռքով ժամանակաւորապէս Հայաստան մտած երևոյթ մըն էր և քրիստոնէութեան առջև ամենայն դիւրութեամբ տեղի տուաւ»[3, էջ 88-89]:

Ալիշանի՝ իրականությունից կտրված ստեղծաբանելը, ինչպես իրավամբ նկատում է Չոպանյանը, ոչ միայն նրա՝ երբեք Հայաստանում եղած չլինելու հանգամանքով է պայմանավորված, այլ նրանով, որ Ալիշանը չէր ցանկանում եղծել հեքիաթային Հայաստանի վեհ պատկերը սոցիալական ու հասարակական դժնի իրականությամբ: Ժամանակակիցներից մեկը՝ Ալիշանի սաներից մի բանաստեղծ, Չոպանյանին ասել է, որ նա «Հիվանդ պիտի ըլլար եթէ այսօրուան ողբալի, քայքայուած, մոխրապատ Հայաստանը աչքովը տեսներ. ան իր մտքին մէջ միշտ կենդանի ու կանգուն կը նշմարէ հին, շքեղ, ազատ Հայաստանը, և այդ տեսիլը չէ ուզած երբեք քանդել իրականութեան բիրտ բաղխումովը» [3, էջ 89]:

Եվ հետևաբար, եզրահանգում է քննադատը, այդ բոլոր աշխատությունները «պետք է նկատել ուրեմն բանաստեղծ-հաւաքչի, հայրե-

նասեր-ընդհանրացուցչի գործեր,- և իբրև այդ՝ զմայլելի գործեր են անոնք» [3, էջ 89]:

Բայց և այնպես որոշ թերություններ մատնանշելը չի նշանակում, որ Չոպանյանը որևէ ձևով նսեմացնում է Ալիշանի գրական վաստակը: Իհարկե, Չոպանյանը գիտնական չէր. փորձառու գրաքննադատը միշտ էլ վերջնական վճիռ չի կայացնում, միտքը երբեմն էլ անգամ հակասում է նախորդ տեսակետին, բայց միշտ թերությունների կողքին ընդգծում, կարևորում է քննվող հեղինակի լավագույն կողմերն ու արժանիքները: Այս դեպքում էլ նա շեշտում է Ալիշանի բազմաբեղունությունը՝ թվարկելով գրեթե բոլոր գործերը, հպանցիկ ներկայացնելով դրանք, գտնելով, որ նրանց գիտականությամբ պիտի զբաղվեն գիտնականները, և որ Ալիշանի «անթառամ կենդանությունը» հայ պատմության, հայ ցեղի անուրանալի փառքն է:

«Յուշիկք հայրենեաց Հայոց»-ը քննելիս Չոպանյանը նկատում է, որ կրոնասիրությունը այս դեպքում այլևս չի թուլացնում անցյալի հերոսական ու արժանի դեպքերի շարադրանքը, այլ հակառակը՝ «դրդիչ մը կը դառնայ աշխատասիրութեան, քաջութեան, առողջ հայրենասիրութեան» [3, էջ 92]: Բազմաթիվ մեջբերությունները վկայում են Չոպանյանի իրավացիությունը: Գեղեցկագիտական առումով (նա նկատի ունի գեղագիտական արժեքը) ամենից բարձր ու թանկագին համարում է «Նուագներ» բանաստեղծական շարքը: Այն չափազանց բարձր է գնահատում, չնայած որ սրանում կրկին առանցքային է համարում կրոնի ու հայրենիքի թեման, բայց և գտնում է, որ կրոնական սահմանափակում այստեղ արդեն չկա, և բանաստեղծական ներշնչանքը անհունորեն ճոխ է: Իր քննադատական գործերում Չոպանյանը երբեմն համեմատում է անհամադրելին ու միմյանցից հեռու հայ և համաշխարհային մեծությունների գրական արժեքները: Քննադատը Ալիշանի ստեղծագործությունները ևս համադրում է Բայրոնի, Պետրարկայի, Հյուգոյի և այլոց գրական գործերին: Բայց պետք է փաստել, որ սրանք սոսկական համեմատություններ չեն, գրեթե բոլորի ստեղծագործություններին քննադատը ծանոթ էր, ներկայացրել էր նրանց «Անահիտի» էջերում: Չոպանյանի գրաքննադատության մեջ համաշխարհային այդպիսի գրողների հետ համեմատությունը կատարվում էր ոչ միայն հայրենասիրության դիրքերից, ինչը ուրույն առանձնահատկություն է նրա քննադատական գործերում, այլև շատ դեպքերում առարկայական չափորոշիչներով: Ոճային առանձնահատկությունները քննելիս Չոպանյանը հենվում է Ալիշանի կենսափմաստության և լայն աշխարհայացքային որակների վրա, պոետական յուրահատկությունները բացատրում է հենց դրանցով՝ զանց առնելով միշտ կրոնական, գենային յուրահատկությունը: «Ուրեմն՝ կարելի է կարծել, որ եվրոպացիների ազ-

դեցությունը ունեցել է ավելի շուտ և շատ արտաքին, ձևական արտահայտություն, իսկ խորքում Ալիշանը միշտ մնացել է իր ներշնչանքի բուն տարերքում՝ հայրենիքի պաշտամունքի ու քրիստոնեական հավատքի նկատմամբ անձնուրաց սիրո մթնոլորտում» [5, էջ 178]: Արևելցու ինքնության մեջ տեսնելով պատկերների ճոխությունը, «մեծաշոինդ» բառերի կուտակումները՝ Չոպանյանը մեջբերումներ է անում՝ ցույց տալու Ալիշանի օգտագործած ոճական հնարների բազմազանությունը: Ուշագրավ է, որ Ալիշանի պոեզիայի մասին մեծաշուք մակդիրների կողքին, երբ թվում է, թե քննադատը Ալիշանի պոեզիան անըստցուտ ստեղծաբանություն է համարում, հընթացս տրվում են նաև թերությունների տարբեր ձևակերպումներ՝ «Ճաշակի պակաս, ծայրահեղ ճոռոմություն, վսեմի տղայաբանություն» և այլն:

Բայց և այնպես թերություններ նկատելը և մատնանշելը ինքնապատակ չեն, դրանք չափազատված են, քանի որ ինչպես Չոպանյանն է գտնում. «Այդպիսի խոշոր ուժի մը հանդէպ ինչպէս էր՝ անվիճելի կերպով՝ Ալիշան, աններելի պիտի ըլլար թերութիւնները միայն տեսնել, մանաւանդ որ այդ թերութիւնները կը բացատրուին միջավայրովը, ինչպէս որ փոխադարձաբար աններելի եւ անիմաստ պիտի ըլլար զանոնք քօղարկել եւ ապուշ ու անգիտակից ներբողով մը ներկել իր ամբողջ գործը» [3, էջ 95]:

Չոպանյանի համար գրական գործի քննադատությունը ամենից առաջ նրանում գեղագիտական արժեքը, ինչպես ինքն է ասում գեղեցկությունը նկատելն է, արժևորել այն, այդ պարագայում արդեն հետին պլան են մղվում թերությունները, որոնք ստվեր չեն գցում երկի վրա: Սա է պատճառը, որ Չոպանյանը Ալիշանի ոճը բարձր է դասում իր տաղանդի բազմազանությամբ, մինչ ուրիշների գործերում տաղանդի լույսը ի մասնավորի է երևակվում միայն որոշակի սեռերում: Բանաստեղծական ներշնչանքը քննադատության մեջ ներդնելով՝ Չոպանյանը երբեմն չափազանցում է՝ գտնելով, որ Ալիշանի լեզվի հարստությունն ու ճարպկությունը անգերազանցելի են: Անդրադառնալով գրական ազդեցության խնդրին՝ Չոպանյանը համարում է, որ Ալիշանը ոչ մեկից գրական ազդեցություն չի կրել: Թեպետ հոդվածի սկզբում նա նշում է, որ Ալիշանը ազդվել է եվրոպական առաջադեմ մտքից, հաջորդիվ քննադատը իր խառնվածքին հարիր կերպով սա հերքում է, միևնույն ժամանակ ճշմարտորեն ընդգծում է հակառակ երևույթը. բազմաթիվ հայ գրողներ ազդվել են Ալիշանից: Գամառ-Քաթիպայի, Աղայանի, Դուրյանի ինչ-ինչ գործերում երևան է գալիս ալիշանյան «Նուագները», Օերենցի, Մամուրյանի, Րաֆֆու գործերում նշմարվում է «Հուշիկները» հայ ժողովրդի բանահյուսական, ժողովրդական վիպերգությունների հավաքագրման առումով:

Չոպանյանը, լինելով անկեղծ ու միշտ անաչառ իր գնահատումներում, միևնույն ժամանակ սիրելի հեղինակներին վերաբերվում էր որոշակի վերապահող հարգանքով: Այս կերպ նա մատնանշում, քննադատում է Ալիշանին՝ Հայաստանի ապագան չնկատելու, չգատորոշելու, չպարզելու համար, բայց և գնահատում է նրա՝ երիտասարդությանն ուղղված վերափոխվելու դաստիարակչական հորդոր- կոչերը: Ալիշանը հայ երիտասարդի դաստիարակությունը տեսնում էր հայ կրոնի վրա հիմնված հայրենասիրության ու իմաստասիրության միասնությամբ: Միևնույն ժամանակ Ալիշանը հայ քաղաքացուն ուղղում էր դեպի հայոց լեզու և գրականություն, հայ ազգի ավանդույթներն ու ծեսերը: Հեղափոխական, խիզախ ու շրջադարձային որոշումներ կայացնող ու տեքստում անկեղծությունը արժևորող Չոպանյանը, անշուշտ, հասկանում է Ալիշանի խաղաղ, կրթական աստիճանական բարեփոխումների մոդումները, բայց և չի ընդունում հասարակության դաստիարակության ու առաջնորդման այս մոդելը: Չոպանյանի համար այս հակասությունը աշխարհայացքային է: Պետություն և պետականություն չունեցող ազգերի պարագայում, անշուշտ, Չոպանյանի դիրքորոշումը շատերն էին ճիշտ համարում, եթե հաշվի առնենք, որ հոդվածի գրման ժամանակ՝ 1902 թվականին, Հայաստանը՝ որպես պետություն, դեռ չկար, այնինչ Ալիշանի՝ ազգի դաստիարակության և կրթության համար առաջնային էին գիրք, գրականությունը, մշակույթն ու աշխարհագրությունը, որոնք հեռահար տեսլականի գրավականներն էին: Հայկական շարժման գաղափարական առանցքում, իհարկե, Չոպանյանի համար որոշակի առումով է միայն ընդունելի Ալիշանի դիրքորոշումը հայ ազգի դաստիարակության ու լուսավորության առումով: Զարմանալի հեռատեսությամբ է Չոպանյանը արժևորում հայկական շարժման պոթելուն ծագումը, հայկական հարցի լիբերալ բնույթը: «...Հայ ազգը մեծ, հզոր, ազնիւ, ազատ, քաջ է եղած անցեալին մէջ, անուղղակի կերպով, բայց շատ հզօրապէս նպաստած է հայ ազատագրական պայքարի շարժման ծննդեանն ու աճմանը արդի հայ մտքին մէջ, որովհետև ժողովուրդ մը, երբ գիտակցութիւնը կ'ունենայ անցեալին մէջ մեծ ու ազատ եղած ըլլալուն, չի կրնար երկարօրէն հանդուրժել ստրկական անարգ կացութեան մը մէջ կապկպուած մնալու, և կը շտապէ ամէն զոհողութիւն թափել՝ այդ գեղեցիկ անցեալը դրականապէս վերանորոգելու համար» [3, էջ 100]:

Չոպանյանի քննադատական հոդվածների մյուս մեթոդը կենսագրականն է, ըստ որի յուրաքանչյուր ուսումնասիրության, դիմանկարի մեջ նա ուրվագծում է հոգեբանական, բարոյական, մարդկային այն գծերը, որոնցով օժտված է քննախոսվող հեղինակը: Այս մենագրության մեջ որպես վկայություն պատմում է իր և Ալիշանի հանդիպումը, նրա հրեշ-

տակային թեթևության ու խորախորհուրդ իմաստնության մասին, նրա մահվան պատմությունը վերապատմում որպես սրբախորհուրդ անձի մասին վկայություն: Հոգևածի վերջին մասը նվիրված է Ալիշանի ապրած համեստ կյանքի որոշ դրվագներին և մահվանը, որի մասին, համարում է Չոպանյանը, շատ քիչ բան գիտենք: Այդուհանդերձ, Ղևոնդ Ալիշանի կյանքը իրավամբ պատկառանքի է արժանի. «Կեանք մը ամբողջ հոգեկան ու մտաւորական տքնութեան, կեանք մը ամբողջ Գաղափարի մը գոհուած, կեանք մը ծայրէ ծայր բացարձակ անկեղծութեան մը կնիքովը դրոշմուած: Կեանք մը ամբողջ վանքի ու դպրոցի մէջ անցած, գրքերու վրայ հակած՝ անոնցմէ վերակենդանացնելու համար նուազած անցեալին պատկերը, թարմ հոգիներու վրայ ծռած՝ անոնց մէջ ցանելու համար աշխատասիրութեան, հայրենասիրութեան, գեղեցկասիրութեան սերմերը» [3, էջ 101]:

Չոպանյանը Ալիշանի ժամանակակիցն է եղել, և ինչպես շատ տեքստերում, նրա խոսքը այս պարագայում էլ արժնորոշ է, առանձնացող: Ողջ կյանքում համեստ Չոպանյանի համար նույնքան սրտամոտ են այնպիսի անձինք, ինչպես Ալիշանը, որի համար եղել են «Տիտղոսները-հայ և քահանա, շքանշանները-կապան և գօտին»:

Գրականագետը տեքստի վերլուծման իր ուրույն հատկանիշով՝ մեծ զգացմունքայնությամբ էլ եզրափակում է իր մենագրությունը. «Որքան ատեն որ հայ ազգը գոյութիւն ունենայ, Ալիշանի գործը պիտի կենդանի մնայ եւ անոր հոգին պիտի յաւիտենապես շողայ միշտ ներկայ, միշտ վառ, միշտ սիրուն, միշտ տաք. ետեւէ ետեւ եկող բոլոր հայ սերունդներին սրտին վերս...» [2, էջ 80]:

Գրականության ցանկ

1. «Անահիտ, հանդէս ամսեայ», Ա տարի, թիվ 12, Փարիզ, 1899, հոկտեմբեր:
2. «Անահիտ, հանդէս ամսեայ», Դ տարի, թիվ 4, Փարիզ, 1902, ապրիլ:
3. Արշակ Չօպանեան, Դէմքեր, Փարիզ, 1924:
4. Յուրի Ավետիսյան, Անահիտ հանդեսը, Երևան, 1999:
5. Վաչագան Ավագյան, Ղևոնդ Ալիշանը Արշակ Չոպանյանի գնահատմամբ (Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակի առթիվ)| Հայագիտության հարցեր, 2 (20), 172-180 էջ, Հայաստան, 2020:

НАИРА БАЛАЯН

Кандидат филологических наук, доцент

РЕЗЮМЕ

ОТЕЦ Г. АЛИШАН В ОЦЕНКЕ А. ЧОПАНЯНА

Ключевые слова: Аршак Чопанян, Гевонд Алишан, литературная критика, литературные методы, эстетическая ценность, религия и родина, армянская идентичность, национальное образование, воспитание.

Статья посвящена монографии Аршака Чопаняна "Гевонд Алишан", вышедшей в свет в журнале "Анаит" в 1902 году в Париже. В статье показана значимость своеобразия методов анализа литературного произведения, проведенного великим армянским литератором; акцентируется специфичность конструкции монографии, литературоведческий исключительный оценочный взгляд, которым Чопанян исследует не только литературную жизнь и деятельность Алишана, но и его произведения, обнаруживая своеобразные умозаключения, не потерявшие свою научную значимость и по сей день.

NAIRA BALAYAN

Candidate of Philology, Associate Professor

ABSTRACT

THE EVALUATION OF FATHER GH. ALISHAN (with special reference to A. Chopanyan's interpretation)

Keywords: Arshak Chopanyan, Ghevond Alishan, literary criticism, literary methods, aesthetic value, religion and homeland, Armenian identity, nation education, upbringing.

The article is dedicated to Arshak Chopanyan's "Ghevond Alishan" monograph, which was published in 1902. In the magazine "Anahit", in Paris. The article uses the unique methods of the great Armenian literary critic to analyze the literary work, emphasizes the peculiarities of constructing a monograph, the uniquely valued literary view with which Chopanyan examines not only Alishan's literary career and activities, but also his works, revealing new and unique conclusions. They have not lost their scientific value even today.

**ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.
ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

Բանալի բառեր՝ Ղևոնդ Ալիշան, Հովհաննես Հովհաննիսյան, Արամ Ինճիկյան, «Հայպետհրատ» հրատարակչություն, «Ալազյազ Բարձր սարին» բանաստեղծություն, Մխիթարյան միաբանություն:

Հայ նոր գրականության մեջ աշխարհաբար պոեզիայի հիմնադիրներից և ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ղևոնդ Ալիշանը, իր «Երգք Նահապետի» բանաստեղծությունների շարքով ազդարարեց մեր գրականության մեջ ռոմանտիզմի շրջափուլը:

Միքայել Նալբանդյանի բնորոշմամբ «Զափաբերական քերթվածոց մեջ արժանավոր ախոյան չունեցող» տիտղոսով հռչակված Ալիշանն իր այս քայլով հաստատեց հայ պոեզիայի հետագա զարգացման ուղին: Այս մասին Ս. Շտիկյանը գրում է. «Ալիշանի «Նվագներ»-ը հատկապես «Երգք Նահապետի» շարքը կազմող ստեղծագործությունները, նշանակալից չափով նպաստել են հայ բանաստեղծական կուլտուրայի զարգացմանը: Օգտագործելով միջնադարյան տաղերգության և ժողովրդական պոեզիայի մշակած գեղարվեստական ձևերը՝ Ալիշանը նշանավորեց հայ բանարվեստի մի նոր աստիճան, որն իր հետագա, ավելի բարձր զարգացումը պիտի ապրեր Պեշիկթաշյանի, Դուրյանի և Հովհաննիսյանի ստեղծագործությունների մեջ»¹:

Ալիշանի պոեզիայի աշխարհիկ բովանդակությունն ու ձևը իրենց ազդեցությունն ունեցան հայ գրականության հետագա զարգացման վրա: Այդ ազդեցությանը պետք է վերագրել Ռաֆայել Պատկանյանի քաղաքացիական քնարերգությունը: Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» պոեմի ներշնչմամբ Պատկանյանը գրեց իր «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» և այլ երկեր:

Ղևոնդ Ալիշանը Հովհաննես Հովհաննիսյանի համար այնպես, ինչպես ժամանակի այլ դասականների՝ Թումանյանի, Իսահակյանի և հայ գրաքննադատական մտքի ընկալումներում հայ գրականության մեծ Նահապետն էր, այն բանաստեղծը, որի աշխարհիկ թեմայով քնարերգու-

¹ Ալիշան Ղ., Նվագներ, Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 6:

թյունից ազդվել են ժամանակի գրեթե բոլոր հայ գրողները, այդ թվում նաև Հովհաննես Հովհաննիսյանը:

Զարգացնելով Ալիշանի ավանդները՝ հայկական կլասիցիզմից ռոմանտիզմի անցման կարևոր գործում իր ներդրումն ունեցավ նաև Մկրտիչ Պեշիկթաշյանը, ով ոչ միայն ռոմանտիզմի, այլև նոր ժամանակների գրական հոսանքների իսկական արտահայտիչը դարձավ:

Ալիշանը բացեց մի ճանապարհ, որով քայլեց նաև Դուրյանը՝ ռոմանտիկական ուղղության շրջագծում՝ բանաստեղծությանը հաղորդելով զգացմունքային խորություն, հոգեբանություն, կանգնելով ազգային զարթոնքի շարժման և աշխարհաբարի տարածման դրոշակակիրների շարքում:

Հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացման և համախմբման շրջանում Ալիշանի ստեղծագործությունը դարձավ հայկական ինքնության զարթոնքի արձագանքն ու արտացոլումը: Աշխարհաբարով գրված երկերում նա պատկերել է հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագները:

Ալիշանի աշխարհիկ ստեղծագործություններից հետո, Հովհաննիսյանը գնաց նրա ճանապարհով թե՛ մեթոդի և թե՛ բանաստեղծական նյութի ու թեմատիկայի առումով:

Հայտնի է, որ Ալիշանը 1843 թ. ձեռնարկեց ազգային կամ ռականական երգերի հրապարակման և մեկնաբանման աշխատանքը. նա շատ բարձր էր գնահատում այդ երգերի նշանակությունը ոչ միայն նրանց օբյեկտիվ արժանիքների, այլև ազգային գրականության հետագա ճակատագրի համատեքստում: Նրա «Հատիկ», «Արագն եկավ», «Աշուղ», «Ալագյազ բարձր սարին» բանաստեղծությունները գրված են այս թեմատիկայի շրջագծում, և նրանց գրապատմական դերը ընկալվում է Ալիշանի աշխարհիկ ստեղծագործության՝ հայ գրականության պատմության մեջ ունեցած ազդեցության համատեքստում:

Հովհաննիսյանն առաջինն էր արևելահայ գրականության մեջ, որ իր վրա կրեց այդ ազդեցությունը, որը հետագայում էական նշանակություն ունեցավ հայ գրականության հետագա զարգացման վրա, այդ թվում Թումանյանի, Իսահակյանի, թեև թույլ ու անուղղակի արտահայտված, բայց իրական ազդեցության տեսքով:

Ալիշանի և Հովհաննիսյանի գեղարվեստական լեզուն ու ոճը թեև չեն հակադրվում, բայց ունեն իրենց էական առանձնահատկությունները:

Ալիշանը փորձեց օգտվել ժողովրդական լեզվից, բայց կտրված էր աշխարհաբարի բուն աղբյուրից՝ ժողովրդից. այդ էր պատճառը, որ նրա լեզուն որոշակիորեն արհեստական էր, և նա, հաճախ գտնվելով

գրաբարի ազդեցության տակ, շատ անգամ բանաստեղծությունների մեջ կիրառում էր սակավ գործածական բառեր:

Հայ գրականության պատմության համար առանձնահատուկ նշանակություն ունեն Ալիշանի և նրա գրական ավանդների, ինչպես նաև 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի հայ գրողների առնչակցության հարցերը: Հովհաննես Հովհաննիսյանը այն բանաստեղծներից է, որը տարբեր ուղիներով, ինչպես գրական, այնպես էլ անձնական կյանքում աղերսվում է Նահապետի գեղարվեստական որոնումների, նրա կյանքի ու գործի հետ:

Ալիշանից Հովհաննիսյան գրական առնչությունները անցել են զարգացման տարբեր փուլերով: Առաջին շրջափուլում Ալիշանի բանաստեղծության մեջ նրանից հետո եկած գրողները հայտնաբերեցին Նահապետի ազգային ինքնատիպ ոգին, որը փորձեցին իրենց երկերում մշտապես պահպանել ու իրենց գույնն ավելացնել այդ ոգուն: Սակայն լեզվի հարցում, ինչպես այլ գրողներ, այնպես էլ Հովհաննիսյանը փորձեցին լրացնել այն բացը, որ կար Ալիշանի երկերում: Ի տարբերություն Ալիշանի, ում հեռավորությունը թույլ չէր տալիս օգտվել ժողովրդական կենդանի լեզվից, Հովհաննիսյանը ապրում և օգտվում էր ժողովրդական բառուբանից: Ալիշանը ուղղորդվում էր այն սկզբունքով, թե ժողովրդական բանաստեղծությունն է պոեզիայի ապագա ճանապարհը, ինչը փոխանցեց հաջորդներին: Հովհաննիսյանի համար էլ ժողովրդական ուղին գրականության զարգացման միակ ճանապարհն էր: Ալիշանը գիտեր, որ «ռավական երգը ազգային ոգվոյն մեկ ձայնն է», և կոչ էր անում «ուսումնասեր և ազգասեր ընթերցողաց» հավաքելու Հայաստանի տարբեր գավառներում երգվող կամ ձեռագրերում մոռացված ազգային երգերը, իսկ Հովհաննիսյանը, ապրելով հայրենիքում, հնարավորություն ուներ անձամբ հավաքելու ժողովրդական բառն ու բանը: Իրականությունն այն էր, որ Ալիշանը և իրենից հետո եկած բանաստեղծները, ստեղծագործելով գրական լեզվով, հաճախ դիմում էին գրաբարյան քերականական ձևերին ու բառապաշարին: Պեշկեթաշյանի աշխարհաբարը «ժամանակի գործածվող աշխարհաբարը» չէր, իսկ Դուրյանի բանաստեղծական բառապաշարում և քերականության մեջ լեզվաբան Յու. Ավետիսյանը գտել է «գրաբարյան բառերի, արտահայտությունների ու դարձվածքների գործածություն»¹:

¹ **Ավետիսյան Յու.** «Արևմտահայ բանաստեղծության լեզվի պատմությունից. Պետրոս Դուրյան», «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (96), Եր., 1998, էջ 34:

Հովհաննիսյանի առաջին գրքում տեղ գտած թեմաները, ձևն ու բովանդակությունը հուշում են, որ նա լավ էր յուրացրել իր նախորդների ձեռքբերումները և այդ թվում նաև Ալիշանի դպրոցը:

Հովհաննիսյանն ըստ ամենայնի բարձր է գնահատել Ալիշանի գրապատմական դերը և նրան առանձնացրել է Մխիթարյանների բանաստեղծական դպրոցի այլ գրողներից: Այդ մասին վկայում է Հովհաննիսյանի կենսագիր Գարեգին Հովսեփյանը: Նա իր «Հովհաննես Հովհաննիսյան. կյանքն ու գործը» գրքում գրում է. «Հովհաննիսյանը շեշտում է, որ մինչև Ղևոնդ Ալիշանի երևան գալը, Մխիթարյանների բանաստեղծական դպրոցը արմատներ չունեի կյանքում: Այդ պահանջին ընդառնում է Ալիշանը, իսկական բանաստեղծ, որը նոր և կենսական հարցեր է մտորում: Ալիշանը աչքի ընկնող առաջադիմական քայլեր արավ կլասիցիզմի հաղթահարման ճանապարհին»¹: Ըստ Հովսեփյանի՝ Հովհաննիսյանը Ալիշանին համարում էր անցումային շրջանի բանաստեղծ. «Հովհաննիսյանի ըմբռնողությամբ Ալիշանը անցման շրջանի բանաստեղծ է: Դրա համար էլ շեշտելով Ալիշանի գրական գործունեության խոշոր դերը, առավելապես նկատում է, որ նրա նորությունն ու կենսունակությունը չունեն այն կտրուկ և տաք շեշտը, որ հատուկ է իրական կյանքում ապրողին. «Այն է երևում Ալիշանի բանաստեղծություններից, որ հայ գրականության մեջ պահանջ է զգացվում մի տաղանդի, որը ոչ թե ապրեր անցյալ կյանքի հիշողություններով, այլ հայրենի ներկա թրթռուն կյանքով, որպեսզի այդ՝ այսպես կոչված օդի մեջ առկախ մնացած բանաստեղծությունը կյանքի մեջ արմատավորվեր»²:

«Մի քանի խոսք մեր աշխարհաբարի տաղաչափության մասին» հոդվածում երևում է Մխիթարյան դպրոցի՝ Հովհաննիսյանի լավ իմացությունը: Վերոնշյալ մեջբերումն էլ իր հերթին փաստում է Հովհաննիսյանի՝ Ալիշան բանաստեղծի գրական գործունեության խորքային իմացությունը: Անշուշտ, նա քաջատեղյակ էր Ալիշանի չափաբերական արվեստին, քաջատեղյակ էր Մխիթարյան ողջ դպրոցին. դրա վառ ապացույցը պոետի առաջին գրքույկն էր՝ իր բանաստեղծական լեզվի և ասելիքի թարմությամբ: Նույնն է վկայում «Մի քանի խոսք մեր աշխարհաբարի տաղաչափության մասին» հոդվածը (1895), որտեղ երևում է Մխիթարյան դպրոցի և չափաբերական արվեստի նրա ողջ իմացությունը. «Մեր նորագույն գրականության մեջ ընդունված տաղաչափական ձևերն ինքնըստինքյան մինչ այն աստիճան անկերպարան են և օրենքները մինչ այն աստիճան

¹ **Հովսեփյան Գ.**, «Հովհաննես Հովհաննիսյան. կյանքը և գործը», Երևան, Հայպետհրատ, 1957, էջ 79:

² Նույն տեղում:

անմշակ ու խառնաշփոթ, որ մեր, հատկապես ռուսահայոցս նույնիսկ լավագույն բանաստեղծները մեզ երևում են որպես արհամարհող բանաստեղծության այն անհրաժեշտ պայմաններից մեկի, որ է գեղարվեստական արտահայտության արտաքին ձևը, չափը»¹: Խոսելով Շնորհալու կատարյալ տաղաչափության մասին՝ Հովհաննիսյանը կարծում է, որ մեր շարականները «դեռ օրինավոր կերպով ուսումնասիրված չեն տաղաչափության տեսակետից, և հ. Ա. Բագրատունու «հայկական» չափով մեր բոլոր շարականների կազմությունը բացատրվել չի կարող, թեպետ և նորանից շատերն այն հիմքն ունին, որի վրա հանճարեղ Մխիթարյան վարդապետը կառուցել է յուր տաղաչափության շենքը»²: Այս հոդվածում արտահայտվել են Հովհաննիսյանի՝ տաղաչափության մասին տեսական գիտելիքները, որոնք, անշուշտ, մեկ օրում չէին ձեռք բերվել, այլ տարիների ընթացքում:

Հովհաննիսյանը գտնում էր, որ գրականության տեսությունը՝ համեմատական լեզվագիտության հետ միասին նոր ճանապարհ է հարթում գրականության համար և այն «ապացուցանում է, որ այն արհամարհված, մոռացված աղքատ գեղջուկների խրճիթներումը, գիտական աշխարհի աչքիցը հեռու, մի վայրի, բայց շքեղ ու անթառամ բույս է ծաղկում: Այդ բազմաճյուղ բույսը ժողովրդական վառ երևակայության ու պարզ, բայց առողջ հանճարի արտադրած գրականությունն է»³:

Գրականագիտությունն արդեն արձանագրել է, որ անցյալ դարի վերջերին, երբ մեր տաղանդավոր բանաստեղծներից Ալիշանն ու իր հետևորդները արդեն ստեղծել էին իրենց ազգային-հրապարակախոսական պոեզիան, եկել էր նոր խոսք ասելու ժամանակը, և ահա ասպարեզ իջավ Հովհաննես Հովհաննիսյանը: «Հովհաննիսյանի պոեզիայի ակնառու առանձնահատկությունը նրա մոտիկությունն է ժողովրդական երգին», - գրում է Բրյուսովը և շարունակում. «Հովհաննիսյանի մի քանի բանաստեղծություններ վերադարձել են ժողովրդին՝ երգվում են որպես իսկական ժողովրդական երգեր ու կորցրել են հեղինակի անունը (օր. «Արագն էկավ լափին տալով...»): Սա, իհարկե, գերագույն պարզներից մեկն է, որ կարող է երազել պոետը»⁴:

Հովհաննիսյանն ահա, անցել էր բանաստեղծական այդ աշխարհը, յուրացրել և նվաճել էր նախորդների ձեռքբերումները:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 215:

³ **Հովհաննիսյան Հ.**, Երկերի ժողովածու, հատ. 3. Հոդվածներ, Եր., 1965, էջ 115:

⁴ «Հովհաննես Հովհաննիսյանը ժամանակակիցների հուշերում»: Ժողովածու, Եր. «Հայաստան», 1990, էջ 25:

Հովհաննիսյանի և Ալիշանի անձնական և գրական առնչակցությունների առումով ուշագրավ է Ալիշանի նամակը հասցեագրված Հովհաննիսյանին, որն առաջին անգամ տպագրվել է «Աղբյուր» ամսագրի 1888 թվականի № 1-ի հավելվածի չորրորդ էջում: Այնուհետև տպագրվել է 1969 թվականին, Ղևոնդ Ալիշանի «Նամականի»-ում:

Այդ նամակը Ալիշանի պատասխանն էր Հովհաննես Հովհաննիսյանի այն նամակի, որով բանաստեղծը ակնկալում էր հայ գրականության Նահապետի արձագանքը իր ստեղծագործությանը:

Հովհաննիսյանի առաջին գիրքը՝ «Բանաստեղծություններ» վերագրով 1887 թվականին լույս էր տեսել Մոսկվայում: Ինչպես նկատում է գրականագետ Նշան Մուրադյանը, Հովհաննիսյանի բանաստեղծությունների հանդես գալը ոչ թե նշեցին, այլ ուղղակի ողջունեցին ժամանակի բոլոր պարբերականները: Ի թիվս այլոց՝ Հովհաննիսյանն իր գիրքն ուղարկում է նաև Ալիշանին: Հեռավոր ս. Ղազար կղզուց ալեգարդ Նահապետի շնորհավորական նամակը չհապաղեց: Ալիշանը չէր զլացել և շտապել էր ուրախացնել երիտասարդին՝ խրախուսական տոներ գրելով. «Ազնի՛ւ պարոն, ընդունեցա և ժպտալով կարդացի աշխոյժ հասակիդ և մտացդ դրդեալ «Բանաստեղծությունները, որք և ի սիրոյ զգացմանէ առաջ եկեալ՝ բանաստեղծութեան մէջ պայման ունին, որ է ստուգութիւն երևակայութեան անդ, կամ երևակայութիւն ի ստուգութեան երևակայութեան անդ, կամ երևակայութիւն ի ստուգութեան: Փափագիմ, որ կեանքդ միշտ հիմնեալ ըլլա ի ստուգութեան, այլ զարդարեալ և բանաստեղծութեամբ»¹:

Ալիշանն իր կարծիքն ու դիտողությունները գրել էր շատ ազնվորեն և հայրական գորովանքով: Հովհաննիսյանը ճիշտ այդպես էլ ընկալեց Նահապետի շատ լակոնիկ, բայց տարողունակ նամակը: Նա այդ օրերին (1887 թ. հուլիսի 6) իր մտերիմ ընկերոջը գրում է. «Ստացա մի շատ համակրական նամակ «Միսուանի» ալեգարդ հեղինակիցը և ուրախացա նորա արած նկատողության համար»²:

Ալիշանի այս նամակը վերլուծության չի ենթարկվել և թողած ազդեցությունը չի քննվել: Հայ նշանավոր գործիչների հղած շնորհավորանքները հայ գրականության երկնակամարում հայտնված նոր աստղին մեկը մեկից տպավորիչ էին ու գեղեցիկ. Բաֆֆին Հովհաննիսյանին է նվիրել իր գիրքը հատուկ՝ «նոր բանաստեղծին» մակագրությամբ: Գամառ-Քաթիպան գիրքը ստանալուց հետո իր լուսանկարն է ուղարկել հետևյալ սրտառուչ մակագրությամբ. «Ի նշան զարմացման երիտասարդ բանաստեղծությանը»:

¹ Նույն տեղում, էջ 157:

² **Հովհաննիսյան Հ.**, Երկերի ժողովածու, հատ. 4. Նամակներ, «Հայկական ՄՄՀ ԳԱ հրատարակչություն», Եր., 1968, էջ 25:

տեղծին», շատ հեղինակների կարծիքներն էլ այնքան հրապուրիչ է ձևակերպված, որ որպես թևավոր խոսք տեղ են գտել պոետի տուն-թանգարանի վահանակներում. այդպիսին է օրինակ Ղազարոս Աղայանի կարծիքը. «Հովհաննիսյանի ոտանավորները ճշմարիտ բանաստեղծության դրոշմ են կրում իրենց վրա: «Թող Մասյաց մուսաները զորավիգ լինեն նրան և թև տան, թոցնեն մինչև հայկական Պառնասի գագաթը և մի ընդարձակ հորիզոն բաց անեն նրա բանաստեղծական հանճարի համար»¹: Այս շոնդալից գնահատականների կողքին Ալիշանի կարծիքը իր ձևակերպմամբ առաջին հայացքից շատ համեստ է, հովհաննիսյանագետներն ամեն դեպքում քանի որ չեն խորացել երևույթի մեջ, արտաքին հայացքից չեն գտել այն տպավորիչ, սակայն ընդգծել են երևույթը, այն, որ տպավորիչ է ինքնին այն փաստը, որ դարի բանաստեղծը՝ Ալիշանը, ուշադրության է արժանացրել երիտասարդ բանաստեղծին և հատուկ նամակով հաղորդել նրա ժողովածուից ստացած իր առաջին տպավորությունները:

Այս նամակը իր ջերմ գնահատականով և պայմանավորված այն հանգամանքով, որ պատկանում է Ալիշանի գրչին, շատ հոգեհարազատ է եղել Հովհաննես Հովհաննիսյանին: Ալիշանի խոսքերը շատ ավելի թանկ են եղել նրա համար, այդ իսկ պատճառով այս նամակը շատ ավելի երկար է ապրել բանաստեղծի հետ, քան այս մասին կարող էին եզրակացնել շոնդալից ու գովեստներով լեցուն տողերով, հարուստ կարծիքներով տարված Հովհաննիսյանի պոեզիայով զբաղվողները: Ալիշանի դիտարկումները շատ խորը հետք թողեցին Հովհաննիսյանի վրա: Ինչո՞վ էր կարևոր Ալիշանի նամակը Հովհաննիսյանի համար: «Իսկապես ճակատագրական գնահատական էր սա Հովհաննիսյանի համար»², - գրվել է Ալիշանի նամականիի ժողովածուի առաջաբանում:

Սակայն, այս հարցի քննությունից պարզվում է, որ հենց Ալիշանը՝ հայ գրականության պատմության ներկայացուցիչը, մատնանշել էր ամենակարևորը՝ երիտասարդ բանաստեղծի որոշ բանաստեղծություններ երբեմն կաղում են աշխարհաբար տաղաչափության կատարելագործման ճանապարհին. այն Հովհաննիսյանի, ում մասին գրել են, թե նա «ավելի ուշադիր, քանի իր նախորդները, վերաբերվել է նաև իր արվեստի տեխնիկային»³: Այսպիսի կարծիք է արտահայտել Բրյուսովը, բայց այս կար-

¹ «Աղբյուր», 1887 № 10, էջ 95:

² **Ալիշան Ղ.**, Գրական ժառանգություն, նամակներ, հ. 5, Գիտ. Ակադ. հրատ., Եր., 1969, էջ 8-9:

³ «Հովհաննես Հովհաննիսյանը ժամանակակիցների հուշերում»: Ժողովածու, Եր. «Հայաստան», 1990թ., էջ 25:

ծիքին էին գրեթե բոլոր ժամանակակիցները, հատկապես նրա մասին հոգիվածներով արտահայտվողները: Բրյուսովը գրել է նաև. «Հովհաննիսյանի լեզուն մաքուր է ու մտածված, նրա չափերը խստորեն պահպանված են և հանգը ենթարկված է որոշակի օրենքների»¹:

Ալիշանի դիտողություններից յուրաքանչյուրն արժանի է առանձին քննության:

Հովհաննիսյանին գրած այս նամակում մեզ անչափ ծանոթ Ալիշանն է. XIX դարի վերջին համաեվրոպական հոչակ ու անուն վաստակած հայ մեծ գիտնականի նամակներն իսկապես հայագիտական-բանասիրական բնույթի փոքրիկ ուսումնասիրություններ էին. «Իսկ իր նամակներից մեզ է միաժամանակ հառնում Ալիշան-ավագ ընկերը, իր խորհուրդներով ու վիթխարի գիտելիքներով կրտսերներին օգնող Ալիշան-խորհրդատուն, ներքին հարուստ նկարագրով Ալիշան-մարդը»²:

Այս փոքրիկ նամակում՝ ընդամենը կես էջ՝ Ալիշանը և՛ պատշաճ շնորհավորանք է հղում, և՛ վերլուծում երեք բանաստեղծություն, և՛ ամփոփում նամակը՝ հաջողություն մաղթելով:

Հրաշալի է Ալիշանի նամակի ավարտը, որտեղ նա կրկին հավաստում է նամակի սկզբում հայտնած իր կարծիքը, որ ժողովածուն, ընդհանուր առմամբ, բռնում է պահանջվող քննությունը, և Հովհաննիսյան բանաստեղծի ապագան արդեն որոշ էր: «Յուսամ, որ հաճութեան հաւաստիք ընծաներս և ընդունիս մաղթանքս ի յաջողութիւն գործոցդ և կենացդ. Հ(այր) Ղևոնդ Մ.Ալիշան»³:

Հովհաննիսյանի «Երկու համբույր» բանաստեղծությունը Ալիշանի ուշադրությանն ու հավանությանն էր արժանացել, նրան հուզել էին երիտասարդ բանաստեղծի սիրո խոսքերը բախտի խաբուսիկ, թունալի համբույրի և ծաղիկներով զարդարուն կյանքի մասին:

*Քանի դեռ մատաղ արյունը եռուն
Երակներիս մեջ զարկում է ուժգին,
Եվ ծաղիկներով կյանքը զարդարուն
Խոստանում է մեզ մի դրախտ երկնային,-
Մեր չքնա՛ղ, դու ես համբույրդդ տալի
Մեր ախտաբորբոք արվող շրթունքին,*

¹ Նույն տեղում, էջ 25:

² **Ալիշան Ղ.**, Գրական ժառանգություն, նամակներ, հ. 5, ԳԱ հրատ., Եր., 1969, էջ 8:

³ Նույն տեղում, էջ 157:

*Բաղդի խաբուսիկ համբույր թունալի,
Ինչպես ոսկեվառ երազ հիվանդին:
Բայց կըզա ժամը, երբ հրաժարական
Պիտի տանք ողջուն բոլոր պատանաց,
Եվ անուշաբույր կյանքի քաղցրության,
Եվ անագորուն դառն հատաչանց,-
Եվ ահա՛ գունատ մահը կըդրոշմե
Յուր սառն համբույրը մեր սառ շրթունքին,
Եվ գիտեմ որ նա պիտի չըխաբե
Մեզ փաղաքշելով յուր անկյանք կուրծքին¹:*

Սակայն, Ալիշանը ուներ տաղաչափության, հանգի ու վանկի հետ կապված խորհուրդներ բանաստեղծին. «Բան մ'ալ ըսեմ չափաբանությանդ համար.-տողից մեջ անդամոյն վանկ Ը գրով չըլլար, վասն զի Ը-էն առաջ բառն կառնու զշեշտ և Ը կըմնայ յաջորդ անդամոյն, որով երկու անդամք հաւասար չեն ըլլար, այլ մին քառավանկ միւսն վեցավանկ, որ երբեք ընդունելի չէ: Օրինակի համար առաջին երեսին մեջ (որ է ընծայական ընկերներիդ):

*Այդ վառ հավատԸ
Վեհ, ազատ միտքԸ
Անձնագոհ սերԸ:*

Ուր որ շեշտած է՝ հոն լրացրած է անդամն, Ը գրերն դուրս կը մնան, և կանցնին յաջորդ մասին, որով տաղաչափութիւնն կըխանգարի: Գիտեմ, որ շատերն ալ այդպէս կըգրեն իրենց աշխարհաբար քերթուածոց մեջ, բայց անկանոն է և անշնորհք է»²:

Այս խորհուրդը հիշում և մինչև իր կյանքի վերջ մտապահում է Հովհաննիսյանը: Ընդամենը մեկ էջ պարունակող նամակում Ալիշանը շնորհավորանքից հետո անում է հետաքրքիր դիտարկումներ, որոնց հետագայում Հովհաննիսյանը հաճախ է անդրադառնում լեզվաբանությանն առնչվող իր հոդվածներում, ինչպէս նաև դասախոսությունների ժամանակ: Պահպանված մի հուշ փաստում է, որ Հովհաննիսյանը այդ խորհուրդը փոխանցել է իր աշակերտներին: Հովհաննիսյանի մասին իր հու-

¹ **Հովհաննիսյան Հ.**, Երկերի ժողովածու, հատ. 1. Բանաստեղծություններ, Եր., 1964, էջ 59:

² «Հովհաննես Հովհաննիսյանը ժամանակակիցների հուշերում», էջ 157:

շագրությունում նրա աշակերտ Ավետիք Տեր-Պողոսյանը, խոսելով Հովհաննիսյանի՝ գրականության բնագավառում ունեցած էրուդիցիայի մասին, գրում է. «Նրա տված գեղեցիկի սահմանումն իր բազմապիսի օրինակներով, տաղաչափական զանազան կանոնների վերաբերյալ նրա բերած բազմաթիվ այնքան հաճելի օրինակ նմուշները, բոլորն էլ իր սքանչելի թարգմանություններով, անգամ Հոմերոսից առնված, անանց ու անչափ վայելքի աղբյուր էին մեզ համար: Ճոխ կամ հարուստ հանգերը բացատրած, ինչպես և ռիթմի մասին խոսած ժամանակ, հատկապես կանգ առավ այն մասին, թե ինչպես մերը (ը) տառը տողամիջի կամ ավելի՝ տողավերջի բառերի վրա դրած ժամանակ՝ ծանրացնում, թուլացնում է հանգը, ուղղակի կոտրում ռիթմը: Հիշեց, որ այս «ը» վրա առաջին անգամ մատնանշել ու հենց իրեն առաջին անգամ դիտողություն է արել Ալիշանը մասնավոր նամակով՝ իր բանաստեղծությունների առաջին տետրակը լույս տեսած ժամանակ»¹:

Նույն հիմնախնդրին Հովհաննիսյանն անդրադառնում է նաև իր «Մի քանի խոսք մեր աշխարհաբարի տաղաչափության մասին» հոդվածում, որտեղ մասնավորապես նշում է. «Այսպես ուրեմն մենք սկզբունքով ընդունում ենք «հայկական» չափը աշխարհաբարի մի քանի հատկությունները (ը դիմորոշը, բայերի ներկան) խիստ դժվարացնում են նորա հաջող գործադրությունը»²:

Հովհաննիսյանը սիրով հաշվի է առնում Ալիշանի մեկ այլ դիտարկում ևս: Հայ գրականության Նահապետը գրում էր. «Բան մ'ալ. պիտ բաղաձայն բառի առջև՝ ականջի անհաճոյ է, արդեն այդպես կըրճատել՝ անոյշ բան մի չէ, այլ ձայնաւորի առջև կրնար անուշանալ, իսկ բաղաձայնի՝ ոչ. ինչպես (երես 4) «Նոճիների տակ պիտ գլուխս հանգչի», և այլ շատ տեղ»³:

Խոսքը «Երկու ճանապարհ» բանաստեղծության մասին է, որի մասին Արամ Ինճիկյանն իր «Խոսք Հովհաննիսյանի մասին» հոդվածում գրել է. «Հովհաննիսյանի առաջին ժողովածուն բացվում է «Երկու ճանապարհ» բնորոշ բանաստեղծությամբ. տասնիննամյա երիտասարդի մեջ ստեղծագործական ձիրքի ընձյուղումը զուգադիպում է սիրո զգացման փթթումին. նրա հոգին լի է սիրո ու բնության դեռևս չբյուրեղացած մեղեդիներով և չճաշակած վայելքի տենչերով. կյանքը նրա առջև բացել է երկու ուղի-անձնական բարօրության և հասարակական պարտքի (հետաքրքրական է, որ ճանապարհների այդ մոտիվը ծագում է ժո-

¹ Նույն տեղում, էջ 34:

² **Հովհաննիսյան Հ.**, Երկերի ժողովածու, հատ. 3. Հոդվածներ, Եր., 1965, էջ 220:

³ «Հովհաննես Հովհաննիսյանը ժամանակակիցների հուշերում», էջ 157:

դովրդական բանարվեստից. հեքիաթներում դեպի առաջադիր նպատակը դիմող եղբայրները կանգնում են նման երկրնտրանքի առջև. սովորաբար վտանգալից ուղին ընտրում է կրտսեր եղբայրը, որը և դրական հերոսն է): Բանաստեղծը տարակուսած հարցնում է.

Կյա՛նք, ինձ երկուսից ո՛րն ես պատրաստում,
Թե՛ն նախորդ տողերում նա արդեն կողմնորոշվել էր՝ կտրականա-
պես մերժելով վայելքի ուղին.

*Ո՛չ. արյուն-արցունք, լրքյալ հառաչանք,
Անտեր ամբոխի անվերջ տառապանք,
Արդար քրտինքով մըշակած գետին
Ավարի մատնած-ահա՛ իմ բաժին:*

Կյանքի այդ հակադիր ճանապարհների նկատմամբ արվեստագետի դիրքորոշումն էլ պայմանավորում է նրա գեղագիտական դավանանքը: Ընտրելով «ազնիվ և վսեմ, թե՛ն փշալից» ուղին, Հովհաննիսյանը կանգնում է վաթսուհանյանների գաղափարական դրոշի տակ»¹:

«Տաղաչափական և լեզվա-ոճական բնույթի մի քանի դիտողու-
թյուններ անելուց հետո,-կարդում ենք Ղևոնդ Ալիշանի նամականիի
առաջաբանում,- Ալիշանը կրկին հավաստում է նամակի սկզբում հայտ-
նած իր կարծիքը, որ ժողովածուն, ընդհանուր առմամբ, բռնում է պա-
հանջվող քննություն: Հովհաննիսյան բանաստեղծի ապագան արդեն որոշ
էր»²:

Հովհաննիսյանի և Ղևոնդ Ալիշանի գրական առնչակցությունները
հայ գրականության պատմության ուշագրավ էջերից են և վստահաբար
կարող ենք ասել, որ դեռևս այդ ոլորտում կան չբացահայտված բազ-
մաթիվ հետաքրքիր վկայություններ:

Հովհաննիսյանի և Ալիշանի նամակագրությունը կարևոր է ոչ միայն
հովհաննիսյանագիտության համար: Այն արժանի է ուշադրության նաև
ալիշանագիտության համար: Սա է փաստում այն հանգամանքը, որ
Ալիշանի նամականիի առաջաբանում գրականագետը նշելով այն մասին,
որ այս նամակները արժեքավոր են, քանի որ պատկանում են XIX դարի

¹ **Ինձիկյան Ա.**, «Մտերիմներ և մտորումներ (էջեր հայ գրականության պատ-
մությունից)», Եր., 1967, էջ 244-245:

² **Ալիշան Ղ.**, Գրական ժառանգություն, նամակներ, հ. 5, ԳԱ հրատ., Եր., 1969,
էջ 8:

վերջի համաեվրոպական հոչակ ու անուն ունեցող ամենամեծ հայ գիտնականի գրչին, որը, ճանաչված հեղինակություն էր նաև հայրենի մշակույթի ասպարեզում՝ նվաճել էր հայագիտության, բանասիրության, հայոց պատմության, աշխարհագրության ու բանաստեղծության անդաստանում ծանրակշիռ խոսքն ասելու իրավունքը: Եվ որպես լավագույն օրինակ, թե ինչպես էր Նահապետը հնարավոր առավելագույն չափով աշխատում օգտակար լինել իր գրչակից հայ և օտարազգի բարեկամներին, բերվում է Հովհաննիսյանի բանաստեղծական ճակատագրի վրա Ալիշանի ունեցած ազդեցությունը. «Այսպես, 1887 թվականին Մոսկվայում հրատարակված Հովհաննես Հովհաննիսյանի երախայրիքը՝ «Բանաստեղծություններ» ժողովածուն, որը բախտորոշ նշանակություն ունեցավ բանաստեղծի համար: Այս համատեքստում կարևոր էր նաև Ալիշանի հուսադրող խոսքը բանաստեղծի համար»¹:

Ալիշանի այս խոսքերը երիտասարդ բանաստեղծ Հովհաննիսյանի համար ուղենշային եղան իր ստեղծագործական ու անձնական ողջ կյանքում:

REFERENCES

1. Alishan Gh., Grakan jarangutyun, Namakner, h. 5, «Akademia» hrat., Erevan, 1969:
2. Shtikyan Suren, Ghevond Alishani norahayt namaknery.- Lraber Hasarakakan Gitutyunneri, 1977, № 7, ej 95-106:
3. Shtikyan S. A., Ghevond Alishan (Cnndyan 150- amyaki aktiv).- «Patma-banasirakan handes», 1970, № 2, ej 13-26:
4. Ed. Jrbashyan Ghevond Alishani «Ergq nahapeti» banastexcakan sharqy ev nra gexarvestakan miasnutyuny /«Banber Erevani hamalsarani», 2 (47), Erevan 1982t., ej 22-46:
5. Yu. S. Avetisyan Arevmtyan banastexcutyun lezvi patmutyunic. Mkrtich Peshiktashlyan /«Banber Erevani hamalsarani», 2 (107), Erevan 2002t.:
6. Yu. S. Avetisyan Petros Duryany ev arevmtyan banastexcutyun lezvi gexarvestakanacumy (tznndyan 150-amyaki aktiv) /«Banber Erevani hamalsarani», 2 (104), Erevan 2001t.:
7. Yu. S. Avetisyan «Arevmtahay banastexcutyun lezvi patmutyunic (Ghevond Alishan)» Ejmiadzin, 2001.
8. Yu. S. Avetisyan «Arevmtahay banastexcutyun lezvi patmutyunic. Petros Duryan», /«Banber Erevani hamalsarani», 3 (96), Erevan 1998t.:
9. Hovhannes Hovhannisyan, Erkeri joxovatzu, hat. 3. Hodvacner, «Haykakan SSR GA hratarakchutyun», Erevan, 1965, 592 ej:
10. Hovhannes Hovhannisyan, Erkeri joxovatzu, hat. 4. Namakner, «Haykakan SSH GA hratarakchutyun», Erevan, 1968, 368 ej:

¹ Ալիշան Դ., Գրական ժառանգություն, նամակներ, հ. 5, ԳԱ հրատ., Եր., 1969, էջ 8:

11. Hovhannes Hovhannisyan, Erkeri joxovatzu, hat. 1. Banastexcutyunner, Erevan, 1964, 424 ej:
12. «Hovhannes Hovhannisyan jamanakakicnei husherum»: Joxovacu [Kazmec, arajabany grec ev canotacrec V.Vardanyany]- Er. «Hayastan», 1990t., 253 ej:
13. Inchikyan «Mterimner ev mtorumner» (ejer hay grakanutyany patmutyunic)», Erevan, 1967, 341 ej:
14. Ghevond Alishan-Nvagner: Haypethrat, Erevan-1957t.:
15. Hovhannes Hovhannisyan tun-tangarany Ejmiadznun (Uxecuyc), Erevan-1973t., kazmec` P.Simonyany, 40 ej
16. «Axbyur», 1887 № 10, ej 95

КРИСТИНА АБРААМЯН

Соискатель НАН РА института литературы им. М. Абебяна

РЕЗЮМЕ

ГЕВОНД АЛИШАН И ОВАННЕС ОВАННИСЯН: ИЗ ИСТОРИИ ЛИТЕРАТУРНЫХ ОТНОШЕНИЙ

Ключевые слова: Гевонд Алишан, Оганес Оганесян, Арам Инджикян, Поэма «Алаязская высокая гора», Издательство "Айпетрат", Конгрегация мекхитаристов.

Особое значение для истории армянской литературы имеют вопросы, связанные с литературным вкладом Алишана, а также отношения между армянскими писателями конца 19 - начала 20 веков. Оганес Оганесян - один из тех поэтов, которые по-разному, как в литературной, так и в личной жизни, просят патриархальных художественных исканий, своей жизни и творчества.

От Алишана до Оганесяна литературные отношения прошли разные стадии развития. Алишан, находившийся вдали от Родины, не умел пользоваться живым разговорным языком, а Оганесян, проживающий на Родине, имел возможность лично собирать разговорный язык.

Лучшим подтверждением литературных связей Ованнисяна и Алишана стала их переписка. Когда в 1887 году в Москве вышла первая книга Ованнисяна «Стихи», Ованнисян послал свою книгу Алишану. Поздравительное письмо патриарха с далекого святого острова Лазаря не замедлило. Алишан, не колеблясь, поспешил порадовать молодого человека, послав ему ободряющие строки.

Изучая переписку и литературные связи Ованнисяна и Алишана, можно сказать, что это письмо прожило с поэтом намного дольше, чем могли заключить те, кто занимался поэзией Ованнисяна.

CHRISTINA ABRAHAMYAN

Post-graduate student at the Institute of Literature after M. Abeghyan

SUMMARY

GHEVOND ALISHAN AND HOVHANNES HOVHANNISYAN. FROM THE HISTORY OF LITERARY RELATIONS

Key words: Ghevond Alishan, Hovhannes Hovhannisyan, Poem "Alayaz high mountain", "Haypethrat" publishing house, Mekhitarist Congregation.

The particular importance of the history of Armenian literature are the issues of Alishan և his literary contributions, as well as the relationship between Armenian writers of the late 19th and early 20th centuries. Hovhannes Hovhannisyan is one of those poets who, in various ways, both in literary and personal life, begs for the patriarchal artistic pursuits, his life and work.

From Alishan to Hovhannisyan, literary relations have gone through different stages of development. Alishan, who was far from the homeland, could not use the living vernacular, but Hovhannisyan, living in the homeland, had the opportunity of personally collecting the vernacular.

The best confirmation of Hovhannisyan և Alishan's literary relations was their correspondence. When Hovhannisyan's first book, Poems, was published in Moscow in 1887, Hovhannisyan sent his book to Alishan. St. Lazarus's congratulatory letter from distant Lazarus Island didn't hesitate. Alishan hurried to make the young man happy by sending encouraging minds.

Examining Hovhannisyan և Alishan's correspondence and literary relations, it can be said that this letter lived with the poet much longer than those engaged in Hovhannisyan's poetry could conclude.

ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
ghazaryan-ani@mail.ru

**«ՆԱՀԱՊԵՏԻ ԵՐԳԵՐԻ» ԵՎ «ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻ»
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Բանալի բառեր՝ Ազատամարտի շեփոհարներ, բանաստեղծական շարք, հոգևոր կյանք, ժողովրդական բանահյուսություն, սրտի թելադրանք, հայրենիք, հայդուկ, մարտակոչ, ողբերգություն, հերոսներ, օրհներգ:

Իր դարավոր պատմության ընթացքում ծանր փորձությունների միջով անցած հայոց պատմությանը քաջատեղյակ Ղևոնդ Ալիշանն ու Ավետիք Բասիակյանը հարազատ ժողովրդի հետ ևս ճաշակեցին պատմության դաժան հարվածները, ինչից նրանց հոգիները մռայլվեցին ու ծառս եղան, ուստի պատահական չէ, որ նրանց ստեղծագործություններում իրատեսությունը նույնքան խորությամբ է արտահայտված, որքան դառնությունն ու ցավը: Հայ ժողովրդի ազատամարտի շեփոհարները ժամանակի թելադրանքով իրենց ստեղծագործություններով համազգային պայքարի մարտակոչ են հնչեցնում, որոնցից յուրաքանչյուրում խտացում մտորումից զատ անդունդի եզրին հայտնված հայրենիքին օրհասական վիճակից դուրս բերելու ելքեր էին առաջարկում՝ առաջին հերթին հույսն ազգի միակամության վրա դնել, ինչպես երկիրն են շենացրել արդար քրտինքով, այնպես էլ սեփական բախտը կռել ամրակուռ բազկի զորությամբ:

Եթե ազգային-ազատագրական պայքարի առաջամարտիկ Նահապետը (Ղ. Ալիշան) ժողովրդի ինքնագիտակցությունը նիրհից արթնացնելու նպատակ էր հետապնդում, ապա Հայ գուսանը (Ավ. Բասիակյան) ձգտում էր այն արթուն պահել՝ անվերջ հաստատելով նրա անսպառ ոգին, անսասան հավատն ու անկոտրում կամքը: Թե՛ Ալիշանի, թե՛ Բասիակյանի գրական կերպարանափոխությունը (Նահապետը նույնանում է Ալիշանի կերպարի հետ, Բասիակյանը՝ Հայ գուսանի) նպատակն ազգային ոգին գեղարվեստական ստեղծագործությամբ վեր հանելն է: Նահապետը դարձավ Ալիշանի իմաստուն մտքերի, մտորումների ու երազների թարգմանը, իսկ Հայ գուսանը ժողովրդի հետ խոսեց ժողովրդի սրտից: Ալիշանի դեպքում նրա հայրենասիրական երկերն անակնկալ և իսկական հայտնություն էին, իսկ Բասիակյանի դեպքում մարդիկ անհամբերությամբ էին սպասում հայդուկներին նվիրված երգերին: Նրանց

ստեղծած միասնական բանաստեղծական շարքերում («Նահապետի երգեր», «Հայդուկի երգեր») ակնհայտ երևում է քնարական հերոսը: Նահապետը դառնում է բանաստեղծի խոսափողը, նրա անունով են բարձրաձայնվում հեղինակի նվիրական գաղափարներն ու պատգամները, անցյալի հերոսական դեպքերով ժամանակակից սերնդին ոգեշնչելու ձգտումը: Եթե նա առասպելական ու պատմական անձնավորությունների հերոսությունները (Հայկ, Տիգրան Մեծ, Տրդատ, Վարդան Մամիկոնյան և այլն) վկայակոչելով է ազգային զարթոնքի կոչում, ապա Բսահակյանի ներբողները ձոնված են պատմականորեն իրական հերոսների (Աղբյուր Մերոբ, Գևորգ Չաուշ, Արաբո, Եփրեմ, Սևաքարցի Սաքո և այլն) հիշատակին: Երկու բանաստեղծներն էլ գրում են սրտի թելադրանքով ու սրի փոխարեն գրչով են կռվում:

Ալիշանն անմասն չմնաց հայ հոգևոր կյանքում սկիզբ առած դեպի ժողովուրդը շարժումից, որի գլխավոր նպատակը ժողովրդի հոգևոր կյանքի հին ու նոր ակունքները պեղելուն զուգահեռ ազգային գոյության, անկախության, ազատության խնդիրները բարձրաձայնելն ու հայրենասիրություն բորբոքելն էր: Ժողովրդից վերցրածը նա յուրովի հղկեց ու նորովի վերադարձրեց հասցեատիրոջը: «Հայկական ժողովրդական բանահյուսությունը Նահապետի պոեզիան սնող հիմնական ակունքներից մեկն է»¹, -նկատում է Ս. Շտիկյանը: Ռոմանտիկական շնչով գրված բանաստեղծական շարքն առանձնանում է ինքնատիպությամբ, անձնական ողբերգությունը ազգայինից վերաճում է համազգայինի, ինչը Ալիշանին ստիպում է մարդկային տառապանքի ու երջանկության խնդիրները բարձրաձայնել, իսկ Բսահակյանի մոտ ազգային ողբերգությունը համամարդկային ողբերգություն է դառնում: «Նահապետի երգեր» շարքը սկսվում է հայրենի երկրի անցյալի ու ներկայի, սիրուն և հպարտությանը միախառնված ցավի և ողբի ու հայրենիքի ազատության հարցն արժարժող բանաստեղծություններով («Հայոց աշխարհիկ», «Հայ հայրենիք», «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ», «Մասիսու սարերեն» և այլն): Ճշմարտության որոնման ճանապարհը գրողին տանում է դեպի հեռավոր անցյալը: Պատմական և դիցաբանական հերոսներին գրականություն բերած նյութով նա հայացքը հառում է լուսավոր ապագային, իսկ ժողովրդական բանահյուսության հնարքներն օգտագործում է իրականության բանաստեղծական պատկերման համար:

Հայրենիքն անթեղված է Ալիշանի սրտի խորքում: Նորահարսի նման զարդարված լեռներն ու հովիտները, գույնզգույն պսակ կապած կապուտակ սարերը նոր տեսք են տալիս հայրենի օրրանին, երկրից

¹ Ալիշան Ղ., Երկեր, «Սովետական գրող», Երևան, 1981, էջ7:

դառնացած հեռացած ու ճգնավոր դարձած սոխակը վերադարձել է իր վարդի մոտ («Հայոց աշխարհիկ»): Այս բանաստեղծությունը ոչ միայն սիրո խոստովանություն է, հայրենիքին նվիրված ձոն, այլև մոտալուստ մահվանը սպասող Ալիշանի ուղերձն է երիտասարդներին:

*Ես այն հողն ու ջուրը սըրտով եմ սիրել,
Հայրենյաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ քաղցր է հայրենյաց փուշ:
...Ձե՛զ կասեմ մանկունք սիրունք նազելիք,
Որոնց է բնական Հայոց աշխարհիկ,
Մ՝ ուրանայք զարկիրդ ու զագգըդ սիրուն,
Ծառն արմատով ծառ, տունն հիմամբ է տուն:*

Իսահակյանի հայրենիքի սարերը կորել են երկնի մովի մեջ, («Է՛յ, ջան հայրենիք»), ջրերն ու հովերն անուշ են, բայց բանաստեղծի հոգում անթաքույց ցավ կա. «Բալեքդ են արյուն-ծովի մեջ», ինչի համար նա հպարտությամբ գրում է.

*Երնեկ ուզենամ հազար ու մի կյանք,
Հազարն էլ սըրտանց քեզ մատաղ անեմ:
...Մենակ մի կյանք թող ինձի պահեմ, -
Էն էլ քու փառքի գովքը երգելուն:*

Ալիշանն ակնածանքով գրում է, որ իր հայրենիքը մարդկության օրրանն է, Նոյն այստեղ է հանգրվանել, այստեղ է Հայկը հաղթել Բելին, հայերը ոչ միայն բազում փառապանծ հաղթանակներ են տարել, այլև բարիք են արարել ու երկիրը շենացրել.

*Հոռոմ լեզվով հաղթել հեյլենք,
Շատ գրքերնք գրքեր մեր հարքն մագղաթ
Ձեռ ցորեն դիզել, քանց բարձր Արարատ:*

Բանաստեղծը չի թաքցնում սրտի անամոք ցավը, քանզի նենգ ու չար թշնամիները, ի տես աշխարհի գորեղ տերությունների, չեն խնայել հայոց աշխարհը, զարկել են թրով ու սրով: Թեև հայրենիքը թոշնած ծաղկի է նմանվել ու ավերակների վերածվել, սակայն բանաստեղծը չի կորցնում հավատը, որ փյունիկ թռչունի նմանվող հայ ժողովրդի համար նոր արշալույսներ կբացվեն, ամպն ու փոթորիկը կվերանան, և նոր արև ու զարուն կգան: Իմաստուն այրը հնչեցնում է իր պատգամը սերունդներին՝ սիրել հողը, տեր կանգնել երկրին ու նրա նախկին փառքը վերածնել համախափվածությամբ, միասնականությամբ ու նվիրված աշխատանքով.

*Հիմար է, հիմար, որ զպարծանքն հարանց
Երթա վաճառե ընդ օտար ազանց.
Աշխրբիս օրենք՝ որ ծնող չըփոխվին,*

Հայրենափոխք չեն, ուրացող լինին.

Ծառն՝ արմատով ծառ, ծառովն է արմատ:

Իսահակյանը աշխարհի զորեղների անտարբերության մասին չափազանց դիպուկ է ասել «Մեր ճակատագիրը» արձակ բանաստեղծության մեջ. «Հազար տարիներ և մինչև այսօր մենք կոչ ենք արել մարդկության խղճին, բայց խիղճն է եղել քարի մի կտոր»¹:

Եթե «Ողբամ զքեզ, հայոց աշխարհը» ողբալի քերթված է, իսկ «Պլպուլն Ավարայրի» պոեմում Ալիշանը վերստին վերապրում է պատմական իրողության թե՛ ցավը, թե՛ ուրախությունը, ապա «Հայ հանճար» բանաստեղծությունը Էդ. Ջրբաշյանի գնահատմամբ «ազգային վերածնության կրքոտ, հավատով լեցուն կոչ է»²:

Ծագե՛ հայ հանճար, փայլե՛ բյուր բոցեր.

Իմաստուն ազգեր՝

Թե հայք չե՛ անցեր:

Այսինքն՝ Հայաստանն ընկել, սակայն չի ծնկել: Թանձր քունը, որ պատել է հայոց աշխարհը, անհույս մահվան նման չէ: Թեև Հայաստանի վրայով դարեր են անցել, վայրի ցեղերն են ոտնատակ տվել հայոց հողը, բայց հայը հավերժի ճամփորդ է, մի գեղեցիկ օր արշալույսը նիրհից կարթնանա, ու լույսը կհաղթի խավարին: Հայի իմաստությունը վերստին կարող է աշխարհին տիրել, ինչպես նախկինում, երբ նա իր բազկի զորությամբ հաղթանակներ էր տոնում թե՛ հյուսիսում, թե՛ հարավում և անհաղթ էր հռչակվում: Իսահակյանն «ազատամարտի վսեմ արյան մեջ մկրտված զինվորին» («Վեր՛ կաց , ժողովուրդ») ու «արևի ճամփորդ» (Քաջերին) հայ ժողովրդին կոչ է անում վառ կարմիր հագնել և սուրը շարժել ու ճանապարհը բացել, քանզի.

Այս աշխարհի մեջ սուրն է միշտ կտրող-

Կտրիր ու տիրի՛ր- անհա՛ղթ, հզո՛ր կաց:

...Սրով գոտեպինդ և առաջ քայլի՛ր,

Անհողողող գնա դեպի լույսն - արև:

Եթե Ալիշանի համար հայրենիքի խորհրդանշանը Հրազդան գետն է, ապա Իսահակյանի համար Արաքսն է, որոնց հետ բանաստեղծները զրուցում են տրտմությամբ ու դառնությամբ՝ երանությամբ հիշելով անցյալի երանելի օրերը: Այժմ սգավոր է Արաքսը («Գողթան քնար»), որը մոխրի վրա նստած ժողովրդի սրտից արյուն քամելով գնում է, իսկ

¹ Իսահակյան Ավ., «Հայդուկի երգեր», Երևան, «Արևիկ» հրատ., 1990, էջ 82:

² Ջրբաշյան Էդ., «Ղևոնդ Ալիշանի «Երգք Նահապետին» բանաստեղծական շարքը և նրա գեղարվեստական միասնությունը», «Բանբեր Երևանի համալսարանի», թ. 2 /47/ 1982, էջ 41:

անխղճմտանք աշխարհին անհաղորդ է նրա բողոքին ու մորմոքին: Սակայն Վարպետը հավատացած է, որ կարճ ժամանակ անց հայոց երկնքում կրկին կփայլի «կանաչ - կարմիր, հուրն հրեղեն» նոր արևը՝ «Հայու արևն»: Սևազգեստ է նաև Հրազդանը («Հրազդան»), որի ավերը անխոս ու լուռ արտասվում են կորուստների ու պանդուխտ դարձած զավակների համար: Բռնի տեղահանությունից հայրենի աշխարհ վերադարձած Բարկենը նախկին այգեստանի հետքն անգամ չի տեսնում: Թշնամին ավերել է տնակն ու այգին, հրի ու սրի մատնել անգամ անտառը, ինչի մասին նա տրտմությամբ զրուցում է գետի հետ ու եզրակացնում, որ արցունքները վերքը չեն բուժում:

Իսահակյանն ազատության շեփորն է հնչեցնում՝ «Ինձ տեղ տվեք, Սիփան սարե՛ր».

Ազատությո՛ւն, ազատությո՛ւն,

Կյանքի արև՝ ազատության:

Հավատում է, որ մի գեղեցիկ օր բարձր ու զիլ կերգի ու կգովի հայրենիքի կանաչ արևը («Է՛յ, ջա՛ն հայրենիք»), հպարտ է, որ ֆիդայիների սրտում սուրբ ազատության հուրն անմար է («Ձեր շարքերի մեջ կտրիճ ընկերներ»), որոնց մահը նոր կյանք կծնի: Նա ժողովրդին կոչ է անում վեր պարգել ազատության դրոշմ, քանզի լավ է մեկ անգամ մեռնել, քան հազար անգամ («Վե՛ր կաց, ժողովուրդ»), որովհետև մոտեցել էր ժամն արդար գայրույթի և ազնիվ պայքարի («Ես ձեզ եմ ասում»): Հայ քաջերը հանուն սուրբ գործի կռիվ են գնում սուր ու հրացան ձեռքերին՝ «Գողթան քնար», և պիտի «ջարդեն ու ջնջվեն նամարդ օձին», որին հազար տարիներ տաքացրել էր իր ծոցում («Քաջերին»):

Ալիշանի «Բամ. Փորոտան» բանաստեղծությունը հրի նման բորբոքված ու կրակի նման մոլեգնած հայրենավրեժ հայկազուններին ուղղված մարտակոչ է՝ վասն վրեժխնդրության ու անմահ հայության հաղթանակի.

Բյաղթանակ, օ՛ն անդր յառաջ,

Բյաղթանակ, մի՛ ձախ. մի՛ յաջ,

Օ՛ն անդր յառաջ,

Մի՛ ձախ, մի՛ յաջ

Հապ՝ օ՛ն յառաջ

Բյաղթանակ:

Հայրենիքի ազատության համար մարտերում զոհված քաջերին նվիրված ձոն են թե՛ «Սալնո ձորերում», թե՛ «Բամբռահարի երգը» բանաստեղծությունները, որոնք նաև յուրատեսակ հարգանքի տուրք են հերոսի մահով ընկածներին: Սալնո դաշտում ընկել է քաջ հայդուկը, իսկ արյունոտված ծաղկած դաշտում՝ սևահոն կտրիճ շեփորահարը: Երկուսն էլ ընկել են քամուց պոկված ծաղկի նման: Փառենի ձախ ձեռքը կոտրված

է, նրան այլևս վահան պետք չէ, ցանկանում է վերստին շեփորը վերցնել ձեռքն ու իր վերջին երգը հնչեցնել, որ ապրեն սերն ու երգը հայրենի: Նա իր մահը չի ողբում, այդ մասին չի ակնարկում անգամ, բայց հպարտ է, որ հայրենիքի ազատության համար է ընկել և վստահ է, որ արցունքաչք կինն իրենց միակ որդուն կմեծացնի ու ճիշտ կդաստիարակի, որն անպայմանորեն կընտրի հոր ճանապարհն ու նրա անավարտ երգը կհնչեցնի ավելի զիլ ու խրոխտ: Սալնո դաշտում ընկած մահամերձ անանուն հերոսը զենքը ձեռքից բաց չի թողնում, հոգու երազով նա տեսնում է ազատ հայրենիքը, ու սիրտը խինդով է լցվում: Ինչպես հավաքական հերոսն է տեսնում ոչ միայն իր մահը, այլև անմահությունը, այնպես էլ Փառենն է հոգու երազով հավատում իր ժողովրդի անմահությանը: Հրեդեն գնդակի համբույրին արժանացած հայդուկին նվիրված անկրկնելի օրհներգ է «Որսկան ախպեր» բանաստեղծությունը, որը ձոն է անշիրիմ հայդուկների հիշատակին:

Հայ քնարերգության Նահապետն ու Վարպետը, հարազատ ժողովրդին կենաց ու մահու պայքարի կռիվով, հազարամյա մաքառումների անշեջ կրակն են արթնացնում նրա զավակների հոգիներում, որպեսզի նրանք թշնամու վրա սլանային որպես հողմ ու մրրիկ, որպես շանթ ու հեղեղ, որ օր առաջ հայոց երկնքում կրկին շողշողար հույսի ու լույսի արևը:

АНИ КАЗАРЯН

Кандидат филологических наук

РЕЗЮМЕ

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ " ПЕСЕН НАХАПЕТА " И "ГАЙДУКСКИХ ПЕСЕН"

Ключевые слова: Трубаachi освободительной войны, Поэтическая серия, Духовная жизнь, Фольклор, Зов сердца, Родина, Айдук, Военный призыв, Трагедия, Герои, Гимн.

В своих произведениях трубаachi освободительной войны армянского народа Гевонд Алишан и Аветик Исаакян призывают свой народ к общенациональной борьбе, предлагая пути, решения, чтобы вывести родину, которая находилась на грани пропасти, из этого затруднительного положения: прежде всего, полагаясь на единство нации.

ABSTRACT

THE COMPARATIVE ANALYSIS OF "THE NAHAPET SONGS" AND "THE HAYDUK SONGS"

Key words: Trumpeters of the liberation war, Poetic series, Spiritual life, Folklore, Call of the heart, Homeland, Hayduk, Military conscription, Tragedy, Heroes, Anthem.

Trumpeters of the liberation war of the Armenian people Ghevond Alishan and Avetik Isahakyan call for a nationwide struggle in their works. Proposing ways, solutions to bring the homeland, which was on the brink of an abyss, out of this predicament: first of all, relying on the unity of the nation.

REFERENCES

1. Alishan Gh., "Yerker", "Sovetakan grogh" hrat., 1981.:
2. Isahakyan Av., "Avetiq Isahakyan gitakan kensagrutyun@", Yerevan, 2000.:
3. Isahakyan Av., "Hayduki yerger", "Arevik" hrat., Yerevan, 1990.:
4. Jrbashyan Ed., "Ghevond Alishyani "Yerg Nahapetin" banastexcakan sharq@ yev nra gegharvestakan miasnutyun@", "Banber Yerevani Hamalsarani", t. 2 (47) 1982.:
5. Khachatryan A., "Avetiq Isahakyan hayrenasirakan poezian", Yerevan, 1987.:
6. Sarinyan S., "Haykakan romantizm", Yerevan, 1964.:
7. Shitikyan S., "Ghevond Alishyani hayrenasirakan poezian", M. Abeghyani anv. grakanutyan institute HSSR GA hrat., Yerevan 1959:
8. Terteryan A., "Hay klasikner", Yerevan, Yerevani hamals. Hrat., 1944.:
9. Hamahaykakan tvayin gradaran www.arar.sci.am "Bazmavep", 1849, E tari 21:

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻԶԱՆԻ ԳՐԱՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Հայր Ղեւոնդ Ալիշան, նամակագրութիւն, գրապատմական երեւոյթների գնահատութիւն, գեղարուեստական մտածողութիւն, ռոմանտիկական բանաստեղծութիւն, արեւելահայ եւ արեւմտահայ հաստուածներ:

Նամակագրութիւնը հնուց ի վեր մնում է մտաւորականների հաղորդակցութեան, եւ որ աւելի կարելու է, գրական երկխօսութեան լաւագոյն միջոցներից մէկը: Իսկ Հայր Ղեւոնդ Ալիշանի նման ներքուին հայագէտի համար, պայմանաւորուած նաեւ իր կենսագրութեան յայտնի հանգամանքներով, «թուղթերը» (իր նախընտրած հնագոյն ձեւակերպումով) արտաքին աշխարհի հետ կապի յուսալի հանգրուան էին:

Դրանք մի կողմից օգնում էին գիտնականին ստանալ իր աշխատութիւնների համար կարելու գիտական տեղեկութիւններ, միւս կողմից երեւան էին բերում հայ թէ օտարագլի գիտնականների կատարած աշխատանքների անաչառ ու պատճառաբանուած գնահատանք-քննաբանութիւնները:

Մեր աշխատանքում կանգ ենք առել երկու հանգամանքի վրայ. մի դէպքում փորձել ենք երեւան բերել հայ գրապատմական երեւոյթների շուրջ հեղինակային գնահատութիւնները: Միւս պարագային դիտարկել ենք հայ գրողների ու մտաւորականների նամակները, որոնք օգնում են ամբողջացնել Ալիշանի դերն ու ազդեցութիւնների շրջանակը:

Նախ, փորձենք դիմել Հ. Ղ. Ալիշանի նամակներին: Գրական մուտքի շրջանում արդէն անթաքոյց էր հեղինակի հետաքրքրութիւնը ժողովրդական բանարուեստի նկատմամբ: Այս համատեքստում նշանակալի են Գարեգին Սրուանձտեանցին ուղղուած նամակները, յատկապէս նկատի ունենք վերջինիս «*Գրոց եւ Բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ*» աշխատութեան հետ կապուած գրութիւնը, որտեղ պարկեշտ մտաւորականի կերպարի կողքին («...Շնորհակալ եմ թէ ընծայելուդ եւ թէ ընծայիդ, որ աւելի հաճոյացաւ երբ կարդացի եւ երբ իմ ընկերակիցքս ալ նոյն հաճութեամբ կարդացին»)՝ երեւում է նաեւ ազնիւ քննադատը՝ իր նրբին դիտարկումներով («*Փափաքէի եւս, որ Դաւթի պատմութեան մէջ*

¹ Ալիշան Ղեւոնդ, Նամակներ, Եր., ԳԱ հրատ., 1969, էջ 51:

գտնուած քանի մը բառից ծանօթութիւն ըրած ըլլայիք, որք ինծի պէս ի պանդխտութիւն ծնած եւ ապրածի անծանօթք են»¹: Այդ նամակներից իմանում ենք նաեւ, որ Ալիշանը ստացել եւ խնամքով իր հասցէատէրերին է ուղարկել իր սեփական հրատարակութիւնները:

Ժողովրդական ստեղծագործութեանը դիմելու տեսանկիւնից մեզ համար հետաքրքրական են աշուղական արուեստին եւ մասնաւորաբար «հանճարեղ երգիչ»² Զիւանիին տրուած գնահատութիւնները Գարեգին Լեւոնեանին ուղղուած նամակներում, ուր նիւթին համեմատ որդեգրուած է նաեւ խօսքի ոճաւորումը. «...Յուսամ, որ Շիրակայ դաշտերն եւ մեր-ձաւոր Արագածն երկար տարիներ ալ ներշնչեն իրեն անուշակ եւ աշուղակ երգեր»³: Դէ իսկ Գ. Լեւոնեանին նրա հետ կապում էր այս արուեստի նկատմամբ ունեցած ընդհանուր գիտական հետաքրքրութիւնը, մասնաւորաբար նկատի ունենք «Յուշիկք հայրենեաց հայոց»-ի եւ «Հայ աշուղներ»-ի հոգեկցութիւնը եւ վերջինիս առիթով Հայր Ալիշանի նկատառումը. «Աշուղներդ ընդունեցայ, մասամբ կարդացի եւ հաւնեցայ դիտմանդ կամ ջանիդ եւ փափաքիմ որ աւելի կատարելագործես, յիշած անձանց վրայ նոր տեղեկութիւններ աւելցընելով, եւ մանաւանդ որոց միայն անունն կայ»⁴:

Մեզ համար նշանակալի նկատողութիւններ կան նաեւ Յովհաննէս Յովհաննիսեանի առաջին՝ «Բանաստեղծութիւններ» հատորի վերլուծումի հետ կապուած, որը առ նուազն մի քանի հարցադրում ունի գրականութեան պատմութեան տեսանկիւնից. նախ, ցոյց է տալիս երիտասարդ բանաստեղծի «ակնկալիքը» Նահապետից, ապա բացում վերջինիս վերաբերմունքը: Նշանակելին այստեղ բանաստեղծութեան իւրօրինակ սահմանումն է, երեւակայութեան ու ստուգութեան յարաբերակցութեան ճշգրտումը: Բանաստեղծի իր խորհուրդները նաեւ տաղաչափութեան հետ են կապուած եւ բացում են այն տեւական հետաքրքրութիւնը, որ պահում է արդէն հայագէտ Ալիշանը գեղարուեստական գրականութեան նկատմամբ⁵: Իսկ այդ տեւականութեան խորհուրդը գալիս է նաեւ ընթերցողից, որ պահում է «յիշողութիւնը» բանաստեղծ Ալիշանի մասին, ինչպէս յուշում է նաեւ ինքը՝ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան հեռագրին⁶ ի պատասխան գրուած շնորհակալական նամակում,

¹ Նոյն տեղում, էջ 52:

² Նոյն տեղում, էջ 174:

³ Նոյն տեղում, էջ 168:

⁴ Նոյն տեղում, էջ 171:

⁵ Նոյն տեղում, էջ 113-114:

⁶ Տե՛ս «Արձագանգ» / գրականական եւ քաղաքական պատկերազարդ շաբաթաթերթ, Թիֆլիս, Իններորդ տարի, 20 Մայիս, 1890, թիւ 13:

թէ «Անշուշտ առաջին անգամ է, որ մի այդպիսի բարեկիրթ ընկերութիւն Հայագգի տիկնայց՝ հեռագրով իսկ կը յայտնէ իր ազնիւ զգացմունքը հեռաւոր արեղայի մի՝ յիշելով զնա իր յոբելեանի հանդիսի օր իբրեւ բանաստեղծ»¹ (ընդգծումը հեղինակինն է – Ք.Ա.)՝ զուարթաբան բառախաղով իր գնահատանքը բերելով նաեւ կառոյցին ու նրա ատենապետութիւնը. «Ձեր գործն շատ աւելի գերազոյն է քան զգրուածս եւ զքերթուածս, եւ կրնայ այդու՝ Աստուծոյ եւ ուղղադատ մարդկան առջեւ աւելի արդիւնաւոր ըլլալ համեստ տիկին Ալիխան, քան գրիչն Ալիշան»²:

Պայմանականօրէն անուանուած այդ «յիշողութիւնը» պահուում է նաեւ մէկ այլ դրուագով՝ ուղիղ կապով, որ կայ Ալիշանի նամակագրութեան եւ գեղարուեստական մտածողութեան միջեւ. այս առումով մեզ համար կրկնակի հետաքրքրութիւն է ներկայացնում Հերման Աբիխին ուղղուած նամակը, որը միջտեքստայնութեան հրաշալի օրինակ է պարզում. «...եւ աւելի քան քառասուն տարի ուսումնասիրել եմ պատմութիւնն ու աշխարհագրութիւնը իմ խեղճ հայրենիք Հայաստանի, որը երբեք չեմ տեսել եւ ոչ էլ յոյս ունեւ տեսնելու... կարող էք հասկանալ, թէ որքան ինձ հաճոյք են պատճառում Ձեր տեսակէտներն ու մանրամասն նկարագրութիւնները»³: Այս առիթով պատկերն անմիջապէս տանում է «Հայոց աշխարհիկ» բանաստեղծութեան յայտնի տողերին⁴:

Նամակներում մեր նկատած միւս գիծն էլ մամուլի հանդէպ Հայր Ալիշանի ուշադիր վերաբերմունքն է եւ օրուայ արեւելահայ եւ արեւմտահայ պարբերականների նոյնքան աշխոյժ արձագանգը վերոնշեալ յոբելեանի առթիւ: Այս առումով յատկանշական է Ալիշան – Արծրունի յարաբերութիւնը: Ի հա՛րկէ, «Մշակ»ը լայնօրէն անդրադառնում է Ալիշանի յոբելեանին⁵, այդ թւում՝ խմբագրի երկարաշունչ «Յիշողութիւններ»ով,

¹ Նոյն տեղում, 10 Յունիս, 1890, թիւ 16:

² Նոյն տեղում:

³ **Յակոբեան Պիօն**, Ղեւոնդ Ալիշանի նամակները Հերման Աբիխին // «Պատմաբանասիրական հանդէս», Եր., 1970, թիւ 2, էջ 231:

⁴ Տե՛ս՝ «Նուագը» / Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի, Գ. Հայրունի, Վենետիկ, 1858, էջ 219:

⁵ Ի դէպ, հենց նոյն օրերին իր 25-ամեայ գրական գործունէութիւնն էր տօնում նաեւ Արծրունին, ինչը նաեւ կամայ թէ ակամայ համեմատութեան մէջ էր դնում երկու գործիչներին. «...Մին իր գրական գործունէութեան իբրեւ մեկնակէտ նկատելով յօդուած մը դաստիարակութեան վրայ, որ հրատարակուած էր «Մեղու Հայաստանի» մէջ 1865ին, կ'հրաւիրէր արտորնօք Ազգն՝ որոտընդոստ խմբագրականով մը, պատրաստուիլ քսանհինգամեակը տօնելու եւ իր ճակատը դարձնէր պսակներ բոլորելու, միւսն՝ թէեւ կիսդարեան գրական ծանր ու նշանաւոր երկերով բեռնաւորուած, ազգային երախտագիտութեան ու եւ է հրապարակային ցոյցէ կ'խորշէր, ինչպէս մի քանի տարի առաջ ծանուցուած էր Բազմավէպի մէջ,

սակայն տարիներ անց էլ, Արծրունու մահուան առթիւ մշակցիներին ուղղուած նամակում, ուշագրաւ են միաբանի դիտարկումները. «*Ընկերացու եւ ինձ մնաց միայն յայտնել մեր ցաւակցութիւնն՝ իր ազգականաց, բարեկամաց եւ բանասիրաց, ասոնց մէջէն այսպիսի տաղանդաւոր մէկու մը ալ պակսելուն համար, որ (ի բաց թողլով երբեմն կարծրութիւնն եւ առանձին կարծիքները կամ գաղափարները), ժամանակիս մեր առաջին զրջաց մէկն էր. հնարագէտ, հաստատամիտ եւ անխոնջ, որոյ վկայ պիտի մնայ իր քսանամեայ «Մշակն»¹:*

1890-ի այս երթում, սակայն, առանձնապէս համապարփակ է հնչում Զմիւռնիայի «Արեւելեան մամուլ»ի յայտնի խմբագրապետ Մատթէոս Մամուրեանի խօսքը. «*Աշխարհի փոթորկալի կենաց վտանգներէ հեռի, կրից եւ նախանձու ճիրաններէ ազատ՝ Հայ գրականութեան այդ նոր ու մեծ նահապետն կ'ընծայէ միշտ հայութեան աչքին սրբանուէր անդորրութեան հոգեշունչ հայրենասիրութեան, հնախոյզ իմացականութեան երանելի պատկերը: Ո՛չ Մխիթարեան, ո՛չ միաբանական եւ ո՛չ դաւանական է այդ պատկեր, այլ համազգային եւ հայկական՝ որու կ'առնին ականապիշ Հայ սրտեր եւ սիրով, լուսով ու յուսով կ'ներշնչուին ու կ'ոգեւորին: ...Այս խունկի հատիկն ալ սրտագին կ'նուիրէ թերթիս խմբագիրն առ մեծ Քերթողն»²:*

Յոբէլեանկան այս գնահատութիւններին կողքին կայ աւելի կարեւորը՝ տեւական այն հմայքը, որ հայ գրամշակութային դաշտում պահպանում է Հ. Ղեւոնդ Ալիշանի գրականութիւնը յոբելեանից առաջ եւ յոբելեանից շատ յետոյ էլ, այդ թումը՝ խնդրոյ առարկայ նամակագրութեան մէջ:

Դեռեւս 1860-ականներին Մկրտիչ Պէշիկթաշլեանը Հայր Արսէն Բագրատունուն ուղղուած նամակում յիշատակում է Ղ. Ալիշանի անունը: Իսկ արդէն ստեղծագործական երկխօսութիւնը բերում է «Առ Հ. Ղեւոնդ Ալիշան» քերթուածով, ուր, օգտուելով իր ուսուցիչ Մխիթարեան բանաստեղծի ստեղծագործական եւ ոճական աւագանից, բնութագրում է վերջինիս հայրենասիրական երգը: Այստեղ մենք ուզում ենք տեսնել մի ոչ երկրորդական հանգամանք. հայ գրականութեան պատմաբան Լեօն, որի առաջաբանով լոյս տեսաւ Մ. Պէշիկթաշլեանի «Տաղեր»ը Թիֆլիսում, Պէշիկթաշլեանի ուսուցիչների մէջ ընդգծում է Հ. Ղեւոնդ Ալիշանի դերը՝

եւ միայն իր քահանայական ձեռնադրութեան յիսնամեակը կրօնապէս տօնելու առաջարկը կ'ընդունէր» («Արեւելեան մամուլ» / ամսաթերթ ազգային եւ քաղաքական, Զմիւռնիա, Ի. տարի, 1890, Մայիս, էջ 251):

¹ Ալիշան Ղեւոնդ, Նամակներ, էջ 173:

² «Արեւելեան մամուլ», 1890, Մայիս, էջ 242-243:

էջեր նուիրելով հայ գրականութեան մէջ վերջինիս դերակատարութեան բացայայտմանը¹:

Ալիշանի գնահատողների մէջ անհնար է շրջանցել ժամանակակիցներից Միքայէլ Նալբանդեանի անունը: Ցաւօք, երկուստեք գրուած պահպանուած նամակներ մեզ յայտնի չեն: Իսկ որ նրանք նամակներ գրել են իրար, վկայում է ինքը՝ Նալբանդեանը: Նախ, նշում է Հ. Ալիշանին ուղղուած 1859-ի Մայիս 12-ի թուակիր նամակի մասին, Փարիզից, ինչը կարդում ենք «*Օղջատետրի նկատողութիւններ*»ում, ապա՝ արդէն «*Բերդի յիշատակարան*»ում՝ 1864-ի Դեկտեմբերի 27-ին Հայր Ղեւոնդի նամակը ստացած լինելը²: Բացի այս յիշատակութիւններից՝ ունենք նաեւ Հ. Ղ. Ալիշանի բանաստեղծութեան նալբանդեանական գնահատականը, երբ յայտարարում է, թէ «*չափածոյ քերթուածոց մէջ, արժանաւոր վարդապետը ախոյեան չունի*»³:

Ղ. Ալիշանի գրականութեան ու կերպարի մասին տարբեր առիթներով իրենց գնահատական վերաբերմունքն են բերել Էդգար Շահինը⁴, Թորգոմ Արք. Գուշակեանը⁵ եւ ուրիշներ:

Ժամանակակիցների վկայութեամբ, ինչպէս Նիկողայոս Քարամեանի «*Ղեւոնդ Ալիշան (քանի մի թերթ իմ յիշատակարանից)*» գրութեան մէջ է բերուում, իրադարձութիւն է դիտուել Վենետիկ այցելողների համար Հայր Ալիշանի հետ հանդիպումը⁶: Այդպիսի հանդիպումներից մէկը նշում

¹ Տե՛ս **Պէշկըթաշեան Մկրտիչ**, Տաղեր, Թիֆլիս, 1903, էջ 9-11:

² **Նալբանդեան Միքայէլ**, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 6., Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1997 էջ 94, 141:

³ Նոյնը, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 4., Եր., ԳԱ հրատ., 1983, էջ 170:

Այստեղ մենք շրջանցում ենք Մ. Նալբանդեանի վերաբերմունքի տարբեր երեսակների քննութիւնը, որոնք աւելի շատ կապուում էին Մխիթարեանների գործունէութեանը հեղինակի մօտեցմանը:

⁴ **Շահին Էդգար**, Նամակներ / Ժամանակակիցները Էդգար Շահինի մասին, Եր., 2008, էջ 34:

⁵ **Թորամանեան Թորոս**, Նամականի, Եր., 2014, էջ 194 (տե՛ս՝ Թորգոմ Գուշակեանի նամակը Թորամանեանին):

⁶ Լոյս է տեսել «**Արձագանգ**»ի երեք յաջորդական համարներում (1890, թիւ 11, 12, 13): Գրութեան մէջ տեղ է գտել նաեւ Հայր Ալիշանի նամակը Ն. Քարամեանին (թիւ 11), որը դուրս է մնացել «Նամակներ» հատորից: Ի դէպ, նոյն հատորից դուրս են մնացել նաեւ լուսանկարիչ, ընկերային գործիչ Գէորգ Ապտուլլահեանին ուղղուած նամակները, որոնք հրատարակել է Հայր Եսայի Տայեցին իր «Գէորգ Ապտուլլահ. կեանքն ու գործունէութիւնը» ուսումնասիրութեան մէջ (Տե՛ս՝ «**Քաղմավէպ հանդիսարան**» / բանասիրական-գիտական-բարոյական, Ս. Ղազար-Վենետիկ, հատոր 22., 1929, Փետրուար, թիւ 2, էջ 33-36):

է Աւ. Իսահակեանը Բառնաբաս Պիլեզիքճեանին գրած նամակում. «Հայր» Ալիշանը հիւանդ էր, հիմա լաւ է: Ջարմանալի ուժեղ <կամքի> տէր մարդ է, զարմանալի մարդ. հիացած եմ իրենով¹: Չմոռանանք, որ Վարպէտի «Իմ յուշերից» գրքի առաջին «հերոսը» հենց Ղ. Ալիշանն է:

Ալիշանի՝ իր բառով «սիրուն ծերունու»² գրապատմական դերի մասին ուշագրաւ դիտողութիւններ ունի հայ մշակոյթի մեծագոյն երախտաւորներից Արշակ Չօպանեանը: Հիւանդութեան տխուր, գրեթէ դուրեանական թախիծով առլեցուն մի պահի, դեռ Կեդրոնականում ուսանելու տարիներին, առաջին հայեացքից ժխտողական, բայց խորքի մէջ գրական ճաշակի, ռոմանտիկական հայեացքի ձեւաւորման շուրջ խոստովանական ձեւակերպում է կատարում. «Ալ չեմ կարդար Ալիշանը. պաշտելի Ալիշանս Հիւկոյին հետ բարձիս տակ դրի. ոչ մէկուն շանթերն, ոչ ալ միւսին օրհներգութիւնները սրտիս կը խօսին, եւ սակայն անցեալ տարի այդ երկու հօգօր բանաստեղծներն ինձ մեծ հաճոյք կը պատճառէին. եւ սակայն արդէն տկար, տխւեղօ սիրտս երկաթեայ խաւով մը կը պատուէր նոցա ընթերցմամբ: Եւ այժմ այդ հաճոյքէն, այդ վահանէն ալ գուրկ մնացի»³: Բայց միայն մէկ պահի. յաջորդող տարիներին արդէն Ալիշանի ներկայութիւնը վայելած գործիչը Պոլսի Մաքրուհեան վարժարանի իր ուսուցչին՝ Սրապիօն Թղլեանին ուղղեալ նամակում պիտի յիշի այն «սիրուն խանդավառութիւնը», որով իրեն ու իր սերնդին կարդացուել ու բացատրուել են Ալիշանի, Պէշիկթաշլեանի կամ Հիւգոյի էջերը⁴: Աւելին՝ ալիշանական ընթերցումները զուտ գեղարուեստական մակարդակից պիտի տեղափոխուէին գրականագիտական նախասիրութիւնների ոլորտ. յիշենք Ա. Չօպանեանի «Դէմքեր»ը, որոնց կողքին՝ դեռ 20-րդ դարասկզբին Ղեւոնդ Ալիշանը:

Այստեղ կ'ուզենայինք ընդգծել մէկ ուշագրաւ հանգամանք. Ալիշանին եւ Հիւգոյին կողք կողքի է տեսնում նաեւ «Ալիշանի շիրմին առջեւ» ծնրադիր եւ նրան բազմիցս դիմած բանաստեղծը՝ Դ. Վարուժանը՝ Ռաֆայէլ Պազարճեանին ուղղեալ նամակում. «Մէկդի թողլով իմ տակաւին անվարժութիւնս՝ իրապէս մեծ դժուարութիւն կը գտնամ հայերէնէ գաղղիերէն թարգմանութեանց մէջ: Երբ գրութիւնը պատկերոտ եւ միանգամայն խիզախ ձեւերով է՝ դժուարութիւնը կը կրկնապատկուի. անոր

Երկու դէպքերն էլ թերեւս պայմանաւորուած են նրանով, որ հրատարակուել են ոչ որպէս առանձին նամակներ. մտել են այլ բնոյթի գրութիւնների մէջ, եւ դուրս են մնացել կազմողի ուշադրութիւնից:

¹ «Աւետիք Իսահակեանի նամակները», Եր., 2015, էջ 24:

² Չօպանեան Արշակ, Նամականի, Եր., 1980, էջ 51:

³ Նոյն տեղում, էջ 26:

⁴ Նոյն տեղում, էջ 136:

համար է, որ Հիւկօն եւ մեր մէջ Ալիշանը գրեթէ անթարգմանելի նկատուած են»¹:

Դարասկզբին բանաստեղծի նկատմամբ նամակներում իր ուշադրութիւնն է դրսեւորում նաեւ Ամենայն Հայոց բանաստեղծը: 1904-ին հայրենական վայրերով պտտուելիս Վարիա Խանդամիրեանին ուղղուած նամակում իր զգացումներին իբրեւ թարգման դիմում է Ղեւոնդ Ալիշանի «Հրագդան» գողտրիկ բանաստեղծութեանը²: Աւելին՝ այդ դիմումը եզակի չէ. ի հա՛րկէ, Յովհ. Թումանեանը չէր կարող «Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» աշխատութեան մէջ աչքաթող անել այդ շրջանի հիմնադիրներից մէկին, իսկ «Մեր գրական վարք ու բարքից» յօդուածում պիտի դնէր «Նուագներ»ի հանդէպ «պատկառումի» պահանջ³:

Պատկերային կառոյցի եւ առ հասարակ գրական ազդեցութիւնների առումով ուշագրաւ են Տիգրան Կամսարականի խոստովանութիւնները: Առաջինը վերաբերում է Հայր Կոմիտասին ուղղուած նամակում «հայկական գեղեցկութիւնների իր ընկալմանը, եւ ոչ առանց Ալիշանի ոճի միջնորդութեան. «Այդ սրբազնեալ աւանդն ի ձեռին գացէք, հայր սուրբ, անդաստան կատարել ի Հայս համօրէն, գացէք հնչեցնելու ձեր քնարը ի լուր տարանջատ հայութեան, որ «Աւարայրի Պլպուլէն» մինչեւ հիմա Ալիշանով միայն խապրիկ առած էր: Այդ պուլպուլը մեր արմաւենիներուն վրայ թառեր է հիմա»⁴: Երկրորդը Հրանդ Ասատուրին ուղղուած 1922, 9 Ապրիլ թուակիր նամակում ուղղակի ընդգծումն է, որ Ղ. Ալիշանի «գրաբարէն կրած ականայ ազդեցութիւնն» է պայմանաւորել նաեւ Գահիրէի «Արեւ» օրաթերթում 1919-ին լոյս տեսած իր «Լեւոն Մեծագործ. «առաւել քան զմարդ» (իր պատմութիւնը կարդալով)» ուսումնասիրութեան «գրաբարամիտ լեզուն»⁵: Այդ ազդեցութիւնը երեւան է գալիս նաեւ աշխատութեան մէջ Հայր Ալիշանի դիտարկումների վկայակոչումով⁶:

¹ Վարուժան Դանիէլ, Երկերի լիակատար ժողովածու երեք հատորով, հ. 3, Եր., ԳԱԱ հրատ., 1987, էջ 281:

² Թումանեան Յովհաննէս, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 9 / նամակներ. 1885-1904, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1997, էջ 430:

³ Տէ՛ս Նոյնը, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 6 / քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1887-1912, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1994, էջ 114:

⁴ «Տաճար» / ժողովրդային շաբաթաթերթ կրօնական, ազգային, գրական, Կ. Պոլիս, 1911, Բ. տարի, 11 Յունիս, Շաբաթ, թիւ 22, էջ 351:

⁵ «Արեւմտահայ գրողների նամականի», Եր., 1972, էջ 78:

⁶ Տէ՛ս՝ «Արեւ» / ազգային շափերու օրկան, Գահիրէ, 1919, Ե. տարի, 28 Մայիս, Չորեքշաբթի, թիւ 8 (626):

Ի հա՛րկէ, այս նկատումների կողքին կարելի է բերել բազմաթիւ այլ գնահատութիւններ, բայց բոլոր դէպքերում ընդհանրացումն այն է, որ Հայր Ղեւոնդ Ալիշանը մնում է հայ աշխարհաբար եւ ռումանտիկական բանաստեղծութեան ձեւաւորման ակունքում, հեղինակութիւն թէ՛ արեւմտահայ եւ թէ՛ արեւելահայ հատուածներում, իսկ նրա գրապատմական դերակատարութիւնը առարկութիւնների ու վիճարկումների հնարաւորութիւն գրեթէ չի թողնում:

Կնարիկ Աբրահամյան
Кандидат филологических наук, доцент

РЕЗЮМЕ

ЛИТЕРАТУРНО-ИСТОРИЧЕСКАЯ РОЛЬ ОТЦА ГЕВОНДА АЛИШАНА В ПИСЬМАХ

Ключевые слова: Отец Гевонд Алишан, переписка, оценка литературно-исторических явлений, художественное мышление, романтическое стихотворение, восточноармянские и западноармянские литературно-культурные отрывки.

В статье рассматриваются письма, написанные Отцом Гевондом Алишаном, а также письма, адресованные ему. В них проявляются не только оценки, данные Алишаном литературно-историческим явлениям и деятелям, но и оценка самого автора и его дела другими писателями (Микаэл Налбандян, Даниел Варужан, Тигран Камсаракан, Ованес Туманян, Аршак Чопанян, Матевос Мамурян Мамурян и другие). В отдельных случаях подчеркиваются межтекстовые связи между поэтическим восприятием Гевонда Алишана и его письмами.

KNARIK ABRAHAMYAN
PH.D, Docent

SUMMARY

FR. GHEVOND ALISHAN IN LETTERS: LITERATURE-HISTORICAL ROLE

Key words: Fr. Ghevond Alishan, correspondence, literature-historical estimations, artistic mind, romantic poetry, eastern and western cultural areas.

In the article are examined letters by Ghevond Alishan and letters addressed to him. In these letters are shown not only author's estimations of literature-historical subjects and figures, but also evaluation of his works by other artists and writers (Mikayel Nalbandian, Daniel Varuzhan, Tigran Kamsarakan, Hohannes Tumanian, Arshag Chobanian, Matteos Mamurian and others). In some cases the speech is based on inter-textual connections that we can see between Alishan's poetry and letters.

REFERENCES

- Alishan Ghevond, Namakner, Yer., GA hrat., 1969.
- “Avetiq Isahakyani namaknery”, Yer., 2015.
- “Ardzagang” / grakanakan ev qaghaqakan patkerazard shabatatert, Tiflis, Innerord tari, 6 Mayis, 1890, N 11.
- “Ardzagang” / grakanakan ev qaghaqakan patkerazard shabatatert, Tiflis, Innerord tari, 13 Mayis, 1890, N 12.
- “Ardzagang” / grakanakan ev qaghaqakan patkerazard shabatatert, Tiflis, Innerord tari, 20 Mayis, 1890, N 13.
- “Ardzagang” / grakanakan ev qaghaqakan patkerazard shabatatert, Tiflis, Innerord tari, 10 Hunis, 1890, N 16.
- “Arev” / azgayin shaheru orkan, Gahire, 1919, E. tari, 28 Mayis, Choreqshabti, N 8 (626).
- “Arevelyan mamul” / amsatert azgayin ev qaghaqakan, Zmyurnia, I. tari, 1890, Mayis.
- “Arevmtahay groghneri namakani”, Yer., 1972.
- “Bazmavep handisaran” / banasirakan – gitakan – baroyakan, S. Ghazar – Venetik, hator DZZ., 1929, Petrvar, N 2.
- Toramanyan Toros, Namakani, Yer., 2014
- Tumanyan Hovhannes, Erkeri liakat ar zhoghovatsu tasy hatorov, h. 6 / qnnadatutyun ev hrparakakhosutyun. 1887-1912, Yer., GAA hrat., 1994.
- Tumanyan Hovhannes, Erkeri liakat ar zhoghovatsu tasy hatorov, h. 9 / namakner. 1885-1904, Yer., HH GAA hrat., 1997.
- Hakobyan Pion, Ghevond Alishani namaknery Herman Abikhin // “Patma-banasirakan handes”, Yer., 1970, N 2.
- Nalbandyan Mikayel, Erkeri liakat ar zhoghovatsu vets hatorov, h. 4, Yer., GA hrat., 1983.
- Nalbandyan Mikayel, Erkeri liakat ar zhoghovatsu vets hatorov, h. 6, Yer., HH GAA hrat., 1997.
- “Nvagkh”/ H. Ghevonda M. Alishanian Mkhitarian Vardapeti, G., Hayrouni, Venetik, 1858.
- Shahin Edgar, Namakner / Zhamanakakicnery Edgar Shahini masin, Yer., 2008.
- Chopanian Arshak, Namakani, Yer., 1980.
- Peshiktashlian Mkrtich, Tagher, Tiflis, 1903.
- Varuzhan Daniel, Erkeri liakat ar zhoghovatsu ereq hatorov, h. 3 Yer., GA hrat., 1987.
- “Tatchar” / zhoghovrdayin shabatatert kronakan, azgayin, grakan, K. Polis, 1911, B. tari, 11 Hunis, Shabat, N 22.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴՐՈՍՏ-ԱՐԳԱՐՅԱՆ

Բանասիրության դոկտոր
armenuhi.drost@orientphil.uni-halle.de

ԱԼԻՇԱՆԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Գերմանական հայագիտություն, Կարլ Կրումբախեր, Հայնրիխ Գեյգեր, Գերմանական Արևելագիտական ընկերություն, Հայդելբերգի Պատմա-բանասիրական ընկերության Տարեգիրք, Մորից Վագներ, Կարլ Կոխ, գերմանախոս ակադեմիական գիտնականներ:

Այս կարճ հաղորդման նպատակն է՝ իմ առաջին դիտարկումները ներկայացնել Ղևոնդ Ալիշանին (1820-1901) որպես եվրոպական հայագետ՝ իր գերմանական հայագիտության հետ ունեցած առնչությունների օրինակով:

Այս թեմայի համար որպես աղբյուր ծառայել են ժամանակի գերմանալեզու մասնագիտական մամուլի նյութերը, որոնց ուսումնասիրությունը միայն կարող է ամբողջական պատկերացում տալ ականավոր հայագետի մասնակցության ծավալի մասին համաեվրոպական արևելագիտական հետազոտությունների ասպարեզում:

Թերթելով 19-րդ դարի գիտական և գիտա-հանրամատչելի ամսագրերը եվրոպական լեզուներով (բնագիտական, բանասիրական, ազգագրական, մանկավարժական)՝ պարզվեց, որ Ալիշանին են հղում և նրանից մեջբերումներ կատարում ժամանակի բազմաթիվ գերմանացի, ֆրանսացի, իտալացի, անգլիացի և այլ արևելագետներ, բյուզանդագետներ, պատմաբաններ, բանասերներ, բնագետներ, ազգագրագետներ, կրոնագետներ, հայագետներ և այլք:

Այնպիսի անվանի գիտնականներ, ինչպիսիք են բյուզանդագիտության հիմնադիր Կարլ Կրումբախերը (1856-1909), հնագետ Էռնեստ Կուրցիուսը (1814-1896) կամ Յենայի համալսարանի պրոֆեսոր, դասական բանասիրության և հնագույն պատմության մասնագետ Չվեյցարիացի Հայնրիխ Գեյգերը (1847-1906) օգտվել են Ալիշանի աշխատություններից:

«Ղևոնդ Ալիշան» անվան տակ արդեն իսկ կարելի է էլեկտրոնային շտեմարաններում տեղեկություններ քաղել եվրոպական բազմաթիվ ամսագրերից և պարբերական մամուլի միավորներից, որտեղ նա հիշատակվում է տարբեր առիթներով: Ահա վենետիկցի հեղինակին հղող մի քանի

նշանավոր գերմանախոս մասնագիտական հանդեսներ, որոնց շարքը կարելի է լրացնել հետագա ուսումնասիրությունների արդյունքում.

- Գերմանական Արևելագիտական Ընկերության (Deutsche Morgenländische Gesellschaft) Zeitschrift der Deutschen morgenländischen Gesellschaft ամսագիրը.

Ի դեպ, գերմանացի արևելագետների այս հնագույն ընկերությունը հիմնադրվել է 1845 թվականին Դարմշտադտում և 1886 թվականից ի վեր մինչև օրս գտնվում է Հալլե-Վիտենբերգի համալսարանում:

- Բավարական Գիտությունների Ակադեմիայի գիտական նստաշրջանների տեղեկատուն (Sitzungsberichte der Bayerischen Akademie der Wissenschaften)

- Բեռլինի աշխարհագրագիտական ընդհանուր հանդեսը (Zeitschrift für Allgemeine Erdkunde)

- Ավստրիական Գիտությունների Ակադեմիայի Հուշագրերը (Denkschriften der Österreichischen Akademie der Wissenschaften)

- Հայդելբերգի Պատմա-բանասիրական Ընկերության տարեգիրքը (Neue Heidelberger Jahrbücher)

- Հնդեվրոպական լեզուների ուսումնասիրությանը նվիրված հանդեսը (Indogermanische Forschungen) և այլն:

Այս գիտաժողովում մենք լսեցինք նաև Հայր Վահան ծայրագույն վարդապետ Օհանյանի ուսումնասիրությամբ Երևանում նոր (2020 թ.) լույս տեսած Ղևոնդ Ալիշանի նամակների առաջին հատորի հրատարակության մասին, որտեղ նա խոսեց վերջինիս նամակագրության մասին եվրոպական հայագիտության նշանավոր ներկայացուցիչների հետ 1840-1870 թվականների միջև ընկած ժամանակահատվածում: Նամակներում Ալիշանը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում իր եվրոպացի գործընկերներին, իրազեկելով նրանց հայագիտական տարբեր հարցերի շուրջ և փոխադարձաբար ստանալով նրանցից արդիական նորություններ իրենց հետազոտությունների արդյունքների վերաբերյալ:

Իր «*Այրարատ. Բնաշխարհի Հայաստանեայց*» (Վենետիկ 1890, էջ 583-584) մենագրության մեջ օգտագործված գրականության հեղինակների շարքում բազմաշնորհ գիտնականը նշում է գերմանացի աշխարհագրագետներ, երկրաբաններ և բնագետներ Մորից Վագների (1813-1887)¹ և Կարլ Կոխի (1827-1882)², Դորպատի համալսարանի պրոֆեսորներ Հեր-

¹ **Wagner, Moritz:** Reise nach dem Ararat und dem Hochland Armeniens, Stuttgart 1848.

² **Koch, Carl:** Reise durch Russland nach dem kaukasischen Isthmus in den Jahren 1836-1838, Stuttgart 1843; Wanderungen in Oriente während der Jahre 1843-44, Weimar 1846; Reise nach Grusien, am Kaspischen Meere und im Kaukasus, Weimar 1847.

ման ֆոն Աբիխի (1806-1886)¹ և Ֆրիդրիխ Պարոտի (1791-1841)², ինչպես նաև օսմանական կառավարության ռազմական խորհրդատու Յուլիուս Բլուհմի (1822-1900)³ և Ռիգայում ծնված գերմանական բուսաբան Ֆրիդրիխ Բուհզեի (1821-1898)⁴ անունները:

Միաբանության Միաբանությունը կարելի է համարել առաջին հայագիտական կենտրոնը Եվրոպայում, որին դիմում էր եվրոպական գիտական աշխարհը, այդ թվում նաև գերմանախոս ակադեմիական հանրությունը, երբ խոսվում էր Հայաստանի վերաբերյալ մասնագիտական տեղեկատվության մասին: Այսպես օրինակ, Ալիշանը համագործակցել է Պաուլ-Վիստովայի անտիկ աշխարհին նվիրված բազմահատոր հանրահոչակ հանրագիտարանին:⁵

Այստեղ հայերեն է սովորել ոչ միայն լորդ Բայրոնը, այլև շատ այլ եվրոպացի մտավորականներ, որոնք իրենց առաջին քայլերն են արել հայոց լեզվի, հատկապես գրաբարի ուսման, ինչպես նաև հայագիտության բնագավառում:

Ղևոնդ Ալիշանը, իր միաբան մյուս հայերի հետ միասին մասնակցելով հայոց լեզուն, հայկական աղբյուրները, հայ մշակույթն ու գիտությունը Եվրոպայում տարածելու գիտա-կրթական ծրագրերին, նաև մեծ աշխատանք է կատարել ծանոթացնելու հայ գիտնականներին եվրոպական մտքի նվաճումների հետ՝ միննույն ժամանակ ջանալով եվրոպական գիտական տեսությունները բեղմնավորելու ու հարստացնելու հայոց պատմությունից քաղած փաստերով և օրինակներով:

Այդ իմաստով Ալիշանը ուսումնասիրել է նաև գերմանացի հայտնի բնագետ և հրապարակախոս Յոզեֆ Գյորեսի (1776-1848)⁶, աշխարհագրագետ և քարտեզագետ Հայնրիխ Քիպերտի (1818-1899)⁷, չեխ-գերմանական բուսաբան և կենդանաբան Ֆրիդրիխ Անտոն Կոլենատիի

¹ **Von Abich, Hermann:** Vergleichende geologische Grundzüge der Kaukasischen, Armenischen und Nord-Persischen Gebirge, S. Petersbourg 1858.

² Parrot, Friedrich: Reise zum Ararat“, Berlin 1834.

³ **Bluhm, Julius:** Routen in Türkischen Armenien (zwischen Erzerum und Kars) aufgenommen im Sommer dieses Jahres, Berlin 1859, Geographische Mitteilungen, Bd.16)

⁴ **Buhse, Friedrich:** Aufzählung der auf einer Reise durch Trans-Kaukasien und Persien gesammelten Pflanzen, Moskau 1860.

⁵ **Pauly, August-Friedrich:** Real-Encyclopädie der classischen Alterthumswissenschaft in alphabetischer Ordnung (լույ է տեսել 1837-1964 թվականներին, ապա շարունակվել նոր հրատարակություններով մինչև 2007 թվականը).

⁶ **Görres, Joseph:** Die Japhethiden und ihre gemeinsame Heimath Armenien, München 1944.

⁷ **Kiepert, Heinrich:** Über älteste Landes und Volksgeschichte von Armenien, Berlin 1869

(1812-1864)¹, ավստրիացի կենսաբան Թեոդոր Կոչի (1813-1866)², Պրուսական Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, արևելագետ Հայնրիխ Պետերմանի (1801-1876)³ և Կարլ Սանդրեցկու (1810-1892)⁴ աշխատությունները:

1881 թվականին Վենետիկում կայացած Աշխարհագրագետների Միության երրորդ միջազգային համաժողովում Ալիշանը հանդես է գալիս «Հայկական աշխարհագրություն յարաբերութեամբ Աշխարհագրական Համազգային Երրորդ Ժողովոյն եւ Հանդիսին, որ ի Վենետիկ» թեմայով զեկուցմամբ: Նշենք, որ այդ ժամանակ Միության անդամների թիվը հասնում էր 1099-ի:

Իր ներածական խոսքում նա այն միտքն է հայտնում ներկաներին, թե ինքն ուրախ է, որ մեծ ազգերի, տերությունների և գիտական ընկերությունների շարքում, որոնք իրար հետ մրցակցելով գիտական կաճառի մեջ ներկայացնում են իրենց աշխարհագրական գիտության գանձերը հինավուրց Վենետիկ քաղաքում, նաև հայ ազգն ու Հայոց աշխարհն է իր տեղը գտել իր «վաղեմի ազնուականութեամբ հանդերձ», հառնելով Ասիայի հին ժողովուրդների «տխուր նշխարների» միջից և այն ժամանակներից, երբ Արևելքն էր այն վարչական շարժիչ կենտրոնն ու կիզակետը, որտեղից ծավալվում էր համաշխարհային իրադարձությունների և զարգացումների զարկերակը: Մինչդեռ այսօրվա «արթուն ու զուարթուն» Եվրոպան դեռևս քնած էր խանձարուրների մեջ քաղցր երազների անուրջում:⁵

Խիստ արդիական են հնչում Ալիշանի հետևյալ խոսքերը, որտեղ նա ակնարկելով 1877-1878 ռուս-թուրքական պատերազմների հետևանքով առաջացած ծանր իրադրությունը արևմտահայության և արևելահայության համար, գրում է. «Արդարև վերջին տարիներուս մեջ, և յետ վերջին պատերազմադրոյդ բախման Երասխայ և Եփրատայ հովտաց, ոչ սակաւ կը լսուի թէ՛ Հայ ժողովրդեան և թէ՛ իր վաղնջական հայրենեաց անունն, բայց ոչ առանց սրտառուչ յիշատակաց և երկիւղալի անստուգութեանց: Սակայն ի բաց թողլով իր աւելի կամ նուազ բարեբաղդ անցեալն, և չհետազօտելով բնաւին մթին ապագայն, ներելի ըլլայ մեզի Վենետիկեան

¹ **Kolenati, Friedrich Anton:** Die Bereisung Hoch-Armeniens und Elisabethopol, Dresden 1858.

² **Kotschy, Theodor:** Reise in die cilicischen Taurus über Tarsus, Gotha 1858.

³ **Petermann, Heinrich:** Reisen im Orient, Leipzig 1860-1.

⁴ **Sandreczki, Carl:** Reise von Smyrna bis Mosul und durch Kurdistan nach Urumia, 2 vol., Stuttgart 1857.

⁵ Հմմտ. Հայկական աշխարհագրություն յարաբերութեամբ Աշխարհագրական Համազգային Երրորդ Ժողովոյն եւ Հանդիսին, Վենետիկ 1881, էջ 3:

այս գաուրթ և միանգամայն ուսումնական հանդիսիս առջև յիշըցնել, որ յատկապէս արևելեան ըստած ազգերէն Հայք միայն եղած են, որ անընդհատ վեց դարերու յաջորդութեամբ (ԺԳ-էն սկսելով), ոչ միայն վաճառականական վերաաբերութիւն ունեցեր են Վենետկոյ հետ, այլև նախապատիւ քան զամենեսին սիրելի եղած են այս իշխողիս Ադրիականի...» (էջ 4).

Այս ողջունի խոսքը համաշխարհային գիտական լսարանի առջև կարող է նշանաբան հանդիսանալ մեծ հայագետի ռազմավարության մասին՝ պատմական արխիվների ու գրադարակների փոշուց վերհանելու համաշխարհային մշակույթի արժանավոր մաս կազմող հայոց հին ու «ազնվական» մշակույթն ու պատմությունը, նորովի ներկայացնելով այն և հիշեցնելով մանուկ Եվրոպային իր սեփական և հայերի հետ ունեցած ընդհանուր արմատների մասին հին աշխարհում:

Ժամանակի գերմանալեզու մամուլի ուսումնասիրությունը և Ղևոնդ Ալիշանի նամականու գերմանական հատվածի հրատարակությունը նոր հեռանկարներ կարող են բացել մեծ հայագետի գերմանական հայագիտության և գերմանախոս հայագետների հետ ունեցած կապերի բացահայտման առումով:

АРМЕНУИ ДРОСТ-АБГАРЯН
Доктор филологических наук

АЛИШАН И НЕМЕЦКОЕ АРМЯНОВЕДЕНИЕ

Ключевые слова: немецкое армяноведение, Карл Крумбахер, Генрих Гельцер, Немецкое общество востоковедения, Ежегодник Историко-филологического общества Гейдельберга, Морис Вагнер, Карл Кох, немецкоязычные ученые.

Немецкоязычная пресса XIX века дает довольно хорошее представление о роли Алишана в европейском востоковедении.

Алишан не только давал различные объяснения и отвечал на письма, адресованные ему разными европейскими учеными, но и европейские ученые ссылались на его исследования.

В то же время сам Алишан ссылался на различные исследования европейских ученых, особенно в трудах, связанных с географией Исторической Армении. Конгрегация мхитаристов была фактически первым центром арменоведения в Европе. Миссия Мхитаристов также была частью представления армянской культуры в Европе. И Алишан внес большой вклад в этот вопрос.

ARMENUHI DROST-ABGARYAN
Doctor of philological sciences, professor

FATHER GHEVOND ALISHAN AND GERMAN ARMENOLOGY

Key word; German Armenology, Karl Krumbacher, Heinrich Gelzer, German Oriental Society, The Annual of the Historical-Philological Society of Heidelberg, Maurice Wagner, Karl Koch, German-speaking academic scholars.

The 19th century German-language press comprehensively illustrated the influence of Father Ghevond Alishan on the European Oriental Studies. Father Gh. Alishan handled various scientific correspondences with European scholars, moreover his studies were quoted and illustrated in their scientific works.

At the same time, Alishan himself used the surveys of European scholars, with special reference to the geography of Historical Armenia.

The Mekhitarist Congregation was, in fact, the first center of the Armenian Studies in Europe. And one of the pivotal missions of the Mekhitarist Congregation was the introduction of Armenian cultural heritage to Europe. Undoubtedly Alishan has a strong contribution in this patriotic work and his activity was invaluable.

ՌԻՄԱ ՄԻՐՈՒՄՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
քաղաքական գիտությունների
պրոֆեսոր
rimma.mirumyan@gmail.com

**«ԱՐԵՎԵԼՔ-ԱՐԵՎՍՈՒՏՔ» ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Բանալի բառեր՝ համաշխարհայնացում, «Արևելք-Արևմուտք» դիմակայություն, ազգի պատմականություն, ազգի ինքնություն, մարդու կյանքի իմաստ, պատմական շարժման իմաստ, քաղաքակրթության բնօրրան, Լուսավորականության ծագում, ազգերի քաղաքակրթվածության չափանիշ, հայ ազգի պատմական առաքելություն

Աշխարհում այսօր ստեղծված իրավիճակը վկայությունն է այն բանի, որ իր ավարտին է մոտենում արևմտյան արժեհամակարգի գերիշխանության ներքո կենսագործվող մեր քաղաքակրթության պատմության մեջ համաշխարհայնացման վերջին վարկածը: Չափազանց տնտեսականացմամբ և տեխնոլոգիականացմամբ ու այդ գործընթացները սպասարկող գիտության բացարձականացմամբ «տառապող» համաշխարհայնացման այդ վարկածը «հաղթահարել է» Տիեզերական օրենքները, որոնք կոչված են արտահայտելու մարդու/ազգի հասարակական կյանքում և մշակութաստեղծ գործունեության մեջ որպես հոգեբարոյական բարձրագույն սկզբունքներ՝ դրանով իսկ ապահովելով մարդու կեցության իմաստի ու նպատակի ճշմարիտ ըմբռնումը:

Համաշխարհայնացման արդի վարկածի դեմ պայքարը արտահայտվել է դեռևս 19-րդ դարի հայ պատմափիլիսոփայական գիտակցության մեջ և հատկապես հայ կրոնական մտածողների (իմ եզրութաբանությամբ՝ հայ պահպանողականների) աշխարհայացքում: Նրանց համար խնդրի առանցքը պատմության գիտականության արևմտածին գաղափարի մերժումն էր: Հենց այդ տեսանկյունից էլ քննելի է «Արևելք-Արևմուտք» հարաբերակցության նրանց ըմբռնումը: Պատմափիլիսոփայության և, ի մասնավորի, հայ պատմափիլիսոփայության կարևորագույն խնդիրներից մեկը՝ «Արևելք-Արևմուտք» հիմնախնդիրը, հայտնի պատճառներով հայ մտածողների համար վերածվել է աշխարհայացքային և գաղափարախոսական բարդ երկընտրանքի¹: Խնդրի հայ լուսավորիչների

¹ Միրումյան Ռիմա, Պատմափիլիսոփայական հայեցակարգերը 19-րդ դարի հայ փիլիսոփայության մեջ. Մեթոդաբանական վերլուծություն, Երևան, 2003, էջ 96:

(իմ եզրութաբանությամբ՝ հայ ազատականների) մեկնաբանումը հանգեցվում է քաղաքակրթության ծագման և զարգացման ուղղվածության սահմանման և, դրանով պայմանավորված՝ առաջադիմության ընդհանուր հոսանքում ազգերի ներգրվելու միջոցների ճշգրտմանն ու հիմնավորմանը: Մինչդեռ այս խնդրի հայ պահպանողականների վերլուծության մեջ դիտարկվում է մի այլ նպատակադրում՝ մարդկային կեցության բարձրագույն իմաստով և քաղաքակրթության ծագմամբ պայմանավորված՝ արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների որոշակի դիմակայության, փոխներգործության, հետևաբար՝ նաև պատմության այդ համապատասխանների (մեզացիկների) ամբողջականության հաստատումը: Վերջինս առավել ցայտուն է դրսևորվում հայ կրոնական մտածող, Մխիթարյան միաբանության ակնառու ներկայացուցիչ Ղևոնդ Ալիշանի պատմափիլիսոփայական հայեցակետում, որտեղ պատմության ժամանակատարածական սահմանների որոշմամբ իմաստավորվում է առաջադիմության բուն էությունն ու քաղաքակրթության խորհուրդը:

Ղ.Ալիշանը ձևակերպում է Արևելքի և Արևմուտքի հետևյալ ժամանակային հարաբերությունը. Արևելքը մարդկության ծերությունն է, մինչդեռ Արևմուտքը՝ մարդկության երիտասարդությունը: Դրանով իսկ նա լուծում է քաղաքակրթության սկզբնավորման և զարգացման ուղղվածության խնդիրը: Ըստ այդմ, մտածողը ճանաչում է Արևելքի հոգևոր նախաձեռնումը, որը բացահայտելի է նրա հետևյալ սահմանմամբ՝ Արևելքը «Լուսաբուլի» է, իսկ Արևմուտքը՝ «Լուսընկալ»: Այս իմաստով է ըմբռնելի Ալիշանի հետևյալ դատողությունը. "Նոր բան տեսնելու փափագը գովելի է, ևս առաւել սովրելուն. քանի որ յարմար հասակ ունի մարդ թող հետևի սովրելու: Իսկ իմ (Արևելքի.Ռ.Մ.) թագաւորութիւնս որ կը հարցընես, ահա այս կիսանապատ ու կիսադրախտ երկիրն է, որուն սահմանները քու (Արևմուտքի. Ռ.Մ.) հայրենեացդ սահմաններուն խառնած են, թէպէտ և դու այնչափ ալ հեռու կարծես: Ժամանակին վրայ ալ հոգ մ'ըներ, վազն զի հոս թէպէտ երկայն ատեն արևը խոնարհած կը մնայ, բայց գիշեր չըլլար»¹: Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթական նշանակալիության այսպիսի բանաձևումը ենթադրում է Արևելքի քաղաքակրթական մշտնջենական դերակատարության և Արևմուտքի վրա ներգործելու անհրաժեշտության, հետևաբար՝ նաև Արևելքի և Արևմուտքի ժամանակային և տարածական սահմանների հարակցությունը: Նման մոտեցումը, ըստ էության, հերքում է եվրոպական (արևմտյան) Լուսավորականության մեջ արմատավորված՝ պատմության ժամանակային հարացույցին տարածական հարացույցի հանգեցումը, դրանով իսկ մարդկության էթնոմշակու-

¹ Ալիշան Ղ., Արևելք և Արևմուտք // «Բազմավեպ», 1851, № 8, էջ 114:

թային հիշողության նենգափոխման (արևելյան ազգերի էթնոմշակութային դիմագրկման) Արևմուտքի միտվածությունը: 19-րդ դարի կեսերին Ալիշանի կողմից մերժված այս միտումը ժամանակի ընթացքում ոչ միայն չի հաղթահարվել Արևմուտքի կողմից, այլև վերածվել է մեծ չարիքի ողջ մարդկության համար՝ համաշխարհայնացման գաղափարաբանության ներքո կազմաքանդելով պետություններն ու սեփական դիմագծից զրկելով ազգերին: Այդ նպատակին հասնելու համար Արևմուտքը նախ և առաջ ջնջում է ազգերի պատմական (մշակութային) հիշողությունը¹:

Արժուրելով Արևմտյան առաջադիմության բնույթը և տարածման ուղղվածությունը՝ Ղ.Ալիշանը գտնում է, որ արևմտյան հոգեմտակերպում ամրագրված Արևելքի կատարելագործման և «վերակենդանացման» գաղափարը անհիմն է մի քանի առումներով: Նախ, նա հրաժարվում է «Արևմուտքի մենաշնորհին է առաջադիմության նախապայման հանդիսացող լուսավորությունն ու գիտությունը» համադրությից՝ իբրև արևմտյան աշխարհըմբռնման արդյունք: Մինչդեռ «արևմտյան լուսավորություն» երևույթը նա համարում է, ըստ էության, հարաբերական, քանզի՝ ա) դրա սկզբնավորումը եղել է ընդամենը Հռոմեական հանրապետության վերջին շրջանում, բ) այն, ինչով հպարտանում է Արևմուտքը (գիտություն, արվեստ, դպրություն, վաճառականություն) սկիզբ է առել Արևելքում: Հետևապես, Արևմուտքի տեսանկյունից Արևելքի հետամնացությունը թվացյալ է, քանզի «ժամանակը երթալով կը զարգանայ»: Բացի այս, «դու (Արևմուտքը. Ռ.Մ.) հիմայ քու ի՞նչ ըլլալդ կը տեսնես, իմ (Արևելքի. Ռ.Մ.) ի՞նչ եղած ըլլալս ի՞նչէն գիտես»²:

Արևմուտքի քաղաքակրթական մեծ սխալը «նորապաշտութիւնն» է, որի հետևանքով Արևմուտքը անհանդուրժողություն է դրսևորում Արևելքի նկատմամբ: Արևելքի պաշտպանած «հնութիւնը» հենց Արևելքի ծնունդն ու սեփականությունն է, ինչը Արևմուտքը ձգտում է կամ «թարգմանել կամ ջնջել»: Արևմուտքի ընտրած ճանապարհը սխալական համարելով՝ Ալիշանը պնդում է. «Արևելցոց հնութիւնն ձեր աչքին փուշ եղած է. զմեզ հնապաշտ կ'ըսէք...Բայց որ չափ քու որդիքդ ալ նորապաշտութեամբ կը սխալին. զմեզ դիրահաւան կ'ըսէք մեր նախնեացը զրուցածներուն, զմեզ որ չափ անհաւան չ'ըսեմ ամէնուն, բայց ի՛ ձեր խելքէն: Մենք հնութիւնն կը սիրեմք, վազն զի մերն է, ինչպես ձեր մը իր տարիքն կը սիրէ յիշելով գլխէն անցածներն. դուք միայն երեկուան բա-

¹ Հմմտ.՝ Мирумян Римма, Армянское культурное наследие как механизм самозащиты нации в условиях глобализации//«Армения в диалоге цивилизаций». Материалы международной научной конференции, 28 апреля 2011г.- Нижний Новгород: Деком, 2011г., с. 83.

² Ալիշան Ղ., Արևելք և Արևմուտք//«Բազմավէպ», 1851, № 8, էջ 118:

ներն մօտ կը տեսնաք. ձեր հագարը՝ մեզի հարիւր է...մէկ կողմանէ դու (Արևմուտքը, Ռ.Մ.) ալ կ'ափշիս կը զուարճանաս հնութեանց վրայ՝ մէկ ալ կողմէն կ'արհամարհես հին աւանդութիւններն. և սակայն գիտցիր՝ որ տեղական աւանդութիւններն քու ամէն ջանքէդ վեր են: Արևելքի գիտութիւնն միայն արևելքէն կրնաս ունենալ»¹: Արևելքի ավանդապահության խորքային պատճառը և բարձրագույն իմաստը մտածողը համարում է Արևմուտքի կողմից բացասվող արևելյան ժողովուրդների «ազգապաշտութիւնը», ինչը անհնարին է գնահատել Արևմուտքի «պարծեցած լուսովը»: Ելնելով դրանից՝ նա հաստատում է, որ Արևելքի քաղաքակրթական դերակատարության՝ իր «մարդկութիւնն յաւիտենական օրինացն յարմարցընելու» համար անընդունելի է արևմտյան առաջադիմության աղբյուրի՝ մտավոր զարգացման սկզբունքը: Հենց «ազգապաշտութիւն-մարդկայնութիւն» գաղափարադրությունների լույսի ներքո է արժևորելի արևմտյան քաղաքակրթության հիմնաքարերի՝ «ազատութիւն» և «ազատամտութիւն» կարգախոսների Ալիշանի մեկնաբանումը:

Ըստ նրա՝ հիշյալ կարգախոսները Արևմուտքին չեն դարձրել իրապէս ազատ: Արևմուտքը գերի է ինքն իրեն, քանզի արևմտյան հասարակական կյանքը հիմնված է մարդուն ըստ էության անազատ դարձնող շահի սկզբունքի վրա: Անգամ քրիստոնեական վսեմ կրոնը արևմտյան ժողովուրդների կողմից ընկալվում և արժևորվում է այդ սկզբունքի տեսանկյունից²: Միաժամանակ, ազատությունն իբրև կենսաձև հռչակած Արևմուտքը ձգտում է այդ կարգախոսի «տակ մտցնել» ողջ աշխարհը՝ այն

¹ Ալիշան Ղ., Արևելք և Արևմուտք // «Բազմավէպ», 1851, № 11, էջ 163:

² Ալիշանը, ըստ էության, շեշտադրում է արևմտաեվրոպական մշակույթի այն առանձնահատկությունը, որը հետագայում պատմափիլիսոփայական հայեցակարգերի մեջ (և ոչ միայն հայ) պետք է դիտվեր որպէս երկու (արևելյան և արևմտյան) մշակութային աշխարհների արմատական հակադրման գլխավոր պատճառ, այն է՝ քրիստոնեության ռացիոնալացումը: Այսպէս, Բ. Կիրիլսկու պատմափիլիսոփայության մեջ հաստատվում է այն միտքը, որ արևմտաեվրոպական զարգացումը՝ պայմանավորված հեթանոսական-հռոմեական ռացիոնալությամբ, հանգեցրել է քրիստոնեության էության նենգափոխմանը: Ավելին, Արևմտյան Եկեղեցին, հավատը ենթարկելով բանականության տրամաբանական պահանջներին, դեռևս 9-րդ դարում Ռեֆորմացիայի հիմքն է դրել (տե՛ս Киреевский. И. О характере просвещения Европы и его отношения к просвещению России / И. Киреевский. Критика и эстетика, М., с. 262-263): Եթե Կիրիլսկին քննարկում է խնդիրը արևմտաեվրոպական ժողովուրդների պատմամշակութային զարգացման լայն համատեքստում, ապա ժամանակակից հետազոտող Ֆ. ֆոն Հալեմը դիտարկում է այն Իրավունքի համատեքստում (տե՛ս Халем Фридрих фон. Историко-правовые аспекты проблемы Восток-Запад // «Вопросы философии», М., 2002, № 7, с. 26-51):

դիտելով որպես սեփական ամառանոցային հողամաս, ինչը անհամապատասխան է ազատության վսեմ խորհրդին. «Ազատությունն մարդու գերագույն կատարելությունն է... բայց թե որ բանին յարմարացած ըլլայ. ազատամտությունն ձեզի շատ օգուտներ ըրած է... բայց չէմ գիտեր՝ քեզ ըրած վնասներէն ալ շատ են թէ չէ»¹: Այս տեսանկյունից ընկալելի է Ալիշանի այն միտքը, որ արևմտյան առաջադիմությունը ավելի վտանգավոր է, քան արևելյան «հետամնացությունը», քանզի վերջինս չի վնասում մարդկայնությանը: Մեծարելով արևմտյան գիտական առաջընթացը, մտածողը, սակայն, գտնում է, որ «Արևելք իր ամէն մթութեամբն եւ տգիտութեամբ շատ աւելի խոր ինչած է մարդկութեան մէջ, կամ աւելի գիտէ բուն մարդու գիտությունն, քան Արևմուտք»²: Այնուամենայնիվ, մարդկության համընդհանուր առաջընթաց շարժմանն անհրաժեշտ է «իրարու օգնելու իւրաքանչիւր իր առաւելութեամբն» Արևելքի և Արևմուտքի ձգտումը:

«Արևելք-Արևմուտք» հիմնախնդրում Ալիշանի շեշտադրած հարցերը և դրանց հաղթահարման ուրվագծած մոտեցումները համահունչ են արդիականության համընդհանուր խնդիրներին և դրանց լուծման որոշ նախագծերին: Այսօր մարդկության առջև ծառացած են աշխարհաքաղաքական և էթնոմշակութային իրավիճակի ու դրանով պայմանավորված՝ ազգերի ինքնության (հոգևորի) և պետությունների ինքնիշխանության պահպանման խնդիրները: Այս խնդիրների իմաստային առանցքն է կազմում արևմտյան տնտեսական, քաղաքական և մշակութային մտակաղապարների ընդարձակմամբ պայմանավորված անձնավորության միասնացման, գիտակցության աշխարհաքաղաքական հարթմանը հանգեցնող և իր ազդեցության ոլորտը (այդ թվում՝ նաև Արևելքը) գաղութային տիպի «գլոբալ գյուղի» վերածող Արևմուտքի նորագատամտականության հարձակողականության քաղաքականության հաղթահարումը: Արդի մարդկության առջև ծառացած այս լուրջ խնդիրը, որի լուծումից է կախված մարդկության հետագա գոյությունը, իր ձևակերպումը ստացել է դեռևս Եվրոպական Լուսավորականության (18-րդ դար) գաղափարաբանության մեջ: Համասեռ աշխարհի իդեալին կողմնորոշված եվրոպական Լուսավորականությունը, ըստ էության, չէր մշակել մշակույթների բազմակիության սկզբունքը, որի ջերմեռանդ պաշտպաններն էին 19-րդ դարի հայ լուսավորիչները: Ընդամին, նրանց մշակած հիշյալ սկզբունքը սահմանելի է որպես ներքին, հոգեբարոյական երաշխիք պարունակող պատմական տեսունակության հարացույց: Հայ ազգի ինքնության պահ-

¹ Ալիշան Ղ., Արևելք և Արևմուտք // «Բազմավեպ», 1851, № 11, էջ 165:

² Նույն տեղում, էջ 166:

պանման հիմնավորմանն ուղղորդված այս մոտեցումը հատուկ հնչեղություն է ստացել արդի աշխարհում: Այսօր ակնհայտ է դարձել այն իրողությունը, որ մարդկությանը՝ իբրև պատմամշակութային համակարգի, ներհատուկ է «երկկիսագնդային կառուցվածք»՝ պայմանավորված «Արևելք-Արևմուտք» դիմակայությամբ, ինչն ունի գոյաբանական-մարդաբանաբան խոր իմաստ: Նման կառուցվածքը որոշակի հավասարակշռություն է հաստատում հիշյալ համակարգում, դրանով իսկ նպաստում մարդկության հետագա զարգացմանը¹:

Մյուս կողմից, մարդկությանը անհրաժեշտ է այն ճշմարտության ըմբռնումը, որ ազգային գունակագմությունը բնության կողմից և դրա օրենքներով մարդկությանը տրված մեծ բարիք է. գենետիկական բազմազանության նման ազգային բազմազանությունը կոչված է ճակատագրի անակնկալներից պաշտպանելու *Homo sapiens* տարատեսակությունը²: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ 19-րդ դարի հայ լուսավորական պատմափիլիսոփայության մեջ ուրվագծվող «ազգության գաղափարի իրականացումը Պատմության գերագույն նպատակն է» բանաձևը ի հայտ է գալիս 20-րդ դարի հայ գաղափարախոսների պատմափիլիսոփայական հայեցակարգերում, այն էլ 19-րդ դարի հայ լուսավորական պատմափիլիսոփայությանը բնորոշ՝ «ազգություն-ազգ-հայրենիք-ազգային մշակույթ» գաղափարադրությունների շաղկապմամբ (Վ.Նավասարդյան):

Տարիմաստորեն նորությունը պաշտամունքի վերածած արդի ժամանակաշրջանում անցանկալի է համարվում ազգի պատմական անցյալին դիմելը: Սակայն, իր «ներքին կարգով» ազգի հոգևոր մշակույթի պատմությունը ժամանակի մեջ աշխարհի և մարդու մասին նույն ազգի կողմից նախկինում ստեղծված պատկերացումների ծավալումն է: Այդ իսկ պատճառով Արդիականության մարտահրավերների համարժեք պատասխանները նախ և առաջ որոնելի են ազգի պատմամշակութային ժառանգության մեջ: Վերջինս նպաստում է նաև ազգի հոգևոր մշակույթի կենսունակությանը, իսկ այդ հենքի վրա՝ ազգի պատմական հեռանկարի սահմանմանը: Ազգի պատմական անցյալը նրա՝ իբրև կուռ ընդհանրության, կարևորագույն հիմքն է: Յուրաքանչյուր ազգի մշակույթի հիմքում ընկած են նույն ազգի կողմից պատմականորեն ձևավորված կենսական կողմնորոշիչները, աշխարհագրագոյության տարատեսակը, որոնք ազգի պատմական գոյության ամեն մի փուլում արտացոլում են նույն ազգի միասնության համար անհրաժեշտ հոգևոր կապը, որը ծնունդ է տալիս

¹ Տե՛ս **Ясперс К.**, Смысл и назначение истории, М., 1991, с. 115-116.

² Տե՛ս **Моисеев Н.**, Человек и ноосфера, М., 1990, с.349.

ժողովրդի պատմական հիշողությանը և պահպանում այն: Ազգի մշակութային արժեհամակարգը համահարաբերական է այդ մշակույթների կրողների հոգևոր կարգին: Դրանով է բացատրելի այն հանգամանքը, որ հենց այդ արժեքները ստեղծած ժողովրդի պատմական հիշողությունը որոշակի իմաստ է հաղորդում այդ արժեքներին և ներգրում դրանք մարդկության հոգևոր ժառանգության պահոց¹:

19-րդ դարի հայ պահպանողականների պատմական մտածողության հարացույցը հանգում է «առաջադիմություն-բարոյականություն-անձնավորություն (մարդ, ազգ)- ազատություն-արդարություն-մարդասիրություն» շաղկապմանը: Այս տեսանկյունից մեկնաբանելի է ազգերի պատմականության խնդրի Ալիշանի իմաստավորումն ու արժևորումը: Ի տարբերություն եվրոպական լուսավորիչների՝ Ալիշանը ընդլայնում է խնդրի ժամանակային ու տարածական սահմանները և հաստատում, որ բոլոր ազգերը՝ ինչպես հին, այնպես էլ նոր, «իրենց միայն կրթութեան պատիւը սեփականելով՝ մեկլանց նուստ կամ բացասական անուն մը կու տան»: Այսպես, պարթևներն իրենց անվանել են «Արիք», իսկ մյուս ազգերին՝ «Անարիք»: Չինացիներն այդ հարաբերությունը ձևակերպել են որպես «Աչեղ-Անաչք», իսկ հայերը՝ իբրև «Մեծ-Փոքր»: Եվրոպական ավանդույթում այդ միտումն արտահայտվում է նախ՝ հույների, այնուհետև՝ հռոմեացիների, իսկ հետագայում՝ նաև եվրոպական նոր ազգերի հոգեմտակերպում. «Հռոմայեցիք որ իրենց զենքերովը Յունաց քաղաքականութիւն ալ ժառանգեցին, գոնէ ըստ իրենց կարծեացը, անոնցմէ սորվեցան ամէն ազգաց ալ բարբարոս ըսել բաց յիրենց և ի՛ Յունաց: Եվրոպացւոց մէջ երբ նոր տէրութիւններն ծաղկիլ սկսան՝ աշխարհիս մեկալ մասանց բնակչաց բարբարոս կ'ըսէին...»²:

Մյուս կողմից, մտածողը շրջանցում է լուսավորիչների և պահպանողականների միջև գոյություն ունեցող տարաձայնությունների գլխավոր առարկան. բարբարոսությունն է՝ նախորդել քաղաքակրթությանը, թե՞ հակառակը և, գտնում՝ ա) կան ազգեր, որոնց բարբարոսության շրջանը հայտնի չէ (օրինակ, հայերի), բ) վաճառական, հողագործ և հովվական կյանքով ապրողները (հայեր, ասորիներ, հին պարսիկներ, հնդիկներ, հրեաներ, եգիպտացիներ) «հեշտությամբ» են անցնում քաղաքակրթությանը թափառական և որսորդական կյանքով ապրողների համեմատությամբ: Այս հարթության վրա ընկալելի է եվրոպացիների ձևակերպած

¹ Միրումյան Ռ.Ա., Անանիա Շիրակացին և վաղ միջնադարյան հայ հոգևոր մշակույթը: /Հասարակագիտական միտքը արդի ժամանակաշրջանում, Ե, 2012, էջ 32:

² Ալիշան Ղ., Բարբարոս և բարեբարոյ //«Բազմավեպ», 1850, № 9, էջ 130:

ազգերի քաղաքակրթվածության (պատմականության) չափանիշի՝ «ձեռագործ յիշատակների» անհրաժեշտության նրա մերժումը: Ալիշանը ինքնին մերժումը բացատրում է նրանով, որ «շատ հեղ կամ իրենց ետքի բարբարոսությունը զանոնք ջնջած են»: Մյուս կողմից, նա պնդում է, որ հին հույները «մասամբ իրաւամբք, և մասամբ պարծենկոտութեամբ և մասամբ ստութեամբ միայն զիրենք քաղաքավար (քաղաքակիրթ.Մ.Մ.) սեփած են նախ. ստութեամբ՝ վասն զի իրենցմէ շատ առաջ քաղաքավարած էին Ասորեստանեայք, Եգիպտացիք, Հրեայք, Հայք, և այլն. Մնափառութեամբ՝ վասն զի ուրիշներէն առած լոյսերնին իրենց սեպեցին և չունեցածնուն վրայ ալ պարծեցան. իրաւամբ՝ վասն զի քան զամէնքը գերազանցեցին գեղեցիկ ճաշակաւ և բոլոր եւրոպական լուսաւորութեան և Ասիոյ մասին ալ օրինակ եղան, որով Եւրոպայէն ալ աշխարհիս մէկալ կողմերուն սփռելուն պատճառն ալ իրեն կը սեպուին»¹:

Ալիշանի դատողությունների ողջ նշանակալիությունը ըմբռնելու համար հարկ եմ համարում այն համեմատել քննարկվող հարցի վերաբերյալ 19-րդ դարի հայ ազատական մտածող Ստեփանոս Պալասանյանի մոտեցման հետ: Նա հին հույների մենաշնորհն է համարում ազգային մշակույթի ստեղծումն ու զարգացումը՝ իբրև Հին Հունաստանի հասարակական կառուցվածքի ժողովրդավարականության և հին հույների հասարակական կյանքի հրապարակայնության արդյունք. «Ի՞նչ զարմանք, որ Յոյները ճանաչելով իրանց գերազանցութիւնը ուրիշ ազգերի վրայ, միայն իրանց էին համարում մարդիկ, իսկ օտարներին բարբարոս էին անուանում, և չէին կամենում մի և նոյն իրաւունքները շնորհել նրանց, որոնց հօր կամ մօր երակների մէջ մաքուր ու անխառն աթենական արին չէր խաղում»²:

Հատկանշական է Ալիշանի այն պնդումը, թե աշխարհի բարգավաճող մասը, այսինքն՝ Եվրոպան, «գրեթէ բոլոր բարբարոսութեան մէջ թաղուած է», քանզի քաղաքակրթվածությունը, եվրոպացիների ընկալմամբ, բարբարոսությունից շատ չտարբերվող երևույթ է: Ըստ նրա, եվրոպացիների «բարբարոսութեան» պատճարը նրանց տգիտությունն է (հոգեբարոյական իմաստով) և կեղծ հայրենասիրությունը: Ալիշանի այս պնդումը որոշ հայ պահպանողականների հայացքներում վերածվում է եվրոպական քաղաքակրթության բացահայտ քննադատության: Այսպես, Գ. Մուրադյանը գտնում է, որ մարդու իմացականության զարգացման արդյունքը՝ եվրոպական քաղաքակրթության «բարիքները» և, հատկապես, մեքենաներն ու « մահաբոյր» զենքը «փոխանակ երջանիկ ժո-

¹ Ալիշան Ղ., Բարբարոս և բարեբարոյ // «Բազմավէպ», 1850, № 9, էջ 131:

² Պալասանյան Ստ., Պատմութիւն հայոց գրականութեան, հ.1, Թ., 1865, էջ 1718:

դովրդեան մը, անհանդարտ ամբոխ մի կը կացուցանեն, ամբոխ մի՝ անսանձ իւր կրից մէջ, անհարազատ՝ իւր գործոց մէջ եւ խուժ՝ իւր յարաբերութեանց մէջ, հետեւաբար անտեղեակ եւ անգիտակ իւր վսեմ կոչման. մէկ խօսքով ամբոխ մի, որ զագիր որդան մը նման երկրաքարշ կը տառապի»¹: Ալիշանի պնդմամբ ճշմարիտ քաղաքակրթությունը պայմանավորված է քրիստոնեական գաղափարների կենսագործմամբ. «Քրիստոս Աստուած նորոգող մարդկային բնութեան՝ մէկ հատիկ ճշմարիտ կապ ճշմարիտ ընկերութեան դրաւ զընկերասիրութիւնը. «Մի-րեցէք զմիմեանս. Միրեսցես զընկեր քո իբրև գանձն քո»: Ինչուան որ այս օրէնքս... չհաստատուի, չծավալի, չտիրէ մարդկութեան մէջ, բարբարոսութիւնը յաւիտեան չի վերնար աշխարհէս, և ամենէն լուսաւոր եւ բարակ ազգաց մէջ ալ պիտի մնայ և զօրանայ չարաչար բարբարոսութիւնը»²: Ալիշանի վերոհիշյալ համադրույթներից հետևում է, որ ազգերի պատմականության խնդրի «առաջադրումը»՝ իբրև Նոր ժամանակի եվրոպական ազգերի առանձնաշնորհ, ընդունելի է մեծ վերապահումով: Ավելին, անհիմն է ազգերի պատմականության աստիճանը «չափել» եվրոպացիների դիտանկյունից: Ազգերի պատմականության խնդիրն ավելի օրինաչափ է դիտարկել իբրև ազգերի կենսադիրքորոշման որոշակի դրսևորում: Ինչ վերաբերում է ազգերի քաղաքակրթվածության չափանիշին, ապա այն սահմանելի է որպէս ազգերի հոգեբարոյական «կարգավիճակի» խորհրդանիշ:

Նշվածի լույսի ներքո հարկ է արժևորել հայ ազգի պատմական առաքելության Ալիշանի մեկնաբանումը: Ելնելով Մ.Գրքի, հին պատմաբանների և հին ավանդույթների վկայություններից՝ մտածողը հաստատում է, որ Հայաստանը «սերմարան մը ազգաց և ցեղից», զարմանալի «ընդդիմակայութեամբ մը հիւրընկալ և օթևան եղած է զանազան ազգաց գաղթականներու»: Քսանհինգ դար շարունակ հայաստանաբնակ և Հայաստանի տարածքով («յառաջ և յետ իւր Հայաստան կոչվելուն») անցած բազմաթիվ ժողովուրդների մշակութային փոխներգործությունը պսակեց քրիստոնեական կրոնը, որը «սրբազան և անդրժեղի ըրաւ երկայն դարուց աշխատանքը, և այդքան տարբեր տարերքներէ ձևացուց մէկ ազգ մը...»: Հաջորդ 1500 տարիներին «թէ և հեռացեալ թէ և հալածեալ իւր բնիկ երկրէն, Հայն իրեն հետ կը կրէ իւր թերափքը. և կը մշակէ զհայրենիս իւր հարուստ լեզուին մէջ, և կը յարգէ զայն իւր կրօնին մէջ, կ' ուսանի անոր յիշատակաց մէջ, և կը պաշտէ զայն իւր սրտին մէջ: Այս հայրենասիրությունս, ի բաց թողլով ոմանց մոլորիլը և ոմանց անհոգութիւնը,

¹ **Մուրադեան Գ.**, Ճշմարիտ յառաջադիմութիւնը ու՞ր է // «Միոն», 1874, № 2, էջ 28:

² **Ալիշան Ղ.**, Բարբախոս և բարեբարոյ // «Բազմավէպ», 1850, № 10, էջ 149:

առաջնորդեց անցուց Հայոց ազգը 44 դարու միջոց՝ ամեն տեսակ դիպուածէ, բնութեան և քաղաքականութեան յեղափոխութիւններէ, ընդ մէջ ազգաց, որ իրմէ վերջը ծնան և իրմէ առաջ մեռան»¹:

Հայերի հարատևության գաղտնիքը համարվում է այն, որ «ինքնին նախախնամեալ երկիր մ' էր Հայաստան և սիրելի բարձրելոյն, ուր շատ կանուխ յայտնեցաւ. և պէտք է որ ամենայն ազգ որ իր ծագումը կը փնտրէ՝ դառնայ այդ երկրին նայի: Եղեմայ հետքը գտնելու ապահավագոյն ճամբայն է Հայաստան: Ինքն ընծայեց Աստուծոյ իւր օրհնեալ կաւը, և ընդունեցաւ անոր ձեռքէն զհայրն և զմայր մարդկութեան. ինքն ընծայեց ասոնց այլ ինչ որ պէտք էր իրենց պահպանութեան, իրենց սիրոյն և զղջմանը համար. ինքն եղաւ խանձարութիւն առաջին ծնածին և գերեզման առաջին մեռնողին. ինքն բարձրացուց Արարատայ գագաթը միւս անգամ ընդունելու ջրհեղեղէն ազատած մարդկութեան մէկ հատիկ տունը. և այդ իրեն հիւր եղած մէկիկ ընտանիքով երկրորդ անգամ բոլոր երկիրս մարդաբնակ ըրաւ»²: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Ալիշանի այս միտքը դեռևս կռահել է Գ. Այվազովսկին, ըստ որի՝ «...Աստուած հայերն ալ մեծ վախճանի մը համար ընտրեւ որ միշտ պահպանէր է»³: Հատկանշական է, որ Ալիշանը ամեննին էլ պատահական չի համարում այն հանգամանքը, որ Հայաստանը քրիստոնեւորւնէն ընդունած առաջին երկիրն է: Ավելին, Հայաստանը քրիստոնեւորւնէն առաջին «պատուարն ըլլալով՝ ամենէն ետքի պատուարն այլ է երկրիս արևելակողմը»: Եվ եթէ հին դարերում Հայաստանը քրիստոնեւորւնէն կղզի էր Արևելքում, ապա նոր ժամանակաշրջանում թերակղզի է քրիստոնեւորւնէն «այլահաւատ կրօնից մէջ»: Մտածողի կարծիքով, հենց ճշմարիտ կրօնի զգացումն է նպաստավոր դարձրել Հայաստանի «ինքնագլխութիւնը» պահպանելը և հայի պատմական առաքելութիւնն իրագործելը, այսինքն՝ «համաձայնել իրարու զշահախնդրութիւն երկու աշխարհաց (Աիւնելքի և Արևմուտքի-Ռ.Մ.)՝ որոց մէջ դրեր է զինքը նախախնամութիւնն...»⁴:

Այսպիսով, հիմնվելով հետևյալ՝ Հայաստանը մարդկության բնօրրանն է և նրա հոգևոր վերածնության կենտրոնը կանխադրույթի վրա, Ալիշանը սահմանում է հայ ազգի պատմականությունը. հայը « հին և նոր և միշտ պատմական» ազգ է: Նման սահմանումից բխեցվում է հայ ազգի՝

¹ **Ալիշան Ղ.**, Ուսումն Հայրենեաց. Բնախօսութիւն Հայաստանի // «Բազմավէպ», 1861, № 11, էջ 353-354:

² Նույն տեղում, էջ 355:

³ **Այվազեան Գ.**, Հայոց ազգային պարծանքները // «Բազմավէպ», 1843, № 16, էջ 254:

⁴ **Ալիշան Ղ.**, Ուսումն Հայրենեաց. Բնախօսութիւն Հայաստանի // «Բազմավէպ», 1861, № 11, էջ 355:

աստվածընտիր ազգ լինելու գաղափարը, դրանով իսկ հաստատվում նրա հավերժության հնարավորությունը: Հենց հավերժության մեջ մարդու արմատավորումը հայ պահպանողականները, որոնց թվում նաև Ղևոնդ Ալիշանը, դիտարկում են որպես պատմության վսեմ խորհրդի իրականացում: Մինչդեռ դարաշրջանի գաղափարական ուժադաշտով և ազգային կեցության հիմնախնդիրներով պայմանավորված՝ պատմության ուղղվածության և նպատակի համապարփակ խնդիրը («Ի՞նչ է մարդս, ուս՞կից կու գայ, և ու՞ր կ'երթայ») կապակցվում է հոգեբարոյական բովանդակություն ունեցող «ազատություն» գաղափարի ըմբռնման հետ:

Վերը նշվածը թույլ է տալիս հաստատել, որ առաջադիմության էության ըմբռնման հենքի վրա Ղևոնդ Ալիշանը իմաստավորում և «արդարացնում» է պատմությունը: Պատմության իմաստն ու արդարացումն է նա դիտում պատմական ընթացքը, որի նպատակն է մարդու մեջ մարդկային նախասկզբի զարգացումը: Ընդ որում, վերջինիս բացարձակ պայմանը նա համարում է էությամբ ազգային մարդկային կեցության ավանդականությունը: Ռացիոնալության արևմտածին աշխարհաքաղաքացիությանը հակասող ավանդականությունը նրա համար պատմական կյանքի, այսինքն՝ մարդու՝ որպես անձնավորության, կայացման գրավականն է: Ուստի՝ պատմությունը մարդկության առաջադիմությանը նպաստող ազգերի առաջընթաց շարժում է և մարդկայնության իրականացման միջոց: Այդ բանաձևը անհրաժեշտորեն ենթադրում է ներկայի հետ անցյալի, իսկ ապագայի հետ՝ ժամանակային այդ երկու մոդուսների սերտ հարաբերակցում:

РИММА МИРУМЯН

*Доктор философских наук
Профессор политических наук*

РЕЗЮМЕ

ОТНОШЕНИЯ "ВОСТОК-ЗАПАД" В ИСТОРИЧЕСКОЙ ФИЛОСОФИИ Г. АЛИШАНА

Ключевые слова: глобализация, противостояние, <<Восток-Запад>>, историчность нации, идентичность нации, смысл человеческого бытия, смысл исторического процесса, колыбель цивилизации, генезис просвещения, критерий цивилизованности наций.

Сложившаяся на сегодняшний день ситуация в мире свидетельствует о конце основанной на системе западных ценностей последней в истории нашей цивилизации версии глобализации. Сущностью данного процесса был отказ от высших духовно-нравственных принципов организации социальной жизни и свободного культивирования народов мира.

Противодействие данному процессу наблюдается еще в философско-исторических концепциях армянских мыслителей 19-го века и, в частности, армянского религиозного мыслителя Гевонда Алишана. В качестве исходной посылки в концепции Алишана служит идея об определенном противостоянии и взаимодействии Западной и Восточной цивилизаций, обусловленной целостностью этих двух мегациклов Истории. Колыбелью человеческой цивилизации и хранителем Традиции Алишан называет Восток. Главным же отличием Запада мыслитель полагает его постоянную тягу к новому и стремление к унификации жизни народов. Восток, в отличие от Запада, стремится сохранить свое цивилизационное начало и культурное многоцветие наций.

Критерием историчности (цивизованности) наций Алишан считает степень духовно-нравственной зрелости наций, а не уровень развития их социально-политической жизни. В этом контексте Алишан отмечает особую историческую (духовную) миссию одного из древнейших наций мира - армянской нации.

RIMMA MIRUMYAN

*Doctor of Philosophical Sciences,
Professor of Political Sciences*

ABSTRACT

"EAST-WEST" RELATIONSHIP IN FATHER GH. ALISHAN'S HISTORICAL-PHILOSOPHY

Key words: globalization, confrontation, "East-West", the historicity of the nation, the identity of the nation, the meaning of human existence, the meaning of the historical process, the cradle of civilization, the genesis of enlightenment, the criterion of the civilization of nations.

The current situation in the world testifies to the end of the version of globalization based on the system of Western values, the latest in the history of our civilization. The essence of this process was the rejection of the highest spiritual and moral principles of the organization of social life and free cultural creation of the peoples of the world. Opposition to this process is observed even in the philosophical and historical concepts of the Armenian thinkers of the 19th century, and, in particular, the Armenian religious thinker Ghevond Alishan.

The idea of a certain opposition and interaction between Western and Eastern civilizations, conditioned by the integrity of these two megacycles of History, serves as the initial premise in the concept of Alishan. Alishan calls the East as the cradle of human civilization and the guardian of Tradition. The thinker believes that the main difference of the West is its constant craving for the new and the desire to unify the life of peoples. The East, unlike the West, seeks to preserve its civilizational origin and the cultural diversity of nations. Alishan considers the degree of spiritual and moral maturity of nations, and not the level of development of their socio-political life, to be the criterion of the historicity (civilization) of nations. In this context, Alishan notes the special historical (spiritual) mission of one of the most ancient nations in the world - the Armenian nation.

REFERENCES

1. Alishan Gh., Barbaros ev barebaro// «Bazmavep», 1850, № 9, ej 129-130
2. Alishan Gh., Arevelq ev Arevmutq// «Bazmavep», 1851, № 8 113-119
3. Alishan Gh., Usumn Hajrenyayac. Bnakhosotyun Hajastani//«Bazmavep»1861, №11,ej 347-357
4. Ayvazyan G., Hayoc azgayin partsanqnery//«Bazmavep», 1843
5. Hmmt. Mirumyan Rimma, Armyanskoe kulturnoe nasledie kak mekhanizm samozashiti natsii v usloviakh globalizatsii/ «Armenia v dialoge civiizaciy» Materialy mejdunarodnoy nauchnoy konferencii, 8 aprelya 2011 g. – Nijniy Novgorod: Dekom, 2011
6. Mirumyan Rimma, Patmapilisopayakan hayecakargery 19-rd dari hay pilisopayutyan mej, Yerevan, 2003
7. Mirumyan R.A ., Anania Shirakatsi ev vax mijnadaryan hay hogeovor mshakuyty/ Hasarakagitakan mitqy ardi jamanakashrjanum, E., 2012 ej 32-42
8. Moiseev N., Chelovek i noosfera, M., 1990
9. Yaspers K., Smisl i naznachanie istorii, M., 1991

ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ԱԼԻՇԱՆԸ

Բանալի բառեր՝ Բայրոն, Ալիշան, բայրոնիզմ, Միխիթարյաններ, ռոմանտիզմ, «Չայլո Հարոլդի ուխտագնացությունը» պոեմ, առաջին թարգմանիչ, հայ քնարերգություն, անգլիական քնարերգություն, ազատասիրություն:

19-րդ դարի եվրոպացի բանաստեղծներից ոչ մեկն իր ժամանակակիցների վրա չի ունեցել այնպիսի մեծ ազդեցություն, ինչպես Բայրոնը: 19-րդ դարում բայրոնիզմը՝ որպես հզոր ուժ՝ ազատության, կենսասիրության, անհոգության ու սիրո գովքով՝ իր ոլորտի մեջ էր ներառել Արևմուտքի և Արևելքի տարբեր լեզուներով ստեղծագործող բանաստեղծներին (Ալֆրեդ դը Մյուսե, Հայնրիխ Հայնե, Ալեքսանդր Պուշկին, Միխայիլ Լերմոնտով, Ադամ Միցկևիչ, Շանդոր Պետեֆի և ուրիշներ), ինչպես նաև ոգեշնչել արվեստագետներին (Էժեն Դելակրուա՝ «Հունաստանը Միսսոլունգի փլատակների վրա» (1826), «Սարդանապալի մահը» (1827), «Դոժ Մարինո Ֆալերոյի մահապատիժը» (1827), «Աբիդոսի հարսնացուն» (ըստ Բայրոնի պոեմի, 1843), Դոմենիկո Սորելլի՝ «Կոմս Լարա» (1861), Հեկտոր (Էկտոր) Բեռլիոզ՝ սիմֆոնիա «Հարոլդը Բուալիայում» (1834), Ջուզեպպե Վերդի՝ օպերաներ «Երկու Ֆոսկարի» (1844) և «Օնվահենը» (1848), Ռոբերտ Շուման՝ «Մանֆրեդ» (նախերգանք (ուվերտյուրա) Բայրոնի դրամատիկական պոեմի համար, 1848), Ադոլֆ Ադան՝ բալետ «Օնվահենը» (1856), Պյոտր Չայկովսկի՝ սիմֆոնիա «Մանֆրեդ» (1885), և ուրիշներ): Հետևաբար, միանգամայն իրավացի էր Ա. Պուշկինը, երբ 1824-ին գրած «Օնվին»¹ բանաստեղծության մեջ արձանագրում էր, որ Բայրոնի մահով «Թռավ մեզանից մի ուրիշ հանճար, // Մի այլ տիրակալ մեր հոգիների: // <...> // Կյանքը դատարկվեց...»²:

¹ Ինչպես նշել է Պուշկինը 1824-ի հոկտեմբերին ռուս բանաստեղծ, գրաքննադատ, հրապարակախոս իշխան Պյոտր Անդրեևիչ Վյազեմսկուն (1792-1878) հասցեագրած մի նամակում, Բայրոնի հոգու հանգստության համար ուղարկում է մի փոքրիկ հիշատակ՝ «Օնվին» բանաստեղծությունը (տե՛ս՝ А. С. Пушкин, “Собрание сочинений в десяти томах”, т. IX, Москва, Издательство “Правда”, 1981, с. 145-146, 422).

² **Ա. Ս. Պուշկին**, Երկեր, հինգ հատորով, հատոր I. «Բանաստեղծություններ», Երևան, Հայպետհրատ, 1954. Էջ 258-259 (թարգմ. Ն. Ջարյան). – բնագիրը՝ А. С. Пушкин, *նշվ. աշխ.*, т. II, էջ. 13-14:

Նման գայթակղությունից՝ Բայրոնի անմիջական ազդեցությունից, չեն խուսափել նաև հայ բանաստեղծները: Չնայած հայ-անգլիական գրական առնչությունները ծավալվել են դեռևս 18-րդ դարի երկրորդ կեսից (հնդկահայ գաղթօջախում), սակայն դրանք 19-րդ դարասկզբից, շնորհիվ Բայրոնի, ում ստեղծագործությունն ու անձնական ճակատագիրն առանձնահատուկ ազդեցություն են ունեցել համաշխարհային գրականության վրա, ստացան միանգամայն նոր որակ: Վստահաբար կարելի է ասել, որ սկսած 19-րդ դարի առաջին քառորդից Բայրոնը հայ գրականության մեջ թողել է իր «հետքը»՝ այնտեղ ունենալով իր «մշտական ներկայացուցիչը» կամ «ներկայացուցիչները»:

Հատկանշական է, որ բայրոնիզմը հայ գրականության մեջ ներթափանցել, տարածվել և զարգացել է տարիների, տասնամյակների ընթացքում՝ հարստանալով, խորանալով և ընդգրկելով հայ բանաստեղծների նորանոր սերունդներ ու անուններ՝ Ղևոնդ Ալիշան, Սմբատ Շահագիզ, Միքայել Նալբանդյան, Ռուբեն Որբերյան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, Սիամանթո, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ, Եղիշե Չարենց, Հրաչյա Հովհաննիսյան, Պարույր Սևակ, Վահագն Դավթյան և շատ ուրիշներ, որոնք այս կամ այն չափով կրել են Բայրոնի ստեղծագործության ազդեցությունը, ինչպես նաև ունեցել բազմաթիվ նմանություններ և ընդհանրություններ Բայրոնի կյանքի և ստեղծագործության հետ:

Անդրադառնանք հայ բանաստեղծ, պատմաբան, թարգմանիչ, Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանի (Քերովբե Պետրոս-Մարգարի Ալիշանյան, 1820-1901) ստեղծագործության վրա Բայրոնի քնարերգության թողած ազդեցությանը և նրա թարգմանություններին Բայրոնի ստեղծագործություններից:

Բայրոնի ռոմանտիզմը, նրա ազատասիրական գաղափարները մեծ ազդեցություն են թողել երիտասարդ Մխիթարյան վարդապետ Ղ. Ալիշանի վրա, ով, 19-րդ դարի 50-60-ական թվականներին հակադրվելով իր նախորդներին՝ հայ գրականության մեջ ձևավորված ու կարծրացած (հիմնականում Մխիթարյան միաբանության հեղինակների ջանքերով) դասականության (կլասիցիզմ) գրական-գեղագիտական ուղղության կարկառուն ներկայացուցիչներին (Ղուկաս Ինճիճյան (1758-1833), Մանվել Ջախջախյան (1770-1835), Եղիա Թովմաճան (1777-1848), Արսեն Բազրատունի (1790-1866) և ուրիշներ), հանդես եկավ իր ինքնատիպ բանաստեղծությունների շարքով, որոնք սկսած 1847-ից տպագրվեցին «Բազմավեպ» հանդեսում, իսկ հետագայում ամփոփվեցին «Երգք Նահապետի» ընդհանուր խորագրի ներքո (ընդամենը տասնմեկ բանաստեղծություն): Դրանով Ղ. Ալիշանը 19-րդ դարի հայ քնարերգության մեջ, ինչպես ժա-

մանակին անգլիական հեղափոխական ռոմանտիզմի առաջին բանաստեղծ Բայրոնն անգլիական քնարերգության մեջ, նորություն ու թարմություն ներմուծեց և դարձավ հայ գրականության մեջ գրական նոր ուղղության՝ ռոմանտիզմի սկզբնավորողների և հիմնադիրների համաստեղության կարկառուն ներկայացուցիչներից մեկը: Այդ առումով, միանգամայն հասկանալի է և օրինաչափ, որ սկսած 1840-ական թվականների կեսերից երիտասարդ վարդապետը հետաքրքրվում է Բայրոնի քնարերգությամբ և թարգմանություններ կատարում նրա ստեղծագործություններից:

Ընդհանրապես, շատ անգլիական բանաստեղծներ են թարգմանվել հայերեն, բայց Բայրոնը, թերևս, անգլիացի միակ բանաստեղծն է, որ հայերի նկատմամբ ունեցած իր սիրո և հարգանքի համար միշտ հիշվում և արժանանում է բարձր գնահատականի հայ իրականության մեջ: Մխիթարյանները առաջիններից էին, որ անդրադարձել են Բայրոնին և նրա ստեղծագործությանը: Բանաստեղծի բազմաթիվ ստեղծագործություններ և նրա մասին հոդվածներ տեղ են գտել Մխիթարյանների հրատարակած գրքերում, ժողովածուներում և գրական հանդեսներում: Բայրոնի երկերը հայերեն թարգմանությամբ հրատարակվել են ավելի քան հարյուր անգամ: Դրանք թարգմանել են քառասունից ավելի հայ գրողներ և թարգմանիչներ:

Ղևոնդ Ալիշանը Բայրոնի ստեղծագործությունների առաջին թարգմանիչներից է (եթե ոչ առաջինը): Այսպես, «Բազմավեպ» կիսամսյա հայագիտական հանդեսի հիմնադրումից երեք տարի անց, դեռևս 1846-ին, դրա էջերում հանդիպում ենք մի բանաստեղծության, որի ոչ հեղինակը, ոչ էլ թարգմանիչը նշված չեն¹: Առաջին իսկ ընթերցումից զգացվում է, որ դա մի հատված է Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմից, իսկ ավելի մանրամասն ուսումնասիրությունից պարզվում է, որ այդ բանաստեղծությունը վերոհիշյալ պոեմի չորրորդ նվագի 153-159 իննյակներն են՝ Ղ. Ալիշանի թարգմանությամբ, որոնք աննշան փոփոխություններով ընդգրկվել են Մխիթարյանների հետագա հրատարակություններում: Փաստորեն, դա, ինչպես նաև նույն թվականին «Ազգասեր» շաբաթաթերթում տպագրված Բայրոնի «Միայնակություն» (“Solitude”)

¹ Տե՛ս «Սուրբ Պետրոս ի Հռոմ», «Բազմավեպ», 1846, № 16, էջ 247-248: Ի դեպ, համաձայն Մխիթարյան միաբանության Կանոնադրության միաբանության յուրաքանչյուր անդամ, անկախ իր կատարած գործից ու դիրքից, իրավունք չունեն տարբերվելու մյուսներից, ինչի հետևանքով «Բազմավեպի» հրատարակման առաջին տարիներին այնտեղ զետեղված նյութերից ոչ մեկն ստորագրված չէր:

բանաստեղծության թարգմանությունը¹ (ի դեպ, այստեղ նույնպես չի նշվել ոչ հեղինակը, ոչ թարգմանիչը, բայց, ի տարբերություն առաջին բանաստեղծության, հայ մամուլում բազմիցս արձանագրվել է, որ Բայրոնի այդ բանաստեղծությունը թարգմանել է հայ գրող, թարգմանիչ և հրատարակախոս Մեսրոպ Դավթի Թադիադյանը (1803-1858)²), հայ մամուլում Բայրոնի ինքնուրույն ստեղծագործության առաջին հրատարակությունն է (հայերենից անգլերեն նրա որոշ թարգմանությունների նմուշներ վարժությունների տեսքով ընդգրկվել են դեռևս 1832-ին հրատարակված «Հայերեն-անգլերեն քերականություն» ձեռնարկում³), ընդ որում դրանցից որևէ մեկին գերակայություն չենք կարող տալ, քանի որ թե՛ «Բազմավեպի», թե՛ «Ազգասերի» այդ համարների վրա նշված է նույն ամսաթիվը՝ «15 օգոստոսի»:

Միևիթարյանները ընդհանրապես մեծ տեղ էին տալիս թարգմանություններին: Մեր ունեցած տվյալներով⁴ Բայրոնի ստեղծագործություններից Ալիշանի կատարած թարգմանությունները տեղ են գտել միայն Միևիթարյան մամուլի էջերում: Այստեղ ժամանակագրական կարգով դիտարկենք Բայրոնի ստեղծագործությունների այն թարգմանությունները, որոնք պատկանում են Ալիշանի գրչին:

1852-ին Վենետիկում լույս է տեսնում «Ծաղկաքաղ քերթողաց անգղիացուց» ժողովածուն» (անգլերեն և հայերեն)⁵, որտեղ, ի թիվս այլ ստեղծագործությունների, տեղ են գտնում նաև Բայրոնի որոշ ստեղծագործություններ: Ժողովածուում «Լօրտ Պայրընի Քերթուածք» խորագրով տեղ են գտել (բնագրով և հայերեն թարգմանությամբ) «Կոտորած բանակին Սենքերիբայ» («The Destruction of Sennacherib»), «Ուղերձ առ Ովկիանոս» («Address to the Ocean»), «Ի Վադերլու» («*On Waterloo*»), «Առ ժամանակ» («To Time»), «Տաղ երգեալ ի շանթաձիգ մրրկի» («Stanzas Composed During a Thunder-Storm») և «Տաճար Ս. Պետրոսի» («Church of St. Peter») բանաստեղծությունները: Դրանցից առաջինը «Հրեական մեղեդիներ» շարքից է,

¹ Տե՛ս «Միայնակութիւն», «Ազգասեր» (Կալկաթա), 1846, թիւ 53, էջ 8:

² Տե՛ս, օրինակ, Ս. Ա. Շտիկյան, «Հայ նոր գրականության ժամանակագրություն. 1801-1850», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1973, էջ 286: - Ս. Դ. Թադիադյան. «Գեղարվեստական երկեր», Հայպետհրատ, Երևան, 1965, էջ 385:

³ Տե՛ս P. Paschal Aucher, «A Grammar Armenian and English», Venice, of St. Lazarus, 1832.

⁴ Տե՛ս **Ա. Բեքարյան**, «Բայրոնի երկերի հայերեն հրատարակությունները», «Կանթեղ» - գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2001, № 4, էջ 178-193:

⁵ Տե՛ս «Beauties of English Poets» – «Ծաղկաքաղ քերթողաց անգղիացուց», Venice, In the Island of S. Lazzaro, 1852.

իսկ երկրորդը, երրորդը և վերջինը հատվածներ են «Չայլո Հարոլդի ուխտագնացությունը» պոեմից (համապատասխանաբար՝ չորրորդ, երրորդ և չորրորդ նվագներից), որը գրված է սպենսերյան տներով՝ իննյակներով¹: Ցավոք, այդ բանաստեղծությունների թարգմանիչները չեն նշվել: Սակայն, մեր կարծիքով, կասկածից վեր է, որ դրանք թարգմանել է Ղևոնդ Ալիշանը: Դրանում համոզվելու համար բավական է «Չայլո Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ նվագի վերոհիշյալ երկու հատվածները՝ 178-184 («Ուղերձ առ Ովկիանոս») և 153-159 («Տաճար Ս. Պետրոսի») իննյակները համեմատել Մխիթարյանների հետագա հրատարակությունների հետ, որտեղ զետեղվել են այդ հատվածները (ՃՀԸ-ՃՁԲ և ՃԾԳ-ՃԾԹ իննյակներ), և նշվել է թարգմանիչը՝ Ղ. Ալիշան: Պարզվում է, որ չնայած հետագա հրատարակություններում կան որոշ, հիմնականում խմբագրական բնույթի, փոփոխություններ, թարգմանության կառուցվածքը, ոճը և արվեստն ընդհանուր առմամբ նույն ձեռագիրն ունեն: Բացի դրանից, 1974-ին «Հայ ընտանիք» ամսագրում զետեղված մի անստորագիր հոդվածից (հայերեն և անգլերեն)² տեղեկանում ենք (մեր կարծիքով տեղեկությունը միանգամայն հավաստի է), որ Ղ. Ալիշանը թարգմանել է Բայրոնի «քանի մը քնարերգութիւններ, որոնք ամփոփուած են մէկ հատորի մէջ եւ լոյս տեսած՝ 1870-ին»³: Այստեղ խոսքը “Lord Byron’s Armenian Exercises and Poetry” ժողովածուի⁴ մասին է (նշված հոդվածի անգլերեն տարբերակում բերված է «մէկ հատորի մէջ ամփոփուած» նյութերի, այդ թվում և բանաստեղծությունների լրիվ ցանկը), որի մեջ համարյա անփոփոխ զետեղված են «Ծաղկաքաղում» ընդգրկված Բայրոնի բոլոր (թվով՝ վեց) բանաստեղծությունները:

Շատ հաճախ նույն ստեղծագործությունը թարգմանել են տարբեր հեղինակներ՝ թե՛ Մխիթարյաններ, թե՛ այլ թարգմանիչներ: Այսպես, օրինակ, 1858-ին ծովին նվիրված մի քանի բանաստեղծությունների շարքում «Բազմավեպում» լույս է տեսնում մի հատված «Չայլո Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ նվագից (178-184 իննյակները) «Առ Ովկիան» վերնագրով⁵, իսկ 1922-ին այդ հատվածը Հ. Մասեհյանի թարգ-

¹ Անգլիացի բանաստեղծ Էդմոնդ Սպենսերը (1552-1599) տաղաչափության մեջ ավանդական ութնյակի փոխարեն մտցրել է ինը տողանոց տուն:

² Տե՛ս «Լորտ Պայրըն հայ գրականութեան մէջ» (անստորագիր), «Հայ ընտանիք», 1974, № 11-12, էջ 8-11:

³ Նույն տեղում, էջ 8:

⁴ Տե՛ս “Lord Byron’s Armenian Exercises and Poetry”, Venice, In the Island of S. Lazzaro, 1870 and 1907 (in English and Armenian). Այս ժողովածուն վերահրատարակվել է 1907-ին:

⁵ Տե՛ս Բայրոն, «Առ Ովկիան», «Բազմավեպ», 1858, № 6, էջ 173-174:

մանությամբ հրատարակվում է Վիեննայում լույս տեսնող «Արեգ» գրական-գիտական ամսագրում «Ովկիանոսին» վերնագրով¹: Առաջին թարգմանության մեջ, որտեղ չի նշված թարգմանիչը, պահպանվել է բնագրի կառուցվածքը (իննյակները թարգմանության մեջ նույնպես մնացել են իննյակներ), իսկ երկրորդ թարգմանության մեջ այն խախտվել է (իննյակները հիմնականում թարգմանվել են 10-11 տողով, իսկ մեկական իննյակ նույնիսկ 12 և 13 տողով): Առաջին թարգմանությունը պատկանում է Ղ. Ալիշանին: Դրանում մենք համոզվում ենք, երբ այն համեմատում ենք Ղ. Ալիշանի թարգմանությամբ «Չայլո Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ նվագի հետագա հրատարակություններում² զետեղված համապատասխան հատվածի հետ: Համեմատությունից պարզվում է, որ պոեմի չորրորդ նվագի առանձին գրքով լույս տեսած տարբերակում կան չնչին, շատ աննշան փոփոխություններ և շտկումներ: Այսպես, օրինակ, 1858-ի հրատարակության մեջ 178-րդ իննյակի առաջին տողում բերված «անտառք անմարդաձայնք եւ անկոխք» արտահայտությունը 1860-ի հրատարակության մեջ փոխարինվել է «անտառք անճանապարհք եւ անկոխք» արտահայտությամբ, որը, նախ, ավելի լավ է հնչում հայերեն և, երկրորդ, ավելի մոտ է բնագրին (անգլերեն՝ *pathless woods*): Այնուհերև, 182-րդ իննյակի «Եւ բըռնաբար զահ իւրեանց արկանէին թագազարդ. // Յեկաց խըժից եւ ստըրկաց նըւաճեցան ափունքն այն» երկտողը փոխարինվել է «Որպես յետոյ արկին անդ բըռնաւորաց ձեռք աղարտ: // Ափունքն այն խուժք եւ սըտրուկք նըւաճեցան յօտարաց.» երկտողով, որն արտահայտելով նույն միտքը, կարծես, հնչում է ավելի անկաշկանդ (անգլերեն՝ *And many a tyrant since; their shores obey // The stranger, slave, or savage; their decay*), և այդպիսի մի քանի ոչ էական փոփոխություններ ևս: Դա միանգամայն բնական է և բացատրելի, քանի որ այնպիսի մի քնարերգու, ինչպիսին էր Ղ. Ալիշանը, նոր, այն էլ՝ պոեմի մի ամբողջ նվագի, հրատարակության ժամանակ չէր կարող չանդրադառնալ թեկուզ իր իսկ թարգմանությանը և կատարել որոշ հղկումներ, խմբագրական ուղղումներ և շտկումներ: Միաժամանակ նշենք, որ «Չայլո Հարոլդի ուխտագնացությունը» պոեմն ամբողջությամբ հայերեն հրատարակվել է միայն 1965-ին՝ Հենրիկ Սևանի թարգմանությամբ³, որտեղ

¹ Տե՛ս «Ովկիանոսին. Բայրոնի »Չայլո Հարոլդ»ից», թարգմ. Յովհաննէս Մասեհեան, «Արեգ», թիւ 5, էջ 287-289:

² Տե՛ս **Բայրոն**, «Բտալիա» («Չայլո Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ երգը), թարգմ. Ղ. Ալիշան, Վենետիկ, Ս. Ղազար, 1860, 1889, 1891, 1901 (անգլերեն և հայերեն):

³ Տե՛ս **Բայրոն**, «Երկերի ժողովածու», «Հայաստան», Երևան, 1965, էջ 99-275:

թարգմանիչը նույնպես պահպանել է հեղինակի ընտրած կառուցվածքը՝ իննյակները:

1860-ին Վենետիկում լույս է տեսել Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ երգը՝ «Իտալիա» վերնագրով (անգլերեն և հայերեն)¹: Պոեմի այդ նվագի թարգմանությունը կատարել է Բայրոնի հայ առաջին թարգմանիչներից մեկը՝ հայ նոր քնարերգության նա-հապետ Ղևոնդ Ալիշանը, ով հիացել է Բայրոնով և մեծաբել նրան՝ անվանելով ոչ միայն դարի նշանավոր բանաստեղծ, «այլ եւ առաջին ի նոսին վկայեալ է ի յոլովից գիտնոց»²: Չնայած դրան, Ղ. Ալիշանը համա-միտ չէր Բայրոնի պոեմում տեղ գտած թախծամոլության ու մելամաղ-ձության արտահայտություններին և իր թարգմանության մեջ դրանք կամ զեղչել է, կամ իր վերաբերմունքն է ցույց տվել ծանոթագրությունների և մեկնաբանությունների միջոցով: Այնուհետև այդ թարգմանությունը նույ-նությամբ վերահրատարակվել է 1889-ին, 1891-ին և 1901-ին: Նշենք նաև, որ այս պոեմին, բացի Ղ. Ալիշանից, անդրադարձել են ևս հինգ հայ թարգ-մանիչ՝ Վ. Անտոնյանը, Լեոնցը, Հ. Միրզայանը, Հ. Թումանյանը և Հ. Սևանը:

Ինչպես արդեն նշել ենք, 1870-ին Մխիթարյանները հրատարակում են «Լորդ Բայրոնի հայերեն վարժությունները և բանաստեղծությունները» (անգլերեն և հայերեն) ժողովածուն, որտեղ գրեթե նույնությամբ (փոխվել են հատ ու կենտ բառեր) արտատպվել են 1852-ին հրատարակված «Ծաղ-կաքաղ քերթողաց անգղիացուց» ժողովածուում գետեղված՝ Բայրոնին վերաբերող նյութերն ամբողջությամբ, որոնց ավելացվել է ընդամենը չորս բանաստեղծություն՝ «Ի մահ օրիորդի միոյ քեռորդի քերթողին եւ սիրելի յոյժ նմա» (“On the Death of a Young Lady”), «Առ Դուքսն Տորսեդ» (“To the Duke of Dorset”), «Արտասուք» (“The Tear”) և «Յետին սողք Պայրնի» (“On This Day I Complete My Thirty-sixth Year”): Դրանցից առաջին երեքը «Պարապության ժամեր» շարքից են: Թեև այդ ժողովածուում գետեղված բանաստեղծությունների թարգմանիչները նույնպես նշված չեն, վստահորեն կարող ենք պնդել, որ դրանք թարգմանել է Ղ. Ալիշանը, ընդ որում, վերջին բանաստեղծության թարգմանության տեքստը բառացիո-րեն նույնն է, ինչ որ տպագրված է 1905-ին «Բազմավեպում», որտեղ թարգմանիչը նշված է: Վերոհիշյալ ժողովածուն նույնությամբ արտա-տպվել է 1907-ին:

¹ Տե՛ս “Lord Byron, Childe Harold’s Pilgrimage”, Canto the fourth, Venice, In the Island of S. Lazarus, 1860. – Բայրոն, «Իտալիա», թարգմ. Ղ. Ալիշան, Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1860:

² Նույն տեղում, Ազդ:

1880-ին Մխիթարյանները հրատարակում են օտարագգի բանաստեղծների ստեղծագործություններից կատարված թարգմանությունների ժողովածուի երկրորդ մասը, որտեղ «Նկարագրականք» խորագրի տակ զետեղվել են նաև Բայրոնի երկու բանաստեղծությունները՝ «Գերեզմանք հանձարեղացն յԻտալիա» և «Յլամարտ ի Սպանիա» վերնագրերով¹։ Այդ ժողովածուն նույնությամբ վերահրատարակվել է 1883-ին։ Բացի դրանից, նույն 1880-ին հրատարակվել է այդ ժողովածուի համառոտ տարբերակը, որի մեջ տեղ է գտել Բայրոնի վերոհիշյալ բանաստեղծություններից միայն առաջինը², որը մի հատված է Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ (54-60 իննյակներ) նվազից։ Չնայած վերոհիշյալ ժողովածուներում թարգմանիչները նշված են հավաքական անունով (*Մխիթարեան միաբանից*), սակայն ակնհայտ է, որ Բայրոնի այդ բանաստեղծությունը թարգմանել է Ղ.Ալիշանը (տե՛ս 1860-ի հրատարակության ԾԴ-Կ իննյակները)։

«Բազմավեպի» 1905-ի երրորդ համարում լույս է տեսնում Բայրոնի «Յետին տողք Պայրընի» («On This Day I Complete My Thirty-Sixth Year») բանաստեղծությունը (թարգմ. Ղ. Ալիշան), որի վերնագրից անմիջապես հետո թույլ է տրվել անճշտություն՝ գրվել են «ի փետրուարի, 1824» բառերը (ի դեպ, այդ անճշտությունը բացակայում է բանաստեղծության 1870-ի, այսինքն՝ հայերեն առաջին հրատարակության մեջ, որտեղ նշված է՝ «ի յունուար, 1824»։ Բացի դրանից, բանաստեղծությունից անմիջապես հետո նշվում է, որ այն անտիպ թարգմանություն է։ Դա նույնպես անճշտություն է, քանի որ այն, ինչպես արդեն նշել ենք, դեռևս 1870-ին տեղ է գտել Մխիթարյանների հրատարակած «Լորդ Բայրոնի հայերեն վարժությունները և բանաստեղծությունները» (անգլերեն և հայերեն) ժողովածուում։ Ինչպես հայտնի է, սա Բայրոնի վերջին բանաստեղծությունն է, որը բանաստեղծը գրել է իր ծննդյան երեսունվեցերորդ տարեդարձի օրը՝ 1824-ի հունվարի 22-ին։ Բայրոնի մահվան 100-ամյակի կապակցությամբ՝ «Բազմավեպի» 1924-ի ապրիլյան համարում մի անգամ ևս հանդիպում ենք նրա վերջին բանաստեղծությանը՝ Ղ. Ալիշանի թարգմանությամբ³։ Այստեղ արդեն ուղղված են հանդեսի 1905-ի երրորդ համարում տեղ գտած անճշտությունները. նշվում է, որ բանաստեղծությունը գրվել է «ի

¹ Տե՛ս «Ծաղկաքաղ հատուածք յօտարագգի մատենագրաց», թարգմ. Մխիթարեան միաբանից, մասն երկրորդ. «Քերթուածք», Վենետիկ, ի վանս Ս. Ղազարու, 1880, էջ 132-136։

² Տե՛ս «Համառոտ ծաղկաքաղ հատուածոց ի քերթութեանց օտարագգի մատենագրաց», Վենետիկ, Վանք Մխիթարեանց, 1880, էջ 78-80։

³ Տե՛ս **Բայրոն**, «Այսօր լինիմ ամաց երեսնից եւ վեցից (Յետին Տողք Պայրընի)», թարգմ. Հ. Ղեւոնդ Ալիշան, «Բազմավեպ», 1924, № 4, էջ 119։

յունուար, 1824» և հայերեն տպագրվել է դեռևս 1870-ին Վենետիկում: Մահվանից ընդամենը երեք ամիս առաջ գրված այս բանաստեղծությունը (Բայրոնը գոհվել է 1824-ի ապրիլի 19-ին) լի է անսահման թախիծով ու տխրությամբ: Սակայն այդ տխուր տողերի միջից մեր առջև վեր է հանում Բայրոնի իր համարձակ ոգով, ով պատրաստ է իրեն գոհել հանուն Հունաստանի: Այս բանաստեղծության մեջ Բայրոնը կարծես թե մարգարեաբար գուշակում է իր մոտալուտ մահը:

Ի դեպ, Բայրոնի վերջին՝ «Այսօր լրանում է իմ երեսունվեցերորդ տարին» բանաստեղծության թարգմանությամբ հանդես են եկել տարբեր թարգմանիչներ: Այսպես, այս բանաստեղծության հայերեն թարգմանությունը տպագրվել է «Ազգասերում» (ստորագրված է՝ Օ. Ֆ. 1847, հտ. Դ, № 91, էջ 152), «Մասեաց աղավնի» (թարգմանիչը չի նշվում, 1860, № 12, էջ 197), «Մուրճում» (թարգմ. Հ. Մասեհյան 1905, № 5, էջ 65-66) և «Արագածում» (ստորագրված է՝ Լիւսի, 1926, № 11, էջ 7):

Ալիշանի ստեղծագործության վրա Բայրոնի քնարերգության թողած ազդեցությանը, նրա Բայրոնյան թարգմանություններին անդրադարձել են թե՛ հայ, թե՛ օտարազգի հեղինակներ: Այդ առումով հիշատակենք որոշ աշխատանքներ:

Այսպես, հայ մշակույթի երախտավոր, բանաստեղծ, բանասիրական արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակ Եղիա Փեչիկյանը (1895-1964) 1924-ին «Բազմավեպում» հրատարակած «Լորտ Պայրըն հայոց մէջ» հոդվածում¹ խոսում է նաև Բայրոնի և Ալիշանի մասին, զուգահեռներ անցկացնում նրանց ստեղծագործական գործունեության միջև և նշում առկա զուգադիպությունները. «Հոս սակայն շարք մունինք գեղեցիկ զուգադրութեանց կամ զուգակշռի եզրներու երկու հանճարներու միջև որոնք նոյն դարու արեգակներ են: Նախ անոնց դիրքը նոյն դարուն մէջ. Երկուքն ալ գերահռչակ հանճարներ. յետոյ անոնց փոխադարձ պանդխտութիւնը. թո՛ղ խօսի ինքն Ալիշան. «(ի Վենետիկ) յորում և մասն ինչ երգոցս (Իտալիա) յօրինեալ է ի բանաստեղծէն և ԳԼԽՈՎԻՆ ի կղզւոջ մենաստանի՝ որում նա յաճախ այց ելանէր՝ մինչդեռ պանդուխտ իւր (Հարոլդ ասպետ – Childe Harold) թափառէր տակաւին յաներևոյթ հրապարակս մտաց իւրոց այս ամենայն... մերս իսկ նժդեհութիւն (Հ. Ալիշան ինքնին կ'ակնարկէ նմանութիւնը) ի հայրենիս անդր քերթողին»: Ուրեմն ինչ որ Լորտ Պայրըն պանդխտութեամբ ի Վենետիկ, Ս. Ղազարու մէջ կը շարադրէր, նոյնը Հ. Ալիշան յԱնգղիա, ի Լոնտրա իր պանդխտութեան մէջ կը

¹ Հ. Եղիա Փեչիկեան, «Լորտ Պայրըն հայոց մէջ», «Բազմավեպ», 1924, № 4, էջ 157-160:

հայացներ»¹, - գրում է Ե. Փեչիկյանը: Հոգիվածագիրը նշում է նաև հաջորդ գուգադիպությունը, դա «նոյն մեծ քերթողներու փոխադարձ հայ և անգլիերէն լեզուները սորվիլն է և երկուքին ալ փոխադարձ դժուարութիւնը. Հ. Ալիշան կըսէ. «ի հայրենիս անդ քերթողին... գտադտուկ օտարութեանս այսպիսեալ իմն կամեցայ սփոփել կամ տանջել ոչ դիրաթափ թարգմանութեամբ». հոս ալ նոյնպէս Հ. Ալիշան կը նշմարէ գուգադիպութիւնը «այնպիսի իմն հնարս հնարեալ և հեղինակին երբեմն արկանէր զանձն ի փորձ և ի տոյժ ուսանել զմերս հայերէն դժուարագիտ բարբառ ի մերում իսկ դրան վանաց», ինչ որ Լորտ Պայրըն ալ յայտնապէս»² նկատում է. «Իմ համոզմամբ հայոց լեզուն <...> դժվարին է, բայց ոչ անհաղթահարելի <...>: Կշարունակեմ ուսումնառությունս»³:

Հայ գրող, թարգմանիչ Խաչիկ Դաշտենցը (1910-1974) իր աշխատության⁴ մեջ առանձին գլուխ է հատկացրել Բայրոնի ազատատենչ քնարերգության խանդավառ երկրպագու Ղ. Ալիշանին (տասնյոթերորդ գլուխը, որը կրում է «Բայրոնը և Ալիշանը» խորագիրը): Ըստ Դաշտենցի, որքան էլ Բայրոնը հայ ժողովրդի ճակատագրով տոգորված բարեկամ լինէր, «այնուամենայնիվ նա կարբոնար էր և նրա շատ երկերը միանգամայն խորթ, անհասկանալի և նույնիսկ դատապարտելի էին հայ կաթոլիկ միաբանների համար»⁵: Սակայն, ինչպէս իրավացիորեն նշում է Խ. Դաշտենցը, որոշ միաբաններ, և առաջին հերթին բանաստեղծ Ղևոնդ Ալիշանը, համակրանք տածելով իտալական ազգային ազատագրական շարժումների նկատմամբ և «ձայնակցելով դարի առաջավոր մտքերին ու ձգտումներին», կարողացան վեր բարձրանալ կղերական միջավայրից «մինչև կարբոնարիստ Բայրոնի հայրենասիրական և մարդասիրական լայն գաղափարներով տոգորված երկերը հասկանալու և գնահատելու աստիճանը»⁶: Իր աշխատության մեջ Խ. Դաշտենցն անդրադառնում է «Ալիշանին Բայրոնի հետ կապող» կարևոր օղակներին: Նախ, ինչպէս նշում է Դաշտենցը, Ղևոնդ Ալիշանը ոգևորվել է Վենետիկյան հեղափոխությամբ, հիշել իր հարազատ ժողովրդի ճակատագիրը և իր հայրենասիրական «բանաստեղծությունների զգալի մասը հորինել է իտալական շարժումների ազդեցության տակ»: Իսկ «այդ շարժումների հետ ժամանակին մեծ առնչություն» էր ունեցել Բայրոնը և միանգամայն բնական

¹ Նույն տեղում, էջ 158-159:

² Նույն տեղում, էջ 159:

³ **Th. Moore**, "The Life, Letters and Journals of Lord Byron, London, John Murray, 1908", p. 333.

⁴ Տե՛ս **Խաչիկ Դաշտենց**, «Բայրոնը և հայերը», Հայպետհրատ, Երևան, 1959:

⁵ Նույն տեղում, էջ 131:

⁶ Նույն տեղում, էջ 132:

է, որ «նրա որոշ երգերը պետք է ոգևորեն Ալիշանին և շարժեն նրա հիացմունքը»¹: Երկրորդ, Բայրոնի բանաստեղծություններում խորապես զգացվում էր տարազիր բանաստեղծի շունչը: Իսկ Ալիշանը, ում «հոգին մաշվում էր Հայաստանի կարոտից», ինչպես և Բայրոնը նույնպես տարազիր էր և նրա նման դեգերում էր օտար երկինքների տակ»²: Երրորդ, Բայրոնին և Ալիշանին մերձեցնող օղակը «դա նրանց բանաստեղծական տարերքի նմանությունն է»³: Իրոք, երկուսն էլ օժտված էին վառ երևակայությամբ, հափշտակված էին բնության գեղեցկությամբ, որոնց արտացոլումը մենք տեսնում ենք նրանց երգերի մեջ: Եվ, վերջապես, չորրորդ, «Ալիշանին Բայրոնին կապող օղակներից մեկը նրա համայնապարփակ միտքն է, որը նրան խիստ սահմանագծում էր կղերական միջավայրից»⁴:

Նյու Յորքում անգլերեն լույս տեսնող «Արարատ» հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական եռամսյա հանդեսի 1967-ի ամառային համարում տպագրվում է Աննա Պաուլուչիի «Հայաստան՝ Վենետիկի ջրերի վրա»⁵ հոդվածը. որտեղ հեղինակը մանրամասն քննարկում է Բայրոնի և Մխիթարյանների գիտական համագործակցությունը, ընդգծում, որ «Բայրոնը «Չայլդ Հարոլդի» չորրորդ նվագը գրել է Ս. Ղազարում, ծովախորշին նայող զառիթափում գտնվող ձիթենիների տակ, որտեղ նստում էր ժամերով՝ զրուցելով վանականների հետ կամ էլ հիանալով տեսարանով»⁶, և անդրադառնում է այն փաստին, որ Բայրոնի այլ բանաստեղծությունների հետ մեկտեղ վերոհիշյալ պոեմի այդ նվագը հայերեն է թարգմանել Ղևոնդ Ալիշանը:

Հայաստանի ազգային պատկերասրահում պահպանվում է հայ ժողովրդի մեծ գավակ, աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու (1817-1900) «Բայրոնի այցը Մխիթարյաններին Սբ. Ղազար կղզում» նկարը, որտեղ Հ. Այվազովսկին պատկերել է, թե ինչպիսի ջերմությամբ են դիմավորում Ս. Ղազար եկած ու ափ իջած անգլիացի մեծ բանաստեղծին ու ազատության մեծ երգչին Մխիթարյան միաբանության ավագ հայրերը՝ Ղևոնդ Ալիշանի գլխավորությամբ: Չնայած Բայրոնի՝ Սուրբ Ղազար այցելության ժամանակ Ղ. Ալիշանը դեռ չէր ծնվել, բայց ինչպես իրավացիորեն նկատում է հայ արվեստի անխոնջ

¹ Նույն տեղում, էջ 133:

² Նույն տեղում, էջ 138:

³ Նույն տեղում, էջ 139:

⁴ Նույն տեղում, էջ 140:

⁵ **Anne Paolucci**, “Armenia on the Waters of Venice”, “Ararat”, 1967, № 31, Summer, pp. 3-7.

⁶ Նույն տեղում, էջ 7:

մշակ, «թանգարանի զինվոր» (Մարտիրոս Սարյանի բնութագրմամբ) Շահեն Խաչատրյանը, «նկարիչը հատուկ նպատակով» է պատկերել նաև 19-րդ դարի մեծ հայորդի, գիտնական և բանաստեղծ Ղևոնդ Ալիշանին¹, դառնալով ժամանակավրիպում է, այլ «սքանչելի մտահղացում՝ մեկ նկարի մեջ խտացնել հայ տարբեր սերունդների ներկայացուցիչներին, իր և նրանց ազատաբաղձ իդեալը»², քանի որ «հայ ժողովուրդը սերնդեսերունդ (ոչ միայն բայրոնյան շրջանում) երազել է մայր երկրի ազատագրումը, կոփվել հայրենասիրական ոգով: Ալիշանը այդ ոգու խորհրդանիշներից է, և նա ընդգրկվել է Այվազովսկու մտահղացման մեջ»³:

Եզրափակելով՝ նշենք կյանքի վերջին տարում հայ երիտասարդությանն ուղղված Ալիշանի կոչն ու պատգամը. «Շրջահայաց եղեք, սիրեցե՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և սիրեցեք միմյանց»⁴: Մեծ Նահապետի այդ հորդորն այսօր էլ շատ արդիական է:

АНАИТ БЕКАРЯН

Кандидат филологических наук

РЕЗЮМЕ

БАЙРОН И АЛИШАН

Ключевые слова: Байрон, Байронизм, Алишан, романтизм, Мхитаристы, “Паломничество Чайльда Гарольда”, первый переводчик, армянская лирика, английская лирика, свободолюбие.

Патриарх новой армянской лирики Гевонд Алишан является первым переводчиком произведений Байрона, которого он называл величайшим поэтом эпохи. Лирика Байрона в переводе Г. Алишана издавалась на страницах периодики мхитаристской конгрегации. В 1852 году в Венеции был издан сборник “Избранное из английской литературы”, в который вошли ряд произведений Байрона. В 1870 году вышел в свет сборник (переизданный в 1907 г.) “Избранная лирика: переводы лорда Байрона из армянской литературы”, в который вошли произведения Байрона в переводе Гевонда Алишана. В 1860 году в Венеции была опубликована четвертая песнь из поэмы Байрона “Паломничество Чайльд-Гарольда”, озаглавленная “Италия”, и в этом издании был представлен также армянский перевод данной песни, подготовленный Гевондом Алишаном и переизданный в 1884, 1891 и 1901 гг. Ряд

¹ **Տաշն Խաչատրյան**, “Այվազովսկի (1817-1900): Ապոստոլ միա և գումանիզմ” (Կ 190-լետիո սո ճնյա ըոճճենի քուճոճիկ; ռա ռուսսկոմ և արմյանսկոմ յազաք), Քրինտինֆո, Երևան, 2008, ս. 79.

² Նույն տեղում:

³ **Շահեն Խաչատրյան**, «Թանգարանի զինվորը», Փրինթինգտոն, Երևան, 2007, վերատպված՝ 2014, էջ 94:

⁴ **Ավետիք Բահակյան**, «Ղևոնդ Ալիշան», «Ալիշանը ժամանակակիցների հուշերում» ժողովածու, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1974, էջ 223:

армянских и зарубежных авторов, занимавшихся исследованием творчества Байрона, отмечали, какое огромное влияние оказала поэзия Байрона на произведения Алишана, равно как и на его переводы.

ANAHIT BEKARYAN
Candidate of Philology

ABSTRACT

BYRON AND ALISHAN

Keywords: Byron, Byronism, Alishan, Romanticism, Mechitarists, “Childe Harold’s Pilgrimage”, the first translator, Armenian poetry, English poetry, love of freedom.

Ghevond Alishan, the father of Armenian poetry, was Byron’s first translator, who considered Byron to be the greatest poet of his epoch. Alishan had his translations of Byron’s poetry published in the periodicals of the Mechitarist Congregation. In 1852, “Beauties of English Poets” comprising Byron’s poetry got published in Venice. It was followed in 1870 by “Selected poetry: Lord Byron’s translations of Armenian literature” comprising Alishan’s translations of Byron’s poems. As the fourth canto from Childe Harold’s Pilgrimage – Italy was published in Venice, in 1860, one could also find there Alishan’s Armenian translation of the same canto later republished in 1884, 1891 и 1901. The Armenian and foreign authors who studied Byron’s work made a reference to the huge impact Byron’s poetry had on Alishan’s work and his translations.

REFERENCES

1. Aucher, P. “A Grammar Armenian and English”, Venice of St. Lazarus, 1832.
2. Bayron, “Ar Ovkian”, “Bazmaveb”, 1858, N6, ej 173-174.
3. Bayron, “Aisor linem amats eresnits ev vetsits (Etin toghk Baireni)”, targm. H. Ghevond Alishan, “Bazmaveb”, 1924, N4, ej 119.
4. Bayron, “Erkeri zhoghovadsu”, “Hayastan”, Erevan, 1965, ej. 99-275.
5. Bayron, “Italia” (“Chaild Haroldi ukhtagnatsutyune”poemi chorrord erge), targm. Gh.Alishan, Venedik, S. Ghazar, 1860, 1889, 1891, 1901 (angleren ev hayeren).
6. Beauties of English Poets” –Dzaghkakagh kertoghats angghiatstvots”, Venice, In the Island of S. Lazzaro, 1852.
7. Bekaryan, A. “ Bayroni erkeri hayeren hratarakutyunnere”, “Kantegh” gitakan hodvadsneri zhoghovadsu, “Asoghik” hratarakchutiun, Erevan, 2001, N4, ej 178-193.
8. Dashtents,Kh. “Bayrone ev hayere”, Haypethrat”, Erevan, 1959.
9. Dzaghkakagh hatvadzk otarazgi matenagrats’, targm. Mkhitarean miabanits, masn erkrord. “Kervadzk’, Venedik, i vans S. Ghazaru, 1880, ej 132-136.
10. “Hamarot dzaghkakagh hatvadzots i kertuteants otarazgi matenagrats”, Venedik, Vank Mkhitareants, 1880, ej 78-80.
11. H. Eghia Pechikian, “Lord Bayren hayots mech”, “Bazmaveb”, N4, ej 157-160.
12. Isahakian, A. “Ghevond Alishan, “Alishane zhamanakakitsneri husherum “ zhoghovadsu, “Hayastan” hratarakchutiun, Erevan, 1974, ej 223.

13. Khachatryan, Sh. "Aivazovski (1817-1900), Apostol mira i gumanizma" (K 190 letiyu so dnya rozhdeniya khudozhnika; na russkom i armyanskom yazykakh), Printinfo, Erevan, 2008, s. 79.
14. Khachatryan, Sh. "Tangarani zinvore", Printinfo, Erevan, 2007, veratpvads 2014, ej 94.
15. Lord Bayren hay grakanutyan mech (anstoragir), "Hay entanik" 1974, N11-12, ej.8-11.
16. Lord Byron`s Armenian exercises and Poetry", Venice, in the island of S. Lazzaro, 1870 and 1907 (in English and Armenian).
17. "Miaynakutian", "Azgaser" (Kalkata),1846, tiv 53, ej 8.
18. Moore, Th. "The Life, Letters and Journals of Lord Byron", London, John Murray, 1908, p. 333.
19. Ovkianosin, Bayroni "Chaild Harold"its, targm. Hovhannes Masehyan, "Areg", tiv 5, ej 287-289.
20. Paolucci, A. "Armenia on the Waters of Venice", "Ararat", 1967, № 31, Summer, pp. 3-7
21. Pushkin, A.S. Erker, hing hatorov, hator I. "Banasteghsutiunner", Erevan, Haypethrat, 1954. ej 258-259 (targm. N. Zaryan).
22. Surb Petros i Hrovm, "Bazmaveb", 1846, N 16, ej 247-248.
23. Shtikyan, S. "Hay nor grakanutyan zhamanakagrutian 1801-1850, Haykakan SSH GA hratarakchutian, Erevan,1973, ej 286. M. D. Taghiadyan."Gegharvestakan erker", Haypethrat, Erevan, 1965, ej 385.

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՕՍԻԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Բանալի բառեր՝ Ալիշան, Եվրոպական գրականություն, ազդեցություն, նախառոմանտիզմի շարժում, Օսիան և օսիանականություն, գործընթաց, բարդ, քնարականություն, մեղանխուրիկ տրամադրություն, բանահյուսություն:

Օսիանականությունը հումանիտար գիտությունների՝ մշակութաբանության, արվեստի պատմության, գրականագիտության մեջ կայուն գաղափար է: Էթիմոլոգիականորեն, «օսիականություն» տերմինը կապված է «Օսիանի պոեմների» գլխավոր հերոսի՝ որպես կելտ բարդ Օսիանի անվան հետ: «Օսիանիզմ» հասկացությունը հայտնվեց գիտական շրջանառության մեջ, առաջին հերթին գրականագիտության մեջ, որի շրջանակներում այն բավականաչափ ուսումնասիրվեց և բավականին հաճախ դիտարկվում էր գեղագիտության, ինչպես նաև գրականության և հնագիտության բնագավառի միջգիտակարգային ուսումնասիրություններում:

Ենթադրվում է, որ Օսիանի երգերը ներկայացնում են լեոնային Շոտլանդիայի հին ազդեցիկ գերդաստանային խմբերից մի ներկայացուցչի՝ Ջեյմս Մակֆերսոնի (1736-1796) հանճարեղ գրական հնարանքը: Նա ծնվել է Շոտլանդիայի հյուսիսային շրջանում գտնվող Ռուրվեն գյուղում: Լեոներում ապրողների մեծամասնության նման ընտանիքը լավ չէր ապրում: Շոտլանդիայի մի քանի համալսարաններում սովորելուց հետո նա սկսեց աշխատել որպես գյուղական ուսուցիչ, հետագայում աշխատանքի անցավ որպես դաստիարակ և մինչույն ժամանակ զբաղվեց գրական աշխատանքով, քանի որ նա իրեն միշտ պատկերացնում էր որպես բանաստեղծ և բանաստեղծություններ էր գրում սկսած պատանեկության տարիներից: Լինելով դայակ շոտլանդական արիստոկրատական ընտանիքում, Մակֆերսոնին հաջողվում է ծանոթանալ շոտլանդական էլիտայի ներկայացուցիչների հետ, ովքեր նպաստել են բանաստեղծի հետագա առաջխաղացմանը:

Մակֆերսոնի անվան և «Օսիանի երգերի» ժողովրդականացման հարցում կարևոր դեր խաղացին Շոտլանդիայի «Ընտրյալ հասարակության» ղեկավարները: Վերջինս իրենից մի տեսակ ակումբ էր ներկայացնում, որում ընդգրկված էին փիլիսոփաներ, պատմաբաններ, տնտեսագետներ, գրողներ, որոնք, ի վերջո, դարձան Շոտլանդիայի լուսավո-

րության կարևոր դեմքեր: Հենց այս գիտնականներին էր ոգեշնչում շոտլանդական բանահյուսության ավանդույթները վերածնելու գաղափարը, և հենց նրանք էին, որ Մակֆերսոնին հուշեցին գրել «Օսիանի երգերը»:

«Օսիանի երգերի» ժողովրդականացման գործում կարևոր դեր խաղաց Կրոնի նախարար և ճարտասանության պրոֆեսոր Հյու Բլերը, որը շարունակեց աջակցել Մակֆերսոնին, նույնիսկ այն ժամանակ, երբ հանրությունը համարյա բացահայտեց «Օսիանի երգերը» պոեմի գրական հնարանք լինելը: Ինքը՝ Մակֆերսոնը, գերծ չէր հայրենասիրական տրամադրություններից և ձգտումներից: Բացի այդ, նա երագում էր դառնալ հայտնի բանաստեղծ և կարողացավ ազդեցիկ ծանոթների օգնությամբ իրականացնել իր ծրագիրը:

«Օսիանի երգերը» լույս տեսան 1761-1765 թվականներին և բաղկացած էին քնարերգաէպիկական պոեմի երկու մեծ հատորներից («Ֆինգալ» և «Թեմորա») և 21 փոքրիկ երգերից՝ կելտական դիցաբանության թեմաներով: Մակֆերսոնը ժողովրդական ավանդույթից վերցրել է միայն հերոսների որոշ անուններ և սյուժետային աննշան մանրամասներ, հետագայում իր աշխատանքը ներկայացնելով որպես 3-րդ դարի շոտլանդական ազգային էպոս, որի հեղինակն էր Կալեդոնիայի (Շոտլանդիայի) Ֆինգալ թագավորի ավագ որդին՝ բանաստեղծ Օսիանը: Նրա բանաստեղծությունները, բարձր գնահատելով իր հոր և նրա համախոհների հերոսական գործերը, պահպանվել էին բանավոր ժողովրդական ավանդույթի մեջ և Շոտլանդիայի լեռնաշխարհի բնիկների կելտերեն (գալերեն) լեզվից Մակֆերսոնի կողմից ռիթմիկ արձակով թարգմանվել էին անգլերեն:

Պոեմի սյուժեի առանցքում շոտլանդացիների և իռլանդացիների ճակատամարտն է՝ սկանդինավյան հոյակապ և խիստ հյուսիսային բնության ֆոնի վրա: Կարելի է ասել, որ բովանդակությունը հիմնականում սահմանափակված է մարտերի և սիրային պատմությունների նկարագրություններով, բայց այն ներկայացվում է կելտական բանաստեղծական ավանդույթների ոգով, շնորհիվ որի ստեղծվում է կելտական հնության վեհաշնորհ փառքի տպավորություն:

«Օսիանի երգերում» տեղ գտած տեսարանների հոյակապ լեռնային լանդշաֆտը, հերոսների վեհ և ազնիվ զգացմունքները, պատմվող իրադարձությունների քնարական գունազարդումը՝ մռայլ և մելանխոլիկ, - այս ամենը համապատասխանում էր դարաշրջանի սենտիմենտալ ճաշակին և ժամանակակիցներից շատերի կողմից խանդավառությամբ էր ընդունվում որպես «հյուսիսային Հոմերոսի» արվեստի առանձնահատկությունների արտացոլում:

Ժողովրդական երգի առանձնահատկությունները նրա տեղային, ազգային ինքնատիպության մեջ հասկանալու համար անհրաժեշտ է տե-

դափռվել այն պատմական և աշխարհագրական միջավայրը, որին նա պարտական է իր ծագմամբ:

Մեծ Բրիտանիայի պատմության մեջ 18-րդ դարը նշանակալի ժամանակաշրջան է, որը նշանավորվում է տարբեր իրադարձություններով և փոփոխություններով, որոնք ազդել են քաղաքական համակարգի, հասարակական գիտակցության և մշակույթի վրա: Առանցքային պահը անգլո-շոտլանդական միության ստորագրումն էր, որը տեղի ունեցավ 1707-ի մայիսի 1-ին: Երկու կողմերի համար այս միությունը շահեկան դարձավ: Շոտլանդիայի համար Անգլիայի հետ միավորումը (անդամակցումը) նշանակում էր զարգացման բացը հաղթահարելու հնարավորություն: Միևնույն ժամանակ, քաղաքական անկախության կորուստը շոտլանդական հասարակության կողմից դիտարկվում էր որպես ազգային ինքնության կորստի սպառնալիք: Այս իրավիճակի արդյունքում, կարելի է ասել, 18-րդ դարում տեղի ունեցավ շոտլանդական հասարակության շրջանակներում բողոքական մշակութային վերելք: Կրթական բարեփոխումները հանգեցրին Շոտլանդիայի Լուսավորական շարժման առաջացմանը: Հայտնի գիտնականներ, ինչպիսիք են Դ. Հյումը, Ա. Միլթը, Ա. Ֆերգյուսոնը, Ֆ. Հաթչսոնը և այլք, դուրս են եկել Շոտլանդիայի համալսարաններից:

Շոտլանդական Լուսավորությունն ուներ իր առանձնահատկությունները և ներկայացնում էր յուրահատուկ գաղափարների մի շարք, որոնք առնչվում էին պատմության, փիլիսոփայության, տնտեսագիտության հետ: Շոտլանդացի լուսավորիչների գաղափարներն ու գիտական տեսությունները ազդեցին ամբողջ եվրոպական մայրցամաքի վրա: Թվում է, թե շոտլանդական Լուսավորության ֆենոմենը կայանում է նրանում, որ շոտլանդացիները տեղյակ էին բրիտանացիների կողմից իրենց կախվածությունից և փորձում էին ընդգծել իրենց սեփական նշանակությունը, եզակիությունը և ցույց տալ իրենց մշակութային ավանդույթների հնությունը, առաջնայնությունը:

Լուսավորության գաղափարախոսությունն իր հետքն է թողել 18-րդ դարի Մեծ Բրիտանիայի մշակույթի և արվեստի վրա: Այնուամենայնիվ, 18-րդ դարի կեսերից բրիտանական հասարակության մեջ սկսեցին հայտնվել այլ միտումներ՝ տարբերվելով Լուսավորությունից: Ավելի ուշ, այս հակումները մշակութաբանների կողմից անվանվել են նախառոմանտիկական տերմինով, ինչը նշանակում է անցումային փուլ՝ 19-րդ դարի ռոմանտիզմի և Լուսավորության գեղարվեստական ավանդույթների միջև: Նախառոմանտիզմի ֆենոմենը այս կամ այն ձևով իրեն դրսևորեց եվրոպական մայրցամաքի գրեթե բոլոր տարածքներում, բայց ավելի վաղ և պայծառ էր Մեծ Բրիտանիայում: Նախնառաջ, նախառոմանտիկ

հակումները արտահայտվեցին միջնադարի նկատմամբ հետաքրքրության վերածննդով: Գոթական ոճը վերադարձավ՝ ինչպես ճարտարապետության մեջ, այնպես էլ «Գոթական վեպի» գրական ժանրում՝ լի խորհրդավոր իրադարձությունների նկարագրություններով: Մեկ այլ տարբերակ էր «Կելտական վերածնունդ»-ը, այսինքն՝ հետաքրքրությունը բրիտանական ազգը կազմող միջնադարյան ժողովուրդների նկատմամբ: Այդ ժամանակ բրիտանական հասարակությունը, բուրժուական զարգացման հակասությունների, ինչպես նաև արդյունաբերականացման դժվարությունների պատճառով, կարոտախտ էր զգում «լավ հին օրերի» նկատմամբ: Այս կապակցությամբ կղզու պետության մշակութային կյանքում, արդեն 18-րդ դարի կեսերին, հետաքրքրություն առաջավ սեփական անցյալի և ծագման նկատմամբ: Պատմաբանները սկսեցին ուսումնասիրել կելտական, սկանդինավյան մշակույթը: Այնպիսի բանաստեղծներ, ինչպիսիք են Տ. Պերսին, Թ. Գրեյը, Վ. Քոլինգն իրենց բանաստեղծություններում արտահայտում էին բանահյուսական թեմաները: Շոտլանդիան կարևոր դեր ունեցավ այս հետաքրքրության վերականգնման գործում, որտեղ, սկսած XVIII դարից, սկսվեց անտիկվարների շարժումը, ովքեր սկսեցին ուսումնասիրել կելտական պատմության և մշակույթի հուշարձանները: Նախառոմանտիզմը նպաստեց, առաջին հերթին, բանահյուսության վերածննդին և յուրաքանչյուր ազգի պատմության ուշադրությունը գրավելուն: Ընդհանրապես, անգլիական նախառոմանտիզմը ուժեղ ազդեցություն է ունեցել ամբողջ եվրոպական մշակույթի վրա:

Հարկ է նշել, որ միջնադարյան ժողովուրդների պատմությանը անդրադարձը, «Կելտական վերածնունդ»-ի միտումը, որը նպատակ ուներ վեր հանել կելտական կամ սկանդինավյան հնությունների թեմաները, դրսևորվում էր հիմնականում գրականության մեջ: Գրական գործիչները իրենց աշխատանքներում արտացոլում էին կելտական կամ սկանդինավյան պատմության և դիցաբանության զանազան տարբերակները: Ինչպես վերը նշվեց, գրական այս գործերից մեկը «Օսիանի երգեր» պոեմն էր, որն ուղղակիորեն արտացոլում էր Շոտլանդիայի ազգային անցյալը: Մակֆերսոնի պոեմը արձագանքեց եվրոպական հասարակության հոգևոր պահանջներին, որը փորձում էր գտնել իր ազգային անցյալի աղբյուրները, իր պատմական արմատները:

Գրականության մեջ հնագույն ժամանակների նկատմամբ այդ հետաքրքրությունն արտահայտվում էր բանահյուսության ժանրը վերածնելու ցանկությամբ: Այս կապակցությամբ շոտլանդացի բանաստեղծ Ջեյմս Մակֆերսոն բանաստեղծի դերը շատ մեծ է: Մակֆերսոնի ծագումը նրան պարտավորեցնում էր դրսևորել հայրենասիրական ձգտումներ, որոնք նա արտահայտեց իր «Օսիանի երգեր» պոեմի մեջ, որը շա-

րունակումն է հին Կելտերի դիցաբանական ավանդույթի: «Օսիանի երգերի» արժանիքն այն է, որ այն ուշադրություն հրավիրեց Շոտլանդիայի պատմությանն ու մշակույթին հենց այն ժամանակ, երբ Անգլիան պարտադրում էր իր արժեքները և փորձում էր արմատախիլ անել շոտլանդական ինքնության մնացորդները: «Օսիանի երգերը» հետաքրքրում էին 18-րդ դարի մշակույթի ներկայացուցիչներին, քանի որ նրանք դարձան ուղեցույց նոր գեղագիտական կանոնների կառուցման համար՝ ազատվելով դասականության ռացիոնալիզմի կաշկանդումներից: Հետևաբար, միանգամայն արդար է, որ «Օսիանի երգերը» ժողովրդականություն են վաստակել գրական շրջանակներում: Ընթերցողները հիացած էին բնության հուզական նկարագրությամբ, սյուժեների բազմազանությամբ և «Օսիանի երգերի» գունագեղ պատկերներով: Պատահական չէ, որ այն թարգմանվել է գրեթե բոլոր եվրոպական լեզուներով և անընդհատ արտատպվել է մինչև 20-րդ դարի կեսերը: «Օսիանի երգերը» բավարարեց եվրոպական հասարակության կարիքները, որոնք մտահոգված էին նրա պատմական արմատները որոնելով՝ վերականգնելով սեփական անցյալը: Հին ժամանակների նկատմամբ հետաքրքրությունը արտացոլում էր մշակութային կյանքի նոր այն միտումների ձևավորումը, որոնցով էր պայմանավորված ռոմանտիզմի ձևավորումը:¹

¹ Հասկանալու համար ուժի հավասարակշռությունը բրիտանական հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքում, պետք է ուսումնասիրել «Եվրոպայի պատմություն» հավաքական մենագրությունը/ История Европы. Европа нового времени (XVII-XVIII века). М. 1994./: Բրիտանական հասարակության մշակույթին վերաբերող առանձին խնդիր է շոտլանդական Լուսավորության երևույթը: Այս հարցի ուսումնասիրությունը դյուրացրել է Է.Գ. Ռենյովի հետազոտությունը /Ренёв Е. Г. Концепция цивилизации в философии истории шотландского Просвещения./ Цивилизации. М. 1993. № 2./, ինչպես նաև արտասահմանյան հեղինակների մի շարք ուսումնասիրություններ, ինչպիսիք են Ս. Բրաունի խմբագրած «Բրիտանական փիլիսոփայությունը Լուսավորության դարաշրջանում» ժողովածուն /British Philosophy and the Age of Enlightenment: Routledge History of Philosophy Vol. 5. Ed. by S. Brown. L.; N. Y. 2003./ և Վլարկի աշխատանքը /Clark J. C. D. English Society, 1660-1832: Religion, Ideology and Politics During the ancient regime. Cambridge, 1985./ Բրիտանական հասարակության պատմության և մշակույթի ընկալումն արտացոլված է Տրեվելյանի և Էյզենշտատի աշխատություններում /Тремельян Д. М. Социальная история Англии. М. 1959.; Айзенштат М. П. Власть и общество в Британии 1750-1850. М. 2009./ Շոտլանդիայում սոցիալական և պատմական գործընթացների ուսումնասիրությունն արտահայտված է Վ. Ապրիշենկոյի երեք մենագրությամբ /Апрыщенко В. Ю. Клановая система Горной Шотландии: традиции и модернизация. Ростов н/Д. 2006.; Апрыщенко В. Ю. Уния и модернизация: становление шотландской национальной идентичности в XVIII-пер. пол. XIX в. Ростов н/Д. 2008.; Апрыщенко В.

Ինչպես վերը նշվեց, արդեն իսկ Մաքֆերսոնի կենդանության ժամանակ նրա գործերը առաջացրել էին սուր վիճաբանություն և քննադատություն: Արդեն XIX դարի երկրորդ կեսից գիտական աշխատություններ են հայտնվել գրականության մեջ օսիանիզմի և օսիանական ուղղությունների ուսումնասիրության վերաբերյալ (մասնավորապես, օրինակ, այնպիսի գործեր, ինչպիսին են Պ. Մաքգրեգորի (1841), Թ. Սանդերսի (1894), Լ. Շթերնի (1895, 1900), Ա. Նատի (1886, 1899), Ռ. Թոմֆոյի (1901), Հ.

Ю. «Шотландия в новое время: в поисках идентичностей. СПб. 2016./ Նախառնմանտիկ միտումները հասկանալու և դրանց գեղագիտական առանձնահատկություններին նվիրված կարևոր ուսումնասիրություններ են՝ «Դասականությունից մինչև ռոմանտիզմ» /От классицизма к романтизму /Под ред. М. П. Алексеева. Л. 1970./, «Անգլիական գրականության պատմություն» /История английской литературы. Т.1. Выпуск 2. /Под ред. М. П. Алексеева, И. И. Анисимова. М. 1945./ աշխատությունները, ինչպես նաև Վ.Վ. Վանսլովի /Ванслов В. В. Эстетика романтизма. М. 1966./, Վ.Ա.Լուկովի /Луков В. А. Предромантизм: культурное явление и пути его осмысления //Знание. Понимание. Умение. 2010. № 1./, Վ.Վերշինինի և Վ.Լուկովի /Вершинин И. В., Луков В. А. Предромантизм: новое в литературной эстетике //Известия Самарского научного центра Российской академии наук. 2009. Т. 11. № 4 (6)/, Ն.Սոլովյովայի /Соловьева Н. А. У истоков английского романтизма. М. 1988./ գիտական աշխատությունները: Կենսագրական տեղեկությունները Մակֆերսոնի կյանքի մասին տալիս են Սաունդերսը /Saunders T. B. The life and letters of James Macpherson. L. 1894./, Բլեքը /Black G. Macpherson's Ossian and the Ossianic Controversy. N.Y. 1926./ Հետազոտելով «Օսիանի երգեր»-ի եվրոպական մշակույթի գեղարվեստական առանձնահատկությունները և ազդեցությունը՝ հեղինակը հենվել է Հ. Բլեյրի /Blair H. A critical dissertation on the poems of Ossian, the son of Fingal. L. 1763./, Ն.Մեկնիլի /MacNeill N. The Literature of the Highlanders; A History of Gaelic Literature From the Earliest Times to the Present Day. Inv. 1892./, Պ. Վան Թիգեմի /Van Tieghem P. Ossian en France. P., 1917./ գիտական աշխատություններին: Մի քանի սակավաթիվ ռուս հետազոտողների թվում, որոնք անդրադարձան են «Օսիանի երգեր»-ի խնդիրներին, հարկ է նշել Դ.Գ. Ալիլովայի երկու հրատարակությունները՝ Алилова Д.Г. Интертекстуальность Оссиановской поэзии //Вестник СанктПетербургского университета. СПб. 2012. № 3. և Алилова Д. Г. Оссиановская поэзия Дж. Макферсона: поэтика формул и реминисценций //Вестник Вятского государственного гуманитарного университета. 2015. № 1.; «Օսիանի երգերի» ազդեցությունը ռուսական ռոմանտիզմի բանաստեղծության վրա ուսումնասիրել է Ելեպովան /Елепова М. Ю. Рецепция оссианизма в русской поэзии первой трети XIX века //Вестник Северного (Арктического) федерального университета. 2012. № 3./: Անհրաժեշտ աղբյուրներն են հանդիսացել անգլերեն «Օսիանի երգեր» երկհատորյա հրատարակությունը /Mac Pherson J. The poems of Ossian, the son of Fingal. Inv. 1804./, ինչպես նաև Յոն. Դ.Լևինի ռուսերեն թարգմանությունը/ Макферсон Д. Песни Оссиана /Пер. с англ. Ю. Д. Левина. СПб. 1983./

Էխսի (1922), Գ. Ֆ. Բլեքի (1926), Դ. Թումսոնի (1952) աշխատությունները:

Ժամանակակից արտասահմանյան հետազոտողների շարքում կարելի է նշել այնպիսի հեղինակների, ինչպիսիք են՝ Դ. Մուրը (1972, 2003, 2004), Թ. Խլոբիլը (2006), Հ.-Ֆ. Քատալինը (2004), Ֆ. Սթաֆորդը և Հ. Գասկիլը (1998, 2004), Ք. Թրամփիները (1997), Ա. Բոյմեն (1993), Լամփորը (2006), ինչպես նաև Մ. Վեսելի «Օսիանի երգերը» երաժշտական կոմպոզիցիայում», 1992), Ս. Շտրասեր-Կլոցի («Ռունգեն և Օսիանը», 1995), Ա. Հեյլի («Օսիանը Հռոմում՝ 1765-ից 1810 թվականների ընթացքում օսիանիզմի տեսության և պրակտիկայի վերաբերյալ», 1998) թեկնածուական թեզերը:

Օսիանիզմի ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունը չի մարել վերջին տասնամյակների ընթացքում: Մակֆերսոնի «Օսիանի երգերի» առաջին հրատարակությունից (1760) հետո, որը թարգմանվել է եվրոպական շատ լեզուներով, այն շարունակ վերահրատարակվել է: 19-րդ դարի վերջից առ այսօր շարունակվում է գրականության մեջ Օսիանի վերաբերյալ հին հիմնարար ուսումնասիրությունների վերատպումը, օրինակ, Ա. Նատի (1886, 1899, 1910, 1972, 2008, 2009), Թ.Բ. Սանդերսի (1894, 1895, 1968, 1969, 2009) գործերը:

Ռուսաստանում «Օսիանի երգերի» հատվածների առաջին թարգմանությունները կատարվել են բնագրից՝ Ա. Դմիտրիևը (1788), իսկ ֆրանսերեն հրատարակությունից ամբողջական թարգմանությունը կատարել է Ե. Ի. Կոստրովը (1792): Առաջին գիտական ուսումնասիրությունները, որոնք հիմնված են բնօրինակի սեփական թարգմանության վրա, իրականացրել է Ե.Վ. Բալաբանովան (1890, 1983, 1907): Պետք է նշել նաև Դ.Ն.Վվեդենսկու (1916), Ն.Կ. Պիկասանովի (1907, 1924) գործերը: Խորհրդային տարիներին լույս տեսան Վ.Ի. Մապովի (1928), Յու.Դ. Լևինի (1983) հիմնարար գործերը: Գրականության մեջ օսիանիզմի զանազան ապեկոսներ հաշվի են առնվել նաև Ռ.Վ. Իեզուիտովայի (1965, 1978), Վ.Ս. Կոստինի (1983), Օ.Բ.Կաֆտանովայի (1980), Լ.Վ.Պոնամարյովայի (1996) աշխատանքներում, ինչպես նաև Յու.Վ. Վերխովսկայայի (1997) և Ե.Գ. Միլյուգինայի (2002) ատենախոսություններում:

«Օսիանի երգերը» հրատարակությունից ի վեր գիտնականների և քննադատների շրջանում բռնկվեց «օսիանական վիճաբանություն», որի հիմնական հարցը պոեմի մեջ արտացոլված կելտական լեգենդների իսկության վերաբերյալ վեճն էր: Այսպիսով, օրինակ, իռլանդացի հետազոտողները գտել են նմանություններ «Օսիանի երգերի» և իռլանդական սագաների պոեմների և հերոսների միջև: Միննույն ժամանակ, բրիտանացի գիտնականները Մակֆերսոնի պատրաստած տեքստում սխալներ և անհամապատասխանություններ էին տեսնում: Քանի որ Մակֆերսոնը հայ-

տարարել էր, որ նա միայն իր գտած հնագույն կելտական լեգենդների թարգմանիչն է, հասարակությունը սկսեց պահանջել գալերեն ձեռագրերի բնօրինակները: Բայց հակառակ ակնկալիքների, Մակֆերսոնը չներկայացրեց բնօրինակները՝ դրանով իսկ ավելի շատ կասկածներ հարուցելով թերահավատների շրջանում: Գիտնականները եկան այն եզրակացության, որ «Օսիանի երգերը» բանաբաղություն են այլ հեղինակների գործերից, որոնք հիմնված են ընդհանուր կելտական դիցաբանական հավատալիքների վրա որոշակի գրական հնարքների ավելացմամբ, օրինակ, Հոմերոսի, Վիրգիլիուսի, Ջ. Միլթոնի և այլն: Չնայած այդ ամենին, «Օսիանի երգերը» մեծ ազդեցություն թողեցին ռոմանտիզմի արվեստին բնորոշ նոր գեղագիտական կատեգորիաների ձևավորման վրա: Ռոմանտիզմի դարաշրջանի գործիչների համար «Օսիանի երգեր»-ը դարձան կողմնորոշ ժողովրդական բանահյուսության ավանդույթները վերակենդանացնելու հարցում: Պոեմի հերոսների կոլորիտը հիացնում էր «լճային դպրոցի» բանաստեղծներին, գերմանացի ռոմանտիկներին, ռուսական ռոմանտիզմի ներկայացուցիչներին: Բայրոնը, Գյոթեն, Նապոլեոնը, Լերմոնտովը, Պուշկինը և ուրիշներ օսիանական բանաստեղծությունների երկրպագուներն էին: Յուրաքանչյուր պետության համար «Օսիանի երգերի» ընկալումն ու նշանակությունը տարբեր էր: Անգլիայի համար պոեմը ծառայեց որպես բնականության, չմշակված բնության օրինակ: Գերմանացի ռոմանտիկ բանաստեղծները վերցրին Մակֆերսոնի ստեղծագործությունը՝ որպես նոր բնական գեղարվեստական լեզվի ձևավորման ելակետ: Ֆրանսիայում Օսիանով հրապուրանքը տուրք էր Նապոլեոնյան կայսրության նորաձևությանը: «Օսիանի երգերը» ռուս ռոմանտիկների ըմբռնումների մեջ ներկայացնում էին հյուսիսային ժողովրդական հերոսի միասնական պատկերը:

1897-1903 թվականներին Արսեն Ղազիկյանը հայերեն թարգմանեց տասնյակից ավելի «Օսիանի երգեր»: Բայց առաջին անգամ այդ ստեղծագործության մասին հոդված տպագրվեց դեռևս 1853-ին Մխիթարյանների «Բազմավեպ» հանդեսի էջերում, որի գլխավոր խմբագիրը 1849-1855 թվականներին Ղևոնդ Ալիշանն էր:

Հարկ է նշել, որ «օսիանականությունը» նրան հիացրել էր արդեն XIX դարի 40-ական թվականներին: Արևմտյան Եվրոպայի տարբեր քաղաքների գրադարաններում, թանգարաններում, գրապահոցներում, նա ուսումնասիրում էր հայերեն ձեռագրերը՝ հայտնաբերելով հայ ժողովրդի պատմության և մշակույթի հետ կապված բազմաթիվ արժեքավոր նյութեր:

Դա ուղեկցվում էր նախևառաջ ազգային կյանքի առաջադրած խնդիրներով և թելադրված էր ոչ միայն համաեվրոպական ընդհանուր

գրական շարժման շրջանակներով, երբ ժողովրդական ստեղծագործությունների հանդեպ աճող հետաքրքրությունը նպաստում էր ռոմանտիզմի զարգացմանը և տարածմանը, ինչը, հատկապես փոքր ժողովուրդների մոտ, ավելի շատ կապված էր աճող ազգային ինքնագիտակցության և ազատագրական ձգտումների հետ, այլ նաև Ալիշանի ձգտմամբ՝ կապել այդ ռոմանտիզմի ակիբը դիցաբանական դպրոցի հետ: Եթե Գրիմ եղբայրները, հավաքելով Բանահյուսական-դիցաբանական նյութերը, փորձում էին բարձրացնել գերմանական ոգին, ապա Ալիշանը «Բազմավեպ» հանդեսի էջերում բացի Բանասիրականից նաև մեկ այլ խնդիր էր փորձում լուծել: Նա պարզաբանում է. «ազգային հոգի ըստուածն... այդպիսի աւանդութեանց մէջ խիստ պայծառ կը տեսնուի:»¹

Ալիշանը իր Բանաստեղծական Ժառանգությունը ի մի է հավաքել 5 հատորով, որոնք տպագրվել են Վենետիկում 1857-1858 թվականներին:

Ալիշանի՝ գրաբարով գրված Բանաստեղծությունները առանձնաձևում են Բանաստեղծական ձևերի և չափերի բազմազանությամբ, ինչպես նաև բառապաշարային հարստությամբ, և ներկայացնում են նկատելի երևույթ Մխիթարյանների գեղարվեստական ստեղծագործության ընդհանուր հոսքում: Այնուամենայնիվ, դրանք դուրս չեն գալիս հայկական կլասիցիզմի Բանաստեղծության թեմատիկ, ժանրային և ձևական առանձնահատկությունների շրջանակից՝ հետևելով այս դպրոցի պարտադիր ոացիոնալիստական կանոններին: Օրինակ, «Շուշանն Շաւարշանայ» փոքրիկ վիպերգում ջերմորեն և քնարականորեն պատկերվում է քրիստոնեությունը առաքելական շրջանում Հայաստան ներթափանցելու ավանդությունը կույս Սանդուխտի նահատակության պատմությամբ: Ինչպես նշում է Վ.Դերիկյանը. «Հարազատ մնալով ժողովրդական արտահայտչամիջոցներին, ինչպես նաև ԺԷ դարի սկզբին ստեղծագործած Նահապետի պատրանքը ստեղծելու համար Ալիշանը բազմիցս դիմում է միջին հայերենին և ժողովրդական ձևերին:»²

Ալիշանը առաջինն էր, ով հայ գրականության մեջ ներմուծեց Բանաստեղծական շարքի սկզբունքը և պատմական ու լեզվական ոճաբանության մշակույթը: Նա անգլերեն թարգմանեց հայկական ժողովրդական երգերը, իսկ Բայրոնի, Գրեյի, Միլթոնի, Լոնգֆելդի և այլոց գործերը հայերեն թարգմանեց՝ հրատարակելով «Անգլիական Բանաստեղծների անթոլոգիա» և «Ամերիկյան քնար» ժողովածուները:

¹ Ալիշան Դ. Երկեր, Երևան, 1981, էջ 99:

² Դերիկյան Վ., Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուականատենախոսություն, Երևան, 1996:

Կրկին անդրադառնալով Ալիշանի «օսիանիզմին»՝ հարկ է նշել, որ «Բազմավեպի» էջերում «Նահապետի երգերի» հրատարակությունը որպես միջնադարյան տաղերի, պայմանավորված էր ոչ միայն արտաքին-թեմատիկ կամ լեզվա-ոճական ազդեցություններով, այլ հակառակը: Ինչպես Մակֆերսոնը, այնպես էլ Ալիշանը միտումնավոր է ընտրել գրելու այս եղանակը՝ դառնալով, ըստ Հ.Թամրազյանի, «բարձրացող հայության հոգևոր վերելքի երգիչը»¹ և տուրք տալով ողջ Եվրոպայով դրանից առաջ անցած օսիականիզմի ալիքին: «Ինչպես հայկական կլասիցիզմը անտիկ թեմաները փոխարինեց հայկական հերոսական անցյալով, այնպես էլ Ալիշանի ստեղծագործական քուրայում հյուսիսային Շոտլանդիայի ծեր բարդը դարձավ Հայոց Նահապետ համապատասխան ազգային դրոշմ հաղորդելով նաև օսսեանականությունը բնորոշող առանձնահատկություններին», – նշում է Վ.Դևրիկյանը:² Այստեղ ներթափանցել են և պատմական ողբի ժանրը (օրինակ «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» բանաստեղծության մեջ)³, և միջնադարյան տաղարանների և ժողովրդական երգերի արտահայտչամիջոցները (օրինակ, «Սոփերք»-ում), և հայրեններին մոտ չափը (օրինակ «Հրազդան»-ում), որ «ժամանակագրորեն

¹ Թամրազյան Հ. Հայ քննադատություն, հտ. Գ, էջ 89:

² Դևրիկյան Վ., Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 1996:

³ Պատմական ողբի ժանրի մասին Պ. Խաչատրյանը գրում է, որ կառուցածքային առումով այն ունի մուտք, որում «բանաստեղծը կամ դիմառնաբար առնված նրա հերոսը դիմում ունկնդիրներին և հրավիրում ողբակցության, ապա հաջորդում է պատումի հիմնական մասը՝ այն պատմությունը, որին նվիրված է ողբը»: Վերջին երրորդ մասում բնորոշվում է թշնամին, ու ստեղծագործությունն ավարտվում է լավատեսական տրամադրությամբ, հավատով: Նույն կառուցվածքն ունի և Ալիշանի գործը: Իր «թոյլ մատներով» վերջին անգամ վերցնելով «փետտած քնարը»՝ նրանով դիմում է մուսային՝ արտահայտելու իր կրծքի դառն աղաղակները: Նարեկացիական ահագնացող համեմատությամբ ասում է, թե բողոքի ցավի իր ձայնից թող

Մեղրագետոյն ալիքն անոյշ՝ լեղի կըտորին: (230)

Այս բանաստեղծության մեջ Ալիշանը զուգահեռ է ընթանում Պատմահոր «Ողբին»: Խորենացու «հանուրց հիւսիսականաց վեհագոյն» արտահայտության հետևողությամբ, նա գրում է.

Արևելից և հիւսիսոյ ազգացն հազար

Ճոկան ի ձեռդ առած՝ կայիր հրամանատար: (230)

Եթե Խորենացին գրում էր՝ «Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանեայց», ապա Ալիշանը թե նույնությամբ չհետևելու և թե հայ եկեղեցու հանդեպ իր սերը արտահայտելու պատճառով, հասունյանական մեղադրանքներին չարժանանալու համար այս նույն միտքն արտահայտում է հետևյալ կերպ.

Ողբամ զորդիք մեծ Գրիգորի, որ չերևին: (230)

կապվում է Ալիշանի կերպավորած Նահապետի շրջանին: Եթե այս ստեղծագործությունը չդիտարկենք որպես Ալիշանին, ապա այն համարելու ենք պատմական՝ որպես բանաստեղծական արձագանքը ԺԷ դարի սկզբի բռնագաղթի: «Հրագդան»-ը, սակայն, սկզբից մինչև վերջ գրված է որպես թե ականատեսի անմիջական արձագանք: Այն շարքի միակ գործն է, ուր բացակայում է Նահապետը: Ալիշանի հերոսը Բաբկենի միջոցով է արտահայտում ժամանակակցի իր ցավը:»¹) Այստեղ գտնում ենք նաև միջնադարից վերջրած բազմաթիվ պատկերներ, սյուժեներ, մակդիրներ, մոտիվներ, թեմաներ, օրինակ, «Շուշանն Շաւարշանայ»-ում, որին Ալիշանը գեղարվեստական առումով հաղորդել է առավել ժողովրդական-տաղարանային ոճավորում ու երանգավորում, իսկ «թեմատիկ առումով էլ, քրիստոնյա վկայուհու փառաբանմանը զուգահեռ, նրա միջոցով պանծացրել է Հայաստանյայց եկեղեցին <...> Այս պատճառով էլ պոեմի առաջին իսկ քառատողում Սանդուխտը անվանվում է

*Պայծառ պատկեր կուսանաց,
Հայոց պըսակ պարծանաց,²*

իսկ վերջում էլ՝

*Սանդուխտ, անմահ թագուհի
Իմ Հայաստան աշխարհի: (257)»³:*

Իհարկե, Ալիշանը չէր կարող չանդրադառնալ միջնադարյան խորհրդանիշներին՝ փորձելով լեզվա-ոճական առումով ժողովրդական շունչ հաղորդել իր ստեղծագործությանը: Օրինակ, եթե համաձայն տարածված գրական ավանդույթի հայ նահատակների արյունը կարմիր վարդի և կակաչի միջոցով էր պատկերվում, Ալիշանն էլ է իր հերթին նրանց դիմում՝ նկարագրելով հայրենի հողը: Իսկ թշնամիներին, ում մարմինը անգամ ձկները չեն ուզում ուտել, անդրադարձ կատարելիս հեղինակը փոխում է գույները՝

*Կապոյտ կանաչ ալիք ծովուն գունատին
Յարիւն և մաղձ՝ գոր փսխէ ժանտ ալյազգին: (286)*

¹ **Ղերիկյան Վ.**, Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուականատենախոսություն, Երևան, 1996:

² **Ալիշան Ղ.** Հայրունի, Վենետիկ, 1858, էջ 248: Այսուհետև Նահապետի երգերից կատարված յուրաքանչյուր մեջբերման վերջում կնշենք այս հրատարակության համապատասխան էջը:

³ **Ղերիկյան Վ.**, Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուականատենախոսություն, Երևան, 1996:

Արսեն Տերտերյանի բնորոշմամբ՝ «հետագա բոլոր հայ ռոմանտիկները գնացել են Ալիշանի բաց արած ճանապարհով՝ հայ բնությունը թշնամիների համար գերեզման, իսկ որդիների համար բուրաստան պատկերացնելով»:¹

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ավելի ուշ այս շարքին ավելացրած երկու բանաստեղծություններին՝ «Վերջին երգ վիրաւոր բամբուխարին» և «Հայ հանճարը», որոնք թեև իրենց շնչով և ուղղվածությամբ մերվում են նախկինում հրատարակածներին, սակայն «գրված լինելով նախորդների մի մասից մեկ տասնամյակ, իսկ մյուսներից էլ երկու տասնամյակ հետո, լեզվական առումով որոշ չափով տարբերվում են՝ ստեղծված լինելով արդեն ձևավորված կանոնավոր գրական արևմտահայերենով, որի ընդհանուր հյուսվածքում թե գրաբարյան և թե ժողովրդական արտահայտություններն արդեն հանդես են գալիս որպես գեղարվեստական ոճավորում, և ոչ թե նպատակ ունեն ստեղծելու Նահապետի պատրանքը, քանի որ շարքի 1858 թ. առաջին հրատարակությամբ Նահապետն արդեն գրական կերպար էր դարձել»:²

Այսպիսով նշենք, որ առաջինը՝ ոչ մի կապ չունենալով պատմական որևէ իրադարձության հետ, այս շարքում հավաքական կերպով «ներկայացնում է հայոց հեթանոսական մշակույթն ու անցյալը: Ձեռնդրելով «Պլպուլն Աւարայրիից» հետո, վիրավոր և իր վերջին երգը երգել ցանկացող բամբուխարին Ալիշանն ասես դարձրել է վերջին ակորդը նախորդ գործի ընդհանուր հերոսական ոգու»:³

Հաջորդը հեղինակը տեղադրում է վերջին՝ «Լուսնկայն գերեզմանաց հայոց» բանաստեղծությունից առաջ և, «մինչ վերջին անգամ լուսնին դիմելը, «Հայ հանճարի» միջոցով առավել է ամբողջացնում պատմական անցյալը՝ լավատեսության ավելի մեծ շեշտ հաղորդելով գալիքին: Անցյալի ու ներկայի հակադրությունը ստեղծելու համար Ալիշանը դիմառնական եղանակով դիմում է հայ հանճարին, թե ուր մնացին անցյալի մեծագործությունները:

Այս հակադրությունը բնականաբար ողբագին տրամադրություններ էր ծնելու, և Ալիշանն ասելիքն արտահայտելիս դարձյալ մեծապես հետևում է ողբի ժանրին: «Հայ հանճարը» ևս եռամաս կառուցվածք ունի: Մուտքում հանձին հայ հանճարի նա դիմում է մուսային: Այնուհետև գալիս է պատմական մասը, որտեղ հայ պատմագրությամբ նվիրա-

¹ Տերտերյան Ա., Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 68:

² Դևրիկյան Վ., Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 1996:

³ Նույն տեղում:

գործված ըմբռնումների համաձայն բանաստեղծը ներկայացնում է անցյալի պատմությունը սկսած Արարչագործությունից, երբ

*Այն աշխարհ, որ շատ աշխարհաց մայր էր,
հիմա հայտնվել է անտերունչ վիճակում:»¹*

Եթե անդրադառնանք վերոնշյալ «Լուսնկայն գերեզմանաց հայոց» բանաստեղծությանը, պետք է առանձնացնենք լուսնի կերպարը, որն անշուշտ կապում է «Նահապետի երգերը» «Օսիանի երգերի» հետ: Սակայն մինչ նման ընդհանրությունները վեր հանելը, նախ հիշեցնենք, որ Ալիշանը իր երրորդ ուղևորության ընթացքում, երբ 1851թ. մեկնում է Լոնդոն, գրում է 25 բանաստեղծություն, որոնց գերակշիռ մասը, «Բանք պանդրխտի» խորագրի ներքո: Քանի որ դրանց մեծամասնությունը արտահայտում է նրա կարոտը դեպի հայրենի երկիրը, հետագայում հիմք են հանդիսանում «Նուագը»-ի 5-րդ հատորը կազմելիս: Այստեղ կարդում ենք.

*Անձանօթից ինձ հանդիպեալ եւ ասեն
Ողջո՛յն ընդ քեզ պանդուխտ, զիա՞րդ վայրքս իցեն.
Է՛հ, պանդրխտի մի՛ տայք ողջոյն, զի ոչ է.
Չայն ողջունիդ առ ունկն իմ՝ զօդ լոկ հընչէ.
Ես չգիտեմ ինչ ըզվայրաց կերպարան,
Բայց զի օտարք եւ հայրենեացս անըման:
Ողջոյն, ո՛հ, այն ողջոյն՝ զոր տան սիրելիք.
Վայր՝ այն եւեթ, վայր՝ որ կոչին հայրենիք.
Այն ողջոյն՝ դեղ է սրբտի ցօղ զովարար,
Որ ըզտրտմեալս առնէ ծաղկունս իսկ դալար:*

Մեկ այլ բանաստեղծության մեջ նա գրում է՝
*Ո՛հ, կարօ՛տ, կարօ՛տ, զի՞նչ բուռն ի մարդում քան զայս կիրս,
Կարծեմ անմահից անգամ գոլ ըզսա, արհավիրս
Ո՛հ, կարօ՛տ, կարօ՛տ, մեծ հեղձամրդձուկ զիս առնէ,
Յափունս բացական, եւ այցելու ինձ ոք չէ...*

Հենց այդ անեզր կարոտն է, որ ստիպում է հարազատներից կտրված միայնակ պանդխտին թարգմանել արդեն աշխարհով մեկ հայտնի դարձած անգլիացի Բայրոնի «Չայլդ Հարոլդ» պոեմի չորրորդ երգը, որտեղ, ինչպես հայտնի է, ի տարբերություն առաջի երկու երգերի, արտացոլվել են բայրոնական՝ Անգլիան լքելուց հետո, կտրականապես փոխված հայացքները և գաղափարները: Այստեղ նա ընթերցողին ներկայացնում է ոչ թե նախկին հասարակության օրենքները արհամարհող, կոիվն ու կրքերը

¹ Նույն տեղում:

փառաբանող անհատին, այլ երջանկությունն ու հոգեկան անդորրը կորցրած, ամեն ինչից հիասթափված տիեզերական վշտի երգչին:

Սա Ալիշանի տրամադրության վառ ապացույց է հանդիսանում, ով այդ ժամանակ սկսում է գրել մոայլ, կրոնամիստիկական բանաստեղծություններ (օրինակ «Լուսնկայն գերեզմանաց հայոց»-ը, որտեղ 40-ական թվականների մարտն ու մրրիկը տեղի են տալիս գիշերային պատկերներին և միստիցիզմին): Բանաստեղծությունն հեղինակը սկսում է «աստվածավառ լապտեր»-ի՝ լուսնյակի պատկերով.

*Կացի՛ր արև, ետ կացիր, մ'ե՛լ չներ յերկինքըդ կապոյտ
Թող լուսնեկիդ ի ման գալ, դեռ ի մէջ թուխ ամպերոյտ.
Կա՛ց, կա՛ց լուսնակ, դու առաջ, լեռնէ՛ ի լեռ, սարէ՛ սար,
Մէջ ձորերոյս, խորերոյս, անցիր հուշիկ հաւասար.
Քեզ հետ ունիմ ես զանգատ, քեզ Նահապետն ունի բան,
Սիրտըն յերկուս է ճշդքած և ցավերն, ո՛հ, զանազան:*

1853 թ. Ալիշանը տպագրում է «Քաղաքական աշխարհագրություն»-ը, որտեղ մասնավորապես նշում է. «Նախկին Բարբառ բնակչաց Բրիտանիոյ էր լեզու կելտաց, յոր ոչինչ աւանդեցաւ ի գիր, բայց միայն երգք Բարդ անուանեալ երգչացն կամ քրմաց յորս մեծահոշակ են քերդուածք Ոսիանայ՝ զոր ասեն կացեալ մերձ ի վախճան Գ դարու»:¹ Այսպիսով, կարող ենք պնդել, որ Ալիշանը, ով այդ շրջանում էր հենց գրում իր «Նահապետի երգերը», ցանկանում էր, որ նույն «զոր ասեն» ձևով իր շարքը վերագրեն Շահ Աբասի ժամանակներում ապրած Նահապետին, ում դեռ 1847 թ. «Բազմավեպ»-ում «Հայոց աշխարհիկին» կցված բացատրական ներածական խոսքում անվանում է «Հայոց դաշտերուն Վերգիլիոսը կամ Հոմերոսն»:²

Այսպիսով, կարող է սխալ կարծիք ստեղծվել, որ Ալիշանը անհամեստորեն համեմատում է իր ստեղծագործությունները Հոմերոսի գործերի հետ: Բայց միայն այն դեպքում, եթե մենք դիտարկում ենք «Նահապետի երգերը» ընդհանուր եվրոպական գրական շարժման շրջանակներից դուրս: Իրականում, դա Ալիշանի յուրահատուկ տուրքն էր Օսիանականությանը: Ինչպես արդեն նշել ենք, Մակֆերսոնի հրատարակության թողած տպավորությունը այնքան մեծ էր, որ ժամանակակիցներն ու հետագա սերունդները ավելի վեր դասեցին այն, քան ինքը՝ Մակֆերսոնը, որ համեմատում էր իր «գտնված պոեմները» Հոմերոսի գործերի հետ: Օրինակ Գյոթեն երիտասարդ Վերթերի միջոցով գրում է, թե «Օսիանը

¹ Ալիշան Ղ. Քաղաքական աշխարհագրություն, 1853. էջ 78:

² «Բազմավեպ», 1847, էջ 183:

դուրս է մղել սրտիցս Հոմերոսին»,¹ իսկ 1963թ. իտալացի քննադատ, բանաստեղծ Չեզարոտին իտալերեն հրատարակությունում նրան Հոմերոսից էլ վեր է դասում:² Զարպհանայանի մոտ կարդում ենք. «Ով էր այս սկոպտիացի Հոմերոսը՝ որուն գոյութիւնը Մակֆերսոնի ձեռքով յայտնուեցաւ»:³ Իհարկե, ոչ միայն այդ պոեմների առաջ բերած հիացմունքով էին պայմանավորված այդպիսի համեմատությունները: Հաճախ շեշտվում էր այն միտքը, թե «Ազգային գրականություններն էլ ունեն իրենց թաքնված գանձերը, որոնք պետք է գտնել և հրատարակել: Այս նույն նպատակն է հետապնդել նաև Նահապետին Հոմերոսի հետ համեմատող Ալիշանը:

Մուտք-նախաբանում Նահապետի մասին հայտնված կենսագրական տեղեկությունները, և մասնավորապես, թե նա իր երգերը հյուսել է «խաղաղ ծերութեամբը աշուրներուն լոյսը պակսած» տարիքում, գծագրում է Մակֆերսոնի հերոսին՝ արդեն կուրացած և ծերացած երբեմնի մարտիկին, որն իր «անձնական ապրումները միախառնելով նկարագրվող դեպքերին, պատմում է անցած ժամանակների մասին: Գյոթեի բնորոշմամբ, նա է «թափառական ալեհեր հերոսը»:⁴ Նաև ինչպես Օսիանի կերպարը Օսիանականացնում է պոեմների ողջ շարքը, որոնցում նա կամ իրադարձությունների մասնակիցն է, կամ էլ իր պատմողական ոճով որոշակի մեղանխով տրամադրություն է հաղորդում պատումին, նույն կերպ էլ «Նահապետի երգերի» գրեթե բոլոր գործերում հանդես է գալիս Նահապետը՝ ստեղծագործությանը հուզական մի շունչ հաղորդելով: Նաև այն հանգամանքը, որ երիտասարդ Ալիշանը իրեն ներկայացրել է ծեր Նահապետի կերպարով, որն այնուհետև փոխանցվել է և Հուշիկներին, ապա առավել հասուն տարիքում մարել, կարծում ենք՝ բացատրվում է դարձյալ նույն շարժառիթներով: Մակֆերսոնը ևս երիտասարդ տարիքում իրեն նույնացրեց շոտլանդացի ծեր Բարդի հետ»:⁵ Հիշեցնենք, որ ռուս գրողներն էլ էին, սովորաբար, Օսիանին դիմել հիմնականում վաղ շրջանի գործերում:

Ինչպես արդեն պարզեցինք, Մակֆերսոնը, որպեսզի ապացուցի, որ կելտական գրականությունը միայն Գ դարում կարող էր նման հեղինակ ունենալ, մի ողջ ներածություն է գրում: Իր հերթին Ալիշանը «Ազգային

¹ Գյոթե, Երիտասարդ Վերթերի տառապանքները, Ե., 1981, էջ 156:

² Макферсон Дж. Поэмы Оссiana. Издание подготовил Ю.Д.Левин. Ленинград. 1983. С. 493.

³ Զարպհանայան Գ. Պատմութիւն մատենագրութեան միջին և նոր դարուց, էջ 14:

⁴ Գյոթե, Երիտասարդ Վերթերի տառապանքները, Ե., 1981, էջ 156:

⁵ Դերիկյան Վ., Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 1996:

վիպասանությունում» հայ գրականության սկզբնավորումը մինչև արարչագործության ժամանակները հասցնելով հանդերձ, գրում է Նահապետի մասին «Բազմավեպում», որ նա ապրել է Շահ Աբասի ժամանակներում: Սա փաստում է այն մասին, որ Ալիշանը չէր ցանկանում զուտ մեխանիկորեն հետևել ողջ Եվրոպայով անցած գրական միստիֆիկացիայի օսիանական շարժմանը: Նա փորձում էր ծառայեցնել դա հայ գրականության՝ ժամանակի առաջադրած խնդիրներին: Այդ էր պատճառը իր հերոսին ներկայացնելու որպես առավել վաղ կամ այդ շրջանում ստեղծագործած հեղինակ:

Էդվարդ Զրբաշյանի բնորոշմամբ՝ «Թվում է, թե տասնյակ դարերի պատմություն ունեցող մի ժողովրդի բանաստեղծ, որպիսին էր Ալիշանը, կարող էր և պետք է Նահապետի համար ընտրել ավելի հեռավոր ժամանակներ և նրան շրջապատել ավելի մեծ խորհրդավորությամբ ու վեհությամբ, և դա ավելի կներդաշնակեր ռոմանտիկական գեղագիտության սկզբունքներին»¹: Շարունակելով, ասում է, թե սակայն Ալիշանի հետապնդած հիմնական նպատակներից մեկն էր աշխարհաբար բանաստեղծության իրավունքների հաստատումը և քանի որ «Հայոց աշխարհիկն» ու մյուս գործերը հնարավոր չէր վերագրել Ե կամ Ժ դարերի հեղինակին, բանաստեղծ Ալիշանին Նահապետի ապրած ժամանակաշրջանի և ստեղծագործությունների լեզվական յուրահատկությունը հուշում է բանասեր գիտնականը»²:

Այս մտքի անուղղակի հավաստումը գտնում ենք և Ալիշանի «Ազգային վիպասանությունում», որում ասվում է, թե «ԺԲ դարից սկսած երևում են ռամկական լեզուով գրուածներ», և որ «գաւառական լեզուի զանազանութիւնը ԺԶ դարի վերջից է երևում», ինչպես նաև «ԺԵ-ԺԶ դարում է ծաղկում ռամկական վիպասանութիւնը»³:

Գրականության ժողովրդայնության և աշխարհաբարի դատը պաշտպանող Ալիշանի «Նահապետի երգերը» իրենց ոգով և ուղղվածությամբ առավել հարազատ լինելով ուշ միջնադարի հայ բանաստեղծության քնարական մոտիվներին, պանդխտության թեմաներին ու ժողովրդական ստեղծագործություններին, զգալապես տարբերվում են XIX դարի 50-70-ական թթ. ազգային հայրենասիրական ստեղծագործություններից, որոնք հրատարակվում էին «Ազգային երգարանների» միջոցով: Ալիշանի ստեղծագործական ներաշխարհի և բանաստեղծական լեզվի յուրահատկությունները ճիշտ հասկանալուն բավականին օգնում է Ս.

¹ Զրբաշյան Է., Գրողը և ժողովուրդը, էջ 70:

² Նույն տեղում:

³ Ալիշան, Յուշիկք, հտ. Ա, էջ 123-124:

Երեմյանի վկայությունը նրա անտիպ գործերի շարքում պահվող մի երգարանի մասին: Համաձայն Երեմյանի՝ Ալիշանի կազմած այս մատյանը Միանսարյանցի Երգարանից տարբերվում է նրանով, որ «Հ. Ալիշան անցեալ դարու կէսէն սկսեալ շատ մը ծանօթ ազգային բանաստեղծներու երգերն իր հաւաքածոին մէջ ընդունած չէ» և փոխարենը այնտեղ զետեղված են «ամէն տեսակ երգեր, որոնք հին աշուղներէ, տաղերգուներէ գրուած են, և ժողովրդեան մէջէն լսուած և ընդօրինակուած: Երգերէն մեծ մասը գրչագիր անտիպ մատեաններէ քաղուած է: Ընտրված հեղինակների թվարկումը վկայում է, որ Ալիշանը հիմնականում ընտրել է ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը: Նման երգարանները, որոնց կազմումը բավականին տարածված էր XIX դարում, ոչ թե հրատարակության, այլ անձնական ընթերցման համար էին: Նույն նպատակն է հետապնդել նաև Ալիշանի այս ձեռագիրը, մեկ անգամ ևս վկայելով նրա կապվածությունը ուշ միջնադարի հետ: Երեմյանի բնորոշմամբ՝ «Երգերու մեծ մասը իր Նահապետ ստորագրութեամբ ոտանաւորներուն լեզուով է. դա որոշ է, որ մեր Նահապետ բանաստեղծն լեզուի տեսակէտով, անոնցմէ ներշնչուած է. անոնց աշուղային զգացմունքը իրեն քնարին վրայ ազդեր են»¹:

Անդրադառնալով Օսիանի պոեմներին, չենք կարող չնշել, որ այնտեղ մեծ տեղ է տրված Հյուսիսային Շոտլանդիայի վայրի և ահեղ բնությանը, ուր շարունակ մրրիկն է ոռնում, իսկ մշուշի միջից հայտնվում և ապա դարձյալ այդ մշուշում անհետանում են մեռած հերոսների հոգիները, իսկ ողջ բնակարը լուսավորվում է ամպերի միջից հայտնվող լուսնի գունատ շողերով²: Շարունակ ներքին մի ընդհանրություն է

¹ **Ղերիկյան Վ.**, Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 1996:

² Перед глазами читателя высятся окутанные облаками угрюмые горы и холмы, голые или покрытые лесами, прорезанные расселинами, где разносится гулкое эхо и прячутся робкие косули и лани; пенистые ревушие потоки низвергаются с высоты; бурный ветер овеивает бесплодные равнины, поросшие вереском и чертополохом; гонимые им клубы тумана стелятся над топкими болотами и озерами, окаймленными тростником; темное море катит белопенные валы на замшелые прибрежные скалы. И над всем этим простерлось суровое небо, где проносятся мрачные тучи с теньями павших героев и являются небесные светила, одушевленные воле поэта. {См. обращения Оссиана к звезде ("Песни в Сельме"), луне ("Дар-тула"), солнцу ("Картон").} Все непрерывно движется, меняется, но движение однообразно и безрадостно. Это однообразие, монотонность пейзажей является в данном случае достоинством, ибо оно соответствует общему печально колориту. Особенно часто пейзаж озаряется луной, тусклый свет которой, с трудом пробивающийся сквозь волны тумана и смутные края облаков, гармонирует со скорбными думами слепого барда, оплакивающего ушедшие дни былой славы <...> Такая "мерная проза" (measured prose), как называл ее сам Макферсон, изобиловала некоторыми стилистическими

ստեղծվում բնության նկարագրությունների և շոտլանդացի ծեր բարդի հոգեվիճակի միջև: Այս մասին Գյոթեն Վերթերի միջոցով գրում է. «Ինչ հրաշալի աշխարհ է տանում ինձ այդ վսեմ քերթողը: Կարծես թափառում եմ դաշտերում, ուր փոթորիկն է մոլեգնում ու միացող մշուշի մեջ, լուսնի աղոտ լույսով նախահայրերի ոգիները հալածում: Լեռնագագաթներից լսում եմ մութ քարայրների ոգիների՝ անտառի հեղեղատի աղմուկից կիսով չափ իլացած հառաչը»¹: Բնության համանման նկարագրություններ գտնում ենք նաև Օսիանին հետևած մյուս հեղինակների ստեղծագործություններում: Ալիշանը սակայն հյուսիսի խստություններն իսկ պատշաճեցրել է հայոց աշխարհի բնությանը, այն ներկայացնելով մեր գրականության արտահայտչամիջոցներով:

Վերադառնալով լուսնի կերպարին՝ նշենք, որ այն Օսիանի երգերում բնությանը և ուրվականներին միահյուսված երրորդ գործող պատկերն է: «Քանի որ Ալիշանն իր գրական հերոսին համարում է ԺԷ դարի հեղինակ, բնականաբար ուրվականների և նրանց համարժեք բնության նկարագրությունների ողջ շերտը պետք է դուրս մնար: Այս պատճառով էլ գլխավոր գործող կերպար է դառնում լուսինը: Քանի որ մեր միջնադարյան բանաստեղծությունում այն գլխավորապես գեղարվեստական արտահայտչամիջոց ու համեմատություն էր», Ալիշանը լուսնին դիմում է հայրենների դիմառնական ոճով, նրանց կառուցվածքային առանձնահատկություններն իսկ կարողանալով պահպանել անգամ «Պլպուլն Ավարայրի» և «Լուսնկայն գերեզմանացն հայոց» պոեմներում:

Իմ բարձրագնայ լուսին՝ սկսվածքով հայրենների նման Ալիշանը հիշյալ երկու գործերը սկսում է հետևյալ տողերով.

штампами, из которых наиболее примечательны сложные эпитеты ("колесниче-ластный вождь", "снежнорукая дева", "темногрудый корабль" и т. п.), а также родительный падеж в определительной и описательной функциях ("бард времен минувших", "холм оленей", "Сельма королей", "Сваран островов бурь" и т. д.), {Такое употребление Макферсоном родительного падежа по образцу гэльской поэзии не всегда передается в переводе, поскольку некоторые сочетания выглядят в русском языке крайне несообразно.} который часто применяется для образования перифраз ("уста песен" - бард, "любовь героев" - красавица, "златокудрый сын небес" - солнце, "дочь ночи" - луна и т. д.). Эти стилистические приемы напоминали Гомера, Библию, но ни один английский поэт - современник Макферсона не прибегал к ним столь настойчиво и последовательно. Вообще говоря, в английской поэзии XVIII в. можно найти параллели к сравнениям, метафорам, олицетворениям и т. п., взятым из поэм Оссиана в отдельности, но их обилие и неперенная связь с природой в таких масштабах были присущи только стилю Макферсона.// Макферсон Дж. Поэмы Оссиана. Издание подготовил Ю.Д.Левин. Ленинград. 1983. С. 470.// История всемирной литературы. М.1988. С. 80.

¹ Գյոթե, Երիտասարդ Վերթերի տառապանքները, Ե., 1981, էջ 156:

*Ո՞նց գաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ
(Պլպուլն Ավարայրի, 258)*

*...Այ իմ լուսնակ գեղեցիկ, աստուածավառ դու լապտեր
(Լուսնկայն..., 288)*

Օսիանի գործերում լուսնի շողերով հայտնվում էին ուրվականները: Ալիշանը զարմանալի գեղարվեստական մի հայտնագործմամբ օգտագործելով վարդի և բլբուլի պատկերը, որն ուներ նաև հոգու և մարմնի փոխհարաբերության այլաբանական խորհուրդը, լուսնի շողերի ներքո ուրվականի փոխարեն ներկայացնում է բլբուլին՝ Եղիշեի հոգուն:

*Պլպուլ, քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հաւ՝ պրլպուլ մեր Աւարայրին,
Եղիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ,
Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարմրիկ (258)»¹:*

Այսպիսով, լուսինը Օսիանի ստեղծագործություններում խորհրդանշում է նաև երբեմնի փառքի հիշողությունը, իսկ նրա շողերը ծեր բարդի հոգում արթնացնում են անցյալի հուշերը: Ալիշանն էլ իր հերթին դիմելով լուսնին, բողոքում է հայրենիքի ճակատագրի համար, (ինչպես հայրեններում քնարական հերոսն էր բողոքում իր սիրելիի համար), իսկ լուսնի շողերը արթնացնում են անցած ժամանակների վերհուշը՝ առիթ դառնալով ևս մեկ ոգեկոչման: Նման պատկերի ենք հանդիպում նաև «Լուսնկայն գերեզմանացն հայոց» պոեմի վերջում:

*Մէկ քար մ'այլ կայ յԱնծանօթ հովտին,
Գրնա հոն կաթէ զվերջին քո լոյս,
Այն գերեզմանն է Նահապետին: (298)*

Իհարկե, չենք կարող չհիշել, որ Ալիշանի կապակցությամբ գրելով, Չարենցը «Մահվան տեսիլում»՝ հայ գրականության մեծերին իրենց ստեղծագործությունների բնորոշ առանձնահատկություններով ներկայացնելիս, առաջին անգամ օգտագործում է հենց լուսին բառը:

Լուսնի սառ լույսերով ողողված՝ մոտենում է նա երերուն:²

Հետևաբար քննելով լուսնի կերպարը, հարկ է նշել, որ «Պլպուլն Ավարայրի» և «Լուսնկայն գերեզմանացն հայոց» պոեմներում դա գլխավոր գործող անձն է: Իհարկե, հաշվի առնելով, որ «Նվագների» երրորդ՝ «Հայրունի» հատորում տեղադրված «Նահապետի երգեր» շարքը տպագրվել է 1847-1858 թթ. ընթացքում, իսկ «Պլպուլն Ավարայրի»՝ 1847 թ.,

¹ **Դևրիկյան Վ.**, Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 1996:

² **Չարենց Ե.** Պոեմներ, Բանաստեղծություններ, Երևան, 1984, էջ 486:

ապա 1858 թ., երբ հրատարակվեց «Լուսնկայն գերեզմանացն հայոց» պոեմը, պարզ է, որ այս վերջինն է եզրափակում շարքը՝ դրանով իսկ շրջանակելով ողջ շարքը թե՛ ժամանակագրական և թե՛ կառուցվածքային առումով:

Այսպիսով, պետք է փաստենք, որ «Նահապետի երգերով» ստեղծագործական «առումով արձագանքելով ժամանակի համաեվրոպական գրական շարժմանը, Ալիշանը դրանք ծառայեցնում է ժամանակի հայ գրականության առաջադրած խնդիրներին, Օսիանականությանը բնորոշ գեղարվեստական առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները ներկայացնելով հայ միջնադարյան գրականության պատկերային համակարգի միջոցով, որպես գիտնական նրբորեն քննելով ու միջնադարի հայ բանաստեղծության լեզվական յուրահատկությունները»¹ և վերջինիս լեզվական շղարշով պատելով իր գործերը:

БЕДЖАНЫЯ КРИСТИНА

Кандидат филологических наук, доцент

РЕЗЮМЕ

ОТЕЦ ГЕВОНД АЛИШАН И ДВИЖЕНИЕ ОССИАНИЗМА

Ключевые слова: Алишан, литература Европы, влияние, предромантическое движение, Оссиан и оссианизм, процесс, бард, лиризм, меланхолическое настроение, фольклор.

В статье проводится сравнительный анализ произведений арменоведа, учёного, этнографа Г. Алишана и представителя одного из старейших влиятельных кланов Шотландии Джеймса Макферсона. Сделана попытка показать принцип литературной мистификации поэмы Макферсона «Песни Оссиана», историко-географическую среду, дать информацию о публикации, о сюжете, об особенностях народной песни, а также представить влияние традиций народной кельтской поэзии на эти песни.

Упоминается о возникновении и дальнейшем развитии оссианского движения. Отмечается, что оссианизм проник в армянские литературные круги еще в начале прошлого века. В статье раскрывается причина «оссианизма» Алишана, утверждается, что публикация «Песен предка» на страницах «Базмавепа» в форме средневековых стихов была обусловлена не только тематическими и лингво-стилистическими влияниями, но полностью наоборот. Автор сознательно выбрал такую манеру письма, отдавая дань той волне оссианизма, которая прошла по всей Европе до этого.

¹ **Դերիկյան Վ.**, Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուականատենախոսություն, Երևան, 1996:

KRISTINE BEJANYAN
Candidate of Philology, Associate Professor

ABSTRACT
G.ALISHAN AND OSSIAN MOVEMENT

Keywords: Alishan, literature of Europe, influence, pre-romantic movement, Ossian and Ossianism, process, bard, lyrism, melancholy mood, folklore.

The article conducts a comparative examination of the armenologist, scientist and ethnologist G. Alishan's and one of Scotland oldest influential kindred's representatives, James Macpherson's creative works. An attempt is made to show the principle of literary mystification of James Macpherson's "Poems of Ossian", the historical-geographical atmosphere, the information about its publication, the plot, the peculiarities of the folk song, as well as to present the influence of Celtic poetic traditions in the poem.

The article refers to the emergence and further development of the Ossian movement. It is noted that the Ossianism penetrated to Armenian literary circles at the beginning of the last century. The article presents the reason for Alishan's "Ossianism", arguing that the publication of "Songs of the Ancestor" in "Bazmavep" in the form of medieval poems was conditioned not only by the thematic and linguistic-stylistic influences, but quite opposite. The author deliberately chose such a writing, paying tribute to the wave of Ossianism that had preceded it throughout Europe before.

REFERENCES

1. Алилова Д.Г. Интертекстуальность Оссиановской поэзии //Вестник Санкт-Петербургского университета. Спб. 2012. № 3.
2. Алилова Д. Г. Оссиановская поэзия Дж. Макферсона: поэтика формул и реминисценций //Вестник Вятского государственного гуманитарного университета. 2015. № 1.
3. Апрыщенко В. Ю. Клановая система Горной Шотландии: традиции и модернизация. Ростов н/Д., 2006.
4. Апрыщенко В. Ю. Уния и модернизация: становление шотландской национальной идентичности в XVIII-пер. пол. XIX в. Ростов н/Д., 2008.
5. Апрыщенко В. Ю. «Шотландия в новое время: в поисках идентичностей. СПб. 2016./
6. Ванслов В. В. Эстетика романтизма. М. 1966.
7. Вершинин И. В., Луков В. А. Предромантизм: новое в литературной эстетике //Известия Самарского научного центра Российской академии наук. 2009. Т. 11. № 4 (6).
8. Елепова М. Ю. Рецепция оссианизма в русской поэзии первой трети XIX века //Вестник Северного (Арктического) федерального университета. 2012. № 3.
9. История английской литературы. Т.1. Выпуск 2. /Под ред. М. П. Алексеева, И. И. Анисимова. М. 1945.
10. История всемирной литературы. М.1988. С. 80.
11. История Европы. Европа нового времени (XVII-XVIII века). М. 1994.
12. Луков В. А. Предромантизм: культурное явление и пути его осмысления //Знание. Понимание. Умение. 2010. № 1.

13. Макферсон Д. Песни Оссиана./ Издание подготовил и пер. с англ. Ю.Д.Левин. Ленинград. 1983. С. 493.
14. От классицизма к романтизму /Под ред. М. П. Алексеева. Л. 1970.
15. Ренёв Е. Г. Концепция цивилизации в философии истории шотландского Просвещения.// Цивилизации. М. 1993. № 2.
16. Соловьева Н. А. У истоков английского романтизма. М. 1988.
17. Треvelyan Д. М. Социальная история Англии. М. 1959. Айзенштат М. П. Власть и общество в Британии 1750-1850. М. 2009.
18. Ալիշան, Յուշիկք, հտ. Ա, էջ 123-124:
19. Ալիշան Ղ. Հայրունի, Վենետիկ, 1858, էջ 248:
20. Ալիշան Ղ. Քաղաքական աշխարհագրություն, 1853. էջ
21. Ալիշան Ղ. Երկեր, Երևան, 1981, էջ 99:
22. «Բազմավեպ», 1847, էջ 183:
23. Գյոթե, Երիտասարդ Վերթերի տառապանքները, Երևան, 1981, էջ 156:
24. Դերիկյան Վ., Ալիշանը և հայ հին գրականությունը, թեկնածուականատենախոսություն, Երևան, 1996:
25. Զարպիանալեան Գ. Պատմություն մատենագրութեան միջին և նոր դարուց, էջ 14:
26. Թամրազյան Հ. Հայ քննադատություն, հտ. Գ, էջ 89:
27. Ջրբաշյան Է., Գրողը և ժողովուրդը, էջ 70:
28. Չարենց Ե. Պոեմներ, Բանաստեղծություններ, Երևան, 1984, էջ 486:
29. Տերտերյան Ա., Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 68:
30. Black G. Macpherson's Ossian and the Ossianic Controversy. N.Y. 1926.
31. Blair H. A critical dissertation on the poems of Ossian, the son of Fingal. London. 1763.
32. British Philosophy and the Age of Enlightenment: Routledge History of Philosophy Vol. 5. Ed. by S. Brown. L.; N. Y. 2003.
33. Clark J. C. D. English Society, 1660-1832: Religion, Ideology and Politics During the ancient regime. Cambridge, 1985.
34. MacNeill N. The Literature of the Highlanders; A History of Gaelic Literature From the Earliest Times to the Present Day. Inv. 1892.
35. MacPherson J. The poems of Ossian, the son of Fingal. Inv. 1804.
36. Saunders T. B. The life and letters of James Macpherson. London. 1894.
37. Van Tieghem P. Ossian en France. Paris. 1917.

**ПОЭЗИЯ ГЕВОНДА АЛИШАНА В ОЦЕНКАХ
Ю. ВЕСЕЛОВСКОГО И В. БРЮСОВА**

Ключевые слова: Западноармянская поэзия, литературные взаимосвязи, антология, перевод, русская литературная критика, исследование.

Введение. История русско-армянских литературных взаимосвязей является одной из ярчайших и значимых страниц в жизни двух народов в деле сближения и обогащения их культурного наследия, отложивших глубокий след на мировоззрении, нравственных и эстетических ценностях как армянских, так и русских писателей, поэтов-переводчиков, литературных критиков.

С начала XX века армянская культура, в частности - литература, вызвала большой интерес у таких выдающихся мастеров слова, как М. Горький, Ю. Веселовский, В. Брюсов, А. Блок, О.Мандельштам, А.Белый, А. Ахматова и другие, которые не только оценили и полюбили ее, но и с большим вдохновением стали переводить лучшие ее достижения на русский язык.

Указывая на роль и значимость художественного перевода в мировой литературе, литературовед Л. Мкртчян писал: «Перевод художественной литературы – это диалог между народами, диалог лучших сыновей народа, ведущий к взаимопониманию, к взаимнеобходимому сотрудничеству.

Можно сказать, что основы диалогического мира гораздо более прочны, чем мира монологического»¹.

Основная часть. На рубеже XX столетия русские поэты - переводчики проявили глубокий исследовательский интерес к изучению творческого наследия Гевонда Алишана (настоящее имя – Керовбе Алишан; 6[18]июля 1820, Константинополь – 9 ноября 1901, Венеция), известного арменоведа, этнолога, ученого, поэта, переводчика, почетного члена католической конгрегации мхитаристов².

Известно, что многогранность личности Алишана, его поэтическое становление особенно проявились в годы его работы главным редактором периодического органа мхитаристов Венеции - журнала «Базмавеп»³ (1849 по 1855), на страницах которого печаталась и его лирика.

¹ Мкртчян Л. Если бы в Вавилоне были переводчики. Ереван. 1987. С. 9.

² См.: Алишан Г.// Литературная энциклопедия: В 11 т. - [М.], 1929—1939. Т. 1. - [М.]: Изд-во Ком. Акад., 1930. С. 661—662.

³ Там же. С. 661—662.

Впоследствии основное поэтическое наследие Алишана вошло в 5-ти томник, вышедший в свет в Венеции в 1857—1858 годах¹. Поэтические произведения Алишана написаны на грабаре, объединены в тематические циклы под общим названием «Напевы».

Его стихи отличаются широтой тематики, многообразием форм и размеров, они выделяются своим лексическим богатством и имеют ярко – экспрессивную окраску. Поэт первым внёс в армянскую литературу принцип поэтического цикла и культуру исторической и языковой стилизации, что послужило новому толчку в развитии армянской литературы.

Нравственные ценности, высшие патриотические чувства Алишана со всей яркостью отразились в романе «Воспоминания о родине армянской» (1869—1870), который по праву считается одним из лучших его прозаических произведений.

О яркой и одаренной творческой личности Алишана свидетельствуют также и его переводы из лучших достижений всемирной литературы, как произведения Байрона, Мильтона, Лонгфелло и других видных поэтов, которые впоследствии вошли в составленные им же сборники «Антология английских поэтов», «Американская лира».

О переводческом мастерстве Алишана также свидетельствуют и его переводы армянских народных песен на английский язык, что послужило важной вехой к популяризации армянского искусства в кругу англоязычных читателей.

Известно, что поэзия Алишана вдохновляла и имела большое влияние на поэтическое формирование целого поколения начинающих армянских писателей, для которых он был объектом восхищения и подражания.

Так, например, большим поклонником поэзии Алишана был Ав. Исаакян, для которого незабываемым событием послужила их встреча в монастыре Мхитаристов, о чем Варпет в своих воспоминаниях писал: «Я заранее предвкушал радость от свидания с нашим любимым Алишаном. Для нас, людей 90-х годов, имя его имело огромную притягательную силу. Мы знали наизусть чудесные стихотворения Патриарха: “Раздан”, “Соловей Аварайрский”, “Весна настала, армянский мирянин”, они были украшением наших учебников, мы с большим воодушевлением читали их на праздниках и вечеринках»².

Характеризуя литературное наследие Алишана, выделяя значимость его книг, Исаакян также писал: «К книгам его мы относились с тем же почтением, которое внушает абсолютный авторитет. С помощью его географических трудов “Айрарат”, “Ширак”, “Сисакан” мы познавали Армению и подобно ему, еще не видя заветных мест, уже любили Родину неизъяснимой любовью».³

¹ Там же. С. 661—662.

² **Аветик Исаакян.** Гевонд Алишан. //Армянское время. № 34. 22.05.17.

³ Там же.

Из русских поэтов – переводчиков, одним из первых творческое наследие Алишана стал изучать известный литературный критик Юрий Веселовский, который был также большим знатоком и популяризатором армянской литературы и культуры в целом.

По этому поводу литературовед А. Закарян в книге «Армения в литературно-общественной деятельности В. Брюсова», писал: «В годы учебы он систематически с увлечением изучал армянский язык, литературу, искусство и с 1891г. стал первым, кто своими переводами и исследованиями начал постоянно и периодически пропагандировать и популяризировать их в России. Таким образом, он сумел привить русскому читателю любовь и интерес к армянской культуре»¹.

Высоко оценивая заслуги Веселовского, А. Закарян также отмечал², что он тесными узами был связан с многочисленными деятелями армянской литературы, написал целый ряд стихотворений, посвященных Армении и армянскому народу.

Ярким подтверждением большого интереса русского поэта к армянской литературе может послужить издание поэтического сборника «Армянская муза» (1906 г.), изданная под редакцией Ю. Веселовского и проф. Г. Халатянца, послужившая прочным фундаментом в развитии русско - армянских литературных взаимосвязей.

Сборник открывается со вступительной статьей Ю. Веселовского «Несколько слов о новой армянской поэзии» 1906 г., где он представил целый период развития армянской литературы, выделив при этом наиболее известных ее представителей.

Так, в сборник вошли наиболее известные стихотворения из лирики Р. Патканяна, Смбата Шах-Азиза, Г. Додохяна, А. Цатуряна, О. Туманяна, А. Исаакяна, Г. Алишана, Сипиль и других поэтов, характеризующие лучшие образцы армянской поэзии.

Они были представлены переводами Ю. Веселовского, К. Бальмонта, Эллиса, Д. Пагирева, Л. Уманца, С. Головачевского, О. Чюминой, Н. Новича и других, которым удалось передать не только поэтическую индивидуальность армянских поэтов, но, и силу, и новизну их поэзии.

Характеризуя высшую культурную значимость сборника «Армянская муза» в деле популяризации армянской поэзии, литературовед А. Давтян писала: «До сих пор мы знакомились с теми работами Веселовского, в которых предметом внимания исследователя было преимущественно творчество армянских поэтов, проживающих в России, и лишь в некоторой мере поэтов, проживавших в Турции или в Западной Европе. Веселовский высоко ценил литературное творчество и культурную деятельность последних, что нашло свое исчерпывающее выражение в специальной работе о лите-

¹ Закарян А. Армения в литературно-общественной деятельности В. Брюсова. Ереван. Гитутюн. 2016. С. 7.

² См. : Там же. С. 8.

ратурном творчестве турецких армян. Толчком к созданию такого обширного исследования явились политические события эпохи Первой мировой войны.

...Ученый отчетливо понимал, что в этом благородном деле, помимо сведений о политическом и экономическом положении народа, огромную роль может сыграть, несомненно, и знакомство с духовной жизнью турецких армян».¹

О всестороннем интересе Ю. Веселовского к армянской культуре свидетельствует также его посещение в 1889 г. в Венеции обители мхитаристов² на острове Святого Лазаря вблизи Венеции, где он исследовал их деятельность, направленную на развитие культуры, искусства, науки.

Многочисленные исследования Веселовского из армянской литературы позволили ему заключить, что армянская поэзия XIX века, как и вообще вся новая армянская литература, разделяется на две главные ветви³: на *восточную*, к которой принадлежат поэты, представленные российскими армянами, культурным центром которых был Тифлис, отчасти - Москва и Петербург, и *западную*, представленную поэтами, уроженцами Турецкой Армении, жившими и действовавшими в Константинополе.

Веселовский указал, что у каждой из этих двух ветвей есть свои отличительные особенности, о чем он писал: «...Так, напр., турецко-армянские поэты всегда придавали особенное значение заботе о красоте и изяществе формы, иногда даже в ущерб внутреннему содержанию стихотворений; поэты, выставленные российскими армянами, наоборот, отводили в своём творчестве видное место идейному и тенденциозному элементу, подчас не обращая особенного внимания на тщательную отделку слога...».⁴

Выделяя идейное отличие закавказских и турецких поэтов, Веселовский справедливо писал: «Если закавказские поэты до последнего времени лишены были возможности правдиво и ярко отражать в своём творчестве участь армянского народа в пределах России, то страдания турецких армян затрагивались ими гораздо смелее и полнее, чем константинопольскими поэтами, имевшими дело с турецкою цензурою»⁵.

Исследуя хронологическое развитие ветвей армянской литературы, Веселовский также указал⁶, что в истории постепенного развития поэзии турецких армян сыграла известную роль влиявшая на некоторых константинопольских поэтов литературно-научная и просветительная община мхитаристов. При этом русский критик также выделял особую роль основателя

¹ Давтян А. Юрий Веселовский и армянская литература. Ереван. Айастан. 1970. С. 143.

² См.: Закарян А. Армения в литературно-общественной деятельности В. Брюсова. Ереван. Гитутюн. 2016. С. 8.

³ Армянская муза: сборник. Под ред. Ю.Веселовского, Г. Халатьянца. // Ю. Веселовский. Несколько слов о новой армянской поэзии. М. 1907. С.8.

⁴ Там же. С. 8.

⁵ Армянская муза: сборник. Под ред. Ю.Веселовского, Г. Халатьянца. // Ю. Веселовский. Несколько слов о новой армянской поэзии. М. 1907. С.8.

⁶ Там же. С. 8.

общины Мхитара Севастийского, в лице которого Веселовский увидел даровитого и талантливого человека, основавшего общину в начале XVIII века на острове св. Лазаря, в преддверии Венеции.

По замечанию русского критика, некоторые члены этой армяно-католической общины, согласно её основным задачам и уставу, своими трудами содействовали развитию армянской истории, географии, археологии, истории литературы, усиленно занимаясь переводами западно - европейских сочинений.

Это позволило Веселовскому¹ заключить, что они в то же время обогатили родную словесность многочисленными стихотворными произведениями, которые не получили более широкого распространения, главным образом, потому, что почти все они были написаны на древне - армянском классическом языке, мало понятном современным читателям.

Характеризуя творческое наследие Алишана, Веселовский отмечал, что поэт выделяется своими оригинальными стихотворениями и поэмами, в которых он ощутил их гуманную, мягкую, часто элегическую окраску.

В восприятии Веселовского они проникнуты любовью к людям и природе, глубоко насыщены религиозным чувством, а также и патриотической скорбью. Указывая на особенности поэтического мастерства Алишана, Веселовский писал: «Любовь к Родине и грустные думы при виде её бесправного и униженного положения — боевые мотивы у Алишана отсутствуют — отразились, между прочим, в таких стихотворениях и поэмах его, как «Армянский край», «Армянский гений», «*Храздан*», «Тебя, армянская страна, я оплакиваю», «Масисские горы» (беседа между Большим и Малым Араратом о судьбе Армении), «*Аварайрский соловей*» (прославляется смерть за Родину национального героя Вардана Мамиконяна, погибшего на Аварайрских полях 2-го июня 451 года, в решительном бою с персами)»².

Всестороннее и глубокое исследование армянской литературы позволило Веселовскому прийти к такому выводу: «В общем, армянская поэзия XIX века, особенно её восточная ветвь, является самым ярким отражением армянской народной души. На неё положили свой отпечаток те бесконечные невзгоды и страдания, которые в разное время обрушивались на этот народ, столь жестоко испытанный судьбою. Подобно тому, как мотивы армянских народных песен проникнуты неподдельною, хватающею за душу скорбью и тоскою, которая является отголоском многовековых мук, искусная армянская поэзия, развившаяся в XIX столетии, также носит в значительной степени безотрадную, сумрачную окраску, под влиянием новейшего фазиса трагической истории того многострадального края, который ассирийцы, парфяне, римляне, персы, арабы, византийские греки, монголы, турки, русские столько

¹ Там же. С. 9.

² Армянская муза: сборник. Под ред. Ю.Веселовского, Г. Халатьянца. // Ю. Веселовский. Несколько слов о новой армянской поэзии. М. 1907. С. 9.

раз завоёвывали, опустошали, вырывали друг у друга или делили между собою»¹.

Объективно оценивая всю уникальность армянской культуры, литературы, Веселовский справедливо считал, что, хорошо поняв и оценив друг друга, представители двух народов, исторически связанных между собою, могут объединиться и на почве общих идеалов подать друг другу руки для совместной работы.

Большим культурным событием для двух народов стало издание антологии «Поэзия Армении с древнейших времен до наших дней», вышедшей в свет в 1916 году под редакцией и со вступительной статьей Валерия Брюсова. Издание осуществилось при непосредственном содействии и поддержке Горького. Отметим, что многие переводы В. Брюсова и А. Блока из антологии до сих пор являются образцами высокого переводческого искусства.

В начале XX века В. Брюсов, ознакомившись с армянской поэзией, писал: «Знакомство с армянской поэзией должно быть обязательно для каждого образованного человека, как обязательно для него знакомство с эллинскими трагиками, с “Комедией” Данте, драмами Шекспира, поэмами Виктора Гюго»².

Исследуя литературно - общественную деятельность Брюсова, А. Закарян указал³, что до создания антологии «Поэзия Армении», Брюсов уже предпринимал большую работу по популяризации армянской поэзии. Так, после большой и плодотворной работы, когда подготовка сборника велась к концу, им был организован вечер, посвященный армянской поэзии, предназначенный для русской и армянской интеллигенции, членов «Общества свободной эстетики».⁴ В докладе прозвучала высшая оценка мэтра русской поэзии, который охарактеризовал армянскую поэзию так: «Теперь, когда я в подлиннике ознакомился с Нарекаци, Ахтамарци, Кучаком Наапетом, Саят - Нова, Туманяном, Исаакяном, Цатуряном, Ованнисяном, Терьяном и др. армянскими поэтами, - только теперь я понял, какой драгоценный клад был скрыт от русского общества. Мне кажется, что перед нами была закрыта дверь, ведущая в дивный рай, о существовании которого мы были в полном неведении»⁵.

Приветствуя и высоко оценивая культурную значимость антологии Брюсова, Веселовский писал: «Пусть же эта книга, в которой приняли участие современные русские поэты, любезно отозвавшиеся на приглашение редакции, поможет нашей читающей публике ознакомиться с душою

¹ Там же. С. 9.

² Поэзия Армении с древнейших времен до наших дней. В переводе русских поэтов. Под ред., со вступительным очерком и примеч. В. Брюсова. М. 1916. с. 12.

³ См.: **Закарян А.** Армения в литературно-общественной деятельности В. Брюсова. Ереван. Гитутюн. 2016. С. 7.

⁴ См.: Там же. С. 17.

⁵ См.: Там же. С. 16 -17.

армянского народа, с его идеалами и запросами, заставит его отнестись с сочувствием к тому краю, который столько перенёс и выстрадал на протяжении веков и в наши дни так часто обгагрывается кровью!»¹

Отметим, что в поэтических циклах антологии, таких как: из народной поэзии, поэзии средневековья и песни ашугов, новой поэзии - поэзия русских и турецких армян, в строгом хронологическом порядке представлены лучшие образцы армянской поэзии с ее идейным и глубоким философским содержанием.

В раздел “Поэзия турецких армян” вошли наиболее известные стихотворения из поэзии Г. Алишана, М. Пешикташляна, П. Дуряна, Сипил, Л. Шанта и других, которые представлены прекрасными переводами В. Брюсова, С. Шервинского, В. Ходасевича, К. Бальмонта, С. Боброва и других.

Цикл открывает стихотворение Г. Алишана “Раздан”, отразившее психологию и страдание армянского скитальца, который не может смириться со своей горькой утратой родного края.

Следует отметить, что тема скитальцев была доминирующей в творчестве многих армянских поэтов конца XIX – начала XX века, которые, живя на чужбине и проявляя определенную толерантность к другой культуре, до конца своей жизни оставались верными своим национальным традициям, нравственным и идейным ценностям своего народа.

Масштабность личности Алишана, его яркая поэтическая индивидуальность не могла не восхитить и воодушевить Брюсова, ценителя и знатока высшей поэзии.

И этот факт можно объяснить тем, что Алишан был не только известным представителем поэзии турецких армян, но и всесторонне образованным человеком своего времени, человеком энциклопедических знаний - полиглот, историк, филолог, переводчик, философ, географ, посвятивший всю свою жизнь служению науке, просвещению. Те же качества всесторонне одаренной личности можно выделить и у самого Брюсова, который также был одарен высшим поэтическим талантом, также внес большой вклад в совершенствование русского стихосложения, подняв его до нового, более высокого уровня.

Следовательно, между Брюсовым и Алишаном можно выделить много общих черт, это, в первую очередь, широта интеллектуального диапазона, блестящее знание языков, всемирной литературы, поэтическая, переводческая, а также научная деятельность, глубокая любовь к своей стране, ее культурным ценностям, высший гуманизм и т. д., что и позволяет заключить, что они были выдающимися деятелями своей эпохи, внесшими большой вклад в развитие культуры, науки, литературы.

В восприятии Брюсова Алишан был выдающимся, масштабным и самобытным поэтом, которого русский поэт представил так: «В технике

¹ Давтян А. Юрий Веселовский и армянская литература. Ереван. Айастан. 1970. С. 258.

стиха Алишан достигал большого совершенства, и его произведения до сих пор сохраняют любовь значительного числа читателей, как искренние и красивые вдохновения. Алишаном написано немало религиозных стихотворений, молитв и гимнов; есть поэмы, посвященные историческому прошлому Армении; есть живые описания природы; особую глубину стихам Алишана придает его трогательная любовь к Родине, воспламенявшаяся судьбой поэта, жившего на чужбине. В нашем сборнике Алишан представлен стихотворением «Раздан», в котором «вечная» тема поэзии – возвращение изгнанника в родной край – оживлена и согрета сильным чувством армянина-патриота»¹.

Фрагмент стихотворения в переводе С. Шервинского звучит так:

... Ա՛հ, անցուցնաց եղել ամեն.
 Ա՛հ, անցուցնաց է Հայաստան,
 Ձիւ անմեկիկ թողած աստեն
 Ետ անցնիւ գնաւ դո՛ւն այլ Հրազդան...
 Անցի՛ր, գրնա, ջրիկդ հայրենի,
 Արտունիք հերիք են Բաբկենի:²

... Прошло, исчезло все. Ушла,
 Исчезла мать Айастан.
 Я одинок здесь, у русла.
 И мимо ты бежишь, Раздан.
 Беги! Ты многое унес.
 Довольно мне, Бабкену, слез!³

(Пер. С. Шервинского).

Следует отметить, что перевод С. Шервинского выполнен несколько вольно, однако он близок к подлиннику своим содержанием и поэтическим стилем. Перевод, как и подлинник, оставляет большое эмоциональное воздействие на читателя, передавая грустное настроение, а также психологическое состояние лирического героя: / Ձիւ անմեկիկ թողած աստեն / /Я одинок здесь, у русла/. Перевод не уступает подлиннику и своим лирическим звучанием, где верно воссозданы и топонимы стиха, где переводчик верно передал и восточное имя лирического героя: / Արտունիք հերիք են Բաբկենի /, /Довольно мне, Бабкену, слез/. В переводе со всей тщательностью отражен и национальный колорит подлинника.

Отметим, что стихотворение «Раздан» Алишана впервые было представлено в сборнике Ю. Веселовского «Армянская муза» в переводе

¹ Поэзия Армении с древнейших времен до наших дней. В переводе русских поэтов. Под ред., со вступительным очерком и примеч. В. Брюсова. М. 1916. с. 5-6.

² Ալիշան Ղ., Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1981. էջ 58:

³ Поэзия Армении с древнейших времен до наших дней. В переводе русских поэтов. Под ред., со вступительным очерком и примеч. В. Брюсова. М. 1916. с. 400.

Л. Уманеца¹, который выполнен в канонах дореформенной орфографии. Фрагмент перевода на русском звучит так:

*20 Гдѣ вѣрный другъ? Гдѣ ты? гдѣ онъ?
Въ плѣну-ль у персовъ ждетъ васъ мука,
Иль васъ обѣялъ могильный сонъ?!
Хразданъ, Хразданъ,—родныя воды!
Ты плачешь въ часть лихой невзгоды!
25 Разорена страна родная,—
И ты бѣжишь, бѣжишь, Хразданъ,
Уныло слезы проливая,—
Бѣжишь въ предѣлы дальнихъ странъ!
Бѣги, Хразданъ, струясь привольно!..
30 Мнѣ горькихъ слезъ моихъ довольно!..²*

(Пер. Л. Уманеца)

Итак, читая фрагмент перевода, нетрудно заметить, что он также выполнен вольно, где переводчику удалось передать смысл и форму подлинника. Перевод не уступает подлиннику своим эмоционально – экспрессивным звучанием, где также воссозданы и некоторые топонимы стиха: как, например, название реки “Հրազդան”, “Хразданъ”, представленные в виде лирического обращения и восклицания: / *Хразданъ, Хразданъ,—родныя воды!./* / *Ты плачешь въ часть лихой невзгоды!./* Однако в заключительной строфе переводчик упустил имя лирического героя *Бабкен* /Արմուկիւր հերիւր էն Բաբկէնի/, а также в переводе упущено упоминание страны Айастан /Այս հայրենիքս է Հայաստան/, вместо которой представлено словосочетание “*страна родная*”, что, на наш взгляд, является большим упущением переводчика, который не указал конкретно страну, по которой так грустит и скорбит лирический герой.

Отметим, что при сравнении двух переводов можно выделить, что перевод Шервинского по сравнению с переводом Уманеца совершеннее, он близок к подлиннику не только смыслом, стилем, но и рифмическим и ритмическим построением и звучанием, где также верно переданы топонимы стиха.

В целом, судя по переводам, можно заключить, что переводчикам, несмотря на некоторые вольности и упущения, все же удалось воссоздать национальный колорит подлинника, его лексическое богатство, оба выделяются своим эмоционально - экспрессивным звучанием, что является важнейшей частью характерной для поэтического стиля Алишана.

Известно, что Шервинский также был тесно связан с армянской культурой, с гордостью считая себя учеником Брюсова. В 1916 году он

¹ <https://webmaster.yandex.ru/siteinfo/?site=www.vekperevoda.com>

² Армянская муза: сборник. Под ред. Ю.Веселовского, Г. Халатянца. М. 1907. С. 22.

дебютировал и как поэт, и как переводчик — напечатав переводы из армянских поэтов «Поэзия Армении с древнейших времен до наших дней», а впоследствии перевел также некоторые произведения Х. Абовяна, О. Туманяна и других известных писателей.

Итак, большой интерес и любовь Шервинского к Армении и к ее культуре послужили большим толчком к созданию прекрасных стихов, вошедших в книгу «Стихи об Армении», отразившие его искренние чувства к древнейшей сакральной земле.

Указывая на художественную сторону переводов сборника «Поэзия Армении», Ю. Веселовский писал: «Нельзя отрицать того, что редакция сборника стремилась к возможно более близкой передаче слоговых и ритмических особенностей подлинника, чередования рифм, созвучий, звукоподражаний, внешней формы куплетов, повторения одних и тех же припевов»¹.

Следовательно, будучи большим знатоком специфики армянской поэтики, учитывая существенные отличия армянской метрики от русской, он оценил переводы русских поэтов, как совершенные и яркие, одновременно отметив и то сложное обстоятельство, что работа переводчиков затруднялась незнанием армянского языка, и они переводили по подстрочникам.

Заключение. Исследуя оценки русских писателей-критиков и их интерес к Армении, можно заключить, что русско-армянские литературные связи своего расцвета достигли на рубеже XX столетия, когда известные поэты посредством своих переводов блестяще представили армянскую литературу, лучшие ее достижения.

Из вышеизложенных оценок Ю. Веселовского, В. Брюсова поэзии Алишана следует, что она покорила русских поэтов-переводчиков разнообразием своих тем, своей интеллектуальностью, глубиной мысли и чувств, которая была новым явлением в развитии новой поэзии турецких армян.

В своих исследованиях они выделили и указали на высшие образцы техники стиха Алишана, его метрическое построение, идейное и духовное содержание, отразившее высший патриотический пафос поэта, искренность и задушевность, а также эмоциональное и эстетическое воздействие на читателя.

Стихотворение Алишана «Раздан» в русских переводах, помещенное в сборники «Армянская муза», а впоследствии и в «Поэзия Армении», позволило читателям раскрыть психологию армянина, познать глубину его личной трагедии, не смиряющегося с чувством утраченной родины.

Итак, благодаря переводам Алишана на русский язык, русскоязычные читатели ознакомились с миром поэтической мысли наиболее видного и прогрессивного человека своей эпохи, яркого и самобытного представителя поэзии турецких армян.

¹ Давтян А. Юрий Веселовский и армянская литература. Ереван. Айастан. 1970. С. 260.

REFERENTS

1. Alishan G. Erker. Yerevan. Sovetakan groh. 1981. 397 p. (In Armenian).
2. Alishan G. // Literaturnay enciklopedia: V 11 t. — [M.], 1929—1939. T. 1. — [M.]: Izdat. Kom. Akad. 1930. Stb. 661—662. (In Russian).
3. Armianskaia muza: sbornik. Izdannyi pod red. I. U. Veselovskago i prof. G. A. Khalatiantsa. Tipo-litogr. T-va I. N. Kushnerev, 1907. // U. Veselovski. Neskolko slov o novoi armyanskoe poezii. 184 p. (In Russian).
4. Avetic Isaakyan. Gevond Alishyan. // Hayoc gamanak № 34. 22.05. 17. (In Russian).
5. Davtyan A. U. Veselovski I armyanskay literatura. Yerevan. 1970. 298 p. (In Russian).
6. Zakaryan A, Armenia v literaturno – obshchestvennoi deystelnosti V. Brusova. Izd. Gituteun NAN RA. 2016. 165 p. (In Russian).
7. Mkrtchyan L. Esli bi v Vavilone bili perevodchiki. Yerevan. Sovetakan groh. 1987. c. 437 c. (In Russian).
8. Poezia Armenii s drevneeshih vremen do nashih dney. V perevode russkikh poetov. Pod red., so vstupitelnem ocherkom I primech. V. Brusova. M. 1916. 720 p. (In Russian).
9. <https://webmaster.yandex.ru/siteinfo/?site=www.vekperevoda.com> (In Russian).

ԶԱՐՈՒՀԻ ՀԱՅՐԵԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ ՅՈՒՐԻ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ ԵՎ ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Բանալի բառեր՝ արևմտահայ բանաստեղծություն, գրական հարաբերություններ, անթուլոգիա, թարգմանություն, ռուս գրականագիտություն, հետազոտություն:

19-րդ դարի հայ գրականության պատմության մեջ Ղևոնդ Ալիշանը հայտնի է որպես արևմտահայ բանաստեղծության վառ ներկայացուցիչ, իր ժամանակի բազմակողմանի կրթված անձնավորություն, պատմաբան, բանասեր, թարգմանիչ, փիլիսոփա, աշխարհագրագետ, ով իր ողջ կյանքը նվիրել և ծառայել է գիտությանն ու կրթությանը: Նրա պոեզիան առանձնանում է հայրենասիրական բարձր պաթոսով, փիլիսոփայական բովանդակությամբ, մարդասիրությամբ, որոնք արտացոլում են բանաստեղծի բարոյական և գեղագիտական արժեքները:

Ալիշանի ստեղծագործական ժառանգությունը բարձր է գնահատվել ռուս քննադատների կողմից:

Ալիշանի բանաստեղծությունները բարձր է գնահատել ռուս բանաստեղծ-թարգմանիչ, քննադատ Յուրի Վեսելովսկին, ով նաև հայ գրականության և մշակույթի մեծ գիտակ ու երկրպագու էր:

Գնահատելով Ալիշանի ստեղծագործական ժառանգությունը՝ Վեսելովսկին նշեց, որ բանաստեղծն առանձնանում է իր յուրօրինակ պոեմներով և բանաստեղծություններով, որոնցում արտացոլված են մարդասիրական, նուրբ և հուզական երանգները:

Վեսելովսկու ընկալմամբ՝ դրանք տոգորված են մարդկանց և բնության հանդեպ սիրով, որոնք խորապես հագեցած են կրոնական զգացմունքներով, ինչպես նաև՝ հայրենասիրական վշտով:

Վ.Բրյուսովի «Поэзия Армении» ժողովածուի *արևմտահայ գրողների-նոր պոեզիա* բաժնում, ներկայացված է Ալիշանի «Հրագդան» բանաստեղծությունը Ս. Շերվինսկու թարգմանությամբ, որը բացում է արևմտահայ բանաստեղծների բանաստեղծությունների շարքը: Հայտնի է, որ Ս.Շերվինսկու հետաքրքրությունն Ալիշանի պոեզիայի հանդեպ պատահական չէր, քանի որ նա հայ մշակույթի մեծ գիտակ էր, ով հպարտորեն իրեն համարում էր Բրյուսովի աշակերտն ու հետևորդը:

Բրյուսովի ընկալմամբ՝ Ալիշանը եղել է նշանավոր, ինքնատիպ բանաստեղծ, և «Поэзия Армении» ժողովածուի նախաբանում նշել է բանաստեղծի պոետիկայի ինքնատիպությունը, հայրենիքի հանդեպ անմնացորդ սերն ու խորը զգացումը:

Վեսելովսկին բարձր գնահատեց նաև Բրյուսովի անթոլոգիայի մշակությանը նշանակությունը, որ համարժեքորեն ներկայացրեց հայ պոեզիայի լավագույն օրինակները, ինչպես նաև ամբողջ հայ գրականության յուրահատկությունն ու ինքնատիպությունը:

ZARUI HAYRYAN

Candidate of Philology, Associate Professor

ABSTRACT

THE POETRY OF GEVOND ALISHAN AS ASSESSED BY Y. VESELOVSKY AND V. BRYUSOV

Key words: poetry of Turkish Armenians, literary relationships, anthology, translation, Russian literary criticism, research, phrase.

Ghevond Alishan (6 [18] July 1820, Constantinople - November 9, 1901, Venice) entered the history of literature as a well-known representative of the poetry of Armenians, a comprehensively educated person of his time, a man of encyclopedic knowledge, polyglot, historian, philologist, translator, philosopher, geographer who devoted his whole life to serving science and education. His poetry is distinguished by the highest patriotic pathos, philosophical content, humanism, which reflected the poet's moral and aesthetic values.

Alishan's poem "Hrazdan" translated by S. Shervinsky was included in the collection "Poetry of Armenia", which opens a whole cycle of poems in the "New Poetry" section - by Turkish Armenians. S. Shervinsky's interest in Alishan's poetry was not accidental, since he was a great popularizer of Armenian culture, who proudly considered himself a student of Bryusov.

Alishan's creative legacy has evoked a wide response from Russian critics. So, in the perception of Bryusov, Alishan was an outstanding, large-scale and original poet, who, in his preface to the collection "Poetry of Armenia", pointed out the perfection of the poet's verse technique, warmed by him by his strong and deep feeling for his homeland.

Alishan's poetic personality aroused great interest in the Russian poet-translator and critic Yuri Veselovsky, who was also a great connoisseur and popularizer of Armenian literature and culture in general.

Describing the creative heritage of Alishan, Veselovsky noted that the poet stands out for his original poems and poems, in which he sensed their humane, soft, often elegiac coloring.

In the perception of Veselovsky, they are imbued with love for people and nature, which are deeply saturated with religious feeling, as well as with patriotic grief.

Veselovsky also highly appreciated the cultural significance of Bryusov's anthology, which adequately presented the best examples of Armenian poetry, as well as all the uniqueness and originality of Armenian literature.

**Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԹԱՐԳՄԱՆԻՉ. «ՀԱՅՈՑ ԵՐԳՔ ՌԱՄԿԱԿԱՆՔ»-Ի
ԱՆԳԼԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՉ**

Բանալի բառեր՝ Ղևոնդ Ալիշան, թարգմանություն, Հայոց Երգք Ռամկականք, անգլախոս հասարակություն, Մխիթարյան միաբանություն, ազգային մշակութային արժեք, համարժեքություն, գուգադրական քննություն

Վիթխարի է Ղևոնդ Ալիշանի ավանդը հայ մշակութային կյանքի տարբեր ասպարեզներում, այդ թվում նաև թարգմանչական արվեստի զարգացման գործում: Ղ. Ալիշանի՝ Բայրոնից, Շիլլերից, Լամարթինից և այլ մեծանուն հեղինակներից կատարած չափաժողով և արձակ թարգմանությունները օրգանապես ներմուծվել են գրականության ոլորտ որպես ինքնատիպ նմուշներ, որոնք առ այսօր էլ արդիական են և ունեն համակողմանի քննության անհրաժեշտություն: Այս առումով, բնորոշ են Հովհ. Թումանյանի հետևյալ խոսքերը. *Լավ թարգմանությունը համարժեք է ինքնուրույն ստեղծագործության:*

Ղ. Ալիշանը արժարժում էր ազգային-հայրենասիրական թեմաներ և լինելով օտար լեզուների, մասնավորապես անգլերենի քաջ գիտակ՝ նա գուգահեռաբար կատարում էր թարգմանություններ՝ աշխարհին ներկայացնելու հայ ժողովրդի մշակութային արժեքները:

Թարգմանության գործընթացը մարմնավորել է գիտության և քաղաքակրթության զարգացումը՝ իր անգնահատելի դերակատարությունը ունենալով ազգային մշակույթի և գրականության ստեղծման և հարստացման գործում: Բացի այդ թարգմանական գործունեությունը ունի համազգային կարևոր նշանակություն, քանի որ որևէ ժամանակահատվածում գրական ասպարեզում կատարվող իրողությունները և դրանց արտացոլումը թարգմանության միջոցով արձագանքում են մարդկությանը հուզող հարցադրումներին և խնդիրներին, այսպիսով կատարելով միջմշակութային հաղորդակցության դերը: Անդրադարձը նման ազգային-ժողովրդական ստեղծագործություններին ուներ իր դրդապատճառները, որոնք արտացոլվել են «Բազմավեպում», և պայմանավորված էր համաեվրոպական գրական շարժմամբ, այնուհետև ազգային ինքնության զարթոնքով, ինչպես նաև ժողովրդական ստեղծագործություն-

ների թողած հայրենասիրական, բարոյադաստիարակչական ազդեցությամբ:

1848 թ. ապրիլից «Բազմավեպի» էջերում Ալիշանը ձեռնարկում է տպագրել «Քնար Հայկականք» խորագիրը կրող շարքը: Հայոց Նահապետը ազգային ինքնության արտացոլման և վերելքի հենքերից էր համարում ազգային երգերի, ժողովրդական ավանդությունների հավաքումը, դասդասումը և ուսումնասիրությունը: «Հայոց Երգք Ռամկականք» աշխատությունը, որը լույս տեսավ 1852թ. անգլերեն զուգահեռ թարգմանությամբ, որը փայլուն փոխակերպվել է Ղ. Ալիշանի կողմից և ստացել «Popular Armenian Songs» խորագիրը: Նմանատիպ զուգադիր հրատարակությունները, որոնց ջատագովն ու հիմնադիրն էր Մխիթար Մեբաստացին, լայն տարածում ունեին Մխիթարյան միաբանությունում և առ այսօր էլ զարմացնում են նրբաճաշակ հրատարակչական ոճով և գիտական մոտեցմամբ:

Ալիշանը շարունակեց զուգադիր՝ տվյալ դեպքում հայերեն-անգլերեն թարգմանության ավանդույթը: Ալիշանը ծանոթագրության մեջ անգլերենով հակիժ ներկայացնում է «Հայոց Երգք Ռամկականք» շարքի ստեղծագործությունների ստեղծման ժամանակը, որոնք հիմնականում XIV կամ նույնիսկ XIII դարերից են հասնելով մինչև իր ապրած օրերը: Ավելին, նա ընդգծում է, որ այդ գործերի մեծ մասը վերցրել է Մբ. Ղազարի գրադարանի հայկական ձեռագրերից: «Հայոց Երգք Ռամկականք» շարքը հայ աշուղական և գուսանա-ժողովրդական երգերի ինքնատիպ ամբողջություն է: Շարքին կից նա գրում է մի նամակ-առաջաբան՝ հասցեագրված Լոնդոնի «Բարձրագույն դրան ընդհանուր խորհրդականին» եւ դիվանագետ Էդուարդ Զոհրապին, որը եղել է Լոնդոնում Օսմանյան կայսրության գլխավոր դեսպանը 1838-1841թթ: Նամակում ասվում է. *Ներկայացնելով բրիտանական հասարակությանը հայկական ժողովրդական երգերի հավաքածուի սույն հատորը, մենք կարծում ենք, որ չէինք կարող այն նվիրել մի այլ անձնավորության, որը Ձեզնից ավելի արժանավոր լիներ. Ձեզ, որ մեր ազգի ամենանշանավոր ներկայացուցիչն է Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում: Մեկը՝ որն իր դիվանագիտական բազում հոգսերի եւ դժվարությունների ընթացքում հանգիստ է գտնում մշակույթով զբաղվելով: Այն խոնարհ ակնածանքը, որը Դուք վայելում եք մեր միաբանության անդամների կողմից, որոնք ժամանակ առ ժամանակ այցելում են Մեծ Բրիտանիա, մեզ հնարավորություն ընձեռնեց հրապարակավ ազդարարելու այդ բարեկամությունը, որը գոյություն ունի մեր միջև՝ այն ուժեղագույն զգացումը, որը կապում է նույն ազգի անդամներին օտար երկրում: Հիշյալ բարեկամությունն ու ակնածանքը, որը գոյություն ունի Ձեր նկատմամբ, անկասկած բաժանում են նաեւ անգ-*

լիացի մտավորականները, որոնք ուշադրությամբ եւ սիրով ընդունում են մեր այս փոքրիկ աշխատությունը:

Լոնդոն, 22 օգոստոսի, 1852 թ. Հ[այր] Ղեւոնդ Ալիշան:

Ալիշանը «Հայոց Երգք Ռամկականք»-ի միջոցով անդրադարձ կատարեց համահայկական և ինչու ոչ համամարդկային մի շարք խնդիրներին և զգացումներին՝ շոշափելով այնպիսի նուրբ հոգեբանական թեմաներ, ինչպիսիք են եպիսկոպոսի կյանքի ու մահվան պայքարը, որդու կորստից մոր վշտի ահագնությունը, Աստծո պարգևած կյանքը գնահատելու ունակությունը և, իհարկե, հայրենասիրության արժանիքները: Եվ այս ամենն արվում էր աշխարհիկ բառապաշարով, «ռամկական» քաղցրիկ բառապաշարի հմուտ գործածությամբ: Ալիշանը հիացմունքով է խոսում այսպիսի երգերի մասին. *«Այսպիսի երգերը շատ անգամ ավելի լավ կիմացնեն ազգին հանճարը, քան թե ծանր գրվածքներ, եւ կգտնվին անոնց մեջ անանկ սքանչելի գուրգվածք, որ միայն իրենց ռամկական անունին համար հասարակ բան կկարծվին, բայց ճշմարիտը՝ գերագույն գրվածոց կարգը անցնելու են»*: Ավելին գործիչն առանցքային էր համարում այլազգի ընթերցողին ներկայացնելու նմանօրինակ երգերը, այսպես. *«Փափաքելի բան է, որ մեր ազգայինք ալ ուրիշ բարեկիրթ ազգաց պէս վառուէին ազգային աւանդութեանց սիրովը, ու ձեռքերնէն եկածին չափ ջանային հաւաքել այնպիսի երգեր, անմեղ խաղեր, պատմութիւններ ու առակներ, ետք ուրիշներուն ալ հաղորդէին՝ կամ առանձին տպագրութեամբ և կամ ազգային օրագիրներէն մէկուն խրկելով»* (Շտիկյան, 1981):

Անշուշտ, «Հայոց Երգք Ռամկականք» աշխատությունը նույնքան անգնահատելի նշանակություն ունեցավ նաև հայ գրականության համար, քանի որ բազմաթիվ և բազմապիսի ժողովրդական կոթողներ վերածննդի հնարավորություն ստացան և ներշնչեցին հաջորդող շրջանի հայ գրողներին:

Ղ. Ալիշանը խորաթափանց գեղարվեստագետ էր և, աներկբայորեն, հիանում էր «աստվածապարզ» գրաբարի բացառիկությամբ, բայց մերթ ընդ մերթ իր ստեղծագործություններն ու աշխատությունները ներկայացնում էր, ինչպես Հր. Աճառյանը կասեր՝ «ալիշանյան աշխարհաբարով»՝ ելնելով դարաշրջանի լեզվաքաղաքական դրդապատճառներից: Հմտորեն թարգմանելով «Հայոց Երգք Ռամկականք»-ը՝ Ալիշանը բացառապես միտված է եղել պահպանել ազգամշակութային և ռճալեզվական նրբերանգները՝ ընդգծելով հայ ժողովրդի ոգու ամրությունն ու հայրենիքի նկատմամբ անհուն սերը, նվիրումը և վեհ զգացմունքները:

Մեծանուն գործիչն «Հայոց Երգք Ռամկականք»-ը սկսում է հակիճ, բայց ազդեցիկ՝ «To the British Public» (Բրիտանիայի հասարակությանը)

առաջաբանով, որտեղ հեղինակը ներկայացնում է «Armenian Popular Songs»-ը՝ որպես համեստ շարք (humble collection), մի գողտրիկ հայկական գրական անկյուն՝ ի համեմատ հղկված և բարգավաճ հայկական ավանդական գրականության (cultivated and flourishing literature), այնուհետև Ալիշանը արտահայտում է հետևյալ մտքերը *...but considering the frequent revolutions of that unhappy nation, and the incursions of so many barbarous tribes, which, during the oppressive slavery to which they reduced its inhabitants, not only destroyed its arts and literature, but even extinguished the last gleam of the poetic fire of the Sons of Ararat*. Այսպիսով, Ալիշանը նրբորեն ներկայացնում է անգլախոս հասարակությանը հայ ժողովրդի աշխարհաքաղաքական իրավիճակը՝ նշելով, որ շատ բարբարոս ցեղեր ոչ միայն փորձել են ավերել և ոչնչացնել արվեստի և գրականության կոթողներ, այլև մարել են Արարատի Որդիների (the Sons of Ararat) ստեղծագործելու և արարելու կրակը:

«Հայոց Երգք Ռամկականքը» թեմատիկ և ժանրային առումով բավականին ընդգրկուն է և համակողմանի: Աշխատության հենց սկզբում գետեղված են հայրենիքին և հայրենի հողին նվիրված երգերը, որոնց անգլերեն թարգմանությունը կատարված է մեծ վարպետությամբ, ինչպես նաև ազգամշակութային բաղադրիչների համահունչ և բնական փոխակերպությամբ: Բնագրի պատկերավոր տարրերի հարազատ թարգմանությունը նորովի է արտացոլում հուզական-արտահայտչական-գնահատողական երանգները ու ռճական առանձնահատկությունները:

Այսպես, հայրենիքին նվիրված մի շարք երգերում գեղարվեստական կերպարը կամ կերպարները միշտ տանում են հաղթանակ՝ լինի դա բարոյահոգեբանական կամ առարկայական: «*Ի Լեւոն որդի Հեթմոյ*» երգում Լեւոնը գերի է ընկնում Տաճկաց մոտ, և վերջիններս ստիպում են նրան կրոնափոխ լինել, բայց անհողորդ է Լեւոնի հավատքը, որը փրկում է նրան իր հոր գալստյամբ և ազատություն ձեռք բերելով: Բնագիր և թարգմանության զուգադրական քննությամբ բացահայտվում է, որ վերոհիշյալ երգի գրեթե յուրաքանչյուր քառյակի վերջին երկու տողերը Լեւոնի աղոթքի կրկներգերն են, որոնք էլ ավելի են ընդգծում, զորացնում և ամրացնում հայ ժողովրդի հավատքը: Բերենք հայերեն և անգլերեն միևնույն հատվածի օրինակ, այսպես.

Աւաղ ըզԼեւոնն ասեմ

Որ Տաճկաց դուռն ընկել գերի:

Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս.

Սուրբ Խաչն օգնական Լեւոնիս ու ամենուս:

*I say alas! For Leo, who has fallen
Into slavery the power of Moslems.
My light, my light, and holy Virgin!
The holy Cross aid Leo and all!*

Մույն հատվածը և առհասարակ «Հայոց Երգք Ռամկականք»-ը իր ամբողջությամբ պարզ ու շիտակ, բայց միևնույն ժամանակ բարձր արժանքիներով հագեցած չափածո է՝ լեզվի բյուրեղային հղկվածությամբ, նրբորեն մտածված և մեկնաբանված համարժեք թարգմանությամբ: Ոչ մի բնագրային տարր ու բառ չեն վրիպել Ալիշան-թարգմանչի աչքից, և, աներկբայորեն, անգլերեն հատվածը բնագրի հայելային պատկերն է և համահունչ անգլերեն լեզվի իմաստաբովանդակային և լեզվառճական առանձնահատկություններին:

Այս առումով, հարկ է նշել Նյումարկի այն տեսակետը, որ համարժեք և անհամարժեք թարգմանության հստակ սահմանազատում գոյություն չունի, քանի որ թարգմանիչը, ձգտելով բարելավել թարգմանության որակը, անդադար լուծումներ գտնելու որոնումների և փնտրտուքների մեջ է: Տեսաբանը գտնում է, որ «բացարձակ» կամ «կատարյալ թարգմանություն» հասկացությունը ուտոպիա է և ընդգծում է, որ տեղ-տեղ թարգմանիչը պետք է գործի դնի իր «վեցերորդ զգայարանը»՝ պարզաբանելով, թե սկզբնաղբյուր տեքստի որ մասն է պետք թարգմանել բառացիորեն, իսկ որը՝ իրադրային մոտեցմամբ (Newmark, 1988). Հատվածը, անշուշտ համաքրիստոնեական և համամարդկային խնդրի երանգավորում ունի, այնուամենայնիվ այն արտացոլվում է հայ ժողովրդի տառապանքների պրիզմայի ներքո ու ստանում է ազգային և բնիկ հայկական ոգի: «Հայոց Երգք Ռամկականք»-ը ինքնատիպ դրսևորում է, քանի որ մի կողմից Ալիշանը հավաքագրել, դասդասել և կազմել է այս շարքը, մյուս կողմից՝ թարգմանել՝ պահպանելով գաղափարաբանական, գեղագիտական և ազգագրական արժեքները:

Հայրենիքին նվիրված հաջորդ երգը՝ «Սուգ դստեր մեծի իշխանի» վերնագրով, ներկայացնում է հայ կնոջ անձնվեր կերպարը, նրա անձի բարոյահոգեբանական զոհողությունը հանուն ընտանիքի և հայրենիքի բարօրության: Թեմայի առանցքում հայոց մեծն իշխանի դստեր անխուսափելի ամուսնությունն է Թաթար խանի հետ: Անշուշտ, երգը հագեցած է աղիոգորում լացով և ցավագին ընկճախտով, քանի որ իշխանի դուստրը այլակրոն ամուսին է ունենալու, բայց հատվածում դժբախտ բախտի դրամայի թնջուկում ի հայտ է գալիս պառավ դայակի բարոյախրատական մեջբերումը՝ հոգեբանական և լայնախոհ նուրբ դիտարկմամբ, այն իր բովանդակությամբ ընդգրկում է հետևյալ գաղափարը. նույնիսկ օտար և

այլախոհ աշխարհում հայ կինը պետք է հիշի, աջակցի և գործի ի սպաս հայրենիքի և հայ ժողովրդի: Այսպես.

*Ականջըդ բաց լըսէ խրատիս,
Մըտիդ ձրգես էս պառաւիս.
Ուր որ գընաս ինչ տեղ ըլնիս,
Հաստատ մընաս լուս հաւատիս:
Չըմոռանաս Հայոց ազգիս,
Միշտ հանապազ նըրան օգնիս,
Ամենայն ժամ՝ միտքըդ ձրգիս
Հայրենեացըդ պիտոյ ըլնիս:
Էհ, Տէր ընդ քեզ, գընաս բարեւ,
Քրիստոս պահէ քո լոյս արեւ:
Open thy ear, and listen to my counsel,
Remember this old woman:
Wherever thou shalt go and wherever thou shalt be,
Always hold fast thy bright faith.
Forget not of Armenian nation;
And always assist and protect it.
Always keep in thy mind
To be useful to thy country.
Oh! God be with thee, farewell!
May Christ preserve thy bright sun!*

Հատվածում ներկայացվում է ծեր հայ կնոջ իմաստությամբ և կենսափորձով հարուստ խոսքերը՝ ուղղված իշխանի աղջկան, որոնք անգլերենով թարգմանված են բանաստեղծական համաչափ և զուսպ երանգներով: Հարկ է նշել, որ հայերեն տարբերակում տեղ-տեղ նկատվում են հրամայական արտահայտություններ (ականջըդ բաց լըսէ խրատիս; մըտիդ ձրգես էս պառաւիս; չըմոռանաս Հայոց ազգիս և այլն), որոնք հմտորեն ներմուծվել են անգլերեն թարգմանության մեջ՝ շեշտադրելով և ամրացնելով ծեր կնոջ ասույթը (open thy ear, and listen to my counsel; remember this old woman; forget not of Armenian nation, etc):

Հետաքրքրական է նաև ալիշանյան անգլերեն թարգմանությունների լեզուն և ոճը, հատկապես ազգամշակութային բաղադրիչների փոխակերպման հարցում, օրինակ մի շարք ազգային երանգ ունեցող արտահայտություններ, ասենք՝ *լեզուդ սեւնայ- May thy tongue turn black, բերանդ չորնայ- thy mouth become dry!*, *մենք ամենքսու ցաւըդ տանենք - Let us all bear thy grief together* և այլն թարգմանված են ձևաբովանդակային ամբողջության պահպանությամբ, մինչդեռ կան անթարգմանելի կապակ-

ցություններ, որոնք վերարտադրվել են թիրախ ընթերցողի լեզվամտածողությանը մոտ կամ համապատասխան, ինչպես՝ *Ճարճդ կըտրած –a foolish maid /անմիտ աղախին/, վայ իմ գըլիսիս-Unhappy me! /անբախտ կամ ապերջանիկ եմ/* և այլն:

«Հայոց Երգք Ռամկականք» շարքում երբեմն-երբեմն նկատվում են նաև գրադարձության օրինակներ, որոնք ուղեկցվում են մանրակրկիտ մեկնաբանություններով և ծանոթագրվում են, ինչպես *ի մոյտան ելել-come into meydan*, որը բացատրվում է որպես թուրքական ծագում ունեցող տարր և նշանակում է *հրապարակ դուրս գալ կամ ի հայտ գալ, լավաշ կամ լոշ –lavash, losh*, որը ներկայացվում է որպես հայկական բլիթ /pancake/:

Ալիշանը մի կողմից ներկայացնում է գեղարվեստական արժեք ունեցող շարք, մյուս կողմից էլ՝ թիրախ ընթերցողին տալիս է համապարփակ հանրագիտարանային տեղեկություն իր ծանոթագրություններում, որոնք ընդգրկում են պատմական Հայաստանի տեղանուններն ու դրանց մասին եղած իրական պատմություններն ու երբեմն էլ ավանդազրույցները, ինչպես օրինակ Խոր Վիրապի, Կիլիկիայի մայրաքաղաք Սիսի, Նոր Զուղայի, Մասիսի, Էջմիածնի, Գեղարդա վանքի, Մուղնիի, Շամիամակերտի, Աղթամարի և այլ տեղանունների մասին:

Ինչպես վերը նշեցինք, Ալիշանը «Ռամկականքի» շարքը փորձել է ներկայացնել համակողմանիորեն՝ անդրադառնալով կյանքի և կենցաղի տարբեր խնդիրներին: Այս առումով, հետաքրքրական է կյանքի քաղցրության թեմային անդրադառնող երգը, որտեղ եպիսկոպոսը, նոր այգին դեռ չտնկած և դրա պտուղը դեռ չհամտեսած, ողբում է իր մահվան մոտալուտ իրողությունը: Երգը սկսվում է հետևյալ տողերով.

Յամէն առաւօտ եւ լոյս

Պլպուլն էր նստեր յայգոյս.

Քաղցրիկ ձայներ այս վարդոյս.

Արի եկ ել յայս այգոյս:

Յամէն առաւօտ եւ լոյս

Գաբրիէլ ասէր հոգւոյս

Արի եկ ել յայս յայգոյս

Այս իմ նորատունկ այգոյս:

Every morning and at dawn

The nightingale sitting in my vineyard,

Sing sweetly to this my rose:

Rise and come from this vineyard.

Every morning and at dawn

Gabriel says to soul:

*Rise and come from this vineyard,
From this newly-built vineyard.*

Ներկայացնելով մարդու՝ կյանքից հեռանալու սարսափը՝ հատվածում ընդգծվում է շնչավոր էակների ինքնապաշտպանական բնագործը և վախը մահվան նկատմամբ, «չգոյ»-ի գաղափարը և մոտալուտ ֆիզիկական կենսագործունեության դադարը հերոսի դրաման է: Այգին իր տքնաջան աշխատանքի արդյունքն է, և եպիսկոպոսը ներքին պայքարի մեջ է բնության օրենքի հետ, որը հատկապես ընդգծվում է իր կատարած անխոնջ աշխատանքով. չէ որ նա քար է կրել ձորերից, պատ է բոլորել այգու համար, տնկիրներ ցանել, ջրել և այլն: Երգը ամբողջությամբ պատկերավոր է, առկայություն և մարդու փոխտեղակայվող զգացումներով ու կերպավորումներով, որոնք ստեղծել են ձևաբովանդակային ամբողջություն: Ալիշանի թարգմանությունը մի առանձին գրական կոթող է, որտեղ պահպանված են հանգավորման և ռիթմային կառույցները, ինչպես նաև իմաստաբովանդակային առանձնահատկությունները:

Անշուշտ, դժվար է մեկ ուսումնասիրության շրջանակներում բազմակողմանիորեն ներկայացնել Ղ. Ալիշանի թարգմանական գործունեությունը, նրա կիրառած սկզբունքներն ու օրինաչափությունները, որոնք մի ուրույն էջեր են բացում հայ թարգմանական արվեստում: Մեր համեստ ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Ղ. Ալիշանը հայ ընթերցողին է փոխանցել և նորովի բացահայտել հայ ազգային գրական կոթողները, ավելին, թարգմանել է դրանք՝ համաձայն համարժեքության սկզբունքի, հեղինակի ոգու, լեզվի և ոճի: Ալիշանն առանցքային էր համարում թարգմանության կատարած գործառույթների անհրաժեշտությունը՝ որպես ազգային լեզվի և գրականության զարգացում, ազգամշակութային արժեքների ընկալում, ճանաչում և փոխհարստացում:

REFERENCES

1. Ghevond Alishan, *Grakan jarangutjun, namakner, hator* 5, Academia hrat., Yerevan, 1969, page 15.
2. Ghevond Alishani Erkery, kazmec S. Shtikyan, Yerevan, 1981.
3. Armenian Popular Songs translated by Leo Alishan of the Mechitaristic Society, Venice, St. Lazarus, 1852.
4. Newmark P., *A Textbook of Translation*. New York, London: Prentice Hall, 1988.

GASPARYAN LUIZA
Candidate of Philology

ABSTRACT

GHEVOND ALISHAN AS A TRANSLATOR. ON THE TRANSLATION OF “ARMENIAN POPULAR SONGS”

Key words: Ghevond Alishan, translation, Armenian Popular Songs, English-speaking society, Mkhitarist Congregation, national cultural value, эквивалентность, comparative study.

Ghevond Alishan (1820-1901) is one of the brilliant members of the Mkhitarist Congregation, who carried out a giant work in the field of Armenian Studies. Alishan emphasized and reinforced the significance of the cultural, historical treasures of the Armenian nation, as one of the ancient civilization of the world, which afterwards inspired him to assemble, classify and translate into English the cycle of folk and gusan songs entitled as “Armenian Popular Songs”. The comparative analysis of the original folk songs and its English translations has shown that Alishan was a skillful composer, which aimed at transferring the masterpieces of Armenian national culture to English speaking reader by preserving the principles of faithfulness, the spirit, the style and language of popular songs.

ГАСПАРЯН ЛУИЗА
Кандидат филологических наук

РЕЗЮМЕ

ГЕВОНД АЛИШАН - ПЕРЕВОДЧИК. О ПЕРЕВОДЕ «АРМЯНСКИХ НАРОДНЫХ ПЕСЕН»

Ключевые слова: Гевонд Алишан, перевод, Армянские народные песни, англоязычное общество, Конгрегации Мхитаристов, национально-культурная ценность, эквивалентность, сравнительное исследование.

Гевонд Алишан (1820–1901) - один из блестящих деятелей Конгрегации Мхитаристов, проделавший огромную работу в области Арменоведческих исследований. Алишан подчеркнул значение культурных, исторических сокровищ армянского народа, как одной из древнейших цивилизаций мира, которые впоследствии вдохновили его на составление, классификацию и перевод цикл народных и гусанских песен под названием «Армянские народные песни». Сравнительный анализ народных песен с английским переводом показал, что Алишан был искусным переводчиком, цель которого - донести до англоязычного читателя шедевры армянской национальной культуры, сохраняя принципы эквивалентности, дух, стиль и язык песен.

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԴԻՑԱՇԽԱՐՀԸ

ՄԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու
satenik_avetisyan@mail.ru*

ՀԱՅՈՑ ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆՆ՝ ԸՍՏ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ, ԵՎ ԱՐԱՏՏԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԸ

Բանալի բառեր՝ դիցարան, Աստված, դիցաբանություն, դիցավեպ, Արատտա, Շումեր, Աքքադ, աստվածուհի, աստվածային օրենք, սեպագիր, տիեզերք, Կենաց ծառ:

Հայոց նորագույն պատմագրությունը սկզբնավորվեց գիտական բացառիկ մի խիզախումով. 1992 թվականին հրատարակվեց Արտակ Մովսիսյանի «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա» աշխատությունը, որում հիմք ընդունելով հայտնաբերված և վերծանված շումերա-աքքադական գրավոր աղբյուրները՝ պատմաբանը կատարում է Արատտայի տեղորոշումը, հետազայում լրամշակելով այս նյութը՝ ըստ միջագետքյան, արևելամիջերկրածովյան, փոքրասիական, իրանական և հայաստանյան սկզբնաղբյուրների, հրատարակում է «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների)», «Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում» գրքերը, որով վերջնականորեն հայ պատմագրության մեջ ամրագրվում է հայ ազգի պատմական երթի սկիզբը հանդիսացող հայ և համաշխարհային պետականության առաջին կազմավորումը՝ Արատտայի հայկական քրմապետությունը: Եվ ահա պատմագիտական այս շրջադարձային բացահայտումը բացառիկ հնարավորություն է տալիս, հիմնվելով Արատտայի տեղորոշման և պետական կառավարման կարգի մասին պատմաբանի ուսումնասիրած ահռելի նյութի վրա, փորձել վերականգնել հայոց հնագույն դիցարանը՝ ըստ շումերա-աքքադական վիպերգերի, «Գիլգամեշ» դյուցազնավեպի տարբերակների և այլ էպիկական և դիցական պատումների:

Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյա հոբելյանը այդ թեմային անդրադառնալու լավագույն հնարավորությունն է, քանզի մեծ հայագետը բացառիկ գիտական բարեխղճությամբ հավաքել, համակարգել և հետազոտել է հայոց հավատալիքների կառույցը այն հնարավոր աղբյուրների հիման վրա, որ կարող էր նրան ընձեռել իր ժամանակը: Ղևոնդ Ալիշանի

«Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» աշխատությունը հայոց նախաքրիստոնէական դիցարանի կառուցվածքը ներկայացնում է ըստ աստիճանակարգի, այսինքն՝ հաշվի են առնված արարչագործության ընթացքը, ոգու կերպափոխման և տիեզերքի ստեղծման օրինաչափությունները:

Ալիշանը գրքի առաջաբանում նշում է, որ իր նպատակը «Հայ ազգին ծագումն ու աճումն հետազոտելը չէ», այլ հայության հավատի, կրոնի և պաշտոնի սահմանները որոշարկելը, կրոն բառի «կիր» արմատը և նրանից բաղադրված «կիրք» բառը նրան հնարավորություն են տալիս սահմանելու, որ «Մա առաջին և հզորագույն կիրքն է բանավոր մարդու ճանչնալ իր ծագումն կամ կախումն և պարտավորությունն առ գերագույն էակն»¹: Այս սահմանման մեջ Ալիշանն այնուամենայնիվ նշում է ազգի աստվածային սկիզբը ճանաչելը ինքնության ծագումնաբանությանը հնարավորինս մոտենալու ուղի է, և աստվածային աստիճանակարգի գագաթը, սկիզբը կոչում է ճշմարիտ Աստված, որին երկար քննությունից հետո համարում է ամենայն ինչի սկիզբ՝ Է-էություն: Ալիշանի ջանքը՝ տիեզերածնության պատկերը վերականգնելուն միտված, նրան մղում է անդրադառնալու Արեգակնային համակարգը բաղադրող բոլոր տարրերին՝ Արևին, Լուսնին, մոլորակներին, աստղերին, ոգիներին: Տիեզերական ծառը, որ նա ներկայացնում է գլխիվայր շրջված տեսքով, իրականում Արեգակնային համակարգն է՝ իր տասը մոլորակներով, աստղերով և աստղատներով, որոնք հայոց նախաքրիստոնէական դիցարանում մարմնավորվել են որպես աստվածություններ: Ղևոնդ Ալիշանին այս խնդրում մեծապես օգնել են նրա բնագիտական իմացություններն ու ճանաչողությունը, քանի որ Տիեզերական ծառի գագաթին բազմեցնում է ճշմարիտ Աստծուն կամ բարձրագույն Է-էությանը, ինչը նրա աշխարհատեսական հայեցակարգում բացառապես հարաբերվում է Աստծո քրիստոնէական ընկալմանը: Աստիճանակարգի հաջորդ մակարդակում կամ Աստծուց երկրորդը Հայկն է՝ որպես ամենապայծառ աստեղատունը՝ Օրիոնը ներկայացնող Աստված: Նկատենք, որ Հայկը առանձնացված է և դիտարկվում է «Լուսատուների պաշտամունք» բաժնում և ոչ դիցերի շարքում: Իսկ «Դիք. Պաշտօն չաստվածոց» բաժնում մեզ հայտնի նախաքրիստոնէական դիցարանն է՝ Արամազդ, Անահիտ, Նանե, Աստղիկ, Միհր, Տիր, Վահագն, Վանատուր և Ամանոր, Սպանդարամետ, Բար-Շամինա, Արմազ, Բրիթ հերթագայությամբ. Վերջին չորսը օտար դիցեր են:

¹ **Զ. Ղևոնդ Ալիշան**, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1910, էջ 5:

Հայկը ամենապայծառ աստեղատունը՝ Օրիոնը, ներկայացնող Աստված է: Ալիշանը հրաշալի տիրապետում է աստեղատան կառույցին. Գիտի, որ Օրիոնի գոտին բաղկացած է երեք աստղերից, որ նաև Շամփուրք Հայկի անունն ունի, և որ շամփուրը մեզ հայտնի իմաստից բացի ունի նաև նախնական իմաստ, որ «պսակ» է նշանակում: Ալիշանը նկատում է, որ Հայկի աստվածային և աստղային գործառույթը ամրագրված է Սուրբ Գրքում, թեև լատիներեն թարգմանության մեջ Հայկ անունն առհասարակ չկա, ինչպես չկա և հունարեն տարբերակում: Ահա այս կետից էլ կարևորվում է Հայկ Աստծո տիեզերական և ազգաբանական գործառույթը՝ նախաալիշանյան կամ՝ որ ավելի ճշգրիտ է՝ նախախորենացիական՝ Հայկ և Բելի առասպելի տիրույթից դուրս:

Արդեն գրեթե հարյուր տարի հայտնաբերվել, վերծանվել, թարգմանվել և մեզ առնվազն ռուսերենով հասանելի են շումերա-աքադական վիպերգերը, էպիկական պատումներն ու դյուցազնավեպերը, աշխարհի առաջատար շումերագետների ուսումնասիրությունները՝ նվիրված այդ տեքստերի վերծանմանը և վերլուծությանը¹: Այս ամենը ահռելի նյութ է պարունակում հայոց ամենավաղ դիցարանի, աստվածների աստիճանակարգի, նրանց տիեզերաստեղծ գործառույթների, ընտանիքի, ազդեցության ոլորտների մասին, աստվածների այս ամենավաղ խումբը պատմաբան Արտակ Մովսիսյանը կոչել է Արատտայի դիցարան²: Կարելի է ածանցումով այն կոչել արատտական դիցարան: Զուգադրելով և համադրելով այս ամենավաղ դիցարանը ամենաուշ շրջանի նախաքրիստոնեական դիցարանին՝ փորձենք համակարգել աստվածների աստիճանակարգը՝ բուրգի կամ Կենաց ծառի գագաթին բազմեցնելով Է-Էություն բարձրագույն տիեզերաստեղծ ոգուն, իսկ Հայկի աստղաբանական ծագումն ու գործառույթը դիտարկենք նույնարմատ անուն կրող արատտական գերագույն աստվածներից մեկի՝ Հայայի հետ կապի և զարգացման մեջ:

Շումերական միջական պատումների Էնկի-Էան և աքքադական Հայան չորս գլխավոր Աստվածներից՝ Ան, Էնլիլ, Հայա, Նինհուրսագ, մեկն է, որ պատկերվում է ուսերից բխող Տիգրիս և Եփրատ սրբազան գետերով կամ ձեռքին սկահակով, որից բխում են գետերը, հաճախ ջրերում ձկներ են լող տալիս, ձեռքին ունի արծիվ՝ արիների սուրբ թռչունը: «Էնկի» բառը

¹ 1963 թվականին Նշան Մարտիրոսյանի թարգմանությամբ լույս է տեսել «Գիլգամեշ» դյուցազնավեպը արևմտահայերենով, իսկ 1982-ին «Հին Արևելքի պոեզիան» որոշ պատումների թարգմանությամբ:

² **Մովսիսյան Ա.**, Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Երևան, ՀՀԴ հրատ., 1992, էջ 48-51:

բաղկացած է «էն»-տիրակալ և «կի»-երկիր արմատներից, այսինքն՝ դա նրա տիտղոսն է, իսկ անունը՝ Հայա, հ-չունեցող լեզուների համար՝ էա: Ըստ «Գիլգամեշ» և «Գիլգամեշն ու Անմահության երկիրը» դիցավեպերի՝ Հայան իմաստության և քաղցրահամ ջրերի, աղբյուրների, գետերի ակունքների աստվածն է, որ պահպանում է արարչագործության արդյունք մարդու՝ Ութնափիշտիմի կյանքը աստվածների զայրույթից: Հայան բեղմնավորող արական սկզբի կենսաուժն է. աղբյուրի մաքրամաքուր ջուրն ու արական սերմը նույնական գործառույթ ունեն՝ ըստ Արատտայի և Շումերի բնակիչների, բեղմնավորում են աստվածային սերմով. հիշենք ազգային էպոսում Ծովինարի հղիացումը: Քաղցրահամ ակունքների պաշտամունքը հայոց մեջ հենց կապվում է սեփական Աստծո պաշտամունքի հետ: Հայային նվիրված հիմներգերից մեկում ինքն իր մասին ասում է. «Ես ճշմարիտ սերմն եմ, Ես երկրի մեծ ու բարի տիրակալն եմ»: Հայան տիեզերքի կյանք տվող սերմն է: Նա ունի կաղապար, ձև ստեղծող Աստծո գործառույթը, լատինատառ բառն ստոս ձևն ունի, որն ակնհայտորեն հայերեն «աման» բառն է, այսինքն՝ Հայան նյութ, մարմին արարող Աստված է, ունի ջրին ներհատուկ մաքրագործող, չարից ազատող կենսաուժ: «Էնկին և Հինհուրսագը», «Էնկին և Նինմահը», «Էնկին և Աշխարհակարգը», «Էնումա Էլիշ» դիցապատումները բացահայտում են Հայայի էության արարչական կողմերից որևէ մեկը, բայց վերջինում՝ «Էնումա Էլիշ (Այնտեղ վերնում)» տիեզերածնությունը ներկայացնող դիցապատումում բառացիորեն Հայան և նրա որդի Մարդուկը ստեղծում են նյութական տիեզերքը, կարգավորում քառսը, բաժանում երկու մասի՝ երկնքի և երկրի, սահմանում ժամանակը¹: Ահա այս ամենակարող էությունը, որ Հայա անունն ունի և հանգրվանում է անմահների երկիր Արատտայում գտնվող Մաշու երկնիստ լեռան վրա, հայ ազգի ինքնանվանումն է: Հայա Աստծո անունով ենք կոչվում ոչ միայն մենք՝ հայերս, այլև մեր երկիրը, և ոչ միայն այսօր:

Պատմաբան Արտակ Մովսիսյանը արձանագրում է. «Ըստ միջագետքյան հնագույն բնագրերի՝ Սուբուր-Սուբարի երկրանվանը համարժեք հանդես եկող մյուս տեղանունն է «Հայա» (H.A.A). շումերա-աքադական մի շարք երկլեզու բնագրերում շումերերենի H.A.A-ին աքադերենում փոխարինում է Սուբուր երկրանունը, ինչը ցույց է տալիս դրանց միևնույն երկրին վերաբերելը: «Հայ(ա)» հիմքով ցեղանուն և տեղանուններ են հիշատակվում նաև Էբլայի, Աշուրի, Խեթական տերության Ք.ա. 3-2 հազարամյակներով թվագրվող բնագրերում, որոնք ակնառու

¹ <https://knigogid.ru/books/768310-enuma-elish/toread/page-4>

են դարձնում Հայ(ա)-Հայասայի (և Սուբուր-Սուբարտուի) կապը Հայք – Հայաստանի հետ: Մասնավորապես, «հայ(ա)» ցեղանուն և տեղանուն են բազմիցս հիշվում Էբլայի բնագրերում, ընդ որում՝ առնչված Արմի ու Ազի քաղաքների հետ: «Հայա» ցեղանունը հիշվում է Ք.ա 3-2 հազարամյակների սահմանագծով թվագրվող Աշուրից գտնված մի բնագրում: Իսկ խեթական արձանագրություններում Ք.ա 15-13 դդ. հիշատակվում է Հայասա երկրանունը, որի (ա)սա վերջավորությունը խեթական տեղանվանակերտ մասնիկ է: Համակարգի մեջ դիտելիս ակնհայտ է մեր լեռնաշխարհի հետ կապվող Հայա աստծո անվան, շումերա-աքադական, էբլայական, հին աշուրական և խեթական աղբյուրների «հայ(ա)» ցեղանվան, նրանով կազմված տեղանունների և հայ ժողովրդի ինքնանվան ծագումնաբանական ընդհանրություն»¹: Նշանակում է՝ Հայ(ա)ն հայության աստվածային արարչական սկիզբն է՝ գերագույն Աստվածը, որի անունը դարձել է ազգի ինքնանվանումը և բնօրրանի անունը:

Հայագետ Արթուր Արմինը «Հայդիի դարպասներ, հնագույն դիցարանի աստղային և թվային կառույցը» աշխատության մեջ կարևոր դիտարկումներ ունի, որի շնորհիվ համակարգվում է Հայդիի աստղային գործառույթների շրջանակը և որոշարկվում է Հայա-Հայկ-Հալդի աստվածային ժառանգորդական շղթայի զարգացման տրամաբանությունը տարբեր ժամանակաշրջաններում. «Հին աշխարհում՝ մ.թ.ա. II-I հազարամյակների ընթացքում, նետ ու աղեղի գերաստվածություն մենք տեսնում ենք միայն ուրարտական Անձավի վահանի գերագույն աստվածություն Հալդիի կերպարում, Թիամատի դեմ ելած ու հաղթող Մարդուկի կերպարում, որ Էա/Հայա որդին էր, և Խորենացու Հայկ աստվածության կերպարում: Արդյոք պատահականության արդյո՞ւնք են կերպարային այս հստակ գուգահեռները: Փաստորեն՝ ո՛չ: Թեյշեբաինիում՝ Ռուսա II ուրարտական արձանագրությունում, գլխավոր եռաստվածներից հետո հիշատակվում է Մարդուկ աստվածը՝ նույն «AMAR.UTU գաղափարագրով»²: Այս հաղորդման մեջ առանցքայինը բոլոր մյուս աստվածների՝ Հայայից սերելու առանձնահատկությունն է և տարբեր հազարամյակներում աստվածային ընտանիքի տիեզերաբանական-աստղաբանական գործառույթների հաջորդականությունը, դրանց կապը Երկիր մոլորակի և հայկական լեռնաշխարհի հետ:

¹ **Մովսիսյան Ա.** Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, ԵՊՀ հրատ., 2005, էջ 54:

² **Արթուր Արմին,** Հայդիի դարպասներ. հնագույն դիցարանի աստղային և թվային կառույցը, Երևան, հեղ. հրատ., 2020, էջ 88:

Տիեզերածնության թեմայով այս դիցավեպը՝ «Էնումա էլիշը», ներկայացնում է նյութական տիեզերքի արարման պատմությունը և նրանում Հայա Աստծո և նրա որդի Մարդուկի կողմից Արեգակնային համակարգը ստեղծելու արարչական գործառույթը: Նյութական աշխարհին տիրակալ կարգված Հայայի որդին ունի Մարդուկ անունը, արդյոք նա չէ՞ առաջին արարվածը, որ միայն հայերենում ունի բանական էակին տրվող «մարդ» անունը (իմ պրպտումները հարևան լեզուներում արդյունք չտվեցին): Ըստ շումերական գաղափարագրերի գիտակ Համլետ Մարտիրոսյանի հետազոտությունների արդյունքների՝ Մարդուկն ունի նաև Որդի, Արմենակ, Հալդի, Որդի վառ, Ամալ անվանումներ, դիցավեպում նշվում է, որ նա մոտ հիսուն անուններով է հայտնի: Մարդուկ-Արմենակ-Հայկի կենտրոնական աստվածային գործառույթը պայքարն է Բելի դեմ, և հաղթանակը իրեն տեր հռչակած Բելի հանդեպ, ինչը վկայում է, որ Խորենացու գրառած Հայկի և Բելի առասպելի նախնական տարբերակը «Էնումա էլիշ» դիցավեպն է, որում առավելապես աստվածների երկնային պատերազմն է ներկայացված: Այս պատերազմում Հայայի որդի Մարդուկը հաղթում է Բելին և հայտարարվում նաև երկրային տիրակալ:

Երբ աստվածները՝ նրա հայրերը, տեսան նրա խոսքի պտուղը,

Նրանք ուրախությամբ նրան խոնարհվեցին. «Մարդուկն արքա է»:

Նրանք հանձնեցին նրան ծիրանին, գահը և խուրը¹:

Ինչ վերաբերում է Բաբելոնում Մարդուկի պաշտամունքին, ապա այն մ.թ.ա. երկրորդ հազարամյակում Քաջանց երկրի (կասիտներ) արշավանքների հետևանքով ներմուծվել է Միջագետք և դարձել հիմնական պաշտամունքային կենտրոն²:

Շումերական չորս գերագույն աստվածների շարքում առանցքային արարչական գործառույթ ունի Նինհուրսագ-Կի աստվածուհին³, որ բազմաթիվ անուններով և մականուններով է հանդես գալիս: Մեզ համար հատկապես կարևոր են նրա անվան «Նին» բաղադրիչը, որ շումերերենում նշանակում է տիրուհի, իսկ «կի» նշանակում է երկիր, ավելի ճշգրիտ՝ լեռնային երկիր⁴ «կի» արմատը այսօր էլ հայերենում հոդի միջոցով ունի իգական սեռի ընդհանրական անվան իմաստ՝ կին, որը հատկապես տրվում է ամուսնացած կնոջը: Դիցապատումների զգալի

¹ <https://knigogid.ru/books/768310-enuma-elish/toread/page-4>

² Stephanie Dalley, *Myths from Mesopotamia*, Oxford, Oxford University Press 2000, p.229-230.

³ https://world-of-legends.su/shumers/shumers_bogi/id486

⁴ Торкильд Якобсен, Сокровища Тьмы, История месопотамской религии, Москва, изд. „ Восточная литература,, РАН, сс. 68-71.

մասում նա Էնկի Աստծո կինն է: Նրանք երկուսով են ստեղծում տարբեր արարածների: «Էնկին և Նինհուրսագը» դիցապատումում նրանց ամուսնությունից ծնվում են բնաշխարհը մարմնավորող տարբեր աստվածուհիներ: Քանի որ Հայան արական բեղմնավորող սերմն է, ապա նա սերմնավորում է իրեն շրջապատող բոլոր իգական էություններին, մինչև որ Նինհուրսագը Ութուի մարմնից գողանում է Էնկիի սերմերը, որոնցից աճում են ութ բույսեր: Նինհուրսագը վերցնում է նրանց իր մեջ, աճեցնում ութ աստվածուհիներին իր ներսում և փրկում Էնկիի կյանքը: Մյուս առասպելում՝ «Էնկին և Նինմահը»՝ Կին Նինմահ անունն ունի, Էնկիի մայր Նամմուն, որ անձնավորում է գետերի հունը, խնդրում է որդուն իրեն օգնական ստեղծել: Էնկին հիշում է ջրանդունդի կենսաստեղծ կավի մասին, մի կտոր կավից նա ծեփում է մարմին, որին կյանք պիտի տան Նինմահը և ութ աստվածուհիները: Այսինքն՝ Հայան և Կի աստվածուհին են մարդուն ստեղծել կավից որպես օգնական աստվածներին: Նա և Նինմահը այս թեմայով վիճում են, Նինմահը պնդում է, որ կարող է խելված էակներ ստեղծել, և ստեղծում է անկատար մարդկանց, իսկ Էնկին վստահեցնում է, որ նրանց բոլորին գործելու միջավայր կստեղծի:

Կի աստվածուհին ունի նաև Արուրու անունը, որ հենց արարիչ բառի իմաստն ունի, քանզի կավից տարբեր արարածների է ստեղծում, նա է ստեղծում նաև Գիշգամեշի ընկերոջը՝ Էնկիդուին: Հայկական «նին»-«նան» արմատով կանացի անձնանունների գոյությունը վկայում է, որ արմատը հայ իգական սեռի հասարակ և հատուկ անունների մեջ կենսականորեն ապրում է: Իսկ «նանը»՝ «տատ» իմաստով՝ վկայում է, որ նա հայոց նախամայր աստվածուհին է:

«Էրիդուի ծագումը» դիցապատումը նույնպես ներկայացնում է մարդու արարումը չորս գերագույն աստվածների կողմից՝ Ան, Էնլիլ, Էնկի և Նինտուր-Նինհուրսագ: Ըստ էության՝ սա աստվածաշնչյան Նոյի պատմության նախնական տարբերակն է, թե ինչպես է Էնկին փրկում Զիուսուդրա-Ութնափիշտիմին աստվածների զայրույթ ջրհեղեղից տապանի շնորհիվ:

Հայայի աստվածային ընտանիքի մյուս անդամը նրա որդի Թոմուզին է, Թոմուզի շումերերեն նշանակում է հարազատ որդի, որն ակնհայտորեն դրափոխության հետևանքով ավելի ուշ շրջանի հայերենում ստացել է «ումուզ» ձևը: Հայտնի շումերագետ Տորկիլդ Յակոբսենը իր կոթողային աշխատության մեջ¹ դասակարգում է աստվածներին՝ ըստ

¹ **Торкильд Якобсен**, Сокровища Тьмы, История месопотамской религии, Москва, изд. „ Восточная литература,„ РАН, сс. 21-26.

իրենց գործունեության ժամանակաշրջանի և տիեզերական գործառնությունների: Ըստ այդմ՝ Թոմուզի Աստծո դիցապատումները թվագրելով մ.թ.ա. 4-րդ հազարամյակով՝ Յակոբսենը աստվածներին դիտարկում է որպես գործիչներ, և Թոմուզի պաշտամունքը ներկայացնում որպես մեռնող և հարություն առնող Աստծո պաշտամունք: Թոմուզին Արատտա երկրի գերագույն աստվածն է, մարմնավորում է մեռնող և հարություն առնող բնությունը, այսինքն՝ Արան է: Թոմուզի պաշտամունքի ամենավաղ արտահայտությունը բանագետ Յակոբսենը համարում է Ուրուկյան սկահակը՝ թվագրված մթա 4-րդ հազարամյակով, որի վրա դրվագված են սրբազան ամուսնության առանձին պատկերներ՝ ինչպես է Ինաննան դիմավորում իր սիրեցյալին, որպեսզի ներս թողնի նրան և սկուտեղներով նվերներ բերող ծառաներին: Յակոբսենը նկատում է, որ Թոմուզի պաշտամունքը հնարավորիս ամբողջական է ներկայացված շումերական գրականության մեջ, որի հիման վրա կարելի է ստեղծել այս աստվածության ամբողջական պատկերը: Պաշտամունքը ներառում է ինչպես երջանիկ ամուսնությունը Ինաննայի հետ, այնպես էլ նրա մահվան ողբալի իրողությունը: Թոմուզին բնության բոլոր շերտերի ու տեսակների հովանավորն է: Նա հովիվ է, և նրա էություններից մեկը գառնուկների և հորթերի ծինը ապահովելն է, կաթնատվության առատությանը նպաստելը, նրա անունը կապվում է նաև ցորենի և գարու մշակության հետ, մասնավորապես գարեջրի պատրասման հետ, որի հայրենիքը այս փաստով անվերապահորեն դառնում է Հայաստանը: Շատ են տարատեսակ երգերը՝ նվիրված Թոմուզի սիրուն, ամուսնությանը և մահվանը՝ «Քրոջ տեղեկությունը», «Կանանց հնարքները», «Ինաննայի հարսանեկան սավանները», որում ամենաբարձր աստվածային ծագում է վերագրվում Թոմուզին, նա և՛ հովիվ է, և՛ հողագործ: Մյուս դիցապատումներում՝ «Թոմուզի հարսանիքը», «Ուրուկյան» պայմանական անունով, «Փեսացուի օրհնությունը», «Իդդին Դագանի» անունով տեքստում ներկայացվում են Թոմուզի հարսանիքի ծիսական մանրամասները, նրանց աստվածային զույգի սիրային հարաբերությունները: Թոմուզին պատումներում հանդես է գալիս տարիքային երեք փուլերով՝ մանուկ, պատանի և մեռնող: Մի շարք դիցապատումներ՝ «Ինաննայի անկումը», «Թոմուզի երագը», նկարագրում են Թոմուզի մահը: Նա դիմում է ամբողջ բնությանը, նրա բոլոր տարրերին, որ ողբան իր մահը: Չար ուժերին հաղթելու նպատակով օգնության է կանչում Ինաննայի եղբորը՝ արևի աստված Ոթուին, բայց չար ուժերն ու դևերն այդպես էլ թույլ չեն տալիս Ութուին օգնելու նրան:

Աստվածային ընտանիքի մյուս անդամը Թոմուզի հարսնացու Ինաննան է, որը որոշ դիցապատումներում ուրիշ աստվածային ընտանիքից է, և Թոմուզին ստիպված է նրան հիշեցնել իր ծագման և աստ-

վածային ընտանիքի կազմի մասին: «Եթե իմ մայրը չլիներ...» դիցապատումում Թումուզին ներկայացնում է իր ընտանիքի կազմը, որը գլխավորում է հայրը՝ Էնկի-Հայան¹: Կարևորվում է մի հանգամանք, որ Թումուզին դառնում է նաև երկրային արքա, իսկ Բնաննային տրվում է «նինեգալ» մակդիրը՝ պալատի թագուհի: Ակնհայտորեն մենք գործ ունենք Ար-Անահիտ աստվածային գույգի ամենավաղ դրսևորումներից մեկի հետ: Մեռնող և հարություն առնող Աստվածը նաև արքա է, չմոռանանք, որ «արքա» բառի արմատը նույնպես «ար»-ն է, իսկ նրա հարսնացուն լուսնային, այսինքն՝ իգական սկիզբ ունեցող գեղեցկության, պտղաբերության, լիության ու մայրության աստվածուհին նաև երկրային գործառույթ ունի, այսինքն՝ թագուհի է: Թե՛ Բնաննայի և թե՛ Անահիտի պաշտամունքը կապվում է Լուսնի հետ, երկուսն էլ պատկերվում են գլխին մահիկի խորհրդապաշտական պատկերով՝ շեշտադրելով լուսնի կենսաուժի իգական, նյութական աշխարհը բեղմնավորող գործառույթը²: Որոշ պատումներում նա Հայայի թոռնուհին է: «Բնաննան և աստվածային ուժերը» դիցապատումում նա այցելում է Էնկիին էրիդուում և տիրանում աստվածային Մե ուժերին, որ հարբած Էնկին տալիս է նրան: «Էնկին և աշխարհակարգը» դիցապատումում Բնաննան խնդրում է իրեն կարևոր գործառույթներ շնորհել, իսկ Էնկին ցուցադրում է իր ստեղծագործ էությունը՝ կարգավորում է աշխարհի գործերը. հիմք է դնում հողագործությանը և անասնապահությանը, շինարարությանը և մանածագործությանը, սահմաններ է գծում՝ քարեր դնելով, այս առիթով հիշենք Արտաշես Ա Բարի արքայի սահմանաստեղծ գործունեությունը, մյուս աստվածների հանձնարարում է տարբեր ոլորտների կառավարումը: Միայն Բնաննան է անգործ մնում: Բնաննայի ավագ եղբայրը արևի աստված Ուրուն է, հայրը Լուսնի աստված Սուենը: Յակոբսենը նշում է, որ Բնաննա անվան նախնական տարբերակը Նին-Աննա է՝ երկնքի տիրուհի, Անը երկնքի տիրակալն է, որ Ուրուկի գերագույն աստվածն է և Բնաննայի հետ համերաշխորեն գոյակցում է այս տիրություն: Արդեն նկատեցինք, որ գուտ ֆունկցիոնալ առումով Դումուզի-Բնաննա գույգը Արա-Անահիտ գույգի ամենավաղ տարբերակն է: Այիշանը Անահիտի ծագումնաբանությունը որոնում է սկսած Եգիպտոսից մինչև Հնդկաստան և Պարսկաստան և ոչ հայկական լեռնաշխարհում. «Անահիտայ անուանն եւ իմաստին

¹ Տե՛ս Հին Արևելքի պոեզիա, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1982, էջ 63-64:

² Տե՛ս **Կ.Վ. Մելիք-Փաշայան**, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1963, էջ 66-71:

գոյգ է եգիպտական Նիլոս կամ Նայթ...»¹: Պատմության ամենաարժեքավոր վկան բառն է: Իսկ Անահիտ բառի արմատը ակնհայտորեն «ան»-ն է, որ լեզվի բարդացման հետագա ընթացքի ազդեցությամբ միայն կարող էր վերցնել իր անվանակերտ ածանցը՝ Դավիթ, Լիլիթ: Այս փուլում խոսքը կազմված է պարզ արմատներից, բառաբարդումը հիմնականում կատարվում է արմատի կրկնությամբ կամ արմատների մեխանիկական կցումով, ածանցումը առհասարակ բնորոշ չէ: Ալիշանը բնականաբար ծանոթ չէր շումերա-աքքադական տիեզերական դիցաբանությանը, հակառակ դեպքում Ան երկնքի տիրակալի, Նաննա լուսնի աստծո անունները և Անահիտի լուսնային էությունն ու գործառնությունները անմիջապես այս արմատների միջոցով կձևավորեին Անահիտի խիստ ազգային ծագումնաբանությունը:

Ինաննայի աքքադական տարբերակը Իշտարն է, այսինքն՝ ավելի ուշ շրջանի հայոց Աստղիկը՝ միակը աստված-աստվածուհիներից, որին Ալիշանը համարում է բնիկ հայկական՝ «...Քան զամենին ավելի ազգային...»: Ինաննայի աստվածային էության բազմաշերտությունը նրան հետագայում տրոհել է տարբեր աստվածուհիների: Նա անձրևի և գծողության աստվածուհին է, այսինքն՝ կապվում է երկնային ջրերի պաշտամունքի հետ, ինչպես ջրի երկրպագության ծեսն է կապվում Աստղիկի աստվածային էությանը: Ինաննան նաև առավոտյան ծագող և երեկոյան մայրամուտն ազդարարող աստղն է, Աստղիկը նույնպես առավոտյան ծագող աստղն է՝ Արուսյակը, և նրան տրվող «աստղ» ընդհանրական անունից էլ հավանաբար մասնավորվել է Աստղիկ հատուկ անունը՝ որպես մեկ աստվածության անվանում:

Հետաքրքիր է, որ այս թեման և առհասարակ շումերա-աքքադական բնագրերը ուսումնասիրող բոլոր արևելագետներն ու բանագետները, ամեն ինչ գիտեն բոլոր հին և հնագույն մշակույթների մասին, միայն Հայկական լեռնաշխարհի, հայի, հայոց մշակույթի և հայկականության հետ առնչվող ոչինչ չեն լսել: Յակոբսենը, իր մեծածավալ ստեղծագործության մեջ քննելով շումերական, աքքադական դիցաբանները, անգամ վերլուծելով «Էնմերքարը և Արատտայի քուրմը» տեքստում Ինաննայի գործողությունները, ոչ մի ակնարկ չի անում հայության հետ առնչության մասին: Իսկ երբ վերլուծում է Ինաննա-Իշտար առնչություն-նույնությունը, շեշտադրելով Իշտար-Աստար-Ատտար անվան միջանկյալ վիճակները, այն հանգեցնում է հարավսեմական առավոտյան աստղ Աս-

¹ **Հ. Ղևոնդ Ալիշան**, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ- Ս. Ղազար, 1910, էջ 283:

տարին, որն անձրևի, գծություն, սիրո դիցուհին էր, և քիչ էլ՝ ու Հայայի թռոնուհի Բնաննան կունենա սեմական ծագում: Այնինչ ակնհայտ է, որ աստվածուհու Բնաննա անունը, կապվելով առավոտյան աստղի հետ, դարերի, գուցե հազարամյակների ընթացքում վերցրել է հենց Աստղ(իկ) անունը, որն էլ սեմական ցեղերը, չկարողանալով արտաբերել նույնությամբ, ասել և գրել են Իշտար տարբերակով: Այստեղ պետք է հաշվի առնել բառի հնչյունական զարգացման կամ ուրիշ լեզվից փոխառվելու դեպքում համապատասխան հնչյունների բացակայությամբ պայմանավորված հնչյունի ձևափոխման, հիմնականում պարզեցման բնական գործընթացը, որն ակնհայտ է աստղ-իշտար փոխանցման պարագայում: Մինչդեռ Բնաննայի թե՛ աստվածային գործառույթների և թե՛ Նին-Անա անվան մեջ կան և՛ Անահիտը, և՛ Աստղիկը, և՛ Նանեն: Չունենալով այն աղբյուրները, որ ունենք մենք, Ալիշանը Նանեի մասին գրում է. «Նանե կամ Նանա ծանօթ էր ուրիշ ասիացուց այլ, իբրև մայր չաստուածոց, որոց լեզուաւ մայր կամ մամ նշանակէ անունն այլ (Նանե կամ Նինե)»¹: Իսկ ինչո՞ւ օտարների լեզվով, հայերս «նանի» կամ «նան»՝ «տատ» իմաստով ունենք անհիշելի ժամանակներից, իսկ այն, որ նա Անահիտի քույրն է և զուգահեռվում է Արտեմիսի կամ Կիբելեի հետ, նշանակում է ակունքը Հայայի կինն է՝ Նինհուրսագ – Կի աստվածուհին, որի անվան մեջ և «նին»-ը կա, և ըստ էության տատ աստվածուհին է:

Ութուն շումերական հնագույն դիցարանի արևի, լուսի, արդարության և ճշմարտության Աստվածն է, այսինքն՝ զուգորդվում է Միիր Աստծուն: Ութուն աստվածների ու մարդկանց դատավորն է, առավոտից աշխարհում արդարություն հաստատող: Գիլգամեշին նա է ուղեցույցներ տալիս դեպի Անմահների երկիր: Թվում է՝ այս աստվածությունը չի առնչվում հնագույն հայկական դիցարանին, բնիկ շումերական է, բայց շումերներն ըստ էության բոլոր աստվածներին են տարել նախահայրենիքից: Արթուր Արմինի «Հայդիի դարպասներ, հնագույն դիցարանի աստղային և թվային կառույցը» գրքում մանրամասն քննության է ենթարկվում Մեերի դռան արձանագրությունը, աստվածների տիեզերական գործառույթների կապը աստեղատների, դրանց երկրային ընկալումների, զոհաբերությունների հետ, առանձին քննվում են այդ արձանագրության բոլոր աստվածները: Հեղինակը գրում է. «Մեերի դռան արձանագրությունը սկսվում է Ութու (արևի աստծո) ամսին տոնակատարություն կատարելու հրահանգով: Գրված է շումերական գաղափա-

¹ **Հ.Ղևոնդ Ալիշան**, Հին հուստոք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ- Ս. Ղազար, 1910, էջ 299:

րագրերով: Շումերական «Գիլգամեշ» դիցավեպում արևն աղերսվում է Մաշու լեռների և արևի դարպասները պահպանող մարդակարիճների հետ: Միերի դռան կոթողային արձանագրությունում Ութու արևի Աստծո ամսին սահմանված է եղել ամենամյա տոնակատարություն և զոհաբերություններ բոլոր աստվածների և սրբությունների համար: Այս փաստերի համադրությունը ենթադրել է տալիս, որ արևի ամիսը կարող էր վերաբերել մարտին, և Միերի դռան արձանագրությունը որպես սրբազան կարգականոն ներկայացնում է շատ ավելի հին ժամանակների սրբազան ավանդությունը¹: Հետևաբար Ութուն արատտական դիցարանում արևի աստծո անուններից է:

Հետաքրքիր շերտ է բացում լուսնի Աստծո անունը՝ Նաննա կամ Սուեն-Սինը՝ էնլիլի որդին, առաջին անունը՝ «նաննա» նշանակում է լիալուսին, «սին» նշանակում է կիսալուսին, և հանկարծ առանց մեծ ջանքի բացահայտվում է, որ արդի հայերենի «լուսին» բառի երկրորդ բաղադրիչը «սին» է: Հայերենին ազգակից լեզուներում «լուսին» նշանակող բառերում «սինը» արմատի բացակայությունը հաստատում է, որ այս Լուսնի աստված Սինն էլ Արատտա հայկական պետության բնակիչ աստվածներից է, և «սին» արմատը առնվազն վեց հազար տարվա ընթացքում հայոց լեզվում իմաստային կայունություն է պահպանել:

Միերի մասին Ալիշանի տեղեկությունը շատ սեղմ է, անվան մեջ «հուր» արմատը նկատում է, բայց դրա վրա կանգ չի առնում, և անմիջապես առաջադրում է իրանական ծագումը, որ նա Ուրմիզդի ծնունդն էր, Ուրմիզդ-Արամազդ առնչությունը առհասարակ չի քննարկվում: Միերի դռան արձանագրությունը նվիրված է Հալդի գերագույն Աստծուն և դուռնունի համարժեք «Հալդիի դարպասներ» անունը, ինչը անմիջական գուգահեռ է ստեղծում Միեր-Միեր-Հալդի աստվածային շղթայում: Հիշենք, որ աստվածային Մե ուժերը գտնվում էին Հայայի մոտ, իսկ ինչ էր նշանակում այդ Մե-ն: Շումերագետները միահամուռ այս Մե-ն թարգմանում են «աստվածային օրենքներ», որոնցից բաղադրված է Արարիչ Աստծությունը: «Մե» արմատը անգեն հայացքով հայտնաբերելով ժամանակակից հայերենի բազմաթիվ բառարմատներում՝ այնուամենայնիվ փորձեցինք ճշգրտել բառի շումերական իմաստը և բազմաթիվ ածանցյալ իմաստների կողքին գտնվեց Մե-ի «աստված» իմաստը²: Աստված և իր օրենքը կամ կարգը բնականաբար նույնական են: Կենաց ծառի կառույցը,

¹ **Արթուր Արմին**, Հալդիի դարպասներ. հնագույն դիցարանի աստղային և թվային կառույցը, Երևան, հեղ. հրատ., 2020, էջ 83:

² **Դավթյան Ա.**, Հայերեն-շումերերեն ընդհանրությունների բառարան, Երևան, հեղինակային հրատ., 2014, էջ 326:

որ նույն Արեգակնային համակարգն է, մեկից տասը մոլորակներից կազմված աստիճանակարգ է, որի ամենաբարձր կետը՝ բարձրագույն է-
 փայլունն է կամ Հայր Աստված, որի թիվը մեկն է, բառ, որի մեջ կա արդեն
 հիշատակված «մե»-ն: Քանի որ Աստծո ստեղծած այս կարգակառույցը չէր
 կարող չունենալ իր կենսատու հուրը, որի շնորհիվ միայն կարող էր
 կյանքն ու նյութական տիեզերքն արարվել, ապա Բարձրալը Սուրբ
 Երրորդության ոգեկառույցը ստեղծելուց հետո պետք է արարեր հոգևոր
 տիեզերքը, որի միջուկը Արևն է, որին տրվելու է Ար անունը, և որը
 դառնալու է Աստծո Մե օրենքների կրողը կամ պահապանը: Կոչվել է
 նաև Մե-ի հուր, որ նույն Արևն է: Մեհուրը տարբեր հնչյունափոխու-
 թյուններով դարձավ Միհր՝ որպես Արևի և լույսի Աստված՝ ծագող և մայր
 մտնող Արևի հավերժական պտույտով, դարձավ Մհեր՝ որպես հայոց
 տիեզերավեպի գերագույն հերոս, որ դիցաբանության մեջ դրսևորվեց
 որպես ժայռից ծնվող և ժայռի մեջ փակվող աստվածություն: Պտույտը
 կարող էր լինել արեգակնային տարվա շրջափուլից (ձմեռային արևա-
 դարձի օրը համարվում է Միհրի ծնունդը) մինչև Արևի մեկ օրվա պտույ-
 տը՝ արևածագից արևամուտ: «Մե» արմատի բնիկ հայկականությունը
 կասկած չի հարուցում, մանավանդ նրա առնչությունը ամենայն աստ-
 վածայինին: Նախ՝ Ար Աստծո անունը վերցրեց «մե» արմատը՝ դառնալով
 Արմե-Արմեն՝ որպես երկրաբանուն և ազգի անուն¹: «Մե» արմատն է
 ընկած «մելիք» բառի հիմքում, իսկ Մելիքություն՝ Արքայություն թարգ-
 մանությամբ, կոչվում էր Կենաց ծառի տասներորդ աստիճանը, որ Երկիր
 մոլորակն է²: Աստված Մե-ով լեցուն արարվածներին տվեց երկրային
 արքայության իրավունք Երկիր-Մելիքության վրա, իսկ մելիքությունը՝
 որպես պետական կառավարման մոդել, բացի հայերից կամ Ար-մեններից
 ուրիշ ազգություն չունի: Աստվածայինին ամենաանմիջական աղերսն
 ունի «մե» արմատից կազմված նախաքրիստոնեական տաճարի անունը՝
 (մե)հեան-(մե)հյանը, որ ուղղակիորեն ստուգաբանվում է որպես Մե-ի
 պաշտամունքի վայր:

Վահագն դիցի մասին Ալիշանը գրում է, որ մինչև հիմա մեր հիշած
 հայոց պաշտելի չաստվածների մեջ միայն Աստղիկն էր զուտ հայկական
 անունով կոչված և հայ դիցաբանության ծնունդ, կարելի է այդպիսին հա-
 մարել նաև Վահագնին³: Վկայաբերում է Անանիա Շիրակացու հիշատա-

¹ Տե՛ս **Արտակ Մովսիսյան**, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամ-
 յակում, Երևան, Երևանի համ. հրատ., 2005, էջ 43:

² Кейт Ридерс, Каббала, Москва, изд. Фаир-Пресс, с.7-8.

³ **Հ. Անտոն Ալիշան**, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ- Ս.
 Ղազար, 1910, էջ 314:

կումը հայոց նախնի Վահագնի հարդ գողանալու մասին: Հարդագողի ճանապարհի՝ որպես տիեզերական երևույթի առասպելականացումը, ինչպես նաև տիեզերածնության բանաստեղծական պատկերը ներկայացնող Վահագնի առասպելը և նրան հայոց նախնի աստված կոչելը միայն բավարար հիմք էին, որպեսզի նրան զուտ հայկական ծագումնաբանություն վերագրեինք: Բայց հետագա շրջանի բանագետները համերաշխորեն Վահագնին նվիրեցին պարսիկներին և հնդիկներին: Հարց է ծագում՝ ով է որոշել Վահագնի առասպելի տարիքը և ինչի հիման վրա են նրան վերագրել իրանական կամ հնդկական ծագում: Հանգամանորեն քննելով Վահագն Աստծո անվան ծագումնաբանության բոլոր տեսակետները¹, բանագետ Ս. Գասպարյանը առաջադրում է իր տեսակետը՝ «վահագն» բառի մեջ տեսնելով «հուր»(վահ) և «կրակ» (ագն) իմաստներ արտահայտող արմատները, որից գոյանում է «հուր արձակող կրակ» ընդհանուր իմաստը, իհարկե, այս բառի նախնական տարբերակ համարելով պարթևական բառաձևը: Հիմք ընդունելով այս խնդրի նորագույն ուսումնասիրությունները և այն, որ հայոց աստվածների դիցարանը ունի դիցապատմական ամենավաղ ակունքը՝ բացառում ենք որևէ շատ ավելի ուշ կազմավորած էթնոսի մշակութային ազդեցությունը: Գասպարյանը «վառ» արմատի ստուգաբանության ընթացքում ակնարկում է «հուա» կամ «հաու» բնաձայնական բառերի մասին՝ շեշտելով դրանց հնչյունական կապը «ար» արմատի հետ և իմաստային կապը «հուր» և «կրակ» բառիմաստներին: Այս թեզը զարգացնելու դեպքում Արևին՝ որպես հրի կամ կրակի ակունքին տրված բնաձայնական «վահ» արմատի հնչյունական բարդացման և ամրացման հետևանքով «վառ» արմատի գոյավորման բնական ընթացքը ակնհայտ է, իսկ «վահի»՝ այսինքն՝ հրի աղբյուրը կլիներ ակն-ակունք, հետագայում՝ երկարմատ արտասանության հետևանքով պայթական գ-ի վերածված, Վահագն՝ նշանակում է հրի ակն-ակունք, ինչպես «արեգակ» նշանակում է ար-արևի ակն: Հիշենք, որ հայերս հնում ունեցել ենք Վահունիների ազնվական տոհմը: Մ. Խորենացին շեշտում է՝ «Եւ սորա են զարմք Վահունիք»², այսինքն՝ Վահագնի անմիջական ժառանգներն են նրանք, որոնց անվան հիմքը նույն «վահ» արմատն է (չմոռանանք Վահե և Վահան բուն հայկական անձնանունները), և որոնք քրմական գործառույթ են կատարել, այսինքն՝ հայության

¹ Տե՛ս **Գասպարյան Ս.Ե.**, Վահագն Աստծո պաշտամունքի հարցը, Երևան, «Հայաստան», 1993, էջ 10-24:

² **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 102:

կապն են ապահովել աստվածային ոլորտների հետ: Մշակութաբան և սեպագրագետ Համլետ Մարտիրոսյանը, քննելով Վահագն Աստծո Վիշապաքաղ մակդիրը, սեպագրագիտական և նախալեզվի ստուգաբանական վերլուծության շնորհիվ եզրակացնում է. «Այծեղջյուրի (այծ-ձուկ) պատկերը ծագել է վերին հին քարի դարի Հայաստանում և հետո այստեղից տարածվել է աշխարհով մեկ: Եղջյուրի պատկերից ծագած շումերական սեպանշանը «եղջյուր» իմաստից գատ ունեցել է նաև «ջուր լցնել, ջուր հեղել» իմաստը: Այս գաղափարագրությունը հիմնված է հենց «եղջյուր» բառի և «հեղ-ջուր» արտահայտության համանունության վրա: Համանունների այս զույգը պատկանում է միմիայն հայերենին, հետևաբար այծաձկան Այծեղջյուր անվանումը տառացի նշանակել է «ջուր հեղող այծ, ջուր բխեցնող այծ»: Այլ կերպ ասած, այծաձկան պատկերի «վիշապաքաղ» և «այծեղջյուր» անվանումները կրում են նույն իմաստը և նրանցում նույնական են այծ և վիշապ=եղջյուր=«ջուր հեղող, ջուր բխեցնող» բաղադրիչները»¹: Մշակութաբանն իր առջև խնդիր է դրել՝ պարզելու հայոց նախնի Աստծո ինքնությունը, և լրջագույն գիտական պրպտումների արդյունքում բացահայտում է, որ Վահագնը Հայա Աստծո անուններից մեկն է, քանզի Վիշապաքաղ մակդիրը, որ նշանակում է «ջուր բխեցնող այծ» նույնանում է այծեղջյուրի խորհրդապատկերին՝ ներկայացնելով հայոց նախնի Աստված Հայային, որ հայության ինքնանվանումներից մեկն է: Նորագույն այս գիտական բացահայտումը Վահագնին վերջնականապես վերադարձնում է հայությանը՝ որպես նրա նախնի անվանադիր Աստծո:

Յակոբսենի գրքի առաջաբանում Դյակոնովը գրում է, որ վաղնջական ժամանակաշրջանի առասպելներն ու ծեսերն ունեին հատուկ, կարևորագույն գործառույթ՝ նկատելիորեն թուլացած «նոր» կրոններում. Դրանք ճանաչողության ձևեր էին, և ավելին՝ այդ ժամանակաշրջանի համար աշխարհը ճանաչելու միակ ձևը²: Շեշտելով առասպելների և ծեսերի այլաբանական, փոխանվանական գործառույթը՝ Դյակոնովը կարևորում է դրանց միջոցով մարդ – տիեզերք հարաբերությունների և ընկալումների ճշգրտումը: 5-րդ դարի հայ պատմիչ Մ. Խորենացին առասպելների այլաբանական շերտի տակ թաքնված տեսել էր իրականությունը, քողարկված ճշմարտությունը՝ «Որք (առասպելները՝ Ս.Ա.)

¹https://www.academia.edu/41420558/%D5%80%D4%B1%D5%85%D5%88%D5%91_%D5%86%D4%B1%D4%BD%D5%86%D4%BB_%D4%B1%D5%8D%D5%8F%D5%8E%D4%B1%D4%BE%D4%B8?fbclid=IwAR3zbYb3cotO_40heBct9OSJqiemP_Z09RtxfWB1tXVge0YZdBb2QFQYQx8

² Торкильд Якобсен, Сокровища Тьмы, История месопотамской религии, Москва, изд. „ Восточная литература,,, РАН, с 4.

զճմարտություն իրաց այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ»¹ : Եվ գիտնականների գերխնդիրը պետք է լինէր թաքուցյալ կամ կորուսյալ ճշմարտությունը բացահայտելը:

Շումերա-աքքադական սեպագիր սալիկների հայտնաբերումը, վերծանումը և հետազոտությունը հիմնավորապես փոխեցին համաշխարհային մշակույթի ծագումնաբանության պատկերը: Շումերագիտությունը նախորդ դարի առաջին քառորդից սկսած, աստիճանաբար թարգմանելով կավե սալիկները, փորձեց տեղորոշել համաշխարհային քաղաքակրթության բնօրրանի տարածքը: Թեև վերծանված մեծածավալ դիցավեպերն ու դիցապատումները, էպիկական պոեմները՝ «Գիլգամեշ», «Գիլգամեշն ու Անմահների երկիրը», «Էնմերքարը և Արատտային քուրմը», Թոմուզիին նվիրված տեքստերը, «Էնումա Էլիշը», ուղիղ և այլաբանորեն պատմում էին, որ քաղաքակրթության բնօրրանը անմահների երկիր Արատտան է՝ աստվածային Մե օրենքների երկիրը, որտեղ Երկնիստ Մաշու լեռան վրա հավաքվում էին աստվածները ժողովի, որ Արատտա երկրի հովանավոր Աստվածը Թոմուզին է՝ Էնկի-Հայաի որդին, և այս անունը պետք ցուցիչը դառնար մարդկության նախահայրենիքը տեղորոշելու համար, միննույն է՝ շումերագետները միասնականորեն լռում էին Արատտայի հայկականության, Հայա Աստծո և նրա ընտանիքի հայկական լեռնաշխարհի հետ կապի թեմաներով: Բայց որքան էլ այդ հնագույն տեքստերը սխալ մեկնաբանվեին կամ կիսատ վերծանվեին, մի բառ կամ պատկեր, աստվածության կամ երկրի անուն հուշում էր, որ կիսատ ասված ճշմարտություններ չեն լինում, որ բառը կենսագրություն ունի, իսկ պատմությունը՝ նախապատմություն: Հայտնի շումերագետ Ս.Ն. Կրամերի նշանավոր ուսումնասիրության ռուսերեն թարգմանությունը ունեցավ «Պատմությունը սկսվում է Շումերում»² խորագիրը: «Էնմերքարը և Արատտայի քուրմը» դիցապատումը վերլուծելիս Կրամերը գիտական անբարեխղճությամբ ուզում է հիմնավորել, որ Շումերն էր քաղաքակրթության ակունքը այն դեպքում, երբ Էնմերքարը՝ Ուրուկ քաղաք-պետության տիրակալը, պահանջում է Արատտայի քրմից, որ նաև երկրի տիրակալն էր, Էնկիին նվիրված տաճարը Էրիդուում և Ինաննային նվիրված տաճարը Ուրուկում կառուցող վարպետներ ուղարկել, հանքանյութ ու թանկագին քարեր տրամադրել, մի խոսքով՝ իր քաղաք-պետությունը կառուցել, ինչը վկայում է, որ Արատտան առավել բարձր զարգացում ուներ, քան շումերը: Ըստ Կրամերի՝ Արատտան գտնվում է Պարսկաստանում: Շումերագետը

¹ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 108:

² **С.Н.Крамeр**, История начинается в Шумере, Москва, изд., „Наука,, 1965, с.32.

ընդգծում է, որ իր առջև դրված կավե սալիկը առնվազն 4000 տարեկան է, իսկ նրանում նկարագրվող դեպքերը 5000 տարվա վաղեմություն ունեն: Նշված ժամանակաշրջանում պատմությանը Պարսկաստան պետություն հայտնի չէր դեռևս կազմավորված չլինելու պատճառով: Տեքստը հերքում է Կրամերի պնդումը Շումերի քաղաքակրթական առաջնայնության մասին և հաստատում մեր օրերում արդեն հայ մշակութաբանների, պատմաբանների և հայագետների գիտական հիմնավորումներն այն մասին, որ Արատտայի հայկական քրմապետությունը քաղաքակրթական, մշակութաբանական շատ ավելի հին տարածք է ներկայացնում, քան Շումերը:

Արատտական դիցարանի ուսումնասիրությունը շատ ավելի հիմնավոր և աշխատատար ուսումնասիրության կարիք ունի, մեր նպատակն էր ընդհանուր գծերով ներկայացնել այդ դիցարանի և ավելի ուշ շրջանի հայոց դիցարանի ընդհանրություններն ու տարբերությունները: Ամփոփելով ասվածը՝ եզրակացնենք, որ Ղևոնդ Ալիշանի «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» մեծածավալ աշխատության մեջ հանգամանորեն ներկայացված են հայոց ամենաուշ շրջանի նախաքրիստոնեական դիցարանի աստվածները, որոնց մի մասը ավելի վաղ շրջանի դիցարանում, որ պատմաբան Արտակ Մովսիսյանը կոչել է Արատտայի դիցարան, ունի իր նախատիպը կամ նմանակը, որ հետագա հազարամյակների ընթացքում անվան մասնակի փոփոխության կամ նոր անուն ստանալու հետևանքով համարվել է նոր կամ ուրիշ աստված՝ իրականում շարունակելով և պահպանելով նախատիպ աստծո գործառույթները: Կան աստվածներ, որ հիմնավորապես մոռացվել են նոր անուններ ձեռք բերելու պատճառով, ինչպես Հայան, Թումուզին, Կին, Ինաննան, Ոթուն, Սինը, Մարդուկը, նրանց նույնական գործառույթներով փոխարինել են Արան, Անահիտը, Աստղիկը, Նանեն, Վահագնը, Միհրը: Արատտական դիցարանն ըստ էության ոչ միայն Հայաստանի գավառների նախապատմական բարձրագույն գիտակցության վավերագիրն է, այլև հայոց մշակութային ինքնության բացառիկ ինքնատիպության վկայականը:

САТЕНИК АВЕТИСЯН

Кандидат филологических наук

РЕЗЮМЕ

АРМЯНСКАЯ ДОХРИСТИАНСКАЯ МИФОЛОГИЯ, СОГЛАСНО ГЕВОНДУ АЛИШАНУ, И ПАНТЕОН АРАТТЫ

Ключевые слова: пантеон, бог, мифология, миф, Аратта, Шумер, Аккад, богиня, божественный закон, клинопись, космос, Древо жизни.

В крупномасштабном труде Гевонда Алишана «Древняя вера или армянские языческие религии» подробно представлены божества дохристианского армянского пантеона самого позднего периода, некоторые из которых в пантеоне более раннего периода, которую историк Артак Мовсисян назвал пантеоном Аратты., имеют свой прототип или имитацию, которая в последующие тысячелетия, после частичной смены имени или приобретения нового имени, считалась новым или другим божеством, фактически продолжая и сохраняя функции бога-прототипа. Есть боги, которые были полностью забыты из-за обретения новых имен, такие как Эя, Думуз, Кин, Инанна, Отун, Син, Мардук, их заменили Ара, Анаит, Астхик, Нане, Ваагн, Михр с теми же функциями. . Мифология Аратты - это, по сути, не только утверждение высшего доисторического сознания детей бога Эя, но и свидетельство уникальной идентичности армянской культурной самобытности.

SATENIK AVETISYAN
Candidate of Philology

SUMMARY

THE ARMENIAN PRE-CHRISTIAN MYTHOLOGY, ACCORDING TO GHEVOND ALISHAN, AND THE PANTHEON OF ARATTA

Keywords: pantheon, god, mythology, myth, Aratta, Sumer, Akkad, goddess, divine law, cuneiform, universe, Tree of Life.

Ghevond Alishan's large-scale work "Ancient Faith or Armenian Pagan Religions" presents in detail the deities of the pre-Christian Armenian mythology of the latest period, some of which in the mythology of the earlier period, which historian Artak Movsisyan called the Aratta mythology, has its prototype or imitation, which in later millennia, after a partial change of name or the acquisition of a new name, was considered a new or different deity, in fact continuing, preserving the functions of the prototype god. There are gods who have been completely forgotten due to acquiring new names, such as Haya, Dumuz, Kin, Inanna, Otun, Sin, Marduk, they have been replaced by Ara, Anahit, Astghik, Nane, Vahagn, Mihr with the same functions. The pantheon of Aratta is, in fact, not only the document of the prehistoric higher consciousness of the children of God Haya, but also the testimony of the unique originality of the Armenian cultural identity.

**ՀԱՅՈՑ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
Ղ. ԱԼԻՇԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ**

Բանալի բառեր՝ Ղևոնդ Ալիշան, բանահյուսություն, առասպել, պաշտամունքային, համակարգ, հավատալիք, Մխիթարյան միաբանություն, միջգիտակարգային, ժողովրդական պատկերացումներ, դիցարան:

Հայ բանագիտությունը սկզբնավորվել է 19-րդ դարի կեսերին՝ միջնադարից գրավոր ավանդված հին բանահյուսական հուշարձանների հետազոտությամբ (Մ. Էմին «Վեպք հնոյն Հայաստանի» (1850), Հ. Գաթրժյան «Պատմություն մատենագրության հայոց» (1851), Գ. Զարբհանայանի «Պատմութիւն հայկական հին դպրութեան» (1865), Ստ. Պալասանյան «Պատմութիւն հայոց գրականութեան» (1865թ.-ին հրատարակված սույն աշխատությամբ, ժամանակի բանագիտական ուսմունքների տեսական դրույթների հիմքով, քննվում և տրվում է գրականության ու ժողովրդական բանահյուսության նկարագիրը, առանձնահատկությունները և այլն): Հիշյալ գործընթացին համաքայլ՝ մեկնարկել են նաև կենդանի գոյատևող բանահյուսական նյութերի գրառումներն ու հրապարակումները (Ղ. Ալիշան «Ռամկական երգք հայոց» (1852), Գամառ-Քաթիպա «Ազգային երգարան» (1856) ու Միք. Միանսարյանց «Քնար հայկական» (1868), որն ունի բանագիտական ուղղվածություն):

Հայ բանագիտության պատմության այս փուլի քննությամբ՝ կանդորադառնանք մշակութային մի կենտրոնի, որն իր գործուն մասնակցությամբ կարևոր դեր է կատարել բանահավաքչության ու հայ բանագիտության կայացման գործում: Խոսքը Մխիթարյան միաբանության մասին է, որն ահռելի ներդրում ունի հայագիտության տարբեր բնագավառների առաջընթացում: Մատնանշենք հատկապես «Բազմավէպ» և «Հանդէս ամսօրեայ» պարբերականները, որոնց մեծաթիվ հարապարակումներ և ուսումնասիրություններ նվիրվել են բանահյուսությանն ու բանագիտությանը:

Մխիթարյանները կարևոր նվաճումներ են արձանագրել գիտության գրեթե բոլոր ոլորտներում՝ քննության առնելով հայագիտական, մանկավարժական, բնագիտական, քիմիական, երկրաբանական, բուսաբանական, մաթեմատիկական, բժշկագիտական, մեքենագիտական և այլ գիտությունների կարևոր խնդիրներ:

Հայ բանագիտության սկզբնավորման շրջափուլում առանձնանում է հատկապես Ղևոնդ Ալիշանի գիտական վաստակը, որը դասական հայագիտության մեջ մնայուն և բացառիկ է: Ալիշանը հայ ժողովրդական բանարվեստը արժևորող առաջին բանահավաք-ուսումնասիրողներից էր՝ ժողովրդագիտության նախակարապետներից: Հայագիտական առարկաների ընդգրկման առումով՝ Ալիշանի գիտական տեսադաշտը լայն է ու համապարփակ: Նրա գիտական նախասիրությունները արծարծվում են բազմաթիվ հոդվածներում և աշխատություններում: «Բազմավեպի» էջերում հրատարակված մեծաքանակ բանագիտական, ժողովրդական տոներին և հավատալիքներին նվիրված ազգագրական հոդվածները, ինչպես նաև՝ «Տեղագիր Հայոց մեծաց» (1855), «Այրարատ», «Շիրակ», «Սիսական», «Սիսուան», «Նշմարք հայկականք» (պր. 1-3), «Բնախոսություն Հայաստանի», «Հայապատում», «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» փաստաշատ աշխատությունները, մինչ օրս չեն կորցրել իրենց տեղագրական, պատմաքաղաքական, մատենագիտական, հնագիտական, ազգագրական ու բանագիտական կարևոր՝ հաճախ սկզնադրյուրային նշանակությունը:

Քննական հայացքով անդրադառնանք ականավոր գիտնականի հատկապես այն ուսումնասիրություններին, որոնք նվիրված են հայ բանարվեստին ու բանագիտությանը:

Ալիշանը փորձում էր բացահայտել և ճանաչելի դարձնել հայի *ոգին ու բնավորությունը*¹՝ սեփական ժողովրդի անցյալի և ակունքների հետազոտությամբ: Ժամանակի փիլիսոփայական և բանագիտական ուղղությունների գաղափարական ազդեցությամբ՝ բանահյուսությանը նվիրված նրա բոլոր հոդվածներում և ուսումնասիրություններում կարևորվում է մասնավորապես *ազգային ոգու* առկայությունը. դեռևս «Ազգային երգերու եւ ուրիշ ասանդներու վրա» հոդվածում (1843) ազգային բնավորությունը և հոգին ճանաչելու կարևորագույն աղբյուր է դիտարկվում բանավոր ավանդությունը. «Ճշմարիտ ազգասիրի մը առջև շատ հարգի բաներ են նաև այն ավանդները, որ բերնե բերան անցնելով, ինչպան իր օրերը հասած են¹», քանի որ, ըստ հոդվածագրի՝ ազգի պատմությունը, բնավորությունը, սովորությունները, լեզուն ու լեզվական փոփոխությունները «ոչ միայն գրավոր պատմություններե կիմացվին, հապա նաև ան գրավոր հիշատակարաններեն առաջ՝ անգիր ավանդություններով կհաստատվին²»: Ալիշանը նկատում է, որ հին ու միջնադարյան պատմիչներն առանձնահատուկ ջանքով են հավաքում ազգային պատմու-

¹ Ղևոնդ Ալիշան, Երկեր, Երևան, 1981, էջ 99:

² Նույն տեղում:

թյունները, երգերն ու առակները. «Մեր Խորենացին ալ շատ եռանդուն ջանքով և իմաստուն ընտրությամբ իր պատմությանը մեջ իբրև անգին գանձ հավաքելու պահեր է մեզի մեկ քանի հին երգեր ու ավանդություններ, որոնց վսեմ գեղեցկությանը վրա ոչ միայն մենք, այլև օտարները կզմայլին ու կը զարմանան: Իրավ է, -ընդգծում է Ալիշանը,- որ շատ անգամ այսպիսի երգերուն ու ավանդություններուն մեջ ճշմարտությունը առասպելներով զարդարած կըլլա, բայց Խորենացին պես լուսավոր միտք ունեցողը անոր չնայի, հապա ան առասպելը շինողին վախճանը կհասկնա և անով գոհ կըլլա: Թող լեզվին աղվորությունը, բանաստեղծական բացատրությունը և ընդհանրապես *ազգային հոգի (ընդգծումն իմն է- Լ. Ն.)* ըսվածը, որն այդպիսի ավանդությանց մեջ խիստ պայծառ կտեսնվի¹»:

Ուշագրավ է նաև «Քնար հայկական» հոդվածաշարի անդրանիկ՝ «Ազգահոգի կամ բնիկ հայկական բանաստեղծությունը» հոդվածը, որտեղ Ալիշանը դարձյալ շեշտում է «Վարդգես Մանուկ» կամ «Վահագնի ծնունդ» «վառվրոն երգերի»² *բուն ազգային ոգին*:

Բանահյուսությանը դիմելու Ալիշանի հիմնավորումները խարսխվում են 18-րդ դարի գերմանացի նախառոմանտիկ Հերդերի («Ժողովրդի ձայնը երգերում» տարբեր ժողովուրդների երկերի ժողովածու (1778-1779), ռոմանտիկներ՝ Շլեգել և Գրիմ եղբայրների («Գերմանական իրավունքի հնություններ», «Գերմանական առասպելաբանություն», (1835)) և այլոց տեսական դրույթների վրա, որոնք ժողովրդական երգերի մեջ տեսնում էին «ժողովրդի ձայնը, ժողովրդական մարմնավորված կամ ավանդական ոգին»³:

Յոհան Գոթֆրիդ Հերդերն իր «Գաղափարներ մարդկության պատմության փիլիսոփայության շուրջ» երկում, անդրադառնալով ազգային բնավորությանը, գրում է. «Ազգի գենետիկական ոգին, բնավորությունը տարօրինակ և ցնցող բաներ են: Այն չի բացատրվում. հնարավոր չէ նաև ջնջել երկրի երեսից. այն հին է, ինչպես ազգը, հին ինչպես հողը, որի վրա ապրել է ազգը⁴»: Ալիշանը նույնպես ունի այս համոզմունքը, ինչը կարելի է մակաբերել իր բազմաթիվ հոդվածներից ու եզրահանգումներից:

Ալիշանի հայացքները զուգադրվում են նաև Ֆրիդրիխ Վիլհելմ Ժոզեֆ Շեյլինգի հայեցակետին, ով առասպելը դիտում է իբրև ազգի

¹ Նույն տեղում:

² «Բազմավեպ», թիւ 6, Վենետիկ-Ս. Ղազար, 1848, էջ 88:

³ Ս. Հարությունյան, Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010, էջ 52-56:

⁴ И. Г. Гердер, Идеи к философии истории человечества. М. 1977, с. 314.

պատմական ճակատագիրը վճռորոշող գործոն, այսինքն՝ ազգը ճանաչելու և հետազոտելու ելակետ¹: Այս տեսակետից՝ հայ բանահյուսությունը, հայ հին վիպական ավանդությունը, հնդեվրոպական ընդհանրությունից եկող առասպելաբանական մի շարք դիպաշարերով, մոտիվներով և կերպարներով, կրոնական հավատալիքներով ու պատկերացումներով՝ որպես հինավուրց ժողովուրդի հոգևոր մշակույթի բանաստեղծական համակարգ, գրավել է նաև Ալիշանին:

Դիպուկ է Դանիել Վարուժանի «Ալիշանը բանաստեղծ էր, որ գիտություն կըներ...» բնորոշումը: Իրավամբ՝ բանաստեղծ և արձակագիր Ալիշանը, հաճախ է անդրադարձել այնպիսի նյութի, որը գտնվել է նաև հայագետ Ալիշանի տեսադաշտում: Այսպես՝ հայոց ազգածին առասպելը դարձել է ն՝ պատմա-բանագիտական խնդիրների գիտական քննության առարկա, և՝ բանաստեղծի ներշնչանքի աղբյուր: Տարբեր ծագում ունեցող հավատալիքների, էթնոմշակութային փոխազդեցությունների, բազմաթիվ սյուժեների ու կերպարաշարերի բարդ համակարգը՝ հայ հին առասպելաբանությունը, որի ակունքները ձգվում են մինչև հայերի ազգածագումը, առանձնանում է հինգ հիմնական առասպելայիններով, որոնցից է աստեղային հերոս- որսորդ-աղեղնավորի պայքարը խավարի բռնակալի դեմ (Հայկի և Բելի մասին առասպելը)²: Հայոց ազգածագման առասպելն ու Հայկի կերպարը գրավել են բանաստեղծ Ալիշանին, ով իր «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությամբ ներկայացրել է այն հայոց մեծագույն հաղթանակների համատեքստում. Հայկը՝ հայկական ցեղի, երկրի հիմնադիր, անվանատու նախնի, իսկ նրա հակառակորդ Բելը՝ հայրենի երկիր խուժած բաբելոնցի բռնակալ:

*Շատ կըտորըճվորայք հանեց Հայաստան,
Շատ Բելեր փլուցին քաջքն Հայկի նրման.
Հոռոմն, Ասորին, Մար, Սըկյութ, Պարսիկ
Հայոց թրերուն եղան պատառիկ.
Այս սարեր, ձորեր ու դաշտերս ամեն
Կարմիր են քրտնեղ, կարմիր խրմեղ են.
Ի հոն են խաղցել Տիգրան ու Տըրդատ,
Վարդանն ու Վահան, Աշոտ ու Սըմբատ³:*

«Հայոց ազգային պարծանքները» հոդվածում Ալիշանը Հայկին դարձյալ ներկայացնում է իբրև պատմական կերպար, իսկ նրա մենա-

¹ Տե՛ս Փ. Шеллинг, Соч. : в 2 т., т. 2. — М., 1989. С. 159—374.

² Մ. Հարությունյան, նշ. աշխ., էջ 128:

³ Անոնյ Ալիշան, Երկեր, էջ 18-19:

մարտը համարում «հին եւ ստոյգ եղելություն», որից սկսվում է հայոց պատմությունը: Հայկն, ըստ հռովմաճագրի, հայ ժողովրդի մեծագույն «անհատներից ու պարծանքներից» գլխավորն էր, ով իր կերպարով կարող է դառնալ թերաբժեքության բարդությամբ կամ օտարամոլությամբ տառապող ազգի «պակասութեան դարմանը»¹:

Ալիշանը հիշյալ թեման քննում է երկու դիտանկյունից՝ պատմական, որի սկզբնապատճառը հնագույն դիցավեպի պատմականացված շարադրանքն էր և դիցաբանական: Ըստ առաջինի՝ Հայկի և Բելի ճակատամարտը եղել է պատմականորեն վկայված իրադարձություն, որը նաև հայ ժողովրդի կազմավորման և ազգաձագման պատմությունն է: Ալիշանը փորձել է նույնիսկ վերակազմել հիշյալ իրադարձությունների ստույգ ժամանակը: Ըստ նրա տոմարագիտական հաշվարկների՝ Հայկի և Բելի (Նեմրոդի) ճակատամարտը տեղի է ունեցել Ք.ա. 2492 թվականին: Ժամանակագրական այս վերահաշվարկի համար Ալիշանը հաշվի է առել այն փաստը, ըստ որի 428 թ. Նոր Տարին՝ Նավասարդի 1-ը, հայկական արեգակնային շարժական օրացույցով համընկել է հուլյան տոմարի օգոստոսի 23-ին (այժմյան օրացույցով օգոստոսի 11-ին): Հայոց բուն տոմարի մեկ տարին բաղկացած է 12 ամսից՝ յուրաքանչյուրը 30 օր և հինգ հավելյալ (Նոր Տարին տոնելու) օրերից, որոնց չորս տարին մեկ գումարվում էր ևս մեկ հավելյալ օր: Նավասարդի 1-ը, ինչպես և մյուս տոները, դրա հետևանքով, դառնում են շարժական և կրկնվում 1460 տարին մեկ, ինչը համապատասխանում է աստղային համակարգում արևի մեկ լրիվ շրջապտույտին: Հաշվի առնելով աստղագիտական այն դիտարկումը, համաձայն որի՝ «Հայկական ցիկլը» կամ աստղային համակարգում արևի մեկ լրիվ շրջապտույտը կրկնվում է 1460 տարին մեկ, և ընդունելով, որ ճակատամարտից՝ մինչև 428 թ. անցել էր երկու շրջապտույտ, նա որոշել է Հայկի և Բելի միջև տեղի ունեցած ճակատամարտի տարեթիվը՝ 2492 թ. Ք.ա., որն, ըստ Ալիշանի, ընդունել են նաև հույն պատմիչներ Աֆրիկանոսն ու Եվսեբիոսը²:

«Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» աշխատության մեջ Ալիշանը, զուգադրելով Օրիոնին և Հայկին, քննում է հնամենի տիեզերական առասպելը, որտեղ հայոց նախնի Հայկը պահպանել է իր սկզբնական՝ տիեզերական-առասպելական կերպարի հատկանիշները,

¹ «Բազմավեպ», թիվ 16, Վենետիկ-Ս. Ղազար, 1843, էջ 253-255:

² Տե՛ս **Ղեոնդ Ալիշան**, Հայկայ շրջան տօմար եւ թուական հին հայոց հայադիր: Յուշիկք հայրենեաց հայոց, II տպագրութիւն, ի Ս. Ղազար Վենետկոյ, 1921, էջ 72-97:

քանի որ առասպելի ենթահիմքում ընկած է լույսն ու գարունը խորհրդանշող աստվածային աղեղնավորի պայքարն ընդդեմ խավարն ու ձմեռը մարմնավորող բռնակալի¹։ Օրիոնը՝ Պոսեյդոնի (Նեպտուն) և Էվրիալեի առասպելական որդին, քաջ որսորդ է, որ հանդգնում է Անահիտի (Արտեմիս) հետ մրցել նետաձգության ասպարեզում, դառնում վերջինիս նախանձի զոհն ու մահանում կարիճի խայթոցից²։ Սակայն դիցուհին զոջում է՝ փոխակերպելով որսորդին մեծապայծառ աստղի։ Ալիշանը իրավացիորեն ընդգծում է հայոց և հունաց ավանդությունների զուգահեռասարումը՝ մատնանշելով Հայկի քաջ աղեղնավոր, առաջին տոմարադիր լինելն ու Էրեթթեյան նետերով իր ախոյան Բելին սպանելը։ Հիշյալ զուգադրությամբ՝ Ալիշանը չի բացառում, որ այս պատմություններն առասպել և վիպասանք են³։

1893 թվականից «Բազմավեպում» պարբերաբար հրատարակվող, այնուհետև՝ 1895-ին Վենետիկում առանձին գրքով տպագրված «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» մենագրությունն աննախադեպ էր՝ իբրև հայոց նախնական և նախաքրիստոնեական հավատալիքների, կրոնական պաշտամունքների, ինչպես նաև դիցաբանության համակարգված ուսումնասիրություն. հայոց հավատալիքների, կրոնի, պաշտամունքի ու դիցարանի համակարգը էթնոսի ձևավորման և պատմական զարգացման արգասիք է՝ հնդեվրոպական ցեղակցական ընդհանրությունից սերող հավատալիքներով ու կրոնաառասպելական պատկերացումներով, հետագայում՝ հայ էթնոսին միաձուլված ցեղերի և ցեղախմբերի, ինչպես նաև տարբեր քաղաքակրթությունների փոխազ-

¹ Հայկը բուն հայկական ցեղերի նախնի աստվածություն է, որի պաշտամունքը սկզբնավորվել է հայոց մեջ, հավանաբար, ցեղային համախմբման վաղ շրջանում և գոյատևել հետագայում։ Այս ժամանակաշրջանում բնության ուժերն ու երևույթները խորհրդանշող տիեզերաբանական առասպելները տեղայնանում, պատմականանում և վիպականանում են, հետևաբար, առասպելների նախկին աստվածները կամ դիցազունները վերածվում են ցեղային նախնու կամ նահապետի, իսկ աշխարհի արարչագործության նախաստեղծ սրբազան ժամանակը վերածվում է պատմական ժամանակի՝ կապվելով տվյալ ցեղամիության սկզբնավորման ժամանակի հետ։ Պարփակվում է նաև առասպելի նախկին համատիեզերական դիպաշարը։ *Տե՛ս Ս. Հարությունյան, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 23-24*։

² Տարբերակներից մեկում Օրիոնը սպանվում է Արտեմիսի նետից, քանի որ վերջինս անարգել էր աստվածուհուն։

³ Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1910, էջ 131- 133։

դեցությամբ ձեռքբերված կրոնապաշտամունքային շերտերով¹: Աշխատության ոճի և նպատակների մասին հեղինակը նշում է հետևյալը. «...մեր ազգային աւանդութիւնը սիրող կամ քննող բանասիրաց՝ կ'ուզենք կրկնել, և ներկայացնել, ըստ կարի համառօտ, առանց շատ վեր վար թռչըտելու և ի խորս մտնելու, որոյ համար ոչ թեւ ունինք և ոչ բաւական ոյժ՝ ըստ պահանջից հմտագունից՝ այլ պարզ և ռամկաբար նշանակելով ինչ որ մեր նախնիք և օտարազգիք այլ ի գրուածս, և ինչ որ նիւթական յիշատակարանք՝ աւանդեր են Հայոց կրօնից վրայօք, և ինչ որ նշմարուած է և դեռ նշմարուի յազգային կարծիս, յուղիղ և ի ծուռ հաւատս և սովորութիւնս²»:

Սույն գործի տասնչորս՝ *Կրոնք, Հավատք և Պաշտօն, Աստուած, Բնապաշտութիւն, Ախտարք կամ աղթարք, Կենդանեաց պաշտօն, Հրէշք, Ոգեղէնք, Դիցագունք, Դիք. Պաշտօն չաստուածոց, Մոգութիւն-Մագդեզանց աղանդ, Հմայք.-Գուշակութիւնք, Հարցուկք, Կախարդանք, Հանդերձեալ կեանք և Պաշտամունք, Պաշտօնարանք, Պաշտօնեայք, Սպասք* գլուխներում, հեղինակը ցուցաբերել է բանասերի, պատմաբան-մշակութաբանի, նույնիսկ բուսաբանի հմտություններ՝ խոսելով երկնային լուսատուների, համաստեղությունների, հայոց բնաշխարհի, հմայությունների, հանդերձյալ կյանքի, տարրերի, չար (չարք, ուրվականք, վատք, դեւք, թպղա, ալք, շվոտ, յուշկապարիք, խիպիլիկ, խիպիլիկ կամ խվլիլիկ և այլն) ու բարի ոգիների (հավերժահարսունք, հրէշտակք) մասին ժողովրդական պատկերացումների և ըմբռնումների, նաև հայոց դիցարանի շուրջ:

«Ղևոնդ Ալիշանը և հայոց երգերն ու հավատալիքները» հոդվածում Սարգիս Հարությունյանն այս հետազոտության արժանիքներից է համարում, հատկապես, քրիստոնեությունից հազարամյակներ առաջ ապրող հայկական ցեղերի նախնադարյան հավատալիքների ու պաշտամունքային համակարգի՝ տարրապաշտության, բնապաշտության, ոգեպաշտության, աստվածային հերոս-նախնյաց պաշտամունքի, կրոնապաշտամունքային նախնադարյան ձևերի (հմայություն, գուշակություն, մահվան և հանդերձյալ կյանքի պատկերացումներ), ախտարային հավատալիքների, նաև՝ ավելի ուշ շրջանի դիցարանի, պաշտամունքատեղիների ու պաշտամունքային հասկացությունների քննությունը, քանի որ Ալիշանն առաջինն էր մեզանում, ըստ Հարությունյանի, որ ազգաբա-

¹ Տե՛ս **Ս. Հարությունյան**, Հին հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 5:

² **Ղ. Ալիշան**, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, էջ 4:

նական հետազոտության ենթարկեց հայոց նախաքրիստոնեական հավատալիքների, առասպելաբանության և կրոնական պաշտամունքների ողջ համակարգը: Նկատենք, որ մինչ այս մենագրությունը, իհարկե, եղել են գործեր, որոնք անդրադարձել են հայոց հեթանոսական կրոնին, հավատալիքներին, առասպելներին և գրույցներին՝ Հ. Գաթըրճանի «Պատմութիւն մատենագրութեան հայոց» անավարտ աշխատությունը (1851), Մ. Էմինի «Հետազոտութիւնք ի վերայ հայկական հեթանոսութեան» (1866), Կ. Կոստանյանի «Հայոց հեթանոսական կրօնը» (1877), որտեղ հիմնականում քննության է առնված քրիստոնեությունից անմիջապես առաջ գոյություն ունեցող պաշտոնական կրոնը: Երկրորդաբար արժևորվել է գործի գիտական կայուն դասակարգումն՝ ըստ ժամանակի ընդհանուր ազգաբանության սկզբունքների, կրոնագիտության մեջ ընդունված մեթոդների և հնդեվրոպական ու այլ ժողովուրդների դիցաբանական, հավատալիքային տվյալների համեմատաբանության¹:

Հայոց առասպելաբանական ըմբռնումների ու պակերացումների, նախնական հավատալիքների և կրոնական պաշտամունքների ամբողջական համայնապատկերի համակարգային քննությունը պահանջում է միջգիտակարգային մոտեցումներ, որի գիտակցումը տեսանելի է Ալիշանի վերոհիշյալ գործում. ներկայացնելով, օրինակ, հայոց մեջ խորը արմատներ ձգած և քրիստոնեությունից հետո որոշ գավառներում՝ իբրև աղանդ գոյատևած արևապաշտությունը կամ արևորդիների պաշտամունքը՝ նա տվյալներ է հաղորդում Ներսես Շնորհալույց, Մխիթար Ապարանցուց և Դավիթ Սալաձորցուց, որոնց վկայությամբ արևորդիներն ունեցել են պաշտամունքային ծառեր և բույսեր՝ բարդի, բամբակենի, շուշան, սինձ, երիցուկ, եղրդակ: Ուշագրավ է նաև Ալիշանի ենթադրությունը, որի համաձայն՝ «արևով» բաղադրված մի շարք ծաղկանուններ՝ *Արեգական մայր*, *Արեգական ծաղիկ*, *Արևքուրիկ*, *Արևածագ*, *Արևածաղիկ*, *Արևպաշ* և այլն, առնչվում են այս աղանդին «...որչափ բնական պատճառաւ կոչուած են զանազան բոյսք այնոր անուամբ, կըրնայ դեռ՝ յոմանս նշմարիլ և կրօնական ինչ մտածութիւն²»:

«Հայբուսակ կամ հայկական բուսաբանութիւն» աշխատության (1895) հեղինակն ու բնագետն, իբրև արևի պաշտամունքի հետք է դիտում տվյալ աշխատության բույսերի շարքում ներառված հիշյալ բուսանուն-

¹ «Բազմավեպ», թիւ 1-4, Վենետիկ- Ս. Ղազար, 2001, էջ 236-239:

² Դ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, 105 էջ:

ները, որտեղ ընդգրկված են նաև արևադեմ, արևաբաց և արևապաշտ ծաղիկները¹:

Աշխատության «Բուսեղենք եւ Ծառապաշտութիւն» գլխում, անդրադառնալով բույսերի և ծառապաշտության դրսևորումներին, առանձնացնում է հայերի համար պաշտամունքային նշանակություն ունեցող բույսեր և ծառատեսակներ, միաժամանակ շեշտում, որ կարող է այդ շարքն ընդարձակել, սակայն նպատակահարմար չի գտնում, քանի որ արդեն իսկ փոխանցած տվյալներն ու հետևությունները համապարփակ տեղեկություններ են փոխանցում հայոց բնապաշտական հավատալիքների, պատկերացումների և սովորույթների վերաբերյալ: Ալիշանը ներկայացնում է հայերի, հույների, կելտերի, դրուիդների, գերմանացիների և այլ ժողովուրդների պաշտամունքային մի շարք բույսեր ու ծառեր, պաշտամունքատեղիներ, հավատալիքներ ու սովորույթներ, ինչպես նաև դրանց հետ կապված ավանդազրույցներ: Առանձնացնելով կաղնին, տանձենին, մայրին, սոսին, բարդին, լոշտակը, փենունան, համասփյուռը կամ համասպրամը, երինջանիտակը, կախարդական զորություն ունեցող՝ ադամանտը, դիորփոսն ու արաքսա-կուսահալածը, ներկայացնում է փաստաշատ ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը (Մ. Խորենացի, Ներսես Շնորհալի, Գր. Մագիստրոս, Միթար Գոշ, Մխիթար Հերացի, Պլինիոս Երեց, Պլուտարքոս, Կտեսիփոն, արաբ հեղինակներ, երազահաններ, աղթարքներ և բժշկարաններ)²:

Վերոհիշյալ բուսանունները տեղ են գտել 1895-ին հրատարակված մեկ այլ՝ «Հայբուսակ» աշխատության էջերում: Այստեղ գիտնականն առաջնորդվել է միևնույն սկզբունքով՝ հանգամանորեն ներկայացնելով բույսի հայերեն և լատիներեն անվանումներն ու բուսատեսակը, նկարագիրը, առանձնահատկությունները, բուժական հատկություններն ու աշխարհագրական հայրենիքը՝ չմոռանալով նաև մի շարք ավանդություններ ու հավատալիքներ, որոնք առնչվում են տվյալ բույսի հետ, ինչն առավել արժեքավոր և միջգիտակարգային է դարձնում հետազոտությունը: Այսպես՝ խոսելով *սոսի* կամ *սուսի* ծառի մասին, Ալիշանը տեղեկացնում է, որ այն ունի սպիտակ խոշոր տերևներ, բուժական հատկություններ, և նույնիսկ մոխիրն է օգտակար խորը խոցերի բուժման համար: Այնուհետև անդրադառնում է սոսու պաշտամունքին, որը տարածված էր հայերի և հույների մոտ. Ապոլոնի տաճարի շուրջ՝ այս ծա-

¹ Տե՛ս Դ. Ալիշան, Հայբուսակ կամ հայկական բուսաբառություն, Վենետիկ, 1895, էջ 56:

² Տե՛ս Դ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, էջ 75-88:

ոերի շուքի տակ էին նստում հույն իմաստասերներն ու նրանցից իմաստ-
նագույն Սոկրատեսը «կ'երդուրենար ի Սօսի»¹:

Հայոց մեջ սոսու պաշտամունքի մասին գրում է հետևյալը. «...իսկ
մեր Հայկազն նախնեաց տաճարն՝ նոյն իսկ Սօսեաց անտառն կամ
ծառատունկն էր, գերկինքն ունենալով բնականաբար գմբէթ, և հօն կատա-
րուէին իրենց պաշտամունքն և նուէրքն, և անձամբ իսկ հօն նուիրուէին,
ինչպէս մեր Գեղեցիկ Արայի թոռան (Անուշաւան) համար կ'ըստի, թէ
«Սօս անուանիւր, կամ Սօսանուէր, քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի
Սօսիսն Արամենակայ՝ որ յԱրմաւիր, զորոց զսաղարթիցն զօսափիւն,
ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն, եւեթ՝ ոստոց շարժումն՝
սովորեցան ի հմայս՝ յաշխարհիս Հայկազանց. և այս զբազում ժամա-
նակս»²:

Ալիշանը մատնանշում է մի շարք բույսեր, որոնց մասին՝ նրա
կարծիքով, հյուսվել են ավանդաբանություններ, սակայն դրանց բովանդակու-
թյունն ու դիպաշարերը չի ներկայացնում: Նկարագրելով, օրինակ, *աղ-
բերաց արյուն* ծաղիկը՝ գիտնականը ենթադրում է, որ բուսանունը
առնչվում է՝ հին և մոռացված ստուգաբանական մի ավանդության հետ³:
Ի դեպ, *աղբրանց արուն կամ եղբայրարյուն (դիֆերիպեա) տուրնըֆորին*
ծաղկի մասին ավանդության երկու տարբերակ է ներկայացնում Արամ
Ղանալանյանը «Ավանդապատում» աշխատության մեջ: Ըստ առաջին
տարբերակի՝ յոթ եղբայր լեռներում սպանվում են քուրդ ավագաններից, և
նրանց թափած արյունից բուսնում է արնագույն մի ծաղիկ, որի մոտ
մշտապես գտնվում է սպանված եղբայրներին սգացող *լալան*: Երկրորդ
տարբերակը չարագործների ձեռքով սպանված յոթ եղբայրների արյունից
գոյացող՝ *աղբրանց արուն* ծաղկի մասին է⁴: Նկատենք, որ Ավ. Բա-
հալյանի «Արաքսի ծնունդը» (Աշուղ Վշտալիի գրույցը, Հատված «Ուստա
Կարո»-ից) չափածո լեզվենդում (1904), որը հյուսվել է շիրակյան մի ավան-
դաբանության հիման վրա՝ նույնպես բուսնում է վերոհիշյալ ծաղիկը. Թշնա-
մին առնանգում է հովվի սիրած աղջկան, բռնավորի ծառաները սպանում
են սիրեցյալներին, հովվի վշտահար որդեկորույս մայրը, գտնելով որդու
և հարսի դիակները, համբուրում է նրանց և ավանդում հոգին: Մոր, հար-
սի և որդու արցունքից ակնաղբյուր է բխում, իսկ նրանց թափված ար-
յունից բուսնում են *աղբերաց-արյուն* և *անթառամ շուշան* ծաղիկները.

Արդար արյունը չի կորչի իզուր.-

¹ Ղ. Ալիշան, Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն, էջ 585:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Ղ. Ալիշան, Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն, էջ 22:

⁴ Տե՛ս Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 312:

*Աստծու հրաշքով՝ մոր, հարսի, տղի
Արյուն-արցունքեն հազար ակն-աղբյուր
Բխեցին նման լուսեղեն աստղի:
Եվ գետին թափված պուտերն արյունի
Անուշ հոտերով ծաղիկներ դառան.
Անուշ հոտերով հազարան գույնի,
Աղբերաց-արյուն, շուշան անթառամ¹:*

Աշխատությունը կարելի է համարել մի շարք ժողովուրդների հոգևոր մշակույթի, բանավոր ավանդության, կենցաղի, կրոնաժխական հավատալիքների, առասպելաբանաստեղծական մտածողության և էթնիկական մտահայեցությունների հարուստ ու բազմաբղետ շտեմարան: Որտեղ, տարբեր բուսանունների հիշատակությամբ, Ալիշանը վկայաբերում է նաև աստվածաշնչյան պատմություններ, վարքաբանական-վկայակաբանական բնույթի զրույցներ, պոեմներ, գանձեր, հայրեններ, շարականներ, առակներ և այլն:

Այսպիսով, հանրագիտակ Ալիշանի աշխատություններն ամբարում են հետազոտական հսկայական նյութ և հիմնականում ունեն միջգիտակարգային բնույթ, հետևաբար, նույնիսկ ընդգծված բանագիտական ուղղվածություն չունեցող, սակայն բանահյուսական նյութերի առատությամբ առանձնացող գործերը, կարող են հետաքրքիր լինել արդի բանագիտության համար:

ЛУСИНЕ АЙРИЯН

Кандидат филологических наук

РЕЗЮМЕ

АРМЯНСКАЯ МИФОЛОГО-РЕЛИГИОЗНАЯ СИСТЕМА В НАУЧНОМ МИРОВОЗРЕНИИ ГЕВОНДА АЛИШАНА

Ключевые слова: Гевонд Алишан, фольклор, миф, религиозная, система, вера, орден мхитаристов, междисциплинарность, народные представления, мифология.

Гевонд Алишан был одним из первых собирателей-исследователей, который оценил армянский фольклор. Его многочисленные филологические, этнографические статьи а так же ряд работ, богатых фактическим материалом и посвященных народным праздникам, верованиям, не утратили своего топографического, исторического, политического, библиографического, археологического, этнографического, филологического, зачастую и источниковского значения. Поэт-прозаик Алишан часто ссылался на материалы, которые находились в поле зрения арменоведа Алишана.

¹ Ավ. Բաափալյան, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1974, էջ 168:

Таким образом, армянский этногонимический миф стал предметом научного изыскания историко-филологических проблем, к тому же источником вдохновения для поэта. Монография Алишана «Древняя вера или языческая армянская религия» ценна как систематическое исследование армянских дохристианских верований, религиозных культов, а так же мифологии, где автор продемонстрировал навыки филолога, историка-культуролога, ботаника, провещая о природе, колдовстве, загробной жизни, злых и добрых духах, народных представлениях и армянской мифологии. В труде «Флора Армении» ученый снова руководствовался тем же принципом: подробно описывая растения, параллельно рассказывая про традиции и верования связанные с ними. Следовательно, в трудах Алишана хранится огромное количество научно-исследовательского материала, в основном междисциплинарного характера, поскольку даже работы, не имеющие ярко выраженной филологической направленности, но выделяющиеся обилием фольклорного материала, могут быть интересны для современной филологии.

Лусине Айриян- Кандидат филологических наук, научный сотрудник Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: ритуальные элементы в армянских народных сказках.

LUSINE HAYRIYAN
Candidate of Philology

ABSTRACT

THE ARMENIAN MYTHOLOGICAL-RELIGIOUS SYSTEM IN GHEVOND ALISHAN'S RESEARCHAL POINT OF VIEW

Key words: Ghevond Alishan, folklore, myth, religious, system, faith, the clan of Mkhitaryans, interdisciplinary, folk ideas, mythology.

Ghevond Alishan was one of the first collector-researchers to value the Armenian folklore. His numerous philological articles on ethnographic folk holidays and beliefs, as well as a number of factual works have not lost their topographic, historical, political, bibliographic, archaeological, ethnographic and philological significance, which are often of primary origin.

Poet and fiction writer Alishan often referred to materials that were in the field of view of his own interest. Thus, the myth of the Armenian nation became the "subject of scientific examination of historical and philological problems" and a source of inspiration for the poet. It is especially valuable Alishan's monograph called "Ancient Faith or Pagan Armenian Religion" as a systematic study of Armenian pre-Christian beliefs, religious cults, as well as mythology, where the author demonstrated the skills of a philologist, historian-culturologist, and even a botanist. He spoke about nature, sorcery, the afterlife, evil and good spirits, folk ideas, and about the Armenian mythology. In another work called "The Armenian Nature (Haybusak)" the scientist was again guided by the same principle. He presented the plant in detail, along with the traditions and beliefs associated with it. Consequently, the works of scientist Alishan store a huge amount of research material, mainly of an interdisciplinary nature, as even the works that do not have a pronounced philological orientation, stand out with an abundance of folklore materials and can be interesting for modern philology.

REFERENCES

1. Alishan Gh. Yerker, Yerevan, 1981(In Armenian).
2. Alishan Gh. Haybusak kam haykakan busabarutivn, Venetik, 1895 (In Grabar).
3. Alishan Gh. Hin havatq kam hetanosakan kronk hayots, Venetik, S.Ghazar, 1910 (In Grabar).
4. Alishan Gh. Hakay shrdjan tomar ev tuakan hin hayots hayadir: Husigk hayreneac hayots, II tpagrutivn, I S. Ghazar Venetkoy, 1921(In Grabar).
5. Bazmavep, tiv 16, Venetik-S.Ghazar, 1843 (In Armenian).
6. Bazmavep, tiv 6, Venetik-S.Ghazar, 1848 (In Armenian).
7. Bazmavep, tiv 1-4, Venetik-S.Ghazar, 2001 (In Armenian).
8. Gerber I. G. Idei filosofii istorii chelovechestva. M., 1977(In Russian)
9. Ghanalanyan A. Avandapatum, Yerevan, 1969 (In Armenian).
10. Harutyunyan S.Hin havataliknery, krony, pashtamunkn u ditsarane, Yerevan, 2001(In Armenian).
11. Harutyunyan S. Banagitakan aknarkner, Yerevan, 2010 (In Armenian).
12. Isahakyan Av. Erkeri zhoghovadsu, h. II, Yerevan, 1974 (In Armenian).
13. Shelling F.: soch 2 t., T. 2, M., 1989(*In Russian*)

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
annaasatryan2013@gmail.com

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՊԼՊՈՒԼՆ ԱԻԱՐԱՅՐԻ» ՊՈԵՄԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Հայր Ղևոնդ Ալիշան, «Պլպուլն Աւարայրի», Մակար Եկմայան, a cappella խմբերգ խառը երգչախմբի համար, Գուրգեն Ալեմշահ, Հովհաննես Չեքիջյան, Գրիգոր Սյունի, Ալեքսանդր Հարությունյան, «Մեր հին երգերը»:

Հայ բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, Վենետիկի Մխիթարյան Միաբանության անդամ Հայր Ղևոնդ Ալիշանը (1820-1901) գրական ասպարեզ իջավ որպես ինքնատիպ բանաստեղծ: Եվ պատահական չէ, որ նրա պոեզիան արժանացավ հայ (և ոչ միայն հայ) կոմպոզիտորների ուշադրությանը:

Այսպես՝ նրա «Բամբ որոտան» բանաստեղծության հիման վրա Մխիթարյան միաբանության Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի երաժշտության ուսուցիչ, իտալացի կոմպոզիտոր Պիետրո Բիանկինին (1828-1905)՝ «վիթխարի անձնատրություն մը, որ թէեւ անձամբ միաբան չէր ձեռնադրուած, սակայն հոգիով սրտով Միաբանութեան նուիրուած էր, եւ որու ծառայութիւնը Մխիթարեաններու երաժշտական ասանդութեան պահպանման ու մշակման գծով կրնանք յիշատի անգուցական համարիլ»¹, ստեղծեց մի ինքնատիպ հայրենասիրական երգ, որը հետագայում երգչախմբի համար բազմաձայնեցին հայ երաժշտության երախտավորներ Քրիստափոր Կարա-Մուրզան, Կոմիտասը, Բարսեղ Կանաչյանը, Կարո Զաքարյանը և այլք: Նրանց բազմաձայնած՝ ակտիվ համերգային կյանքով ապրած և լայն ժողովրդականություն վայելած խմբերգերը շրջանառվեցին երկու՝ «Բամբ որոտան» («Բամ փորոտան») և «Օն անդր առաջ» խորագրերով:

¹ Իրփիճեան Հ., Թուուցիկ ակնարկ մը Վենետիկի Մխիթարեան հայրերու երաժշտական վաստակին վրայ, «Բազմավէպ», հայագիտական-բանասիրական-գրական հանդէս, ՃՀԵ տարի, թիւ 3-4, 2017, էջ 197:

Մեր նպատակն է ներկայացնել երաժշտական ալիշանապատումի կարևոր էջերից մեկը՝ կապված Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» պոեմի երաժշտական մարմնավորումների հետ:

«Բազմավեպի» 1847 թվականի հոկտեմբերի 1-ին համարի «Բանասիրականք» բաժնում «Բանաստեղծութիւն» խորագրի տակ հրատարակվում է 27-ամյա Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» պոեմը՝ «Նահապետ» հեղինակով¹: Դրանից ամիսներ առաջ՝ «Բազմավեպի» նույն թվականի հունիսյան համարում տպագրվել էր երիտասարդ բանաստեղծի «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունը: Հենց այդ երկու ստեղծագործությունների շնորհիվ Ալիշան-Նահապետը լայն ճանաչում ստացավ և ձեռք բերեց բանաստեղծի հռչակ:

«Բազմավեպում» «Պլպուլի» հրատարակումից ընդամենը մեկ տարի անց՝ 1848 թվականի հունիսին հայ դրամատուրգ, թատերական գործիչ Սրապիոն Հեքիմյանը գրեց «Առ Ղևոնդ Ալիշան» ներբողական բանաստեղծությունը՝ Ալիշանին դիմելով որպես հանրաճանաչ բանաստեղծի, որպես «մտաց կարապետի», որին պետք է հետևեն և որին պետք է ընդօրինակեն ուրիշները: «Հազիվ մեկ տարի անց նույնպիսի խոսքերով նրան պետք է դիմեր Մկրտիչ Պեշկեթաշյանը: Հետագա գործերը և մանավանդ «Հուշիկը հայրենյաց հայոց» պատմագեղարվեստական արձակ ստեղծագործությունը եկավ վերջնականապես գրական բարձրակետ ապահովելու Ալիշանի համար»²:

Անգնահատելի է այն նշանակությունը, որն ունեցավ «Պլպուլը» Հայր Ղևոնդ Ալիշանի գրական-ստեղծագործական ճակատագրում:

Երիտասարդ բանաստեղծի մտքով չէր կարող անցնել, որ իր «Պլպուլը» շարունակելու է կյանքը նաև որպես խմբերգ և ապրելու է իր մահից շատ տարիներ ու տասնամյակներ անց՝ հասնելով ընդհուպ մինչև իր ծննդյան 200-ամյա հոբելյանը:

1899 թվականին Թիֆլիսում հրատարակվող «Թատրոն» գրական և թատերական հանդեսի 2-րդ համարի «Երաժշտական յաւելում» բաժնում տպագրվում է հայ երաժշտության դասական, կոմպոզիտոր, խմբավար և մանկավարժ, Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ Մակար Եկմալյանի (1856-1905) «Պլպուլն Աւարայրի» խմբերգը՝ գրված

¹ Տե՛ս **Նահապետ**, Պլպուլն Աւարայրի, «Բազմավեպ», օրագիր բարոյական, բանասիրական, տնտեսական եւ բնական գիտելեաց, 1847, թիւ 19, հոկտեմբեր, 1, էջ 295-300:

² **Շտիկյան Ս.**, Ալիշանը հայ մտավորականների հուշերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, N 6, էջ 41:

Ղ.Ալիշանի խոսքերով: Խմբերգում կոմպոզիտորն օգտագործել է պոեմի 25-ից 28-րդ տողերը.

*Ո՛հ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ գիշերոյ հոգեակ վարդերու,
Երգէ պըլպուլիկդ, երգէ ՚ի սարէդ
Ջանմահ բաջքն Հայոց երգէ հոգւոյս հետ:*

Նշենք, որ Եկմալյանը «իր քնարն ի սպաս դրեց ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության արտահայտմանը: Դրանով պետք է բացատրել այն, որ նա իր ստեղծագործությունների համար ընտրել է այդ գաղափարախոսությունն արտահայտող բանաստեղծների՝ Ռ.Պատկանյանի, Մ.Պեշիկթաշլյանի և Ղ.Ալիշանի բանաստեղծությունները, որոնք մեծ ժողովրդականություն էին վայելում հայ ժողովրդի ամենալայն խավերում»¹:

Մ.Եկմալյանի խմբերգը կարևոր դեր ունեցավ կոմպոզիտորի ստեղծագործական ճակատագրում: Հայտնի է, որ նրա կենդանության օրոք տպագրվեց միայն «Պատարագը» և երկու խմբերգ՝ «Պլպուլն Աւարայրի» և «Տերունական աղոթք» («Աղբյուր», 1902):

«Գաղտնիք չէ, որ նրա (Մ.Եկմալյանի – Ա.Ա.) աշխարհիկ ստեղծագործությունները, հատկապես Ռ.Պատկանյանի, Մ.Պեշիկթաշլյանի, Ղ.Ալիշանի և այլ բանաստեղծների խոսքերով գրված մեներգերն ու խմբերգերը, որոնց մեջ բավական ցայտուն կերպով արտահայտվել են հայրենասիրական ու ազատասիրական գաղափարներ, ժամանակին մեծ տարածում գտնելով, զգալի դեր են կատարել հայերի ազգային ինքնագիտակցության բարձրացման ուղղությամբ»²:

1905 թվականի մարտի 6-ին կտրվեց 49-ամյա Մակար Եկմալյանի կյանքի թելը... Մոռացության գիրկն անցավ «Պլպուլն Աւարայրի» խմբերգը...

Հայ խմբերգային արվեստի՝ մասնավորապես «Պլպուլն Աւարայրի» եկմալյանական խմբերգի համերգային կենսագրության մեջ կարևոր հանգրվան դարձավ 1963 թվականը. հունիսի 2-ին Հայկական պետական ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, Կ. Պոլսից եկած ու Երևանում մշտական բնակություն հաստատած երիտասարդ դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի ակտիվ մասնակցությամբ կազմակերպվեց Մակար Եկմալյանի ստեղծագործություններից կազմված համերգը, որի առաջին բաժնում, տաղանդավոր խմբավարի դեկավարությամբ, Հայաստանի պե-

¹ **Մուրադյան Մ.**, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1970, էջ 264:

² Նույն տեղում, էջ 276:

տական երգեցիկ խմբի կատարմամբ հնչեցին նրա խմբերգերը՝ «Ո՛վ, հայոց աշխարհ», «Պլպուլն Ավարայրի», «Ողջուն տվեք», «Խորոտ աղջիկ» և «Ահա ծագեց կարմիր արև», ինչպես նաև հատված «Ռոզայի թափառումները» կանտատից, իսկ երկրորդ բաժնում՝ «Կիլիկիա», «Կեցցե՛ Զեյթուն»¹, «Տեր, կեցո դու գհայս», «Թաղունն քաջորդվոյն», «Լոեց» (մենակատար՝ Շարա Տալան)²:

Սա հայաստանյան բեմում Եկմայանի ստեղծագործություններից կազմված առաջին համերգն էր, որի ընթացքում առաջին անգամ հնչեցին անհայտ գործեր՝ արժանանալով ունկնդիրների խանդավառ ընդունելությանը: «Коммунист» թերթի 1963թ. հունիսի 8-ի համարում լույս տեսած «Վերածնված Եկմայանը» վերտառությամբ հոդվածում արձանագրվեց, որ «Եկմայանի առաջին համերգը հիրավի հրաշալի իրադարձություն է հանրապետության մշակութային կյանքում»³:

Վ.Մաթևոսյանը «Երևան» թերթի 1963 թվականի հունիսի 5-ի համարում տպագրված «Եկմայանի երգերի երեկո» վերլուծականում նկատեց, որ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում հավաքված բազմաթիվ երևանցիներ «մեծ սիրով և ուշադրությամբ լսեցին Երևանում դեռևս չկատարված Եկմայանի մի շարք պարզ ու անպաճույճ ստեղծագործություններ»⁴:

Ու թեև համերգի կազմակերպման գործում մեծ դեր էր կատարել երգիչ Շարա Տալանը, ով նաև հանդես եկավ վարպետ կատարումներով, սակայն «ծրագրի հիմնական ծանրությունն իր վրա վերցրեց Հայաստանի պետական երգչախումբը, որը ղեկավարում էր Հովհաննես Զեքիջյանը»⁵:

Մեծ հաջողություն ունեցած համերգը կրկնվեց նոյեմբերի 30-ին:

Այս երկու համերգների շնորհիվ վերածնվեց Մակար Եկմայանի խմբերգային երաժշտությունը, այդ թվում՝ «Պլպուլն Ավարայրի», խմբերգը, որն այնուհետև պիտի հնչեր միշտ՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս:

Փարիզի Շառլ Գրոյի անվան ձայնասկավառակների ակադեմիայի ամենամյա միջազգային մրցանակաբաշխության 1970 թվականի «Գրան պրին» (Մեծ մրցանակը) շնորհվեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբին՝ «Հայաստանի երգեր» ձայնասկավառակի համար, որտեղ տեղ էին գտել Կոմիտասի «Գութանի երգը», «Կալի երգը», «Հարսան-

¹ Օրագրում գրված է «Զեյթունցիների երգը»:

² Տե՛ս «Գրական թերթ», 8 դեկտեմբերի, 1963:

³ Галстян Х. Возрожденный Екмаян, «Коммунист», 8 июня, 1963.

⁴ Մաթևոսյան Վ., Եկմայանի երգերի երեկո, «Երևան», 5 հունիսի, 1963:

⁵ Նույն տեղում:

յաց երգերը», Մ.Եկմայանի «Պլպուլն Ավարայրի», «Մեր հողը հնավանդ» և այլ ստեղծագործություններ, «որոնք կատարել է Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ հանրապետության ժողովրդական արտիստ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ»¹: Մեծ մրցանակի էր արժանացել նաև Դվորժակի կոնցերտի՝ Մստիսլավ Ռոստրոպովիչի և Հերբերտ ֆոն Կարայանի ձայնագրությունը²:

Նույն՝ 1970 թվականին «Պլպուլն Ավարայրի» խմբերգն առաջին անգամ տպագրվեց Հայաստանում. ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Ռոբերտ Աթայանի խմբագրականով³ ու Մաթևոս Մուրադյանի առաջաբանով⁴ հրատարակեց Մակար Եկմայանի աշխարհիկ ստեղծագործությունների «Խմբերգեր և մեներգեր» ժողովածուն⁵, որը կազմել էին Շարա Տալյանը, Մաթևոս Մուրադյանը և Ռոբերտ Աթայանը: Ժողովածուն ընդգրկում էր հայ ժողովրդական երգերի՝ Եկմայանի մշակումները և կոմպոզիտորի ինքնուրույն երկերը, այդ թվում՝ «Պլպուլն Ավարայրի» խմբերգը⁶: Ի տարբերություն «Թատրոն» հանդեսում տպագրված խմբերգի Cis-dur տոնայնության, այստեղ տոնայնությունը F-dur է և մեկ քառատողի փոխարեն՝ ալիշանական տեքստից ընդգրկված է 4 քառատող:

Անշուշտ՝ սա ևս նպաստեց խմբերգի տարածմանն ու մատչելի դարձրեց մյուս խմբավարների մեկնաբանությունների համար ևս:

Ու թեև խմբերգը կատարել են հայ խմբավարներից շատերը, և այն մերթընդմերթ տեղ է գտել հայկական երգչախմբերի երգացանկերում, սակայն, այդուամենայնիվ, «Պլպուլի» վերածնունդն ու հայրենիքում և ամբողջ աշխարհում հանրաժողովմանը նոր շունչ հաղորդեց Չեքիջյան-խմբավարի գործունեությունը:

Շնորհիվ Հ.Չեքիջյանի՝ Մ.Եկմայանի խմբերգային երաժշտությունը հասավ Ֆրանսիա. կոմպոզիտորի աշխարհիկ խմբերգերը, այդ թվում՝

¹ Միջազգային մրցանակ «Հայաստանի երգերին», «Սովետական Հայաստան», 26 ապրիլի, 1970:

² Տե՛ս Նվաճել են «Մեծ մրցանակը», «Հայրենիքի ձայն», 29 ապրիլի, 1970: Նկատենք, որ նույն կարգի մրցանակի էր արժանացել Ս.Պրոկոֆևի «Հոկտեմբերի 20 տարին» ստեղծագործության ձայնասկավառակը, իսկ Երկրորդ կարգի Մեծ մրցանակ էր շնորհվել Սվիրիդովի երգչախմբային և Գլինկայի սիմֆոնիկ ստեղծագործությունների ձայնասկավառակներին:

³ Տե՛ս **Աթայան Ռ.**, Խմբերգի կողմից, Մակար Եկմայան, Խմբերգեր և մեներգեր, Երևան, «Հայաստան», 1970, էջ 4-7:

⁴ Տե՛ս **Մուրադյան Մ.**, Մակար Եկմայան. Կենսագրական ակնարկ, Մակար Եկմայան, Խմբերգեր և մեներգեր, Երևան, «Հայաստան», 1970, էջ 8-10:

⁵ Տե՛ս **Մակար Եկմայան**, Խմբերգեր և մեներգեր, Երևան, «Հայաստան», 1970:

⁶ Տե՛ս Նույն տեղում, էջ 89, ծանոթագրություն էջ 126:

«Պլպուլն Ավարայրի», ու «Պատարագից» հատվածները Փարիզում և Մարսելում հնչեցին Հ.Չեքիջյանի և հայկական կապելլայի 1986 թվականի ֆրանսիական հյուրախաղերի ընթացքում: Հատկանշական է, որ Հայր Ղևոնդ Ալիշանի բանաստեղծության երաժշտական մարմնավորումը՝ եկմայանական խմբերգը Մաեստրո Չեքիջյանի մեկնաբանությամբ հնչեց Փարիզում՝ 1986թ. սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած համերգի առաջին բաժնում¹. Հնչեց այն նույն Փարիզում, որտեղ ավելի քան մեկ դար առաջ՝ 1859-1861 թթ. Հայր Ղևոնդ Ալիշանն ուսուցչություն էր արել Փարիզի Մուրատյան վարժարանում:

Այսպիսով, Հայր Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» պոեմի մեկ հատվածի հիման վրա խառը երգչախմբի համար գրված եկմայանական այս a cappella խմբերգը դարձավ հայ խմբերգային արվեստի ուղենշային ստեղծագործություններից մեկը, որը շնորհիվ Հ.Չեքիջյանի՝ արդեն տասնամյակներ շարունակելով իր համերգային կյանքը, վաղուց արդեն դարձել է Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի և հայկական և կապելլայի այցեքարտերից մեկը:

Բոլորովին վերջերս՝ 2021թ. փետրվարի 17-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում կայացավ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի համերգը՝ նվիրված Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակին: Համերգն սկսվեց Մ.Եկմայանի «Հայր մեր» Տերունական աղոթքով, որին հաջորդեց Առնո Բաբաջանյանի «Տղերքը, որոնք չկան» խմբերգը: Իսկ երրորդը՝ «Պլպուլն Աւարայրի» խմբերգն էր...

Միևնույն ժամանակ պիտի ավստասանքով արձանագրենք, որ մինչ օրս Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ աշխարհի տարբեր երկրների հեղինակավոր համերգային դահլիճներում հնչած այս հրաշալի խմբերգը՝ ալիշանական «Պլպուլը», դեռևս չի հնչել Վենետիկում՝ Հայր Ղևոնդ Ալիշանի հարազատ օջախում, Սուրբ Ղազարում՝ Վենետիկի Մխիթարյան Միաբանության կամարների ներքո...

Հայ երաժշտության պատմության մեջ քիչ չեն ստեղծագործությունները, որոնք այնքան են սիրվել ժողովրդի կողմից, որ «կորցրել են» իրենց հեղինակներին: Որպես ասվածի ապացույց նշենք «Զեյթունցիների քայլերգը», որը գիտե յուրաքանչյուր հայ մարդ: «Զեյթունցիների քայլերգը», որպես հայ ժողովրդական երգ, արժանացել է հայ և օտարազգի կոմպոզիտորների ուշադրությանը: Մ.Եկմայանը քայլերգի հիման վրա արական երգչախմբի համար ստեղծել է a cappella խրոխտ խմբերգը՝ «Կեցցե՛ Զեյթուն» վերնագրով, իսկ 1974թ. Ալեքսանդր Հարությունյանը դաշնամուրի, լարային նվագախմբի և հարվածայինների համար գրված «Մեր

¹ Տե՛ս համերգի ծրագիրը, Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

հին երգերը» ռապսոդիայում, ի թիվս այլ երգերի, օգտագործել է քայլերգը՝ ստեղծելով սիմֆոնիզացված վարիացիաների նմուշ:

Գրիգորի Կազաչենկոն «Զեյթունցիների քայլերգի» մեղեդին օգտագործել է մեներգչի, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված առաջին «Հայկական սյուիտում», իսկ Միխայիլ Իպոլիտով-Իվանովը երգի մեղեդին 1894թ. օգտագործել է օր. 10 «Կովկասյան էսքիզներ» N 1 նվագախմբային սյուիտի առաջին շարքում՝ որպես «Մարդարի երթի» գլխավոր թեմա: Բոլորը գիտեն «Զեյթունցիների քայլերգը», բայց հաստատ քչերն են տեղյակ, որ երգը հեղինակ ունի: Երգի մեղեդու հեղինակը Տիգրան Զուխաճյանն է: «Զեյթունցիների քայլերգը» կյանքի կոչվեց 1862-ի Զեյթունի դյուցազնամարտի կապակցությամբ կոմպոզիտորի և զեյթունցի հերոս Բանաստեղծ Հարություն Չաքրյանի համագործակցությամբ:

Նման ճակատագիր ունեցավ նաև «Որսկան ախպերը»: Շատերին է հայտնի այս ժողովրդական երգը, բայց բոլորը չէ, որ գիտեն, թե ո՞վ է Բանաստեղծական տեքստի հեղինակը: Իսկ Բանաստեղծության հեղինակն Ավետիք Բաախյանն է...

Ինչն է... Նույն ճակատագրին արժանացավ նաև Մ.Եկմալյանի «Պլպուլն Ավարայրի» խմբերգը, որի «շնորհիվ» ստեղծվեց կոմպոզիտոր և խմբավար, Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ Գրիգոր Սյունիի (1876-1939) «Ոհ՛, դու բարեկամ (Պլպուլն Ավարայրի)» a cappella խմբերգը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2013 թվականին լույս տեսավ Գրիգոր Սյունիի «Խմբերգեր» ժողովածուն, որը կազմել էր և խմբագրել Ռոբերտ Աթայանը, ով նաև հեղինակել էր նախաբանն ու վերլուծական դիտողությունները: Ժողովածուի «Հայրենասիրական և ազգային-ազատագրական պայքարի երգերից» բաժնում տեղ է գտել «Ոհ՛, դու բարեկամ (Պլպուլն Ավարայրի)» վերնագրով a cappella խմբերգը¹: Ծանոթագրության մեջ կարդում ենք, որ խմբերգը «հատված է Ղ.Ալիշանի ջերմ հայրենասիրությամբ և ազգային ազատագրության գաղափարով տոգորված «Պլպուլն Ավարայրի» քերթվածից, որ անցյալ դարի կեսերից սկսած հայ ժողովրդի տարբեր խավերում երգվել ու մինչև այժմ էլ երգվում է: Շատ հայ կոմպոզիտորներ և խմբավարներ (դրանց թվում նաև մեր օրերի) անտարբեր չեն անցել այս ժողովրդական երգի կողքով: Սյունիի ներդաշնակումը յուրովի գունեղ է և հուզական»²: Ինչ-

¹ Տե՛ս **Գրիգոր Սյունի**, Խմբերգեր, գիտական հրատարակություն ըստ բնագրերի, կազմող, խմբագրող, նախաբանի և վերլուծական դիտողությունների հեղինակ՝ Ռոբերտ Աթայան, Երևան, «Հայաստան», 2013, էջ 220:

² **Գրիգոր Սյունի**, Խմբերգեր, գիտական հրատարակություն ըստ բնագրերի, կազմող, խմբագրող, նախաբանի և վերլուծական դիտողությունների հեղինակ՝ Ռոբերտ Աթայան, Երևան, «Հայաստան», 2013, էջ 326:

պէս տեսնում ենք՝ այստեղ երգը համարվում է ժողովրդական, ինչը, մեր կարծիքով այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Եթե համեմատենք Եկմայանի և Սյունիի խմբերգերը, ապա կհայտնաբերենք շատ ընդհանրություններ և չնչին տարբերություններ: Հետևաբար՝ կարող ենք պնդել, որ Սյունին ոչ թե բազմաձայնել է ժողովրդական երգը, այլ մշակել Եկմայանի խմբերգը, քանի որ ընդհանուր են ոչ միայն տոնայնությունները՝ F-dur, այլև հիմնական ձայնատարությունը: Սյունին փոքր-ինչ աշխուժացրել է ալտի և տենորի երգամասերը, իսկ բասի երգամասը լիովին համընկնում է Եկմայանական խմբերգի բասային երգամասի հետ:

Եկմայանական «Պլպուլը» մարմնավորվեց գործիքային երաժշտության մեջ ևս: 1974թ. Ալեքսանդր Հարությունյանը դաշնամուրի, լարային նվագախմբի և հարվածայինների համար ստեղծում է «Մեր հին երգերը» ռապսոդիան, որը, ըստ հեղինակի, «հիմնված պիտի լիներ 19-րդ դարի վերջին տարածված հայկական հայրենասիրական երգերի նյութի վրա: Իմ նոր ռապսոդիան անվանեցի «Մեր հին երգերը»՝ դրանով իսկ տուրք տալով վաղուց անցած ժամանակներին: Այդպես է լինում, երբ թերթում ես հին լուսանկարներով ալբոմը, որի մեջ պահպանվում են սրտիդ մոտ ու թանկագին մարդկանց լուսանկարները, մարդիկ, որ ապրել են իրենց անկրկնելի կյանքը»¹:

Ռապսոդիան առաջին անգամ հնչեց Երևանում, 1974 թվականին, Ֆիլիարմոնիայի մեծ դահլիճում, Դավիթ Խանջյանի ղեկավարությամբ: Դաշնամուրի նվագամասը կատարեց ինքը՝ հեղինակը: 1990 թվականին Ռապսոդիան հնչեց Փարիզում՝ «Գավո» հեղինակավոր համերգասրահում (Salle Gaveau), հեղինակի և Հայաստանի կամերային նվագախմբի կատարմամբ՝ Ռուբեն Ահարոնյանի ղեկավարությամբ²:

Իր ռապսոդիան Հարությունյանն սկսում է նվագախմբում եկմայանական «Պլպուլի» մեղեդու շարադրմամբ³, որը, ինչպես նկատել է արվեստագիտության թեկնածու Վյաչեսլավ Եդիգարյանը, «ռապսոդիայում օժտվում է Հայրենիքի թեմայի կերպարով և հասնում սիմֆոնիկ ընդհանրացման մակարդակի»⁴:

Ալիշանյան «Պլպուլին» է անդրադարձել սփյուռքահայ կոմպոզի-

¹ **Հարությունյան Ա.**, Հուշեր, Երևան, «Արճեշ» հրատ., 2000, էջ 81:

² Տե՛ս **Кокжаев Михаил**, Александр Арутюнян: особенности композиторского стиля, Москва, «Композитор», 2006, стр. 151:

³ Տե՛ս **Հարությունյան Ա.**, Դաշնամուրային ստեղծագործություններ, Երևան, «Սովետական գրող», 1988, էջ 3:

⁴ Տե՛ս **Едигарян Вячеслав**, Рапсодия «Наши старые песни» в ракурсе фортепианного стиля А.Арутюняна, Ереван, «Комитас», 2004, стр. 14:

տոր և խմբավար Գուրգեն Ալեմշահը (1907-1947): Ծննդավայրում՝ Պարտիզակ գյուղաքաղաքում ստանալով նախնական կրթություն՝ նա մեկնել է Վենետիկ և ուսանել Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում: Երաժշտական կրթություն ստանալու նպատակով 1923-ին նա մեկնել է Միլան, 1930 թվականին ավարտել է Միլանի կոնսերվատորիան և նույն թվականին հրավիրվել Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի՝ Փարիզի նորաբաց բաժանմունք՝ որպես երաժշտության դասատու¹: «Դասավանդությանը զուգընթաց նա երիտասարդներից կազմում է մի երգչախումբ, որին տալիս է «Կիլիկիա» անունը: Այդ երգչախմբով համերգներ է տալիս ոչ միայն Փարիզում ու նրա մոտակա շրջաններում, այլև մի քանի անգամ մեկնում է Վենետիկ»²:

Հայ երաժշտագիտությունը մինչ օրս առանձին քննության առարկա չի դարձրել վաղամեծիկ տաղանդավոր կոմպոզիտորի ստեղծագործության ուսումնասիրությունը, թեև նրա արխիվը նրա մահից հետո տեղափոխվել է Երևան և հանգրվանել Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: Նրա կյանքին ու գործունեությանն անդրադարձել է երկար տարիներ սփյուռքահայ երաժշտության ուսումնասիրության հարցերով զբաղված երաժշտագետ Յիցիլիա Բրուտյանն իր «Սփյուռքի հայ երաժիշտները» (1968) և «Սփյուռքահայ երաժշտական մշակույթը» (1982) մենագրություններում: Անդրադառնալով ընդամենը 40 տարեկանում կյանքից հեռացած կոմպոզիտորի ստեղծագործությանը, նա նշում է, որ կոմպոզիտորի «ամենանշանավոր գործն է «Ավարայրի պատերազմը» վոկալ-սիմֆոնիկ երկը, որը խոշոր կտավի գործ է՝ գրված 1934»³: 2001 թվականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակած «Վարդանանց երգեր եւ շարականներ» ժողովածուում, որը նվիրված էր Վարդանանց 1550-ամյակին և հրատարակվեց Միհրան Ղազելյանի խմբագրությամբ, տպագրվեց Գուրգեն Ալեմշահի «Պլպուլն Աւարայրի» a cappella խմբերգը խառը երգչախմբի համար⁴, որն, ի տարբերություն եկմայանական խմբերգի լուսավոր տրամադրության, շարադրված է միևնույն ժանրում՝ բնական g-moll-ում և ստեղծում է բոլորովին նոր երաժշտական կերպար:

Այսպիսով՝ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» պոեմը կարևոր դեր կատարեց հայ երաժշտության պատմության մեջ՝ իր վրա հրավիրելով հայ

¹ Տե՛ս **Բրուտյան Յ.**, Սփյուռքահայ երաժշտական մշակույթը, Երևան, 1982, էջ 283:

² **Բրուտյան Յ.**, Սփյուռքահայ երաժշտական մշակույթը, Երևան, 1982, էջ 283-284:

³ Տե՛ս **Բրուտյան Յ.**, Սփյուռքի հայ երաժիշտները, Երևան, 1968, էջ 59:

⁴ **Ալեմշահ Գուրգեն**, Պլպուլն Աւարայրի, Վարդանանց երգեր եւ շարականներ, խմբագրութեամբ Միհրան Ղազելեանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, էջ 190-192:

կոմպոզիտորների ուշադրությունը թե՛ բանաստեղծի կյանքի օրոք, թե՛ նրա մահից հետո: 1899-ին Եկմալյանը ստեղծեց «Պլպուլն Աւարայրի» a cappella խմբերգը խառը երգչախմբի համար, իսկ տարիներ անց՝ սփյուռքահայ կոմպոզիտոր Գուրգեն Ալեմշահը՝ «Պլպուլն Աւարայրի» a cappella խմբերգը խառը երգչախմբի համար:

Մ.Եկմալյանի «Պլպուլն Աւարայրի» խմբերգը, շնորհիվ Հովհաննես Չեքիջյանի, 1963-ին առաջին անգամ հնչեց Երևանում, հաստատուն տեղ գրավելով Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի երգացանկում: Այն մինչ օրս էլ ապրում է լիարժեք համերգային կյանքով՝ հնչելով Հայաստանում և արտասահմանում:

Եկմալյանական «Պլպուլը» հիմք դարձավ նոր ստեղծագործությունների համար. Գրիգոր Սյունին ստեղծեց «Ոհ՛, դու բարեկամ (Պլպուլն Ավարայրի)» վերնագրով a cappella խմբերգը, իսկ Ալեքսանդր Հարությունյանի շնորհիվ այն մուտք գործեց գործիքային երաժշտություն: Կոմպոզիտորը եկմալյանական մեղեդիին վարպետորեն օգտագործեց իր «Մեր հին երգերը» ռապսոդիայում:

АННА АСАТРЯН

доктор искусствоведения, профессор

РЕЗЮМЕ

МУЗЫКАЛЬНЫЕ ВОПЛОЩЕНИЯ “СОЛОВЬЯ АВАРАЙРА” ГЕВОНДА АЛИШАНА

Ключевые слова: о. Гевонд Алишан, “Соловей Аварайра”, Макар Екмалян, хор a cappella для смешанного хора, Гурген Алемша, Оганес Чекиджян, Григор Сюни, Александр Арутюнян, “Наши старые песни”.

Армянский филолог, историк, переводчик, член Венецианский конгрегации мхитаристов о. Гевонд Алишан (1820-1901) вступил на литературное поприще как самобытный поэт. И весьма закономерно, что его поэзия удостоилась внимания армянских (и не только) композиторов.

Поэма “Соловей Аварайра” (1847) Алишана сыграла важную роль в истории армянской музыки. К ней обращались армянские композиторы как при жизни поэта, так и после его смерти, создав хоровые произведения a cappella для смешанного хора. Классик армянской музыки Макар Екмалян (1856-1905) в 1899 году сочинил хор “Соловей Аварайра”, а годы спустя к той же теме обратился Гурген Алемша (1907-1947).

Хор М.Екмаляна “Соловей Аварайра”, который после смерти композитора был предан забвению, в Ереване впервые был исполнен в 1963 году, благодаря молодому дирижеру Оганесу Чекиджяну. После ереванского дебюта “Соловей Аварайра” М.Екмаляна занял прочное место в репертуаре Национальной академической хоро-

вой капеллы Армении и до сих пор живет своей полноценной концертной жизнью, став одной из визитных карточек маэстро Чекиджяна и армянской капеллы.

Екмяляновский “Соловей” стал основой для новых произведений: Григор Сюни сочинил хор а cappella, а благодаря Александру Арутюняну “Соловей” вошел в инструментальную музыку: композитор использовал мелодию екмяляновского “Соловья” во вступлении к рапсодии “Наши старые песни” (1974).

ANNA ASATRYAN
Doctor of Arts, Professor,

ABSTRACT

MUSICAL EMBODIMENTS OF GEVOND ALISHAN'S "THE NIGHTINGALE OF AVARAYR"

Key words: Father Gevond Alishan, “The Nightingale of Avarayr”, Makar Yekmalyan, choral a capella pieces for mixed choir, Gurgen Alemshah, Ohannes Tchekidjian, Grigor Syuni, Alexander Harutyunyan, “Our Old Songs”.

The Armenian linguist, historian and translator, member of the Mkhitarist Congregation, Father Gevond Alishan (1820-1901) stepped into the literary world as a unique poet. Quite expectedly, his poetry drew the attention of Armenians, as well as other composers.

The poem “The Nightingale of Avarayr” (1847) by Alishan has played an important role in the history of Armenian music. Armenian composers addressed the poem both during Alishan’s lifetime and after his death, having created choral a capella pieces for mixed choir. The classic of Armenian music Makar Yekmalyan (1856-1905) wrote a choral work “The Nightingale of Avarayr” in 1899, and years later, Gurgen Alemshah (1907-1947) addressed the same poem.

The choral piece by M. Yekmalyan “The Nightingale of Avarayr”, that had fallen into oblivion after the composer’s death, was brought back to life in 1963 thanks to the efforts of the young conductor Ohannes Tchekidjian. After the Yerevan debut, “The Nightingale of Avarayr” has taken its solid place in the repertoire of the National Academic Choir of Armenia, and to date, it lives a full-fledged concert life, having become one of the signatures of Maestro Tchekidjian and the Armenian Capella.

Yekmalyan’s “Nightingale” paved the way for new musical pieces. Thus, Grigor Syuni wrote an a capella choral work, while owing to Alexander Harutyunyan, the “Nightingale” became part of instrumental music: the composer used the tune of Yekmalyan’s “Nightingale” in the prelude to his rhapsody “Our Old Songs” (1974).

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ Հայր Ղևոնդ Ալիշան, դիմանկար, Ա. Ֆեթվաճյան, Ե. Սավայան, Ն. Բորդինյոն, Ա. Տեր-Մարության, Տ. Արզումանյան, Կ. Լո-րենցետտի, կիսանդրի, «Գեղունի», «Արձագանք», Ստեփան Ակայան, Հով-հաննես Այվազովսկի, Մխիթարյաններ:

Մխիթարյան միաբանության անդամ, ականավոր գիտնական, բանաստեղծ և մանկավարժ Հայր Ղևոնդ Ալիշանն իր երկարամյա նվիրյալ գործունեությամբ, մարդկային որակներով և գիտական պրոֆեսիոնալիզմով անուրանալի վաստակ ունեցավ հայագիտության մեջ և մնայուն հետք թողեց իր ժամանակակիցների կյանքում: Ակունքում սերն էր Աստծո, մարդու, հայրենիքի, գիտության և բնության հանդեպ, դրանից բխող ներքին լույսը, լուսավոր մտածելակերպը, խոնարհությունը, տի-տանական աշխատասիրությունը և աստվածատուր շնորհները: Պա-տահական չէ, որ հայ և օտարազգի արվեստագետները փորձել են ան-մահացնել սիրելի կերպարն արվեստում, կիսվել են Ալիշանի հետ հան-դիպումներից ստացած վառ տպավորություններով, երջանիկ են եղել հաղորդակից լինել Ալիշանի հայանպաստ գործին և ամբողջ կյանքում գոհունակությամբ են կրել նրա հետ հանդիպումից ստացած պայծառ հետքը:

Անվանի բնանկարիչ, գրող և հասարակական գործիչ *Գևորգ Բա-շինջադյանի* 1884 թվականի հուշերում Ալիշանը ներկայանում է որպես նիհար, կարճահասակ, բարի և խոնարհ աչքերով, մանկական անմեղու-թյունը դեմքին գրված լուսավոր կերպար¹:

Կ.Պոլսի և Հռոմի Գեղարվեստի ակադեմիաների սան, հայ մշա-կույթի, արվեստի և պատմության նվիրյալ, իր նկարչական շնորհների բազմակողմանիությամբ զարմացնող նկարիչ, հայ և համաշխարհային արվեստին նվիրված ուսումնասիրությունների հեղինակ, բանաստեղծ *Արշակ Ֆեթվաճյանի* և Ալիշանի մտերմությունն սկսվել էր 1888-ին Վե-նետիկում՝ Սուրբ Ղազար կղզում: Նկարիչը երեք տարի շարունակ՝ 1889-1891 թթ. ամառային ամիսներին հայ և բյուզանդական միջնադարյան

¹ Տե՛ս **Բաշինջադյան Գ.**, Ս. Ղազարի կղզին 1884 թվականին, Ալիշանը ժամա-նակակիցների հուշերում, Երևան, 1974, էջ 95:

ձեռագրերի նկարագարողումների ընդօրինակություններ է արել¹։ Ի պատասխան Ալիշանի՝ վարձահատույց լինելու առաջարկի, Ֆեթվաճյանը խնդրել է, որ նա հանդես գա բնորդի դերում, և 1891-ին «յուր սենյակի մեջ նկարել անմոռանալի մեծ մարդու դիմանկարը»²։ Ֆեթվաճյանի վրձնած Ալիշանը գիտնական-մտավորականի կերպար է, ում պրպտուն և կենտրոնացած հայացքն ասես մատնում է ներքին կենտրոնացումը, լայն ճակատն ակոսող կնճիռները՝ իր մտավոր ակտիվ գործունեությունը, իսկ պատկերի դինամիկ քսվածքները՝ մտքի ու գրչի ժրաջանությունը։ Թեև դիմանկարը որոշ ժամանակ կորսված է համարվել, սակայն ի վերջո այն գտել է իր հանգրվանը՝ Մխիթարյան միաբանության Ալիշանի աշխատասենյակում³։

1895-ին Ալիշանին վրձնել է նաև Վենետիկի Գեղարվեստի թագավորական ակադեմիայի սան, կրոնական և աշխարհիկ թեմաներով բազմաթիվ որմնանկարների և հաստոցային պատկերների հեղինակ, իտալացի նկարիչ *Նոյ Բորդիգոնը*⁴։ Աշխատասենյակում թղթերի մեջ խորասուզված աշխատանքի պահին Ալիշանին պատկերող այս կտավն աչքի է ընկնում մեծ գիտնականի լուսավորչական և մտավոր ներուժը ներթող ռոմանտիկական ոգով։

Այլ երանգ ունի արդեն 1957-ին Երևանի Գեղարվեստաարդյունաբերական ուսումնարանի սան, շնորհալի պորտրետիստ *Եփրեմ Սավայանի*՝ լուսանկարից վրձնած դիմանկարը։ Սավայանի Ալիշանը ծանր խոհերի մեջ խորասուզված, տարիքն առած մտավորական է։ Բաց և մուգ երանգների ցայտուն և կոնտրաստային հակադրությունն ասես ընդգծում է մտքի և հոգու ազնվականի լուսապայծառությունը, մինչդեռ ֆոնի մգու-

¹ Տե՛ս **Չուգասզեան Լ.**, Արշակ Ֆեթվաճեան, Երևան, 2011, էջ 23։

² **Ճանաչան Մ.**, Արշակ Ֆեթվաճյան և Հ. Ալիշան, Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 209։

³ Տե՛ս նույն տեղում, էջ 214-215։

⁴ Բորդիգոնը հեղինակել է նաև Մխիթարյան միաբանության Հայր Իսսավերդենցի, Հայր Զարբանալյանի, Հայր Դավիթ Նազարեթյանի դիմանկարները, հարդարել է Միաբանության գրադարանի ինտերիերը, Սուրբ Ղազար Մայրավանքի եկեղեցու համար ստեղծել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի խորանապատկերը և այլն (Տե՛ս **Բախչինեան Ա.**, Վենետիկի Մխիթարեանները եւ միջազգային գեղարուեստը, «Բազմավեպ», Վենետիկ, 2017, թիւ 3-4, էջ 52, **Չրաքեան Հ.**, Նոյ Պորտինեոն, «Բազմավեպ», Վենետիկ, 1921 փետրուար, թիւ 2, էջ 64, [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Bazmavep/1921\(2\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Bazmavep/1921(2).pdf), **Mondi M.**, Noè Bordignon. Vita e Opere, <http://studiomondi.altervista.org/mostrabordignoncarraresi.htm>, **Dal Bello L.**, Noè Bordignon. La vita, <https://web.archive.org/web/20130116140614/http://www.comune.sanzenone.tv/it/storia/bordignon/bordignon.htm>)։

թյունը և անշարժացած հայացքը փոքր-ինչ տազնապեցնող և մռայլ ազդեցություն են թողնում դիտողի վրա:

1899-ին աշխարհահռչակ ծովանկարիչ *Հովհաննես Այվազովսկին* վրձնել է «Բայրոնի այցը Սբ. Ղազար կղզի» սյուժետային-թեմատիկ կտավը, որտեղ նկարիչը բանաստեղծին հյուրընկալող Մխիթարյանների կենտրոնում պատկերել է Ալիշանին:

Թիֆլիսում հրատարակվող «Արձագանք» գրական և քաղաքական պատկերազարդ շաբաթաթերթի 1890 թվականի մայիսի 13-ի տասներկուերորդ համարում գետեղված է եղել Հայր Ալիշանի գրաֆիկական դիմապատկերը, որն ուղեկցող ստորագրությունից ենթադրում ենք, որ հեղինակը Սանկտ-Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, Թիֆլիսում ծնված և ստեղծագործած նկարիչ և մանկավարժ *Հարություն Շամշինյանն է՝* Հայտնի է, որ նկարիչը ժամանակին աշխատակցել է Թիֆլիսում հրատարակվող հայկական «Արձագանք», «Գեղարվեստ», «Թատրոն» և այլն պարբերականներին և «զարկ է տվել դրանց գրաֆիկական ձևավորման արվեստին»²:

Իր կատարման մաներայով և ընդհանուր բնութագրով Շամշինյանի դիմանկարին մոտ է Սանկտ-Պետերբուրգում ստեղծագործած, 1890-ական թթ. սկսած թիֆլիսյան մի շարք թերթերի ու ամսագրերի՝ «Աղբյուրի», «Արձագանքի» և «Տարագի», ինչպես նաև պետերբուրգյան «Արաքս» հանդեսի էջերում իր գրաֆիկական մանրանկաներով հայտնի *Պողոս Տեր-Ասատուրյանցը (Պոլ Ասատուրի)*³: Ալիշանի գրաֆիկական դիմապատկերը զարդարում էր հրապարակախոս, քննադատ, գրական-հասարակական գործիչ Գրիգոր Արծրունու «Հայազգի գործիչների գեղարվեստական ալբոմը», որը լույս է տեսել Թիֆլիսում 1891 թվականին: Ալբոմին հնարավոր է ծանոթանալ մասնավորապես Երևանում՝ Եղիշե Չարենցի անվան թանգարանում⁴: Նշենք, որ *Գրիգոր Արծրունին* Ալիշանի հետ քանիցս հանդիպելու պատիվն ու երջանկությունն է վայելել, ինչի մասին հետագայում սիրով, ջերմությամբ և երախտիքով գրում է իր հուշերում⁵:

¹ Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 13 մայիսի 1890, N 12, էջ 11, [http://tert.nla.am/archive/NLA%20TERT/Ardzagang/1890/1890\(12\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20TERT/Ardzagang/1890/1890(12).pdf):

² **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 46, 244:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 255:

⁴ Տե՛ս «Գեղարվեստական ալբոմ հայազգի գործիչների», Թիֆլիս, 1891, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գ. Արծրունու ֆոնդ, ալբոմ 151:

⁵ **Արծրունի Գ.**, Վենեցիա 1970 թվին, Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 21-29:

Ականավոր հայագետի ևս մեկ դիմապատկեր գտնում ենք նաև 1903 թվականին «Գեղունի» հանդեսի էջերում՝ Խաչատուր Աբովյանի, Բաֆֆու, Ռաֆայել Պատկանյանի, Ստեփան Նազարյանցի դիմանկարների կենտրոնում¹: Ի տարբերություն աշխարհիկ զգեստներով, 3/4 դիրքով դիմանկարների՝ Ալիշանը պատկերված է հոգևորականի սև հագուստով, գրեթե դիմահայաց, ինչը սրբազանականություն է հաղորդում իր կերպարին: Թեև պատկերը ստորագրված չէ, և այն ուղեկցող գրություն չկա, սակայն հավանաբար հեղինակը *Միմոն Նահապետյանն* է: «Կը զարդարենք «Գեղունի»-ն Իտալիա բնակող Պ. Ս. Նահապետեան փորագրչի մեզ յղած գեղեցիկ բազմագունի պատկերով», - գրված է հանդեսի վերոնշյալ համարի առաջաբանում²: Հանդեսի շապիկին տեսնում ենք նաև *S. Nahabed* մակագրությունը: Միմոն Նահապետյանը, նույն ինքը՝ Միմոն Նահապետը, Իտալիայում ստեղծագործած լուսանկարիչ, զծանկարիչ և փորագրության վարպետ է, ում գրաֆիկական ձևավորումները, փորագրապատկերները և լուսանկարները տեղ են գտել են «Գեղունի» հայաթերթում³: Նշենք, որ Ս. Նահապետը 1900-ականներին Վենետիկում ստեղծել է նաև «Հայրունի դեմքեր» վերտառությամբ գեղարվեստական բացիկ, որտեղ նա մի սեղանի շուրջ հավաքել է մեր մշակույթի և եկեղեցու երևելիներին՝ Ղևոնդ Ալիշանին, Խրիմյան Հայրիկին, Բաֆֆուն, Միքայել Նալբանդյանին, Մկրտիչ Պեշիկթաշյանին, Գրիգոր Արծրունուն, Ռաֆայել Պատկանյանին, Ստեփան Նազարյանցին և Խաչատուր Աբովյանին, որոնք իրականում երբևէ միասին սեղան չեն նստել: Պատկերն ունի ակնհայտորեն սիմվոլիկ բնույթ: Այն հիշեցնում է Խորհրդավոր ընթրիքի ավանդական պատկերագրությունը, ընդ որում սուրբ և հանդիսավոր սեղանին դրված են ազգանվեր գործին ծառայող ուսումնասիրությունները, գրվածքները և փետուր գրիչները: Ուշագրավ է, որ ականավոր հայ գործիչների, նվիրյալների աստղաբույլի մեջ կոմպոզիցիոն լուծումով՝ իր շեշտված կենտրոնական դիրքով առանձնանում է Ալիշանը: 1903-ի «Գեղունու» նույն Ալիշանն է, ուղղակի այստեղ իր կերպարի սրբազանականությունն ասես ավելի է շեշտադրված, քանի որ մեծ հայորդու ծանրակշիռ ֆիգուրը գետեղվել է խորքի վերնամասի կամարի մեջ՝ սրբերի պատկերագրությանը բնորոշ կերպով: 1903-ի պատկերների հետ նույ-

¹ Տե՛ս «Գեղունի», Վենետիկ, 1903, թիվ 1-10, էջ 16-37, <http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/geghuni/1903/1-10.pdf>:

² Նույն տեղում, էջ 5:

³ **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 255:

նական են նաև Բաֆֆու, Ռ. Պատկանյանի և Ս. Նազարյանցի դիմանկարները:

Արվեստաբան Արարատ Աղասյանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» ֆունդամենտալ աշխատության շնորհիվ տեղեկանում ենք նկարչական, դերասանական և երաժշտական մեծ շնորհով օժտված, Կ.Պոլսի Գեղարվեստի վարժարանի շրջանավարտ Ստեփան Ակայանի՝ Ղ. Ալիշանին պատկերող ջրաներկ աշխատանքի մասին, որն առայժմ չենք գտել¹:

Իր ճգնավոր կյանքով, աշխատասիրությամբ, մեծ արժեք ներկայացնող գիտական գործերով, հիասքանչ բանաստեղծություններով և հայրենաշունչ երկերով հայ ազգի հանճարը կերպավորող Ալիշանի կերպարը հավերժացրել են նաև քանդակում հայ և օտարազգի քանդակագործներ *Անդրեաս Տեր-Մարությանը*, *Տիգրան Արզումանյանը* և *Կառլո Լորենցեստին*: Լուսաստվերային ակտիվ խաղով, դինամիկ և ստատիկ զանգվածների հակադրությամբ և ընդհանուր մոնումենտալությամբ է աչքի ընկնում Մոսկվայում, Պետերբուրգում և Փարիզում գեղարվեստական կրթություն ստացած, փարիզաբնակ շնորհալի քանդակագործ Ա. Տեր-Մարությանի՝ 1903-ին լուսանկարից կերտած կիսանդրին, որը նույն թվականին ձուլվել է բրոնզից Մոսկվայում՝ Վիշնևսկի եղբայրների ձուլարանում, իսկ 1941-ին փոխադրվել է Հայաստանի պետական պատկերասրահ²: «Ալիշանի լայն բացած աչքերի և սևեռուն հայացքի, և ընդհանրապես աշխույժ դեմքի ամբողջ արտահայտության մեջ ընդգծված է անձնավորության առավել բնորոշ կողմը՝ իմաստուն և բազմալստակ գիտնականը», - քանդակագործին նվիրված իր մենագրության մեջ նշում է արվեստաբան Մինաս Սարգսյանը³:

Պլաստիկական ընդհանրացված ձևերով, դիրքով և ընդհանուր հնչեղությամբ այս քանդակին մոտ է ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Տ. Արզումանյանի կերտած բրոնզաձուլ կիսանդրին, որը 2004-ին ԱՄՆ-ում բնակվող բարերար Քնարիկ և Գրիգոր Թաթարյանների ջանքերով տեղադրվել է համար 95 միջնակարգ դպրոցի բակում: 1971-ին՝ Ղևոնդ Ալիշանի ծննդյան 150-ամյակի առթիվ դպրոցն անվանակոչվել է մեծ գիտնականի անունով:

¹ Ստեփան Ակայանը նկարագարող է Թեոդիկի և Կ.Պոլսի Սուրբ Փրկիչ Ազգային հիվանդանոցի հրատարակած տարեցույցերը, հեղինակել է հայ ականավոր դեմքերի՝ Մեսրոպ Մաշտոցի, Մկրտիչ Խրիմյանի և այլոց ջրաներկ գունավոր մանրապատկերներ: Տե՛ս նույն տեղում, էջ 253:

² Տե՛ս **Սարգսյան Ս.**, *Անդրեաս Տեր-Մարության*, Երևան, 1960, էջ 108:

³ Նույն տեղում, էջ 36:

Վենետիկի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, իտալացի արձանագործ *Կ. Լոքենցետտի* Ալիշանը հոգևորականի ասկետիկ կերպար է, ինչը շեշտադրվում է նաև զգեստի ծալքերի անհանգիստ ռիթմի ուղղահայաց բնույթով և աննյութականությամբ: Բրոնզե կիսանդրին Միաբանությանն է նվիրաբերել Կարապետ Մաթոսյանը 1908 թվականին:

Անշուշտ քիչ չեն Հայր Ղևոնդ Ալիշանին նվիրված արվեստի գործերը, որոնք թեև տարբեր են կատարման վարպետության և ներշնչանքի առումով, բայց բոլոր դեպքերում հետաքրքրական են ինչպես հետազոտողի, այնպես էլ ոչ մասնագետի համար, քանի որ ներկայացնում են մեծանուն, նվիրյալ և սիրելի հայորդուն: Միևնույն ժամանակ հույս հայտնենք, որ մոտ ապագայում կստեղծվեն բազմալաստակ հայորդու սրբանական և մարդկային էության տարբեր ասպեկտները բացահայտող, նորանոր ելևէջներով հագեցած նոր ստեղծագործություններ:

МАРГАРИТА КАМАЛЯН
Кандидат искусствоведения

РЕЗЮМЕ

ОБРАЗ ОТЦА ГЕВОНДА АЛИШАНА В ИЗОБРАЗИТЕЛЬНОМ ИСКУССТВЕ

Ключевые слова: Отец Гевонд Алишан, портрет, А. Фетваджян, Е. Саваян, Н. Бординьон, А. Тер-Марукян, Т. Арзуманян, К. Лоренцетти, бюст, “Гегуни”, “Արձա-գանկ”, Степан Акаян, Иван Айвазовский, Мхитаристы.

Образ отца Гевонда Алишана (1820-1901) увековечили в живописи, скульптуре и графике армянские и иностранные художники и скульпторы. Алишан в работах художников Аршака Фетваджяна, Ноэ Бординьона – мыслитель. Работы Ефрема Саваяна и Андреаса Тер-Марукяна более драматичны и скорее выражают внутреннее состояние Алишана. Бюст, созданный Тиграном Арзуманяном крайне обобщен и выделяется своим монументальным звучанием, в то время как бюст работы Карло Лоренцетти подчеркивает духовность Алишана. Образ отца Алишана воплотили в искусстве также Иван Айвазовский, Арутюн Шамшинян, Симон Нахапет, Пол Асатур и Степан Акаян.

Живописные и графические портреты и бюсты Алишана неоднородны по степени мастерства, вдохновения, художественной интерпретации образа великого ученого-арменоведа, поэта, педагога и монаха, но безусловно интересны и значимы.

MARGARITA KAMALYAN

PhD in Arts

ABSTRACT

FATHER GHEVOND ALISHAN'S IMAGE IN FINE ARTS

Key words: Father Ghevond Alishan, portrait, A. Fetvadjian, Ye. Savayan, N. Bordinon, A. Ter-Marukyan, T. Arzumanyan, K. Lorenzetti, bust, “Geghuni”, “Ardzaganq”, Stepan Akayan, Ivan Aivazovsky, Mekhitarist.

The image of Father Ghevond Alishan (1820-1901) was immortalized in Fine arts by Armenian and foreign artists. Arshag Fetvadjian and Noè Bordinon portray the Father as an intellectual. The works by Yefrem Savayan and Andreas Ter-Marukyan are full of dramatism and seem to express Alishan's inner state. Bronze bust created by Tigran Arzumanyan is highly generalized and stands for it monumental sounding, whereas the one made by Carlo Lorenzetti dwells more on the spirituality of Alishan. Father Alishan's image has also been portrayed in art by Hovhannes Aivazovsky, Harutyun Shamshinyan, Simon Nahabed, Paul Asadour and Stepan Akayan.

Although painterly and graphic portraits and busts of Alishan vary in the degree of mastery, inspiration and artistic interpretation of the images of the great scientist-Armenologist, poet, pedagogue and monk, but they definitely are of interest and great value.

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «Ի ԼԵԻՈՆ ՈՐԴԻ ՀԵԹՄՈՅ Ա»
ԵՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Կիլիկյան Հայաստան, Հեթում Ա, Լևոն Գ, Սմբատ Սպարապետ (Գունաստար), Կեռան (Աննա) թագուհի, Մառիի Ճակատամարտ, եգիպտական մամլուքներ, գուսանական արվեստ, 15-վանկանի հայրեններ, վիպական երգամտածողություն, պատմական երգեր:

1852-ին Վենետիկում լույս տեսավ Հայր Ղևոնդ Ալիշանի «*Հայոց երգ ռամկական*» երկը (անգլերեն -հայերեն) երգարանը¹: XIX դ. երկրորդ կեսին ազգային արվեստը մեծ վերելք էր ապրում, և մի շարք հայ մտավորականներ, ինչպես նաև հոգևորականներ, ծավալեցին բանահավաքչական գործունեություն, որի արդյունքում գրավեցին մեծ քանակությամբ ժողովրդական երգերի տեքստեր, որոնց մի մասն ընդգրկվեց երգարաններում և հրապարակվեց: Այդպիսի անդրանիկ երգարաններից մեկն էլ Հայր Ղևոնդ Ալիշանի կազմած «*Հայոց երգք ռամկականք*» ժողովածուն էր, որտեղ գետեղվեցին հայ երգաստեղծության մի շարք ուշագրավ օրինակներ: Ժողովածուում Ալիշանն ամփոփել էր Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Լոնդոնի մատյաններում պահվող հայ միջնադարյան ձեռագրերից անձամբ քաղած և XIX դ. բանավոր ավանդույթից վկայած շուրջ երկու տասնյակ ժողովրդական երգեր, որոնք դրվեցին ազգային և միջազգային լայն շրջանառության մեջ²: Սակայն, բացի երգարան լինելուց, Ալիշանի կազմած այդ տաղարանը մեկ այլ «առաքելություն» ուներ:

Նույն 1852-ի հունվարի 18-ին, Վենետիկի Մխիթարյան միաբանության վարչական ժողովի որոշմամբ Հայր Ղևոնդ Ալիշանը մեկնեց Լոնդոն: Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի համար նախաձեռնված էր գնել նոր շենք, որն ի տարբերություն գործող շենքի³՝ աշակերտների համար

¹ Ալիշան Հ.Ղևոնդ, *Հայոց երգք ռամկականք*, Վենետիկ, Ս. Ղազար, 1852 / Armenian Popular songs. Translated into english. By the R. Leo M. Alishan D.D., of the Mschitaristic society, Venice, S.Lazarus, 1852/:

² Տե՛ս. **Յարութիւնեան Ս.,** *Ղևոնդ Ալիշանը եւ հայոց երգերն ու հավատալիքները* // «Բազմավեպ», 1-4, 2001, Վենետիկ, Ս.Ղազար, էջ 234:

³ Խոսքը Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի մասին է, որը հաստատվել էր XVIIդ. կառուցված Վենետիկի գեղեցիկ բնակելի տներից մեկում՝ Կա Պեզարոյի պալատում (Palazzo Ca' Pesaro) :

ուներ ավելի բարենպաստ պայմաններ և ներքին կողմից ընդարձակ այգիներ: Վանքի վարչությունն ի օգուտ կրթական հաստատության, շենքը վարձելու փոխարեն որոշեց այն գնել և անհրաժեշտ գումար ձեռք բերելու նպատակով կազմակերպեց Հ.Ղ.Ալիշանի ուղևորությունը դեպի Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք¹: Ալիշանի ձեռքին էր **«Հայոց երգք ռամկականք»** նորատիպ ժողովածուն: Պատահական չէ, որ երգարանն ընծայագրված էր Լոնդոնում Կոստանդնուպոլսի հյուպատոս, «Բարձրագույն դոան ընդհանուր խորհրդական» և դիվանագետ Էդուարդ Զոհրապի /*To Edward Zohrab esq., consul general of the sublime porte*/.

«Ներկայացնելով բրիտանական հասարակությանը հայկական ժողովրդական երգերի հավաքածուի սույն հատորը, մենք կարծում ենք, որ չենք կարող այն նվիրել մի անձնավորության, որը Ձեզնից ավելի արժանավոր լիներ. Ձեզ, որ մեր ազգի ամենանշանավոր ներկայացուցիչն է Մեծբրիտանիայի մայրաքաղաքում: Մեկը՝ որն իր դիվանագիտական բազում հոգսերի և դժվարությունների ընթացքում հանգիստ է գտնում մշակույթով զբաղվելով: Այն խոնարհ ակնածանքը, որը Դուք վայելում եք մեր միաբանության անդամների կողմից, որոնք ժամանակ առ ժամանակ այցելում են Մեծբրիտանիա, մեզ հնարավորություն ընձեռնեց հրապարակավ ազդարարելու այդ բարեկամությունը, որը գոյություն ունի մեր միջև՝ այն ուժեղագույն զգացումը, որը կապում է նույն ազգի անդամներին օտար երկրում: Հիշյալ բարեկամությունն ու ակնածանքը, որը գոյություն ունի Ձեր նկատմամբ, անկասկած բաժանում են նաև անգլիացի մտավորականները, որոնք ուշադրությամբ և սիրով ընդունում են մեր այս փոքրիկ աշխատանքը:

Լոնդոն, 22 օգոստոսի, 1852թ.»:

Այս «բանակցությունները» Հայր Ալիշանի դիվանագիտական խոշոր հաղթանակներից մեկն էր, որի արդյունքում Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի բարերարներից մեկի աջակցությամբ դրամաստեղանատանից հաջողվեց ստանալ 125.000 ֆրանկ, որն էլ ապահովեց ուսումնական նոր շենքի՝ Զենոբիո (*Ca' Zenobio*) պալատի ձեռքբերումը²:

¹ Մուրադ-Ռաֆայելյանի կտակը, որը ստեղծվել է մադրասահայ երկու խոշոր ձեռնարկատեր Ռաֆայել Ղարամյանի և նրա փեսա՝ Սամուել Մուրադյանի անձնական ֆինանսական միջոցներով, գտնվում էր Լոնդոնում և պետք է ծառայեր հայ կրթօջախներ ստեղծելու և զարգացնելու գործընթացին: Մխիթարյան միաբանների աջակցությամբ, Իտալիայի Պադուա քաղաքում, 1836-ին հիմնադրվեց առաջին հայկական դպրոցը /տե՛ս **Դավթյան Ռ.**, *Սամուել Մուրադյանը և նրա անվան վարժարանը* // «Լրաբեր», 1990, N9, էջ 65-73/ :

² Տե՛ս **Երեմեան Ս.**, *Կենսագրություն Հ.Ղ.Մ.Ալիշան վարդապետի*, Վենետիկ, Ս.Ղազար, 1902, էջ 35:

«Հայոց երգք ռամկականք» ժողովածուի նախաբանն ու ներածական խոսքը, ինչպես նաև ընդգրկված բոլոր երգերի ծանոթագրություններն անգլերեն էր. երկլեզու էին միայն երգերի բանաստեղծական տեքստերը՝ անգլերեն-հայերեն: «*Բրիտանացի ընթերցողին*» ուղղված իր խոսքում Ալիշանը գրում է.

«Բրիտանացի ընթերցողն, ով հայտնի է իր հետաքրքրասիրությամբ, և որի պրպտուն միտքը մշտապես մղել է նրան ուսումնասիրելու Արևելքը, իր ձեռքում բռնել է «Հայ ժողովրդական երգերի» այս փոքրիկ ժողովածուն: Անհերքելի է, որ Արևելքի հնագույն պետություններից մեկն իրենց արդարացիորեն համարող հայերը, որոնք մի երկարատև ժամանակաշրջան նրբարվեստ ու ծաղկուն գրականություն ունեցող ժողովուրդ են եղել, պետք է որ այսօր ավելի առատ ու բարձրաշխարհիկ արվեստ ունենային: Սակայն, պետք է հաշվի առնել, որ այդ ժողովրդին հաճախակի պատուհասած կենսորոշ իրադարձությունները, բազում բարբարոս ցեղերի հետ բախումները և օտար տիրապետությունները հանգեցրել են արվեստների ու գրականության անկման և մարել Արարատի որդիների բանաստեղծական կրակը:

Հույս ունենք, որ այս համեստ և գուտ նմուշային ժողովածուն, որում ներառված են եվրոպական լեզվով առաջին անգամ թարգմանված ստեղծագործություններ, իր տեղը կգտնի լուսավորյալ ժողովրդի սրտում, ժողովրդի, որն առանձնակի խանդավառությամբ է ընդունում Հին Արևելքի ամեն մի անկյուն պատկերավոր ներկայացնելու ցանկացած փորձ»¹:

Ժողովրդական լեզվով շարադրված այդ երգերի բանաստեղծական տեքստերը բարբառային հայերենով են, թեև այդ բարբառներից շատերը բավական մոտ են գրական կամ դասական լեզվին: Ալիշանի տաղարանում զետեղված բոլոր օրինակները (թվով 19 երգ) ուշագրավ են և ուսումնասիրության ու վերլուծման կարիք ունեն²: Սակայն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «**Ի Լևոն որդի Հեթմոյ Ա**» պատմավիպաքնարական առաջին երգը, որի հիմքում իրական պատմական դեպքեր և հերոսներ են՝ Կիլիկիո Հեթում Ա արքան (1215-1270թթ.) և նրա որդին՝ Լևոն Գ թագավորը (1236-1289թթ.): Որքան էլ զարմանալի կթվա, բայց պատմական երգերը խիստ սակավաթիվ են և հայ բազմադարյա պատմությունից երգերի տեսքով մեզ գրեթե ոչինչ չի հասել: Այս առիթով

¹ Տե՛ս. Ալիշան Ղևոնդ, *Հայոց երգք ռամկականք*, Վենետիկ, Ս.Ղազար, 1852, (*Armenian popular songs*, Venice, S.Lazarus, 1852), նախաբան, (անգլերենից թարգմանությունը մերն է):

² Երգարանում ընդգրկված ժողովրդական երգերը (միայն բանաստեղծական տեքստ) դասավորված են ըստ ժանրերի՝ պատմավիպաքնարական, ողբեր, հարսանեկան, անտունի ևն:

կոմիտասագետ Ռոբերտ Աթայանը գրում է. «*Բուն պատմական , լինի հին, համեմատաբար նոր կամ նորագույն ժամանակների երգեր Կոմիտասի գրառումներում ներկայումս չեն երևում, եթե նկատի չունենանք այնպիսի բացառություններ, որպիսիք են օրինակ, «Թալանն էկավ», կամ «Ֆնուս գեղի մեջտեղը», որ դժվար է ժանրի տիպական օրինակներ համարել*»¹: Անվանի երաժշտագետն իրավացի է, քանզի պատմական երգեր չեն երևում ոչ միայն Կոմիտասի գրառումներում, այլ առհասարակ հայ ժողովրդական երգաստեղծության շտեմարանում, և այս առումով Ալիշանի հրապարակած Լևոն արքայի մասին երգը եզակի արժեք և բացառիկ նշանակություն ունի:

Պատմական երգի հիմնական խնդիրն ու նպատակը՝ արագ արձագանքել պատմական իրադարձություններին և դեպքերին, արտացոլել հասարակական, պատմական և որոշ չափով նաև քաղաքական հարաբերությունները: Մակայն, ի տարբերություն վիպական և էպիկական երգերի՝ պատմական երգերի զգալի մասի կյանքը կարճ է. այդ հանգամանքը պայմանավորված է երգում դրսևորվող իրադարձությունների տևողականությամբ և անցումնային բնույթով, քանզի յուրաքանչյուր պատմական միջադեպի, կամ թեկուզ և խոշոր իրադարձության՝ հաջորդում է նորը, և նախորդը ակամայից կորցնում է իր արդիականությունը²:

Պատմական երգերի ճանաչողական արժեքը չափազանց մեծ է և դրա վառ օրինակներից մեկը Հայր Առաքել Ալիշանի հրապարակած Հեթում Ա թագավորի որդի՝ Լևոնի մասին երգն է: Հեթումյան տոհմի հիմնադիր՝ Կիլիկյան Հայաստանի Հեթում Ա թագավորը ժառանգեց հայոց գահը բավականին բարդ ժամանակաշրջանում. մի կողմից՝ չղաշնակցող ու պարբերաբար դավաճանող խաչակիրների կոմսություններն ու դքսությունները, մյուս կողմից իսլամադավան երկրները՝ Ռումի սելջուկյան, Այուբյան (Էյուբյան) եգիպտա-ասորիքյան և Բկոնիայի սուլթանությունները, իսկ հեռավոր Արևելքից՝ թաթար-մոնղոլական սպառնալիքը: Այս առիթով XVդ. վենետիկյան պատմիչ Մարինո Սանուտուր (Սանուտո) գրել է. «*Հայկական թագավորությունը բզկտում են չորս գահան. առյուծը՝ թաթար-մոնղոլները, որոնց հայոց թագավորը բարձր հարկեր է մուծում, ընձառյուծը՝ եգիպտական մամլուկները, որոնք թալանում են երկիրն ու ոչնչացնում քրիստոնյաներին, գայլը՝ Բկոնիայի թուրք-սելջուկները, որոնք քայքայում են տնտեսությունն ու պետականությունը*

¹ Կոմիտաս, *Երկերի ժողովածու* (այսուհետ՝ ԵԺ), հ.10, խմբ.՝ Ռ.Աթայան, Ե., ՀՀ ԳԱԱ, 2000, էջ 18:

² Տե՛ս. **Բրուսյան Մ.**, *Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն*, Ե., «Ամրոց Գրուպ», 2014, էջ 165-169 :

և *վիշապը՝ միջերկրական ծովահենները, որոնք Հայաստանի քրիստոնյաներին հանգիստ չեն տալիս*»¹ : Հեթում Ա-ի դիվանագիտական և ռազմավարական տաղանդի շնորհիվ Կիլիկյան Հայաստանն առժամանակ մեծացրեց իր կշիռն ու ամրապնդեց դիրքերը: Միջնադարյան պատմիչները Հեթում Առաջինին տվել են բազում պատվանուններ՝ «*Աստվածասեր*», «*Բարեպաշտ*», «*Քրիստոսասեր*», «*Մեծն*», «*Քրիստոսապսակ*» ևն: Հեռատես, լայնախոհ, սկզբունքային, քաղաքական մեծ կորովի ու քաջության, դիվանագիտական ճկուն մտքի և խորամիտ բանականության շնորհիվ Կիլիկյան Հայաստանը և առհասարակ՝ ողջ քրիստոնյա Արևելքը, այդ թվում նաև Երուսաղեմը, նրա գահակալության ժամանակահատվածում փրկվեցին իսլամական հարձակումներից²:

Հեթում Ա-ի առաջնային քաղաքական նպատակն էր՝ չեզոքացնել իսլամական գործոնը տարածաշրջանում: Թաթար-մոնղոլների ներխուժման սպառնալիքը կանխելու համար, ծանրագույն ճամփորդություն նախաձեռնելով, Հեթումն անձամբ մեկնեց մոնղոլական մայրաքաղաք Կարակորում և 1253 թ-ին Մանգու (Մունկե)³ խանի հետ խաղաղության և փոխօգնության դաշնագիր ստորագրեց : Հեթում թագավորը Մանգու խանին ներկայացրեց մի քանի հողվածից բաղկացած պայմանագիր, որի կետերի համաձայն խանը պետք է մկրտվեր, հոգևորականությունն ազատեր հարկերից, Երուսաղեմը վերադարձներ քրիստոնյաներին, վերջ դներ Բաղդադի խալիֆի իշխանությանը, հայերին վերադարձներ մուսուլմանների կողմից բռնագրավված հողերը և այլն⁴: Մոնղոլների զինակցությամբ Հեթում թագավորին հաջողվեց որոշ ժամանակ սանձել Հալեպի ամիրայության և Եգիպտոսի սուլթանությունների ոտնձգությունները: Հայ-թաթարական միացյալ բանակը արշավեց Ասորիք, գրավեց

¹ Տե՛ս. **Микаелян Г.**, *История Киликийского Армянского Государства*, Е., 1952, с.451 / *M. Sanutus, Liber secretorum fidelium crucis*, Hanoviae, 1611, p.32/ :

² Հեթում Ա-ի կերպարն իր «*Բնաստության բանալի*» վեպում հրաշալի կերտել է լեհ արձակագիր Յան Դոբրաչինսկին (**Jan Dobraczynski**, *Klucz madrosci*, 1951, Warszawa), Կիլիկյան Հայաստանի արքային ներկայացնելով որպես հանձարեղ դիվանագետ և հեռատես քաղաքական գործիչ, ում դավաճանեցին եվրոպացի միապետները և իսլամադավան թշնամիների դեմ միայնակ թողեցին:

³ Մանգու խանը /1208-1259 թթ./ Չինգիզ-խանի թոռն էր, Մոնղոլական կայսրության չորրորդ Մեծ տիրակալը, որի օրոք թաթար-մոնղոլական զորքը սաստիկ ճնշեց իսլամական ուժերին և հասավ մինչև Ադրիատիկայի ափերը: Նրա մահից հետո Մոնղոլական կայսրությունում պառակտումներ սկսվեցին, որը բացասական ազդեցություն ունեցավ նաև Հայոց Կիլիկիայի հետագա պատմական իրադարձությունների զարգացման գործընթացում:

⁴ **Галстян А.**, *Армянские источники о монголах : извлечения из рукописей XII-XIV вв.*, Изд-во Восточной литературы АН АССР, с.67-70.

հայոց Եդեսիան (Էդեսսա, Ուռհա) և Հալեպը, հասավ մինչև Երուսաղեմ, որտեղ և Հեթում Ա-ն անցկացրեց Սուրբ Զատկի տոնը¹։ Մի շարք հաղթանակներով Հեթումին հաջողվեց ամրապնդել Հայոց պետության միջազգային հեղինակությունը։

Հեթում Ա թագավորն ու նրա կինը՝ Ռուբինյանների տոհմից Զաբել թագուհին ունեցել են ինը զավակ՝ չորս որդի (Լևոն, Թորոս, Ռուբեն, Վասակ) և հինգ դուստր (Ֆիմի, Մարիա, Սիբիլ, Ռիտա, Իզաբել)։ Հեթումի որդիների ճակատագիրը ծանր է դասավորվել պատմությանը հայտնի տվյալներով Վասակը մահացել է մանուկ հասակում՝ չորս տարեկանում², արքայորդի Թորոսը³ 1266-ին զոհվել է Սև լեռների մոտ եգիպտական զորքերի դեմ տեղի ունեցած ճակատամարտում, իսկ ավագ որդին՝ Լևոնը, ընկել է գերի։

Հեթումի առաջնեկ և ապագա Կիլիկիո թագավոր Լևոն Գ-ն ծնվել է 1236-ի հունվարի 24-ին։ Լևոնը բազմակողմանի զարգացած մարզիկ էր. իր քաջության և ճարպկության համար քսանամյա արքայազնին շնորհվեց «*ձիավոր ասպետի*» կոչում և հռչակվեց գահակից։ 1262-ին Լևոնն ամուսնացավ Լամբրոնի տիրոջ դուստր՝ գեղեցկուհի Աննայի հետ, որն ավելի հայտնի է Կեռան անվամբ,⁴ և այդ խնամությամբ Լամբրոնը միացավ Հայոց թագավորությանը։ 1266-ի պատմական իրադարձությունները շրջադարձային եղան. Եգիպտոսի սուլթան Զահեր Բայբարսը պահանջեց Հեթումից հրաժարվել նախկինում Հալեպին պատկանած սահմանամերձ վայրերից, որոնք մոնղոլները նվիրել էին իրենց դաշնակից հայերին, ինչպես նաև խզել հայ-մոնղոլական դաշինքը՝ ընդունելով մամլուքյան Եգիպտոսի գերիշխանությունը։ Մերժելով Բայբարսին՝ Հեթում Ա-ն քաջ գիտակցում էր, թե ինչ նոր աղետ էր սպասում Կիլիկյան Հա-

¹ Տե՛ս. **Ալիշան Ղ.**, *Միսուան։ Համագրություն Հայկական Կիլիկիոյ եւ Լևոն Մեծագործ*, Վենետիկ, Ս.Ղազար, 1885, էջ 144-338։

² Որոշ աղբյուրների համաձայն՝ մանուկ հասակում մահացած Հեթումի կրտսեր որդին Ռուբենն էր (Ռովբեն)/տե՛ս. **Աճառյան Հ.**, *Հայոց անձնանունների բառարան*, հ.4, Ե., Համալսարանի հրատ., 1948, էջ 329/։

³ Թորոսի որդի Մելքունը պապի՝ Հեթում թագավորի հորդորով թողնելով արքունիքը, զորախմբով տեղափոխվել է պապերի երկիր՝ Արցախ։ Մելքունն այն «*թագաւորագն իշխանն է*», որ Ներսէս Շնորհալու մասունքներն ու մեռնի շիշը հանձնել է Խարբերդի Խուլե վանքի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոսին, նա էլ իր հերթին այն թաղել է Սուրբ Գևորգ վանքում /տե՛ս. **Ալիշան Ղ.**, *Շնորհալի եւ պարագայ իւր*, Վենետիկ, Ս.Ղազար, 1873, էջ 455/։

⁴ Պալատականներն ու ժողովուրդը հայոց թագուհուն կոչել են Կեռ-Աննա (հունարեն «kir»՝ տիրուհի), որն էլ ժամանակի ընթացքում դարձել է Կեռան /տե՛ս. **Աճառյան Հ.**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 2, Ե., Պետհամալսարան, 1944, էջ 616/։

յաստանին, ուստի իր բանակը հանձնելով՝ հարազատ եղբորը՝ Սմբատ Սպարապետին¹ և որդիներին՝ Լևոնին ու Թորոսին, ինքը շտապ մեկնեց Տրապիզոն, մոնղոլների Հուլավու խանի որդուց՝ Աբաղայից օգնություն բերելու։ 1266-ի օգոստոսի 24-ին, Սև լեռների շրջանում Մառի կոչվող կիրճում, մամլուքների 30 հազարանոց բանակը բախվեց 15-հազարանոց հայոց բանակի հետ, որն էլ պատմության մեջ մնաց որպես Մառիի ճակատամարտ։ Հայկական զորքերին չհաջողվեց դիմադրել իրենց կրկնակի չափով գերազանցող մամլուքներին։ Թշնամին ավերեց և թալանեց երեք խոշոր քաղաքներ՝ Մամեստիան (Մասիս), Ադանան և Տարսուր։ Քսան օր պաշարելուց հետո ընկավ նաև Սիս մայրաքաղաքը, գերեվարվեց 40 հազար բնակիչ։

Պատերազմում հերոսի մահով ընկավ Հեթումի որդի Թորոսը. նրա մահն այնքան աղետալի էր, որ վշտացրեց անգամ սուլթանին². *«յոժ տրտմեցաւ, բարկացաւ սպանողացն, և սպանողքն ասացին, թէ մեք ոչ գիտացաք թէ որդի թագաւորի է. զի զբազումս սպան ի մեզանէ, և զբազումս խոցեաց. Ապա յետոյ մեք ջան ի վերայ եղեալ սպանաք զնա»*³։ Ջարմանալի է, բայց Թորոս արքայորդու մարտում հերոսաբար զոհված լինելու ողբերգական իրադարձությունը բանավոր արվեստում արձագանք չգտավ (համենայն դեպս, մեր ձեռքի տակ եղած Լևոնի մասին երգերի ոչ մի օրինակում այդ մասին հիշատակում չկա)։ Բացառության կարգով կարելի է նշել *«Օրհնեալ հանուն ահեղ մեծին»* (*«Աւրինել յանուն ահեղ մեծին անմէկու մեծ թագաւորին՝ հայրապետքն որ գրէին առջև Լեւոն Թագաւորին՝ ի Հայոց...»*) անվերնագիր մի հիշատակագրություն՝ *«Գովք ի Լևոն արքայ և ի քաջն Թորոս»*, որտեղ բացի Լևոնից հիշատակված է նաև Հեթում Ա-ի որդի Թորոսը⁴։

¹ Սմբատ Սպարապետը, նույն ինքը՝ Սմբատ Գունաստաբլը (1208-1276) Հեթում թագավորի ավագ եղբայրն էր։ Պատմիչ, իրավագետ, բանաստեղծ Սմբատ Գունաստաբլը Կիլիկյան Հայաստանի փառաբանված զորավարներից մեկն էր, որը եղբոր թագադրվելուց հետո ստանձնեց սպարապետի պաշտոնը, վարելով այն կես դար շարունակ։ Սմբատ Գունաստաբլը, լինելով փայլուն օրենսգետ, 1265-ին կազմեց իր հայտնի Դատաստանագրքը՝ Կիլիկիայի հայկական պետության հասարակական հարաբերությունները կարգավորող հայ իրավունքի հուշարձանը / տե՛ս. **Ալիշան Հ. Ղևոնդ**, *Միսուան* Վենետիկ, Ս.Ղազար, 1885, էջ 73/։

² Ինչպես հայտնի է պատմությունից, ազնվագարմիկ իշխաններին և արքայորդիներին ձգտում էին ոչ թե սպանել, այլ գերի վերցնել հետագա բանակցություններն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով։

³ Տե՛ս. **Տաշեան Հ. Վ. Հակովբոս**, *Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, Վիեննա, 1895, Մխիթարեան տպ-ն, էջ 333։

⁴ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հատ. Բ, 1924, Վենետիկ, Ս.Ղազար, (Թուղթ 250 ա), էջ 918։

Լևոն արքայազնին և նրա հորեղբոր՝ Սմբատ Սպարապետի որդուն՝ Վասիլ Թաթարին¹, մամլուքները գերեվարեցին Եգիպտոս, որտեղ նրանք անազատության մեջ մնացին շուրջ երկու տարի: Այս պատմական XIV դարի ֆրանսիացի ժամանակագիր, պատմաբան և հոգևորական Հովհաննես Դարդելի (*Jean Dardel*) մի ուշագրավ տեղեկության համաձայն, Եգիպտոսի սուլթան Բեյբարս I Ալ-Բունդուկտարի (ձեռագրում հիշատակված է *Տնդուխտար*) սիրելի ստրուկ Սունդուր Ասկարը, թաթարմոնղոլների խանի մոտ գերության էր. նրան գերությունից ազատում է Ալինախ անունով մի քաջագուն, սուլթանի ստրուկին բերում Եգիպտոս և փոխանակում Լևոնի հետ: Հեթումի որդի Լևոնի ազատման մասին Սուլթանի հրամանը մնաց գաղտնի. զիջերով, բերդի բանտախցից Լևոնին պարանով ցած կախելով հանձնեցին մի արաբ ուղտապանի, որն էլ 8 օրից նրան հասցրեց Կիլիկիա²: Հնարավոր է, որ նման պատմական միջադեպ և տեղի է ունեցել, սակայն իրականում, Լևոնի ազատումը ծանր երկամյա բանակցությունների արդյունք էր, որի համաձայն Հեթում Ա-ն մամլուքներին զիջեց սահմանային հաղորդակցության կարևոր ուղիները՝ Դարպասակ, Կապան և Պեհեսնի (Բեսնի) քաղաքները, որոնք Կիլիկյան Հայաստանը մի կողմից կապում էին Անտիոքի, իսկ մյուս կողմից՝ մոնղոլական Պարսկաստանի հետ³:

Միանգամայն հասկանալի է, թե ինչ ազդեցություն է ունեցել ժողովրդի վրա միակ թագաժառանգի երկամյա գերությունը: Պատմական այդ աղետալի իրադարձությունը չէր կարող հասարակ մարդկանց սրտերում արձագանք չունենալ և ժողովրդի հարուստ բանավոր ավանդույթում արտացոլում չգտնել: Լևոնի գերության վրա ժողովուրդը հյուսել է տաղեր, որից մեկն էլ Ս.Ղազարում պահվող մատենագիր մատյանից քաղել է Հայր Ղևոնդ Ալիշանը և գետեղել իր «*Հայոց երգք ոսմկականք*» ժողովածուում.

Ի Լևոն որդի Հեթումյ Ա

Աւաղ ըզ Լեոնն ասեմ

Որ տաճկաց դուռն ընկել գերի:

Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս.

¹ Վասիլ /Վասակ/ Թաթարը Սմբատ Գունդստաբլի որդին էր թաթար կնոջից. Սպարապետին այդ կնոջը նվիրել էր թաթարաց խանը Սմբատի Թաթարստան գնացած ժամանակ: Վասիլ Թաթարը գերությունից ազատվեց Լևոնի հետ միասին 1268-ին, երկու տարի անց մահացավ /տե՛ս. Ալիշան Ղ., *Միսունան*, էջ 72/ :
² Տե՛ս. Դարդել Յովհաննէս, *Ժամանակագրութիւն Հայոց*, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 16-23:

³ Միքայելյան Գ., *Կիլիկիայի հայկական պետության պատմություն*, Ե., ԵՊՀ հրատ., 2007:

Սուրբ Խաչն օգնական Լէոնիս ու ամենուս:
 Սուլդանն ի մօյտան ելել
 Իր ոսկի գունտն կու խաղայ:
 Իմ լուս, իմ լուս , ու սուրբ Կոյս.
 Սուրբ Խաչն օգնական Լէոնիս ու ամենուս:
 Խաղաց ի Լէոնն երեստ.
 «Ա՛ռ, խաղա՛ ու տուր տատայիդ»:
 Իմ լուս, իմ լուս , ու սուրբ Կոյս.
 Սուրբ Խաչն օգնական Լէոնիս ու ամենուս:
 «Լէ՛ոն, դու տաճիկ լինիս,
 Ես ու իմ տատաս քէ գերի »:
 Իմ լուս, իմ լուս , ու սուրբ Կոյս.
 Սուրբ Խաչն օգնական Լէոնիս ու ամենուս:
 Լէոնն ի բերդին նստել
 Դաստռակն աջից ու կուլար.
 «Քերվան, որ ի Սիս կեթթաս,
 Դուն խապար տանիս պապայիս » :
 Ոնց որ պապան ալ զանց լսեց
 Շատ հեծել քաշեց երամով.
 Էկաւ ի սուլդանն էլաւ ,
 Շատ գետեր եհան արբնեց:
 Էառ զիր Լեւոն
 Ու հասաւ սրտին մուրատին:
 Իմ լուս, իմ լուս , ու սուրբ Կոյս.
 Սուրբ Խաչն օգնական Լէոնիս ու ամենուս¹:

Ալիշանի լույս ընծայած Լեւոնի մասին այս երգը հետագայում շա-
 րունակաբար ընդգրկվեց հայտնի երգարաններում²: Տարիներ անց,
 Տրդատ եպիսկոպոս Պալյանը «**Հայ աշուղներ**» ժողովածուի առաջին պրա-
 կում հրատարակեց Լեւոնի մասին երգի մեկ այլ տարբերակ, որը Հայր
 Ղ.Ալիշանի օրինակի համեմատ՝ խիստ կարճ էր³: Տ.Պալյանի հրապարա-
 կած այդ երգը բաղկացած է ընդամենը երկու տնից, որտեղ բացակայում
 են կրկնակները: Ասատուր Մնացականյանն այս առիթով գրում է. «Դա

¹ Ալիշան Հ.Ղ., *Հայոց երգք ու ամկականք*, Վենետիկ, Ս.Ղազար, 1852, էջ 5-6:

² Տե՛ս. **Գամառ-Քաթիսյա**, *Ազգային երգարան*, Ս.Պետերբուրգ, 1856, էջ 35-36:
Քնար հայկական, խմբ. Մ.Միանսարեանց, Ս.Պետերբուրգ, 1868, էջ 130-131:

³ Տե՛ս. **Տրդատ եպս. Պալյան**, *Հայ աշուղներ, ժողովրդական հայ երգիչներ, տա-
 րասացք*, Կ.Ա, Զմյուռնիա, 1911, էջ 16:

հիմք է տալիս պնդելու, որ երգի մեջ պահպանված կրկնակը ներմուծված է հետագայում և կապ չունի բուն երգի հետ»¹ : Անվանի բանասերի այդ կարծիքը վիճելի է, քանզի Տ.Պալյանի օրինակում կրկնակ-երկտողի բացակայությունը պարզապես վկայում է տվյալ օրինակի թերի լինելու և ոչ հնաբույր լինելու մասին: Հայտնի է, որ ժողովրդական երգերի և խաղիկների առավել կայուն մասը կազմում են հենց կրկնակները, կամ ինչպես ասում են՝ **հիմնատող-կրկնակները**, որոնք ժողովրդական երգաստեղծության մեջ ձևակառուցողական կարևորագույն նշանակություն ունեն: Դրա վառ օրինակ կարող է հանդիսանալ վիպա-քնարական «**Կարոս խաչ**»-ը, որի առաջին պատումները հանդիպում են Ա.Սեդրակյանի², Գ.Շերենցի³, Գ.Հովսեփյանի⁴, Մ. Աբեղյանի⁵ կազմած ժողովածուներում, իսկ երգային տարբերակները Կոմիտասի⁶, Ս.Մելիքյանի⁷, Ա.Քոչարյանի⁸ և Ա.Փահլևանյանի⁹ ձայնագրություններում: Մեկ դարից ավել XIXդ. 70-ականներից մինչև XXդ. 90-ականները, բանահավաքները գրառել են «**Կարոս խաչ**» «կրոնա-առասպելական ձևավորում ստացած»¹⁰ վիպական այդ նշանավոր երգի շուրջ 20 պատում և գրեթե բոլոր օրինակներում առկա է «*Ծառա կեղնիմ Կարոս խաչին*» հիմնատող-կրկնակը:

Նույնը կարելի է ասել պատմա-դյուցազնական «**Սոկաց Միքա**»-յի տարբերակների¹¹ մասին, որի ամեն տունն ավարտվում է «*Հազա՜ր*

¹ Մնացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1956, էջ 543:

² Սեդրակյան Ա., Քնար մշեցուց և վանեցուց, Էջմիածին, 1874, էջ 9-12:

³ Շերենց Գ., Վանա սագ, մաս Ա, Թիֆլիս, 1885, էջ 73-74:

⁴ Հովսեփյան Գ., Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892, էջ 12-16:

⁵ Տե՛ս. Հազար ու մի խաղ . Ժողովրդական երգարան , հ.2 Խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղեան, , Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Ս.Էջմիածնի 1905, N50, էջ 87-97:

⁶ Կոմիտաս , Երկերի ժողովածու /այսուհետ՝ ԵԺ/, հ.10, Խմբ.՝ Ռ.Աթայան, ՀՀ ԳԱԱ, N 95, էջ 82-83:

⁷ Մելիքյան Սպ., Հայ ժողովրդական երգեր ու պարեր, Խմբ.՝ Մ.Աղայան, հ.1, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1949, N 208, էջ 208:

⁸ Քոչարյան Ա., Հայ վիպական երգեր/Հայ ավանդական երաժշտություն (Մատենաշար), Պրակ VII, Ե., ՀՀ ԳԱԱ, «Ամբողջ Գրուպ», 2010, NN 35,36,37, էջ 105-116:

Փահլևանյան Ա., «Կարոս խաչ» վիպական ասքի նորահայտ պատումները, Ե., «Ամբողջ Գրուպ», 2004, - 71 էջ :

¹⁰ Ձևակերպումը Ռոբերտ Աթայանինն է /տե՛ս. Կոմիտաս , ԵԺ, հ.10, էջ 180/:

¹¹ Տե՛ս. Հովսեփյան Գ., Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892, էջ 19-20:

ափսոս *Սոկաց Միրզեն*», կամ «*Բեմուրադ կեներ Կոլոտ Փաշեն*» տողով, որն էլ հիմնատող-կրկնակի դերակատարում ունի: «*Կարոս խաչ*»-ի և «*Սոկաց Միրզա*»-յի հետ մեր գուգահեռները պատահական չեն, քանզի Լևոն թագավորի մասին երգն այդ նույն ժանրային տեսակավորման մեջ է՝ պատմա-վիպա-քնարական շարքում, որտեղ առկա է նաև վշտի դրսևորումը: Ինչպես կարելի է նկատել, Հայր Ալիշանի գրառած «*Ի Լէւոն որդի Հեթումյ Ա.*» երգը նմանատիպ սկզբունքով է կառուցվում, որտեղ յուրաքանչյուր տուն ավարտվում է նշված հիմնատող-երկտողով:

Լևոն թագավորին նվիրված մեկ այլ ուշագրավ օրինակ, որտեղ առկա է հիմնատող-կրկնակը, հրապարակեց ինքը՝ Աս. Մնացականյանը: Սկզբնաղբյուր է հանդիսացել Մ.Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագիր երգարանը, կազմած Խաչգոռուգի¹ ձեռքով /Ձեռագիր N 7709, թերթ՝ 93բ-94ա, 1608թ./, որտեղ խիստ վնասված վիճակում մեզ է հասել «*Աւախ, ըզԼէւոնն ասեմ*» երգի եղած օրինակներից առավել ամբողջական տարբերակը²: Ի տարբերություն Ղ.Ալիշանի օրինակի, որտեղ կրկնվող հիմնատողը երկտող է՝

«Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս.

Սուրբ Խաչն օգնական Լէւոնիս ու ամէնուս: »

ապա Ա.Մնացականյանի հրապարակած տարբերակում յուրաքանչյուր տուն ավարտվում է եռատող-կրկնակով.

« Իմ լոյս, ու սուրբ կոյս,

Սուրբ խաչն օգնական կենայ

Լէւոնիս, ամէն, տէր Յիսուս»:

Լևոնի մասին երգը հորինվել է հենց նրա գերության ժամանակահատվածում և ոչ դրանից հետո, քանզի տեքստում առկա է արքայազնի կարգավիճակի անորոշությունը, որտեղ հոր՝ Հեթում թագավորի միակ

Հայկունի Ս., *Ժողովրդական երգ, առած, ասած /Էմինեան ազգագրական ժողովածու*, հ.6, Մոսկուա-Վաղարշապատ, 1904, էջ 40-41/ : Աճեմյան Հ., *Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսությունից*, Էջմիածին, 1917: *Հազար ու մի խաղ . Ժողովրդական երգարան*, հ.1, Խմբ. Կոմիտաս Վարդապետ և Մ. Աբեղեան, Վաղարշապատ, 1904, N 50, էջ 62-66: *Կոմիտաս*, ԵԺ, հ.10, NN 118-119, էջ 92-93:

¹ Խաչատուր երեց Կաֆայեցի՝ աշխարհական անունը Խաչգոռուգ, ծնվ. Կաֆայում (Ղրիմ) 1592-ին: Կաֆան հայ գրչության կարևոր օջախներից մեկն է եղել, որն աչքի է ընկել իր տաղերգուներով: Խաչատուր Կաֆայեցու կազմած այդ տաղարանը (Ձեռագիր N 7709) բաղկացած է 245 ձեռագիր էջերից, որտեղ տեղ են գտել միջնադարյան խիստ արժեքավոր երգեր /տե՛ս. Աբրահամյան Ա., *Խաչատուր երեց Կաֆայեցու տարեգրությունը*, «Էջմիածին», 1944, N1, էջ 39-51/:

² Մնացականյան Ա., *Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր*, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1956, էջ 228-230:

հույսը Սուրբ Խաչին ապավինելն ու աղոթքն է: 1608 թ-ի Ձեռագիր մատյանում գետեղված և Ա.Մնացականյանի կողմից հրատարակված Լևոն թագավորի մասին երգը ուշագրավ օրինակ է, որն ուսումնասիրելիս կարելի է զուգահեռներ անցկացնել վերը նշված Ալիշանի օրինակի հետ, ապա համեմատական վերլուծության սկզբունքով մատնանշել այն տիպաբանական առանձնահատկություններն ու օրինաչափությունները, որոնք առկա են երկու երգային օրինակում: Ինչպես Ղ.Ալիշանի, այնպես էլ Ա.Մնացականյանի հրապարակած տարբերակներում հետաքրքրական են «Սուլթան ի մետան էլեր, Իր ոսկե գունտն կխաղայ» տողերը, որտեղ հիշատակվում է ոսկի գունդ խաղալիք-մրցանակները: Այդ նույն տաղարանում /Ձեռագիր N 7709, թերթ 94 ա-94 բ/ մեկ այլ ուշագրավ երգ է գետեղված, որտեղ հանդիպում ենք նմանատիպ տողերի.

*Թէ սուլթան ի մօտան,
Թէ սուլթան ի մօտան այլ էլեր,
Իմ պարոն Ակնարկիոս,
Գունդըն կու խաղայ:*¹

Այդպիսի մետաղյա խնձոր-խաղալիքների, կամ՝ ոսկե-գնդերի մրցություններ նկարագրված են «Մասնա Մոեր» էպոսում: Գնդախաղերի պատկերազարդումներ կարելի է տեսնել հայկական մատենագիր մատյանների խորաններում², ինչպես նաև եգիպտական հին քանդակապատկերներում, որտեղ նկատելի է գնդախաղի ծիսական հանդեսային բնույթը³: Երգում պահպանվել են ուշագրավ մանրամասնություններ, որոնք կարող ենք բնորոշվել որպես «կայուն միջադեպեր». երեք օրինակներում առկա է բերդի վրա Լևոնի նստելու տեսարանը և աչքերի արտասուքը թաշկինակով սրբելը

*Լէոնն ի բերդին
Դաստառակն աջից ու կուլար:*

Տեքստերում պահպանված թաշկինակի *դաստառակ*⁴ ձևը մեզ հուշում է միջնադարյան Հայաստանում տարածված բառամթերքի մասին, ինչպես նաև Հիսուսի դեմքով հոչակավոր *Անձեռակերտ Դաստառակի*, որը քրիստոնյա աշխարհի գլխավոր սրբություններից մեկն է⁵: Լևոնի

¹ Տես. **Մնացականյան Աս.**, *Հայկական զարդարվեստ*, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1955, էջ 500:

² Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, Ձեռագիր N 4827, թերթ 81ա :

³ **Оптель Карл**, *Чудеса древней страны пирамид*, С.Петербург, 1897, с.179-180:

⁴ *Դաստառակ*⁵ փոխառված է հին պարսկերենից, մի քանի իմաստ ունի՝ «անձեռոց, ձեռքի սրբիչ, վարչամակ, մաքուր կտավ» / տե՛ս. **Աճառյան Հ.,** *Հայերեն արմատական բառարան*, հ.1, Ե., Համալսարանի հրատ., 1971, էջ 627/ :

⁵ Հայոց Աբգար թագավորին ուղղված նամակում Տիրոջ Որդին դաստառակի վրա թողել էր իր դիմանկարը, և այդ սրբապատկերը մեկ հազարամյակ շարունակ

մասին երգերի տեքստերում *կայուն միջադեպ է* նաև սուլթանի առաջարկը, որ դավանանքը փոխելու դեպքում նա Լևոնին կդարձնի թագավոր.

-Լևոն, դու տաճիկ լինես,
Զքեզ անեմ տաճկաց թագաւոր:

Լևոնի մասին երգերը հասել են մեզ ձեռագիր աղբյուրներից և դասվում են **հայերենների** շարքին, որը շատ սիրված և տարածված է եղել Կիլիկյան Հայաստանի միջնադարյան գուսանական քաղաքային արվեստում: Ձևի, ոճի և բովանդակության առումներով Կիլիկիայի երաժշտական մշակույթն առավել մոտ է ժողովրդական վիպա-քնարական երգարվեստին¹: Գուսանական և քաղաքային-ժողովրդական հարուստ երաժշտական մշակութային ավանդույթների, ինչպես նաև երաժշտական գործիքների տեսակների մասին հիշատակումներ կատարել են հայ միջնադարի երևելի այրերը՝ Անանուն Արծրունին, Ներսես Շնորհալին, Հովհաննես Երզնկացին (Պլուզը), Հակոբ Ղրիմեցին, Թովմա Մեծովեցին, Առաքել Սյունեցին և այլք²: Ինչպես կենտրոնական Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, գուսանները հավասարապես ծառայում էին թագավորներին, իշխաններին, վաճառականներին, արհեստավորներին. նրանց քաջ ծանոթ էր հասարակության բոլոր խավերի կենցաղը, ճաշակը, ձգտումներն ու ցանկությունները, ուստի և երաժշտական նախասիրություններին համապատասխան՝ հորինվում և կատարվում էին սիրային, պատմական, ծիսական, վիպական և այլ տեսակի երգեր:

XII դ. հայ ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցին իր հայտնի աշխատության մեջ նշում է, որ անգամ զինվորները, ռազմական արվեստից առավել՝ սիրել են գուսանների նվագն ու երգը. «... *ստեցին զարուեստ պատերազմի ...սիրեցին զբարբրուտ* [քնար –Մ.Տ.] *և զերգրս գուսանաց*»³: Նույնը՝ հայ իշխանների և հոգևորականների վերաբերյալ գրում էր նաև Հեթում Ա թագավորի եղբայր՝ Սմբատ Սպարապետը⁴: Կիլիկիայի զարգացած գուսանական արվեստը սերտ առնչություններ է ունեցել ինչպես

պահվել է Հայոց Եդեսիայում /տե՛ս. **Սովսես Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, Գիրք Բ, գլ. Ժ, ԻԹ, ԼԱ, ԼԳ /:

¹ Տե՛ս. **Тагмизян Н.**, *Музыка в Армянской Киликии* // «Традиции и современность»: Вопросы армянской музыки, Книга 2, изд. НАН РА, Е., 1996, с. 20 :

² Տե՛ս. **Թահմիզյան Ն.**, *Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության*, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների» Ե., 1971, N5, էջ 29-44 :

³ Տե՛ս. **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն*, Թարգմ., ներած., և ծանոթագր.՝ Հ.Բարթիկյան, Ե., 1973, «Հայաստան», էջ 53 /Վաղարշապատ, 1898/:

⁴ Տե՛ս. **Սմբատայ Սպարապետ**, *Տարեգիրք*, Վենետիկ, 1956, էջ 33:

արևելյան՝ իրանական, այնպես էլ հայկական երաժշտական արվեստի հետ. մայր Հայաստանից Կիլիկիա են եկել գուսանական խմբեր և ուշագրավ ծրագրերով հանդես եկել¹: Կիլիկյան Հայաստանի գուսանները խաչակիր-ասպետների միջոցով առնչություններ են ունեցել նաև ֆրանսիական ժողովրդա-պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի՝ մասնավորապես Պրովանսի տրուբադուրների երգարվեստի հետ ²: Ցավոք, այդ հարուստ երաժշտական մշակույթից մեզ գրեթե ոչինչ չի հասել՝ հատուկ կենտ օրինակներ, որոնցից մեկն էլ Լևոն թագավորի մասին երգն է: Մանուկ Աբեղյանը գրում է, որ արդեն X դարում եղել են հանգավոր հորինված և ռիթմիկ չափերով **աշխարհիկ երկատող տներով երգեր**, որոնք առանձնապես զարգացրել են XI-XII դարերում : Այդ երկատող տներով երգերը *«բանեցրել են ոչ թե եկեղեցական երգիչները, այլ սիրու երգիչները և նույնիսկ բանաստեղծ լալկան կանայք, այն էլ հակառակ եկեղեցու թշնամական վերաբերմունքի»*³ : Հենց այդպիսի երկատող տներով է կառուցված Լևոնի մասին մեր ձեռքի տակ եղած բոլոր երեք օրինակները, որտեղ նշմարվում է մեկ օրինաչափություն՝ **15-վանկանի երկատող հայրենը**, ուր առաջին տողը պարտադիր 7-վանկանի է, իսկ երկրորդը՝ 8-վանկանի: Հայրենների ներքին բաժանումը հետևյալն է՝ 7-վանկանի (2+3+2) և 8-վանկանի (3+2+3), շեշտադրվող 5-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ վանկերով.

*Սուլթա՛ն / ի մետա՛ն / էլե՛լ
Իր ոսկի՛ / գունտը՛ն / կու խաղա՛յ: /8/
-Լէո՛ն, / դու տաճի՛կ / լինե՛ս, /7/
Ջքեզ անե՛մ / տաճկա՛ց / թագաւո՛ր: /8/
Խաղա՛ց / ի Լէո՛նն / երե՛տ. /7/
«Ա՛ռ, խաղա՛ / ու տո՛ւր / տատայի՛դ»: /8/*

Այս բանաստեղծության հնագույն գործածությունը կարելի է գտնել Գրիգոր Նարեկացու, իսկ ավելի ուշ՝ Ֆրիկի, Մկրտիչ Նաղաշի, Գրիգոր Աղթամարցու բանաստեղծություններում: Վկայությունների համաձայն՝ հենց այս ոտանավորի ձևն են օգտագործել հին գուսաններն ու ողբասաց կանայք : 15-վանկանի հայրեններով են շարադրված Ակնա երգերի զգալի

¹ Այդպիսի ելույթներից մեկին ականատես է եղել ֆրանսիացի ճանապարհորդ և պատմիչ Ժան Սիր դե-ժուանվիլը /տե՛ս. **Տիրայր Արքեպիսկոպոս, Ֆրիկ. Դիվան**, Նյու-Յորք, 1952, էջ. 223 (**Jean de Sir Joinville, Histoire de Saint Louis**, Paris, 1874, p.286-288)/:

² Տե՛ս վերը նշվ. աշխ.՝ *Ֆրիկ. Դիվան*, էջ 224:

³ Տե՛ս. **Աբեղյան Մ.**, *Հին գուսանական ժողովրդական երգեր*, Երկեր, հ. Բ, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1967, էջ 181 :

մասը, իսկ ձեռագիր մատյաններում այս չափով հորինված ոտանավորները կրում են « **հայրենի կարգ** » վերնագիրը¹:

Զարմանալի է, որ Լևոն թագավորի մասին երգերի ներկայացված օրինակներում երկտող հայրեններով շարադրվող բովանդակային և վանկաչափական այսքան հաստատուն կառուցվածքի (7+8) պարագայում անկայուն են հիմնատող-կրկնակները, և սա այն դեպքում, որ հիմնատող-կրկնակները, որպես կանոն, երգի առավել կայուն մասն են կազմում:

Բմ լուս, իմ լուս , ու սուրբ Կոյս. /7/

Սուրբ Խաչն օգնական Լէոնիս ու ամէնուս: /12/

(Ղ.Ալիշանի օրինակ)

Բմ լոյս, ու սուրբ կոյս, /5/

Սուրբ Խաչն օգնական կենայ /7/

Լէոնիս, ամէ՛ն, տէր Յիսուս : /8/

(Ա. Մնացականյանի օրինակ)

Դժվար է ասել, թե այդ երևույթն ինչի հետևանք է. պատճառներից մեկը կարող էր հանդիսանալ մեղեդու աղավաղումը, որի արդյունքում վանկերի քանակը հնարավոր էր ավելանար կամ պակասեր, հարմարեցվելով փոփոխված մեղեդուն : Ցավոք, մենք ոչ մի պատկերացում չունենք այս երգի մեղեդու մասին և միայն երջանիկ պատահականությամբ է հնարավոր , որ օրերից մի օր այն հայտնվի ²:

Անվանի բանագետ Ալվարդ Ղազիյանն իր «**Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր**» ուսումնասիրության մեջ հիշատակում է չերքեզահայերից գրի առած մի ժողովրդական երգ³, որը չերքեզերենից թարգմանվել է գերմաներեն , պահպանելով երգի հայերեն վերնագիրը՝ «Leon takaor»⁴ :

¹ Տե՛ս. **Աբեղյան Մ.**, *Հայոց լեզվի տաղաչափություն*, Երկեր, հ. Ե , Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1971, էջ 226-229:

² Հին երգարաններում հրատարակվել են միայն այդ երգի բանաստեղծական տարբերակները և ոչ մեղեդին: Լևոն արքայի երգի մեղեդու պահպանված լինելու վերաբերյալ մեր հարցումը Վենետիկյան Մխիթարյանների միաբանության արխիվ դրական պատասխան չունեցավ : Անկասկած, այդ խիստ արժեքավոր երգի մեղեդին մեզանից առաջ էլ որոնողներ եղել են, սակայն ներկա դրությամբ Լևոն թագավորի մասին երգի մեղեդային որևէ տարբերակ մեզ հայտնի չէ:

³ Տե՛ս. **Аракелян Г.**, Некоторые вопросы истории переселения армян на Северозападный Кавказ и становление черкезогоев. Кавказ и Византия, выпуск 3, Е., 1982, с. 35-36:

⁴ **Ղազիյան Ա.**, *Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր*, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1989, էջ 270:

Անհրաժեշտ է նշել, որ Լևոն թագավորի երգի ռուսերեն թարգմանությունը, մանրամասն ծանոթագրությամբ, իր հայտնի աշխատությունում ընդգրկեց նաև Վալերի Բրյուսովը ¹ :

Լևոնի գերության և նրա կնոջ Կեռան-Աննայի մասին, մի ուշագրավ վկայություն է պահպանված Ձեռագիր N 4965, որն ընդօրինակված է Կիլիկիայում Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսի պատվերով կատարված ձեռագրից: Գրչի հիշատակարանում նշված է. «*Ստացողի սորատեան Կոստանդեա դպրապետի հայոց ողորմեսցի տէր Յիսուս և ծնողաց իւրոց, ամէն, և գրչիս: Ո՛վ մանկունք նոր սիրովնի, յիշեցէք զարքայորդին ըզԼևոն զմատնեալն ի ձեռս անօրինաց, զի շնորհեսցէ զնա մեզ վերըստին, զի որբ և անտեսուչ ո՛չ մնացուք, և զամուսինն իւր զբարեպաշտ տիկինն զԿեռան և զդեռաբոյս որդեակ իւր զԿոստանդին, զոր տէր Յիսուս կարողացուցէ և յաղթողս արասցէ ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի և պարագայց ամօք շնորհեսցէ ր պարծանս եկեղեցոյ, զի խաղաղութեամբ վարեսցուք զկեանս մեր...»² :*

Հեթում թագավորի բանակցությունների ու տարածքային զիջումների շնորհիվ 1268-ին, 22 ամսվա գերությունից հետո, Լևոն արքայորդին վերադարձավ հայրենի Կիլիկիայի Սիս մայրաքաղաք: Այդ տարիները ծանր ժամանակաշրջան էր Կիլիկյան Հայսատանի համար. 1267-ի ապրիլին կյանքից հեռացավ Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսը և նոր հայրապետի ընտրությունը շուրջ մեկ տարի ձգձգվեց: Սիսյան 1268-ի պայմանագրի կնքումից և Լևոն արքայորդու վերադարձից հետո գումարվեց եկեղեցական ժողով և հայոց հոգևոր առաջնորդ ընտրվեց Հակոբ Կլայեցին, ով և կատարեց Լևոն թագավորի օժման արարողությունը: Լևոն արքայի գահակալության հանդեսը տեղի ունեցավ 1269-ին, Սսի Սուրբ Սոֆիա եկեղեցում³: Ժամանակակից մի հիշատակարան այսպես է նկարագրել այդ իրադարձությունը. «...*ի մեծ եկեղեցին Ս.Սոփի, եւ եղեւ ժողու մեծ յամենայն ազգաց՝ վերադիտողաւն Հայոց Տեառն Յակոբայ եւ բազում եպիսկոպոսաւք եւ վարդապետաւք. եւ բազումք ի Յունաց Պատրիարքաց եւ յԱսորւոց եւ Ֆռանգաց, եւ յիշխանաց մեծամեծաց ի Հայոց, եւ ի Հռոմոց* »⁴: Արարողակարգին ներկա երևելի այրերից մեկը եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանն էր, որը 1268-ին ուղևորվելով Կիլի-

¹ Տե՛ս. Поэзия Армении с древнейших времен до наших дней в переводе русских поэтов. Редакция, вступительный очерк и примечания В. Брюсова, Е., 1966, с.122:

² Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, Ձեռագիր N 4865, թերթ 159բ, ժամանակ XIII դ., հավանաբար 1266թ. :

³ Սսի սուրբ Սոֆիա եկեղեցին 1262-ին կառուցել է Լևոն Գ-ի հայրը՝ Հեթում թագավորը:

⁴ Տե՛ս. Թորոս Աղբար, մաս Բ, գրեց՝ Գ.Վ.Սրվանձտեանց, Կ.Պոլիս, 1884, էջ 383:

կիսա՝ պետք է ձեռնադրվեր Սյունյաց երկու Աթոռների՝ Տաթևի և Ամաղու Նորավանքի ընդհանուր մետրոպոլիտ¹: Երեք ամիս ապրելով արքունիքում և արքայական ընտանիքի կողմից մեծ պատիվների արժանանալով՝ Ստեփաննոս Օրբելյանը խոր ակնածանք է ունեցել Հեթում Ա և Լևոն Գ թագավորների հանդեպ: Ստում նրա «երկարաժամկետ» հյուրընկալությունը պայմանավորված էր հոգևոր առաջնորդի ընտրություններով²: Հետագայում, պատմելով Լևոն թագավորի միաբանելու և Տաթևի վանքին թանկագին ընծաներ՝ «գրէ իւրով ձեռամբ յիշատակ ինքեան» ուղարկելու մասին, պատմագիրը բերում է 1282 թ-ին գրված մի ոտանավոր՝ տասնհինգ վանկանի (7+8) **հայրենի չափով**.

*Մարդիկ որ հագւոյ աջօր
Յանվախճան կեանքս հայեցան.
Մինչդեռ ի մարմնի էին,
Փրկութեան հոգւոյն ջանացան.
Յաղագս որոյ ես, Լևոն,
Թագաւոր ազգիս Հայկազեան .
Յայս աստուածընկալ սուրբ ուխտ
Խնդրեցի լինել միաբան....³ :*

Գահը որդուն փոխանցելուց հետո, նույն 1269-ին Հեթում Ա-ն հրաժարվելով աշխարհիկ կյանքից, քաշվեց վանք⁴: Սսից ոչ հեռու, Դրազարկ վանքում⁵ Հեթում Ա թագավորն ընդունեց Մակար անունը, ճգնեց և մեկ տարի անց՝ 1270-ի հոկտեմբերի 28-ին հեռացավ կյանքից⁶: Մակար

¹ Տե՛ս. **Ստեփաննոսի Միւնեաց եպիսկոպոս, Պատմութիւն Տանն Միսական**, Ի լոյս ընծայեց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 350-351:

² Ստեփաննոս Օրբելյանի օման արարողությունը նույնպես կատարել է նորընտիր հայրապետ Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Կլայեցին:

³ Տե՛ս. **Աբելյան Մ., Հին գուսանական ժողովրդական երգեր**, Երկեր, հ. Բ, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1967, էջ 182 :

⁴ Տե՛ս. **Չամչեան Հ.Միքայել վրդ., Պատմութիւն Հայոց**, հատ.Գ, Վենետիկ, 1885,ԼԴ, էջ 269:

⁵ Դրազարկ վանքը հայտնի է X դարից: Գտնվում է Կիլիկյան Տավրոսի լեռների լանջին , անառիկ և անմատչելի վայրում, Սսից 36 կմ դեպի արևմուտք: Անվան ծագումը կապում են «թուր» և «զարկ» բառերի հետ: Դրազարկը հանդիսացել է Ռուբինյան իշխանների և թագավորների դամբարան, դրա համար էլ դարձել է նրանց հոգաձության առարկան /տե՛ս. **Մելիք-Բաշխյան Ս., Հայոց պաշտամունքային վայրեր**, 2008, Ե., ԵՊՀ հրատ., էջ 131/:

⁶ Այդ նույն 1270-ին մահացան նաև Սմբատ Գունդստաբլի երկու որդիները՝ Վասիլ Թաթարը և նրա արյունակից եղբայր Հեթումը, որոնք թաղվեցին Միլձի վանքում՝ կողք-կողքի /տե՛ս. **Ալիշան Ղ., Միսուն**, էջ 72/։ Ենթադրում ենք , որ նրանց մահվան պատճառ կարող էր լինել լնդախտի (ցինգա) համաճարակը:

ճգնավորի գրչին են պատկանում երկու պարականոն շարական, որոնք մեզ են հասել շնորհիվ Ս.Էջմիածնի միաբան՝ Սահակ վրդ. Ամատունու 1880-ականներին արված ձայնագրությունների¹ :

Գահակալումից հետո Լևոն Գ թագավորն իր աթոռանիստը Սսից տեղափոխեց Տարսուն: Պատմության զարգացումը հետևյալն էր. Եգիպտացի մամլուքները հարձակվելով՝ գրավեցին և այրեցին Տարսունը: Լևոն Գ-ն հասցրեց փախչել, սակայն երկրորդ արշավանքի ժամանակ հիմնովին ջախջախեց թշնամուն և կովի դաշտում նետահար սպանվեց սուրթանը: Մի շարք փայլուն հաղթանակներից հետո Լևոն Գ թագավորը խաղաղացավ և հաստատվելով Կիլիկիայում՝ կյանքի մնացյալ մասն անցկացրեց հոգ տանելով երկրում կրթության և արվեստի տարածմանը, ինչպես նաև Աստվածահաճո գործեր կատարելով, որին աջակից էր նաև Կեռան թագուհին: Իր կյանքի վերջին տարիներին Կեռան թագուհին դարձավ կրոնավոր և ինչպես իր սկեսրայր Հեթում Ա թագավորը, քաշվեց Դրագարկ վանքը, ընդունեց Թևանա (Թեոֆանիա) հոգևոր անունը և մնացյալ կյանքը նվիրելով աստծուն՝ հեռացավ աշխարհից 1285-ի հուլիսի 28-ին: Մի հիշատակարանի համաձայն՝ 1285-ին, իր բարեպաշտ կնոջ մահից հետո, Լևոն թագավորն այցելեց Թադևոս առաքյալի վանքը, որի առաջնորդն էր Տիրացու եպիսկոպոսը: Ս.Թադևոս (Թադևոս) վանքը, ավելի հայտնի է որպես Թադեի վանք՝ Իրանի հայկական նշանավոր վանական համալիրներից է և ավանդության համաձայն IV դարում այն հիմնադրել է Թադևոս առաքյալը²:

Պահպանվել է նաև մի արձանագրություն, համաձայն որի, Երուսաղեմի գլխավոր հայկական եկեղեցու՝ Ս.Հակոբյանց (Սրբոյ Յոկովբեանց Վանք Հայոց) վանքը պարսպապատվել և գավիթը սալահատակավորվել է Հայոց Կիլիկիո արքա Լևոնի և Կիլիկիո կաթողիկոս Հակոբ Կլայեցու պատվերով. «Նուստ ծառայ ամենայն քրիստոնէից Օալւայ վարդապետս՝ յարեւելից եկաք յաստուածակոխ քաղաքն Երուսաղէմ արդեամբք և ըկչիւք սուրբ թագաւորին Լեւոնի, և Տէր Յակոբ Կաթողիկոսի: Սրբոց Յոկովբեանց եկեղեցւոյ գաւիթս սալեցաք, եւ Հրեշտակապետսն վանք

Հիվանդության մասին առաջին հավաստի տեղեկությունները վերաբերում են XIII դ-ին, որի համաձայն լնդախտը Կիլիկիայում տարածել են խաչակիրներն ու նավաստիները:

¹ Տե՛ս. **Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ**: Լոյս ընծայեց Սահակ վարդապետ Ամատունի: Միաբան Մայր Աթոռից ս. Էջմիածնի: Արդեամբք և ծախիւք տեառն Սուքիասայ արքեպիսկոպոսի Պարզեանց, Վաղարշապատ, 1911, էջ 15, 58:

² Տե՛ս. **Тумановъ А., Армянскія древнія рукописи Монастыря св. Фомы** // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлисъ, 1901, т. 29, с. 1-18:

պարպեցաք, որք կարդայք Ս.Թագաւորին և իւր զաւակացն երկար կեանս խնդրեցէք»¹: Նշանակալիցն այն է, որ այդ եկեղեցին կառուցել էր նրա հայրը՝ Հեթում Ա թագավորը, կյանքից անժամանակ հեռացած կնոջ՝ Զաբելի հիշատակին (մահացել է 1252-ին). սև մարմարե արձանագրությունը հետևյալն է. «ԱՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՎԲ ԱՆՈՒՆՈՎ ՀԵԹՄՈՅ ԹԱԳԱՒՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՇԻՆՈՒԵՅԱԻ ԵՐԱՆՈՒՀԻ ՏԻԿՆՈՋ ԶԱՊԵԼԻՆ ՅԵՄՊԱՆԻՕՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՎԵՐՋԸ ՅԱՂԹԱՆԱԿ ԵԼՆԱԼՈՎ . ՉԶ (1257) »² :

Մեզ է հասել Լևոն թագավորի պատանեկության տարիների մի նկար, 1249 թ-ի մի Ավետարանի մեջ, որը գրել էր տվել Կոստանդին Ա կաթողիկոսը և նվիրել տասնհինգամյա արքայագնին ³: 1262-ին Ավետիս անունով գրչին Լևոնը պատվիրեց մի Ավետարան, որը ծաղկեց հռչակավոր Թորոս Ռոսլինը, որտեղ կա Լևոնի նկարը իր նորապսակ կնոջ հետ ⁴ : Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքում պահվում է մագաղաթյա ոսկեկազմ մեկ այլ Ավետարան (Ձեռ.N2563)՝ հայտնի որպես «Կեռան թագուհու ավետարան», որը 1272-ին գրվել և պատկերագրվել է Սսում՝ Կեռան թագուհու պատվերով (գրիչ՝ Ավետիք քահանա)⁵: Այստեղ պահպանվել է Լևոն թագավորի, Կեռան թագուհու և նրանց հինգ զավակների⁶ մանրանկարը, որը բարձրարվեստ կատարումից բացի ունի նաև պատմական նշանակություն: Իր նրբագեղությամբ և կատարողական

¹ Տեք-Յովհաննէսեանց Աստուծատուր Եպիսկոպոս, *Ժամանակագրական պատմություն Ս.Երուսաղեմի*, Հատոր Ա , Յերուսաղեմ, 1890, Ի տպարանի առաքելական աթոռոյ Սրբոյ Յովովբեանց, էջ 189-190:

² Նույն տեղում՝ էջ 187-188:

³ Հետագայում այդ նկարն արտանկարեց անվանի գեղանկարիչ, ծագումով նախիջևանցի՝ Համայակ Արծաթաւանյանը, որից և լուսանկարելով՝ առաջին անգամ տպագրեց Գաբեգին Հովսեփյանը /տե՛ս. **Յովսեփեան Գաբեգին Վարդ., Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ (Լևոն Գ-ի պատկերի առթիւ)**// «Լուսմայ», Թիֆլիս, 1902, N 1, էջ 197/:

⁴ Տե՛ս. **Շողակաթ. Հայագիտական ժողովածու**, հ.Ա, Ս.Էջմիածին, Վաղարշապատ, 1912, էջ 201:

⁵ Երուսաղեմի Ս.Հակոբեանց եկեղեցու Մատենադարան, Ձեռագիր N2563/8, Աւետարան ոսկեկազմ, Շղթայակիր ժամանակից, ճոխ նկարներով և լուսանցագրողներով, մաքուր կաթնագույն մագաղաթ, Գրիչ՝ Աւետիք, թերթ 380ա, 37,7 X 24սմ, մեջքը 9,2 սմ, 382 թերթ /տե՛ս. **Հովսեփեան Գաբեգին վրդ., Քարտեզ հայ հնագրութեան**, «Շողակաթ», Հայագիտական ժողովածու, հ.1, Էջմիածին, 1913, էջ 203-204 / :

⁶ Լևոն Գ-ի ամուսնության ընթացքում Կեռան թագուհին ունեցել է 15 երեխա (երեք անգամ զույգ), որոնցից հինգը հետագայում թագավորել են: Հայոց գահակալների մեջ միայն այս 5 եղբայրներն են, որոնք թագավորներ են դարձել հաջորդելով միմյանց:

բարձր վարպետությամբ այդ մանրանկարը հայկական միջնադարյան արվեստի պատմության ծաղկուն շրջանի նշանավոր նմուշներից է: Սիրելի կնոջ՝ Կեռանի մահից չորս տարի անց, 1289-ի փետրվարի 6-ին, կյանքից հեռացավ նաև Լևոն թագավորը, իր ծաղկուն շրջանում՝ 53 տարեկան հասակում:

Հայոց Կիլիկիո թագավոր Լևոն Գ-ն պատմության էջերում և ժողովրդական մշակույթում անջնջելի հետք թողեց¹: Նրա գերությունը, որը ցնցեց ժամանակի բանաստեղծ-երգիչներին՝ գուսաններին, և արտացոլում գտավ միջնադարյան հայրեններում, դրսևորում ունեցավ նաև հայր Ղևոնդ Ալիշանի երիտասարդական տարիներին գրված (1848 թ.) բանաստեղծություններից մեկում².

ՈՂԲՔ ՀԵԹՄՈՅ Ի ՎԵՐԱՅ ՈՐԴԻՈՅՆ

*Ո՛վ գարրելի Հայոց գուսանք
Ո՛վ մանկլաւիկք և կուսանք,
Զարքայդ Հայոց սրգատրտում
Եկայք տեսէք ըզհէզս Հեթում.
Սիրտ ի կուրծս ի թունդ ողորմ ողորմիւ
Լացէք լացէք ըզտէրդ անբաղդ.
Զի խաւարին ծագեաց իւր տիւ,
Թաքեան այգուն աստղունք անաղտ.
Սեւացաւ թագ, սեւացան ծիրանք,
Անկաւ մականս ոսկեդինիկ:
Տու՛ն Ռուբինաց, զարթի՛ր ի կոծ,
Խաւար եհաս ազգիս Հայոց:*

*Ընդ դարս և դիրս ես ի Թաթարս
Անհունս հատի ճանապարհս,
Զի տունս Հայոց՝ հոգն իմ քաղցրիկ
Լիցի յամայր ինձ երջանիկ.
Զաչաց լոյս սրտիս հատոր զիմ որդեակս՝
Թորոս, Լեւոն քաջ և աշխոյժ,
Դէմ թշնամեաց թողի պահնակս.*

¹ Հեթում Ա և Լևոն Գ թագավորների կյանքի ուշագրավ դրվագներ պահպանվել են եվրոպական միջնադարյան ձեռագիր մատյաններում:

² Տե՛ս. **Հ.Ղևոնդեայ Մ. Ալիշանեան**, «Նուագք», հտ. Գ, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1858, էջ 161-162:

Ո՛հ ցաւք սրտի, ո՛հ վերք անբոյժ...
Եզիպտո՛ւ, միշտ ընտրելոց դաւաճան,
Ո՞ր են որդեակքն իմ աննւման,
Տո՛ւն Ռուբինաց, զարթի՛ր ի կոծ,
Խաւար եհաս ազգիս Հայոց:

Ա՛յ քան ճորտեր, որ զինեւ կայք,
Ասացէք այ պարոնայք,
Ո՞ր են որդեակքն իմ գեղեցիք,
Ո՞ր ծաղկահեր իմ պատանիք:
Զի՞ լըռէք, զի՞ լայք... աւա՛ղ հօրս, աւա՛ղ...
Կորեա՛ւ Լեւոն, Թորոս անկա՛ւ.
Աչկունքն և այտն անշամանդադ
Ի ճապաղիս թաթաւեցաւ.
Ձեռներագ և սիգազնաց կորովին
Յանգութ շղթայս տըքնի բանտին.
Տո՛ւն Ռուբինաց, զարթի՛ր ի կոծ,
Խաւար եհաս ազգիս Հայոց:

Ո՛տայր ինձ մահ ձեր փոխանակ.
Ե՛րթ մուտ յինէն աւերակ
Ի վարդարիւն ծով Թորոսիս.
Թելիկ կենաս՝ անց ընդ ալիս,
Պատատեաց յիմ Լեւոնկան չար շղթայս:
Թորո՛ւն դիւցազն, առի՛ծ Լեւոն,
Հայոց մանկանց յօժար ի տօն.
Ես մեռայ, ես գերեցայ անգաւակ...
Հերոսւմ, ե՛րթ մուտ շիրմին ի փակ:
Տո՛ւն Ռուբինաց, զարթի՛ր ի կոծ,
Խաւար եհաս ազգիս Հայոց:

Մի՛ այդպէս, մի՛ սուրբ թագաւոր.
Գըթած է տէր և հրգօր,
Միրեաց զորդեակքդ, այլ և բզբեզ.
Հա՛տ ըզմրմունջդ այդ աղեկէզ.
Լալականք, ի բաց գնազէք, ոչ եւս սուգ:
Հերո՛ւմ, Հերո՛ւմ, արի փութով,
ԶԹորոս թագեաց տէր երկնաշուք.
Իսկ Լեւոն գայ քեզ խայտալով:

*Ա՛ն և զո՛ւ գրա՞գ, պրաւակեա՞ գրե՞գ և գնա՛.
Տո՛ւր աւետիս Վիլիկիայ.
Տո՛ւն Ռուբինաց լրոնեցո՞ գլո՞ծ,
Արեւ եհաւ ազգիս Հայոց:*

МАРИАННА ТИГРАНЯН
Кандидат искусствоведения

РЕЗЮМЕ

ИСТОРИЯ ПЕСНИ «О ЛЕВОНЕ - СЫНЕ ЦАРЯ ХЕТУМА» ОТЦА ГЕВОНДА АЛИШАНА

Ключевые слова: Киликийская Армения, Царь Хетум I, Левон III, Смбат Гундстабль, Царица Керан (Анна), битва при Мари, египетские мамлюки, искусство гусанов, 15-стопные «айрены», эпическое мышление, исторические песни.

В 1852 году в Венеции вышел в свет двуязычный (английский - армянский) песенник «Армянские народные песни» Отца Гевонда Алишана, в который вошли народные песни, взятые из средневековых армянских рукописных сборниках, хранящихся в Венеции, Вене, Париже и Лондоне. Первой в сборнике была помещена историко-эпическая песня «О Левоне - сыне Хетума (Гетума)», в основу которой легли реальные исторические события: история пленения принца Левона-сына киликийского царя Хетум I (1215-1270). Нужно отметить, что исторические песни по природе своей недолговечны и многовековая армянская история в народно-песенном жанре почти не сохранилась и в этом смысле опубликованный Алишаном образец представляет большую ценность и имеет исключительное значение. 24 августа 1266 года в ущелье Мари близ Черных скал столкнулись 30-ти тысячная армия мамлюков и 15-ти тысячное армянское войско. Враг вторгся в столицу Киликийской Армении, а это сражение сохранилось в истории как битва при Мари. Смертью храбрых пал на поле боя младший сын Хетума принц Торос, а сам Левон - наследника престола, и его двоюродный брат Васил (Васак) – сын Смбата Спарапета (Гунстабль) попали в плен и провели два года в Египте. О пленении Левона народ сложил таги (песни), которые дошли до нас благодаря рукописным источникам и которые относятся к жанру 15-ти стопных айренов, излюбленному и распространенному жанру городских гусанов в средневековой Киликийской Армении. Изданная Алишаном «Песнь о Левоне» в дальнейшем периодически издавалась в различных известных песенниках, а спустя годы другие варианты этой песни были опубликованы епископом Трдатом Паляном и А. Мнацаканяном. Пленение Левона оставило неизгладимый след как в истории, так и в народном творчестве. Оно нашло отражение не только в творчестве средневековых гусанов – поэтов-музыкантов, но и в ранней поэзии самого Гевонда Алишана.

ABSTRACT

FATHER GHEVOND ALISHAN
THE HISTORY OF THE SONG TO LEO, SONE OF HETHUM I

Key words: Armenian Kingdom of Armenia, Hethum I, Leo III, Smbat Sparapet (Constable), Queen Keran (Anna) of Armenia, battle of Mari, *gusan* musical art, 15-syllable *hayrens*, epic songs, historic song, Mamelukes of Egypt

The bilingual “Armenian Peasant Songs” compiled by Father Ghevond Alishan was published in Venice in 1852. The collection of songs included about twenty folk songs from the medieval manuscripts in Venice, Vienna, Paris, London, and recorded oral tradition, which were widely circulated among Armenians as well as foreigners. The first song in the collection is an epic narrative about Leo I titled “To Leo, the son of Hethum I”, which tells about real historic events and heroes, such as King of Cilicia Hethum I (1215-1270) and his son Leo III (1236-1289). Paradoxical as may seem, songs with historic narrative are rare and have not reached our days through the thousand years of Armenia’s history. That is why Alishan’s publication of the song about King Leo has an exceptional value and importance. On 24 August 1266 in the gorge of Mari, near the Sev (Black) Mountains, the Mameluke army, comprised of some 30 thousand soldiers, collided with the 15-thousand Armenian troops. The clash is known in history as the battle of Mari. Thoros, Hethum’s son, died a hero’s death, while Prince Leo along with Vasil Tatar, the son of Smbat Sparapet (Constable), Leo’s uncle, were captivated by the Mamelukes and taken to Egypt, where they spent about two years in captivity. The folk songs about Leo’s captivity have reached our days in manuscripts and are classified as *hayrens* (15-syllable two-line *hayren*), which have been very popular and widely spread in the urban songs of the medieval *gusans* in the territory of the Armenian Kingdom of Cilicia. The song about Leo, published by Father Alishan, was later included in many more collections of songs. Years later, alternative versions of songs about King Leo were published by Bishop Trdat Palyan and A. Mnatsakanyan. King Leo III of Cilicia, who was revered as Leo the Metsagorts (the one who acted big), left a significant mark in history and in popular culture. His captivity, which shook the imagination of the minstrels of his time, was reflected in the medieval *hayrens* and one of the early poems (written in 1848) by Father Ghevond Alishan.

REFERENCES

1. **Abeghyan M.**, *Yerker*, h. 2, 1967, h. 5, 1971, Yerevan, (in Armenian).
2. **Abrahamyan A.**, *Xachatur eret Kafayecu taregruthyuny* // Ejmiadzin, 1944, N 1 (in Armenian).
3. **Acharyan H.**, *Hayeren armayakan bararan*, Yerevan, 1971 (in Armenian).
4. **Acharyan H.**, *Hayoc andznanneri bararan*, Yerevan, h.2, 1944, h.4, 1948 (in Armenia).
5. **Alishan H. Ghevond**, *Nvagq*, Venice, S.Lazaro, 1858 (in Armenian).
6. **Alishan H. Ghevond**, *Sisuan*, Venice, S.Lazaro, 1885 (in Armenian).
7. **Alishan H. Ghevond**, *Shnorhali ev paraga yur*, Venice, S.Lazaro, 1873 (in Armenian).

8. **Alishan H. Ghevond**, Armenian Popular songs, Venice, S.Lazarus,1852 (in English, in Armenian).
9. **Brutyan M.**, *Hay joxovrdakan yerajstakan stextsgortsuthyun*, Yerevan, 2014 (in Armenian). **Chamchean M.**, *Patmutyun Hayoc*,h.3, Venice, S.Lazaro, 1885 (in Armenian).
10. **Davtyan R.**, *Samuel Muratyany ev nra anvan varjarany* // Lraber, Yerevan, 1990 (in Armenian).
11. **Dardel Hovhannes**, *Jamanakagrutyun Hayoc*, S.Peterburg, 1891 (in Armenian). **Ghaziyany A.**, *Hay joghovrdakan razmi ev zinvori yerger*, Yerevan, 1989 (in Armenian).
12. **Yeremyan S.**, *Kensagrutyun H.G.Alishani*, Venice, S.Lazaro, 1902 (in Armenian).
13. **Harutyunyan S.**, *Gevont Alishany ev hajoc yergern u havataliqnery* / Bazmavep,1-4, Venice, S.Lazaro, 2001 (in Armenian).
14. **Hovsephyan Garegin Vardapet**, *Manrankarchutean arvesty Hayoc mej (Levon 3-i patkeri artiv)* //Luma, Tiflis, 1902, N1 (in Armenian).
15. **Hovsephyan Garegin Vardapet**, *Qartez hay hnagrutean* // Shoxakat, h.1, Ejmiadzin, 1913 (in Armenian).
16. **Komitas**, *Yerkeri joxovsts*, Yerevan, 2000 (in Armenian) .
17. **Matheos Urhayeci**, *Jamanakagrutyun*, Vaxarshapat, 1898 (in Grabar).
18. **Meliq-Baxshyan S.**, *Hayoc pashtamunqayin vayrer*, Yerevan, 2008, (in Armenian).
19. **Mikaelyan G.**, *Istoria Kilikiyskogo Armyanskogo Gosudarstva*, Yereva, 1952 (in Russian).
20. **Mnatcakanyan A.**, *Haykakan zardarvest*, Yerevan, 1955 (in Armenian).
21. **Mnatcakanyan A.**, *Haykakan mijnadaryan joxovrdakan yerger*, Yerevan, 1956 (in Armenian).
22. **Movses Xorenatsi**, *Patmutyun Hayoc*.
23. **Sahak Amatuni**, *Hin ev nor parakanon kam anvaver sharakanner*, Vagharshapat, 1911 (in Armenian). **Smbat Sparapet (Gundstabl)**, *Taregirq*, Venice, S.Lazaro, 1956 (in Armenian).
24. **Tashean H. V. Hakovbos**, *Tcutcak hayeren dxeragratc matenadaranin Mchitarean I Vienna*, Vienna, 1895 (in Armenian) .
25. **Ter-Hovhanneseanc Astuatcatur Episkopos**, *Jamanakagrakan patmutyun S.Yerusaxemi*, h.1, Yerusaxem, 1890 (in Grabar).
26. **Thahmizyan N.**, *Muzika v Armyanskoy Cilicii* // Tradicii i sovremennost,Yrean, 1996 (in Russian).
27. **Thahmizyan N.**, *Qnnakan tesutyunhayoc hin ev mijnadaryan yerajshtutyun patmuthyan* // Lraber hasarakakan gituthyunneri, Yerevan,1971 (in Armenian).
28. **Thirayr Arqepiskopos**, *Frik .Divan*, New-York,1952 (in Armenian).
29. **Tumanov A.**, *Armyankiya drevniya rukopisi Monastyrya sv. Fomy*,Tiflis, 1901 (in Russian).
30. **Oppel K.**, *Chudesa drevnej strany pyramid*, S.Peterburg, 1897 (in Russian).

**ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՐՆԵՐԻ ՄԿՋԲՆԱԹԵՐԹԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Բանալի բառեր՝ փորագրանկար, Հայաստանի աշխարհագրություն, ջրհեղեղ, Արարատ, Կիլիկիա, Սյունիք, Շիրակ:

Հ. Ղ. Ալիշանը, Հայաստանին վերաբերող իր ուսումնասիրություններում, ներդաշնակ կերպով իրար է միահյուսել հայոց պատմությանը, մշակույթին և աշխարհագրությանը վերաբերող հարցերը:

Ալիշանը ոչ միայն օգտվել է եվրոպական տարբեր ուղեգրողների աշխատանքներից և նրանց գրքերում տպված՝ Հայաստանը ներկայացնող պատկերներից, այլև Հայաստանի իր աջակիցներից ստացված տարբեր վայրերի տեղագրությանը վերաբերող նկարագրական նամակներից և բացիկներից, լուսանկարներից և իր համար կատարված գծանկարներից: Այս ամենի համադրությամբ նա գեղագիտական բարձր ճաշակով կարողացել է ստեղծել և իր տեղագրական հատորներում զետեղել Հայաստանի տարբեր նահանգները ընդհանրացված ձևով ներկայացնող պատկերներ: Կարելի է ասել, որ դրանք այնքան դիպուկ և բնորոշ են ընտրված եղել, որ հետագայում կարծես ընկել են Հայաստանին նվիրված տարբեր բանաստեղծությունների և գեղանկարների հիմքում:

Հայաստանի աշխարհագրությանը նվիրված առաջին գործը «Տեղագիր Հայոց Մեծացն» է, որը տպագրվել է 1855 թ: Անհրաժեշտ է նշել որ, սկսած այս հրատարակությունից, Ալիշանի տեղագրական գործերը ավելի շատ պատմական աշխարհագրության բնույթ ունեն և ուղեկցվում են տարբեր բնակավայրերի նկարագրություններին կից բերվող պատկերներով: Ինչպես վերնագրից երևում է, այս գործը նվիրված է Մեծ Հայքի տեղագրությանը:

Գրքի մուտքային փորագրանկարով Ալիշանը փորձում է ներկայացնել պատմական Հայաստանի հավաքական պատկերը՝ մի շարք բնորոշ դրվագներով¹ (Նկ. 1): Աշխարհագրորեն Հայաստանը պատկերվում է Արարատ լեռան վրա հանգած Նոյան Տապանով: Արարչագործությունից հետո ջրհեղեղով՝ կյանքի երկրորդ նորոգությունը կապվում է Արարատի հետ: Ինչպես Ծննդոց գրքում է ասվում. «Եւ նստաւ տապանն ... ի լերինս Արարատայ» (Ծննդ. Ը 4): Աստվածաշնչային պատմությունը Ալիշանի

¹ Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծացն, Վենետիկ, 1855, էջ 7:

ստեղծագործական մտահղացմամբ տեղայնացվել և կապվել է Հայկական լեռնաշխարհի հետ: Պատկերվել է տապանից ելած և ետ վերադարձող աղավնին և Արարատի վրա կապված ծիածանը, որը խորհրդանշում է Աստծո հաշտության ուխտը մարդկության հետ: Արարատի դիմաց հանգչում են հին Հայաստանի փառքի խորհրդանշանները՝ իշխանության գավազանը, դրոշները և արքայական թագը, որը հիշեցնում է Տիգրան Մեծի հատած դրամներին պատկերված թագը:



Նկ.1. «Տեղագիր Հայոց Մեծաց», 1855 թ., էջ 7

Նկարի կենտրոնում, պատվանդանին կանգնեցված խաչի վրա Քրիստոսի անձեռակերտ պատկերն է, որը Աբգար թագավորի միջոցով խորհրդանշում է Հայաստանի առաջին քրիստոնյա պետություն լինելը՝ առաջին քրիստոնյա թագավորով: Պատվանդանին հենված մուսան երգում է հին Հայաստանի փառքը: Հիշենք, որ Ալիշանը բանաստեղծությունների մեջ ընդունված ձևով մի քանի անգամ դիմում է մուսային և հայոց տավիղին կամ բամբիռին: Ալիշանին համահայկական հռչակ բերած երրորդ՝ «Հայրունի» հատորն սկսվում է «Ի բամբիռն Հայկազնի» բանաստեղծությամբ¹:


Պատահական չէ, որ Չարենցը «Մահվան տեսիլ» պոեմում այսպես է նկարագրում Ալիշանին.

¹ Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Նուագը, հտ. Գ, Հայրունի, Վենետիկ, 1858, էջ 5:

Եվ ձեռքին բռնած նա ունի մի հսկա արծաթյա տավիղ¹:

Բարձրացող խաչքարը բաժանարար գիծ է դարձել Հայաստանի նախաքրիստոնեական և քրիստոնեական շրջանների միջև: Քրիստոնյա Հայաստանն են խորհրդանշում վանքը և հայկական գորգի վրա դրված ձեռագիր մատյանն ու տպագիր գիրքը: Իսկ վերևում պատկերված լուսնի մահիկը, հավանաբար, ներկայացնում է Օսմանյան կայսրությունը:

Այս գրքում գտնվող երկրորդ նկարը, որին կցանկանայինք անդրադառնալ, 70-րդ էջում գտնվող՝ «Տեսիլ Մասեաց ի բերդէն Երեւանայ» մակագրությամբ պատկերն է (Նկ. 2): Այն, ինչպես նկարի խորագիրն է հուշում, աշխարհագրական տվյալ տարածքը մատնանշող գործառույթ ունի: Այլիշանը նշում է, որ գրքի տարբեր պատկերներ, այդ թվում և այս մեկը, վերցրել է ֆրանսիական ծագմամբ ճանապարհորդ, ճարտարապետ և հնագետ Ֆրեդերիկ Դյուբուա դը Մոնպերեի գրքից²:



Նկ. 2. «Տեղագիր Հայոց Մեծաց», 1855 թ., էջ 70

Արարատյան դաշտին և Երևանին վերաբերող բաժնում դրված այս նկարը, վերափորագրվելով և մակագրության փոփոխությամբ Հայաստանի ընդհանրացված պատկերի է վերածվում «Յուշիկը Հայրենեաց հայոց»-ի (Վենետիկ, 1869) առաջին հատորում՝ դրվելով տիտղոսաթերթից հետո և նախաբանից առաջ (Նկ. 3):

¹ Ե. Չաքենց, Երկերի ժողովածու, հտ. 4, Երևան, 1968, էջ 227:

² Տե՛ս Դ. Այլիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 5:



ԱՅՐԱՐԱՏՆԵԱՆ ԼԵՐԻՆԻ ԵՒ ԳԱՇՏ

Նկ. 3. «Յուշիկը Հայրենեաց հայոց», 1869 թ.

Նախաբանն իր հերթին սկսվում է հատուկ շարվածքով և գլխատառերով գրված «Հայրենիք» բառով, որով հիշյալ փորագրանկարը վերածվում է հայրենիքի հավաքական պատկերի: Նկարի վերին կենտրոնական մասում Արարատն է, ներքևում՝ Արարատյան դաշտը՝ Արաքս գետով, բարդիների պատկերներով, Արաքսի վրա գտնվող Տափերական կամուրջով, որով ձգվող ճանապարհին ուղտերի քարավանն է: Վերջինս իր հերթին խորհրդանշում է Հայաստանի՝ տարանցիկ ճանապարհների գտնվելը:

Նկարի ձախ կողմում երևացող բերդապարիսպը ներկայացնում է պատմական Արտաշատը, որը նշվում է առևտրական ուղիների քարտեզների վրա:

Այսպիսով, Արարատի և Արարատյան դաշտի հետ կապվող և տեղագրական գրեթե ճշգրիտ գծագրում ունեցող նկարը «Յուշիկ»-ների սկզբում շարադրանքի միանգամայն այլ համատեքստում ներկայացվում է որպես հայրենիքի հավաքական պատկեր:

Նման ընդհանրացումը պատահական չէր և կապվում է Ալիշանի այն ձգտման հետ, որով տեղագրական չորս հատորներից յուրաքանչյուրը սկսվում է տվյալ նահանգը ներկայացնող հավաքական պատկերով, որում արտացոլվում են նահանգի պատմությանը և մշակույթին բնորոշ տարրեր և աշխարհագրական ու տեղագրական ճշտությամբ հանդերձ այդ նահանգը բնութագրող տեսարաններ:

Ասվածը այժմ ցույց տանք տեղագրական հատորներից յուրաքանչյուրի սկզբնապատկերով:


Ալիշանի առաջին տեղագրական հատորը «Շիրակն» է, որը լույս է

տեսել 1881 թ.՝ 1877-1878 թթ ռուս-թուրքական երկրորդ պատերազմից հետո, երբ Շիրակի նկարագրվող տարածքը անցել էր ռուսական տիրապետության ներքո, և տեղի հայությունը այլևս ենթակա չէր ֆիզիկական բնաջնջման: «Շիրակի» մի շարք հատվածներից երևում է, որ Ալիշանը լավատեսությամբ էր լցված երկրամասի ապագայի հանդեպ: Որոշակի ակնկալիքներ ուներ, որ անգամ կվերաշինվեր Անին¹:

Գյումրիի մասին գրում է որպես իր ժամանակ կենդանի քաղաքի և ոչ թե անցյալի հիշատակի մասին²: Ալիշանի այս ըմբռնումը արտահայտվել է գրքի տիտղոսաթերթին հաջորդող սկզբնապատկերում:

Անհրաժեշտ է նշել, որ Ալիշանը տարբեր բնակավայրերի մասին գրելիս անցյալի ավերակների պատկերմանն էր դիմում այն դեպքերում, երբ ըստ ժողովրդագրական փոխվող վիճակագրության զգում էր, որ հայ ազգաբնակչությունը աստիճանաբար նվազում և փոքրամասնություն էր դառնում տվյալ տարածքում:

Բանաստեղծ գիտնականը Շիրակի անցյալն ու ներկան իրար միահյուսված պատկերելու բավականին ինքնատիպ ձև է ընտրել: Գրքի սկզբում Շիրակի նահանգի քարտեզն է, որի վերնի ձախ անկյունում եվրոպական քարտեզագրության հետևողությամբ ներկայացվում է քարտեզն ընդգրկող տարածքին բնորոշ հավաքական կերպարը (Նկ. 4): Քանի որ Շիրակը հռչակված էր հացահատիկի դաշտերով՝ Ալիշանը պատկերում է Շիրակի ոգին և ժամանակի աշխատավորուհու իդեալականացված կերպարը՝ մի ձեռքին խաչանիշ դրոշ, վրան «Շիրակ» գրված, իսկ մյուս ձեռքում և ոտքերի մոտ ցորենի խրձված հասկեր: Պատմաշունչ այս կերպարը կենդանությամբ է լցվում և տեղայնանում գրքի բուն շարադրանքի սկզբնաթերթում:



Նկ. 4. «Շիրակ», 1881 թ.

¹ Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 109:

² Նույն տեղում, էջ 98:

Շիրակը թեև պատմական հիշատակներով հարստագույն նահանգներից մեկն էր, ուր գտնվում էր նաև Անին, սկզբնականաբար, սակայն, գերիշխողը ոչ թե պատմական տեսարանն է, այլ կենդանի կյանքը (Նկ. 5):



Նկ. 5. «Շիրակ», 1881 թ., էջ 1

Պատմական հուշարձանները, կիսավեր կառույցները և Անիի բերդը, կարծես բնականաբար զարդ դարձած, գտնվում են պատկերի խորքում և ներկայացնում են անցյալը: Իսկ առջևի պլանում պատկերված ցորենի հունձքով զբաղվող մարդիկ, եզները և ցորենի կապերով ծանրաբեռն սայլը խորհրդանշում են Ալիշանի հույսերը՝ կապված Շիրակ աշխարհի հայ ազգաբնակչության արդար աշխատանքով ձեռք բերվելիք ունեցվածքի ապահովության և ֆիզիկական բնաջնջման վտանգից զերծ ապագայի հետ: Խաղաղ կյանքով ապրող երիտասարդությունն է ներկայացնում ցորենի հասկերի միջից երևացող մանգաղը ձեռքին երիտասարդը, ով, ժպիտը դեմքին, նայում է խոտերի մեջ հանգստացող աղջիկներին:

Շիրակի պատկերումը հիշեցնում է Խորենացու՝ այս նահանգի մասին ասված հետևյալ տողերը՝ «... ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ և բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք»¹:

¹ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխտ. Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 40:

Հայկական աղբյուրներում Կիլիկյան Հայաստանի հյուսիս արևելյան շրջանը կոչվում է Լեոնային Կիլիկիա (Գահ Կիլիկիոյ), հարավարևելյան ծովամերձ շրջանը՝ Դաշտային Կիլիկա, արևմտյան շրջանը՝ Քարուտ Կիլիկիա: Եվ քանի որ Կիլիկիայի հայկական թագավորությունը ընդգրկում էր առավելապես Լեոնային Կիլիկիան, ուստի այստեղ անգամ պատկերային չափազանցվածությամբ ներկայացվում են լեոները:

Նկարում կենտրոնական դիրք են գրավում առյուծը և եզրը, որի վրա նստած է մի կին: Եզի պարանոցը պատված է ծաղկահյուս շղթայով, իսկ կինը թագ է կրում: Ալիշանը այստեղ անդրադարձել է հին հունական դի-
ցաֆանական պատումներից մեկին՝ Եվրոպայի առևանգմանը: Ինչպես
հայտնի է, Եվրոպան Փյունիկիայի արքայի դուստրն էր: Ջեսը սիրահար-
վում է նրան և գեղեցիկ, ճերմակ ցուլի կերպարանափոխվելով՝ հայտնը-
վում է դաշտում, որտեղ Եվրոպան և իր նաժիշտները ծաղիկներ էին
հավաքում: Եվրոպան, հիանալով ցուլի գեղեցկությամբ, նստում է նրա

վրա և զարդարում իր հավաքած ծաղիկներով և ծաղկաշղթայով: Այդ պահին Ջևսը նետվում է դեպի ծովը և լողալով Եվրոպային հասցնում է մինչև Կրետե կղզի¹: Այս պատմությանը անդրադառնալով՝ Ալիշանը գրում է, որ Ջևսը առևանգված Եվրոպային բերում է գրեթե Կիլիկիայի տարածք²: Այդպիսով նրան համարում է Կիլիկիայի նախահայկական շրջանի խորհրդանշներից:

Տարբեր դարաշրջանների գեղանկարիչների սիրելի թեմաներից է եղել Եվրոպայի առևանգումը: Նա հիմնականում պատկերվել է ծովի ջրերում, կատարվածի անսպասելիությունից ապշած և Ջևսի ոսկե եղջուրներից բռնված: Չնայած որ Ալիշանի փորագրանկարում նրանք պատկերված են ոչ թե Միջերկրական ծովում լողալիս, այլ Լեոնային Կիլիկիայի համայնապատկերում, այնուամենայնիվ տեսնում ենք, որ Եվրոպան դարձյալ բռնել է ցուլի եղջուրից: Եվրոպայի թագը հուշում է նրա արքայական ծագման մասին:

Նույն այս նկարը առանց կնոջ, գտնում ենք բուն շարադրանքի սկզբնաեջում, որում Ալիշանը ներկայացրել է Կիլիկիայի հավաքական և ընդհանրացված պատկերը (Նկ. 7): Նկարի վերին աջ անկյունում Լեոնային Կիլիկիան է իր բերդամրոցներով, իսկ լեռների փեշերին քաղաքներն են, որոնցից դեպի ձախ տարածվում է Դաշտային Կիլիկիան: Երկրի ավերը ողողում են Միջերկրականի ջրերը:



Նկ. 7. «Սիսուան», 1885 թ., էջ 1

¹ Кун Н., Легенды и мифы древней Греции, Москва, 1954, стр. 120-122.

² Ղևոնդ Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 38:

Նկարի խորքում տեսնում ենք մայր մտնող արևը, որը հավանաբար խորհրդանշում է Կիլիկիայի հայկական թագավորության մայրամուտը:

Երկրորդ անգամ առյուծի և ցուլի պատկերին հանդիպում ենք այս նկարի ստորին ձախ անկյունում, թեև դրանք տարածաշրջանին բնորոշ կենդանիներ չեն: Սակայն ինչո՞վ է պայմանավորված դրանց հանդես գալը այս նկարներում: Այդ հարցի պատասխանը գտնում ենք գրքի առաջաբանում և հաջորդող էջերում: Ալիշանը, գրելով Կիլիկիա բառի ստուգաբանության մասին, ասում է, որ այն բխեցվում է նաև հունարեն *Խիլիկ* բառից, որը նշանակում է գոմեջ: Հետևաբար Կիլիկիա բառը ստուգաբանվել է նաև որպես գոմեջի երկիր¹: Ալիշանը միաժամանակ գրում է, որ Տաբսոնում հատված դրամների վրա ցուլ է պատկերված եղել²:

Կիլիկիայի Հայկական թագավորության ամենանշանավոր թագավորներից էր Լևոնը, ով Լևոն Երկրորդ է անվանվում, թեև իրականում որպես թագավոր առաջինն է: Նա Լևոն Երկրորդ է համարվում, որովհետև Կիլիկիայի հայկական իշխանապետության իշխան Լևոնը այնպես էր հռչակված, որ նրան Լևոն Առաջին են անվանել: Ինչպես գիտենք՝ Լևոն նշանակում է առյուծ: Կիլիկյան պատմիչները գրում են. «Լևոն, որ եւ առիւծ ասի»:

Ալիշանը, վկայակոչելով հույն պատմիչներին, ասում է, որ նրանք Լևոն Երկրորդի Լեոնային Կիլիկիայից դաշտային Կիլիկիա իջնելու և նվաճելու մասին գրում են. «Իբրև առիւծ ամեհի ելեալ ի մորեաց՝ յարձակէր յընդարձակ դաշտագետինն Կիլիկիոյ»³: Ալիշանի Ղևոնդ անունը նույն Լևոնն է Լ-Ղ լծորդմամբ, ուստի Ալիշանը ևս ոգևորությամբ է գրում Լևոն անվան առյուծ նշանակելու մասին:

Այսպիսով, ցուլը խորհրդանշում է Կիլիկիայի նախահայկական շրջանը, իսկ առյուծը՝ հայկականը: Ալիշանը այս ըմբռնումը խտացված ձևով արտահայտել է՝ բերելով հետևյալ քանդակի նկարը, ուր առյուծը իր մագիլների մեջ է առել եզան գլուխը (Նկ. 8): Նկարի մակագրությունում ասվում է. «Կիլիկիա նուաճեալ»⁴: Ալիշանը այս նկարը դրել է գրքի այն տեղում, ուր ավարտում է Կիլիկիայի նախահայկական շրջանի մասին գրելը և սկսում է գրել Ռուբինյանների Կիլիկիայում հաստատվելու մասին:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 39:

³ Նույն տեղում, էջ 50:

⁴ Նույն տեղում, էջ 42:



Նկ. 8. «Միտուն», 1885 թ., էջ 42

Տեղագրական հատորներից երրորդը «Այրարատն» է, որը հրատարակվել է 1890 թ.: Այստեղ առաջաբանից հետո, հաջորդ էջում պատկերված է Նոյի իջնելը Արարատ լեռից¹ (Նկ. 9): Ողջ նկարով մեկ տարածված են Արարատի վերալաց ժայռերը և գագաթին հանգրվանած Նոյան տապանը: Տապանից դուրս եկող կենդանիները բաժանված են երկու խմբի. Եսայու մարգարեության «Եւ ճարակեսցէ գայլ ընդ գառին... եւ առիւծ իբրն զեզն յարդ կերիցէ» (Եսայի ԺԱ. 6-9) խոսքերի համաձայն՝ գիշատիչ և ընտանի ցամաքային կենդանիները, սողունները՝ առյուծի առաջնորդությամբ, միասնական և համերաշխ կերպով իջնում են լեռնի վար, իսկ ազատություն ստացած թռչունները ճախրում են դեպի վեր:



Նկ. 9. «Այրարատ», 1890 թ.

¹ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 1: 559

Կենդանիների կողքին, ժայռերից մեկի վրա պատկերված են 7 հոգի: Նրանք Նոյի ընտանիքի անդամներն են՝ Նոյի կինը, նրա երեք որդիներն իրենց կանաց հետ:

Երևում են ջրհեղեղի դեռ չնահանջած ջրերը և դրանց մեջ գտնվող մարդկային դիակները: Քարերին ընկած մարմիններից մեկը հոշոտում է անգղը: Այդ տեսարանին է ապշած նայում Նոյ նահապետը, ում վրա երկնքից իջնում է Աստծո լույսը, ի նշան մարդկության հետ Աստծո կնքած հաշտության, որի դրսևորումն է ծիածանի աղեղը (Հմմտ Ծննդ., գլ. Թ 12-17): Նոյի գլխավերևում թռչում է աղավնին:

Տեղագրական հատորներից վերջինն է «Միսականը», որը լույս է տեսել 1893 թվականին: Սյունյաց նահանգի տեղագրությանը նվիրված հատորը Ալիշանը վերնագրել է «ի յիշատակ Միւնիքի Միսական նահապետի»: Ինչպես նախորդ հատորներում, «Միսականում» նույնպես առաջաբանին հաջորդում է մեկէջյա մի փորագրանկար, ուր ներկայացված է Սյունիքի անցյալը և ներկան¹ (Նկ. 10): Սյունիքը, իր աշխարհագրությանը համապատասխան ձևով, պատկերված է որպես լեռնային երկրամաս: Ալիշանը գրքի առաջաբանում Սյունիքի լեռնային լինելը բնորոշում է հետևյալ տողերով՝ «կոյտ կոյտ կոհակացեալ եւ բրգաձեւ բարձամբքն»: Ալիշանը ընդգծում է նաև լեռնային երկրների բնորոշ սահանքներով իջնող լեռնային գետերը:



Նկ. 10. «Միսական», 1893 թ.

¹ Ղ. Ալիշան, Միսական, Վենետիկ, 1893, էջ 1:
560

Նկարի խորքում պատկերված եկեղեցին, ամենայն հավանականությամբ, ներկայիս Սյունիքի մարզի Միսիան քաղաքում գտնվող Սյունի վանքն է, որը կոչվել է նաև Սբ. Գրիգոր Լուսավորիչ (հետագայում վերանվանվել է Սբ. Հովհաննես): Ըստ ԺԳ. դ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ վանքը հիմնադրել է Սյունյաց Վարազդուխտ իշխանուհին¹: Եկեղեցին Է. դ. վերջին քառորդում հիմնովին վերակառուցել են Կոհագատ իշխանն ու Սյունյաց Հովսեփ Ա. եպիսկոպոսը (670-689)՝ Թեոդորոս Սիոն վանականի օժանդակությամբ²: Ստեփանոս Օրբելյանը այս վանքն իր նշանակությամբ համարել է Սյունիքի վանքերից երրորդը:

Կարելի է ենթադրել, որ նկարի կենտրոնում՝ բլրակի վրա, Ալիշանը պատկերել է հենց վանքի մեկենաս իշխանուհի Վարազդուխտին: Նա իշխանուհուն վայել շքեղ հանդերձներ և զարդեր է կրում և ունի հպարտ կեցվածք: Իշխանուհին ձեռքով դեպի իր կառուցած վանքն է ցույց տալիս և կարծես ինչ որ բան է պատմում: Սյունյաց տիրուհին եկեղեցին ցույց տվող կեցվածքով հիշեցնում է նվիրատվական բարձրաքանդակները, ուր պատկերվում էին եկեղեցին և եկեղեցու բարերարը: Նրան լսողների շարքում են մի քանի հասարակ գյուղացիներ և մի հոգևորական: Հավաքվածների մեջ պատկերված է քնար նվագող մուսան:

Ինչպես «Տեղագիր Հայոց Մեծաց»-ում, այստեղ նույնպես գետնին են խոնարհված սուրբ և վահանը, եպիսկոպոսական գավազանը, խույրը և բուրվառը: Գետնին դրված բոլոր այդ իրերի մեջ երևում է արծաթե կազմով մի փակ ձեռագիր, որի միջից, սակայն, արմատներ են դուրս գալիս և տարածվում հողի մեջ: Ալիշանը այդպիսով ցանկացել է ցույց տալ հայոց հողի դարավոր կապվածությունը հայկական մշակույթի և կրոնի հետ:

Հին վանքը և անտառախիտ բնությունը, անցյալի դեմքերը և ժամանակի գեղջուկ բնակիչները սյուժետային բնորոշ հանդերձներով խորհրդանշում են երկրամասի պատմական անցյալը և կենդանիորեն շարունակվող ներկան:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Ալիշանի տեղագրական հատորների սկզբնաթերթերի փորագրանկարները թեև գեղարվեստական բարձր ձևավորում են հաղորդում գրքի էջերին, սակայն միայն գեղագիտական նպատակով և գրքարվեստի թելադրանքով չի որ կատարվել են, այլ

¹ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, աշխատ. Ա. Ա. Աբրահամյանի, գլ. ԿԲ, Երևան, 1986, էջ 281:

² Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Հասրաթյան Մ. «Սյունի վանք» բառահոդվածը, Հայկական հանրագիտարան հրատ., Երևան, 2002, էջ 912:

խտացված ամփոփումն են Ալիշանի ասելիքի և պատմահայեցողության, ուր բնապատկերներն իսկ պատմականանում են և անցյալի գծեր ձեռք բերում:

Պատահական չէ, որ ոչ միայն այս սկզբնաթերթերում, այլև հաջորդող շարադրանքում լուսանկարներից ավելի գերակշռում են բանաստեղծ-գիտնականի մտաընկալման քուրայով անցած փորագրապատկերները, որոնց բուն իմաստին և էությանը հասու լինելու համար պետք է թափանցել ալիշանյան էջերի և տողերի խորքը:

ШОГАКАТ ДЕВРИКЯН

РЕЗЮМЕ

ОФОРМЛЕНИЕ ПЕРВЫХ СТРАНИЦ ТОПОГРАФИЧЕСКИХ ТОМОВ ГЕВОНДА АЛИШАНА

Ключевые слова: гравюра, география Армении, потоп, Ноев ковчег, Арарат, Киликия, Сюник, Ширак.

Первые страницы томов Гевонда Алишана, посвященных разным регионам Армении начинаются с гравюр, созданных по его замыслу. Каждый из них рисует перед читателем обобщенную историю и культуру данного региона.

На гравюре первой страницы тома «Ширак», изданного в 1881 г., изображены исторические памятники и пшеничные поля Ширака, упоминаемые Хоренаци, а так же гарантированная мирная жизнь региона в составе Российской Империи.

Изложение материала в томе «Сисван» (1885 г.), посвященного Армянского Киликие, в связи с проводимой турецкими властями политикой истребления армянского народа, ведется автором боле сдержано и имеет подчеркнутую историческую направленность. Исторически мотив выражен и в первых двух гравюрах книги, где привлекают внимание изображения быка и льва. Бык символизирует древнегреческое название Киликии, а лев- по латинской транскрипции гевонд- символ Армянского Киликийского государства.

Первая страница тома «Айрарат» (1890 г.) оформлена гравюрой о всемирном потопе, передает идею возрождения жизни человечества с Армении, у подножия Арарата.

Поскольку Сюник, как и Ширак и Айрарат, находился под властью России без угрозы физического существования, первая страница «Сисакана», изображает богатое историческое прошлое Сюника с горным ландшафтом и продолжающаяся жизнь, с изображением патриархов Сюника и крестьян в сельских костюмах.

Изучение первых страниц топографических томов Алишана показывает, что они не только придают высокое художественное оформление страницам книги и не сделаны только в эстетических целях, но и представляют суть исторического видения Алишана, когда даже пейзаж становится историческим, приобретая черты прошлого.

**THE DECORATION OF THE FRONTISPIECES OF GHEVOND
ALISHAN'S TOPOGRAPHIC VOLUMES**

Abstract

Key words. engraving, geography of Armenia, flood, Ararat, Cilicia, Syunik, Shirak.

The frontispieces of Gevond Alishan's volumes dedicated to different states of Armenia, begin with presenting the engravings of this state collectively and according to his formed idea. Each of them outlines the collective history and culture of the area for the reader.

Alishan's first topographic volume is "Shirak", which was published in 1881. The engraving of the frontispiece depicts wheat ears and in the background there are historical monuments, which is connected to the historical past of Shirak by a wheel and the wheat fields mentioned by Khorenatsi and the contemporary life of the state under the Russian govern by the guarantees of the life assurance.

In the "Sisvan" (1885) dedicated to the Armenian Cilicia, concerning with the policy of Turkish authorities directed to the physical extermination of the Armenians, the recital is more gloomy and has a historically emphasized direction. It is also expressed in the pictures of the first two pages of the book, which mainly represent the past. In both pictures the images of a bull and a lion attract attention. The Bull is the ancient Greek name associated with Cilicia, and the lion, in Latin called ghevond, symbolizes the Armenian state of Cilicia.

"Ayrarat" (1890) begins with the image of the flood, symbolizing the idea of repairing life, starting from Armenia, at the foot of Ararat.

As Syunik, like the provinces of Shirak and Ayrarat was also under Russian rule without the threat of annihilation, so the frontispiece of "Sisakan" depicts the rich historical past of Syunik with mountainous landscape and life going on next to the patriarchs of Syunik and inhabitants in rural costumes.

The frontispieces of Alishan's topographic volumes give a high artistic decoration to the pages of the book, they however are not only made for aesthetic purposes, but to demonstrate Alishan's point of view, mentality and understanding of the history, where the landscape becomes historical and acquires some traces of the past.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ալիշան Ղ., Նուագը, հտ. Գ, Հայրունի, Վենետիկ, 1858, 298 էջ:

Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, 590 էջ:

Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881, 192 էջ:

Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, 563 էջ:

Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, 592 էջ:

Ալիշան Ղ., Տեղագիր հայոց մեծաց, Վենետիկ, 1855, 105 էջ:

Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու, հտ. 4, Երևան, 1968, 625 էջ:

Մովսեսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխտ. Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, 396 էջ:

Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, աշխտ. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, 616 էջ:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Հասրաթյան Մ. «Սյունի վանք» բառահոդվածը, Հայկական հանրագիտարան հրատ., Երևան, 2002, էջ 912:

Кун Н., Легенды и мифы древней Греции, Москва, 1954, 451 стр.

ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր

dakertmenjyan@gmail.com

Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ «ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԷԶԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Հ.Ղևոնդ Ալիշան, Բազմավեպ, Ճարտարապետություն, տեղագրություն, տեսություն, Սիսական, Սիսուան, Այրարատ, Շիրակ, Աղվանք, Ղարաբաղ, Նախիջևան:

Հ. Ղևոնդ Ալիշանը (այսուհետև Ղ.Ալիշան) հայագիտության հանրագիտարանային դեմքերից է: Նա և՛ բանաստեղծ է, և՛ հմուտ բանասեր, և՛ պատմաբան, և՛ տեղագիր, և՛ հայտնի թարգմանիչ, նա եղել է նաև «Բազմավեպի» երկրորդ խմբագիրը 1848-1851 թթ.:¹ Ղ.Ալիշանի գործերի համակարգումը նաև հայկական Ճարտարապետության տեսության հարց է, որ լրացնում է բնակավայրերի և հուշարձանների տեղագրության տվյալները: Ներկայացվող հաղորդման նպատակն է վերլուծել Ղ. Ալիշանի՝ «Բազմավեպում» հրատարակված տեղագրական հոդվածների տեղն ու նշանակությունը նրա ժառանգության մեջ: Այդ կապակցությամբ գիտական խնդիրներ են՝ բացահայտել Ղ. Ալիշանի տեղագրական հրատարակությունների ծրագիրը, մեթոդը, գործընթացն ու արդյունքները: Մինչև օրս ալիշանագիտության մեջ եղել են բազմաթիվ բովանդակային և ցանկագրական աշխատություններ, բայց այդ աշխատությունների հրատարակման ընթացքը ճշտող հետազոտությունը, հատկապես հոդվածների կապակցությամբ դեռևս պետք եղած ուշադրության չի արժանացել, որ գոնե հայկական Ճարտարապետության տեսության կտրվածքով բացակայում է:

Մեթոդական առումով Ալիշանի տեղագրական աշխատությունների հենքը, որքան էլ 19-րդ դարի քաղաքական իրավիճակով է պայմանավորված, այնուամենայնիվ այն հիմնականում հետևում է Անանիա Շիրակացու՝ «Աշխարհացոյց»-ի բաժանմամբ: Փաստորեն ներառում է Պատմական Հայաստանի 15² նահանգները, հավելյալ 5 աշխարհագրական

¹ Բազմավեպի խմբագրի պաշտոնը առավելագույն եռամյա գործունեություն է, բացառելով Հ.Աթանաս Տիրոյանի (1883-1888 թթ.), Հ.Ղևոնդ Տայանի (1921-1927 թթ.) և Հ. Եղիա Փեչիկյանի (1930-1939 թթ.) համեմատաբար երկար պաշտոնավարման տարիները, որոնք կրկնակի կամ եռակի ավելի են:

² Ըստ «Աշխարհացոյցի» Մեծ Հայքը ունի հետևյալ նահանգները՝ Բարձր Հայք, Ծովք, Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորձայք, Պարսկահայք, Վասպուրական, Սյունիք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Գուգարք, Տայք, Այրարատ: Գավառների հետ տես Վիքիպեդիա, «Աշխարհացոյց», [https://hy.wikipedia.org/wiki/ Աշխարհացոյց](https://hy.wikipedia.org/wiki/Աշխարհացոյց):

տարածքներ ևս, ինչպես՝ Կիլիկյան հայկական թագավորության տարածքը, Հայաստանից դուրս ծավալված հայկական գաղթավայրերը¹, ինչպես նաև՝ Աղվանքը, Փոքր Հայքը, Նախիջևանը: Այնպես որ Ղ. Ալիշանի աշխատությունների աշխարհագրական սահմանները ներառում են 20 տարածքներ:

Ղ. Ալիշանի՝ նշված տարածքների տեղագրական ուսումնասիրությունները բովանդակային առումով կարելի է բաժանել ստորև ուսումնասիրվող երեք տեսակի: Առաջինը տեղագրությունների ներածական բաժիններն են: Երկրորդը տեղագրական գործերի հիմնադրույթների հետևողությամբ «Բազմավեպում» հրատարակված հոդվածները կամ հաղորդումներն են: Երրորդը Պատմական Հայաստանի առանձին նահանգներին նվիրված տեղագրական հատորներն են:

1. Ղ. Ալիշանի տեղագրությունների՝ պատմական և աշխարհագրական սահմաններով պայմանավորված աշխատությունները թվով հետևյալ երկուսն են.

1.1. «Նշմարք և նշխարք Հայաստան աշխարհի» աշխատությունը, որ Ղ. Ալիշանի տեղագրությունների աշխարհագրական ուղեցույցն է: Այն քարտեզի վրա Հայաստանով, հարակից շրջաններով և միջնադարյան կարավանային մայրուղիների ծիրով կատարված երևակայական ճանապահորդություն է, որ, սկսելով Վոսփորից, ավարտվում է Կարսում:² Փաստորեն գիրքը, նախքան հրատակությունը, 24 մասից կազմված հոդվածաշարի ձևով լույս է տեսել «Բազմավեպում»³:

1.2. «Տեղագիր Հայոց Մեծացը»⁴, Ղ. Ալիշանի տեղագրությունների պատմաաշխարհագրական հիմնաքարն է: Այն հետևելով Հ. Ղուկաս ԻՆՃԻՃՅԱՆԻ՝ բնակավայրերի փաստագրման նոր շրջանի իրադրությամբ

¹ Տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիո, Վենետիկ, Մք Ղազար, 1896.

² **Ղևոնդ Ալիշան**, Նշմարք և Նշխարք Հայաստանի, Վենետիկ, 1870:

³ Ա/ Վոսփորեն դեպի հունական ափերը Սև ծովի, հետո՝ Փոքր Ասիա, Միջերկրական «Բազմավեպ» (այսուհետև կնշվի հոդվածի միայն տարին և էջերը) 1862, էջ 65-71): Բ/ Մինոպ և Գ/ Տրապիզոն (1862, էջ 97-102): Դ. Տրապիզոնից դեպի Էրզրում մայրաքաղաք, Ե- Գյումշհանե, Բաբերդ, Զ- Վարզուհան (1862, էջ 129-132): Է. Բաբերդ, Ը. Բաբերդեն Կարին, Թ. Հազարակն (1862, էջ 161-165): Ժ. Կարնոյ դաշտ, Ժա. Կարնոյ գավառ կամ Բարձր Հայք, Արծն (1862, էջ 193-198): ԺԲ. Կարնո քաղաքի մոտերքը և Կարնո նկարագրականը (1862, էջ 225- 231): ԺԴ. Մեկնում Կարնոյ Դավրիժու դռնէն դեպի Բասեն, ԺԵ. Հասանքալե, ԺԶ. Յովհան վանք կամ Ակսիգումս, ԺԷ Չոպան Կեղարիսու (1862, էջ 257-262): ԺԸ- Ավնիկ, ԺԹ-Իշխու կամ Իշխս (1862, էջ 289- 292): Ի-Ստորին Բասենա կամ Մժնկերտ (1862, 321-324): ԻԱ-Կարս Կարսից մինչև Արփաչայ ԻԲ և ԻԳ մասերը (1862, էջ 353-357):

⁴ **Հ. Ղ. Ալիշան** «Տեղագիր Հայոց Մեծացը», Վենետիկ 1855:

է, որտեղ Հայաստանը բաժանված է Ռուսական, Օսմանյան կայսրությունների և Պարսկաստանի միջև: Ինչպես երևում է «Տեղագիր Հայոց Մեծաց»-ի բովանդակության ստորև ներկայացված սխեմայից, Ղ. Ալիշանի առանձին հատորներով հրատարակված տեղագրությունները հիմնականում Ռուսաց Հայաստանի տարածքից են, ներառյալ՝ Սիսականը (1893թ.), Այրարատը (1890), ինչպես նաև դրան մաս կազմող սահմանային Շիրակը (1881թ): Նշվածների թվին ավելի ուշ ավելացել են նաև Նախիջևանն ու Ղարաբաղը:

Տեղագիր Հայոց Մեծացի բովանդակությունը (անունների ուղղագրությունը ինչպես Ղ.Ալիշանի մոտ)		
1.Օսմանյան Հայաստան	2.Պարսիկ Հայաստան	3.Ռուսաց Հայաստան
Ա. Ղարս գավառ (ներառյալ Անի քաղաքը հուշարձաններով)	Ա. Հայկական նահանգ պարսից	Ա. Մուսխեթ կամ Վիրահայք
Բ. Էրզրում նահանգ (Բաբերդ, Համշեն-Արդուն-Արտանուջ, Երնջակ-Կամախ)	Բ. Ատրպատական նահանգ	Բ. Հայկական նահանգը Այրարատ, Էջմիածին, Երևան, Գառնի,
Գ. Խարբերդ (Արդնի, Ակլ)		Գ. Գեղարքունի, Սոթք-Վայոց ձոր, Նախիջևան, Գանձակ
Դ. Դիարբեքիր նահանգ		Դ. Գարապաղ կամ Շուշի, Շաքի Շիրուան
Ե. Գավառ Մուշ և Բաղէշ, Խլաթ-Մալազկերտ.		Ե. Շեքի նահանգ
Զ. Պայազիտ գավառ		Զ. Շիրուան նահանգ
Է. Վան նահանգ (Արձկէ-Արձէշ-Վան)		Է. Թալիշ նահանգ
Ը. Քյուրտիստան (Մոկք-Քյուրտիստան)		Ը- Պաքու նահանգ
		Թ. Քուպա նահանգ
		Ժ. Դարբանտ

Ղ.Ալիշանի՝ «Բազմավեպում» հրատարակված հոդվածները կամ հաղորդումները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը ընդգրկում է այն հոդվածները, որոնք, մշակում անցնելով «Բազմավեպում», հետագայում տեղ գտան Ալիշանյան ամբողջական մեծ աշխատություններում: Մինչդեռ երկրորդ խումբը ընդգրկում է «Բազմավեպում» հրատարակված, բայց իրենց պատկանած նահանգներով առանձին հատորների չվերաճած հոդվածները: Առաջին խմբի հոդվածները, արտա-

ցոված լինելով սույն հաղորդման երրորդ մասում, այստեղ առանձնապես կանոնադաշտանք երկրորդ խմբի հոդվածներին:

Ինչպես երևում է վերևում բերված աղյուսակից, այստեղ ընդգրկված հուշարձանները առանձնապես Օսմանյան Հայաստանի տարածքներից են, որոնց ուսումնասիրությունը «Բազմավեպի» էջերից այն կողմ չի անցել: Ուղղակի Շիրակի կամ Կարսի գավառի տարածքները, սահմանակից լինելով Ռուսական Հայաստանին և ընդգրկված լինելով Այրարատի նահանգի կազմում, թեկուզ եղել են Օսմանյան Հայաստանի կազմում, արտացոլվել են Շիրակի հատորում: Մինչդեռ Օսմանյան Հայաստանի մյուս տարածքները Փոքր Հայք, Բարձր Հայք, Վասպուրական ու Տուրքերան նահանգներով (տես աղյուսակը), մնացել են Հայոց Մեծացի սահմաններում և ամբողջական հատորների վերաճելու բախտը չեն ունեցել: Լավագույն դեպքում դրանք որոշ հոդվածներով արտահայտվել են միայն «Բազմավեպում», ինչպես օրինակ Ծոփքը¹, հայկական գաղթավայրերի և հարակից տարածքների մի շարք հուշարձանները, ինչպես օրինակ «Պատմություն Կաֆայի» տեղագրությունը, «Վերափոխման եկեղեցին» և այլն²: Այս առումով առանձնապես ուշագրավ է «Բազմավեպում» տպագրված Դ. Ալիշանի՝ «Աղվանքին» նվիրված հոդվածաշարը³: Այն, մնալով անտիպ, «Բազմավեպում» հոդվածի ձևով հրատարակվել է հետմահու:

Դ. Ալիշանի ամբողջական տեղագրական հատորներով հրատարակված աշխատությունները . այս հրատարակությունները, ըստ էության տարբերակվում են մեծ գիտնականի կենդանության տարիներին տպագրված, ինչպես նաև հետ մահու լույս տեսած գործերից: Հ. Դ. Ալիշանի հրատարակված տեղագրական հատորներից Կիլիկյան ուսումնասիրությունները կամ «Միսուանը» համառոտակի և հիմնադրույթներով՝ մինչև գիրք դառնալը ներկայացված է «Բազմավեպի» 1885 թ. չորրորդ համարում (տես՝ էջ 289-405): Իսկ «Միսականը» կամ Տեղագրություն Սյունյաց աշխարհին հատորը՝ նույնպես իր առանձին մասերով կամ հիմնահարցերով արտացոլված է «Բազմավեպ»-ի 1891 թ. 321-336 էջերում:

Ալիշանի ամենասիրված գործերից են Շիրակի տարածքի առանձին բնակավայրերին և հուշարձաններին նվիրված հոդվածները: Հատկապես այն Անիի մասով 1840-ականներին սկզբում արտացոլված լինելով «Բազմավեպում», այնուհետև տպագրվել են «Հայոց Մեծացում»: Բայց այն

¹ Տե՛ս՝ «Բազմավեպ», 1893թ, էջ 101-122:

² Տե՛ս՝ «Բազմավեպ» 1892թ, էջ 214-220:

³ Տե՛ս՝ «Բազմավեպ» 1972թ., էջ 343-356, 509-517 և այլն :

մինչև առանձին տեղագրական հատոր դառնալը կրկնակի մշակում են անցել «Բազմավեպում», ինչպես՝ Կարսը (1864թ, էջ 219-224, 249- 256), Անի (1864թ, էջ 280-287), Անիի Մայր տաճարը (1864թ, էջ 315-319), Նաղշլուն կամ Տիգրան Հոնենցի Ս.Գրիգոր եկեղեցին (1864թ, էջ 337-382) , Անիի մյուս եկեղեցիները (1865թ., էջ 58-65) և վերջապես՝ Հոռոմոսի վանքը (1865թ, էջ 119-125) և այլն:

«Այրարատում» իր վիճակներով լույս տեսած, բայց աշխարհագրությամբ չներկայացված նյութ է Նախիջևանը: Այն աշխարհագրական մասով Ալիշանի կողմից լույս է տեսել Բազմավեպի՝ 1892թ. համարներում, որ կրում է

«Աշխարհագրական, քաղաքական և գյուղատնտեսական ստորագրություն՝ Նախիջևանու, Որդուատու և Դարալաղըզի վիճակաց» վերնագիրը: Հոդվածաշարում ընդգրկվել են հետևյալ ենթաթեմաները՝ 1. Աշխարհագրական բնութագրումներ (տե՛ս՝ էջ 15-26): 2. Հարստությունք (տե՛ս՝ էջ 111- 116) : 3. Պարտիզագրություն (տե՛ս՝ էջ 157-164): 4. Զբաղմունք (տե՛ս՝ էջ 220-222, 261-271): 5. Արհեստներ (տե՛ս՝ էջ 278-290): 6. Ազգահամար (տե՛ս՝ էջ 409-412, 436-444), 7. Այլ կամ ժողովրդագրություն, վարժարանք, (տե՛ս՝ էջ 533-544) և այլն:

Ալիշանի վախճանվելուց հետո «Բազմավեպում» շարունակվում են հրատարակվել նրա գործերը: Հատկապես կարևորվում է Արցախի տագնապի տարիներին «Բազմավեպում» վերատպված գործերը. Այդ թվում են, վերևում նշված Նախիջևանի հետ նաև՝ «Տեղագրությունք Հայաստանի Արցախ»-ը ¹, 2.- «Ուտիք»-ը, ² և այլն:

Եզրակացություն,

Հ.Անոնյ Ալիշանի՝ Հայաստանի նահանգներին և հայկական գաղթավայրերին նվիրված տեղագրությունները այսօր ազգային ժառանգության նշանակություն ունեն: Շիրակը(1881), Այրարատը(1890), Միսականը (1893), Միսուանը (1899), Կամենից Տարեգիրքը (1896) և այլ գրքերը, հայկական հուշարձանագիտության, քաղաքաշինության և լանդշաֆտի ուսումնասիրության նվիրված դասական գործեր են: Մեթոդականորեն, դրանք մինչև հայկական բնակավայրերի և հուշարձանների ճարտարապետական փաստագրություններով հարուստ ամբողջական հրատարակություն դառնալը սկզբում՝ ներածական մակարդակով, ծրագրվել են «Տեղագիր Հայոց մեծաց»-ում (1855), «Նշմարք և Նշխարք Հայաստան աշխարհի»-ում (1870) և այնուհետև էսքիզային սկզբունքով կամ հոդվա-

¹ «Բազմավեպ» 1988 թ, էջ 228-277 և 1989թ., էջ 186-221:

² «Բազմավեպ» 1990թ էջ 73-101, 346-366. 1991, էջ159-174, 403-417 և 1992թ, էջ 163-201:

ծաշարերով սկզբում արտացոլված են «Բազմավեպում», հետո նոր վերածվել են ամբողջական հատորների: Նկատելի է, որ տեղագրական հատորների վերածված գործերը բացարձակապես Ռուսական Հայաստանի տարածքներից են: Մինչդեռ, բացառությամբ Շիրակի, Օսմանյան Հայաստանի նահանգների տեղագրությունները, չվերաճելով առանձին հատորների, որպես հոդվածներ մնացել են «Բազմավեպի» էջերում:

Դ. Ալիշանի «Բազմավեպում» լույս տեսած տեղագրական հոդվածները, հրատարակությունների մի փունջ են, որոնք անմիջական շարունակությունն են կազմում վերևում նշված հատորների: Բարձր Հայքի (1860-1870), Նախիջևանի (1892), Կաֆայի (1892), Ծոփքի (1893), Աղվանքի (1972) և Արցախի (1988, 1993) վերաբերյալ «Բազմավեպում» հրատարակված հոդվածաշարերը հետագա հետազոտությունների ուղեծրերն են, որոնք ընթացան և ընթանում են հայոց ետ-Ալիշանյան տեղագրական ուսումնասիրությունների ժամանակաշրջանում:

ДАВИД КЕРТМЕНДЖЯН
Доктор архитектуры, профессор

РЕЗЮМЕ

СТАТЬИ ГЕВОНДА АЛИШАНА ОБ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЕ НА СТРАНИЦАХ “БАЗМАВЕПА”

Ключевые слова: Гевонд Алишан, “Базмавеп”, архитектура, топография, теория, Сисакан, Сисуан, Айрарат, Ширак, Агванк, Карабах, Нахиджевань.

Статьи Гевонда Алишана, касающиеся его топографических исследований в областях Армении, а также на территориях армянских колоний, сегодня приобрели значение национального достояния. Ширак (1881), Айрарат (1890), Сисакан (1893), Сисуан (1899), Каменец Ежегодник (1896) и др. представляют собой классические образцы трактатов, касающихся армянского памятниковедения, градостроительства, а также исследований армянского ландшафта. До того как стать изданием, богатым полноценной документацией касательно армянских поселений и памятников, они были запланированы в качестве введений: “Топонимических армянских земель” (1855), “памятники Армении” (1870); затем были представлены серией статей в “Базмавепа”, и лишь потом уже были обобщены в сборнике сочинений. Замечено, что в полном сборнике сочинений нашли отражение топографические исследования касающиеся территорий лишь Восточной Армении (Российской Армении), тогда как, за исключением Ширака, исследования территорий Османской Армении не были включены в многотомник и сохранились как статьи лишь на страницах “Базмавепа”.

Топографические исследования Г. Алишана, изданные на страницах “Базмавепа” являются прямым продолжением вышеупомянутых томов. Серия статей Высокая Армения (1860-1870), Нахиджевань (1892), Кафа (1892), Цопк (1893), Агванк (1972), Арцах (1988, 1993), представленные в “Базмавепа” явились путеводной направляющей для дальнейших топографических исследований в пост-алишановском временном пространстве.

ABSTRACT

GHEVOND ALISHAN ARTICLES DEALING WITH ARCHITECTURE WHICH ARE PUBLISHED IN THE JOURNAL OF BAZMAVEP

Key Words: F. Ghevond Alishan, Bazmavep, Architecture, topography, theory, Sisakan, Sisvan, Ayrarat, Shirak, Aghvank, Karabagh, Nakhijevan.

The toponymal works of Ghevond Alishan are in terms of national tradition for Armenian Architecture today. The books of “Shirak” (1881), “Ayrarat” (1890), “Sisakan” (1893), “Sisvan” (1899), “Kamenec’ Annals” (1896) and others are lading classical works of historical monuments, town planning and landscape studies. They passed certain methodical development process until the last publication as complete research. In fact at the beginning they programed as land marks of geographical and historical entities of Armenian culture in the content of brief studies such as “ Toponymal of Armenian lands” (1855), as well as “ landmarks of Armenia” (1870). Successively the main land marks approbated in the official journal of Bazmavep as series of articles by their main problems, objectives etc.. Notable that all above mentioned researches which were published as terminated books belong to the territories of Russian Armenia, as it was accepted to name at the XIX c.. But the other studies which are from Ottoman Armenian region remained as articles included in Bazmavep journal of studies.

The above mentioned toponymal articles published in Bazmavep journal by Ghevond Alishan, logically are the continuation of the published volumes. In reality the articles dedicated to the study of “Bardzr Hayk (Higher Armenia)” (1860-1870), “Nakhijevan region” (1892), ”Soplene” (1893), “Aghvank area” (1972), “Artsakh” region etc., were and are in the term of future armenologic studies conducting the toponymal-s of Architecture and town planning historical tradition of Armenia.

REFERENCES

1. F. Ghevont Alishan, Toponymal of Historical Armenia, Venice, San Lazaro, 1855(in Armenian)
2. F. Ghevond Alishan, Nshmark’, Venice San Lazaro, 1870. (in Armenian)
3. F. Ghevont Alishan, Shirak, Venice, San Lazaro, 1881. (in Armenian)
4. F. Ghevont Alishan, Ayrarat, Venice, San Lazaro, 1890. (in Armenian)
5. F. Ghevont Alishan, Sisakan, Venice, San Lazaro, 1893. (in Armenian)
6. F. Ghevont Alishan, Kamenic’ Annual book of Poland and Rominia, Venice, San Lazaro, 1896. (in Armenian).
7. S.T. Eremyan, Armenia according to “Ashkharhac’uyc’, Erevan, 1963. (in Armenian).
8. F. Alishan Gewond, Sissouan ou l'Arméno-Cilicie description géographique et historique. Venise-St. Lazare, 1899.
9. Digital Library of “Bazmavep” journal, Venice, Isle of San Lazaro. Website <https://www.worldcat.org/title/bazmavep/oclc/5723743/>.
10. Wikipedia: Ghevont Alishan: https://wiki2.org/en/Ghevont_Alishan

Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆԸ

Բանալի բառեր՝ Կցուրդարան, Ստեփանոս Սյունեցի, Սահակադուխտ, խազագրություն, մեղիզմատիկ երաժշտություն, «ուղիցի» «թափառող» եղանակներ:

Դժվար է Հ. Ղ. Ալիշանի գործունեության մեջ տարանջատել, ինչպես նշվում է հաճախ, ներքնատեսությունը փաստերի հավաքչության ու համադրման մեծ ծավալի աշխատանքից, ստեղծագործական ներշնչանքները գիտական-ձեռագրագիտական խորասուզումներից: Եվ թերևս ավելի դժվար է գտնել անձի, ում մեջ համատեղվում են այս երկու բնեղները: Երաժշտությանը Հ. Ղ. Ալիշանն անդրադարձել է ըստ այդմ տարբեր կերպ, այս կամ այն կողմի առավել շեշտադրումով՝ ձեռագրերի տվյալների հավաքչության (մանրուսմունքների եղանակների անունները), հիշատակարանների տվյալների ամբողջացման (Կիլիկիայի երաժիշտները), պատմական աղբյուրների ամբողջացման (Շնորհալուն նվիրված ուսումնասիրության մեջ երաժշտությանը հատկացված բաժինը), ստեղծագործական հայեցումների (Ստեփանոս Սյունեցուն, Սահակադուխտին անդրադառնալիս) և պարզապես ստեղծագործական երևակայական ճամփորդությունների ընթացքում (մանրուսման կորսված եղանակների կատարման և նման պատկերներում): Բազմիցս շեշտվել է նրա շնորհը՝ ձեռագրերի հիշատակարանների, այլ աղբյուրների ընձեռած տվյալների խճապատկերներից ծավալային մեծ ընդգրկումով ամբողջություն ստեղծելու՝ հարուստ տեսիլներով, զրույցներով, որ շարունակում են առինքնող մնալ¹: Այս միասնական կենդանի ներշնչանքի և ոգեկոչումի մեջ հայրենիքի դատարկվող հատվածները նա երբեմն կարող է լցնել պահպանված նշխարների բույրերի տարածումով, պատկերի ամբողջացումով, երբ նյութական-առարկայական հենքից միայն ցաքուցրիվ վկայություններ են մնացել (ինչպես վերը նշված օրինակում բնության սրտում արթնացնում է

¹ «Յուշիկը»-ում Հ. Ղ. Ալիշանն արտահայտում է եկեղեցական Յայսմաուրքի նմանությամբ ամեն օրվա հիշատակի ոգեկոչումով զրույց, ամբողջական տարեկան մի պատում, ազգային Յայսմաուրք կամ Հայադիր ունենալու իր երազանքը. «Առաւօտը զայն կարդալ, իրիկունը ասով զբօսնով կրակին բոլորտիքը» (Յուշիկը հայրենեաց հայոց, հատոր Ա, Վենետիկ, 1869, էջ 105-106):

Արքակաղնի մենաստանում մանրուսման մեղիզմատիկ երգեցողության տեսիլները, այնուհետև առաջին անգամ բերում այս արվեստի պահպանված բեկորը՝ մանրուսման մեղեդիների անունների ցուցակն ըստ ձեռագրերի¹): Մշակութային մշտատև և հնարավորինս կենսական, լրվող ու ծավալվող մի տարածք ստեղծելու այս առանձնահատկությունից է բխում ամենուր բնության պատկերների ճառագումը հոգևոր տեսիլների մեջ,² ինչպես նաև հատուկ արտահայտչականությամբ ու կենսականությամբ օժտված հունահռոմեական դիցաբանության հետ երևույթներն առնչելու նրա ցանկությունը³: Հայր Ղևոնդ Ալիշանի անդրադարձները երաժշտու-

¹ Ղ. Ալիշան, *Միսուն և Լեւոն մեծագործ*, Ս. Ղազար, Վենետիկ, 1885, էջ 254:

² Նանա թագուհու՝ իր մահացած ամուսնու հիշատակին կառուցած կամրջի նկարագրությունից հետո նշում է. «Բայց այս ի՞նչ է, մի՞թե այդ փրփրադեզ ալեաց ներքև ծածկուած յուշկապարիկ մը կայ՝ որ կը հրապուրէ զիս նիւթս դուրս արշաւելու: Ա՛հ, Հայկակ, ի՞նչ աւելի զօրաւոր, աւելի յափշտակիչ և աւելի սրբանուէր բան կայ, քան բնութեան և կրօնից զուգայարմար ներդաշնակութիւնն, հանդերձ հայրենեաց յիշատակներուն և ցաւերուն» (*Յուշիկը*, էջ 31-32): Բնության մեջ հավերժ բնության արթնացման ամենավառ օրինակներից է մարդու արարման նկարագրությունը քանդակագործի առարկայական շոշափումով. «Երկու կողմէն թներ արձըկած, ոչ թռչելու յարմար, այլ իբրև փարելու իրեն նմանույ մը հետ, կամ թէ նոյն իսկ իրեն ստեղծողին՝ երբ ճանչնայ զայն: Տեսածնիս դեռ անկատար կադապար մ'է... կաւակերտ կարմրակերտ արձան մը, որ կարծես թէ ներսէն կենդանանալու աշխատելով՝ մանր քրտան կայլակներ կու թորէ բոլոր զանգուածէն դուրս... Տես, ի՞նչ շուտ շուտ այդոր արտաքին երևոյթն կակղած կոկած սկսաւ փայլիլ, հետզհետէ մոմագոյն, մոխրագոյն, շուշանագոյն, ծիրանեգոյն, վերջապէս մարմնագոյն. և այնքան բարակ ու փափուկ, որպէս թէ թափանցիկ մաշկ մը միայն ծածկէր ներքին զարմանալի մեքենայն, և իբրև ապակույ մը տակէ ցուցնէր կապուտաթել ջղեր և երակներ» (*Յուշիկը*, էջ 193-194):

³ Խոսելով աղբերաց-արին ծաղկի մասին նշում է՝ «անշուշտ, եթէ ծանօթ ըլլար հիներուն Ուլիդիոսի այլակերպութեանց գեղեցկագոյն նիւթ մը կ'աւելցնէր» (*Յուշիկը*, Ա, էջ 51), կամ անդրադառնում է հայկական բնաշխարհում ճպուռի մի տեսակի ձայնին. «Իր հայրենակցաց մէկն այլ (Գոլենադի) Հայոց արևելեան նահանգաց մէջ կը նշանակէ տեսակ մը մեծ ճպռան, որ իր ճռուղմամբը կրնար մրցիլ Թէոկրիտեայ սրնգափողից հետ» (53): Գիշերը շրջող տխրամած Խոսրովիդուխտին համեմատում է Մելպոմենեի մելամաղձոտ մարմարե արձանի հետ, «այն մեծասիրտ հայկազն օրիորդաց մէկն, որոց համար եթէ հայրենիքս կանգուն ըլլար՝ կրնար առանձին տաճար մ'այլ կանգնել» (*Յուշիկը հայրենեաց հայոց*, հատոր Բ, Վենետիկ, 1870, էջ 152), Գողթան գավառի երգիչներին անվանում է ազգային Անակրեոններ (*Յուշիկը*, Բ, էջ 132): Հունական դիցաբանության օրինակներն է բերում և երաժշտությանը նվիրված իր ամենավաղ շրջանի հոգվածում՝ վերջինիս անտիկ-միջնադարյան ընկալումներով՝ որպէս տիեզերքի սիրտն ու հոգին, ներքին ձայնը ռիթմերի ու հոսքերի, լռության ու դողանջների մեջ, ինքնին ներդաշնակության կամ այդ ներդաշնակության բերող

թյանը, նրա դիտարկումները մանրուսման ձեռագրերի ոլորտում մանրամասն ներկայացրել ենք այլուր¹։ Այստեղ միայն փորձենք ամբողջացնել և լրացնել Հայ միջնադարյան մելիզմատիկ երաժշտության՝ մանրուսման արվեստին առնչվող նրա մի անդրադարձը։

Պատանհների համար գրված Յուշիկք-ում Հ. Ղ. Ալիշանն առանձնահատուկ կանգ է առնում Ստեփանոս Սյունեցու և նրա քույր Սահակադուխտի կերպարների վրա՝ ոգեկոչումի վերոնշյալ ստեղծագործական առանձնահատկությամբ միահյուսելով հոգևոր տեսիլները բնությանը և նկարագրելով Սահակադուխտի հոգևոր նրբությունն ու երաժշտականությունը։

Պատկերում է՝ ինչպես Ստեփանոս Սյունեցու միտքը Ավագ Օրհնություններից մեկը (ԴԳ) ստեղծելիս Սյունյաց Սիոնից սլանում է դեպի Երուսաղեմի Սիոնը, այնտեղից անդին իջնում Կարմիր Ծովի ափերի խորքը, պտտվում նախամարգարեի հետ, լսում նրա «Օրհնեսցուք-ը», այնուհետև ոգեղենացնում ու հայացնում այն Քրիստոսի շնորհով (Կարմիր ծովից դուրս գալուց հետո Ելից ԺԵ. 1-19 Սովսեսի երգին են կցվում ու նրա դրվագների հարասություններով են գրված Ստեփանոսի՝ Յարութեան Աւագ Օրհնութիւնները)։ «Եւ սլանալով իր հայկական հովոց վրայ՝ կու սկսի նուագել. «Յաղթական քեզ օրհնութիւնք, Տէր...» (Յուշիկք, Ա, էջ 273-274)։ Սահակադուխտին պատկերում է որպես մարեմանման թմբկուհի, եկեղեցու սիբիլլա և Հիսուսասեր Մապֆո, հրեշտականման եղանակավոր՝ օժտված հոգեխօս քնարով, կամ՝ անման քնարով և մեղրաշունչ բերանով (հմմտ. Սող. ԺԶ, 24, Երգ. Ե. 1, Եգ. Գ 3, տե՛ս Յուշիկք, էջ 291)։ Իսկ եղբոր մահվան առնչությամբ նշում է՝ պատմությունը լռում է՝ արդյո՞ք այդ ժամանակ քերդողուհի քույրը ողջ էր, և լսելով գուժը՝ քարայրի իր անկյունից արդյո՞ք սոսկալով առաջ եկավ և անդարման ցավին որպես մխիթարություն վերցնելով իր հոգեխոս բամբիոր, վերջին անգամ նրանից ամենաքաղցր և ողբական ձայները արդյո՞ք հանե՛ց, նգովե՛ց, իբրև Դեբովրա, ոճրագործ Հայելի աջը²։ հառաչե՛ց Ստեփաննոսին և Սահակադուխտին վայել հառաչան-

տարերք (տե՛ս Ղ[եւոնդ] Մ[արգարեան], «Երաժշտութիւն», *Բազմավէպ*, 1846, 21, էջ 322-323)։

¹ «Վենետիկի Մխիթարեան միաբանութեան Մանրուսման ձեռագրերը Հ. Ղ. Ալիշանի և Մխիթարեան Հայրերի ուսումնասիրութիւնների լոյսի ներքոյ», *Բազմավէպ*, 2018, էջ 220-310։

² Այստեղ շրջատում է սուրբգրային պատմությունը (Դատ. Դ-Ե)՝ Սիսարային քնած ժամանակ սպանած, Հին Կտակարանում դրական հորջորջվող Հայելին նույնացնելով Սյունեցուն ննջելիս սպանած կնոջ հետ և այնտեղ որպես չարագործ ներկայացվող Սիսարայի մահը ողբացող մոր խոսքերը դնելով Սահակադուխտի շուրթերում (Դատ. Ե. 30)։

քով, և ապա իր երկայն սև վարագույրով թե՛ իր քնարը, թե՛ դեմքը պատելով արդյո՞ք բոլորովին ծածկվեց մարդկանց տեսադաշտից (Յուշիկը, էջ 292. ըստ ավանդության, Սահակադուխտը դասավանդում էր վարագույրի ետևից): Այստեղ միջնադարում տարածված խորը այլաբանությամբ է կիրառում քնարի պատկերը՝ որպես Սուրբ Հոգու ներշնչումով արթնացած ու հարածամ Աստծո համար հնչող հոգի, ամենաներքին ձայն¹ (որ պատվում է այն մարդկանց հետ կապող և նրանցից անջրպետող՝ սգո նշան դարձած վարագույրի լռությամբ): Միաժամանակ ողբի պատկերում հիշատակում է այլ՝ Գողթան երգիչների, վիպասանների բամբիռ գործիքը՝ հավանաբար նկատի ունենալով սրա նվագակցությամբ եղբոր կորստի ողբասացության, ինչպես և «փառագոչ» հնչյուններով նրա կյանքի ու մահվան ասքի ստեղծումը՝ ըստ այլուր ներկայացրած այս գործիքի իր նկարագրություններով²:

¹ Հմմտ. օրինակ հրեշտակին նվիրված պատկերը. «Յաշխարհէն խընդից առ սան քո սիրուն/ Վարդագոյն փետրովք է՛ջ սիրոյ զուարթուն. / Հար սաւառնաձայն թեւոց ըզբնարիկ./ Զուարթացո՛ղ զհոգի Հօր մերոյ քաղցրիկ» (Նուազք, Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան վարդապետի, Ա, Վենետիկ, 1857, էջ 170):

² Հ. Ղ. Ալիշանը բամբիռին նվիրված ամբողջ բանաստեղծություն ունի («Ի բամբիռն Հայկազնի»), որտեղ այն պատկերանում է որպես հայրենի հնչույթը, նվագածությունն ու ասքերի շշուկներն ամփոփող, խորհրդանշի համապարփակության հասնող մի նվագարան՝ ամենասփյուռ Սուրբ Հոգու պես տիեզերական լռությունները լցնող ու երկնային իրողությունները երկրի վրա հնչեցնող, հայրենի եզերքի դյուցազնական տարածությունների շունչն արթնացնող ու խոյացնող («Եւ մարդ շընչեաց, սիրեաց ըզշունչ, եւ սիրեաց զերգ, սիրեաց հնչունս»): Բուն գործիքն ըստ նրա արձակում է բարձր ձայն, փոնչուն, բամփյուն. նկարագրում է մատների հպումը լարերին, միաժամանակ այն կամիթային չէ, քանի որ պատկերվում է արևի շողքից շարունակվող նրա աղեղը. «Բամբի ռն փառագոչ յախտենիցն հըսկայազանց/ Յարփիասկիզբն յաղեղնալոյսն ի բնագաւառ մարդկային գրոհի/...**Փռնչեա՛ց** ի բարձր ի Հայկարան... /**Կարկառ զմատին ծայր** ի Բամբիռն ի քո և յիմն Հայկազնի./ ...Եւ հովիտք Այրարատայ գանչեցին զծածուկս երկնի... / **Ի բամբ եւ բոմբ** երկնադաշնակ սրտայարոյց բամբռանդ Հայկայ / Գուպարեցան Մասիք Կովկասք.../**Փռնչեա՛ց բամբիռնըդ փառագոչ...** / **Սթափեա՛ց, փռնչեա՛ց**, տո՛ւր զպատուէր Տեառն, եւ Հայութիւն հսկայանդամ/ Եռանդն ի սիրտ եւ ի բազուկ, երգ ի բերան՝ դիմեսցէ զհետ./ Ոստիցէ բաղդ ի կառս Հայկին/ Ընդ լուսածիր հետս Յարդգողին./... Վերապանայ եւ սիրտ խոնարհ/ Ի դռինչ Բամբռանդ իմ Հայկազնի» (Նուազք, Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի, Գ, Վենետիկ, 1858, էջ 5-12): «Յուշիկը»-ում Վահան Գողթնացուն նվիրված գլխում քանիցս անդրադառնում է Գողթան գավառի երգիչների գործիքին՝ դարձյալ նրա փառաձայնության, հինավուրց դյուցազներգության հուշերն արթնացնող տարբեր բնորոշումներով ու պատկերներով՝ որպես հայկական գլխավոր երաժշտական գործիք (Յուշիկը, Բ, էջ 132), «հայրապանծ» (էջ 151), «բիրախօս» (էջ 147), հազարամյա հիշատակները

Այս պատումներին Հ. Ղ. Ալիշանը հյուսում է նաև իր կռահումը Ստեփանոս Սյունեցու և իր քրոջ՝ Բագում մելիզմատիկ երգեր ստեղծելու մասին, որ հետագայում մտել են «մանր ուսմունք» կոչվող շտեմարանների մեջ.

«Շատ բարակ և բազմաեղանակ երգեր շինեց, զոր մեր երաժիշտքն Մանրուսմունք կանուանեն, և առանձնաբար Կցուրդք և Մեղեդիք, որոց գոնե մէկ մասն անշուշտ գտուի այսօր այլ այդ Մանր-ուսմունք և Կցուրդք գրոց մէջ, թէ և մեք չգիտենք, թէ ո՞րն է յատուկ իրեն, ո՞րն իր եղբորն և ո՞րն օտարաց. միայն հաւանիմք, թէ շատն առաջի երկուքին են, քեռն և եղբորն, Ստեփաննոսի և Սահակդիտոյ...»¹:

Նույն տեղում Հ. Ղ. Ալիշանը բերում է «Սրբուհի Մարիամ» շարականի առաջին տունը՝ նույնացնելով այն «Սրբուհի Մարիամ» կցուրդի հետ, որ աղբյուրներում (հավանաբար Հ. Ղ. Ալիշանն օգտվում է Ստեփանոս Օրբելյանից) միակ հստակ մատնանշվող ստեղծագործությունն է՝ ի թիվս Սահակադուխտի հեղինակած և անորոշ կերպով հիշատակվող այլ կցուրդների (հմմտ. Օրբ. «Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին...

երեկվա դիպվածի պէս հնչեցնող (էջ 132), նույն գլխում նկարագրում է՝ «Ո՛վ պանծաձայն Բամբին Գողթան. Արդեօք նաւասարդի սաղարթներով պսակուած, և զինաւէտ այգեացող լայնատերև բարունակներով պլլուած՝ երեցա՛ր այս անգամ այլ...» (էջ 133): Սահակադուխտի բամբռախարության՝ եղբոր ողբի, նրա գովասանքի համատեքստին կարող է համապատասխանել և ողբաձայն Բամբինի հնչողությունը բնութագրող մասը. «դեռ երբեմն բարբառէր Բամբին Գողթան, կու հնչեցրնէր հատակտուր հագագներ, և ընդ գովասանութեան քաջագանց՝ գուցէ խառնէր քանի մ'այլ հագագներ» (էջ 133), այլուր նրա առնչությամբ հիշատակում է բոմբյունը. «Հայկակ, էս այս ծխէն մղձկած՝ կու կորսընցնէմ Գողթան Բամբինը. կու լսեմ ուրիշ բոմբին, ուրիշ վիպասանութին մը, որ յանկարծ մահուան թմբկի պէս կ'որոտայ» (էջ 134, Բամբինը՝ որպէս բամբ ձայն, բամբիյուն արձակող գործիք [ըստ առձայնույթ-բաղաձայնույթի, որ կիրառում է այս հատվածում] ներկայացրել է Գրիգոր Նարեկացին. «բարացուցական բամբռան բառացի բարառնութեանց». Մատեան ՂԲ): Ալիշանի համար սա զուտ հայկական նվագարան է. «Ամենահաշտ աչօք յերկրի դիտեաց Աստուած զայն վայր միայն./ Նըմա միայնոյ զնախանձելին քնարաց զբամբինն նըւիրեաց. /Քան ըզՊառնայ և զՄիովնի/ Անյաղթ Բամբին ինձ Հայկագնի». այս տարողություններով օժտված գործիքն է դնում Սահակադուխտի ձեռքը (Բամբին-փանդիոյ մասին տե՛ս մասնավորապէս Մ. Աբելյան, *Երկեր Ա*, «Հայ վիպական բանահյուսությունը», Երևան, 1966, էջ 159, Հ. Աճառյան, *Հայերէն արմատական բառարան*, հատոր Դ, Երևան, 1979):

¹ Հ. Ղ. Ալիշան, *Յուշիկք*, Ա, էջ 291: Այս հղումին և Սահակադուխտի այն ժամանակ հրատարակված ստեղծագործությանը ուշադրություն է դարձրել նաև Ն. Թահմիզյանը («Գրիգոր Գողիկը և հայ-բիզանդական երաժշտական կապերը», *Բանբեր Երեսանի Համալսարանի*, 1968 (3), էջ 204):

Եւ արար կցուրդս և մեղեդիս քաղցրեղանակս, յորոց մին Սրբուհին Մարիամ, որ իւրով անուամբն է յօրինեալ¹): Հ. Ղ. Ալիշանը ենթադրում է, որ Սահակադուխտի անվանատառերի ծայրակապով գրված բոլոր տներինց պահպանվել է միայն իր կողմից մեջբերվող շարականի առաջին տունը.

«Այն երգոց մէկն այլ, ինչպէս կ'իմացնէ մեզի պատմիչն, Սահակադուխտյ անունը կու յայտնէր, տնագլուխ գրերովն, և կու սկսէր Սրբուհի Մարիամ: Ժամանակն, ո՛ր այն ժաննոր ժամանակն, մեզի չհասուց այն կցուրդն այլ, բայց անշուշտ չկրցաւ այլ բոլորովին անհետ աննշան ընել, և թողուց առաջին տունը, զոր և շատ հեղ հիմայ ըստ յարմարութեան վայելուչ իմաստիցն՝ երգեմք առաջի Սրբութեան Սրբութեանց. «Սրբուհի Մարիամ, սափոր ոսկի և տապանակ կտակարանաց...» (նույն տեղում):

Հետագայում այս ավանդույթով «Սրբուհի Մարիամ» շարականը (որ ունի նս մեկ տուն) որպէս «կցուրդ» շարունակում է վերագրվել Սահակադուխտին, մինչև բուն «Սրբուհի Մարիամ» կցուրդի բնագիրը գտնում և հրատարակում է Նորայր Արք. Պողարեանը՝ անդրադառնալով և այս շփոթին(ստորև)²:

Մինչ Սահակադուխտի կցուրդներին անցնելը նշենք, որ այստեղ ըստ էության Հ. Ղ. Ալիշանը սահմանում է «մանրուսմունք» միջնադարյան երաժշտական հասկացությունը լայն առումով (ոչ զուտ ձեռագրերի իմաստով)՝ որպէս առհասարակ արվեստ, որով գրված են ավելի նրբառճ և զարդարուն՝ «բարակ» և «բազմաեղանակ»³ երգերը, այնուհետև այդ

¹ Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Միսական, էջ 182:

² Միաժամանակ այս միավորի բնագիրը՝ դարձյալ Սահակադուխտին վերագրելով, տրված է նաև Մատենագիրք Հայոց-ում իր երկու տնով (տե՛ս հատոր Զ, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007):

³ Հայտնի չէ՝ արդյոք Հ. Ղ. Ալիշանն այս բնորոշումը տալիս է՝ նկատի ունենալով նաև կցուրդների շարադրանքի ավելի մասնավոր առանձնահատկությունը: Կցուրդներն իսկապէս ավելի հաճախ առատ զարդարանքներից բացի հյուսված են նաև “բազում” եղանակներով ըստ խազագրության՝ միջանցիկ զարգացումով. նրանց կենտրոնացումը մեկ առանցքի շուրջ կարգավորվում է կրկնվող մելիզմատիկ վանկերի դարձերով (որ փորձել ենք արտացոլել ստորև բնագրերում), բայց ոչ տնետուն կրկնվող երաժշտությամբ: Նույն կերպ Հ. Վ. Հացունին՝ անդրադառնալով երեկոյան կցուրդներին, Աստվածահայտնության փառն անվանում է “բազմախաղ” (Հ. Վարդան Հացունի, Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին, Բ. հրատարակութիւն, Ս. Էջմիածին, 2015, [Վենետիկ, 1965], էջ 306): Գոյություն ունի նաև բազմեղանակ խազ, որ կազմված է ծնկների միացությունից. Վոթերթաունի հայկական թանգարանում պահվող մանրուսմունքի խազերի տախտակում բազմեղանակ խազանունն ուղեկցվում է կրկնակի ծնկներով բազմե

արվեստով գրված երգերը վերագրում է նաև Ստեփանոսի և իր քրոջ գործունեության ժամանակին¹, թեև և՛ մանրուսմունք եզրույթը, և՛ բուն Մանրուսմունք ձեռագրերը ձևավորվել են արդեն Կիլիկյան շրջանում՝ ըստ մեզ հասած տվյալների²: Հայտնի է, որ Հ. Ղ. Ալիշանը հաճախ չի նշում աղբյուրները, որոնցից օգտվում է՝ առավել ևս գեղարվեստական ոճով գրված Յուշիկք-ում: Ալիշանին երկրորդում է՝ արդեն աղբյուրներ մատնանշելով, Հ. Վ. Հացունին. վերջինս մեջբերում է միայն Ստեփանոս Սյունեցուն վերաբերող մասը՝ նույն կերպ արտահայտվելով նրա հեղինակության անորոշության վերաբերյալ:

Կիրակոս կը յարէ, թէ Սիւնեաց եպիսկոպոսն յօրինեց նաեւ “կցորդս եւ այլ երգս”, զոր Օրբելեանը կ’ընդլայնէ այսպէս. “Երգեաց կցորդս քաղցրահամս, յարմարեաց զստողոգիս Յինանց”... յայտնի չէ, թէ որչափ եւ որոնք էին անոնց մէջ Ստեփանոսի շարադրածները, եթէ ստոյգ է պատմիչներուն ըսածը: Եւ ոչ ալ թէ պաշտամունքի ո՞ր մասերուն, մէջ կ’երգուեն. մինչդեռ յաջորդ աղբիւրներէն գիտենք անոնց տեղերը”

Ղաֆուհ: (մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում թանգարանի տնօրինությանը և գիտաշխատող Ալիսա Դումիկյանին ձեռագրի թվային պատճենը մեզ տրամադրելու համար):

¹ Հ. Վ. Հացունի, *Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին*, էջ 241-242: Հետագայում Ն. Թահմիզյանը ևս շեշտում է այս երկուսի, ինչպես նաև Գոգիկի՝ մեկիզմատիկ երգեցողության զարգացման մեջ ներդրումը, նշելով, ըստ պատմիչների տվյալների, այստեղ առանց մանրամասնելու, որ նրանց երգերը մտել են Մանրուսմունք և Խազգիք կոչվող ժողովածուների մեջ (Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և Հայ երաժշտությունը V-XV դարերում, Երևան, 1985, էջ 187)՝ որպես այդպիսի երգեր հիշատակում է ստողոգիական սաղմոսներ, առավոտերգեր, ալելուներ, մեսեդիներ, մեղեդիներ և այլն: Այլուր նշում է Մանրուսմունքների և Գանձարանների մեջ մտած միայն մեսեդիները, ստողոգներն ու մեղեդիները (Н. Тагмизян, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, с. 56), իսկ ծանոթագրության մեջ բերում ՄՄ 3503 Գանձարանի այն էջերը, որտեղ ամփոփված են Ստեփանոս Սյունեցու տաղերը (սրանք ավելի վաղ հրատարակել է Ա. Մնացականյանը, «Ստեփանոս Սիւնեցու նորայայտ տաղերը», *Բանբեր Մատենադարանի*, 11 (1973), էջ 275-289):

² Այս երկու հասկացությունները՝ Կիլիկյան շրջանում ծաղկած և իր վերջնական ձևավորմանը հասած մեկիզմատիկ (մանրիկ-մանրակրկիտ զարդարանքներով) երգեցողության *մանր ուսման* արվեստը, և այս արվեստով գրված Ժամերգության երգերի *Մանրուսմունք* ժողովածուներն առանձնացնում ենք վերջինների գլխատառով (ըստ էության, դժվար է սահմանել՝ *մանր* եզրը վերաբերում է արվեստին, թե ձեռագրերին՝ Ժամերգության երգերի մանր՝ մանրակրկիտ ձևով շարադրված ուսուցանվող ձևին):

Կցուրդ բազմանշանակ բառն այս համատեքստում իր արժեքավոր ուսումնասիրության մեջ Հ. Վ. Հացունին հասկանում է արդեն իր որոշակի իմաստով՝ որպես համառոտ երգ, սեփական տերունական ու սրբերի տոների, որ ավելի ուշ ամփոփվել են առանձին մատյանների մեջ: Եվ ըստ Հալեպի թիվ 7 Մանրուսմունքի բերում է Աստվածածնի փոխման կցուրդների՝ արդեն Կիլիկյան շրջանում ձևավորված գործառույթները (կանոնագլխի և Հարց-Մեծացուցե-Ողորմեա-Տէր յերկնից-ի հետ կապվող կցուրդներ)¹: Ստեփանոսի հեղինակության վերաբերյալ տարակուսանքները («յայտնի չէ, թե որչափ եւ որոնք էին անոնց մէջ Ստեփանոսի շարադրածները») վերաբերում են միայն կցուրդներին: Պատմիչի թվարկած մանրուսման մյուս երգերի՝ Յինանց, Աղուհացից ստողոգիների մատնանշումը հստակ է, որոնց անդրադառնում է Հ. Հացունին հաջորդիվ², դարձյալ նույնին՝ հիմնվելով նաև Այրիվանեցու հաղորդած նույնատիպ տվյալների վրա և ըստ երևույթին Հ. Վ. Հացունուց անկախ՝ Ն. Թահմիզյանը³: Այս անդրադարձները փորձել ենք ամբողջացնել այլուր⁴: Այստեղ միայն կրկին նշենք՝ Ստեփանոսին վերագրվող բազում ստողոգիներից Աղուհացի շրջանում կատարվողները արդեն մանրուսման արվեստում օժտված են միայն մեկ, Յինանց ստողոգիները՝ երեք մեղեդիներով (վերջիններիս կապակցությամբ Օրբելյանի «յոթ եղանակաւք յոյժ խորհրդաւոր» վկայությունը չի վերականգնվում խազագրությամբ. հավանաբար այս արտահայտությունը հղում է Յինանց շրջանի յոթ «խորհրդավոր» շաբաթներին, որոնցից յուրաքանչյուրի ժամանակ կատարվում էր մեկ մեղեդի):

¹ Հ. Վ. Հացունի, Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին, էջ 241-242, տե՛ս Յուզակ Հայերէն ձեռագրաց Հալեպի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցւոյ եւ մասնաւորաց, կազմեց Արտաւազդ Արք. Աիւրմէեան, Երուսաղէմ, 1935, էջ 22-23:

² Հ. Վ. Հացունի, Պատմութիւն Հայոց աղօթամատոյցին, էջ 241-242:

³ «Գրիգոր Գոգիկը եւ հայ-բիզանդական երաժշտական կապերը», *Բանբեր Երևանի Համալսարանի*, 1968 (3), էջ 198-210:

⁴ Տե՛ս «Վենետիկի Մխիթարեան միաբանութեան Մանրուսման ձեռագրերը Հ. Ղ. Ալիշանի և Մխիթարեան Հայրերի ուսումնասիրութիւնների լոյսի ներքոյ», Սահակադուխտ-Ստեփանոս Սիւնեցի-Գոգիկ Այրիվանեցի ենթագլուխը, Բազմավէպ, 2018, նաև A. Tamrazyan, "Melismatic chant in the medieval Armenian sacred tradition: The fine-detailed teaching (*manrusumn*)" (տպագրության փուլում է): Այստեղ օգտվելով առիթից ճշտենք մեր մի հղումի մեջ առկա վրիպումները՝ Ն. Թահմիզյանն ուղղել է Մխիթար Այրիվանեցու՝ Գ. Արք. Հովսեփյանցի հրատարակած բնագրի «ստոյգ ուղի»-ն «ստույգ ուղի»՝ ճշտելով սա բնագրով (ՄՄ 6261, 628ա), իսկ ըստ ՄՄ 3276, 193ա-ի ցույց տվել, որ «ստոյգ ուղի»-ն միջնադարյան ընկալումով *ստողոգի*ի ստուգաբանություն է:

Պատմիչներին հետևելով՝ Հ. Ղ. Ալիշանը կարծես թե առանձնացնում է մանրուսման երգերի (Ժամերգության տարատեսակ սաղմոսերգերի) և հոգևոր ինքնություն երգերի՝ կցուրդների, մեղեդիների ստեղծումը, որոնք ևս առկա են Մանր-ուսմունք ձեռագրերում, ինչպես նաև Կցուրդարան կոչվող ժողովածուներում: Վերջինս հակված է մտածել, որ այս կցուրդների զգալի մասի հեղինակներն են Ստեփանոս Սյունեցին և իր քույրը: Միաժամանակ սրանով նաև կցուրդները կապում է մանրուսման արվեստի հետ¹: Ըստ այդմ ստորև կփորձենք անդրադառնալ կցուրդներին, նրանց կապին Մանրուսմունքների հետ, ինչպես նաև Ստեփանոսի և Սահակադուխտի հեղինակության հարցերին:

Հայտնի է «կցուրդ» բառի բազմիմաստ նշանակությունը, որից առաջացել է և վերոնշյալ շփոթը՝ «Սըրբուհի Մարիամ» կցուրդի և «Սըրբուհի Մարիամ» շարականի նույնացումը²: Կցուրդ անունը կարող են կրել ըստ էության բոլոր աղոթք-հիմներգերը՝ թե՛ ինքնություն բնագրով երգերը, որ կցվում էին Սուրբգրային որևէ օրհնության, սաղմոսի, թե՛ առանձին սաղմոսատները, որ ընտրվում ու կցվում են իրար (ըստ օրվա խորհրդի), կցվում են ընթերցվածի կամ ամբողջական սաղմոսի: Մեզ հետաքրքրում են կցուրդներն իրենց որոշարկված իմաստով՝ որպես

¹ Ինչ վերաբերում է մեղեդիներին՝ մեկիզմատիկ տաղերին, ապա պետք է նշել, որ Մանրուսմունքների բուն հատվածներում չկան մեղեդիներ կամ տաղեր, դրանք երբեմն կարող են լինել ավելի ուշ շրջանի Մանրուսմունքների հավելվածական բաժիններում [ՄՄ 753-ում առանձին բաժին են կազմում «Մեղեդիք Ծնընդեան անյշ և գեղեցիկ»՝ բայց տարբեր կանոնների տաղերի հատվածներ են, և ավարտին՝ «Աւարտեալ կատարեցաւ մեղեդեօք լցեալ տետրակս», 332ա, սրանք պահպանում են մանրուսմունքների երգերի բնույթը, փոքրիկ են, տաղերի կրճատումն են միայն մեկ տան և հարուստ են խազերով], ՄՄ 2033-ում կցուրդները ներկայացված են մեղեդիների հետ միասին՝ մանրուսմունքից հետո, դարձյալ տաղերից միայն մեկական տներն են («Կացուրդ Ծնընդեան». 254ա-259բ. կան նաև այլ տոների կցուրդներ, ինչպես ընդհանուր նշված է «Մեղեդիք Ծնընդեան» 259բ-273ա, թեև կան նաև այլ տոների մեղեդիներ): Միաժամանակ, ինչպես կտեսնենք Սահակադուխտի կցուրդի օրինակով, հնարավոր է, որ որոշ այլ կցուրդներ ևս վերախմբագրվելով հետագայում մտած լինեին Գանձարաններ՝ որպես մեղեդի:

² Միաժամանակ Ասատուր Մնացականյանն էլ հակված է նույնացնել այս կցուրդը մեղեդու հետ՝ կցուրդ-շարականն ընդունելով որպես նույնանուն միավոր. «Մեր ունեցած պատկերացումների համաձայն դա պատկանում է տաղ-մեղեդիների և ոչ թե շարական-կցուրդների շարքին» (Ա. Մնացականյան, «Ստեփանոս Սյունեցու նորահայտ տաղերը», *Բանբեր Մատենադարանի*, 11, էջ 179):

ինքնուրույն բնագրերով, այլ ոչ սաղմոսատողերով երգվող համարներ¹:

¹ Կցուրդ բառի բոլոր նշանակությունները տե՛ս օրինակ **Հ. Վ. Հացունի, Պատմություն Հայոց Աղօթամատոյցին**, էջ 197-198: Կցուրդի իրողությունը (ներառելով բոլոր վերոնշյալ իմաստները), որ հիշատակվում է հայ գրականության վաղագույն շրջանից, գրականագիտական վերլուծության իր համատեքստում տրամաբանական հաջորդական փուլերի մեջ է կանոնավորել Մ. Աբեղյանը՝ ըստ կցուրդների մեջ ստեղծագործականության չափի (Հայ Գրականության պատմություն, Գ. Հատոր, էջ 534-535)՝ իրար կցված սաղմոսատողեր (որտեղ ստեղծագործականությունն արդեն դրսևորված է սաղմոսատողի ընտրությամբ, երկու սաղմոսատողերը կարող են շարահարվել ետևադասությամբ [տե՛ս օրինակ գիշերային պոեմները՝ Ա. Թ.]) և գրեթե ամբողջությամբ Սուրբ Գրքի բառերով ստեղծված կցուրդներ (որոնց տարբերությունն առաջիններից սկզբնապես մեծ չի եղել, ուստի նույն անունով էլ կոչվել են), կցուրդներ, որ գրեթե ամբողջապես հիմնվում են Մ. Գրքի երգի բառերի վրա, որին հետևում են, բայց «խմբագրելով» այն, կցուրդներ, որ օրինության կամ սաղմոսի մի տող կամ մի խոսք իբրև կրկնակ են օգտագործում, մնացածն իրենցից են հորինում, և կցուրդ սաղմոսների հակառակ բնեռում գտնվող կցուրդներ, որոնք Մ. Գրքի հոգևոր երգից անկախ հորինվածք ունեն՝ միշտ մտածված լինելով նրա պատկերներով ու ասացվածքներով:

Իհարկե, երաժշտության դեպքում ստեղծագործական ինքնուրույնությունն առհասարակ որևէ հարց չի հարուցում: Արդեն սաղմոսները՝ գոնե Կիրիլյան մանրամասնություններում իրենց խմբագրված ձևով, երգվել են ամենահարուստ մեղիզմատիկ երաժշտությամբ: Առհասարակ Մ. Աբեղյանը, ինչպես հայտնի է, միջին դիրք է զբաղեցնում վաղ հայկական հիմներգության գոյության, նրա հեղինակությունների (մասնավորապես Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, որոնց վերագրվող շարականները չեն կարող մի հոգու գրչի պատկանել, ըստ նրա) ծայրահեղ մերժման (հմմտ. Հացունի, էջ 237-239) և ուշ միջնադարյան աղբյուրներն անվերապահ ընդունելու միջև՝ նշելով, որ հին հոգևոր երգերի մասին ավանդությունները՝ պահպանված ԺԳ դարի ու շարակնոցների տրամադրած տվյալներով, կարող են և որոշ պատմական հիմք ունենալ (էջ 527-529): Արդեն վեցերորդ դարում Կոմիտաս կաթողիկոսի *Անձինք նուիրեալք*-ն իր բավական մեծ կատարելության հասած ձևով վկայում է, որ մեր եկեղեցական բանաստեղծության ծաղկման մի նախապատրաստական շրջան պետք է լիներ և պետք է տերունական տոների համար արդեն երգեր հորինված լինեին (էջ 529, հմմտ. նույն փաստի հիման վրա՝ Հացունու հակառակ տեսակետը [էջ 238], վերջինիս փաստարկով սակայն ժխտվում է միայն հաստատված կանոնի, այլ ոչ առանձին երգերի գոյությունը): Նոր երգերի մուտքը մինչ Ը. դարը, ըստ Մ. Աբեղյանի, ազատ է մնացել Ժամբերգության մեջ, որի պատճառով Օձնեցին չի հիշատակում սրանց մասին (էջ 530): Վերջապես բերում է երկու արժեքավոր վկայություններ Ջրօրհնեքի և Աստվածածնի/Ծննդյան կցուրդների վաղ գոյության մասին՝ Օձնեցու Ատենաբանությունից (երբ դիմելով առանց Աստվածահայտության կարգի միայն Ծննդյան տոնի պաշտոնը կատարողներին՝ ասում

Կցուրդներ. կցուրդներ և շարականներ. *Բանասիրության և երաժրշտագիտության մեջ այս կցուրդները հիմնականում դիտարկվել են որպես շարականին նախորդած երգեր կամ նրանց նախնական անունը. ըստ սրա, կցուրդարանն էլ շարակնոցին նախորդած ժողովածու է¹: Միաժամանակ ըստ մեզ հասած ձեռագրական պատկերի այն երգերը, որ Կիլիկյան շրջանում անվանվում են «կցուրդ», պահպանվել և ծաղկում են Կիլիկյան շրջանում՝ անկախ շարականներից կամ նրանց զուգահեռ, այս շրջանում հիմնականում ունեն իրենց կանոնավոր շարքերը, ինչպես շարականները, վերոնշյալ՝ Կիրակոս Գանձակեցու, Ստեփաննոս Օրբելյանի աղբյուրներում նրանք հիշատակվում են շարականների հետ միասին², որոշ կցուրդներ երգվում են, ըստ Կիլիկյան շրջանի լուսանցային նշումների, հետևակ շարականից առաջ և հետո, վերջապես հատուկենտ Կցուրդարաններ կան Շարակնոցներից անկախ, իսկ ուշ շրջանի որոշ ժողովածուների առանձին բաժիններում գետեղված են կցուրդներ և շարականներ: Սակայն մեկիզմատիկ երաժշտության այս ամբողջ հարստագույն շերտն իր խազավորման նրբին արվեստով, ի տարբերություն շա-*

Է. «Է՞ր աղագաւ եւ կցուրդս գեղեցկանուագս զմկրտութեանն բանից յօրինեցին երանելիքն մեր վարդապետք». երանելի վարդապետները չէին կարող լինել Օձնեցու ժամանակակիցները. էջ 531-533) և Աստվածածինն նվիրված Թեոդորոս Քոթենավորի ներբողից (այստեղ վկայված է Ծննդյան կամ Հայտնության տոնին Աստվածածինն նվիրված կցուրդներ երգելը, որին նույն ճառում հետևում է կցուրդանման ներդիր-ներբող. տե՛ս Մ. Աբելյան, նույն տեղում, Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցոյ Մատենագրութիւնը, Թեոդորոս Քոթենաւոր, «Գովեստ ի Սուրբ Կոյսն», Վենետիկ, 1833, էջ 174):

¹ «Մի անգամ որ կանոնը մտնում է մեր ժամերգության մեջ, բնականաբար պիտի աշխատեին հետզհետե հին կցուրդներից ու կացուրդներից զանազան տոների համար կանոնի պահանջած թվով երգերի շարքեր կազմել: Կցուրդ երգերն, ուրեմն, վերածվում են «շարական» երգերի, և առօրյա գործածության մեջ հին կցուրդ բառը ետ է մղվում, մնալով միայն կցուրդ սաղմոսի նշանակությամբ, և առաջ է գալիս «շարական» բառը» (Մ. Աբելյան, 541), հմմտ. Հ. Բախչինյան. «Ըստ այս երգատեսակների և ըստ ձայնեղանակների, օրհներգերը հայկական Սաղմոսարանի նման համակարգվելով՝ կազմել են Կցուրդարան (հետագայում՝ Շարակնոց)» (*Շարականի գրապատմական ուղին*, 5-14-րդ դարեր, Երևան, 2012, էջ 18, տե՛ս նաև էջ 15):

² «Թարգմանիչ եղև ի Յունականէն ի Հայ լեզու, և ի վերայ թարգմանութեանն արար և երգս հոգևորս քաղցր եղանակաւ՝ շարականս և կցուրդս և այլ երգս» (*Պատմութիւն Հայոց* արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, Թիֆլիս, 1909, էջ 68), «կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնութիւնսն, երգեաց եւ կցուրդս քաղցրահամս, յարմարեաց եւ զստողոգին Յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր, եւ զպահոցն որ յաղուիացսն երգի» (Ստեփաննոս Օրբելեան, *Պատմութիւն նահանգին Միսական*, Փարիզ, 1859, էջ 181-182):


րականների, դուրս է գալիս կիրառությունից, ինչպես Ժամագրքի նույն տիպի «մանր» ուսման նրբին, բարդ խազավորումներով օժտված բազում սաղմոսերգերը: Կիլիկյան շրջանի այս կցուրդարանները պետք է որ պահպանած լինեն ամենավաղ, ինչպես նաև Կիլիկյան շրջանի հիմնեղ-գության շերտեր:

Կցուրդներն այսօր միայն կարող են զարմացնել իրենց արտաքին կերպարանքի հարստությամբ: Նրանց բնագրերի վերականգնումը, ցա-վոք, ավելի հաճախ միայն վեր է հանում մի քանի բառերի վրա հյուսվող երկար, այժմ լռող երաժշտական աղոթքների կաղապարները:

Ստորև ներկայացվող երկու կցուրդների երգի պատկերներում առաջինի միայն «Ըզերգս» [Սուրբ Հոգուն ուղղված] բառի վրա երաժշ-տական ամբողջ տուն է, երկրորդ կցուրդում բնագիրն ամբողջովին հյուսված է կրկնությունների վրա, որն ուղեկցվում է երաժշտական կրկնություններով՝ կցուրդներին բնորոշ ձևով երկրորդ կրկնությունների մեկիզմատիկ ընդլայնումով. «Հանդէս, հանդէս ճրգնաւորացն: Ի յերկինքս այսաւր ընդ հրրեշտակցքս բարեբանեն: Ի յերկինքս այսաւր ընդ հրրեշտակցքս բարեբանեն...»:

Վեն. 260, էջ 114.

Վեն. 118, 113բ



Կցուրդներ և մանրուսման արվեստ. Ձեռագրական ավանդույթն ու խազագրությունը ցույց են տալիս, որ մանրուսմունքներն ու կցուրդները, ինչպես ներկայացրել է Հ. Ղ. Ալիշանը, իսկապես Կիլիկյան շրջանում սեր-տաճած են միմյանց, իրագործված են նույն մանրագնին խազագրությամբ՝ առատ խազահյուսվածքներով բոլորովին տարբերվելով շարականների արվեստից: Շատ կցուրդներ, որոնց բնագրերը հիմնականում ավելի փոքր են շարականներից երաժշտական երկար ոլորումների հաշվին, ման-րուսմունքների մաս են (ապաշխարության հարցնափառեր [ավելի ուշ են մտել Մանրուսման ժողովածուներ. համենայն դեպս բացակայում են Ար-քակաղնի նախնական խմբագրության մանրուսմունքներում], Ժամամու-տեր և երեկոյան փառեր, որ կապված են կցուրդների հետ իրենց վերջա-վորություններով, սաղմոսներին կցվող ինքնուրույն տներ): Որոշ կցուրդ-

ների մեղեդիներով կամ մեղեդիների հատվածներով անգամ երգվել է Մանրուսմունքների երեկոյան ժամերգության «ուղիղ եղիցին աղալթք իմ» սաղմոսատողը:

Վերջապես առանձին փոքր Կցուրդարաններ տեղադրված են Մանրուսմունքների հավելվածական բաժնում՝ նրանց ավարտին և պահպանվել են նրանց շնորհիվ. այստեղ հատկապես տարածված են ամբողջական շարք կազմող Աստվածածնի փոխման կցուրդները, որոնք ևս վերագրվում են Սահակադուխտին: (Վերջիններիս, ինչպես այլ կցուրդների գործառույթը վերականգնվում է լուսանցային նշումներով, օրինակ ըստ ՄՄ 11023-ի, որ ամենամամբողջականներից է այս առումով, Աստվածածնի կցուրդները կատարվում են հետևյալ շարականից առաջ և հետո, կանոնագլուխներից առաջ և հետո, առավոտյան հարցնափառ-մեծացուցե-ողորմեա-Տէր յերկնից շարքով՝ փոխարինելով կամ հետևելով համապատասխան շարականներին, և երեկոյան Ապրեցո-ից հետո՝ որպես փառ): Սրանից դուրս պահպանվել են շատ ավելի կցուրդներ պարունակող միայն հատուկ ենտ ժողովածուներ:

Այս տեսքով կցուրդների հայտնվելը, ինչպես նրանց կորուստը, մնում է առեղծվածային: Արդյո՞ք նրանց՝ որպես առանձին ժողովածուների սակավությունը, շարականների համեմատ շատ ավելի հարուստ խազագրությունը կարող էր մատնանշել ոչ պարտադիր կատարումը՝ բացառությամբ Մանրուսմունքների հիմնական մասի մեջ մտած կցուրդների կամ Կիլիկյան շրջանում հատկապես տարածված և հատուկ ճոխությամբ նշվող Աստվածածնի Փոխման կցուրդների, որոշ չափով նաև Հանգստյան կցուրդների: Վերջինների կիրառությունը վերականգնվում է «Խրատ քահանայաթաղից» միավորների միջոցով, տերունական տոների կցուրդներինը մասամբ՝ Տոնացույցների: Մենք անշուշտ դատում ենք ըստ պահպանված և մեզ հասած ձեռագրական ժառանգության. քիչ հավանական է թվում մանրուսման ձեռագրերի չափ տարածված և չպահպանված կցուրդարանների գոյությունը, մյուս կողմից սրանք կարող էին կորսվել գործածությունից արագ կամ ավելի վաղ դուրս մղվելու արդյունքում: Այս տեսակետից բնորոշ է, որ Մանրուսմունքների մյուս կցուրդները, ինչպես Փառերը, առանձին ժողովածուներով պահպանված ամբողջական Կցուրդների միայն վերջավորությունն են. գուցե ավելի հաճախ ժամերգության ընթացքում երգվել են միայն այս ավարտները: Համառոտ մի քանի մանրուսմունքում այս Փառերն էլ են բացակայում՝ բացառությամբ Լոյս գուարթ-ից: Հստակ է այն, որ երաժշտական կենցաղավարության մեկիզմատիկ առանձնահատուկ ճոխացման արգասիք լինելով՝ կցուրդները շատ ավելի վաղ դուրս են եկել գործնական կիրառության դաշտից, ինչպես ժամերգության ողջ ճոխությունը ներկայացնող

հատկապես երեկոյան սաղմոսերգերը՝ օրինակ «ուղիղ եղիցին աղաթք իմ» ԺԽ. 2 սաղմոսատողի վրա երգվող հարյուրն անցնող եղանակները (դարձյալ՝ սրանք բացակայում են արդեն Մանրուսման ձեռագրերի համառոտ տարբերակներում): Այս հարուստ աշխարհի ներկայացումը, որին մասնակիորեն անդրադարձել ենք այլուր¹, դուրս է հոդվածի ծավալի հնարավորությունից: Պետք է միայն նշել, որ նրանց բնագրերի ու խազագրության ամբողջական ուսումնասիրությունն ըստ բոլոր պահպանված ձեռագրերի, վեր է հանում հայ երաժշտական և առհասարակ հոգևոր ժառանգության հարստագույն և հիմներգության շատ ավելի հարուստ, բարդ ու բազմազան մի պատկեր: Կցուրդները կարոտ են մանրամասն ներկայացման՝ բուն ձեռագրական ավանդույթի (մանրուսմունքներում և առանձին կցուրդարաններում) և առանձին ձեռագրերի քննության, բնագրերի և խազերի ուսումնասիրման-արտացոլման տեսակետից²: Նշված հարցերի քննությունը կցուրդների քննական բնագրերի հետ պատրաստում ենք հրատարակության: Այստեղ միայն կցանկանանք հղում անել հստակ ձեռագրական ավանդույթի վրա հիմնվող երկու արժեքավոր անդրադարձներին՝ Հ. Վ. Հացունու ղիտարկումներին՝ հիմնված Մանրուսմունքների վրա³, և տարբեր կցուրդների բնագրերի հրատարակություններին՝ Նորայր Արք. Պողարյանի նկարագրած ձեռագրերի ցուցակներում⁴:

Վերադառնալով Հ. Ղ. Ալիշանին՝ փորձենք ճշտել Սահակադուխտի և Ստեփանոսի հնարավոր հեղինակությունները, որ կարող են պահպանված լինել կցուրդարաններում:

¹ **A. Tamrazyan**, "Melismatic chant in the medieval Armenian sacred tradition: The fine-detailed teaching (*manrusum*)", "The collections of Kc'urds" ենթավերնագիրը:

² Առհասարակ նույնը կարելի է ասել մանրուսման ձեռագրերի մասին՝ բովանդակության (Ժամագրքի ո՛ր միավորները, այդ միավորների ո՛ր հատվածներն են ներառվել), խազագրության, բնագիրը և երաժշտական նյութն արտացոլելու մեթոդի, նյութի դասավորության, ըստ այդմ այս ձեռագրերի գործառնության, չափանմուշ եղանակների գոյության, սրանց ու խազագրության փոխհարաբերության տեսակետից, որի բացը փորձում ենք լրացնել: Մանրուսմունքները վեր են հանում Ժամերգության սաղմոսերգության ձևերի հարստագույն կորսված շերտերը: Խազային հյուսվածքների թեկուզ միայն արտաքին տվյալների ուսումնասիրությունը՝ նրանց կառուցվածքային առանձնահատկությունները, մոտիվների պարբերականությունը, և այլն, քննելը, հաճախ շատ ավելի տեղեկություն է հաղորդում միջնադարյան երաժշտության մասին կորսված կամ փոփոխված բանավոր ավանդույթի պարագայում:

³ **Հ. Վ. Հացունի**, *Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին*, էջ 241-242, 305-307:

⁴ Տե՛ս օրինակ *Մայր Յուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց*, հատոր Զ., Երուսաղեմ, 1972, էջ 55, հատոր Ը., 1977, էջ 83-84:

Աստվածածնի կցուրդները և սրանց առնչվող վերագրությունների հարցերը. *Նորայր Արք. Պողարյանը, օգտվելով Ստեփանոս Օրբելյանի հիշատակությունից և իր ուսումնասիրած ու հաջորդաբար մանրակրկիտ ձևով նկարագրած ձեռագրերից, նրանցից մեկում հայտնաբերում (քանի որ այս կցուրդն առհասարակ շատ սակավ է հանդիպում) և հրատարակում է Սահակադուխտի «Սրբուհի Մարիամ»ը¹:*

Այստեղ օգտվելով առիթից ևս մեկ անգամ նշենք, որ Նորայր արք. Պողարյանի՝ Երուսաղեմի Սր. Յակոբեանց վանքի ձեռագրերի նկարագրությունները մեզ համար մնում են բացառիկ հատկապես բնագրերը և բոլոր այն հատվածներն արտացոլելու տեսակետից, որոնք կարող են բացակայել ներկա Պատարագում, Ժամագրքում և այլուր: Վերջինս նույնիսկ երբ նկատում է արդեն հրատարակած բնագրի փոփոխություն կամ հավելում այլ ձեռագրում, արտացոլում է սա նա²: Վերջապես

¹ Տե՛ս Հայ Գրողներ, Ե-ԺԷ դար, Երուսաղեմ, 1971, էջ 116-118, նաև «Հասկ», 1951, էջ 366: Այստեղ անդրադառնում է վերոնշյալ շփոթին. «Մերագգի գրողներեն շատեր Սահակադուխտի վերագրած են Մեծ Պահոց շրջանին Խաղաղական Ժամուն երգուող «Սրբուհի Մարիամ»-ը: Այսպես Գնել Օ. Վրդ. Գալեմբերեան գրած է. «Սահակադուխտ կոյսի յօրինած ու երգած տասն տուն (իր անուան տառերուն թուով) շարականներեն մի միայն երկու տուններ՝ առաջինն ու վեցերորդը հասած են մեզի, «Սրբուհի» և «Դասք» սկզբնաբառերով, որոնք զոյգ մը պատուական մարգարիտ են ապաքեն» (Տաճար Շաբաթաթերթ, 1912, էջ 352): Հարկ է դիտել սակայն, որ Ժամագիրքի մեջ տեսնուող այդ երկու տունները ԴԿ ստեղծի շարական են եւ ոչ թէ կցուրդ կամ մեղեդի, ինչպես կ'աւանդէ Օրբելեան» (Հայ Գրողներ, էջ 116):

² Այսպես նկատելով «Ուր եւ երկու եւ երեք» կցուրդի վերջին տողի առկայությունը, որ չի եղել իր նկարագրած ու արտացոլած այլ ձեռագրերում, բերում է առանձին այս հատվածը համապատասխան ձեռագրի նկարագրության մեջ (Եր. 1685, «Արասցուք խորանս սրբաբոյ Երրորդութեանն...», *Մայր Յուզակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց*, Հատոր հինգերորդ, 547, հմմտ. նույնի էջ 484): Բացի կցուրդներից հրատարակում է նաև Պատարագի Ճաշակման խորհրդի երգերը (*Մայր Յուզակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց*, Հատոր հինգերորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1971, էջ 484-485): Վերջինները Մանրուսմունքներում վերագրվում են Ներսես Շնորհալուն, ըստ այդմ սրանց ևս Շնորհալուն նվիրված իր ուսումնասիրության մեջ անդրադարձել է Հ. Ղ. Ալիշանը՝ առհասարակ Պատարագի երգերի զգալի մասը վերագրելով նրան, դարձյալ ելնելով որոշ մանրուսմունքների հիշատակարաններից («Թե՛ պատարագի, թե՛ ժամասացութեան այլ և այլ միջոց երգուած կարճ այլ աւելի խաղուն և արուեստաւոր երգերն, որ Մանրուսմունք կ'ըսուին, թէ և յառաջ քան զՆերսէս սկզբնաւորեալ են, ինչպէս նշանակած եմք... այլ ոմանք առանց խտրութեան զինքն համարին զխաւոր հեղինակ այսպիսի երգոց ալ», *Շնորհալի եւ պարագայ իւր*, էջ 448, Շնորհալունը կարող են լինել, ըստ նրա, սրբասացությունները, գուցե՝

ձեռագիր նկարագրողներից միայն Նորայր Արք. Պողարյանն է հետևողականորեն արտացոլել մանրուսման բոլոր ձեռագրերի երեկոյան «ուղիցի» կոչվող եղանակների լուսանցքների անունները՝ նկատելով, որ դրանք կարող են տարբերվել ձեռագրից ձեռագիր, ինչպես նույն կերպ Հ. Ղ. Ալիշանն է նկատել սրանք և բերել ընդհանուր տախտակով: Այստեղ կարելի է առանձնացնել և Արտավազդ Արք. Միւրմէեանի նկարագրությունները, որտեղ ևս սովորաբար ամենամանրակրկիտ ձևով արտացոլված են ժամագրքերից ու Շարակնոցներից անհայտ բնագրերը՝ առանց փոփոխության, նույն սղումներով¹:

Այլուր, հիմնվելով արդեն Մխիթար Այրիվանեցու հաղորդած տվյալի վրա, նա Սահակադոխտի անունով հրատարակում է նաև Մանրուսմունքների հավելվածական բաժնում լայնորեն տարածված Աստվածածնի Փոխման կցուրդներից առաջինը (Այրիվանեցու բնորոշումն անորոշ է՝ «սա արար տաղս բազումս եւ մեղեդիս եւ կցուրդս Ծննդեան եւ Փոխմանն, յորոց մի է Սրբուհի Մարիամն»², ըստ որի դժվար է սահմանել՝ Աստվածածնի Վերափոխության, ինչպես նաև Ծննդյան կցուրդներից որը կամ որոնք են պատկանում Սահակադոխտին. «Սրբուհի Մարիամ»ը ձեռագրերում ներկայացված է թե՛ Ծննդյան, թե՛ Փոխման կցուրդների մեջ): Այս ժամանակահատվածում Աստվածածնի տոնի (հավանաբար դարձյալ Վերափոխման) ճոխ պաշտոնն անուղղակիորեն կարող է վկայվել և նրանով, որ նույն աղբյուրում Մխիթար Այրիվանեցին խոսում է այս տոնի գիշերային հսկման պաշտոնի մասին, որտեղ ներկա են Ստեփանոս Սյունեցին և Գեղիկ Այրիվանեցին³:


«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»-ը, «նոյնպէս ճաշակման ատեն երգուելու կարճ շարականքն ըստ իւրաքանչիւր աւուրց շաբաթու», «լոյս ճշմարիտ» և այլն, «հաց կենաց» և այլն. որք Աւագ հինգշաբթի օրուան շարականաց աղբերէն ծագած կ'երևին, որով նոյն օրուան կանոնն ալ իրեն կրբնայ ընծայուիլ», էջ 448. տե՛ս նաև Ն. Թահմիզյան, *Ներսէս Շնորհալին երգահան և երաժիշտ*, Երևան, 1973):

¹ Տե՛ս օրինակ Մանրուսմունքների՝ ներկա ժամագրքում բացակայող միավորների արտացոլումն ըստ Հալեպի թիվ 7 ձեռագրի (*Յուցակ Հայերէն ձեռագրաց Հալեպի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցւոյ եւ մասնաւորաց*, էջ 14-23): Այս մեծաթեք աշխատանքի ծավալի արդյունքում բնագրերը կարող են ունենալ վրիպումներ, այդ պատճառով բնագրերը կազմելիս նախընտրել ենք օգտվել բուն ձեռագրերից:

² Գարեգին Արք. Յովսէփեանց, *Մխիթար Այրիվանեցի, Նորագիտ արձանագրութիւն եւ երկեր*, Սիոն, Յուլիս, 1931, էջ 216, տե՛ս Ն. Արք. Պողարեան, «Վանատուր» բանասիրական յօդուածներու ժողովածոյ, Երուսաղէմ, 1993, էջ 136-138 (ըստ Եր. 2431-ի և Եր. 1741 ձեռագրերի):

³ «Յաւուր տաւնի Սրբուհւոյ Աստուածածնի եկն Սուրբ Ստեփաննոս յԱյրիվանս առ Գրիգոր ընկեր իւր համաշահրի, տաւնել ի միասին գտաւն Տիրամարն», նույն

Սահակդուխտ կցուրդը. ՄԱՀԱԿԴՈՒԽՏ ծայրակայով կցուրդը զգալիորեն տարբերվում է Աստվածածնի Վերափոխման կամ Ննջման վերոնշյալ կցուրդից և առհասարակ մյուս կցուրդներից. այն համեմատաբար ծավալուն ստեղծագործություն է՝ յուրաքանչյուր տան սկզբին տառերից մեկով, ընդարձակ տներով և կրկնակ-վերջավորությամբ: Նորայր Արք. Պողարեանը սա տպագրել է ըստ Եր. 1741 ձեռագրի (1491 թ. Աղթամար, գրիչ և ստացող՝ Մաթեոս Կրօնաւոր, որդի Խոնձայի, ձեռագիրը դարձյալ Ժողովածու է, ունի նաև Շարակնոց՝ յոյժ կրճատեալ):



Վերը ներկայացված խազագրությունը որոշ տարբերակումներով ըստ վանկերի ավել կամ պակաս քանակի, կրկնվում է մյուս տներում, որոնք պսակվում են նույն, ավելի մելիզմատիկ վերջավորությամբ՝ «աւրհնեալ ես դու ի կանայս, բերկրեալ Տիրամայր և կոյս» (ամբողջությամբ բերվում է միայն առաջին տան ավարտին. սրա առաջին կեսն էլ իր հերթին տարբերակումով կրկնում է տան առաջին կեսի երաժշտությունը. հմմտ. «անապական տաճար» եւ- «աւրհնեալ ես դու ի կանայս»):

Այս կցուրդը, ինչպես նշեցինք, շատ հազվադեպ է հանդիպում մանրուսման ձեռագրերում. չկա Աստվածածնի փոխման շարքում¹, հարյուրն անցնող մանրուսմունքներից ու կցուրդարաններից գտել ենք միայն մի քանիսում, ամբողջությամբ՝ երկուսում:

Եր. 2431 Մանրուսմունքին հաջորդող կցուրդարանում (1414, Յիպնայ վանք, գրիչ՝ Մկրտիչ, աշակերտ Թումա կրոնավորի¹) այն Ծննդյան կցուրդների մեջ է «Հաւատամք» Ծննդյան կցուրդի հետ, ըստ նկարագրության դարձյալ ամբողջական չէ, բացակայում են վերջին երկու տները (ավարտվում է [Սահակդու] [խտ] հնչյունի «Հիւթական եղական» տնով): Հաջորդում է Աստվածածնի փոխման «Այսաւր բազմութիւնք» կցուրդը, որ Նորայր արք. Պողարյանը նույնպես վերագրել է Սահակադուխտին: ՄՄ 2033-ում նրա տեղադրումը ենթադրել է տալիս, որ նախատեսված է

աղբյուրում Գոգիկին ևս վերագրվում է կցուրդների ստեղծում (Գալեգին Արք. Յովսեփեանց, Միխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր, էջ 215-216):

¹ Տե՛ս Մայր Յուզակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հատոր ութերորդ, Նորայր Արք. Պողարեան, Երուսաղէմ, 1977, էջ 73-74:

որպես Օննդյան նախատոնակին կատարվող երեկոյան ժամի երգ (նյութի արտացոլման իր մեթոդով ուշ շրջանի Ժողովածուներին հաստուկ մանրուսման բաժնի մեջ է¹, 1503 թ., գրիչ՝ Յովասափ, ով իր գաղափարած ձեռագիրն անվանում է երաժշտական տառ և մանր ուսման ձայնավոր,² որ խնդրել են իրենից մեծ փափագով, և ինքը գաղափարել է «մեծաւ ջանիւ և բազում աշխատութեամբ՝ ստուգեալ յերկուց արինակաց՝ ի Սրսցեցն և ի Մինասեցն Տէր Թումի արինակէն», 284բ): ՄՄ 7209-ում հաջորդում է Աստվածածնի Փոխման նույն կցուրդին՝ առանց առանձին խորագրի, հատկացվելով ըստ այդմ կարծես թե Վերափոխման տոնին (գրիչ՝ Կարապետ Բերկրեցի³, միայն առաջին տունն է [173բ]): Այն ամբողջությամբ առկա է եղել Վեն. 318 կցուրդարանում (սկիզբը թափված է, պահպանվել է վերջավորությունը), հաջորդում է Ջրօրհնեաց կցուրդը՝ «Յաստրւածընկալ

¹ Ունի Շարակնոցից հատված՝ ցանկ, Տոնացույց, Ավետարանացույց, Ժամագրքից առանձին չխազավորված հատվածներ, որ նույն ձևով՝ չխազավորված կրկնվում են Մանրուսման բաժնում: Այստեղ ներկայացված է Մանրուսման համառոտ տարբերակը՝ անվարժ խազագրությամբ, երբեմն չխազագրված Ժամամուտերով, ամբողջությամբ չխազավորված Ճաշու ալելուներով, ապաշխարության մեսեդիներով և Աղուհացից ստողոգի, մեսեդիներով, երեկոյան մեսեդիներով: Առհասարակ Մանրուսման հատվածում, ինչպես բնորոշ է ձեռագրերի այս համառոտ տարբերակին, կրճատված է երեկոյան ժամերգությունը՝ մասնավորապես բացակայում են «ուղիցի»ները: Փառ կցուրդներից ներկայացված է միայն Խաչի փառը՝ «Բարձրանալով քո ի խաչին, դիտելով ընդ հարաւ» և Լոյս գուարթը, սրանցից հետո գալիս են չխազավորված մեսեդիները, «Կացուրդ Օնընդեան» բաժինը («Աւետիք հրեշտակապետին Գարբիէլի», «Զանարատ ըզծընունդ», «Սըրբուհի Մարիամ», 254ա-257բ), Խաչի, Հանգստեան կցուրդները, Օննդեան և այլ մեղեդիներ, մեկիզմատիկ քարոզներ իրենց Տէր ողորմեա-ներով և «Խրատ քահանայաթաղի»:

² «Փառք ամենասուրբ Երրորդութեանն... որ ետ կարողութիւն... հասանել ի վերջին գիծ երաժշտական տառիս: Աստանաւր յանկ ելեալ կատարեցաւ տառս մանրուսմանց ձայնաւորաց» (284ա):

³ Դարձյալ պատկանում է «կրճատված» մանրուսմունքների խմբին՝ չխազավորված մեսեդիներով ու Ճաշու ալելուներով, միայն Աձ և եկեղեցու ու գալստեան ուղիցի-ներով, վերջում ունի տէրունական տոների Տէր ողորմեա-ները, և մի քանի կցուրդ՝ հիմնականում հանգստեան: Այս ձեռագիրը շատ ընդհանրություններ ունի նախորդի հետ՝ թե՛ իր ներքին հարդարանքով, թե՛ խազագրության ու գրչության, նյութի արտացոլման ձևով, չխազավորված Ճաշու մեսեդիներով, Ճաշու ալելուների սաղմոսատներով և այլն, միայն Աձ և եկեղեցու ու գալստեան ուղիցի-ներով: Վերջում Տերունական տոների Տէր ողորմեա-ներից հետո ներկայացված են մի քանի կցուրդներ՝ իրենց խորագրերով, կցուրդ Համբարձման և այլն, այս մեկի հետ միասին:

ի յայրէս», ըստ այդմ այստեղ էլ այն Ծննդեան-Ջրօրհնեաց շարքի մեջ է՝ Վիեն. 419-ում (Մանահին, գրիչ՝ Յովհաննէս, 1421 թ.) բացի ընդունված Հարցնափառ-Մեծացուսցէ-Ողորմեա-Տէր յերկնից շարքից, սրանց նախորդող հետևակ շարականների ու երեկոյան փառի կցուրդներից (կանոնագլուխների կցուրդները բացակայում են) առկա են ևս երկու Աստվածածնի ԴԿ կցուրդ (հավանաբար ձայնային այս նշումը վերաբերում է երկուսին էլ), որոնցից մեկը «Անճառելի փառաւք»-ն է՝ այստեղ հարցնափառ է, մյուսը՝ մեզ հետաքրքրող կցուրդը (այստեղ էլ այն հասնում է մինչև Սահակդուխտ-ի Ո-ի տանը, 211 ա-213ա). միայն այս ձեռագրում որոշակիացված է նաև այս մեկի գործառույթը՝ Մ[եծացուսցէ]:


Այսպիսով, այս կցուրդը միայն մի տեղ նշվում է որպէս Մեծացուսցէ (Մեծացուսցէ-ից հետո երգվող կցուրդ. ըստ այս նշումների կցուրդներին տալիս ենք շարականների նույն անունները), հատկացվել է ինչպես Փոխման, այնպես Ծննդյան տոներին, նրա կատարումն ըստ այդմ եղել է ավելի ազատ (ի տարբերություն ամենուր Աստվածածնի վերափոխության շարքի մեջ առկա «Խորան և առագաստ» մելիզմատիկ Մեծացուսցէ-ի. վերջինը, որ իր սկզբնաձևով նման է արդեն նույն Վերափոխման Մեծացուսցէ շարականին, իսկ խազագրությամբ՝ մանրուսման կցուրդներին, հավանաբար ավելի ուշ շրջանի կցուրդ է): Այն դուրս է կանոնի շարք կազմող հաստատված Աստվածածնի մյուս կցուրդներից, որի պատճառով ավելի հազվադեպ է հանդիպում: Ըստ երևույթին հին կցուրդների թվին պատկանելով, Կիլիկյան շրջանի նորաստեղծ կամ վերամշակված կցուրդների համեմատ ետին պլան է մղվել: Վերը ներկայացված Վեն. 419-ում Աստվածածնի փոխման հիմնական շարքից դուրս առկա է և «Անճառելի փառաւք»-ը, այն ևս մոտ է «Սրբբուհի Մարիամ»-ին իր ավելի երգային, մյուս կցուրդներից պակաս մելիզմատիկ խազագրությամբ, դարձյալ պահպանվել է հատուկենտ ձեռագրերում՝ դուրս լինելով Աստվածածնի Փոխման տարածված շարքից: Վեն. 118-ում ունի Աւ. նշումը. նույն անունն ունեն մանրուսման մեջ «ուղիցի» շատ եղանակներ՝ ցույց տալով իրենց՝ որպէս այլընտրանքային համարի առկայությունը:

Վերջապէս մեկ այլ՝ դարձյալ ավելի հազվադեպ հանդիպող «Աւետիք հրեշտակապետին» կցուրդը մոտ է թվում Սահակդուխտին իր ավելի զուսպ խազագրությամբ և կրկնակ-դարձերով («ուրախ լեր, Մարիամ,

¹ Ըստ Հ. Ս. Ճեմճեմեանի՝ ԺԵ դ. կամ ավելի վաղ, նորոգվել է և հավելումներ ունի ԺԶ-ԺԷ դարերից կամ դրանից առաջ (տե՛ս Մայր Յուզակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր Դ., Վենետիկ, 1993, էջ 1130):

ուրախ լեր մայր և կոյս, ուրախ ը բերկրեալ Տէր ընդ քեզ»¹։ Ստորն բերում ենք սրա վերջին երկու տները, որ առկա են միայն մի քանի ձեռագրում, ըստ այդմ բացակայում են Պողարյանի հրատարակած ցուցակներում։

ՄՄ 765, 253բ



* Փ²Մայր կենաց կենդանարար Բանին, որ ի ստինըս կուսութեան քո զԵմանուիւիւն կերակրեցեր կաթամբ և լուծեր ըզկրնիք նախահարն ի գըլորմանէ քո կուսածին մանկամբդ, Ուրախ լեր, Մարիամ, ուրախ լեր մայր և կոյս, ուրախ ը բերկրեալ Տէր ընդ քեզ³։

Թեթն ամս և լեառն բարձրագոյն, վէմն առանց ձեռին հատեալ, գոր Դանիէլ ետես աշտանակ լուսոյ եւթնաջահեան զարդարեալ տաճարին փառաց և աթոռ քրովբեական. Ուրախ լեր Մարիամ...⁴

Հետաքրքիր է ձեռագրական ավանդույթի մի օրինակ, որ մեզ համար ուղեցուցային կարող է լինել. Սահակադուխտի «Սըրբուհի Մարիամ»-ը կրճատված՝ միայն իր երեք տնով, երկու տների տեղափոխությամբ («Սըրբուհի», «Դուռն երկնից», «Անդաստան հոգեւոր»), բնագրի մեջ որոշ փոփոխություններով՝ հատկապես երկրորդ տան մեջ, այս կրճատման հաշվին մեղիզմացումներով որպես Ծննդեան մեղեդի կարելի է գտնել ամենաընտիր Գանձարաններում։ Այն ուրեմն Կիլիկյան շրջանում շարունակել է կենցաղավարել մեղիզմատիկ երգեցողության ծիրում իր այս խմբագրված տեսքով՝ ծայրակապի հետ կորցնելով հեղինակության վկայությունը (տե՛ս ՄՄ 3503, 41բ-42ա, Փարիզ 79, 331բ-332ա, Վեն. 2070 և այլն⁵. հիշենք, որ պատմիչները Սահակադուխտին և իր եղբորը

¹ Բնագիրը տե՛ս Մայր Ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հատոր 2, Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972, էջ 55։ Ըստ Եր. 1741, 1491 թ. Աղթամար, գրիչ և ստացող՝ Մաթէոս Կրօնաւոր։


² Այս հատվածից՝ միայն Վեն. 118, 47բ, Վեն. 260՝ 599-600, ՄՄ 765, 254բ-255ա, ՄՄ 756, 263ա։

³ ՄՄ 765 ստորինս (որ-ի վերևը ջնջման նշան), ՄՄ 756 զԵմանուիւիւն , ՄՄ 765՝ զԵմանուիւրն, Վեն. 260 զԵմանուիւիւ, Վեն. 118-ի ավել վանկը խազ չունի, ՄՄ 765՝ ըզկնիք, Վեն. 118 գլորմանէն (Վեն. 118-ի ը-ն խազ չունի), ՄՄ 756 գլորմանէ, Վեն. 260 մանկամբն, ՄՄ 765՝ մանգամբդ, Վեն. 260 ուրախ լեր՝ չիք, մյուս ձեռագրերը կրկնվող վերջավորությունը բերում են սկզբի վանկով/վանկերով։ Վեն. 118 վերջավորությունը բերվում է «ուրախ լեր, բերկրեալ» մասից՝ իր խազերով։

⁴ Վեն. 260 ամբ, Վեն. 260 լեառն ը, ՄՄ 756 լեառնըն, ՄՄ 756 աշտակ, եւթնաջահեան, կրկնվող վերջավորությունից դարձյալ բերվում են միայն սկզբնաձևը։

⁵ Բնագիրը տե՛ս Մեղեդիք Ծննդեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, Մատենագիրք 591

վերագրում էին նաև մեղեդիների ստեղծումը¹ նույնի մեջ, ինչպես Վեն. 2070, Փարիզ 79-ում առկա են Ստեփաննոսի տաղերը): Այս օրինակով հաստատվում է նաև Սահակադուխտի՝ մեղեդիների հեղինակումը, հնարավորությունը, որ նման այլ վերաձևված կտորներ կարող են մտած լինել հետագայում ձևավորված Գանձարանների մեջ:



Կցուրդներն այսպես գեղեցիկ վկայություն են մեղեդիական ճոխացման, նոր եղանակների ստեղծման, Գանձարանների տաղերի հետ միասին հաստատված կանոնի ծիրում մշտատև ստեղծագործության ու զարգացման՝ նոր երգերի և հների վերամշակման աշխատանքով:

Աստվածածնի փոխման կցուրդներ. Կիլիկյան շրջանում հատուկ ծաղկում ապրած և ճոխացված Աստվածածնի վերափոխության կցուրդներով բացվում է Մանրուսմունքների Կցուրդարանների հավելվածական բաժինը. լուսանցքում երբեմն պատկերված է Մարիամը նույն՝ ննջման դիրքով (նույնը տես ՄՄ 591, 87բ. Աստվածածնի Ժամամուտի կողքին²), իսկ Վեն. 318 կցուրդարանում՝ հարության, հառնող մարդկային բնության բնորոշ՝ մարդակերպ թռչնի խորհրդապատկերով (Մարիամի վերառաքումը)³:

Հայոց, Գանձարան Ա, ԺԳ հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2008, աշխատասիրությունեամբ Վ. Դերիկեանի, էջ 219:

¹ Կիլիկյան շրջանում մեղեդի են անվանվում շատ տաղեր, այս երկուսի տարբերակումը հստակ չէ, մեղեդիների հնությունը միաժամանակ վկայված է նույն 3503 ձեռագրում առկա Մովսես Քերթոզին վերագրվող մեղեդիներով (տես Վ. Դերիկեան, «Առաջաբան», Մատենագիրք Հայոց, ԺԳ. հատոր, Ա. Մնացականյան, «Մովսես Խորենացու յօրեկանի եւ մի բանաստեղծութեան մասին», Գրական թերթ, 1967, հմր. 18):

² «Աղաչենք ըզքեզ, սուրբ Կոյս Մարիամ», ներկայիս Ժամագրքում Ծննդյան Ժամամուտ է (Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, էջ 577):

³ Մարիամին առնչվող ողջ խորհրդաբանությունը մշակված է ոչ միայն վաղագույն մեկնողական, այլև հատկապես հիմներգության տարրերով հագեցած պարականոն գրականության մեջ, որից ծնունդ է առել ինքնին Վերափոխության տոնը: Ըստ այդմ Աստվածածնին նվիրված կցուրդները ևս վաղագույն ծագում



2387, 230p, 6107, 8573, 249a




Վեն. 318, 77p. տե՛ս նաև Հայկազ 7, 224p:

Այս կցուրդները, ինչպես նշվեց, տարբերվում են «Մարիամի Մարիամ»-ից իրենց խազագրության խտությամբ, շարադրանքով. կարող են ա. պատկանել Սահակադուխտի գրչին, բ. պատկանել և խմբագրված լինել Գիլիկյան շրջանում, գ. պարզապես ստեղծված լինել ըստ Գիլիկյան շրջանի գեղագիտական պահանջների և այս շրջանում ամբողջացած մանրուսման արվեստի՝ նախորդող շրջանի Սահակադուխտի կցուրդների փոխարեն (նույն ստեղծագործական մոտեցումն է առկա գանձերի, տաղերի ստեղծման մեջ, երբ մի կողմից վերաձևվում էին սովորյալ հին

կարող են ունենալ: Մարիամին նվիրված առաջին երգն ասում է, ըստ մերձ-սուրբգրային պատումների, իր մայրը, երբ նա երեք տարեկան է. «Մարիամ սուրբ լուսից մայր, դու բարի արմատ տնկոց, բարունակ շառաւիղ, ի քէն առաւօտ ծագէ արուսեակ լուսոյ՝ նման լուսնի, քան զաստեղ պայծառ քան զշող արեգական, լոյս տունջեան, ծագումն արեւելից արփոյն» (*Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, կազմ. Է. Տայեցի, Վենետիկ, 1898): Այսպիսի փառաբանական հատվածներով են հագեցած և Մարիամին նվիրված այլ անկանոն՝ այդ թվում հատկապես Նիկողիմոսին վերագրվող Վերափոխության պատումը («Երանելոյն Նիկողիմոսի ասացեալ յաղագս ննջման Մարիամու Աստուածածնի եւ միշտ կուսին», *Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Անկանոն գիրք Նոր Կտակարանաց*, էջ 446, 461, 467-470):

տաղերը, մյուս կողմից գրվում բոլորովին նորերը՝ դուրս մղելով՝ հները)¹։

Ստորև ներկայացված է Սահակադուխտին վերագրված կցուրդի միայն
«Այսաւր բազմութիւնք» բառերի վրա ընդարձակ երաժշտական տոներ.



Այս շարքի մեջ սակայն մի կցուրդի կապը Ստեփանոսի կամ Սահակադուխտի հետ շատ ավելի հավանական է թվում, քանի որ այն դարձյալ գտնվում է Աստվածածնի Փոխման կցուրդների մեջ և հոդում Ստեփաննոս ծայրակապը։ Միաժամանակ կարող է հորինված լինել Սահակադուխտի կողմից (իր եղբոր անվան տառերով), եթե նկատի ունենանք, որ վերջինիս վերագրվում են թե՛ Ծննդյան, թե՛ Վերափոխման կցուրդները։ Իսկ Ստեփաննոս կցուրդը մտնում է Վերափոխման շարքի մեջ, միաժամանակ իր բովանդակության շնորհիվ առանձին Կցուրդարանում ներկայանում որպես Ծննդյան կցուրդ։ Սա ևս հրատարակել է Նորայր Արք. Պողարյանն իր ձեռագրացուցակներից մեկում՝ առանց վերագրության (այստեղ բերում ենք բնագիրն ըստ մեզ հասանելի Մատենադարանի, Հայկաի, Վենետիկի և Վիեննայի ձեռագրերի)։ Սրանից բացի ստորև ներկայացրել ենք նաև Ստեփանոս Նախավկային նվիրված Ստե-

¹ Նույն կերպ, ինչպես փորձել ենք ցույց տալ, վերախմբագրվել է օրինակ Գրիգոր Նարեկացու Աստվածամորը նվիրված տաղը, որի երկրորդ խմբագրության մեղեդիով երգվել են մի շարք այլ նույն տաղաչափությունն ունեցող տաղեր (Ա. Թամրազյան, «Խորհրդապատկերի կերտման որոշ առանձնահատկություններ Գրիգոր Նարեկացու տաղերում» [Բ]. Մարիամ-Չարժվող տաճարի պատկերագրությունը լույսի (Շողակաթի) տեսիլում», Բանբեր Մատենադարանի, 30, նշված հատվածը՝ էջ 76-78)։ Այստեղ առիթից օգտվելով կցանկանանք, ուղղելով մեր բացթողումը սույն հոդվածում, նշել նաև Հ. Բլաշևսկու աշխատանքը, որ վրիպել էր մեր ուշադրությունից. վերջինս անդրադարձել է այս տաղի առաջին խմբագրությանն իր ծավալուն ուսումնասիրության մեջ՝ երաժշտական-վանկաչափական քննության տեսանկյունից ըստ Ե. Տնտեյանի՝ խազերի մետրական միավորների դասակարգման մեթոդի (Հայկ Սրկ. Բլաշևսկու, «Դեպի Ս. Գրիգոր Նարեկացու տաղից նոր հրատարակություն. Ասպարեզներ եւ նոր հեռանկարներ», Բանբեր Մատենադարանի, 25, էջ 65-67, հատկապես ուշադրություն է դարձնում խազերի տարբերակներին տարբեր ձեռագրերում՝ նույն տեղում, էջ 67-50)։

փաննոս ծայրակապով մեկ այլ նորահայտ, հարուստ մեղիզմացումներով կցուրդ (թեև ծայրակապը կարող է լինել միայն Նախավկայի, այլ ոչ հեղինակի ցուցում):

Ստեփաննոս կցուրդը

Խորհրդաբանությունը. Ստեփաննոս կցուրդն ըստ լուսանցային նշումների կատարվում է Աստվածածնի փոխման տոնին, կանոնագլխից առաջ¹, սրան հաջորդում է «Առ որս» առեղծվածային բնագրով կցուրդը՝ հյուսված Եզեկիելի տեսիլի ու Յայտնութեան գրքի պատկերների վրա: Սա էլ երգվում է կանոնագլխից հետո: Այս երկուսը դուրս են մյուս կցուրդների՝ բուն Աստվածածնի ու նրա ննջման և Քրիստոսի այցելության վերափոխման՝ համբառնալու պատումների դաշտից (ինչը գուցե նույնպես հնարավոր է դարձնում նրանց ստեղծումը բուն կանոնի շարքի ձևավորումից առաջ). միաժամանակ կապված են այս տոնին խորհրդաբանական ավելի խոր հանգույցներով: Առաջինն արտացոլում է Ծննդյան խորհուրդը (հակառակ Մարիամի վերելքի՝ Քրիստոսի վայրէջքը), երկրորդը՝ Երկնային Երուսաղեմը (որն այլուր ըստ այդմ Եկեղեցու կցուրդ է): Կատարվելով գիշերային հսկման ժամանակ և ըստ երևույթին կանխելով Մարիամի վերափոխության ջատագովությունը՝ այս երկուսը կոչված են լրացնելու Վերափոխության և Աստվածածնության միասնականությունը, մեկ հանգույցի մեջ ամբողջացնելու Մարիամ տաճարի, նրա՝ երկնային տարածություններ բարձրանալու (վերափոխում) և վախճանաբանական Երկնային Երուսաղեմի տաճարի պատկերները: Կարող են առնչվել նաև նախորդ օրվա եկեղեցու՝ Շողակաթի տոնին (բոլոր այս խորհուրդները՝ նաև վերընթացին միահյուսված վախճանաբանական հղումներով, ամենագեղեցիկ ձևով միահյուսված են Աստվածածնի տեսիլում Մարիամի Վերափոխության նույն նախատոնակին կատարվող Նարեկացու տաղում):

Փորձենք ներկայացնել Ստեփաննոս կցուրդի երաժշտական բնագիրը, առհասարակ կցուրդների արվեստի մասին պատկերացում կազմե-

¹ ՄՄ 11021-ում սրանց նշումն է համապատասխանաբար՝ առջի կանոնգլխին է (211ա), վերջի կանոնգլխին (214բ), այլուր՝ յետի կանոնագլխի (ՄՄ 8623, 10523, Վեն. 342 և այլն), նաև՝ բ կանգլ, առջի կանգլխ (Վեն. 843). բոլոր այս նշումները վերաբերում են կանոնագլխից առաջ և հետո, այլ ոչ առաջին և երկրորդ կամ առաջին ու վերջին կանոնագլուխներից հետո երգելուն [նմանապես հետևակ շարականին կցվող երգերի համար կան նաև բ հետև/բ հետ, վերջի շարականին է տարբերակները, վերջի հետևկին է/յետի հետև-ի փոխարեն]:

լու համար՝ հնարավորինս խազագրությունից քաղելով արտաքին տվյալներ¹:

Կատարման նրբություններ. Կցուրդների մեղիզմատիկ հարստությունն արտահայտված է ը-երի, առհասարակ երկու բաղաձայնների միջև ավելացվող հնչյունների ու կիսաձայների տարատեսակ նրբություններով: Ը-երի վրա լինում են սովորաբար խունձ, շեշտ, բութ կամ փուշ պարզ խազերը, երբեմն խազերը բացակայում են, սովորաբար այս դեպքում սրանք կարող են զանց առնվել այլ ձեռագրերում, երբեմն էլ նրանց վրա ավելի ծավալուն դարձվածքներ են, ինչպես Ստեփաննոս Նախավկայի կցուրդում:

ընթացքէ ընթաց, կայ

Կցուրդարաններում՝ Վեն. 260, 118-ում, ը-երը հաճախ փոխարինված են լ-ով, որ, թվում է, առաջինից ավելի կարճ հնչյունով երգեցողություն է բնորոշում: Մեղիզմացվող վանկերը կարող են ավելացվել նաև հազագով. նման օրինակներից են, ըստ Վեն. 118, 260-ի՝ խաչելելոյդ, քանգուգի, ը կամըլեցար, ամենյակալ, ը յըզմահ, կեցույ, յանւերեւոյթ, քաւըլիչ, գաւըրք, գեղըարդեամբ:

Բաղաձայնների ու ձայնավորի միացման ինչ-որ հատուկ կատարման նրբությունը մատնանշվում է տրոպ ընտանիքի խազերի միջոցով. օրինակ Վեն. 118, 9բ.

Ներջապես հատուկ նրբագծերով են կատարվում առանձին ձայնավորներ:


Վերջապես հատուկ նրբագծերով են կատարվում առանձին ձայնավորներ:

¹ Այստեղ նշենք, որ առհասարակ մեր կազմած կցուրդների բնագրերում՝ գոնե նրանց ներկայիս նախնական, ոչ տեսակավորված և ընդհանրացված տարբերակում, աշխատել ենք հնարավորինս արտացոլել նաև կորսված երաժշտության պատկերը, ըստ այդմ բնագրի փոփոխության հետ արտացոլել նաև երաժշտական մոտիվների տարբերակումն ըստ խազագրության:

ॐ नमो भगवते वासुदेवाय ॥ ॐ नमो भगवते वासुदेवाय ॥ ॐ नमो भगवते वासुदेवाय ॥

Կցուրդների զգալի մասին, ինչպես այս մեկին իր «Անձանց ը մերոց» եզրափակմամբ, հատուկ են բանաձև վերջավորություններ:

ՄՄ 11021, 214ա



Այս եզրափակումները կարող են ընդհանուր լինել մի քանի կցուրդի համար, ըստ որի նրանց խազագրությունը երբեմն զանց է առնվում: Հատկապես այս վերջնաձևերի (հաճախ նաև սկզբնաձևերի, ինչպես հաջորդող կցուրդի «սոսկացան» բառի) վրա կարող են կառուցվել երաժշտական ամբողջ պարբերություններ:

Փոխման Աստուածածնին Կցուրդ, առջի կանոնագլխի¹, Կցուրդ Ծննդեան (Վեն. 328, 178ա-181բ), Աստուածածնի (Վեն. 118, 55ա-57ա), Կացուրդ Սուրբ Աստուածածնին (Վեն. 2147, 205ա-208ա²), հրատ. Նորայր Արք. Պողարյան³ (ըստ Եր. 2438, այսուհետև՝ Պ. Եր. 2438)

Սոսկացան ը վերընցըն ը դասքն ընդ իջանելոդ քն ի հայրական ծոցոյ Բանդդ Աստուած:⁴

Տեսեալ ըզբեզ, որ ի կառս քերովբէից և ը յանարուեստ յաթոռ նըստիս բաւանդակեալ⁵ յարգանդի կուսին:⁶

¹ Վիեն. 1022, 2ա-6բ, ա կան, ՄՄ 11021, 211ա-214ա, առջի կանոնագլխին է, Եր. 2438 առջի կանոնագլխի, Վիեն. 206, 196 Վեն. 843, 198բ-202ա, առջի կանոնագլխի, ՄՄ 9554, 265ա-269ա, առջի կանգլիս, Վեն. 342, 161ա-163բ, առջի կնգլիսի, Հալէպ 7, 227ա-231բ, առջի կնգլիս, Վիեն. 1022, 2ա-6բ, ա կան, ՄՄ 10523, 189ա-բ, առջի կանոնագլխի, շար. 192ա-194ա, սխալ կարված: Այլուր սա Աստվածածնի Փոխման կցուրդների մեջ է՝ առանց մասնավոր այլ նշումի (Վեն. 260, 180-184):

² Վեն. 2147-ում այս և կանոնագլխի մյուս կցուրդով է բացվում Աստվածածնի փոխման շարքը:

³ Մայր Յուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Հատոր Ը, Երուսաղեմ, 1977, էջ 83: Տե՛ս նաև Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցոյ եւ մասնաւորաց, աշխատասիրութեամբ Արտաւազդ արք. Սիրմէեանի, Երուսաղեմ, 1935, էջ 22, ըստ Հալէպի 7 Մանրուսմունքի:

⁴ ՄՄ 8570, 9554 դասք, Վեն. 2147 ծոցո, Վեն. 328 Բանդդ Աստուած չիք խազերով հանդերձ, Վեն. 260 Աստուած

Ըստ խազային պատկերի՝ որոշ տարբերակումներով նույնն է նաև շարունակությունը:

⁶ Երաժշտությունն ըստ խազերի նույն տողի վերջավորությունն է՝ կրճատած: ՄՄ 8307, Վեն. 2147, Վիեն. 1022, Վեն. 260 քերովբէից, ՄՄ 11021 յանարուեստ, ՄՄ 8307, Վեն. 328, Վեն. 260, Վեն. 118, Վեն. 843, Հ. 7 աթոռ, Վիեն. 206՝ բաւանդակեալ հավելված է լուսանցքում:

Եւ որբայէս ըզրմանուկ¹ ծրնար հրաշալի² [նոյն է³] բընութեամբ:

Փառաց թագաւորն խոնարհեալ ի մեր ը հողեղէն ը բընութիւնս* խանձարըրաւք ը պատի եւ զընի յանբանից ը մըսուր ը զի ըզմերկութիւնն նախաստեղծին ծածկեցէ փառաւ:⁵

Այսաւր անըմար մին գըւարթունքն յերկրնից իջեալ քեզ ըսպասէին, և հովիւք ընդ ը նոսին գրեզ գովէին* ասելով:⁷

Նոր ըսքան չեւի յայտընեալ յերկրի Աստուածըն ը յաւիտենից երևեալ յի մէջ տիեզերաց:⁸

Նըստեալ ի յայրին սերովբէն ը հողեղէն զանտանելին արարածոց ի գիրկըս կըրելով կաթընաստուն եղեալ մարդրկաւեն:⁹

Ուստի և մոզքն ըսքանչեւեալք տեսեալմբ աստեղբըն յարնելից եկին ը քեզ յերկրըրպագութիւն, որ ը զամենայն լընուս հաճեցար ընծայիլ Փըրկիչ:¹⁰

¹ Վիեն. 206, ՄՄ 10523, Վեն. 342՝ ըզմանուկ, ը-ի վրա այլ ձեռագրերում խազ չկա:

² Ըստ խազային պատկերի՝ շարունակությունը տարբերակում է առաջին տան երկրորդ կեսը:

³ ՄՄ 8623, 9554՝ նոյն, չ. 7 կրկնէ, Վիեն. 1033՝ կը (Վիեն. 206, Վեն. 260, Վեն. 118, Վեն. 328, Վեն. 342, Վեն. 2147, ՄՄ 8307, ՄՄ 10523, ՄՄ 11021 չունեն նշում, գրիչներն արտացոլում են կրկնվող երաժշտական նախադասությունը): Այս պահից փոխվում է գլխավոր մեկիզմատիկ վանկի երաժշտությունը, երկրորդ կրկնվող տարրը պահպանվում:

⁴ Կետերով նշված հատվածը տրոպի ընտանիքի խազերով չէ հյուսված:

⁵ Վիեն. 206՝ փառաց... ը հողեղէն զանտանելին չիք, սխալ կարված, էջ 199-ում, Վեն. 260 թագաւոր, ՄՄ 8570 մե[ր ը հողեղէն] թափված թերթ, վերականգնվում է [Աստըւած]ածընի ըյաւիտենից մասից, Վիեն. 206, ՄՄ 11021, ՄՄ 10523, Եր. 2438, Վեն. 342, Վեն. 843, Վիեն. 206 մեր ը, ը չիք, ՄՄ 8623՝ չ փխ. ը (սուղ՝ չափական ավելի փոքր միավոր ցույց տվող խազանշանով է), ՄՄ 8623, Վեն. 118 բընութիւնս, Վիեն. 1022, Եր. 2438 բընութիւնս, ՄՄ 9554 խանձարըրաւք, ՄՄ 8623 մըսուր ը, ը չիք, Վեն. 2147, Վեն. 328, Վիեն. 206, Վեն. 260, Վեն. 118, ՄՄ 8307, 9554, 10523, Եր. 2438, Վեն. 342, 843, չ. 7 ըզմերկութիւն, Վիեն. 1022 ըզմերկութիւն ը (հավելյալ ը-ի վրա խազ չկա), ՄՄ 9554 փառաւ:

⁶ Այս կետերով նշել ենք սկզբնաձև-վերջնաձևերը, որոնք շրջանակում են տրոպերից կազմված մոտիվները:

⁷ Վեն. 260 անըմարին, Վիեն. 1033, Վեն. 260, Վեն. 843, չ. 7 գըւարթունք, ՄՄ 10523, Եր. 2438, Վեն. 342 հովիւքն, Վեն. 2147 հովիւքն: Վիեն. 203 նոսի, Վիեն. 1033 ասե [կրկ]

⁸ Վեն. 2147, Վեն. 328, Վիեն. 206, Վիեն. 1033, Վեն. 260, Վեն. 118, Վեն. 342, 843, ՄՄ 8307, 9554, 11021, ՄՄ 10523, Պ. Եր. 2438, չ. 7 ըսքանչեւիք, Վեն. 260 Աստըւածըն ը, ը չիք, Պ. Եր. 2438, Վեն. 843 ի փխ. յի

⁹ ՄՄ 8307 սերովբէն, Պ. Եր. 2438 կաթըն[նա?]ստուն, ՄՄ 9554 մարդրկաւեն

¹⁰ Վեն. 328 ըսքանչեւաւք, ՄՄ 8570, 9554 ըսքանչեւատեսեալմբ, Վեն. 2147 աստեղբն յարնելից չիք իր խազերով հանդերձ, Վիեն. 206 ընծայիլ

Սըրբեալ ըզըմիտս և ըզիտրիտրդս քեզ ը մատուցանեմք ըզերգս հոգեւորս և տաւնեմք ցրնծութեամբ զգալուստ քո Տէր, որ եկիրդ ի փրկելոյ ինքիս։¹

Անձանց ը մերոց։

Ստեփաննոս Նախավկային նվիրված կցուրդը. Ստեփաննոս ծայրակապով մյուս կցուրդը պահպանվել է միայն կցուրդարաններում²՝ դարձյալ ունի բանաձևային մեղիզմատիկ վերջավորություն.

Կցուրդ Սրբոյն Ստեփանն[ոսի] (Վեն. 260, էջ 2-5, 318, 107ա-111բ)

³ Սոսկացան ը զաւրք անըմարմնոցն⁴

Տեսեալ ըզքեզ ի հանդիսի և ի մեծ պատերազմի սուրբ ըվըկայ Քրիստոսի Ստեփաննոս։⁵

Ելեալ յորդահոս վըտակացն ը վարդագոյն արեան քո զուգաւորէր ընդ ը կողահոս արեանն Քրիստոսի։⁶

Փոխանակ ապըտակացն և ը լեղոյն զբազմութիւն քարանցն որպէս պըսակ ուրախութեամբ ըզգենոյր։⁷


Ահաւոր տեսեալ ը վերընոցն մի առ ը մի աղաղակէին ասելով. – **Ո՞վ է սա՝** արեամբ ը ներկեալ զա[յ] առ Տէր լուսապայծառ պըսակաւք զարդարեալ։⁸

¹ ՄՄ 8307, 10523, Պ. Եր. 2438 սըրբեա, ՄՄ 8623 ըզմիտս, Վիեն. 206 ը միտս, ՄՄ 8573, 9554, Պ. Եր. 2438, Վեն. 843, Հ. 7 քեզ ը, ը չիք (ՄՄ 8307, 8623, Վեն. 328, 2147-ում այս ը-ի վրա խազ չկա, ՄՄ 10523-ում սուղ է), ՄՄ 9554 ո փիւ. քո, Վեն. 118 Տէր-ից թափված, ՄՄ 8623, Վիեն. 1022, Վեն. 260, Վեն. 118, Վեն. 843, Հ. 7 եկիր (Վեն. 118՝ սխալ կարված՝ եկիր՝ էջ 4ա, սկիզբը՝ էջ 204աբ), Պ. Եր. 2438 փրկելոյ ինքիս

² Մեզ հետաքրքրում են այս բացառիկ ձեռագրերի գրչության, խազագրության, ամենի ինչի հետ կապված հարցերը, այդ պատճառով սովորաբար արտացոլել ենք տարբերեցումներում ամեն ինչ՝ այդ թվում սխալները, բացթողնված տառերը, որ երբեմն կարող են նաև երգեցողության ձև արտացոլել։

³ Վեն. 260-ը սկսվում է ԻԳ պրակից, ձեռագիրն առհասարակ ամբողջությամբ սխալ է կարված։

⁴ Վեն. 318 [սոսկա]ցան վանկի մեջ նշված է կրկ. նկատի ունի կրկնվող խազային


դարձվածքները, որոնք չեն մեջբերվում,  : Վեն. 318 անմարմնոցն, բացակայող ը-ի վրա Վեն. 260-ում խազ չկա

⁵ Վեն. 260 վըկա, Վեն. 260 Ստեփաննոս, տարբերվող հատվածում խազերը ևս տարբերակված են։

⁶ Վեն. 260 վըտակացն

⁷ Վեն. 260 ուղեղոյն փիւ. ը լեղոյն, ը-ի շեշտը բացակայում է ու-ի վրա (հավանաբար այս տառն արդեն շեշտակիր է և ենթադրում է երաժշտական նույն դարձվածքը)։ Վեն. 260 զբազմութիւն, ը-ի վրա Վեն. 318-ում փուշ է։ Վեն. 260 քարացն, Վեն. 260 ըզգենո[ւ] (հստակ չէ, տողի ավարտն է)։

⁸ Վեն. 260 վերոցն (ավել վանկի հետ բաց է թողնված նաև ը-ի խունձ խազը), Վեն.

260 լուսապայծառքո.  (խազերը նույնն են, ո-ի վրա

Նոր քսկիզբըն ք հաւատոյ լուսազարդ ճանապարհ կենացն անըվախ-
ճանիցն:

Նահատակ բարի գրեզ գովեն եկեղեցիք սուրբք ուրախացեալ ի վերայ մեծի
ճրգընութեան քո:¹

Ուստի և երկիրս երկրնից ըզգեր ի վերոյ ցուցաւ և ք նախաստեղծն
յերկըրորդումն պայծառացաւ:²

Սուրբ Երըրորդութիւն անըմահ Տէր մեղաւորացս թողութիւն շնորհեա
աղաչանաւք նախավըկային քո սրբբոյն Ստեփաննոսի:

Եւ ողորմեա³:

Հնարավոր է՝ վերը ներկայացվածներն են կազմում կցուրդների
ավելի հին շերտը, որ կապվում են, ըստ Հ. Ղ. Ալիշանի, Ստեփանոսի և
Սահակադուխտի գործունեության, կամ նրանց ժամանակի հետ (նշենք,
որ առկա են նաև Յակոբ, Աբրահամ, Միոն ծայրակապով կցուրդներ):
Աստվածածնի Վերափոխության կամ Ծննդյան Ստեփաննոս կցուրդն
այսպիսով ամբողջովին սերտաձած է Գիլիկյան շրջանի մանրուսման
արվեստին և մեղիզմատիկ մյուս կցուրդներին: Սա վկայվում է և նրա
մեղեդային հոսքից մի բեկորի օգտագործմամբ երեկոյան սաղմոսերգու-
թյան «ուղիղ եղիցին» աղոթքի մեջ, որ մանրուսման արվեստի
խորհրդանիշն է և կիզակետը:

Թափառող մոտիվներ. Ստեփաննոս կցուրդի կիզակետային պահն
է հրեշտակների սոսկում-հիացմունքն արտահայտող «Ո՞վ է սա» հար-
ցումը՝ նրա տառապանքների, արյունաներկ մարմնի ու վերհամբարձման
սքանչելի տեսիլի առաջ, որ ընդօրինակում է նույն պատկերը Քրիստոսի
Համբարձումից (վերջինը հիմնվում է Սաղմ. ԻԳ. 7, Ես. ԿԵ. 1-6 հա-
րասությունների վրա): Նույն բացականչությունն առկա է Աստվածածնի
փոխման «Ուրախ լեր» կցուրդում՝ որպես մարմնեղեն էակի՝ հոգևոր
երկինքներ վերառաքման անձառելի խորհրդի առաջ անմարմին էակների

երաժշտական ապաթարցի նշանն է, այլ ոչ ջնջում, սա կարող է սովորական
սխալ լինել, այլ ոչ *ոռ* երգեցողություն), Վեն. 318 *ք մի*, *ք չիք*, *ք-ի* վրա Վեն. 260-
ում խազ չկա:

¹ Վեն. 318 *սուրբ*, Վեն. 260 *ուրախացեալ չիք* (*ուրախացեալ*-ը կրկնում է *եկեղեցիք*
սուրբ բառերի խազերը, ուստի սա բաց թողնելիս երաժշտական շարա-
հյուսությունը չի փոխվում), Վեն. 260 *վերա*, Վեն. 260 *ճրգնութեան* (բաց թողնված
ք-ի վրա բութ խազն է Վեն. 260-ում)

² Վեն. 318 *ք նախաստեղծն*, *ք չիք* (*ք-ն* խազ չունի Վեն. 260-ում):

³ Վեն 260 *եւ ողորմեա չիք*, [*ողորմեա* խազերը նույն են [*Ստեփաննոսի*
վանկերի խազերի հետ: Բայց ըստ երևութին այն ունի ընդլայն մեղիզմատիկ
վերջավորություն, ինչպես կցուրդների այլ բանաձևային վերջավորությունները,
որ ավելի հաճախ բաց են թողնվում:

զարմանք-սոսկում (դարձյալ հեղինակները փորձում են ընդօրինակել Քրիստոսի Համբարձման տեսարանը, շեշտելով Մարիամի Աստվածանությունը՝ հաղորդվածությունը Քրիստոսին, ինչպես առաջինի դեպքում՝ մարտիրոսների հաղորդությունը նրա չարչարանքներին. Մարիամի դեպքում այս տեսարանը հարասում է Երգ Գ. 6, Զ. 9, Ը. 5 տեղիները՝ նույն հարցով¹): Բոլոր դեպքերում այս հարցն արտահայտում է երկինքների և երկրի, մահվան միջով հարության, մարմին-հոգի սքանչելի թափանցման խորհրդավորությունը, ամենախորունկ տարողությունը ողջ տիեզերքի՝ հրեշտակների համար:


Եվ շատ բնորոշ է, որ երկու կցուրդում էլ այս նույն հարցը, ըստ խազագրության, ուղեկցվում է նաև նույն երաժշտական մոտիվով: Ավելին՝ այս նույն երաժշտությունն օգտագործվել է, ինչպես նշեցինք, երեկոյան ժամին «ուղիղ եղիցին» սաղմոսատողը երգելիս, որ հատուկ տարողություն ունի ամենօրյա հոգևոր կենցաղավարության մեջ՝ ըստ այդմ երգվում է հարյուրն անցնող տարատեսակ ճոխ եղանակներով՝ յուրաքանչյուրն իր անունով: Այս մի մեղեդին համապատասխանաբար ստացել է ովհայ անունը՝ ըստ իր ծագման: Ընդ որում, Երուսաղեմի ձեռագրերից մեկում նույն եղանակն անվանվում է «Մոսկացան»՝ ըստ Ստեփաննոս կցուրդի առաջին բառի (մեզ հասանելի չեն Երուսաղեմի ձեռագրերը, սակայն, ինչպես նշել ենք, ըստ Նորայր Արք. Պողարյանի ընդարձակ նկարագրության, որտեղ տրված են և «ուղիցի» անունները, այն մոտավորապես գտնվում է «ով է սա» եղանակի տեղում): Երաժշտական այս նույն մոտիվը, ինչպես տեսնում ենք վերի նշումներում, կցուրդում կրկնվում է նաև այլ վանկերի վրա², սակայն «բազմեղանակ» մեղեդային հոսքից առանձնացել և իր հատուկ անունը ստացել է ըստ «ո՛վ է սա» հարցի խորհրդաբանական տարողության: Այս կաղապար-մոտիվները վերածվել են ինքնուրույն միավորների «բազմեղանակ» երգերի հղացքներում, որպես խորհրդաձայն թափառել բնագրից բնագիր՝ երեկոյան աղոթքի մեջ վերածվելով բանաձև մեղեդու (ի տարբերություն կցուրդների, երկու սաղմոսատողով «ուղիղ եղիցին» աղոթքները կազմված են երաժշտական չորս կրկնվող նախադասություններից), ի թիվս այլ մեղե-

¹ Վերջինի, ինչպես նույն կերպ մեկ այլ՝ փողն եղանակի կազմավորման մասին տե՛ս A. Tamrazyan, "Melismatic chant":


² Մեղեդագրվող վանկերի ծանրության կենտրոններից մեկը հանդիսացող այս մոտիվը միջանցիկ զարգացման և տների չկրկնվելու դեպքում կրկնվում է և մյուս տներում (ներկայացված է ուղիղ և թավ տառատեսակով. Սուրբ-ի սկիզբն ընդլայնված է, երգում կա և այս մոտիվի կրճատ կրկնվող տարբերակը, որ չենք նշել):

դիների, որոնց անունները ձեռագրերից քաղել և առաջին անգամ ներկայացրել է Հ. Ղ. Ալիշանը:

ՄՄ 591, 240ա, Ուլ է սա եղանակի
մելիզմատիկ վանկերը



Վեն. 318, 109բ Ստեփաննոսի
կցուրդի «Ուլ է սա» հատվածի
եղանակը



Այլուր անդրադարձել ենք ՃԽ. 2 սաղմոսատողի եղանակների անուններին, նշանակությանը, դասավորությանը նրանց անդրադարձած ուսումնասիրողներին¹: Այս եղանակները, ինչպես կցուրդները, ամբողջովին կորավել են (ինչպես հատկապես երեկոյան ժամի մելիզմատիկ երգերը, որ վանական միջավայրի արգասիք են), ողջ օրվա կիզակետը ներկայացնող երբեմնի երգեցողության զարմանալի հարստությունից մեզ մնացել են միայն այս մեղեդիների գունեղ անունները՝ երաժշտական գործիքների, թռչունների, երգերի սկզբնաբառերի, հրեշտակապետների, կենդանիների:

Այստեղ միայն անունների վերաբերյալ անենք մի քանի ճշտում՝ ռավար-որմբավար-որնվար և այլ ձևերը (հնարավոր է, ակնարկում է ձիու՝ սանձով, ռունգներով վարվելը, այն ունի նաև ռահվար ձևը²) հայ միջնադարում ունեն հեծնելու ձիու նշանակություն: Սա հստակ է նաև Հովհաննես Ծործորեցու հանելուկից³: «Յեղմն», որ հանդես է գալիս «յեղմուկ» ձևով՝ ինչպես սովորաբար մանրուսման մեղեդիների այլ անունները փոքրացուցիչ մասնիկով, ունի թույլ,

¹ Տե՛ս Ա. Թամրազյան, «Մանրուսման» արվեստը հայ միջնադարում, Բանբեր հայագիտության, Երևան, 2016, հմր. 1, 125-160: Այս ցուցակն անգլերեն թարգմանությամբ և անունների կապերի որոշ քննությամբ տե՛ս նաև Ա. Tamrazyan, "Melismatic chant".

² Ռահվարի համար տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հատոր չորրորդ, Երևան, 1945. (պարսկ. Rahvār, արագընթաց ձի), հեծնելու ձի, 2. Յետեւից վազող:

³ «Ղարապէկիս կայր շէկ եղբայր/Զինչ թուխարիկ ձի որնվար,/ Որ գոլորշաւք ցաւին յերկար,/ Նա հաքմութիւն գիտէ ճարտար» (մեղու, տե՛ս Լ. Խաչիկյան, «Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը», *Բանբեր Մատենադարանի*, 11, էջ 197): Այս նույն ստեղծագործության մեջ հիշատակվում է ուղտի ձագ կոզեռնը, որի անունով ևս եղանակ կա. «Քան ըզշուն ինքն է վազան,/ Միւներն երկայն՝ զինչ զպարան,/ Է թնատ աքլալ նրման,/ Կամ հաւասար ըղտու կոզրան» (մաքի, էջ 196):

մեղմ ձայնի նշանակություն¹: «Գոճնակ»-ը խոզի անունն է, ինչն ավելի պարզ է դառնում Վիեննայի մի ձեռագրի «գոճան» ձևից (առհասարակ «ուղիցի» անունների մեծ մասը ներկայացված է -ակ, -իկ, -ուկ փաղաքշական ձևերով, որ մասնանշում է սաղմոսի միայն երկու տողով երգվող այս փոքրիկ եղանակների նրբագեղությունը), «հաւատաւոր»-ը նաև կուսակրոն կինն է, այն մոտ է մյուս ձեռագրերում նույն եղանակի «անմեղուկ», «իրիցկին», «երեցկին մաստուն» ձևերի հետ: «Նաւսող» աքաղաղի անունն է, ինչպես այն պատկերված է համապատասխան եղանակի կողքին ձեռագրերից երկուսում (հավանաբար այս անունով ներկայացվում է ըստ Ավետարանական իր խորհրդարանության):



Վեն. 567, 153բ. «ուղիցի»
բաժնի սկիզբը

Առհասարակ մանրուսման «ուղիղ եղիցին» (կրճատ՝ «ուղիցի») մեղեդիները, ի թիվս այլ՝ երբեմն երաժշտության հետ կապի տեսակետից առեղծվածային անունների, հատկապես առատ են թռչունների անուններով, որ հայտնի են իրենց երգեցիկությամբ:

Երգեցիկ թռչունների պատկերներ է ներկայացնում Հ. Մխիթար Սեբաստացին իր բառարանում², և առանձնահատուկ ներշնչումով՝ Հ. Ղ.

¹ Տե՛ս Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Հատոր Երրորդ, Երևան, 1944, Ս. Գապամաճեան, Բառագիրք Հայերէն լեզուի պատկերազարդ, Կ. Պոլիս, 1910:

² «Կաչաղակ՝ է թռչուն ինչ խայտափետուր, որ ունի զմեծութիւն վայրի աղանոյ և զնմանութիւն ինչ խարաթաւուզի. ունի գոռու երկայն իբրև ծիծռան ի քայլելն ոսոռստելով զնայ և գոռուտն անդադար շարժէ: Այլ ձայն նորա է յոյժ սքանչելի, քանզի փոփոխէ զայն որպէս և կամի և յոյժ դիւրաւ նմանեցուցանէ ձայնից կենդանեաց, զորս լսէ, ուստի բազմիցս ուսեալ զոմանս բարբառս մարդոյ՝ խօսի՝ զարմանալի կերպիւ, մինչ զի ըստ ոչ տեսանելն զնա լսողքն զայնս բարբառս՝ կարծեն զնա մարդ»: «Կարապ (այս թռչնի անունով՝ փորակն [փոքրիկ փոր] ձևով, եղանակ կա՝ Ա. Թ.)՝ ունին զձայն ախորժելի, որք մանաւանդ ընդ արշալոյսն աւուր յափունս ծովու սովոր են երգել, զոր ևս առաւել առնեն ի մերձենալն մահուան իւրեանց: Իսկ այլով յատկութեամբ և կերպարանօք ամենեւին են նման սագի՝ այսպէս դագի, ռամկ՝ խուխու և տաճկերէն՝ թօյիթօյիլու»: Հատկապես

Ալիշանը երաժշտությանը նվիրված իր վերոնշյալ ամենավաղ շրջանի հռչակածում. այդ հաստիքը որպես վերջաբան կցանկանանք ներբերել՝ որպես համապարփակ երաժշտության նրա ամենագգայուն ընկալման արտահայտություն: Բնության ձայների նույն գունեղ տպավորումների արգասիքն են և միջնադարում մանրուսման եղանակների թռչնային անունները (երբեմն դրանք կարող են խորհրդաբանական նշանակություն ունենալ՝ ինչպես աղանեկ-ծովցին հաջորդականությունը՝ Նոյի պատմության հնարավոր հղումով): Հ. Ղևոնդ Ալիշանի ընդգրկումը, փաստերը ծավալելու, նրանցով տարածություններ լեցնելու և հնչեցնելու շնորհիվ՝ իր չհեռացող տեսիլներով, այնքան ընդարձակ և գեղեցիկ հայրենիքի տարածքներով, բանալիներով ու սկիզբներով հետագա մանրամասնումների համար, ամենուր թափանցված է երաժշտությամբ:



Վեմ. 2147,
184թ.
«ուղիցի»
բաժնի սկիզբը

«Ո՛ր չէ տեսած օդուն երգիչները, որ գարնան դռներն ներս վազելով՝ բոցներնուն շիտեն առաջ՝ բերաննին երգ մը առած կը ճռուողեն. քու բնույթիդ ալ... ան ձայներեն կ'արթննայ: Երբոր ծիծառնուկը իր ձայնովը քեզի իմաց կուտայ, թե օր մը քու պանդխտությանդ ալ պիտի վերջանայ. տատրակը մնչելով՝ քու թմբած անոյշ ցաւերդ ոտք կը հանէ. արտուտը կարն խօսքով մը արտերուն վերևը երերալով՝ երկրագործին միւսկարանքը կ'ըլլայ, դեղձանիկը, կարմրագլուխը և ուրիշ վանդակաբնակ հիւրերդ՝ տանդ ուրախութիւնը կ'ըլլան: Բայց կարելի է թէ պատահած ալ ըլլաս լուսնկայով գիշեր մը ձորերու հովիտներու մէջ՝ բնութեան առաջին երաժշտին, այսինքն տխրակին, որ ... յանկարծ ձայնը կը ձգէ, ու հագար ու մէկ եղանակները փոխելով արցունքներդ կը շարժէ, ու սիրտդ ու միտքդ կը յափշտակէ, ինչուան երկինք կը բարձրացընէ. կը լռէ ան ձայնը, բայց քու սիրտդ դեռ անոր ձայնովը լեցուած՝ չկրնար չօրհնել ան տէրը՝ որ սասանկ բռան չափ թռչնոյ մը իշխանութիւն տուեր է բոլոր

մանրամասն պատկերում է կաքավի երաժշտականությունը, որի անունով նույնպես եղանակ կա՝ բացատրում է «կաքաւել»՝ պարել բառի՝ «կաքաւ» թռչնի արմատից առաջացումը, որ ընթանում է պարելով՝ կաքավելով, ուստոստելով. սրանից էլ ոտքի կայթումն ու պարն առել է իր այս անունը թռչնի նմանությամբ: Ըստ Արիստոտելի, կաքավն իր այս քայլվածքով խաբում և գողանում է մյուս մայրերի ձագերին, բայց սրանք, ձվից դուրս գալով ու լսելով իրենց մոր ձայնը, ետ են դառնում հարազատի մոտ (բերում է Երեմ. 17. 11. տեղին, որ ակնարկում է նրա վերոնշյալ բարքը. «Ձայն արար կաքաւ, ժողովեաց, զոր ոչ իւր ծնեալ...»): ՆԲՀԼ-ն նույնը նշում է հակիրճ՝ «խաղալ ուստոստմամբ, իբրև զկաքաւ հաւն, կայթել, պարել, խայտալ»: Համեմատում է մարդու և թռչունների ձայները՝ «Մնչեմ՝ ձայն հանել աղանույ կամ տատրակի, որ է ողբագին և հեծեծական. և ասացաւ մընչել, իբր թէ որպէս զմունչ ձայնել, այսպէս հանել զձայն իբրև զնոսա, որք խփեալ շրթամբք արձակեն զմեղմ ձայն, որում յոյժ նման է ձայն աղանույ և տատրակի» (տե՛ս Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ արքայ հայր կոչեցելոյ աշխատակցութեամբ աշակերտաց իւրոց, Վենետիկ, 1749):

*բնութիւնը գնայեցընելու: Ամառուան ճպտուն ալ կը ճանչնաս, որուն
կեանքը բոլոր երգ մըն է, ու երգին վերջի վանկը իր շնչովը կը լնըն-
նայ»...¹*

АРУСЯК ТАМРАЗЯН

РАЗМЫШЛЕНИЯ ГЕВОНДА АЛИШАНА ОБ АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ДУХОВНОЙ МУЗЫКЕ

Ключевые слова: Песенник (кцурдаран, книга кцурдов), Степанос Сюнеци, Саакадухт, невменная нотация, мелизматическая музыка, «блуждающие» мелодические структуры вечерней службы.

Отец Гевонд Алишан, пытаясь реконструировать духовно-мыслительное пространство средневековой Армении, в своих творческо-научных созерцаниях особое место уделяет музыке – искусству «манрусумн» (мелизматическим песням из Часосова, букв. «мелко-учение»), таинственным названиям, которыми помечены мелодии вечерней молитвы на полях рукописей «манрусумн» (псалон 140, 2. "Да исправиться молитва моя, яко кадило пред Тобою, воздеяние руку моею – жертва вечерняя"), мелизматическим гимнам с собственным, не библейским текстом (кцурдам), а также Степаносу Сюнеци и его сестре Саакадухт, авторству которых как раз и приписываются многие кцурды. В продолжение отдельных замечаний и размышлений Г. Алишана в настоящей статье анализируется связь песен Часослова и кцурдов. И те, и другие были изъяты из литургии, из-за чего и обойдены вниманием в современном музыковедении и литературоведении. Не изучена их рукописная традиция, тексты не имеют критических изданий, до последнего времени не было более досконально изучено содержание собраний «манрусумн», методы отображения литургического текста в последнем, невменной нотации и т.д. В статье представлены кцурды с акростихом «Степанос»: один из них издается впервые, текст второго впервые издается критически, с анализом невменной структуры. Последняя имеет нестрофическую текучую форму со сквозным развитием, где арки структуры создаются с помощью отдельных мелизматических слогов, несущих музыкально-смысловую "центр тяжести". Сделана попытка восстановить в этих и подобных примерах возможно более ранний пласт кцурдов.

Также исследуются музыкальные особенности кцурдов, их представленность в рукописной традиции, преемственность и трансформации. Сопоставляется древняя редакция кцурда Саакадухт, с акростихом ее имени, в «Книгах од» («Кцурдаран») и киликийская редакция того же текста – «мегеди» в сборниках «гандзов» с намного более мелизматизованными структурами. Представлен образец "блуждающих" мелизматических структур-мелодий на примере того же кцурда Степаноса, мелизматическая основа которого используется как одна из мелодий вышеупомянутой вечерней службы в сборниках «манрусумн», что еще раз подтверждает связь этих двух пластов. Все эти примеры показывают существование богатейшей творческой традиции, длившейся в творческих трансформациях и вариациях в мелизматическом искусстве с VII века вплоть до Киликийского периода (рукописи XIII-XV вв.).

¹ «Երաժշտութիւն», Բազմավէպ, 1846, 21, էջ 322:

Единство этой традиции порой очень затрудняет или делает невозможным различение в ней разновременных слоев.

ARUSYAK TAMRAZYAN

THE REFERENCES OF L. ALIŠAN TO THE MEDIAEVAL ARMENIAN SPIRITUAL MUSIC

Key-words: Kc'urdaran (Book of Anthems), Step'anos Siwnec'i, Sahakaduxt, neumatation, melismatic music, the "floating" (wandering) melodies of evening prayer.

Father *Lewond Ališan* (1820–1901) in his attempt to revive the spiritual traditions of Armenia, pays special attention to sacred music in his artistic-scholarly considerations and references; in particular to the art of *Manrusumn* (melismatic songs of the Breviary from the Cilician period), to the mysterious names of various melodies in margins of the same evening service prayer in the Breaviary (Psalm 140 [141]; 2 "May my prayer be set before you like incense; may the lifting up of my hands be like the evening sacrifice"), and mediaeval melismatic hymns, anthems (kc'urd) connected with the melismatic art of *Manrusumn*, as well as to *Step'anos Siwnec'i* and his sister *Sahakaduxt* to whom are ascribed multiple anthems. Connected with this, as a continuation of his focus, the article explores the connection between the art of the Breviary and its songs and anthems (both eliminated and lost in later liturgical tradition and widely ignored in current scholarship, such as the content of anthems and texts, the content of *Manrusumns*, the method of reflection on the text, neumatation, manuscript tradition, etc.). Special attention is given to the anthems with an acrostic of *Step'anos* (one found and presented in the article for the first time; another, for the first time with a critical text), with their musical structure meticulously explored, as non-stanzaic sequential development where the chained arches are several melismatic syllables. Also presented are the issues connected with mediaeval anthems, their musical features, loci in the manuscript tradition, the transmission and transformation of the anthem by Sahakaduxt in Cilician Books of Litanies and Odes as melismatic *Meledi*, with more melismatized structures. As an example of the "floating" melodies of anthems (which bear significantly deep meaning), is presented the motive from the anthem of *Step'anos* which appears as one of the above mentioned evening Psalm (141:2) melodies. All these examples show a continuously creative and rich melismatic tradition, lasting in transformations and variations at least from the 7th century up until the Cilician period, the layers of which are difficult to separate and delineate from one other.

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր
viktor-katvalyan@mail.ru*

ԱԼԻՇԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Բանալի բառեր՝ հայագետ, բարբառ, ժողովրդական խոսք, աշխարհաբար, Վանի բարբառ, ազգային երգ, բարբառային հատկանիշ, ասացվածք, հոդվածաշար, գրաբար:

Ղևոնդ Ալիշանը հայագիտության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի հետազոտողի, ստեղծագործողի խորաթափանց մտքով, գիտական հետաքրքրությունների և գործունեության աներևակայելի ընդարձակությամբ, գիտական ու գեղարվեստական հսկայածավալ ժառանգությամբ: Նրա ստեղծած հայագիտական հարուստ շտեմարանը հսկայական նյութ է մատուցում հետազոտողներին և նորանոր եզրահանգումների հնարավորություն տալիս: Ալիշանի ժառանգության մեջ գիտական իրենց հետաքրքրություններն ունեն նաև բարբառագետները:

Ինչ խոսք, Ղևոնդ Ալիշանը բուն բարբառագիտական բնույթի որևէ աշխատություն չի հեղինակել, և դա բնական է, որովհետև 19-րդ դարի կեսերին հայ իրականության մեջ բարբառները, ժողովրդական խոսքն ընդհանրապես, դեռևս առանձին և հիմնավոր ուսումնասիրության առարկա չէին դարձել, ավելին՝ շատ հաճախ մերժելի իրողություններ էին համարվում: Սակայն հայ բարբառագիտության պատմության համար մեծ կարևորություն ունեն Ալիշանի մի շարք դիտարկումներ, հրապարակումներ, որոնց միջոցով հնարավոր է դառնում նորովի մեկնաբանել բարբառագիտական որոշ հարցեր: Խոսքը նախ և առաջ վերաբերում է «Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վրա»¹ հոդվածաշարին և «Հայոց երգք ռամկականք» ժողովածուին²: Ալիշանը հանդես է գալիս որպես ժողովրդական բանարվեստի, մասնավորապես՝ պոեզիայի առաջին գնահա-

¹ **Ալիշան Ղ.**, Երկեր, Եր., 1981, էջ 99-114: Հոդվածաշարի հոդվածները հրապարակվել են «Բազմավեպ» հանդեսի 1843 (թիվ 21), 1845 (թիվ 7, 16), 1847 (թիվ 6, 17), 1848 (թիվ 6, 10, 22) թվերի համարներում:

² **Ալիշան Ղ.**, Հայոց երգք ռամկականք, Վենետիկ, 1852:

տողներից մեկը հայ իրականության մեջ: Նա համոզված էր, որ «ազգի մը պատմությունը, բնավորությունները, սովորությունները, լեզուն ու լեզվին զանազան փոփոխությունները ոչ միայն գրավոր պատմություններե կիմացվին, հապա նաև ան գրավոր հիշատակարաններեն առաջ՝ անգիր ավանդություններով կհաստատվին»¹: Այդ համոզումից ելնելով էլ՝ հայագետը փափագելի է համարում, որ «մեր ազգայինք ալ ուրիշ բարեկիրթ ազգաց պէս վառվեն ազգային ավանդությանց սիրովը ու ձեռքերնեն եկածին չափ ջանային հավաքել այնպիսի երգեր, անմեղ խաղեր, պատմություններ ու առակներ, ետքը ուրիշներուն ալ հաղորդեն, կամ առանձին տպագրությամբ և կամ ազգային օրագիրներեն մեկուն խրկելով»²: Իր փափագը գործադրելու նպատակով էլ Ալիշանը «Բազմավեպի» 1843 թվի 21-րդ համարում ներկայացնում է Վանա լճում խեղդված կտրիճի երգը «ան կողմերուն մաքուր լեզուովը»³: Ալիշանը բարձր է գնահատում բարբառային լեզուն, ըստ նրա՝ այնքան պարզ և գեղեցիկ է բանաստեղծությունը, ազդու և վառվռուն է ոճը, որ կարդալու ժամանակ մոռացվում է աշխարհաբար լինելը⁴: Բանաստեղծության արժանիքները ներկայացնելուն զուգընթաց հայագետը նաև բարբառային բառերի բացատրություն է տալիս, ինչպես՝ *տէխ* բառը *դէհն* է, այսինքն՝ դի, կողմ, դեպի, *դնդնէր*՝ ալիքներն են, *սար*՝ լեռ, *ձիկ*՝ զիս⁵: Ոտանավորը անարվեստ է, գրում է Ալիշանը, բայց այդ պատճառով էլ ավելի բնական է: Ռամկական երգը գրեթե միշտ պարզ և ռամիկ լեզվով է գրվում: Հայագետը եզրակացնում է, որ «այսպիսի բանաստեղծություններն են, որ ազգին անարատ ու սկզբնական հանճարը կհասկցնեն մեզի»⁶: Ըստ Ալիշանի՝ թեև երգի հեղինակը ուսում առած մեկը չէ, բայց շարադրանքը այնքան լավ քերականություն ունի, որ իմաստունը կարող է ապշել⁷: Նկատենք, որ 1843թ. «Բազմավեպ»-ում գետեղված այս երգը Հ.Աճառյանի կազմած՝ Վանի բարբառի մատենագիտության մեջ փաստորեն ներկայանում է իբրև բարբառի ամենավաղ հրապարակված նմուշ⁸: Եվ այդ նմուշը հարազատորեն ներկայացնում է հետագայում ուսումնասիրողների կողմից դիտարկված՝ Վանի բարբառին բնորոշ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են բաղաձայնների քմայնացումը (գեռոաց/գժոաց/, կեայ/կիա/, կիւգայ

¹ Ալիշան Ղ., Երկեր, էջ 99:

² Նույն տեղում, էջ 100:

³ Տե՛ս նաև նշվ. աշխ., էջ 100-101:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 101:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 102:

⁸ Տե՛ս Հ.Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Եր., 1952, էջ 7:

/կծգա/, ինկեանք /ինկյանք/, հատուկ տեղանունների ենթարկվելը Ա հոլովման (Վանայ, Աղթամարայ, Ոստանայ), բացառական հոլովի ձևավորումը ինչպես *ց*-ով, այնպես էլ *չ*-ով (աւանուց, աչքէս), ներգոյական հոլովի իմաստի արտահայտությունը հայցականով (Արուն երակներս կպաղի), որոշիչ հոդի սահմանափակ կիրառությունը (Թուխ ամպեր երկինք պատեցին), անորոշ հոդի հետադաս կիրառությունը (գուր մի), անձնական դերանվան տրականի *ձիչ* ձևը, բարբառային բառերի ու բառաձևերի գործածությունը (տեխ, դնդրդ, ըսկի, պաղել, թուխ, ճամպար) և այլն: 1847թ. «Բազմավեպ»-ի թիվ 6 համարում Ալիշանը ներկայացնում է մեկ այլ երգ¹, որի նյութը 1605 թվին Շահ Աբասի կողմից հայերի տեղահանությունն է դեպի Պարսկաստան: Հայագետը նշում է, որ երգը շարադրել է Հին Ջուղայի Շամբ անունով գյուղի մոտ գտնվող Նախավկայի վանքից Ստեփան վարդապետը, որը ժամանակակիցն է գաղթի, և խոսքից երևում է, որ ջուղայեցի է²: Այլ կերպ ասած՝ Ջուղայի բարբառով այդ նմուշը, ըստ Ալիշանի, վերաբերում է 17-րդ դարի սկզբին: Նկատենք, որ 1940թ. հրապարակված «Քննութիւն Նոր Ջուղայի բարբառի» աշխատության մեջ Հ.Աճառյանը, խոսելով Ջուղայի բարբառով գրվածքների մասին, նշում է, որ եղած բոլոր գրվածքները (որոնցից ամենավաղը՝ «Աղերսագիր հայոց»-ը, գրվել է 1658 թ, իսկ մյուսները հիմնականում 19-րդ դարին են վերաբերում) անունով են միայն Ջուղայի բարբառով, բոլորն էլ գրված են գրական լեզվով՝ պարունակելով որոշ ժողովրդական տարրեր: Աճառյանը եզրակացնում է, որ կարելի է ասել, թե Նոր-Ջուղայի բարբառով գրվածքներ բոլորովին գոյություն չունեն³: Աճառյանի տեսակետը հետագայում հաստատում է Ա.Ղարիբյանը⁴: Այսպիսով, պետք է փաստենք, որ հայ բարբառագետների տեսադաշտից դուրս է մնացել Ղ. Ալիշանի հրապարակած երգը, որը հարազատորեն ներկայացնում է Ջուղայի բարբառի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը (խարիր, խազար, խիմի, խօր, խայրենիք), *այ* երկբարբառի դիմաց *է*-ի գործածությունը (էս, էսպէս, էնպէս), *ման* վերջավորությամբ անկատար դերբայի կիրառությունը (գնաման աք, թողման աք), ի դեպ՝ Հ.Աճառյանը նշում է, որ *ման* վերջավորությամբ դերբայը հատուկ է միայն Ջուղայի բարբառին: Ջուղայի բարբառում *եւ* օժանդակ բայի ձևերն են՝ *ամ*, *աս*, *ա*, *անք*, *աք*, *ան*, որոնք իրենց դրսևորումն ունեն դիտվող երգում (մոռանում աք, վախում ամ): Ասվածը մեզ թույլ է տալիս

¹ Տե՛ս նաև **Ղ.Ալիշան**, Երկեր, էջ 106-107:

² Նույն տեղում, էջ 106:

³ Տե՛ս **Հ.Աճառյան**, Քննութիւն Նոր-Ջուղայի բարբառի, Եր., 1940, էջ 39-40:

⁴ **Ա.Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 254:

վստահաբար արձանագրել, որ դիտվող երգը Ջուդայի բարբառով մեզ հասած ամենավաղ նմուշն է:

Հոդվածաշարի հոդվածներից մեկում էլ Ալիշանն անդրադառնում է առածներին ու ասացվածքներին¹, նշում, որ ազգի մեջ գործածվող առակներն ու առակի պես կարճ խոսքերը պետք է համարվեն ազգի բարոյական համառոտ նկարագիրը²: Ուստի կարևոր է, որ դրանք ևս հավաքվեն ու տպվեն: Հայագետը մեջբերում է Հայաստանից ուղարկված առածներ³, որոնց մեծ մասը, ի դեպ, վերաբերում են Արարատյան բարբառին, ինչպես՝

*Շունը շան միսը չի ուտիլ.
Պստիկ է, բայց ճստիկ է.
Քարը քարին քսես՝ կրակ դուրս կգա.
Ով չուստ՝ նա կուշտ.
Պանիր ու հաց՝ սիրտը բաց.
Բդավան կատուն մուկ չի բռնիլ.
Խուփը գլորվել ա, կճուճը գտել ա.
Գող՝ սրտումը դող և այլն:*

Այս հատվածը ամփոփելով՝ նկատենք, որ իհարկե, Ալիշանը ժողովրդական կամ ռամկական լեզուն առավել չի համարում, քան բարձր, վսեմ և գեղեցիկ գրաբարն է: Եվ դա հաճախ երևում է նրա այն դիտարկումներից, թե գրվածքը թեև ժողովրդական պարզ լեզվով է գրված, բայց արժեքավոր է: Խնդիրն այն է, որ Ալիշանը չի հակադրում ռամկորենը գրաբարին, չի մերժում նրա գոյության իրավունքը, այլ արժևորում է, փորձում է ճանաչել և գնահատել, իսկ ժամանակի համար նման մոտեցումը արդարացի էր և խիստ առաջադիմական:

Խորապես գնահատելով ժողովրդական բառ ու բանը, հայ հանրությանը հորդորելով զբաղվել ազգային երգերի, ժողովրդական առակների, առածների ու ասացվածքների, ավանդությունների հավաքմամբ և ուսումնասիրությամբ՝ Ալիշանը առաջինը ինքն է զբաղվում այդ գործով: Նա Վենետիկի, Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի մատենադարանների հայկական գրչագիր մատյաններում տարբեր ժամանակներում գրի առնված ժողովրդական երգերի մի փունջ 1852թ հրատարակում է հայերեն և անգլերեն՝ «Հայոց երգք ռամկականք» խորագրով: Ծանոթագրություններում նշում է, որ տարբեր բարբառներ ներկայացնող երգերն ստեղծվել են 13-14-րդ դարերից մինչև 17-րդ դարը, և դրանց մեծ մասը ինքը քաղել է

¹ Տե՛ս **Ղ.Ալիշան**, նշվ. աշխ., էջ 107:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 108:

Սուրբ Ղազարի գրադարանի ձեռագրերից¹: Ժողովածուում ընդգրկված են 19 երգեր, որոնցից 11-ի լեզուն միջին հայերենն է: Բացի «Բազմավեպում» հրապարակված վերոհիշյալ երգը (այն կրում է «Ի նաւակոծեալն ի ծովուն Վանայ» խորագիրը), ժողովածուում ընդգրկված են Վանի բարբառով գրված ևս երկու երգեր՝ «Երգ կաքաւու»² և «Երգ արագլի»³ խորագրերով, ընդ որում՝ առաջինը կոմիտասյան «Կաքավիկ» երգի մի տարբերակն է: Այս երգերում նույնպես Վանի բարբառի հատկանիշները հստակ արտահայտված են: Այսպես, առկա են քմայնացած ձայնավորներ ու բաղաձայններ՝ *կեաքեաւ* (կաքավ), *տիւս* (տծս), *կիւկան* (կծկան), հինհայերենյան *ոյ* երկբարբառի դիմաց գործածվում է քմայնացած *Ք* (բեոն /բՔն/, գեոն/գՔն/), *հ*-ի դիմաց հանդիպում է *խ* /խաց/, գործածվել են դերանվան *քմե*, *մեզի*, *քե*, *քեզի* ձևեր, հատկացուցիչը ստանում է որոշիչ հոդ՝ *սարին ծերէն*, *դարին վերէն*, գործածվել են բարբառային բնորոշ բառեր (խորոտիկ, իրիշկել, կրկրալ, պգտիկ, ճըլվըլ, ադուորիկ, ըմէն, ըսկի, երկէն) և այլն: Ի դեպ, ծանոթագրություններում Ալիշանը նշում է, որ Վանի մարդիկ հատուկ բանաստեղծական շնորհք ունեն, և բերված երգերը նմուշներ են նրանց ժողովրդական լեզվի և բանաստեղծության⁴: Ժողովածուում ընդգրկված երկու երգեր էլ՝ «Երգ հարսին»⁵ և «Երգ հարսանեաց փեսայի»⁶ վերնագրերով, թերևս ներկայացնում են Մշո բարբառի խոսվածքներ: Այս երգերում դրսևորվել են Մշո բարբառի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սդումը (թագուր, կաքըներ, ճընճըղներ, մըշկըներ, ալըրթաթախ, ջաղցըպան), *ոյ* երկբարբառի դիմաց *ու*-ի գործածությունը (քուր), *ություն* ածանցի *ութեն* հնչատարբերակի կիրառությունը (գորութեն), դերանվան յուրահատուկ ձևերի առկայությունը (դուն, քու, քեզի), անորոշ հոդի հետադաս գործածությունը (կուռէ մը, թագուր մը), *զ* նախդրի կիրառությունը (զխաչ, զկոունկն), անվանական բնորոշ ձևերի առկայությունը (դիզան, ուր՝ *հր*, որը՝ *ուի*), բայական բնորոշ ձևերի առկայությունը (գացէք, իզա, պիտէր, էնէ, կիզէր) և այլն: Երգերում զգալի քանակության բարբառային բառեր ու արտահայտություններ կան, ինչպես՝ *տախթիկ*, *հերիկ*, *մերիկ*, *աղբեր*, *հանգուրց*, *ջոկել*, *ճամբա*, *տերիկ*, *կըղալ*, *ջօլ*, *ֆաս*, *խաթրիկ*, *բէտ*, *խէրն ու բարին*, *սէյրան անել* և այլն: Հետաքրքրական է, որ երգերից երկրորդում առկա է մի հատված, որտեղ գործածվում են Ել ճյուղի բարբառներին

¹ Տե՛ս Ղ.Ալիշան, Հայոց երգք ռամկականք, էջ 83:

² Նույն տեղում, էջ 57-59:

³ Նույն տեղում, էջ 61-63:

⁴ Նույն տեղում, էջ 85:

⁵ Նույն տեղում, էջ 37-41:

⁶ Նույն տեղում, էջ 41-47:

հատուկ բայական ձևեր, ինչպես՝ *մըմըմալ էն, կըղկըղալ էն, ճըլըստալ էն*: Երգերից մեկի վերաբերյալ Ալիշանը ծանոթագրություններում գրել է, որ տարբերակները շատ բազմազան էին, և իր ներկայացրածը դրանցից կազմված միջին մի տարբերակ է¹: Հնարավոր է, որ «Երգ հարսանեաց փեսայի» երգում հիշյալ հատվածը հայտնվել է նույն ճանապարհով: Եվ վերջապես, «Հայոց երգք ռամկականք» ժողովածուում ընդգրկված երգերից երկուսը՝ «Սուգ դստեր մեծի իշխանի»² և «Երգ երեխայից»³ վերնագրերով, ներկայացնում են Արարատյան բարբառի մի տարբերակ: Այդ են վկայում հնչյունական իրողությունները (էս, էսօր, լուս), ներկայի կազմությունը (ինչ էս ասում, չեմ հասկանում, գրում էր, լալում էին, խաղում էին), բայական այլ ձևեր (սեւ էր դառել, դրած էր, չեմ տեսած), բառային միավորներ ու արտահայտություններ (Ճարըդ կտրած, կրօնք, լեզուդ սեւնայ, բերանդ չորնայ, մերիկ, սեւ բաղդ, մինակ, վոնց, հերիք, մին) և այլն: Հավելենք, որ ժողովածուում ընդգրկված է նաև վերնում հիշատակված՝ Ջուղայի բարբառով գրված երգը՝ «Ողբ Ջուղայեցուց» վերնագրով:

Այսպիսով, Ղ.Ալիշանը բարբառային հայերենի արժևորման և ուսումնասիրման համար ուղի հարթող առաջին հայագետներից մեկն է, որը նաև արձանագրել և սերունդներին է փոխանցել բարբառագիտական հետազոտությունների համար գիտական կարևոր նշանակություն ունեցող արժեքավոր նյութ:

ВИКТОР КАТВАЛЯН
Доктор филологических наук

РЕЗЮМЕ

РОЛЬ АЛИШАНА В ИЗУЧЕНИИ ДИАЛЕКТНОГО СЛОЯ АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ПОЭЗИИ

Ключевые слова: арменовед, диалект, просторечие, ашхарабар, диалект Вана, национальная песня, диалектные признаки, пословица, цикл статей, грабар.

Ряд наблюдений, комментариев и публикаций Алишана имеют большое значение для истории армянской диалектологии. Алишан был одним из первых арменоведов, проложивших путь к оценке и изучению диалектного армянского языка, он также записал и передал будущим поколениям ценный материал для

¹ Նույն տեղում, էջ 84:

² Նույն տեղում, էջ 7-11:

³ Նույն տեղում, էջ 69:

диалектологических исследований. Песня «Плач жителей Джульфы», изданная Алишаном в 1847 г. в 6-м выпуске «Базмавепа», является самым ранним образцом на диалекте Джульфы, а песня, представленная Алишаном в 21-м номере «Базмавепа» /1843 г./ - самый ранний зарегистрированный образец Ванского диалекта. В сборник «Армянские популярные песни» Алишан также включил песни на диалектах Муша и Арарата, эти песни также важны для изучения развития диалектного армянского языка.

VIKTOR KATVALYAN

Doctor of Philology

ABSTRACT

ALISHAN'S ROLE IN STUDYING THE DIALECT LAYER OF ARMENIAN MEDIEVAL POETRY

Key words: armenologist, dialect, vernacular language, ashkharabar, Van dialect, national song, dialectal signs, proverb, series of articles, grabar.

A number of observations, comments and publications of Alishan are of great importance for the history of Armenian dialectology. Alishan was one of the first Armenologists who paved the way for the assessment and study of the dialectal Armenian language; he also recorded and passed on to future generations valuable material for dialectological research. The song "Lament of Julfa", published by Alishan in 1847 in the 6th issue of Bazmavep, is the earliest example in the Julfa dialect, and the song presented by Alishan in the 21st issue of Bazmavep / 1843 / is the earliest registered sample of the Van dialect. In the collection "Armenian Popular Songs" Alishan also included songs in the dialects of Mush and Ararat, these songs are also important for studying the development of the dialectal Armenian language.

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՄՏՔԻ ԵՐԵՔ ՊԱՀ
(Լեզվագետ. դիցաբան, բառագետ)

Բանալի բառեր՝ Բանասիրական-բնագրագիտական քննություն. Ալիշանի գիտական ներդրումը. լեզվագիտություն, դիցաբանություն, բառագիտություն, նոր մեկնաբանումներ:

Ներածություն

Հայ մտավոր իրականությունը թե՛ անցյալում և թե՛ համեմատաբար նոր ժամանակներում ունի մեծություններ, որոնք գրավոր աշխատանքում ծավալել են համապարփակ գործունեություն՝ անխոնջ առօրյայով, առանձնյա նվիրումով առ ինքնություն իր հայրենիքի ու իր հանրության: Նրանք, իրոք, մեծ զավակներ են, հանրագիտարանային մտքի տեր, ամբողջական և կուռ ներկայություն: Այդպիսին է հայր Ղևոնդ Ալիշանը՝ ամենագետ և ամենատես, իր և մեր Ժամանակին թև տվող:

Մեր այս հոդվածում սեղմ անդրադառնում ենք նրա վաստակի մի մասին՝ իբրև լեզվագետի, իբրև դիցաբանի և իբրև բառագետի:

1. Ալիշանի երկերի լեզվագիտական կողմը:

Այս թեմային մասամբ անդրադարձել ենք տարիներ առաջ նոր շրջանի գրաբարի պատմությանը նվիրված մեր մի աշխատության մեջ¹: Նկատել ենք, որ նոր շրջանի գրաբարի զարգացման գործին որոշակի նպաստ են բերում հայ մշակույթի տարբեր դպրոցների ներկայացուցիչներ, որոնց թվում առավել մեծ է անմահ Մխիթարյանների գործունեությունը:

Ղ. Ալիշանը այս բնագավառում նույնպես ունի նկատելի ավանդ՝ մեծ մասամբ աշխարհաբար, որոշ դեպքերում գրաբար երկասիրություններով: Նրա երկերից այս դեպքում առավել ուշագրավ են գեղարվեստական, տեղագրական, պատմական աշխատությունները, չափածո թարգմանությունները, որոնք հրապարակ են եկել նրա գործունեության գրեթե բոլոր շրջաններում՝ վաղ և հետագա:

Այս հարցում Ալիշանը ոչ թե տեսաբան է, այլ գործնական կիրառող. նա իր այդ կարգի երկերը գրում է մի այնպիսի լեզվով, որ հեղինակային անհատական ոճի բովով անցնելով՝ դառնում է նոր գրական հայերենի

¹Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990, էջ 123-124:

յուրօրինակ նմուշ, օրինակ՝ հետագա գրական միջավայրի համար:

«Նուագք» (հհ.1-2, Վեն., 1857-1858) ժողովածուի մեջ, օրինակ, զետեղված ընդհանուր դրվածքով գրաբար բանաստեղծությունները, անկախ կրոնական, ավելի լայն՝ աստվածախոսական թեմատիկայից և աշխարհընկալումից, ուշագրավ են նաև այն առումով, որ արտացոլում են ժամանակի լեզվական կացությունը, որ պարունակում են ոչ միայն աշխարհիկ մտածողության երանգներ, այլև վերջիններն արտահայտող բառեր և բառաձևեր, ոճեր և արտահայտություններ: Այդ երկերը, կարելի է ասել, նոր ժամանակաշրջանի գրաբար հայերենի լավագույն նմուշ են, որ յուրովի հիմք հանդիսացան հայ նոր չափածո խոսքի հետագա արմատավորման և առաջընթացի համար:

Նոր ժամանակներին յուրահատուկ լեզվամտածողությունը առկա է Ալիշանի «Ընդ եղենետա» (Վեն., 1874 թ.) գրաբար երկում: Գրաբար հայերենով են շարադրված նաև ներհուն գիտնականի տեղագրական երկերը՝ «Շիրակ» (Վեն., 1881 թ.), «Այրարատ» (Վեն., 1890 թ.) և «Միսական» (Վեն., 1893 թ.) ստվար աշխատությունները: Դրանց լեզուն, իհարկե, ժամանակի գրաբարն է, որը ներառում է ոչ միայն գիտաճյուղային այս կամ այն կարգի և հայերենի տարբեր շրջաններում կիրառված տերմիններ և տերմինային անվանումներ, այլև ժամանակի հայերենի խոսակցական տարբերակներում գործածվող տեղանուններ ու շրջակա միջավայրի այլ կարգի անվանումներ, որոնք երբեմն բերվում են երկու և ավելի ձևերով: Լեզվի խոսակցական տարբերակում այս կամ այն վայրի օտարլեզվյան անվանումը հաճախ ներկայացվում է հայերեն նորակազմ բառով, տերմինով, բառակապակցությամբ:

Շատ հաճախ, ի դեպ, իրականության բերումով ստեղծվում են տերմիններ և տերմինային անվանումներ, և դրանք բնագրերում տրվում են շեղատառ, ընդ որում կից փակագծերում նշվում է նաև դրանց եվրոպական համարժեքները (անվանումները): Այս դեպքում, կարելի է ասել, Ալիշանը հանդես է բերում լեզվագետի, ավելի կոնկրետ՝ բառագետ-տերմինաբանի մեծ փորձառություն: Արդի գիտությանն են անցել տարբեր ճյուղերի բազմաթիվ տերմիններ, որոնց ակունքները Մխիթարյան հայերի, ընդ սմին՝ Ալիշանի երկերում են: Բավականին արդիական է ներկայումս այդ տերմինաբանության գիտական ուսումնասիրության հարցը:

Ալիշանը հեղինակ է նաև գրաբար տարբեր թարգմանությունների՝ Բայրոնի «Իտալիա» (Վեն., 1860 թ.), Ռուդոլֆ Հավերբունտ «Վիպասանութին ի Յ. Լատիսլաւայ Բիրքեր» (Վեն., 1858 թ.), Ֆ. Շիլլերի «Երգ ի զանգակն» (Վեն., 1871 թ.), «Քնար ամերիկեան» (Վեն., 1874 թ.):

Դրանցում տեղ են գտել բազմաթիվ նորամուծություններ՝ գրաբարի

բառապաշարի առումով, սովորական բառեր, նոր տեղանուններ և անձնանուններ՝ իբրև բառային-անվանումային նորակազմություն: Այդ թարգմանություններում Ալիշանը գրաբարի բառապաշարի, քերականական ձևերի հմուտ կիրառող է, և գործնականում մի տեսակ չունի մտահոգություն բնագրին համապատասխան բառի և քերականական ձևի ընտրության, դրանց վայելույ, տարբերակված կիրառության հարցերում, այսինքն՝ հանդես է բերում ազատ մոտեցում գրաբարին բնորոշ ձևերի կիրառության մեջ:

Եվ այս ամենը նշանակում է, որ գրական լեզվի վերաբերյալ, այսպես կոչված, խմորումների պարագայում Ալիշանը միասնական և կենդանի լեզվի կողմնակից է, նոր շրջանի գրաբարի, և գրական աշխարհաբարը նա գործածում է միասնաբար և հմտորեն, անխտիր և իմացական առումով խնամողաբար:

2. Ալիշանը հայոց դիցարանի մեկնաբան. Վահագնի դիցական կերպարը:

Հայոց հին հավատքին նվիրված աշխատության մեջ ավելի մանրամասն վերլուծությամբ, քան իր նախորդները, Ալիշանն անդրադառնում է «Երկներ երկին, երկներ երկիր...» հատվածին:

Նախ՝ զուգահեռներ է անցկացնում հայ *արեւ* // *արեգ* տարբերակների և սանսկրիտի *रवि* (*ravī-s*) ձևերի միջև, այնուհետև նկատում է, որ Վահագնի կերպարի մեջ (ոմանք) տեսել են կոնկրետ անձնավորության. վիպական կերպարանք են ստանում բնության բաղադրիչները՝ *երկինք* և *երկիր*, *ծով* և այլն, որոնք ոչ միայն հավատալիքի տարերք (բաղադրիչներ) են, այլև իրական անձերի մարմնացում՝ սիրելի թագավորի և դյուցազնի, Տիգրանի, Ժամանակակցի Կյուրոսի¹:

Այնուհետև՝ Ալիշանը չի բացառում երևույթի, այսպես կոչված, համաբանական (անալոգիական) լինելը՝ համեմատությամբ հնդկականի, նույնիսկ փոխառություն հնդկական պանթեոնից. հմմտ. հնդկ. *Ահնի*, հայ. *Վահակն* (լատ. *Ignis* «հուր, կրակ», հուն. *Άγνος* և այլն)²:

Ի դեպ՝ հետագայում Գ. Հովսեփյանցն իր աշխատանքներից մեկում ունի այս թեմային առնչվող մի ուշագրավ դիտարկում՝ «Պառաւի աղօթք»-ից. «լուսացաւ լուսն ի բարին, / Հաւատով տէր կենդանին, / Երկինքն ծով ծիրանի, / Սըփ կուս Մայրամ նստաւ սըփ սեղանին...»: Իսկ տողատակում նշվում է, որ դա «Ժողովրդական բանաստեղծութեան հին նշմարներից մեկն է, «Երկներ երկին և ծիրանի ծով», երգում էին Խորենացու

¹ Հ. Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 86:

² Նույն տեղում էջ 86-87:

Ժամանակ և ո՞վ գիտէ՝ ո՞րքան էլ նրանից առաջ»¹:

Հայտնի է, որ Ալիշանից առաջ այդ խնդրին անդրադարձել էր Մ. Էմինը: Նա մերժում է հայ. Վահագն և իրան. Վերեթրագնա անունների զուգադրումը, որ տալիս է Վինդիշմանը, և որին հետևում է, ըստ Էմինի, Ք. Պատկանյանը՝ ելնելով հատկապես այն հատկանիշներից, որ ունի Վերեթրագնան, և որոնք բացակայում են Վահագնի կերպարում²: Սրան ժամանակին անդրադարձել է Պատկանյանը և մերժել Էմինի նման վերագրումը³: Այս համեմատության մեջ ուշագրավ է այն, որ ինչպես ցույց են տալիս նոր ուսումնասիրությունները, առասպելականի զուգահեռությունն ունի ընդհանուր հնդեվրոպական հիմքեր: Աշխատանքում կա նաև անդրադարձ Ան. Շիրակացուց եկող հայտնի «պատումին», որ տիպաբանորեն համեմատելի է այլ ժողովուրդների նույնպիսի պոեմների հետ, իսկ դա ոչ այլ ինչ է, քան բուն առասպելականի կողմնակի գիծ, որովհետև ոչ կողմնակին՝ առանցքայինը լեզվական գիծն է:

Այս համատեքստում նկատենք, որ Վահագնի կերպարի ձևափոխումները (հիպոստասները) տեղի են ունենում ոչ միայն ժամանակային, այլև մշակութային փոփոխության (հերթագայության) հիմունքով, այն է՝ մինչքրիստոնեականի (հեթանոսականի) և քրիստոնեականի լծորդություն, սովորական իրականի և գերիրականի (դիցականի) հերթագայություն և այլն, որոնք հետագայում, այն է՝ վաղ միջնադարի մշակույթի մեջ ունենում են պատմական-փիլիսոփայական նշանակություն: Այս իրողությունը տեսնում ենք ոչ միայն հայ, այլև հնդեվրոպական այլ ժողովուրդների (հունական, գերմանական և այլն) մշակույթներում⁴:

Ալիշանի աշխատության մեջ առավել տեղին է այն, որ քննվում է առասպելականի առնչությունը պատմականին, այսինքն՝ այն փորձերին, որոնք եղել են պատմական կոնկրետ դեմք հանդիսացող Երվանդի կերպարի մեջ տեսնել Վահագնի առասպելական-դիցաբանականը՝ ժամանակի հերթագայության անտեսումով⁵: Նա ֆունկցիոնալ կապ է տեսնում հայկականի՝ ոչ միայն հնդկական, այլև առավելապես իրանական նույնպիսի բովանդակության պատումների հետ: Վահագնի պաշտամունքը

¹ Գ. Յովսէփեանց, Փշրանքներ ժողովրդական բանահյուսութիւնից, Թիֆլիս, 1892, էջ 77:

² Н. О. Эмин, Вахагн Вишапаках армянской мифологии есть Индра-Vritrahan Риг-Веды (Несколько страниц сравнительной мифологии), СПб., 1873, էջ 9-10 (տե՛ս նաև “Труды Восточного отделения Русского Археологического Общества”, часть 17, СПб., 1874, էջ 93-129):

³ К. П. Патканов, Замечания на статью г. Эмина // “Труды Восточного отделения Русского Археологического Общества”, ч. 17, СПб., 1874, с. 130-147:

⁴ Հմմտ. նույն տեղում, էջ 172-173:

⁵ Նույն տեղում, էջ 292:

համարում է բերված հնդկական միջավայրից՝ կապելով հայտնի էթնիկական տեղաշարժի հետ, և նրա պաշտամունքային վայրերը («տեղիները») հետագայում քրիստոնեության մուտքով փոխարինվեցին այլ կերպարներում, մի բան, որ վկայություն է մինչքրիստոնեականի և քրիստոնեականի հերթագայության (ալտերնացիա)¹ : Նման հերթագայություն (եթե ոչ մի քանի) կարելի է ենթադրել նախագրային ժամանակաշրջանի հայերենի պատմական-մշակութային ընթացքի մեջ:

Դասական հայագիտության կողմից կատարված բնագրային քննությունների համատեքստում Ալիշանի անդրադարձն ունի որոշակի կարևորություն *երկին(ք) / երկիր* հարաբերակցության դիցական-առասպելական նոր, ավելի հավանական տվյալներով ուսումնասիրության ձեռնամուխ լինելու համար:

3. Ալիշանի դիտարկումները Ռոշքայի ձեռագիր բառարանի մասին:

Այս դեպքում նկատի ունենք ներհուն գիտնականի բառարանագիտական մի դիտարկումը, որը ժամանակին եղել է բանախոսություն, այլև լույս տեսել «Բազմավեպ»-ի էջերում, որին անդրադարձել ենք մեր աշխատանքներից մեկում, այն է՝ բառագիտական քննություն Ստ. Ռոշքայի ձեռագիր բառարանի²:

Նախ՝ սկզբում թռուցիկ անդրադառնալով նախկինում եղած բառարանային փորձերին («Բառք» ընդհանուր վերնագրով ժողովածուներին՝ երևան եկած «անդստին յԺԳ և յառաջնոց իսկ դարուց») գրում է. «Իսկ ի ծանօթիցն մեզ ազգային Բառարանաց՝ ճոխութեամբ բառից և պատշաճ դասաւորութեամբ, և լատին թարգմանութեամբ, քաջ ի բաց գերազանցէ զայլովքն՝ Հայկազնեան Բառարանն Ստեփանոսի Ստեփանեան վարդապետի Ռոշքեանց Կամենիցացոյ, որոյ համբաւ վաղ ուրեմն հասեալ առ մեզ հանդերձ մասամբ ինչ փոքր գործոյն՝ աճեցուցանէր զփափագ բոլորին ևս ծանօթութեան, որում և հասաք անագան յետ գլխաւորելոյ տպագրութեան մեծիս մերոյ Հայկազեան Բառագրոց»³:

Նա առաջինն է, որ մանրամասն կարդացել և ի վիճակի է եղել պարզելու բառարանի ոչ միայն լեզվական ամբողջ նյութը՝ սովորական, հայտնի բառամթերքի և սրա հետ միաժամանակ նորի հաշվով, այլև այն գրավոր աղբյուրների գոյության փաստով, որոնք վենետիկյան միջավայրի համար եղել են անհայտ, ինչպես նաև բառերի բացատրության,

¹ Նույն տեղում, էջ 296-298:

² **Հ. Ղ. Ալիշան**, ճառ ընթերցեալ ի Հայկական ճեմարանիս: Տեսութիւն ի Գանձ լեզուին հայոց կամ Ստեփանեան բառարան // «Բազմավեպ» (ամսագիր), 1852, թ. 6, էջ 86-95: Տե՛ս Վ. Գ. *Համբարձումյան*, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.), հ. 2, Ե., 2015, էջ 69:

³ **Հ. Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 86:

լատիներեն և հունարեն աղբյուրների օգտագործման առումով և այլն¹: Նա առարկում է իր պաշտոնակիցներին, որոնք այդ բառարանին տևականորեն ծանոթանալուց, նույնիսկ իրենց մեջ մասերի բաժանելով արտագրելուց հետո, հավանաբար, այնքան էլ բարեհաճ չեն գտնվել, թերևս անտեսելու աստիճանի ձեռնպահությամբ են արտահայտվել:

Այդուհանդերձ, Ալիշանի հանձարը չէր կարող կողմնակալ լինել այդ դեպքում ևս, ուստի իր ճառը կառուցել է հիմնական դրույթների վրա, որոնք 6-ն են՝ «Նախ, թե ընդէ՞ր յոմանց ի մէջ կեդակարծելի դատեցաւ մատենան, կամ թէ ո՞րչափ հաւատարմութեան արժանի իցէ հեղինակն. Բ. Թէ ո՞ր իցէ հեղինակն և ուստի կամ ո՞ր հաւաքեաց զբառն. Գ. Ո՞ր այնորիկ իցեն թարգմանութիւնք յունականք և լատինականք. Դ. Զի՞նչ պատմական գրեանք յիշատակք ի նմա. Ե. Եւ զի՞նչ այլ նշանաւոր բանք կամ ամանորութիւնք կամ ականաւոր մատենագրաց վաստակք յիշատակեալք ...»²:

Հետագա շարադրանքում Ալիշանը մեկ առ մեկ քննարկում է այդ հարցերը, երբեմն հանդիմանական երանգով գնահատում եղած վերաբերմունքը «Բառգրքի» շուրջ: Նկատելի է, որ գործընկերներն այս հարցում եղել են մի տեսակ կողմնակալ, այնինչ Ալիշանը միանգամայն անաչառ է, այն է՝ վերլուծությունների և գնահատությունների միջոցով փորձում է վերաբժնորել այդ աշխատանքը, որ տասնամյակների ընթացքում (շուրջ երեսուն տարի) արել և ավարտին է հասցրել այդ «հայոց լեզվի գանձը», ընդ որում «երկու անգամ սրբագրեալ է, և յերրորդ սրբագրութեան հանգեալ ի Տէր»³:

Շեշտվում է, որ Ռոշքայի բառարանը ինչ-որ տեղ ունի առավելություններ վենետիկյան բառարաններից: Դրանք նկատելի են Ալիշանի առաջ քաշած դրույթներում, մի մասում՝ բազմակի փաստերով, մյուս

¹ **Հ.Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 87:

² Նույն տեղում:

³ **Հ.Ղ. Ալիշան**, Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ. Հաստատեալ յաւելուածովք, Վեն., 1896, էջ 201: Տե՛ս նաև Հ. Հ. Ոսկյան, Ստեփանոս Ռոշքա // «Հանդէս ամսօրեայ» (ամսագիր), 1965, էջ 145, 147 և այլն: Ի դեպ՝ Ոսկյանը բերում է մի հիշատակագրություն բառարանի վերաբերյալ, որում կա բառի՝ ժամանակի խոսակցական լեզվից եկող այլ գրություն, որը կա նաև Ալիշանի մոտ (ն. տ.)՝ ուղղագրությունը շտկված. «Եթէ ոք կամիցի զկատարելագոյն Բառգիրք հայկական լեզուով ունիլ, նմա պարտ է որոնել զՍտեփանոս վարդապետին շառադրեալն, որ յորջորջի *Գանձարան* լեզուին Հայոց շարադրեալ ... մեծաւ աշխատութեամբ, այս(ինքն) երեսուն և երրորդ ամս մինչեւ ամարտեալ է, զնա երկու անգամ սրբագրեալ է եւ ի *յերրորդ* սրբագրութանն հանգեալ ի տէր...» (ն. տ., էջ 144. ընդգշտումը մերն է – Վ. Հ.):

մասում՝ համեմատաբար սակավ, սակայն առկա է առարկայորեն (օբյեկտիվ) վերլուծողի մոտեցումը, այն է՝ իզուր են իր միաբանակիցներն անտարբեր այդ բառարանի գիտական արժեքի նկատմամբ:

Ստորև նշենք Ալիշանի առարկություններից մի քանիսը, որոնք բանասիրական և լեզվագիտական կարևորություն են ներկայացնում, բնականաբար հիմնված «Բառգրքի» դրականի վրա:

ա) Ալիշանը դեմ է այն առարկություններին, թե բառարանում երբեմն ստուգաբանական մասը անհավաստի է, կամ էլ նշվում են հեղինակներ, որոնք հայտնի չեն (ընդ որում ոչ միայն հայ, այլև լատին մատենագիրներ): Այս կետի առաջին մասի վերաբերյալ նա գրում է, որ «յայսմ թերութենէ և ոչ զոք ազատ համարիմ ի ստուգաբանից, զոմն առաւել և զոմն նուագ, և բազում ուրեք զիմաստունս անգամ հակա-կարծիս յայդոսիկ», իսկ երկրորդի վերաբերյալ հիշեցնում է, որ նախ՝ Ռոշթայի հեղինակներից մի քանիսը հետագայում հայտնի դարձան (օրինակ՝ «ցուցակաւ մատենից դիւանացն Էջմիածնի»), «իսկ օտարագգի մատենագրաց վկայութիւնք՝ ոչ այնքան ցանկագոյն են, որչափ կարծինն, այլ բաց ի միոյ կամ յերկուց՝ յոլովիցն երկու կամ երեք վկայութիւնք հազիւ գտանին» և այլն¹:

բ) Հստակ քննությամբ պարզելով բանասիրության մեջ առկա շփոթը երկու՝ Ստեփանոս Լեհացու և Ստեփանոս Կամենիցացու անձերի վերաբերյալ՝ երկրորդի համար ասում է. «իսկ կրսերն Ստեփանոս մականունանի Ստեփանեան Ռոշթայ կամ Ռոշթեան և սա ի Լեհաց, բայց ոչ ի Լովայ, այլ ի Կամենիցայ, որպէս նշանակեալ է ի գլուխ Բառարանին...», այնուհետև խոսում է վերջինիս վկայաբերած գրավոր աղբյուրների մասին, այն է՝ դրանք Անիից և Սսից գաղթած ունևոր հայերի բերած գրականությունն է եղել Լեհաստանի տարբեր քաղաքներում, «յորոց ի Լով միայն աւելի քան հազար ձեռագիր մատեանք գտանէին յաւուրս Նիկոլայ, զորս ցրուեաց և վաճառեաց նա, բայց և յետ նորա գտանէին մնացորդք ոչ սակաւք, յորոց և յիսնիւ չափ յետ հարիւր և աւելի ևս ամաց մահուան Ստեփանոսի փոխադրեցան այսր ի մերս թանգարան»²:

գ) Նշվում են օտար հեղինակների (մատենագիրների) անուններ (Պլինիոս, Կիկերոն, Սենեկա, Տերենտիոս, Կիպրիանոս, Պրոսպերոս և այլք), որոնց երկերի թարգմանությամբ, փաստորեն, հայերենում ստեղծվում են նորանոր բառեր: Ալիշանը գրում է, որ «զլիաւորք ի թարգմանութեանցդ են լատինականք. երկու կամ երեք մատեանք, յորս զառա-

¹ **Հ. Ղ. Ալիշան**, Ճառ ընթերցեալ ի Հայկական ճեմարանիս, էջ 87:

² **Հ. Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 88: Ալիշանն, իր հերթին, հղում է այդ մասին եղած աղբյուրները (ն. տ.):

ջին տեղին ունի Աշխարհագրութիւն ընդարձակ, յորմէ բառս յոլովս քաղեալ է, և բազում ինչ յայնցանէ պիտանիք են ի թարգմանութիւն նորագիտ իրաց և գործեաց, որոց վասն առ մեօք նորանոր հնարին բառք. այսպիսիք են, օրինակ իմն, *հրէտ* փոխանակ *թնդանօթի* կամ *հրանօթի*, *աղելից* կամ *խճուղ*, փոխանակ *խճողակի*, *ախաւեղ*, գորոյ ցարդ զբարդեալն գիտեաք *ախաւեղագէտ*, *ակնաւորիլ որթոյ* և այլն, և այլն»¹:

դ) Ալիշանը գտնում է, որ այս բառարանի վկայությունների շնորհիվ է, որ մեզանում հայտնի են դառնում «գլխաւորք ի պատմչացս ըստ պատուականութեան հնութեան և ճոխաբանութեան թուին ինձ հինգ կամ վեց, և այլ տասնիւ չափ յետ նոցա»՝ նշելով անունները և բնորոշելով կարևորությունը հայ պատմագրության համար (Մովսէս Խորենացին՝ իր Դ գրքով, Հովհաննէս պատմիչ, Մեսրոպ պատմիչ, Մատթէոս պատմիչ, Մխիթար պատմիչ՝ «որ և Անեցի թուի ինձ», Ստեփաննոս պատմիչ՝ «ոչ Ասողիկն և ոչ Ուոպելեանն, այլ հնագոյն և հնագունից ճառող», Հակոբ պատմիչ և ուրիշներ)²:

ե) Ռոշքայի բառարանի մեջ եղած մատենագրական վկայությունների բանասիրական բաղդատությամբ հնարավոր է պարզել բնագրագիտությանը մութ մնացած շատ հարցեր: Այդպիսին են, օրինակ, Պիտոյից գրքի, Խորենացու Պատմության Բ մասի (կամ հավելվածի) վերաբերյալ տեղեկությունները, այլն՝ Մամբրեի առնչությամբ, որ «գտրա բաց ի միոյ կամ երկուց ճառից՝ չունիմք մեք այլ ինչ գրուած, բայց գիտեմք զի է նորագրեալ և Պատմութիւն, և կարծիք են, թէ և մեկնութիւն Յովհաննոս աւետարանին»³: Ուստի կարելի է մտածել, որ ավելի է մեծանում բառարանի արժեքը հայ հին գրականության պատմության ամբողջացման առումով:

զ) Ոչ պակաս կարևոր է համարվում այն, որ բառարանում վկայություններ են բերվում ոչ միայն հին, այլև հետագա քերականներից, որոնց մի քանիսի անունն իսկ հայտնի չէ (Հովհաննէս Երզնկացու հիշատակած ցանկում չկան): Օրինակ՝ «քերական յիշի կրճատ անուամբ Գագ կամ թուի Գագիկ, թէպէտ և այլուր չիք իմ լուեալ քերական Գագիկ անուն, բայց չիք տեղի անհաւանութեան ընդունել և զդա ի թիւս քերականաց կամ մեկնչաց նորին»⁴:

է) Առավել ուշագրավ է Ալիշանի հետևյալ վերջնահաշիվ դիտարկումը. «Իսկ ի կնիք բանիցս ի պարծանս հեղինակի Բառարանին արժան

¹ Նույն տեղում, էջ 89:

² Նույն տեղում, էջ 90-93: Տե՛ս նաև **Հ.Հ. Ոսկյան**, նշվ. շխ., էջ 146: **Հ.Մ. Ճանաչեան**, նշվ. աշխ., էջ 125-138:

³ Նույն տեղում, էջ 93:

⁴ Նույն տեղում, էջ 94:

համարիմ յիշել և զճոխութիւն բառիցն, զոր թէպէտ ոչ արկի ի թիւ, այլ ոչ շատ պակաս քան զմերոյս մեծի բառարանի կարծեմ, իցեն իբրև 4500 կամ 5000 բառք նորագիտք ի նմա, զի իմ 4200 բառս նշանակեալ է անտի յիմում Առձեռն օրինակիս»¹:

Այսպիսով, ստացվում է, որ բառարանին նվիրված առաջին իսկ հոդվածը (մինչ այդ ասված՝ ճառը) բանասիրական առումով բավականին մանրամասն է, բառագիտական գնահատության մեջ՝ բարձր գնահատության արժանի, երախտիք է հեղինակի տասնամյակների աշխատանքը, և դա հետագա ուսումնասիրողների կողմից միշտ հաշվի է առնվում²:

Եզրակացություններ

Հոդվածում արծարծված հարցերի քննությունից հանգում ենք հետևյալին:

1. Այլշանը գործնականում լեզվի միասնական (ոչ միակողմանի) կիրառող է, նրա երկերում՝ ինքնուրույն կամ թարգմանական, բանասիրական կամ բանաստեղծական, նկատելի է լեզվի նկատմամբ ավելի լայն մոտեցում, անկախ ժամանակային, հասարակական, նույնիսկ տարածքային տարբերակվածությունից:

2. Հայ հնագույն ժամանակաշրջանի դիցաբանական պատկերացումներում Այլշանը ավանդականի հետևորդ է, պատմականության (իստորիզմի) դիրքերից իրականին առասպելականը առնչող, որ ժամանակի տեսական մտքի վկայություն է:

3. Ստացվում է այնպես, որ Այլշանի՝ Ստ. Ռոշքայի բառարանին նվիրված առաջին իսկ հոդվածը (մինչ այդ ասված՝ ճառը) բանասիրական քննության առումով տեղին է և մանրամասն, իսկ բառագիտական գնահատության մեջ՝ բավականին ամբողջական, ուստի այն օրինակ է այդ ոլորտում, որ չունեցավ հետևորդներ՝ հետագա ուսումնասիրությունների համար:

¹ Նույն տեղում, էջ 95:

² Ուշադրության է արժանի նաև այն, որ հետագայում Այլշանը հայերեն բուսանուններին անդրադառնալիս նկատի է ունեցել նաև Ռոշքայի բառարանի նյութերը: Հմմտ. **Հ.Ղ. Այլշան**, Հայբուսակ, հայկական բուսաբառություն, Վեն., 1895 (Տե՛ս նաև **Հ. Հ. Ոսկյան**, նշվ. աշխ., էջ 144):

ВАЗГЕН АМБАРЦУМЯН
Доктор филологических наук, профессор

РЕЗЮМЕ

ТРИ СФЕРЫ МЫСЛИ ГЕВОНДА АЛИШАНА (знаток языка, мифолог, лексиколог)

Ключевые слова: Филологическое-текстологическое изучение. научное внедрение Алишана. Теоретик языка, мифолог, лексиколог. новые замечания.

Литературно-филологическое, мифологическое и лексикографическое наследие Л. Алишана может стать предметом изучения с точки зрения изучения общих вопросов языка и практической оценки армянской лексики.

Имеются в виду топографические произведения из самостоятельных произведений автора, а из переводов — «Италия» Дж. Байрона (Венеция, 1860), «Песнь колокола» Ф. Шиллера (Венеция, 1871), «Американская арфа» (Венеция, 1874).

Его стихи и переводы написаны на древнеармянском языке того времени, а также на западноармянской версии Ашхархабара: стихи «Песни» (тт. 1-2, Венеция, 1857-1858), «У ели» (Венеция, 1874) и др.

Алишан — независимый мыслитель по ключевым вопросам армянской мифологии. В контексте текстуальных исследований, в области классической арменистики Алишан имеет самостоятельное представление о соотношении *երկիր* [erkink^c] “небо; небесная сфера” / *երկիր* [erkir] “земля; суша”, которое имеет определенное значение в армянской мифологии.

Он исследовал рукописный словарь “Сокровища армянского языка” Ст. Рошки, дал уникальную оценку лексико-филологическому анализу.

VAZGEN HAMBARDZUMYAN
Doctor of Philology, professor

ABSTRACT

Three Sphers of Chevond Alishan's Minds (of language, Mithologist, Lexiologist)

Key words: philological-textual studies. scientific implementation of Alishan, Language theorist, mythologist, lexicologist. new remarks.

L. Alishan's literary-philological, mythological and lexicographical heritage can be a subject of study in terms of general issues of language and practical evaluation of Armenian lexicon.

We have in mind topographical works from the author's independent works, and from translations - J. Byron's "Italy" (Venice, 1860), F. Schiller's "Song of the Bell" (Venice, 1871), and "The American Harp" (Venice, 1874).

His poems and translations were written in the ancient Armenian language of the time, as well as in the Western Armenian version of Ashkharhabar: poems "Songs" (vols. 1-2, Venice, 1857-1858), "At the Spruce Tree" (Venice, 1874), etc.

Alishan is an independent thinker on key issues of Armenian mythology. In the context of textual studies, in the field of classical Armenian studies, Alishan has an independent insight into the relation երկիր [erkinc] "heaven; heavenly sphere" / երկիր [erkir] "earth; land", which has a certain meaning in Armenian mythology.

He studied the manuscript dictionary "Treasures of Armenian Language" by St. Roşca and gave a unique assessment of lexico-philological analysis.

Գրականություն

Ալիշան Հ. Ղ., Ճառ ընթերցեալի Հայկական ճեմարանիս: Տեսութիւն ի Գանձ լեզուին հայոց կամ Ստեփանեան բառարան // «Բազմավէպ» (ամսագիր), 1852, թ. 6:

Ալիշան Հ. Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895:

Ալիշան Հ. Ղ., Հայրուսակ, հայկական բուսաբառութիւն, Վենետիկ, 1895:

Ալիշան Հ. Ղ., Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ. Հաւաստ-չեայ յաւելումովք, Վենետիկ, 1896:

Համբարձումյան Վ. Գ., Գրաբարի գործառնությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990:

Համբարձումյան Վ. Գ., Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.), հ. 2, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015:

Ճանաչեան, Հ. Մ., Ստեփանոս Ռոշբայի բառարանը (քննական տեսութիւն) // «Բազմավէպ» (ամսագիր), 1955, 6-7:

Յովսէփեան Գ., Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից, Թիֆլիս, 1892:

Ոսկյան Հ. Հ., Ստեփանոս Ռոշբա // «Հանդէս ամսօրեայ» (ամսագիր), 19665:

Эмин Н. О., Вахагн Вищапаках армянской мифологии есть Индра-Vritrahan Риг-Веды (Несколько страниц сравнительной мифологии), СПб., 1873, էջ 9-10 (Տե՛ս նաև "Труды Восточного отделения Русского Археологического Общества", часть 17, СПб., 1874, էջ 93-129):

Патканов К. П., Замечания на статью г. Эмина // "Труды Восточного отделения Русского Археологического Общества", ч. 17, СПб., 1874, с. 130-147:

**ԲՈՒՄԱՆՈՒՆԵՐԸ Ղ. ԱԼԻՇԱՆԻ «ԱՅՐԱՐԱՏ. ԲՆԱՇԽԱՐՀ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Բանալի բառեր՝ Այրարատ, Բնաշխարհ, տեղագրություն, իմաստային, անվանում, լատիներեն, բուսանուն, բառ, եզրույթ, ծառանուն, արմատ:

Հայագիտության երախտավոր Հ.Ղևոնդ Ալիշանի հարուստ գրական ժառանգության մեջ առանձնակի դեր ունեն տեղագրական հատորները՝ շարադրված «վսեմական գրոց լեզուաւ»: Ալիշանը նպատակ ուներ Հայաստանի բոլոր նահանգների մասին շուրջ երկու տասնյակ նկարագրական երկ հրատարակելու, սակայն «հոչակաւոր աշխարհագէտն հայրենեաց» հաջողեց «Հայոց աշխարհի համագրութեան» մի քանի «ճշգրտապատկեր»¹ հատորներ միայն: Մտովի ունենալով բաղձալի հայրենիքի պատկերը՝ եվրոպական մի շարք գրադարաններից հայագիտական, հնագիտական, դրամագիտական նյութեր էր հայթայթում իր աշխատությունների համար²: «...միտք իմ եւ բարք, որպէս եւ վիճակ եւ կնիք՝ հայրենասիրութիւն խնդրեն զխաղաղականն, այնպէս սիրեմ եւ համբուրեմ զհայրենիս, որպէս ի մանկութեանս զհայր եւ զմայր»³: Եվրոպական երկրներում շրջելիս նա նաև հայկական աշխարհագրագիտության պատմությունն էր ներկայացնում տեղի գիտնականներին⁴:

Աշխարհագրական տեղավայրերին նվիրված առաջին գործը⁵ «Տե-

¹ Բնորոշումները ըստ՝ Տաշեան Յ., Մատենախօսական, «Հանդէս ամսօրեայ», 1890, №10, էջ 234-238: <http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Handesamsorya/1890/10.pdf>

² **Ասմաթյան Հ.**, Ղևոնդ Ալիշանի ճանապարհորդական նոթերից, «Լրաբեր», 2003, N 2 (127), էջ 127-135: [http://lraber.asj-oa.am/13/1/2003-2\(127\).pdf](http://lraber.asj-oa.am/13/1/2003-2(127).pdf)

³ **Ղևոնդ Ալիշան**, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ-Մթ. Ղազար, 1890, էջ Է (այսուհետև՝ Այրարատ): <https://digitale-sammlungen.ulb.uni-bonn.de/content/pageview/250428>

⁴ **Դևրիկյան Վ.**, Գրական ավանդույթը Ալիշանի տեղագրական հատորներում, «Էջմիածին» (ամսագիր), 1996, Դ, էջ 91: <http://echmiadzin.asj-oa.am/6900/1/89.pdf>

⁵ Ծան. Որոշ աղբյուրներ Շիրակին և Միսվանին նվիրված ժողովածուների համար նշում են հրատարակության այլ թվեր և վերնագրեր: Մենք ճշգրտել ենք ըստ «Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց» հատորի վերջում զետեղված «Մատենագրութիւնք Հ.Ղևոնդ Վ.Մ.Ալիշան»:

դագրություն Շիրակայ»-ն¹ է, որից վեց տարի հետո հրատարակվում է «Միսուն կամ համապատում Հայկական Կիլիկիոյ»² խորագիրը կրող աշխատությունը, որը եկավ հավաստելու, որ նրա հեղինակը շարունակում էր հաստատակամորեն իրականացնել ամբողջ Հայաստանը տեղագրելու վերաբերյալ իր վիթխարի մտահղացումը», - գրում է Մ.Շտիկյանը³:

Երրորդը «Այրարատ. Բնաշխարհի Հայաստանեայցն»⁴ է, որը «Ալիշանը նվիրել է գրքի տպագրությանն համընկած և 1888 թվականով սկզբնավորված Հայկա չորրորդ շրջանին: Այս ձևումը միայն ժամանակային պարզ համընկումով չէր պայմանավորված, այլև ուներ ազգային խորին ենթատեքստ»⁵, - գրում է Վ.Դևրիկյանը:

Չորրորդ հատորը առավելապես տեղագրական բնույթի «Միսականն»⁶ է, որին հաջորդում են ավարտուն տեսք չստացված «Վասպուրական» և «Արցախ» աշխարհներին նվիրված հատորները:

Հայր Հ. Տաշյանը, ըստ արժանվույն գնահատելով գիտական այս ծանրակշիռ ժառանգությունը, փաստում է. «Այս գրությունք այնպիսի յիշատակարան են հայրենեաց գիտության, որ միշտ հայ գիտնոց ձեռքն աղբիւր կրնան ըլլալ նկատմամբ Հայաստանի տեղագրութեան, պատմական տեղեկութեանց»⁷: Հավելենք, որ մեզ համար այդ գրությունները լեզվական հարուստ նյութ են տրամադրում՝ բառապաշարի իմաստային խմբեր ուսումնասիրելու համար: Մեր դիտարկման ատաղձը «Այրարատն» է, մասնավորաբար՝ գրքում տեղ գտած բուսանունների գործածության առանձնահատկությունները: Ըստ Ալիշանի՝ Այրարատ «անդրանիկ է աշխարհագրական անուանց երկրի վերածնելով մահառիթ և կենսառիթ մկրտութեամբ ջրհեղեղին» [1]: «Այրարատի» ամբողջացումը, ստեղծագործական տքնանքից բացի, ուներ այլ խոչընդոտներ. մինչ այդ արգելվել էր «Միսունի» մուտքը Օսմանյան Թուրքիա: Բայց և, ինչպես նշում է Հ. Տաշյանը, «Այրարատ» «անմահ կոթող է հեղինակին ընդարձակ հմտութեան եւ անխոնջ ճգանց,

¹ Ղևոնդ Ալիշան, Տեղագրություն Շիրակայ, Վենետիկ-Սբ. Ղազար, 1879:

² Ղևոնդ Ալիշան, Միսուն կամ համապատում Հայկական Կիլիկիոյ, Վենետիկ-Սբ. Ղազար, 1885:

³ Շտիկյան Մ., Ղևոնդ Ալիշան, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, 2 (13), էջ 23:

⁴ Տեքստը տողատակի հղումներով չձանրաբեռնելու համար այսուհետև «Այրարատից» բերվող օրինակների կողքին՝ ուղիղ փակագծերում, կգրենք էջերը:

⁵ Դևրիկյան Վ., Գրական ավանդույթը Ալիշանի տեղագրական հատորներում, «Էջմիածին» (ամսագիր), 1996, Դ, էջ էջ 97-98:

⁶ Ղևոնդ Ալիշան, Միսական, Վենետիկ-Սբ. Ղազար, 1893:

⁷ Տաշեան Յ., Մատենախօսական, «Հանդէս ամսօրեայ», 1890, №10, էջ 237:

որ այսու անհամեմատ մեծ արդիւնք ունի հայրենական գիտութեան ծաղկելուն»¹:

«Սահմանք» խորագրի ներքո Ծաղկոտն գավառի աշխարհագրական դիրքը, սահմաները նկարագրելիս Ալիշանը տարածքը բնորոշում է «զգեղեցիկ գաւառ» արտահայտությամբ: Բուզանդի բնորոշմամբ «Միջնաշխարհի Հայոց, գաւառ Այրարատու» [3] վերաբերյալ տեղագրությունը ներկայացված է պատմական գավառակների բաժանմամբ և աշխարհագրական բնական դիրքի սահմանումով: Յուրաքանչյուր գավառի պատմությունը սկսվում է այդ վայրի մասին հնագույն հիշատակությամբ: Հատորի առաջաբանում Ալիշանը գրում է, որ ինքը խոսում է Այրարատ աշխարհի նախնիների և ներկա գործերի, միջնադարյան հուշարձանների, կիսակենդան ավերակների, արվեստի, ազգաբնակչության, կրոնի մասին՝ «ընդարձակօրէն եւ մանրամասին եւս ճառելով զտարերաց, զբուսոց և զբերոց երկրին» [Ե]: «Այրարատ» ընդարձակ աշխատության մեջ Ալիշանը գործածում է «բույս» հասկացությանը վերաբերող բազմաթիվ տեղեկություններ, որոնք բնութագրում են բուսանմուշների տեղավայրը, տեսակային բաշխումը, արտաքին նկարագրությունը, բուժական հատկանիշները, նշանավոր հետազոտողների վկայությունները և այլ արժեքավոր փաստեր: Բուսանուններ հանդիպում են ամբողջ շարադրանքում, սակայն, ինչպես և սպասելի էր, գերակշիռ մասը ամփոփված է գրքի հինգերորդ՝ «Բնութիւն երկրին. Կլիմայ. Բուսաբերութիւն» [7] բաժնում: Լատիներեն համարժեքներով վկայաբերված բուսանունները հինգ տարի անց տեղ են գտնում «Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն»² աշխատության մեջ, որում ի մի են բերված հայկական բնաշխարհի ավելի քան 3400 բույսերի ու ծաղկատեսակների անվանումները՝ համապատասխան դասակարգմամբ և գիտական բնութագրությամբ՝ հարուստ աղբյուր հանդիսանալով նաև բանասիրության համար:

Բուսական աշխարհի հատկանշող իմաստային (թեմատիկ) բառաշերտը կարևոր է, քանի որ արտացոլում է ոչ միայն տվյալ տարածքի բուսապատկերը, այլև այդ վայրի բնակչության լեզվամտածողությունը, աշխարհընկալումը, բանահյուսական բանաձևումների հիմքը, կենցաղային առանձնահատկությունները և այլ իրողություններ:

Ինչպես հայտնի է, ամերիկացի լեզվաբան Կարլ Բաքի «Հնդեվրոպական հիմնական լեզուների ընտիր հոմանիշների բառարանում» առանձնացվող 22 բառիմաստային խմբերից 8-րդը «երկրագործություն, բուսա-

¹ **Տաշեան Յ.**, Մատենախօսական, «Հանդէս ամսօրեայ», 1890, №10, էջ 238:

² **Ղևոնդ Ալիշան**, Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն, Վենետիկ-Սբ. Ղազար, 1895:

կանություն» բառափունջն է¹: Այս բառաշերտի դիտարկման տեսանկյունից հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Այրարատ» հատորում առկա բուսանուն և առնչակից հասկացություններ նշող լեզվական միավորները: Ալիշանը, հիմք ունենալով Փարպեցու «Պատմությունը», նշում է, որ պատմիչն իր արքունի գավառի մասին խոսում է շատ ախորժելի, սակայն հետագա ուսումնասիրողներին՝ նաև մեզ է թողնում դասակարգելու «զ բերսն բնականս, բուսականս և կենդանականս» [8]: Փարպեցին էլ իր հերթին էր Այրարատ աշխարհի փարթամ բուսականությունը նկարագրելիս թվարկում միայն «զանուանս բազմագգի տնկոցն և ծաղկաց» [8]՝ համալրումը դարձյալ թողնելով իրենից հետո եկողներին:

Ղ. Ալիշանի «Այրարատ» աշխատության բուսանունները, շարադրանքի պատմագիտական ոճով պայմանավորված, հիմնականում հանդես են գալիս որպես բուսաբանական գիտաբառեր, որոնք խոսքային այլ որակներում կարող են հանդես գալ նաև որպես սովորական բառեր: Քանի որ «տերմինային իմաստը ճշգրտորեն սահմանելի հասկացություն է»², ուստի Ալիշանի վկայաբերած բուսանունը կիրառվում է ուղիղ իմաստով, իմաստափոխության, փոխաբերացման ենթարկված չէ, չունի խոսքի տարբեր դրսևորումներին բնորոշ ոճական հատկանիշներ և նշում է կոնկրետ բուսատեսակ:

«Այրարատի» բուսանունները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ համապատասխան ենթախմբերով. ա) կոնկրետ որոշակի *բույս*, նաև առնչակից հասկացություններ նշող անվանումներ, բ) բուսանուններով բաղադրված հատուկ անուններ: Քանի որ մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ ներկայացնել նշված խմբերը՝ իրենց մի շարք ենթախմբերով, ուստի բուսանունների մի սովոր մասի կանոնադառնանք առանձին հոդվածներով:

ա) Կոնկրետ որոշակի *բույս*, նաև առնչակից հասկացություններ նշող անվանումներ: Կոնկրետ, որոշակի բուսատեսակ են նշում խոտաբույսերի, թփերի և ծառերի անվանումները: Հայկական լեռնաշխարհը հարուստ է փարթամ բուսականությամբ, և յուրաքանչյուր բուսատեսակ ունի մեկից ավելի, երբեմն մեկ տասնյակի հասնող գրական և բարբառային անվանումներ³: Ալիշանի սույն աշխատությունը հիմնականում հարուստ է ծաղկանուններով և ծառանուններով, նաև սրանց հատկանվա-

¹ **Buck C.**, A Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages: A Contribution to the History of Ideas, Chicago, The University of Chicago Press, 1949:

² **Աղայան Է.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 323:

³ **Ալիշան** 1895; **Ղազարյան** 1981; **Ղանդիլյան** 1975; **Բիզանդացի** 1925:

նացմամբ կերտված տեղանուններով, երբեմն նաև անձնանուններով:

Նախ դիտարկենք *բոյս* բառով բաղադրությունները, որոնք ունեն նաև լեզվաոճական արժեք: Շարադրանքում հաճախադեպ է *բոյս* բնիկ հայերեն արմատը¹՝ հոլովական և հոգնակի քերականական ձևերով, հոդառությամբ, ինչպես՝ *բոյսք* («ալպեայ *բոյսս*» [205], «*բոյսս* ընծայեն» [461], «*բոյսքդ* ալպեայս» [462], *բուսոց* («Անդ գտանին ազգի ազգի արմատք *բուսոց*, ի պէտս օգտակարութեան դեղոց» [9]) և այլն: *Բոյս* արմատով են բաղադրված հետևյալ կազմությունները՝ *բուսական* (բոյս+ական) («սակաւագոյն ևս *բուսականք*» [116]), *բուսեղէն* (բոյս+եղէն) [461], *բուսաքնին* (բոյս+ա+քնին) («Դուռնըֆոր՝ փռանկ *բուսաքնին*» [462]), *բուսաբեր* (բոյս+ա+բեր) (հոդ *բուսաբեր* [187]), *բուսաբերութիւն* (բոյս+ա+բեր+ութիւն) («ալպեան *բուսաբերութիւն*» [32]), *բուսաբառութիւն* (բոյս+ա+բառ+ութիւն) («Հայրուսակ կամ հայկական բուսաբառութիւն»), *մայրաբուսակ* (մայր[ի]+բոյս+ակ) (ըստ Ասողիկի՝ «*մայրաբուսակ* լեառն Մեծրաց» [33])², *ծաղկաբոյս* (ծաղիկ+ա+բոյս) («*ծաղկաբոյս* գոյնս» [8]), *ամենաբոյս* (ամեն+ա+բոյս) («երկրիին զամենաբոյսն» [8]), *բարեբոյս* (բարի+ա+բոյս) («բարեբոյս անդաստանօք». բնորոշում՝ Դիան և Մաղդա գյուղերի [143]), *հայրուսակ* (հայ+բոյս+ակ), *սոխաբոյս* (սոխ+ա+բոյս) («...կարմրագոյն *սոխաբոյս* ծաղիկն՝ յորմէ անունն լերինն» [71]), Ճլելեկ *քարաբոյս* (քար+ա+բոյս) (*Silene saxatilis*) [550] և այլն: Քանի որ Հայկազյան բառարանում չկան *բուսաբերութիւն*, *բուսաբառութիւն*, *բուսաքնին*, *հայրուսակ*, *սոխաբոյս*, *քարաբոյս* բառերը, ուստի դրանք կարող ենք համարել Ալիշանի նորակերտությունները: Մալխասյանցը այս շարքի առաջին չորս բառերը ընդգրկում է իր բառարանում՝ որպէս սկզբնաղբյուր նշելով Ալիշանին: Հետագայում կազմված նշանավոր բառարաններում չգտանք *սոխաբոյս* և *քարաբոյս* բառերը³: *Քարաբոյս*-ը վկայված է միայն Հ. Բարսեղյանի բառարանում⁴:

¹ Տե՛ս Աճառեան Հ., Հայերեն արմատական բառարան, էջ 470:

² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ 1837, էջ 201:

³ Հմմտ. Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, ՀՍՍՌ Պետհրատ, Երևան, 1945: Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, «Լույս» հրատ., Երևան, 1973: Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980: Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի» հրատ., Երևան, 2002: Լ.Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, Երևան, 2010:

⁴ Տե՛ս Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, էջ 951:

Գեղարվեստական ոճին բնորոշ հետաքրքիր կիրառություն ունի *ընդաբոյս* (ընդ+ա+բոյս) բառը: «*Ընդաբոյս* կամ երկնատուր բեղնատուրութեան հոգւոյն» [92], «*ընդաբոյս* փափագանաց ոգւոյ» [95], «*Ընդաբոյս* ազդումն ողջախոհակ թելադրիցէ հատուցանել զՀայրենեացն՝ հայրենեաց» [Է]:

Ընդաբոյս բառով, որը Հայկազեան բառարանում ունի «բնածին» բացատրությունը, Ալիշանը ընդգծում է հայրենասիրության բնածին, սրտաբուխ լինելը, որը ենթադրում է հատուցել «զՀայրենեացն՝ հայրենեաց»:

Հեղինակը Այրարատ գավառը բնորոշում է մի շարք բուսանուններով. «*լքեալ մերժեալ երկրիրն զամենաբոյսն*»... «*զանուշահոտ մեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանումն իւղաբուղիս սերմանցն*» [8], որտեղ *ամենաբոյս*, *բանջար* և առնչակից *սերմ* բուսանունները հանդես են գալիս որպես գեղարվեստական խոսքի բաղադրիչներ:

Իմաստային տարողությամբ և բառակազմական առումով ուշագրավ են նաև Փարպեցուց վերցրած *թփամուտ* [9], *մացառաղօղ* [9], *եղեգնաբնակ* [9] բարդությունները, որոնցից վերջինի ազդեցությամբ Ալիշանը կերտել է *եղեգնաբնակ* [9], *եղեգնասեր* [9] նորաբանությունները, որոնք ևս վկայված չեն Հայկազեան բառարանում:

Որոշակի բույս նշող անուններից բացի, հանդիպում են նաև *բույս* հասկացությանն առնչվող, բույսից ածանցյալ, բույսի արդյունք՝ «բար», «պտուղ» (*բարունակ*, *տանձ*, *խնձոր*, *դեղձ*, *շրոր*, *խաղող*, *սեխ* և այլն), միայն բույսով պայմանավորվող իրողություն կամ գործողություն նշող բառեր (ինչպես, օրինակ՝ *արտ*, *դաշտ*, *մարգագետին*, *անդաստան*, *այգի*, *ծառաստան*, *տերև*, *հնձան*, *անտառ*, *արմատ*, *սերմ*, *խոտ*, *ծաղկաքաղ լինել*, *տնկել*, *բուսնել* և այլն): *Տերև* արմատից Ալիշանը ստեղծել է Հայկազեան բառարանին անհայտ *տերևազարդութիւն* բաղադրյալ բառը. «սակաւ *տերևազարդութիւն* տեսանէին նախնիք մեր յԱյրարատ» [8]):

Այս ենթախմբի բառաշերտն են հատկանշում նաև՝ *բարունակս* յաճումն [8], *յանտառաց* տարածութիւնս [7], *անտառացն* նուագութիւն [7], «Խոսքովու Բի ի կէս Դ դարու տնկելն *անտառս* ընդ մէջ Դունայ և Գառնոյ» [7], «կոչելով գերկիրն ազնիւ, *հացաբեր* և *խոտաբեր*» [8], տեղիք *այգեաց* և *հնձանաց* [122], արբուցանելով *զանդաստանս* և *զայգիս* [132], *խոտահարք* և *արօտք* (Անբերդի մասին, [158]), յընդարձակ *այգեւէտ* սահմանի, *բամբակ*, *այգւոյ* (Օշականի մասին, [188]), *սերմակորուստ* անուն այգի մի յՈւշի [184] և այլն, և այլն: Ի դեպ, *սերմակորուստ* հեղինակային բառը ևս չգտանք մի շարք բառարաններում:

Բուսական բառաշերտին առնչվող մի շարք բառերով է բնորոշված Բասենը. «Ի հնումն Անփայտ Բասեան կոչեցելոյ, և բնիկս Բասեան

անփայտ անծառ է, և զի հարթավայր է և ջրաւէտ, ապա և քաջ խոտաւէտ և արգաւանդ» [17]:

Բերված օրինակում *Անփայտ* որոշիչն ունի «անանտառ» իմաստը: Այդպես նաև հետագա էջերում Վանանդի (ըստ Խորենացու՝ «տեղի խոտաւէտ կոչելով զգաւառս այս») բուսական աշխարհը նկարագրելիս «առանց անտառի», «առանց ծառի» իմաստն արտահայտելու համար գործածում է *անփայտն* ածականը, որն էլ հետագայում ձեռք է բերել հատկանվան բաղադրիչի գործառույթ: Տեղանվան *Անփայտն* որոշիչը թույլ է տալիս ենթադրել, որ *փայտ* և *ծառ*, ինչպես նաև *անտառ* բառերը նույնանիշային արժեք ունեն:

Վանանդը նկարագրող Շերեֆետտին պարսիկ պատմիչից կատարած թարգմանական հատվածը նույնպես բաղկացած է բուսաբանական եզրույթներից. «մարգագետինք, դաշարիք... թուութ պուրակաց, սաղարթագեղ ոսութ պտղատու ծառոց, ծաղկունք և խնկահոտ բուրմունք» [73]: Խոտաբույս կամ հարակից բառաշերտի մաս են նշում նաև ընդգծված օրինակները¹. *գարմատս եղեգնասեր բուսոցն* [9], լանջակողմանս *ծաղկածինս* [32], «...ի տեղի, յոր ոչ հասանէ արօտական» [102], *յեղեգն* ինչ շարժուն [105], «Ռոզեալք յինքնաբուղիս աղբերաց՝ բուսուցանէ պէսպէս ծաղկունս և բանջարս՝ ի գրօսանս աչաց և ի ճաշակ» [117], *շամբ* [7], «...թէ և գուրկ ի ծառոց, այլ քաջաբերք են *արմտեօք, ցորենով և գարւոյ, այլ և պտղօք*» (Բասենի մասին [73]) և այլն:

Մուռմառուն բնութագրող բերվող հատվածը ևս հարուստ է տարբեր բուսանուններ նշող բառերով. «Ի բերս երկրին ընտրելագոյն են *պտուղքն, դեղձ, շորր, սեխենիք* և ի սոսին *Դուդմա* կոչեցեալ տեսակն. բերէ և *կնճիթ* և *ծխահոտ*. իսկ *ցորեան*՝ թէպէտ և համեղ, սևագոյն է. *խաղող* առատ, այլ զինի ոչ ազնիւ» [121]:

Քաջագիտակ լինելով հայ գրականությանը՝ Ալիշանը հաճախ մեջբերումներ է կատարում տարբեր դարերի հեղինակներից: Արժեքավոր հղումներ կան Պ. Պոռշյանի «Կռուածաղիկ» վեպից. «Պ. Պոռշեան, ի սկիզբն Կռուածաղիկ վիպասանութեան, յորում յիշէ և այլ ինչ անուանս տեղեաց» [187]: Մեջբերումը գիտականություն է ստանում բույսերի լատիներեն անվանումներով՝ համալրված Ալիշանի կողմից: «Իսկ ձորեզերքն ընդ ազգի ազգի վայրենի *բուսոց* ընծայեն և պատուական *բանջարս* սննդարարս, յորոց վիպասանն (իմա՝ Պոռշյանը) նկարագրող տեղոյս

¹ Ծան. Ծաղկանունները՝ որպես խոտաբույս նշող ձևաիմաստային միավորներ, բավականին մեծ թիվ են կազմում «Այրաբատում», ուստի *ծաղիկ* հասկացության բառանունների և *ծաղիկ* բառով կազմությունների քննությանը կանոնադառնանք առանձին հոդվածով:

յիշէ՝ *զԵղինջն*, *զԾնեքեկն* և *զՊարոն բանջար*. այլ գերմանացի *բուսաբնին* Քոխ՝ յոյժ յոյժ *բոյսս* նշանակէ և սահմանս Աշտարակայ ...հող *բուսաբեր* ...ի բերել *զպտղատուս* և ըզ *թուփս*, *մոշայս*, *ծաղկահոտ փշատիս*, *նշենիս* և սրտածէ *տերեւօք* գեղեցիկ Ածարս կամ Սեաւ *կաղամախս*. և ի մանունց՝ զատ *յրնդեղինաց* յիշէ՝ *զԾոր*, *Յակրի*, *Պրտու*, *Աբարբիոն* ազգ ազգ, *Եզնագի չքնաղ* (*Verbascum formosum*), *Վիշապագլուխ* (*Dracocephalum Ruyschiana L.*), *Եզնախոռն վայրի*, *Սիպեղ* (*Bunium paucifolium*), *Շանլեզու*, *Հիրիկք* կամ *Պուտք*, *Առգաւաթուր* (*Gladiolus*), *Մկնականջ*, *Մրուանտակ փոքր* (*Valerianella*), *Կառաւակրկուտ* (*Lithospermum*), *Աղուաշքանկ*, *Մարեւծաղկի* տեսակ (*Geum*), *Շուշան*, *Նուարտակ*, *Սիսամբար*, *Շահոգրամ*, *Կարմիր բանջար* կամ *Ծիմել* (*Blitum*), *Շնախստոր* (*Ornithogalum*), *Քշոցնեար* (*Thlaspi*), *Կոտեմ*, *Հացհամեմ*, *Քիսամն* (*Ervum*), *Խազիրան*՝ երեք ազգ (*Astragalus*), *Թագաւորապսակ*, *Ճլելեկ* (*Silene*) ազգ ազգ, *Գառնադմակիկ*, *Կորնգան*, *Սէզ որդնաբեր* և այլ եւս սակաւածանօթք» [187-188]

Ուշագրաւ են *յարմատոյ սիգոյ*, *սիգաբերեալս* [8] վկայությունները, որոնք օգնում են Մալխասյանցի բառարանում ճշգրտում կատարելու: Ըստ Ալիշանի՝ «որդունս սիգաբերեալս՝ ի գարդ կարմրութեան գործոյ կամ ըստ այլ օրինակաց՝ և որդն յարմատոյ սիգոյ, առ ի կարմրութեան սիգոյ, որ է աշխարհածանօթ» «ի նմանէ ծնեալ Որդունս» [9], որից էլ՝ Որդն կարմրոյ կամ Որդանն կարմիր [8]¹: Մալխասյանցը այսպես է մեկնաբանում բառը. «Կարմիր ներկ, որ ստացվում է նույն անունը կրող մուկից (*Coccus cacti*), որ ապրում է որոշ բույսերի վրա»²: Մալխասյանցի *որոշ բույսեր* հասկացությունը բավականին ընդարձակ է, որի իմաստը կոնկրետացնում է Ալիշանը՝ նշելով *սէզ* բուսատեսակը, մասնավորաբար՝ սեզի արմատը [8]:

Բացի որդան կարմրի բնակատեղի այս սիգատեսակից, Ալիշանը «Սուումառի» ենթազխում բրնձի, բամբակի, սրոհնդի դաշտերի մասին խոսելիս հիշատակում է սագի մի այլ տեսակ ևս: Նա գրում է. «Ի պէտս բուսաբերութեան ամայի վայրացն՝ բնակիչք կողմանցն բազում խնամով առուս հատեալ արբուցանեն *զարտորայս բրնձոյ* և *բամբակի* և *սրոհնդոյ*

¹ Ըստ Վ. Դերիկյանի՝ այս պատկերը այլաբանական է: Նա գրում է. «Աստվածային արարչագործությամբ փոքրերի մեջ էլ մեծություն գտնելու միջնադարյան ըմբռնմամբ աշխարհի ունանությունը շեշտելու համար այս որդի հետ է համեմատում համաշխարհային պատմության և Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունները, թե որքան թագավորություններ եկան ու անցան, իսկ նա այսպես մնում է Արարատի փեշին» (տե՛ս Վ. Դերիկյան, Գրական ավանդույթը Ալիշանի տեղագրական հատորներում, «Էջմիածին» (ամսագիր), 1996, Դ, էջ 99):

² Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944, էջ 581:

(Ricinus), որք առաւել ջրակարօտ են: Ի խոսքի վայրսն աճէ առատութեամբ *սէզն Կատուտոն* (Aeluropus Levis, Trin)» [121]:

Լեզվական քննության հետաքրքիր նյութ են նաև «Այրարատում» ընդգրկված բազմաթիվ ծառանունները, որոնց ևս անհրաժեշտություն կա անդրադառնալու առանձին հոդվածով: Ստորև ներկայացնենք մի քանիսը միայն:

Ծառանուններից ուշագրավ են *սօսին* («Անուշաւանն *սօսանուէր*», «ըստ բուսական նշանակութեան արդարեւ գտանին անդ քանի ինչ *սօսի* ծառք առ երի աղօրեաց» [23], «թողից զքաջ ի բաց հին *սօսիսն* Արմաւրայ, զորս Արամենակայ որդոյ նախնոյն մեր Հայկայ համարի տնկեալ, և որոց կարծին մեծամեծ կոճեղք երևել ի բրելն զհող երկրին [7]) *սոճին* («Ազգ ազգ *սոճեաց* են անդ և կաղամախեայ, զորս յիշէ և Դուռնֆոր» [8]), *կաղամախին*, *մայրին* («յարևմտեան մասի աշխարհին են հանրածանօթ *մայրիք* Մեծրաց» [7], *թխտենին* («Կենդանի անտառ ոչ ուրեք երևի ի բնիկն Այրարատ, բաց ի պուրակէն *թխտենեաց* ընդ մէջ երկոցուն Մասեաց» [7] և այլն: «Մատակարարեալ էին *մայրիքի*՝ զհիմունս բերդին Աղէքսանդրապոլի» [8] հատվածից իմանում ենք, որ Աղէքսանդրապոլի բերդի կառույցի համար գործածվել են մայրի ծառի գերաններ:

Ալիշանը նշում է, որ չնայած Այրարատ նահանգը հոծ անտառաշերտով աչքի չի ընկնում, սակայն *թխտենեաց* անտառներ կան Մեծ և Փոքր Մասիսների միջակայքում: *Թխտենեաց* (հոգնակի սեռական) *թխտենի*, նաև *թղթենի* հնչատարբերակով ծառանունը վկայված չէ Հայկազյան բառարանում: Մալխասյանցի բառարանում նշված է *թխտենի* գլխաբառը՝ տե՛ս *թղթենի* հղումով¹, սակայն բառարանի բարեխիղճ հեղինակը վրիպել է և չունի *Թղթենի* գլխաբառ: Աղայանի բառարանում *Թղթենին* հղում ունի *Թղթաթթենի* բառին՝ հետևյալ բացատրությամբ. «Թթենու մի տեսակը, որի կեղևներից ճապոնիայում և Չինաստանում բարձրորակ թուղթ ու պաստառներ են պատրաստում, թանձրատերև թթենի»²: Այս մեկնաբանությունը հիմք է տալիս ասելու, որ Այրարատ աշխարհում ևս եղել է նման թթենի, որից հայերը ևս թուղթ են ստացել: «... ի կողս փոքուն Մասեաց կայ պուրակ մի թխտենեաց» [461-462]:

Բառագիտական ճշգրտում կատարելուն օգնում է նաև հետևյալ միտքը. «...առաքեաց անդր զՍմբաթ Օրպելեան «վասն *սնուպար* փայտից», զի շինէին «զմեծ արքունիսն» [8]: Մալխասյանցը *սնուպար*՝ արաբերեն *սնրբար/սնէուբար* բառը բացատրում է որպես «գինձ», ապա հավելում է. «Կասկածելի է: Հաւանօրէն նոյն է Սոնուպրի-ի հետ»: *Սոնուպրի*

¹ Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944, էջ 111:

² Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 446:

գլխաբառի բացատրությունը՝ որպես շինանյութ օգտագործվող շատ ընտիր փայտով եղևնի, լիովին համապատասխանում է Ալիշանի վերոբերյալ նախադասության իմաստին: Ուստի կարող ենք փարատել Մալխասյանցի կասկածը և պնդել, որ *սնոպար*- և *սոնոպրի*-ն միևնույն հասկացությունը նշող հնչատարբերակներ են:

Ինչպես արդեն նշեցինք, բուսանունների առանձնացման երկրորդ խումբը դրանցով բաղադրված հատկանուններն են, որոնք ևս առանձին վերլուծության կարիք ունեն: Ընդհանուր առմամբ, տեղագրության բովանդակությամբ պայմանավորված, նման կազմություն ունեցող տեղանունները բավականին մեծ թիվ են կազմում: Հայկական բնաշխարհի առանձնահատկություններով պայմանավորված՝ գերակշռում են լեռնանունները, նաև բլրակների ու ձորերի անվանումները (օրինակ՝ *Բամբակի, Ծիրանեաց, Այգորդ, Ծաղիկն, Ընկուզուտ, Վարդասար, Ծաղկունեաց ձոր, Մայրաձոր* և այլն): Վկայաբերված են նաև մի շարք ջրանուններ, ինչպես՝ *Չինարջուր, Ծովակ Սերկելոյ* [164]¹ և այլն:

Տեղանք՝ գավառ, բնակատեղի, բերդ, վանք, ագարակ են նշում հետևյալ հատուկ անունները. *Ծաղկունիք, Ցորեան* գեղջ [31], *Խոտիկ* կամ *Խատիք* ագարակ [32], *Արմուտլու-Տանձուտ* [40], *Մեօկուտլի-Ուրենուտ* [41], *Կեչուան* կամ *Խուճվան* (քաղաքական) [46], *Ծառաքար* բնակավայր [50], *Վարդիհեղ* [50], *Այգեստան* [41], *Ծիրանի* թաղ Երեւանայ [314] և այլն, և այլն:

Բուսանուն բաղադրիչ ունեցող անձնանուններ շատ քիչ են հանդիպում (Սահակ եպիսկոպոս *Ծաղկարար* [484]), *Վարդուկ* կամ *Վարդիկ, Վարդիհայր* [50], *Շուշան* [52] և այլն:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ալիշանի «Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց» տեղագրությունը ոչ միայն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի պատմության, աշխարհագրության, միջնադարյան ճարտարապետության կառույցների, բուսական աշխարհի, բանահյուսության և այլնի մասին, այլև բավականին հարուստ է բուսանուններով, որոնց գերակշիռ մասը գիտական ճշգրտություն է ստանում հեղինակի կողմից նշված լատիներեն եզրույթներով: Քանակապես աչքի են ընկնում «ծաղիկ» բառով, տարբեր ծաղկանուններով և ծառանուններով բաղադրված տեղանունները:

Ալիշանը հայրենի բառակազմական օրենքների համաձայն կերտել է մի շարք նորակազմություններ (*տերևագարդութիւն, սոխաբոյս, քա-*

¹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում այս Ծովակը նշված չէ (տե՛ս Թ. Հակոբյան, Ստ.Մելիք-Բախյան, Հ. Բարսեղյան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1988):

ըարդյս, սերմակորուստ և այլն), որոնք դուրս են մնացել հայերենի բառային կազմն ընդգրկող նշանավոր բառարաններից:

Այսու, «Իր հատորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց և իրական»¹:

ԱՅԿԱՆՍԻ ՄԵՏՐՈՊՅԱՆ

Доктор филологических наук, доцент

РЕЗЮМЕ

НАЗВАНИЯ РАСТЕНИЙ В ТРУДЕ Г. АЛИШАНА "АЙРАРАТ: ПРИРОДНЫЙ МИР АРМЕНИИ"

Ключевые слова: Айрарат, природный мир, топография, семантический, наименование, латынь, название растений, слово, термин, название деревьев, корень.

В статье мы представили названия растений топографического третьего тома «Айрарат: природный мир Армении» Отца Гевонда Алишана, которые, согласно изложению историографического стиля, в основном действуют как ботанические научные термины. Поэтому автор в книге упоминает и их латинские имена.

Названия растений «Айрарата» мы разделили на две основные группы с соответствующими подгруппами: а) названия конкретных растений, а так же названия, которые связаны с понятием «растение», б) собственные имена, составленные из названий растений.

Исследование показывает, что топография Алишана «Айрарат: природный мир Армении» не только дает ценную информацию об истории, географии, о структурах средневековой архитектуры, флоры, фольклора и т.д. Армении, а также довольно богата названиями растений. Особенно многочисленны те топонимы, которые составлены из слова «цветок», с разными именами цветов и деревьев. Ряд ноологизмов составленные Алишаном, не нашли место в знаменитых словарях армянского языка.

HAYKANUSH MESROPYAN

Doctor of Philology, Associate Professor

PLANTS NEAMES IN GH.ALISHAN'S WORK «AYRARAT: THE NATURAL WORLD OF ARMENIAN»

Key words: Ayrarat, natural world, topography, semantic, name, latin, plant name, word, term, the name of the trees, root.

In the article we have presented the names of plants of the topographic third tome of Gh.Alishan's «Ayrarat: the natural world of Armenia», which, according to the presentation

¹ Ավ. Բաաճակյան, Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1971, էջ 220:

of the historiographic style, mainly act as botanical scientific terms. Therefore, the author also mentions their Latin names in the book.

We divided the names of Ayrarat plants into two main groups with corresponding subgroups: a) the names of specific plants, as well as the names that are associated with the concept of “plant”, b) proper names made up of the names of plants.

The study shows that the topography of Alishan "Ayrarat: the natural world of Armenia" not only provides valuable information about history, geography, structures of medieval architecture, flora, folklore, etc. Armenia, and is also quite rich in plant names. Especially numerous are those toponyms that are composed of the word “flower”, with different names for flowers and trees. A number of neologisms compiled by Alishan did not find a place in the famous dictionaries of the Armenian language.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղևոնդ, Արարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար, 1890: Ghewond Alishan, Ayrarat, bnashcharh Hayastaneayts, Venetik, S.Ghazar. <https://digitale-sammlungen.ulb.uni-bonn.de/content/pageview/250428>

Ալիշան Ղևոնդ, Տեղագրութիւն Շիրակայ, Վենետիկ, Ս. Ղազար, 1879: Ghewond Alishan, Teghagrut'iwn Shirakay, Venetik, S.Ghazar.

<http://digilib.aua.am/book/1344/%D5%87%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF>

Ալիշան Ղևոնդ, Սիսուան կամ համապատում Հայկական Կիլիկիոյ, Վենետիկ, Ս. Ղազար, 1885: Ghewond Alishan, Sisuan kam hamapatum Hayakakan Kilikioy, Venetik, S.Ghazar.

<http://digilib.aua.am/book/1343/%D5%8D%D5%AB%D5%BD%D5%B8%D6%82%D5%A1%D5%B6>

Ալիշան Ղևոնդ, Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1893: Ghewond Alishan, Sisakan, Venetik, S.Ghazar.

<http://digilib.aua.am/book/1346/%D5%8D%D5%AB%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6>

Ալիշան Ղևոնդ, Հայրուսակ կամ հայկական բուսաբանութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 1895: Ghewond Alishan, Haybusak kam haykakan busabarut'iwn, Venetik, S.Ghazar.

<http://54.148.234.211/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=138&query=%D5%A2%D5%A5%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D6%81%D5%AB>

Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976: Agayan Ed., Ardi hayereni batsatrakan bararan, “Hayastan” hrat., Yerevan. <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24>

Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984: Agayan Ed., Indhanur ev haykakan baragitutyun, Yerevan.

Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան: Atcharyan H., Hayeren armatakam bararan, Yerevan. <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7>

Ասմարյան Հ., Ղևոնդ Ալիշանի ճանապարհորդական նոթերից, «Լրաբեր», 2003, N 2 (127), էջ 127-135: Asmaryan H., Ghewond AlishanI chanaparhordakan noterits, “Lraber”. [http://lraber.asj-oa.am/13/1/2003-2\(127\).pdf](http://lraber.asj-oa.am/13/1/2003-2(127).pdf)

Բարսեղյան Հ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, «Լույս» հրատ., Երևան, 1973: Barsegyan H., Hayeren ughghagrakan-ughghakhosakan bararan, Yerevan.

<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=57>

Դերիկյան Վ., Գրական ավանդույթը Ալիշանի տեղագրական հատորներում, «Էջմիածին» (ամսագիր), 1996, Դ, էջ 89-101: Devrikyan V., Grakan avanduyti Alishani teghagrakan hatonerum, "Ejmiatsin" (amsagir), D. <http://echmiadzin.asj-oa.am/6900/>

Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի» հրատ., Երևան, 2002: Eloyan S., Ardi hayereni norabanutyunneri bararan, "Nairi" hrat., Yerevan.

<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=100&pageNumber=5>
Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980: Djamanakakits hayots lezvi batsatrakan bararan, Hr. Atcharyani anvan lezvi institut, HSSH GA hrat., Yerevan. <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29>

Իսահակյան Ավ., Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1971: Isahakyan Av., Alishani jamanakakitsneri husherum, Yerevan,

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Սո., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, ԵՊՀ հրատ., Երևան, 1988: Hakobyan T., Melik-Bakhshyan St., Barseghyan H., Hayastani ev harakits shrjanneri teghanunneri bararan, EPH hrat., Yerevan. http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=61&dt=HY_HY&pageNumber=3948

Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան, Երևան, 2010: Honhannisyan L., Grabari bararan, Yerevan.

Մալխասեանց Սո., Հայերեն բացատրական բառարան, ՀՍՍՌ Պետհրատ, Երևան, 1944: Malkhasyan St., Hayeren batsatrakan bararan, HSSR Pethrat, Yerevan. <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=6>

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837: Nor bargirk haykazean lezui, Venetik. <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=26>

Շտիկյան Ս., Ղևոնդ Ալիշան, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, 2 (13): Shtikyan S., Ghewond Alishan, "Pasma-banasirakan handes". [http://hpj.asj-oa.am/1490/1/1970-2\(13\).pdf](http://hpj.asj-oa.am/1490/1/1970-2(13).pdf)

Տաշեան Յ., Մատենախոսական, «Հանդես ամսօրեայ», 1890, №10, էջ 234-238: Tashean Y., Matenakosakan, "Handes amsoreay".

<http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Handesamsorya/1890/10.pdf>

Buck C., A Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages: A Contribution to the History of Ideas, Chicago, The University of Chicago Press, 1949: <https://press.uchicago.edu/ucp/books/book/chicago/D/bo23850326.html>

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ «ՀԱՅԱՊԱՏՈՒՄԸ» ԵՎ ՄԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Բանալի բառեր: Մխիթարյան միաբանություն, Միքայել Չամչյան, Հայ ժողովրդի պատմության դասագրքեր, հինգերորդ դարի հայ պատմագրություն, հայ գաղթավայրեր, Ղևոնդ Ալիշան:

Հայ միջնադարյան պատմիչների ստեղծագործությունները ոչ միայն հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրներն են, այլև ազգային հպարտության և ինքնաճանաչման միջոց ճակատագրի բերումով աշխարհով մեկ ցրված հայերի համար: Այս պատճառով է, որ XVI-XVIII դարերում մեծ թիվ են կազմում հայկական գաղթավայրերում պատմագրական երկերի ձեռագիր ընդօրինակությունները, ինչպես նաև տպագրությունները XVII-XIX դարերում:

Նույն այս հանգամանքով է պայմանավորված հայ պատմիչների գործերի տարբեր հատվածների գետեղումը հայկական գաղթավայրերում 18-19-րդ դարերում տպագրված դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում:

Այս հանգամանքը ցայտուն է արտահայտվել հատկապես Եվրոպայի հայկական գաղթավայրերում, ի մասնավորի Վենետիկի Մխիթարյան միաբանությունում տպագրված դասագրքերում: Այդ հրատարակություններում հայ պատմիչների գործերից վերցված հատվածները ծառայել են ազգային ինքնության պահպանմանը ու հոգևոր բարոյական ըմբռնումների ձևավորմանը:

Համաբնույթ դասագրքերի քննությունը ցույց է տալիս, որ դրանցում գերիշխում են հատկապես 5-րդ դարի պատմագիրների գործերից վերցված հատվածները, կամ դրանց հիման վրա կատարված վերաշարադրանքները:

Առավելապես 5-րդ դարի պատմիչներին դիմելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայ ժողովրդի անցյալի հերոսական էջերի ու հոգևոր-մշակութային նշանակալից իրադարձությունների զգալի մասը վերաբերում էր 5-րդ դարը ներառյալ ընկած շրջանին:

18-րդ դարում Մխիթարյանները գրում են ծավալուն ուսումնասիրություններ նվիրված հայոց լեզվին և հայ ժողովրդի պատմությանը, որոնց համառոտամբ ստեղծվում են դպրոցականների համար նախատեսված դասագրքեր:

Նման աշխատանքների ի հայտ գալը պայմանավորված էր նաև հայ գաղթավայրերում հայկական դպրոցների հիմնմամբ:

Հայ ժողովրդի պատմության առաջին դասագրքերը ևս Մխիթարյաններն են գրում, որոնց հիմքում ընկած է Միքայել Չամչյանի 1784-86 թվականներին գրված եռահատոր «Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784» աշխատությունը:

Իր իսկ գործը համառոտելով Հայոց պատմության առաջին դասագիրքը Չամչյանն ինքն է գրում, որը լույս է տեսնում 1811 թվականին և ունի 494 էջ:

Ի տարբերություն եռահատոր «Պատմութիւն հայոցի», այս մեկը անվանվում է «Խրախճան Պատմութեան Հայոց»: Վերնագիրն իսկ հուշում է, որ այն ոչ թե հայ ժողովրդի պատմության ընդարձակ շարադրանքն է, այլ մի գիրք, որով պետք է վայելել և ընթերցել Հայոց պատմությունը: «Յառաջաբանութիւն» խորագրված առաջաբանում ևս Չամչյանը անդրադառնում է այս հարցին: Եռահատոր «Հայոց պատմության» և այս գործի հարաբերակցությունը հետևյալ գուգահեռով է ներկայացնում. «Հայելի իմն է փոքրիկ և բոլորշի՝ համառոտութիւն պատմութեան, յորում ամփոփ առաջի աչաց նկարի ամենայն, որ յընդարձակ գրուածս ճապաղեալ կայ»¹:

Հետևաբար եռահատոր «Հայոց Պատմությունը» ընդարձակ ճապաղ՝ զիտական շարադրանք է, իսկ համառոտը՝ հայելու նման աչքերի առջև նկարում՝ ներկայացնում է Հայոց ամփոփ պատմությունը: Նման համեմատությունը ցույց է տալիս համառոտի գլխավոր գործառույթը՝ ընթերցմամբ տպավորել հայ ժողովրդի պատմության էջերը: Չամչյանը ասում է, որ ինքը «Խրախճան» անվանել է ոչ թե բովանդակությունից ելնելով, այլ ըստ շարադրանքի ձևի, որովհետև, եթե համաձայն բովանդակության լիներ, ապա «Ողբերգարան» պետք է կոչեր: Ինքը սեղանին դրված մրգերի նման Հայոց պատմությունն է վայելել տալիս:

Անհրաժեշտ է նշել, որ Չամչյանը ոչ միայն պատմության ընդարձակ շարադրանքն է համառոտել, այլև դասագրքային բնորոշ ձևով փոքր միավորների բաժանել ժամանակային ծավալուն հատվածները, ամեն մեկը դարձնելով մի դասի նյութ:

Գրքի առաջաբանում հեղինակը նշում է, որ այն նախատեսված է ուսուցման համար և ոչ թե պատմական ուսումնասիրություն է:

Ինչպես իր «Պատմութիւն Հայոց»-ում, այստեղ ևս հայ ժողովրդի պատմության պարբերաբաժանումը Չամչյանը կատարում է ըստ հետևյալ յոթ ժամանակաշրջանների.

1. Հայկազունիների՝ Հայկի սերնդի իշխանության շրջան

¹ Հ. Միքայել վրդ. Չամչեանց, Խրախճան պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, էջ 2:

2. Կուսակալների, ովքեր իշխում են Հայաստանում պետականության կորստից մինչև Արտաշիսյաններն ընկած շրջանում (189 մ.թ.ա.-1 մ.թ.):
3. Արշակունիների շրջան (66-428թթ.)
4. Մարգարանական շրջան՝ 456 տարի
5. Բագրատունյաց շրջան (885-1046թթ.)
6. Ռուբինյանց շրջան՝ Կիլիկիայի հայկական իշխանության՝ 1080 թվականի սկզբնավորումից մինչև Կիլիկիայի հայկական պետության անկումը 1374 թվականին:
7. Կիլիկիայի հայկական պետությունից հետո մինչև 1780 թվականը:

Այս յոթ փուլերից առաջին չորսի հիմքում ընկած է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որի շեշտված ազդեցությունն է կրում Չամչյանի շարադրանքը:

Պատմության աճող ժամանակագրական ընթացքը ներկայացվում է լուսանցքներում յուրաքանչյուր իրադարձության կողքը նշված տարեթվի միջոցով:

Չամչյանը այս աշխատանքը թեև որպես դասագիրք էր գրել, սակայն այն իր մեծ ծավալով ու առավել ևս կառուցվածքով չէր համապատասխանում դասագրքերին ներկայացվող պահանջներին:

Չամչյանի դասագրքի համառոտամաբ առաջին լիարժեք պատմական դասագիրքը՝ «Պատմութիւն հայոց», գրում է դարձյալ Վենետիկի մխիթարյաններից Եփրեմ Սեթյանը: Այն տպագրվում է Սուրբ Ղազար կղզում 1839 թվականին:

Թե՛ այս և թե՛ 19-րդ դարի առաջին կեսի մյուս դասագրքերը գրված են հարց ու պատասխանի ձևով, որն ասելիքը մասնատում է փոքր մասերի և ավելի ընկալելի դարձնում:

Վենետիկում 1848 թվականին լույս է տեսնում Մխիթարյան հայրերից Համազասպ Թերճիմանյանի «Համառոտ պատմութիւն հայոց դպրատանց տղոց համար» դասագիրքը:

Վերջինիս առաջաբանում հեղինակն ասում է, որ մինչև այդ եղած դասագրքերը ավելի շատ մեծերի համար են գրվել և փոքրերին դժվար ընկալելի են: Հստակ տարբերակում անցկացնելով տարիքային տարբեր խմբերի միջև, գրում է, որ տղաները և մեծահասակները միևնույն դասագրքով սովորել չեն կարող¹:

Այս դասագիրքը, որն իրապես ավելի սեղմ և պարզ է, սկսվում է Խորենացու Հայկի մասին պատմությամբ և դարձյալ ավարտվում Դավիթ

¹ Թերճիմանյան Համազասպ վրդ., Համառոտ պատմութիւն հայոց դպրատանց տղոց համար, Վենետիկ, 1848, էջ Բ-Գ:

Բեկի ապստամբությամբ: Ավելին, ցանկանալով ընդգծել, որ հայ ժողովրդի ներքին ինքնուրույնությունը շարունակվել է նաև ապստամբության ավարտից հետո, գրում է, որ տեղերում հայկական իշխանությունը շարունակվեց տանուտերերի, այսինքն գյուղական փոքր շրջանների հայ իշխանավորների միջոցով:

Նույն այս գաղափարն այնուհետև 1880-ական թվականներին ընդգծվելու էր Բաֆֆու «Խամսայի մելիքությունները» պատմական ուսումնասիրության մեջ:

Պատմության և աշխարհագրության իրար միահյուսված ձեռնարկներ են որպես պատմական աշխարհագրություն գրված Մխիթարյան աշխարհագրության դասագրքերը, որոնցից առաջինը Ստեփանոս Յազճյանի «Համառոտ աշխարհագրութիւնն» է գրված 1847թ.:

Խորենացու հետևողությամբ Հայաստանին նվիրված բաժնի սկզբում ասվում է. «Հայաստանի առաջին տիրողը Հայկ նահապետն եղաւ, որ Նոյի թոռան տղան էր: Իր անունովը մեր ազգն ալ հայ ըսուեցաւ»¹:

Պատմության Մխիթարյանների դասագրքերը տարածվում են ոչ միայն հայ գաղթավայրերով, այլև դրանց հիման վրա տարբեր քաղաքներում գրվում են նոր դասագրքեր: Մխիթարյան հրատարակություններին զուգահեռ նորերի գրվելը բացատրվում է հետևյալ երկու հանգամանքով.

Առաջին՝ Մխիթարյանները որքան էլ պարզ գրեին, առաջին հերթին նկատի ունեին միաբանության սաներին: Ս. Ղազարը ժամանակի մտավոր ամենաբարձր աստիճանը ունեցող ուսումնագիտական կենտրոնն էր, որի համար նախատեսված յուրաքանչյուր դասագիրք դժվարընկալելի էր լինելու այլ վայրերում:

Երկրորդ՝ Մխիթարյանները գրում էին նոր ձևավորվող արևմտահայ աշխարհաբարով, թեև այն կրում էր գրաբարի որոշակի ազդեցությունը:

«Հայապատումը» դարձավ գիտնական, գրող և մանկավարժ Ալիշանի գործունեության հանրագումարը: Գիտնականը մասամբ իրականացած տեսավ իր գործի տպագրությունը:

Ալիշանին գիտական վերլուծությանը զուգահեռ միշտ մտատանջել է իր հետազոտությունները ընթերցողների ավելի լայն շրջանակին ընկալելի և մատչելի ներկայացնելու հարցը: 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի սահմանագծին այս հարցը Ալիշանը լուծեց բավականին յուրօրինակ ձևով: Մխիթարյանների իրեն նախորդող հեղինակները հայ

¹ Հ. Ստեփանոս Եազճեան, Համառոտ աշխարհագրութիւն դպրատան տղոց համար, Վենետիկ, 1840, էջ 118:

ժողովրդի պատմությունը եթե իրադարձություն առ իրադարձություն բերում էին մատչելի և խրատական շարադրանքով, ապա Ալիշանը, որ մինչ այդ Հայոց պատմության 33 դրվագները ներկայացրել էր «Յուշիկք Հայրենեաց հայոց» գործում, այժմ դիմում է մինչև այդ չկիրառված հետևյալ ինքնատիպ միջոցին:

Մեծածավալ այս հատորի առաջին՝ «Պատմիչք և պատմութիւնք Հայոց» մասում թվարկվում են հայ մատենագրության մեջ հիշվող բոլոր պատմագիրները, իսկ երկրորդ՝ «Պատմութիւնք հայոց» մասում ոչ թե հայ ժողովրդի պատմության դպրոցական պարզ շարադրանքով, այլ հայ պատմիչների գործերից վերցված համապատասխան հատվածներով են ներկայացվում հիշյալ իրադարձությունները:

«Հայապատումի» առաջին մասի մեջ Ալիշանը ըստ այսմ գրում է 5-18-րդ դարերի հայ պատմագիրների մասին, նաև այն հեղինակների, ովքեր թեև պատմագրական գործեր չեն գրել, սակայն նրանց երկերում որոշակի պատմական տեղեկություններ կան, ինչպես, օրինակ Գրիգոր Նարեկացու «Ապարանից Սուրբ Խաչին» նվիրված ներբողում:

Ամեն պատմիչի նվիրված բառահոդվածի սկզբում նախ բերվում է տվյալ հեղինակի կենսագրությունը, ապա արժևորվում նրա գրական ժառանգությունը և կատարվում է բուն պատմական գործի վերլուծությունը:

«Հայապատում» անվանման մեջ Ալիշանը արտահայտել է երկու իմաստ՝ հայ ժողովրդի պատմություն և պատումներ՝ դրվագներ հայ ժողովրդի պատմության:

«Հայապատումի» երկրորդ մասում պատմական նման մոտ 400 իրադարձություն է նկարագրված, որոնք հասնում են մինչև 17-րդ դարի վերջը: Հայ պատմիչներից վերցված այդ հատվածների մի մասը հիշյալ պատմիչների մոտ առանձին վերնագրեր չունեն և դրանք վերնագրվել են Ալիշանի կողմից, շնորհիվ որի ուսումնական առումով մատչելի ձևով է բացատրվել ներկայացվող ճանաչողական նյութը:

«Հայապատումի» առաջին միավորը Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» սկիզբն է: Պատմիչի մոտ այն առանձին վերնագիր չունի: Այդ հատվածով սկսելով հայ ժողովրդի պատմության սկզբնավորումը, Ալիշանը այն խորագրել է «Ծագումն հայոց՝ յորդոց Յաբեթի»¹: Ալիշանը հայ միջնադարյան պատմահայեցողությամբ հայ ժողովրդի պատմությունը բխեցնում է Նոյ նահապետի Հաբեթ որդուց:

Հայ ժողովրդի երկրորդ պարբերաբաժանմամբ՝ հայ ժողովրդի բուն պատմությունը արդեն սկզբնավորվում է Հայկ նահապետից: «Որդիք և թոռունք Հայկայ և բնակութիւն նոցա» վերնագրի ներքո հայ պատմիչ-

¹ Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, մաս Բ, էջ 1:

ներից վերցված տարբեր հատվածներով ներկայացնում է Հայկի ժառանգ-
ների տարածումը Հայկական լեռնաշխարհում:

Դասագրքերին բնորոշ ձևով տողատակերում Ալիշանը բացատրում
է դժվար հասկանալի տեղերը, նաև ուշադրություն հրավիրում գեղեցիկ
հատվածների և բնորոշումների վրա:

Գրքին տալով ընդգծված դաստիարակչական նշանակություն, հայ
պատմիչներից բերված հատվածներով ստեղծում է կերպարային հակա-
դրություններ հայրենասերների և դավաճանների միջև: Ընթերցողի և այս
գրքով հայոց պատմությունը սովորողների համար բառային նմանաձայ-
նություններով աշխատում է ավելի տպավորիչ և հիշվող դարձնել այս
կամ այն հերոսին:

Արշակ Երկրորդի ինքնասպանության նշնավոր հատվածի մասին
գրելիս հակադրություն է ստեղծում Արշակի քաջ և նվիրված զորավար
Դրաստամատի և դավաճան Բատ Սահառունու միջև, գրելով, որ Բատ-ից
առավել նրան կարելի է անվանել Վատ Սահառունի:

«Պլպուլն Ավարայրի» պոեմի հեղինակ Հայոց Նահապետը ավելի
քան կես դար անց որպես ծերունագարդ գիտնական դարձյալ նույն ոգևո-
րությունն է ապրում, երբ տարբեր հատվածներ է բերում հայ պատ-
միչներից՝ նվիրված Վարդանանց և Ավարայրի ճակատամարտին: Վար-
դանանց առերես ուրացմանը նվիրված հատվածի ծանոթագրության մեջ
գրում է, որ Ռաֆայելի ճարտար վրձինն էր հարկավոր պատկերելու
ուրացման լուրը ստացած նախարարների վիշտը:

Ինչպես որ հինգերորդ դարի հերոսականությանը 7-րդ դարից հա-
ջորդում են ողբի և ավերի դարերը մինչև Բագրատունյաց թագավորու-
թյան հիմնումը, այնպես և Ալիշանը ներկայացվող պատմությունների
ծանոթագրությունների լեզուն և ոճն է փոխում: Իր իսկ բնորոշմամբ գրում
է այրված սրտով, ինչպես օրինակ Վահան Գողթնացու դեպքում:

Հայ ժողովրդի պատմությունը Ալիշանը միայն պատմագրական
գործերից բերված հատվածներով չի ներկայացնում, այլ հայկական
ձեռագրերի հիշատականների միջոցով, գրելով, որ դրանցում ցոլանում է
հայ ժողովրդի հոգին:

Նման բնորոշ օրինակ է Սասունի Չորտվանել իշխանի Ավետա-
րանի հիշատակարանը, որը իշխանը և կինը ընդօրինակել են տվել ի
հիշատակ իրենց վաղամեռիկ որդու և աղջկա, այս մասին գրելով
հիշատակարանում:

Վերջինս որպեսզի ավելի տպավորվի ընթերցողի մտքում, ասում է,
որ այն Սասնո լեռներում աճած բնական վայրի մի ծաղիկ կարծես լինի:

Սկսած Միքայել Չամչանից՝ 1375 թ. Սսի գրավմամբ Կիլիկիայի
հայկական թագավորության անկմանը հաջորդող շրջանը անվանվել է
«անիշխանութեան դարեր»: Պատմական նման պարբերաբաժանումը

ողբերգախառն հուզականությամբ է արտահայտել Ալիշանը: Ժամանակի պատմիչները զարմանալիորեն չեն գրում Միս մայրաքաղաքի և բերդաքաղաքի անկման մասին: Նման լռությունը Ալիշանը բացատրում է այն հանգամանքով, որ նրանց սիրտն ի գործ չի եղել, որ գրեն այդ մասին: Սսի անկման խորագրի ներքո Ալիշանը ներկայացնում է մայրաքաղաքի գրավումը պատկերող վեց փոքր հիշատակարաններ, ծանոթագրության մեջ ասելով, որ դրանք այրված սրտից թռած մի-մի հառաչանք են:

Չամչյանի ազդեցությամբ թե՛ Մխիթարյանները և թե՛ տարբեր հեղինակներ հայ գաղթավայրերում ստեղծել են նոր և ավելի համառոտ ու պարզեցված դասագրքեր, որոնց վերջին արձագանքը կարելի համարել «Հայապատումը»՝ գեղարվեստական ձևավորմամբ, գրական բնագրերով և ծանոթագրություններով:

Ըստ հայոց պատմության ժամանակագրության ներկայացվող 400 իրադարձություններից գրեթե բոլորը ունեն ուղեկցող նկարներ՝ մանրանկարներ, փորագրանկարներ և լուսանկարներ, որոնք ավելի ընկալելի են դարձնում ասվածը:

Չնայած իր ներդաշնակ կառուցվածքին, մեծադիր այս հատորը իր չափերով որևէ ձևով չէր համապատասխանում դասագրքերի ընդունված չափերին:

Այս հանգամանքը նկատի ունենալով, Մխիթարյանները «Հայապատումի» երկրորդ՝ Հայոց պատմությունը ներկայացնող իրադարձությունների մասը փոքր ձևաչափով տպագրել են երեք հատորով նույն 1901 թվականին: Այստեղ թեև մեծադիր պատկերները չկան, սակայն այս չափի մեջ բնագրերով և ծանոթագրություններով այն ավելի շատ է դասագիրք հիշեցնում և բավարարում վերջինիս պահանջներին¹:

Փոքրադիր եռահատոր «Հայապատումը» որպես հայ ժողովրդի պատմության օժանդակ դասագիրք, կիրառվել է Մխիթարյանների վարժարաններում:

Այսպիսով, Ղևոնդ Ալիշանով ոչ միայն ավարտվեց հայ ավանդական հայագիտությունը, այլև «Հայապատումը» դարձավ հայ գաղթավայրերում դասավանդվող Մխիթարյան ավանդական դասագրքերի հանրագումարը, որին հաջորդելու էին արդեն մանկավարժական նոր մեթոդներով գրված Մխիթարյան նոր դասագրքերը:

¹ Տե՛ս Հայապատում. Պատմություն հայոց, յոթնեաց Հ.Ղ. Ալիշան, հտ Ա, Վենետիկ, 1901, 560 էջ, հտ Բ, Վենետիկ, 1901, 559 էջ, հտ Գ, Վենետիկ, 1901, 418 էջ:

Кристине Мелкумян
Соискатель института литературы им. М.Абегяна НАН РА

Резюме
"АЙАПАТУМ" ОТЦА Г.АЛИШАНА И УЧЕБНИКИ
МХИТАРИСТОВ

Ключевые слова: Конгрегация Мхитаристов, Микаэл Чамчян, учебники по истории армянского народа, армянская историография пятого века, армянские колонии, Гевонд Алишан.

Микаэл Чамчян, один из мхитаристов Венеции, в 1811 году сократил и опубликовал в качестве учебника свою ранее изданную в 1784-86 годах трехтомную капитальную «История Армении».

Эта сокращенная версия все же для учебника была слишком развернутой.

Продолжая издавать учебники истории, мхитаристы еще раз сокращают учебник Чамчяна, в то же время распределив материал в характерном для учебника структурном ключе.

Обобщением традиций публикаций мхитаристами учебников по истории и стал «Айапатум» Алишана, в котором замечательные события истории армянского народа представлены по соответствующим частям, взятых у писавших о них историков.

Kristine Melqumyan
Post-graduate student at the Institute of Literature after M. Abeghyan

Abstract
FATHER GH. ALISHAN'S "HAYAPATUM" AND THE MEKHITARISTS'
TEXTBOOKS

Key words: The Mekhitarists' Congregation, Mikael Chamchyan, textbooks of the History Armenians, Armenian historiography of the fifth century, Armenian colonies, Father Gh. Alishan.

Mikael Chamchyan, one of the fathers of the Mekhitarists' Congregation in Venice, summarized and abridged his three-volume extensive work "The History of Armenia" (1784-86) and published it as a textbook in 1811.

That abridged version was also considered extensive for a history textbook. The Mekhitarists' kept on the process of publishing history textbooks and they embarked on the laborious work on summarizing Chamchyan's textbook once more and compiled it structurally due to the bookbinding requirements of the time.

The summary of the traditions of the Mekhitarists' history textbooks publications became Father Gh. Alishan's work entitled as "Hayapatum", in

which the history of the Armenian people was represented due to the important events and with excerpts taken from the historians.

Գրականության ցանկ

1. Չամչեանց Միքայել վրդ., Խրախճան պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, 494 էջ:
2. Թէրճիմանեան Համազասպ վրդ., Համառոտ պատմութիւն հայոց դպրատանց տղոց համար, Վենետիկ, 1848, 116 էջ:
3. Եազճեան Ստեփանոս, Համառոտ աշխարհագրութիւն դպրատան տղոց համար, Վենետիկ, 1840, 348 էջ:
4. Ալիշան Ղևոնդ, Հայապատում, Վենետիկ, 1901, 142+649 էջ:
5. Ալիշան Ղևոնդ, Հայապատում, Վենետիկ, 1901, հտ Ա, 560 էջ:
6. Ալիշան Ղևոնդ, Հայապատում, Վենետիկ, 1901, մաս Բ, 559 էջ:
7. Ալիշան Ղևոնդ, Հայապատում, Վենետիկ, 1901, հտ Գ, Վենետիկ, 418 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ.ՂԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ-ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ	5
ՈՂՋՈՑՆԻ ԽՕՍՔ ՊԱՊԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Տ. ԼԵՒՈՆ ԱՐՔ. ԶԷՔԻԵԱՆԻ՝ Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ԵՐԿՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ	8
ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ	11
ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ	13
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ	15
Հ. ՄԵՐՈԲ ՎՐԴ. ՉԱՄՈՒՐԼԵԱՆ ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ ԿՐՕՆԱԻՈՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ	17
Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ	
ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՌԱՀՎԻՐԱ	21
ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ	29
ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ	42
ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԻՇԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ	56
ՄԱՆԵԱ (ԷՌՆԱ) ՇԻՐԻՆՅԱՆ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՄԵԻ ԼԵՌԱՆ ՎԱՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ	70
ՄԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱԼԻՇԱՆԻ ՊԱՏՄԱՀԱՅԵՑՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՅՐՈՒՆԻ» ՀԱՏՈՐՈՒՄ	82

ՆԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ	
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ ԸՍՏ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ	101
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ	
ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ	113
ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՈՐՊԵՍ «ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԽՄԲԱԳԻՐ	118
Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ	
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ	
5-րդ դ. ԵՐԿՈՒ ՆՇԱՆԱՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂ- ԾԱԿԱՆԱՅՈՒՄԸ Ղ. ԱԼԻՇԱՆԻ ՔԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ	126
ԱԶԱՏ ԵՂԻՍԱԶԱՐՅԱՆ	
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱ- ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	136
ԲՈՒՐԱՍՏԱՆ ԶՈՒԼՈՒՍՅԱՆ	
Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ	143
ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ	
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ. ՄԱՐԴԸ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ	154
ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ	
Հ.Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԵՎ ԽՐԻՍՏԱՆ ՀԱՅՐԻԿԻ՝ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՒՅՄԻՆ ԵՎ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՈՂԲԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՉԱՓԱԾՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ	179
ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ	
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ԲԱԺԻՆՔ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՅ» ՊՈԵՄԸ ԵՎ «ՏԵՂԱԳԻՐ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՅ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ	202
ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ	
ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏԵՍԻԼՔԸ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՅՈՑ» ԳՈՐԾՈՒՄ	211
ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ	
Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ԸՆԴ ԵՂԵՒՆԵԱԻ ՅԱՄԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՅԱ- ՎԱՅՐԻ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ՆԵՐՏԵՔՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱ- ՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՆՇԱՆ-ԽՈՐՀՐԴԱՆԻՇ-ԱԼՅՈՒ- ԶԻԱ-ՏԵՔՍ	224

ԼՈՒՍԻՆԷ ԱԻԵՏԻՍԵԱՆՑ ԱՐՈՒԵՍ ԳՐԱԲԱՐ ՔԵՐԹՈՒԹԵԱՆ ԱԼԻՇԱՆԻ	239
 Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱԶՈՐԴՈՂ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ	260
ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ- ՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	271
ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ «ԱՄԵՆՈՒՄ ԱԼ Է ՄԵԾ ՎԱՐՊԵՏՆ ՈՒ ՆԱՀԱՊԵՏՆ՝ ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ» (Եղիա Տեմիրճիպաշյանը Ղեւոնդ Ալիշանի մասին)	290
ՎԱԶԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ	306
ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ ԱԼԻՇԱՆԸ՝ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ	319
ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ-ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ. ՀՈՒՇԱՅԻՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ ...	327
ԱՌԴԱ ՄԱՐԱՆՋՅԱՆ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՊԼՊՈՒԼՆ ԱՎԱՐԱՅՐԻ» ՊՈԵՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԿՈՒՆՔԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԱՑՈՒՄՆԵՐԸ ..	340
ՆԱԻՐԱ ԲԱԼԱՅԱՆ Հ.Ղ. ԱԼԻՇԱՆԸ Ա. ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ	361
ՔՐԻՍՏԻՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	370
ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ «ՆԱՀԱՊԵՏԻ ԵՐԳԵՐԻ» ԵՎ «ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻ» ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ	384
ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԳՐԱՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ	391

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴՐՈՍՏ-ԱԲԳԱՐՅԱՆ	
ԱԼԻՇԱՆԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ	400
ՌԻՄԱ ՍԻՐՈՒՄՅԱՆ	
«ԱՐԵՎԵԼՔ-ԱՐԵՎՍՈՒՏՔ» ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ	406
ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ	
ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ԱԼԻՇԱՆԸ	419
ՔՐԻՍՏԻՆԵ ԲԵՋԱՆՅԱՆ	
Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՕՍԻԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ	433
ԶԱՐՈՒՀԻ ՀԱՅՐՅԱՆ	
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ ՅՈՒՐԻ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ ԵՎ ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ	455
ԼՈՒԻՉԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ	
Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԹԱՐԳՄԱՆԻՉ. «ՀԱՅՈՑ ԵՐԳՔ ՌԱՄԿԱԿԱՆՔ»-Ի ԱՆԳԼԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՉ	468
Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԴԻՑԱՇԽԱՐՀԸ	
ՍԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ	
ՀԱՅՈՑ ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆՆ՝ ԸՍՏ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ, ԵՎ ԱՐԱՏՏԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԸ	477
ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅՐԻՅԱՆ	
ՀԱՅՈՑ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ Ղ. ԱԼԻՇԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ	495
Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԸ	
ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ	
ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՊԼՊՈՒԼՆ ԱԽԱՐԱՅՐԻ» ՊՈԵՄԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	508
ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ	
ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ	519
ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ	
ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «Ի ԼԵԻՈՆ ՈՐԴԻ ՀԵԹՄՈՅ Ա» ԵՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ	526

ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ	
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՐՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԹԵՐԹԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	550
ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՁՅԱՆ	
Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱ- ԲԵՐՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ «ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԷԶԵՐՈՒՄ	565
ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ	
Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺԸՇ- ՏՈՒԹՅԱՆԸ	572
Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ	
ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ	
ԱԼԻՇԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԲԱՐ- ԲԱՌԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ	608
ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ	
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՄՏՔԻ ԵՐԵՔ ՊԱՀ (Լեզվագետ. դիցաբան, բառա- գետ)	615
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ	
ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐԸ Ղ. ԱԼԻՇԱՆԻ «ԱՅՐԱՐԱՏ. ԲՆԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍ- ՏԱՆԵԱՅՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ	626
ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ	
Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ «ՀԱՅԱՊԱՏՈՒՄԸ» ԵՎ ՄԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԴԱՍԱ- ԳՐՔԵՐԸ	639

Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ – 200

Հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածու

Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Հրատ. պատվեր № 1148
Ստորագրված է տպագրության՝ 20.12.2021թ.:
Չափսը՝ 70x100^{1/16}, ծավալը՝ 41 տպ.մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24